ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

9(47.925)
Հ-85

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ՀԱՏՈՐ 1

Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը

986

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1981

9(Ա43)1 Խ գ ք ա ԳՄԴ 63.3(2Հ)1
Հ854

Կազմողներ՝ պատմ. գիտ. թեկն. Պ. Հ. Հովհաննիսյան,
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան
Խմբագիրներ՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյան,
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Լ. Ա. Խուրշուդյան

Հովհաննիսյան, Պ. Հ., Աբրահամյան, Ա. Գ.
Հ854 Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա/Կազմ. Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Գ. Աբրահամյան, խմբ. Գ. Խ. Սարգսյան, Լ. Ա. Խուրշուդյան.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1981. Հ. 1: Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը. 944 էջ:

Հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրների սույն ժողովածուի մեջ ըստ ժամանակագրական հերթականության ամփոփված են հայ և օտար պատմիչների, տարեգիրների երկերում, վիմագիր արձանագրություններում, այլաբնույթ գրական հուշարձաններում տեղ գտած հին Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պատմությանը վերաբերող կարևորագույն վկայությունները:

Հ 0505040000—08 / 704(02)—81 11—79

9(Ա43)1
ԳՄԴ 63.3(2Հ)1

ХРЕСТОМАТИЯ ПО ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА

Том I

С древнейших времен до середины IX века

Составители: к. и. н. **П. О. Оганесян,** д. и. н., проф. **А. Г. Абрамян**

(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1981

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

«Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» նպատակն է օգնել ուսանողներին, գիտական աշխատողներին, ուսուցիչներին, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթանալու հայ ժողովրդի պատմության ամենաուշադիր պատմաշրջաններին ու հարցերին՝ կարևորագույն աղբյուրագիտական վկայությունների, նյութերի և վավերագրերի միջոցով:

Ուսանողների և ընթերցող հասարակայնության մեծ մասը այսօր անհաղորդ է հատկապես հունա-հռոմեական, արաբական, պարսկա-թուրքական, արևմտաեվրոպական և այլալեզու մյուս սկզբնաղբյուրներին, որոնք արժեքավոր ու հաճախ եզակի տեղեկություններ են հաղորդում հայերի և Հայաստանի մասին: Լավագույն դեպքում նրանք այդ սկզբնաղբյուրներին ծանոթ են մասնագիտական գրականության մեջ բերված առանձին քաղվածքներից և ընդհանուր հաղորդումներից:

Վաղուց հասունացել է հայ ժողովրդի պատմության առանցքային հարցերի մասին հայրենի և օտար սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները ի մի հավաքելու և դրանք ըստ թեմաների դասակարգելու անհրաժեշտությունը:

Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնը, այդ բացը լրացնելու միտումով, ձեռնա-

մուխ է եղել քառահատոր «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» պատրաստման աշխատանքներին: Հատորներից յուրաքանչյուրը ևվիրված է որոշակի պատմաշրջանի՝ 1-ին հատորն ընդգրկում է ևնագույն ժամանակներից մինչև մ. թ. IX դարի կեսերը, 2-րդը՝ IX դարի կեսերից մինչև XVIII դարի վերջը, 3-րդը՝ 1800—1917 թվականները, 4-րդը՝ 1917 թվականից մինչև մեր օրերը:

Քրեստոմատիայի առաջին հատորում նյութերն ընտրված և դասավորված են այնպես, որ ընթերցողը որոշակի պատկերացում կազմի Հայկական լեռնաշխարհի ևնագույն ցեղերի ու ժողովուրդների, հայ ժողովրդի կազմավորման ընթացքի, հայկական պետականության ձևավորման ու զարգացման, օտար աշխարհակալությունների ու ևվաճողների դեմ մեր ժողովրդի մղած ազատագրական պայքարի դրվագների, սոցիալական ու դասակարգային շարժումների և այլ հարցերի մասին: Հնարավորության սահմաններում տրված են նաև մեր ժողովրդի ներքին կյանքին, զբաղմունքին ու տնտեսությանը, կենցաղին, հիստուկացին, սովորույթներին, հավատալիքներին, մշակույթի այս կամ այն հարցին աղերսվող կարևորագույն մատենագրական վկայությունները:

Քրեստոմատիայում լայնորեն օգտագործվել են ևնտիկ և վաղ միջնադարյան ևեղինակների համապատասխան երկերի արդեն գոյություն ունեցող թարգմանությունները, հատկապես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով լույս տեսնող հրատարակությունները: Սեպագրական, պատմագրական, վիմագիր բնույթի նյութերի մեծ մասը հայերեն ամբողջական տեսքով լույս է տեսնում առաջին անգամ:

Որոշ նյութեր՝ Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը», վրացական աղբյուրները, Ստրաբոնի «Աշխարհագրությունը» և այլն, ներկայացված են նոր՝ քրեստոմատիայի համար կատարված թարգմանություններով: Հայկական ընկզբնաղբյուրներից ներկայացվող նյութերը տրվում են աշխարհաբար թարգմանությամբ:

Քրեստոմատիայում ընդգրկված սկզբնաղբյուրային տեքս-

տերին կցված են փոքրիկ ներածականներ, որտեղ տրվում են ևեղինակների մասին ընդհանուր տեղեկություններ, որոշ դեպքերում էլ՝ երկերի սեղմ բնութագիրը: Նշվում է նաև տվյալ տեքստի թարգմանչի անունը և այն հրատարակությունը, որից կատարված է թարգմանությունը: Նյութերում հանդիպող վիճելի, անհասկանալի, բացատրությունների կարոտ տեղերը ծանոթագրվում են տեքստից անմիջապես հետո: Ծանոթագրությունները տրվում են գիտության մեջ քաղաքացիություն ստացած տեսակետներին համապատասխան՝ հիմք ընդունելով ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ իրականացվող «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակը: Գրքի վերջում զետեղված է անձնանունների, տեղանունների և ցեղանունների ցանկ:

Հատորի առաջին բաժինը, որ կրում է «Ստրկատիրական հասարակարգը Հայաստանում» խորագիրը՝ կազմել, ծանոթագրել և հրատարակության է պատրաստել պատմական գիտությունների թեկնածու Պ. Հ. Հովհաննիսյանը, երկրորդ բաժինը, որ կրում է «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում» խորագիրը՝ պրոֆեսոր Ա. Գ. Աբրահամյանը: «Ուրարտական աղբյուրները» թարգմանել, կազմել, ծանոթագրել ու հրատարակության է պատրաստել Հ. Հ. Կարագյոզյանը, իսկ «Բյուզանդական աղբյուրները պավլիկյան շարժման մասին» հատվածը՝ պատմական գիտությունների դոկտոր Հ. Մ. Բարթիկյանը:

Քրեստոմատիան նպատակ չունի և, բնական է, չի էլ կարող ամփոփել այն ամենը, ինչ պարունակում է ևնտիկ և վաղ միջնադարյան պատմագիտական ու աշխարհագրական միտքը հայերի ու Հայաստանի մասին: Կազմողները լավ են պատկերացնում, որ բազմալեզու և տարաբնույթ նման մի ժողովածու, որի նյութերը թարգմանված են տարբեր թարգմանիչների կողմից, չի կարող ակնկալել կատարյալ միօրինակություն, զերծ չլինել թերություններից: Ուստի կազմողները սիրաշոժար կընդունեն ընթերցողների դիտողություններն ու ցանկությունները, որոնք հաշվի կառնվեն հաջորդ հատորները հրատարակության պատրաստելիս և սույն հատորը վերահրատարակելիս:

ԲԱՑԻՆ ԱՌԱՋԻՆ

ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՆԱԳՈՒՅՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄԸ

ԽԵԹԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍԱ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Մ. թ. ա. II հազարամյակի կեսերից սկսած Հայկական լեռնաշխարհի քաղաքական և էթնիկական պատմության մեջ զգալի դեր է խաղում Հայասա ցեղային միությունը: Պատմագիտության մեջ տիրապետում է այն տեսակետը, որ Հայասա անունը հիմք է դարձել հայ ժողովրդի ինքնանվան և նրա կողմից զբաղեցրած երկրի անվան: Սկզբնաղբյուրների հաղորդած տվյալների մանրակրկիտ վերլուծությունը հետազոտողներին բերել է այն եզրակացության, որ Հայասա երկիրը տեղադրվել է հին հայկական Բարձր Հայք նահանգի սահմաններում և Փոքր Հայքի տարածքում:

Հայասա երկրի մասին եզակի տեղեկություններ են պահպանվել խեթական թագավորության արխիվներում (գտնված Բողազքյոյ քաղաքատեղիում): Այդ տեղեկությունները վերաբերում են մ. թ. ա. XIV—XIII դարերին, և որոշ պատկերացում են տալիս Հայասայի քաղաքական պատմության, հասարակական հարաբերությունների և տնտեսության մասին: Խեթական սեպագրությունների տեքստերը իմիջայրերի ձևով հրատարակվել են "Keilschrifturkunden aus Boghazköi", Berlin, 1921—1975, I—XL (=KUB), "Keilschrifttexte aus Boghazköi", Leipzig, 1923—1975, I—XIX (=KBo) բազմահատոր ժողովածուներում:

Հայասա երկրի մասին ստորև բերված հատվածների թարգմանությունները խեթական բնագրերից կատարել է Վ. Ն. Խաչատրյանը:

1.

Խեթական թագավոր Թուդխալիաս III-ի (շուրջ 1400—1380) դեպի Հայասա ձեռնարկած արշավանքի մասին գրում է նրա թոռը՝ Մուրսիլիս II-ը (1340—1320), տե՛ս H. G. Güterbock, Actes de Suppiluliuma redaction de Mursili II—JCS, 10 (1956), A, C:

Ա. KBo, *XIV, 23, 4—9* տող. *«Թուդխալիասը՝ իմ պապը, Հայասա երկրի հետիոտն զինվորներին և կառամարտիկներին հաղթեց: Թուդխալիասը ինքը Խաթթի երկրի[1] հետիոտն զինվորներին և կառամարտիկներին Թողեց Կանտուժիլիի[2] մոտ: Նա դրանց վերադարձրեց Խաթթի երկիրը»:*

1. Խոսքը խեթական պետության մասին է:

2. Կանտուժիլին Թուդխալիաս III-ի ժամանակ Խաթթի երկրի զորքի գլխավոր հրամանատարն էր:

Բ. KBo, *XIV, 22, 4—12*. *«Նա հետո Կանտուժիլիին ուղարկեց: Նա պատերազմ հայտարարեց: Նրան հետիոտն զինվորներ տվեց: Իսկ հետո նա նրա հետից գնաց: Նա Արծիյա[1] քաղաքը ավերեց: Արծիյա քաղաքի ունեցվածքը՝ սորուկներին, խոշոր և մանր եղջերավոր անասունները Քշնամու ավար վերցրեց: Հետո Կանտուժիլին Քշնամու սորուկներին, խոշոր և մանր եղջերավոր անասունները մի տեղ հավաքեց: Իսկ ովքեր իրենց համար էին ձեռք բերել, նրանց ավարին Թիվ չկար»:*

1. Արծիյա քաղաքը տեղադրմամբ և անվանապես նույնացվում է միջնադարյան հայկական Արծնի հետ:

2.

Սուպպիլուլիումաս I-ի (1380—1340) դեպի Հայասա ձեռնարկած արշավանքների մասին պահպանվել են տեղեկություններ նրա որդու՝ Մուրսիլիս II-ի և թոռան՝ Խաթթուսիլիս III-ի (1275—1250) տեքստերում:

Ա. KUB, *XXXIV, 23, 4—24*. *«Իսկ Քշնամին Խաթթի երկրից շատ հարուստ քաղաքներ խլեց, դրանցում՝ կանայք, հայրեր, եղբայրներ՝ իրենց հայրական և մայրական դռան ներսում: Ովքեր դրսում էին՝ նրանց սորուկներին, խոշոր և մանր եղջերավոր անասունները վերցրեց, դրանց տարավ: Յուրաքանչյուրին բռնեց: Իսուվաքիներն[1] էլ այդ թվում էին: Նրանց տեղում Թողեց, իսկ նրանց*

բոլոր խեթ ստրուկներին խլեց: Նրանց երկիրը... Թողեց, իսկ սրբանց վերցրեց: Իսկ իմ հայրը վրեժխնդրության համար Ուխխասպա երկիր[2] գնաց: Նա[3] իր երկրից դուրս էր գտնվում: Իսկ Ուխխասպա քաղաքը նա հրի մատնեց: Բայց ստրկությունը Հայասա երկիր էր գնացել»:

1. Խուվա երկիրը հին հայկական Շահունյաց Տուիք գավառն է՝ Արածանիի ձախ ափին (այժմ Դերսիմ):

2. Ուխխասպա գավառը տեղադրվում է, հավանաբար, այժմյան Բինգյոլի լճաների շրջանում:

3. Պետք է ընկալել՝ Թշնամու բանակն իր թագավորով:

Բ. KUB, *XIX, 11, IV, 38—44. «Իմ պապի հետ աստվածները առաջ ընթացան: Կասկա[1] երկրի բանակը պատերազմ սկսեց: Ինչպես հայտնի է, Կասկա երկրի բանակը ամբողջովին ոչնչացավ: Իսկ երբ իմ պապը այնտեղից վերադարձավ, նա Հայասա երկիր գնաց: Իմ հայրն էլ նրա հետ էր: Երբ իմ պապը Հայասա հասավ, Կարաննին՝ Հայասա երկրի թագավորը հետիոտն զինվորներով և կառամարտիկներով դեպի Կումմախա[2] նրան ճակատամարտ տալու եկավ»:*

1. Կասկա երկիրը գտնվել է Արևելապոնտական լեռներում՝ Կղզըլ-Ըրմակ գետի ստորին հոսանքի և Տրապիզոնի լեռնանցքի միջև:

2. Կումմախա երկիրը նույնանում է ուրարտական արձանագրությունների Կումախայի, ասուրական Կումմուխի և անտիկ ժամանակների Կոմմագենի հետ, որը գտնվել է Մալաթիայից հարավ:

3.

Սուպպիլուլիումաս I-ի դաշնագիրը՝ կնքած Հայասայի թագավոր Խուկաննասի հետ (հատվածներ):

«Այսպես <է> Սուպպիլուլիումասը, Արևայինը, Խեթերի երկրի թագավորը: Տես, քեզ՝ Խուկաննասիդ[1], երկրորդ կարգի հերոսին, ես առաջ մղեցի: Ես քեզ բարություն արեցի: Ես քեզ Խեթուսասում[2] և Հայասացիների ներկայությամբ պատիվ մատուցեցի՝ իմ քրոջը ես բարյացակամորեն քեզ կնության տվեցի: Քո մասին ողջ Խեթերի երկիրը, Հայասա երկիրը և բոլոր դրսի ու ներսի երկրները լսեցին: Դու, Խուկաննաս, միայն Արևայինի բարի իշխանությունը ճանաչիր: Եվ իմ որդուն, ում Արևային նշանակեմ, ասա, որ սրան Թող բոլորը ճանաչեն: Եթե նրան հանդիսավոր կերպով ներկայացնելիս լինեմ, Խուկաննաս, դու էլ նրան ճանաչիր: Իսկ նրա եղբայրներին (ովքեր իմ որդիներն են), և իմ եղբայրներին ճանաչիր որպես լավ եղբայրների ու ընկերների»:

. . . . . .

«Քո երկրի համար ուրիշ ոտք չեմ նշանակել: Իսկ Թշնամուն քո երկրից դուրս եմ քշել: Արևայինս էլ քեզ քո հոր տեղն եմ նշանակել»:

. . . . . .

«Մարիասը, որը կար, այս գործի առիթով մահացավ: Նա հիերոդուլի մոտ չգնաց, նայում էր նրա վրա: Արևայինիս հայրն էլ երբեմն պատուհանից հետևում էր: Նրան (Մարիասին) հանցանքը համակեց: (Հայրս) ասաց՝ ինչու դու նրա վրա նայեցիր: Նա (Մարիասը) այդ բանի պատճառով մահացավ»:

1. Հայասա երկրի մեզ հայտնի առաջնորդներն են՝ Մարիասը, Կարաննիսը, Խուկաննասը և Անիասը: Մարիասը իշխել է Սուպպիլուլիումասի հոր և նախորդի՝ Թութխալիաս III-ի ժամանակ, որը և սպանել է տվել Հայասայի նշված առաջնորդին: Մարիասին Հայասայում հաջորդել է Կարաննիսը, որը մի շարք հաջող պատերազմներ է վարել Խեթի երկրի դեմ: Նա եղել է Թութխալիաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի ժամանակակիցը: Կարաննիսից հետո Հայասայի առաջնորդն է եղել Մարիասի որդի Խուկաննասը, որի հետ Սուպպիլուլիումասը կնքել է դաշնագիրս: Խուկաննասից հետո Հայասա երկրում իշխել է Անիասը, որը Մուրսիլիս II-ի (մ. թ. ա. XIV դարի երկրորդ կես) ժամանակակիցն է:

2. Խեթական պետության մայրաքաղաքն է, ժամանակակից Բողազքյոյը, որը գտնվում է Անկարայից շուրջ 100 կմ արևելք:

4.

Տվյալ հատվածները վերաբերում են Մուրսիլիս II-ի տարեգրությանը (A. Götze, Die Annalen des Mursilis (MVAeG 38), Leipzig, 1933).

Ա. KBo, *IV, 4, II, 16—24, 9-րդ տարի. «Թշնամին՝ Հայասա երկրի հետիոտն զինվորները և կառամարտիկները, «Բարձր երկրի»[1] կողմից Իստիտինա քաղաքը[2] ավերել էր, իսկ Կաննուվարա քաղաքը[3] շրջապատել: Նուվանծային՝ մառանապետին, բանակի հրամանատարներով, հետիոտն զինվորներով և կառամարտիկներով հանդերձ այնտեղ չի Թողել: Նուվանծային լուր ուղարկեց.— Ահա, Թշնամին՝ Հայասա երկրի բոլոր հետիոտն զինվորները և կառամարտիկները, ներս մտավ, Իստիտինա քաղաքը ավերեց, իսկ Կաննուվարա քաղաքը շրջապատեց: Հետիոտն զինվորներով և կառամարտիկներով օգնության գնա»:*

1. «Բարձր երկիրը» գտնվել է Երզնկայի դաշտում, իսկ «Բարձր երկրները» ընդգրկել են նրանից արևմուտք մինչև Եփրատի ոլորանը և վերջինից հյուսիս ընկած տարածքը։

2. Խոտիտինա քաղաքը կամ երկիրը տեղադրվում է Եփրատի հովտում, ժամանակակից Երզնկայից հարավ։

3. Կաննուվարա քաղաքը գտնվում էր Խոտիտինայից ոչ հեռու՝ դեպի արևմուտք։

Բ. KBo, IV, II, 67—75. «Իսկ երբ Աստատա քաղաքից Կարգամիշ[1] մեկնեցի, արքայաղն Նանածիտին, որին լուր տանելու նպատակով ուղարկել էի մառանապետ Նուվանծայի մոտ, ճանապարհին[2] շտապ ինձ հասավ և այսպես ասաց.— Քանի որ Թշնամի Հայասան շրջապատել էր Կաննուվարա քաղաքը, մառանապետ Նուվանծան դեպի նա գնաց, նրան հանդիպեց Կաննուվարայի մոտ և նրան 10 հազար զինվորներով ու 7 հարյուր կառամարտիկներով ճակատամարտ տվեց։ Նուվանծան նրան հաղթեց։ Սպանվածները շատ են, գերիներն էլ շատ են»։

1. Կարգամիշ (Կարքեմիշ) քաղաքը Միտաննի պետության գլխավոր կենտրոններից մեկն էր, որը գրավել էր դեռևս Սուպպիլուլիումաս I-ը։ Այն տեղադրվում է Եփրատ գետի ափին, ժամանակակից Բիրեջիկից ոչ հեռու։

2. Այդ ժամանակ Մուրսիլիս II-ը զբաղված էր Հյուսիսային Սիրիայի նվաճումով։

Գ. III, 17—26. «Երբ Կարգամիշ երկիրը ամրացրի, Կարգամիշ երկրից բարձրացա և մտա Թեգարամա երկիրը[1]։ Երբ ես հասա Թեգարամա քաղաք, մառանապետ Նուվանծան և բոլոր հրամանատարները Թեգարամա քաղաքում ինձ դիմավորեցին, ինձ հետ հանդիպեցին։ Ես, թերևս, անմիջապես գնայի Հայասա։ Աշունը վերջանում էր։ Իմ հրամանատարներն ինձ ասացին.— Աշունը վերջանում է, մեր տե՛ր, Հայասա չգնաս։— Հայասա չգնացի»։

1. Թեգարաման գտնվել է Մալաթիայից անմիջապես հյուսիս՝ Եփրատի աջ ափին։ Թեգարամա երկիրը նույնացվում է Աստվածաշնչի Թոգարմայի հետ (տե՛ս, Ծննդոց, գլ. ժ, 4, Եզեկիել, գլ. ԼՀ, 6)։

Դ. III, 57—72, IV, 4—41, 10-րդ տարի. «Իսկ երբ գարուն բացվեց, երկրորդ ճանապարհով գնացի Ազզի երկիր[1]։ Ինգալավա քաղաքում հետիոտն զինվորների և կառամարտիկների զորատես կատարեցի։ Իսկ քանի որ ես՝ Արևայինս ազզիցիների հետ նախ-

կինում կռվել էի (Նուվանծան՝ մառանապետը, Կաննուվարա քաղաքի մոտ նրանց դեմ պատերազմել էր), նրանք բոլորովին չհամարձակվեցին կրկին ցերեկով ինձ ճակատամարտ տալ։ Նրանք նախատեսան գիշերով ինձ վրա հարձակվել, ասելով՝ գիշերը նրան մեծ վնաս կհասցնենք։ Իսկ երբ Արևայինս լուր լսեցի, թե ազզիցիները նախատեսնում են գիշերը բանակի կենտրոնի վրա հարձակվել, Արևայինս բանակները միացրի։ Ցերեկը բանակը թեթև է շարժվում, իսկ գիշերը այն նույնպես դարանակալ է լինում։ Երբ ազզիցիները այդպիսի պահպանություն տեսան, այլևս ինձ վրա հարձակվել չհամարձակվեցին։

. . . . . .

Երթով գնացի դեպի Արիպսա քաղաք[2] ճակատամարտ տալու։ Բայց տվյալ Արիպսան ջրով է շրջափակված[3]։ Քիչ հեռու եղած քաղաքի բնակչությունը իր ձեռքում էր պահում ժայռերը։ Այն շատ բարձր է։ Քանի որ ողջ երկիրը վերև էր բարձրացել, նրա հետիոտն բանակը միավորված էր, Արևայինս ճակատամարտ տվեցի։ Հզոր Դատան՝ իմ տերը[4], Արիննա քաղաքի[5] Խատանու աստվածուհին՝ իմ տիրուհին, Խաթթի երկրի Խատանու աստվածուհին, Խաթթի երկրի Ինարան[6], բանակի Դատա աստվածը, մարզագետնի Սաուսգա աստվածուհին և բոլոր աստվածները առաջ խոյացան։

. . . . . .

Արիպսա քաղաքը առանց ճակատամարտի վերցրի։ Այն դասնցի Խաթթուսաս քաղաքի ողջ ռազմական ավարն էվին։ Ամրոցների հետիոտն զինվորները և կառամարտիկները սարուկներից բացի շատ խոշոր և մանր եղջերավոր անասուններ ձեռք բերեցին։ Արևայինս ճիշտ այն օրը հենց Արիպսա քաղաքում քնեցի։

Իսկ առավոտյան ճակատամարտ տալու նպատակով արշավեցի դեպի Դուկկամա քաղաք[7]։

Իսկ երբ Դուկկամա քաղաքի մարդիկ ինձ տեսան իրենց դիմացը, նրանք ինձ ընդառաջ եկան, նրանք իմ ոտքերի մոտ ծնկի եկան և ինձ ասացին.— Մեր տե՛ր, մեզ՝ Արիպսա քաղաքի բնակիչների համար, Խաթթուսաս քաղաքի ռազմական ավար մի հաշվի։ Մեզ, մեր տե՛ր, հավաքվածներիս վերցրու և մեզ ուղարկիր Խաթթուսաս քաղաք, մեզ դարձրու հետիոտն զինվորներ և կառամարտիկներ։

Այնուհետև Արևայինս թույլ չտվեցի թալանել Դուկկամա քաղաքը։ Այն ռազմագերիներով հանդերձ վերցրի։ Դուկկամա քաղաքում 3 հազար ստրուկ կար, որոնց պալատ բերեցի։ Նրանց հետիոտն զինվորներ և կառամարտիկներ դարձրի։

Իսկ երբ Ազզի երկրի մարդիկ տեսան, թե ինչպես եմ սկսել գրավել ճակատամարտով քաղաքներն ու ամրոցները, Ազզի երկրի մարդիկ, ովքեր իրենց ձեռքում պահում էին բնակավայրեր, ամրոցներ, բարձր լեռների ժայռեր, դժվարամատչելի տեղեր, նրանք վախեցան։ Ինձ ընդառաջ եկան երկրի ծերունիները։ Նրանք իմ ոտքերի մոտ ծնկի եկան և ինձ ասացին.— Մեր տե՛ր, մեզ մի ոչնչացնի, մեզ ծառայության համար վերցրու։ Մեր տիրոջ համար կսկսենք հետիոտն զինվոր և կառամարտիկներ տալ։ Խաթթի երկրի մարդիկ, ով այստեղ է, նրան կհանձնենք։ Նրանց Արևայինս հետո չոչնչացրի։ Նրանց ծառայության վերցրեցի, նրանց ծառա դարձրի։

Աշունը վերջանում էր։ Ազզի երկիրը չամրացրի։ Ազզի երկրի մարդկանց երդվեցրի և հետո Խաթթուսաս քաղաք եկա։ Խաթթուսասում ձմեռեցի և տարվա տոնակատարությունները արեցի»։

1. Ազզին Հայասայի գլխավոր նահանգն էր։ Այն տեղադրվում է Ճորոխի ավազանում։ Այս տեղանունը պահպանվել է Ազորդ ձևով, որպես Հայոց Տայքի մի գավառի անվանում։

2. Ինգալավան ու Արիպսան Ազզի երկրի գլխավոր քաղաքներից էին. գտնվում էին վերջինիս կենտրոնական շրջանում։

3. Շումերերեն ծով բառը ունեցել է նաև «լիճ», «ջրամբար» նշանակությունը։

4. Դատա— խեթական դիցարանի աստվածներից մեկն էր։ Այն պատկերվում էր իբրև ձուկ, ցուլ ու պատանի և նվիրված էր ջրի պաշտամունքին։ Նրա ձկնակերպ արձանը դրված էր Խարշալաշի քաղաքի աղբյուրի ակունքի մոտ։

5. Խեթական պետության պաշտամունքային կենտրոններից մեկն էր, տեղադրվում է Խաթթուսաս-Բողազքոյից հարավ։

6. Ինարա— խեթական դիցարանի հողմի գերագույն աստծո դուստրը։

7. Դուկկաման տեղադրվում է Ազզի երկրի հյուսիսարևելյան շրջանում։

b. IV, 42—55, 11-րդ տարի. «Իսկ երբ գարուն բացվեց, ցանկացա Ազզի երկիրը ամրացնելու գնալ։ Բայց երբ Ազզի երկրի մարդիկ լսեցին, որ Արևայինը գալիս է, Ազզի երկրի մարդիկ Մուտտիսի՝ Խալիմանա քաղաքի մարդու գլխավորությամբ ընդառաջ եկան։ Ինձ այսպես խնդրեցին.— Մեր տե՛ր, քանի որ մեզ մոտ արդեն ավերածություն արել ես, մեր տե՛ր, նորից մի գա, մեզ, մեր տե՛ր, ծառայության վերցրու, մեր տիրոջը հետիոտն զինվորներ, կառամարտիկներ կսկսենք տալ։ Խաթթի երկրի մարդիկ, ով մեզ մոտ է, նրան կհանձնենք։

Նրանք Խաթթի երկրի հազար ստրուկ ինձ վերադարձրին[1]։

Քանի որ Մուտտիսի՝ Խալիմանա քաղաքի մարդու գլխավորությամբ ինձ այս ձևով ընդառաջ եկան և Խաթթի երկրի մարդկանց ինձ հանձնեցին, Արևայինս կրկին Ազզի երկիր չգնացի։ Նրանց ծառայության վերցրեցի, նրանց ծառա դարձրի։ Դրանից հետո Արևայինս այդ տարում ոչ մի տեղ չգնացի։ Մտա Անկուվա քաղաք[2] *և Անկուվայում ձմեռեցի»։*

1. Այստեղ նշված է Խաթթի երկրից հայասացիների վերցրած ռազմագերիների մասին, որոնց նրանք ստրկացրել էին։ Դրանք խեթեր էին, որոնց Մուրսիլիս II-ը ետ էր պահանջում։

2. Խեթական թագավորների ձմեռանոց քաղաքն էր։ Գտնվում էր Խաթթուսասից արևելք. այն տեղադրվում է ժամանակակից Բաքիրքոզազ և Խաջիկ բնակավայրերի շրջանում։

ԱՍՈՒՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՑԵՂԵՐԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի տերիտորիայում ճնագույն ժամանակներում ապրած ցեղերի ու ժողովուրդների, ինչպես նաև հայ ժողովրդի հին շրջանի պատմության մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում մ. թ. ա. XIII—VII դդ. ասուրական սեպագիր արձանագրությունները։ Դրանք մեծ թվով վկայություններ են պարունակում Հայկական լեռնաշխարհի այդ ժամանակաշրջանի հաղարական իրադրության, սոցիալ-տնտեսական ու հասարակական հարաբերությունների մասին։ Այդ արձանագրությունները թողել են Ասորեստանի թագավորները, որով և պայմանավորված է դրանց չափազանց միտումնավոր ու կողմնակալ բնույթը, ճետեվարար, արձանագրությունները պետք է օգտագործել խիստ զգույշ և ինձնադատաբար։

Մասին բերված ասուրական արձանագրությունների տեքստերը բնագրից թարգմանել է Հ. Մ. Ավետիսյանը։ Թարգմանիչը օգտա-

գործել է նաև Ի. Մ. Դյակոնովի **АВИИУ** (Ассиро-вавилонские источники по истории Урарту, *տե՛ս* «Вестник древней истории», 1951, № 2, 3, 4) հրատարակության ոուսերեն տեքստերն ու ծանոթագրություններ:

1.

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ (ՇԱԼՄԱՆԵՍԱՐԵԴ) I
(մ. թ. ա. 1274—1245 թթ.)

Արձանագրությունը հայտնաբերվել է Աշշուր քաղաքում (հերկային Կալաթ-Շիրկաթի ավերակներ Իրաքում):

Բնագիրը տե՛ս "E. Ebeling, B. Meissner, E. Weigner, Die Inschriften der Altussyrischen Könige, Leipzig, 1926" հրատարակության մեջ:

(I. 22) Երբ Աշշուրը՝ տերս, որպեսզի նրան երկրպագեն, Սևագլուխներին[1] *ղեկավարելու համար օրինավոր կերպով ընտրեց ինձ և տվեց գալխոն, զենք և գավազան, պարգևեց ինձ տիրապետության օրինական թագը, այն ժամանակ՝ իմ գահակալության տարին, ուրուատրիները*[2] *ըմբոստացան իմ դեմ: Զեռք կարկառեցի Աշշուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին: Իմ զորքի հավաքը կազմակերպեցի (և) նրանց ամուր լեռնաշղթաները ես բարձրացա: Խիմմե, Ուատկուն*[3]*, Մաշգուն*[4]*, Սալուա, Խալիլա, Լուխա, Նիլիպախրի և Զինգուն՝ նրանց ութ երկրներին և նրանց աշխարհազորերին ես հաղթեցի: Նրանց 51 քաղաքները քանդեցի, այրեցի. նրանց ռազմավարը, նրանց ունեցվածքը հափշտակեցի. բոլոր ուրուատրիներին երեք օրում խոնարհեցրի իմ տիրոջ՝ Աշշուրի ոտքերի (առաջ): Նրանց ընտրյալ սերունդը բռնեցի, ծառայության և իմ աշխատանքի համար վերցրի, լեռների ծանր հարկը նրանց վրա հավիտյան դրի: Արինու քաղաքը՝ ամրոց ու լեռ, որ նախապես ընդվզել էր, արհամարհել էր Աշշուր աստծուն՝ ես այդ քաղաքը Աշշուրի և մեծ աստվածների՝ տերերիս օգնությամբ հաղթեցի, ավերեցի, մոխիր թափեցի վրան, (իսկ) նրա (մնացորդ) փոշին ժողովեցի և իմ քաղաքի՝ Աշշուրի*[5] *դարպասի մոտ կուտակեցի՝ ապագային (ի սարսափ): Այդ ժամանակ ես ողջ Մուցրա երկիրը խոնարհեցրի տիրոջս՝ Աշշուրի ոտքերի առջև:*

(II. 16) Երբ մեծ աստվածների հրամանով, Աշշուրի՝ իմ տիրոջ վեհ ուժով դեպի Խանիգալբատ[6] *երկիրը գնացի, ես բացեցի*

ժժվարանց ճանապարհները և անմատչելի անցումները: Շատուարան[7] *Խանիգալբատի թագավորը և նրա հետ Խաթթիի*[8] *և Ախլամուի*[9] *բանակը, շրջապատեց անցումները և գրավեց իմ ջրարբին: Իմ բանակի ծարավ ու հոգնած լինելու ժամանակ, իրենց բանակի բազմությամբ, ահավոր կերպով հարձակվեցին, իսկ ես հարվածեցի և նրանց պարտության մատնեցի: Նրանց բազմաթիվ զորքերից շատերին*[10] *սպանեցի: Ինչ վերաբերում է իրեն*[11]*, հետապնդեցի սուր տեգերով մինչև մայրամուտ, նրանց ջոկատներին ջարդեցի, նրանցից 14.400 (հոգու) կենդանվույն կուրացրի, գերի վերցրի: Նրա ինն ամուր կենտրոնները և նրա մայրաքաղաքը նվաճեցի, նրա 180 քաղաքները բլուրների և ավերակների վերածեցի: Խաթթիի և Ախլամուի զինվորներին՝ նրա դաշնակիցներին, գառների նման մորթեցի: Եվ այն ժամանակ Թայդայից*[12] *մինչև Իրրիդի*[13]*, Քաշիյարա լեռների շրջանից մինչև Էլուխատ*[14] *քաղաքը (և) Սուդա ամրոցը, Խառան ամրոցից մինչև Եփրատի ափին գտնվող Կարբեմիշը (ընկած) նրանց քաղաքները նվաճեցի, նրանց երկբրները գրավեցի, իսկ մնացած քաղաքները կրակով այրեցի:*

(III. 8) Այնուհետև կութիները[15]*, որոնք անթիվ էին ինչպես երկնքի աստղերը և կոտորածի սովոր, ըմբոստացան, ինձ հետ թշնամացան, անախորժ դարձան: Աշշուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին, իմ ձեռքը կարկառեցի: Հուսադրող քաջալերությամբ (և) արդարամտորեն նրանք ինձ պատասխանեցին: Ես թողեցի իմ զորքի ճամբարը, վերցրի իմ լավագույն մարտակառքերի մեկ երրորդը և նրանց դեմ ճակատամարտի նետվեցի: Ուրուատրի (երկրի) սահմանից մինչև Կուդմուխի*[16] *երկիրը՝ երկար բերուներ*[17] *հեռավորության վրա ընկած շրջանը, նրանց բազմաթիվ զինվորների կյանքը ջրի պես պարպեցի, նրանց զինվորների դիակներով ընդարձակ դաշտը լցրի: Նրա ռազմավարը, նրա նախիրը, նրա հոտը, նրա ունեցվածքը Աշշուր՝ իմ քաղաքը, բերի:*

1. Սևագլուխներ— խոսքը վերաբերում է Ասորեստանի բնակչությանը:
2. Ուրուատրիներ— Հայկական լեռնաշխարհի ցեղերից, գուցե ուրարտացիներ:
3. Ուատկուն— երկիր, որը տեղադրվում է Զեգիրեթ իրն Օմարից դեպի արևելք գտնվող տարածքում:
4. Մաշգուն— հնարավոր է կարդալ նաև Բարգուն:
5. Ասորեստանի այս մայրաքաղաքի և գերագույն աստծու անունները նույնն են՝ Աշուր կամ Աշշուր:

6. Խանիգալբատ (Միտաննի, Խուռի կամ Նահրայնա)— երկիր, որը գտնվել է Հյուսիսային Միջագետքում:

7. Շատտուարա— խոսքը Խանիգալբատի թագավոր Շատտուարա II-ի (մ. թ. ա. XIII դ. առաջին կես) մասին է:

8. Խաբբի— խեթական պետություն է:

9. Ախլամու (= Արամու)— արամեական ցեղեր:

10. Բառացի՝ անհամար:

11. Խոսքը վերաբերում է Շատտուարա II-ին:

12. Թայդա— քաղաք, որը տեղադրվում է Միտաննիի հարավային մասում:

13. Իրրիդե— քաղաք, որը գտնվում էր Եփրատից դեպի արևելք, Կարքեմիշի և Խառանի միջև:

14. Էլուխատ— քաղաք, որը նույնացվում է Աշշուրնածիրապալ II-ի (883—859) արձանագրություններում հիշատակված Խալծիլուխայի հետ. տեղադրվում է Գյուզել-Շեհիր վայրի մոտերքում, Ամիդ-Դիարբեքիրից հարավ-արևելք:

15. Կուրխեներ— ցեղեր, որոնք բնակվում էին Միջագետքից հյուսիս-արևելք գտնվող տարածքում:

16. Կուդմուխի— նույնացվում է Կադմուխիի հետ. տեղադրվում է Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքներից հարավ:

17. Բեռու— երկարության միավոր, մոտավորապես 7—8 կմ:

2.

ԹԻԳԼԱԹՊԱԼԱՍԱՐ (ԹՈՒԿՈՒԼԹԻԱՊԱԼ-ԷՇԱՐՐԱ) I
(մ. թ. ա. 1115—1077 թթ.)

Արձանագրությունը հայտնաբերվել է Աշշուրի ավերակներում, պահվում է Բրիտանական թանգարանում:

Բնագիրը տե՛ս "E. A. Budge, L. W. King, Annals of the Kings of Assyria. (The Cuneiform Texts with Translations, Transliterations, etc., from the Original Documents), I, London, 1902" **հրատարակության մեջ:**

(I. 62) Իմ թագավորության սկզբին 20.000 մուշքեր[1] և նրանց հինգ թագավորները, որոնք հիսուն տարի է (ինչ) նվաճել էին Աշշուրին՝ տիրոջս, հարկ ու տուրք բերող Ալզի[2] և Պուրուլումզի երկրները (և) ոչ մի թագավոր ճակատամարտում չէր թեքել նրանց կուրծքը, հույսը դրին իրենց հզորության վրա և եկան (ու) նվաճեցին Կադմուխի երկիրը: Իմ տիրոջ՝ Աշշուր աստծու հույսով հավաքեցի իմ մարտակառքերն ու զորքերը, ետ չնայեցի (և) անցա Քաշիյարա լեռան դժվարին վայրը. նրանց 20.000 ռազմիկների և նրանց հինգ թագավորների հետ Կադմուխի երկրում չափվեցի, նրանց պարտության մատնեցի. նրանց մարտիկների դիակ[ներ]ը

ինչպես հեղեղ կիտեցի, նրանց արյունը լեռների կիրճերում և բարձունքներում հոսեցրի: Նրանց գլուխները կտրեցի (և) նրանց քաղաքների շուրջը ցորենի կույտերի նման դիզեցի: Նրանց անհաշիվ ռազմավարը, նրանց հարստությունը և ունեցվածքը խլեցի: Նրանց զորքից մնացած 6000 (դինվորներ), որոնք փախել էին իմ զենքից, (եկան և) գրկեցին իմ ոտքերը: Նրանց ընդունեցի և որպես իմ երկրի ժողովուրդ համարեցի:

(I. 89) Այդ ժամանակ դեպի անհնազանդ Կադմուխի երկիրը, որը դադարեցրել էր Աշշուրի՝ իմ տիրոջ, հարկն ու տուրքը, իրոք արշավեցի: Ամբողջ Կադմուխի երկիրը նվաճեցի, նրանց ռազմավարը, նրանց հարստությունը և ունեցվածքը խլեցի. նրանց քաղաքները կրակով այրեցի, քանդեցի և ոչնչացրի: Կադմուխի երկրի մնացած (մարդիկ), որոնք իմ զենքից փախել էին, անցան Տիգրիս գետի մյուս կողմը գտնվող Շերհշե քաղաքը, որը (և) իրենց ամրոցը դարձրին: Իմ մարտակառքերն ու զինվորները վերցրի, ուղղաթիգ ու դժվարանց լեռների ճանապարհները պղնձե բրիչներով հարթեցի՝ իմ մարտակառքերի և զորքերի անցման համար հարմարեցրի, Տիգրիս գետը անցա (և) նրանց Շերհշե ամուր քաղաքը նվաճեցի, նրա ռազմիկների (դիակները) աղբակույտերի նման դիզեցի, նրանց արյունը Տիգրիս գետում և լեռների բարձունքներում թափեցի:

(II. 16) Այդ ժամանակ բաբխիների զորքը, որը եկավ Կադմուխի երկիրը փրկելու և օգնելու, ոչխարի նման զգետնեցի, նրանց ռազմիկների դիակները լեռների սաորոտում կույտերի վերածեցի, նրանց ռազմիկների մարմինները (հանձնեցի) նամե գետին՝ տանելու դեպի Տիգրիս գետը:

(II. 25) Նրանց թագավորին՝ Քալի-Թեշշուբի որդուն՝ Քիլի-Թեշշուբին, որին անվանում էին (նաև) Իրրուպի, ձեռքերովս բռնեցի, նրա կանանց, նրա հարազատ որդիներին, ազգականներին, (ինչպես նաև) 180 պղնձե անոթ, հինգ բրոնզե տաշտ, նրանց աստվածների հետ, ոսկի և արծաթ, նրանց ունեցվածքի լավագույնը ես տարա, ռազմավարը, հարստությունը դուրս բերի: Այս քաղաքը և նրա պալատը կրակով այրեցի, քանդեցի, ոչնչացրի:

(II. 36) Պանարու լեռան վրա գտնվող նրանց Ուռախինաշե[3] ամուր քաղաքի (մարդկանց) Աշշուրի՝ իմ տիրոջ փայլի (առաջացրած) երկյուղն ու սարսափը տապալեց. իրենց կյանքը փրկե-

986

ԳՐԱԴԱՐԱՆ ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ղու համար նրանք վերցրին իրենց աստվածները և թուլության նման թռան դեպի բարձր լեռների ժայռերը։ Իմ մարտակառքերն ու զորքերը վերցրի և Տիգրիս գետը անցա։ Ուռախինաշի թագավոր Շադի-Թեշշուբը՝ Խաթթուխիի որդին, (այս քաղաքը) չկործանելու համար, իր իսկ երկրում ոտքերս գրկեց. նրա հարազատ որդիներին (և) ընտանիքը պատանդ վերցրի։ (Նա) 60 պղնձե անոթ, մեծ բրոնզե տաշտ, բրոնզե կաթսա, 120 մարդ՝ խոշոր ու մանր եղջերավոր անասունների հետ, որպես հարկ ու տուրք բերեց։ Ընդունեցի նրա այս (հարկն ու տուրքը), նրան ազատեցի, իմ տերության ծանր լուծը նրա վրա դրի։ Ընդարձակ Կադմուխի երկիրը ամբողջությամբ նվաճեցի, իմ ոտքերին խոնարհեցրի...։

(II. 89) Ուժեղ ու անհնազանդ Շուբարիների երկիրը (ինձ) ենթարկեցի։ Իմ տերության ծանր լուծը դրի իրենց հարկն ու տուրքը դադարեցրած Ալզի և Պուրուլումզի երկրների վրա, (որպեսզի) հաստատապես տարեցտարի տուրքն ու հարկը ուղարկեն իմ Աշշուր քաղաքը, իմ առաջ։ Սոսկ իմ քաջության պատճառով, քանզի Աշշուր տերը չհնազանդվողին ենթարկող հզոր զենք էր տվել իմ ձեռքը և հրամայել իր երկրի սահմանը ընդարձակել, Կասկերի[4] և Ուրումացիների երկրից 4000 (մարդ)՝ Խաթթե[5] երկրի անհնազանդ զորքը, որոնք իրենց ուժով գրավել էի իմ տիրոջ՝ Աշշուրին ենթակա Շուբարթու երկրի քաղաքները՝ դեպի Շուբարթու իմ արշավելու մասին լսեցին և իմ քաջության փայլը ահաբեկեց նրանց. նրանք ճակատամարտից վախեցան և գրկեցին իմ ոտքերը։ Նրանց հարստությունը, 120 մարտակառք, նրանց լծասարքերը ևս վերցրի և նրանց իմ երկրի ժողովուրդ համարեցի։

(III. 7) Իմ քաջության զայրույթի մեջ երկրորդ անգամ դեպի Կադմուխի երկիրը գնացի, նրանց բոլոր քաղաքները նվաճեցի, նրանց ռազմավարը, նրանց հարստությունը և ունեցվածքը բռնագրավեցի, նրանց քաղաքները կրակով այրեցի, քանդեցի, ոչնչացրի, նրանց մնացած զինվորները, որոնք վախեցել էին իմ ահեղ զենքից և իմ մոտալուտ ուժեղ ճակատամարտից, իրենց կյանքը փրկելու համար բռնեցին լեռների դժվարամատույց, ուղղաձիգ վայրերը։ Նրանց հետևից բարձր լեռնաշղթաների գագաթները և դժվարանց լեռների ժայռերը, որոնք մարդու ոտքի համար անմատչելի էին, բարձրացա. նրանք ինձ հետ պատերազմ, կռիվ և ճակատամարտ տվեցին, նրանց պարտության մատնեցի, նրանց

ռազմիկների դիակները լեռների գագաթներում կիտեցի, ինչպես հնդերը՝ նրանց արյունը լեռների կիրճերում ու բարձունքներում թափեցի, նրանց ռազմավարը, հարստությունը, ունեցվածքը լեռների ծերպերից իջեցրի։ Կադմուխի երկիրը՝ նրա ողջ սահմաններով, տիրեցի և իմ երկրի սահմանների մեջ ընդգրկեցի։

(IV. 43) Այն ժամանակ Աշշուրի՝ իմ տիրոջ, հիանալի ուժի օգնությամբ, ռազմիկ Շամաշի[6] արդարացի համաձայնությամբ, մեծ աստվածների օգնությամբ, որոնք տվին ինձ աշխարհի չորս կողմերի իշխանությունը, (այնպես որ) կռվում ինձ հավասարը, իսկ ճակատամարտում հաղթողը չունեի, դեպի հեռավոր թագավորների երկրները, որոնք Վերին ծովի[7] ափին էին և որոնք երբևէ չէին նվաճվել, Աշշուրը՝ տերը, ինձ հզոց և ես գնացի։ Անմատչելի ճանապարհները, դժվար անցումները, որոնց էության (մասին) նախկինում ոչ մի թագավոր չէր իմանում, փակ ճանապարհներով, չբացված ուղիներով անցկացրի (իմ զորքը)։ Էլամա, Ամադանա, Էլխիշ, Շեռաբելի, Թարխունա, Իրբաթխուլի, Քիսրա, Թարխանաբե, Էլուլա, Խաշթարայե, Շախիշարա, Ուբերա, Միլիադրունի, Շուլիանզի, Նուրանաշե և Շեշե՝ 16 հզոր լեռները [անցա]։ Լավ տեղերը մարտակառքով [սլացա], իսկ անմատչելի [տեղերը] պղնձե բրիչով հարթեցի։ «Ուրումե» լեռնային ծառերը կտրեցի, կամուրջները իմ զորքի անցման համար բարեկարգեցի և Եփրատ[8] գետը անցա։ Թումմե (երկրի) թագավորը, Թունուբե (երկրի) թագավորը, Թուալի (երկրի) թագավորը, Կինդարի[9] (երկրի) թագավորը, Ուզուլա (երկրի) թագավորը, Ունդամունի (երկրի) թագավորը, Անդիաբե (երկրի) թագավորը, Պիլակինի[10] (երկրի) թագավորը, Աբուրգինի (երկրի) թագավորը, Քուլիբարդինի (երկրի) թագավորը, Շինիբիրնի (երկրի) թագավորը, Խիմուա (երկրի) թագավորը, Պայթերի (երկրի) թագավորը, Ուիրամ (երկրի) թագավորը, Շուրուրիա (երկրի) թագավորը, Աբաենի (երկրի) թագավորը, Ագաենի (երկրի) թագավորը, Քիրինե (երկրի) թագավորը, Այրայա (երկրի) թագավորը, Ուդինա (երկրի) թագավորը, Նադաբիա (երկրի) թագավորը, Աբարսիունի (երկրի) թագավորը, Դայաենու (երկրի) թագավորը, ընդամենը Նաիրի երկրի 23 թագավորներ, իրենց երկրներում իրենց մարտակառքերն ու իրենց զորքերը միավորեցին, կռիվ ու ճակատամարտ տալ ցանկացան։ Իմ դաժան (ու) ահեղ զենքով ևս նրանց մոտեցա, նրանց բազմաթիվ

զինվորներին, ինչպես Ադադի[11] ամպրոպը, ջարդեցի։ Նրանց զինվորների դիակները լեռների բարձունքներում և նրանց քաղաքների շրջակայքում, ինչպես ազբակույտեր, դիզեցի։ Նրա 120 մարտակառքերը ճակատամարտում ես գրավեցի։ Նաիրիի երկրների 60 թագավորներին և նրանց օգնության եկածներին իմ տեգերով հետապնդեցի մինչև Վերին ծովը։ Նրանց խոշոր կենտրոնները նվաճեցի, նրանց ռազմավարը, նրանց հարստությունը և ունեցվածքը դուրս բերի, նրանց քաղաքները կրակով այրեցի, քանդեցի ոչնչացրի, բլուրների և ավերակների վերածեցի։ Ձիերի մեծ նրամակները, ջորիները, հորթերը, նրանց դաշտերի անթիվ անասուն[ներ]ը (քշեցի) բերեցի։ Նաիրիի երկրների բոլոր թագավորներին կենդանությունն ձեռքերովս բռնեցի, (նրանց) ներում շնորհեցի, նրանց կյանքը փրկեցի գերեվարությունից ու կալանավորությունից (?), ապա իմ տիրոջ՝ Շամաշ աստծու առաջ նրանց ազատեցի, (բայց) ստիպեցի հետագա հավիտյան ստրկության համար իմ մեծ աստվածներին երդում տալ։ Նրանց հպարտ որդիներին պատանդ վերցրի։ 1200 ձի, 2000 (խոշոր եղջերավոր) անասուն որպես հարկ նրանց վրա դրեցի (և) ազատ արձակեցի դեպի իրենց երկրները։

(V. 22) Դայաենու երկրի թագավորին՝ Սենիին, որը չէր հնազանդվել իմ տիրոջը՝ Աշշուրին, գերեվարված և կալանավորված (վիճակում) Աշշուր՝ իմ քաղաքը բերի, (բայց) ներում շնորհեցի, և իմ Աշշուր քաղաքից նրան կենդանի թողեցի՝ մեծ աստվածների փառքը փառաբանելու համար։ Ընդարձակ Նաիրի երկրին իր ողջ սահմանով ես տիրեցի (և) նրանց բոլոր թագավորներին իմ ոտքերին խոնարհեցրի։

(V. 33) Իմ արշավանքը շարունակելով՝ դեպի Խանիգալբատ երկրի ուժեղ և անհնազանդ Միլիդիա քաղաքը գնացի. նրանք իմ ուժեղ մարտական զրահից վախեցան (և) իմ ոտքերը գրկեցին։ Ես նրանցից այս քաղաքը չնվաճեցի, (միայն) պատանդներ վերցրի։ Նրանց վրա հարկ դրեցի տարեցտարի մեկ «իմերուի» չափ հանքաքար[12] (տալու)՝ դոհաբերության համար։

1. Նկատի ունի մուշքերի 20.000 զինվորներին։

2. Ալզի— տեղադրվում է Տիգրիս գետի վերին հոսանքից դեպի հյուսիս, հետագայի աղձնիքը։

3. Ուռախխնաշ կամ Ուրբաթիճաշ— քաղաք, որը տեղադրվում է Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքի շրջանում։

4. Կասկերը խեթական պետությունից դեպի հյուսիս-արևելք՝ Պոնտական լեռների շրջանում ապրող ցեղեր էին։

5. Խաթթե— այստեղ նշանակում է Հյուսիսային Սիրիան։

6. Շամաշ— արևի աստվածը ասորեստանցիների և բաբելոնացիների մոտ։

7. Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, Վերին ծովը, ավյալ արձանագրություններում, Սև ծովն է։ Սակայն կա նաև կարծիք, որ այն Վանա լիճն է։

8. Բնագրում՝ «Պուրաթթու»։

9. Այլ ընթերցմամբ՝ Դարդարի։

10. Այլ ընթերցմամբ՝ Պիլադարնի։

11. Ադադ— ամպրոպի աստվածը ասորեստանցիների և բաբելոնացիների մոտ։

12. Մագնիումի հանքաքար։

3.

ԱՇՇՈՒՐՆԱՏԻՐԱՊԱԼ II

(մ. թ. ա. 883—859 թթ.)

Արձանագրությունը հայտնաբերվել է Միջագետքի Քալխու (ներկայիս Նիմրուդ) ֆաղաֆում, պահվում է Բրիտանական թանգարանում։ Բնագիրը տե՛ս **"E. A. Budge, L. W. King,** Annals of the Kings of Assyria (The Cuneiform Texts with Translations, Transliterations, etc., from the Original Dokuments), I, London, 1902" հրատարակության մեջ։

(II. 12) Երբ ես Թուշխա[1] քաղաքում էի, (Բիթ)-Զամանիի[2] (իշխան) Ամմեբաալի, Շուբրիա երկրի (թագավոր) Անխիթեի[3], Նիրդուն երկրի (թագավոր)՝ Տուրուսիի որդի Լապտուրիի տուրքը, Նիրբին Ուրումու երկրի տուրքը և Նաիրիի երկրների թագավորների տուրքը՝ մարտակառքեր, ձիեր, ջորիներ, արծաթ, ոսկի, բրոնզե անոթներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, գինի ես ստացա, պարհակ սահմանեցի Նաիրիի երկրների վրա։

(II. 15) Նաիրիի երկրներից իմ վերադարձի ժամանակ, Նիրբու երկիրը, որը Քաշիյարա լեռների վրա էր, ապստամբեց. Նրանք իրենց ինը քաղաքները լքեցին, հույսը դրին իրենց ամուր Իշպիլիբրիա քաղաքի և բարձրաբերձ լեռների վրա, իսկ ես լեռների ստորոտները շրջապատեցի, նվաճեցի, ամուր լեռների մեջ նրանց կոտորածը կազմակերպեցի, նրանց արյունով լեռները կարմիր բրդի նման ներկեցի։ Նրանցից մնացածներին լեռների կիրճերն ու անդունդները կլանեցին։ Նրանց ռազմավարը և նրանց հարստությունը հափշտակեցի, նրանց մարտիկների գլուխները կտրեցի [և] նրանց քաղաքի դիմաց (դրանցից) աշտարակ սարքեցի, նրանց

երիտասարդ տղաներին ու աղջիկներին խարույկի մեջ այրեցի։ Բուլիանի երկրի լեռնանցքները մտա, Լուկիա գետի ափով ճանապարհը բռնած գնացի։ Խարխու երկրի քաղաքները, որոնք լեռնանցքներում էին, նվաճեցի, մեծ կոտորած կազմակերպեցի, նրանց ռազմավարը հափշտակեցի, քաղաքները կրակով այրեցի և հասա Արդուպա քաղաքը։

1. Թուշխա կամ Թուշխան— ներկայիս Կարխն է։
2. Բիթ-Զամանի («Զամանուի տունն»)— արամեական իշխանություն է, որի կենտրոնը գտնվում էր Ամեդու (ներկայիս Ամիդ կամ Դիարբեքիր) քաղաքում։
3. Աձխիբե— այլ ընթերցմամբ՝ Իլու-Խիբե։

4.

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ (ՇՈՒԼՄԱՆՈՒԱՇԱՐԵԴ) III
(մ. թ. ա. 858—824 թթ.)

Արձանագրությունը հայտնաբերվել է Աշշուրի ավերակներում։ Տրվում է քառ «G. G. Cameron, The Annals of Shalmaneser III, King of Assyria, «Sumer», VI, 1950, № 1» հրատարակության։

(I. 28) Այն ժամանակ՝ իմ թագավորության սկզբին, երբ փառավոր կերպով իմ թագավորության գահին նստեցի, մարտակառքեր և զորքեր հավաքեցի (և) Սիմեսի լեռնանցքով Նինևիի Արիդու ամուր քաղաքին մոտեցա։ Քաղաքը շրջապատեցի, նվաճեցի, նրանց բազմաթիվ դիվորներին կոտորեցի, նրանց ռազմավարը հափշտակեցի։ Արիդուից մեկնեցի, Խուբուշքիա[1] քաղաքին մոտեցա։ Խուբուշքիա քաղաքը հարյուր շրջակա քաղաքների հետ կրակով այրեցի։ Կակին՝ Խուբուշքիա քաղաքի թագավորը, իմ ահեղ զենքերի փայլից սարսափեց և ապաստանեց իր ամուր լեռներում։ Նրա հետևից լեռները բարձրացա։ Լեռների մեջ ուժեղ ճակատամարտ տվեցի։ Նրա ունեցվածքը լեռներից դուրս բերի։ Խուբուշքիայից մեկնեցի (և) դեպի Նաիրի երկրի ծովը[2] գնացի, իմ զենքերը ծովում լվացրի, իմ աստվածներին զոհաբերություններ կատարեցի։ Ծովից վերադառնալիս Գիլզանու[3] երկրի Ասու (թագավորի) տուրքը ստացա (և) իմ Աշշուր քաղաքը տարա։

(I. 57) Իմ իշխանության երրորդ տարին Ադինիի որդին՝ Ախունին իմ ահեղ զենքերից վախեցավ, իր թագավորական Բիլ-Բարսիպ[4] քաղաքը լքեց (և) Եփրատ գետը անցավ։ Նինվեից մեկնեցի (և) Բիլ-Բարսիպ քաղաքը, Պիթիրու քաղաքը, որոնք Եփրատի մյուս ափին էին և որոնք Թիգլաթպալասարը[5] իմ հայրը, նվաճել էր, ես ինքս նվաճեցի։ Իմ վերադարձի ժամանակ Ալզի երկրի լեռնանցքները մտա։ Ալզի երկրից մինչև Սուխմե[6] երկիրը, Սուխմի երկրից մինչև Դայաենի երկիրը, Դայաենի երկրից մինչև ուրարտացի Արամուի Արծաշքուն[7] թագավորական քաղաքը (գնացի)։ Արամուն հույսը դրեց իր զորքերի բազմության վրա, կռիվ ու ճակատամարտ տալու համար իր բազմաթիվ ձիավորներին իմ դեմ հանեց։ Նրան պարտության մատնեցի և նրա ձիերն ու ռազմական իրերը հափշտակեցի։ (Նա) իր կյանքը փրկելու համար բարձրաբերձ լեռները նկավ։ (Նրանք) իմ ահեղ զենքից վախեցան (և) իրենց քաղաքները լքելով՝ անմատչելի լեռներում ապաստանեցին։ Արծաշքուն՝ նրա թագավորական քաղաքը, շրջակայքի քաղաքների հետ, նվաճեցի։ Նրա անչափ ունեցվածքը (և) հարստությունը դուրս բերի։ Քաղաքները քանդեցի, ոչնչացրի, կրակով այրեցի։

(III. 34) (Իմ) իշխանության 15-րդ տարում դեպի Նաիրի երկիրը գնացի։ Տիգրիս գետի ակունքում՝ գետաբերանում, լեռների բարափի վրա իմ թագավորական կոթողը սարքեցի։ Իմ հզորության փառքը, իմ խիզախ արշավանքները նրա վրա արձանագրեցի։ Տունիբունի երկրի լեռնանցքները մտա, ուրարտացի Արամուի քաղաքները մինչև Եփրատի ակունքը քանդեցի, ոչնչացրի, կրակով այրեցի։ Դեպի Եփրատի ակունքը գնացի, իմ աստվածների համար (կատարված) զոհաբերությունները (նրա մեջ) նետեցի, Աշշուրի զենքը (նրա) մեջ լվացրի։

Դայաենի երկրի թագավոր Ասիան իմ ոտքերը գրկեց, հարկն ու տուրքը, (ինչպես և) ձիերը վերցրի, իմ թագավորական կոթողը կառուցեցի, նրա քաղաքի մեջտեղը կանգնեցրի։ Եփրատի ակունքից իմ վերադառնալու ժամանակ, դեպի Սուխնե երկիրը գնացի, (նրա) հինգ ամուր քաղաքները, նրանց շրջակայքի քաղաքների հետ նվաճեցի, կոտորած կազմակերպեցի, նրանց ռազմավարը հափշտակեցի։ Սուխնեից ես մեկնեցի, Էնզի[8] երկրին մոտեցա, (նրա) երկու ամուր քաղաքները, նրանց շրջակայքի քաղաքների հետ միասին, նվաճեցի, նրանց կոտորածը կազմակերպեցի, նրանց ռազմավարը հափշտակեցի։ Էնզիից ես մեկնեցի, Եփրատին՝ Մելիդու երկրի դիմացը, ես մոտեցա (և) Լալլիի՝ Մելիդու երկրի (թա-

գավորի) տուրքը՝ արծաթ, ոսկի, կապար և բրոնզ ևս ստացա, իմ թագավորական կոթողը կառուցեցի Եփրատի ափին, կանգնեցրի։

1. Խուբուշքիան հանդիսացել է Նաիրիի մայրաքաղաքը, որի անունով էլ հետագայում այդ երկիրը կոչվել է Խուբուշքիա։
2. Նկատի ունի Վանա լիճը։
3. Գիլզանու երկիրը տեղադրվում է Ուրմիա լճից դեպի արևմուտք։
4. Թիլ-Բարսիպ— բնագրում՝ Քիլ-Բուրսաիպ։
5. Բնագրում՝ Քուբբուլքիտապալ-էշարրա։
6. Սուխմե կամ Սուխնե երկիրը տեղադրվում է Արածանի գետի ստորին հոսանքներից հյուսիս։
7. Արծաշրու քաղաքը, Քերևա, ներկայիս Արճեշն է։
8. Էնզի երկիրը նույն էնզիտու երկիրն է, հետագայի Անձիտը, որը գտնվել է Արածանիի ստորին հոսանքից հարավ։

5.

ՍԱՐԳՈՆ (ՇԱՐՐՈՒ-ԿԵՆՈՒ) II
(մ. թ. ա. 721—705 թթ.)

Դեպի Ուրարտու կատարած VIII արշավանքի նկարագրությունը տրվում է ըստ «**F. Thureau-Dangin,** Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912» հրատարակության։

(8) Իմ թագավորական Կալխու[1] քաղաքից մեկնեցի և վերին Զաբ գետը իր հորդացած ժամանակ սրընթաց անցա։ Երրորդ օրը, պարծենկոտի բերանը սանձահարելու և թշնամու ոտքերը կապելու համար, երկյուղածորեն խոնարհվեցի էնլիլ (և) Նինլիլ[2] աստվածների առաջ, այնուհետև Ներքին Զաբը, որն անցնելը դժվարին էր, Շամաշի և Մարդուկի զորքերին ցատկել տվեցի ինչպես սովի վրայով։ Կուլլար լեռնանցքը՝ բարձր լեռան լուլումու երկրի, որին կոչում են Զամուա[3], ես մտա։ Սումբի մարդում զորահանդես կազմակերպեցի և ստուգեցի ձիերի ու մարտակառքերի քանակը։ Աշշուրի, Նաբուի և Մարդուկի մեծ օգնությամբ երրորդ անգամ որշեցի դեպի լեռների խորքը արշավել. Ներգալի[4] և Ադադի իմ առջևից գնացող ռազմանշանների լուծը դրեցի Զիկկրատուի և Անդիայի[5] վրա։

(15) Ես անցա Նիկիպալա և Ուպա լեռների միջով, որոնք ծածկված էին բոլոր տեսակի ծառերով, (նրանց) մեջ խառնվածու-

թյուն էր (և) նրանց անցումը վտանգավոր, ինչպես նոճու անտառում՝ նրանց շրջապատում տարածված էր ստվերը, այնպես որ նրանց ճանապարհներով գնացողը արևի ճառագայթ չի տեսնում։ Իսկ Բույա գետի, որը անցել եմ 26 անգամ, ջրերի բարձրացումից իմ բազմաթիվ զորքերը չվախեցան։ Սիմիրիա մեծ լեռնագագաթը ցցված էր տեգի ծայրի նման և բարձրացնում էր գլուխը լեռների և աստվածների տիրուհու բնակարանի վրա, իր գագաթի բարձրությամբ հասնում էր երկնքին, (իսկ) արմատները հասնում էին մինչև դժոխքի խորքը։ Ինչպես ձկան մեջքը՝ (նա) մի կողմից մյուսը անցում չուներ, (և) առջևից ու հետևից դժվարանց էին նրա լանջերը, նրա կողքերով ձգվում էին անդունդներ ու կիրճեր։ Նրան նայելիս մարդ վախենում էր. կառքերի վերելքի և ձիերի արագ ընթացքի համար աննպաստ էր, իսկ հետևակորի անցման համար նրա ճանապարհը դժվարանց էր։ Բանականության ցոլքով ու մտքի ըմբռնմամբ, որը էա[6] (աստվածը) և աստվածների տիրուհին հաստատեցին իմ մեջ, ի հաղթահարումն թշնամու երկրի, բացեցին իմ ոտքերը, իմ սակրավորներին ստիպեցի բարձրացնել հզոր պղնձե բրիչները և նրանց բարձր լեռների ժայռերը կրաքարի նման ուղղեցին, բարելավեցին արշավուղին։ Իմ զորքին առաջնորդեցի (և) մարտակառքերին, այրուձիին, ռազմիկներին, իմ կողքից գնացողներին հզոր արծվի պես թռչել տվի նրա (=լեռան) վրա։ Նրանց հետևից ուղարկեցի գումակավորներին և սակրավորներին, իսկ ուղտերը, բեռնավոր ավանակները՝ լեռան մեջ սնված այծերի նման թռչկոտում էին նրա գագաթների վրա։ Աշշուր աստծու բազմաթանակ զորքը հաջողությամբ բարձրացրի դժվարանց բարձունքները և այդ լեռան բարձունքին սարքեցի իմ ճամբարը։ Սինախուլզի, Բիրուաթթի բարձր (?) լեռները, որոնց (վրա) աճում էին անուշ բուրմունք ունեցող կարշու և ծումլալու խոտերը, (ինչպես նաև) Տուրտանի, Սինաբիր, Ախշուրու և Սուլա՝ (ընդամենը) յոթ լեռներ, դժվարությամբ անցա. Ռապպա (և) Արատտա գետերը, որոնց հունները խորխորատների նման էին, ես անցա։ Մաննացիների երկրի[7] Սուրիկաշ մարզը, որը Կարալլու և Ալլաբրիա[8] երկրների սահմանի մոտ էր, ես իջա։ Մաննայի Ուլլուսունուն, որի համար ես տարեցտարի վրիժառու էի լինում, լսեց իմ արշավանքի ընթացքի մասին և իր մեծամեծների, ավագների, խորհրդականների և իր տոհմի անդամների, նահանգապետների և իր

երկրի ղեկավարների հետ միասին հրճվալի սրտով և ուրախ դեմքով առանց պատանդի, արագորեն իր երկրից դուրս եկավ և Իզիրտուից՝ իր թագավորական քաղաքից մինչև իր երկրի սահմանամերձ Սինիխինի բերդը, առջևս եկավ. լծկան ձիեր՝ իրենց լծասարքով հանդերձ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ՝ իր տուրքը, բերեց և համբուրեց ոտքերս: Լաթաշե բերդին, որը Ալլաբրիա երկրի Լարուեթե մարզի գետի վրա է, ես մոտեցա: Ալլաբրիացի Բելապալիդդինայի տուրքը՝ ձիեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, վերցրի, (այնուհետև) իջա Պարսուաշ[9] երկիրը: Նամրու[10], Մանգիբուտու, Բիթ-Աբդադանի երկրների և մեդացիների հզոր երկրի պետերը լսեցին իմ արշավանքի ընթացքի մասին, հիշեցին իմ իշխանության նախորդ տարում իրենց երկրների ամայացման մասին և սարսափը թափվեց նրանց վրա: Իրենց ծանր տուրքը իրենց երկրներից բերին և Պարսուաշ երկրում ինձ հնազանդվեցին...:

(51) Պարսուաշ երկրից մեկնեցի, մաննացիների երկրի Միսսիմարզին մոտեցա: Ուլլուսունուն իր երկրի մարդկանց հետ ինձ սրտանց ծառայելու համար իր Զիրդիակկա ամրոցում սպասում էր իմ գալստյանը: Իմ պաշտոնյաների՝ Ասորեստանի նահանգապետների նման, իմ զորքի սննդի համար ալյուր և գինի լցրեց մառանները: Իր ավագ որդուն, ողջույնի նվերների հետ, ինձ հանձնեց և իր թագավորության ամրապնդման համար, իմ պատվին կոթող կանգնեցրեց[11]: Մեծ լծկան ձիեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ՝ նրա տուրքը, ես վերցրի: Իր (թշնամիներից) վրեժը լուծելու համար նա (իմ առջև) փովեց երեսի վրա: Դաժան թշնամի կակմեացիների ոտքը իր երկրից կտրելու, Ուրսայլին[12] բաց ճակատամարտում պարտության մատնելու, ցրված մաննացիներին իրենց տեղը վերադարձնելու, իր թշնամուն հաղթականորեն ոտնահարելու (և) իր սրտի ցանկությանը հասնելու համար, նա ինքը մեծամեծների՝ իր երկրի կարգ ու կանոնը հաստատողների հետ միասին աղաչեցին ինձ և առջևս չորեքթաթ սողացին, ինչպես շուներ: Բարի վերաբերմունք ցուցաբերեցի և նրանց աղաչանքը ընդունեցի, նրանց խնդրանքը լսեցի և ասացի՝ «Ներում եմ»: Քանի որ Աշշուրը և Մարդուկը ինձ հզոր ուժ էին պարգևել և իմ զենքը աշխարհի բոլոր իշխանների վրա պանծացրել էին, նրանց խոստացա Ուրարտուն ջախջախել, նրանց սահմանը վերականգնել, մաննացիների երկրի դժբախտ ժողովրդին խաղաղություն տալ: Նրանց սիրտը հուսաց: Ուլլուսունու թագավորի՝ նրանց տիրոջ առաջ ճոխ սեղան պատրաստեցի: Էլ ավելի բարձրացրի նրա գահը, որը նրա հոր և ծնող Իրանզուի (գահն էր եղել): Ասորեստանցիների հետ միասին նրանց ուրախության սեղան նստեցրի: Եվ Աշշուրի ու իրենց երկրի աստվածների առաջ նրանք օրհնեցին իմ թագավորությունը: Ապպաթարցի Զիզին (և) քիթպաթացի Մալայան՝ Գիլիլբունդա մարզի քաղաքապետները, որ բնակվում էին հեռու լեռներում՝ հեռավոր վայրերում՝ մաննացիների և մեդացիների երկրների միջև (և) արդելակում էին (ճանապարհները) ինչպես փականք, իսկ այդ քաղաքներում բնակվող մարդիկ, որ վստահ էին իրենց անձնական ուժի վրա, չդիտեին (այլոց) տիրապետությունը (և) նրանց բնակավայրը ինձնից առաջ (իշխող) թագավորներից (և) ոչ մեկը չէր տեսել, չէր լսել նրանց անունը, չէր ստացել նրանց տուրքը՝ իմ տեր Աշշուրի մեծ անվամբ, որը ինձ վերապահել էր լեռնային իշխաններին հնազանդեցնելը և ընծաները ստանալը՝ լսեցին իմ արշավանքի ընթացքի մասին, իմ փայլի սարսափը պատեց նրանց, իրենց երկրում վախը տապալեց նրանց: Նրանց տուրքը՝ լծկան ձիերը, անհամար խոշոր ու մանր եղջերավոր անասունները Ապպաթար և Քիթպաթ քաղաքներից հավաքեցին և մաննացիների Զիրդիակկա քաղաքը՝ իմ առաջ բերին: Իրենց կյանքը փրկելու համար (նրանք) աղաչեցին և որպեսզի նրանց պարիսպները չքանդեմ, համբուրեցին իմ ոտքերը: Եվ ես նրանց երկրի բարեկեցության համար նրանց վրա վերակացու նշանակեցի և նրանց ենթարկեցի ինձ հավատարիմ անձնավորության՝ Պարսուաշ երկրի նահանգապետի իշխանությանը:

(74) Մաննացիների Զիրդիակկա բերդաքաղաքից մեկնեցի՝ 30 բերու[13], մաննացիների երկրի, Բիթ-Կապսիի և հզոր մեդացիների երկրի միջով արագորեն ես անցա: Նրա[14] Պանզիշ մեծ բերդաքաղաքին, որը հիմնված էր Զիկերտու և Անդիա երկրների պաշտպանության համար (և), որը կառուցված էր զույգ շրջանների դեմ փախստականների չփախչելու ու թշնամու ոտքերը ետ պահելու համար, ես մոտեցա: Այդ բերդաքաղաքի ամրությունը ուժեղացրի...:

(79) Պանզիշից ես մեկնեցի, Իշտարաուրա գետը անցա, Զիկերտու երկրի Աուկանե մարզին ես մոտեցա: Զիկերտացի Մետատ-

տին, որը դեն էր նետել լուծը, արհամարհել էր իր տիրոջը՝ Ուլլուսունու թագավորին (և) մոռացել էր իր սարկական վիճակը, հույսը դրեց կարգ ու կանոն չիմացող ուրարտացի Ուրսայի (Ռուսայի) վրա, դաշնակցի, որը նրա կյանքը չփրկեց. երկյուղաբար նա բարձրացավ Ուաշդիրիկկա անմատչելի լեռը և երբ նա հեռվից տեսավ իմ արշավանքի ընթացքը, նրա մկանները թմրեցին, իր երկրի բոլոր մարդկանց հավաքեց (և) **դժվարությամբ** հեռավոր լեռները բարձրանալ տվեց, անտեսանելի դարձավ նրանց տեղը. իսկ ինքը Պարդա՝ իր թագավորական քաղաքը, որը թանկ չէր նրա համար, (և) իր պալատի ունեցվածքը լքեց ու դուրս եկավ. իր ձիերին, ճակատամարտի զինվորներին շարեց և օգնության համար ուղարկեց իր դաշնակցին՝ Ուրսային (Ռուսային)։ Նրա ահեղ (և) խիզախ զինվորներին, որոնք պահպանության համար հաստատված էին Ուաշդիրիկկա լեռան մոտ՝ սպանեցի, Իշտախպա, Սակտատուշ, Նանզու, Աուկանե, Կաբանի, Գուրրուսուպա, Ռակսի, Գիմդակրիկկա, Բարունակկա, Ուբաբարա, Սիտերա, Թաշտամի, Թեսամմի՝ նրա 12 ամուր քաղաքները, պարիսպները (և) նրանց շրջակայքի 84 քաղաքների հետ ամբողջությամբ նվաճեցի, նրանց պարիսպները քանդեցի, դրանց մեջ եղած տները հրդեհեցի, ջրհեղեղի պես ոչնչացրի, բլրի վերածեցի։

(91) Սուկանե մարզից ես մեկնեցի, մաննացիների Ուիշդիշ մարզին[15], որը Ուրսան (Ռուսան) խլել էր, ես մոտեցա։ Ուրարտացի Ուրսան՝ Աշշուրի և Մարդուկի անվանումը չպահպանող, տերերի տիրոջ երդումից չվախեցող, լեռնցի, սպանության սերունդ, կարգ ու կանոն չիմացող, որի շրթունքը մրթմրթում էր չար և անպետք խոսքեր, որը չէր պահպանում Շամաշի՝ աստվածների մեծ դատավորի ավանդը և տարեցտարի անդադար անցնում էր սահմանը, (նա) իր նախկին մեղքերից հետո մեծ հանցանք կատարեց իր երկրի ջախջախման և ժողովրդի ոչնչացման համար. Ուաուշ[16] մեծ լեռան մոտ, որի գլուխը ամպերին հավասար (բարձրացված) էր երկնքում...։

(110) Նրա սիրտը ցանկացավ ինձ հետ բաց ճակատամարտ տալ։ Աշշուրի և էնլիլի զորքերի անվերադարձ փախուստը նա ծրագրեց։ Այդ լեռների կիրճերում ռազմական կարգ հաստատեց։ (Ճակատամարտի) մոտեցման և սկսման մասին իմ սուրհանդակը ինձ հայտնեց։

(112) Ես, Շարրուկենուս, (աշխարհի) չորս կողմերի թագավորը, Ասորեստանի հովիվը, **էնլիլի և Մարդուկի** օրենքի պահպանողը... (123) այն բանի համար, որ ուրարտացի Ուրսայի կողմը (և) նրա լայնարձակ երկրի սահմանը չէի անցել, նրա զինվորների արյունը դաշտում չէի թափել՝ ճակատամարտում նրան պարտության մատնելու (և) նրա բերանի արհամարհանքը նրա վրա շուռ տալու համար, և որպեսզի ինքը իր մեղքը կրի՝ ձեռքերս բարձրացրի [=աղոթեցի]։

(125) Աշշուրը՝ իմ տերը, լսեց իմ արդար խոսքը և դրա նկատմամբ բարի եղավ, իմ խնդրանքին անդրադարձավ և լսեց իմ աղոթքը, ինձ օգնության ուղարկեց իր ահեղ զենքերը, որոնց հայտնվելուց անհնազանդը փախչում է արևածագից մինչև մայրամուտը. Աշշուր աստծու տանջված զինվորները, որոնք հեռավոր ճանապարհ էին կտրել, հոգնած ու ուժասպառ էին, անցել էին անհամար բարձր լեռնաշղթաներ, որոնց բարձրանալը և վայրէջքը դժվարին էր՝ ես թույլ չտվի նրանց հանգստանալ, ծարավս հագեցնելու համար ջուր չխմեցի, հանգստավայր չհաստատեցի, ճամբար չսարքեցի, իմ զինվորների (հետևից) չուղարկեցի, իմ բանակը չհավաքեցի, աջ ու ձախ (կողմերում գտնվողները չհասցրին) իմ կողմը գալ, իսկ հետևից եկողներին չսպասեցի. չվախեցա նրա բանակի բազմաքանակությունից, արհամարհեցի նրա ձիերին. հայացքի չարժանացրի նրա բազմաթիվ լանջապանակավոր զինվորներին, միայն իմ անձնական մարտակառքով և թիկնապահ ձիավորներով, որոնք (ինչպես) օտար վայրում (այնպես էլ) խաղաղության ժամանակ չեն լքում (ինձ), Սինախուծուրի ջոկատով, ինչպես զայրացած տեգ, նրա սրտին զարկեցի և նրան պարտության մատնեցի, կանխեցի նրա գրոհը, մեծ կոտորած կազմակերպեցի, նրա զինվորների դիակները բակլայի նման շաղ տվի, լեռների լանջերը լցրի, նրա[նց] արյունը գետի նման կիրճերում և վիհերում հոսեցրի, դաշտերը, հովիտները և բլուրները կարմիր բրդի նման ներկեցի, նրա ռազմիկներին, նրա նետաձիգներին, նիզակակիրներին՝ նրա ոտքի առաջ, գառան նման մորթեցի, նրանց գլուխները հատեցի, նրա առաջավորների, խորհրդականների և մերձավորների զենքերը դաշտում ջարդեցի, նրանց (իրենց) ձիերի հետ վերցրի, նրա թագավորական ընտանիքի 260 ներկայացուցիչնե-

րին, մերձավորներին, մարզպաններին, ձիավորներին իմ ձեռքով բռնեցի, նրա ճակատը կազմալուծեցի, իսկ նրան (Ռուսային) ճամբարի բազմության մեջ փակեցի, նրա լծկան ձիերին տեգերի ծայրերով ոչնչացրի։ Իր կյանքը փրկելու համար (նա) իր մարտակառքը լքեց, նստեց մատակ ձի և իր զորքի առջևից փախավ։ Զիկերտացի Մնեստոտիի և նրա հարևան թագավորների հավաքը կործանեցի, նրա գունդը ցաքուցրիվ արի, շար Թշնամու՝ Ուրարտու երկրի զորքը և նրա դաշնակիցներին պարտության մատնեցի, Ուաուշ լեռան մոտ կռացրի նրանց կուրծքը, նրանց ձիերը կիրճերն ու անդունդները լցվեցին, իսկ նրանք, ինչպես մրջյունը նեղության մեջ, բռնեցին դժվար ճանապարհները։ Իմ ահեղ զենքի զայրույթով նրանց հետևից ես ելա, վերելքն ու վայրէջքը լցրի ռազմիկների դիակներով։ Վեց բերու տարածություն՝ Ուաուշ լեռից մինչև Ջիմուր Հասպիսյա լեռը, սուր տեգերով հետապնդեցի նրանց. մնացած մարդկանց, որոնք իրենց կյանքը փրկելու համար փախան, արձակեցի (նրանց) Աշշուրի՝ իմ տիրոջ, հզորությունը գովաբանելու համար։ Ադադը՝ Անու աստծու հզոր որդին, իր մեծ որոտի հզորությունը ղրկեց նրանց վրա. անձրևաբեր ամպով և կարկուտով վերջ տվեց մնացածին։ Ուրսան՝ նրանց տիրակալը, որը անցնում էր Շամաշի և Մարդուկի (զծած) սահմանը, որը Աշշուրին տված երդումը չէր հարգում, իմ ահեղ զենքի շառաչից վախեցավ և ինչպես կիրճերի թըռչունը, որը փախչում էր արծվի առջևից, բաբախում էր նրա սիրտը, ինչպես արյուն թափող, նա լքեց Տուրուշպան[17] իր թագավորական քաղաքը, ինչպես որսորդից փախչող (որսը), նա հասավ իր լեռան լանջը. ծննդաբերող կնոջ նման նեղվեց մահիճը, կերակուրից ու ջրից զրկեց բերանը, անուժելի հիվանդությունը դրեց իր վրա։ Իմ տիրոջ՝ Աշշուրի, հաղթանակը ընդմիշտ հաստատեցի Ուրարտու երկրի վրա, նրա համար անմոռանալի սարսափը թողեցի հավիտյան, իմ հզորության ուժը և իմ զենքերի մեծ գրոհը, որոնք իրենց նմանը չունեին երկրի չորս կողմերում և (որոնք երբեք) չէին նահանջում, այդ ահեղ ճակատամարտում Ուրարտուի վրա դառնացրի, Զիկերտու և Անդիա երկրների ժողովրդին մահվան փրփուրով ծեծկեցի։ Շար Թշնամու ոտքերը մաննացիների երկրից հեռացրի, Ուլլուսունուի՝ նրանց տիրոջ սիրտը գոհացրի և նրա դժբախտ ժողովրդի վրա լույս տարածեցի։

(156) Ես՝ Շարրուկենուա, ճշմարտություն պահպանողը, Աշշուրի և Շամաշի սահմանը չանցնողը, հեզ, անընդհատ նաբու, Մարդուկ աստվածներին մեծարողը, նրանց իրական համաձայնությամբ իմ սրտի ցանկությանը հասա, իմ հպարտ Թշնամիների վրա հաղթանակ տարա, բոլոր լեռների վրա, իրենց ամբողջությամբ ես սարսափ լցրի, լացուկոծ դրի Թշնամաբար (տրամադրված) մարդկանց վրա։ Իմ սրտի ուրախությամբ ու երջանկությամբ, երգիչներով, քնար ու թմբուկով իմ ճամբարը ես մտա, Ներգալին, Ադադին և Իշտարին՝ ճակատամարտի տիրուհուն, երկրում ու երկնքում բնակվող աստվածներին, Ասորեստանում բնակվող աստվածներին, սուրբ (և) հոյակապ զոհեր նվիրեցի, երեսնիվայր և աղոթելով նրանց առջև ես հաստատվեցի, մեծարեցի նրանց աստվածությունը։ Դեպի Անդիա և Զիկերտու՝ ուր ուղղված էր իմ հայացքը, դադարեցրի իմ արշավանքը, հայացքս ուղղեցի դեպի Ուրարտու։ Մաննացիների երկրի Ուիշդիշ մարզը, որը Ուրսան վերցրել ու յուրացրել էր, նրա բազմաթիվ քաղաքները, որոնք երկնքի աստղերի պես անթիվ էին, բոլորը ես նվաճեցի, նրանց ամուր պարիսպները, հիմքերի հետ, կավամանի նման փշրեցի, հողին հավասարեցրի, նրանց բազմաթիվ, անհամար ամբարները բացեցի, անշափ հացահատիկով իմ զորքին կերակրեցի...։

(269) Սանգիբուտու[18] երկրի ամուր քաղաքներից մեկնեցի, Արմարիլի[19] մարզին մոտեցա։ Բուբուզի ամրոցը (և) հունդուր քաղաքը, որ շրջապատված էր երկու պարիսպներով..., Այալե, Շինիշպալա, Շինունակ, Արնա, Շարնի՝ յոթ ամուր քաղաքները և նրանց շրջակայքի 30 բնակավայրերը, որոնք Ուբիանդա լեռան ստորոտում էին, ամբողջությամբ քանդեցի, հողին հավասարեցրի, նրանց ծածկի գերանները կրակով այրեցի, բոցի վերածեցի, նրանց լի ամբարները բացեցի, նրանց անշափ հացահատիկով իմ զորքին կերակրեցի։ Բերքը՝ նրա ժողովրդի հույսը, և խոտը՝ նրա անասունների կյանքը, խարույկի նման այրեցի, շրջակայքը անապատի պես դարձրի։ Ընտրանց այգիները ես հատեցի, նրանց անտառները կտրեցի, նրանց խաղողի վազերը կույտերի վերածեցի և կրակով այրեցի։ Շարժվելով դեպի Արբու՝ Ուրսայի հայրական տուն և (դեպի) Բիար՝ Իշտարդուրիի (Սարդուրիի) քաղաքը գնացի, դրանց շրջակայքի յոթ բնակավայրերը, որտեղ բնակված էին նրա եղբայրները, նրա թագավորական սերմը (և որտեղ) պաշտպանությունը ուժեղ էր, այդ

քաղաքները ավերեցի, հողին հավասարեցրի, նրա խալդի աստծու արբավայրը խարույկի նմանեցրի, նրա տաճարը կործանեցի։

(280) Արմարիալիից մեկնեցի, Ուիզուկու նոճիների լեռը, որը (և) հարուստ էր մարմարով, հաղթահարեցի, Այադու[20] երկրին ես մոտեցա։ Անգալիա (Կ)ուայախին (?), Կալլանիա, Բիտայա, Ալուարզա, Կիունա, Ալլի, Արզուգու, Շիկկանու, Արդիունակ, Դայազունա, Գետա, Բանիու, Բիրխիլուզա, Դեզիզու, Դիլիզիա, Աբաինդի, Դուային, Խասրանա, Պարրա, Այածուն, Անիաշտանիա, Բալզուարզա, Խիրարդի, Շումատատար, Շալդի, Ալբուրի, Շիկարրա, Հին Ուայախը՝ 30 ամուր քաղաքները՝ ալեկոծվող ծովի ափին, մեծ լեռների վրա, շարված էին ինչպես սյուներ։ Արդիշտիունա և Կալլանիա նրա ամուր բերդերը, որոնց միջև վերևում խոյանում են Արծիդու և Մախունիա լեռները, աստղերի պես, 240 կանգուն[21] (բարձրության վրա) փայլում էին, տեսանելի էին նրանց հիմքերը և նրանց մեջ հաստատված էին նրա առաջնակարգ զինվորները, ճակատամարտում հաղթող նրա զորքը, պարսավորները և տեգակիրները՝ նրա երկրի հույսը։ Նրանք տեսան իրենց սահմանակից Արմարիալի մարզի վրա տարած հաղթանակը և դողդողացին նրանց ոտքերը. լքեցին իրենց քաղաքները, ունեցվածքը, թռչունների պես հավաքվեցին բերդերում։ Իմ բազմաքանակ զորքով նրանց քաղաքները լցրի, նրանց հարստությունը և ունեցվածքը հափշտակեցի։ Նրանց ամուր պարիսպները, շրջակա ութսունյոթ բնակավայրերի հետ քանդեցի, հողին հավասարեցրի, նրանց մեջ եղած տները հրդեհեցի, նրանց ծածկի գերանները կրակի հանձնեցի։ Նրանց լի ամբարները բացեցի, անչափ հացահատիկով իմ զորքերին կերակրեցի։ Նրանց այգիները հատեցի, նրանց անտառները կտրեցի, նրանց խաղողի վազերը ամբողջությամբ հավաքեցի և կրակով այրեցի։

(297) Այադու երկրից մեկնեցի, Ալլուրիա, Կալլանիա, Իննայա գետերը անցա, Ուայախս շրջանը՝ նրա հանգրվանը, որը (գտնվում է) Ուրարտուի սահմանի ծայրում, Նաիրի երկրի մոտ, ես մոտեցա։ Ուայախը՝ նրա ամուր քաղաքը (և) մեծ բերդը, նրա բոլոր բերդերից հզորագույնը և ամուր կառուցվածք, որտեղ բնակեցված էին նրա քաջ ռազմիկները, հետախույզները՝ շրջակա երկրների գաղտնիքների մեջ ներթափանցողները, մարզպաններին՝ իրենց դնդերի հետ, մեջը տեղավորել էր, իսկ մարտիկներին ամուր պարիսպով շրջապատել էր— այս բերդաքաղաքի Թիկունքը ես գրավեցի,

նրա զինվորներին դարպասների առաջ, ինչպես գառ, մորթեցի, նրա այգիները հատեցի, նրա անտառները կտրեցի, նրա խաղողի վազերը ամբողջությամբ հավաքեցի և կրակով այրեցի։ Բարզուրիանի, Ուալտուկույա, Կուտտա, Կիպպա, Ասապա՝ նրա հինգ ամուր ամրոցները և նրանց շրջակայքի 40 բնակավայրերը կրակով այրեցի։

(306) Ուայախից ես մեկնեցի, Նաիրիի թագավորի՝ Յանզուի երկրին ես մոտեցա։ Յանզուն՝ Նաիրիի թագավորը, չորս բերու երկիր (հեռավորությունից)՝ Խուբուշքիայից[22], իր թագավորական քաղաքից, ինձ դիմավորելու եկավ և համբուրեց իմ ոտքերը, նրա տուրքը՝ լծկան ձիեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, նրա Խուբուշքիա քաղաքում ես ստացա...։

(415) Աշշուրի՝ իմ տիրոջ մեծ զորությամբ, Նաբու (և) Մարդուկ աստվածների՝ իմ օգնականների մեծ հաղթանակով, Շամաշի՝ աստվածների մեծ դատավորի, իմ զորքի վրա շուք գցողի համաձայնությամբ, Ներգալի՝ աստվածներից հզորագույնի՝ իմ ճամբարը պահպանողի մեծությամբ, Սումբու մարզից Նիկիպպա և Ուպա անմատչելի լեռների միջով ես Ուրարտու երկիրը մտա, կատաղած շան նման, որը վախ է ներշնչում, հերոսաբար Ուրարտուի, Զիկկերտուի, մաննացիների երկրի, Նաիրիի (և) Մուծածիրի[23] միջով անցա և չհանդիպեցի զսպողին։ Ուրարտացի Ուրսայի և զիկկերտացի Մեհտաստիի բազմաքանակ զորքերին բաց ճակատամարտում ջախջախեցի. ուրարտացի Ուրսայի յոթ մարզերը, 430 քաղաքները ամբողջությամբ նվաճեցի, նրա երկիրը քանդեցի. մուծածիրցի Ուրզանայի խալդի աստծուն և նրա Բագմաշտու[24] աստվածուհուն, նրա տաճարի հարուստ ունեցվածքի հետ, 6110 մարդու, 12 ջորու, 380 ավանակի, 525 եզի, 1285 ոչխարի հետ, նրա կնոջը, նրա որդիներին, նրա դստերը գերեվարեցի, Խիպպարնա քաղաքի դիմաց անմատչելի Անդարուտտա լեռնանցքը բարեհաջող կերպով անցա, իմ երկիրը վերադարձա։

1. Կալխու— Ասորեստանի քաղաքներից է, համապատասխանում է ներկայիս Նիմրուդին։

2. Էնլիլ— չումերների գլխավոր աստվածը, հետագայում իր դերը զիջում է Աշշուրին՝ Ասորեստանում և Մարդուկին՝ Բաբելոնիայում։ Նինլիլ՝ Էնլիլ աստծու կինը։

3. Ջամուան տեղադրվում է Ադեմ և Փոքր Զաբ գետերի վերին հոսանքնե-
րում:

4. Ներգալ— ասուրական դիցարանում ստորգետնյա աշխարհի աստվածը:

5. Զիկկուրատն գտնվել է Ուրմիա լճից դեպի արևելք, Թավրիզից հյուսիս-
արևելք ընկած տարածքում: Անդրան տեղադրվում է Սեֆիդ-ռուդ գետի հովտում:

6. Էա— երկրի (գետնի) աստվածը, պաշտվում էր որպես իմաստության (գի-
տության) աստված:

7. Մաննա երկիրը գտնվել է Ուրմիա լճի հարավում. համապատասխանում
է ուրարտական աղբյուրների Մանա երկրին:

8. Ալլաբրիան տեղադրվում է Մաննայի հարավ-արևմուտքում:

9. Պարսուաշը գտնվել է Դիյալա գետի վերին հոսանքում:

10. Նամրուն տեղադրվում է Դիյալա գետի միջին հոսանքներում:

11. «Իմ պատվին կոթող կանգնեցրեց»— բառացի՝ «իր կոթողը ինձ նվիրեց»:

12. Ուրսան ուրարտական Ռուսա I թագավորն է, իշխել է մ. թ. ա. 735—
713 թվականներին:

13. Տե՛ս № 1, ծան. 17:

14. Խոսքը վերաբերում է Ուլլուսունուին՝ Մաննայի թագավորին:

15. Ուիշդիշ մարզը գտնվել է Ուրմիա լճի արևելյան ափերի մոտակայքում:

16. Ուասուշ լեռը գտնվում է Ուրմիա լճից արևելք:

17. Տուռուշպա— նույն Տուշպա քաղաքն է, ներկայիս Վանը:

18. Մանգիբուտուն տեղադրվում է Ուրմիա լճի հյուսիսում:

19. Արմարիլին կամ Արմարիալին տեղադրվում է Վանա և Ուրմիա լճերի
միջև:

20. Այադուն տեղադրվում է Վանա լճի հարավում: Կա նաև կարծիք, որ
այն գտնվել է նույն լճի հյուսիսում:

21. Կաճգուն— մոտավորապես կես մետր:

22. Խուրուշիա— տե՛ս № 4, ծան. 1:

23. Մուծածիր— ուրարտական աղբյուրների Արդինե քաղաքն է: Տեղադրը-
վում է Մեծ Զաբի վերին հոսանքներում: Հանդիսացել է ուրարտական խալդի
գերագույն աստծու պաշտամունքի գլխավոր կենտրոնը:

24. Բագմաշտու— այլ ընթերցմամբ՝ Բագբարտու:

ԱՍՈՒՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԴԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ ԸՍՏ ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑՈՒ

Դիոդորոս Սիկիլիացին հունական դասական պատմագրության աչքի ընկնող դեմքերից մեկն է: Նա ծնվել է մոտավորապես մ. թ. ա. 90 թ. Սիցիլիա կղզու Ագիրիա քաղաքում: Երկար տարիներ ճանապարհորդել է Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում: Կյանքի վերջին տարիներին հաստատվել է Հռոմում, ուր և մահացել է մոտավո-

րապես մ. թ. ա. 23 թ.: Դիոդորոսը նվիրվել է «Պատմական գրադարան» խորագիրը կրող երկասիրությամբ, որի վրա նա աշխատել է 66—36 թվականներին: Այս աշխատությունը բաղկացած է եղել 40 գրքերից, որոնցից մեզ են հասել միայն 1—5-րդ և 11—25-րդ գրքերը, իսկ մյուսներից պահպանվել են միայն հատուկտորներ, պատառիկներ: Դիոդորոսի երկն ընդգրկում է Արևելքի երկրներն, Եգիպտոսը, Հունաստանի և Հռոմի պատմությունը՝ նախապատմական ժամանակներից սկսած մինչև 60—59 թվականը: Փաստորեն, սա համաշխարհային պատմությունը շարադրելու ուղղությամբ կատարված անդրանիկ փորձն է:

«Պատմական գրադարանի» առանձնահատուկ նշանակությունը կայանում է նրանում, որ այն գրված է մեծ թվով աղբյուրների հիման վրա, այդ թվում՝ մի շարք մեզ չհասած աղբյուրների, որոնց համառոտ կամ բառացի բովանդակությունը վերաշարադրելով՝ Դիոդորոսը դրանք փրկել է անխուսափելի ոչնչացումից: Դիոդորոսի երկում արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նաև հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերի և հատկապես մ. թ. ա. III—II դդ. անցքերի վերաբերյալ: Սակայն, «Պատմական գրադարանի» առաջին հինգ գրքերը, որոնք ընդգրկում են համաշխարհային պատմության առասպելական շրջանը, պարունակում են հիմնականում լեգենդար տեղեկություններ՝ ժամանակագրական մեծ խառնաշփոթություններով լի: Այստեղ, Ասիայի երկրների պատմությունը շարադրելիս, Դիոդորոսի համար աղբյուր է ծառայել V դ. վերջերի և IV դ. կեսերի հույն նշանավոր պատմագիր Կտեսիասի՝ «Պերսիկա» («Պարսկականք») երկը: Դիոդորոսի միջնորդությամբ մեզ հասած Կտեսիասի սույն երկում խոսվում է նաև մ. թ. ա. IX դարի վերջերին Հայաստանում տեղի ունեցած որոշ իրադարձությունների մասին, սակայն ուսումնասիրողները ցույց են տվել այդ տեղեկությունների առասպելական բնույթը և գտել, որ դրանք աղավաղված ձևով են ներկայացնում պատմական իրականությունը:

Դիոդորոսից ստորև բերված հատվածները տրվում են Ս. Մ. Կուդյաշարյանի թարգմանությամբ՝ «Diodori Bibliotheca Historica, vol I—V, Lipsiae, 1866—1868» հրատարակությունից:

ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գիրք II, գլ. I, 8—10

Այնուհետև Նինոսը[1] մեծ զորքով ներխուժելով Արմենիա[2], մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց տեղի բնակիչներին. ուստի և նրանց թագավոր Բարզանեսը[3], տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դեմ կռվելու, առատ նվերներով դիմավորեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները։ Իսկ Նինոսը նրան վերաբերվեց մեծահոգաբար և համաձայնվեց, որ նա տիրի Արմենիային և, մնալով որպես իր բարեկամը, զորք ուղարկի և միջոցներ՝ իր բանակի համար։ Եվ նա, առավել ևս հզորանալով, նշանակալից զորքով դուրս եկավ նրա դեմ, բայց պարտվելով, իր զինվորների մեծ մասին կորցրեց, իսկ ինքը իր յոթ որդիների ու կնոջ հետ գերի վերցվելով, խաչ բարձրացվեց։

Գիրք II, գլ. XI, 4

Շամիրամը[5] (բնագրում՝ Սեմիրամիս) Հայկական լեռներից[6] մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25։ Նա զորքերի և եղների բազմաթիվ լծերով այդ քարը իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձրացրեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին։ Ոմանք այն, իր ձևի պատճառով, անվանում են կոթող և համարում այսպես կոչված յոթ հրաշալիքներից մեկը։

1. Ըստ Կտեսիասի խառնափնթոր ժամանակագրության, սա թագավորել է մ. թ. ա. XIII դարի առաջին կեսին և հանդիսացել է ասորեստանյան հզորության հիմնադիրը։ Սակայն, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, Կտեսիասի պատմության այս հատվածում ոչինչ չկա, որ կարելի լինի վերագրել Ասորեստանի որևէ թագավորի։ Ներբևում բերված նվաճումների ցուցակը ուրվագծում է Աքեմենյանների, և ոչ Ասորեստանի, պետության ընդարձակումը։ Ասորեստանյան թագավորների ցանկում բացակայում է Նինոսի անունն անգամ, իսկ քանի որ ավանդական պատմագրությունը (Կտեսիաս, Մովսես Խորենացի) Նինոսին ճանաչում է Ասորեստանի թագավոր և ամուսինը հռչակավոր Շամիրամի (Շամմուրամաթ, Սեմիրամիս), ըստ այդմ էլ, այժմ ընդունված է նրան նույնացնել Շամիրամի ամուսին, Ասորեստանի թագավոր Շամշիադադ V-ի (823—811) հետ, որն, իրոք, 823—820 թվականներին արշավանքներ է կազմակերպել դեպի Ուրարտու-Նաիրի և Մարաստան։

2. Արմենիա ասելով՝ Դիոդորոսը այս դեպքում նկատի ունի Հայկական լեռնաշխարհն իբրև աշխարհագրական հասկացություն. նկարագրված դեպքերի ժամանակ դեռևս չկար Արմենիա պետական կազմավորումը։ Դիոդորոսը պատմական հետագա շրջանի անվանումով բնորոշում է իր համար առավել անհայտ հին շրջանը։

3. Առասպելական անձնավորություն։ Շամշիադադ V-ի ժամանակաշրջանում Ուրարտուի թագավորն էր Իշպուինին (825—810)։

4. Դարձյալ առասպելական անձնավորություն է. պետք է նկատել, որ մարական արքայացանկը սկսվում է Դեյովկեսով (727—675), իսկ մ. թ. ա. IX դարի վերջերին այստեղ դեռևս պետական կազմավորումներ գոյություն չունեին։

5. Շամիրամ (Շամմուրամաթ, Սեմիրամիս)— Ասորեստանի կիսառասպելական-կիսապատմական թագուհի։ Ըստ ասուրական առասպելի՝ Շամիրամը եղել է Դերկետո աստվածուհու դստերը և հանդիսացել է պտղաբերության և սիրո աստվածուհին։ Ամուսնացել է Ասորեստանի Նինոս թագավորի հետ, որից ունեցել է Նինուաս անունով որդուն։ Շամիրամը կառուցել է Բաբելոն քաղաքը, գրավել է Եգիպտոսը, Եթովպիան և Լիբիան, իսկ այնուհետև արշավել է դեպի Բակտրիա ու Հնդկաստան։ Հայտնի էր իր գեղեցկությամբ, վավաշոտությամբ և պատերազմասեր բնավորությամբ։ Նրա պաշտամունքը մտել է նաև Հայաստան և կապակցվել Արա Գեղեցիկի կերպարի հետ։

Ինչպես վկայում են պատմական վավերագրերը, մ. թ. ա. IX դարի վերջերին Ասորեստանում իշխել է Շամմուրամաթ անունով թագուհի (810—806)՝ Շամշիադադ V-ի կինը և Ադադներարի III-ի (810—783) մայրն ու խնամակալուհին։ Սրա օրոք Ասորեստանի և Ուրարտուի միջև մի շարք ընդհարումներ են եղել, որոնց արձագանքներն իրենց տեղն են գտել Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելների մեջ։ Այսպիսով, Շամմուրամաթ թագուհին Շամիրամ աստվածուհու երկրային նախատիպն էր։

6. Այստեղ Դիոդորոսը նկատի ունի Հայկական Տավրոսի լեռները։

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերի և ցեղային միությունների մեջ ասորեստանյան աղբյուրներում ուրարտացիները հիշատակվում են մ. թ. ա. XIII դ. սկսած։ Ասորեստանի կազմակերպած պարբերական կողոպտիչ արշավանքները արագացնում են ուրարտական և ոչ ուրարտական ցեղային միությունների համախմբումը և միասնական Ուրարտու պետության ստեղծումը, որը մ. թ. ա.

IX դ. կեսերից սկսած աստիճանաբար ճզորանալով, ոչ միայն ճակատված է տալիս Ասորեստանի ռազմական էքսպանսիային, այլև ենթվելով կենտրոնացված պետության վրա, հակահարձակման է անցնում և Առաջավոր Ասիայում որոշ ժամանակ դառնում ճզորագույն ռազմահաղաքական ուժ:

Ուրարտական պետության ընդերքում պատմական անխուսափելի անհրաժեշտությամբ աստիճանաբար զորեղանում է իր կազմավորման ավարտին հասնող հայ ժողովուրդը, որը Ուրարտուի անկումից հետո, մ. թ. ա. VI դ. առաջին կեսին իշխանության է հասնում ի դեմս հայկական Երվանդունի հարստության: Ստեղծվում է Հայաստան պետությունը:

Հայաստանի նորաստեղծ պետությունը զարգանում է դժվարին պայմաններում. այն շուռով ընկնում է Մեդիայի (Մարաստանի), ապա Պարսկաստանի գերիշխանության տակ՝ մինչև Երվանդունիների գլխավորած պետության վերստին անկախացումը, որին ավելի ուշ գալիս է փոխարինելու Արտաշեսյան ճզոր հարստությունը:

Ուրարտական տարեգրություններն ու արձանագրությունները, ասորեստանյան, խեթական, պարսկական և այլ աղբյուրների հետ միասին լույս են սփռում ինչպես Ուրարտուի, այնպես էլ Հայաստանի վաղ շրջանի պատմության, հայ ժողովրդի կազմավորման և այլ հարակից հարցերի վրա:

Հայ ժողովրդի էթնոգենեզի ընթացքում մի շարք այլ ժողովուրդների և ցեղերի հետ միասին ուրարտացիները մտնում են կազմավորվող հայ ժողովրդի կազմի մեջ, հանդիսանալով նրա կարևորագույն բաղկացուցիչ տարրերից մեկը:

Ուրարտական աղբյուրների ներկայացվող թարգմանությունները կատարված են բնագրերից, որի ընթացքում նկատի են առնվում նախկին թարգմանությունները, սակայն, օգտագործվել են նաև այլևայլ մենագրություններ ու մամուլում լույս տեսած հետազոտություններ, ինչպես ուրարտագիտական, այնպես էլ հայագիտական բնույթի աշխատություններ:

Աշխատանքի ընթացքում օգտագործված մասնագիտական գրականության կարևորագույն մասը տրվում է ստորև, որի հապավված ձևերը նշված են ինչպես ցանկի տողասկզբներում, այնպես էլ թարգմանված արձանագրությունների նախաբաններում՝ որպես սկզբնաղբյուրների նշումներ:

1. MLV—F. E. **Schulz,** Mémoires sur le lac de Van et ses environs („Journal Asiatiquen", IX, Paris, 1840).

2. КНЗ—**М. В. Никольский,** Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», V, Москва, 1896).

3. АЭВ — **Н. Я. Марр, И. А. Орбели,** Археологическая экспедиция 1916 г. в Ван, Петроград, 1922.

4. CICh—C. F. **Lehmann—Haupt,** Corpus Inscriptionum Chaldicarum, I—II, Berlin und Leipzig, 1928—1935.

5. УКН—**Г. А. Меликишвили.** Урартские клинообразные надписи, Москва, *1960 (առաջին հրատարակությունը.— «Вестник древней истории», 1953, № № 2, 3, 4, 1954, № 1. լրացումները.— 1971, № № 3, 4).*

6. HChI—F. W. **König,** Handbuch der chaldischen Inschriften, Graz 1955—1957.

7. УПД — **И. М. Дьяконов,** Урартские письма и документы, Москва—Ленинград, 1963.

8. НУНКБ — **Н. В. Арутюнян,** Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966.

Տեքստերում ուղղանկյուն փակագծերը՝ [...], ցույց են տալիս բնագրերի վնասված մասերը, կլոր փակագծերը՝ (...), տեքստի կրճատված կամ անհասկանալի մասերը: Կլոր փակագծերի մեջ առնված բառերը կոչված են դյուրացնելու տեքստի ըմբռնումը:

Ուրարտական աղբյուրներից ստորև բերված տեքստերը բնագրերից թարգմանել և ծանոթագրել է ուրարտագետ Հ. Հ. Կարագյոզյանը:

№ 1

ՏՈՒՇՊԱ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ՎԱՆ. Սարդուրե I-ի՝ ասուրերեն լեզվով գրված տասը արձանագրություններից մեկը, որոնք բոլորն էլ գտնվել են Վանի ֆարաժայրի ստորոտում կառուցված պարսպի մեջ:

HChI, I; УКН, № 1; HChI, № 1a.

Սարդուրիի[1] արձանագրությունը, որտու լութիպրիի[2], մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, արքա-

չի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին։ Սարդուրեն՝ որդին Լութիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց։ Սարդուրեն՝ որդին Լութիպրիի, ասում է այսպես.— Ես քարերն այս Ալնիուեու[3] (քաղաքի) միջից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի։

1. Սարդուրե I (840—825)— Ուրարտուի արքա։ Մ. թ. ա. մոտավորապես 840 թ. կառուցեց Տուշպա (հետագայում՝ Տոսպ, Վան) մայրաքաղաքը՝ Վանա լճի արևելյան ափին։

2. Լութիպրի— Սարդուրե I-ի հայրը։ Կարծիք է հայտնվել, որ Լութիպրին Մինուին Արամե (860—840) արքան է, որը քիչ հավանական է։

3. Ալնիուեու— քաղաք, հավանաբար, Տուշպայի մոտակայքում։

№ 2

ՆԱԼԴՅԱՆ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ԵՎ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ՎԱՆ. Արձանագրված է Վանի բարաժայռի վրա, միջնաբերդի արևելյան դարպասների մոտ։ Արձանագրության տեքստը կրկնվում է երեք անգամ։

CICh, II; ՅKH, № 18; HChI, № 12.

Խալդյան զորությամբ Իշպուինն[1] ասում է՝ Սարդուրդորդին.— Ես, Մինուա[2] Իշպուինդորդին (և) Ինուշպուա[3] Մինուայորդին խալդական տաճարը կառուցեցինք, խալդյան դարպասները [...] հոյակապ առջևը Տուշպա[4] (քաղաքի) կառուցեցինք, զոհաբերեցինք եզներ (և) ոչխարներ։ Խալդեի կողմից, խալդյան դարպասների կողմից թող լինի ողջույն (և) մեծություն Իշպուինե Սարդուրդորդուն, Մինուա Իշպուինդորդուն (և) Ինուշպուա Մինուայորդուն։

1. Իշպուինե (825—810)— Սարդուրե I-ի որդին և հաջորդը, Ուրարտուի նշանավոր արքաներից, որի ժամանակ երկիրը տնտեսապես սկսեց հզորանալ։ Մեզ հասած հնադույն ուրարտերեն սեպագիր արձանագրությունները վերաբերում են Իշպուինեի ժամանակին։

2. Մինուա (810—786)— Իշպուինեի որդին և հաջորդը։ Մինուան Ուրարտուի առավել հզոր արքաներից մեկն էր, որի ժամանակ երկիրը տնտեսապես և ռազմական տեսակետից այնքան հզորացավ, որ Ուրարտուն արդեն կարող էր ձեռնարկել Հայկական լեռնաշխարհը մեկ միասնական պետության մեջ միավորելու գործին։



Նկար 1. Վանա բերդը

3. Ինուշպուա— *Մինուայի որդին, որը համարվել է գահաժառանգ։ Ծագային, մեզ անհայտ պատճառներով (թերևս նրա մահվան հետևանքով) մենք Ուրարտուի գահին նրա փոխարեն տեսնում ենք Մինուայի մեկ այլ, հավանաբար, երկրորդ որդուն՝ Արգիշթի I-ին (786—764)։*

4. Տուշպա— *տե՛ս № 1, ծան. 1։*

№ 3

ՎԻՏԵՐՈՒԽԵ, ԼՈՒՇԱ ԵՎ ԿԱԹԱՐԶԱ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ՎԱՆ. Արձանագրված է կոթողի վրա։ Գտնված է Վանի ս. Պողոս եկեղեցու պատի շարվածքում։ Տեքստը կրկնված է երկու անգամ, որից հետո տրված է աճեծքի բանաձևը։ Տալիս ենք հապավումներով։

CICh, IV, V; УКН, № 20; HChI, № 6.

(...) [...]։ Արշավեց Խալդեն՝ սեփական զենքը (?) (պարզած) Վիտերուխե, Լուշա (և) Կաթարզա[1] դաշնակից երքաներին Եթիունյան[2], (որ) փախչում էին (...)։ Հատկացրին արձանագրություն Անաշե[3] (քաղաքին)։ Եկավ այնտեղից [...] հազար[4] յոթ հարյուր քսան վարձկան[5], [...] հազար վեց հարյուր յոթանասուն ստրուկ, [...] հարյուր քսանվեց ձի, տասներեք հազար հինգ հարյուր քառասուն անասուն, քսան հազար յոթ հարյուր ութսունհինգ ոչխար։ [...] (...)։ Ով այս արձանագրությունը փշացնի, ով փշրի, ով հողում թաղի, ով ջուրը գցի, ով տեղից իր շարժի (?), ով արևի առջևից առանձնացնի, ով «ախնեի» սրանք անի (կամ) ասի՝ «ոչնչացրո՛ւ», ով ուրիշը ասի՝ «ե՛ս կատարեցի», Թող նրան Խալդեն[6], Թեյշեբան[7], Շիվինեն[8] չխնայե՛ն (?), թե՛ անունը, թե՛ սերունդը երկրի վրա չթողնե՛ն (?)[9]։

1. Վիտերուխե, Լուշա, Կաթարզա— *ցեղային միություններ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում։*

2. Երքուն— *լայնածավալ երկիր, որը գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսում։ Զգալի է Տայքից մինչև Սյունիք և Մասիսից մինչև Սևան, այսինքն՝ ընդգրկել է Մեծ Հայքի Այրարատ նահանգը և դեռ ավելին։*

3. Անաշե— *քաղաք, թերևս հետագայի Վաղարշակերտը։*

4. Հազարավորների թիվը չի պահպանվել։ Նույնը նաև ստորև և այլուր, անգամ հարյուրավորների դեպքում։

5. «Վարձկան»— *զորքի տեսակ, որը վարձվում է այլ, ոչ ննթակա ցեղային միություններից։ Ուրարտական բանակում վարձկանների գոյության մասին առաջին անգամ կարծիք է հայտնել Գ. Ա. Ղափանցյանը, որը հաստատվում է ավյալ արձանագրության համապատասխան հատվածով, որը մինչև վերջերս ճիշտ չէր թարգմանվում։*

6. Խալդե— *ուրարտական դիցարանի գերագույն աստվածը։ Պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր Արդինե (Մուծածիր) քաղաքը՝ Հայկական լեռնաշխարհի հարավային ծայրամասում։ Խալդեն պատկերվում է առյուծի վրա կանգնած, մականը, իսկ երբեմն նաև դրոշը կամ զրահնման մի առարկա աջ ձեռքին բռնած։*

7. Թեյշեբա— *ուրարտական դիցարանի երկրորդ աստվածը։ Պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր Կումենու քաղաքը՝ Վերին Զաբի միջին հոսանքների շրջանում։ Թեյշեբան պատկերվում է ցուլի վրա կանգնած, մարտական տապարը աջ ձեռքին։ Թեյշեբան եղել է կայծակի, հրաբխի և պատերազմի աստվածը։*

8. Շիվինե— *ուրարտական դիցարանի երրորդ՝ արևի աստվածը։ Պաշտամունքի գլխավոր կենտրոնն է եղել Տուշպա մայրաքաղաքը։ Շիվինեն պատկերվում է աջ ուսով ծնկաչոք և արևի սկավառակը գլխի վրա պահած վիճակում։*

9. Արձանագրությունը եղրափակող անեծքի բանաձևը կրկնվում է բազմաթիվ արձանագրություններում՝ որոշ տարբերակներով։

№ 4

ՊԱՐՇՈՒԱ ԵՐԿՐԻ ԵՎ ՄԵՇԹԱ ՔԱՂԱՔԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԽԱՌԱԿՈՆԻՍ. Արձանագրությունը փորագրված է կոթողի երկու նիստերին։ Բովանդակությունը կրկնվում է։ Բերում ենք հապավածաբար։

CICh, XLIII, XLIV; HChI, VII; УКН, № 24; HChI, № 7.

Խալդե տիրոջն իր Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին այս արձանագրությունը գրեցին։ Խալդեն արշավեց, սեփական զենքին (?) ննթարկեց Մեշթա[1] (քաղաքը), ննթարկեց Պարշուայի[2] երկիրը։ Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքը (?) մեր զորեղ (է)։ Խալդյան զորությամբ արշավեցին Մեշթա (քաղաքի) վրա Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին։ Իշպուինեն զորեղ էր, Մինուան զորեղ (էր)։ Զորքի մեջ (կար) հարյուր վեց մարտակառք, ինն հազար հարյուր յոթանասունչորս հեծյալ, երկու հազար յոթ հարյուր չորս հետիոտն։ Առաջնորդեց (?) Խալդեն Իշպուինե Սարդուրորդուն (և) Մինուա Իշպուինորդուն, (որոնք) գրա-

վեցին Մեչբա, Կուա, Շարիբու (և) Նիգիբե[3] (քաղաքները) Պարշուայի երկրի (...):

1. Մեչբա— քաղաք Ուրմիա լճի հարավարևելյան ափերի մոտակայքում:
2. Պարշուա (այլ ընթերցմամբ՝ Բարշուա)— երկիր Ուրմիա լճից հարավ: Ասորեստանյան աղբյուրներում հանդիպում է որպես Պարսուա(շ), Պարսումաշ:
3. Կուա, Շարիբու, Նիգիբե— քաղաքներ Ուրմիա լճի հարավարևելյան ափերի մոտակայքում, հավանաբար Մեչբա քաղաքի հարևանությամբ:

№ 5

ՋՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԽԱԼԴԻ ԵՎ ԱՐՈՒԲԱՆԻ ՀԱՄԱՐ

ԱՇՈՏԱԿԵՐՏ. Արձանագրությունը փորագրված է վանից ճարավ-արևելք, Կոտոր գետի ակունքների մոտ, ժայռի մեջ պատրաստված որմնախորշի վերին մասում: Կրկնվում է երկու անգամ:

CICh, VI; УКН, № 25; HChI, № 8.

Խալդե տիրոջն իր Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին խալդյան տաճարը կառուցեցին: Խալդյան զորությամբ Իշպուինե Սարդուրորդին, (որ) արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բխաինելե[1] (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի, հաստատեց կարգ.— Յուրաքանչյուր(?) ամսում(?) (մեկ) ուլ խալդեին թող ողջակիզեն, (մեկ) եզ խալդեին թող զոհաբերեն, (մեկ) կով՝ Արուբանեին[2], (մեկ) ոչխար՝ խալդյան դարպասներին, (մեկ) ոչխար՝ խալդյան զենքերին:

1. Բխաինելե— երկիր, որը այլ ձևով հայտնի է որպես Ուրարտու: Սակայն Բխաինելե երկիրը սկզբնապես եղել է Վանա լճի հարավարևելյան ափին տարածված շրջանը, որը և բիա ցեղի անունով կոչվել է Բխաինելե:
2. Արուբանե (նույնը՝ Վարուբանե, գուցե Յարուբանե)— ուրարտական դիցարանի գերագույն աստվածուհին, խալդե աստծու կինը: Ասորեստանյան աղբյուրներում հանդիպում է Բագմաշտու (Բագբարտու) անվամբ, որը Քերևս Վարուբանի իրանական անունն է: Պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր Արդինե (Մուծածիր) քաղաքը (տե՛ս նաև № 6, ծան. 4):

№ 6

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՋՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ՎԱՆ. Արձանագրությունը փորագրված է ժայռի արհեստական որմնախորշի մեջ, Վանի հարավարևմտյան կողմում: Տեքստը կրկնված է երկու անգամ:

CICh, VII—X; УКН, № 27; HChI, № 10.

Խալդե տիրոջն իր Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին այս դարպասները սարքեցին: (Իշպուինեն) սահմանեց կարգ.— Արևի ամսին՝ տոնախմբություն(?) կատարել(?) Խալդեին, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին բոլոր: Վեց ուլ Խալդեին թող ողջակիզեն: Տասնյոթ եզ (և) երեսունչորս ոչխար Խալդեին թող զոհաբերվի, Թեյշեբային՝ վեց եզ (և) տասներկու ոչխար, Շիվինեին՝ չորս եզ (և) ութ ոչխար, Խուտուինեին՝ երկու եզ (և) չորս ոչխար, Տուրանեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ուային՝ երկու եզ (և) չորս ոչխար, Նալաինեին՝ երկու եզ (և) չորս ոչխար, Շեբեթուին՝ երկու եզ (և) չորս ոչխար, Արսիմելային՝ երկու եզ (և) չորս ոչխար, Անապշային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Դեդուաինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Շելարդեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան զենքերին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Աքբինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Կուերային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ելիպրեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Թարրահինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ադարուային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Իրմուշինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, աստծուն[2], որը Հոգիներ(?) (է) տեղափոխում(?)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ալապթուշինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Երինային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Շինիրեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ունինային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Այրահինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Զուզոամարուին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խարային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Արածային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Զիուկունեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ուրային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Արծիբեդինեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Արնեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան «իներիաշե»-ին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան մեծությանը՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան կատարելությանը(?)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան զորքին՝ երկու եզ (և) չորս ոչխար, Թեյշեբայան զորքին՝ երկու եզ (և) չորս ոչխար, Արտուարասեներին՝ երկու եզ (և) երեսունչորս ոչխար, Արդինեցիների աստծուն՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Կումենուցիների աստծուն՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Տուշպացիների աստծուն՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, աստվածներին Խալդյան քաղաքի՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, աստվածներին Արծունիուն (քաղաքի)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան ելքին(?)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Շուբային՝ (մեկ)

եզ (և) երկու ոչխար, Խալդյան դարպասներին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Թևյշեբայան դարպասներին Երիդիա (քաղաքի)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Շիվինյան դարպասներին Վիշինե (քաղաքի)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Ելիայային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան կերպարանքին(?)՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Խալդյան զորությանը՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, աստվածներին Խալդյան տաճարի՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Թալապուրային՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, Կիլիբանեին՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, լեռնցիների(?) աստծուն՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, դաշտեցիների աստծուն՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, ծովայինների աստծուն՝ (մեկ) եզ (և) երկու ոչխար, աստվածներին զոհաբերության՝ երկու եզ (և) տասնչորս ոչխար, աստվածներին [...]բեների՝ երկու եզ (և) տասնչորս ոչխար, աստվածներին բոլոր՝ չորս եզ (և) տասնութ ոչխար, Խալդյան տավարին՝ չորս ոչխար, Ուայան դարպասներին Նիշե (քաղաքի)՝ երկու ոչխար, լեռներին՝ տաս ոչխար[3]։

Արուբանեին[4] (մեկ) կով (և) (մեկ) ոչխար, Խուբային[5] (մեկ) կով (և) (մեկ) ոչխար, Տուշպուեային[6] (մեկ) կով (և) (մեկ) ոչխար, Աուին՝ (մեկ) կով, Այային՝ (մեկ) կով, Սարդեին՝ (մեկ) կով, Մինուարդեին՝ երկու ոչխար, Իսխարեին՝ երկու ոչխար, Բարծիային՝ (մեկ) ոչխար, Սիլիային՝ (մեկ) ոչխար, Արյային՝ (մեկ) ոչխար, Ադիային՝ (մեկ) ոչխար, Վիային՝ (մեկ) ոչխար, Այայաններին՝ չորս ոչխար, Արդեին՝ երկու ոչխար, Ինուայաններին՝ տասնյոթ ոչխար[7]։

Խալդեի կողմից, աստվածների բոլորի կողմից թող լինի ողջություն՝ Իշպուինե Սարդուրորդուն (և) Մինուա Իշպուինորդուն։ Իշպուինե Սարդուրորդին Խալդեի սպասավորներով(?) շրջապատված(?), նաև՝ աստվածներով բոլոր, երեք եզ (և) երեսուն ոչխար ոչ մեկին [...] չթողեց(?), (...)։

Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին խաղաղություն նոր հիմնեց(ին), Խալդեին նույնիսկ անտառ նոր հիմնեց(ին)։ Ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր)։ Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին ապարանք(?) նոր հիմնեց(ին), հաստատեց(ին) կարգ.— Երբ ծառերը (...), Խալդեին երեք ոչխար թող զոհաբերեն, երեք ոչխար՝ աստվածներին բոլոր. երբ խաղողը (...), Խալդեին երեք ոչխար թող զոհաբերեն, երեք ոչխար՝ աստվածներին բոլոր. երբ խաղողը քամեն(?)՝ Խալդեին երեք ոչխար թող զոհաբերեն, երեք ոչխար՝ աստվածներին բոլոր. գինի թող պեղեն(?)։ (Հակառակ դեպքում) թող իր աչքին(?) (ու) դեմքին(?) կախարդանք լինի։

1. «Արևի ամիս»— ուրարտական ամիսներից մեկը, որին, գուցե, համապատասխանում է հայկական Արեգի ամիսը։ Ուրարտական ամիսներից հայտնի է նաև մեկը, որը կոչվում է Քամա։ Ուրարտական մյուս ամիսների անունները մեզ հայտնի չեն (տե՛ս նաև № 27, ծան. 19)։

2. «Աստծուն, որը ճագինե(?) (է) տեղափոխում(?)»— Գ. Ա. Ղափանցյանի համոզիչ բացատրության համաձայն՝ այս աստծու անունը տաբուի պատճառով չի հիշատակվում, քանի որ այն հանդիսանում է ուրարտական դիցարանի անդրշիրիմյան աստվածը։ Մեր կարծիքով, դա Անիկու աստվածն է (տե՛ս № 36, ծան. 6)։

3. Այստեղ վերջանում է ուրարտական դիցարանի արական աստվածների թվարկումը, որոնք ընդամենը երեսունհինգն են։

4. Տե՛ս № 5, ծան. 2։

5. Խուբա— ուրարտական դիցարանի երկրորդ աստվածուհին, Թեյշեբա աստծու կինը։

6. Տուշպուեա— ուրարտական դիցարանի երրորդ աստվածուհին, Շիվինե աստծու կինը։

7. Ուրարտական դիցարանի առաջին իգական եռյակին հաջորդում են ևս տասնմեկ աստվածուհիներ։ Դժվար է ասել, թե դրանցից յուրաքանչյուրը ո՞ր աստծու կինն է, քանի որ արական աստվածների եռյակին հաջորդում են ևս երեսունհինգու աստվածություն, իսկ աստվածուհիների եռյակին՝ միայն տասնմեկ իգական աստվածություն։ Այայան կոչվող սրբությունները, հավանաբար, չորսն են և կապ ունեն Այա աստվածուհու հետ, իսկ Ինուայան սրբությունները, հավանաբար, տասնյոթն են, սակայն ո՞ր աստծու կամ աստվածուհու հետ են կապվում, դժվար է ասել։

№ 7

ԵՐԵՔՈՒԱԽԵ ԵՐԿՐԻ ԵՎ ԼՈՒԽԻՈՒՆԵ ՔԱՂԱՔԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ՅՈՂԱԿԵՐՏ. Փորագրված է ժայռաբեկորի հարթեցված մասում։ Տրվում է ամենշան կրճատումներով։

КНЗ, IV; CICh, XIII; УКН, № 30; HChI, № 21.

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Երբուախե[1] (ցեղի) երկիրը, ենթարկեց Լուխիունե[2] (քաղաքը), զգետնեց Մինուայի առջև։ Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան զորությամբ արշավեց Մինուա Իշպուինոր-

դին։ Առաջնորդեց(?) Խալդեն։ Մինուան ասում է.— Ելավ (առջևս) Երեքուսախ (ցեղի) երկիրը։ Լուխիունեն քաղաքն արքայական, որը ոչ (մեկին) «ափշեի, ահնեի» չէր ենթարկվել(?), տվեց Խալդեն Մինուա Իշպուինորդուն։ Գրավեցի Լուխիունեն (քաղաքը), գցեցի Եքիունեն (երկիրը) հարկի տակ։ Մինուան ասում է (...)։ (Հաջորդում է անեծքի բանաձևը)։

1. Երեքուախ— երկիր Արաքսի աջ ափին, Մասխի հյուսիսային ստորոտում։

2. Լուխիունեն— Երեքուախ երկրի կենտրոնը։

№ 8

ՏԵՅԱՎԵԽԻ ԵՐԿՐԻ ՆՎԱՃՄԱՆ ՍԿԻԶԲԸ

ԿԱՐԻՆ. ժայռափոր արձանագրություն։ Բերվում է կրճատումներով։

MLV, XLII; УКН, № 36; HChI, № 23.

Խալդեն արշավեց՝ սեփական զենքն(?) իր (պարզած) Տեյավեխե[1] երկրի վրա բարձրաբերձ։ Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան զորությամբ արշավեց Մինուա Իշպուինորդին։ Առաջնորդեց(?) Խալդեն։ Մինուան ասում է.— Գրավեցի Տեյավեխե երկիրը։ Շաշիլու[2] քաղաքն արքայական գրավեցի կռվում, երկիրը այրեցի, ամրոցները քանդեցի, կտրեցի մինչև Նեշեթինա[3] (լեռը) Զուանե[4] (և) Ուտուխաի (քաղաքների) մարզում։ Մինուան ասում է.— Ուտուպուրշե արքան Տեյավեխե (երկրի) ելավ առջևս, բռնեց (=գրկեց) ոտքեր(ս), երկրպագում էր փորի(?) վրա ընկած։ Գցեցի հարկի տակ։ Տվեց ոսկի (և) արծաթ, տվեց հարկ։ Ինչքան փախստական(?)[5] իր կողմը կար, վերադարձրեց ամբողջությամբ։ Մինուան ասում է.— (...)։ Երկու արքաների տեղից մաքրեցի(?)՝ Բալղու-ուլխե (ցեղի) երկիրը (և) Խալդերե-ուլխե[6] (քաղաքի) երկիրը։ Ամրացված ամրոցները երկրում տեղից ճաքրեցի(?)։ (...)։

1. Տեյավեխե *(այլ ընթերցմամբ՝ Դիաու<և>խի)*— երկիր ձորոխ գետի ափսեանում։ Համապատասխանում է Մեծ Հայքի Տայք նահանգին։

2. Շաշիլու— Տեյավեխե երկրի արքայական քաղաքը *(այսինքն՝ մայրաքաղաքը)*, որի կոնկրետ տեղադրությունը հայտնի չէ։

3. Նեշեթինա— լեռ Սարիդամիշից արևմուտք ընկած շրջաններում։

4. Զուանե— Ն. վ. Հարությունյանի կարծիքով՝ այժմյան Զիվինն է, Արաքսի վերին ավազանում։

5. «Փախստական(?)»— նկատի են առնված այն անձինք *(հավանաբար՝ առյուծներ կամ ինչ-որ հպատակներ)*, որոնք ուրարտուից փախել և ապաստանել էին Տեյավեխե երկրում։

6. Խալդերե-ուլխե— քաղաք Ջալղր լճի շրջանում, որի անունից էլ, ինչպես ծագում է հիշյալ լճի անունը։

№ 9

ԱՐԱՆԱՆԻ ՍՏՈՐԻՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՄԱՆ ՍԿԻԶԲԸ

ՊԱԼՈՒ. Արձանագրությունը փորագրված է ճակատային ժայռաբեկորի վրա արհեստականորեն պատրաստված որմնախորշի մեջ։ Բերվում է կրճատումներով։

CICh, XLV, XLVI; HChI, XXIV; УКН, № 39; HChI, № 25.

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Շեբեթեբրիա[1] (քաղաքի) երկիրը, ենթարկեց Խուզանա[2] (քաղաքի) երկիրը, ենթարկեց Ծուպա[3] (երկիրը)։ Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան զորությամբ արշավեց Մինուա Իշպուինորդին, գրավեց Շեբեթերիա (քաղաքի) երկիրը, գրավեց Խուզանա (քաղաքի) երկիրը, գրավեց Ծուպա (երկիրը), կտրեց մինչև Թաթինելե[4] (երկիրը) (և) Խալդեին այս արձանագրությունը գրեց Շեբեթերիա (քաղաքում), Խալդական մատուռը կառուցեց Շեբեթերիա (քաղաքի) մարզում։ (...) արքային Մելետիա-ալխե[5] (քաղաքի) գցեց հարկի տակ (...)։

1. Շեբեթերիա— քաղաք Արածանիի հյուսիսային ափին, Պալուի մոտ։

2. Խուզանա— քաղաք վերոհիշյալ Շեբեթերիայի մոտակայքում։

3. Ծուպա— երկիր Արածանիի ստորին հոսանքների շրջանում։ Համապատասխանում է Մեծ Հայքի Ծոփք նահանգին։

4. Թաթինելե— երկիր Եփրատից արևմուտք։

5. Մելետիա-ալխե— քաղաք Եփրատից արևմուտք։ Համապատասխանում է Հետտացի Մալաթիային։

№ 10

ՄԻՆՈՒԱՅԻ ՋՐԱՆՑՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՏԵՊԱՆՑ. Միևնույն ջրանցքի վրա գտնվող բազմաթիվ արձանագրություններից մեկը, որ փորագրված է ժայռին։ Ջրանցքը,

ar ունի մոտ 70 կմ երկարություն, գործում է նաև այժմ: Ջրանցքն ունի բարդ հիդրոտեխնիկական կառուցվածք: Այն անցկացված է լեռների լանջերին փորված և տեղ-տեղ քարե պատնեշներով ամրացված հունով, ինչպես նաև ձորերի վրա կառուցված հատուկ կամուրջներով:

MLV, XIX; CICh, XXXIV; УКН, № 43; HChI, № 29a.

Խալդյան զորությամբ Մինուա Իշպուինորդին այս ջրանցքը անցկացրեց: «Մինուայի ջրանցք» (է) անունը: Խալդյան մեծությամբ Մինուան արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայական[1] (երկրի), իշխանը Տուշպայական[2] քաղաքի: Մինուան ասում է (...): (Հաջորդում է անեծքի բանաձևը):

1. Բիայական— հաճախ օգտագործվող «արքա Բիաինելե (երկրի)» արտահայտությունը ուրարտական արքաների տիտղոսաշարում փոխարինվում է սույն «արքա Բիայական (երկրի)» ձևով:

2. Տուշպայական— սովորական «Տուշպա քաղաք» արտահայտությանը հաճախ փոխարինում է «Տուշպայական քաղաք» ձևը:

№ 11

ԱՐԱՇԱՆԻԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻՑ ՏԱՐՎԱԾ ՋՐԱՆՑՔԸ

ԽՈՏԱՆԼՈՒ. Արձանագրությունը փորագրված է Մանազկերտից հարավ-արևմուտք գտնված մի քարակոթողի վրա:

HChI, XXXII; УКН, № 60; HChI, № 35.

Խալդյան զորությամբ Մինուա Իշպուինորդին ասում է.— (Մի) ջրանցք Մեննեզայայից[1] անցկացրի: «Մինուայի ջրանցք» (է) անունը: Ուկուա (քաղաքից) սկսած(?) ոռոգեց(?) Զուգուխե, Երնունե (և) Արասե (քաղաքները):

1. Մեննեզայա— համապատասխանում է հետագայի Մանազկերտ քաղաքին:

№ 12

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏՎԱԾՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՈՒՀՈՒՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՅՈՒՋԱԿ. Փորագրված է վանա լճից արևելք կանգնեցրած քարակոթողի վրա:

CICh, XIX; УКН, № 65; HChI, № 41.

Խալդե տիրոջն իր այս արձանագրությունը Մինուա Իշպուինորդին գրեց: Երբ խալդյան դարպասները կառուցեց (և) ամրոց կառուցեց Հոյակապ, հաստատեց «Խալդեի քաղաք» անունը: Հիմնեց այս խաղողուտը, հիմնեց անտառ: «Մինուայի խաղողուտ» (է) անունը: Խալդյան մեծությամբ Մինուա Իշպուինորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիաինելե (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի: Մինուան ասում է.— Երբ խաղողուտը (...), (մեկ) եզ (և) երեք ոչխար Խալդեին թող զոհաբերեն, (...) թող ձոնեն թե՛ Խալդյան դարպասներում, թե՛ այս արձանագրության առջև: Երբ գինին նոր (...), (մի) սափոր(?) Խալդեին թող ձոնեն՝ Խալդյան դարպասներում, (մի) սափոր(?)՝ Արուբանեին, (մի) սափոր(?) Խալդեին՝ այս արձանագրության առջև:

№ 13

ԲՈՒԺԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԿԱՏԱՐՎՈՂ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԿՈՂԲԱՆՑ. Արձանագրությունը գտնված է Վանից արևելք: Այն փորագրված է շինարարական քարի շորս նիստերին: Բերվում է աննշան կրճատումներով:

MLV, XXXII—XXXV; CICh, XX; УКН, № 89; HChI, № 56.

Խալդյան զորությամբ Մինուա Իշպուինորդին այս բուժարան(?)[1] սարքեց: «Մինուայի բուժարան(?)» (է) անունը: Խալդեն իմ զորեղ (է), աստվածների մեջ զորեղ (է): Թող լինի այնտեղ Մինուային իրավունք.— Երբ խալդյան դարպասներում(?) անասուն(?) զոհաբերվի, երբ (...) [...], ամբողջ (...): Մինուային Խալդեն բուժեց(?)[1]: Աստվածները (...) այնտեղից արքաներին պետք է բուժեն(?): Հետո(?) ամբողջությամբ Մինուայան բուժարանը(?) թող սրբեն(?), ով ոչնչացնի, ով ջնջի(?), ով տեղից շարժի(?), ով ջարդի, թող ոչնչացնի՛ Խալդեն նրան արևի տակից:

1. Հիշյալ «բուժարան(?)» և «բուժել(?)» բառերի քարգմանությունը պատկանում է Ի. Մ. Դյակոնովին:

№ 14

ԶԻՈՒ ՅԱՏԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԵԿՈՒԴ

ՍՂԴԱ. Արձանագրությունը հայտնաբերվել է գյուղական եկեղեցու պատի շարվածքում, Վանի բարաժայռերի և Վարագա լեռների միջև գտնվող ճարթավայրում, որը ոչ միայն ուրարտական, այլև հայկական շրջանում հանդիսացել է որպես ձիարշավարան: Բերվում է արձանագրության մի մասը:

MLV, XXII; HChI, LVII; ՎԿԻ, № 110; HChI, № 75.

Խալդյան զորությամբ Մինուա Իշպուինորդին ասում է.— Հենց այս տեղից նժույգը՝ Արծիբե[1] անուն(ով), Մինուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն[2] (...):

1. Արծիբե— Մինուայի նիժույգի անունը, որը, հավանաբար, կապ ունի հայերենի «արծիվ» և վրացերենի «արծիվի» բառի հետ: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վրացերենում արծիվը կոչվում է «օրրի» և «արծիվի» բառը փոխառություն է հայերենից, կարելի է ենթադրել, որ հայերենի «արծիվ» բառը ուղղակիորեն ծագում է ուրարտերենից կամ էլ հայերենից անցել է ուրարտերենին:

2. «Կանգուն»— երկարության չափ, որը հավասար է 51,8 սմ: Այս հաշվով Մինուայի նժույգը ցատկել է 11 մ 39 սմ: Պետք է նկատի ունենալ, որ նման սպորտային ձևում նժույգի ցատկի համամիութենական ռեկորդը՝ սահմանված 1947 թ.՝ 8 մ 20 սմ է, իսկ համաշխարհային ռեկորդը՝ սահմանված մինչև 1914 թ.՝ 11 մ 28 սմ. այն պատկանում է հունգարացի Զանդներին: Ուրարտական Արծիբե նժույգի ցատկը մնացել է չգերազանցված ընդհուպ մինչև 1975 թ. (այսինքն՝ 2800 տարի), երբ գերմանացի Կ. Բերգմանը իր Սվինգեր նժույգով ցատկեց 22 մ 16 սմ (տե՛ս նաև № 32, ծան. 4):

№ 15

ՇԱԹԻՐՈՒ ԵՎ ԱԼԶԵ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԲԱԴՆՈՑ. Արձանագրված է երկու մեծ քարերի վրա, Բադնոցից 2 կմ հյուսիս-արևմուտք գտնվող ուրարտական ամրոցի պարբսպի մեջ: Արձանագրությունը ունի իր կրկնօրինակը, որը գտնված է միևնույն տեղում: Տալիս ենք աննշան կրճատումներով:

ՎԿԻ, № 372.

Խալդյան զորությամբ Մինուա Իշպուինորդին Խալդյան դարպասներ կառուցեց Ալուդերե (քաղաքի համար), ամրոց կառուցեց Հոյակապ: Խալդյան զորությամբ, Խալդյան հրամանով Մինուա Իշպուինորդին երբ հայրական տեղը գալով, Շաթիրու[1] (երկիրը) ապստամբված էր: Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Խուրադինաքու (քաղաքը), ենթարկեց Գիդիմարու (քաղաքը), ենթարկեց Շաթիրուի երկիրը: Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է): Խալդյան զորությամբ արշավեց Մինուա Իշպուինորդին (և) գրավեց Խուրադինաքու (քաղաքը), Գիդիմարու (քաղաքը), գրավեց Շաթիրու երկրի Թարզուլանանա (քաղաքը), կտրեց մինչև Պուշքու[2] (երկիրը), մինչև Մալմալե (երկիրը): Խուրադինաքու (քաղաքը), (որ) առանձին արքաներ պաշարել, սակայն(?) (...) չէին գրավել, տվեց Խալդեն Մինուա Իշպուինորդուն, (որ) գրավեց Խուրադինաքու (քաղաքը) (և) կործանեց:

Հենց այդ տարում Ալզե[3] (երկիրը) ապստամբված էր: Առաջնորդեց(?) Խալդեն Մինուա Իշպուինորդուն, (որ) կործանեց Կուտումե[4] (քաղաքը), գրավեց Ալզե (երկիրը), գրավեց Շաշնուայան[5] երկիրը (և) կառուցեց ամրոց Կուտումե (քաղաքի համար) (...):

1. Շաթիրու— երկիր Ուրմիա լճից հարավ-արևելք, որը ձգվել է մինչև Պուշքու երկիրը:

2. Պուշքու— երկիր Ուրմիա լճից հարավ, Թերևս Դիյալա գետի ավազանում: Հիշատակվում է նաև ասորեստանյան արձանագրություններում, որտեղ նըշվում է նաև նրա կենտրոնը՝ Պուշքու ամրոցը, որի անունով էլ, երևի, երկիրը կոչվել է Պուշքու:

3. Ալզե— երկիր Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում: Համապատասխանում է Մեծ Հայքի Աղձնիք նահանգին: Հիշատակվում է նաև ասորեստանյան (միևնույն Ալզե ձևով) և խեթական (Ալզիա, Ալշե ձևերով) արձանագրություններում:

4. Կուտումե— քաղաք Վանա լճի հարավարևմտյան ափերի մոտակայքում: Մեր կարծիքով, համապատասխանում է հետագայի Կոտոմ բնակավայրին: Գագիկ Արծրունին (908—943) հետագայում ուրարտական շինությունների քարերը հասցնելով լճափ, նավակներով տեղափոխեց Աղթամար և 915 թ. այնտեղ կառուցեց հայկական ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը՝ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին:

5. Շաշնու— երկիր Աղձնիքի մոտակայքում: Գուցե՝ Սասուն:

№ 16

ԴԻԱՐՆԻԱ ԵՐԿՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԳԱՌՆԻ. Առձանագրված է «վիշապ»-ի վրա: Գտնված է Գառնիի պեղումների ժամանակ:

ՍԿՀ, № 386.

Խալդյան մեծությամբ Արգիշթին[1] ասում է.— Գրավեցի Դիարնիա[2] (...) երկիրը: Հեռավոր(?) լեռներից նրբ վերադառնում էի, մարդ, կին քշեցի:

1. Արգիշթե I (786—764)— Մինուայի որդին և հաջորդը: Ուրարտուի հզորագույն արքան, որը հենվելով Ուրարտուի արդեն իսկ ձևոր բերած տնտեսական հզորության վրա, համարյա ամբողջ Հայկական լեռնաշխարհը կարողացավ միավորել մեկ միասնական պետության մեջ և դուրս եկավ այն ժամանակվա համար լայն միջազգային ասպարեզ, որի հետևանքով երբեմնի հզոր Ասորեստանը՝ Ուրարտուի ոխերիմ թշնամին, մղվեց երկրորդական պլան: Արգիշթե I-ը հարավում հասավ մինչև Ասորեստանյան հարթավայրը և սպառնաց Նինվեին, հարավ-արևմուտքում, հավանաբար, անցավ Տիգրիսը, արևմուտքում հասավ Եփրատ գետին, հյուսիս-արևմուտքում՝ Պոնտական լեռներին, հյուսիսում՝ Գուգարք և Սևանա լճի մոտով Կուր գետի հովիտը, հյուսիս-արևելքում՝ Արաքսի միջին շրջանը, արևելքում՝ Ուրմիա լճից այն կողմ, հարավ-արևելքում հեռավոր արշավանք ձեռնարկեց մինչև Մեդիա և Էլամ: Արգիշթե I-ը մ. թ. ա. 782 թ. ներկայիս Արին բերդում հիմնեց Երեբունե (հետագայի Երևան) քաղաքը և այն տրամադրեց Մեծ Ծոփքից տեղափոխված մոտ 6600 վերաբնակիչների, թվում՝ իրենց ընտանիքների հետ (տե՛ս նաև № 19, ծան. 1):

2. Դիարնիա— երկիր Երևանից արևելք ընկած տարածքում: Ն. վ. Հարությունյանի կարծիքով տվյալ երկրանունը պահպանվել է ներկայիս Գառնի տեղանվան մեջ:

№ 17

ՈՒԼՈՒԱՆԵ ԵՐԿՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԱԲՈՎՅԱՆ. Ժայռափոր արձանագրություն, որ ճայտնաբերվել է գյուղի ճյուսիսարևելյան կողմում: Արձանագրությունը բյուրիմացաբար պայթեցվել է: Փրկված մասը այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

ՍԿՀ, XXV; HChI, LXVI; ՍԿՀ, № 131; HChI, № 85.

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Եթիունե[1] (երկիրը): Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է): Խալդյան զորությամբ արշավեց Արգիշթե Մինուայորդին (և) գրավեց Ուլուանե[2] երկիրը՝ Դարա[3] (քաղաքի) երկիրը: Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայական[4] (երկրի), իշխանը Տուշպայական[5] քաղաքի:

1. Եթիունե— երկիր Ուրարտուի հյուսիսում (տե՛ս № 3, ծան. 6):

2. Ուլուանե— երկիր ներկայիս Աբովյան քաղաքի շրջակայքում:

3. Դարա— Ուլուանե երկրի կենտրոնը: Հավանաբար գտնվել է ներկայիս Աբովյան քաղաքի տարածքում:

4. Տե՛ս № 10, ծան. 1:

5. Տե՛ս № 10, ծան. 2:

№ 18

ԵՐԻԱՒԵ ԵՐԿՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ. Ժայռափոր արձանագրություն Լենինականից ճյուսիս:

ԿՀՅ, XXI; HChI, LXVIII; ՍԿՀ, № 133; HChI, № 88.

Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Գրավեցի Երիախե[1] երկիրը, գրավեցի Իրդանիու[2] (քաղաքը) մինչև Իշկիգուլու[3] (երկիրը):

1. Երիախե— երկիր Արագածի հյուսիսարևմտյան մասում: Համապատասխանում է Այրարատ նահանգի Շիրակ գավառին: Մ. Վ. Նիկոլսկու ենթագրությամբ այս տեղանունը պահպանված է Երասխ (այժմ՝ Արաքս) գետի անվան մեջ:

2. Իրդանիու— քաղաք, հավանաբար, Երիախե երկրի կենտրոնը:

3. Իշկիգուլու— երկիր Շիրակից հյուսիս ընկած մասերում:

№ 19

ԵՐԵԲՈՒՆԻ ԲԵՐԴ-ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ԱՐԻՆ ԲԵՐԴ. Առձանագրված է շինարարական fարի վրա, ուրարտական ամրոցի գլխավոր մուտքի մոտ: Համարվում է Երևանի «ծննդյան վկայական»-ը՝ «տրված» մ. թ. ա. 782 թ.:

HChI, LXX; ՍԿՀ, № 138; HChI, № 91 A.

Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին այս ամրոցը հոյակապ կառուցեց: Հաստատեցի Երեբունե[1] անունը՝ Բիաինելե

(երկրի) դորությունը լուլուական[2] (= բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)։ Արգիշթին ասում է.— Հողը չոր(?) էր։



Նկար 2. Արգիշթե I-ի արձանագրությունը Երեբունի բերդ-քաղաքի հիմնադրման մասին (մ. թ. ա. 782 թ.)

Կատարեցի մեծագործություններ հզոր այնտեղ։ (Հաջորդում է արքայական տիտղոսաշարը)։

1. Երեբունի— քաղաք Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում։ Հիշյալ տեղանունը պահպանված է ներկայիս Երևան քաղաքի անվան մեջ (տե՛ս նաև № 16, ծան. 1, № 22, ծան. 24)։

2. Լուլուական— այսինքն՝ բարբարոսական, չքնամական։ Ծագում է Զագրոսի շրջանում՝ Ուրարտուի և Ասորեստանի միջև բնակվող վայրենաբարո լուլու ցեղի անունից։

№ 20

ԱՐԳԻՇԹԵԽԻՆԵԼԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ. Առձանագրված է շինարարական քարի վրա։ Համարվում է Արմավիրի «ծննդյան վկայական»-ը՝ «տրված» մ. թ. ա. 776 թ.։

ԿՀՅ, X; CICh, XXIX; ՎԿՀ, № 137; HChI, № 91.

Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Ամրոց հոյակապ կառուցեցի, Հաստատեցի Արգիշթեխինելե[1] անունը։ Հողը չոր(?) էր, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր)։

Դեպից չորս ջրանցք անցկացրի[2], խաղողուտ (և) անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ։ (Հաջորդում է արքայական տիտղոսաշարը)։

1. Արգիշթեխինելե— քաղաք Արարատյան դաշտում, նրա հարավարևմտյան մասում, որը կրում է իր հիմնադիր Արգիշթե I-ի անունը։ Արգիշթեխինելեի տեղում հետագայում բարձրացավ Մեծ Հայքի հնագույն մայրաքաղաքներից մեկը՝ Արմավիրը։

2. Այստեղ հիշատակված ջրանցքների հետքերը երևան եկան վերջին տարիներս Արմավիրում կատարված պեղումների ժամանակ։

№ 21

ԼՈՒՎԻԱԿԱՆ ԻՎԱՐՇԱ ԱՍՏՎԱԾԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ

ԱՐԻՆ ԲԵՐԴ. Արձանագրությունը (երկու օրինակից) փորագրված է ամրոցի կենտրոնական մասում կառուցված սուսեի (տաճարի) մուտքի երկու կողմերում։

ՎԿՀ, №№ 396—397.

Իվարշային[1] այս սուսեն[2] Արգիշթե Մինուայորդին կառուցեց։ Արգիշթեն ասում է.— Հողը չոր(?) էր, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր)։ (Հաջորդում է արքայական տիտղոսաշարը)։

1. Իվարշա— աստված (հայտնի է նաև Իյարշա ձևով), որը բացակայում է ուրարտական դիցարանի՝ Մհերի դռան արձանագրության աստվածանունների մեջ։ Գ. Ա. Մելիքիշվիլու համոզիչ կարծիքով Իվարշա աստվածը Ծուիքից Արտաթայան դաշտ տեղափոխված և մ. թ. ա. 782 թ. Արգիշթե I-ի կողմից Երեբունի քաղաքում բնակեցված ցեղի գլխավոր աստվածն էր։ Հիշյալ ցեղը, հավանաբար, մտնում էր լուվիական ցեղային միության մեջ, քանի որ միևնույն Իվարշա աստվածը Իմարշա անվամբ հանդիպում է լուվիական դիցարանում, իսկ լեզվով գուցե հայախոս էր։

2. «Սուսե»— տաճարի տեսակ։

№ 22

ԱՐԳԻՇԹԵ I-Ի ԽՈՐԽՈՌՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՆ. Փորագրված է Վանի հարաժայռի արևմտյան մասում։ Հայտնաբերել է արևելագետ Ֆ. է. Շուլցը 1828 թ.։ Մինչև այժմ հայտնի ամենամեծ ուրարտական արձանագրությունն է։ Բաղկացած է ութ սյունակից, որոնցից յոթերորդը համարյա լրիվ չջնջված է։ Բերում ենք աննշան կրճատումներով։

MLV, II—VIII; УКН, № 127; HChI, № 80.

(...) Արգիշթիեն ասում է.— Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին՝ իշխանական մեծությամբ, որի վերևում (լսում էին ինձ աստվածները)։ Այդ նույն տարում երրորդ անգամ զինվորներ գնդեցի, արշավեցի Տեյավեխե[1] (ցեղի) վրա։ Արքային Տեյավեխե (ցեղի) հպատակեցրի(?), գրավեցի Շերիազե[2] (երկիրը), քաղաքները այրեցի, ամրոցները ավերեցի։ Կատում էի մինչև Բութե[3] (քաղաքը)։ Բուն(?) Բիա[4] (և) Խուշա[5] (երկրները) անջատեցի(?) ամբողջ(?) Թարիու (երկրից)։ Արշավեցի Զաբախայան (երկրի) վրա, գրավեցի Զաբախայան (երկրի) գավառը(?)։ Կատում էի մինչև Ուգինաբիթարնա (քաղաքը), մինչև Սերեմութարա լեռը։ Ամբողջ(?) Մակալթու (քաղաքը) Իյանե[6] (երկրից) անջատեցի(?)։ Ելա Երիախե երկրի վրա, արշավեցի Աբունե[7] (երկրի) վրա։ Գրավեցի Ուրեյու քաղաքն արքայական վիտերության (ցեղի)։ Տասնինն հազար երկու հարյուր հիսունհինգ պատանի (քշեցի), տասը հազար հարյուր քառասուն զինվոր երիտասարդ, քսաներեք հազար երկու հարյուր ութսուն ստրկուհի(?), ընդամենը հինգ բյուր երկու հազար վեց հարյուր յոթանասունհինգ մարդ (մեկ) տարում։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հազար հարյուր չորս ձի քշեցի, երեսունհինգ հազար տասնվեց անասուն, տասը բյուր հազար ութ հարյուր քսանինը ոչխար։ Արգիշթիեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։



Նկար 3. Ուրարտական արքայական գահույքի մաս (մ. թ. ա. VIII դար)

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Աբելիանեխե[8] (ցեղի) երկիրը, Անիշթերդայան (երկիրը), Կուարզանե (ցեղի) (երկիրը), Ուլթուզայան (ցեղի) երկիրը, զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ արշավեց Արգիշթե Մինուայորդին։ Խալդեն առաջնորդում(?) էր (նրան)։ Արգիշթեն ասում է.— Գրավեցի Եթիունե (երկիրը)։ Կատում էի մինչև [...] (երկիրը), մինչև Ուդուրե Եթիուխե[9] (երկիրը)։ Մարդ, կին քշեցի։ Արգիշթեն ասում է.— Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին՝ իշխանական մեծությամբ, որի վերևում (լսում էին ինձ աստվածները)։ Հենց այդ նույն տարում արշավեցի Ումելուանե(?) (երկրի) վրա, գրավեցի Ուրյա (երկիրը), Տերտուբե(?) (երկիրը), գրավեցի Մուրուզու[10] (ցեղի) (երկիրը)։ «Մարե»-ական ժայռը(?), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի, մարդ, կին քշեցի։ Գրավեցի Ուբարուզիլդու քաղաքն արքայական [...]։ Կատում էի մինչև Քուրուպերա (երկիրը), մինչև Թար(և)րա (երկիրը) [...]։ Արշավեցի, վերադարձա զորությամբ Քուաունե[11] (երկրի) վրա (...)։ Քաղաքները այրեցի, ամրոցները ավերեցի։ Կատում էի մինչև [...], մինչև [...]։ Ընդամենը քսան հազար երկու հարյուր յոթանասունինը մարդ (մեկ) տարում։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հազար երկու հարյուր ութսուն [...] ձի քշեցի, [...] անասուն, տասներկու բյուր վեց հազար [...] ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։ Արգիշթեն արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիաինելե (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Խաթե[12] (երկիրը), ենթարկեց Հիլարուադային[13], գգետնեց Արգիշթեի առջև։ Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Առաջնորդում(?) էր Խալդեն։ Հենց այդ նույն օրը (=ժամանակ) արշավեցի Խաթինելե (երկրի) վրա, գրավեցի Նիրիբայի դաշտը[14] [...], Խուրմա(?)[15] (քաղաքը), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի, [...] սրա քաղաքն արքայական գրավեցի։ Խալդյան մեծությամբ ար-

շավեցի Խաթինելե (երկրի) վրա։ Ամբողջ(?) Թուաթեխե[16] (ցեղի) երկիրը անջատեցի(?) բուն(?) Մելետիայից[17]։ Կարում էի մինչև Պիթեյրա[18] (քաղաքի) տակ, մինչև Մեծ(?) Մելիայան գետը[19], Մարմուա[20] (և) Կալայա[21] (երկրները)։ Մարդ, կին (այնտեղից) հանեցի, ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի։ Երկու հազար հինգ հարյուր երեսունինը պատանի (քշեցի), ութ հազար վեց հարյուր իննսունութ երիտասարդ(?), տասնութ հազար քառասունյոթ կին, ընդամենը քսանինն հազար երկու հարյուր ութսունչորս մարդ (մեկ) տարում։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ [...] ձի, տասնյոթ հազար իննհարյուր վաթսուներկու անասուն քշեցի, երկու բյուր [...] ոչխար։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Եթիունե (երկիրը), ենթարկեց Կեխունե[22] (քաղաքի) երկիրը, զգետնեց Արգիշթեի առջև։ Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ արշավեց Արգիշթե Մինուայորդին։ Խալդեն առաջնորդում(?) էր (նրան)։ Արգիշթեն ասում է.— Գրավեցի Կեխունե (քաղաքի) (ձորա)փոր(?) (երկիրը) ծովային գավառում։ Կարում էի մինչև Ալիշտու[23] (քաղաքը)։ Մարդ, կին (այնտեղից) քշեցի։ Խալդյան հրամանով Արգիշթե Մինուայորդին ասում է.— Երեբունե[24] (քաղաքը) կառուցեցի՝ Բիաինելե (երկրի) զորությունը լուլուական[25] (= բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)։ Հողը չոր(?) էր, ոչ (մի) բան կառուցված (չէր) այնտեղ։ Հզոր մեծագործություններ կատարեցի այնտեղ։ Վեց հազար վեց հարյուր մարդ ռազմական բնակեցրի այնտեղ Խաթեյան Տուպայից[26]։ Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Հենց այդ նույն տարում արշավեցի Ուբուրդա[27] (երկրի) վրա։ Իշ[.]լուբուրա արքային (և) Ուբուրդա-ալխե երկիրն իր գրավեցի։ Երդուա[28] քաղաքն արքայական գրավեցի, Վիշուշե (երկիրը) հպատակեցրի(?)։ Մարդ, կին հանեցի այնտեղից։ Արշավեցի Խախա (երկրի) վրա։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի։ Բի[...] (...) քաղաքը։ Կորիճ(?) մարդկանց այրեցի։ Ութ հազար վեց հարյուր քառասունութ պա-

տանի (քշեցի), երկու հազար վեց հարյուր հիսունհինգ երիտասարդ, ութ հազար չորս հարյուր իննսունյոթ ստրկուհի, ընդամենը՝ տասնինն հազար յոթ հարյուր իննսուն մարդ (մեկ) տարում։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Երկու հարյուր երեսունհինգ ձի քշեցի, [...] հազար ութ հարյուր երեք անասուն, տասնմեկ հազար վեց հարյուր քսանվեց ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Ասորեստանյան զորքը[29], ենթարկեց Արսիթա[30] (ցեղի) երկիրը, զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Ասորեստանյան զորքի հետ[31] երկիրս լցվեց(?)։ Զինվորներ գնդեցի։ Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթեն ասում է.— Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ հողաշերտը խորտակեցի(?) Դադեի առջև Քուլաշե լեռան։ [...] (...) տասնմեկ(?) հազար չորս հարյուր երեսունինը պատանի այնտեղից քշեցի(?)։ Ասորեստանցիներին վռնդեցի, սպանեցի, հանեցի երկրիցս։ Հենց այդ նույն տարում արշավեցի Մենաբշու (քաղաքի) վրա, Դուկկամա (քաղաքի) վրա։ [...] քաղաքն արքայական (և) երկիրն իր գրավեցի։ [...] Շաարա-Ռաա (քաղաքը) Պուշթու[32] (երկրի) [...]։ Արշավեցի Բաբիլուլան[33] (քաղաքի) երկրի վրա, [...] Բարուաթա[34] (երկրի) վրա, Պարշուա[35] (երկրի) վրա։ Պարշուայի երկիրը կերա (= յուրացրի), քաղաքները այրեցի։ [...]։ Հինգ(?) հազար(?) [...] քառասուն մարդ (մեկ) տարում։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ [...] ձի քշեցի, ինն(?) հարյուր ութսունյոթ անասուն, [...] հինգ [...] ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Ասորեստանյան զորքը, ենթարկեց Պուշթու (երկիրը), Թարիու[36] (երկիրը), զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Ամրոցներ կառուցեցի, Շուրելե[37] (երկիրն) իմ խաղաղեցրի(?), Ասորեստանյան զորքի հետ երկիրս լցվեց(?)։ Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին

Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ զորապետ(?) ուղարկեցի, Ասորեստանցիներին վռնդեցի, սպանեցի, հանեցի երկրից։ Դադա[38] զորապետին(?) գովեցի(?)։ Հենց այդ նույն տարում արշավեցի [...] (երկրի) վրա, [...] (երկրի) վրա, Արխա (երկրի) վրա։ [...] քաղաքն արքայական (և) վաթսուն քաղաք՝ ժողովրդով հանդերձ գերեցի։ Արշավեցի Պուշթու (երկրի) վրա, գրավեցի Արուրզանե (քաղաքը), [...] (քաղաքը), Կադուկանիու (քաղաքը), [...] (երկիրը) գրավեցի։ Արգիշթեն ասում է.— [...]։ Կտրում էի մինչև Մա[...] լեռը։ Տասնութ հազար ութ հարյուր քսանյոթ մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Վեց հարյուր վեց ձի (քշեցի), հարյուր ութսունչորս ուղտ, վեց հազար երկու հարյուր հիսունյոթ անասուն, երեսուներեք հազար երկու հարյուր երեք ոչխար։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդևի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Իյանե երկիրը, ենթարկեց Մանա[39] (երկիրը), Պուշթու (երկիրը), զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Հինգերորդ անգամ զորք գնդեցի։ Ադոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ արշավեցի Իյանե երկրի վրա։ Երկիրը գրավեցի, ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի։ Երաուելե[40] (քաղաքը) (և) Մյուս Երաուելե[41] (քաղաքը) գրավեցի։ Մարդ, կին այնտեղից քշեցի։ Հենց այդ նույն տարում արշավեցի Մանա (երկրի) վրա։ Գրավեցի(?) Պուշթու (երկիրը), Թուրա[...][42] (գետը) (և) «գարեջ»-ական ժայռը, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Մարդ, կին այնտեղից հանեցի։ [...]։ Կտրում էի մինչև Վիխիքա[43] (քաղաքը) Պուշթու (երկրի)։ Տասնութ հազար երկու հարյուր քառասուներեք մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Յոթ հարյուր իննսուն [...] ձի (քշեցի), մեկ հարյուր ուղտ, քսաներկու հազար հինգ հարյուր քսանինն անասուն, երեսունվեց

հազար ութ հարյուր երեսուն ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդևի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, ենթարկեց Իրքիունե (երկիրը), զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Ադոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ արշավեցի Մանա (երկրի) վրա, գրավեցի Իրքիունե (երկիրը), կտրում էի մինչև Ասորեստանյան հարթավայրը[44]։ Վեց հազար չորս հարյուր յոթանասունմեկ մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Երկու հարյուր ութսունվեց ձի (քշեցի), երկու հազար երկու հարյուր հիսունմեկ անասուն, ութ հազար երկու հարյուր հինգ ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդևի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, ենթարկեց Պուշթու (երկիրը), զգետնեց նրանց Արգիշթեի առջև Մինուայորդու։ Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Ադոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ արշավեցի Պուշթու (երկրի) վրա, գրավեցի Աշկայայի դաշտը Շաթիրա-Ռագա (երկրից)։ Ամբողջ(?) Ուլիշթե (երկիրը) անջատեցի(?) բուն(?) Ուլշե (երկրից)։ Կտրում էի մինչև Ալաուելե լեռը։ Երկիրը այրեցի, քաղաքները ավերեցի։ Մարդ, կին այնտեղից քշեցի։ Յոթ հազար ութ հարյուր յոթանասուներեք մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Երկու(?) հարյուր իննսուն(?) ձի քշեցի, հարյուր մեկ ուղտ, չորս հազար ինն հարյուր ինն անասուն, տասնինն հազար հինգ հարյուր հիսուն ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդևի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա (երկրի) զորքը, զգետնեց Արգիշթեի առջև Մինուայորդու։ Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Երբ Արգիշթեխինելե[45] (քաղաքը) կառուցեցի (և) գետից (մի) ջրանցք Ազայան[46] երկրին անցկացրի, լսեցի, (որ) Մանա (երկիրը) Սիրա (քաղաքը) դրավել է։ Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արգիշթեն ասում է.— (...) [...] զորքի մեջ՝ գնդի առջև, արշավեցի (և) Սիրա (քաղաքը) վերապաշարեցի Մանա (երկրի)։ Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Վերևից(?) վռնդեցի(?), ամրոցը գրավեցի, բնակեցրի, երկիրը կերա (=յուրացրի), քաղաքները այրեցի։ Երեք հազար երկու հարյուր յոթանասուն մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հարյուր յոթանասուն ձի քշեցի, վաթսուներկու ուղտ, երկու հազար չորս հարյուր տասնմեկ անասուն, վեց հազար հարյուր քառասուն [...] ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Տուարածյան դաշտը[47] մինչև Քուրբու[48] (լեռը), ենթարկեց Մանա (երկրի) զորքը, զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Արգիշթեն ասում է.— Խալդեն ինձ պարգևեց թե՛ քաջություն(?), թե՛ զորություն։ Երբ Դաինալաթինե[49] (գետից) ջրանցք անցկացրի, սարքեցի պատնեշը(?) Շուրելե[50] (երկրի)։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Զորք գնդեցի, արշավեցի Մանա (երկրի) վրա։ Երկիրը կերա (=յուրացրի), քաղաքները այրեցի։ Կըտրում էի մինչև Վիխիքա (քաղաքը) Պուշթու (երկրի)։ Մարդ, սարքկուհի այնտեղից քշեցի։ Տասներեք հազար ինն հարյուր յոթանասունինը մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Երեք հարյուր ութ ձի քշեցի, ութ հազար [...] հարյուր քսանմեկ անասուն, երեք բյուր երկու հազար հինգ հարյուր երեսունութ ոչխար։ Արգիշթեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա եր-

կիրը, ենթարկեց Եթիունե (երկիրը), զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Խալդեն իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Արշավեցի Մանա (երկրի) վրա, երկիրը կերա (=յուրացրի), քաղաքները այրեցի։ Շիմերեխադերե[51] քաղաքն արքայական, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Մարդ, կին այնտեղից քշեցի։ Արգիշթեն ասում է.— Լսեցի, (որ) Եթիունե (երկիրը) Արդինական[52] (քաղաքի) հասույթը(?) հափշտակել է։ Հենց այդ նույն տարում երրորդ անգամ զորք գնդեցի։ Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվիննեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները։ Արշավեցի Եթիունե (երկրի) վրա։ Գրավեցի Երիախե (ցեղի) երկիրը, Կաթարզայան (ցեղի) երկիրը, կտրում էի մինչև Իշկիգուլու[53] (երկիրը)։ Մարդ, կին հանեցի դեպի Բիաինելե (երկիրը)։ Արգիշթեն ասում է.— Խալդյան մեծությամբ արշավեցի Վիտերուխե (երկրի) վրա։ Երկիրը կերա (=յուրացրի), քաղաքները այրեցի։ Մարդ, կին այնտեղից հանեցի։ Ամիգու[54] քաղաքն արքայական Վիտերուխեական (երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Արձանագրություն դրեցի [...]։ Վերադարձին [...]։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հազար երկու հարյուր [...] ձի, քսանինն հազար հինգ հարյուր չորս անասուն, վեց բյուր [...] ոչխար քշեցի։ Արգիշթեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Թարիու[55] երկիրը, ենթարկեց (...) (երկիրը), զգետնեց նրանց Արգիշթեի առջև։ Խալդեն իմ զորեղ (է)։ Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Արշավեցի Թարիու (երկրի) վրա։ Տասնմեկ ամրոց, (որ) ամրացված (էր), կռվում գրավեցի։ Խալդեին [...] այնտեղ [...]։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեն ինձ պարգևեց թե՛ քաջություն(?), թե՛ զորություն։ Կառույցներ շատ (և) ամրոցներ այրեցի, ավերեցի։ Արձանագրություն դրեցի այնտեղ։ Մարդ, կին այնտեղից քշեցի։ Արգիշթեն ասում է.— Հենց այդ նույն տարում երրորդ անգամ զորք գնդեցի։ Աղոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվիննեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները (և) տվեցին ինձ ճանապարհ։ Արշավեցի Ումե[56] (երկրի) վրա։ Գրա-

վեցի Ուրմե երկիրը, երկիրը կերա (=յուրացրի)։ Կարում էի մինչև [...] (լեռը)։ Քաղաքները այրեցի, մարդ, կին տարա դեպի Բիահինելե (երկիրը)։ Ընդամենը քսան(?)չորս հազար ութ հարյուր տասներեք մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Քսանհինգ ձի (քշեցի), [...] հազար յոթ հարյուր քառասունչորս անասուն, քառասունութ հազար ութ հարյուր քսանհինգ ոչխար։ Արգիշթե Մինուայորդին ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Երբ արքայացա[57], տարեկան ինձ Խալդեն տվեց աշնանը(?).— Վեց հազար հինգ հարյուր վաթսունվեց անասուն, հիսունմեկ հազար ութ հարյուր յոթանասունութ ոչխար[58]։ Արգիշթեն ասում է.— Սույնը տարեցտարի եկավ(?)։

Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է.— Երբ Բեխուրա[59] (քաղաքը) վերապաշարեցի, Բեխուրա (քաղաքի) մարզի Բամ[60] (լեռը) փլվեց[61]. ծուխն(?) (ու) մուրը(?) այժմ վրայից(?) մինչև արևն (է) ելնում։ Երբ Բամ (լեռը) փլվեց, ես Բեխուրա (քաղաքը) գրավեցի[62]։

Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուայորդին ասում է.— [...]։

[...] Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց [...][63]։

Արգիշթե Մինուայորդին ասում է.— Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով փչացնի, ով «ասինեի» սրանք անի (կամ) ասի՝ «գնա՛, ոչնչացրո՛ւ», ով այլ ոք ասի՝ «ե՛ս կատարեցի», ով (մի) բան հենց սույն տեղից հանի «ասուխեի», թող ոչնչացնե՛(ն) Խալդեն, Թեյշեբան, Շիվինեն (և) աստվածները նրան, սերունդն իր, սերնդի սերունդն իր արևի տակից, թե՛ արտը(?), (որ) մշակում(?) (է), թե՛ ընտանիքը(?), թե՛ մարդկանց(?) կորստի(?) ուղարկեն (=մատնեն)[64]։

1. Տեյավեխե (այլ ընթերցմամբ՝ Դիաու<ե>խի)— երկիր Հորոխի ավազանում (տե՛ս նաև № 8, ծան. 1)։

2. Շեբիազե— երկիր Կարինից հյուսիս-արևելք ընկած տարածքում։

3. Բութե— քաղաք Ջալդր լճից հարավ-արևմուտք։

4. Բիա— երկիր, մեր կարծիքով, գտնվել է հետագայի Վանանդի տեղում։

5. Խուշա— երկիր, որը տեղորոշվում է Ջալդր լճից հարավ-արևմուտք։

6. Թարիու (երկիր), Ջաբախա (երկիր, ներկա՝ Ջավախք), Ուզիճարիբարեա (քաղաք), Սերեմուրարա (լեռ), Մակալթու (քաղաք), Իյանի (երկիր)— գտնվել են Ջալդր լճի մոտակայքում։

7. Արաւեն— երկիր, Ն. Վ. Հարությունյանի կարծիքով Այրարատի Հավնունիք գավառը։

8. Աբելիաեխե— ցեղ, որի անունով կոչվում էր նաև Նրա բնակեցրած երկիրը։ Ըստ Կ. Հ. Բասմաջյանի՝ Այրարատի Արեգյունք գավառը։

9. Ուդուրե Եթիուխե— վկայված է նաև Ուդուրե Եթիունե ձևով։ Բավական բնադարձակ երկիր է, որն ընդգրկել է Սևանա լճի ավազանը։

10. Ումելուեե, Ուրյա, Տերուուրե, Մաուուզու— երկրներ Ուրմիա լճից հարավ(?)։

11. Ուրաուզիլդու (քաղաք), Քաուուպեբա, Քարեբա, Քաուաուե (երկրներ)— համանաբար գտնվել են Ուրմիա լճի արևելյան կողմերում։

12. Խաբե— երկիր Եփրատ գետի ոլորանից արևմուտք։

13. Խիլաուադա— Մելեմիայի արքան։

14. Նիրիրայի դաշտ— ենթագրվում է, որ գտնվել է Քաշիյարա լեռներում։

15. Խուրմա— քաղաք, որի անվան սկիզբը տեքստում ջարդված է։ Վերականգնվում է մեր կողմից։

16. Քուաթեխե— ցեղ, որը բնակվել է Արածանիի ստորին հոսանքների շրջանում։

17. Մելետիա— քաղաք Եփրատից արևմուտք, որի անունով կոչվում էր նրա շրջակա երկիրը։ Հանդիսանում էր խեթական վերջին պետական կազմավորումներից մեկը՝ խեթական կայսրությունից անմիջապես հետո (տե՛ս նաև № 9, ծան. 5)։

18. Պիթեյրա— քաղաք Եփրատի արևելյան ափին, Արածանիի գետաբերանից հարավ։ Կոնկրետ տեղադրությունը հայտնի չէ։

19. Մեծ Մելիայան գետ— Եփրատ գետը, որը խեթերենում կոչվել է Մալա (տե՛ս նաև № 24, ծան. 3)։

20. Մարմուա— երկիր Եփրատի արևելյան ափերին՝ Արածանիի գետաբերանից հարավ։

21. Կալայա— երկիր նույն շրջանում։ Վերականգնումը մերն է։ Մեր կարծիքով, անտիկ աղբյուրների Գելեցիկ դաշտը։

22. Կեխուեե— քաղաք Սևանա լճի ափին։

23. Ալիշտու— քաղաք, միջնադարյան Աղստև ավանը, որի անունը պահպանված է Աղստև գետի անվան մեջ։

24. Երեբունե— քաղաք, որ հիմնել է Արգիշթե I-ը մ. թ. ա. 782 թ.՝ ներկայիս Արին բերդի շրջանում (տե՛ս նաև № 16, ծան. 1, № 19, ծան. 1)։

25. Լուլուական— այսինքն՝ բարբարոսական (տե՛ս նաև № 19, ծան. 2)։

26. Խաբեյան Ծուպա (այլ ընթերցմամբ՝ Խաբե, Ծուպա)— հետագայի Զորքորդ Հայքի Ծոփք գավառը։

27. Ուբուդա— երկիր հետագայի Գուգարքի Տաշիր գավառում։

28. Երդուա— քաղաք նույն վայրում։

29. «Ասորեստանյան զորք»— նման արտահայտությունը վկայում է այն մասին, որ Արգիշթի I-ը ոչ թե հարձակվել է Ասորեստանի վրա, այլ Ասորեստանն է նախահարձակ եղել և մտել Ուրարտու Տեքստը, իրոք, այդ է վկայում:

30. Ասխիա (գուցե՝ Յարսխիա, այլ հնարավոր ընթերցումը՝ Վարսխիա)— ցեղ, որի անունով կոչվում էր նաև նրա բնակեցրած երկիրը: Ի. Մ. Դյակոնովի կարծիքով այն գտնվել է Ուրմիա լճից հարավ՝ Ասորեստանի և Մանայի միջև:

31. Բնագրում՝ «ասորեստանյան զորի մեջ»— խոսքը կա՛մ Արսխիա ցեղի մասին է, կա՛մ մեկ այլ ֆշնամու՝ իրանալեզու ցեղերի(?), որոնք մասնակցել են Ասորեստանի մ. թ. ա. 781 թ. դեպի Ուրարտու կատարած արշավանքին:

32. Պուշքու— երկիր Ուրմիա լճից հարավ (տե՛ս № 15, ծան. 2):

33. Բաբիլու— քաղաք, որի անունով կոչվում էր նրա շրջակա երկիրը: Ի. Մ. Դյակոնովի կարծիքով այն գտնվում էր Տիգրիսի արևելյան վտակներից մեկի՝ Միյալա գետի հովտում, որի բնակչությունը բաբելականացված էր: Ուրարտական աղբյուրների սույն Բաբիլու երկիրը ասորեստանյան աղբյուրներում հանդես է գալիս որպես Նամրու:

34. Բառուաթա— երկիր Ուրմիա լճից հարավ: Ի. Մ. Դյակոնովի կարծիքով հանդիսացել է ասորեստանյան աղբյուրների Բիթ-Բարրու երկիրը:

35. Պարշուա— երկիր Ուրմիա լճից հարավ (տե՛ս № 4, ծան. 2):

36. Թարիու— տե՛ս № 22, ծան. 6:

37. Նուրևե— այս անվան բնույթը գիտության մեջ վիճելի է: Մեր կարծիքով երկիր է, որը թեկուզ և չի մտնում Արգիշթի I-ի տիտղոսաշարի մեջ, բայց առաջին անգամ որպես կոնկրետ երկիր հիշատակվում է հենց նրա կողմից:

38. Դադա—Թերևս Արգիշթի I-ի տուրտանը (սպարապետը):

39. Մանա— երկիր Ուրմիա լճի հարավային և հարավարևելյան ափերին: Հիշատակվում է նաև ասորեստանյան աղբյուրներում որպես Մաննա և Աստվածաշնչում (հրեական բնագրում) որպես Միննի:

40. Երատեխե— քաղաք Իյանե երկրում:

41. Մյուս Երատեխե— քաղաք միևնույն վայրերում:

42. Թուրա[...]— գետ Պուշքու երկրում: Ենթադրվում է, որ այն ներկայիս Դիյալա գետն է, որը ասորեստանյան աղբյուրներում կոչվել է Թուրնաթ:

43. Վիխիա— քաղաք Պուշքու երկրում:

44. Ասորեստանյան հարթավայր— Ասորեստանի հյուսիսարևելյան այն հատվածը, որը գտնվում էր Դիյալա գետի մոտակայքում(?): Արգիշթի I-ը, այսպիսով, փաստորեն, արևելքից ներխուժել էր Ասորեստանի քիկունքը: Ուրարտական «ալգանե» բառի «հարթավայր» թարգմանությունը առաջարկվում է մեր կողմից, որը հաստատվում է Մհերի դռան արձանագրության տվյալներով: Նախկին «լեռ(?)» թարգմանությունը քիչ հավանական է (տե՛ս նաև № 6, ծան. 3):

45. Արգիշթեխինիլե— քաղաք Արարատյան դաշտում, հետագայի Արմավիրը: Հիմնադրել է Արգիշթի I-ը մ. թ. ա. 776 թ.:

46. Ազա (գուցե՝ Յագա, մյուս հնարավոր ընթերցումը Ն. Վ. Հարությունյանի կարծիքով՝ Վագա)— ցեղ, որի անունով կոչվում էր նաև նրա բնակեցրած երկիրը: Համապատասխանել է Եքե ոչ ամբողջ Արարատյան դաշտին, ապա գոնե նրա հյուսիսարևմտյան հատվածին:

47. Տուարածյան դաշտ— հետևելով նախորդ ուսումնասիրողներին, Գ. Ա. Ղափանցյանը այն տեղորոշում է Արաքսի վերին հոսանքների շրջանում՝ Տուրուբերանի Տուարածատափ գավառի տեղում:

48. Քուրհու (այլ ընթերցմամբ՝ Գուրկու)— Սրմանց (Բյուրակն) լեռների հարավարևելյան մասերում գտնվող Քարքե լեռը՝ ըստ Գ. Ա. Ղափանցյանի:

49. Դաինալաթինե— Ն. Վ. Հարությունյանի կարծիքով այսպես է կոչվել Արածանի գետն իր վերին հոսանքների շրջանում (Մանազկերտի մոտակայքում):

50. Նուրևե— երկիր Վանա լճից հյուսիս (տե՛ս № 22, ծան. 37):

51. Նիմերեխադեե— քաղաք Ուրմիա լճից հարավ և հարավ-արևելք գտնվող Մանա երկրում, Թերևս նրա կենտրոնը տվյալ ժամանակաշրջանում:

52. Արդինեպաե— մեր կարծիքով՝ միևնույն Արդինե (Մուծածիր) քաղաքը (տե՛ս նաև № 28, ծան. 3):

53. Իշկիգուլու— երկիր, հավանաբար, Այրարատ նահանգի Շիրակ գավառից հյուսիս ընկած վայրերում:

54. Ամիգու— քաղաք՝ վիտերուխե երկրի կենտրոնը:

55. Թարիու— երկիր Ջալգր լճից հարավ-արևմուտք (տե՛ս նաև № 22, ծան. 6 և 36):

56. Ուրմե— երկիր, որը մանագետների կարծիքով գտնվել է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի արևմտյան մասում: Մեր կարծիքով, հիշյալ երկիրը տեղորոշվում է Տուրուբերանի Տարոն գավառում կամ նրա շրջակայքում:

57. Խոսքը վերաբերում է Արգիշթի I-ի գահակալության առաջին տարվան՝ մ. թ. ա. 786 թվականին:

58. Արգիշթի I-ի յուրաքանչյուր տարի ստացած տուրքի քանակը 6566 անասուն և 51.878 ոչխար էր:

59. Եխուրա— բնակավայր Սևանա լճի ավազանում: Կոնկրետ տեղադրությունը հայտնի չէ:

60. Բամ (այլ ընթերցմամբ՝ Բամնի)— լեռ Սևանա լճի ավազանում:

61. Խոսքը, հավանաբար, երկրաշարժի և նրա հետևանքների մասին է:

62. Ամբողջ հատվածը ցույց է տալիս, որ Արգիշթի I-ը բնության այս արհավիրքը օգտագործել է որպես ժամանակը նշող փաստ՝ իր կողմից Եխուրա քաղաքի նվաճումը թվագրելու համար: Գիժբախտաբար, տվյալ հատվածը տրրված է առանձին և չի մտնում Արգիշթի I-ի տարեգրության այս կամ այն տարվա նկարագրության մեջ, բայց, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ հիշյալ երկրաշարժը տեղի է ունեցել այն տարիներին, երբ Արգիշթի I-ը արշավել է Սևանա լճի ուղղությամբ, այն է՝ մ. թ. ա. 782 թ. հետո և մ. թ. ա. 773 թ. առաջ, քանի որ այս թվականով էլ վերջանում է Արգիշթի I-ի տարեգրությունը:

63. Տարեգրության այս հատվածը խիստ տուժել է: Այն փորագրված է առանձին, ժայռափոր սենյակի մուտքի մոտ: Ենթադրվում է անգամ, որ այն տարեգրությանը չի վերաբերում: Սակայն, կարելի է կարծել նաև, որ այս հատվածը տարեգրության սկիզբն է, որը և պակասում է:

64. Պարբերության վերջին բառերից մի քանիսի թարգմանությունները առաջարկվում են մեր կողմից:

№ 23

ՊՈՒԼՈՒԱԴԻ ԵՐԿՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ՎԱՐՋԱԿԱՆ. Ժայռափոր արձանագրություն: Գտնվում է Իրանի հյուսիսարևելյան մասում, Արաքսի ստորին ավազանի հարավային կողմում:

ՎԿՀ, № 417.

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Քադիաու(?)[1] արքային (և) Պուլուադեխի[2] լեռնային երկիրը: Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է): Արշավեց Սարդուրե[3] Արգիշթորդին: Սարդուրեն ասում է.— Գրավեցի քսանմեկ ամրոց, քառասունհինգ քաղաք մեկ օրում նվաճեցի: Լիբլիուն[4] քաղաքն արքայական, (որ) ամրացված էր), կռվում գրավեցի: Սարդուրեն արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Շուրելե (երկրի), արքա Բիայինելե (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի:

1. Քադիաու(?)— Պուլուադե երկրի արքան, որի անունը այլուր չի հանդիպում:

2. Պուլուադեխն— երկիր Արաքսի ստորին ավազանում, նրա հարավային ափերի մոտակայքում: Գ. Ա. Մելիքիշվիլու կարծիքով, իրանական և այլ լեզուներում (ինչպես նաև հայերենում) հանդիպող «պողպատ» բառն իր տարբերակներով, ծագում է այս երկրի անունից:

3. Սարդուրե II (764—735)— Արգիշթե I-ի որդին և հաջորդը: Ուրարտուի հզոր արքաներից մեկը: Նրա օրոք ուրարտացիները Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան ուղղությամբ կարճ ժամանակով դուրս եկան Միջերկրական ծովի ափերը:

4. Լիբլիուե— քաղաք՝ Պուլուադե երկրի կենտրոնը: Հիշատակվում է նաև Սարդուրե II-ի տարեգրության մեջ:

№ 24

ԱՐԱՔՍԱՆԻ ՍՏՈՐԻՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԻՋՈՒԻ. Ժայռափոր արձանագրություն Եփրատ գետի ձախ (արևելյան) ափին, Արածանիի գետաբերանից հարավ:

HChI, LXXXIII; ՎԿՀ, № 158; HChI, № 104.

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Խլաուուադա[1] Շախորդի արքային (և) Մելետիա-ալիե[2] (քաղաքի) եր-

կիրը, զգետնեց Սարդուրեի առջև Աթգիշթորդու: Խալդեն իմ զորեղ (է), Խալդյան զենքն(?) իմ զորեղ (է): Արշավեց Սարդուրե Արգիշթորդին: Սարդուրեն ասում է.— Պուրանա[3] (գետի) վրա ոչ (մի) կամուրջ(?) (չ)կար: Ոչ (մի) «ահնեի» արքա այնտեղ արշաված (չէր): Ազոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները (և) տվեցին ինձ ճանապարհ: Արշավեցի զինվորների մեջ Տումիշքե[4] (քաղաքի) առջև: Հենց այդ նույն օրը արշավեցի երկրի վրա: Ամրողջ(?) Կալայա (երկիրը) անջատեցի(?), կտրեցի մինչև Քարնիշե լեռը բուն(?) Մելետիա (քաղաքի) (երկրի): Կտրեցի մինչև Մուշա (լեռը) Ջապշա (քաղաքի) մարզում: Տասնչորս ամրոց (և) ութսուն քաղաք մեկ օրում նվաճեցի: Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, հիսուն կառք ռազմական բռնեցի (=հափշտակեցի): (Երբ) կռվից դարձնում էի (=դառնում էի), վերապաշարեցի Սասինե քաղաքն արքայական Խլաուուադայի, (որը) ամրացված էր, (և) կռվում գրավեցի: Տավար, մարդ, կին այնտեղից հանեցի: Սարդուրեն ասում է.— Դեպի այնտեղ Թող խուժե՛ն(?) (և) Մելետիա (քաղաքը) Թող պաշարե՛ն: Եկավ Խլաուուադան առջևս: Երկրպագում էր, բռնեց (=գրկեց) ոտքեր(ս) փորի(?) վրա ընկած: Հանեցի ոսկի (և) արծաթ. տավարը զոհաբերության(?) դեպի Բիաինելե (երկիրը) տարա: Նրան առեցի հարկի տակ: Ինն ամրոց տեղից սրբեցի(?), ավելացրի երկրիս վրա.— Խազանե, Գաուրսախե[5], Տումիշքի, Յասինե, Մանինու, Արուշի, Կուլբիթարյան-թաշե[6], Կուերայի-թաշե[7], Մելուլյանե: (Հաջորդում են արքայական տիտղոսաշարը և անեծքի բանաձևը):

1. Խլաուուադա— Մելետիայի արքան (տե՛ս նաև № 22, ծան. 13):

2. Մելետիա— քաղաք, գտնվել է Եփրատից արևմուտք:

3. Պուրանա— Արևմտյան Եփրատը, որը այլ դեպքերում կոչվում է Մեծ Մելիթյան գետ (տե՛ս նաև № 22, ծան. 19):

4. Տումիշքե— քաղաք Եփրատի ափին, որը, ըստ Ն. Գ. Ադոնցի և Բ. Բ. Պիոտրովսկու, հունական աղբյուրներում հանդիպում է որպես Տոմիսա:

5. Գաուրսախե— ամրոց Արածանիի ստորին հոսանքներից հյուսիս: Անունը պահպանված է Չորրորդ Հայքի Գորնք գավառի անվան մեջ (գրաբարյան ձևը՝ Գաւրէք):

6. Կուլբիթարյան-թաշե (այլ ընթերցմամբ՝ Կուլբիթարրինի-թաշե)— ամրոց Արածանիի ստորին հոսանքների շրջանում, որի անունը կազմված է ուրարտերենի «թաշե» (անվեր) բառով:

7. Կուբայի-թաշ— ամրոց, որի անունը կազմված է Կուբրա աստծու անունից՝ միևնույն «թաշ» («ժայռ») բառով։

№ 25

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ
ՄԻՆՉԵՎ ԱՐՑԱԽԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ՇՈՎԱԿ. Փորագրված է մի մեծ քարի վրա Սևանա լճի ճարտավային ափի մոտակայքում:

ԿԻՅ, XXIX; CICh, LIII; ՍԿԻ, № 161; HChI, № 105.

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) հնթարկեց Արկուկե (ցեղի) երկիրը։ Սարդուրեն ասում է.— Արշավեցի, գրավեցի Արկուկե (ցեղի) երկիրը, կտրեցի մինչև Ուրտեխե[1] (երկիրը)։ (Հաջորդում է արքայական տիտղոսաշարը)։

1. Ուրտեխե— երկիր Սևանա լճից արևելք, որը Գ. Ա. Ղափանցյանի կարծիքով, համապատասխանում է Մեծ Հայքի Արցախ նահանգին՝ թե՛ անվամբ, թե՛ տարածքով։

№ 26

ՆԱՂԱՊԻ ԱՅԳԻՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՋԱՆՑԱՒՈՒՆԵՐԻ ՆԱՏՄԱՄԲ

ԱՐՃԵՇ.— Ժայռափոր արձանագրություն Վանա լճի հյուսիսային ափերի մոտակայքում:

MLV, XL; ՍԿԻ, № 167; HChI, № 110.

Խալդյան մեծությամբ Սարդուրե Արգիշթորդին այս խաղողուտը հիմնեց։ Սարդուրեն ասում է.— (Այն) արքան, ով հետո հենց այդ տեղից (=ժամանակից) տիրակալ լինի, թող (...) բազմաթիվ որթերից (չ)վերցնի հատատված Սարդուրյան անունը Սարդուրյան խաղողուտի։ Ով գողանա (կամ) ձի վարի, թող տա (մեկ) կանգուն մարթի (և) սանձը[1]։ Սարդուրեն ասում է.— Ով գողանա, թող ոչնչացնե՛(ն) խալդեն, Թեյշեբան, Շիվինեն (և) աստվածները (նրան) արևի տակից։

1. Տվյալ նախադասության թարգմանությունը հիմնականում տրված է մեր կողմից։ Մեր կարծիքով, այն ուրարտական արքունական-տաճարային օրենսդրքի հատվածներից մեկն է, օրենսգիրք, որից միայն հատուկտոր հատվածներն են մեզ հասել։

№ 27

ՍԱՐԴՈՒՐԵ II-Ի ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՆ. Փորագրված է Վանի քարաժայռի հյուսիսային կողմում պատրաստված Գանձադուռ (Խազինե կափույր) կոչված ժայռախորշի մեջ կանգնեցված կոթողի չորս նիստերին (որի վերևի մասը, դժբախտաբար, բացակայում է) և նրա պատվանդանի առջևի նիստին, ինչպես նաև ժայռախորշի արևելյան պատի վերին մասում: Պատին փորագրված հատվածը հայտնաբերել և ընդօրինակել է արևելագետ Ֆ. Է. Շուլցը դեռևս 1828 թ., իսկ կոթողը և պատվանդանը՝ Հ. Ա. Օրբելին՝ 1916 թ. Ն. Յ. Մառի ղեկավարած արշավախմբի աշխատանքների ժամանակ:

ԱԵԲ, XI—XIV; CICh, XXXII—XXXVII; ՍԿԻ, № 155; HChI, № 103.

*Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) հնթարկեց Մանա երկիրը, գգեստնեց Սարդուրեի առջև Արգիշթորդու։ Խալդեն (իմ) ղորեղ (է), խալդյան զենքն(?) իմ ղորեղ (է)։ Արշավեց Սարդուրե Արգիշթորդին։ Սարդուրեն ասում է.— Արշավեցի Բաբիլու[1] երկրի վրա։ Գրավեցի Բաբիլու երկիրը։ Կտրում էի մինչև Բարուաթաս[2] (երկիրը)։ Խալդյան մեծությամբ Սարդուրեն ասում է.— Գրավեցի երեք ամրոց, (որ) ամրացված էին, կռվում գրավեցի։ Քսաներեք քաղաք մեկ օրում նվաճեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին այնտեղից բշեցի։ Ութ հազար հարյուր երեսունհինգ պատանի հանեցի, քսանհինգ հազար ստրուկ, վեց հազար մարդ ռազմական։ Երկու հազար հինգ հարյուր ձի քշեցի, տաններկու հազար երեք հարյուր անասուն, երեսուներկու հազար հարյուր ոչխար։ Սույնը արքային նկատ (=հասավ), (իսկ) թե ինչ զինվորները քշեցին՝ առանձին քշեցին, երբ երկրի հացը գնաց։ Հենց այդ նույն տարում կրկին արշավեցի Եթիունե[3] (երկրի) վրա, Լիկիու[4] (երկրի) վրա։ Եդիա[5] քաղաքն արքայական Աբիանական (ցեղի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի. երկիա քաղաքն արքայական երքուայական (ցեղի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի. երդուա քաղաքն ար-**

քայական Վերդայական (ցեղի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի. արքային Բուինի-ալխե (քաղաքի) (երկրի) ծառա դարձրի, հարկի տակ գցեցի, հարկը Սարդուրեին տալու (համար)։ Այս չորս ամրոցները երկրում գրավեցի, մարդ, կին այնտեղից քշեցի։ Երեք հազար հինգ հարյուր պատանի, տասնհինգ հազար ստրուկ, չորս հազար մարդ ռազմական քշեցի։ Ութ հազար հինգ հարյուր քսանհինգ անասուն քշեցի, տասնութ հազար ոչխար քշեցի։ Այդ նույն տարում երրորդ անգամ արշավեցի Ուրմե[6] (երկրի) վրա։ Տասնմեկ ամրոց գրավեցի, ավերեցի, մարդ, կին այնտեղից քշեցի։ Հազար հարյուր պատանի հանեցի, վեց հազար հինգ հարյուր կին, երկու հազար մարդ ռազմական։ Երկու հազար հինգ հարյուր երեսունութ

Նկար 4. Վան. Հյուսիսային քարաժայռ. Սարդուրե II-ի Դանձադռան տարեգրությունը

անասուն (քշեցի), ութ հազար ոչխար։ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— (Ահա) ինչ տղամարդություն երեք երկրներում մեկ տարում կատարեցի։ Ընդամենը տասներկու հազար յոթ հարյուր երեսունհինգ պատանի հանեցի, քառասունվեց հազար վեց հարյուր կին քշեցի, տասներկու հազար մարդ ռազմական քշեցի։ Երկու հազար հինգ հարյուր ձի քշեցի, քսաներեք հազար երեք հարյուր երեսունհինգ անասուն (քշեցի), հիսունութ հազար հարյուր ոչխար քշեցի։ Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում Սարդուրե Արգիշթորդին կատարեց։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա[7] երկիրը, ենթարկեց Երիախե[8] երկիրը, զգետնեց նրանց Սարդուրեի առջև Արգիշթորդու։ Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքը(?) զորեղ (է)։ Արշավեց Սարդուրե Արգիշթորդին։ Սարդուրեն ասում է.— Դեպի այնտեղ արշավեցի՝ Մանա (երկրի) վրա։ Երկիրը գրավեցի, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին քշեցի դեպի Բիաինելե (երկիրը)։ Դարբա ամրոցը, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի, բերդակալ(?) այնտեղ նշանակեցի(?), երկիրը երկրիս վրա ավելացրի։ Հենց այդ նույն տարում երրորդ անգամ ուղարկեցի զինվորներ դեպի Երիախե (երկիրը)։ Երկիրը գրավեցին, քաղաքները այրեցին, ավերեցին, երկիրը կերան (=յուրացրին), մարդ, կին դեպի Բիաինելե (երկիրը) քշեցին։ Խալդյան մեծությամբ Սարդուրեն ասում է.— (Ահա) ինչ տղամարդություն այնտեղ կատարեցի։ Երեք հազար երկու հարյուր քսանհինգ պատանի այնտեղից հանեցի, չորս հազար ինն հարյուր քսանութ կին։ Ընդամենը ութ հազար հարյուր հիսուներեք մարդ։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Չորս հարյուր տասներկու ձի (քշեցի), վեց հազար վեց հարյուր վաթսունհինգ անասուն, քսանհինգ հազար յոթ հարյուր երեսունհինգ ոչխար։ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Խալդեի փոխարեն (?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Հենց այս տեղից (=ժամանակից) «նախեդե»-ն հաստատված (է)։

[...] արշավեցի Կուլխա[9] (երկրի) վրա։ Խալդյան մեծությամբ Խախա արքային Խուշա-ալխե[10] (երկրի) ժողովրդով հանդերձ գերեվարեցի, քշեցի, բնակեցրի երկրումս։ Սարդուրեն ասում է.— Հենց այդ տարում զինվորները արշավեցին Աբելիանեխե[11] (երկ-

բի) վրա։ Խալդյան մեծութ յամբ մեկ օրում երկիրն իր նվաճեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին այնտեղից քշեցի։ Սարդուրեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) (ահա) ինչ տղամարդություն այնտեղ կատարեցի.— Մեկ(?) հազար ութ հարյուր իննսուն պատանի հանեցի, երեք հազար չորս հարյուր իննսուն երիտասարդ, վեց(?) հազար չորս հարյուր ութ ստրուկ քշեցի։ Ընդամենը՝ ինն հազար ինն հարյուր չորս մարդ։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Վաթսունհինգ ձի քշեցի, [...] հազար իննսուն անասուն, տասը հազար ութ հարյուր իննսունյոթ ոչխար։ Սարդուրեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց արքային (և) Երիախե (ցեղի) երկիրը, ենթարկեց Աբելիանեխե (ցեղի) երկիրը, զգետնեց նրանց Սարդուրեի առջև Արգիշթորդու։ Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքը(?) զորեղ (է)։ Խալդյան մեծութ յամբ արշավեց Սարդուրե Արգիշթորդին։ Սարդուրեն ասում է.— Արշավեցի Երիախե (երկրի) վրա։ Գրավեցի Երիախե երկիրը, մեկ օրում նվաճեցի։ Մառանները, որ հայրն (ու) պապն էին սարքել «աուխե», (որ) նույնիսկ պատնեշ(?) (էր) պատրաստված(?) (և) ոչ (մի) «աիշեհի» արքաներ (չ)էին գրավել, Խալդյան հրամանով տիրական՝ ես մեկ(?) հարյուր հիսուն մառան գրավեցի, կողոպտեցի։ Մարդ, կին, տավար «դիդդուշի» այնտեղից հանեցի։ Քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին քշեցի դեպի Բիաինելե (երկիրը)։ Սարդուրեն ասում է.— Վերադարձին արշավեցի Աբելիաննախե (երկրի) վրա։ Քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի)։ Եկավ (առջև) Մուրինե Աբելիանորդին, բոննց (=գրկեց) Սարդուրյան ոտքերը, երկրպագում էր փորի(?) վրա ընկած։ Բնակեցրի տեղը, գցեցի հարկի տակ։ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն տղամարդությունը այնտեղ կատարեցի.— Յոթ հազար հարյուր հիսուն մարդ մեկ տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հինգ հարյուր ձի քշեցի, ութ հազար հինգ հարյուր վաթսուն անասուն, քսանհինգ հազար հարյուր յոթանասուն ոչխար։ Սույնը արքային եկավ (=հասավ), (իսկ) թե ինչ զինվորները հափշտակեցին՝ առանձին քշեցին, երբ երկրի հոգը գնաց։ Սարդուրեն ասում է.— Խալդեի փո-

խարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Ռաշունե արքային (և) Ռուիշիանական երկիրը, ենթարկեց Դիուծինե Իյանորդի արքային (և) Եթիունե երկիրը, զգետնեց նրանց Սարդուրեի առջև Արգիշթորդու։ Սարդուրեն ասում է.— Հենց այս տեղից (=ժամանակից) «ազեբե» բուն(?) «խարարե» հաստատված (է)։

[...] Սարդուրեն ասում է.— Արշավեցի Կուլխա (երկրի) վրա։ Երկիրը գրավեցի, Իլդամուշա քաղաքն արքայական Միշա արքայի՝ Կուլխախալյան (երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Մարդկանց այրեցի։ Բերդակալը ոմն(?)՝ Կուլխա (երկրի), (որ) այնտեղ էր, սպանեցի։ Կնիք երկաթյա սարքեցի, արձանագրություն Իլդամուշա (քաղաքում) դրեցի, ամրոցները, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին քշեցի։ Սարդուրեն ասում է.— Հենց այդ տարում երրորդ անգամ արշավեցի Վիտերուխե (երկրի) վրա։ Երեք գավառապետ ապստամբած(?) էին, երեք տեղերում արշավանք կատարեցի։ Խալդյան մեծութ յամբ երկիրը վերապաշարեցի, մեկ օրում նվաճեցի։ Երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին քշեցի։ Ուրայա ամրոցը կառուցեցի, բերդակալ այնտեղ նստեցրի(?), Վիտերուխեյան ժողովրդին(?) այնտեղ բնակեցրի։ Սարդուրեն ասում է.— (Ահա) ինչ տղամարդություն (այնտեղ) կատարեցի։ Ութ հազար հարյուր պատանի հանեցի, ինն հազար հարյուր տասը կին քշեցի։ Ընդամենը՝ տասնյոթ հազար երկու հարյուր մարդ։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հազար հինգ հարյուր ձի քշեցի, տասնյոթ հազար երեք հարյուր անասուն, երեսունմեկ հազար վեց հարյուր ոչխար։ Սարդուրեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց չորս արքաների Ուդուրե-Եթիունյան[12] երկրում. արքային Արկուկիույան (ցեղի) (երկրի), արքային Քամանիուի[13] (ցեղի) (երկրի), արքային Լուերունիուի (ցեղի) (երկրի)։ Հենց այս տեղից (=ժամանակից) (...) հաստատված (է)։

[...] այնտեղ արշաված (չէր)։ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Ազոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվինեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծութ յամբ, որի վերևում, երկրներում հեռավոր(?), լսում էին ինձ աստվածները

(և) ավեցին ինձ ճանապարհ։ Դնալի այնտեղ արշավեցի՝ Պուլուադե[14] (երկրի) վրա։ Ելավ առջևս կռվով։ Նորից վռնդեցի, փախցրի (=հալածեցի) մինչև Լիբլիունե (քաղաքը)։ Լիբլիունե քաղաքն արքայական, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի, արձանագրությունն այնտեղ դրեցի[15]։ Քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի), մարդ, կին այնտեղից քշեցի։ Ամրոցներ այնտեղ կառուցեցի՝ Բիաինելե (երկրի) զորությունը լուլույան (= բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)։ Երկիրը երկրիս վրա ավելացրի։ Սարդուրեն ասում է.— Հենց այդ տարում երրորդ անգամ արշավեցի Երիախե (երկրի) վրա։ Երկիրը գրավեցի, քաղաքները այրեցի, ավերեցի, երկիրը կերա (=յուրացրի)։ Մարդ, կին քշեցի դեպի Բիաինելե (երկիրը)։ Ամրոցներ այնտեղ կառուցեցի, երկիրը երկրիս վրա ավելացրի։ Խալդյան մեծությամբ Սարդուրեն ասում է.— (Ահա) ինչ տղամարդություն այնտեղ կատարեցի։ Վեց հազար չորս հարյուր երեսունվեց պատանի այնտեղից հանեցի, տասնհինգ հազար հինգ հարյուր հիսուներեք կին քշեցի։ Ընդամենը՝ քսանմեկ հազար ինն հարյուր ութսունինը մարդ (մեկ) տարում (քշեցի)։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Հազար վեց հարյուր տասներեք ձի (քշեցի), հարյուր տասնհինգ ուղտ (քշեցի), տասնվեց հազար հինգ հարյուր քսանինն անասուն քշեցի, երեսունյոթ հազար վեց հարյուր ութսունհինգ ոչխար քշեցի։ Սարդուրեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Կումախա-խալե[16] երկիրը, զգեստնեց Սարդուրեի առջև Արգիշթորդուի։ Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքը(?) զորեղ (է)։ Արշավեց Սարդուրե Արգիշթորդին։ Սարդուրեն ասում է.— Քուշթաշպիլե արքան Կումախա-ալխե[17] (երկրի) ինքնիշխան(?) էր։ Ոչ (մի) «ահնեի» արքա այնտեղ արշաված (չէր)։ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Ադոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվիննեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում, երկրներում հեռավոր(?), լսում էին ինձ աստվածները (և) ավեցին ինձ ճանապարհ։ Դնալի այնտեղ արշավեցի՝ Կումախա-խալյան երկրի վրա։ Քիշթանե[18] քաղաքն արքայական, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի, Խալպա քաղաքն արքայական, (որ) ծովի դեմն էր, գրավեցի, Պարալա քաղաքն արքայական վերա-

շրջապատեցի։ Ելավ առջևս, երկրպագում(?) էր, վերահաստատեցի (տեղը)։ Տվեց ինձ հարկ. քառասուն «մանա» ոսկի զտված, ութ հարյուր «մանա» արծաթ, երեք հազար հագուստ, երկու հազար վահան պղնձյա, հազար հինգ հարյուր երեսունհինգ թաս պղնձյա, որը հենց այս տեղից (=ժամանակից) «ազեբե եդանե խարաբե» հաստատված (է)։

Խալդյան զորությամբ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Քամա[19] ամսի քսանին զինվորներս գնդեցի։ Ադոթում էի Խալդե տիրոջը, Թեյշեբային, Շիվիննեին (և) աստվածներին Բիաինելե (երկրի)՝ տիրական մեծությամբ, որի վերևում լուլույան (= բարբարոսական) (երկրներում) լսում էին ինձ աստվածները։ Սարդուրեն ասում է.— Գնացի Եթիունե (երկրի) վրա։ Երբ դարձա (=եղա) Եթիունե (երկրի) կողմում(?), ամբողջ(?) Երիախե (երկիրը) անջատեցի(?) բուն(?) Կուրիանե[20] (երկրից)։ Արշավեցի Իյանե (երկրի) վրա։

Խալդեն արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Կապուրե արքային (և) Իյանեի երկիրը։ Խալդեն զորեղ (է), Խալդյան զենքը(?) զորեղ (է)։ Արշավեց Սարդուրեն։ Սարդուրեն ասում է.— Երեսունհինգ ամրոց, երկու հարյուր քաղաք մեկ օրում նվաճեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի)։ Մարդ, կին այնտեղից հանեցի դեպի Բիաինելե (երկիրը)։ Սարդուրեն ասում է.— Հենց այդ ճանապարհին (=արշավանքում) արշավեցի Բուզունիայան[21] երկրի վրա, Ալկանիա (քաղաքի) վրա, Ծուդալա (քաղաքի) վրա։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի)։ Վերադարձին արշավեցի Երիախե (երկրի) վրա։ Քաղաքները այրեցի, մարդ, կին այնտեղից հանեցի։ Այնտեղից դարձնում էի (=դառնում էի) (և) արշավեցի Իշթելուա (երկրի) վրա, Կադիայան (երկրի) վրա, Աբունե[22] երկրի վրա, Աբելիանեխե (ցեղի) (երկրի) վրա։ Սարդուրեն ասում է.— Ես զինվորներին (չ)հանձնեցի(?) ոչ (մեկին)։ Նախկին(?) գավառապետը ապստամբած էր։ Արշավեցի գնդի առջև Վելեքուխե[23] (երկրի) վրա։ Գրավեցի Վելեքուխե երկիրը։ Քսաներկու ամրոց, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի)։ Մարդ, կին քշեցի դեպի Բիաինելե (երկիրը)։ Սարդուրեն ասում է.— Եկավ առջևս Նիդե արքան Վելեքուխե (երկրի)։ Երկրպագում(?) էր։ Մառա

դարձրի, հարկի տակ գցեցի, հարկը Սարդուրեին տալու (համար)։ Սարդուրեն ասում է.— Հինց այդ տարում երրորդ անգամ արշավեցի Արկուկե (ցեղի) երկրի վրա։ Ենթարկեցի Արկուկե (ցեղի) երկիրը, Ադախու (ցեղի) երկիրը, Լուերու (ցեղի) երկիրը, Եշումուա (ցեղի) երկիրը, Քամանիու[24] (ցեղի) երկիրը, Կուլալբա[25] (երկիրը), Ուխունե[26] երկիրը, Տերիա[27] երկիրը։ Քանի ամրոց, (որ) ամրացված էր, կռվում գրավեցի։ Հարյուր քանի քաղաք մեկ օրում (=արշավանքում) նվաճեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (=յուրացրի)։ Մարդ, կին այնտեղից հանեցի։ Սարդուրեն ասում է.— Քանի մարդ իմ զենքի(?) առջևից ճողոպրում էր և բռնեց (=գրավեց) Ուշքիա (և) Բամ[28] (լեռները), վերապաշարեցի, սպանեցի։ Ովքեր ճողոպրում էին, Թևշեբան (=կայծակը) այրեց։ Սարդուրեն ասում է.— Առանձին մարդ, կին զինվորներին տվեցի։ Սարդուրեն ասում է.— (Ահա) ինչ տղամարդություն այնտեղ կատարեցի։ Տասը հազար պատանի հանեցի, չորս հազար վեց հարյուր երիտասարդ քշեցի, քսաներեք հազար երկու հարյուր կին, ընդամենը՝ երեսունյոթ հազար ութ հարյուր մարդ։ Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա։ Երեք հազար հինգ հարյուր ձի (քշեցի), քառասուն հազար երեք հարյուր հիսուներեք անասուն, քսանմեկ բյուր չորս հազար յոթ հարյուր ոչխար։ Սարդուրեն ասում է.— Խալդեի փոխարեն(?) սույն մեծագործություններդ մեկ տարում կատարեցի։

Խալդյան մեծությամբ Սարդուրե Արգիշթորդին ասում է.— Երբ Խալդեն ինձ արքայություն տվեց, ելա Հայրական տեղն իմ արքայական (և) ինչ որված (=հաղորդված) (է), այս «իսիուշե»-ն Շուրենների համար (=օգտին) ոչնչացրի (=կրճատեցի). իննսուներկու մարտակառք, երեք հազար վեց հարյուր նժույգ, երեսունհինգ բյուր երկու հազար տասնմեկ զինվոր՝ թե՛ հեծյալ, թե՛ հետիոտն։ Սույն որվածը (=հաղորդվածը) զինվորների համար (=օգտին) ոչնչացրի (=կրճատեցի)։ (Իսկ) ինչ «իսիուշե» էր, գցեցի։ Հարյուր քսանմեկ մարդ, տասը հազար չորս հարյուր ութ ձի, հարյուր երեսուներկու ջորի, տասներկու հազար երեք հարյուր քսանմեկ կով, իննհազար երեսունվեց եզ։ Ընդամենը՝ քսանմեկ հազար երեք հարյուր հիսունյոթ անասուն, երեսունհինգ հազար չորս հարյուր վաթսունյոթ ոչխար, երկու հազար հարյուր տասնչորս զենք մարտական, հազար երեք հարյուր երեսուներկու աղեղ,

քառասունյոթ հազար ինն հարյուր յոթանասուն նետ[29], հարյուր երկու բյուր երկու հազար հարյուր երեսուներեք «քապե» գարի, հարյուր տասնմեկ «ակարկե» գինի, ութսունվեց «ակարկե» յոթ «տերուսե» քսան «քալե» յուղ, յոթ հազար յոթանասունինը «մանա» պղինձ՝ երեք հարյուր երեսունվեց ամսում[30] Ուրուրդենների[31] համար (=օգտին) ոչնչացրի (=կրճատեցի)։

Սարդուրե Արգիշթորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Շուրելե (երկրի), արքա Բիաինելե (երկրի), արքա արքաների, իշխանը Տուշպայական քաղաքի։

1. Բարիլու— երկիր Դիյալա գետի հովտում (տե՛ս նաև № 22, ծան. 33)։

2. Բառուաթա— երկիր Ուրմիա լճից հարավ (տե՛ս նաև № 22, ծան. 34)։

3. Եթիուե— լայնատարած երկիր Հայկական լեռնաշխարհի հյուսիսում (տե՛ս նաև № 3, ծան. 2)։

4. Ինկիու— երկիր, որը ըստ Ն. Վ. Հարությունյանի, գտնվել է Սևանա լճափերի մոտակայքում՝ Հրազդանի վերին հոսանքների շրջանում։

5. Եդիա— քաղաք, թերևս, Սևանա լճի մոտակայքում։

6. Ուրմե— երկիր, թերևս, Տուրուբերանի Տարոն գավառը (տե՛ս նաև № 22, ծան. 56)։

7. Մանա— երկիր Ուրմիա լճի հարավային և հարավարևելյան կողմերում։

8. Երիախե— երկիր, Այրարատի Շիրակ գավառը։

9. Կուլխա— երկիր, թերևս, Ճորոխի ստորին ավազանում, հունական աղբյուրների Կոլխիդա երկիրը։

10. Խուշա-ալխե— երկիր, թերևս, Ջալղր լճի հյուսիսարևմտյան կողմերում։

11. Արելիաննեխե—. երկիր, համապատասխանում է Այրարատի Աբեղյանք գավառին։

12. Ուդուրե եթիուե— Սևանա լճի ավազանի երկրների հավաքական անունը։

13. Քամանիու— ցեղ, ապրել է Սևանա լճի հարավային ափերին։

14. Պուլաադե— երկիր Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում, Արաքսի ստորին ավազանի հարավային կողմում (տե՛ս նաև № 23, ծան. 2)։

15. Սարդուրե II-ի՝ Լիրլիունե քաղաքի մոտակայքում թողած արձանագրությունը հայտնաբերվել է (տե՛ս № 23, ծան. 3)։

16. Կումախա-խալե— երկիր Եփրատի արևմտյան ափին, Մալաթիայից հարավ։ Անտիկ աղբյուրներում այն հայտնի է Կոմմագենե անվամբ։

17. Կումախա-ալխե— միևնույն Կումախա-խալե երկիրը։

18. Քիշբաանե— քաղաք Կումախա երկրում, որը գտնվել է Եփրատից արևմուտք։ Հիշատակվում է նաև ասորեստանյան աղբյուրներում որպես Քիշքա(ն)։ Գանձագրան տարեգրության մեջ այս տեղանունը սխալմամբ գրված է Ուիթանեե։ Ճշտումը մերն է։

19. «Քամա ամիս»— ուրարտական ամսանուններից մեկը, որի՝ նման թարգ-

մանությունը մեզ է։ Դժվար է ասել, թե այն ո՞ր ամսին է համապատասխանում (տե՛ս նաև № 6 ծան. 1)։

20. Կուրխանե— երկիր Ջալդր լճի կամ Շիրակի մոտակայքում։

21. Բուզուենիա— երկիր, որը ենթադրաբար տեղորոշվում է Շիրակից հյուսիս-արևմուտք ընկած շրջաններում։

22. Արուեն— երկիր, Այրարատի Հավնունիք գավառը (տե՛ս նաև № 22, ծան. 7)։

23. Վալեոսխ— երկիր Սևանա լճի հարավարևմտյան ափերին։ Գ. Ա. Ղափանցյանի կարծիքով՝ Սյունիքի Գեղարքունիք գավառը։

24. Արկուկե, Ադալսու, Լուերու, Նշումաա, Քամանիու— ցեղեր, որոնք ապրել են Սևանա լճի արևմտյան և հարավային ափերին։

25. Կույալբա (հնարավոր է նաև Կուվալբա ընթերցումը)— երկիր Սևանա լճի ավազանում։

26. Ուխուեն— երկիր Սևանա լճի ավազանում, գուցե Արցախում։

27. Տեբիա— Ս. Տ. Երեմյանի կարծիքով՝ Արցախի Տոի գավառը։

28. Ուշիա, Բամ— լեռներ Սևանա լճի մոտակայքում։

29. «Աղեղ» և «ենա»— տվյալ 1332 աղեղի և 47970 նետի միաժամանակյա հիշատակությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր աղեղին հատկացվել է 36 նետ։

30. «Երեք հարյուր երեսունվեց ամիս»— Ֆ. Վ. Քյոնիգի ենթադրությամբ, սա Սարդուրե II-ի գահակալության ժամանակաշրջանն է ամիսներով հաշված, որը հավասար է 28 տարվա։

31. Ուռուդեներ— ցեղ, ընդ որում՝ արտոնյալ, որի իսկությունը, սակայն, այնքան էլ պարզ չէ։ Ենթադրել, որ այս ցեղանունը ուրարտացիների ինքնանվանումն է՝ վկայված ուրարտերենով, բավական դժվար է։

№ 28

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՔԱՆԵՐԻ ԹԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻՆԵՈՒՄ

ԹՈՓՈՒԶԱՎԱ. Փորագրված է կոթողի վրա։ Երկլեզվյան (ուրարտերեն, ասուրերեն) արձանագրություն է։ Կոթողի արևելյան լայն նիստին, ինչպես նաև հարավային կողին փորագրված է ուրարտերեն տեքստը, իսկ արևմտյան լայն նիստին, ինչպես նաև հյուսիսային կողին՝ ասուրերեն տեքստը։ Արձանագրությունը գտնվում է Ուրմիա լճից հարավ-արևմուտք՝ լեռներում, Ռևանդուզից Ուշնե տանող ճանապարհին։ Վաչկատուն ցեղերի ներկայացուցիչները կոթողն օգտագործել են որպես նշանակետ-թիրախ, որի պատճառով տեքստը խիստ տուժել է։ Բերում ենք միայն ուրարտերեն բնագրի թարգմանությունը։

HChI, XCIV; VKH, № 264; HChI, № 122.

Ռուսա[1] Սարդուրուրդին ասում է.— Ուրզանա[2] արքան Արդինի[3] (քաղաքի) հետ առջևս (...) ճանապարհի վրա վերին՝ մատուռներ խալդյան հրամանով Ռուսայի համար կառուցեցի։ Հաստատեցի Ուրզանային գավառապետ, բնակեցրի Արդինե (քաղաքում)։ Հենց այդ տարում դեպի Արդինե (քաղաքը) գնացի (ես)՝ Ռուսա Սարդուրուրդի(ս)։ Հաստատեց ինձ Ուրզանան հայրական գահին։ Բարձր, արքայական [...] (...), երբ կատարեց աստվածների առջև Ուրզանան տաճարում աստվածների (և) առջևս զոհ։

Հենց այդ օրը խալդե տիրոջն իմ տաճարում լեռնային զոհ կատարեցի։ Ուրզանան օգնական զինվորներ, (այնու)հետև կառքեր մարտական, ինչքան կային, տվեց։ Վարեցի օգնական զորքերը։ Խալդյան հրամանով գնացի ես՝ Ռուսա(ս), դեպի Ասորեստանի լեռները։ Արքային սպանեցի։ Ուրզանային հենց այդ տեղից (=ժամանակից) (...) [...], գցեցի, հաստատեցի նրան կուսակալ տեղն իր արքայության։ Ժողովուրդը Արդինե քաղաքում էր, երբ զոհ կատարեցի (և) բոլորը Արդինե (քաղաքին) տվեցի[4]։ Ժողովուրդը Արդինե (քաղաքի) հրապարակ(??) լցվեց[5]։ (...)։ Ռուսան՝ խալդական ծառան, հովիվ (է) իսկական՝ ժողովրդի (և) խալդյան զորությամբ, երբ կռիվ (է), ոչ (մի) կռվից (չ)ի վախենում։ Տվեց ինձ աստվածները ուրախություն (և) ուրախություն առաջին (=նախորդ) խալդե տերը իրավունք (և) ուրախություն առաջին (=նախորդ) տարիներում։ Բիաշիներին համախմբեցի(?), լուլուներին (= բարբարոսներին) ցրեցի(?)։ Տվեցին ինձ աստվածները ուրախություն (և) օրերը անցնում էին օրերի վրա՝ ուրախությունից ուրախություն (?)։ Հենց այդ տեղից (=ժամանակից) ծառայությունն(?) (ու) խաղաղությունը(?) հաստատված (է)։ (Հաջորդում է անեծքի բանաձևը)։

1. Ռուսա I (735—713)— Սարդուրե II-ի որդին և հաջորդը։

2. Ուրզանա— Արդինի (Մուծածիր) քաղաքի (ինչպես նաև երկրի) արքան, Ռուսա I-ի դաշնակիցը։

3. Արդինե— քաղաք, ասորեստանյան աղբյուրներում, ինչպես նաև ասուրերենով գրված ուրարտական արձանագրություններում, վկայված է որպես Մուծածիր։ Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, Արդինե քաղաքի անունը ունի խուռիական ծագում, առուգաբանվում է խուռիերենի «արդե» («քաղաք») բառով և նշանակում է պարզապես Քաղաք (տե՛ս նաև № 22, ծան. 52)։

4. «Արդինե (քաղաքին) տվեցի»— նշանակում է, որ զոհաբերված անասունները բաժանվել են Արդինե քաղաքի բնակիչներին։

5. «Ժողովուրդը (...) ճռապարակ(??) լցվեց»— նշանակում է Ռուսա I-ի քաղաքականության կապակցությամբ Արդինեն քաղաքի բնակիչները տոնախմբություն են կատարել։

№ 29

ՎԵԼԵՔՈՒԽԵ ԵՐԿՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԿԱՄՈ. Արձանագրությունը փորագրված է շինարարական քարի վրա: Գտնված է Սևանա լճի հարավարևմտյան ափերի մոտակայքում:

HChI, XC; УКН, № 265; HChI, № 119.

Խալդյան զորությամբ Ռուսա Սարդուրորդին ասում է.— Արքային Վելեքուխե[1] երկրի ենթարկեցի, ծառա դարձրի, երկրի վրա կուսակալ նշանակեցի(?)։ Դավառապետ տեղում հաստատեցի։ Խալդյան դարպասներ (և) ամրոց հոյակապ կառուցեցի, հաստատեցի անունը «Խալդական քաղաք»[2] Բիահինելե (երկրի) զորությունը լուլույանների (= բարբարոսների) մեջ ամրապնդելու (համար)։ Ռուսա Սարդուրորդին արքա (է) հզոր, ով Բիացիներին համախմբեց(?)։

1. Վելեխուխե— *երկիր Սևանա լճի հարավարևմտյան ափերին (տե՛ս № 27, ծան. 23)։*

2. «Խալդական քաղաք»— *քաղաք-ամրոց, որը հիմնադրել է Ռուսա I-ը։ Ամրոցի ավերակները գտնվում են ներկայիս Կամո քաղաքի տարածքում։*

№ 30

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ՇՈՎԻՆԱՐ. Արձանագրությունը փորագրված է Սևանա լճի ափին, բարձր ժայռի ծովահայաց կողմում, որ կախված է եղել ուղիղ լճի ալիքների վրա: Այդ պատճառով էլ նրան մոտենալը դժվար էր թե՛ վերևից և թե՛ ներքևից: Այժմ, Սևանա լճի մակարդակն իջնելու հետևանքով, ժայռի տակը ցամաք է և նրան մոտենալը դյուրին:

КНЗ, XXXI; HChI, XC; УКН, № 266; HChI, № 118.

Խալդյան զորությամբ տիրական Ռուսա Սարդուրորդին ասում

է.— Ես այս երկրները մեկ արշավանքում նվաճեցի, ծառա դարձրի՝ Ադախու (երկիրը), Վելեքուխե (երկիրը), Լուերուխե (երկիրը), Արկուկյան[1] (երկիրը),— չորս արքայի այս կողմից ծովային գավառում. Գուրկումելե[2] (երկիրը), Շանատուայան (երկիրը), Թերխիշայան (երկիրը), Ռիշուայան (երկիրը), [...]զուայան (երկիրը), Արիայան (երկիրը, Զամանե (երկիրը), Երկիմայան (երկիրը), Ելայան (երկիրը), Երելթուայան (երկիրը), Այդամանիու (երկիրը), Գուրիայան (երկիրը), Ալզերա (երկիրը), Պիրուայան (երկիրը), Շիլայան (երկիրը), Վիդուայան (երկիրը), Ատեզայան (երկիրը), Երիայան (երկիրը), Ազամերունե (երկիրը),— տասնինն արքայի այն կողմից ծովային գավառում՝ լեռն(աշղթայի) ստորոտում։ Ընդամենը քսաներեք արքայի մեկ օրում (=արշավանքում) նվաճեցի։ Մարդ, կին դեպի Բիահինելե (երկիրը) քշեցի։ Հարկային տարում եկա, կառուցեցի այս ամրոցները հենց այս երկրում(?) [...], Թեյշերաիևե[3] ամրոցը հոյակապ կառուցեցի, դրեցի անունը «Թեյշերայի քաղաք»՝ Բիահինելե (երկրի) զորությունը լուլույանների (= բարբարոսների) մեջ ամրապնդելու (համար)։ Ռուսան ասում է.— Ով այս արձանագրությունը ոչնչացնի [...]։

1. Ադախու, Վելեխուխե, Լուերուխե, Արկուկե— *երկրներ Սևանա լճի հարավարևմտյան ափերին։*

2. Գուրկումելեն և սրան հաջորդող տասնութ մյուս երկրները գտնվել են Սևանա լճի ավազանում կամ նրա մոտակայքում՝ լճից դեպի հարավ կամ արևվելք։ Կոնկրետ տեղագրություններ հայտնի չեն։

3. Թեյշերաիևե— *քաղաք-ամրոց, որ Ռուսա I-ը կառուցել էր Սևանա լճի հարավային ափերին, հավանաբար, Մարտունու շրջանի Ծովինար գյուղի տարածքում, որտեղ այժմ պահպանվում են նրա ավերակները։ Հիշյալ Թեյշերաիևե քաղաք-ամրոցը չպետք է շփոթել Կարմիր բլուրի վրա կառուցված Թեյշերաիևեի հետ։*

№ 31

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՎԱՆԻՑ ԱՐԵՎԵԼՔ

ՏՈՆԻ. Արձանագրված է քարակոթողի վրա, որի սկիզբը մեզ չի հասել: Արհեստական լիճը գոյություն ունի մինչև այսօր:

CICh, XXXVII; УКН, № 268; HChI, № 121.

Հողաշերտը կիտեցի լեռան ստորոտում, դաշտը հեղեղեցի, ուղղեցի ջրերը այնտեղ՝ առուների և առվակների, դրեցի անունը Ռուսայի ծով[1]*: Անցկացրի ջրանցք այնտեղից դեպի Ռուսախինելե*[2] *(քաղաքը), հենց այդ հողով, որ չոր(?) էր: Բիացիները փորում էին հողաշերտը, (ինչպես) նաև՝ լուլույանները (= բարբարոսները), (որ), իրոք, «շուլե» էր: Ռուսան ասում է.— Երբ Ռուսախինելե (քաղաքը) կառուցեցի, երբ այս ծովը հիմնեցի, սահմանեցի.— Որդին (=բնակիչը) Տուշպայան (քաղաքի) կվարի (=կմշակի) (այսու)հետև իր հողը Ռուսախինելե (քաղաքի) առջև, (եթե մշակի) նաև այսպիսի ծովային տեղը, (որ), իրոք չոր(?) (և) «շուլե» էր: Որդիներից (=բնակիչներից) ով կվարի (=կմշակի) հեռավոր (=օտար) որդու (=բնակչի) հողակտորը(?), «գիրե»-ն*[3] *պղնձյա կաս(?) սահմանված:*

Ռուսան ասում է.— Հիմնեցի հենց այդ հողում խաղողուտ, անտառ, արտ ցորենի: Հզոր մեծագործություններ այնտեղ կատարեցի: Այս ծովը Ռուսախինելե (քաղաքին) «խուրիշխե» թող լինի, թող ոռոգման(?) հրամանը կողմ (=զանց) (չ)առնեն(?) (...): Ջրերը Ալաինե[4] *(գետից) թող հանեն դեպի Ռուսախինելե (քաղաքը): Երբ ջրերը Ալաինե (գետի) Տուշպա (քաղաքի) հատատված «ուլխուլինե», երբ ջրերը Ռուսախինելե (քաղաքի) «իպշադուլե», «ապսիլաթինե» ինչքան ավելանա(?):*

1. Ռուսայի ծով— արհեստական մեծ ջրամբար Վանից արևելք, որը գոյություն ունի մինչև այսօր: Ռուսա I-ի կողմից նման ջրամբարի կառուցման մասին գեղեցիկ նկարագրություն կա ասորեստանյան սեպագրություններում՝ Սարգոն II-ի 8-րդ արշավանքի մասին զեկուցագրի մեջ:

2. Ռուսախինելե— քաղաք, որի հիմնադիրն է Ռուսա I-ը: Հանդիսացել է Տուշպա քաղաքի արվարձանը: Գտնվում էր ներկայիս Վանի հյուսիսարևելյան մասում:

3. Գուցե այստեղ պիտի հասկանալ «գրամ(?)»: Ըստ Ի. Մ. Դյակոնովի, ուրարտական արձանագրություններում հանդիպում է նաև «գրամի մարդ» (այսինքն՝ «գրամատեր») արտահայտությունը: Ամբողջ հատվածը ցույց է տալիս Ուրարտուի այգեմշակման-ոռոգման բնույթի մի օրինակի հնարավոր գոյությունը, որի հատվածներից մեկն է, թերևս, հիշյալ կարդագրությունը:

4. Ալաինե— գետ, ըստ երևույթին, Տուշպայի մոտակայքում:

№ 32

ՄԱՐԶԱԿԱՆ ՆԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆ. Արձանագրված է մի փոքր քարի վրա, որը գտնված է Վան քաղաքի Հայկավանք թաղամասում:

HChI, CI; ՎԿՀ, № 277; HChI, № 123.

Արգիշթե[1] *Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս տեղից՝ Գիլուրա*[2] *(գյուղի) (?) անտառի առջև(ից), մինչև Իշպիլե*[3] *բառտուրդու այդին՝ ինն հարյուր հիսուն կանգուն*[4]*:*

1. Արգիշթե II (713—685)— Ռուսա I-ի որդին և հաջորդը:
2. Գիլուրա— բնակավայր Տուշպա քաղաքի մոտակայքում:
3. Իշպիլե— անձնանուն:
4. «Կանգուն»— երկարության չափ, որը հավասար է 51,8 սմ: Այդ հաշվով Արգիշթե II-ը նետը արձակել է 492 մ (տե՛ս նաև № 14, ծան. 2):

№ 33

ԱՐԱՔՍԻ ՍՏՈՐԻՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

ԱՐՏԱՎԵՏ. Ժայռափոր արձանագրություն Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում՝ Կասպից ծովի հարավարևմտյան ափերից ոչ հեռու, Թավրիզից Արտավետ տանող ճանապարհի մոտակայքում:

ՎԿՀ, № 445.

Խալդյան մեծությամբ Արգիշթե Ռուսայորդին ասում է.— Իջա(?) Արխուրու[1] *(երկիրը): Այնտեղ ենթարկեցի Ուշուլունե երկիրը, Բուկուրու [...] երկիրը: Կտրում էի մինչև գետը: Այնտեղից դարձնում էի (=դառնում էի) (և) ենթարկեցի Գիրդունե (երկիրը), Գիթթուխանե (երկիրը), Տուեշդունե*[2] *(երկիրը): Երուդե [...] (քաղաքը) գրավեցի: Երկրները գրավեցի, հարկի տակ գցեցի: Նաև այս ամբողջը կռվում գրավեցի, կառուցեցի, դրեցի անունը «Արգիշթեերդու քաղաք» Բիաինելե (երկրի) զորությունը լուլույանների (=բարբարոսների) մեջ ամրապնդելու (համար): (Հաջորդում է արքայական տիտղոսաշարը և անեծքի բանաձևը):*

1. Արխուրու— երկիր Արաքսի ստորին ավազանի շրջանում, գետից հարավ։ Կոնկրետ տեղադրությունը հայտնի չէ։

2. Ուշուլուե, Բուկուրու[...], Գիրդուե, Տուեշդուե— երկրներ միևնույն շրջանում։

№ 34

ՄՈՒՇՔԻ ԵՎ ԽԱԹԵՅԱՆ ԽԱԼԻՏՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ

ԱՐՇԿե. Արձանագրությունը գտնվել է Ածկեի ամրոցի պարսպի շարվածքում: Այն գրված է եղել տարբեր քարերի վրա, որոնցից վերևինը, ինչպես նաև աջ ու ձախ կողմերինը առայժմ չեն հայտնաբերվել:

HChI, XCVII; ՎKH, № 278; HChI, № 128.

[...] Խալդական[1] քաղաքը Չիուկունե[2] (երկրի) Ռուսա[3] [Արգիշթորդին սարքեց։ Ռուսա Արգիշթորդին] ասում է.— Քշեցի մարդ, կին լուլույան (= բարբարոսական) երկրներից (...) [...]։ Հավաքվեցին(?) Մուշքե[4] (երկրից), Խաթեյան Խալիտու[5] (երկրից), (ինչպես) նաև [...]։

Ռուսա Արգիշթորդին ասում է.— Խալդեն ինձ պարգևեց թե՛ քաջություն(?), թե՛ զորություն։ Խալդեի փոխարեն(?) այս մեծագործությունները կատարեցի։ (Հաջորդում է արքայական տիտղոսաշարը)։

1. Խալդական— քաղաք Վանա լճի հյուսիսարևմտյան ափին, թերևս Արծկե քաղաքի տեղում, որը ասորեստանյան աղբյուրներում հիշվում է որպես Արծուխուե։

2. Չիուկունե— երկիր Արծկեի շրջանում։ Հավանաբար, ուրարտական դիցարանի Չիուկունե աստծու պաշտամունքի կենտրոնը (տե՛ս նաև № 6, ծան. 3)։

3. Ռուսա II (685—645)— Արգիշթե II-ի որդին և հաջորդը։

4. Մուշկե— երկիր Եփրատից արևմուտք։ Հավանաբար, Փոյուգիան։

5. Խաթեյան Խալիտու (այլ ընթերցմամբ՝ Խաթե, Խալիտու)— երկիր, ըստ Ի. Մ. Դյակոնովի, համապատասխանում է հայկական աղբյուրների Խաղտիք աշխարհին։ Սակայն, Խաթեյան Խալիտու անվանումը ցույց է տալիս, որ նույնանուն տարբեր երկրներ են եղել և այս մեկը մյուսներից տարբերելու համար է կոչվել Խաթեյան Խալիտու, ինչպես ունենք Խաթեյան Մուշքու։

№ 35

ՌՈՒՍԱՅԻ ՓՈՔՐ ՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ՄԱԿՈՒԻ. Արձանագրված է շինարարական քարի վրա, որը բերված է քաղաքի մոտակայքում գտնվող ուրարտական ամրոցից:

HChI, XCIII; ՎKH, № 280; HChI, № 129.

Խալդե տիրոջը այս տաճարը Ռուսա Արգիշթորդին կառուցեց։ Խալդյան զորությամբ Ռուսա Արգիշթորդին ասում է.— Ժայռը(?) ամուր(?) էր, (բայց) ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր)։ Հենց որ Խալդեն կարգադրեց(?), ես կառուցեցի։ Դրեցի անունը «Ռուսայի քաղաք փոքր»[1]։ (Հաջորդում է անեծքի բանաձևը և արքայական տիտղոսաշարը)։

1. «Ռուսայի քաղաք փոքր»— քաղաք-ամրոց, որի ավերակները գտնվում են Մակուից մոտ 5 կմ հեռավորության վրա՝ անտառում։ Վերջին տարիներս այնտեղ պեղումներ են կատարվել, որի ժամանակ հայտնաբերվել են երկու կավե սալիկներ՝ ուրարտական արձանագրությամբ։

№ 36

ՀՐԱՉԴԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ ԴԱՇՏ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՋՐԱՆՑՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉՎԱՐԹՆՈՑ. Արձանագրված է քարակոթողի վրա: Հայտնաբերված է Չվարթնոցի տաճարի պեղումների ժամանակ: Ենթադրվում է, որ սկզբնապես այն գտնվելիս է եղել Կարմիր բլուրի ամրոցի մոտակայքում:

HChI, XCI; ՎKH, № 281; HChI, № 126.

Խալդե տիրոջն իր այս կոթողը Ռուսա Արգիշթորդին դրեց։ Խալդյան զորությամբ Ռուսա Արգիշթորդին ասում է.— Կուարլիխալդյան դաշտի[1] Հողը «շուլե» էր։ Ոչ (մի) բան այնտեղ (չ)կար։ Հենց որ Խալդեն կարգադրեց(?), ես այս խաղողուտը հիմնեցի, արտ ցորենի, անտառ նոր այնտեղ հիմնեցի, քաղաք նոր այնտեղ կառուցեցի[2]։ (Մի) ջրանցք Իլդարունիա[3] (գետից) անցկացրի՝ «Ումեշե»[4] անուն (ով), սույն Ռուսայան դաշտին[5]։

Երբ ջրանցքը փորեն(?) (մեկ) ուլ Խալդեին թող ողջակիզեն, (մեկ) ոչխար Խալդեին թող զոհաբերեն, (մեկ) ոչխար՝ Թեյշեբային, (մեկ) ոչխար՝ Շիվիննեին, (մեկ) «շեխադե»՝ Անիկուին[6]։ Երբ ջուրը փապուղու մեջ գնա, (մեկ) ուլ Խալդեին թող ողջակիզեն, (մեկ) ոչխար Խալդեին թող զոհաբերեն, (մեկ) ոչխար՝ Թեյշեբային, (մեկ) ոչխար՝ Շիվիննեին, (մեկ) «շեխադե»՝ Անիկուին։ (Հաջորդում են արքայական տիտղոսաշարը և անեծքի բանաձևը)։

1. Կուարլիեե դաշտ— Ներկայիս էջմիածնի դաշտը։

2. Տվյալ «կառուցեցի» բայը բնագրում տրված է «րունեցի» ձևով։

3. Իլդարունիա— *այժմյան Հրազդան գետը։*

4. «Ումեշե»— *հավանաբար, Իլդարունիա (Հրազդան) գետից դեպի էրեբունիի դաշտ անցկացված ջրանցքի անունը։ Այս ջրանցքը տարվել է ներկայիս Հաղթանակի կամրջի վերևից և Կարմիր բլուրի դիմաց՝ բազալտե ժայռի մեջ փորված կես կիլոմետրանոց փապուղով, որը գործում է մինչև այսօր։*

5. Ռուսական դաշտ— *Ռուսա II-ը, հավանաբար, էրեբունիի դաշտում քաղաքաշինության և Հրազդանից այնտեղ ջրանցք անցկացնելուց հետո Կուարլիենե դաշտի անունը փոխում և վերանվանում է «Ռուսական դաշտ»։*

6. Անիկու— *ուրարտական դիցարանի անդրշիրիմյան աստվածը, որը Մհերի դռան արձանագրության մեջ տարբեր պատճառով չի հիշատակվում։ Հրազդան գետից դեպի էրեբունիի դաշտ ջրանցք անցկացնելու համար Ռուսա II-ը Կարմիր բլուրի դիմաց, բազալտե ժայռերի միջով մոտ կես կիլոմետրանոց փապուղի է փորել տալիս, որով, փաստորեն, խախտում է Անիկու աստծու իշխանության սահմանները և, այդ կապակցությամբ հիշելով նրա անունը, նրա պատժին զոհեր է նախատեսում (տե՛ս նաև № 6, ծան. 2)։*

№ 37

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ. Արձանագրված է բազալտե եղկած յոթ շինաքարերի վրա, որոնք ագուցված են եղել շենքի պատի շարվածքում՝ երկու շարքով։ Բովանդակությունը բավականաչափ դժվարըմբռնելի է։ Բերում ենք որոշ կրճատումներով։

НУНКБ, I; УКН, № 448.

Խալդե տիրոջն իր այս տաճարը Ռուսա Արգիշթորդին կառուցեց, նաև՝ խալդյան դարպասները հոյակապ Ազա[1] երկրի Թեյշեբաինե[2] քաղաքի, նվիրեց(?), զոհաբերեց Խալդեին։ Ռուսան ասում է.— ժայռը(?) ամուր(?) էր, հողը՝ չոր(?), ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր)։

Երբ ինձ Խալդեն արքայություն տվեց, ևլա (= բազմեցի) հայրական տեղն իմ արքայական մենաշնորհյալ(?) (և) այս Խալդյան դարպասները կառուցեցի հոյակապ։ Խալդեի կողմից, Խալդյան դարպասների կողմից թող լինի ողջություն, ուրախություն, մեծություն, նաև՝ իրավունք (և) առնական(?) զորություն։

Ռուսա Արգիշթորդին արքա (է) հզոր, արքա Շուրելե (և) Բիաինեվե (երկրների)։

Ռուսան ասում է.— Խալդյան դարպասների կողմից (...) (մեկ) ուլ Խալդեին թող ողջակիզեն, (մեկ) եզ Խալդեին թող զոհաբերեն,



Նկար 5. Կարմիր բլուր. Թեյշեբաինե ամրոցի արխիվի մնացորդներից։ Ուրարտական արքաների հրամանագրեր, կարգադրություններ և այլ բնույթի վավերագրեր

(մեկ) ոչխար՝ Թեյշեբային, (մեկ) ոչխար՝ Շիվինեին, (մեկ) «շեխադե» Անիկուին[3], (մեկ) կով՝ Յարուբաներին, (մեկ) ոչխար՝ Խալդյան զենքերին, (մեկ) ոչխար՝ Խալդյան դարպասներին, (մեկ) ոչխար՝ Իյարշային[4]։ Ռուսան ասում է.— (...) երբ հիմնեն, (մեկ) ուլ Խալդեին թող ողջակիզեն, (մեկ) եզ Խալդեին թող զոհաբերեն, (մեկ) կով՝ Յարուբաներին։ Երբ կառուցեն, վերջացնեն(?), (մեկ) ուլ Խալդեին թող ողջակիզեն, (մեկ) եզ Խալդեին թող զոհաբերեն [...], (մեկ) կով՝ Յարուբաներին։ Երբ Խալդական տաճարում (...) անցկացնեն, (մեկ) ուլ Խալդեին թող ողջակիզեն [...] (...)։

1. Ազա *(գուցե՝ Յազա, մյուս հնարավոր ընթերցումը՝ Վազա)— ցեղ, որի անունով կոչվում էր նաև նրա բնակեցրած երկիրը (տե՛ս նաև № 22, ծան. 46)։*

2. Թեյշեբաինե— *քաղաք-ամրոց, որ հիմնել է Ռուսա II-ը ներկայիս Կարմիր բլուրի վրա։*

3. *Տե՛ս № 6, ծան. 2, № 36, ծան. 6։*

4. Իյարշա (նույնը՝ Իվարշա)— Խաթեյան Ծուպայից Արաբատյան դաշտ տեղափոխված բնակչության գլխավոր աստվածը (տե՛ս նաև № 16, ծան. 1, № 21, ծան. 1)։

№ 38

ՄԱՐԴՈՒԿ ԱՍՏՎԱԾ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ. Արձանագրված է բազալտե շինարարական քարի վրա: Տեքստը լրիվ չի պահպանվել: Բերում ենք կրճատումներով:

НУНКБ, III; УКН, № 450.

(...) Ռուսա Արգիշթորդին ասում է.— Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով փշացնի, ով ջարդի(?), ով գնա, սրանք անի, ով ասի. «ե՛ս կատարեցի», [...] (...), ով մեկին (...), թող ոչընչացնե(ն) Խալդեն, Թեյշեբան, Շիվինեն (և) Մարդուկը[1] թե՛ անունը, թե՛ սերունդը արևի տակից (...) [...]։

1. Մարդուկ— Բաբելոնի գերագույն աստվածը։ Այստեղ, հավանաբար, հանդես է գալիս Դիյալա գետի ավազանում գտնվող նամրու երկրի՝ բաբելականացված բնակչության՝ Արաբատյան դաշտ տեղափոխվելու կապակցությամբ (տե՛ս նաև № 22, ծան. 33, № 27, ծան. 1)։

№ 39

ՉԵԿՈՒՅՑ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ. Արձանագրված է կավե սալիկի վրա: Բովանդակությունը բավական դժվարըմբռնելի է: Տալիս ենք աննշան կրճատումներով:

УПД, № 7; УКН, № 462.

Ինուշ-շիլան[1] հրաման հանեց (=արձակեց).— Ասա Ուրմա[2] գավառապետին Ալիաու[3] սերմնացանի(?) (և) Աունաթա (սերմնացանի(?) (մասին) Ուրքիա (քաղաքի)։ Համելի(?) լինի(?) կյանքդ աստծուն, իրոք։ Երկու լրտեսի(?)՝ Խալդիբուրային (և) Ուրադեին[4] գցեցի արքայի առջև։ Նվերների(?) մեջ, որ ուղարկեցի(?) արքային, (կա) մեկ ձի, մեկ պատգարակ(?) ճանապարհային, մեկ գայլ(?), մեկ ջորի, երեսուն գերան(?), քսան «սուրբ խլխլիլե»,

երկու «քապե» կիր(?)։ (Այս) բանները (=առարկաները) եկան մինչև Արտինե[5] բլրի(?) վրա։ Ելավ առջևը նրանց հինգ ծիպայան[6] երիտասարդ(?)՝ որդիք (=բնակիչներ) Երդեու (քաղաքի)։ Յրեց(?) բոլորին։ Ուրադեն ենթարկվեց հարցաքննության(?)։ Երեք օր սպասեցի(?)։ Խալդիբուրան սահմանը(?) խախտեց(?)։ Այժմ բանտ(?) (է) գցված։ Մեկ ձի գողացավ այն երկրից։ Քշեցի Միպային (և) արքայի առջև արեցի (=ներկայացրի) կապված(?)։ Վախ կերավ (=բռնեց) (նրան) արքայի առջև։ Ոչ (մի) բան (չ)էր կեղծում (...)։ Այժմ ասված(?) (...) կատարի՛ր, գնա՛։ Երբ մարդն այս ձիերով «ուշե»-ն (և) «քապե»-ն հասցնի(?) քեզ (...) ովքեր ցրվեցին(?), հաստատիր (=ստուգիր) բանները (=առարկանները) սալերի(?) մեջ, նաև՝ մարդուն այս։ Ուրիշ (ահա) ինչ։ Երբ այս արձանագրությունը (=նամակը) հասցնի(?) քեզ, իրոք, արքայի առջև թող հանի (...) և թող վերադարձնի ժամանած մարդուն այս (և) ձիերը։

1. Ինուշ-շիլա— Ուրարտուի պետական կարևոր պաշտոնյաներից մեկը, թերևս, նահանգապետ։

2. Ուրմա— ուրարտական գավառապետներից մեկը, թերևս, զբաղեցրել է Թեյշեբաինե ամրոցի պարետի պաշտոնը։

3. Ալիաու— թերևս լրտես է, որը բնագրում կոչվում է «սերմնացան(?)»։

4. Աունաթա, Խալդիբուրա, Ուրադե— թերևս նույնպես լրտեսներ են։

5. Արտինե— լեռ, որը ամենայն հավանականությամբ, գտնվել է Արարատյան դաշտի և Շիրակի միջև։ Մեր կարծիքով, համապատասխանում է Արագածի հարավային փեշերին գտնվող Արտին լեռանը։

6. Միպա— անձնավորություն, հավանաբար, ինչ-որ վեհասարար խմբի ղեկավար, որը, երևի, պարբերաբար հարձակում էր գործում ճանապարհորդների վրա։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի ծագման ու նրա կազմավորման ընթացքի մասին գոյություն ունեն հայրենի և օտար առասպելախառն մի քանի ավանդություններ: Հայկական ավանդությունը մեզ է հասել հիմնականում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում:

Մովսես Խորենացին միջնադարյան հայ պատմագրության ամենակարկառուն դեմքն է, որն ըստ արժանվույն վաստակել է

«հայոց պատմահայր» պատվաստիտղոսը: Նա ծնվել է մոտավորապես 410 թ. Տարոնի Խորոնի գյուղում: Պատմահայրը սովորել է Վաղարշապատի մեսրոպատառ հայկական առաջին դպրոցում, ուր աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին: Վերջիններս 435 թ. դպրոցի մի խումբ խոստումնալից սաների հետ Խորենացուն ուղարկում են Ալեքսանդրիա՝ կրթությունը շարունակելու և բարգմանական, բերականական, ճարտասանական, բերթողական արվեստներին տիրապետելու համար: Խորը և բազմակողմանի գիտելիքներով զինված, Խորենացին 440 թ. հետո վերադառնում է Հայաստան և իրեն նվիրում ստեղծագործական-բարգմանական գործունեության: Խորենացու անունով մեզ են հասել «Թուղթ առ Սահակ Արծրունին», «Պատմութիւն Հռիփսիմեանց», «Յաղագս Վարդավառի», «Յաղագս պիտոյից» և այլ երկեր: Սակայն նրան որպես մատենագրի, մտածողի ու գործչի նախ և առաջ բնութագրում է հոչակավոր «Պատմութիւն Հայոց» երկասիրությունը, որը նա ավարտել է 482 թ. առաջ, այսինքն՝ մինչև նրա Պատմության պատվիրատուի՝ Սահակ Բագրատունու մահը:

Անգնահատելիորեն վիթխարի է Խորենացու Պատմության երշանակությունը հայ ժողովրդի հին և վաղ միջնադարյան պատմության ուսումնասիրության գործում: Գիտական-հետազոտողի ճշմարտապատում այս երկը, որ գրված է բազմալեզու և բազմաբնույթ սկզբնաղբյուրների ճնշադատական վերլուծության հիման վրա, Հայոց ամբողջական պատմություն ստեղծելու ուղղությամբ կատարված առաջին աշխատանքն է:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» ստորև տրված հատվածները բերել ենք ակադ. Ստ. Մալխասյանցի թարգմանություններից, որը բնագրի հետ համեմատել ու խմբագրել են Վ. Դ. Առաֆելյանը և Ա. Ա. Աբրահամյանը (տե՛ս *Մովսես Խորենացի*, Պատմություն Հայոց, Երևան, 1968):

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Ա

Ե

. . . . . .

Թորգոմը սերում է Հայկին:
Հայկը սերում է Արամանյակին:

Արամանյակը սերում է Արամայիսին:
Արամայիսը սերում է Ամասիայինն:
Ամասիան սերում է Գեղամին:
Գեղամը սերում է Հարմայինն:
Հարման սերում է Արամին:
Արամը սերում է Արա Գեղեցիկին:

Ը

ԹԵ Ո՞Վ ԵՎ Ո՞ՐՏԵՂԻՑ ԳՏԱՎ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմում են, Արշակ Մեծը՝[1] Պարսից և Պարթևների թագավորը, որ ինքն էլ ցեղով պարթև էր, ապստամբվեց մակեդոնացիների դեմ, թագավորեց ամբողջ Արևելքի և Ասորեստանի վրա, սպանեց Նինվեում Անտիոքոս թագավորին[2] և ամբողջ տիեզերքը հնազանդեցրեց իրեն: Սա իր եղբորը՝ Վաղարշակին[3] թագավորեցնում է Հայաստանի վրա, այսպես նպատակահարմար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա: Նրան մայրաքաղաք է տալիս Մծբինը[4] և նրա համար սահմաններ է որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը, Ասիան, ամբողջ Միջերկրայքը[5] և Թեսալիան[6], Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է արևմտյան ծովի մոտ[7], նաև Ատրպատականը, և էլի՝ որքան քո միտքն ու քաջությունը կհասանեն, որովհետև, ասում են՝ քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է:

Սա իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ո՞վքեր արդյոք և ի՞նչպիսի մարդիկ տիրելիս են եղել Հայաստանի վրա իրենից առաջ, արդյոք ինքը անցյալ քաջերի՞ տեղն է գրավում, թե ապիկարների: Նա գտավ մի ուշիմ ասորի՝ Մար Աբաս Կատինայի անունով[8], քաղդեական և հունական գրության մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի մոտ արժանավայել ընծաներով, (խնդրելով) բանալ նրա առաջ արքունական դիվանը:

Թ

Արշակ Մեծն ընդունելով գրությունը Մար Աբաս Կատինայից, մեծ ուրախությամբ հրամայում է բանալ նրա առաջ արքունական

պիվանը, որ Նինվեում էր[9], միաժամանակ ուրախանալով, որ այսպիսի մատենադրություն ունի իր եղբայրը, որին վստահել էր իր թագավորության կեսը։ Նա (Մար Աբասը) աչքի անցկացնելով բոլոր մատյանները՝ գտնում է մի մատյան հունարեն գրված, որ ուներ, ասում է, այսպիսի վերնագիր.

ՄԱՏՅԱՆԻ ՍԿԻԶԲԸ

Այս մատյանն Ալեքսանդրի[10] *հրամանով քաղդեերեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հների և նախնիների պատմությունները։*

... Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով՝ բերում է Մծբին Վաղարշակ թագավորին։ Եվ բարեկազմ ու քաջ ազնվատոհմ, հռետոր ու հանճարեղ, արի վաղարշակը սա առանալով, համարում է առաջինն իր գանձերի մեջ, դնում է արքունական պահեստը մեծ դդուշությամբ և հրամայում է մի մասը քարի վրա արձանագրել։ Սրանից մենք հավաստի տեղեկանալով զրույցների կարգին՝ կկրկնենք այժմ, քո[11] *հետաքրքրասիրության համար, հասցնելով մեր բնիկ նախարարությունները մինչև քաղդեացիների Սարդանապալը*[12] *և դեռ ավելի մոտ։*

Դրա մեջ պատմության սկիզբը այսպես է։

«Աստվածներից առաջիններն ահեղ էին և երևելի ու աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբ։ Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը, խոշոր, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ հղանալով ծնան աշտարակաշինության[13] *անօրեն գաղափարը, որը և ձեռնարկեցին իրագործելու։ Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում։ Սրանցից մեկն էր և Հապետոսթյան Հայկը*[14] *հաստ աղեղով ու հզոր նետաձիգ, անվանի և քաջ նախարարը»։*

Բայց մենք կդադարեցնենք զրուցաբանության այս կարգը, որովհետև մեր նպատակն է ոչ թե պատմությունն ամբողջությամբ գրել, այլ աշխատել ցույց տալ մեր առաջին և բուն հին նախնիներին։ Արդ՝ նույն մատյանից սկսելով կասեմ. «Հապետոսթե, Մեթոդ, Սիրաթ, Թակլադ, որ են Հաբեթը, Դոմերը, Թիրասը, Թորգոմը։ Սրանից հետո նույն մատենագիրը շարունակելով ասում է կարգով՝ Հայկ, Արամանյակ և այլն, որոնց մասին արդեն հիշել ենք։

Ժ

ՀԱՅԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, դեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով։ Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների ու դյուցազունների վրա տիրապետելու։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի[15] *բռնատիրության դեմ՝ երբ մարդկային ցեղը սփռվում, տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա՝ բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժեղների մեջ։ Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, կատաղած, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էր մյուսներին տիրելու, երբ Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և ամբողջ երկիրը գրավել։ Հայկը չկամենալով սրան հնազանդվել, Բաբելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո, չվեց գնաց Արարադի*[16] *երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում՝ իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդօծիններով*[17]*, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով։ Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից։ Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածական բնակելի տուն է շինում և տալիս է ժառանգություն Կադմոսին՝ Արամանյակի որդուն։ Սա ճշտում է ասված անգիր հին զրույցները։*

«Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք. գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն՝ թե այստեղ բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերունդի։ Շինում է և մի գյուղ, որն իր անունով կո-

շում է Հայկաշեն»: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դյուցազնին: Այս էլ ճշտում են ասված անգիր զրույցները:

ԺԱ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲԵԼԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Իր խոսքը շարունակելով (Մար Աբասը) ասում է, թե երբ Տիտանյան Բելը իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկեց հյուսիսային կողմը Հայկի մոտ, որ նա գա հնազանդության և խաղաղությամբ ապրի: «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր, որտեղ որ կհաճես իմ երկրում բնակվելու»: Հայկը Բելի պատգամավորներին ետ է դարձնում խստությամբ պատասխանելով: Ուղարկվածը վերադառնում է Բաբելոն:

Ապա Տիտանյան Բելը զորք է հավաքում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս՝ Արարադ երկիրը, Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ, իրենից առաջ արագավազ սուրհանդակներ ուղարկելով: «Գիտցած եղիր, ասում է, ով մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա անմահ քաջերով և երկնադեղ հասակով կռվող հսկաներով: Եվ ես իմանալով, որ նա մոտեցել է իմ տանը, փախա և ահա տագնապահար գալիս եմ քեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»:

Իսկ Բելը հանդուգն ու հսկա ամբոխի զորությամբ ինչպես մի մեծ հորձանք զառիվայրից ներքև հեղեղվելով, շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա: Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ, գեղագանգուր ու զվարթաչյա հսկան շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշ մարդկանց, որ իրեն էին ենթարկվում, գնում

հասնում է մի ծովակի ափ[18], որի ջրերը աղի են և իրենց մեջ մաներր ձկներ են պարունակում: Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, պետք է աշխատենք այն տեղին պատահել, որտեղ անցած կանգնած կլինի Բելը քաջերի բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տաննենք»:

Եվ ամբողջ ասպարեզներ[19] դեպի առաջ անցնելով՝ հասնում են շատ բարձր լեռների միջև մի դաշտաձև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գրչուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան սուրում է երկրի երեսի վրա, իսկ Բելը մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իրրև դիտանոցում: Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև: Նա կրում էր նշաններ կրող վերջերով երկաթե գլխանոց, թիկունքի և կրծքի վրա պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը. իր աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում վահան, նրա աջ և ձախ կողմում գտնվում էին ընտիր զորականներ: Հայկը տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը: Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև սրբանք աղեղ և սուր գործածելու մեջ հաջողակ մարդիկ էին, իսկ ինքը կանգնում է առջևից, իսկ մյուս բազմությունը կանգնեցնում է իր հետևում. դասավորում է մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ է շարժվում:

Եվ երկու կողմի հսկաները միմյանց հասնելով՝ երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին գրոհելով և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով թավալվում ընկնում էին գետին, իսկ ճակատամարտը երկու կող-

մից էլ անլուծելի էր մնում։ Այս անսպասելի սարսափելի դիպվածը տեսնելով Տիտանյան արքան զարհուրեց և ետ-ետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատ կազմի։ Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվում, ընկնում է գետին ու շունչը փշում։ Իսկ ամբոխն այս մեծ քաջագործությունը տեսնելով փախչում է ամեն մեկը իր երեսը դարձած կողմը։ Այսքանը բավական թող լինի այս մասին։

Բայց ճակատամարտի տեղը հաղթական պատերազմի պատվին շինում է դաստակերտ և անունը դնում է Հայք։ Այս պատճառով գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր[20]։ Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ ասվում է Գերեզմանակ։ Բայց Բելի դիակը, ասում է (Մար Աբասը), դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հայք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների։ Իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք։

ԺԲ

ՀԱՅԿԻՑ ՍԵՐՎԱԾ ՑԵՂԵՐԻ ԵՎ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՆՐԱՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՆՉ ԳՈՐԾԵՑ

(Մար Աբասի) մատյանում սրանից հետո ուրիշ շատ բաներ են պատմվում. բայց մենք կշարունակենք այն, որ պիտանի է մեր հավաքման համար։

Սրանից հետո, ասում է նա, Հայկը դառնում է իր բնակության տեղը. իր կադմոս թոռին պարգևում է շատ ինչք պատերազմի ավարից և անվանի մարդիկ իր ընդոծիներից։ Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գրնում դադար է առնում Հարք կոչված դաշտում։ Սա տարիներ ապ-

բիլով, Արամանյակին սերեց Բաբելոնում, ինչպես վերն ասացինք. դրանից հետո դարձյալ ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռավ, ամբողջ տոհմը հանձնելով իր Արամանյակ որդուն։

Իսկ սա իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին իրենց ամբողջ ազխով, ինչպես Մանավազի որդի Բազին, թողնում է Հարք կոչված տեղում։ Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բազը ժառանգում է ազի ծովի հյուսիսարևմտյան ափը և գավառն ու ծովը կոչում է իր անունով[21]։ Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյանց նահապետությունները, նաև Որդունի կոչվածը, որոնք վերջերս սուրբ Տրդատից[22] հետո, մեկը մյուսին ոչնչացրեց պատերազմով։ Իսկ Խոռը բազմանում է հյուսիսային կողմերում, շեներ է հիմնում, և ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ շարունակվում է Խոռխոռունիների ցեղի մեծ նախարարությունը. քաջ և անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են։

Իսկ Արամանյակը ամբողջ բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիս-արևելք և գնում իջնում է բարձրագագաթ լեռներով շրջապատված մի խոր դաշտավայր, որի միջով մի կարկաչահոս գետ է անցնում արևմտյան կողմից, և դաշտի արևելյան մասը կարծես մեջքի վրա պառկած երկարությամբ ձգված է արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում են բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով, գետեր կազմելով, հեզաբար հոսում են նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և դաշտի եզրերով, կարծես թե որպես պատանիներ պտտվում են երիտասարդուհիների շուրջը։ Իսկ հարավային արեգակնասլաց լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել է երկրից՝ պինդ գոտեվորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետե սրվում է դեպի վեր, իսկապես մի ծերունի լեռ երիտասարդացած լեռների մեջ։ Արամանյակն այս խոր դաշտում բնակվելով՝ շենցնում է մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում. լեռն իր անվան նմանողությամբ կոչում է Արագած, իսկ կալվածը՝ Ոտն Արագածո։

Բայց սքանչելի մի բան է ասում պատմագիրը, թե շատ տեղերում ցիրուցան բնակվում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր բնիկ նախնի Հայկի գալուստը։

Արամանյակը տարիներ ապրելուց հետո սերեց Արամայիսին, որից հետո էլ բավական տարիներ ապրելով մեռավ: Նրա որդին՝ Արամայիսն իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր, իսկ գետի անունը իր թոռան՝ Երասխ անունով դնում է Երասխ: Իսկ իր որդուն՝ բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան Արագածի թիկունքում, որտեղից շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ: Ուստի, թվում է, թե ճշմարտությունից հեռանալով, գյուղացիների մեջ տարածված առասպելը. «Թե քո որկորը Շարայի որկորն է, բայց մեր ամբարները Շիրակի ամբարները չեն»: Այս Արամայիսը տարիներ ապրելով սերեց իր որդի Ամասիային, որից հետո էլի տարիներ ապրելով մեռավ:

Ամասիան Արմավիրում բնակվելով՝ տարիներ անցնելուց հետո սերում է Գեղամին և Գեղամից հետո արի Փառոխին ու Յոլակին: Սրանց սերելուց հետո գետն անցնում, մոտենում է հարավային լեռան: Այստեղ լեռան ստորոտում՝ խորշերում խոշոր ծախսերով շինում է երկու տուն, մեկը արևելյան կողմում՝ լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, իսկ մյուսը՝ նույն տնից դեպի արևմուտք նրանից հեռու՝ հետևակ մարդու կեսօրվա ճանապարհով երկար օրում: Սրանք նա տվեց ժառանգություն իր երկու որդիներին՝ արի Փառոխին և կայտառ Յոլակին, որոնք այնտեղ բնակվելով իրենց անունով կոչեցին այդ տեղերը, Փառոխից՝ Փառախոտ և Յոլակից՝ Յոլակերտ: Իսկ լեռը Ամասիան իր անունով կոչեց Մասիս[23] և հետո նորից Արմավիր դառնալով կարճ տարիներ ապրեց ու մեռավ:

Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո Արմավիրում սերեց Հարմային. նա Հարմային թողեց Արմավիրում բնակվելու իր որդիների հետ, իսկ ինքը գնաց հյուսիս-արևելքում եղած մյուս լեռան հետևի կողմը՝ մի ծովակի ափ: Նա շենցնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շենները՝ Գեղարքունի, որով կոչվում է նաև ծովը: Այստեղ նա սերեց իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու թիկնավետ, վայելչակազմ, ճարտասան և գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան տվեց իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ ծառաներ, և նրան ժառանգական սահման կտրեց ծովից դեպի արևելք մինչև այն դաշտը, ուր Երասխը

անպատճառ լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով, ահագին շառաչյունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և երկիրը իր անունով կոչում է Սյունիք. բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Սիսական:

Վերջերը Հայոց առաջին թագավոր Վաղարշակը՝ Պարթև ցեղից, գտնելով սրա սերունդներից անվանի մարդիկ՝ այս երկրին տերեր է նշանակում, որ Սիսական ցեղն է: Վաղարշակը այս անում է պատմությունից իմանալով, իսկ թե ի՞նչպես այս եղավ, իր տեղում կպատմենք:

Իսկ ինքը Գեղամը նորից դառնում է հիշյալ դաշտը, և նույն լեռան ստորոտում, մի ամուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամի, որ հետո նրա թոռան՝ Գառնիկի անունով կոչվեց Գառնի: Վերջերը, Վաղարշակի թոռան՝ Արտաշեսի ժամանակ, սրա սերունդներից մի պատանի է եղել Վարաժ անունով, եղջերուների, այծյամների և վարազների որսերում հաջողակ, ուժեղ և ճիշտ նետաձիգ: Սրան (Արտաշեսը) նշանակում է արքունական որսերի վրա և շներ է պարգևում Հրազդան կոչված գետի ափին: Սրանից, ասում են, առաջ է եկել Վարաժնունյաց տունը: Այս Գեղամը, ինչպես ասացինք, տարիներ ապրելով սերեց Հարմային, որից հետո էլի ապրելով, մեռավ և իր որդուն՝ Հարմային հրամայեց Արմավիրում բնակվել:

Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գամերի որդին, Հաբեթի որդին,— հայաստանցիների նախնին է. և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության երկիրը: Այնուհետև, ասում է (Մար Աբասը), նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել:

Հարման տարիներ ապրելով սերեց Արամին:

Արամի մասին պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ[24]:

1. Արշակ Մեծ— «Արշակը» պարթևական անուն է, որը կրել է պարթև Արշակունիների հիմնադիր թագավորը՝ ապարն կամ պարն ցեղի առաջնորդը: Մ. թ. ա. 250 թ. Արշակը ապստամբում է Սելևկյանների դեմ և 247 թ. իրեն հռչա-

կում է թագավոր։ Այնուհետև պարթևական ամեն մի թագավորի անվան մոտ այս անունը գործ է ածվել իբրև պարտադիր դինաստիական անուն-տիտղոս (տե՛ս Սեբեոսեան, Աշխարհագրություն, XV, 1, 36)։ Նորագույն ուսումնասիրություններում Արշակունիների հիմնադիր թագավոր է համարվում Տրդատ I-ը (247—211), որին նույնացնում են Արշակ I Մեծի հետ։

2. Անտիոքոս— խոսքը Սելևկյան պետության թագավոր Անտիոքոս II Թեոսի (261—246) մասին է։ Պարթևների դեմ մղված պատերազմների ժամանակ նա պարտություն կրեց՝ կորցնելով Բակտրիա, Սողդիանա և Մարգիանա պրովինցիաները։

3. Կիսառապելական անձնավորություն է։ Ուսումնասիրողները ցույց են տվել, որ Խորենացու «Վաղարշակ» թագավորը հավաքական անձնավորություն է, բաղկացած Արտաշես I-ի, Տրդատ I-ի, Վաղարշ II-ի և հայ այլ թագավորների առանձին գծերից։ Իր հիմնական գծերով այս «Վաղարշակը» նույնացվում է Մեծ Հայքի թագավոր Տրդատ I-ի (66—88) հետ։ Պարզ է, որ Հայոց «Վաղարշակ»՝ Տրդատ I թագավորը չէր կարող լինել եղբայրը Պարթևաց Արշակ Մեծի, իրականում նա եղբայրն է Պարթևաց արքայից արքա Վաղարշ I-ի (52—80), որը և Տրդատին պահել է Հայոց թագավոր։ Դրանով իսկ Հայաստանում հաստատվել է Արշակունիների մի առանձին տոհմաճյուղը՝ հանձինս Արշակունիների հայկական հարստության (66—428)։

4. Պետք է ուղղել Մծուրն կամ Մծուրք։ Նախ՝ Միջագետքում գտնվող Մծբին քաղաքը երբեք չի եղել հայ Արշակունիների պետության մայրաքաղաք։ Երկրորդ, ըստ եռանկյին, Խորենացու օգտագործած աղբյուրում քաղաքը կոչվել է Մծուրն, սակայն. պատմահորը անծանոթ է մնացել այս անվանումը, քանի որ Մծուրնը IV դարի կեսերին արդեն հիմնահատակ կործանված էր երկրաշարժից։ Ուստի Վաղարշակի աթոռանիստ քաղաքի անվանումը Խորենացին խմբագրել է իրեն հայտնի Մծբին քաղաքի անունով։

Ըստ Փավստոսի, Մծուրնը հիմնել է Հայոց Սանատրուկ թագավորը (88—110)։ Այն գտնվում էր Տիգրան Մեծի կառուցած «Արքունի պողոտայի» վրա, որը Արտաշատը կապում էր Տիգրանակերտի հետ։ Մծուրնը տեղադրվում է Արածանի գետի հովտում, Բյուրակն գետի թափվելու վայրում՝ Մշո դաշտի արևմտյան կողմում։

5. Վաղ միջնադարյան հայ մատենագրության մեջ «Միջերկրայք» են կոչվել Փոքր Ասիայում գտնվող բոլոր երկրները՝ միասին վերցրած։

6. Ըստ երևույթին, խոսքը Թեսալիայի մասին է (երկրամաս Հունաստանի հյուսիսում), քանի որ հայկական աղբյուրների Թետալիան դա Բակտրիան է՝ Քուշանաց երկիրը։ Հասկանալի է, որ Արշակ Մեծը չէր կարող Վաղարշակին տալ մի երկրամաս, որն իր թագավորության կենտրոնական մասն էր կազմում։

7. Արևմտյան ծով— Կասպից ծովն է։ Պետք է նկատել, որ իրոք, պարթև Արշակունիների համար Կասպից ծովը գտնվում էր Արևմուտքում։

8. Մար Աբաս Կատինա (Մարաբա Մծուրնացի)— ասորի փիլիսոփա և պատմագիր։ Մարաբան գրել է մի «Հայոց պատմություն» (ըստ երևույթին՝ հունարեն), որը մեզ չի հասել։ Նրա բովանդակության մասին պատկերացում ենք կազմում այն հեղինակների երկերից, որոնք անմիջականորեն օգտվել են Մարաբայի մատյանից. դրանք են՝ Մովսես Խորենացին, Անանունը և Պրոկոպիոս Կեսարացին։

Մովսես Խորենացու պնդմամբ՝ Մարաբայի մատյանը գրվել է մ. թ. ա. II դարի երկրորդ կեսում, սակայն, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, այն իրականում գրվել է ոչ վաղ, քան մ. թ. III դարում։

9. Խորենացին շփոթում է. այս իրադարձությունների ժամանակ Նինվե քաղաքն այլևս գոյություն չուներ։ Այն մ. թ. ա. 612 թվականին հիմնահատակ կործանել ու հողին էին հավասարեցրել Նորբաբելոնական պետության թագավոր Նաբոպալասարը և Մարաստանի թագավոր Կիաքսարը։

10. «Ալեքսանդրի եռամանով»— խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու մասին է։

11. Խոսքն ուղղված է Մովսես Խորենացու մեկենաս Սահակ Բագրատունուն, որի հանձնարարությամբ պատմահայրը ձեռնամուխ էր եղել իր «Պատմություն Հայոցի» շարադրմանը։

Սահակ սպասպետ Բագրատունին իր ժամանակի (V դարի երկրորդ կես) հայ քաղաքական աշխի ընկնող գործիչներից մեկն էր։ Վահան Մամիկոնյանի հետ նա 481—482 թթ. գլխավորել է հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ պարսկական բռնակալության։ Ապստամբների կողմից հռչակվել է Հայոց մարզպան։ Սպանվել է 482 թ.՝ Ճարմանայի ճակատամարտում։

12. Սաւղանապալ— Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալն է (668—633)։

13. Ըստ Աստվածաշնչի, համաշխարհային ջրհեղեղից հետո մարդիկ փորձել են Բաբելոն քաղաքում աշտարակ կառուցել, որի բարձրությունը հասնելու էր երկինք։ Զայրանալով մարդկանց ամբարտավանության ու հանդգնության վրա՝ աստված «խառնում է նրանց լեզուները»։ Մարդիկ դադարում են իրար հասկանալ և ցրվում են աշխարհով մեկ (տե՛ս Ծննդոց, գլ. ժա, 1—10)։

14. Մարաբան և նրա հետևորդ հայ պատմագիրները Հայկին համարում են Հարեթի թոռան՝ Թորգոմի որդին։ Այստեղից էլ Հայկի Հայաստոսյան անվանումը։ Հայկի և Բելի առասպելում հետևյալ արձագանքներ են պահպանվել հայ ժողովրդի կազմավորման ընթացքի մասին։ Այստեղ Հայկը հանդես է գալիս որպես հայերի էպոնիմ (անվանադիր). նրա անվան հետ է կապված հայ ժողովրդի անունը։

15. Բաբելոնական գերագույն աստված, Բաբելոն քաղաքի հովանավորողը։ Նույնացվել է Մատուրն մոլորակին։ Աստվածաշնչում Բելը հիշատակված է Քամյան Քուշի որդի Նեբրովթ անունով, որպես Բաբելոնի առաջին թագավոր։

16. Տե՛ս 115-րդ էջի № 5 ծանոթագրությունը։

17. Տան ոչ արյունակից անդամներ։

18. Խոսքը վանա լճի մասին է։

19. Հին Արևելքի երկրներում տարածված երկարության միավոր։ Պարսից տասպարեղը հավասար էր 230 մետրի։

20. Ուսումնասիրողներն այս գավառը տեղադրում են Վան քաղաքից հարավ՝ Հայոց ձոր (Խոշաբ) գետի հովտում (տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 51)։

21. Խոսքը Վանա (Բզնունյաց) լճի և Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի 11-րդ գավառ Բզնունիքի մասին է:

22. Սուրբ Տրդատ— Հայոց Տրդատ III Մեծ թագավորն է (298—330), որի օրոք քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց համապետական կրոն:

23. Մասիս— Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր (5156 մ) լեռնագագաթն է: Աստվածաշնչի վաղ քրիստոնեական մեկնիչները Մասիսը համարում էին այն լեռը, որի վրա կանգ է առել Նոյի տապանը: Ուստի այն՝ Ուրարտու անվան հին երրայական տառադարձությամբ կոչվեց նաև Արարատ:

24. Ուսումնասիրողները ցույց են տվել, որ Արամի դյուցազնական առասպելի ծագումը վերաբերում է Ուրարտուական թագավորության ժամանակներին: Այն մի կողմից իր մեջ պարունակում է Ուրարտուի, նրա Արամե թագավորի հակաասորեստանյան պայքարի հեռավոր արձագանքները, իսկ մյուս կողմից՝ Արամը հանդես է գալիս որպես հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած շերտերից մեկի՝ արմենների էպոնիմ:

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի ծագման մասին գոյություն ունի նաև հունական մի առասպել, որն իր «Աշխարհագրության» մեջ բերել է Ստրաբոնը:

Հույն նշանավոր պատմագիր ու աշխարհագիր Ստրաբոնը ծնվել է մ. թ. ա. մոտ 63 թ. Պոնտոսի Ամասիա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում: Սովորել է Նյուսայի և Հռոմի հարուստ սահակա դպրոցներում և ստացել փիլիսոփայական կրթություն: Երիտասարդության տարիներին շատ է ճանապարհորդել, եղել և նաև Հայաստանում: Ստրաբոնը գրել է «Պատմական հիշատակարաններ» վերտառությամբ մի աշխատություն՝ բաղկացած 43 գրքից, սակայն այն մեզ չի հասել: Մոտավորապես մ. թ. ա. 7 թ. նա սկսում է աշխատել հոչակավոր «Աշխարհագրության» վրա և ավարտում է այն իր մահից փիչ առաջ՝ մ. թ. 20 թվականին: «Աշխարհագրությունը» բաղկացած է 17 գրքից: Ստրաբոնը այստեղ, փաստորեն, շարադրում է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների ֆիզիկական ու պատմական աշխարհագրությունը, ինչպես նաև հաղորդում է բազմաճարուստ տեղեկություններ այդ երկրների քաղաքական պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ:

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» անգնահատելի ու նշմարտապատում աղբյուր է նաև Հայաստանի պատմության, աշխար-

հագրության, մշակույթի ուսումնասիրման համար. որոշ դեպքերում նրա հաղորդած տեղեկությունները եզակի են: Այս հանգամանքն էլ ավելի է բարձրացնում «Աշխարհագրության» արժեքը, քանզի առանց դրա հնարավոր չէ բավարար չափով կողմնորոշվել Հայաստանի մ. թ. ա. II—I դդ. պատմության շատ հարցեր ուսումնասիրելիս:

Ստրաբոնն անդրադարձել է նաև հայ ժողովրդի ծագման հարցին և համեմատվել է իր ժամանակներում տարածում ստացած այն վարկածին, թե իբր արմենները ունեն թեսսալական ծագում և, որ նրանց անվանադիր նախնին հանդիսացել է Արմենոս Թեսսալացին: Ինչպես հաղորդում է աշխարհագիրը, նա այս պատումը վերցրել է Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներ Կյուրսիլոս Փարսալացու և Մեդիոս Լարիսացու ինչ-որ աշխատություններից: Առասպելի համաձայն, արգոնավորդ Արմենոս Թեսսալացին իր ուղեկիցների հետ Կողխիսից (Կոլխիդայից) անցնելով Հայաստան, հաստատվել է այստեղ և երկրին տվել իր անունը՝ Արմենիա, իսկ ժողովրդին՝ արմեններ: Սակայն հայտնի է, որ արգոնավորդների առասպելը ձևավորվել է միջնադարեան դարաշրջանում, մոտավորապես մ. թ. ա. XI—X դարերում, այսինքն այն ժամանակ, երբ դեռևս Արմենիա պետական միավորումը գոյություն չուներ, հետևաբար, Արմենոսի անունից չէ, որ պետք է բխեցնել «Արմենիա» հասկացությունը, որն ավելի ուշ շրջանի (մոտ մ. թ. ա. VII—VI դդ.) բովանդակություն է արտահայտում: Ուսումնասիրողները գտնում են, որ առասպելի բանարարները վերոնշված երկու հույն զորականներն են: Սրանք մի առիթով այցելելով Հայաստան՝ ուշադրություն են դարձնում Հայաստանի և իրենց հայրենի Թեսսալիայի որոշ տեղանունների համանունյանության և այլ զուգադիպող երևույթների վրա ու հանգում այն եզրակացության, որ հայերն ունեն թեսսալական ծագում: Նրանք փորձում են նաև բացատրել հայերի «արմեն» անվանումը և բանագրոսիկորեն այն կապում են արգոնավորդ Արմենոս Թեսսալացու հայտնի անվան հետ: Այս բոլորից բխում է, որ հայ ժողովրդի ծագման մասին այդ հունական առասպելը զուրկ է պատմական հենքից, որ այն հորինվել է հենց Ալեքսանդրի արշավանքների ժամանակ, երբ հույները նման առասպելներ հորինել էին նաև պարսիկների, մարերի և սրևելյան այլ ժողովուրդների Բալկանյան թերակղզուց

գաղթած լինելու վերաբերյալ և, որ նման առասպելի ստեղծումն ունեցել է իր բաղաքական դրդապատճառները:

Ստրաբոնից ստորև տրված հատվածները բերում ենք Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է «Strabonis Geographica, recogn. A. Meinece, vol. I—III, Lepsiae, 1915—1925» հրատարակությունից:

ՍՏՐԱԲՈՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XI, 4

9. Ջրուցում են, թե Յասոնը[1] Արմենոս Թեսսալացու[2] հետ դեպի Կոլխերը նավարկելիս առաջացել է մինչև Կասպից ծով և անցել է Իբերիան և Ալբանիան և Արմենիայի ու Մեդիայի շատ մասերը, ինչպես վկայում են Յասոնականքը[3] և բազում այլ հուշարձաններ: (Պատմում են նաև), թե Արմենոսը եղել է Արմենիոն քաղաքից, որը գտնվում էր Բոյբեիս լճի մոտ, Փերեի և Լարիսայի[4] միջև, և, թե նրա հետ եղողները բնակեցրել են Ակիլիսենեն և Սյուսպիրիտիսը[5], մինչև Կալաքենե և Ադիաբենե[6]: Սա էլ իր անունը թողել է Արմենիային:

XI, 14

12. Այս ազգի մասին կա այսպիսի մի հնախոսություն: Արմինոսը Թեսսալական Արմենիոն քաղաքից, որը գտնվում է Փերեյի և Լարիսայի միջև, Բոյբեիսի[7] մոտ, ինչպես ասվեց, Յասոնի հետ արշավեց Արմենիա: Կյուրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին[8], որոնք արշավել են Ալեքսանդրի հետ, (և) նրանց հետ եղողները ասում են, թե երկիրը նրա անունից կոչվել է Արմենիա: (Ասում են) նաև, թե Արմենոսի հետ եղողներից ոմանք բնակեցրել են Ակիլիսենեն, որը նախապես Սուսենեի[9] (իշխանության) տակ էր, մյուսները՝ Սյուսպիրիտիսում[10] մինչև Կալաքենե և Ադիաբենե, Հայաստանի սահմաններից դուրս: Ասում են նաև, թե հայկական զգեստը Թեսսալական է, ինչպես այն երկար ներքնազգեստները[11], որ ողբերգությունների մեջ Թեսսալական են կոչում և գոտևորում կրծքի վրա, ինչպես և այն ոտամազգեստները, որով ողբերգակները պատկերում են Թեսսալացիներին: ... Յասոնի արշավանքի մասին վկայում են նաև Յասոնականքը, որոնցից մի քանիսը կառուցել են իշխանները՝ շատ նման Յասոնի այն տաճարին, որ կառուցել է Պարմենիոնը[12] Աբդերայում[13]:

1. Յասոն— Թեսսալացի արքա Էսոնի որդին: Ըստ դիցաբանության, «Արգո» նավով ճանապարհորդեց Կոզքիս (Կոլխիդա), ոսկեգեղմը բերելու:

2. Արմենոս Թեսսալացի— առասպելական անձնավորություն, Յասոնի զինակիցը, արգոնավորդների արշավախմբի մասնակից: Ըստ առասպելի, Յասոնի մահից հետո հավաքեց նրա ցրված զորքերը և անցնելով Հայաստան, բնակություն հաստատեց Եկեղիք ու Սպեր գավառներում, որից էլ, իբրև թե ծագել է երկրի Արմենիա անվանումը:

3. Այսինքն՝ Յասոնի պաշտամունքին նվիրված տաճարներ և սրբավայրեր:

4. Փերե և Լարիսա— քաղաքներ կենտրոնական Հունաստանի Թեսսալիա մարզում:

5. Այսինքն՝ Եկեղիք և Սպեր գավառները:

6. Այսինքն՝ Տիգրիսի միջին հոսանքի շուրջն ընկած տարածքը և Ասորեստանի հին մայրաքաղաք Կալխուի շրջակայքը:

7. Նուկնանուն քաղաք և լիճ Թեսսալիայում:

8. Ն. Ադոնցի կարծիքով, Կյուրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին, որոնք Հայաստան էին ուղարկվել Անտիգոնոսի կողմից Հայոց Արտանես թագավորից օգնություն ստանալու խնդրանքով, արմենների և Արմենիայի մասին թողել են մի գրվածք, որի փշրանքները մեզ են հասել Ստրաբոնի միջոցով:

9. Այսինքն՝ Սուսա:

10. Սյուսպիրիտիս— այստեղ, ըստ երևույթին, խոսքը գնում է ոչ թե Սպեր գավառի, այլ Շուբրիայի (շումերերեն՝ Սու-բիր, ակկադերեն՝ Սուբարտու), այսինքն՝ պատմական Ադձնիք գավառի մասին:

11. Բնագրում՝ քիտոն:

12. Պարմենիոնը Ալեքսանդր Մակեդոնացու ամենաաչքի ընկնող զորավարներից մեկն էր:

13. Քաղաք Թրակիայում:

ՎՐԱՑԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի ծագման մասին մեզ է հասել նաև վրացական մի ավանդություն, որը բերված է վրաց պատմագիր Լեոնտի Մրովելիի (Ռուիսեցի) «Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմություններ» երկասիրության մեջ: Վրացագիտությունը վաղուց ապացուցել է, որ այս ավանդությունը ստեղծվել է շատ ուշ ժամանակաշրջանում, ըստ երևույթին IX—X դարերում, իսկ

արդեն XI դարի մատենագիր Մովսէսին այն մուծել է իր Պատմության մեջ:

Մովսէսու երկը ներկայացնում է Վրաստանի պատմությունը առասպելական-դյուցազնական շրջանից մինչև մ. թ. V դարը: Հենց սրանով էլ սկսվում է «Քարթլիս ցխովրեբա» ժողովածուն, որը, ինչպես հայտնի է, տարբեր ժամանակներում գրված պատմությունների հավաքածու է: Իր Պատմությունում Մովսէսին փորձում է բացահայտել Կովկասում բնակվող ժողովուրդների և, առաջին հերթին, վրաց ժողովրդի ծագումը: Այս հարցի լուսաբանման համար նա օգտագործում է առասպելախառն ավանդություններ և գալիս այն համոզման, որ կովկասյան ժողովուրդները առաջացել են մեկ բնիկաուր նախահորից: «Ութ եղբայրների պատմությունը» ակնհայտորեն իր վրա կրում է «Հայկ և Բել» հայկական ավանդության կնիքը, կարծիք կա նաև, որ առաջինը ստեղծվել է վերջինիս անմիջական ազդեցության ներքո՝ նրա նմանությամբ ու հետևությամբ: Հետևաբար, վրացական ավանդությունը հայ ժողովրդի ծագման հարցի ուսումնասիրման տեսակետից առանձին գիտական արժեք չունի: Սակայն այն մի գեղեցիկ ու ճշմարտացի ասք է հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության, նրանց փոխադարձ օգնության, եղբայրության ու օտարերկրյա նվաճողների դեմ համատեղ պայքարի մասին:

«Քարթլիս ցխովրեբա»-ից ստորև բերված հատվածը տալիս ենք Վ. Մ. Մարտիրոսյանի թարգմանությամբ („ჰბრძოლაი ცხოვრება„ կազմող՝ *Ս. Ղաուխչիշվիլի*, հատ. I, Թբիլիսի, 1955):

ԼԵՈՆՏԻ ՄՐՈՎԵԼԻ

[ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ. ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]

ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ՈՒ ՏՈՀՄԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ առաջին

[Ութ եղբայրների պատմությունը], էջ 3—7

Նախապես հիշատակենք այսպես, քանզի հայոց և վրաց, ռանաց[1] և մովսականաց[2], հերաց[3] և լեզգաց[4], եգերաց[5] և կովկասեցոց[6] սրանց բոլորի հայրը մեկն էր, Թարգամոս[7] անվամբ: Այս Թարգամոսը Թարշի որդին էր, Նոյի որդի Հաբեթի թոռն էր[8]:

Եվ այս Թարգամոսը քաջ մարդ էր: Եվ լեզուների բաժանումից հետո, երբ Բաբելոնում աշտարակ կառուցեցին, բաժանվեցին այնտեղ լեզուները ու սփռվեցին այնտեղից ողջ աշխարհով մեկ: Եվ այս Թարգամոսը իր տոհմով (գերդաստանով) եկավ ու բնակություն հաստատեց մարդկանց համար անմատչելի երկու լեռների՝ Արարատի և Մասիսի միջև[9]: Եվ նրա տոհմը (գերդաստանը) մեծ էր ու անհամար, քանզի ապրում էին բազմակին որդիներով ու դուստրերով և նրա որդիների ու թոռների որդիներով ու դուստրերով, քանզի նա (Թարգամոսը) ապրեց վեցհարյուր տարի:

Իսկ երկիրն այն, որ վիճակ (բաժին) ընկավ նրան, այսպիսի սահման ուներ. արևելքից՝ Գուրգանի ծովը[10], արևմուտքից՝ ծովն Պոնտոսի, և հարավից՝ ծովն Օրեթի[11], իսկ հյուսիսից՝ լեռն Կովկասի[12]:

Սակայն նրա որդիներից ութ մարդ հայտնի դարձան, որպես հզոր ու անվանի հսկաներ, որոնց անուններն են. առաջինը կոչվում էր Հաոս[13], երկրորդը՝ Քարթլոս, երրորդը՝ Բարդոս, չորրորդը՝ Մովսական, հինգերորդը՝ Լեկան, վեցերորդը՝ Հերոս, յոթերորդը՝ Կավկաս, ութերորդը՝ Էգրոս: Այս ութ (եղբայրները) հսկաներ էին: Սակայն Հաոսը ամենքից առավել հսկա էր, քանզի նրա ննջմանը երբեք չի եղել ոչ ջրհեղեղից առաջ և ոչ էլ հետո՝ մարմնով, ուժով ու քաջությամբ: Բայց Արարատի և Մասիսի երկիրն այլևս չէր կարողանում տեղավորել (նրանց, ուստի) Թարգամոսը բաժանեց իր երկիրը և տոհմը այս ութ հսկաների միջև. իր տոհմի կեսը և երկրի լավագույն կեսը տվեց Հաոսին, իսկ այս յոթին տվեց իրենց բաժինը ըստ նրանց արժանիքների. տարավ այդ յոթին հյուսիսային կողմը և բաժանեց երկիրն ըստ նրանց արժանիքների: Քարթլոսին տվեց և նշեց սահմանը. արևելքից՝ Հերութը և Բերդուջ գետը[14], արևմուտքից՝ ծովն Պոնտոսի, հարավից՝ լեռը, որը գտնվում է Բերդուջ գետի ակունքում և լեռը, որը ձգվում է դեպի արևմտյան կողմը, որից սկիզբ առնող գետը հոսում է դեպի հյուսիս և լցվում Մտկվարի գետը[15], որը հոսում է Կղարջքի և Տաոի[16] միջև գտնվող լեռից մինչև ծովը, և հյուսիսից՝ սահմանն է Ղադոն[17], փոքր լեռը, որը ճյուղավորվում է Կովկասից և հասնում է Ղադոյի ձորը, որին այժմ Լիսի ձոր են կոչում: Եվ այս սահմանների միջև (կազած) ամենը տվեց Քարթլոսին:

Իսկ Բարդոսին տվեց Մտկվարիից հարավ, Բերդուջ գետից

մինչև Մակվարիի և Խախսի[18] միախառնման վայրը։ Այս Բարդոսը կառուցեց Բարդավ քաղաքը[19] և բնակվեց այնտեղ։

Իսկ Մովականին տվեց Մակվարիից հյուսիս, Փոքր Ալազանի[20] գետաբերանից մինչև ծովը։ Եվ սա կառուցեց Մովականեթ քաղաքը և հաստատվեց այնտեղ։

Իսկ Հերոսին տվեց Մակվարիից հյուսիս գտնվող երկիրը, Փոքր Ալազանի գետաբերանից մինչև Տղետրա (վայրը), որին այժմ Գուլգուլ են կոչում։ Եվ այս Հերոսը սկզբնապես կառուցեց քաղաք երկու Ալազանների միախառնման վայրում, և իր անվամբ կոչեց Հերեթ։ Եվ այդ պատճառով են Հերեթին Հերեթ կոչում։ Եվ այժմ այդ վայրը կոչում են Խորանեթ։

Իսկ էգրոսին տվեց ծովի եզրը գտնվող երկիրը, և նշեց սահմանը. արևելքից՝ փոքր լեռը, որին այժմ Լիխի են կոչում, արևմուտքից՝ ծովը, (հյուսիսից)՝ Փոքր Խազարեթի գետը[21], որտեղ եզերվում է Կովկասի ծայրը։ Իսկ այս էգրոսը կառուցեց քաղաք և իր անվամբ կոչեց Էգրիսի[22]։ Այժմ այդ վայրը կոչում են Բեգիա[23]։

Իսկ Կովկասից հյուսիս Թարգամոսի վիճակը (բաժինը) չէր, այլև ոչ էլ մարդ կար Կովկասից հյուսիս, և անմարդաբնակ էր այդ երկիրը՝ Կովկասից մինչև մեծ գետը, որը թափվում է Դարուբանդի ծովը[24]։

Այդ իսկ պատճառով բազում հսկաներից դուրս հանեց երկու հսկայի՝ Լեկանին և Կավկասին։ Եվ տվեց Լեկանին Դարուբանդի ծովից մինչև Լոմեկ գետը, հյուսիսից մինչև Մեծ Խազարեթի գետը։ Եվ տվեց Կավկասին Լոմեկ գետից մինչև Կովկասի եզրը՝ արևմուտքում։

Իսկ Հաոսը բնակություն հաստատեց իր հոր՝ Թարգամոսի բնակավայրում, և տիրեց երկրին՝ հյուսիսից, ինչպես նշել եմ, հարավից՝ Օրնթի լեռից սկսած, արևելքից՝ մինչև ծովը Գուրգանի, և արևմուտքից մինչև ծովը Պոնտոսի։ Եվ այս յոթ հսկաների կառավարիչն ու տերը Հաոսն էր։ Եվ այս բոլորը հպատակ էին Հաոսին։ Եվ այս ութ հսկաներն էլ ծառայում էին Ներրոթ[25] հսկային, որը առաջին թագավորն էր ողջ աշխարհի։

Սրանից հետո մի քանի տարի անց, կանչեց Հաոսը այդ յոթ հսկաներին, ժողովեց և ասաց նրանց. «Բարձրյալն աստված շնորհել է մեզ զորություն և բազմություն մեր տոհմին. արդ, օգնությամբ արարչի չլինենք (այլևս) ոչ ոքի ծառա, և ոչ ոքի չծա-

ռայենք բացի արարիչ աստծուց»։ Հավատացին այդ յոթ հսկաները և հաստատեցին այդ խորհուրդը, և ապստամբեցին Ներրոթի դեմ և այլևս հարկ չտվեցին։ Եվ դիմեցին մի քանի այլ տոհմերի, և երկմտեցին նաև այլ տոհմերը։

Այնժամ զայրացավ Ներրոթը, ժողովեց իր հսկաներին և բոլոր նրանց, ում հպատակվում էին նրա զորքերը, և ելավ Թարգամոսյանների դեմ։ Իսկ Հաոսը կանչեց յոթ հսկաներին և Թարգամոսյանների բոլոր տոհմականներին։ Եվ օգնություն ցույց տվեցին նաև արևմտյան այլ և այլ տոհմեր. ժողովեց այս բոլորին Հաոսը և կանգնեց Մասիսի ստորոտում։ Եվ երբ մոտեցավ Ներրոթը Ադարբադագան երկրին[26], կանգ առավ այնտեղ, ուղարկեց վաթսուն հսկաների և նրանց հետ հզոր զորք՝ Թարգամոսյաններին կարգի կոչելու համար։

Իսկ երբ Ներրոթի զորքը մոտեցավ, այնժամ Հաոսի եղբայրները՝ այն յոթ հսկաները, դիմավորեցին (նրանց) հզոր զորքով։ Իսկ Հաոսը հզորագույն զորքով կանգնեց եռևում՝ Թիկունքում։ Տեղի ունեցավ նրանց միջև կատաղի ճակատամարտ, որը նմանվեց օդի սաստկությանը։ Քանզի նրանց ոտքերի փոշին՝ թանձր ամպի, նրանց զրահի փայլատակումը՝ երկնքի կայծակի, նրանց գոչյունները՝ որոտման ձայնի, նրանց նետերի բազմությունը և քարերի արձակումը՝ խիտ կարկուտի, և նրանց հեղումն արյան՝ կարկուտների հեղեղների էր նման։ Ճակատամարտը նրանց միջև սաստկացավ, և երկուստեք անթիվ կոտորվեցին։

Իսկ Հաոսը կանգնած էր հսկաների Թիկունքում, քաջալերում էր և մխիթարում ահարկու ձայնով, որ նման էր կայծակի ճայթյունին։ Այնժամ հաղթեցին Թարգամոսյանները և կոտորեցին Ներրոթի այն հսկաներին ու նրանց զորքին։ Ապա Թարգամոսյան այս յոթ հսկաները՝ Քարթլոսը, Բարդոսը, Մովականը, Հերոսը, Լեկանը, Կավկասանը, էգրոսը, սրանք ողջ մնացին, առանց վիրավորվելու, և հաղթանակած փառաբանում էին աստծուն։

Իսկ երբ լսեց Ներրոթը, բարկացավ և շարժվեց նրանց դեմ իր ողջ ուժով։ Բայց Հաոսը չուներ Ներրոթի զորքերի չափ զորք. ամբացավ նա Մասիսի քերծերում։ Ներրոթը մոտեցավ ցածի կողմից, և զինված էր նա ոտից մինչև գլուխ երկաթով ու պղնձով։ Եվ բարձրացավ մի սարի վրա, որպեսզի խոսի Հաոսի հետ և պահանջում էր վերստին հպատակվել իրեն՝ դալ իր մոտ կամովին։ Բայց

Հառսը դիմեց իր հսկաներին. «Ամրացրեք իմ թիկունքի կողմը, որ Ներբոթին ընդառաջ գնամ»: Եվ գնաց ու դեմ հանդիման մոտեցավ Ներբոթին, և արձակեց նետը ու զարկեց Ներբոթի կրծքին, պղնձյա տախտակն անցնելով, դուրս եկավ թիկունքից: Այնժամ վայր ընկավ Ներբոթը, և նրա բանակը փախստի դիմեց: Եվ ձերբազատվեցին Թարգամոսյան տոհմերը: Այնժամ Հառսը իրեն արքա հռչակեց իր եղբայրների և այլ մերձակա սահմանակից տոհմերի (ցեղերի) վրա: Իսկ այս յոթ եղբայրները գնացին՝ յուրաքանչյուրը իր երկիրը և հպատակ էին Հառսին:

1. Ռաներ— աղվանների անվանման ձևերից մեկը, որը ծագել է երկրի (Աղվանքի) Առան անունից:

2. Մովսականներ— աղվանական ցեղերից մեկի անունը, որը, ըստ երևույթին, համապատասխանում է անտիկ հեղինակների միկի կամ մյուկի ցեղին, որին նրանք տեղադրում էին պատմական Կովկասյան Ալբանիայի տարածքում:

3. Հերացիներ— կովկասյան ցեղ, որը բնակվում էր պատմական Աղվանքի ծայր արևմտյան սահմանագծում՝ Ալազանի և Խորի գետերի ավազանում:

4. Լեզգիներ— Լեոնտի Մրովելին այս անվան տակ ճանաչում է Դաղստանի տերիտորիայում բնակվող բոլոր ցեղերին:

5. Սգերներ— քարթվելական ցեղեր, որոնք բնակվում էին վրացական հեղինակների էգրիսի, այսինքն՝ բյուզանդական աղբյուրների Լազիկա երկրում:

6. Կավկասեցիներ— Լեոնտի Մրովելին այս հավաքական էթնոնիմի տակ հասկացել է Հյուսիսային Կովկասում բնակվող բոլոր ցեղերին:

7. Բնագրում՝ Թարգամոս, պետք է հասկանալ Թորգոմ:

8. Հին Կտակարանի ազգացանկում Թորգոմը դիտվում է Գոմերի որդին, իսկ Մովսես Խորենացու մոտ պահպանված ազգացանկում նա համարվում է Գոմերի թոռը և Թիրասի որդին:

9. Պետք է լինի Արարադի (Կորդվաց լեռներ) և Մասիսի միջև:

10. Այսինքն՝ Վրկանից (Կասպից) ծովը:

11. Ծովն Օրեքի— պետք է ուղղել՝ «Լեռն Օրեքի», որը Ն. Ադոնցի կարծիքով տեղադրվում է Մեդիայի տարածքում (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 31—32):

12. Բնագրում՝ Կովկասիա: Մրովելին նկատի ունի Գլխավոր կովկասյան լեռնաշղթայի կենտրոնական մասը, այսինքն՝ էլբրուսը:

13. Խոսքը Հայոց անվանադիր նախնի Հայկի մասին է:

14. Այսինքն՝ Դերեդ գետը:

15. Խոսքը Կուր գետի մասին է:

16. Այսինքն՝ Տայքը:

17. Ղաղ— Սուրամյան լեռնաշղթայի անվանումներից մեկը:

18. Այսինքն՝ երասխ (Արաքս) գետը:

19. Խոսքը Աղվանքի մայրաքաղաք Պարտավի մասին է: Այստեղ Բարգոսը հանգիստ է գալիս որպես աղվանական ցեղերից մեկի անվանադիր:

20. Փոքր Ալազան է կոչվել Խորի գետը:

21. Փոքր Խազարեթի գետ— այստեղ Մրովելին նկատի ունի Կուրան գետը:

22. Խոսքը Եգերք-Կողբիսի մասին է:

23. Բեղիա— քաղաք միջնադարյան Աբխազիայում, որի ավերակներն այժմ գտնվում են Օչամչիրայի շրջանում:

24. Այսինքն՝ Կասպից ծովը:

25. Հայկական ավանդության Բելն է: Աստվածաշնչում հիշատակված է Քամյան Քուշի որդի Նեբրովթ անունով (տե՛ս 105-րդ էջի № 15 ծան.):

26. Այսինքն՝ Ատրպատականն:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աստվածաշունչը տարբեր ժամանակներում կազմված տարալեզու և տարաբնույթ երկերի ժողովածու է (մ. թ. ա. XIII—մ. թ. II դդ.): Այն բաժանվում է երկու հիմնական մասերի՝ Հին Կտակարան (39 գիրք) և Նոր Կտակարան (27 գիրք): Աստվածաշունչը, չնայած հիմնականում պարունակում է եբեական և հրիստոնեական կրոնների դավանաբերը, առասպելներն ու դոգմաները, սակայն նրանում մեծ տեղ են գրավում նաև պատմական, կենցաղային–ազգագրական, սոցիալ–տնտեսական, իրավական, փիլիսոփայական, կրոնաբարոյական և սիրային–լիրիկական բնույթի նյութեր: Իր կրոնական բովանդակությամբ հանդերձ, Աստվածաշունչը նաև կարևոր աղբյուր է հրեա և Մերձավոր Արևելքի այլ ժողովուրդների (այդ թվում և հայերի) վաղ անցյալի ուսումնասիրության համար:

Աստվածաշունչը թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Հայերեն թարգմանվել է V դարում՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց աշակերտների կողմից: Հայերեն թարգմանություններ այնքան կատարյալ ու հմտալից է եղել, որ այն համարվել է «թարգմանությունների թագուհի»: Աստվածաշունչը հայերեն տպագրվել է մի քանի անգամ. սուրբ բերված հատվածներ թարգմանված են Կ. Պոլսի 1895 թ. հրատարակությունից (թարգմանությունը՝ Պ. Հ. Հովհաննիսյանի):

1.

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՑ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ, գլ. ԺԲ, 36—37

Եվ Ասրհատանի Սեննեքերիմ թագավորը[1] չվեց գնաց ու վերադառնալով նստեց Նինվե (քաղաքի) մեջ։ Եվ այն ժամանակ, երբ նա իր աստծո՝ Նեսրաքի տանը[2] երկրպագում էր (կուռքերին), նրա որդիները՝ Ադրամելեքը[3] և Սարասարը[4], սպանեցին նրան սրով ու Արարադի երկիրը[5] փախան և նրա փոխարեն որդին՝ Ասորդանը[6] թագավոր եղավ։

1. Սեննեքերիմ— Ասորեստանի Սինախերիբ (705—681) թագավորն է, Սարգոն II-ի որդին։

2. Խոսքը Նեսրաք աստծո տաճարի մասին է։

3. Ադրամելեք անվան տակ ուսումնասիրողները ենթադրում են Սինախերիբի Արադ-Նինլիլ (կամ Արադ-Նիլլիլ) որդուն։

4. Ի դեմս Սարասարի, ուսումնասիրողները տեսնում են ասորական զորապետ Նաբուշարուծուրին։

5. Խոսքն այստեղ Ուրարտական պետության մասին է։ Աստվածաշնչի եբրայական բնագիրը, հունական (Յոթանասնից), ասորական (Պեշիտա) և արաբական թարգմանությունները հայրասպան որդիների ապաստարան երկիրն անվանում են Արարատ կամ Արարադ, քաղդեականը՝ Կարդու։ Ի դեպ, սույն հատվածը տեղ է գտել նաև Աստվածաշնչի «Մարգարէութիւն Նաայայ» գրքում (տե՛ս. Նաայի, գլ. Լե, 38)։ Այստեղ եբրայական բնագիրը և լատինական թարգմանությունը (Վուլգատա) հայրասպան որդիների ապաստարան երկիրն անվանում են Արարատ, հունական և արաբական թարգմանությունները՝ Արմենիա, իսկ ասորականը և քաղդեականը՝ Կարդու։ Այսինքն՝ Արարատ, Արարադ և Կարդու երկրանունները գործածված են որպես Արմենիա— Հայք երկրանվան հոմանիշներ։

6. Ասորդան— Ասորեստանի Ասարխադդոն թագավորն է (680—669)՝ Սինախերիբի կրտսեր որդին։

2.

ԵՐԵՄԻԱ, գլ. ՇԱ, 27

Երկրի մեջ դրոշ վերցրեք[1], բոլոր ազգերի մեջ փող հնչեցրեք, նրա (Բաբելոնի) դեմ գնդեր հրավիրեցեք, նրա վրա կանչեցեք Այրարատյան թագավորությանն[2] ու Ասքանազյան գնդին[3]։

1. Բաբելոնի վրա հարձակվելու և այն կործանելու Երեմիա մարգարեի մարտահրավերի սույն հատվածը թվագրվում է մ. թ. ա. 594—592 թվականներին։

2. Այրարատյան թագավորությունը, որին Երեմիան հորդորում է ընդդեմ Բաբելոնի, ամենայն հավանականությամբ, Երվանդունիների նորաստեղծ հայկական պետությունն էր։ Կան նաև տեսակետներ, որ խոսքն այստեղ դեպի անկում գնացող ուրարտական պետության մասին է, որ քիչ է հավանական։ Աստվածաշնչի եբրայական բնագրում և նրա լատինական թարգմանություններում հիշյալ երկրանունները թվարկված են հետևյալ կերպ՝ «... Արարադի, Միննիի և Ասքանազի թագավորություններին», հունականում՝ «... Արարատի թագավորության ու Ասքանազյան գնդին», քաղդեականում՝ «... Կարդու թագավորություններին», իսկ Հովնաթան Բարունու մեկնություններում՝ «... Կորդվաց, Տուրմինե և Հադեր թագավորություններին»։

3. Խոսքն այստեղ սկյութական Աշքենազ կամ Իշքուզա ցեղային միության մասին է։ Մ. թ. ա. VIII դարում սկյութները Հյուսիսային Կովկասից թափանցում են Կուր գետի հարթավայրերը և հաստատվում Շակաշեն գավառի շրջանում։ Մ. թ. ա. VII դարում Ուրմիա լճի հարավային ափերին սկյութները ստեղծում են մի զորեղ քաղաքական միավորում, որը նշանակալից դեր է խաղում Նինվեի գրավման (մ. թ. ա. 612 թ.) և Ասորեստանի կործանման գործում։

3.

ԵԶԵԿԻԵԼ, գլ. ԻՀ, 14

Իսկ Թորգոմի[1] տնից[2] քո (Տյուրոս քաղաքի) վաճառանոցները լցվում են բեռնաձիերով ու նժույգներով և ջորիներով։

1. Թորգոմը բիբլիական նոյ նահապետի Հաբեթ որդու սերնդից էր (տե՛ս Ծննդոց, գլ. Ժ, 2—3 և Առաջին Մնացորդաց, գլ. Ա, 5—6)։ Հայ և օտար եկեղեցական մատենագիրներն ու պատմագիրները հայերին սերած էին համարում հիշյալ Թորգոմի տոհմից։ Դրա համար էլ նրանք հաճախ Հայաստանը անվանում են «Տունն Թորգոմայ», իսկ հայերին՝ «Որդիք կամ Ազգն Թորգոմայ», «Թորգոմածին», «Թորգոմեան»։ Հայկական ժողովրդական ավանդությունը ևս հայերի նախահայր Հայկին համարում է Թորգոմի որդին, իսկ «Թորգոմայ տունը»՝ Հայաստանի հոմանիշ։

2. Ի տարբերություն Աստվածաշնչի հունական թարգմանության «Տունն Թորգոմայ» երկրաճոճի՝ եբրայական բնագրում այն անվանված է «Թոգարմա երկիր», որը եզեկիել մարգարեի (592—570) վկայության համաձայն տեղադրվում էր Գամեր (Գամիրք-Կապադովկիա) երկրի մոտ՝ նրա հյուսիսային շրջաններում։ Ուսումնասիրողներն իրավացիորեն «Թոգարմա երկիրը» նույնացնում են խեթական արձանագրություններում հիշատակվող Թեգարամա և ասուրա-բաբելական աղբյուրների Թիլ-Գարիմմու բնակավայրի հետ ու այն տեղադրում են հետագայի Երկրորդ Հայքի տերիտորիայում՝ Մելիտինեի և Արաբկիր քաղաքների շրջաններում։

Եզեկիել մարգարեի սույն վկայությունը կարևոր է նաև այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե այդ վաղնջական ժամանակներում հայերը մասնակցել են հա-մաշխարհային առևտրին, մասնավորապես նրանք Փյունիկիայի Տյուրոս մայրա-քաղաքի վաճառանոցներն էին արտահանում ձիեր և ջորիներ։

4.

ԵԶԵԿԻԵԼ, գլ. ԼՀ, 6

Գոմերը[1] *և բոլոր (երկրները), որոնք նրա շուրջն են գտնվում և Թորգոմի տունը ծայր հյուսիսում*[2] *և բոլոր (երկրները), որոնք նրա շուրջն են։*

1. Գոմեր կամ Գամեր— Նոյի որդու՝ Հաբեթի որդին էր և հայրը Թորգոմի (տե՛ս Ծննդոց, գլ. Ժ, 2—3)։ Ուսումնասիրողները «Գոմեր» կամ «Գամեր» անվան տակ ենթադրում են կիմմերներին, որոնք ասորեստանյան արձանագրություններում անվանվում են Գիմիրրի։ Մ. թ. ա. VIII դ. երկրորդ կեսին կիմմերները մերձսևծովյան տափաստաններից ներխուժեցին Անդրկովկաս ու Փոքր Ասիա և բնակություն հաստատեցին հետագայի Կապադովկիայի տերիտորիայում։ Իրենց տևական արշավանքներով կիմմերները նպաստեցին Ուրարտուի և Ասորեստանի արագ քայքայմանը։ Հետաքրքիր է այն փաստը, որ հայկական հնագույն աղբյուրները Կապադովկիան անվանել են Գամիրք։

2. Եզեկիելի մարգարեության սույն հատվածը, որը հիշատակվում է մ. թ. ա. 593 թվականի տակ, մեկ անգամ ևս հնարավորություն է տալիս պնդելու, որ Թորգոմի տունը գտնվում էր Գամիրք-Կապադովկիայից հյուսիս՝ հետագայի Փոքր և Բարձր Հայքերում և արևելք՝ Եփրատի աջ ափին։

ՀԱՅ–ԱՍՈՒՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Ա

ԺԹ

ԱՐԾՎԱԿՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՄՂՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒՔԱՐ ՄԱԴԵՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Եվ որովհետև մեզ հաճելի թվաց քո[1] *հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, քան ուրիշներից (առաջարկված) ուրախություններն ու կերուխումը, ուստի համաձայնվեցինք կարճառոտ մեջ բերել գրույցները Հայկ-*

յան Արամի վարած պատերազմների մասին։ Նա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը[2]*, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ի՛նչպես օտարազգի ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա։*

Այս Արամը Նինոսի[3] *ասորեստանցիներին և Նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ, շրջակա ազգերից նեղվելով՝ հավաքում է հարազատ, քաջ և աղեղնավոր մարդկանց մի բազմություն՝ մոտ հինգ բյուր մարդ, վարժ նիզակավոր շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, սրտոտ ու հմուտ պատերազմող։ Նա հանդիպում է հայոց սահմանների մոտ գտնվող մեդացիների քաջերին, որոնց առաջնորդում էր մի ոմն Նյուքար Մադես*[4]*, հպարտ և պատերազմասեր մի մարդ, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը։ Դրանք մի անգամ քուչանների նման ասպատակելով սմբակներով ոտնակոխ արին Հայաստանի սահմանները, (և Մադեսը) երկու տարի իրեն ենթարկեց (Հայաստանը)։ Արամը հանկարծորեն նրա վրա հարձակվելով արևը ծագելուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամբոխը և իրեն՝ Նյուքարին էլ, որ Մադես էր կոչվում, ձերբակալ անելով բերեց Արամավիր և այնտեղ պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պատին վարսել, երկաթե ցից մխելով ճակատի մեջ՝ ի ցույց դնելով անցորդներին և բոլոր այնտեղ եկվորներին, իսկ նրա երկիրը մինչև Զարասպ*[5] *կոչված լեռը իրեն հպատակեցնելով՝ հարկատու դարձրեց մինչև Նինոսի թագավորելն Ասորեստանի և Նինվեի վրա։*

Իսկ Նինոսը Նինվեում թագավորելով՝ մտքում պահած ուներ իր նախնիի՝ Բելի վրեժի հիշատակը. զրույցներից լսած լինելով՝ երկար տարիներ մտածում էր վրեժխնդիր լինել, դիտելով ու սպասելով նպաստավոր ժամանակի, որպեսզի քաջ Հայկի սերունդներից սերմանված ամեն մի արու ժառանգ ոչնչացնի։ Բայց կասկածելով, թե այսպիսի ձեռնարկումը կարող է նրա թագավորության կորստյան պատճառ դառնալ, իր շար խորհուրդը թաքցնում է. (Արամին) հրամայում է առանց կասկածի իր իշխանությունը վարել, իրավունք է տալիս մարգարտե վարսակալ կրել և իր երկրորդը կոչվել։ Բայց բավական է այսքան ասվածը, որովհետև մեր

առաջիկա գործը թույլ չի տալիս երկար կանգ առնել մեր պատմության սկզբում։

ԺԴ

ԱՍՈՐԵՍՏԱՆՅՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՄՂՎԱԾ ԿՌՎԻ ՈՒ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅԱՊԻՍ ՔԱՂԴԱՅԻ, ՆԱԵՎ ԿԵՍԱՐԻԱՅԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՈՒ ՄՅՈՒՍ ՀԱՅԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Նույն այս Արամը արևելցիների հետ ճակատամարտը վերջացնելուց հետո նույնպիսի զորությամբ շարժվում է Ասորեստանի կողմերը, այնտեղ ևս գտնում է իր երկրի մի ուրիշ ոչնչացնող՝ Բարշամ[6] անունով, հսկաների ցեղից, չորս բյուր սպառազեն հետևակներով և հինգ հազար հեծյալներով. նա խիստ հարկերով սաստիկ նեղելով անապատ էր դարձրել իր ամբողջ շրջակայքը։ Արամը պատերազմելով ընդհարվում է նրա հետ և հալածում է նրան Կորդուքի միջով ու շպրտում է Ասորեստանի դաշտը՝ շատերին կոտորելով, իսկ Բարշամը նրա զինակիցներին հանդիպելով սպանվում է։ Այս Բարշամին ասորիները երկար ժամանակ աստվածացրած պաշտում էին իր բազմաթիվ քաջագործությունների պատճառով։ Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամը գրավեց և հպատակության մեջ պահեց երկար ժամանակ։

Իսկ ինչ քաջագործություններ որ սա կատարեց արևմտյան կողմում Տիտանյանների[7] դեմ, մենք դեռ պետք է պատմենք։ Սա դեպի արևմուտք շարժվում է առաջինի (Հայքի) վրա չորս բյուր հետևակ և երկու հազար հեծյալ զորքերով, հասնում է Կապադովկիայի կողմերը. մի տեղ, որ այժմ Կեսարիա[8] է կոչվում։ Որովհետև նա արևելյան և հարավային (ազգերը) նվաճել և հանձնել էր այս երկու ցեղերին՝ արևելքը Սիսակյաններին և Ասորեստանի կողմերը Կադմոսի տան հաջորդներին. այլևս ոչ մի տեղից կասկած չուներ, ուստի երկար ժամանակ մնաց արևմուտքում։ Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանյան Պայապիա Քաղդյան[9], որ բռնացել գրավել էր երկու մեծամեծ ծովերի՝ Պոնտոսի և Օվկիանոսի[10] միջև ընկած տարածությունը։ (Արամը) նրան ընդհարվելով վանում և փախցնում է ասիական ծովի մի կղզի. այնտեղ երկրի վրա հսկելու համար նա թողնում է Մշակ[11] անունով մեկին իր ցեղից և մի բյուր զորք, ինքը վերադառնում է Հայաստան։

Բայց այդ երկրի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն. այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկրամասը կոչում են Պռոտին Արմենիան, որ թարգմանվում է Առաջին Հայք[12]։ Իսկ այն դաստակերտը, որ Արամի կուսակալ Մշակը շինեց իր անունով և փոքր պարիսպներով պատեց, այդ երկրի հին մարդիկ կոչում էին Մաժաք, կարծես չկարողանալով ճիշտ արտասանել. հետո նա ուրիշներից ավելի ընդարձակ շինվելով կոչվեց Կեսարիա։ Միևնույն կարգով այդ տեղերից մինչև իր բուն սահմանները շատ անբնակ տեղեր բնակիչներով լցրեց, որոնք կոչվեցին Երկրորդ և Երրորդ Հայք, նաև Չորրորդ (Հայք)[13]։ Այս է բուն և ճշմարիտ պատճառը մեր՝ արևմտյան կողմը Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք անվանելու։ Իսկ ինչ որ ոմանց կողմից այլ ձևով է կոչվում հունական կողմերում, մենք չենք ընդունում, ուրիշներն ինչպես կամենան։

Սա այսպես հզոր և անվանի եղավ. ուստի սրա անունով են մինչև այսօր մեր շրջակա ազգերը մեր երկիրը անվանում, ինչպես ամենքին հայտնի է։ Սա ուրիշ շատ քաջագործություններ էլ է կատարել, բայց ինչքան որ ասացինք, բավական ենք համարում։

ԺԵ

ԱՐԱՅԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ ՇԱՄԻՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ

Արան Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին՝ Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով, ինչպես իր հայր Արամը։ Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը[14] շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել։ Իսկ Նինոսի վախճանվելուց կամ կրետե փախչելուց հետո, ինչպես համոզված եմ, Շամիրամը իր ախտը համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով և շատ աղաչանքներով ու պարգևների խոստումով խնդրում է գալ Նինվե իր մոտ կամ իրեն կին առնել ու թագավորել այն ամենի վրա, որոնց տիրում էր Նինոսը, և կամ նրա ցանկությունը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ։

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին, և Արան չհամաձայնվեց, Շամիրամը սաստիկ չարանալով, պատգամավորությունը դադարելուց հետո, վերցնում է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայաստան՝ Արայի վրա։ Բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շտապում էր ոչ այնքան նրան սպանելու կամ հալածելու, որքան նվաճելու կամ իր ձեռքը գցելու, որպեսզի իր կամքը կատարի։ Որովհետև կատաղի կրքի պատճառով տոփանքով սիրահարված էր նրա մասին եղած զրույցներին, ինչպես տեսնելիս լիներ։ Շտապով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվել է Այրարատ։ Ճակատամարտը պատրաստելիս նա իր զորապետներին պատվեր է տալիս, եթե դեպքը բերի, պետք է ջանալ կենդանի պահել Արային։ Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կորիճներից։ Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ ընկած դիակների մեջ փնտրելու իր ցանկալիին և տարփածուին։ Արային մեռած գտնում են քաջամարտիկների մեջ։ Հրամայում է նրան տանել դնել ապարանքի վերնատանը[15]։

Իսկ երբ հայոց զորքը պատրաստվում էր նորից պատերազմել Շամիրամ տիկնոջ հետ, Արայի մահվան վրեժն առնելու համար,— (Շամիրամն) ասում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա»։ Միևնույն ժամանակ նա հույս ուներ իր կախարդական դյութանքով Արային կենդանացնել՝ տոփական ցանկությունից ցնորված։ Բայց երբ նրա դիակն սկսեց նեխվել, հրամայեց գցել մի մեծ վիհի մեջ ու ծածկել։ Իր սիրականներից մեկին ծածուկ զարդարելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածներն Արային լիզելով ու կենդանացնելով մեր փափագն ու ցանկությունը կատարեցին, ուստի այսուհետև նրանք ավելի ևս արժանի են մեզանից պաշտվելու և փառավորվելու իբրև ուրախացնողներ և կամակատարներ»։ Նաև մի ինչ-որ արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ գոհերով պատվում է նրան՝ ցույց տալով, իբր թե աստվածների այս գործությունը կենդանացրեց Արային։ Եվ նրա մասին այսպես լուրեր տարածելով մեր Հայոց երկրում և բոլորին համոզելով՝ խռովությունը խաղաղեցնում է։

Արայի մասին կարճառոտ այսքանն էլ բավական է հիշատակել։ Սա տարիներ ապրելով սերեց Կարդոսին։

Ժ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐԱՅԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ՇԱՄԻՐԱՄԸ ՆԻՆՈՒԻՄ Է ՔԱՂԱՔԸ, ԳԵՏԻ ԱՄԲԱՐՏԱԿԸ ԵՎ ԻՐ ՏԱՒՆԸ

Այսպիսի հաջող գործերից հետո, Շամիրամը կարճ ժամանակով մնում է այն դաշտում, որ Արայի անունով կոչվում է Այրարատ։ Նա բարձրանում է երկրի հարավակողմն ընկած լեռնային վայրերը, որովհետև ամառային եղանակ էր, կամենում էր հովիտներում և ծաղկավետ դաշտերում զբոսնել։ Եվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օդի մաքրությունը, բխող մաքուր աղբյուրները, կարկաչահոս ու բարեգնաց գետերը՝ նա ասում է. «Մենք պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինենք, որպեսզի տարվա շրջանի մի չորրորդ մասը, այսինքն՝ ամառային եղանակը, ամեն տեսակ վայելչությամբ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օդի զով ժամանակը, կյանք վայելենք Նինվեում»։

Շատ տեղերով անցնելով՝ գալիս հասնում է աղի ծովակի[16] եզերքը արևելյան կողմից։ Տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնակի ձգվում էր դեպի արևմուտք՝ հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ հարավային կողմից ուղղահայաց դեպի երկինք բարձրացած մի կանգուն ու անթեք քարաժայռ կար։ Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտանման երկայնաձև հովիտ, որ լեռան արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, ընդարձակ և գեղեցիկ ձորի ձևով. նրա միջով հոսում էին լեռներից իջնող, ծործորներից ու հովիտներից քամվող քաղցրահամ ջրեր, որոնք լեռների ստորոտների մոտ միավորվելով՝ ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում։ Հովտաձև ձորակի մեջ ոչ սակավ շեներ կային՝ ջրերի աջ ու ձախ կողմերում գետեղված։ Այս հաճելի բլուրից դեպի արևելք կար մի շատ փոքր լեռ[17]։

Այս տեղի վրա աչք դնելով՝ այրասիրտ և վավաշոտ Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս տեղերից փափագած տեղը բերել չորս բյուր և երկու հազար սևագործ բանվորներ, վեց հազար իր ընտրած փայտա-

գործ, քարագործ, պղնձագործ և երկաթագործ արհեստավորներից, որոնք ըստ ամենայնի կատարյալ լինեն իրենց գործի մեջ։ Եվ գործը հրամանի համապատասխան կատարվում է. անմիջապես բերվեցին բազմաթիվ սևագործ բանվորներ և բազմարվեստ հմուտ վարպետներ։ Եվ հրամայում է՝ նախ գետի ամբարտակը շինել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն և բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է։ Գետի այս ամբարտակի ճեղքվածքներում այդտեղի մարդիկ, ինչպես լսում եմ, փախչում ամրանում են ապստամբությունների և գաղթերի ժամանակ, որպես թե ամրանալիս լինեին ապառաժ լեռների գագաթներին։ Եվ նրն մեկը կամենա փորձել, չի կարողանա ամբարտակի շինվածքից պոկել թեկուզ պարսատիկի մի փոքր քար, որշափ էլ աշխատի։ Եվ երբ մարդ նայի քարերի շուրջն եղած կրի ծեփին, նրան այնպես կթվա, թե ճարպ է թափված այնտեղ։ Այսպես երկար ապարիզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցնում է քաղաքի համար որոշված տեղը։

Այստեղ հրամայում է բազմությունը շատ խմբերի բաժանել և ամեն մի խմբի վրա ղեկավար նշանակել վարպետներից ընտիրներին։ Եվ այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ քիչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի շինվածքը՝ շատ ամուր պարիսպներով ու պղնձակերտ դռներով։ Քաղաքի[18] մեջ շինում է նաև բազմաթիվ ընտիր կրկնահարկ և եռահարկ ապարանքներ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով, և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության։ Քաղաքը մասերի է բաժանում գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով։ Շինում է նաև չքնաղ և զարմանալու արժանի բաղնիքներ՝ համապատասխան քաղաքի դիրքին և պետքերին։ Գետի մի մասը քաղաքի մեջ բաշխելով՝ անց է կացնում ամեն տեսակ կարիքների և բուրաստանների ու ծաղկոցների ոռոգման համար. իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի և բոլոր շրջակայքի ոռոգման համար։ Քաղաքի ամբողջ արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով, և այնտեղ տնկում է բազմաթիվ առատաբեր և գիներեր այգիներ։ Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հռչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմություն։

Իսկ քաղաքի (վերին) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում, և պատմելու հնարավորություն չկա։ Այստեղ գագաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսը շինում է դժվար մտնելու և դժվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ահռելի արքայանիստ շինվածքներ։ Դրանց շինության որպիսությունը մենք ոչ ոքից ճշտությամբ չենք լսել, ուստի հարմար չենք դատում մեր պատմության մեջ հյուսել. այսքան կասենք, թե, ինչպես լսել ենք, սրանք թագավորական բոլոր գործերի մեջ առաջին և վեհագույն են համարվում։

Իսկ քարաժայռի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ մարդ ոչ մի գիծ չի կարող երկաթով գծել, այսպիսի կարծր քարի մեջ պանազան սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր, հայտնի չէ ի՛նչ բանի համար, հրաշակերտեց։ Իսկ քարաժայռի ամբողջ երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է[19]։ Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և նույն գրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում նույն գրով, սահմաններ էր հաստատում։

Ահա ասացինք ինչ գործեր որ Շամիրամը կատարել է Հայաստանում։

Ի

ԱՐԱՅԱՆ ԱՐԱՅԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ՈՐ ՍՐԱ ՈՐԴԻՆ ԷՐ ՍՈՍԱՆՎԵՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԸ

Իսկ Շամիրամը դեռ իր կենդանության ժամանակ Արայի որդուն, որ ծնված էր նրա սիրելի կնոջից, Նվարդից և տասներկու տարեկան երեխա էր մնացել Արայի մահվան ժամանակ, դեպի Արա Գեղեցիկը տածած սիրո պատճառով նրա անունով կոչում է Արա և նշանակում է մեր երկրի գլխավոր՝ սրտանց նրան վստահելով. և ասում են, թե նա պատերազմում Շամիրամի հետ մեռավ։

Բայց (Մար Աբասը) պատմությունը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ՝ թողնելով արու զավակ՝ շատ գործունյա հանճարախոս Անուշավան

Սոսանվերին, որովհետև նա պաշտամունքի համաձայն նվիրված էր Արմենակի՝ Արմավիրում գտնվող սոսի ծառերին, որոնց տերևների սոսափյունից՝ նայելով քամու ուժին և ուղղությանը՝ մեր Հայոց աշխարհում սովորեցին գուշակություններ անել և այն էլ երկար ժամանակ[20]։

Այս Անուշավանը բավական ժամանակ արհամարհանք կրելով Ջամեսեսից[21], տառապում է արքունի դռանը. հետո բարեկամներից օգնություն գտնելով ձեռք է բերում մեր երկրի մի մասը՝ կառավարելու համար իրրև հարկատու, վերջը նաև ամբողջ երկիրը։

Բայց չափազանց շատ կլիներ, եթե մենք այս գլխում վերը հիշված մարդկանց բոլոր գործերն ու պատմությունները նկարագրեինք, ինչպես վայել է։

ԻԱ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ՍԿԱՅՈՐԴՈՒՅՑ ԾՆՎԱԾ ՊԱՐՈՒՅՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԴԱՄ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՕԳՆՈՒՄ Է ՄԱՐԱՑԻ ՎԱՐԲԱԿԵՍԻՆ ՍԱՐԴԱՆԱՊԱԼԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ

Բաց թողնելով դեպքերից ոչ շատ կարևորները, ասենք ինչ որ անհրաժեշտ է։ Այս վերջիններից մի մասը եղել է ասորեստանցիների թագավորության ժամանակ, մի մասն էլ Շամիրամից կամ Նինոսից հետո, իսկ մեր Պարույրն[22] եղավ Սարդանապալի[23] ժամանակ։ Սա քիչ օգնություն ցույց չի տվել մարացի Վարբակեսին[24] թագավորությունը Սարդանապալից վերցնելու։

Ահա այժմ ես կուրախանամ՝ ոչ փոքր խնդություն զգալով, որ հասնում եմ այն տեղերը, ուր մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում։ Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ խոսքեր գրել, որոնց ակունքները մենք ինքներս արժանացանք կարդալու իմաստուն, իմաստուններ մեջ իմաստնագույն և բազմարդյուն հեղինակի չորս հագներգությունների[25] մեջ։

Որովհետև Վարբակեսը՝ ծննդավայրով մեդացի, այս շատ ամուր երկրի ծայրի աննշան կողմերից, կյանքում չափազանց խոթոմանկ, կռիվների մեջ խիզախ, գիտենալով Թոնոս Կոնկողեռոսի տմարդի բնավորությունը և հեշտասեր ու թուլամորթ ծուլությունը՝ իր սիրալիր վարմունքով ու առատաձեռնությամբ ավելացնում է իրեն բարեկամներ այն քաջ ու պիտանի մարդկանցից, որոնց ձեռքով այն ժամանակ ամուր ու հաստատուն կերպով Հայոնապես կառավարվում էր Ասորեստանի աշխարհակալ պետությունը. իր կողմն է գրավում նաև մեր քաջ նախարար Պարույրին՝ խոստանալով նրան թագավորության շուք և ձև։ Գումարում է նաև քաջ մարդկանց մեծ բազմություններ, որոնք չափազանց շատ հմուտ էին նիզակ, աղեղ և սուր գործածելու մեջ։ Այս կերպով Սարդանապալից թագավորությունը գրավելով՝ տիրում է Ասորեստանին և Նինվեին։ Բայց Ասորեստանի վրա վերակացուներ թողնելով՝ թագավորությունը փոխադրում է Մարաստան։

Բայց եթե այս բանը ուրիշների մոտ տարբեր է պատմվում, մի զարմանար։ Որովհետև ինչպես որ մեր (պատմության) առաջին գլուխներում մեղադրեցինք մեր հին նախնիների անիմաստասեր բարքն ու ճաշակը, նույնը պատահում է և այստեղ։ Որովհետև ինչ գործեր որ կատարվել են Նաբուգոդոնոսոր[26] հոր կողմից, գրի են առնված նրանց հիշատակագիրների ձեռքով, իսկ մերոնք, որովհետև այսպիսի բան չմտածեցին, (նրանց գործերը) նշանակվեցին վերջում։ Բայց եթե հարցնես, թե ո՞րտեղից մենք այսպես գիտենք մեր նախնիների անունները, այլև շատերի գործերը, կպատասխանեմ. քաղդեացիների, ասորեստանցիների և պարսից հին դիվաններից, որովհետև մեր նախնիները եղել են նրանց գործակալները և նրանց կողմից մեր երկրի վրա նշանակված վերակացուներ ու մեծ կուսակալներ լինելով՝ սրանց անուններն ու գործերը մուծվել են արքունի գրքերի մեջ։

ԻԲ

ՄԵՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԹՎԱՐԿՈՒՄԸ ՀՈՐԻՑ ՈՐԴԻ

Այժմ ես կանցնեմ թվարկելու մեր մարդկանց, մանավանդ թագավորներին, մինչև Պարթևների տերության (հաստատվելը)։ Որովհետև մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի,

իրըև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ։ Ես շատ կփափագեի, որ ա՛յն ժամանակ Փրկիչն եկած և ինձ գնած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի։ Բայց շատ վաղ մեզանից այս դրությունը փախավ, գուցե նաև վիճակը։ Բայց ես այժմ օտարների թագավորության ժամանակ ապրելով՝ նրանց հետ միասին պետք է նշանակեմ մեր թագավորների կարգը, որովհետև մեր աշխարհի բնիկ պատկավորներն այն մարդիկ են, որոնց անունները ներքևը կարձանագրենք։

Եվ որ իսկապես այդ ժամանակները մեր ազգը թագավորություն ուներ, վկայում է նաև Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Բաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Այրարատյան թագավորությանը և Ասքանազյան գնդին»[27]։ Սա ապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն։

Բայց մենք (մեր թագավորների) ցուցակը կկազմենք, մոտը գնելով նաև Մարաց թագավորներին։

Մարաց առաջին	Իսկ մեր առաջինը, Մարացի Վարբակեսից թագադրված
Վարբակես	Պարույր, Սկայորդու որդին
Մոդակիս	Հրաչյա*
Սոսարմոս	Փառնավազ
Առտիկաս	Պաճուճ
Դեովկիս	Կոռնակ
Փռավորտիս	Փավոս
Կվաքսարես	Մյուս Հայկակ
Աժդահակ[28]	Երվանդ Սակավակյաց
	Տիգրան[29]

Որովհետև ես հավանական եմ գտնում, որ սրանց անունով կոչված են վերջին Երվանդն ու Տիգրանն ըստ հույսի, ժամանակը շատ հեռու չլինելով՝ մեկը հիշած կլինի այս անունները։

* Սա Հրաչյա է կոչվում առավելապես պայծառ երես և բոցավառ աչքեր ունենալու համար։ Ասում են, թե սրա ժամանակն է ապրել բաբելացիների արքա

1. Պատմահայրը դիմում է իր մեկենաս, Հայոց իշխան Սահակ ասպետ Բագրատունուն։

2. Այսինքն՝ Մար Աբասը։

3. Նինոս— տե՛ս 36-րդ էջի № 1 ծանոթագրությունը։

4. Առասպելական անձնավորություն։

5. Ջարասպ լեռ— Ջագրոսյան լեռների գագաթներից մեկն է, պատմական Հայաստանի ամենահարավային կետը։

6. Բարշամ (Բարշամին)— բառացիորեն՝ «երկնքի որդի», Ասորեստանի առասպելական նախնին, աստվածություն, որը համապատասխանում էր հայկական Սիրին և հունական Հեփեստոսին։

7. Առասպելական հսկաներ։ Հունական առասպելում Զևսը ևս մարտնչում է Տիտանյանների դեմ։

8. Կեսարիա Կապադովկիոյ (Մաժաք)— Կապադովկիայի մայրաքաղաքն էր։

9. Առասպելական անձնավորություն։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ Պալայպիս Քաղդեյան հունական առասպելի Տյուփոն հրեշն է, որին սպանեց Զևսը։

10. Նկատի ունի Միջերկրական ծովը։

11. Մշակ— այս անվան մեջ պահպանվել է փռյուգ-միսիացիների Մուշկ ցեղանունը։

12. «Պռոպին Արմենիան»— Առաջին Հայքն է։

13. Երրորդ և Չորրորդ Հայքերը, որպես վարչական միավորներ, կազմավորվել են 536 թ.՝ Հուստինիանոս կայսեր ռեֆորմով։ Հետևաբար այս երկրամասերի առկայությունը Խորենացու մոտ պետք է համարել ընդմիջարկություն՝ հետագա դարերում ավելացված։

14. Շամիրամի մասին տե՛ս 37-րդ էջի № 5 ծանոթագրությունը։

15. Ինչպես հայտնի է, Արան հայկական դիցարանում մեռնող և հարություն առնող աստվածությունն էր և առասպելը դա շեշտելու միտումով է, որ փորձում է Արային հարություն տալ արալեզ կոչված ոգիների միջոցով։ Ըստ ավանդու-

Նարուգոդոնոսորը, որը հրեաներին գերեց և ասում են, որ սա Նաբուգոդոնոսորից խնդրեց գերված երրայեցիների գլխավորներից մեկին՝ Շամբաթ անունով և բերեց մեր երկրում բնակեցրեց մեծ պատվով։ Պատմագիրն ասում է, թե սրանից սերվեց Բագրատունիների ցեղը, և այս ստույգ է։ Բայց թե ինչպիսի ջանքեր գործ դրին մեր թագավորները՝ նրանց ստիպելու, որ կուռքերը պաշտեն և թե նրանցից քանիսը և ովքեր աստվածապաշտությամբ վերջացրին իրենց կյանքը, հետո հաջորդաբար կպատմենք։ Որովհետև մի քանի անվստահելի մարդիկ[30] ասում են, ըստ իրենց ենթադրության, բայց ոչ ճշմարտությամբ, իբր թե Բագրատունիների թագադիր ցեղը ծագում է Հայկից։ Ուստի ես ասում եմ. այսպիսի հիմար խոսքերի մի՛ հավատար, որովհետև ոչ մի հետք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց ճշմարտությունը։ Որովհետև Հայկի և նմանների մասին էլ կակազում են վայրիվերո և անկարգ կերպով։ Բայց իմացիր, որ Սմբատ անունը Բագրատունիները հաճախ դնում են իրենց նախնիների վրա, իսկապես Շամբաթն է նրանց հին՝ երրայական լեզվով։

թյան, արալեղները լիզում էին կավի դաշտում ընկած հերոսներին և հարություն տալիս նրանց։

16. Այսինքն՝ Վանա լճի։

17. Խոսքը Վարագա լեռան մասին է։

18. Ըստ առասպելի, Վան քաղաքի հիմնադրումը կապվում է Շամիրամի անվան հետ։

19. Խորենացին նկատի ունի ուրարտական սեպագիր արձանագրությունները, որոնք հայկական ավանդությունը վերագրում էր Շամիրամին։

20. Աննուշավան Սոսանվեր— բնության պաշտամունքի, հատկապես բուսականության հետ աղերսվող աստվածության ներկայացուցիչ։

21. Ջամնանա— ըստ Խորենացու, նույն Նինուասն է՝ Շամիրամի որդին, որը սպանելով մորը՝ դառնում է Ասորեստանի թագավոր։

22. Պարույրը պատմական անձնավորություն է, ուսումնասիրողները գտնում են, որ նա Արմե-Շուբրիայի կառավարիչն էր մ. թ. ա. VII դ. վերջերին։ 612 թ. Պարույրը մասնակցել է Նինվեի գրավմանը և Մարաստանի արքա Կիաքսարի կողմից ճանաչվել Արմե-Շուբրիայի թագավոր։

23. Սարդանապալը Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալն է (668—633)։

24. Վարբակես— Կտեսիասի և անտիկ մյուս պատմիչների, նաև Խորենացու մոտ անվանումն է Մարաց թագավոր Կիաքսարի (625—584)։

25. Բանասիրության մեջ գոյություն ունի կարծիք, որ Դավիթ Անհաղթն է չորս հագներդությունների հեղինակը։

26. Նաբուգոդոնոսորը եղել է Ասորեստանի թագավոր մ. թ. ա. 605—562 թվականներին։

27. Համմ. Աստվածաշունչ, Երեմիա, գլ. ԾԱ, 27։

28. Մարաց թագավորների Խորենացու բերած սուրբ արքայացանկը լի է կիսաառասպելական անձնավորություններով։

29. Հայոց առաջին թագավորների այս ամբողջ ցուցակում, ինչպես կարծում են ուսումնասիրողները, պատմականորեն հավաստի են համարվում միայն Երվանդ Սակավակյացն ու վերջինիս որդի Տիգրան Երվանդյանը։

30. Դժվար է ասել, թե ովքե՞ր են այս «մի քանի անվստահելի մարդիկ», որոնց մասին ակնարկում է Պատմահայրը։

ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ–ՄԱՐԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. Թ. Ա. VI ԴԱՐՈՒՄ ԸՍՏ ՔՍԵՆՈՓՈՆԻ

Քսենոփոն Աթենացին ճուճական պատմագիտական մտքի ականավոր դեմքերից մեկն է: Նա ծնվել է մոտավորապես մ. թ. ա. 430 թ. Աթենում, արիստոկրատական ընտանիքում: Սովորել է Սոկրատեսի դպրոցում, որտեղ և ձևավորվել են նրա հասարակական–քաղաքական ու պատմագիտական հայացքները: Իր պրակտիկ գործունեությամբ և պատմահայեցողությամբ Քսենոփոնը հանդես էր գալիս օլիգարխիական կարգերի պաշտպանների և աթենական դեմոկրատիայի կատաղի հակառակորդների դիրքերում: Երկար տարիներ պատմագիրը ապրել և ստեղծագործել է Աթենից հեռու՝ Սպարտայում, որտեղ և գրել է իր հիմնական երկասիրությունները: Մահացել է 354 թ. Կորնթոսում: Քսենոփոնի գրչին են պատկանում «Անաբասիս», «Հունական պատմություն», «Սոկրատեսյան ստեղծագործություններ» («Սոկրատեսի արդարացումը», «Հուշեր Սոկրատեսի մասին», «Խրախճանք»), «Տնային տնտեսության մասին», «Ագեսիլաոս», «Եկամուտների մասին», «Հիերոն», «Լակեդեմոնական պետական կառուցվածքը» և այլ երկասիրություններ:

Քսենոփոնի աշխատությունների մեջ իր ուրույն տեղն ունի «Կյուրոպեդիա» («Կյուրոսի դաստիարակությունը») երկը, որ նա գրել է 365—358 թթ. ընթացքում: Սա բառոյախոսական–վեպ է՝ նվիրված Աքեմենյանների աշխարհակալության հիմնադիր, պարսից թագավոր Կյուրոս Մեծին (550—529): Քսենո-

փոնի Աֆեմենյան Կյուրոսը ոչ միայն իդեալական միապետ է, այլև աճեատի գերագույն կատարելության տիպար:

Չնայած այս երկի չատագովական միտումին և բառոյախոսական ուղղվածությանը, ինչպես նկատել են ուսումնասիրողները, այստեղ պատմական որոշակի նյութեր կան Հին Արևելքի երկրների մասին: Հատկապես արժեքավոր տեղեկություններ են պահպանվել «Կյուրոպեդիայում» մ. թ. ա. VI դ. Հայաստանի պատմության վերաբերյալ, մանավանդ հայ-մարական, հայ-պարսկական փոխհարաբերությունների, Հայաստանի ներքին կյանքի և հասարակական հարաբերությունների մասին:

Քսենոփոնի «Կյուրոպեդիայից» ստորև բերված հատվածը վերցրել ենք ակադ. Հ. Մանանդյանի թարգմանությունից («Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», *տե՛ս Հ. Մանանդյան*, Երկեր, հատ. Ա, Երևան, 1977, էջ 384—400), որը կատարվել է «Xenophontis, Cyropaedia, recen. A. Hug. Lipsiae, 1878» հրատարակությունից:

ՔՍԵՆՈՓՈՆ

ԿՅՈՒՐՈՊԵԴԻԱ

Գիրք II, գլուխ 1, (6) *«Դու[1], ուրեմն,— ասաց Կյուրոսը[2],— ասում ես, որ Բշնամիների հեծելազորը մոտ 60.000 է, իսկ թեթև վահանակիրները և նետաձիգները ավելի քան 200.000 են: Ապա ասա՛ նաև, թե ի՛նչ թիվ են կազմում քո ուժերը»: «Մեդացիները,— ասաց (Կիաքսարը),— ունեն ավելի քան 10.000 հեծելազոր, իսկ թեթև վահանակիրները և նետաձիգները կլինեն մեր հենց երկրում գոնե 60.000: Արմեննների կողմից ևս, ասաց, որ մեզ սահմանակից են, կգան 4.000 հեծելազոր և 20.000 հետևազոր»:*

Գիրք II, գլուխ 4, (9) *Երբ հնդիկները դուրս գնացին՝ Կյուրոսը ասաց Կիաքսարին հետևյալը... (12) «Ես հիշում եմ, որ մի փոքր առաջ քեզանից լսել էի, որ Արմեննների թագավորը[3] քեզ այժմ արհամարհում է, որովհետև նա իմացել է, որ Բշնամիները հարձակվելու են մեզ վրա. և նա ոչ զորք է ուղարկում, ոչ էլ տուրք է վճարում, որ պարտավորվել էր տալ»: «Նա այդպես է վարվում խրոք, ո՛վ Կյուրոս,— ասաց Կիաքսարը,— ուստի և ես տատանվում եմ և չգիտեմ, թե ինչն է լավ՝ պատերազմել ու փորձ անել հարկադրելու նրան, թե՞ ավելի ձեռնտու է՝ հանդուրժել ներկա դրությու-*

նը, որպեսզի մյուս Բշնամիների վրա չավելացնենք և այս Բշնամուն»: (13) Եվ Կյուրոսը նորից հարցրեց. «Իսկ նրա բնակավայրերը արդյոք ամո՞ւր տեղերում են, թե գուցե նաև մատչելի տեղերում»: «Բնակավայրերը,— ասաց Կիաքսարը,— շատ ամուր տեղերում չեն և ինձ այդ չէ անհանգստացնում. կան սակայն լեռներ, ուր նա իսկույն կարող է գնալ ու վտանգից ազատվել, եթե մեկը մոտ նստած չպաշարի նրանց, ինչպես այդ արել էր իմ հայրը»[4]: (14) Այնուհետև Կյուրոսն ասաց հետևյալը. «Եթե կամենաս ինձ ուղարկել, տալով այնքան հեծելազոր, որքան բավական կլինի՝ կարծում եմ, որ աստվածների օգնությամբ կհարկադրեմ նրան, որ քեզ զորք ուղարկի ու տուրք վճարի. ես հույս ունեմ նաև, որ նա ավելի բարեկամ կդառնա մեզ, քան այժմ»: (15) Եվ Կիաքսարը ասաց. «Ես հուսով եմ, որ նրանք ավելի շուտ քեզ մոտ կգան, քան ինձ: Որովհետև լսել եմ, որ նրա որդիներից ոմանք քեզ որսակից են եղել. այնպես որ, հավանորեն, դարձյալ կգան քեզ մոտ: Իսկ եթե նրանք ենթարկվեն մեր իշխանությանը՝ ամեն ինչ կլինի այնպես, ինչպես մենք կամենում ենք»:

(21) Որսը վերջացնելուց հետո Կյուրոսը, մոտենալով Արմեննների սահմաններին՝ ճաշեց: Հետևյալ օրը նորից որսի գնաց մոտ գալով լեռներին, ուր նա ձգտում էր գնալ: Երբ այս որսը ևս վերջացրեց՝ նորից ճաշեց: Իսկ երբ նա իմացավ, որ Կիաքսարի ուղարկած զորքը մոտենում է՝ թաքուն կերպով նրանց մոտ մարդ ուղարկեց և հրամայեց, որ նրանք ճաշեն, գտնվելով իրենից մոտ երկու փարսախ տարածության վրա: Նա այդ հեռատեսաբար արեց, որպեսզի դրանով օժանդակած լինի, որ Բշնամին գլխի չընկնի: Երբ սրանք ճաշում էին՝ հրամայեց, որ նրանց պետն իր մոտ գա: Իսկ ճաշից հետո իր մոտ հրավիրեց հարյուրապետներին: Եվ երբ նրանք եկան՝ խոսեց այսպես.

(22) «Սիրելի՛ արք, Արմեննների թագավորն առաջ դաշնակից էր ու հնազանդ Կիաքսարին, իսկ այժմ, նկատելով, որ նրա վրա հարձակվում են Բշնամիները՝ արհամարհում է մեզ և ոչ զորք է ուղարկում մեզ, ոչ էլ տուրք է վճարում: Արդ՝ այժմ մենք, եթե կարողանանք, պետք է որսանք նրան: Եվ թվում է, որ պետք է անենք հնարավոր կերպով: Դու, ո՛վ Խրյուսանտաս, երբ, ինչպես հարկն է, կհանգստանաս՝ վերցրո՛ւ պարսիկների կեսը, որոնք մեզ հետ են, գնա՛ լեռնային շրջանը և գրավի՛ր լեռները, ուր նա, ինչ-

պես ասում են, փախչում է, երբ որևէ բանից վախենում է։ Ուղեցույցներ ես քեզ կտամ։ (23) Ասում են, որ այդ լեռներն անտառապատ են, այնպես որ հույս կա, որ ձեզ չեն տեսնի։ Համենայն դեպս, լավ կլինի, եթե մինչև քո զորքի գնալը նախապես ուղարկես արագաշարժ մարդիկ, որոնք թվով ու հագուստով ավազակների են նմանան։ Սրանք, եթե հանդիպեն Արմեններից ոմանց՝ նրանց մի մասը պետք է բռնեն և արգելք լինեն, որ չկարողանան լուր տանել, իսկ մյուս մասը, որոնց հնարավոր չլինի բռնել՝ պետք է ցրեն ու խանդարեն, որ նրանք չտեսնեն քո ամբողջ զորքը, այլ կարծեն, որ զորքի հետ գործ ունեն։ (24) Դու,— ասաց,— այդպես արա՛, իսկ ես կվերցնեմ ինձ հետ լուսաբացին հետևազորի մյուս կեսը և ամբողջ հեծելազորը և կգնամ դաշտի միջով ուղիղ թագավորի ապարանքամրոցը։ Եթե նա դիմադրություն ցույց տա՝ պարզ է, որ հարկավոր կլինի կռվել, իսկ եթե ճակատամարտի դաշտից հեռանա՝ պարզ է, որ հարկավոր կլինի հետամտել։ Բայց եթե լեռները փախչի՝ այնտեղ արդեն քո պարտքը կլինի, որ քեզ մոտ եկողներից ոչ ոքու բաց չթողնես։ (25) Իմացիր, որ՝ ինչպես և որսի ժամանակ՝ մենք կլինենք որս որոնողները, իսկ դու ցանցերի մոտ հսկողը։ Հիշի՛ր նաև այն, որ նախքան որսի գազանների շարժվելը պետք է շատ կերպով փակել փախուստի ելքերը։ Եվ պետք է նաև անհնարին մնան նրանք, որոնք գտնվում են ելքերի մոտ, եթե նրբանք ուզում են, որ մոտ եկող գազանները ետ չդառնան»։

Գիրք II, գլուխ 4, (30) Խրյուսանտասը, լսելով այդ ամենը և հպարտ լինելով, որ Կյուրոսն իրեն հանձնարարություն է տալիս՝ վերցրեց առաջնորդներին, հեռացավ և, հրաման տալով նրանց, որ իր հետ գնալու էին, ինչ որ պետք էր՝ գնաց հանգստանալու։ Երբ սրանք քնեցին այնքան, որքան որ բավական էր թվում՝ նա շարժվեց դեպի լեռները։ (31) Իսկ Կյուրոսը, երբ լուսացավ՝ ուղարկեց դեսպան Արմենների թագավորի մոտ ու կանխապես կարգադրեց, որ նրան ասեն հետևյալը. «Կյուրոսը, ո՛վ Արմեն թագավոր, հրամայում է, որ դու այնպես անես, որ, որքան կարելի է շուտ, բերես և՛ տուրքը, և՛ զորքը։ Եթե նա հարցնի, թե որտեղ եմ ես՝ ասա՛ ճիշտը, որ սահմանների մոտ եմ։ Եթե հարցնի, թե արդյոք ես ինքս ես գալիս եմ, ասա՛ դարձյալ ճիշտը, որ չգիտես։ Եվ եթե ուզենա տեղեկանալ, թե մենք որքան ենք՝ խորհուրդ տուր նրան, որ ուղարկի մեկին ու իմանա»։ (32) Արդ՝ այդ ամենը հանձնարարելով

դեսպանին՝ ուղարկեց նրան, կարծելով, որ այդպես ավելի բարեկամորեն կլինի, քան թե դնար առանց նախազգուշացնելու։ Եվ ինքը, իր զորքը կարգավորելով լավագույն կերպով, թե ճանապարհն անցնելու և թե հարկավոր դեպքում նաև կռվելու համար՝ ճանապարհ ընկավ։ Զինվորներին նա հրամայեց, որ ոչ ոքի հետ անարդար չվարվեն. և եթե Արմեններից որևէ մեկը հանդիպի՝ հայտնեն, որ անհանգիստ չլինեն, և ասեն, որ ցանկացողները ծախու ապրանքները բերեն ուր որ իրենք են գտնվելու, եթե նրանք կամենում են ծախել կամ ուտելիք և կամ խմիչք։

Գիրք III, գլուխ 1, (1) Կյուրոսն այդ գործերով էր զբաղված։ Իսկ Արմենների թագավորը, երբ լսեց դեսպանից Կյուրոսի հանձնարարությունները՝ խիստ վախեցավ։ Նա գիտակցում էր, որ ինքը անարդար է վարվել, քանի որ ոչ տուրք է վճարել, ոչ էլ զորք է ուղարկել։ Իսկ ամենից շատ նա վախենում էր, որ նկատվելու է, որ ինքն սկսել էր ամրոցներ կառուցել, որպեսզի կարողանար ցույց տալ դիմադրություն։ (2) Հենց այդ պատճառով, նա ամբողջապես ահով լցված՝ ո՛չ միայն ուղարկեց ոմանց զանազան կողմեր հավաքելու իր ուժերը, այլև լեռներն ուղարկեց իր կրտսեր որդուն՝ Սաբարիսին[5] ու կանանց՝ իր և որդու, նաև աղջիկներին։ Նրանց հետ միասին ուղարկեց նույնպես և զարդերն ու ամենաարժեքավոր կահկարասիքը, և տվեց նրանց ուղեկիցներ։

Բայց միևնույն ժամանակ մարդիկ ուղարկեց, որպեսզի գաղտնի կերպով դիտեն, թե ի՞նչ է անում Կյուրոսը, և միաժամանակ Արմեններից, որ ներկա էին, կազմեց մարտակարգ։ Բայց շուտով նկան ուրիշները և ասացին, որ արդեն մոտ է գտնվում ինքը՝ Կյուրոսը։ Այնուհետև նա այլևս չհամարձակվեց կռվի բռնվել և հեռացավ։ (3) Երբ Արմենները տեսան, որ նա այդպես է անում, նրանք ևս բոլորը փախան իրենց տները և ուղեցին հեռու տեղ տանել և իրենց գույքը։ Արդ՝ երբ Կյուրոսը տեսավ, որ դաշտը լցված է փախչողներով ու հեռացողներով՝ մարդ ուղարկեց և հայտնեց, որ մնացողներից ոչ ոքի հետ կռիվ չի անի։ Սակայն հայտարարեց, որ եթե փախչողներից որևէ մեկին բռնի, նրա հետ կվարվի որպես թշնամու հետ։

Այսպիսով նրանց մեծ մասը մնաց, բայց ոմանք էլ հեռացան թագավորի հետ միասին։ (4) Իսկ երբ նրանք, որոնք կանանց հետ

առաջ էին անցել, դեմ դիպան լեռան վրա գտնվողներին՝ իսկույն աղմուկ բարձրացրին և շատերը սրանցից բռնվեցին փախչելիս։ Վերջիվերջո նրանց ձեռքն ընկան նաև Թագավորի որդին, կանայք և աղջիկներն ու նաև այն հարստությունները, որ իրենց հետ տանում էին։ Թագավորը երբ իմացավ, թե ինչ է պատահել նրանց հետ՝ տատանվում էր և չգիտեր, թե ուր գնա, և պատսպարվեց ինչ-որ մի բլրի վրա։ (5) Իսկ Կյուրոսը տեսնելով այդ՝ բլուրը շրջապատեց այն զորքերով, որ իր հետ էին, նաև, մարդ ուղարկելով Խրյուսանտասի մոտ, հրամայեց նրան թողնել լեռան վրա պահակ և գալ իր մոտ։ Զորքը հավաքվեց այժմ Կյուրոսի մոտ։ Նա ուղարկեց Արմեննների Թագավորի մոտ մունետիկ և նրան ասաց այսպես. «Ասա՛ ինձ, ո՛վ Արմեն, ուզում ես արդյոք այդտեղ մնալո՞վ՝ քաղցի ու ծարավի հետ կռվել, թե ուզում ես իջնել դաշտը և կռվել մեզ հետ»։ Արմեննների Թագավորը պատասխանեց, որ նա դրանցից ոչ մեկի հետ չի ուզում կռվել։ (6) Կյուրոսը նորից մարդ ուղարկեց և հարցրեց. «Ինչո՞ւ համար նստել ես այդտեղ և ցած չես իջնում»։ «Դժվար դրության մեջ եմ,— ասաց,— և չգիտեմ, թե ինչ պետք է անեմ»։ «Այլ ամենևին,— ասաց Կյուրոսը,— դժվարանալու պետք չունես, որովհետև կարող ես ցած իջնել դատվելու համար»։ «Իսկ ո՞վ կլինի,— ասաց Թագավորը,— դատավորը»։ «Պարզ է,— ասաց Կյուրոսը,— որ դատավորը կլինի նա, ում աստված հնարավորություն է տվել վարվել քեզ հետ և առանց դատ անելու այնպես, ինչպես որ կամենում է»։ Այնուհետև Արմեննների Թագավորը, երբ հասկացավ, որ այդ անխուսափելի է, ցած իջավ։ Իսկ Կյուրոսը, տեղավորելով մեջտեղում նրան ու մյուս բոլորին՝ բանակ դրեց, ունենալով արդեն միևնույն այս տեղում ամբողջ իր զորքը։ (7) Նույն այդ ժամանակ վերադառնում է ճանապարհորդությունից Արմեննների Թագավորի մեծ որդին՝ Տիգրանը[6], որը երբեմն Կյուրոսի որսի ընկերն էր եղել։ Երբ նա լսեց, թե ինչ է պատահել՝ իսկույն գնաց, ինչպես որ էր, Կյուրոսի մոտ։ Եվ տեսնելով, որ հայրը, մայրը, եղբայրներն ու նաև իր կինը գերի են բռնվել՝ լաց եղավ, ինչպես պետք էր սպասել։ (8) Իսկ Կյուրոսը, տեսնելով նրան՝ բարեկամական որևէ այլ վերաբերմունք ցույց չտվեց, այլ միայն ասաց՝ «Ժամանակին ես ևկել, որ լսես, ներկա գտնվելով՝ հորդ դատը»։ Նա իսկույն կանչեց Պարսիկների ու Մեդացիների զորավարներին, հրավիրեց նաև պատվավոր Արմեննե-

րին[7], որոնք ներկա էին։ Նաև կառքերի մեջ գտնվող կանանց, որոնք ներկա էին, նա չհեռացրեց, այլ թույլ տվեց, որ լսեն։ (9) Իսկ երբ ամեն ինչ հարմարեցված էր՝ սկսեց խոսել և ասաց. «Ո՛վ Արմեննների Թագավոր, ամենից առաջ ես խորհուրդ եմ տալիս քեզ դատի ժամանակ խոսել ճիշտը, որպեսզի հետու մնա քեզանից գոնե այն, ինչ որ ամենաատելին է։ Լավ իմացիր, որ սուտ խոսողը երեվան կհերվի և որ մարդկանց համար այդ ամենամեծ արգելքն է հանդիսանում որևէ ներողամտության։ Բացի այդ, ասաց, քո որդիները և այս կանայք ու նաև Արմեններից ներկա եղողները գիտեն այն բոլորը, ինչ որ դու արել ես։ Եթե նրանք նկատեն, որ դու այլ բաներ ես ասում և ոչ այն, ինչ որ պատահել է՝ նրանք կմտածեն, որ դու ինքդ դատապարտում ես քեզ ամենածանր պատիժները կրելու, եթե ես կարողանամ ճիշտը իմանալ»։ «Այլ հարցրու,— ասաց Թագավորը,— ո՛վ Կյուրոս, ինչ որ ուզում ես, իսկ ես հարկավ կասեմ ճիշտը, ինչ էլ որ ինձ հետ այնուհետև դրա պատճառով պատահի»։ (10) «Ասա՛ ինձ,— ասաց Կյուրոսը,— կովե՞լ ես դու երբևիցե իմ մոր հոր, Աստիագեսի[8], և այլ Մեդացիների հետ»։ «Այո», ասաց Թագավորը։ «Հաղթված լինելով նրանից՝ համաձայնե՞լ էիր, որ տուրք կվճարես, պատերազմի կգնաս միասին, ուր որ ասի, և ամրություններ չես ունենա»։ «Այդպես է»։ «Արդ՝ ինչո՞ւ այժմ ոչ տուրք ես վճարում, ոչ զորք ես ուղարկում և սկսել ես ամրություններ շինել»։ «Ես,— ասաց Թագավորը,— պատրաստության էի ձգտում, որովհետև լավ էի համարում, որպեսզի թե՛ ինքս ազատ լինեմ և թե՛ որդիներիս ազատություն թողնեմ»։ (11) «Իհարկե,— ասաց Կյուրոսը,— դեղեցիկ բան է կռվելը, երբ մեկը չի ուզում լինել երբևիցե ծառա։ Սակայն եթե երևան դա, որ որևէ մեկը, որ պատերազմում հաղթվել է կամ ստրկացվել է որևէ այլ կերպ, նախաձեռնում է տերերից հեռանալ՝ դրան հենց առաջինն ինքդ լա՞վ մարդ և դեղեցի՞կ գործ կատարող կհամարես, թե կհամարես անարդար գործ կատարող և, եթե բռնես՝ կպատժե՞ս»։ «Կպատժեմ,— ասաց Թագավորը,— չէ՞ որ դու թույլ չես տալիս, որ սուտ խոսեմ»։ (12) «Արդ՝ պարզ պատասխան տուր,— ասաց Կյուրոսը,— ամեն մեկ հարցին առանձին. եթե մի իշխանավոր ունենաս և նա հանցանք գործի՝ արդյոք թույլ կտաս որ նա՞ իշխի, թե նրա փոխարեն կնշանակես մեկ ուրիշին»։ «Կնշանակեմ մեկ ուրիշին»։ «Արդ՝ ի՞նչպես կվարվես, եթե նա շատ դրամ ունե-

նա՝ թույլ կտաս, որ հարստանա՞, թե նրան չքավոր կդարձնես»։ «Եթե դրամ ունենա,— ասաց թագավորը,— կառնեմ»։ «Իսկ եթե իմանաս, որ նա թշնամիների կողմն է անցել՝ ի՞նչ կանես»։ «Կբռպանեմ,— ասաց թագավորը,— ո՞րն է ավելի գերադասելի՝ մեռնել, բռնվելով որ սուտ եմ խոսում, թե մեռնել, ճիշտը խոսելով»։ (13) Այդ ժամանակ նրա որդին, հենց որ այս լսեց՝ հանեց խույրը գլխից և սկսեց շորերը պատառոտել, իսկ կանայք աղմուկ բարձրացնելով՝ երեսները ճանկռոտում էին, որ իբր թե կորստյան էր մատնվում իրենց հայրը և կորչում էին արդեն իրենք ևս բոլորը։ Իսկ Կյուրոսը հրամայեց լռել և ասաց. «Թող լինի այդպես. քո դատավճիռները դրանք են, ո՛վ Արմեննների թագավոր, բայց դու ի՞նչ խորհուրդ կտաս այս բոլորից հետո»։ Արդ՝ Արմեննների թագավորը լռեց, որովհետև դժվարանում էր վճռել, թե արդյոք խորհուրդ տա Կյուրոսին սպանել իրեն, թե՞ առաջարկի հակառակն այն բոլորի, որ ինքն ասաց, թե կաներ։ (14) Ապա նրա որդին՝ Տիգրանը հարցրեց Կյուրոսին. «Ասա՛ ինձ, ո՛վ Կյուրոս, քանի որ հայրս, ինչպես երևում է, դժվարանում է, թույլ կտրվի՞ արդյոք, որ ես նրա մասին այնպիսի խորհուրդ տամ քեզ, որը կարծում եմ, որ կլինի քեզ համար ամենալավը»։ Կյուրոսը, ի նկատի ունենալով, որ Տիգրանը մի ժամանակ իր հետ որսի էր գնում և որ նա եղել էր աշակերտ իմաստասիրության ինչ-որ մի ուսուցչի[9], որը Տիգրանին զարմանք էր պատճառում՝ շատ ուղեց լսել, թե ինչ է նա ասելու, և հրամայեց, որ համարձակ կերպով ասի այն, ինչ որ մտածում է։

[Գիրք III, գլուխ 1, 15—30: Տիգրանը երկար խոսում է և խնդրում է Կյուրոսին, որ նների իր հորը, որը խախտել էր դաշնադրությունը, ձգտելով ազատության, և համոզում է նրան, որ այսուհետև իր հոր բարեկամությունը կլինի հաստատուն և անխախտ]։

Գիրք III, գլուխ 1, (31) Կյուրոսը, լսելով այդ՝ խիստ ուրախացավ, որովհետև մտածեց, որ ամեն ինչ այնպես եղավ, ինչպես կիաքսարին խոստացել էր, որ պիտի անի։ Նա հիշեց, որ ասել էր, թե կարծում է, որ Արմեննների թագավորին ավելի մոտ բարեկամ կանի, քան առաջ։ Արդ՝ այնուհետև նա հարց տվեց Արմեննների թագավորին. «Եթե ես այդ բաներում ձեզ հավատ ընծայեմ՝ ասա՛ ինձ, ո՛վ Արմեն, որքա՞ն ինձ զորք կուղարկես և որքա՞ն դրամ կմուծես պատերազմի համար»։ (32) Այդ հարցին Արմեննների թագավորը պատասխանեց. «Ավելի պարզը և արդարացին այն կլինի,

ո՛վ Կյուրոս, որ ես ասեմ ու ցույց տամ իմ ունեցած ամբողջ զինվորական ուժը, իսկ դու որոշես՝ թե որքան զորք, քո կարծիքով, պետք է վերցնես և որքան պիտի թողնես երկրի պաշտպանության համար։ Նույնպես և իմ կարողության նկատմամբ արդարացի է, որ ես ցույց տամ քեզ իմ ամբողջ հարստությունը, իսկ դու ինքդ պետք է դատես, թե դրանից որքան ես կամենում առնել և որքան ես կամենում թողնել»։ (33) Կյուրոսն ասաց. «Արդ՝ ասա՛ ինձ, որքան է քո զինվորական ուժը, և ասա՛ նաև, թե որքան է քո կարողությունը»։ Ապա Արմեննների թագավորն ասաց. «Արմեննների հեծելազորը մոտ ութ հազար է, և հետևազորը՝ մոտ քառասուն հազար. իսկ իմ կարողությունը, այն հարստությունների հետ միասին, որ թողել է իմ հայրը, հաշվելով արծաթ դրամով՝ ավելի է քան երեք հազար տաղանդ»[10]։ (34) Կյուրոսն առանց հապաղելու ասաց. «Որովհետև քո դեմ պատերազմում են հարևան խալդայների[11] զորքից ինձ հետ կուղարկես կնոջը, իսկ փողից, որովհետև չես վճարել Կիաքսարին տուրքը՝ հիսուն տաղանդի փոխարեն, որը նրան վճարում էիր՝ կտաս կրկնակին։ Ինձ ևս,— ասաց,— կտաս իրբև պարտք՝ հարյուր տաղանդ։ Եվ ես խոստանում եմ քեզ, որ եթե աստված հաջողություն տա՝ ինձ տված պարտքի փոխարեն կամ կվարձատրեմ քեզ ավելի արժեքավոր կերպով և կամ կվճարեմ փողը, եթե կարողանամ։ Իսկ եթե չկարողանամ և պարզվի, որ հնարավորություն չունեմ վճարելու՝ կարծում եմ որ անիրավացի կլինի համարել ինձ անարդար»։ (35) «Ի սեր աստվածների, մի՛ այդպես խոսիր, ո՛վ Կյուրոս,— ասում է Արմեննների թագավորը,— ապա թե ոչ՝ ինձ կվհատեցնես. այլ գիտցի՛ր, որ քոնն է ո՛չ միայն այն, ինչ որ հետդ տանում ես, այլև այն, ինչ որ թողնում ես»։ «Լավ,— ասաց Կյուրոսը,— իսկ որպեսզի կինդ հետ ստանաս, ո՞րքան ինձ փող կտաս»։ «Որչափ որ կարողանամ»,— ասում է թագավորը։ «Հապա ի՞նչ կտաս զավակներիդ համար»,— ասում է Կյուրոսը։ «Դրանց համար ևս կտամ, որքան որ կարողանամ»,— ասում է թագավորը։ «Ուրեմն,— ասում է Կյուրոսը,— այդ արդեն կկազմի քո կարողության կրկնակին»։ (36) «Դու ևս, ո՛վ Տիգրան,— ասում է Կյուրոսը,— ասա՛ ինձ, ո՞րքան կվճարես, որպեսզի հետ ստանաս կնոջդ»։ Եվ Տիգրանը, որը նոր էր ամուսնացել և շատ էր սիրում իր կնոջը, ասաց՝ «ես, ո՛վ Կյուրոս, իմ անձը գլխովին կտամ, որպեսզի իմ կինը երբեք ծառա չլինի»։ (37) «Դու Տիգ-

բան,— ասում է Կյուրոսը,— ա՛ռ կնոջդ, ես չեմ համարում, որ նա գերի է բռնվել, որովհետև դու երբեք չես լքել մեզ։ Դու ևս, ո՛վ Արմենների թագավոր, տար կնոջդ ու զավակներիդ առանց որևէ վճարի, որպեսզի նրանք տեսնեն, որ ազատ վերադառնում են քո մոտ։ Իսկ այժմ ճաշեցնք մեզ մոտ և ճաշելուց հետո գնացեք, ուր կամենում եք»։ Այնուհետև նրանք մնացին։

Գիրք III, գլուխ 1, (41) Երբ նրանք տուն էին գնում՝ նրանցից ինչ-որ մեկը խոսում էր Կյուրոսի իմաստնության մասին, մի ուրիշը՝ արիության, մի ոմն՝ հեզության, ոմանք էլ գեղեցկության ու հասակի մասին։ Այդ ժամանակ Տիգրանը հարցրեց իր կնոջը. «Իսկ քեզ, ասաց, ո՛վ Արմենուհի, թվո՞ւմ է նույնպես, որ Կյուրոսը գեղեցիկ է»։ «Վկա է աստված,— ասաց կինը,— որ ես նրան չէի նայում»։ «Հապա ո՞ւմ էիր նայում»,— հարցրեց Տիգրանը։ «Վկա է Արամազդը[12],— ասաց կինը,— որ ես նրան էի նայում, ով ասաց, թե իր անձը գլխովին կտա, որպեսզի ծառա չդառնամ»։ Այնուհետև, այս բոլորից հետո, ինչպես հարկն է, նրանք իրար հետ միասին հանգստացան։ (42) Հետևյալ օրը Արմենների թագավորը Կյուրոսին ու ամբողջ զորքին ուղարկեց, իբրև հյուրերի, ընծաներ։ Նա հայտնեց իր մարդկանց, որոնք պետք է ռազմի ելնեին, որ գան երրորդ օրը և փող, որի մասին ասել էր Կյուրոսը, վճարեց կրկնապատիկ։ Սակայն Կյուրոսը վերցրեց, որքան որ ասել էր և մնացածը ետ ուղարկեց։ Նա հարցրեց, թե ո՞վ է առաջնորդելու զորքը՝ որդի՞ն թե ինքը։ Եվ նրանք միասին ասացին. հայրը ասաց այսպես՝ «Ում որ դու կհրամայես», իսկ որդին այսպես՝ «Ես քեզանից չեմ բաժանվի, ո՛վ Կյուրոս, եթե անգամ հարկադրված լինեմ հետևել քեզ իբրև գումակապինվոր»։ (43) Կյուրոսը ծիծաղելով ասաց. «Մի՞թե դու կցանկանաս, որ կինդ լսի, թե դու բեռներ ես կրում»։ «Սակայն բնավ հարկավոր չի լինի,— ասաց Տիգրանը,— որ նա այդ լսի, որովհետև ես նրան հետս կտանեմ, որպեսզի նա կարողանա տեսնել, թե ես ինչ եմ անում»։ «Ժամանակն է արդեն,— ասաց Կյուրոսը,— որ պատրաստվեք ճանապարհ գնալուն»։ «Հավատացած եղիր,— ասաց Տիգրանը,— որ երբ մենք պատրաստ կլինենք ճանապարհ գնալու՝ կներկայանան և նրանք, որոնց հայրս է տալու»։ Այնուհետև զինվորները հյուրընկալվեցին և գնացին քնելու։

Գիրք III, գլուխ 2, (1) Հետևյալ օրը Կյուրոսը, վերցնելով իր հետ Տիգրանին, մեդական հեծելազորից ամենաուժեղներին և իր ընկերներից նրանց, որոնք, կարծում էր, որ կարևոր են՝ շրջագայության ելավ երկրում և, նայելով շուրջը, խորհրդածում էր, թե որտեղ բերդ պիտի շինի։ Եվ երբ եկան մի ինչ-որ լեռան գագաթի մոտ՝ նա հարցրեց Տիգրանին, թե ո՞րոնք են այն լեռները, որտեղից խալդայները ցած են արշավում և կողոպտում։ Տիգրանն այդ լեռները[13] ցույց տվեց։ Եվ նա հարցրեց նորից. «Այդ լեռներն այժմ անմարդաբնա՞կ են»։ «Հարկավ ոչ,— ասաց Տիգրանը,— այլ միշտ այնտեղ են նրանց լրտեսները, որոնք մյուսներին ազդանշանով իմաց են տալիս, ինչ որ տեսնում են»։ «Իսկ ի՞նչ են անում դրանք,— ասաց Կյուրոսը,— երբ տեղեկանում են»։ «Օգնության են գալիս,— ասաց Տիգրանը,— դեպի գագաթները՝ ամեն մեկն ըստ իր ուժերի»։ (2) Այս բոլորը Կյուրոսը լսեց. և, դննելով շուրջը, նա նկատեց, որ Արմենների երկրի մի խոշոր մասն անմշակ է ու անմարդաբնակ պատերազմի պատճառով։ Ապա նրանք վերադարձան բանակ և ընթրելուց հետո քնեցին։ (3) Հետևյալ օրը եկավ ինքը՝ Տիգրանը, պատրաստ ճանապարհվելու, և նրա հետ նաև ի մի հավաքած զորքը՝ չորս հազար ձիավոր, տասը հազար նետաձիգ և նույնչափ այլ թեթև վահանակիր։ Երբ նրանք հավաքվում էին՝ Կյուրոսը զոհ էր անում, և, որովհետև զոհի նշանները բարհաջող էին՝ նա ժողովի հրավիրեց Պարսիկ ու Մեդացի հրամանատարներին։ (4) Եվ երբ նրանք հավաքվել էին՝ ասաց հետևյալը.

«Այրք սիրելիք, այս լեռները, որ մենք տեսնում ենք, խալդայներինն են։ Եթե մենք այս լեռները գրավենք և նրանց գագաթի վրա լինի մեր ամրությունը՝ մեր հանդեպ ստիպված կլինեն զգաստ լինել և՛ Արմենները, և՛ խալդայները։ Արդ՝ զոհերը մեզ համար բարեհաջող էին. որպեսզի կարելի լինի այդ մարդկային ջանքերով անել՝ ո՛չ մի բան այնքան շատ չի օժանդակելու մեզ, որքան արագությունը։ Եթե մենք լեռներն ավելի շուտ բարձրանանք, մինչև թշնամիների հավաքվելը՝ մենք գագաթը կգրավենք կամ բոլորովին առանց կռվի և կամ մեր դեմ կունենանք շատ քիչ և թույլ թշնամիներ։ (5) Ճիգերից ոչ մեկն ավելի հեշտ ու ավելի անվտանգ չէ, որքան շտապ կերպով եկողներին դիմադրելը։ Ուրեմն, ի դեն։ Դուք, Մեդացիներ, գնացեք մեզանից ձախ կողմով, իսկ դուք, Արմեններ, կեսը՝ աջ կողմով, իսկ մյուս կեսը՝ մեր առջևից։ Իսկ

դուք, ձիավորներ, եկեք ետևից, խրախուսելով ու առաջ մղելով մեզ, և մի՛ք թույլ տա, եթե մեկը մեղկանա»: (6) Այդ ասելուց հետո Կյուրոսն առաջնորդեց զորքը՝ կազմելով նրանից վաշտապյուռներ: Իսկ Խալդայները, երբ տեսան, որ նրանք արագընթաց կերպով վերև են շտապում՝ իսկույն աղդանշաններով իմաց տվին իրենց ցեղակիցներին, կանչեցին իրար և հավաքվեցին միասին: Ապա Կյուրոսը հրամայեց. «Այրք Պարսիկներ, նրանք մեզ են նըշան տալիս որ շտապենք, որովհետև եթե մենք ավելի շուտ վերև հասնենք՝ թշնամիների ջանքերը ոչ մի արդյունք չեն կարողանա տալ»: (7) Խալդայներն ունեին ծառերի ճյուղերից հյուսված կաշվեպատ վահաններ և երկուական նիզակներ: Ասում էին, որ նրանք ամենառազմիկ ժողովուրդն են այդ երկրում ապրող բնակիչներից: Նրանք ծառայում են զորքի մեջ վարձով, եթե մեկը նրանց աջակցության կարիքը ունենա, որովհետև նրանք խիստ ռազմունակ լինելով՝ միաժամանակ աղքատ են. նրանց երկիրը լեռնոտ է և հարուստ է միայն չնչին մասը: (8) Երբ Կյուրոսի զորքը ավելի մոտեցավ գագաթներին՝ Տիգրանը, որը գնում էր Կյուրոսի հետ՝ ասաց.

«Ո՛վ Կյուրոս, գիտե՞ս արդյոք, որ խիստ անհրաժեշտ կլինի, որ իսկույն մենք ինքներս կռվի բռնվենք, որովհետև Արմենները, իհարկե, չեն կարողանա դիմանալ թշնամու հարձակմանը»: Կյուրոսն ասաց, որ նա այդ գիտի, և իսկույն հրամայեց Պարսիկներին, որ նրանք պատրաստ լինեն, որովհետև հարկավոր կլինի թշնամուն արագ հետապնդել, հենց որ Արմենները փախչեն, դեպի իրենց քաշելով թշնամիներին, որպեսզի սրանք մեզ մոտ գան: (9) Արդ՝ Արմեններն այդպես առջևից էին գնում, իսկ Խալդայներից նրանք, որոնք մոտ էին, երբ Արմենները մոտեցան՝ իսկույն աղաղակ բարձրացրին և, ինչպես սովոր էին՝ վազեցին նրանց վրա: Իսկ Արմենները, նույնպես ըստ իրենց սովորության՝ նրանց գրոհին չդիմացան: (10) Երբ հետապնդող Խալդայները տեսան, որ դիմացից վերև են գալիս սուսերավորները՝ ոմանք, որ նրանց մոտեցել էին, իսկույն սպանվեցին, ոմանք փախան, ոմանք էլ նրանցից գերի ընկան: Եվ շուտով գագաթները գրավվեցին: Երբ Կյուրոսի զորքերը գագաթները գրավեցին՝ նրանք վերևից տեսան Խալդայների բնակարանները և նկատեցին, որ սրանք փախչում էին մոտակա բնակարաններից: (11) Եվ Կյուրոսը, երբ բոլոր զինվորները

հավաքվել էին՝ հրամայեց նախաճաշել: Երբ նրանք նախաճաշել էին՝ նա, նկատելով, որ այն տեղը, ուր գտնվում էին Խալդայների լրտեսները՝ ամուր ու ջրառատ է, սկսեց անհապաղ շինել այդտեղ ամրություն: Նա հրամայեց Տիգրանին մարդ ուղարկել Հոր մոտ և հայտնել, որ նա գա ու բերի իր հետ հյուսներ ու քարագործներ, որքան որ կլինեն: Սուրհանդակը գնաց Արմենների թագավորի մոտ, իսկ Կյուրոսը սկսեց շինել ամրությունը ներկա եղողների օգնությամբ: (12) Հենց այդ ժամանակ Կյուրոսի մոտ բերին կապված գերիներին, որոնցից մի քանիսը վիրավորված էին: Երբ նա նրանց տեսավ՝ իսկույն հրամայեց կապերը քանդել և, հրավիրելով բժիշկներ, հրամայեց վիրավորներին բժշկել: Այնուհետև նա խալդայներին ասաց, որ եկել է ոչ թե նրանց ոչնչացնելու դիտավորությամբ կամ նրանց դեմ պատերազմելու նպատակով, այլ՝ ցանկություն ունենալով խաղաղություն հաստատել Արմենների ու Խալդայների միջև: «Ես գիտեմ, որ դուք, —ասաց նա,— նախքան այս գագաթների գրավումը մեր կողմից՝ կարիք չեք զգացել խաղաղության, որովհետև մասամբ ձեր դույքն ապահով է եղել, մասամբ էլ կողոպտել եք Արմեններինը: (13) Արդ՝ այժմ լսեցեք, թե ինչ դրության մեջ եք: Ես այժմ ձեզ՝ բռնվածներիդ, ազատ կարձակեմ, որ գնաք տուն, և հնարավորություն կտամ, որ խորհրդակցեք մյուս Խալդայների հետ, թե արդյոք կամենում եք պատերազմել մեր դեմ, թե լինել բարեկամ: Եվ եթե դուք կգերադասեք պատերազմը՝ երբեք, թե խելք ունեք, մի՛ք գա այստեղ առանց զենքի, իսկ եթե վճռեք, որ կարիք ունեք խաղաղության՝ եկեք առանց զենքերի: Իսկ ես, եթե բարեկամ լինեք՝ կհոգամ, որպեսզի ձեր գործերը լավ գնան: (14) Երբ Խալդայներն այս լսեցին՝ շատերը հավանություն տվին, շատերն էլ հրաժեշտ տվին ու նրանք գնացին տուն:

Իսկ Արմենների թագավորը, հենց որ տեղեկություն ստացավ Կյուրոսի հրավերի ու ձեռնարկման մասին՝ վերցրեց հյուսներին և ուրիշներին, որոնք կարծում էր, որ պետք կլինեն, և եկավ անհապաղ Կյուրոսի մոտ: (15) Երբ նա տեսավ Կյուրոսին՝ ասաց. «Ո՛վ Կյուրոս, թեև մենք՝ մարդիկս, քիչ բան կարող ենք նախատեսել ապագայի նկատմամբ, բայց ձեռնարկում ենք շատ բան անել: Արդ՝ հենց այժմ ես ես աշխատեցի աղատություն ձեռք բերել, բայց ծառա դառա ավելի, քան երբևիցե: Երբ մենք գերի ընկանք, կար-

ծեցինք, որ ակներև կերպով կորստի ենք մատնվել, սակայն այժմ պարզվում է, որ մենք փրկված ենք առավել, քան երբևիցե։ Սրբանք, որ երբեք դադար չունեին և մեզ անընդհատ չարիք էին պատճառում՝ այժմ, ինչպես տեսնում եմ, այնպիսի վիճակի մեջ են գտնվում, ինչպես ես էի ցանկանում։ (16) Եվ ա՛յս իմացիր, ո՛վ Կյուրոս, որ ես, որպեսզի կարողանայի դեն քշել խալդայներին այս գագաթներից՝ շատ ավելի փող եմ տվել, քան դու ստացել ես այժմ ինձանից։ Եվ այն բարիքները, որ դու խոստացել էիր, թե կանես մեզ, որովհետև փող էիր ստացել՝ արդեն քո կողմից արված են, ուստի և պարզ է, որ մենք քեզ պարտ ենք այլ երախտիքներ, որ մենք կամաչենք, եթե անաղնիվ չենք, որ քեզ չհատուցենք։ Եվ նույնիսկ, եթե փոխհատուցենք, մենք հասկանում ենք, որ այդքանն անելով՝ մենք ոչ մի արժանի բան արած չենք լինի դրանով մեր բարերարի հանդեպ։ (17) Արմեննների թագավորն այսպես ասաց։

Իսկ խալդայները եկան և խնդրեցին Կյուրոսին, որ իրենց հետ հաշտություն կնքի։ Եվ Կյուրոսը հարցրեց նրանց. «Արդյոք ճիշտ չէ՞, ո՛վ խալդայներ, որ դուք այժմ նրա համար եք խաղաղություն ցանկանում, որովհետև կարծում եք, որ ավելի անվտանգ կարելի է ապրել խաղաղության դեպքում, քան պատերազմի, քանի որ մեր ձեռքին են գտնվում բարձունքները»։ Խալդայները դրական պատասխան տվին։ (18) Եվ նա ասաց. «Ի՞նչ կասեք, եթե խաղաղության պատճառով դուք ստանաք և այլ բարիքներ»։ «Ավելի ևս,— ասացին,— կուրախանանք»։ «Արդ՝ ճիշտ չէ՞,— ասաց Կյուրոսը,— որ դուք այժմ աղքատ եք, ինչպես ինքներդ գիտեք, լավ հողերի կարիք ունենալու պատճառով»։ Նրանք հաստատեցին և այդ։ «Արդյոք չէ՞իք ցանկանա,— ասաց Կյուրոսը, —որ դուք ևս վճարեիք նույնը, ինչ որ մյուս Արմենները, և թույլտվություն ստանայիք մշակելու Արմենիայի հողերը, որքան որ կամենայիք»։ «Եթե մենք հավատացած լինեինք,— ասացին խալդայները,— որ նրանք մեզ չեն նեղացնելու»։ (19) «Իսկ դու, ո՛վ Արմենների թագավոր,— ասաց Կյուրոսը,— չէ՞իր ցանկանա, որ քո այժմյան անմշակ հողերը դառնային պտղաբեր, եթե մշակողները համաձայնեին վճարել քեզ մոտ ընդունված տուրքերը»։ «Այդ,— ասաց Արմենների թագավորը,— շատ մեծ արժեք կունենար, որովհետև խիստ կավելանար եկամուտը»։ (20) «Իսկ դուք, ո՛վ խալդայներ, որ լավ սա-

բեր ունեք, արդյոք չէ՞ք թույլ տա, որ Արմեններն օգտվեն նրանցից իրեն արոտատեղերից, եթե արածեցնողները ձեզ համաձայնեն վճարել արդար տուրք»։ «Մեծ օգուտ կստանայինք,— ասացին խալդայները,— առանց աշխատելու»։ «Իսկ դու,— ասաց Կյուրոսը,— ո՛վ Արմենների թագավոր,— արդյոք չէ՞իր ցանկանա օգտվել այս արոտներից, եթե խալդայներին մի փոքր օգուտ տալով՝ ինքդ ավելի մեծ օգուտ ստանայիր»։ «Իհարկե, կցանկանայի,— ասաց Արմենների թագավորը,— եթե գիտենայի, որ կարելի է անվտանգ կերպով արոտներից օգտվել»։ «Չէ՞ որ դուք անվտանգ կերպով արոտատեղերից կօգտվեք,— ասաց Կյուրոսը,— եթե գագաթները լինեն ձեզ դաշնակից»։ «Այդպես է»,— ասաց Արմենների թագավորը։ (21) «Այլ վկա է ասված,— ասացին խալդայները,— որ մենք անվտանգ կերպով չենք կարողանա մշակել ոչ միայն նրանց, այլև մեր հողերը, եթե գագաթները լինեն նրանցը»։ «Իսկ եթե,— ասաց Կյուրոսը,— գագաթները լինեն ձե՞ր դաշնակիցը»։ «Այդպես,— ասացին նրանք,— իհարկե, մեզ համար լավ կլինի»։ «Այլ վկա է ասված,— ասաց Արմենների թագավորը,— մեզ համար լավ չի լինի, եթե սրանք նորից գագաթները ստանան, մանավանդ եթե դրանք լինեն ամրացված»։ (22) Եվ Կյուրոսն ասաց. «Ուրեմն ես հետևյալ կերպ կանեմ՝ ձեղանից և ոչ մեկին գագաթները ես չեմ տա, այլ մենք կպահենք նրանց մեր ձեռին, և եթե որևէ մեկը ձեղանից անարդարություն գործի՝ մենք անարդարություն կրողների կողմը կլինենք»։

(23) Երբ երկու կողմերն էլ այդ լսեցին՝ հավանություն տվին և ասացին, որ խաղաղությունը կարող է հաստատուն մնալ միայն այդ ձևով։ Այնուհետև բոլորն էլ իրար հավատարմության խոստում տվին և համաձայնության եկան, որ երկու կողմն էլ իրար հանդեպ կպահպանեն իրենց ազատությունը. նրանք իրավունք կունենան փոխադարձ ամուսնության, իրար հողերի և արոտատեղերի օգտագործման և կպաշտպանեն իրար ընդհանուր ուժերով, եթե իրենցից որևէ մեկին անարդարություն արվի։ (24) Արդ՝ այսպես կարգադրվեց այն ժամանակ, ու նաև այժմ խալդայների և Արմենիայի իշխանավորի միջև կնքված այն դաշինքը դեռ մնում է անխախտ։ Այս համաձայնությունը կնքելուց հետո երկու կողմն էլ հոժարությամբ շինեցին իսկույն ամրությունը, որը լինելու էր ընդհանուր, ու բերին այնտեղ պաշարեղեն։ (25) Երեկոյան դեմ կյու-

քոսը հրավիրեց նրանց իր մոտ հյուր՝ արդեն իրրև բարեկամներ։ Երբ միասին խնջույք էին անում՝ խալդայներից մեկն ասաց, որ այս ամենը ցանկալի են իրենց բոլորին, սակայն խալդայների մեջ կան ոմանք, որոնք ապրում են թալանով և որոնք ո՛չ գիտեն և ո՛չ էլ կարող են զբաղվել երկրագործությամբ, որովհետև սովոր են իրենց ապրուստը հայթայթել պատերազմի միջոցով։ Նրանք միշտ կամ թալանով են զբաղվել և կամ ծառայել են վարձով՝ երբեմն հնդկական թագավորի մոտ, որը, ինչպես ասում են, շատ հարուստ մարդ է, երբեմն էլ նաև Աստիագեսի մոտ։ (26) Կյուրոսը ասաց. «Ինչո՞ւ նրանք չեն ծառայում այժմ վարձով և ինձ մոտ։ Ես կվճարեմ այնքան, որից ավելին մի ուրիշը երբեք չի վճարել»։ Նրանք հավանություն տվին և ասացին, որ ցանկացողներ, անշուշտ, շատ կլինեն։

Գիրք III, գլուխ 3, (1) Հետևյալ օրը Կյուրոսն ուղարկեց դեսպան [Հնդկաստանի թագավորի մոտ], հանձնարարելով նրան այն, ինչ որ ասել էր։ Արմենների թագավորը և խալդայները դեսպանի հետ միասին ուղարկեցին նաև իրենց մարդկանց, որոնք, ինչպես կարծում էին, ամենից ընդունակներն էին և կարող էին թե աջակցել և թե ասել Կյուրոսի մասին այն, ինչ որ պատշաճ էր։ Այնուհետև Կյուրոսը տրամադրեց ամրությանը բավականաչափ բերդապահներ ու ամեն տեսակ կենսամթերքներ և, թողնելով դրանց իբրև պետ մի Մեդացու, որը խիստ հավատարիմ էր, իր կարծիքով, Կիաքսարին՝ ինքը հեռացավ, վերցնելով թե այն զորքը, որի հետ եկել էր, և թե այն, որ ստացել էր Արմեններից, նաև խալդայներից ևս մոտ չորս հազար զինվոր, որոնք, ինչպես կարծում էին, ավելի լավ էին, քան բոլոր մյուսները։ (2) Երբ Կյուրոսն իջավ մարզարնակ շրջանը՝ Արմեններից ոչ ոք չմնաց տան ներսում՝ ոչ տղամարդ, ոչ կին, այլ բոլորը, ուրախ լինելով խաղաղության վրա՝ դիմավորեցին նրան, իրենց հետ բերելով այն, ինչ որ ամեն մեկն ուներ ու համարում էր թանկարժեք։ Եվ այդ բանը Արմենների թագավորին բնավ դժգոհություն չէր պատճառում։ Նա այնպես էր կարծում, որ Կյուրոսին ընդհանուր այդ հարգանքն ավելի մեծ ուրախություն կպատճառի։ Վերջիվերջո եկավ նրան դիմավորելու և Արմենների թագավորի կինը՝ դուստրերի և կրտսեր որդու հետ ու բերեց իր հետ մյուս ընծաների հետ նաև ոսկի, որն առաջ Կյուրոսը չէր ուզեցել վերցնել։ (3) Կյուրոսը տեսնելով այդ՝

ասաց. «Դուք մի՛ք անի այնպես, որ ես, այս ու այն կողմ շրջելով՝ բարեգործություն անեմ վարձատրության համար, այլ դուք տիկին, ա՛ռ այդ փողը, որ բերում ես, և գնա՛ ու այլևս մի՛ տար Արմենների թագավորին, որ նա այդ գետնի մեջ թաղի։ Դու ուղարկի՛ր որդուդ զորքի մեջ ու նրանցով ամենագեղեցիկ կերպով նրան զարդարի՛ր, իսկ մնացածով քեզ, ամուսնուդ, դուստրերիդ ու որդիներիդ համար գնի՛ր այնպիսի բաներ, ինչ որ ձեռք բերելով և ինչով որ զարդարվելով՝ ձեր կյանքը կանցկացնեք ավելի գեղեցիկ ու ավելի ուրախ կերպով։ Իսկ հողի մեջ բավական կլինի, որ մեր մարմինները թաղվեն, երբ մեզանից որևէ մեկը վախճանվի»։ (4) Կյուրոսն ասաց այս և նրանց մոտով անցավ։ Իսկ Արմենների թագավորը և բոլոր մյուս մարդիկ նրան ճանապարհ դրին միասին, կոչելով նրան բարձրաձայն՝ բարի մարդ ու բարերար։ Եվ այդ անում էին, մինչև որ Կյուրոսը հեռացավ երկրից։ Արմենների թագավորը ուղարկեց նրա հետ ավելի շատ զորք, որովհետև իր երկրում խաղաղություն էր տիրում։ (5) Արդ՝ Կյուրոսը մեկնեց այդպես, ունենալով իր տրամադրության տակ ոչ միայն այն փողերը, որ նա առել էր, այլև իր համար պատրաստ ունենալով այդպիսով դրանից ավելի ևս շատ, որ կարող էր վերցնել, երբ պետք ունենար։ Եվ ապա Կյուրոսը բանակ դրեց սահմանամերձ շրջաններում։ Հետևյալ օրը նա ուղարկեց զորքը և փողը Կիաքսարին, որը, ինչպես ասվեց, մոտ էր գտնվում։ Իսկ ինքը Տիգրանի ու Պարսիկների ավազանու հետ որսի էր գնում այն տեղերը, ուր հանդիպում էին վայրի կենդանիներ, և զվարճանում էր այսպես։

1. Խոսքն այստեղ ուղղված է մարական թագավոր Աստիագեսի Կիաքսար անունով որդուն, որը, ըստ Քսենոփոնի, Աստիագեսի մահից հետո ժառանգել էր հոր գահը և գրաված Մեդիայի թագավոր։ Սակայն, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, սույն Կիաքսարը Քսենոփոնի կողմից ստեղծված վիպական, մտացածին կերպար է։ Իրականում, այս իրադարձությունների ժամանակ, Մեդիայի թագավորն էր հիշյալ Աստիագեսը (584—553)՝ մարական պետության հիմնադիր Կիաքսարի (625—584) որդին։

2. Կյուրոսն այդ ժամանակ մարական թագավոր Աստիագեսի (ըստ Քսենոփոնի՝ Կիաքսարի) զորապետներից էր։

3. Չնայած Քսենոփոնը չի հիշատակում Հայոց թագավորի անունը, սակայն Մովսես Խորենացու մոտ պահպանված խիստ արժեքավոր վկայություններից կա-

քելի է եզրակացնել, որ դա եղել է Երվանդունիների հայկական պետության թագավոր Երվանդ Սակավակյացը։ Կիաքսարի և Աստիագեսի ժամանակ Հայաստանը որոշ կախվածություն ուներ Մեդիայից։ Դա արտահայտվում էր նրանով, որ Հայաստանը Մեդիայի մղած պատերազմների ժամանակ նրան տրամադրում էր 20.000 հետևակազոր և 4000 հեծելազոր և վճարում էր հարկ՝ 50 տաղանդի չափով։ Օգտվելով մարական պետության թուլացումից՝ Հայոց Երվանդ Սակավակյաց թագավորը ապստամբում է Աստիագեսի դեմ և հրաժարվում է հարկ վճարել ու զորք տրամադրել վերջինիս։

4. «... ինչպես այդ ասել է իմ հայրը»— ըստ Քսենոփոնի, Կիաքսարի հայրը Աստիագեսն էր։

5. Սաբարիս— ըստ Հ. Մանանդյանի՝ Շավարշ, Հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի կրտսեր որդին։

6. Երվանդ Սակավակյացի ավագ որդին է՝ հետագայում Հայոց թագավոր Տիգրան Երվանդյանը։ Դաստիարակվել է Աստիագեսի արքունիքում՝ էկբատանում, Կյուրոսի հետ մեկտեղ, եղել է վերջինիս մտերիմը։ Խորենացու հաղորդմամբ («Պատմություն Հայոց», Ա, գլ. ԻԲ), Տիգրանը Կյուրոսին աջակցում է Մարաց իշխանությունը տապալելու և վերականգնում է Հայաստանի անկախությունը։ Դեռևս շատ հնում հայ ժողովուրդը Տիգրան Երվանդյանի անվան շուրջը հյուսել է ավանդություններ, որոնք կազմել են հայկական էպոսի ամենահին շերտերից մեկը։

7. «Պատվավոր Արմենները»— Քսենոփոնը նկատի ունի հայոց մեծամեծներին, երևելիներին։ Այս փաստը կարևոր վկայություն է մ. թ. ա. VI դարի հայ հասարակության սոցիալական շերտավորման մասին։

8. Մեդիայի թագավոր Աստիագեսն, իրոք, Կյուրոսի պապն էր. Կյուրոսի հայրը՝ Կամբիսը ամուսնացել էր Աստիագեսի Մանդանա դստեր հետ (տե՛ս Հերոդոտոս, Պատմություն, I, 107)։ Հետևաբար, Քսենոփոնի վկայական Կիաքսարը (տե՛ս 147-րդ էջի № 1 ծան.) «Կյուրոպեդիայում» հանդես է գալիս որպես Կյուրոսի մորեղբայր։

9. Բնագրում՝ «... ինչ-որ մի սոփեստի»։

10. Տաղանդ— Հին Արևելքի երկրներում քաշի միավոր, որն այնուհետև տարածվեց նաև հույների ու հռոմեացիների մոտ։ Բաբելոնական տաղանդի կշիռը մոտավորապես 30,3 կգ էր, պարսկականը՝ 32,640 կգ, իսկ հունականը՝ 26,2 կգ։ Հ. Մանանդյանի հաշվումներով՝ Երվանդ Սակավակյացի հարստությունը հավասար էր մոտավորապես 12 միլիոն ոսկի ռուբլու։

11. Խալդայների ցեղախմբերը բնակվելիս են եղել Հայկական բարձրավանդակի հյուսիսային և հյուսիսարևմտյան ծայրամասերում։ Ի. Մ. Դյակոնովի, կարծիքով խալդայները քարթվելական ծագում ունեին («История Мидии», М.—Л., 1956, էջ 351, ծան. 1)։

12. Արամազդ— հայկական դիցարանի գերագույն աստվածը, բոլոր աստվածների հայրը, երկնքի և երկրի արարիչը։ Արամազդի տաճարը գտնվում էր Դարանաղյաց Անիում, այստեղ դրված էր նաև նրա արձանը։

13. Խոսքը Պոնտական լեռների մասին է։

ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՄԱՐԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Ա

ԻԴ

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԱՄԵՆ ԲԱՆՈՎ

Բայց անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին։ Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ։ Նա Կյուրոսին[2] աջակից եղավ Մարաց[3] իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով[4] իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը։

Եվ ո՞ր իսկական մարդը, որ սիրում է արիության բարքը և խոհականությունը, չի ուրախանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել։ Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ չծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. ոսկու, արծաթի, պատվական քարերի, գգեստների և զանազան գույների, գործվածքների՝ հարստություններ տղամարդկանց ու կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով խիստ տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկները այն ժամանակի համեմատ աստվածանում էին։ Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը[5] պատվեցին վահաններով ու երկաթե զգեստներով։ Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու։ Նա խաղաղություն և շենություն գցեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով։

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ

ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով[6] երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն։ Եվ այս գրքում ի՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել։ Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի գգեստը։

Սա սկզբում դաշնակից լինելով Աժդահակին[7], որ Մարացի էր, նրան կին է տալիս իր Տիգրանուհի քրոջը, որին թախանձանքով ուղում էր Աժդահակը։ Որովհետև (Աժդահակը) մտածում էր՝ այսպիսի աղգականության շնորհիվ կա՛մ հաստատուն սեր պահպանել Տիգրանի հետ, կա՛մ այս կերպով հեշտությամբ դավաճանորեն սպանել։

Իե

ԱԺԴԱՀԱԿԻ ԵՐԿՅՈՒՂԻ ՈՒ ԿԱՍԿԱԾԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԿՅՈՒՐՈՍԻ ԵՎ ՏԻԳՐԱՆԻ ՍԻՐՈ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Բայց նրա այս մտածմունքների առիթն էր մտերմական դաշինքը, որ կյուրոսն առաջարկեց Տիգրանին. և շատ անգամ, երբ Աժդահակն այս բանը հիշում էր, քունը փախչում էր նրանից, և անդադար նա խորհրդակիցներին այսպիսի հարց էր տալիս. «Ինչպիսի՞ հնարանքներով մենք պիտի կարողանանք քանդել սիրո կապը պարսիկների և բազմաբյուր զորքեր ունեցող հայի միջև»։

Իթ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ Ի՛ՆՉՊԵՍ ՆՆՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՎ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՍԿՍՎԵՑ. ԵՎ ԱԺԴԱՀԱԿԻ ՄԱՀՆ ԱՅԴ ԿՌՎՈՒՄ

Սրանից հետո ասում է[8], թե երբ Աժդահակը Տիգրանուհուն տիկնության մեջ հաստատեց, իր թագավորության մեջ ոչինչ չէր

գործում առանց նրա հավանության, այլ ամեն բան կարգադրում էր նրա ասածի պես և հրամայում էր, որ բոլորը նրա հրամանին հնազանդվեն։ Այս այսպես կարգադրելով՝ սկսում է այնուհետև մեղմով խաբեությամբ նրան գրավել։ «Դու չգիտես, ասում է նա, որ քո եղբայր Տիգրանը նախանձել է, որ դու Արյաց[9] տիկին ես դարձել, նրան գրգռում է նրա կինը՝ Զարուհին։ Ի՞նչ կլինի սրա հետևանքը, եթե ոչ՝ որ նախ ես կմեռնեմ և հետո Զարուհին Արյաց վրա (տիկին) կդառնա և աստվածուհիների տեղը կբռնի։ Ուրեմն քեզ մնում է ընտրել այս երկուսից մեկը— կա՛մ լինել եղբայրասեր և հանձն առնել խայտառակ կործանում Արյաց առաջ, կա՛մ քո բարին հասկանալով մի օգտակար բան մտածել և առաջիկա անցքերի մասին հոգալ»։

Այս խորամանկության մեջ թաքցրած էր, թե Տիգրանուհին կմեռնի, եթե մարապարսկացու ցանկության համաձայն չվարվի։ Իսկ խորագետ գեղեցկուհին այս դավաճանությունը հասկանալով՝ սիրալիր խոսքերով է պատասխանում Աժդահակին և մտերիմների միջոցով շտապով եղբորը հայտնում է նենգությունը։

(Աժդահակն) այնուհետև գործի է ձեռնարկում, պատգամավորների ձեռքով (առաջարկելով Տիգրանին), որ բարեկամական տեսակցության համար գա երկու թագավորությունների սահմանագլուխ մի տեղում, իբր թե մի կարևոր գործ ու խոսելիք կա, որ չի կարելի կատարել գրի և պատվիրակության միջոցով, բայց միայն անձամբ դեմ առ դեմ հանդիպումով։ Սակայն Տիգրանը պատվիրակության դիտավորությունը իմանալով՝ Աժդահակի խորհուրդներից ոչ մի բան ծածուկ չի թողնում, այլ գրով հայտնում է, ինչ որ նրա սրտի խորքում կար։ Երբ այսպիսով չարությունը հայտնի դարձավ, այլևս ոչ մի խոսքով, ոչ մի խորամանկությամբ չէր կարելի չարությունը քողարկել, և այնուհետև թշնամական դրությունը հայտնի գրգռվում էր։

Եվ Հայոց թագավորը (զորք) է ժողովում Կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները՝ որքան որ կային, և Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և ամբողջ զորությամբ դիմում է Մեդացիների կողմերը։ Վտանգը հարկադրում է Աժդահակին Հայկազունի[10] դեմ ելնել պատերազմով ոչ փոքր բազմությամբ։ Հակառակության գործը ձգձգվում է մինչև հինգ ամիս, որովհետև արագ ու առողջ գործը թուլանում է, քանի որ Տիգրանը

մտածում էր իր սիրելի քրոջ (Տիգրանուհու) մասին։ Նա աշխատում էր այնպիսի մի հնար գտնել, որ Տիգրանուհին փրկվելու ճար գտնի։ Երբ այս հաջողվում է, մոտենում է և կռվի ժամը։

Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից իրեն հավասարը չունեցող։ Եվ ինչո՞ւ եմ խոսքս երկարացնում. կռվի ժամանակ Աժդահակի երկաթե ամուր զրահը ինչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է իր նիզակի ընդարձակ տեգին, և ձեռքը ետ քաշելիս՝ նրա թոքերի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում։ Բայց կռիվն սքանչելի էր, որովհետև քաջեր քաջերի հանդիպելով՝ ոչ մեկը մյուսին շուռտել թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում է բավական ժամեր, մինչև գործին վերջ է դնում Աժդահակի մահը։ Այս բարեբախտ դիպվածը նոր փառք է ավելացնում Տիգրանին[11]։

1. Խոսքն այստեղ Երվանդունիների հայկական պետության թագավոր Տիգրան Երվանդյանի մասին է։ Մովսես Խորենացու գրի առած սույն վեպը հայ ազգային վիպական շարքի առաջնեկ գործերից է։ Տիգրան Երվանդյանի կյանքն ու գործունեությունը հնուց նյութ էին դառել անգիր բանահյուսության։ Նրա մասին հյուսվել է ավանդությունների մի ամբողջ էպիկական ցիկլ, որը պատմվել ու երգվել է հին Հայաստանում։

Սակայն, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, Տիգրան Երվանդյանի վիպական կերպարի մեջ ակներև երևան են գալիս Արտաշեսյան Տիգրան II Մեծի գործերն ու գծերը, որի մասին ևս գոյություն է ունեցել մի առանձին վեպ։ Տիգրան II-ին նվիրված վեպի առանձին հատվածները՝ անունների նույնության պատճառով, հետագայում միահյուսվել ու խառնվել են Տիգրան Երվանդյանի մասին եղած ավանդությունների էպիկական ցիկլին։

2. Աքեմենյան պետության հիմնադիր Կյուրոս Մեծն է (550—529)։

3. Խոսքը Մեդիա-Մարաստան պետության մասին է։

4. Այստեղից ևս ակնհայտ է, որ սույն վեպում Տիգրան II Մեծը չփոթված է Աքեմենյան Կյուրոսին ժամանակակից Երվանդյան Տիգրանի հետ։ Իրականում Տիգրան Մեծն է գրավել հույների երկիրը՝ Սև ևկյան Ասորիքը, Կիլիկիան. նա է հիմնադրել Տիգրանակերտ քաղաքը։ Հետևաբար, այս վեպի մեջ Տիգրանին տրված «Մեծն Տիգրան», «բազմաթիւրաւոր և հաղթող աշխարհակալ» կոչումները վերաբերում են ոչ թե Տիգրան Երվանդյանին, այլ Տիգրան II Մեծին։

5. Զինվորներ, որոնք զրահ կամ վահան չէին կրում։

6. Հին հայկական երաժշտական գործիք։

7. Աժդահակ— առասպելական կերպար, պարսկա-հնդկական վիշապի առասպելի հերոս (Աժի Դահակա՝ վիշապ Դահակ)։ Ըստ առասպելի, վիշապ Դահակը կռվում է հերոսների կամ աստվածների դեմ և սպանվում (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1971, էջ 482)։ Խորենացու տվյալ կոնտեքստում Աժդահակի կերպարը մարմնավորում է և՛ վիշապի, և՛ Մարաց թագավոր Աժդահակ-Աստիագեսին։

8. Ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, Տիգրանի և Աժդահակի վեպի աղբյուրը Մարաբան չէ, ուստի դժվար է ասել, թե տվյալ դեպքում ում նկատի ունի Պատմահայրը. գուցե «Հիստումն Պիտոյից» չափածո երկի անհայտ հեղինակին, որը Խորենացու պնդմամբ, հազներգություններ է գրել Տիգրան Երվանդյանի մասին։

9. Այսինքն՝ Մարաց կամ Պարսից թագուհի, Մեծ Տիկին։

10. Նկատի ունի Տիգրան Երվանդյանին։ Խորենացին (ինչպես նաև նրան հետևող հայ մատենագիրներն ու որոշ պատմաբաններ) Հայկից սերված հայ նահապետներին և սրանց սերունդներին հորջորջում է Հայկազունի կամ Հայկազանց։

11. Տիգրան Երվանդյանի և Կյուրոսի մտերմության, «վիշապազուն» մար Աժդահակի դեմ Տիգրանի մղած պայքարի վիպական այս ցիկլում հետևյալ արձագանքներ են պահպանվել մ. թ. ա. VI դարի 50-ական թվականների հայ-մարական փոխհարաբերությունների մասին։ Այն ժամանակ, երբ Կյուրոսը ապրստամբեց Աստիագես թագավորի դեմ և եռամյա պայքարից հետո (553—550) կործանեց մարական պետությունը, Տիգրան Երվանդյանը, որը Կյուրոսի մտերիմն էր ու որսակիցը (տե՛ս 148-րդ էջ, № 6 ծան.) դաշնակցում է վերջինիս։ Մարական թագավորության անկումից հետո, Տիգրանը վերականգնում է Հայաստանի անկախությունը։

Այսպիսով, Քսենոփոնի հետ մեկտեղ, Տիգրանի և Աժդահակի առասպելախառն այս վեպը ևս, պատմական կարգի հիշողություններ է հասցրել մեզ Երվանդունիների հայկական հնագույն պետության մասին։

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԲԵՀԻՍՏՈՒՆՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բեհիստունյան (կամ բիսեթունյան, բիստունյան) արձանագրությունը հայ ժողովրդի ինքգույն պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկն է։ Այն փորագրված է Բեհիստուն բարձրադիր ժայռի վրա՝ ներկայիս Քերմանշահ քաղաքից ոչ հեռու և ճանդիսանում է ինն պարսկական սեպագիր արձանագրություններից մեծագույնն ու կարևորագույնը։ Այս արձանագրությունը թողել է պարսից Դարեհ I Վշտասպյան թագավորը (522—486)՝ իր իշխանության ինն սկզբին։

Երեք լեզուներով (ինն պարսկերեն, էլամերեն և ակկադերեն) Դարեհը փորագրել է տվել Կյուրոս Մեծի մանից հետո (529 թ. մ. թ. ա.) Պարսկաստանում սկսված խառնաշփոթ վիճակի, գա-

ճակալական կռիվների և պարսից տիրակալության դեմ ոտքի եկած մի շարք ժողովուրդների ու ցեղերի (այդ թվում և հայերի) ապստամբությունների ճնշման նկարագիրը:

Արձանագրության ամբողջական տեքստը առաջին անգամ վերծանել ու հրատարակել է Հենրի Ռոուլինսոնը: Ստորև բերված հատվածները տրվում են արձանագրության հայերեն լրիվ տեքստի թարգմանությունից, որ կատարել է Գ. Մ. Նալբանդյանը («Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», Երևան, 1964):

§ 6

Դարեհ թագավորն ասում է.— Սրանք են այն երկրները, որ իմ հպատակը եղան, Ահուրամազդայի[1] շնորհիվ ես նրանց թագավորն եմ. Փարս, Խուզիան[2], Բաբելոն, Ասուրեստան, Արաբիա, Մուդրայ[3], (այն երկրները), որ ծովում են, Սպարդա[4], Իոնիա[5], Մեդիա, Արմինա[6], Կապադովկիա, Պարթևստան, Զրանկա[7], Հարուվիա[8], Խորեզմ, Բակտրիա, Սոդդ, Գանդհարա, Սագաստան[9], Սատագուշ[10], Արախոզիա (Հարվաթ), Մակա՝ բոլորը միասին 23 երկիր:

§ 26

Դարեհ թագավորն ասում է.— Դադարշիշ անունով հայ (արմինացի) իմ ծառային[11] ես ուղարկեցի Արմինա: Այսպես նրան պատվիրեցի. «Գնա՛ և ջախջախի՛ր այդ ապստամբ բանակը, որը իրեն իմը չի ճանաչում»: Ուստի Դադարշիշը գնաց: Երբ նա հասավ Արմինա, ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Դադարշիշի դեմ (նրան) ճակատամարտ տալու համար: Արմինայի մեջ Զուզա[12] անունով մի ավան կա, ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահուրամազդան ինձ օգնեց: Շնորհիվ Ահուրամազդայի իմ բանակը բավական մարդ սպանեց ապստամբ բանակից: Թուրավահարա ամսի 8-ն էր[13], երբ այսպես ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 27

Դարեհ թագավորն ասում է.— Երկրորդ անգամ ապստամբները հավաքվեցին և նորից դուրս ելան Դադարշիշի դեմ ճակատամարտելու: Տիգրա[14] անունով մի բերդ կա Արմինայում. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահուրամազդան ինձ օգնեց, Ահուրամազդայի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Թուրավահարա ամսի 18-ն էր[15], երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 28

Դարեհ թագավորն ասում է.— Երրորդ անգամ ապստամբները հավաքվեցին և նորից դուրս ելան Դադարշիշի դեմ ճակատամարտի: Ուլամա[16] անունով մի բերդ կա Արմինայում. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ. Ահուրամազդան ինձ օգնեց: Ահուրամազդայի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: Թաիգարչիշ ամսի 9-ն էր[17], երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Դադարշիշը մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեդիա:

§ 29

Դարեհ թագավորն ասում է.— Այնուհետև Վաումիսա անունով պարսիկ իմ ծառային ես ուղարկեցի Արմինա (և) այսպես նրան պատվիրեցի. «Գնա՛, ջախջախի՛ր այն ապստամբ բանակը, որն իրեն իմը չի ճանաչում»: Ուստի Վաումիսան գնաց: Երբ նա հասավ Արմինա, ապստամբները հավաքվեցին և դուրս ելան Վաումիսայի դեմ ճակատամարտի: Ասուրեստանում Իզարա[18] անունով մի վայր կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահուրամազդայի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց: Անամակա ամսի 15-ն էր[19], երբ ճակատամարտը տեղի ունեցավ:

§ 30

Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին (և) դուրս ելան Վաումիսայի դեմ ճակատամարտի: Արմինայում Աուտիարա[20] անունով մի գավառ կա. այնտեղ նրանք ճակատամարտ տվեցին: Ահուրամազդան ինձ օգնեց. Ահու-

թամազդայի շնորհիվ իմ բանակը այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց։ Թուրավահարա ամսի[21] վերջն էր, երբ ճակատամարտը տեղի ունեցավ։ Հետո Վաումիսան մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեդիա։

1. Աճուրամազդա (Ահուրա Մազդա)— իրանական դիցարանի գերագույն աստվածը։ Համապատասխանում է հայկական դիցարանի գերագույն աստված Արամազդին։

2. Իմա՝ Էլամ։

3. Իմա՝ Եգիպտոս։

4. Իմա՝ Լիդիա։

5. Հին Հունաստանի փորքրասիական շրջանները։

6. Արմինա— Հայաստան. արձանագրության բաբելական (ակկադական) բնագրում ի տարբերություն հին պարսկական բնագրի «Արմինա»-ի՝ հանդիպում է Ուրաշտու, այսինքն՝ Ուրարտու ձևը, էլամական բնագրում՝ Հարմինույա։

7. Հունական աղբյուրներում՝ Դրանգիանա։

8. Հունական աղբյուրներում՝ Արիեա։

9. Հունական աղբյուրներում՝ Սկյութիա։

10. Հունական աղբյուրներում՝ Սատագիդիա։

11. Իմա՝ սատրապություն։

12. Ուսումնասիրողների մեծագույն մասը Զուզա ավանը տեղադրում է Հարավային Հայաստանում՝ Աղձնիք կամ Կորճայք նահանգներում։

13. Ըստ Ֆ. Յուստիի՝ 19 ապրիլի 521 թվականի, ըստ Ֆ. Վ. Քյոնիգի՝ 21 մայիսի 521 թվականի։

14. Տիգրա բերդը տեղադրվում է Աղձնիքում։

15. Ըստ Ֆ. Յուստիի՝ 29 ապրիլի 521 թվականի, ըստ Ֆ. Քյոնիգի՝ 31 մայիսի 521 թվականի։

16. Ույամա (Ուհիամա) բերդը տեղադրվում է Կորճայք նահանգում։

17. Ըստ Ֆ. Յուստիի՝ 20 մայիսի 521 թվականի, ըստ Ֆ. Քյոնիգի՝ 21 հունիսի 521 թվականի։

18. Իզարա (Իզալա)— ըստ Ց. Մարկվարտի, այս երկրամասը համապատասխանում է Հյուսիսային Միջագետքում գտնվող Իծալա լեռների անվանը։ Ապստամբները նախահարձակ էին եղել՝ դուրս էին եկել Արմինայի սահմաններից և մտել Ասորեստանի սահմանները։

19. Ըստ Ֆ. Յուստիի՝ 18 հունվարի 520 թվականի, ըստ Ֆ. Քյոնիգի՝ 31 դեկտեմբերի 522 թվականի։ Ֆ. Քյոնիգի ժամանակագրական մեկնաբանությամբ՝ Իզալայի ճակատամարտը ոչ թե չորրորդ ճակատամարտն էր ապստամբ հայերի և պարսիկների միջև, այլ առաջինը։

20. Առաիարա— ուսումնասիրողները սույն գավառը համապատասխան են համարում «Աշխարհացույց»-ի Այտյանք («Այտուանք», «Ատրուանք») գավառի անվան, որը գտնվում էր պատմական Հայաստանի Կորճայք նահանգում։

21. Ըստ Ֆ. Յուստիի՝ 1 հունիսի 520 թվականի, ըստ Ֆ. Քյոնիգի՝ 12 հունիսի 521 թվականի։

ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հերոդոտոսը հին հունական պատմագրության ամենաակնավոր դեմքն է և իրավամբ վաստակել է «պատմահայր» պատվատիտղոսը։ Ծնվել է մոտ մ. թ. ա. 484 թվականին, Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում գտնվող Հալիկառնաս քաղաքում։ Վաղ հասակից պայքարել է բռնապետական կարգերի դեմ, որի պատճառով հալածվել է և ստիպված լքելով հայրենի քաղաքը՝ բնակություն հաստատել Սամոս կղզում։ Մի քանի տարի նա ապրել է նաև Աթենքում, որտեղ մերձեցել է Պերիկլեսին ու Սոֆոկլեսին։ Ենթադրվում է, որ Հերոդոտոսը մահացել է Աթենքում, մոտավորապես 431—425 թվականների միջև։ Իր գաղափարախոսությամբ ու քաղաքական հայացքներով Հերոդոտոսը չափավոր ստրկատիրական դեմոկրատիայի կողմնակիցն էր։ Պատմահայրը շատ է ճանապարհորդել։ Շուրջ տասը տարվա ընթացքում (455—445 թթ.) նա եղել է բազմաթիվ երկրներում՝ Փոքր Ասիայի պետություններում, Պարսկաստանում, Բաբելոնում, Պաղեստինում, Փյունիկիայում, Եգիպտոսում, Լիբիայում, Հունաստանում, էգեյան ծովի կղզիներում, Սիցիլիայում, Բոսփորում և այլուր։ Տեսածի և լսածի հիման վրա նա գրել է իր հռչակավոր «Պատմություն» աշխատությունը, որը հետագայում Ալեքսանդրիայի գիտնականները բաժանել են իր գրքերի։ Հերոդոտոսի երկասիրությունը պարունակում է հսկայական ճանաչությամբ պատմական, ազգագրական, աշխարհագրական նյութեր՝ հին աշխարհի երկրների պատմության վերաբերյալ։ Աշխատության առանցքը չնայած հունա-պարսկական պատերազմների պատմությունն է, սակայն այստեղ մեծ տեղ է հատկացված նաև Ասորեստանի, Բաբելոնի, Պարսկաստանի, Եգիպտոսի, Սկյութիայի և այլ պետությունների, ցեղերի ու ժողովուրդների պատմությանը։

Հերոդոտոսի երկում մեծ հետաքրքրություն ներկայացնող վկայություններ կան նաև հին Հայաստանի պատմական աշխարհագրության, տնտեսության ու հասարակական-քաղաքական հարաբերությունների մասին։ Այստեղից ենք տեղեկանում, որ մ. թ. ա. V դարում Հայաստանը բաժանված էր Աքեմենյան XIII և XVIII սատրապություններին, ինչպես նաև Հայաստանից գանձ-

վող հարկերին, տնտեսությանը և առևտրին վերաբերող բազմաթիվ հարցերի մասին:

Հերոդոտոսից բերված հատվածները տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է „Herodotus, Historiarum libri IX, 1—3. Cambrige, Mass.—London, 1946—1960 (Loeb Library)" հրատարակությունից:

ՀԵՐՈԴՈՏՈՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք I

194. Այժմ ես կպատմեմ այն բանի մասին, ինչը ինձ այդ քաղաքից (Բաբելոնից— Ս. Կ.) հետո թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նավում են գետն ի վար դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը ձգվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիները, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ոչ նավի ետնամասն են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ. նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստվում են և շատ խոշոր և առավել փոքր: Դրանցից ամենախոշորներն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն[1]: Յուրաքանչյուր նավի մեջ կա մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի քանիսը: Նավելով Բաբելոն հասնելուց և բեռը ծախելուց հետո, նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են դրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանդի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում են ոչ թե փայտից, այլ կաշվից: Երբ նրանք, դրաստները քշելով, ետ են դառնում արմենների մոտ, նույն ձևով պատրաստում են ուրիշ նավեր:

Գիրք III

93. Բակտրիացիներից մինչև Այգլի երկիրը[2] [բնակվողները] վճարում էին 300 տաղանդ[3] հարկ. սա 12-րդ նահանգն էր: Պակտյիկից[4], Արմեններից[5] և հարևաններից մինչև Եվքսինոս (Պոնտոս)[6] ստացվում էր 400 տաղանդ[7]. սա 13-րդ նահանգն էր:

94. Մատիենների[8], Սասպեյրների[9] և Ալարոդների[10] վրա սահմանված էր 200 տաղանդ հարկ. սա 18-րդ նահանգն էր: Մոսքերի[11], Տիբարենների[12], Մակրոնների[13], Մոսինոյկների[14] և Մարերի վրա սահմանվեց 300 տաղանդ. սա 19-րդ նահանգն էր:



Նկար 6. Հայերը ուղևորվում են Աքեմենյան արքունիք. բարձրաքանդակ Պերսեպոլսից (մ. թ. ա. VI դար)

Գիրք VII

73. Փռյուգիացիների[15] սպառազինումը բավականին նման էր պափլագոնիականին[16], միայն մի փոքր տարբերությամբ: Փռյուգիացիները, ինչպես մակեդոնացիներն են ասում, երբ իրենց հա-

բանավոր՝ ապրում էին Եվրոպայում՝ անվանվում էին բոիդներ, իսկ Ասիա վերաբնակվելուց հետո[17], նրանք երկրի հետ միասին փոխեցին և իրենց անունը՝ կոչվելով փոյուգիացիներ[18]։

Արմենները, լինելով փոյուգիական գաղութաբնակներ[19], զինված էին փոյուգիացիների նման։ Այս երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը, որն ամուսնացած էր Դարեհի[20] դստեր հետ։

1. Այսինքն՝ 151,5 տոննա։ Բաբելոնական տաղանդը հավասար է 30,3 կիլոգրամի։

2. Ժամանակակից Հյուսհասային Աֆղանստանն է Վերին Ամուդարյայի հովտով հանդերձ։

3. Պարսկական արծաթ տաղանդը հավասար է 32 կգ 640 գրամի։

4. Ուսումնասիրողները Պակտյուիկե երկիրը նույնացնում են Կորդուքի հետ։

5. Ἀρμένιος — մինչև այժմ թարգմանվել է կամ «արմեններ» և կամ՝ «Արմենիա»։ Դուցե պետք է թարգմանել «Արմենիաններ», քանի որ բառը բնագրում գրված է հոգնակի թվով և ենթադրաբար կարող է վերաբերել երկու Արմենիաներին՝ հետագայի Մեծ և Փոքր, կամ լինել «Հայք» հոգնակի ձևի հունարեն թարգմանություն։

6. Այսինքն՝ Սև ծով։

7. Մոտավորապես 1.209.600 ոսկի ռուբլի։

8. Մատիենները բնակվել են Մեծ Զաբի վերին հոսանքում՝ Վանա և Ուրմիա լճերի միջև։ Մատիենեն նույնացվում է ուրարտական արձանագրությունների Մանա երկրի հետ։

9. Սասպեյրները ապրում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Ճորոխ գետի վերին հոսանքից դեպի արևելք և հարավ-արևելք։

10. Ալարոդներ— ցեղեր, որոնք բնակվում էին Արարատյան դաշտում, ինչպես նաև Վանա լճի և Արաքս գետի միջև ընկած տարածքում։ Կարծիք կա, որ համարվում են ուրարտացիների հետնորդները։

11. Մոսխեր— ցեղեր, որոնք բնակվում էին Արևելյան Տիգրիսի հովտում։ Հավանարար հետնորդներն են մուշկերի (փոյուգա— հայկական ցեղերի)։

12. Տիբարենները բնակվում էին Սև ծովի միջագետյա շրջանում, նրանց նույնացնում են սեպագիր արձանագրություններում հիշատակված տաբալների հետ։

13. Մակրոնները բնակվում էին Ճորոխի ստորին ավազանում։

14. Մոսինոյկներ— հունարեն բառացի նշանակում է «փայտե կառույցներում ապրողներ»։ Թերևս սա տեղական բառի՝ հույների կողմից արված ժողովրդական ստուգաբանությունն է։ Ստրաբոնը նույն այդ ցեղերին անվանում է հեպտակոմեներ, որը նշանակում է՝ «յոթ գյուղերում ապրողներ»։ Մոսինոյկները բնակվում էին մակրոններից արևմուտք՝ միջերկրածովյան անտառախիտ լեռներում։

15. Հնդեվրոպական ժողովուրդ, որը Փոքր Ասիա էր անցել Թրակիայից։

16. Պափլագոնացիները բնակվում էին Փոքր Ասիայի միջերկրածովյան ափերին՝ Սինոպից հարավ-արևմուտք։

17. Փոյուգիական ցեղերի տեղաշարժը Բալկաններից դեպի Փոքր Ասիա կատարվել է մի քանի ալիքներով՝ մ. թ. ա. XIII—XII դարերում։

18. Փոքր Ասիայում փոյուգիացիները բնակվում էին Լիդիայի և Կապադովկիայի միջև։

19. Հիմք ընդունելով Հերոդոտոսի սույն հաղորդումը՝ պատմագրության մեջ զարգացվել է հայ ժողովրդի ծագման փոյուգիական վարկածը, որը կապված է հայ ժողովրդի հնդեվրոպական բաղադրիչի՝ արմենների հետ։ Ըստ այդ տեսակետի, հայերի հնդեվրոպական նախնիները, որոնք բնակվում էին Սանգարիա գետի ափին և Արգեոս լեռան շրջակայքում՝ ներկայիս Անկարայից արևմուտք, փոյուգիացիների ճնշման ներքո շարժվել են դեպի Արևելք՝ Անտիտավրոսի լեռները և Հալիս գետի վերին հոսանքի շրջանը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 243)։

20. Խոսքը Աքեմենյան տերության թագավոր Դարեհ I Վշտասպյանի (522—486) մասին է։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ՔՍԵՆՈՓՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ

Քսենոփոն Աթենացին հունական վարձկան զորաբանակի կազմում մասնակցել է փոքրասիական հողերի պարսկական սատրապ, պարսից արքաեղբայր Կյուրոս Կրտսերի ձեռնարկած ռազմական արշավանքին դեպի Պարսկաստան (մ. թ. ա. 401 թ.)։ Կյուրոսի նպատակն էր՝ տապալել իր եղբայր Արտաքսերքսես II Մնեմոնին (404—358) և տիրանալ նրա գահին։ Արշավանքը անհաջողությամբ է ավարտվում Կունաքսայի ճակատամարտում սպանվում է Կյուրոս Կրտսերը։

Տասնհազարանոց վարձկան հունական զորաբանակը, որի մեջ էր նաև Քսենոփոնը, ստիպված է լինում բռնել դեպի հայրենիք նահանջի ուղին։ Նահանջող հույները կարող անցնում են նաև Հայկական լեռնաշխարհը՝ հարավից հյուսիս-արևմուտք, Վանա լճից հարավ բնկած կարդուխների երկրից՝ Հայաստանի վրայով դեպի Սև ծովի ափերը։ Այս նահանջի նկարագրությունը Քսենոփոնը տվել է իր ստեղծագործություններից գլուխգործոց «Անաբասիս» (հայ գրականության մեջ՝ «Նահանջ բիւրու») երկասիրության մեջ։

Մեծ է «Անաբասիսի» արժեքը որպես պատմական աղբյուրի։ Հայ ժողովրդի պատմության մի ամբողջ դարաշրջան իր լուսաբանումն է ստանում շնորհիվ այս երկի եղիճակի արժանահավատ

վկայությունների, հեղինակ, որը գրել է իր տեսածի ու լսածի ամիջական տպավորության տակ:

Մտորև բերված հատվածները տրվում են ըստ Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանության (տե՛ս *Քսենոփոն*, Անաբասիս, Երևան, 1970), որը կատարված է "Xenophontis Expeditio Cyri, recensuit Guilelmus Gemoll. Editio minor. Bibliotheca Teubneriana, Lipsiae, 1910" հրատարակությունից:

ՔՍԵՆՈՓՈՆ

ԱՆԱԲԱՍԻՍ

Գիրք III

Գլուխ V. *(17)... Զորավարները*[1] *որոշեցին, որ պետք է իջնել լեռների միջով դեպի կարդուխների երկիրը*[2]*. քանզի ասել էին, թե նրանց երկրով անցնելուց հետո կհասանեն Արմենիա, որին իշխում էր Օրոնտասը*[3] *և որը մեծ էր ու հարուստ:*

Նկար 7. Հայաստանի սատրապ Օրոնտաս-Երվանդ II-ի (404—360) ոսկի դրամը

Գիրք IV

Գլուխ III. (1) *Այդ օրը հելլենները դարձյալ մնացին գյուղերում, որոնք գտնվում էին Կենտրիտես գետի*[4] *հարթավայրից վերև: Գետի լայնքը հարյուր երկու պլեթրոն էր*[5]*. այն սահման է Արմենիայի և կարդուխների երկրի միջև: Հելլեններն այստեղ ուրախացած շունչ քաշեցին դաշտ տեսնելով: Գետը վեց կամ յոթ ասպարեզ հեռու էր կարդուխների լեռներից: (2) Այնժամ նրանք մեծ զոհասիրությամբ բանակեցին, և՛ պարեն ունենալով, և՛ անցած շատ նեղություններ վերհիշելով: Քանզի այն յոթ օրը, որ նրանք անցան կարդուխների երկրի միջով, միշտ ստիպված էին եղել կռվելու և ենթարկվել էին այնքան մեծ աղետների, որքան չէին պատճառել արքան*[6] *ու Տիսսափեռնեսը*[7]*. Այժմ՝ ազատված այդ ամենից, նրանք հաճույքով քնեցին:*

(3) Լուսաբացին գետի այն կողմը նրանք նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոչընդոտելու գետանցը, իսկ հեծյալներից վերև, բլուրների վրա շարվել էին հետևակ զորքեր, որոնք պետք է արգելեին հելլեններին Արմենիա դուրս գալ: (4) Սրանք Օրոնտասի և Արտուխասի[8] *արմեններն էին և մարդերն*[9] *ու խալդայները*[10] *վարձկան: Ասում էին, թե խալդայները ազատ են և խիզախ. նրանք զինված էին հյուսկեն երկայն վահաններով և նիզակներով: (5) Բլուրները, որոնց վրա նրանք դասավորված էին, գետից երեք թե չորս պլեթրոն հեռու էին գտնվում: Տեսանելի միակ մի ճանապարհ կար, որը վեր էր տանում և կարծես ձեռակերտ լիներ: Հելլեններն փորձեցին այստեղ իսկ գետն անցնել:*

Գլուխ IV. *(1) Գետն անցնելուց հետո հելլենները կեսօրվա շուրջ դասավորվեցին ու ճանապարհ ընկան Արմենիայի միջով, և ամբողջ ժամանակ դաշտավայրով ու հողաբլուրներով գնալով, անցան ոչ պակաս քան հինգ փարասախ*[11]*: Քանզի կարդուխների դեմ կռիվների պատճառով գետի մոտ գյուղեր չկային: (2) Այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի*[12] *համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ: Այստեղ նաև պարենն առատ էր: (3) Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարասախ, մինչև անցան Տիգրիս գետի ակունքը: Այնուհետև գնացին երեք կայան՝ տասնհինգ փարասախ, մինչև Տելեբոաս գետը*[13]*: Այն գեղեցիկ էր, բայց ոչ մեծ, իսկ գետի մոտակայքում կային շատ գյուղեր: (4) Այս վայրը կոչվում է Արևմտյան Արմենիա: Նրա հյուպարքոսն էր Տիրիբազոսը*[14]*, որը լինելով արքայի բարեկամը, երբ ինքը ներկա էր գտնվում, ուրիշ ոչ ոք արքային ձի չէր նստեցնում: (5) Սա հեծյալների ուղեկցությամբ մոտեցավ ու թարգման ուղարկելով ասաց, թե ցանկանում է բանակցել հրամանատարների հետ: Զորավարները որոշեցին լսել նրան. ուստի մոտենալով մինչև լսելի տարածություն, հարցրին, թե ի՞նչ է կամենում: (6) Նա ասաց, թե ցանկանում է պայմանավորվել, որպեսզի ոչ ինքը վնասի հելլեններին, ոչ էլ նրանք այ-*

րեն տները. իսկ պարեն կարող են վերցնել ինչքան անհրաժեշտ է: Զորավարները համաձայնվեցին այդ բոլորին և այդպիսի պայման կնքեցին:

(7) Այստեղից ընթացան երեք կայան դաշտավայրի միջով՝ տասնհինգ փարասախ. և Տիրիբազոսը իր զորքով հետևում էր նրանց մոտ տասը ասպարեզ հեռավորության վրա: Եվ նրանք հասան ապարանքի մոտ, որի շուրջը բազմաթիվ գյուղեր կային, լի զանազան պարենով: (8) Երբ արդեն բանակել էին, գիշերը առատ ձյուն եկավ. ուստի և լուսաբացին որոշեցին զորաշարքերը և զորավարներին տեղավորել գյուղերում, քանի որ ոչ մի թշնամի չէր երևում և կարծում էին, թե իրենք ապահով են ձյան առատությանը պատճառով: (9) Այստեղ նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատությունը. մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն: Բայց ոմանք, որ բանակից դուրս գալով թափառել էին, պատմում էին, թե իբր գիշերը իրենք տեսել էին փայլող բազմաթիվ կրակներ: (10) Ուստի զորավարները վտանգավոր համարեցին տներում ցրված մնալը և որոշեցին զորքը դարձյալ ի մի հավաքել: Ուստի և բոլորը հավաքվեցին. մանավանդ, որ թվում էր, թե եղանակը պարզվում է: (11) Մինչ նրանք այստեղ գիշերում էին, այնքան առատ ձյուն տեղաց, որ ծածկեց և՛ ղեկքերը, և՛ պառկած մարդկանց. ձյունը կաշկանդեց նաև անասունների ոտքերը ու շատ դժվար էր վեր կենալը. քանզի եկած ձյունը, քանի դեռ չէր հալվել, տաբացնում էր պառկածներին: (12) Իսկ երբ Քսենոփոնը[15] համարձակվեց մերկ վեր կենալ ու փայտ ջարդել, իսկույն մեկ ուրիշը ևս վեր կենալով, վերցրեց կացինը նրա ձեռքից և սկսեց ինքը ջարդել: Այնուհետև վեր կացան նաև ուրիշները և կրակ վառեցին ու յուղ քսվեցին: (13) Քանզի այստեղ յուղի շատ տեսակներ կային, որ գործածում էին ձիթայուղի փոխարեն՝ խոզաճարպ և քնջութի և դառն նշի և բևեկնի յուղ: Կար նաև սրանցից պատրաստված մեռոն:

(14) Այնուհետև որոշվեց դարձյալ տեղավորվել [գյուղերի] տներում: Այնժամ զինվորները մեծ ազմուկով և ուրախությամբ դիմեցին դեպի բնակարաններն ու պարենամթերքը: Իսկ նրանք, ովքեր նախապես հեռանալիս անմտաբար այրել էին տները, պատժվեցին նրանով, որ վատ տեղավորվեցին: (15) Այնուհետև գի-

շերով Դեմոկրատես Տեմնոսացուն մի ջոկատ հանձնեցին և ուղարկեցին դեպի լեռները, որտեղ, ինչպես պատմել էին բանակից դուրս թափառած զինվորները, նկատել էին կրակներ. քանզի Դեմոկրատեսը նախկինում ևս այդպիսի տվյալներ ստուգել էր, եղածը՝ որպես եղած, իսկ չեղածը՝ որպես չեղած: (16) Սա գնաց, և վերադառնալով հայտնեց, թե կրակներ չի տեսել. սա իր հետ բերեց իր բռնած մարդուն, որը կրում էր պարսկական աղեղ, կապարճ և երկսայրի տապար, ինչպիսին ունեն ամազոնուհիները[16]: (17) Երբ սրան հարցրին, թե ո՞րտեղացի է, պատասխանեց, թե պարսիկ է ու գալիս է Տիրիբազոսի բանակից, պաշար վերցնելու համար: Հելլենները հարցրին նաև, թե ինչքա՞ն է զորքը և ի՞նչ նպատակով է հավաքված: (18) Նա ասաց, որ Տիրիբազոսն է, որն ունի և՛ իր զորքը, և՛ վարձկան խալյուբներ[17] ու տաոխներ[18]. և նա պատրաստվում է, շարունակեց պարսիկը, հելլենների վրա հարձակվել լեռն անցնելու ժամանակ կիրճերում, որտեղ և գտնվում է միակ ճանապարհը:

Նկար 8. Տիրիբազոսի արծաթե դրամը (մ. թ. ա. IV դար)

(19) Այս լսելով, զորավարները որոշեցին զորաժողով գումարել. այնուհետև պահակախումբ թողնելով ու մնացողների վրա Սոփայնետոս Ստյումփալացուն զորապետ նշանակելով, իսկույն մեկնեցին, ուղեցույց ունենալով գերված մարդուն: (20) Երբ նրանք անցնում էին լեռները, պելտաստները[19] առաջ գնալով ու նկատելով զորակայանը, չսպասեցին հոպլիտների[20] հասնելուն, այլ աղաղակելով վազեցին դեպի զորակայանը: (21) Իսկ բարբարոսները աղմուկը լսելով, չդիմացան ու փախան: Բայց բարբարոսներից ոմանք սպանվեցին, և ձեռք բերվեց մոտ քսան ձի, միաժամանակ գրավվեց Տիրիբազոսի վրանը և նրա մեջ արծաթե ոտքերով մահճեր և ըմպանակներ, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատուռակներ: (22) Այս իմա-

նալուց հետո հոպլիտների զորավարները որոշեցին որքան կարելի է շուտ վերադառնալ զորակայան, որպեսզի այնտեղ մնացածների վրա որևէ հարձակում չկատարվի։ Եվ իսկույն շեփորը նահանջի ազդանշան տվեց ու վերադառնալով նույն օրը հասան բանակատեղի։

Գլուխ V. (1) Հաջորդ օրը որոշեցին ուղևորվել ինչքան հնարավոր է արագ, նախքան թշնամու նորից հավաքվելը և կիրճերը գրավելը։ Հելլենները պատրաստվելով ճանապարհվեցին խոր ձյան միջով, ունենալով շատ առաջնորդներ։ Եվ նույն օրն իսկ նրանք անցնելով լեռնագագաթը, որտեղ Տիրիբազոսը մտադրվել էր հարձակում գործել, բանակեցին։ (2) Այստեղից առաջ անցան երեք կայան ամայի տարածություններով՝ տասնհինգ փարսախ, մինչև Եփրատ գետը, և այն անցան թրջվելով մինչև պորտը։ Պատմում էին, թե ակունքները հեռու չէին։

(9) Մինչ առաջ էին ընթանում, Խեյրիսոփոսը[21] աղջամուղջին հասավ մի գյուղ և ամրության առաջ, աղբյուրի մոտ պատահեց գյուղի կանանց և աղջիկների, որոնք ջուր էին տանում։ (10) Սրանք հարցրին հելլեններին, թե ովքե՞ր են։ Իսկ թարգմանը պարսկերեն ասաց, որ Թագավորի կողմից գնում են սատրապի մոտ։ Եվ կանայք պատասխանեցին, թե նա այստեղ չէ, այլ գտնվում է գրեթե մեկ փարսախ հեռու։ Այնժամ, քանի որ ուշ էր, հելլենները ջուր տանողների հետ մտան ամրությունից ներս՝ գեղջավագի մոտ։ (11) Այսպիսով, Խեյրիսոփոսը և զինվորներից նրանք, ովքեր կարողացան, բանակեցին այստեղ. իսկ մյուսները, որոնք չէին կարողացել ճանապարհը մինչև վերջ գալ, գիշերեցին անմանուկ և անկրակ. այնժամ ևս զինվորներից ոմանք մահացան։

(22) Մինչ այդ Խեյրիսոփոսը գյուղում եղողներից ոմանց ուղարկեց իմանալու, թե ի՞նչ վիճակում են եւևում եղողները։ Վերջիններս տեսնելով նրանց, ուրախացան և հիվանդներին նրանց հանձնեցին զորակայան տանելու համար. իսկ իրենք առաջ գնալով, քսան ասպարեզ չանցած, հասան այն գյուղը, որտեղ իջևանել էր Խեյրիսոփոսը։ (23) Երբ բոլորը հավաքվեցին իրար մոտ, որոշեցին, որ ապահով կլինի զորամասերը գյուղերում տեղավորել։ Եվ Խեյրիսոփոսը մնաց այնտեղ, իսկ մյուսները վիճակահանությամբ բաժանեցին իրենց տեսած գյուղերը և յուրաքանչյուրը այնտեղ մեկնեց իր զորամասի հետ։ (24) Այնժամ վաշտապետ Պոլ-

յուկրատես Աթենացին խնդրեց թույլ տալ իրեն առաջ գնալ, ու վերցնելով իր հետ արագաշարժներին, վազեց դեպի այն գյուղը, որը վիճակով ստացել էր Քսենոփոնը, ու գերեվարեց այնտեղ գտնված բոլոր գյուղացիներին և գեղջավագին, նաև Թագավորին՝ որպես տուրք՝ անուցվող տասնյոթ մտրուկների, ինչպես և գեղջավագի դստեր, որը իններորդ օրն էր, ինչ ամուսնացած էր։ Իսկ նրա ամուսինը գնացել էր նապաստակ որսալու և չգերվեց գյուղում։

(25) Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ։ Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով։ Տներում կային այծեր, ոչխարներ, եղներ, հավեր և սրանց ձագերը։ Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով։ (26) Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների[22] մեջ գարուց պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի։ (27) Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր։ Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր։

(28) Այս գյուղի ավագին Քսենոփոնը սեղանակից դարձրեց ու նրան խորհուրդ տվեց չվհատվել, ասելով, որ նա իր զավակներից չի զրկվի և փոխարենը հեռանալիս իրենք նրա տունը կլցնեն մթերքներով, եթե նա լավ ծառայություն մատուցի զորքին և դառնա ուղեցույց, մինչև իրենք կհասնեն մի այլ ժողովրդի երկիր։ (29) Իսկ նա խոստացավ այդ բոլորն անել, ու բարյացակամ դառնալով, հայտնեց, թե որտեղ է հորած գինին։ Այդ գիշեր բոլոր զինվորները տեղավորվելով տներում՝ քնեցին ամեն տեսակ պարենի առատության մեջ, անդուլ հսկողության տակ պահելով գեղջավագին ու նրա որդիներին։

(30) Հաջորդ օրը Քսենոփոնը գեղջավագին իր հետ վերցնելով, գնաց Խեյրիսոփոսի մոտ։ Ուր որ գյուղ էր հանդիպում, գնում էր գյուղերում եղողների մոտ և ամենուրեք նրանց գտնում էր կեղտոտության և ուրախության մեջ, և ոչ մի տեղ նրան բաց չթողեցին, մինչև ճաշ չմատուցեցին։ (31) Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս,

մեծ քանակությամբ ցորենի ու գարու հացի հետ։ (32) Ու եթե որևէ մեկը մտերմաբար ցանկանում էր խմել մյուսի կենացը, ապա նրան քարշ էր տալիս կրատերի մոտ և կռանալով այնտեղից պետք է խմեր եղան նման ծծելով։ Եվ գեղջավագին թույլ տվեցին վերցնելու այն, ինչ ցանկանում էր։ Բայց նա ոչինչ չէր վերցնում, այլ երբ որևէ տեղ տեսնում էր իր տոհմակիցներից մեկին ու մեկին, նրան միշտ վերցնում էր իր հետ։ (33) Երբ նկան Խեյրիսոփոսի մոտ, սրանց ևս գտան ինջույքի մեջ, պսակված չոր խոտե պսակներով. նրանց սպասավորություն էին անում արմենների երեխաները բարբարոսական զգեստներ հագած, իսկ երեխաներին նրանք նշաններով ցույց էին տալիս, ինչպես մունջերի, թե ինչ անել։

(34) Խեյրիսոփոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց հետո սկսեցին միասին հարցուփորձել գեղջավագին պարսկերեն խոսող թարգմանի միջոցով, թե այդ ի՞նչ երկիր էր։ Նա ասաց, թե Արմենիան է։ Եվ դարձյալ հարցրին, թե ձիերը ո՞ւմ համար են բուծվում։ Նա ասաց, թե՝ արքայի համար իբրև տուրք[23]։ Ասաց նաև, որ Հարևան երկիրը խալյուբների երկիրն է և ցույց տվեց, թե որն է այնտեղ տանող ճանապարհը։ (35) Այնուհետև Քսենոփոնը վերադարձավ, գեղջավագին ևս վերադարձնելով նրա ընտանիքին, և դեռ առաջներում իր ավար վերցրած պառավ ձին նվիրեց գեղջավագին, որպեսզի սնուցի ու զոհարերի, քանզի լսել էր, որ այն նվիրաբերված էր Հելիոսին[24] և միաժամանակ վախենում էր, որ այն կսատկի, քանզի ճանապարհից խիստ հյուծվել էր։ Ինքը վերցրեց մարուկներից մեկը, և մյուս [զորավարներին ու] վաշտապետներ[ին] ևս տվեց մեկական մարուկ։ (36) Այստեղի ձիերը փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ։ Այստեղ իսկ գեղջավագը սովորեցրեց ձիերի ու գրաստների ոտքերին, ձյան միջով դնալիս, պարկեր փաթաթել. քանզի առանց պարկերի անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ։

Գլուխ VI. (1) Երբ արդեն ութերորդ օրն էր, Քսենոփոնը դյուղապետին որպես ուղեցույց հանձնեց Խեյրիսոփոսին, իսկ նրա տնեցիներին բաց թողեց, բացի նոր չափահաս դարձող որդուց։ Սրան հանձնեց Պլեյսթենես Ամփիպոլսեցու հսկողությանը, որպեսզի եթե գեղջավագը լավ առաջնորդելու լինի, ապա սրան ևս վերցնելով, վերադառնա։ Ու նրա տունը ինչքան կարող էին ավելի շատ մթերքներ տանելով, նրանք պատրաստվեցին ու ճանապարհ

բնկան։ (2) Ձյան միջով նրանց առաջնորդում էր կապերից արձակված գեղջավագը։ Եվ արդեն երրորդ կայանի ճանապարհին էին, երբ Խեյրիսոփոսը զայրացավ նրա վրա այն պատճառով, որ իրենց չի առաջնորդել դեպի գյուղերը։ Իսկ նա ասում էր, թե այս վայրում գյուղեր չկան։ Խեյրիսոփոսը նրան ծեծեց, բայց չկապեց։ (3) Այդ բանից հետո գեղջավագը գիշերը փախավ, լքելով իր որդուն։ Այս դեպքը՝ ուղեցույցի նկատմամբ վատ վերաբերմունքը և անհոգությունը, միակ գժտությունը եղավ ամբողջ ճանապարհի ընթացքում Խեյրիսոփոսի և Քսենոփոնի միջև։ Իսկ Պլեյսթենեսը սիրեց (գեղջավագի) տղային և նրան իր տունը բերելով, վերաբերվում էր ամենայն մտերմությամբ։

(4) Այնուհետև առաջ գնացին յոթ կայան՝ օրական հինգ փարասախ, Փասիս գետի մոտ[25], որի լայնքը մոտ մեկ պլեթրոն էր։ (5) Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարասախ. և լեռնանցքով դեպի դաշտ իջնելիս նրանց դեմ ելան խալյուբները, տոհմերը և փասիանները[26]։

Գլուխ VII. (1) Այստեղից նրանք գնացին դեպի տոհմերը հինգ կայան՝ երեսուն և հինգ փարասախ, և նրանց պարենը սպառվեց. քանզի տոհմերն ապրում էին ամրացված վայրերում, որտեղ և փոխադրել էին իրենց ամբողջ պարենամթերքը։ (2) Երբ (հելլենները) հասան մի վայր, որը քաղաք չէր և որտեղ տներ էլ չկային, բայց ուր հավաքվել էին այրեր և կանայք և շատ անասուններ, Խեյրիսոփոսը առանց սպասելու, իսկույն հարձակվեց նրանց վրա. և երբ առաջին ջոկատը հոգնեց, մյուսը անցավ հարձակման, հետո մեկ ուրիշը. քանզի անհնար էր ի մի հավաքվելով այն պաշարել, որովհետև շուրջանակի գահավեժ վայրում էր այն գտնվում։

(3) Երբ Քսենոփոնը վերջապահների և պելտաստների ու հոպլիտների հետ տեղ հասավ, ապա Խեյրիսոփոսը ասաց. «Դու լավ ժամանակին եկար. այս վայրը պետք է գրավել. քանզի զորքը պարեն չի ունենա, եթե մենք այս վայրը չգրավենք»։ (4) Այնժամ նրանք խորհրդակցեցին. և Քսենոփոնի այն հարցին, թե ի՞նչն է խանգարում խուժելու այնտեղ, Խեյրիսոփոսը պատասխանեց. «Միայն այս ճանապարհն է, որը դու տեսնում ես, տանում այնտեղ. ու եթե որևէ մեկը փորձի այստեղով անցնել, ապա անցումի վրա բարձրացող ժայռից քարեր են գլորում ցած։ Ահա վիճակը

նրա, ով հարվածի հանդիպի»: Այս ասելով նա միաժամանակ ցույց տվեց սրունքները և կողերը փշրված զինվորների: (5) «Իսկ եթե ապառեն եղած քարերը,— ասաց Քսենոփոնը,— ապա մեր անցումը արգելող որևէ բան մնո՞ւմ է դեռ: Չէ՞ որ մեր դիմաց փոքրաթիվ մարդիկ են, և նրանցից սոսկ երկուսը կամ երեքն են զինված: (6) Այն տարածությունը, որը մենք պետք է անցնենք քարկոծման ենթարկվելով, ինչպես ինքդ էլ տեսնում ես, մեկ և կես պլեթրոն է. դրանից մոտ մեկ պլեթրոնը ծածկված է իրարից հեռու աճած բարձր սոճիներով, որոնց ետև կանգնած մարդիկ ի՞նչ վնաս կարող են կրել շպրտված կամ գլորված քարերից: Մնում է կես պլեթրոն, որը պետք է անցնել երբ քարերը դադարեն գլորվելուց»: (7) «Բանն էլ այն է,— պատասխանեց Խեյրիսոփոսը,— որ երբ շարժվում ենք դեպի ծառերը, իսկույն մեծ քանակությամբ քարեր են թափվում»: «Այդ էլ մեզ պետք է,— ասաց Քսենոփոնը,— այդպիսով նրանք ավելի շուտ կսպառեն քարերը: Ուրեմն գնանք այնտեղ, որտեղից քիչ տարածություն է մնում մեզ վազել դեպի առաջ, եթե այդ հաջողվի, և որտեղից հեշտ է նահանջել, եթե դրա կարիքն զգացվի»:

(8) Այնժամ առաջ անցան Խեյրիսոփոսը և Քսենոփոնը, նաև վաշտապետ Կալլիմաքոս Պառասիացին. քանզի այդ օրը նրան էր հանձնված վերջապահ վաշտապետների հրամանատարությունը. իսկ մյուս վաշտապետները մնում էին ապահով վայրում: Այնուհետև ծառերի տակ վազեցին մոտ յոթանասուն մարդ, ոչ բոլորը միասին, այլ մեկ առ մեկ, յուրաքանչյուրը պաշտպանվելով ինչպես կարող էր: (9) Իսկ Ագասիաս Ստյումփալացին և Արիստոնիմոս Մեթիդրիացին, որոնք նույնպես վերջապահների վաշտապետներից էին, և ուրիշները ևս դիրքավորվեցին ծառերից հեռու. քանզի ծառերի տակ կարող էր ապահով կանգնել ոչ ավելի քան մեկ վաշտ: (10) Այստեղ էլ Կալլիմաքոսը մի խորամանկություն արեց. նա առաջ էր վազում երկու կամ երեք քայլ այն ծառից, որի տակ ապաստանել էր, իսկ երբ քարեր էին թափում, նորից բարեհաջող ետ էր վերադառնում: Եվ նրա ամեն մի արտելքին ցած էր թափվում ավելի քան տասը սայլ քար: (11) Ագասիասը տեսնելով, թե ինչ էր անում Կալլիմաքոսը ամբողջ զորքի աչքերի առաջ և վախենալով, որ չլինի թե առաջինը նա ներխուժի ամրությունից ներս, առանց զգուշացնելու իր մոտ եղող Արիստոնիմոսին, ոչ իսկ

Եվրիլոքոս Լուսիացուն, որոնք իր ընկերներն էին, ոչ էլ որևէ մեկ ուրիշին, ինքը վազեց ու բոլորից առաջ անցավ: (12) Կալլիմաքոսը տեսնելով նրան իր մոտով առաջ վազելիս, բռնեց նրա վահանը: Այնժամ նրանից առաջ անցավ Արիստոնիմոս Մեթիդրիացին և նրանից հետո Եվրիլոքոս Լուսիացին. քանզի նրանք բոլորը մրցում էին իրար հետ և աշխատում քաջությամբ գերազանցել մեկը մյուսին. այսպիսով նրանք գրավեցին ամրությունը: Քանզի մի անգամ որ ներխուժեցին այնտեղ, այլևս ոչ մի քար վերևից չգլորվեց: (13) Այնժամ ահավոր մի տեսարան բացվեց: Կանայք իրենց երեխաներին ցած էին նետում և նրանց ետևից իրենք ևս ցած գլորվում. նույնպես էին վարվում նաև տղամարդիկ: Այստեղ էլ վաշտապետ Էնեաս Ստյումփալացին տեսնելով մեկին, որը լավ զգեստներ էր հագած և վազում էր հավանաբար իրեն ցած նետելու, բռնեց նրան, որ թույլ չտա: (14) Բայց մարդն իր հետ քաշեց նրան և երկուսը միասին գահավիժելով ժայռերից, մահացան: Այստեղ գերի վերցվեց շատ քիչ մարդ, բայց մեծ թվով եղներ, էշեր և ոչխարներ (վերցվեցին):

Նկար 9. Արծաթյա պտյակ (սիտոն). Երզնկա (մ. թ. ա. V դար)

(15) Այստեղից նրանք խալյուբների երկրի միջով գնացին յոթ կայան՝ հիսուն փարսախ: Սրանք, առավել քան բոլորը, ում երկրից անցել էին հելլենները, քաջ էին և ձեռնամարտի էին բռնվում: Նրանք մինչև փորը հասնող վուշե զրահներ ունեին. և զրահի եզրաթևիկների փոխարեն՝ խիտ հյուսված քուղեր: (16) Նրանք նաև ունեին սոնապաններ և սաղավարտներ և գոտուց կախած դաշույն, լակեդեմոնական կեռ դանակի[27] մեծության, որով սպա-

նում էին ում որ հաղթել կարողանային, և կտրելով գլուխները, վերցնում էին ու գնում. և նրանք երդում էին ու պարում, երբ քշենամու տեսադաշտում էին գտնվում: Ունեին նաև մեկ ծայրով նիզակ՝ հինգ կանգուն երկարությամբ: (17) Սրանք մնում էին քաղաքավայրերում. և երբ հելլենները անցնում էին այդ տեղերով, նրանք հետևում էին անընդհատ կռվելով: Բնակվում էին ամրացված վայրերում, որտեղ հավաքել էին նաև իրենց մթերքները. այնպես, որ հելլենները այստեղից ոչինչ չկարողացան վերցնել, այլ անվում էին այն անասուններով, որ վերցրել էին տարոններից: (18) Նրանց մոտից հելլենները հասան Հարպասոս գետը, որի լայնքը չորս պլեթրոն էր: Այստեղից առաջ ընթացան սկյութենների[28] երկրի միջով չորս կայան՝ քսան փարասախ՝ հարթավայր տեղերով դնալի գյուղերը, որոնցում մնացին երեք օր և պարեներ վորվեցին:

1. Խոսքը նահանջող հունական բանակի զորավարների մասին է:

2. Քսենոփոնի նկարագրած կարդուխների երկիրը համապատասխանում է հին հայ պատմիչների մոտ հիշատակված «Կորդուք»-ին կամ «Կորդուաց» աշխարհին:

3. Օրոնտաս— Հայաստանի սատրապ Օրոնտաս-Երվանդ II-ն է (մոտ 404—360): Նա Պարսից թագավոր Արտաքսերքսես Մնեմոնի մերձավորներից էր. ամուսնացել էր վերջինիս դստեր՝ Հոդոգունեի հետ: Մասնակցել է Կյուրոս Կրտսերի խռովության ճնշմանը:

4. Կենտրիտես— միջնադարյան հայկական սկզբնաղբյուրների Ջերմ գետն է, այսինքն՝ Արևելյան Տիգրիսը (Բոհտան-սու):

5. Երկարության չափ, որը հավասար է մոտավորապես 30 մետրի:

6. Խոսքը Արտաքսերքսես II Մնեմոնի մասին է:

7. Տիսսաֆեռնեսը Դարեհ I Վշտասպյանի մերձավոր զինակից Հյուդարնեսի (Վիդարնա) որդին էր: Հայաստանի Երվանդունիներն, ըստ երևույթին, արյունակցական կապ են ունեցել Հյուդարնեսի հետ, որի մասին վկայում է Ստրաբոնը («Աշխարհագրություն», XI, 14, 15):

8. Աբառնխաս— Երվանդ II-ի զորավարներից մեկը:

9. Իրանական ծագում ունեցող ցեղախմբեր, որոնք բնակվում էին Վասպուրականի հարավ-արևելքում: Հետագայում ձուլվելով հայերի հետ, կազմեցին Մարդուցայք և Մարդաղի գավառները: Այստեղից էլ Մարդպետական նախարարական տունն ու մարդպետության գործակալությունը:

10. Խալդայներ— Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան ծայրամասերում բնակվող ցեղախումբ, որից հետագայում առաջացավ պատմական Հայաստանի խաղտիք երկրամասը: Պատմագիտության մեջ կատարված փորձերը՝ խալդայներին նույնացնելու ուրարտացիների հետ, այժմ վերջնականապես մերժվում են:

11. Երկարության չափ, որը հավասար է մոտավորապես 5,5 կիլոմետրի:

12. Խոսքը Հայաստանի սատրապ Երվանդ II-ի մասին է:

13. Տելերուաս— հայկական սկզբնաղբյուրների Մեղրագետն է՝ Արաքսի ձախակողմյան վտակը (Կարա-սու):

14. Տիրիբազոսը Հայկական սատրապության արևմտյան երկրամասի հյուսպարքոս-կառավարիչն էր, Օրոնտաս-Երվանդի սատրապաբ:

15. Խոսքը «Անաբասիս»-ի հեղինակ Քսենոփոն Աթենացու մասին է:

16. Առասպելական կին ռազմիկներ, որոնց հայրենիքը հույները համարում էին Կովկասը:

17. Խալյուբներ— Սև ծովի հարավարևելյան ափերին և Բարձր Հայքի ու Փոքր Հայքի լեռներում բնակվող ցեղեր: Հունական սկզբնաղբյուրների համապատասխան տեղեկությունների քննությունը ուսումնասիրողներին բերել է այն եզրակացության, որ խալդայների և խալյուբների անվան տակ պետք է հասկանալ միևնույն ցեղախումբը (տե՛ս 172-րդ էջի № 10 ծան.):

18. Տաոխներ— խուռիական ծագում ունեցող լեռնային ցեղեր, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Հարպասոս (Ճորոխ) գետի ակունքների և միջին հոսանքի շրջանում: Սրանց երկրամասը ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Դայաենի և Դիաուխի անուններով: Տաոխների երկրի անունից ծագել է Մեծ Հայքի Տայք աշխարհի անունը:

19. Պելտաստներ— բերթև կլոր վահան (պելտե) կրող զինվորներ:

20. Հոպլիտներ— զորաբանակ, որտեղ ծառայողները կրում էին դաշույն, սուր և վահան:

21. Խեյրիսոփոսը նահանջող հունական զորաբանակում գտնվող լակեդեմոնական ջոկատի հրամանատարն էր:

22. Հատուկ կավե անոթներ, որոնց մեջ հույները գինին խառնում էին ջրի հետ: Տվյալ դեպքում կրատերների մեջ ոչ թե գինի էր, այլ դարեջուր:

23. Ըստ Ստրաբոնի («Աշխարհագրություն», XI, 14, 9), Հայաստանը որպես տուրք Պարսկաստանին տալիս էր տարեկան 20.000 մարուկ:

24. Հելիոս— հին հունական դիցարանում արևի աստված:

25. Քսենոփոնը Փասիս է անվանում Արաքս գետը, կամ ավելի կոնկրետ՝ Արաքսի վերին հոսանքը:

26. Արաքս գետի վերին հոսանքի շուրջը բնակվող ցեղեր: Փասիանների անունից ծագել է պատմական Հայաստանի Բասյան (Բասեն) գավառի անունը:

27. Մանգաղաձև փոքր դանակ:

28. Խոսքը Տրապիզոնից հարավ գտնվող լեռնային վայրերում բնակվող սկյութական ցեղերի մասին է: Սրանք հետնորդներն էին մ. թ. ա. VIII դարի վերջերին Հյուսիսային Կովկասից Փոքր Ասիա ներխուժած սկյութական ցեղերի:

ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (Մ. Թ. Ա. V Դ. ՎԵՐՋ) ԸՍՏ ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑՈՒ

Դիոդորոս Սիկիլիացու «Գրադարանում» պահպանվել է նաև տասը հազար հույների ճշանավոր արշավանքի ու նահանջի բավական հանգամանալից նկարագրությունը: Ենթադրվում է, որ Դիոդորոսը օգտվել է Բյուրի ստրատեգոսներից մեկի՝ Սոփայնետոս Ստյումփալացու մեզ չհասած այն գործից, որտեղ, անկախ Քսենոփոնից, Սոփայնետոսը պատմում է Բյուրի ողիսականը (տե՛ս Diodori Bibliotheca Historica, գիրք XIV, գլուխ XXVII, 4—8, XXVIII, 1—5, XXIX, 1—6, XXX, 1—2):

ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գիրք XIV

Գլուխ XXVII, 4—8. *Հելլենները յոթ օրվա ընթացքում անցան կարդուխների լեռները*[1], *բաղում չարիքների ենթարկվելով տեղաբնիկների կողմից, որոնք ռազմասեր էին և վայրերին քաջածանոթ: Սրանք (պարսից) արքային թշնամի էին ու ազատ և զբաղվում էին ռազմական արվեստով. նրանք առանձնապես վարժ էին պարսատիկներով խոշորագույն քարեր արձակելու և հույժ խոշոր նետեր օգտագործելու մեջ, որոնցով էլ նրանք հարմար դիրքերից հելլեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանեցին և ոչ քչերին էլ լուրջ վնասներ պատճառեցին: Նրանց նետերը երկու կանգունից ավելի երկար էին ու ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի զրահ չէր դիմանում դրանց հարվածին: Կարդուխները այնպիսի խոշոր նետեր էին օգտագործում, որ հելլենները նրանց արձակած նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում: Արդ, մեծ դժվարությամբ ճեղքել-անցնելով հիշյալ երկիրը, նրանք հասան Կենտրիտես*[2] *գետը և այն անցնելով մտան Արմենիա*[3]*: Այս երկրի սատրապն էր Տիրիբազոսը*[4]*, որի հետ դաշինք կնքեցին և երկրի միջով անցան իբրև բարեկամներ:*

Գլուխ XXVIII, 1—5. *Արմենիայի լեռների միջով ուղևորվելիս, նրանք առատ ձյան պատահեցին և բոլորը կործանման վտանգի տակ գտնվեցին: Քանզի սկզբում, երբ քամի բարձրացավ, երկնքից սկսեց բարակ ձյուն տեղալ այնպես, որ ճանապարհ գնացողներին չէր խանգարում առաջ ընթանալիս. բայց հետո, երբ քամին աստիճանաբար ուժեղացավ, ձյունն այնպես էր տեղում և երկիրը ծածկում, որ ոչ ճանապարհն էր երևում, ոչ էլ հնարավոր էր տեղանքի բնույթը տեսնել: Այդ իսկ պատճառով հուսահատությունը և սարսափը համակեց զինվորներին. քանզի կործանումից վախենալով, չէին կամենում ետ վերադառնալ, իսկ ձյան առատության պատճառով չէին կարողանում առաջ գնալ: Քանզի փոթորիկը հնարքհետե սաստկանում էր, ուժեղ բուք բարձրացավ և առատ ձյուն տեղաց, որը թափով խփում էր նրանց դեմքին. ուստի ամբողջ զորքը ստիպված եղավ կանգ առնել: Քանզի նրանցից յուրաքանչյուրը, անկարող լինելով դիմանալ ուղևորության այդ տանջանքներին, ստիպված էր լինում մնալ այնտեղ, ուր պատահեց: Ունենալով անհրաժեշտ պիտույք, նրանք այդ օրը և ամբողջ գիշերը մնացին բաց երկնքի տակ՝ շատ զրկանքներ կրելով. անդադար տեղացող առատ ձյան պատճառով նրանց բոլոր զենքերը ծածկվեցին (ձյունով), իսկ իրենք ամբողջովին սառեցին ցուրտ եղանակից: Այս ծանր դժվարությունների պատճառով նրանք ամբողջ գիշերը անքուն մնացին. և ոմանք կրակ վառելով, սկսեցին դրանից օգտվել. ոմանք էլ, որոնց մարմիններն ամբողջապես ցրտահարված էին, կորցրել էին օգնություն ստանալու որևէ հույս, քանի որ նրանց համարյա բոլոր վերջավորությունները մահացման էին ենթարկվում: Երբ գիշերն անցավ, պարզվեց, որ բեռնատար անասունների մեծ մասն արդեն սատկել է և շատ մարդիկ մահացել են, իսկ ոչ քչերն էլ, թեև գիտակցությունը չէին կորցրել, բայց սառած լինելու պատճառով, անկարող էին շարժվել, ոմանց էլ աչքերը կուրացել էին ցրտից և ձյան արտացոլքից: Եվ բոլորն էլ կատարելապես կոչնչանային, եթե կարճ ճանապարհ անցնելուց հետո չպատահեին պարենաշատ գյուղերի: Այս գյուղերում բեռնատար անասունների մուտքը գետնափոր էր, իսկ մարդիկ իջնում էին աստիճաններով. բնակարաններում անասունները սնվում էին խոտով, իսկ մարդիկ վայելում էին կյանքի համար անհրաժեշտ բարիքների առատություն:*

Գլուխ XXIX, 1—6. Այս գյուղերում ութ օր մնալուց հետո, հելլենները ուղևորվեցին դեպի Փասիս գետը[5]։ Այստեղ չորս օր մնալուց հետո, իրենց ճանապարհը շարունակեցին խաոյների[6] և փասիանների[7] երկրի միջով։ Երբ տեղաբնիկները հարձակվեցին հելլենների վրա, սրանք կռվում հաղթելով, նրանցից շատերին սպանեցին և, գրավելով տեղարնիկների տները, որոնք լեցուն էին բարիքներով, այնտեղ մնացին տասնհինգ օր։ Այստեղից դուրս գալով, յոթ օրվա ընթացքում անցան խալդայների[8] կոչված ցեղերի երկրով և հասան Հարպագոս[9] գետը, որի լայնությունը 4 պլեթրոն էր[10]։ Այստեղից էլ սկյութների[11] երկրի միջով առաջանալիս նրանց ճանապարհն անցնում էր դաշտով, որտեղ նրանք երեք օր հանգստացան ամեն տեսակ բարիքների առատության մեջ։ Այնուհետև ճանապարհ ընկնելով, չորրորդ օրը հասան մի խոշոր քաղաք, անունը Գյումնասիա[12]։ Այստեղ այս վայրերի կառավարիչը դաշն կնքեց նրանց հետ և ուղեցույցներ տրամադրեց, որոնք պետք է հելլեններին ծով առաջնորդեին։ Տասնհինգ օրում հասնելով Քենիոն[13] լեռը, առջևից ընթացողները տեսան ծովը, մեծապես հրճվեցին և այնպիսի աղաղակ բարձրացրին, որ շարասյան վերջում գտնվողները կարծելով, թե թշնամիներ են հարձակվել, զենքի դիմեցին։ Բայց երբ բոլորը բարձրացան այն վայրը, որտեղից կարելի էր ծովը տեսնել, թևերը պարզելով աստվածներին, շնորհակալություն էին հայտնում, համոզված, որ արդեն փրկված են։ ... Իրենց առաջնորդած ուղեցույցին նրանք պարգևեցին արծաթե բաժակ և պարսկական համազգեստ. սա, ցույց տալով նրանց դեպի մակրոնները տանող ճանապարհը, ետ վերադարձավ։ Արդ, հելլենները մտնելով մակրոնների երկիրը, նրանց հետ դաշն կնքեցին և իբրև երաշխիք նրանցից ստացան բարբարոսական մի նիզակ, իսկ փոխարենը տվեցին հելլենական (նիզակ). բարբարոսները ասացին, թե իրենց նախնիների ավանդության համաձայն, այսպիսի փոխանակումը հավատարմության ամենահաստատուն երաշխիքն է։ Հելլենները, անցնելով սրանց սահմաններից, հասան կոլխերի երկիրը։

Գլուխ XXX, 1—2. Այդ վայրերում նրանք գտան նաև մեծ քանակությամբ մեղվափեթակներ, որոնցից ստացվում էր թանկագին խորիսխ։ Բայց դրանց ճաշակողները բռնվում էին ինչ-որ տարօրինակ ախտով. քանզի այդ մեղրից ուտողները կորցնում

էին իրենց բանականությունը, և ընկնելով գետին, նմանվում էին մեղյալների։ Ու քանի որ դրա քաղցր համի պատճառով շատերն էին դրանից կերել, ապա այնքան մեծ բազմություն էր գետին ընկել, ասես պատերազմում ջախջախվել էին։ ... Սակայն հաջորդ օրը, գրեթե նույն ժամին բոլորն ուշքի էին գալիս և, աստիճանաբար վերադտնելով իրենց դատողությունը, վեր կացան, նրանց մարմնական վիճակն այնպիսին էր, ասես քունավորումից էին փրկվել։

1. Այսինքն՝ Կորդվաց լեռները։

2. Հայկական սկզբնաղբյուրների Ջերմ գետն է, Արևելյան Տիգրիսը, այժմ՝ Բոհտան-սու։

3. Քսենոփոնը գրում է, որ հելլենները մտան Արևմտյան Արմենիա (Անաբասիս, գիրք IV, գլ. IV, 4)։

4. Ըստ Քսենոփոնի, Արմենիայի սատրապն էր Օրոնտաս-Երվանդը (Անաբասիս, գիրք III, գլ. V, 17), իսկ Տիրիբազոսը սոսկ Արևմտյան Արմենիայի հյուպարքոսն էր, այսինքն՝ Օրոնտասի ստորադրյալը։

5. Փասիս անվան տակ պետք է հասկանալ Արաքս գետի վերին հոսանքը։

6. Բնագրում Χάοι — բառացիորեն՝ խա-եր։ Ուսումնասիրողները, ընդհանրապես, այս անունը համարել են Քսենոփոնի մոտ հիշատակված տոհմների (հունարեն՝ τὰ ὀνόματα) ցեղանվան աղավաղված ձևը։ Բացառված չէ, սակայն, որ այս դեպքում մենք գործ ունենք հայերի «հայ-խայ» ինքնանվան հետ։

7. Տե՛ս 173-րդ էջի № 26 ծանոթագրությունը։

8. Այս խալդայներին չպետք է շփոթել Հարավային Միջագետքի նույնանուն ցեղի հետ։ Սրանք բնակվում էին Սև ծովի հարավարևելյան ափից ոչ հեռու։

9. Քսենոփոնի մոտ (Անաբասիս, գիրք IV, գլ. VII, 18)՝ Հարպասոս։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ սա պետք է լինի Ճորոխի միջին հոսանքը։

10. Այսինքն՝ շուրջ 120 մետր, որն, անշուշտ, չափազանցություն է։

11. Տե՛ս 173-րդ էջի № 28 ծանոթագրությունը։

12. Քսենոփոնի մոտ (Անաբասիս, գիրք IV, գլ. VII, 19)՝ Գյումնիաս։

13. Քսենոփոնի մոտ (Անաբասիս, գիրք IV, գլ. VII, 21)՝ Թեքես։ Այս լեռան տեղադրությունը չի որոշված։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ ԸՍՏ ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑՈՒ

ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐՔԴԱՐԱՆ

Գիրք XVII, գլ. LXIV

6. Ալեքսանդրը[1] Միթրենեսին[2], որն իրեն հանձնել էր Սարդեսի[3] միջնարերդը, տվեց Արմենիան[4]։

Գիրք XIX, գլ. XXIII

1—3. Քանի որ բոլորին ըստ արժանվույն ծառայություն էր մատուցվում, բազմությանը հաճելի թվաց Պևկեստեսի[5] հոգատարությունը և բացահայտ երևաց, որ նա մեծ հաջողություն ունեցավ զորքի համակրանքը շահելու ուղղությամբ։ Բայց Եվմենեսը[6], այս տեսնելով և մտածելով, որ Պևկեստեսը այդպես է վարվում բազմության հետ, ձգտելով ընդհանուր հրամանատարության, կեղծ նամակներ հորինեց, որոնցով զինվորներին համարձակություն ներշնչեց պատերազմների ելքի նկատմամբ և, նվաստացնելով Պևկեստեսի հեղինակությունն ու փայլը, բարձրացրեց իր անձնավորությունը և բազմության աչքին մեծացրեց իր բարեհաջող հույսերի ակնկալությունները։ Գրվածքների իմաստն այն էր, որ Օլիմպիադան[7] միանալով Ալեքսանդրի որդու[8] հետ, Կասսանդրոսի[9] ապանությունից հետո, դարձել էր Մակեդոնիայի թագավորության տերը և որ Պոլյսպերքոնը[10] իր հետ ունենալով թագավորական զորքերի լավագույն մասը և փղերին, անցել էր Ասիա՝ Անտիգոնոսի[11] դեմ կռվելու և արդեն մոտենում էր Կապադովկիային։

Նամակը, որ գրված էր ասորերեն գրերով[12], ուղարկված էր Օրոնտեսի[13] կողմից, որը տիրում էր Արմենիայի սատրապությանը և Պևկեստեսի բարեկամն էր։ Քանի որ նամակին հավատք ընծայվեց, այդ սատրապների միջև նախկինում գոյություն ունեցած մտերմության պատճառով, Եվմենեսը կարգադրեց, որ այդ նամակը փոխանցելով ցույց տան հրամանատարներին և մյուս զինվորներից շատերին. դրանից հետո համայն զորաբանակի մտադրությունը փոխվեց և բոլորն իրենց ակնկալությունները կապեցին Եվմենեսի հույսերի հետ, հավատալով, որ նա թագավորների միջոցով կկարողանա բարձրացնել ում ցանկանա և պատժել բոլոր իրեն վնասողներին։

Գիրք XXXI

17a. Հայաստանի թագավոր Արտաքսիասը[14] ապստամբելով Անտիոքոսից[15], իր անունով քաղաք հիմնեց[16] և ժողովեց հզոր բանակ։ Իսկ Անտիոքոսը[17], որն այդ տարիներին հզոր էր, ինչպես ոչ ոք մյուս թագավորներից, արշավեց նրա վրա և, հաղթելով, ստիպեց նրան հնազանդվել։

Գիրք XXXI, գլ. XIX

4—5. Այդ տարիներին Ալեքսանդր Մակեդոնացին պարտության մատնեց պարսիկներին, որից հետո վախճանվեց։ Ապա Պերդիկկասը[18], որն այդ ժամանակ ամբողջ տերության առաջնորդն էր, Եվմենեսին ուղարկեց որպես Կապադովկիայի զորապետ։ Արիարաթեսը[19] պարտվելով ճակատամարտում՝ ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրները ընկան մակեդոնացիների տիրապետության տակ։ Իսկ Արիարաթեսը[20] նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քշերի հետ ապաստանում է Հայաստանում։ Ոչ շատ ժամանակ անց, երբ արդեն Եվմենեսն ու Պերդիկկասը և նրանց համախոհները մահացել էին[21], իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսը[22] զբաղված էին այլ գործերով, Արիարաթեսը հայերի թագավոր Արդոատեսից[23] զորք ստանալով, ապստանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը։

Գիրք XXXI

22. Այն բանից հետո, երբ Արիարաթեսը[24] Միթրոբուզանեսին[25] վերականգնեց հայրենի տիրույթյան վրա, Արտաքսիասը՝ Հայաստանի թագավորը, չհրաժարվելով իշխանության նկատմամբ իր ունեցած ընչաքաղցությունից, դեսպաններ ուղարկեց Արիարաթեսի մոտ, առաջարկելով նրան համաձայնել իր հետ և, յուրաքանչյուրն իր մոտ եղած երիտասարդին[26] մահվան ենթարկելով, իրար միջև բաժանել Սոփենեն[27]: Իսկ Արիարաթեսը, որին խիստ օտար էր այդպիսի անազնվությունը, հանդիմանեց դեսպաններին և (նամակ) գրեց Արտաքսիասին, առաջարկելով նրան հեռու մնալ նման գործերից: Հետևաբար, Արիարաթեսն ահա այս գործից հետո, իր անձի շուրջն եղած համբավը մեծ չափով բարձրացրեց: Իսկ Միթրոբուզանեսը, իրեն իշխանության վրա վերականգնողի հանդեպ հիացության արժանի հավատարմության և ազնվության շնորհիվ՝ տիրացավ իր հայրենի իշխանության:

Գիրք XXXI

27a. Երբ հայտնի դարձավ, թե հռոմեացիները թշնամաբար տրամադրված են Դեմետրիոսի[28] հանդեպ, ապա նրան արհամարհեցին ոչ միայն մյուս թագավորները, այլև նույնիսկ նրան ենթակա սատրապներից ոմանք, որոնցից ամենահայտնին Տիմարքոսն էր[29]: Սա ծագումով միլետացի էր և նախկինում թագավորած Անտիոքոսի[30] ընկերը, որը բազմիցս Հռոմ էր ուղարկվել իբրև դեսպան: ... Սա շատ մեղադրանքներ հարուցելով Դեմետրիոսի դեմ, համոզեց սենատին նրա դեմ ընդունել այսպիսի որոշում. «Քանի որ Տիմարքոսը[31]..., ապա նա թող լինի նրանց թագավորը»: Տիմարքոսը, ոգևորված այս որոշումից, Մեդիայում կազմակերպեց նշանակալից բանակ. միաժամանակ Դեմետրիոսի դեմ դաշինք հաստատեց Հայաստանի թագավոր Արտաքսիասի հետ: Այնուհետև, ահաբեկելով սահմանակից ժողովուրդներին իր զորքերի հզորությամբ և նրանցից շատերին հնազանդեցնելով իրեն, արշավեց Զևգմայի[32] վրա և, վերջապես, դարձավ թագավորության մեջ հզոր:

Նկար 10. Մոփքի Հայոց Արշամ (240—220), Արդիսարես (մ. թ. ա. II դարի վերջ) և Քսերքսես (220—201) թագավորների դրամները

1. Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու մասին է։

2. Սա Լիդիայի նախկին պարսկական կառավարիչն էր։

3. Սարդեսը լիդիական սատրապության մայրաքաղաքն էր, որը մ. թ. ա. 334 թ. Միթրեննեսը դավաճանաբար հանձնեց Ալեքսանդրին։ Ներկայիս Սարդյուղն է Թուրքիայում։

4. Արմեննիան Միթրեննեսին հանձնելը կրում էր ձևական բնույթ, քանի որ այն երբեք էլ չնվաճվեց Ալեքսանդրի կողմից, ուստի և Միթրեննեսն էլ երբեք չտիրեց Արմեննիայում։

5. Պևկեստեսը Ալեքսանդրի արքայական գնդի նախկին անդամներից էր, որին նա կարգել էր Պերսիս (Պարսք) երկրի սատրապ։ Այդ պաշտոնում նա մընաց նաև Մակեդոնացու մահից հետո։

6. Սա Ալեքսանդր Մակեդոնացու անձնական քարտուղար Եվմենես Կարդիացին էր, որը Բաբելոնի 323 թ. խորհրդակցություններում՝ Ալեքսանդրի կայսրության առաջին բաժանման արարողության ժամանակ, ստացավ Կապադովկիան և Պափլագոնիան։

7. Օլիմպիադան Ալեքսանդր Մակեդոնացու մայրն էր։

8. Խոսքը Ալեքսանդր Մակեդոնացու մահից անմիջապես հետո ծնված նրա և բակտրիացի մեծատոհմիկ Օքսիարտեսի դուստր Ռոքսանայի որդու մասին է, որին Մակեդոնացու զինակիցները տվեցին Ալեքսանդր անունը և հռչակեցին թագավոր՝ Ալեքսանդր IV անունով (323—311)։

9. Սա Ալեքսանդր Մակեդոնացու զինակից, Մակեդոնիայի կառավարիչ Անտիպատրոսի որդին էր, որը հոր մահից հետո (319 թ.) զավթեց Մակեդոնիան և 316 թ. սպանել տվեց Օլիմպիադային, իսկ 311 թ. գլխատել տվեց Ռոքսանային ու Ալեքսանդր IV-ին։ Այսպիսով, Դիոդորոսը շփոթում է, այստեղ խոսք պիտի լիներ ոչ թե Կասսանդրոսի սպանության մասին, այլ Ալեքսանդր Մակեդոնացու խորթ եղբայր՝ Փիլիպպոս Առիդեյոսի, որը Օլիմպիադայի կարգադրությամբ մահապատժի էր ենթարկվել 317 թվականին։

10. Պոլյուպերքոնը Փիլիպպոս II-ի և Ալեքսանդր Մակեդոնացու հավատարիմ զորավարներից էր։ Նա պայքարում էր Ալեքսանդրի տերության միասնության պահպանման համար։ Անտիպատրոսի կտակի համաձայն, նրա մահից հետո՝ դարձավ Մակեդոնիայի կառավարիչը և Ալեքսանդր IV-ի խնամակալը։

11. Խոսքը Ալեքսանդրի զորավար Անտիգոնոս Միականու (384—301) մասին է, դիադոխներից («ժառանգորդներից») մեկը, որը 323 թ. Բաբելոնի խորհրդակցություններում ստացավ Մեծ Փռյուգիան, Պամփյուլիան և Լիկիան։

12. Ըստ երևույթին, խոսքը արամեական գրերի մասին է։

13. Օրոնտես (Երվանդ)— Հայաստանի սատրապն էր, որը 331 թ. Գավգամելայի ճակատամարտի ժամանակ գլխավորում էր հայկական այրուձին։ Աքեմենյան տերության կործանումից հետո նա հանդես եկավ որպես Հայաստանի անկախ կառավարիչ ու թագավոր։ Սա Երվանդ III-ն է (331—300)։

14. Խոսքը Մեծ Հայքի թագավոր Արտաշես I Բարիի (189—160) մասին է։

15. Սա Սելևկյան տերության թագավոր Անտիոքոս III Մեծն է (223—187)։

16. Այսինքն՝ Արտաշատ մայրաքաղաքը, որ կառուցվել է մ. թ. ա. II դարի 70-ական թվականներին։

17. Այստեղ Դիոդորոսը նկատի ունի Սելևկյան Անտիոքոս IV Էպիփանես թագավորին (175—164)։

18. Պերդիկկասը Ալեքսանդրի մերձավորագույն զինակիցներից մեկն էր, որը Նրա մահից հետո դարձավ տերության խնամակալը։

19. Խոսքը Կապադովկիայի իշխող Արիարաթես I-ի մասին է։

20. Սա Արիարաթես II-ն էր։

21. Պերդիկկասը մահացել է 321 թ., իսկ Եվմենեսը՝ 316։

22. Խոսքը Ալեքսանդրի մերձավորագույն զինակից, Սելևկյան պետության հիմնադիր Սելևկոս I Նիկատորի (312—281) մասին է։

23. Հայոց թագավորի անվան այս Արդոատես ձևը վեհերի առիթ է տվել։ Հայտնի չէ նաև, թե սա որտեղ է թագավորել՝ Մեծ Հայքում, թե՞ Փոքր Հայքում։ Որոշ ուսումնասիրողներ (Ի. Դրոյզեն, Յ. Մարկվարտ, Հ. Մանանդյան և ուրիշներ) կարծում են, որ Արդոատեսը Օրոնտեսի աղճատված ձևն է և ըստ այդմ էլ նրանք կարծում են, որ Արդոատեսը Օրոնտես-Երվանդը, որը 331—330 թթ. իրեն հայտարարեց Հայաստանի թագավոր։

24. Սա Կապադովկիայի Արիարաթես V թագավորն է (163—130)։

25. Միթրոբուզանես (Մեհրուժան)— Սոփքի Զարեհ թագավորի որդին էր, որը 163 թ. Արիարաթես V-ի կողմից հռչակվեց Սոփքի թագավոր։

26. Ակնարկությունը Սոփքի մահացած թագավոր Զարեհի երկու որդիների մասին է, որոնցից ավագը՝ Մեհրուժանը ապաստանել էր Կապադովկիայում՝ Արիարաթես V-ի մոտ, իսկ կրտսերը, որի անունը մեզ հայտնի չէ՝ Հայոց Արտաշես I թագավորի մոտ։

27. Սոփաց աշխարհի հունական անվանման ձևն է։

28. Սա Սելևկյան Դեմետրիոս I Սոտեր թագավորն է (162—150)։

29. Խոսքը Բաբելոնիայի և Մեդիայի սելևկյան սատրապ Տիմարքոսի մասին է, որը Անտիոքոս V Եվպատորի մահից հետո, ապստամբություն բարձրացրեց Դեմետրիոս I-ի դեմ և իրեն անկախ թագավոր հռչակեց Մեդիայում (162—160)։

30. Այստեղ ակնարկվում է Սելևկյան թագավոր Անտիոքոս IV Էպիփանեսը։

31. Այստեղ Դիոդորոսի ձեռագիրը թերի է։

32. Զևմա գետանցը գտնվում էր Վերին Եփրատի աջ ափին, Սամոսատ քաղաքի մոտ։

ԱՐՏԱՇԵՍ I–Ի ՊԱՅՔԱՐԸ ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ԴԵՄ ԵՎ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ԽԳ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍՄԲԱՏԸ ՊԱՐՍԻՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ՕԳՆԱԿԱՆ ԴԱՐՁՆԵԼՈՎ ՀՆԴՐՈՒՄ Է ԱՐՏԱՇԵՍԻՆ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼ

Իսկ երբ մանուկ Արտաշեսը[1] մեծացավ և նրա դայակ Սմբատը[2] քաջության և արիության շատ գործեր ցույց տվեց, արյաց նախարարները նրան համակրելով բարեխոսում են թագավորին[3], որ նրան պարգև տա, ինչ որ նա խնդրի։ Թագավորը համաձայնվելով ասում է նախարարներին. «Իմացե՛ք, ի՛նչ է ցանկանում այդ քաջ մարդը»։ Նրանք ասում են. «Անմա՛հ բարերար տեր, Սմբատն ուրիշ բան չի ցանկանում, այլ միայն, որ քո արյունակից և հարազատ Արտաշեսին՝ Սանատրուկի որդուն, որ զրկված է իր թագավորությունից, հաստատես իր թագավորության մեջ»։ Արքայից արքան համաձայնվելով՝ Սմբատի ձեռքն է տալիս մի մասը Ասրևստանի զորքերից և Ատրպատականի զորքերը, որպեսզի Արտաշեսին տանեն և հայրենական գահի վրա հաստատեն։

ԽԴ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐՎԱՆԴԸ ԼՍՈՒՄ Է ԱՐՏԱՇԵՍԻ ԳԱԼԸ ԵՎ ՁՈՐՔ Է ԳՈՒՄԱՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ

Երվանդին[4] Ոտիք գավառում լուր է հասնում, թե պարսից թագավորը մեծ զորք գումարեց Սմբատի ձեռքի տակ, որպեսզի քեզ վրա գա և մանուկ Արտաշեսին իր թագավորությունը բերի։ Երվանդն այս լսելով՝ այդ տեղում կողմնապահներ է թողնում նախարարներից շատերին և ինքն շտապով գալիս է իր քաղաքը[5], որպեսզի իր մոտ հավաքի հայոց, վրաց և Կեսարիայի կողմերի զորքերը, նաև Միջագետքինը, խնդրելով և վարձ վճարելով։ Գարնանային օրեր էին, ուստի բոլոր զորքերը շուտով գումարվեցին նրա մոտ. բազմաթիվ հետևակ զորքերով եկավ նաև Արգամը՝ Մուրացյան ցեղի տանուտերը, որ Աժդահակի[6] սերնդից էր։ Որովհետև Երվանդը նրան վերադարձրել էր երկրորդական գահը[7], որը Տիգրանը խլել էր նրանից և տվել էր իր քրոջ ամուսին Միհրդատին, իսկ Միհրդատի մահից հետո ոչ ոքի չէր տրված, մինչև որ Երվանդը վերադարձրեց Արգամին։ Եվ ոչ միայն նրան, այլև բոլոր նախարարներին պարգևներ և պատիվներ էր տալիս, և բոլոր զորքերին առատապես պարգևատրում էր։

ԽԵ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՏԱՇԵՍԸ ԻՐ ԵՐԿԻՐԸ ՄՏՆԵԼՈՒՆ ՊԵՍ ԴՈՐԸ ՀԱՋՈՂՎԵՑ

Իսկ Սմբատը մանուկ Արտաշեսի հետ շտապում էր հասնել Ոտիքի սահմաններ։ Այնտեղ նրան ընդառաջ եկան այն կողմի զորքերը, նաև այն նախարարները, որոնց Երվանդը թողել էր այնտեղ։ Այս լսելով՝ հայոց մյուս նախարարներն էլ լքվում, քայքայվում և մտածում են Երվանդից բաժանվել, մանավանդ երբ տեսան, որ հռոմեացիների զորքերը նրան օգնության չեկան։ Իսկ Երվանդն ավելի առատացնում է պարգևները և նրանցից ամեն մեկին բաժանում է գանձեր, և որքան շատ էր տալիս, այնքան ավելի ատելի էր դառնում, որովհետև բոլորն էլ գիտեին, թե առատաձեռնությունից չէ որ տալիս է, այլ երկյուղից է վատնում։ Եվ այնքան սիրելի չէր դարձնում նրանց, որոնց շատ էր տալիս, որքան ֆշնաժի էր դարձնում նրանց, որոնց այնքան առատ չէր տալիս։

ԽԶ

ԵՐՎԱՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԵՄ ԵՎ ՓԱԽՈՒՍՏԸ, ՆՐԱ ՓԱՂԱՔԻ ԳՐԱՎՈՒՄՆ ՈՒ ՄԱՀԸ

Բայց Սմբատը մանուկ Արտաշեսի հետ բարձրանում է Գեղամա ծովի ափը՝ Արագած կոչված լեռան թիկունքով. նրանք շտապում էին հասնել Երվանդի բանակին։ Նրա զորքերի բազմությանը նշանակություն չէին տալիս, միայն Մուրացյան Արգամից էին ակնածում, որովհետև քաջ մարդ էր և իր իշխանության տակ ուներ բազմաթիվ նիզակավորներ։ Եվ Երվանդի բանակն ավելի քան երեք հարյուր ասպարեզ դեպի հյուսիս հեռու էր իր քաղաքից

և գտնվում էր Ախուրյան գետի վրա։ Երվանդը երբ լսեց (Սմբատի մոտենալը), նրա դեմ հանեց իր զորքերի բազմությունը և ճակատ կազմեց իր բանակից ոչ հեռու։ Իսկ Արտաշեսը Մուրացյան նահապետին պատգամ ուղարկեց հաստատուն երդումներով, որ ներան կթողնի, ինչ որ նա ստացել է Երվանդից, և էլի ուրիշ բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին լքի, մի կողմ քաշվի։

Երբ Արտաշեսի դրոշակները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց։ Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր զորքի ճակատն շարժելով սլացավ, ինչպես արծիվը կաքավների երամի վրա։ Իսկ հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թևերն էին կազմում, խառնվում միանում են նրա հետ։ Վրաց զորքերը թևպետ իրենց Փարսման թագավորի հետ հանդուգն հարձակում գործելով ընդհարվեցին, բայց շուտով ետ փախան։ Այդտեղ պետք էր տեսնել Երվանդի գնդի և Միջագետքի զորքերի սարսափելի կոտորածը։ Երկու ճակատները իրար խառնվելիս Արտաշեսի դեմ են գալիս Տավրոսցի քաջ մարդիկ, որոնք մահն աչքներն առած՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կսպանեն։ Սրանց հետոտն պատահում է Գիսակը՝ Արտաշեսի դայակի որդին, և մեջ մտնելով նրանց սպանում է և հաղթություն է տանում, որի ժամանակ նրա երեսի կեսն էլ սրով կտրում են, և նա մեռնում է այսպես։ Մնացած զորքերը փախուստի են դիմում։

Իսկ Երվանդը իր ձիով շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից մինչև բաղաքը շինված իջևանները նորանոր ձիեր փոխելով, փախչում էր իջևանից-իջևան։ Սմբատն էլ նրան հետամուտ լինելով՝ սաստկապես հալածում է դիշերով մինչև քաղաքադուռը։ Իսկ մարաց զորքերը Երվանդի գնդի կողմն անցնելով՝ մթության մեջ բանակ են դնում դիակների վրա։ Արտաշեսն էլ հասնելով Երվանդի վրանը, որը նա շրջափակել էր կտավով ու կաշվով, իջավ և այն գիշերը նրա վրանում մնաց։ Իսկ երբ լուսացավ, նա տիրաբար կարգադրելով հրամայեց սպանվածներին թաղել։ Այն հովիտը, որտեղ (մարաց) զորքերը դիակների վրա բանակ դրին, կոչեց Մարաց մարգ, իսկ ճակատամարտի տեղը՝ Երվանդավան, իբր թե այստեղ վանեց Երվանդին. այսպես էլ կոչվում է մինչև այսօր։ Ապա գնաց Երվանդի քաղաքը, կեսօրից առաջ Երվանդի դաստակերտը հասնելով՝ զորքին հրամայեց, որ միասին բարձր աղաղակեն «Մար ամատ», որ թարգմանվում է՝ մարը եկավ, սրանով հիշեցնելով այն վիրավորանքը, որ նրա մասին ուղարկում էր Երվանդը պարսից թագավորին և Սմբատին, նրան մար կոչելով[8]։ Հենց այս ձայնով էլ այն դաստակերտը Մարմետ կոչվեց, հավանորեն Արտաշեսի կամքով, որպեսզի Երվանդի անունը նրա վրայից վերանա։ Այս է պատճառը այդ դաստակերտի անվանակոչության։

Բայց Սմբատը գիշերով Երվանդի հետևից ընկնելով փոքրաթիվ վաշտով՝ քաղաքի դուռը պահպանում է, մինչև որ Արտաշեսը և բոլոր զորքերը գալիս են։ Եվ երբ քաջերն սկսեցին ամրոցի դեմ կռվել, ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին։ Զինվորներից մեկը մտնելով՝ դաշույնով Երվանդի գլխին խրեց և ուղեղը տան հատակի վրա ցրեց. այսպես ջախջախվելով վախճանվեց քսան տարի թագավորելուց հետո։ Բայց Արտաշեսը հիշելով, թե Երվանդը Արշակունյաց ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել։

Խէ

ԱՐՏԱՇԵՍԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԵՎ ԻՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԲԱՐԻՔՆԵՐ ԱՆԵԼԸ

Երվանդի մահից հետո Սմբատը մտնելով խուզարկում է արքունական գանձերը։ Սանատրուկ թագավորի թագը գտնելով՝ դրնում է Արտաշեսի գլուխը և թագավորեցնում է ամբողջ Հայաստանի վրա պարսից Դարեհ թագավորի քսաններեորդ տարում[9]։ Արտաշեսը թագավորությունն ստանալով՝ պարգևներ է տալիս մարաց և պարսից զորքերին և ուղարկում իրենց երկիրը։ Նույնպես տալիս է քաջ և պատվավոր Արգամին նրան խոստացած երկրորդական գահը, նաև հակինթներով զարդարված պսակ, երկու ականջներին դինդեր, մի ոտքին կարմիր ագանելիք, իրավունք ունենալ գործածելու ոսկե զրալ և պատառաքաղ և ոսկեղեն գավաթներով խմելու։ Եվ այս պատիվներից ոչ պակաս տալիս է իր դայակ Սմբատին, բացի երկու դինդերից և կարմիր կոշիկից։ Եվ բացի նրա հայրենական թագակալ ասպետությունից և արևմտյան զորքի իշխանությունից՝ նրան է վստահում հայոց բոլոր զորքերը, մեր երկրի բոլոր գործակալները և ամբողջ արքունական տունը։ Իսկ Ներսեհին, իր դայակի Գիսակ որդու որդուն (նախարարական)

ցեղ դարձնելով՝ կոչում է Դիմաքսյան՝ նրա հոր քաջագործությունների անունով, որովհետև, ինչպես ասացինք, նրա դեմքի կեսը սրով կարեցին՝ Արտաշեսի համար։

Պատմվում է, թե (Արտաշեսը) նույն օրում (նախարարական) ցեղի է վերածել տասնհինգ պատանի. Տուրի որդիներին՝ ցեղը կոչելով նրանց հոր անունով Տրունի, ոչ թե որևէ քաջագործության համար, այլ նրանց հոր լրտեսության համար, որ կատարում էր (Երվանդ) թագավորի տնից Սմբատին (տեղեկություններ ուղարկելով), որովհետև Երվանդին մտերիմ էր, որ և նրանից սպանվեց նույն պատճառով։

ԽԸ

ԵՐՎԱԶԻՆ ՍՊԱՆԵԼԸ ԵՎ ՄՅՈՒՍ ԲԱԳԱՐԱՆԸ ՇԻՆԵԼԸ, ԵՎ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱՐՑԱՏՈՒ ԴԱՌՆԱԼԸ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻՆ

Սրանից հետո (Արտաշեսը) հրամայում է Սմբատին գնալ Բագարան ամրոցը, որ Ախուրյան գետի վրա էր, Երվանդի քաղաքի մոտ, և սպանել Երվանդի եղբորը՝ Երվազին[10]։ Սմբատը նրբան բռնելով՝ հրամայում է նրա շլնքից մի երկանաքար կապել և նետել գետի մի պտույտի մեջ։ Նրա տեղ բագինների վրա նշանակում է մի երազահան մոգի աշակերտի, որ մտերիմ էր Արտաշեսին, որին այդ պատճառով Մոգապաշտ էին ասում։ Հետո ավար է առնում Երվազի գանձերը և հինգ հարյուր հոգի ծառաներ, նաև մեհյանների գանձերից ընտիրները և բերում է Արտաշեսին։ Արտաշեսը Սմբատին է պարգևում Երվազի ծառաներին, իսկ գանձերը հրամայում է տանել պարսից Դարեհ թագավորին, իր գանձերից էլ վրան ավելացնելով, շնորհակալության և պատվի համար, իբրև իր հոր և օգնականի[11]։

ԽԹ

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արտաշես Վերջինի գործերից շատ բան հայտնի են քեզ այն վիպասաններից, որոնք պատմում են Գողթնում[12], ինչպես քաղաքը շինելը, խնամիությունն Ալանների հետ, նրա սերունդների ծնունդը և Սաթենիկի իրը թե սիրահարությունը առասպելական վիշապազուններին, այսինքն՝ Աժդահակի սերունդներին, որ գրաված ունեն Մասիսի ամբողջ ստորոտը. կռիվը նրանց հետ, նրանց իշխանության քայքայումը, նրանց սպանությունը և շինվածքների հրկիզումը, և Արտաշեսի որդիների նախանձը և իրար դեմ գրգռվելը կանանց միջոցով։ Այս բոլորը, ինչպես ասացինք, քեզ հայտնի են վիպասանների երգերից, բայց մենք ևս կարճառոտ կհիշատակենք և այլաբանությունը կճշմարտենք[13]։

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Արաքսը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ։ Արաքսն էլ օգնում է նրան անտառի փայտով։ Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի[14] արձանը և բոլոր հայրենական կուռքերը։ Բայց Ապոլոնի[15] արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս ճանապարհին մոտ։ Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում։ Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք։

1. Խորենացին Արտաշեսին դիտում է որպես Արշակունյաց (Երվանդունիների) արքայատան օրինական ժառանգորդ՝ Հայոց Սանատրուկ թագավորի կնդանի մնացած միակ որդին, որին Սմբատ Բյուրատյանը փրկելով տարել էր Պարսկաստան։

2. Սմբատ— Բյուրատ Բագրատունու որդին էր, Արտաշեսի դայակը. փրկել է նրան Երվանդ Վերջինի հետապնդումներից, իսկ հետագայում մեծապես օգնել՝ վերագրավելու հայրենական գահը և Հայաստանի հետ վերամիավորելու նրանից անջատված երկրամասերը։ Արտաշեսը նրան նշանակել է հայկական զորքերի Հարավային զորավարության հրամանատար։ Պետք է նշել, որ Խորենացին որոշ կունազարդումներով է ներկայացրել Սմբատ Բագրատունուն։ Չափազանցված է հատկապես Սմբատի դերը Արտաշեսի ողջ գործունեության ընթացքում, այնպես որ վերջինս գրեթե անելիք չունի։

3. Այսինքն՝ պարսից թագավորին, որը, Խորենացու ցուցման համաձայն, Դարեհ Վերջինն էր։ Ըստ Խորենացու ժամանակագրության, այս իրազարձությունները տեղի են ունեցել մ. թ. I դարի երկրորդ կեսում՝ Հռոմեական կայսրեր Վեսպասիանոսի և Տիտոսի ժամանակներում, սակայն, ինչպես հայտնի է, Դարեհ III Կոդոմանոսը (Դարեհ Վերջին) թագավորել է մ. թ. ա. 336—330 թվա-

գաններին, հետևաբար, Խորենացու Դարեհ Վերջինին չի կարելի նույնացնել Դարեհ Կոդոմանոսի հետ։ Մյուս կողմից էլ, Արտաշես I-ը, որը մ. թ. ա. III դ. վերջերի— մ. թ. ա. II դ. առաջին կեսի անձնավորություն է, չէր կարող լինել ինչպես Դարեհ Կոդոմանոսի, այնպես էլ Վեսպասիանոսի ու Տիտոսի ժամանակակիցը։ Այստեղ առկա է ժամանակագրական շփոթմունք, որը գալիս է Պատմահոր օգտագործած աղբյուրից։

4. Երվանդ Արշակունի— Հայոց թագավոր Երվանդ IV Վերջինն է (220—201), Սատրապների հիշատակած վերջին Օրոնտոսը (տե՛ս 222-րդ էջի № 3 ծան.)։ Ըստ Խորենացու, Արշակունի՝ միայն մոր կողմից, բռնատիրող Իրականում Երվանդը օրինական թագավորական հարստության՝ Երվանդունիների տան ներկայացուցիչն էր, իսկ Արտաշեսը, ըստ երևույթին, միայն կողմնակի առնչություն ուներ այս տոհմին։ Մ. թ. ա. 201 թ., օգտվելով Երվանդ Վերջինի դեմ ծավալված դժգոհություններից՝ Արտաշեսը տապալում է նրան և հետագայում հիմք դնում Արտաշեսյան արքայատան։ Սակայն, իր գործողություններն արդարացնելու միտումով, Արտաշեսը շարունակում է իր տունը հորջորջել «Երվանդական»։

5. Խոսքը Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաք Երվանդաշատի մասին է։ Հիմնադրվել է մ. թ. ա. III դարում, Երասխ և Ախուրյան գետերի միախառնման տեղում, Նրասխի ձախափին։

6. Պատմահայրը նկատի ունի մարական թագավոր Աժդահակին (Աստիագես)։

7. Արգամ կամ Արգավան (ըստ երևույթին՝ Արշամ)— Մուրացյան նախարարական տան նահապետը. Արտաշեսից ստացած նրա «երկրորդական գահ» պաշտոնի կամ գործակալության մասին, դժբախտաբար, մենք այլ վկայություն չունենք, ուստի դժվար է ասել, թե այն ինչ բովանդակություն է ունեցել։

8. Երվանդը չարամտորեն Արտաշեսին «մարդ» (մեղսի) էր հորջորջում վարկաբեկելու միտումով։

9. Ըստ Խորենացու ժամանակագրության, Դարեհ Վերջինի թագավորության 29-րդ տարին համապատասխանում է մ. թ. 52 թվականին, ուրեմն այս թվականին է, որ, ըստ Խորենացու, գահ է բարձրացել Արտաշես I-ը։ Սա ակնհայտորեն շփոթմունք է. Արտաշեսը թագավոր է հռչակվել մ. թ. ա. 189 թվականին։

10. Երվազ— Երվանդ Վերջինի եղբայրն է, Հայաստանի գերագույն քրմապետը։

11. Այս իրադարձությունները նկարագրելիս Մովսես Խորենացին օգտվել է Դարանաղյաց Անիի՝ Արամազդի տաճարի քուրմ Ողյումպի (Օղյումպ, Օլիմպիոս) «Մեհենական պատմություններից»։ Սակայն, Պատմահայրը Ողյումպից քաղած դրվագները (Արտաշես I-ի մասին) սխալմամբ տեղավորել է ժամանակագրական տեսակետից օտար միջավայրում՝ մ. թ. I դարի կեսերին։

12. Գողթանը Վասպուրականի 33-րդ գավառն էր, ընդգրկում էր այժմյան Ապրակունիսի և Օրդուբադի շրջանները։ Այս գավառը հնուց ի վեր հռչակված էր իր ժողովրդական դուդուկ-երգիչներով։

13. Խորենացին վիպասանական երգերն ու առասպելները համարում է այլաբանություն և հաճախ աշխատում է տալ ոչ թե դրանց անաղարտ տեքստը, այլ միայն մեկնությունը։

14. Արեմիս— Հավերժ դեռատի և չքնաղ աստվածուհի, Զևսի և Լեթոյի դուստրը։ Սկզբում լուսնի աստվածուհի, հետագայում՝ որսորդության։ Հայաստանում նույնացվել է Անահիտի հետ։

15. Ապոլոն— Զևսի և Լեթոյի որդին, Արտեմիսի երկվորյակ եղբայրը։ Համարվել է լույսի, արվեստի և երաժշտության աստվածը։ Հայաստանում նույնացվել է Տիր աստծու հետ։

ՊՈԼԻԲԻՈՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հույն պատմաբան Պոլիբիոսը գրել է մ. թ. ա. 220—146 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի Հռոմեական հանրապետության և հելլենիստական երկրների փոխհարաբերությունների պատմությունը։ Նրա «Պատմություն» վերտառությամբ աշխատությունը, փաստորեն առաջին փորձերից մեկն էր ժամանակի համաշխարհային պատմությունը համահավաք շարադրելու ուղղությամբ։

Պոլիբիոսի սույն երկասիրությունը բաղկացած է եղել 40 գրքերից, սակայն, դժբախտաբար, այն ամբողջությամբ չի պահպանվել. մեզ է հասել միայն հինգ գիրք և առանձին պատառիկներ մյուս գրքերից։ Այստեղ, հելլենիստական Արևելքի երկրների՝ այդ թվում և Հայաստանի մասին եղած հաղորդումներն ու տեղեկությունները կցկտուր են ու խիստ թերի։ Այնուհանդերձ, Պոլիբիոսը մի շարք արժեքավոր ու եզակի տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքի ու Սոփրի մ. թ. ա. III դարի առաջին կեսի պատմության վերաբերյալ։

Պոլիբիոսը ծնվել է մ. թ. ա. 210 թվականին, Արկադիայի Մեգալոպոլիս քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում։ Երիտասարդության տարիներին գործուն մասնակցություն է ունեցել Աքայական դաշնակցային պետության քաղաքական կյանքին, 169 թ. ընտրվել է այդ դաշնակցության հիպպարխոսի պաշտոնում։ Սակայն մ. թ. ա. 167 թվականին նա պատանդ է տարվում Հռոմ, ուր և մնում է շուրջ 16 տարի։ Այստեղ էլ վերջնականապես ձևավորվում են Պոլիբիոսի հակադեմոկրատական, պահպանողական արիստոկրատական հայացքները։ Իր երկասիրությունում նա հանդես է գալիս Հռոմի նվաճողական քաղաքականությունը պաշտպանելու և այն հիմնավորելու դիրքերում։ Պոլիբիոսը մահացել է մոտ մ. թ. ա. 127 թվականին։

Պոլիբիոսի «Պատմությունից» ստորև բերվող հատվածները

տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է "Polybius, Historiae, V. 1—6, Cambridge, Mass.—London, 1960, (Loeb Classical Library)" հրատարակությունից:

ՊՈԼԻԲԻՈՍ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք VIII, 25

1—6. Քսերքսեսի[1] թագավորության ժամանակ Արմոսատա[2] քաղաքում, որը գտնվում է այսպես կոչված Գեղեցիկ դաշտում[3], Եփրատի և Տիգրիսի միջև, Անտիոքոս թագավորը[4] քաղաքը պաշարելով վերցնելու մտադրությամբ՝ բանակել էր նրա մոտ[5]: Տեսնելով (Անտիոքոս) թագավորի պատրաստությունները, Քսերքսեսը նախ փորձեց փախուստի միջոցով փրկվել, բայց քիչ ժամանակ անց նա զղջաց, վախենալով, որ մայրաքաղաքը թշնամու ձեռքն ընկնելու դեպքում ինքը կարող է կորցնել ամբողջ թագավորությունը: Ուստի դեսպաններ ուղարկելով Անտիոքոսի մոտ, հայտնեց, որ ցանկանում է բանակցություն սկսել նրա հետ: Անտիոքոսի հավատարիմ ընկերները խորհուրդ չէին տալիս թագավորին ձեռքից բաց թողնել պատանուն, այլ համոզում էին, որ քաղաքը գրավելով, իշխանությունը հանձնի Միհրդատին, որը նրա քեռորդին էր[6]: Բայց թագավորը չլսեց նրանցից ոչ մեկին, իր մոտ հրավիրեց պատանուն, հաշտվեց նրա հետ և նույնիսկ զիջեց նրան հարկի մեծագույն մասը, որը պարտավոր էր իրեն վճարել (Քսերքսեսի) հայրը: Այնուհետև, ստանալով Քսերքսեսից 300 տաղանդ և հազար ձի ու հազար ջորի լծասարքով, նա վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և նրան ամուսնացրեց իր Անտիոքիս քրոջ հետ[7]: Այսպիսով, Անտիոքոսը իր արքայական վեհանձնությամբ, որ ցուցաբերել էր ներկա դեպքում՝ ձեռք բերեց երկրի բնակիչների բարեկամությունն ու երախտիքը:

Գիրք XXVI, 6

1—12. Հանկարծակի և դաժան հարձակման ենթարկված լինելով, Փառնակեսը[8] պատրաստ էր քնդունելու ամեն մի առաջարկ[9]. ուստի նա դեսպաններ ուղարկեց Եվմենեսի[10] ու Արիարաթեսի[11] մոտ: Եվմենեսն ու Արիարաթեսը լսելով նրանց, իրենք ևս իսկույն իրենց դեսպաններին ուղարկեցին Փառնակեսի մոտ, և այս բանը երկուստեք բազմիցս կրկնվելով, հաշտություն կնքվեց հետևյալ պայմաններով[12]. Թող մշտական խաղաղություն լինի մի կողմից՝ Եվմենեսի, Պրուսիասի[13] և Արիարաթեսի, մյուս կողմից՝ Փառնակեսի և Միհրդատի[14] միջև: Փառնակեսը և ոչ մի ձևով չպետք է արշավի Գալատիայի վրա և գալատների հետ նախկինում նրա կնքած բոլոր պայմանագրերը պետք է համարվեն անվավեր: ... Որոշվեց նաև, որ Փառնակեսը պետք է առանց փրկագնի վերադարձնի ռազմագերիներին և փախստականներին: ... Որոշվեց նաև, որ Արմենիայի[15] սատրապ Միհրդատը պետք է վճարի 300 տաղանդ, որովհետև սա դրժելով Եվմենեսի հետ կնքած դաշինքը, պատերազմեց Արիարաթեսի դեմ[16]: Այդ դաշինքին մասնակից դարձվեցին Ասիայի իշխաններից Արտաշեսը[17]՝ Արմենիայի մեծագույն մասի տիրակալը, և Ակուսիլոքոսը[18]:

1. Քսերքսեսը Սոփքի թագավորն էր (մոտ 220—201), ըստ երևույթին, նա որդին էր Սոփք—Կոմմագենեի միացյալ պետության թագավոր Արշամի (Արսամես), որի իշխանության տարիներն են մ. թ. ա. III դարի 40—30-ական թվականները:

2. Արմոսատա— Սոփքի մայրաքաղաք Արշամաշատն է. հիմնադրել է Արշամ թագավորը՝ Արածանիի ձախ ափին, այժմյան Խարբերդ-Նաջարան ավերակ գյուղի մոտ:

3. Գեղեցիկ դաշտ (Հրաշալի հովիտ)— Արածանիի հովիտն է կամ Անթիսս դաշտավայրը, այժմ՝ Խարբերդի դաշտը:

4. Խոսքը Սելևկյան տերության թագավոր Անտիոքոս III Մեծի (223—187) մասին է:

5. Անտիոքոս III-ի՝ Սոփքի դեմ ձեռնարկած սույն հարձակումը տեղի է ունեցել մ. թ. ա. 212—205 թթ.՝ նրա հայտնի Արևելյան արշավանքի նախօրյակին. ամենայն հավանականությամբ՝ հենց 212 թ. սկզբներին:

6. Այս Միհրդատը Անտիոքոս III-ի քրոջ և մի հայ մեծատոհմիկի որդին էր: Մոտ 201 թ. Անտիոքոսը նրան նշանակում է Փոքր Հայքի սատրապ:

7. Մոտ 201 թվականին, ունենալով եղբոր՝ Անտիոքոս III-ի ցուցումը՝ Անտիոքիսը սպանեց Քսերքսեսին. դրանով իսկ, Սոփքը վերածվեց սելևկյան սատրապության, իսկ այնտեղ կառավարիչ (սատրապես) կարգվեց հայ մեծատոհմիկ Զարեհը:

8. Փառնակես— Պոնտոսի թագավոր Փառնակ I-ն է (185—170), Պոնտական թագավորության հզորության հիմնադիրը:

9. 183 թվականին Փառնակը ռազմական արշավանք էր ձեռնարկել Գալա-

տիայի, Պերգամոնի և Կապադովկիայի դեմ, սակայն պարտություն կրելով՝ ստիպված էր հաշտություն խնդրել։

10. Եվմենես— խոսքը Պերգամոնի թագավոր Եվմենես II Սոտերի (197—160) մասին է։

11. Արիարաթես— խոսքը Կապադովկիայի թագավոր Արիարաթես IV-ի (220—163) մասին է։

12. Հաշտության պայմանագիրը կնքվել է 179 թվականին։

13. Պրուսիաս— խոսքը Բյութանիայի թագավոր Պրուսիաս II-ի (մոտ 182—149) մասին է։

14. Միհրդատը Փոքր Հայքի սելևկյան կառավարիչ-սատրապն էր, որը մ. թ. ա. 180 թվականից հանդես է գալիս որպես անկախ տիրակալ։ Այս իրադարձությունների ժամանակ նա գործում էր Փառնակի դաշնակցի դերում։

15. Խոսքն այստեղ վերաբերում է Փոքր Հայքին։

16. Պայմանագրին նախորդող և հետևող իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ, իրոք, Միհրդատն այդ ժամանակ արդեն անկախ միապետ էր։

17. Խոսքը Մեծ Հայքի թագավոր Արտաշես I-ի (189—160) մասին է։

18. Ակուսիլոոս— ենթադրվում է, որ սա պետք է լինի Ծոփքի Զարեհ թագավորի որդին։

ՍՏՐԱԲՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XI, 14

1. Հայաստանի հարավը պաշտպանում է Տավրոսը, որը այն բաժանում է Եփրատի և Տիգրիսի միջև գտնված ամբողջ երկրից, որը կոչում են Միջագետք. արևելքում այն սահմանակից է Մեծ Մեդիային և Ատրոպատենային. հյուսիսից Կասպից ծովի վերևի Պարաքոաթրա[1] լեռներն են և Աղվանները և Իբերները և այս ազգերին ներփակող Կովկասը, որը հասնելով Հայաստանին՝ միանում է Մոսքիկյան[2] և Կոլխիսի (Կողքիս, Կոլխիդա) լեռներին, մինչև տիբարեններ կոչվածների երկիրը. արևմուտքից այս (տիբարենների) ազգն է և Պարիադրեսը և Սկյուդիսեսը[3] մինչև Փոքր Հայք և Եփրատահունը, որ Հայաստանը բաժանում է Կապադովկիայից և Կոմմագենեից։

2. Եփրատը սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային կողքից, նախ հոսում է Հայաստանի միջով դեպի արևմուտք, հետո շրջվում է դեպի հարավ և կտրում Տավրոսը Հայաստանի և Կապադովկիայի և Կոմմագենեի միջև, (այնուհետև) դուրս գալով այնտեղից և հասնելով Սիրիա, շրջվում է դեպի ձմեռային արևելք[4] մինչև Բաբելոն և ստեղծում է Միջագետքը Տիգրիսի մոտ։ Այս երկուսը վերջանում են Պարսից ծոցում։ Ամբողջ շրջապատը լեռնային է ու քարքարոտ, բացի Մեդիայի կողմը գտնվող փոքր մասից։ Դարձյալ հիշյալ Տավրոսից անդին, որը սկսվում է Կոմմագենեն և Միլիտենեն եղերող Եփրատի հակառակ ափին, հարավում կա Մասիոս լեռը[5], որը գտնվում է Միջագետքում եղած Միգդոնիայից վերև, որում և Մծբինն է։ Հյուսիսային կողմում ընկած է Սոփենեն[6], Մասիոս լեռան և Անտիտավրոսի միջև։ Այս (լեռը) սկիզբ առնելով Եփրատից ու Տավրոսից, վերջանում է Հայաստանի արևվելյան կողմերում, մեջտեղում ընդգրկելով Սոփենեն, իսկ մյուս կողմից ունենալով Ակիլիսենեն[7], որը գտնվում է Տավրոսի և Եփրատ գետի միջև, մինչև սրա դեպի հարավ թեքվելը. Սոփենեի արքայանիստը Կարկաթիոկերտն է[8]. Մասիոսից վերև, շատ արևվելք, Գորդյուենեի[9] երկարությամբ, գտնվում է Նիփատեսը[10], հետո Աբոսը[11], որից հոսում են և՛ Եփրատը, և՛ Արաքսը. մեկը դեպի արևմուտք, մյուսը դեպի արևելք. այնուհետև Նիբարոսը[12] ձգվում է մինչև Մեդիա։

3. Արդեն ասվեց, թե Եփրատը ինչ ուղղությամբ է հոսում։ Իսկ Արաքսը հոսելով դեպի արևելք մինչև Ատրոպատենե, թեքվում է դեպի արևմուտք և հյուսիս ու հոսում է նախ Ազարայի[13], ապա Արտաշատի՝ Հայաստանի քաղաքների մոտով։ Այնուհետև Արաքսի դաշտի միջով դուրս է գալիս Կասպից ծով։

4. Բուն Հայաստանում կան շատ լեռներ և լեռնադաշտեր, որտեղ որթատունկը հեշտությամբ չի աճում. (կան նաև) շատ հովիտներ, մի մասը՝ միջակ, մյուսները՝ խիստ բերրի, ինչպես Արաքսի դաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Ալբանիայի եզրերը և թափվում է Կասպից ծով. այնուհետև՝ Շակաշենը[14], որը և սահմանակից է Ալբանիային և Կուր գետին, հետո Գոգարենեն[15]։ Այս ամբողջ երկիրը լի է բերքով և ընտանի ու մշտադալար ծառերով, ունի նաև ձիթենի։ Փավլենեն[16] ևս Հայաստանի գավառներից է, և Կոմիսենեն[17] և Օրքիստենեն, որ տալիս է մեծաքանակ հեծելազոր։ Խորզենեն[18] և Կամբյուսենեն ամենահյուսիսայիններն են և առավել ձյունառատ, որոնք սահմանակցում են Կովկասյան լեռներին և Իբերիային ու Կոլխիսին։ Ասում են, թե այնտեղ լեռ-

անցքներում հաճախ ամբողջ քարավաններ բուքի ժամանակ մընում են ձյան տակ։ Նման վտանգների համար նրանք գավազաններ ունեն, որոնք հանում են (ձյան) մակերեսից դուրս, շնչառության, ինչպես նաև անցորդներին նշան տալու համար, որպեսզի օգնության հասնեն, դուրս հանեն և փրկեն իրենց։ Ասում են, թե ձյան մեջ դատարկ սառցագնդիկներ են գոյանում, որոնք պարունակում են պիտանի ջուր. սրանց պատյանը ջարդելով, խմում են (ջուրը)։ Ձյան մեջ աճում են կենդանիներ, որոնց Ապոլլոնիդեսը[19] կոչում է որդեր, իսկ Թեոփանեսը[20] շաղափուկներ։ Այս կենդանիների ծնունդը պատկերացնում են այնպես, ինչպես մետաղների բոցից թռչող կայծերից (ծնվող) մոծակների (ծնունդը)։

5. Պատմում են, թե Հայաստանը նախապես փոքր լինելով, աճել է Արտաքսիասի և Զարիադրիսի[21] միջոցով, որոնք նախկինում եղել են Անտիոքոս Մեծի[22] սատրապեզոսները, իսկ հետագայում, նրա պարտությունից հետո, թագավորել է սա՝ Սոփենեի, Ակիսենեի և Օգոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա, նա էլ՝ Արտաշատի շրջակայքում։ Երկուսն էլ աճեցին շրջակա ազգերից հողեր գրավելով. Մարերից՝ Կասպիանեն[23], Փավնիտիսը և Բասորոպեդան[24], Իբերներից՝ Պարիադրես լեռան սատրոտները[25], և Խորզենեն և Գոգարենեն, որը դանվում է Կուրի մյուս կողմը[26], Խալյուրներից և Մոսյունոյկներից՝ Կարենիտիսը[27] և Դերքսենեն[28], որոնք Փոքր Հայքին սահմանակից են և կամ նրա մասն են կազմում, Կատաոններից[29] Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանը, Ասորիներից՝ Տամոնիտիսը[30], ուստի և բոլորը միալեզու են։

6. Հայաստանի քաղաքներն են Արտաքսատան (որը կոչում են և Արտաքսիասատա, որը Հաննիբալը[31] կառուցել է Արտաքսիաս թագավորի համար) և Արքսատան[32], երկուսն էլ Արաքսի վրա, Արքսատան՝ Ատրոպատիայի սահմանների մոտ, իսկ Արտաքսատան՝ Արաքսի դաշտի մոտ. այն լավ համաբնակեցված է և երկրի արքայանիստն է. գտնվում է (գետա)թևի կազմած թերակղզու վրա, նրա պարիսպը շուրջանակի պատում է գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը շրջափակված է փոսով և պատնեշով։ Քաղաքից ոչ շատ հեռու գտնվում էին Տիգրանի և Արտավազդի գանձատները, Բաբյուրսա և Օլանե անառիկ ամրոցները[33]։ Ուրիշները ևս կային Եփրատի վրա։ Արտագերսան[34] ապստամբեց բերդապետ Ագրոնի գլխավորությամբ[35]. Կեսարի[36] զորավարներն երկար ժամանակ պաշարելով, գրավեցին այն և պարիսպները քանդեցին։

7. Երկրում շատ գետեր կան. նշանավորագույն են Փասիսը[37] և Լյուկոսը[38], որոնք թափվում են Պոնտական ծովը. Երատոսթենեսը[39] Լյուկոսի փոխարեն ոչ ճիշտ կերպով դնում է Թերմոդոնը, իսկ Կուրը և Արաքսը թափվում են Կասպից (ծով), Եփրատը և Տիգրիսը՝ Կարմիր ծով։

8. Հայաստանում կան նաև մեծ լճեր, մեկը Մանտիանեն է, կապույտ թարգմանվող[40], որը, ինչպես ասում են, Մայոտիսից[41] հետո մեծագույնն է աղի լճերի մեջ և տարածվում է մինչև Ատրոպատիա, ունի նաև աղահանքեր. մյուսը՝ Արսենեն, որը կոչում են նաև Թոպիտիս[42]. այն պարունակում է բորակ և զգեստները լվանում է ու մաքրում. այդ պատճառով էլ ջուրը խմելու չէ[43]։ Տիգրիսը, իջնելով Նիփատես լեռից, անցնում է դրա միջով, անխառն պահելով իր հոսանքը, ուժգնության պատճառով, որից էլ գետի անունը. մարերեն Տիգրիս կոչում են նետաձգությունը։ Սա բազմատեսակ ձկներ ունի, մինչդեռ լճայինները միայն մեկ տեսակ են[44]։ Լճի խորշի մոտ գետն ընկնում է վիհի մեջ[45] և երկար տարածություն գետի տակով տարվելուց հետո, դուրս է գալիս Քալինտիսի մոտ. այնտեղից էլ (հոսելով) դեպի Օպիս[46] և Սամիրամիսի[47] կոչված պատնեշը, այն իջնում է դեպի Գորդվացիները, աջում թողնելով ամբողջ Միջագետքը, մինչդեռ Եփրատը (հոսում) է այս նույն երկիրը իր ձախ կողմում ունենալով։ Իրար մոտենալով և ձևացնելով Միջագետքը, մեկը Սելևկիայով թափվում է Պարսից ծոցը, իսկ մյուսը՝ Բաբելոնով, ինչպես ասվել է Երատոսթենեսի և Հիպպարքոսի[48] մասին խոսելիս։

9. Ոսկու հանքեր կան Սյունապիրիտիսի[49] մեջ, Կաբալայում[50], որտեղ Ալեքսանդրը ուղարկեց Մենոնին զինվորներով. սա խեղդամահ արվեց տեղարնիկների կողմից։ Կան նաև այլ հանքեր, հատկապես սանդիկս կոչվածը, որը կոչում են նաև «Հայկական գույն» և նման է կալքեի։ Երկիրը այնքան հարուստ է ձիաբուծման արոտներով, ոչ պակաս Մեդիայից, որ նեսայան ձիերը[51] այստեղ ևս լինում են, որ օգտագործում էին Պարսից արքաները, և Հայաստանի սատրապը Պարսիկին[52] ամեն տարի ուղարկում էր երկու հյուր մարուկ Միհրականքի[53] համար։ Արտավազդը[54] բացի մյուս ձիավորներից, վեց հազարանոց զրահապատ հեծելազոր կարգի

դնելով՝ ցուցադրեց Անտոնիոսին, երբ նրա հետ արշավեց Մեդիա։ Այսպիսի հեծյալների նախանձախնդիր են ոչ միայն մարերը և հայերը, այլև աղվանները. քանզի նրանք ևս օգտագործում են զրահապատված (ձիեր)։

10. Երկրի հարստության և զորության փոքր նշան չէ այն, որ Պոմպեոսը Տիգրանին, Արտավազդի հորը, վեց հազար տաղանդ արծաթ տուգանք նշանակած լինելով, (սա) անհապաղ հռոմեական զորքերին բաշխեց՝ յուրաքանչյուր զինվորին 50 դրաքմե, (յուրաքանչյուր) հարյուրապետին՝ հազար (դրաքմե), իսկ (յուրաքանչյուր) հեծելապետին և հազարապետին՝ մեկ տաղանդ[55]։

11. Երկրի մեծությունը Թեոփանեսը հաշվում է լայնքը՝ հարյուր սքոյնոս[56], երկարությունը՝ կրկնակի, մեկ սքոյնոսը դնելով քառասուն ասպարեզի (հավասար)։ Սա չափազանցությամբ է ասված։ Ճշմարտության առավել մոտ է երկարությունը՝ նրա ասած լայնքը, իսկ լայնքը՝ դրա կեսը կամ փոքր-ինչ ավելի։ Այսպիսին է Հայաստանի բնությունը և զորությունը։

13. Կարծում են, թե Արաքսը (այսպես) կոչվել է Արմենոսի ուղեկիցների կողմից Պենեոս գետի[57] հետ (ունեցած) նմանության պատճառով։ Քանզի այն ևս կոչվել է Արաքս այն պատճառով, որ ճեղքելով Տեմպե[58] (կիրճը) Օսսան կտրել է Օլիմպոսից[59]։ Ասում են, թե նախկինում Արաքսը ևս լեռներից իջնելով, ելք չունենալու պատճառով լայնանում էր ու ծովանում ստորադիր դաշտերում, իսկ Յասոնը Տեմպեի նմանությամբ կառուցել է կիրճը, որով այժմ ջուրը ցած է հոսում Կասպից ծով։ Սրանից էլ մերկացել է Արաքսի դաշտավայրը, որի միջով հոսելով, գետը հասնում է ջրվեժին։ Արաքս գետի մասին պատմված այս զրույցն ունի ինչ որ հավանականություն. մինչդեռ Հերոդոտոսինը՝ ոչ այնքան։ Քանզի նա ասում է, թե այն հոսելով Մատիենե երկրից՝ բաժանվում է քառասուն գետի, անջատելով Սկյութներին և Բակտրիաններին. Կալլիսթենեսը[60] ևս հետևել է նրան։

14. Պատմում են նաև, թե Այնիաններից[61] ոմանք բնակվել են Ուիտիայում[62], մյուսները՝ Հայաստանից վերև, Աբոսից և Նիբարոսից, որոնք Տավրոսի մասերից են, այն կողմ։ Սրանցից Աբոսը մոտիկ է Բարիսին[63] տաճարի կողքով էկբատանա տանող ճանապարհին։ Ասում են նաև, որ Թրակիացիներից ոմանք, որոնց կոչում են Սարապարներ, այն է՝ գլխահատներ, բնակվել են Հա-

յաստանից վերև, Դուրանցվոց և Մարաց մոտ։ Սրանք եղել են դաղանաբարո մարդիկ և անհնազանդ լեռնցիներ, մորթ մաշկող և գլխահատ. քանզի այդ է նշանակում Սարապարես։ Մեդեայի մասին խոսել ենք Մեդականքի մեջ[64], ուստի այս ամենից եզրակացնում են, թե մեդացիները և հայերը ցեղակից են Թեսսալացիներին և Յասոնի ու Մեդեայի (սերունդներին)։

1. Պարամոաբրա (նաև Պարիադրես)— հայկական աղբյուրների Եաղտյաց կամ Պարխարյան լեռնաշղթան է, որը ձգվում է Սև ծովի հարավային եզերքով դեպի արևելք։

2. Լեռներ Պոնտոսի և Հայաստանի միջև, այժմ՝ Կարչխալի և Ամարայի լեռներ։

3. Սկյուդիսես— Պոնտական լեռների բազուկներից մեկը, որ վերջինս կապում է Անտիտավրոսի հետ։

4. Այսինքն՝ հարավ։

5. Մասիոս (Իզալա, Տուր-Աբդին)— Մեծ Հայքը Միջագետքից եզերող լեռնապար։

6. Հունական աղբյուրներում Եոփքը կոչվում էր Սոփենե։

7. Ակիլիսենե— Հայոց եկեղյաց կամ Անահտական գավառն է։

8. Կարկաթիոկերտ (Արկաթիակերտ)— Եոփքի մայրաքաղաքը, տեղադրվում է Անգեղ տուն գավառում՝ միջնադարյան Անգղ բնակավայրի տեղում, այժմ՝ Էգիլ։

9. Գորդյուենե— Կորդվաց աշխարհն է։

10. Նիփատես (Նպատ)— սա Զագրոս (Կոհ ի Նիհորական) լեռնային սիստեմի հյուսիսային հատվածն է, որը Հայաստանի մասում անտիկ հեղինակները կոչում էին Նպատ՝ հատվածի գագաթներից մեկի՝ Նպատի (2332 մ) անունից։

11. Արոս— Սրմանց կամ Բյուրակն հրաբխային զանգվածն է, այժմ՝ Քինգյոլ։

12. Տավրոսի բազուկներից մեկն է, որը Ասորեստանի հյուսիսային սահմաններից ձգվում է մինչև Մարաստան, այժմ՝ Ջյուդի-դաղ։

13. Քաղաք Արտաշատից դեպի արևմուտք, տեղադրությունը հայտնի չէ։

14. Շակաշեն (Սակասենե)— Կուր գետի աջափնյա տարածքում գտնվող հայկական գավառ, ներկայիս Կիրովաբադի շրջանը։

15. Գոգարենեն հայկական Գուգարքն է՝ Մեծ Հայքի աշխարհներից մեկը։

16. Փավենե (Փավենիտիս)— գավառ, որը Արտաշես II-ի դեպի Մարաստան կատարած արշավանքից հետո միացվեց Հայաստանին։ Տեղադրությունը պարզ չէ, գուցե նույնանում է Փայտակարանի հետ։

17. Կոմիսենե— հին Հայաստանի ծայր հյուսիսային գավառներից մեկը, Կամբյուսենե (Կամսեջան) երկրի հայկական մասը, որը Կուր գետով բաժանվում էր Իբերիայից ու Աղվանքից։

18. Խարզենե— հայկական գավառ Կուր գետի ակունքների շուրջն ընկած տարածքում, հետագայի Կղարջք գավառը։

19. Հույն մատենագիր՝ Ստրաբոնի աղբյուրներից մեկը։

20. Թեոփանես Միտիլենացի— հույն աշխարհագիր, որը մասնակցել է Պոմպեոսի մ. թ. ա. 66 թ. դեպի Հայաստան կազմակերպած արշավանքին։

21. Խոսքը Արտաշեսյան հարստության հիմնադիր, Մեծ Հայքի թագավոր Արտաշես I-ի և Սոփքի թագավոր Զարեհի մասին է։

22. Անտիոքոս Մեծ— սա Սելևկյան տերության թագավոր Անտիոքոս III Մեծն է։

23. Կասպիանե— Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանն է և նրանից արևելք՝ մինչև Կասպից ծովն ընկած տարածքը։ Խորենացին այն անվանում է Կասրից երկիր (տե՛ս «Պատմություն Հայոց», դիրք Բ, գլ. ՌԳ)։

24. Բասորոպեդա— սա համընկնում է Վասպուրականի Պարսպատունիք գավառին։

25. Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտը համապատասխանում է Հայոց Գոդերձական գավառին։

26. Այս երեք գավառներն էլ (Գուգարք, Խորձենե, Գոդերձական) հենց սկզբից ընդգրկված են եղել Երվանդունիների Հայկական պետության կազմի մեջ և միայն մ. թ. ա. III դարի վերջերին են անցել Վրաստանին։ Հետևաբար, Ստրաբոնը շփոթում է, երբ գրում է, թե Արտաշեսը նվաճեց դրանք. այս ակտը պետք է դիտել որպես վերամիավորում։

27. Կարենիտիս— Կարնո աշխարհն է՝ Բարձր Հայքի իններորդ գավառը, այժմյան Էրզրումի առնչակը։

28. Թերսենե— սա Բարձր Հայքի վեցերորդ գավառ Դերջանն է, այժմյան Քերջանը՝ Եփրատ գետի հովտում։

29. Կատաոնեներ— ցեղային միություն, որն ապրում էր Եփրատից արևելք՝ անտիկ հեղինակների Կատաոնիայում։

30. Տամոնիտիս— հայագիտության մեջ այս երկրանունը սրբագրելու երկու փորձ է եղել՝ Տարոնիտիս (Տարոն) և Տամորիտիս (Տմորիք) իմաստներով։

31. Հաննիբալ Բարկա (247—183)— հին աշխարհի ականավոր զորավար, Կարթագենի պետական գործիչ, Հռոմի ոխերիմ հակառակորդը։ Պարտություն կրելով հռոմեացիներից, մ. թ. ա. 195 թ. ապաստանեց Անտիոքոս III Մեծի մոտ, սակայն վերջինիս՝ հռոմեացիներից կրած պարտությունից հետո (Մագնեսիա, 190 թ.), անցավ Բյութանիա, ուր և մ. թ. ա. 183 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին։ Ուսումնասիրողների ներքո հավատարիությունը Հաննիբալի Հայաստանում լինելու մասին վերջերս կարծես սկսում է փարատվել։

32. Արեսատա— քաղաք Արաքսի ափին, Նախճավանի կողմերը։ Հետազոտողները գտնում են, որ այն հայերեն պետք է հնչեր Արշատ։

33. Բարյուրսա և Օլանե— ամրոցներ, որ պահվում էին Հայաստանի պետական գանձերը. տեղադրությունները անորոշ են։

34. Արտագեյրա (Արտագերս)— անտիկ ամրոց պատմական Հայաստանի Աղձնիքի գավառում, այժմ՝ Քերս գյուղը։

35. Ստրաբոնը նկատի ունի Արտագերս ամրոցի վերակացու Ադգոն (ըստ Երևույթին՝ Ատոմ) զորավարին, որը մ. թ. 2 թվականի սեպտեմբերի 9-ին դաշույնով ծանր վիրավորեց Արտագերսը պաշարած հռոմեական զորքերի հրամանատար, Օգոստոս կայսեր որդեգիր Գայոս Կեսարին։

36. Խոսքը Օգոստոս կայսեր թոռան և որդեգիր Գայոս Կեսարի մասին է։

37. Փասխա— գետ Կողքիսում, այժմ՝ Ռիոն։

38. Լյուկոս (Գայլ գետ)— Իրիսի վտակներից մեկը, այժմ՝ Գելգիտ-չայ։

39. Երատոսթենես Կիրենացի (276—194)— հույն նշանավոր աշխարհագրագետ, բանաստեղծ և քերական, գիտական աշխարհագրության հիմնադիրը, Ալեքսանդրիայի գրադարանի ղեկավարներից մեկը։ Գրել է երեք գրքերից բաղկացած «Աշխարհագրություն», որը մեզ չի հասել։

40. Խոսքը Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի միջև տարածվող Կապուտան (Ուրմիա) լճի մասին է, գտնվում է 1275 մ բարձրության վրա։

41. Մայոտիս— Ազովի ծովն է։

42. Արսենե (Թոպիտիս)— Վանա (Բզնունյաց կամ Ռշտունյաց) լիճն է, գտնվում է 1720 մ բարձրության վրա։

43. Վանա լճի ջրերը պարունակում են մեծ քանակությամբ կալիումի և նատրիումի կարբոնատ, քլորիդներ և սուլֆատներ. աղիությունը 19,1 տոկոս է։

44. Ստրաբոնը նկատի ունի տատեխ ձուկը։

45. Ստրաբոնը շփոթում է, քանզի Վանա լճի ջրերը ելք չունեն, իսկ Տիգրիսն էլ հոսում է այլ հունով՝ լճից շատ հեռու։

46. Քալինիտիս և Օսիս— բնակավայրեր Հյուսիսային Միջագետքում։

47. Սեմիրամիս— հայկական Շամիրամն է։

48. Հիպպարեոս— հույն նշանավոր աստղաբաշխ, որի գործերը մեզ չեն հասել։

49. Սյուսպիրիտիս— Բարձր Հայքի յոթերորդ գավառն է, հայկական Սպերը, ընդգրկում է Ճորոխ գետի վերին հոսանքը, այժմ՝ Իսպիր։ Կա նաև տեսակետ, որ այն համապատասխանում է ասուրական արձանագրություններից Շուբրիա երկրին, որը տեղադրվում է Աղձնիքում։

50. Քաղաք Սպեր գավառում։

51. Նեսայան ձիեր— արագավազ և դիմացկուն ձիերի մի տեսակ, որ տարածված էր Մարաստանում և Պարսկաստանում։

52. Այսինքն՝ Պարսից արքայից արքային։

53. Այստեղից պարզվում է, որ պարսից Միհր աստծո տոնախմբություների համար Հայաստանը տրամադրում էր 20 հազար մորուկ։

54. Խոսքը Հայոց Արտավազդ II թագավորի (55—34) մասին է։

55. Տե՛ս 208-րդ էջի № № 6—9 ծանոթագրությունները։

56. Սխոյնոս (բառացիորեն՝ պարան)— երկարության միավոր. մեկ սքոյնոսը հավասար է 40 ասպարեզի, այսինքն՝ յոթ կիլոմետրի։ Ուրեմն, ըստ Թեոփանեսի, Հայաստանի լայնությունը հասնում էր 700 կիլոմետրի, իսկ երկարությունը՝ 1400 կիլոմետրի, որն, անշուշտ, չափազանցություն է։

57. Գետ Հյուսիսային Հունաստանում (Թեսալիա), այժմ՝ Սալամբրիա, նախապես կոչվում էր Արաքս։

58. Տեմպե— կիրճ և հովիտ Թեսալիայում՝ Օլիմպոս և Օսսա լեռնագագաթների միջև։

59. Բնագրի այս հատվածում կա հայերենով չարտահայտվող հունարեն բառախաղ։

60. Կալլիսթենես Օլինթացի (370—328)— հույն պատմագիր, Արիստոտելի ազգականն ու աշակերտը, Ալեքսանդր Մակեդոնացու աշակերտակիցն ու ընկերը։ Կալլիսթենեսը ուղեկցել է Ալեքսանդրին՝ նրա արշավանքների ընթացքում և դրանց տալավորության ներքո գրել «Գործք Ալեքսանդրի» երկը, որից միայն առանձին հատվածներ են պահպանվել։

61. Թեսալական ծագում ունեցող ցեղեր։

62. Տեղադրությունը հայտնի չէ, սակայն որոշ գիտնականներ այն նույնացնում են Հայոց Ուխիք նահանգի հետ։

63. Պարսկական աստվածություն։

64. Այսինքն՝ «Աշխարհագրության» Մեդիային նվիրված բաժնում։

ՊԼՈՒՏԱՐՔՈՍԸ ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պլուտարքոսը Հռոմեական կայսրության շրջանի ճանաչական պատմագրության ամենաաչքի ընկնող դեմքերից մեկն է: Նա ծրնվել է մ. թ. շուրջ 45 թվականին, Բեովտիայի Քերոնեա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում: Ստացել է իր ժամանակի համար փայլուն կրթություն, սովորել է Աթենքի ուսումնագիտական կենտրոնում: Որոշ ժամանակ բնակվել է Հռոմում և մոտիկ ճարտերություններ հաստատել Տրայանոս և Հադրիանոս կայսերի հետ: Մտել է պետական ծառայության մեջ՝ վարելով արխոնտի և պրոկուրատորի պաշտոններ, եղել է Դելֆյան տաճարի էուր, միաժամանակ զբաղվել է նաև ճարտասանությամբ, գրականությամբ ու փիլիսոփայությամբ: Պլուտարքոսը մահացել է Քերոնեայում մոտ 127 թվականին:

Պլուտարքոսը ունեցել է բեղուն գրիչ. նրա շուրջ 210 անուն աշխատություններից մեզ են հասել 150-ը, որոնք բաժանվում են երկու խմբի՝ կենսագրական-պատմագրական և բարոյախոսական: Առաջին խումբը, որը կոչվում է «Զուգահեռ կենսագրություններ» («Զուգակշիռ»), իրենից ներկայացնում է մի ճավաքածու՝ հունական և հռոմեական քաղաքական ու ռազմական 70 գործիչների զուգահեռ շարադրված (մի հույն և մի հռոմեացի) կենսագրությունների: Սրանցից մեզ են հասել 23 զույգ զուգահեռ կենսագրություններ և չորս կենսագրություն առանձին, ընդամենը՝ 50 կենսագրություն: Ինչպես խոստովանում է Պլուտարքոսը՝ «Զուգահեռ կենսագրությունները» զուտ պատմական երկեր չեն, այլ դրանք իր հերոսների նկարագրի բնութագրումներն են, նրանց մարդկային արժանիքների ու թուլություններ գրական դիմանկարները: Հակասելով պատմական իրողությանը, ճնադատաբար չմոտենալով իրադարձություններին՝ Պլուտարքոսը իդեալականացնում է իր նկարագրած պատմական գործիչներին, և ընդհակառակը՝ խիստ բացասական գծերով բնութագրում Հռոմի քաղաքական հակառակորդներին: Պլուտարքոսի բացահայտ հռոմեական կողմնորոշումը և ծայր աստիճան միապետամոլությունը իրենց զգացնել են տալիս հատկապես այն ժամանակ, երբ նա խոսում է միհրդատյան և հայ-հռոմեական պատերազմներին մասնակցած զորավարների (Լուկուլլոս, Պոմպեոս, Կրասոս, Անտոնիոս) մասին: Նա արդարացնում է հռոմեական ընշամաղց ու փառամոլ այդ զորավարների ճվանողական պատերազմներն Արևելքում, գեղազարդում Հռոմի եսակենտրոն, շահադիտական նկրտումները մյուս ժողովուրդների նկատմամբ:

Այնուհանդերձ, Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ» անհրաժեշտ աղբյուր են Հայաստանի պատմության ուսումնասիրման համար: Այստեղ մեծ թվով տեղեկություններ կան մ. թ. ա. I դարի Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքի վերաբերյալ, որոնք, սակայն, պետք է օգտագործել խիստ խնամքով ու զգույշ:

Պլուտարքոսից ստորև բերված բոլոր հատվածները տրվում են Պ. Հ. Հովհաննիսյանի թարգմանությամբ, որը կատարված է «Плутарх. Сравнительные жизнеописания (издание подготовили М. Е. Грабар-Пассек, С. П. Маркиш и С. И. Соболевский, т. I—III, М., 1961—1964» ռուսերեն հրատարակությունից:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

ԶՈՒԳԱՀԵՌ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լուկուլլոս

XXXI ... Պատմում են, թե կարթագենացի Հաննիբալն այն բանից հետո, երբ Անտիոքոսը[1] հռոմեացիների հետ մղվող պատե-

քազմը վերջնականապես տանուլ տվեց[2], գնաց Արտաշես Արմենի արքունիքը, որին բաղում պիտանի խորհուրդներ ու հրահանգներ տվեց: Բացի այդ, նկատելով չօգտագործված ու լքված, սակայն բացառիկ հարմարադույն և ակնահաճո մի վայր[3], նա այդ տեղում ուրվագծելով քաղաքի հատակագիծը՝ կանչեց Արտաշեսին և ցույց տալով նրան այդ վայրը՝ համոզեց քաղաք կառուցել այստեղ[4]: Թագավորն ուրախությամբ համաձայնվեց և խնդրեց Հաննիբալին, որ նա անձամբ իր վրա վերցնի շինարարական աշխատանքների վերակացությունը[5]: Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր:

1. Խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծի մասին է:

2. Այստեղ հեղինակը նկատի ունի մ. թ. ա. 190 թ. Անտիոքոս Մեծի՝ հռոմեացիներից կրած պարտությունը Մագնեսիայի ճակատամարտում:

3. Այդ վայրը այժմյան Խորվիրապի շրջակայքն է՝ Արաքսի ձախ ափին:

4. Պլուտարքոսի հաղորդումը Արտաշատի հատակագծի մասին խիստ կարևոր է: Արտաշատը արտաքինից այնպիսի տեսք է ունեցել, որ առիթ է տվել Պլուտարքոսին պնդելու, թե քաղաքի կառուցման հիմքում ընկած է եղել մեկ միասնական հատակագիծ: Ընդ որում, դա ապացուցվում է նաև Արտաշատում կատարվող հնագիտական պեղումների տվյալներով:

5. Գիտության մեջ հաստատված այն կարծիքը, թե Հաննիբալի այցը Հայաստան անհավանական է, այժմ ենթակա է վերանայման: Հաննիբալը կարող էր կարճ ժամանակ ապրած լինել Հայաստանում անմիջապես Անտիոքոս III-ի՝ Մագնեսիայի մոտ հռոմեացիներից կրած պարտությունից (190 թ.) հետո (տե՛ս И. Ш. Кораблев, Ганнибал, М., 1976, էջ 319):

ԱՐՏԱՇԵՍ I–Ի ԱՐԱՄԵԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտաշես I–ի ու նրա ժամանակի, կատարած նորամուծությունների մասին նշանակալից աղբյուրներ են նրա արամեերեն լեզվով թողած արձանագրությունները: Այդ արձանագրությունները հայտնաբերվել են շնորհիվ պատահական գյուտերի և առ այսօր զրանցից հայտնի են իններ (հինգը՝ Սևանից): Արձանագրությունների վերծանությամբ զբաղվել են Ա. Յա. Բորիսովը, Ի. Մ. Դյակոնովը, Կ. Բ. Ստարկովան, Ա. Դյուպոն-Սոմերը, Գ. Տիրացյանը, Ա. Գ. Փերիխանյանը և ուրիշներ: Բոլոր ուսումնասիրողներն էլ (չնչին բացառություններով) պնդում են, որ այս արձանագրություններ Արտաշես I–ի հողաբաժան այն սահմանաքարերն են, որոնց մասին որոշակիորեն հիշատակել էր դեռևս Մովսես Խորենացին (տե՛ս սույն հատորի 207–րդ էջը):

Գյուղերի և ագարակների հողաբաժան այդ սահմանաքարերը, ինչպես նշում է Գ. Խ. Սարգսյանը, արդյունք էին Արտաշես I–ի հողային այն բարեփոխությունների, որոնց նպատակն էր կարգավորել հողի մասնավոր սեփականության զարգացման ընթացքը, մեղմել հողատերերի և գյուղական համայնքների միջև ստեղծված հակասությունները: Արձանագրությունները արժեքավոր վկայություններ են պարունակում նաև Արտաշես I–ի ծագման, տոհմի և պատվատիտղոսի մասին:

Նկատի ունենալով, որ արձանագրությունները մեծ մասամբ միօրինակ են (առանձին բացառություններով), հրեստոմատիայում բերում ենք դրանցից միայն երկուսը:

1.

Արձանագրությունը հայտնաբերվել է 1957 թ. մայիսին, Սևանա լճի հարավարևմտյան կողմում՝ Մարտունու շրջանի Ծակքար գյուղի դաշտում. բարձրությունը 77 սմ է, լայնությունը՝ 36 սմ, հաստությունը՝ 17 սմ: Կորողի վերևի մասը պսակված է երեք բնորոշ ատամելուատներով:

Արձանագրության հայերեն տեքստը տալիս ենք Գ. Տիրացյանի թարգմանությամբ (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1957, № 10, էջ 105—109):

1. Արտաշես արքան,

2. Զարեհի[1] որդին,

3. Երվանդական[2], բաժանեց

4. հողը

5. մասերի (բաժիններին)[3]

1. Արտաշես I–ի հայրը՝ Զարեհը, հայ մեծատոհմիկներից էր, որը, հավանաբար, ամուսնացած էր Երվանդունիների թագավորական հարստության արքայադստերերից մեկի հետ:

2. Ըստ երևույթին, Ճշմարտություն է այն, որ Արտաշեսը սերում էր Երվանդուհիներից, սակայն ոչ ուղիղ գծով (այսինքն՝ հոր կողմից), այլ՝ մոր կողմից: Ինչևիցե, Արտաշեսը իրեն համարում էր իր իսկ տապալած Երվանդունի

հարստության շառավիղ, որպեսզի դրանով ամրապնդեր իր իշխանության իրավական հիմքերը և բարձրացներ իր հեղինակությունը։

3. Համառոտ այստեղ ևս պետք է ընթերցել «գյուղերի միջև» (տե՛ս հաջորդ արձանագրության 5-րդ տողը)։



Նկար 11. Արտաշես I-ի սահմանաքարերը՝ արամեերեն արձանագրություններով (մ. թ. ա. II դար)

2.

Արձանագրությունը հայտնաբերվել է 1971 թ. Իջևանի շրջանի Թեղուտ գյուղի մոտակայքում՝ իր կրկնօրինակի հետ միասին:

Արձանագրություն պարունակող կոթողը վերևում ունի 42 սմ, իսկ ներքևում (պատվանդանին ամրացնելու համար նախատեսված ելուստի մոտ)՝ 23 սմ լայնություն: Բարձրությունը, առանց ելուստի՝ 66 սմ, հաստությունը՝ 22 սմ: Ելուստի երկարությունն է 32 սմ: Առկա են և կոթողը պսակող ատամելուստներ:

Արձանագրությունը ընթերցել է Ա. Փերիխանյանը (տե՛ս **A. Périckhanian,** Les inscriptions araméennes du roi Artashès, «Revue des E'tudes Arméniennes» (nouvelle série), t. VIII, Paris, **1971, էջ 169—174): Արձանագրության ստորև բերված հա-**

յերեն տեքստը տալիս ենք համաձայն Ա. Փերիխանյանի ֆրանսերեն թարգմանության:

1. Արտաշես արքա երվանդականի,
2. Զարեհի որդու, Բարու[1], թագակիրի,
3. . . . . .[2] 10-րդ տարում[3]։ Արտաշեսը
4. Զարեհի որդին, բաժանեց
5. հողը գյուղերի միջև։

1. Հելլենիստական երկրներում լայն կիրառում ունեին պատվատիտղոսները, որոնցով շեշտվում էր այս կամ այն տիրակալի գործունեության կամ խառնվածքի հատկանշական կողմը։ Արտաշես I-ի «Բարի» պատվատիտղոսը հավասարազոր է հունական «Եվսեբեսին» («Բարեպաշտ») կամ «Եվերգետեսին» («Բարեգործ»)։

2. 3-րդ տողում ընթերցվում, բայց դեռևս լրիվ չեն պարզաբանվում երկու բառ՝ արամեերեն՝ հշխսրտ և վնկպր։ Սրանք ևս պետք է լինեն արքայի պատվատիտղոսներ։

3. Արձանագրությունը, հետևաբար, գրված է շուրջ մ. թ. ա. 180 թվականին։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՔԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ԺԶ

Բոլոր առաքինություններից և ճշմարիտ գործերից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմանները որոշել, որովհետև նա մեր երկիրը բազմամարդացրեց շատ ժողովուրդներ բերելով, որոնց բնակեցրեց լեռներում, հովիտներում ու դաշտերում։ Սահմանների համար նա նշաններ հաստատեց այսպես. հրամայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեջները պնակի նման փոսացնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր[1]։ Սրա վրա նախանձելով՝ սասանորդի Արտաշիրը[2] հրամայում է Պարսկաստանում էլ նույնանման անել և իր անունով կոչել, որպեսզի Արտաշեսի անունը չհիշվի։

Բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայաստանում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտայինը, այնքան շենացել էր երկիրը։

1. Արտաշես I-ի կանգնեցրած հողաբաժան սահմանաքարերի մասին խորենացու ամբ սույն նկարագրությունը երկար ժամանակ համարվել է Պատմահոր

երևակայության արդյունք և հռչակվել անվավեր։ Հետագայում, այդ քարերից մի քանիսի հայտնաբերումից հետո, Խորենացու հաղորդումը ճանաչվել է վավերական։

2. Խոսքը Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր Պապականի (224—241) մասին է։

ՀԱՅ-ՍԵԼԵՎԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Մ. Թ. Ա. 165 Թ.) ԸՍՏ ՊՈՐՓՅՈՒՐԻ ԵՎ ՀԻԵՐՈՆԻՄՈՍԻ

Մ. թ. ա. II դ. 60-ական թվականներին Մեծ Հայքի թագավորության և Սելևկյան տերության փոխհարաբերությունների, որոնց միջև 165 թ. սկսված ռազմական բախման և ճարակից այլ հարցերի մասին որոշ տեղեկություններ են պահպանվել հրիստոնեական եկեղեցու ամենահարկաոուն հայրերից մեկի՝ Հիերոնիմոսի (335—420) մոտ:

Հիերոնիմոսը ժամանակի աչքի ընկնող մտավորականներից մեկն էր, նա թողել է պատմական, բեռականական, թարգմանական, աստվածաբանական և այլ բնույթի բազմաթիվ գործեր, որոնց թվում Վուլգատան՝ Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը և նվսերեոս Կեսարացու «Քրոնիկոնի» համառոտագրած լատիներեն թարգմանությունը: Իր մեկնողական երկերից մեկում Հիերոնիմոսը վերլուծության է ենթարկում հայտնի նույն փիլիսոփա և պատմաբան Պորփյուրի (234—305) ստեղծագործություններից մեկը, որտեղ հեղինակը բննարկում է Դանիելի մարգարեությունը, նպատակ ունենալով ցույց տալ, թե դա ոչ այլ ինչ է, եթե ոչ «անցյալի վրա հիմնված մարգարեություն»: Պորփյուրի նպատակն է եղել ցույց տալ, որ Դանիելի մարգարեությունները ծայրեծայր հիմնված են պատմական, և այն էլ անձնապես Անտիոքոս IV Էպիփանեսին վերաբերող դեպքերի վրա, ուստի և նա Հիերոնիմոսի միջոցով մեզ հասած խեղդո առարկա հատվածներում ջանում է այդ պատմական փաստերը, այդ թվում Արտաշես I-ին և Հայաստանին վերաբերող, միանշանակել Դանիելի մարգարեության համապատասխան հատվածներին: Հիերոնիմոսը մեկ առ մեկ մեջ է բերում Պորփյուրի կողմից առաջարկված՝ Դանիելի գրքի հատվածների մեկնություններ և իսկույն բննադատության ենթարկում դրանք՝ բերելով իր փաստարկները և կատարելով լրացումներ: Ահա այս դեպքերում է, որ Հիերոնիմոսը անդրադառնում է հայ-

սելևկյան պատերազմին, որի ելքի մասին նրա հաղորդածը շատ **կողմերով տարբերվում է Դիոդորոս Սիկիլիացու և Ապպիանոսի համապատասխան վկայություններից:**

Հիերոնիմոսից ստորև բերված հատվածների թարգմանությունը լատիներենից կատարել է Գ. Խ. Սարգսյանը՝ «Patrologiae cursus complectus. Tomus XXV, S. **Hieronymi**, tomus V, Parisiis, 1845» հրատարակությունից, որը վերցրել ենք «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (Երևան, 1966) աշխատությունում զետեղված «Նոր մատենագրական նյութեր Արտաշես I-ի մասին» հավելվածից (էջ 242—247):

ՀԻԵՐՈՆԻՄՈՍ

Գիրք V, էջ 667

Անհիմն կերպով Պորփյուրը փոքրիկ եղջյուրի տակ, որը բուսնել է տաս եղջյուրներից հետո[1], ենթադրում է Անտիոքոս Էպիփանեսին[2], և տաս եղջյուրներից երեք պոկվածների մեջ (տեսնում) վեցերորդ Պտղոմեոսին՝ Փիլոպատոր մականվամբ[3], յոթերորդ Պտղոմեոսին՝ Եվերգետես մականվամբ[4] և Հայաստանի թագավոր Արտաքսիասին... Թեև դիտենք, որ Անտիոքոսն իսկապես մարտնչել է[5] Արտաքսիասի դեմ, բայց և (հայտնի է), որ վերջինս պահպանեց իր նախկին իշխանությունը[6]։

Գիրք V, էջ 722

Եվ ահա այս տեղում[7] Պորփյուրը այսօրինակ անիմանալի բաներ է դառանցում Անտիոքոսի մասին. մաքառելով,— ասում է,— եգիպտացիների դեմ և կորելով անցնելով Լիբիան և Եթովպիան, կլսի, որ իրեն հյուսիսից և արևելքից մարտերի են հորդորում, և դառնալով այնտեղից կնվաճի ընդդիմացող արադցիներին[8] և կավերի Փյունիկիայի ծովափի ամբողջ նահանգը։ Եվ անմիջապես կշարունակի արշավանքը Հայաստանի թագավոր Արտաքսիասի դեմ, որը շարժված կլինի արևելյան կողմերից և, կատորելով նրա մարդկանցից շատերին, կհաստատի իր վրանը Ապեդնոն[9] կոչված վայրում, որը գտնվում է երկու լայնահուն գետերի՝ Տիգրիսի և Եփրատի միջև։

1. Հիերոնիմոսը նկատի ունի Աստվածաշնչի Դանիելի գրքի է, 8-րդ հատվածի Պորփյուրի մեկնությունը, որը նա մերժում է և քննադատում։

2. Խոսքը Սելևկյան Անտիոքոս IV էպիփանես թագավորի (175—164) մասին է։

3. Այստեղ Հիերոնիմոսը շփոթել է. եգիպտոսի Պտղոմեոս VI թագավորի (180—145) մականունը ոչ թե Փիլոպատոր էր, այլ Փիլոմետոր։

4. Այս դեպքում ևս Հիերոնիմոսը շփոթել է. Պտղոմեոս VII-ի (145—144) մականունը նույնպես Փիլոպատոր էր և ոչ թե Եվերգետես։

5. Հայ-սելևկյան սույն պատերազմը տեղի է ունեցել մոտավորապես մ. թ. ա. 165 թվականին։

6. Դիոդորոս Սիկիլիացին և Ապպիանոսը հայ-սելևկյան այս պատերազմի ելքը բնութագրում են որպես հայերի պարտություն։ Սակայն Հիերոնիմոսի— Պորփյուրի սույն տեղեկությունը ենթադրել է տալիս, որ իրականում Արտաշես I-ը ետ է մղել սելևկյան զորքերի հարձակումը։

7. Խոսքը Աստվածաշնչի «Մարգարէութիւն Դանիէլի» գրքի ԺԱ, 44—45 հատվածի Պորփյուրի մեկնության մասին է։

8. Աբան— քաղաք-պետություն Փյունիկիայում։

9. Ապեղեռն— քաղաք Հյուսիսային Միջագետքում։ Այն հանգամանքը, որ պատերազմից հետո Անտիոքոս IV-ը իր վրանը (ճամբարը) խփում է Հայաստանից դուրս՝ Միջագետքում, ապացուցում է, որ սելևկյան բանակների արշավանքն անցել էր ապարդյուն և Հայաստանը պահպանել էր իր ինքնուրույնությունը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱՇԵՍ I-Ի ԺԱՄԱՆԱԿ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ՇԳ

Զորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում[1] (Արտաշեսը). արևելյան կողմի զորքը թողնում է Արտավազդին[2], արևմտյանը տալիս է Տիրանին[3], հարավայինը վստահում է Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ Զարեհին։ Զարեհը գոռոզ մարդ էր, երեների տրի մեջ խիզախ, բայց պատերազմների մեջ երկչոտ և դանդաղկոտ։ Այս բանը փորձով գիտենալով, վրաց թագավորը՝ մի ոմն Քարձամ, ապստամբեցնում է այդ երկիրը և Զարեհին բռնելով բանտարկում է Կովկասում[4]։ Բայց Արտավազդն ու Տիրանը Սմբատի հետ նրա դեմ պատերազմելով՝ իրենց եղբորը ետ են դարձնում, մեծ տղմից[5] հանելով։

1. Հայկական զորքը չորս զորավարությունների բաժանելու վերաբերյալ Խորենացու սույն վկայությունն, ըստ երևույթին, փոխարձագանքն է նույն չորս ուղղություններով հայկական զորքերի կատարած այն արշավանքների մասին, որոնք վկայված են Ստրաբոնի մոտ։

2. Արտավազդը Արտաշես I-ի ավագ որդին էր, որը հոր մահից հետո հրոչակվեց Հայոց թագավոր (160—115)։

3. Տիրանը Արտաշեսի որդիներից մեկն է, որն այլ աղբյուրներից հայտնի է Տիգրան ձևով։ Հայոց Տիգրան I (115—95) թագավորն է (տե՛ս 262-րդ էջի № 1 ծան.)։

4. Այս իրադարձության մանրամասն մի տարբերակ պահպանվել է նաև «Քարթլիս Ցխովրեբայում» (տե՛ս սույն հատորի 215—216-րդ էջերը)։

5. Բնագրում՝ «ի մեծէ կարկամէ», որ նշանակում է տիղմ, տղմուտ։ Մ. Մալխասյանցի կարծիքով, Խորենացին այստեղ է կոչել Զարեհի կալանքի տեղը՝ խոնավ և տղմոտ լինելու պատճառով։

ԼԵՈՆՏԻ ՄՐՈՎԵԼԻՆ ԱՐՏԱՇԵՍ I-Ի ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԵՈՆՏԻ ՄՐՈՎԵԼԻ

ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ՈՒ ՏՈՀՄԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Արշակունիաններ), էջ 44—50

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ[1] ՓԱՐՍՄԱՆ ԵՎ ԿԱՈՍ ԱՐՇԱԿՈՒՆԻԱՆՆԵՐԸ[2], ԲԱՐՏՈՄԻ ԵՎ ՔԱՐԹԱՄԻ ՈՐԴԻՆԵՐԸ

Իսկ Ադերկիից[3] մինչև սրանց թագավորելը սոմեխների (հայերի) թագավորների հպատակության ներքո էին (քարթվելները)։ Եվ առավելապես արմազեցի[4] թագավորներն օգնում էին սոմեխներին նրանց բոլոր թշնամիների դեմ։ Այնժամ Սոմխիթում (Հայաստանում) թագավոր դարձավ այն մեծ արքա Երվանդը[5]։ Եվ նա մոռացավ քարթվելների բարեգործությունները, բռնացավ Փարսման Արմազեցու վրա և վերցրեց (գրավեց) Քարթլիի սահմաններից Ծունդա քաղաքը[6] և Արտանին[7] մինչև Մտկվարի գետը։ Եվ բնակեցրեց Ծունդայում դևերին ազգակից, գազանաբարո մարդիկ, և Ծունդան կոչեց Քաջաւուն անվամբ, որը թարգմանվում է Դևերի տուն[8]։ Եվ Քարթլիի թագավորները չկարողացան ետ վերցնել (նըշված) սահմանը, և մահացան մեծ տրտմության մեջ Փարսմանը և Կաոսը։

Եվ նրանցից հետո թագավոր նստեցին նրանց որդիները, Արմազում՝ Արղոկը և Շիդա Քարթլիում՝ Արմազելը։

Իսկ այս Արմաջել և Արջուկ թագավորները քաջ և հաղթող մարդիկ էին։ Եվ սրանք պայմանավորվեցին և որոշեցին Քարթլիի սահմանները (ետ) գրավել։ Այն ժամանակ Սումբատ Բիվրատիանը[9] սպանեց Երվանդին՝ սոմեխների թագավորին, և թագավոր հաստատեց Երվանդի եղբորը, որին անվամբ կոչում էին Արտաշան[10]։ Այնժամ Քարթլիի այս Արջուկ և Արմաջել թագավորները դիմեցին օսերին (օվսերին)[11] և լեկերին (լեզգիներին) և բերեցին օսերի թագավորներին, երկու դյուցազն եղբայրներին՝ Բաղուկ և Անբաղուկ անվամբ, օսերի զորքով հանդերձ։ Եվ նրանք իրենց հետ բերեցին պաճանիկներին և ջիքներին[12]։ Եկավ լեկերի թագավորը և բերեց դուրձակներին[13] ու դիդոներին[14]։ Եվ այս թագավորները Քարթլիի ժողովեցին իրենց զորքը, և ժողովվեց այս ամենով անթիվ բազմություն։ Եվ հաջողությամբ ծածուկ հավաքվեցին, մինչև որ սոմեխների զորքը կժողովվեր։ Եվ սրանք ներխուժեցին Սոմխիթ և անսպասելիորեն ասպատակեցին Շիրակուանը[15] և Վանանդը մինչև Բագրեւանդ ու Բասիան[16], և ետ դարձան և ավարառության ենթարկեցին դաշտը[17] մինչև Նախճավան, և վերցրին գերի ու ավար անթիվ, և ամենայն հարստությամբ առլեցուն դարձան անցան Փառիսոսի ճանապարհով։

Այնժամ Սումբատ Բիվրատիանը կանչեց Սոմխիթի զորքին, շտապ հավաքվեցին սոմեխները և սկսեցին հետապնդել։ Իսկ այս բոլոր հյուսիսականները անցել էին Մտկվարին և հասել էին Կամբեջոան, և ճամբար էին դրել Խորի (դետի) ափին[18] ու բաժանում էին գերիներին ու ավարը։ Այդ ժամանակ Սումբատը ուղարկեց պատվիրակ և հայտարարեց. «Ինչ որ Սոմխիթից ավար, անասուն, ոսկի, արծաթ և գործվածքեղեն եք վերցրել, (այդ) ամենը ձեզ եմ ընծայում, և որքան էլ սոմեխների արյուն եք հեղել, դրա համար էլ վրեժխնդիր չենք լինի, սակայն այն մարդկանց, որ այժմ գերի են ձեզ մոտ, արձակեցեք, և խաղաղությամբ գնացեք, հարստացած ու ամենայն (բարիքով) առլեցուն»։ Իսկ նրանք այսպիսի պատասխան տվեցին. «Սոմխիթ ենք մտել ոչ թե ուրիշ պատճառներով, այլ քեզ գտնելու համար, բայց չգտանք քեզ։ Եվ արդ եկել ես մեզ մոտ, ընդունիր քո բաժինը, ապա թե ոչ կգանք քեզ վրա, ուր էլ լինես մեր ձեռքից ողջ չես ազատվի»։

Այնժամ Սումբատ Բիվրատիանը անցավ Մտկվարին։ Եվ օսերի թագավոր Բաղուկը խնդրեց նրան իր հետ մենամարտել, ուղարկեց պատվիրակ և առաջարկեց իր հետ անձամբ կռվել։ Իսկ Սումբատը զինվեց և հեծավ իր նժույգը ու անցավ կռվողների միջով։ Եվ այնտեղից էլ դուրս եկավ Բաղուկը։ Զայն տվին միմյանց և հարձակվեցին (իրար վրա)։ Եվ Սումբատը նիզակով հարվածեց նրա գոտուն ու դուրս եկավ (նիզակը) թիկունքից մեկ կանգուն, վերցրեց ձիու վրայից և գետին տապալեց։ Այնժամ հարձակվեց Անբաղուկը՝ իր եղբորն օգնելու միտումով, սակայն Սումբատը դուրս քաշեց այն նիզակը, ընդառաջ գնաց նրան և նույնպես հարվածեց ու դուրս հանեց (թիկունքից), վերցրեց և գետին տապալեց, ասելով. «Այս էլ սոմեխների կանանց ու տղամարդկանց, տղաների, մանուկների համար, որոնց դուք կոտորեցիք»։ Այնժամ նրանց՝ օսերի, լեկերի և քարթվելների, ու բոլոր նրանց հյուսիսային ցեղերի զորքերը միաբերան բացականչեցին ու ասացին. «Քանզի սպանվեցին այս երկու եղբայրները, բոլոր դյուցազունների գլխավորները, ապա մեր մահը ամենևին էլ ամոթաբեր չի լինի»։

Եվ առավել կատաղեցին, բոլորը գումարվելով Արջուկի և Արմաջելի՝ Քարթլիի թագավորների սպասալարության[19] ներքո, բոլորը հարձակվեցին Սումբատի և սոմեխների զորքի վրա։ Այնժամ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ նրանց միջև և երկարեց նրանց միջև մարտը ժամը երեքից մինչև ինը։ Եվ երկուստեք անթիվ կոտորվեցին, և փոշին բարձրացավ, ու օրը մթնեց հանց գիշեր։ Եվ իրար խառնվեցին միանգամայն և փոշու պատճառով իրար չէին ճանաչում։

Այնժամ պարտվեց հյուսիսականների բանակը սոմեխներից, բոլորը փախուստի դիմեցին և ցիրուցան եղան, հարձակման անցավ Սումբատը, որը բազում ի բազմից վիրավորվել էր, և հետապնդեց մինչև գիշեր։ Եվ կոտորեց բոլոր օսերին և լեկերին, որոնցից քչերը փրկվեցին, իսկ քարթվելները ավելի շատ փրկվեցին փախուստի ճանապարհները գիտենալու շնորհիվ։ Եվ պատսպարվեցին Քարթլիի երկու վիրավոր թագավորներն էլ Մցխեթայում[20]։

Այնժամ Սումբատը հաղթանակած մուտք գործեց Քարթլի, և ավերեց Քարթլին՝ այն ամենը, ինչ գտավ բերդերից և քաղաքներից դուրս, իսկ բերդ-քաղաքների դեմ չէր մարտնչում, քանզի շտապ (արշավանքի) ելնելու պատճառով պատրաստ չէր (դրան)։

Այլև շինեց բերդ Օձրխեվի երկրում, որը կոչվում է Սամցխե[21], այն Դեմոթի կոչվող վայրում, Ղադո լեռան[22] կատը։ Եվ դետեղելով դրա մեջ զորք՝ ծունդացիներին օգնելու համար, (ինքը) գնաց օձրխեվցիների դեմ մարտնչելու։

Իսկ Քարթլիի այս թագավորները՝ Արղոկը և Արմազելը, ընդունց սրտի դաժանությունից չերկնչեցին, այլ ամրապնդեցին իրենց բերդերը և քաղաքները, Քարթլիի բոլոր դաշտավայրերը զինջեցին, բայց չդադարեցին սոմեխների դեմ ասպատակություններ ձեռնարկելուց։

Եվ սկսեցին օսերն իրենց արյան վրեժն առնել սոմեխներից, եկան Քարթլի և բարեկամացան քարթվելների հետ, ի մի գումարվեցին օսերը և քարթվելները, և մշտապես կռվում էին սոմեխների դեմ։ Եվ Օձրխեվ քաղաքում կար Արմազել թագավորի էրիսթավ՝ աղնավուրներից[23], և նա հավատով հավատարիմ էր մնացել Արմազելին, և նրան օգնում էին մեգրելները։ Իսկ ծունդացիները և դեմոթեցիները օգնում էին միմյանց, և անդադար մարտնչում էին։ Եվ գլխավոր ճակատամարտը եղավ այն գետի վրա, որին Նոստե[24] են կոչում։

Եվ Կլարջեթում[25] կար Արղոկ թագավորի էրիսթավ՝ աղնավուրներից։ Եվ նա վնասում էր սոմեխների սահմանները, Պարխալի երկրում, որը Տաոն է[26], և այնտեղից ոչ ոք չէր մուտք գործում Կլարջեթ, քանզի անանցանելի և ամուր էր անտառներով և լեռներով, իսկ Կլարջեթի բնակիչներն էլ ուժեղ և ռազմիկ մարդիկ էին։

Իսկ իրենք՝ Քարթլիի թագավորները, ասպատակում էին Սոմխիթը Արոցի[27] ճանապարհով, և այսպես քարթվելները մշտապես ավարառություն էին կատարում։ Այնժամ շարժվեց իր ողջ զորությամբ սոմեխների արքան, և նրա սպարապետ Սումբատ Բիվրատիանը։ Իսկ քարթվելները ամրացրին բերդերը և քաղաքները, և զորք բերեցին Օվսեթից ու լցրին բերդերը և քաղաքները։ Եվ եկան սոմեխները ու կանգ առան Մցխեթայում, և պատերազմեցին հինգ ամիս։ Եվ ամեն օր դյուցազների գոտեմարտ էր տեղի ունենում։ Այնժամ նեղն ընկան քարթվելները և օսերը, ու հաշտություն խնդրեցին, խոստանալով հպատակվել և արյան ու սահմանների համար վրեժխնդիր չլինել։ Այնժամ ունկնդրեց սոմեխների արքան

Նրանց աղերսանքին։ Եվ ուխտ ու պայման դրվեց, և ստրկացնելով քարթվելներին ու օսերին, սոմեխների արքան գնաց։

Իսկ այս ընթացքում անցան մի քանի տարիներ, և վերաշինվեց սոմեխներից ավերված Քարթլին։ Այնժամ սոմեխները զբաղված էին, քանզի պատերազմ էին սկսել պարսիկների և հույների դեմ[28]։ Եվ այդ ընթացքում քարթվելները և օսերը ժամանակը բռնապատեհ համարեցին ու սկսեցին նեղել սոմեխներին, քանզի սոմեխների ամբողջ զորքը և երկու արքայորդիներն ու Սումբատը գտնվում էին պարսիկների դեմ (մղվող) պատերազմում։ Եվ երբ քարթվելները և օսերը սկսեցին շատ վնասել սոմեխներին, այնժամ Արտաշան արքան զորք ժողովեց, որ մնացել էին տանը և տվեց իր որդի Զարենին[29] ու հղեց քարթվելների դեմ։

Իսկ քարթվելները և օսերը ժողովվեցին ու դիմեցին դեպի Ջավախեթի երկիրը։ Եվ մարտնչեցին ու հաղթեցին քարթվելները և օսերը, փախուստի մատնեցին Զարենին՝ սոմեխների արքայի որդուն, կոտորեցին նրա ողջ զորքը և հետապնդեցին նրանց մինչև Սոմխիթի սահմանները, հասան Զարենին՝ արքայի որդուն, բռնեցին նրան այն լճի ափին, որին Ցալի[30] են կոչում և ետ տարան։

Իսկ օսերը կամենում էին սպանել այդ Զարենին՝ իրենց թագավորների արյան դիմաց, սակայն քարթվելները պահպանեցին նրա կյանքը, որպեսզի իրենց սահմանները ետ վերցնեն, և կալանավորեցին Դարիալանի բերդում[31]։ Չկարողացան նրան գտնել սոմեխները, քանզի զբաղված էին պարսիկներով։

Այնժամ երրորդ տարում եկավ Սումբատ Բիվրատիանը և արքայի երկու որդիները՝ Արտավազը[32] և Տիգրանը[33], սոմեխների ողջ զորքով հանդերձ։ Այդ ժամանակ Քարթլիի թագավորները հրամայեցին իրենց երկրին պատսպարվել բերդում և քաղաքներում, իսկ մթնուլները[34] ամրացրին բերդերն ու քաղաքները։ Իսկ սոմեխները եկան ու կանգ առան Քրիալեթում[35]։ Հանդես եկան նրանց միջև պատվիրակներ և հաշտեցրին. տվեցին քարթվելները, վերադարձրին արքայի կալանավորված որդուն, խոստանալով այսպիսի օգնություն. «Եթե որևէ թշնամի հանդես գա ձեր դեմ և պատերազմի ձեզ հետ այն կողմերում, մենք՝ երկու թագավորներս էլ անձամբ մեր զորքով կլինենք ձեր կողմից ու կօգնենք, իսկ եթե այդ կողմերում որևէ մեկի հետ պատերազմեք, հաղար-հաղարական ապառաղինված ռազմիկներով ձեզ կօգնենք»։ Եվ այս էլ խոստա-

ցան քարթվելները, որ «այս մեր քաղաքում դրամն Արտաշան արքայի պատկերով կհատենք»[36];

Իսկ այս պատճառով սոմեխները վերադարձրին Քարթլիի սահմանները՝ Ծունդա քաղաքը և Դեմոթի բերդը, Ջավախքը և Արտահանին[37]; Եվ այսուհետև եղան բարեկամ սոմեխները և քարթվելները ու օսերը։ Եվ երեքն էլ միասնաբար էին կռվում թշնամիների դեմ։

Եվ մեծապես գոհունակությամբ լցվեցին Արզոկն ու Արմազելը՝ մխիթարողները, քանզի նրանց քաջությամբ ետ վերադարձվեցին Քարթլիի սահմանները։

Եվ նրանցից հետո թագավորեցին նրանց որդիները. Արմազում՝ Ամազասպը[38], իսկ Քարթլիի ներսում՝ Դերոկը[39];

1. «Քարթլիս Ցխովրեբային» արքայացանկերը լի են մեծ խառնաշփոթություններով ու անճշտություններով։ Մ. թ. ա. IV—I դդ. համար այնտեղ նշված թագավորների մեծագույն մասը կիսառասպելական կամ մոտացածին անձնավորություններ են, ուստի անհնարին է ճշգրտել նրանց գոնե մոտավոր ժամանակագրությունը։

2. Վրացական թագավորության սկզբնավորության շրջանը (մ. թ. ա. III դար) կապվում է Փառնավազյան հարստության անվան հետ։ Սրանք հաճախ խնամիական կապեր էին հաստատում հայկական թագավորական տների, մասնավորապես Արտաշեսյանների հետ, իսկ չորրորդ թագավոր Փառնաջոմ Փառնավազյանի սպանությունից հետո, ըստ վրացական ավանդական պատմության, Քարթլիի գահին է բազմում Հայոց Արշակ թագավորի (գուցե Արտաշե՞ս) Արշակ անվանյալ որդին, որից էլ սերում են վրաց Արշակունիանները։ Հատկանշական է, որ հետևելով հայկական ավանդական պատմությանը, որը չգիտե Արտաշեսյաններին և նրանց փոխարեն մատնանշում է միայն Արշակունիներին՝ «Քարթլիս Ցխովրեբան» ևս Արտաշեսյան հարստությունն անվանում է «Արշակունիանց»։

3. Ըստ «Քարթլիս Ցխովրեբայի», այս Ագերկին պապն էր Փարսման և Կաոս Արշակունիանների։ Այժմ վրացագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ Ագերկիից սկսած վրացական գահին բազմել են մոր կողմից հայկական Երվանդունի-Արտաշեսյան տոհմից սերված թագավորներ։

4. Արմազի (Արմազցիխե)— ամրոց և քաղաք Բևդինեթի լեռան վրա՝ Մցխեթա քաղաքի դիմաց։ Այս ժամանակաշրջանում վրացական թագավորությունը բաժանված էր երկու առանձին մասերի՝ մեկը Արմազի թագավորությունն էր՝ նույնանուն կենտրոնով, ուր նստում էին Փարսմանը, իսկ այնուհետև՝ Բարտոմն ու վերջինիս որդի Արզոկը, իսկ մյուսը՝ Շիդա Քարթլիի (Ներքին Քարթլի) թագավորությունն էր՝ Մցխեթ կենտրոնով, ուր նստում էր Կաոսը, իսկ այնուհետև՝ Քարճամն ու նրա որդի Արմազելը։

5. Խոսքը Հայոց Երվանդունյաց հարստության թագավոր Երվանդ Վերջինի մասին է։

6. Ծունդա (Քալաքի Ծունդա, Քաջաուն)— Գուգարաց բդեշխության ութերորդ գավառ Ջավախքի (Ջավախեթի, այժմ՝ Ախալքալաքի շրջան) կենտրոնը՝ ներկայիս Նաքալաքևի գյուղի տեղում։

7. Արտանի (Քալաքի Արտաունիսա, Քաջաց քաղաք)— հայկական Արտահանն է՝ Գուգարաց բդեշխության յոթերորդ գավառ Արտահանի կենտրոնը։ 387 թվականից՝ Ջավախքն ու Արտահանը, ամբողջ Գուգարքի հետ, մտան Վրաստանի կազմի մեջ։

8. Մրովելին վրացերեն է ընկալել հայերեն «քաջ» բառը, որի բարգմանական նշանակությունը վրացերեն էլ մեկնաբանում է, քանի որ վրացերեն «քաջի» և «դև» բառերը հոմանիշներ են։

9. Ըստ հին հայ վիպական շարքի Արտաշեսի վեպի, Սմբատ Բյուրատյանը (Բագրատունի) Արտաշես I-ի դայակն էր, ապա նրա զորահրամանատարն ու քագադիրը։

10. Խոսքը Հայոց Արտաշես I թագավորի մասին է։ Հետաքրքիր է այն, որ «Քարթլիս Ցխովրեբան» Արտաշեսին և Երվանդին ներկայացնում է որպես հարազատ եղբայրներ, մինչդեռ, ինչպես հայտնի է, Արտաշեսի վեպում Երվանդը միայն կիսով չափ (մոր գծով) էր Արշակունի, հետևաբար բացառվում է Արտաշեսի և Երվանդի եղբայրներ լինելու հանգամանքը։ Մյուս կողմից էլ այս փաստը խոսում է Արտաշես I-ի այն ձգտման մասին, որի նպատակն էր իրեն և իր տոհմը ներկայացնելու օրինական և Երվանդունիների տան շարունակողներ, միտում, որն իր արտահայտությունը պետք է ստանար Արտաշեսի արամեատառ արձանագրություններում։

11. Այսինքն՝ ալաններին։ Սրանք բնակվում էին Կուբան գետի ակունքների շրջանից մինչև Թերեք գետի միջև ընկած տարածքում։

12. Այսինքն՝ պեչենեգներին և կովկասյան լեռնականներին։

13. Դուրձակներ (Դուրձուկնի)— ցեղ, որը բնակվում էր Հյուսիսային Կովկասում՝ Ասսա գետի վերին հոսանքում, այժմյան ինգուշների նախնիները։ Սրանց երկիրը կոչվում էր Դուրձուեթիի (Դուրձուկք)։

14. Դիդոներ (Դիդոնի)— ցեղ, որ բնակվում էր Ավարական Կոյսու գետի ակունքների շրջանում, երկիրը կոչվում էր Դիդոեթի (Դիդոյք), այժմ էլ գոյություն ունի այդ ժողովուրդը։

15. Խոսքը Շիրակավանի մասին է։

16. Այսինքն՝ Բասեն, Այրարատյան աշխարհի առաջին գավառը, այժմ՝ Փասին։

17. Խոսքը Արարատյան դաշտավայրի մասին է։

18. Իոռի (Կամբեջ)— գետ Կամբեջան գավառում, այժմ՝ Իորա։

19. Այսինքն՝ զորահրամանատարության։

20. Մցխեթա— Վրաստանի հնագույն մայրաքաղաքը, այժմ նույնանուն փոքրիկ քաղաք Վրացական ՍՍՀ-ում։

21. Սամցխե— գավառ. մեսխների ցեղի բնակատեղին, այժմ Ախալցխայի շրջանը։

22. Ղադո— Աճարա-Մեսխական լեռներն են։ Սրա շուրջը տարածված էր Մեծ Հայքի հյուսիսային կուսակալություններից մեկը՝ Գոգերձականը, որն ընդգրկում էր Սամցխե և Աճարա գավառները։ Մ. թ. 37 թ. սահմանային փոփոխու-

Բյուններրի հետևանքով՝ Գոդերձականը (Փեմոթի ամրոցով հանդերձ) անջատվեց Մեծ Հայքից և միացվեց վրացական թագավորություններ։

23. Այսինքն՝ ազնվականներից։

24. Նոստն գետ— այժմ՝ Ամարիս-Ղալի գետը։

25. Կլարջեթ— հայկական կղարջքն է՝ Գուգարքի իններորդ գավառը, որը 387 թվականից մտավ Վրաստանի կազմի մեջ։

26. Տաո— հայկական Տայքն է, Մեծ Հայքի 14-րդ նահանգը, կոչվել է նաև Տորագույն Հայք։

27. Արցղի— համապատասխանում է այժմյան Ղուկասյանի շրջանին, պատմական Հայաստանի Աշոցք գավառն է։

28. Այստեղ, ըստ երևույթին, հեղինակը նկատի ունի այն հանգամանքը, որ Արտաշեսն այդ ժամանակ արշավանքներ էր ձեռնարկել դեպի արևելք՝ Պարսկաստանի ու Մարաստանի և դեպի հարավ՝ Սելևկյանների դեմ։

29. Զարեհ— խոսքը Արտաշես I-ի Զարեհ անունով որդու մասին է։

30. Ցելի լիճ (Ծովակ Հիւսիսոյ)— այժմ Ջլդըր լիճն է (1959 մ)։

31. Դարիալաձի (Դար ի Ալան)— Ալանաց դուռն է, այժմյան Դարիալի անցքը, որտեղով անցնում է Ռազմավիրական ճանապարհը։

32. Աբտավազ— Արտաշես I-ի ավագ որդին է, հետագայում՝ Հայաստանի թագավոր Արտավազդ I (160—115)։

33. Տիգրան— Արտաշեսի կրտսեր որդին է, նույնպես Հայաստանի թագավոր՝ Տիգրան I (115—95)։

34. Այսինքն՝ լեռնականները։

35. Թրիալեթի— հայկական Բոնդն է, Գուգարքի հինգերորդ գավառը, այժմ՝ Ծալկայի շրջանը։ 387 թ. Բոնդը մտել է Վրաստանի կազմի մեջ։

36. Յայսօր Արտաշես I-ի անունով դրամներ չեն հայտնաբերվել, սակայն այս վկայությունը խոսում է արդեն այդպիսի դրամների գոյության օգտին։

37. Հեղինակը չփոթում է, քանզի Արտաշես I-ը Ջավախքը, Բոնդքը և Արտահանը վերամիավորելով մայր հայրենիքի հետ, դրանք երբեք էլ չէր կարող դարձյալ դիջել վրացիներին։ Հիշյալ երկրամասերը Մեծ Հայքից անջատվեցին և Վրաստանի կազմի մեջ մտան միայն 387 թվականից հետո։

38. Այսինքն՝ Համազասպը։

39. Դերոկի փոխարեն այլուր նշվում է Միրդատը (Միհրդատ), ըստ երևույթին, Դերոկը և Միհրդատը նույն անձնավորությունն են։

ՀԱՅՈՑ ԱՐՏԱՎԱԶԴ I ԹԱԳԱՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՄՊԵՈՍ ՏՐՈԳՈՍԻ ՄՈՏ

Պոմպեոս Տրոգոսը վաղ կայսրության դարաշրջանի Հռոմի ականավոր պատմագիրներից է: Նրա մասին կենսագրական տեղեկություններ համարյա չկան: Ծնվել է մ. թ. ա. I դարի կեսերին՝

Հարավային Պրովանսում և մահացել մոտավորապես մ. թ. I դարի 20-ական թվականներին:

Տրոգոսի գրչին է պատկանում այսպես կոչված «Փիլիպպոսյան պատմություններ» խորագրով աշխատությունը, որը բաղկացած է եղել 44 գրքերից: Սակայն, դժբախտաբար, այդ գրքերից և ոչ մեկը չի պահպանվել, բացառությամբ առանձին հատվածների, գրքերի նախաբանների ու նրանց համառոտ բովանդակության, որոնք հաղվածքներով (էպիտոմա) մեզ է հասցրել մ. թ. III դարի լատին մատենագիր Հուստինոսը: Տրոգոսի երկասիրությունն ընդգրկել է համաշխարհային պատմությունը՝ ասուրական լեգենդար թագավորներից մինչև Օգոստոս կայսեր ժամանակաշրջանը (մ. թ. ա. 20 թ.):

Այստեղ, լայն ֆոնի վրա, ներկայացված է եղել Ասորեստանի, Հունաստանի, Պարսկաստանի, Մակեդոնիայի, Սելևկյան Ասորիքի, Հայաստանի, Հրեաստանի, Պերգամոնի և Արևելքի մյուս ժողովուրդների պատմությունը: Տրոգոսը այն եզակի պատմագիրներից է, որ ոչ միայն չի ջատագովում Հռոմի պատմությունը, այլև նրան շատ ֆիչ տեղ է հատկացրել իր երկասիրության մեջ, միայն մեկ գիրք: Տրոգոսը բացասական վերաբերմունք ունի Հռոմի նկատմամբ, նա խիստ ճնշադատության է ենթարկում վերջինիս արտաքին քաղաքականությունն ու նվաճողական պատերազմները: Հեղինակը այն միտքն է զարգացնում, որ համաշխարհային բոլոր կայսրությունները, որոնք ստեղծվել են բռնության և նվաճումների շնորհիվ, անխուսափելիորեն պետք է կործանվեն: Տրոգոսի երկասիրության շեշտված հակահռոմեական ուղղվածությունը շատ բաներով է որոշել նրա հակատագիրը: Անտիկ պատմիչները խուսափում էին այն օգտագործելուց և անգամ ֆիշատակելուց: Արդեն մ. թ. V դարում «Փիլիպպոսյան պատմությունները» անդառնալիորեն կորած էին համարվում:

Պոմպեոս Տրոգոսից ստորև բերվող հատվածները տրվում են ըստ «Justini M. Juniani Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, ex recens. Fr. Ruehl, Lipsiae. 1915» հրատարակության: Առաջին և երկրորդ հատվածները տրվում են Հ. Հ. Մանանդյանի, իսկ երորդը՝ Գ. Ե. Սարգսյանի թարգմանությամբ:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ, XLII, 2

3—6. Արտավանին[1] հաջորդեց նրա որդի Միհրդատը[2], որն իր գործերի համար կոչվեց Մեծ։ ... Սա մեծ քաջությամբ վարեց հարևանների հետ բազմաթիվ պատերազմներ ու Պարթևական թագավորությանը միացրեց շատ ժողովուրդներ։ Նույնպես և սկյութացիների հետ նա մի քանի անգամ հաջողությամբ պատերազմեց և վրեժխնդիր եղավ նախորդների վիրավորանքների համար։ Վերջը կռվեց արմենների թագավոր Արտավազդի հետ[3]։

7—9. Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի մեծ թագավորության կողքից, ինչպիսին է Հայաստանը, քանի որ նրա սահմանները, Պարթևստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմանները, ընդ որում Հայաստանը կապադովկիայից մինչև Կասպից ծովը տասնմեկ հազար քայլ տարածություն ունի, իսկ լայնքով նրա երկարությունն է յոթ հարյուր հազար քայլ[4]։

1. Խոսքը Պարթևստանի թագավոր Արտավան I-ի (128—123) մասին է։

2. Նկատի ունի Պարթևստանի թագավոր Միհրդատ II-ին (123—87)։

3. Սա Հայոց Արտավազդ I թագավորն է, Արտաշես I-ի որդին ու հաջորդը, ավագ եղբայրը Հայոց Տիգրան I թագավորի։

Վերջերս կարծիք է հայտնվել (Ժ. Դ. Էլիբեկյան), որ սույն հատվածում հիշատակված պարթևական արքա Միհրդատը իրականում Միհրդատ I-ն է (171—138) և, որ այդտեղ հիշատակված պատերազմը Հայոց Արտավազդի հետ, տեղի է ունեցել մ. թ. ա. 140 թ. մոտերքը։ Կարծիքը հիմնված է Հուստինոսի կողմից Տրոգոսի բնագրի աղճատման ցուցադրման վրա։

4. Քայլը Հռոմեական կայսրությունում ընդունված երկարության միավոր էր, որը հավասար է 1,48 մետրի. 1000 քայլը հավասար էր 1 հռոմեական մղոնի, որը հավասար է մոտ 1478,7 մետրի։ Ուրեմն, ըստ Տրոգոսի, Մեծ Հայքի երկարությունը արևմուտքից դեպի արևելք հավասար էր 1100 հռոմեական մղոնի, այսինքն՝ 1650 կմ։ Լայնությունը, այսինքն՝ հարավից դեպի հյուսիս ձգվող տարածությունը, հավասար էր 700 հռոմեական մղոնի, այսինքն՝ 1050 կմ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ Մ. Թ. Ա. II—I ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XI, 14

15. Հին գրույցն այս է. իսկ առավել նորը, սկսած պարսիկներից ի վեր մինչև մեր ժամանակը, պետք է գլխավոր գծերով

պատմել։ Արմենիային տիրել են պարսիկները և մակեդոնացիները, այնուհետև նրանք, ովքեր նվաճել էին Ասորիքը և Մեդիան[1]։ Վերջին իշխողն էր յոթը պարսիկներից մեկի՝ Հյուդարնեսի[2] շառավիղ Օրոնտեսը[3]։ Այնուհետև (երկիրը) բաժանվեց երկու մասի՝ հռոմեացիների դեմ պատերազմած Անտիոքոս Մեծի սատրապների՝ Արտաքսիասի և Զարիադրիսի[4] կողմից։ Եվ իշխում էին սրանք թագավորի հանձնարարությամբ, իսկ նրա պարտությունից հետո[5] հարելով հռոմեացիներին՝ իշխեցին իրենք ինքնուրույն և թագավոր հայտարարվեցին։ Արտաքսիասի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ այսպես կոչված բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, Աղվաններին և Իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսինյան Կապադովկիա. իսկ Զարիադրիսի (շառավիղն էր) Արտանես Սոփենացին, որն ուներ հարավային և, առավելապես, արևմտյան մասերը։ Տիգրանը հաղթեց նրան և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը[6]։ (Տիգրանը) փոփոխական բախտ է ունեցել, քանի նա սկզբում պատանդ է եղել պարթևների մոտ, այնուհետև (պարթևները) որպես վարձ ստանալով 70 հովիտ Հայաստանից, նրան վերադարձնում են (գահը)։ Նա հզորանալով, թե՛ այդ վայրերը ետ վերցրեց և թե՛ նվաճեց նրանց երկիրը՝ Նինվեյի և Արբելայի շուրջը։ Նա հպատակեցրեց նաև Ատրոպատենեն և Գորդյուենեն և սրանց հետ նաև մնացյալ Միջագետքը. բացի այդ, անցնելով Եփրատը, նա ուժով նվաճեց Ասորիքը և Փյունիկեն։ Նա այդքան հզորանալով՝ Օլիբերիայի մոտ[7], նրա և Եփրատի վրա գտնվող Զևգմայի մոտ կառուցեց քաղաք, որն անվանեց Տիգրանակերտ, և իր ավերած 12 հելլենական քաղաքների մարդկանց այնտեղ հավաքելով, (բնակեցրեց)։ Միհրդատին հաղթած Լուկուլլոսը արշավելով հասավ և վերաբնակիչներին արձակեց յուրաքանչյուրին իր երկիրը, իսկ քաղաքը, որ դեռ կիսավարտ էր, հարձակմամբ կործանեց և փոքր գյուղ թողեց, իսկ իրեն (Տիգրանին— Ս. Կ.) դուրս քշեց Ասորիքից և Փյունիկեից։ Սրան հաջորդած Արտավազդը քանի դեռ հռոմեացիների բարեկամն էր, բարեհաջող վիճակ ուներ. բայց երբ դավաճանեց Անտոնիոսին՝ պարթևների դեմ սրա մղած պատերազմի ժամանակ[8], պատժի ենթարկվեց։ Անտոնիոսի կողմից տարվելով Ալեքսանդրիա, նա շղթայակապ ման ածվեց քաղաքի միջով, որոշ ժամանակ մնաց բանտում, իսկ հետո մահվան ենթարկվեց Ակտիոնի պատերազմի ժամանակ[9]։ Նրանից հետո շա-

տերը թագավորեցին Կեսարի[10] և Հռոմեացիների գերիշխանությամբ. այժմ ևս շարունակվում է նույն ձևով։

XI, 13

4. Արդ, Կադուսիների[11] հետևակը իր բազմությամբ քիչ էր պակաս Արիաների[12] (հետևակից). նրանք գերազանց նիզականետներ են, իսկ քարքարոտ վայրերում հեծյալ (կռվելու) փոխարեն, կռվում են հետիոտն։ Անտոնիոսի արշավանքը ձախողեց ոչ թե երկրի բնությունը, այլ նրա ճանապարհի ուղեցույց Հայոց թագավոր Արտավազդը, որին նա ստիպված էր խորհրդատու և պատերազմի ծրագրին հաղորդակից դարձնել, թեև նա իր դեմ դավադրում էր։ Թեև Անտոնիոսը նրան պատժեց, բայց շատ ուշ, երբ արդեն Հռոմեացիների կրած շատ չարիքների պատճառ էր դարձել թե՛ այս (Արտավազդը) և թե՛ այն[13], որը Եփրատի վրա գտնվող Զևգմայից մինչև Ատրոպատենե ընկած ճանապարհը դարձրեց ութ հազար ասպարեզ[14], ուղիղ ճանապարհի ավելի քան կրկնակին, լեռների, անանց վայրերի և շրջապտույտների միջոցով։

1. Ստրաբոնի սույն հատվածի նորագույն մեկնաբանությունները ցույց են տալիս, որ մակեդոնացիների անվան տակ պետք է հասկանալ ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացուն, այլ Սելևկյաններին, քանզի Հայաստանը երբեք էլ չենթարկվեց Ալեքսանդրի իշխանությանը։

2. Հյուդարնեսը (Վիդարնա) այն յոթ երևելի պարսիկներից մեկն էր, որ մ. թ. ա. 522 թ. սեպտեմբերի 29-ին օգնեցին Դարեհ Վշտասպյանին սպանելու ինքնակոչ Գաումատային (Բարդիա), որից հետո Դարեհը հռչակվեց Պարսկաստանի թագավոր (522—486)։ Ըստ Ստրաբոնի, Դարեհի զինակից այս Հյուդարնեսից էլ սերվում էին երվանդունիները։

3. Օրոնտես (երվանդ IV Վերջին)— երվանդունիների հարստության վերջին ներկայացուցիչը, Հայաստանի թագավոր։

4. Արտաշեսը և Զարեհը մինչ թագավոր հռչակվելը (մ. թ. ա. 189 թ.), Սելևկյան սատրապներ էին՝ առաջինը Մեծ Հայքում, իսկ մյուսը՝ Սոփքում։ Սատրապը օժտված էր քաղաքացիական, վարչական ու ռազմական իրավասություններով և հանդիսանում էր տվյալ երկրամասի կառավարիչը։

5. Խոսքը Անտիոքոս III Մեծի մ. թ. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում հռոմեացիներից կրած պարտության մասին է։

6. Տիգրան II-ը Սոփք ներխուժեց մ. թ. ա. 94 թ. և առանց դժվարության գրավեց այն. Սոփքի թագավոր Արտանես Զարեհյանը սպանվեց, իսկ երկիրն էլ միացվեց Մեծ Հայքին։

7. Օլիբերիա— ըստ երևույթին, ամրոց Տիգրիսի վերին հոսանքի ձախակողմյան վտակներից մեկի՝ Նիկեփորիոնի (ներկայիս Ցարկին-սու) ափին։ Հենց այս տեղ էլ 80-ական թվականների վերջերին Տիգրան II-ը հիմնադրեց իր տերության նոր մայրաքաղաքը։

8. Խոսքը մ. թ. ա. 36 թ. դեպի Պարթևստան ձեռնարկած Անտոնիոսի անհաջող արշավանքի մասին է։

9. Ստրաբոնը նկատի ունի Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև մ. թ. ա. 31 թ. տեղի ունեցած Ակտիումի ճակատամարտը, որտեղ Անտոնիոսը պարտություն կրեց։

10. Նկատի ունի Հռոմի կայսր Օկտավիանոս Օգոստոս Կեսարին։

11. Կադուսիներ (կատիշներ)— ցեղախումբ, որը բնակվում էր Կասպից ծովի հարավային ափին։

12. Արիաներ— իրանական ցեղեր, որոնք բնակվում էին Պարսկաստանի կենտրոնական շրջաններում, ներկայիս Խորասանում։

13. Ստրաբոնն այստեղ նկատի ունի Մեդիա—Ատրոպատենի թագավոր Մար Արտավազդին։

14. Ասպարեզը հավասար էր մոտ 190 մետրի։

ՊՈՄՊԵՈՍ ՏՐՈԳՈՍԸ Մ. Թ. Ա. 93 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅ–ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀՈՒՍՏԻՆՈՍ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ, XXXVIII, 3

1—5. Այդ ժամանակ[1] Արմենիայի թագավորն էր Տիգրանը, որը պատանդ էր տրվել վաղուց պարթևներին և քիչ առաջ հետ էր ուղարկվել իր հայրենի թագավորությունը[2]։ Սրան շատ էր ուզում Միհրդատը[3] դաշնակից անել ընդդեմ հռոմեացիների, որոնց հետ նա վաղուց հետե մտադիր էր պատերազմ սկսել։ Եվ թեև Տիգրանը հռոմեացիների կողմից չէր կրել որևէ անարդանք՝ նա դրդում էր նրան Գորդիոսի[4] միջոցով, որ հարձակվի Արիոբարզանի[5] վրա, որը խիստ թույլ էր։ Իսկ որպեսզի չերևա, որ որոշ խորամանկություն կա դրա տակ՝ նա ամուսնացնում է նրա (Տիգրանի) հետ իր աղջկան՝ Կլեոպատրային։ Տիգրանի հենց առաջին հարձակման ժամանակ[6] Արիոբարզանը վերցնում է իր դույքը[7] և փախչում է Հռոմ։ Եվ այսպիսով, Տիգրանի օգնությամբ Կապադովկիայում սկիզբ է դրվում նորից Միհրդատի իշխանությանը։ Նույն այս ժամանակ մեռնում է Նիկոմեդեսը[8], և նրա որդուն, որի անունը նույնպես Նիկոմեդես[9] էր, դուրս է վտարում թագավորությունից Միհրդատը։

Երբ սա Հռոմ է գալիս որպես աղաչավոր՝ ծերակույտը վճռում է, որ երկուսն էլ պետք է վերահաստատվեն իրենց թագավորություններում։ Այս գործի համար ուղարկվում են իբրև լեգատներ Մանիոս Ակվիլիոսը և Մանիլիոս Մալթինոսը։ Երբ այս բանը իմացվում է՝ Միհրդատը դաշն է կնքում Տիգրանի հետ, որպեսզի պատերազմ սկսի հռոմեացիների դեմ։ Նրանք պայմանավորվել էին իրար հետ, որ քաղաքները և հողերը պատկանելու են Միհրդատին, իսկ մարդիկ և ինչ որ հնարավոր է տանել՝ Տիգրանին։

1. Այսինքն՝ մ. թ. ա. 93 թվականին։

2. Տիգրան II-ը պարթևական պատանդությունից ազատվեց և գահ բարձրացավ մ. թ. ա. 95 թվականին, երբ արդեն 45 տարեկան էր։

3. Խոսքը Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորի մասին է։

4. Գորդիոսը Միհրդատ Եվպատորի խորհրդականներից էր, վերջինիս մանկահասակ որդու՝ Արիարաթեսի խնամակալը։

5. Սա Կապադովկիայի թագավոր Արիոբարզան I Հռոմեասերն էր (95—62)։

6. Տիգրանի առաջին հարձակումը Կապադովկիայի վրա տեղի է ունեցել մ. թ. ա. 93 թվականին։

7. Ըստ երևույթին, այստեղ խոսքը թագավորական գանձերի մասին է։

8. Խոսքը վերաբերում է Բյութանիայի թագավոր Նիկոմեդես III Եվերգետեսին (127—94)։

9. Սա Բյութանիայի թագավոր Նիկոմեդես IV Փիլոպատորն էր (94—74)։

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԸ ՍԵԼԵՎԿՅԱՆ ԱՍՈՐԻՔԻ ԹԱԳԱՎՈՐ ԸՍՏ ՊՈՄՊԵՈՍ ՏՐՈԳՈՍԻ

ՀՈՒՍՏԻՆՈՍ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ, XL, 1

1—4. Եղբայրների[1] փոխադարձ ատելությունը, ապա և նրանց որդիներին[2] ժառանգաբար անցած թշնամությունը, անընդհատ պատերազմներ ծնեցին, որոնք ծայրահեղ թուլության հասցրին Ասորիքը[3] ու նրա թագավորներին։ Ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր։ Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն[4], մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին[5]։ Սակայն իրերի բերմամբ Միհրդատը պատերազմների մեջ էր հռոմեացիների դեմ[6], իսկ Պտղոմեոսը Ասորիքի մշտական թշնամին էր եղել։ Այսպիսով, բո-

լորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջ, որը սեփական ռազմական ուժ ունենալուց բացի, պարթև-

Նկար 12. Տիգրան Մեծի արծաթե չորեքդրամը (մ. թ. ա. 74 թ.)

ների թագավորության դաշնակիցն էր ու Միհրդատի[7] խնամին։ Եվ այսպես, հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու[8], նա 17 տարի շարունակ[9] կառավարում էր ամենայն անդորրությամբ, չէր խանգարում պատերազմներով ուրիշների հանգիստը և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար։

1. Սելևկյան տերության թագավոր Դեմետրիոս II-ի մահից հետո (125 թ.), նրա որդիների՝ Անտիոքոս VIII Գրյուպոսի (125—96) և Անտիոքոս IX Կիզիկացու (114—95) միջև սկսվեց պայքար գահի համար։

2. Անտիոքոս VIII-ի որդիների՝ Դեմետրիոս III-ի (96—88) և Սելևկոս VI-ի (96—95), ինչպես նաև Անտիոքոս IX Կիզիկացու որդիների՝ Անտիոքոս X Եվսեբեսի (95—92), Անտիոքոս XI-ի (93), Փիլիպպոս I-ի (93—84) և Անտիոքոս XII Փիլադելփոսի (87—84) միջև երկարամյա քաղաքացիական պատերազմ բորբոքվեց իշխանության համար, որը շարունակվեց ընդհուպ մինչև 84 թվականը։

3. Այսինքն՝ Սելևկյան տերությունը։

4. Խոսքը Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորի մասին է։

5. Պտղոմեոս— խոսքը վերաբերում է Եգիպտոսի Պտղոմեոս IX Լաթյուրոս թագավորին (ընդմիջումներով՝ 116—81)։

6. Այստեղ, ըստ երևույթին, խոսքը Միհրդատյան առաջին պատերազմի մասին է (88—84)։

7. Ամենայն հավանականությամբ, Տրոգոսը նկատի ունի Պարթևստանի թագավոր Միհրդատ II-ին, որը ամուսնացել էր Տիգրան II-ի դստեր՝ Արիազատեի (Ավռոմա) հետ։

8. Այս վկայությունից չպետք է եզրակացնել, որ Սելևկյանների տերության նվաճումը Տիգրանի կողմից խիստ դյուրին է եղել. մյուս աղբյուրները (Ապպիանոս, Պլուտարքոս, Ստրաբոն և այլք), ընդհակառակը, նշում են, որ Տիգրանը Ասորիքը գրավել էր զենքի ուժով։ Հ. Մանանդյանի կարծիքով, Ասորիքում գոյություն ունեցող կուսակցություններից մեկը եթե հրավիրել էր Տիգրանին, ապա մյուսները դիմադրություն էին ցույց տվել։

9. Տիգրան Մեծը Սելևկյանների գահին բազմեց 83 թվականին, ուստի նրա իշխանությունը Ասորիքում, ըստ Տրոգոս-Հուստինոսի, տևել է մինչև 66 թվականը, այսինքն՝ Պոմպեոսի հետ կնքած հաշտության պայմանագիրը։

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԿՈՂՄԻՑ ՍԵԼԵՎԿՅԱՆ ԱՍՈՐԻՔԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

Հովսեփոս Փլավիոսը (Հովսեփոս Եբրայեցի, Հովսեփ բեն Մատաֆիա) վաղ կայսրության ժամանակաշրջանի հռոմեական պատմագրության ականավոր ներկայացուցիչներից մեկն է: Նա ծնվել է մ. թ. 37 թ. Երուսաղեմում՝ հրեա հաճանայապետի ընտանիքում: Նշանակալից դեր է խաղացել հռոմեական տիրապետության դեմ բռնկված հրեաների ապստամբության, կամ այսպես կոչված Հրեական պատերազմի (66—73) սկզբնական իրադարձությունների ժամանակ: Գլխավորել է Գալիլեայի պաշտպանությունը: Խոտապատառ ամրոցի անկումից հետո (67 թ.), նա գերվում է հռոմեացիների կողմից, սակայն, արժանանալով ապագա կայսր Վեսպասիանոսի բարեհաճությանը՝ շուտով ազատվում է: Ի նշան երախտագիտության, Հովսեփոսը իր անվանն ավելացնում է Վեսպասիանոսի մականունը՝ Փլավիոս: Հետագայում Հովսեփոսին շնորհվում է հռոմեական քաղաքացու իրավունք. նրան թույլատրվում է բնակվել կայսերական արքունիքում, ուր և անցել է նրա կյանքի մեծագույն մասը: Հովսեփոսը մահացել է մոտավորապես II դարի առաջին տասնամյակում:

Վայելելով Վեսպասիանոս և Տիտոս կայսրերի հովանավորությունը և ստանալով նրանց աջակցությունը՝ Հովսեփոսը Հռոմում ձեռնամուխ է լինում իր պատմագիտական ու կենսագրական բնույթի երկերի շարադրմանը: Դրանցից մեզ են հասել «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն», «Կյանքը» և «Ընդդեմ Ապիոնի» ստեղծագործությունները:

Մեծ են և անգնահատելի Հովսեփոսի վերը նշված երկերից առաջին երկուսի աղբյուրագիտական-պատմագիտական արժեքն ու նշանակությունը հին աշխարհի երկրների, այդ թվում և Հայաստանի պատմության ուսումնասիրության գործում: Դրանց հեղինակը ոչ միայն ևկարագրվող դեպքերի մեծ մասի ժամանակակիցն է ու մասնակիցը, այլև օգտվել է ոչ հռոմեական հավաստի աղբյուրներից, որը նրան դարձնում է հին աշխարհի բացառիկ արժանահավատ և անաչառ հեղինակներից մեկը:

Հովսեփոս Փլավիոսի երկերից ստորև բերված հատվածները վերցրել ենք «Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 9-րդ հատորում (Երևան, 1976) զետեղված նրա «Հրեական պատերազմի մասին» և «Հրեական հնախոսություն» երկերի հատվածաբար թարգմանություններից, որոնք կատարել է Ս. Մ. Կրկյաշարյանը:

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ

ՀՐԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գիրք առաջին

115 *Իսկ Ալեքսանդրան[1] (Արիստոբուլոսի գլխավորությամբ) զորք ուղարկեց Դամասկոս այն պատճառով, որ Պտղոմեոսը[2] անդադար ճնշում էր քաղաքը, սակայն զորքը վե-*

116 *րադարձավ իր մոտ, առանց որևէ նշանակալից բան անելու։ Մյուս կողմից՝ Հայոց Թագավոր Տիգրանին[3], որը բանակել էր Պտղոմայիս[4] քաղաքի առջև և պաշարել էր այնտեղ (փակված) Կլեոպատրային[5], դաշինքով ու նվերներով հեռացրեց։ Իսկ Տիգրանը Լուկուլլոսի արշավանքների հետևանքով տանն սկսված անկարգությունների պատճառով՝ վերացնում է պաշարումը և հասնում Հայաստան։*

Գիրք տասներեքերորդ

419 Այդ ժամանակ[6] էլ լուր է հասնում, թե Հայոց թագավոր Տիգրանը երեսուն բյուր զորքով[7] ներխուժել է Սիրիա և գալիս է Հրեաստանի դեմ: Այս, բնականաբար, ահաբեկեց թագուհուն[8] և ժողովրդին: Ուստի նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս պաշարում էր Պտղոմայիս քաղաքը: Որով-
420 հետև Սելեւնե թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր Սիրիային և հորդորել էր բնա-

Նկար 13. Տիգրան Մեծի արծաթե չորեքդրամը: Հորագիրը աջից-ձախ՝ «Արքայից արքայի Տիգրանի»

կիչներին՝ դռները փակել Տիգրանի առաջ: Ուստի դեսպանները հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ շնորհել թագուհուն և ժողովրդին: Իսկ նա, գնա-
421 հատելով այն, որ նրանք ժամանել են այդքան հեռու տարածություններից, լավագույնս հուսադրեց: Բայց հազիվ էր Պտղոմայիսը գրավվել[9], երբ լուր հասավ Տիգրանին, թե

Լուկուլլոսը, հետապնդելով Միհրդատին[10], չի կարողացել նրան բռնել, քանի որ (վերջինս) փախել է իբերների երկիրը. և (Լուկուլլոսը), ասպատակելով Հայաստանը, պաշարել է (մայրաքաղաքը)[11]: Տիգրանն այս մասին իմանալով, վերադարձավ իր սեփական երկիրը:

1. Սա Հրեաստանի Ալեքսանդրա-Սոլոմեա թագուհին էր (76—67):

2. Պտղոմեոս— Կոյլե-Սիրիայի (հորագույն Ասորիք) ոչ մեծ պետության թագավորն էր (85—40)՝ Տիգրան II-ի վասալը:

3. Խոսքը Տիգրան II Մեծի մասին է:

4. Քաղաք Միջերկրական ծովի ափին, Փյունիկիայի հարավում՝ Պաղեստինի սահմանամերձ շրջանում:

5. Կլեոպատրա (Կլեոպատրա-Սելենե)— Սելևկյան թագուհի՝ Եգիպտոսի Պտղոմեոս VIII Եվերգետես Փիսկոն թագավորի (170—116) դուստրը: Ամուսնացել է Սելևկյան մի քանի թագավորների (Անտիոքոս VIII Գրյուպոս, Անտիոքոս IX Կիզիկացի, Անտիոքոս X Եվսեբես) հետ, մայրը՝ Սելևկյան թագավոր Անտիոքոս XIII Ասիացու (68—64):

6. Տիգրան Մեծը Ասորիք-Սիրիան նվաճեց և նստեց Սելևկյանների գահին մ. թ. ա. 83 թվականին: Հայկական բանակները հասան մինչև Եգիպտոսին սահմանամերձ Պտղոմայիս քաղաքը և շրջապատեցին այն: Ըստ երևույթին, պաշարումը երկար տարիներ է տևել և այդ ընթացքում Հրեաստանի Ալեքսանդրա թագուհին դեսպաններ ուղարկելով Տիգրանի մոտ, փաստորեն ընդունել է նրա գերիշխանությունը:

7. Այսինքն՝ 300 հազար զորք: Հայկական ռազմական ուժերի քանակության մասին մոտավորապես նույն թիվն է հաղորդում նաև Պլուտարքոսը (տե՛ս Լուկուլլոս, XXVII): Ակնհայտ է, որ այս թվերը չափազանցված են. ուսումնասիրողները գտնում են, որ Հայաստանն այդ ժամանակ կարող էր ունենալ 100—150 հազար զորք:

8. Խոսքը վերաբերում է Հրեաստանի Ալեքսանդրա թագուհուն:

9. Հայկական բանակը Պտղոմայիս քաղաքը գրավել է մ. թ. ա. 70 թվականին:

10. Այսինքն՝ Միհրդատ VI Եվպատորին:

11. Խոսքը Տիգրանակերտ մայրաքաղաքի մասին է:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍԸ Մ. Թ. Ա. 69—67 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

ՋՈՒԳԱՀԵՌ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լուկուլլոս

XIV. ... Լուկուլլոսը անուշադրության մատնելով ու չլսելու տալով պինվորների դժգոհության ելույթները՝ չէր էլ ենթադրում, որ այդ բոլորը նրանց կհասցնի այնպիսի խելահեղության, որի մեջ նրանք ընկան հետագայում: Առավել անհրաժեշտ համարեց նա արդարացնել իր գործողությունները նրանց առջև, ովքեր, ընդհակառակը, մեղադրում էին նրան դանդաղկոտության մեջ այն բանի համար, որ հապաղելով երկրորդական նշանակություն ունեցող քաղաքների և բնակավայրերի շուրջը, նա հնարավորություն էր տալիս Միհրդատին[1] նոր ուժեր հավաքելու. «Իմ բաղձանքն էլ ճիշտ այդ է,— ընդդիմանում էր նրանց Լուկուլլոսը,— ես դանդաղում եմ դիտավորյալ, թող թագավորը վերստին հզորանա և հռոմեացիների դեմ մարտնչելու համար հավաքագրի բավականին մեծ բանակ, որպեսզի նա մնա իր տեղում և չփախչի մեր մոտենալուց հետո: Կամ, մի՞թե դուք չեք տեսնում նրա թիկունքում անծայրածիր ու ընդարձակ անապատը, իսկ քիչ այն կողմ Կովկասն է՝ վիթխարի լեռնաշխարհը, իր անդնդախոր կիրճերով, որտեղ, խուսափելով հակառակորդի հետ հանդիպումից, կարող են պատսպարվել ու ապաստան գտնել իրենց համար թեկուզ հազար թագավոր: Բացի դրանից Հայաստանը Կաբիրայից[2] մի քանի օրվա ճանապարհի վրա է գտնվում, իսկ Հայաստանում թագավորում է արքայից արքա Տիգրանը, որն իր բանակներով փակում է պարթևների ուղին դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքային համայնքները գաղթեցնում է Մարաստան. նա զավթել է Ասորիքն ու Պաղեստինը, իսկ Սելևկոսի տոհմի թագավորներին մահվան է դատապարտում[3] և գերեվարում նրանց կանանց ու դուստրերին: Եվ այդ մարդը Միհրդատի ազգականն է՝ նրա փեսան: Եվ եթե Միհրդատը աղերսարկու դիմի նրա օգնությանը, ապա Տիգրանը նրան չի թողնի դժբախտության մեջ և պատերազմ կհայտարարի մեզ: Չպատահի այնպես, որ աճապարելով Միհրդատին դուրս քշել իր տիրույթներից՝ մենք Տիգրանի

կողմից հարձակման վտանգի ենթարկվենք: Չէ՞ որ նա վաղուց ի վեր պատրվակ է փնտրում մեզ հետ պատերազմելու, իսկ ավելի հարմար պատրվակ նա կարո՞ղ է փնտրել, քան դժբախտության մեջ գտնվող վսեմաշուք իր հարազատին օգնելը: Ուրեմն, ինչո՞ւ մենք ձգտենք դրան, ինչո՞ւ սովորեցնենք Միհրդատին, թե նա ում օգնությանը դիմի՝ մեր դեմ պատերազմելիս: Ինչո՞ւ նրան մղենք Տիգրանի գիրկը, երբ նա ինքը այդ չի ցանկանում և համարում է դա իր արժանապատվությանը հակառակ: Ավելի լավ չի՞ լինի, եթե մենք նրան ժամանակ տանք սեփական ուժերը հավաքելու և նորից քաջալերվելու, չէ որ այդ ժամանակ մենք կճակատենք ոչ թե ընդդեմ մարերի ու հայերի, այլ կողքիսցիների, տիբարեննների ու կապադովկիացիների, որոնց մենք քանիցս պարտության ենք մատնել»:

XIX. Այժմ նա առաջ շարժվեց և հասավ մինչև Տալավրա[4]: Միհրդատը, սակայն, չորս օր առաջ հասցրեց փախչել Հայաստան՝ Տիգրանի մոտ[5], և Լուկուլլոսը ետ դարձավ: Ապա նա հնազանդեցրեց խալդայներին ու տիբարեններին[6], գրավեց Փոքր Հայքը[7] և ստիպեց իրեն հանձնել բազմաթիվ ամրոցներ և քաղաքներ: Այնուհետև նա Տիգրանի մոտ ուղարկեց Ապպիոսին՝[8] Միհրդատին հանձնելու պահանջով, իսկ ինքը գնաց Ամիսոս[9], որը դեռևս գրավված չէր:

XXI. Այս ընթացքում Ապպիոս Կլավդիոսը ուղևորվեց Տիգրանի մոտ (այս Կլավդիոսը Լուկուլլոսի այն ժամանակվա կնոջ եղբայրն էր): Սկզբում թագավորական ուղեկցողները նրան առաջնորդեցին շրջանցիկ ու զարտուղի ճանապարհներով՝ երկրի վերին կողմերում, և դրանով ստիպեցին շատ դուր ժամանակ վատնել: Սարկությունից ազատ արձակված մի ասորուց իմանալով ուղիղ ճանապարհը՝ Կլավդիոսը հրաժարվեց սոփերմի նման երկար ու խճճված նախկին ուղուց և արձակեց իր բարբարոս ուղեկիցներին: Մի քանի օրից նա անցավ Եփրատը և ժամանեց Անտիոք, որն անվանվում է «Դափնիին կից»[10]: Այնտեղ էլ նրան հրամայված էր սպասել Տիգրանին, որը բացակայում էր ու զբաղված էր փյունիկյան ինչ-որ քաղաքներ նվաճելով[11]: Այդ ընթացքում Կլավդիոսը հասցրեց իր կողմը գրավել իշխանավորներից շատերին, որոնք ներքուստ խիստ նեղվում էին հայ տիրակալի գերիշխանությունից (սրանցից մեկն էր և Զարբիենոսը՝ Կորդվաց թագավորը):

Ստրկացված բազում քաղաքներ նրա մոտ ծածուկ սուրհանդակներ էին ուղարկում, և նա Լուկուլլոսի անունից նրանց օգնություն էր խոստանում, բայց պատվիրում էր առայժմ խուսափել վճռական գործողություններից։ Հայկական գերիշխանությունը հույների համար անտանելի լուծ էր դարձել, հատկապես այն պատճառով, որ Թագավորը, իր աննախընթաց հաջողությունների ազդեցության ներքո՝ հանդգնությամբ ու ամբարտավանությամբ էր համակվել. նրան սկսել էր թվալ, թե այն ամենը, ինչ սովորական մահկանացուների համար նախանձի և հիացմունքի առարկա է, ոչ միայն իր իշխանության տակ է, այլև հենց իր համար է ստեղծված։ Երբ Տիգրանը նոր միայն սկսում էր, նրա ծրագրերն ու հնարավորությունները խիստ համեստ էին, իսկ այժմ նա հպատակեցրել է բազմաթիվ ժողովուրդների, խորտակել էր, ինչպես դեռևս չէր հաջողվել ուրիշ մեկին, պարթևների հզորությունը, իսկ Միջագետքը հեղեղել է հելլեններով, որոնց նա ամբողջ բազմություններով բռնագաղթեցրել էր Կիլիկիայից ու Կապադովկիայից[12]։ Այլ ժողովուրդներից նա արաբական քոչվոր ցեղերին քշեց իրենց նախկին վայրերից և բնակեցրեց իր մայրաքաղաքին մոտ, որպեսզի նրանց օգտագործի առևտրական պետքերի համար[13]։ Նրա մոտ գտնվում էին շատ թագավորներ, որոնց ծառաների դիրքին էր դասել, իսկ նրանցից չորսին նա մշտապես իր մոտ էր պահում, որպես ուղեկիցներ կամ թիկնապահներ, և երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ քիտոններ հագած, վազում էին կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով՝ ձեռքները կրծքներին խաչած կանգնում էին նրա երկու կողմում։ Համարում էին, որ այդ դիրքը ամենալավ ձևով է արտահայտում նրանց՝ ստրկական կախվածության լրիվ ընդունումը. այն ընդունողները տիրոջ տրամադրության տակ էին դնում իրենց մարմնի հետ միասին նաև իրենց ազատությունը և պատրաստակամություն էին հայտնում ամեն ինչ հանդուրժել ու տանել առանց առարկությունների։

Սակայն Ապպիոսը բոլորովին չշփոթվելով ու չվախենալով այդ շքեղ տեսարանից՝ հենց սկզբից ուղղակի հայտարարեց, որ եկել է կամ ստանալու Միհրդատին, որը պետք է լինի Լուկուլլոսի հաղթահանդեսում, կամ Տիգրանին պատերազմ հայտարարելու։ Տիգրանը ջանում էր նրան ունկնդրել անվրդով դեմքով և շինծու ժպիտով, սակայն ներկաներից չվրիպեց այն, թե ինչ աստիճանի

էր ցնցել նրան այդ երիտասարդի ուղղամտությունը և համարձակ ճառը։ Գրեթե առաջին անգամ էր նրան վիճակվում լսել ազատ մարդու խոսք՝ առաջին անգամ այն քսանհինգ տարիների ընթացքում, ինչ նա թագավորում էր, կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝ ծաղրուծանակի էր ենթարկում ժողովուրդներին։ Ապպիոսին ուղղված իր պատասխան խոսքում Տիգրանը հայտարարեց, որ նա Միհրդատին չի հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ինքը հակահարված կտա։ Զայրացած Լուկուլլոսի վրա այն բանի համար, որ սա իր ուղերձում անվանել էր իրեն սոսկ արքա և ոչ արքայից արքա՝ Տիգրանը ևս իր պատասխանում նրան չանվանեց իմպերատոր։ Ապպիոսին, սակայն, նա ուղարկեց շքեղ նվերներ, իսկ երբ սա հրաժարվեց ընդունել դրանք, ավելացրեց ուրիշ նվերներ ևս։ Ապպիոսը, չցանկանալով, որ կարծեն, թե ինքը Տիգրանի նկատմամբ թշնամանքից դրդված է այդ նվերները մերժում, վերցրեց միայն մեկ սկահակ, իսկ մնացածները ետ ուղարկեց և փութաց վերադառնալ իր զորավարի մոտ։

XXII. Մինչ այդ ժամը Տիգրանը ոչ մի անգամ ցանկություն չհայտնեց ո՛չ տեսնելու Միհրդատին և ո՛չ էլ խոսելու նրա հետ, և դա իր հարազատի նկատմամբ, որը զրկվել էր այդպիսի մեծ թագավորությունից։ Նա արհամարհական ու անբարյացակամ էր վերաբերվում Միհրդատին և պահում էր նրան իբրև մի բանտարկյալի՝ իրենից հեռու, ճահճոտ և անառողջ վայրերում։ Այժմ, սակայն, նա արքունիք կանչեց նրան և սիրո ու հարգանքի նշաններ ցուցաբերեց։ Արդ, թագավորները կազմակերպեցին գաղտնի խորհրդակցություն՝ աշխատելով ի չիք դարձնել փոխադարձ անվրդովության պատճառները, և դա ի դժբախտություն իրենց մերձավորների, քանզի նրանց վրա էին բարդում գժտությունների պատճառը։ Վերջիններիս թվում էր և Մետրոդորոս Սկեպսիացին՝ բազմագիտուն և ճարտասան մի այր[14], որը Միհրդատի օրոք ուներ այնպիսի ազդեցություն, որ նրան անվանում էին «թագավորահայր»։ Պատմում են, որ երբ Միհրդատը նրան ուղարկել էր Տիգրանի մոտ՝ օգնություն խնդրելու ընդդեմ հռոմեացիների, Տիգրանը նրան հարցրել էր. «Իսկ դու ինքդ, ո՛վ Մետրոդորոս, ի՞նչ խորհուրդ կտաս ինձ, ինչպես վարվել»։ Կամ Տիգրանին բարին ցանկանալով և կամ Միհրդատին չարը, Մետրոդորոսը պատասխանեց, որ իբրև դեսպան նա խնդրում է իր թագավորի համար, բայց

իբրև խորհրդատու՝ առաջարկում է մերժել նրան։ Այժմ Տիգրանը այս ամենը պատմեց Միհրդատին, խնդրելով նրան շատ դաժան չլինել Մեսրոպորոսի նկատմամբ, սակայն սա իսկույն ևեթ սպանվեց և Տիգրանը ստիպված էր ղղջալ իր անկեղծության համար։ Մեսրոպորոսի մահվան միակ պատճառը թերևս Տիգրանի անկեղծությունը չէր, այլ այն միայն վերջին խթանիչը դարձավ Միհրդատի շար դիտավորությունների համար, որն արդեն վաղուց ի վեր գաղտնի ատում էր իր մերձավորին։ Այդ միանգամայն ակներև դարձավ, երբ դրավեցին թագավորի դիվանատան գաղտնի գրությունները, որոնց մեջ էր նաև Մեսրոպորոսի մահապատժի կարգադրությունը։ Ոչ մի ծախս չխնայելով՝ Տիգրանը Մեսրոպորոսի համար շքեղ թաղում կազմակերպեց, որպեսզի հարգանքի տուրք մատուցի մահից հետո նրան, ում դավաճանել էր կենդանության օրոք։

Տիգրանի արքունիքում իր վախճանը գտավ նաև հռետոր Ամփիկրատեսը[15], որը հիշատակության արժանի է միայն իր աթենական ծագման պատճառով։ Ըստ պատմածների, նա փախստական ժամանեց Տիգրիսյան Սելևկիա[16] և, երբ նրան այստեղ խընդրեցին ճարտասանության դասեր տալ, արհամարհանքով և պարծենկոտաբար պատասխանեց. «Տաշտը փոքր է դևլփինի համար»։ Այնուհետև նա մեկնեց Տիգրանի կնոջ և Միհրդատի դստեր՝ Կլեոպատրայի արքունիքը, բայց շուտով ղրկարտվեց, և նրան արգելվեց ամեն մի հարաբերություն հույների հետ, և նա սովամահությամբ վերջ տվեց իր կյանքին։ Կլեոպատրան սրա համար ևս կազմակերպեց փառավոր թաղում և նրա գերեզմանը գտնվում է Սաֆայի մոտերքը (սա ինչ որ վայրի անվանում է այս երկրում)։

XXIII. ... Լուկուլլոսն այդ ընթացքում լուր ստացավ, որ Միհրդատն ու Տիգրանը շատ շուտով մտադիր են իրենց զորաբանակներով մտնել Լիկաոնիա[17] և Կիլիկիա, որպեսզի, ներխուժելով Ասիա պրովինցիան, առաջինը սկսեն ռազմական գործողությունները։ Դա նրան ստիպեց շատ զարմանալ Հայոց թագավորի վրա. եթե նա մտադրություն ուներ հարձակվելու ընդդեմ Հռոմեացիների, ապա ինչո՞ւ չդաշնակցեց Միհրդատի հետ, երբ Պոնտացին իր հզորության գագաթնակետին էր, ինչո՞ւ չմիացրեց իր բանակները նրա զորքին, երբ այն դեռ լի էր հզորությամբ, ինչո՞ւ թույլ տվեց, որ նա ուժաբեկվի ու ընկնի, և նոր միայն պատերազմ է սկսում

հաջողության աննշան հույսերով՝ կորստյան մատնելով իրեն և նրանց, ովքեր արդեն ի վիճակի չեն ոտքի կանգնել և զորեղանալ։

XXIV. Իսկ երբ Մաքարեան էլ՝ Միհրդատի որդին, որը Բոսփորի փոխարքան էր, Լուկուլլոսին ուղարկեց մի պսակ՝ հազար ոսկի արժողությամբ և խնդրեց իրեն համարել հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից՝ Լուկուլլոսը նախորդ պատերազմը ավարտած համարեց և Սորնատիոսին վեց հազարանոց ջոկատով թողնելով Պոնտական երկրամասի պահպանության համար, ինքը տասներկու հազարանոց հետևազորով և երեք հազարից էլ պակաս հեծելազորով շարժվեց հաջորդ պատերազմը վարելու[18]։ Կարող էր թվալ, թե առողջ բանականությանը հակառակ ինչ-որ վայրի պոռթկում էր քշում նրան բազմաքանակ հեծելազոր ունեցող ռազմատենչ ցեղերի կենտրոնատեղին՝ անծայրածիր մի երկիր, բոլոր կողմերից շրջափակված խորը գետերով ու հավերժական ձյունով պատված բարձրաբերձ լեռներով։ Նրա զինվորները, որոնք առանց այդ էլ աչքի չէին ընկնում իրենց հնազանդությամբ, դժկամությամբ էին ռազմերթի դուրս գալիս՝ բացեիբաց արտահայտելով իրենց դժգոհությունը։ Հռոմում, նույն այդ ժամանակ, ժողովրդական առաջնորդները բուռն պարսավանքով ելույթներ էին ունենում ընդդեմ Լուկուլլոսի. նա իբր մի պատերազմից մյուսն է նետվում, չնայած պետությունը այդ պատերազմների կարիքը բոլորովին էլ չուներ, միայն թե ինքը մնար գլխավոր հրամանատար և նախկինի նման օգուտ քաղեր վտանգներից, որոնց մեջ նա ներքաշում էր հայրենիքը։ Ժամանակի ընթացքում այս ամբաստանությունները հասան իրենց նպատակին։

... Այդ օրը բանակը հանգստանում էր, իսկ հաջորդ օրվանից սկսած Լուկուլլոսն սկսեց առաջ շարժվել Ծոփքով՝ առանց որևէ վրնաս հասցնելու տեղաբնիկներին, որոնք հոժարությամբ ենթարկվում էին նրան ու գրկաբաց ընդունում հռոմեական զորամասերին[19]։ Եվ երբ զինվորները ցանկություն հայտնեցին գրավելու մի ամրոց, որտեղ, ըստ լուրերի, մեծաքանակ գանձեր կային, Լուկուլլոսը պատասխանեց. «Ավելի լավ է գրավենք այն ամրոցը,— և ցույց տրվեց հեռվում երևացող Տավրոսի լեռները,— իսկ այս ամենն առանց այդ էլ հաղթողներին է պատկանելու»։ Եվ նա շտապով շարունակելով իր ռազմերթը՝ անցավ Տիգրիսն ու ներխուժեց Հայաստան։

XXV. Առաջին սուրհանդակը, որը Տիգրանին հաղորդեց Լուկուլլոսի առաջխաղացման մասին, պարգև ստանալու փոխարեն, գլխատվեց, ուստի ոչ մեկն այդ մասին այլևս չէր փորձում խոսել, և Տիգրանը շարունակում էր դրանից հետո ևս մնալ հանգիստ անտեղյակության մեջ, չնայած բոլոր կողմերից արդեն նրան էր մոտենում պատերազմի հուրը: Նա ունկնդրում էր միայն նրանց, ովքեր պնդում էին, թե Լուկուլլոսը մեծ զորավար կլինի, եթե քաջություն ունենա Տիգրանին դիմագրավելու Թեկուզ Օփեսոսում[20] և չփախչի Ասիայից միայն նրա բյուրավոր զորքերը տեսնելով: Այո, ամեն գլուխ ի վիճակի չէ ողջախոհ մնալու մեծամեծ հաջողություններից հետո, այնպես, ինչպես որ ամեն մարմին ի վիճակի չէ մեծ քանակությամբ անխառն գինի տանելու: Տիգրանի մերձավորներից առաջինը Մեհրուժանը[21] հանդգնեց նրան հայտնել ճշմարտությունը: Եվ սա նույնպես վատ պարգև ստացավ իր անկեղծության համար, քանզի անհապաղ ուղարկվեց ընդդեմ Լուկուլլոսի՝ երեք հազարանոց հեծելազորով և հետևազորի մեծաքանակ բազմությամբ, հրաման ստանալով անձամբ զորավարին բռնել ողջ-առողջ, իսկ մնացածներին՝ կոտորել: Այն ժամանակ, երբ Լուկուլլոսի բանակի մի մասն արդեն ճամբար էր խփել, իսկ մնացածները դեռևս ճանապարհին էին, պահակազորայինները հաղորդեցին հակառակորդի զորամասերի մոտեցման մասին. Լուկուլլոսն անհանգստացավ, քանզի իր զինվորներից բոլորը չէ, որ գտնվում էին հավաքում և դասավորված չէին մարտաշարքերով, ուստի հակառակորդի հարձակումը շփոթմունք կարող էր առաջ բերել: Ճամբարի կարգավորումը նա վերցրեց իր վրա, իսկ իր մականակիր Սեքստիլիոսին հազար վեց հարյուր հեծյալներով և քիչ ավելի ծանրազեն ու թեթևազեն հետևազորայիններով ուղարկեց առաջ՝ հրամայելով նրան մոտենալ հակառակորդին ու սպասել մինչև որ լուր ուղարկի այն մասին, թե Լուկուլլոսի հետ մնացած զինվորները տեղավորվել են ճամբարում: Սեքստիլիոսը ցանկանում էր հենց այդպես էլ վարվել, սակայն Մեհրուժանը անվեհեր հարձակմամբ ստիպեց նրան մտնել կռվի մեջ, և սկսվեց ճակատամարտը: Մեհրուժանը սպանվեց զենքը ձեռքին, իսկ նրա զինվորները, քաջաբությամբ մի քանիսի, սրատվեցին փախուստի փորձ կատարելիս:

Դրանից հետո Տիգրանը թողնելով իր հիմնադրած Տիգրանակերտ վիթխարի քաղաքը՝ նահանջեց դեպի Տավրոս, որտեղ նա սկսեց զանազան կողմերից զորամասեր հավաքել: Արդ, որպեսզի ժամանակ չտա նրան այդ նախապատրաստությունների համար՝ Լուկուլլոսն ուղարկեց Մուրենային, հանձնարարելով նրան հարձակվել Տիգրանի մոտ եկող զորամասերի վրա և խանգարել նրանց միավորմանը, ինչպես նաև Սեքստիլիոսին, որպեսզի սա փակի արաբների մեծաքանակ ջոկատի ճանապարհը, որը նույնպես գնում էր թագավորին օգնության: Սեքստիլիոսը արաբների



Նկար 14. Տիգրանակերտի պարիսպները

վրա հարձակվեց այն ժամանակ, երբ սրանք զբաղված էին ճամբար դնելով, և կոտորեց նրանց մեծ մասին: Նույն այդ ժամանակ Մուրենան, քայլ առ քայլ հետապնդելով Տիգրանին, ընտրեց մի հարմար պահ, երբ նա անցնում էր անհարթ ու նեղլիկ կիրճով, որի ամբողջ երկարությամբ ձգվել էր նրա բանակը, գրոհեց նրա վրա: Ինքը՝ Տիգրանը, թողնելով իր ամբողջ գումակը, փախավ. շատ հայեր սպանվեցին, բայց ավելի շատերը գերվեցին:

XXVI. Արդ, երբ գործերն այդքան բարեհաջող էին ընթանում, Լուկուլլոսը դուրս գալով բանակատեղիից, շարժվեց Տիգրանակերտի վրա և ճամբար դնելով այդ քաղաքի պարիսպների մոտ՝ սկսեց

պաշարումը։ Տիգրանակերտում ապրում էին բազմաթիվ հույներ, որոնք բռնությամբ տեղահանվել էին Կիլիկիայից, ինչպես նաև բարբարոսներ՝ ադիաբենացիներ, ասորիներ, կորդուքներ, կապադովկիացիներ, որոնք նույն ճակատագրին էին արժանացել. Տիգրանը ավերել էր նրանց հայրենի քաղաքները, իսկ բնակչությանն իր հետ բերելով, ստիպել էր նրանց բնակվելու այստեղ։ Տիգրանակերտը լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, ցանկանալով հաճոյանալ թագավորին՝ միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար։ Դա էր պատճառը, որ Լուկուլլոսն ուժգնորեն շարունակում էր պաշարումը, հուսալով, որ Տիգրանը չի համբերի, տեղիք կտա զայրույթին և, հակառակ իր սեփական ցանկության՝ կգա, որպեսզի վճռական ճակատամարտ տա։ Եվ նա իրավացի էր։ Ճշմարիտ է, բազմիցս, և՛ սուրհանդակների միջոցով, և՛ նամակներով, Միհրդատը խորհուրդ էր տալիս Տիգրանին խուսափել ճակատամարտից, բայց հեծելազորի օգնությամբ՝ հակառակորդին զրկել պարեն ստանալու հնարավորությունից։ Նույնպես և Տաքսիլեսը[22], որն առաքված էր Միհրդատի կողմից և մասնակցում էր ռազմերթին, թախանձագին համոզում էր թագավորին զգույշ լինել և խուսափել, ինչպես նա էր ասում, հռոմեական «անհաղթելի» զենքին հանդիպելուց։ Սկզբում Տիգրանը հանգիստ լսում էր նման խորհուրդները, բայց երբ իրենց բոլոր ուժերով նրա մոտ հավաքվեցին հայերն ու կորդվացիները, երբ իրենց զորաբանակների գլուխ կանգնած ներկայացան մարական ու ադիաբենական արքայիկները, երբ Բաբելոնական ծովեզրից[23] ժամանեցին արաբական հրոսակները, իսկ Կասպիական ծովից՝ ալբանների ու սահմանակից իբերների բազմությունները, և երբ դեռ սրանց էլ միացան Տիգրանի ընծաներով ու շնորհներով հրապուրված Արաքսի ափերին[24] բնակվող շատ ազատ ցեղեր, այս անգամ արդեն և՛ թագավորական խրախճանքներում, և՛ արքունի ատյանում լսելի էին ինքնավստահ պարծենկոտություն և բարբարոսական ոգով սպառնալիքներ միայն։ Տաքսիլեսին մահապատիժ էր սպառնում այն բանի համար, որ նա դեմ էր ճակատամարտին, և Տիգրանը սկսեց կասկածել նույնիսկ Միհրդատին, թե սա չարակնությունից դրդված աշխատում է իրեն ետ պահել մեծ սխրանքից։ Հենց այդ պատճառով էլ Տիգրանը չսպասեց նրա ժամանելուն,

որպեսզի նրա հետ չկիսի փառքը, և իր ամբողջ բանակով ռազմերթի ելավ։ Ըստ պատմածների, նա գանգատվում էր իր բարեկամներին, թե մեծ տհաճություն է իրեն համակում, երբ մտածում է, որ պետք է մարտնչի միայն Լուկուլլոսի և ոչ թե միանգամից բոլոր հռոմեական զորավարների համատեղ ուժերի դեմ։ Նրա ինքնավստահությունը չի կարելի լիովին անմիտ ու անխոհեմ համարել. չէ՞ որ նա իր բանակում տեսնում էր այդքան ցեղեր ու թագավորներ, ծանրազեն հետևազորի բազմակուտ մարտաշարքեր, հեծելազորի բազմարյուր գնդեր։ Հիրավի, նա ուներ երկու բյուր պարսավորներ և աղեղնավորներ, հինգ բյուր հինգ հազար այրուձի, որից մի բյուր յոթ հազարը զրահավորված էր (թվական այս տվյալը բերվում է անձամբ Լուկուլլոսի զեկույցից), տասն-հինգ բյուր ծանրազեն հետևազոր (տարբեր թվաբանակ ունեցող զորատեսակներում դասավորված)։ Այս ամենին գումարած երեք բյուր հինգ հազար սակրավորներ, որոնք զբաղված էին ճանապարհներ անցկացնելով, կամուրջներ կառուցելով, գետերի մաքրմամբ, փայտահատությամբ և այլ կարգի աշխատանքներով, որոնց դասավորեցին զինվորների շարքերի հետևում՝ բանակին տալով ավելի ազդեցիկ տեսք և միաժամանակ ավելացնելով նրա հզորությունը[25]։

XXVII. Երբ Տիգրանը, անցնելով Տավրոսը, երևաց իր զորամասերով ու տեսավ Տիգրանակերտի մոտ տեղավորված հռոմեական բանակը՝ պաշարված բարբարոսները նրա հայտնվելը դիմավորեցին ծափահարություններով ու խլացուցիչ ճիչերով. նրանք պարիսպներից հռոմեացիներին սպառնալիքով ցույց էին տալիս մոտեցող հայերին։ Լուկուլլոսի մոտ հրավիրված ռազմական խորհուրդում ոմանք առաջարկում էին պաշարումը ընդհատել և ընդառաջ գնալ Տիգրանին, մյուսներն ասում էին, թե իրենց թիկունքում չի կարելի թողնել այդքան մեծաթիվ հակառակորդների, ուստի և չի կարելի պաշարումն ընդհատել։ Լուկուլլոսը հայտարարեց, որ երկու կողմերն էլ առանձին-առանձին սխալ են, սակայն միասին դրանք լավ խորհուրդ են տալիս և բանակը բաժանեց երկու մասի՝ Մուրենային վեց հազարանոց հետևազորով թողեց պաշարումը շարունակելու, իսկ ինքը, իր հետ վերցնելով 24 կոհորտ, որը կազմում էր մեկ բյուր ծանրազեն հետևազոր, ինչպես նաև ամբողջ հեծելազորը և մոտ հազար պարսավորներ ու աղեղնավոր-

ներ, նրանց հետ շարժվեց հակառակորդի վրա[26]։ Երբ նա ճամբար խփեց գետի ափի շուրջը տարածված ընդարձակ դաշտում[27], նրա բանակը Տիգրանին թվաց աննշան ու չնչին։ Դա թագավորին շողոքորթողներին սրամտությունների առիթ տվեց. ոմանք ճարտարորեն ծաղրում էին, մյուսները, ի պետս զվարճության, վիճակ էին գցում ապագա ավարը բաժանելու համար, և չկար մի զորավար կամ արքայիկ, որ չմոտենար Տիգրանին՝ ամբողջ գործը միմիայն իրեն հանձնարարելու, իսկ իրեն (թագավորին) հանդիսատեսի դերում մնալու խնդրանքով։ Ինքը՝ Տիգրանը, նույնպես ցանկացավ իրեն ներկայացնել որպես հմուտ սրամտող և ասաց բոլորին հայտնի իր խոսքերը. «Դեսպանության համար նրանք շատ են, իսկ բանակի համար քիչ»։ Այսպես կատակներով ու զվարճաններով անցավ այդ օրը։

Հաջորդ օրվա լուսաբացին Լուկուլլոսն ամբողջովին զինավառ՝ իր ռազմիկներին դուրս բերեց բանակատեղիից։ Հակառակորդի զորքը կանգնած էր գետից դեպի արևելք, ընդ որում, գետն այստեղ ոլորան էր կազմում դեպի արևմուտք և հենց այդ ուղղությամբ էլ գտնվում էր գետանցի ամենահարմար վայրը, և ահա, երբ Լուկկուլլոսը շտապով այն կողմ տարավ իր բանակը՝ Տիգրանին թվաց, թե նա նահանջում է։ Նա հրամայեց իր մոտ կանչել Տաքսիլեսին և ծիծաղելով նրան ասաց. «Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են փախչում քո «անհաղթելի» հռոմեական հետևազորայինները»։ Տաքսիլեսն ի պատասխան ասաց. «Ես կուզենայի, ո՛վ արքա, որ հանուն քո երջանիկ ճակատագրի կատարվեր անհնարինը։ Բայց չէ՞ որ մարդիկ ճանապարհ գնալիս չեն հաղնում իրենց լավագույն հանդերձանքները, չեն փայլեցնում վահանները և բացում իրենց սաղավարտները, ինչպես այժմ, երբ նրանք հանել են զենքերը կաշվե պատյաններից։ Այդ փայլը ցույց է տալիս, որ նրանք մտադիր են պատերազմելու և հիմա արդեն գնում են թշնամու վրա»։ Նա դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ Լուկուլլոսը շրջեց իր բանակը. երևաց առաջին արծվակիր դրոշը և կոհորտները գետանցի համար սկսեցին դասավորվել ըստ հարյուրակներիւ Տիգրանը, կարծես զինադադարից հետո, մեծ դժվարությամբ ուշքի եկավ և երկու թե երեք անգամ բացականչեց. «Այդ նրանք մե՞զ վրա են գալիս»։ Նրա մեծաթիվ զորքը խուճապահար սկսեց դասավորվել մարտակարգով։ Ինքը՝ թագավորը, ընդունեց բանակի

կենտրոնի հրամանատարությունը, ձախ թևը վստահեց ադիաբենական, իսկ աջը, որի առաջին շարքերում գտնվում էին զրահավոր հեծելազորի մեծ մասը՝ մարական թագավորին։

Այն ժամանակ, երբ Լուկուլլոսը պատրաստվում էր անցնել գետը, զորավարներից ոմանք համոզում էին նրան զգուշանալ այդ օրից՝ որպես տարվա դժբախտ, այսպես կոչված՝ «սև» օրերից մեկից. մի ժամանակ հռոմեական բանակը կեպիոնոսի գլխավորությամբ այդ օրը ջախջախվել էր կիմբրացիների հետ տեղի ունեցած ճակատամարտում[28]։ Սակայն Լուկուլլոսը պատասխանեց հետևյալ հիշարժան խոսքերով. «Դե ինչ, ես հռոմեացիների համար այս օրը ևս կդարձնեմ բախտավոր»։ Դա հոկտեմբերյան նոների նախօրյակին էր (հոկտեմբերի 6-ին— Պ. Հ.)։

XXVIII. Տալով այդպիսի պատասխան և կոչ անելով զինվորներին քաջալերվելու՝ նա անցավ գետը և իր զորքի առջևից անձամբ գնաց դեպի հակառակորդը. նա հագել էր երկաթե թեփուկավոր փայլփլող զրահ և ծոպերիզ թիկնոց։ Լուկուլլոսն անմիջապես սուրը հանեց պատյանից ի նշան այն բանի, որ այնպիսի հակառակորդի դեմ, որը վարժ է նետերով հեռվից կռվելուն, պետք է անմիջապես բռնվել ձեռնամարտի՝ հնարավորին չափ արագ անցնելով նետամատչելի տարածությունը։ Այստեղ նա նկատեց, որ զրահավոր այրուձին, որի հետ հակառակորդը հատուկ հույսեր էր կապում, դասավորված է հարթ ու լայն գագաթ ունեցող բլրի ստորոտում, ընդ որում, դեպի գագաթը տանող չորս ստադիոն երկարություն ունեցող ճանապարհը առանձնապես ոչ մի տեղ դժվարանցանելի կամ թևք չէր։ Ապա նա իր տրամադրության տակ գտնվող թրակիական ու գալատական հեծյալներին հրամայեց հակառակորդի այրուձիի վրա հարձակվել կողքերից և սրերով ետ մղել նրանց նիզակները. չէ՞ որ զրահավոր հեծելազորի ամբողջ ուժը այդ նիզակներն էին, որովհետև սա իրեն պաշտպանելու կամ հակառակորդին վնասելու համար ուրիշ ոչ մի միջոց չուներ, քանզի այն կարծես զննդանված էր իր ծանր, չծալվող զրահում։ Ինքը՝ Լուկուլլոսը, երկու կոհորտի գլուխ անցած, սլացավ դեպի բլուրը. լի վճռականությամբ՝ զինվորները գնում էին նրա հետևից, քանզի տեսնում էին, որ իրենց զորահրամանատարը հետիոտն, զենքը ձեռքին՝ առաջինը հենց ինքն է գրոհում հակառակորդի վրա, իրենց հետ կիսելով բոլոր դժվարություններն ու վտանգները։ Բարձ-

թանալով բլրի վրա և կանգնելով մի տեղ, որը բոլոր կողմերից լավ տեսանելի էր՝ նա բացականչեց. «Ո՞վ զինակիցներ, հաղթանակը մերն է»։ Այս խոսքերով նա զինվորներին առաջնորդեց զրահավոր այրուձիի վրա, զգուշացնելով, որ նրանք տեղեր այլևս չզործածեն, այլ ընդհուպ մոտենան հակառակորդին և սրերով հարվածներ հասցնեն նրանց ազդրերին ու սրունքներին՝ մարմնի միակ այն մասերին, որոնք զրահով պաշտպանված չէին։ Ընդ որում, այս բոլորի կարիքն այլևս չկար. զրահավոր հեծյալները, չսպասելով հռոմեացիների հարձակմանը՝ խուռն բացականչություններով դիմեցին ամոթալի փախուստի և զրահով ծանրացած ձիերով խրվեցին իրենց իսկ հետևազորի շարքերը, նախքան սրանք կհասցնեին որևէ մասնակցություն ունենալ ճակատամարտին։ Այսպես, առանց արյուն թափելու՝ գլխովին ջախջախվեց բազմաբյուր այս զորաբանակը։ Տիգրանի զինվորները փախչում էին, ավելի ճիշտ՝ փորձում էին փախչել, քանզի շարքերի խտության և խորության պատճառով նրանք հենց իրենք իրենց ճանապարհ չէին տալիս, ուստի սկսվեց ահավոր սպանդ։ Մարտի սկզբում, Տիգրանը փոքրաթիվ ընկերակիցների ուղեկցությամբ փախուստի դիմեց։ Տեսնելով, որ որդին իր հետ կիսում է այս ամբողջ ապերջանկությունը՝ նա իր գլխից հանեց ադամանդակուռ խույրը և արտասվելով այն հանձնեց նրան ու հրամայեց ամեն մի հնարավորություն օգտագործել՝ մեկ այլ ճանապարհով փրկվելու համար[29]։ Սակայն պատանին չհամարձակվեց խույրը դնել գլխին, այլ այն պահպանելու ուղեց իր ամենահուսալի ծառաներից մեկին։ Պատահեց այնպես, որ այդ ծառան գերի վերցվեց և այսպիսով Տիգրանի խույրը միացվեց մնացած ռազմավարին։ Ասում են, որ հակառակորդի հետևազորից սպանվել էր տաս բյուրից ավելի մարդ, իսկ այրուձիից համարյա ոչ մեկը կենդանի չէր մնացել։ Հռոմեացիներից վիրավորվել էին հարյուր մարդ ու սպանվել հինգը[30]։

Անտիոքոս Իմաստասերն[31] իր «Ասորվածների մասին» երկասիրությունում պատմելով այս ճակատամարտի մասին, պնդում է, թե աշխարհը դեռ չէր տեսել մի այդպիսի բան, իսկ մեկ ուրիշ իմաստասեր՝ Սորբոնն իր «Պատմական հիշատակարաններում»[32] գրուցում է, որ իրենք՝ հռոմեացիները, մնացել էին ամոթահար և ծիծաղում էին իրենց վրա, որ զենք բարձրացրեցին այդպիսի խաժամուժի դեմ։ Լիվիոսի[33] խոսքերով ասած, հռոմեացիք դեռ երբեք

չէին պատերազմել թվական այդպիսի գերազանցություն ունեցող հակառակորդի հետ, և իսկապես, հաղթողները պարտվածների հազիվ քսաներորդ մասն էին կազմում։ Ինչ վերաբերում է ռազմական գործում ամենափորձառու և հմուտ հռոմեական զորավարներին, ապա նրանք ամենից առաջ գովաբանում էին Լուկուլլոսին այն բանի համար, որ նա երկու ամենահոչակավոր և հզոր թագավորների հաղթեց երկու հակադիր միջոցներով՝ արընթացությամբ և դանդաղաշարժությամբ. եթե Միհրդատին, որն այն ժամանակ գտնվում էր իր հզորության գագաթնակետին, նա վերջնականապես ուժասպառ արեց՝ ձգձգելով պատերազմը, ապա Տիգրանին ջախջախեց կայծակնային հարվածով։ Բոլոր ժամանակներում էլ քիչ էին այնպիսի զորավարները, ինչպիսին ինքն էր, որոնք սպասումով՝ իրենց գործողությունների ճանապարհն էին հարթում, իսկ համարձակ գրոհով՝ ապահովում էին իրենց անվտանգությունը։

XXIX. Հենց այդ պատճառով էլ Միհրդատը չէր շտապում, նենգադրելով, թե Լուկուլլոսը պատերազմը կվարի իր սովորական զգուշավորությամբ՝ խուսափելով վճռական ճակատամարտերից։ Նա անշտապ առաջ էր ընթանում Տիգրանին միանալու համար, երբ հանկարծ նրան հանդիպեցին մի քանի հայեր, որոնք խուճապով ու սարսափահար նահանջում էին նույն ճանապարհով։ Նա սկսեց գլխի ընկնել, որ պատահել է ինչ-որ վատ բան։ Այնուհետև նա հանդիպեց մեծ թվով անզեն ու վիրավոր փախստականների և նրանցից իմացավ պարտության մասին, որից հետո սկսեց փնտրել Տիգրանին։ Գտնելով նրան բոլորի կողմից լքված ու թշվառ վիճակում՝ Միհրդատը չհիշեցրեց նրան անցյալի վիրավորանքների մասին, այլ ընդհակառակն, իջավ ձիուց և սկսեց նրա հետ միասին ողբալ իրենց ընդհանուր պատուհասը, իսկ այնուհետև իր անձնական շքախմբից մանկլավիկներ տրամադրեց նրան և սկսեց հուսադրել ապագայի համար։ Դրանից հետո նրանք ձեռնամուխ եղան նոր զորամասեր հավաքագրելուն։

Իսկ այդ միջոցին, Տիգրանակերտի հույն բնակչությունը ապստամբել էր ընդդեմ բարբարոսների՝ քաղաքը Լուկուլլոսին հանձնելու մտադրությամբ, և սա գրոհով գրավեց այն[34]։ Վերցնելով Տիգրանակերտում գտնվող գանձերը՝ նա քաղաքը տվեց զինվորներին կողոպտելու, որոնք, բացի այլ ավարից, այստեղ գտան միայն դրամով՝ ութ հազար տաղանդ, բացի այդ, նա յուրաքան-

չյուր զինվորի ռազմավարից բաժանեց ևս ութհարյուրական դրաքմե[35]: Իմանալով, որ քաղաքում գտնվում են մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը ամեն կողմից հավաքել էր իր հիմնադրած թատրոնի բացման հանդիսավոր արարողության համար՝ Լուկուլլոսն օգտագործեց նրանց իր հաղթանակի առթիվ կազմակերպված խաղերի ու հանդիսությունների ժամանակ: Լուկուլլոսը հելլեններին աղատ արձակեց իրենց հայրենիքը՝ տրամադրելով նրանց ճանապարհածախս, ճիշտ նույն ձևով վարվեց և բարբարոսների հետ, որոնց բռնությամբ բնակեցրել էին Տիգրանակերտում: Մի քաղաքի այդպիսի ավերումը հնարավորություն տվեց բազում այլ քաղաքներին վերածնվելու, որոնք վերադարձվեցին իրենց նախկին բնակիչներին. այդ քաղաքներն այսու Լուկուլլոսին մեծարում էին որպես բարերարի և վերակերտողի:

Հաջողությամբ էին ընթանում նաև Լուկուլլոսի մյուս բոլոր գործերը, և նա արժանի էր դրան. չէ՞ որ նա ավելի ձգտում էր այն գոլհատներին, որոնք տրվում էին արդարամտության ու մարդասիրության համար և ոչ այն, որոնցով պարգևատրվում են ռազմական սխրանքների առթիվ: Վերջիններիս համար նա շատ բաներով պարտական էր բանակին և ավելի շատ՝ ճակատագրին, իսկ առաջիններում հանդես էին գալիս նրա հեղահոգի բնավորությունն ու հիանալի դաստիարակությունը, և հենց այդ հատկություններով է, որ Լուկուլլոսն առանց զենքի հնազանդեցնում էր օտար շատ ժողովուրդների: Այսպես, նրա մոտ ժամանեցին արաբական արքայիկները և նրան հանձնեցին իրենց տիրույթները, նրան հարում էր նաև Ծոփքի բնակչությունը: Կորդվացիներին դեպի իրեն այնպես էր տրամադրել, որ նրանք ցանկանում էին լքել իրենց քաղաքները և կանանց ու երեխաների հետ միասին նրա հետևից գընալ: Դրա պատճառը կայանում էր հետևյալում: Զարբիենոսը՝ Կորդվաց թագավորը, ինչպես արդեն ասվել է, Ապպիոսի միջոցով Լուկուլլոսի հետ գաղտնի բանակցություններ էր վարում հանուն դաշնակցության, քանզի խիստ նեղվում էր Տիգրանի բռնակալությունից: Նրան մատնեցին, և նա մահապատժի ենթարկվեց, ընդ որում, նրա հետ սպանվեցին նաև նրա կինն ու երեխաները (գա նախքան հռոմեացիների Հայաստան ներխուժելն էր): Լուկուլլոսը չէր մոռացել այդ մասին. մտնելով Կորդվաց աշխարհը՝ նա Զարբիենոսի համար հանդիսավոր թաղում կազմակերպեց, ընդ

որում, թաղման խարույկը զարդարված էր ոստայնակերպ գործվածքներով, արքայական ոսկեղենով և Տիգրանից խլած թանկարժեք զարդեղենով. Լուկուլլոսն անձամբ վառեց խարույկը և, հանգուցյալի մտերիմների ու հարազատների հետ միասին, հոգեհանգստյան զոհ մատուցեց՝ անվանելով Զարբիենոսին հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից: Լուկուլլոսի կարգադրությամբ՝ նրան մեծածախս մահարձան կանգնեցվեց. չէ՞ որ Լուկուլլոսը Զարբիենոսի պալատում գտել էր մեծ քանակությամբ ոսկի ու արծաթ, ինչպես նաև երեք միլիոն մեդիմն[36] ցորեն, այնպես որ և՛ զինվորները հարստացան, և՛ Լուկուլլոսն արժանացավ բոլորի հիացմունքին նրանով, որ նա մեկ դրաքմե անգամ չստանալով պետական գանձարանից, պատերազմը վարում էր միայն իր հայթայթած միջոցներով:

XXX. Այդ ժամանակ նրան ներկայացան նաև պարթևաց թագավորի[37] դեսպանները՝ բարեկամության ու դաշինքի առաջարկով: Լուկուլլոսն ուրախ էր դրա համար, ուստի իր կողմից ևս դեսպաններ ուղարկեց Պարթևի մոտ, սակայն սրանք այդ թագավորին բռնեցին դավաճանության մեջ, քանզի նա Տիգրանից գաղտնաբար խնդրում էր Միջագետքը՝ որպես վճար նրա հետ դաշնակցության[38]: Երբ Լուկուլլոսն այդ մասին իմացավ, որոշեց հանդիսատ թողնել Տիգրանին ու Միհրդատին, գտնելով, որ այդ հակառակորդներն արդեն ջախջախված են, և հարձակվել պարթևների վրա, որպեսզի ուժերը չափի նրանց հետ: Շատ գայթակղիչ էր նրան թվում այն, որ մեկ ռազմատենչ բուռն գրոհով, կարող ըմբշամարտիկի նման զգեստնելով երեք թագավորների՝ անարգել ու հաղթական ծայրեհծայր անցնել արևի տակ հղորագույն երեք տերություններով: Այդ նպատակով նա հրաման ուղարկեց Պոնտական երկրամաս՝ Սորնատիոսին և մյուս զորավարներին, իր մոտ առաջնորդել այնտեղ տեղաբաշխված զորամասերը (նա մտադրվել էր ռազմերթի դուրս գալ Կորդուքից): Սակայն այդ զորավարները, եթե նախկինում էլ էին ականատես լինում զինվորների խոժոռ անհնազանդության դեպքերի, ապա այժմ նրանք լիովին համոզվեցին իրենց ենթակաների սանձարձակության մեջ: Ո՛չ փաղաքշանքով, ո՛չ խստությամբ նրանք ոչնչի չկարողացան հասնել զինվորներից, որոնք բարձրաձայն բղավում էին, թե անգամ այստեղ մտադիր չեն մնալու և կհեռանան Պոնտոսից՝ թողնելով այն ա-

ռանց որևէ պահապանի։ Երբ լուրերն այդ մասին հասան Լուկուլլոսին, դրանք վատ ազդեցություն գործեցին նաև բանակի այն մասի վրա, որն իր հետ էր։ Զինվորներն ընտելանալով հարստության ու ճոխության՝ անտարբեր էին դարձել ծառայության նկատմամբ և տենչում էին հանգստության. լսելով պոնտական իրենց ընկերների հանդուգն ելույթների մասին՝ նրանց անվանում էին իսկական այրեր և ասում էին, որ այդ օրինակն արժանի է ընդօրինակման. չէ՞ որ նրանք իրենց սխրանքներով վաղուց ի վեր վաստակել էին հանգստի և աշխատանքներից ազատվելու իրավունք։

XXXI. Այդպիսի և ավելի անհաճո խոսքեր ստիպված լսում էր և Լուկուլլոսը։ Նա հրաժարվեց պարթևների դեմ արշավելուց և ամռան թեժ պահին[39] դարձյալ դուրս եկավ Տիգրանի դեմ։ Երբ նա անցնում էր Տավրոսը՝ նրան վհատեցրեց այն, որ դաշտերը դեռևս կանաչ էին՝ օդի սառնության պատճառով այդքան ուշանում են այնտեղ տարվա եղանակները։ Համենայն դեպս, նա ցած իջավ և երկու թե երեք անգամ ջախջախեց հայերին, որոնք հանդգնել էին իր վրա հարձակվել և սկսեց անարգել ավերել շենքերը, ընդ որում, նրան հաջողվեց գրավել Տիգրանի համար պատրաստված հացահատիկի պաշարները և այսպիսով թշնամուն մատնեց զրկանքների, որոնցից նախկինում հենց ինքն էր վախենում։ Լուկուլլոսը բազմիցս փորձում էր ճակատամարտի դրդել հայերին, շրջապատելով նրանց ճամբարը խանդակներով կամ նրանց աչքերի առջև ավերելով երկիրը, սակայն նրանք, անգամ այն բանից հետո, երբ Լուկուլլոսը այդքան պարտության էր մատնել իրենց, հանգիստ նստած էին։ Այժմ նա շարժվեց դեպի Տիգրանի մայրաքաղաքը՝ Արտաշատ, ուր գտնվում էին թագավորի մանկահասակ երեխաները ու նրա կանայք։ «Դե այս քաղաքը,— մտորում էր նա,— Տիգրանը առանց ճակատամարտի չի զիջի...»։

Այս քաղաքի վրա էր, որ այժմ արշավում էր Լուկուլլոսը և Տիգրանը այդ այլևս չէր կարող հանդուրժել։ Նա իր զորամասերով ռազմերթի դուրս եկավ և չորրորդ օրը ճամբար խփեց հռոմեացիներից քիչ հեռու. նրանց միմյանցից բաժանում էր Արածանի գետը, որը հռոմեացիներն անհրաժեշտաբար պետք է անցնեին դեպի Արտաշատ արշավելիս։ Լուկուլլոսը աստվածներին զոհեր մատուցեց, կարծես հաղթությունն արդեն իր ձեռքումն էր և բանակը գե-

տի մյուս ափը սկսեց անցկացնել՝ դասավորելով այն այնպիսի ձևով, որ տասներկու կոհորտներ առջևում լիներն, իսկ մնացածները պաշտպաներին զորաթիկունքը, որպեսզի հակառակորդը չհարվածեր հռոմեացիներին թևից։ Չէ՞ որ նրանց ընդառաջ կանգնած էին հակառակորդի բազմաթյուր այրուձին և ընտիր զինվորները, իսկ առջևի շարքերում գտնվում էին նետաձիգ հեծյալ մարդերը[40] և նիզակակիր իբերները, որոնց հետ, այլազգի զինվորներից բոլորից ավելի, Տիգրանը հատուկ հույսեր էր կապում, քանզի նրանք ամենից ռազմատենչն էին։ Բայց նրանք որևէ քաջագործություն չարեցին, քանզի, հռոմեական հեծելազորի հետ մի փոքր ընդհարվելուց հետո, նրանք չդիմացան հետևազորի գրոհին և փախչելով՝ ցրիվ եկան այս ու այն կողմ։ Հռոմեական հեծելազորայինները հետապնդեցին նրանց և նույնպես ցրվեցին տարբեր կողմեր, սակայն այդ պահին առաջ խոյացավ Տիգրանի այրուձին։ Լուկուլլոսը զարհուրեց նրա ահարկու տեսքից և զորքերի հսկայական քանակությունից և հրամայեց իր հեծելազորին դադարեցնել հետապնդումը։ Եվ առաջինը ինքը հարվածեց ատրպատականցիներին, որոնց ամենամարտունակ ուժերը գտնվում էին ճիշտ իր դիմաց, և անմիջապես նրանց այնպես ահաբեկեց, որ սրանք փախուստի մատնվեցին ավելի շուտ, քան կսկսվեր ճեռնամարտը։ Երեք թագավորներ[41] էին մասնակցում այս ճակատամարտում ընդդեմ Լուկուլլոսի, և բոլորից ամենաամոթալիորեն փախել էր, ինչպես ասում են, Միհրդատ Պոնտացին, որը չէր դիմացել նույնիսկ հռոմեացիների մարտական ճիչերին։ Հետապնդումը շարունակվեց շատ երկար և ձգձգվեց ամբողջ գիշերը, մինչև որ հռոմեացիները հոգնեցին ոչ միայն սրատելուց, այլև անգամ գերիներ վերցնելուց ու ռազմավար հավաքելուց։ Ինչպես պնդում է Լիվիոսը, եթե առաջին ճակատամարտում հակառակորդի կորուստներն ավելի մեծաթիվ էին, ապա այս անգամ սպանվել և գերի էին վերցվել ավելի անվանիներն ու մեծատոհմիկները[42]։

XXXII. Ոգևորված ու քաջալերված այդ հաղթանակով՝ Լուկուլլոսը մտադիր էր շարունակել ռազմերթը դեպի երկրի խորքերը և վերջնականապես ընկճել հակառակորդի դիմադրությունը։ Սակայն, արդեն աշնանային գիշերահավասարի ժամանակ[43], հանկարծակի սկսվեցին դառնաշունչ եղանակներ՝ համարյա անընդհատ ձյուն էր տեղում, իսկ երբ երկինքը պարզվում էր՝ եղյամ էր նստում ու մո-

լեգնում էր սառնամանիքը։ Ձիերը դժվարությամբ էին խմում սառը ջուրը, նրանց համար ծանր էր հատկապես գետանցների ժամանակ, երբ սառույցը փշրվում էր և սուր ծայրերով կտրատում նրանց ջղերը։ Այդ երկրի մեծագույն մասը լի էր խիտ անտառներով, կիրճերով ու ճահիճներով, այնպես որ զինվորները ոչ մի կերպ չէին կարողանում հանդերձները չորացնել՝ չվերթների ժամանակ նրանց ձյունն էր պատում, իսկ իջևանելիս տանջվում էին, քանզի խոնավ վայրերում էին դիշերում[44]։ Ուստի, ճակատամարտից հետո, նրանք միայն մի քանի օր հետևեցին Լուկուլլոսին, իսկ հետո սկսվեցին տրտունջները։ Սկզբում նրանք խնդրանքով դիմում էին նրան ռազմական տրիբունների միջոցով, իսկ հետո նրանց հավաքույթներն սկսեցին ավելի բուռն բնույթ կրել, և գիշերները նրանք բղավում էին իրենց վրաններում, որն արդեն բանակում մոտալուտ խռովության նշան էր։ Սվ չնայած Լուկուլլոսը բազում թախանձանքներով փորձում էր նրանց համոզել, որ մի փոքր էլ համբերեն, մինչև որ կվերցնեն «Հայկական Կարթագենը»[45] և երկրի երեսից կջնջեն հռոմեացիների ոխերիմ թշնամու այդ ձեռակերտը (նա նկատի ուներ Աննիբալին), սակայն հորդորները չօգնեցին և նա ստիպված եղ դարձավ[46]։ Հետադարձ ճանապարհին նա Տավրոսն անցավ այլ անցուղիներով և իջավ արգավանդ ու տաք մի երկիր, որը կոչվում էր Միգդոնիա[47]։ Այստեղ գտնվում էր մի մեծ ու մարդաշատ քաղաք, որին բարբարոսներն անվանում են Մծբին, իսկ հելլենները՝ Միգդոնիական Անտիոք։ Այս քաղաքը կառավարվում էր երկու անձերի կողմից. իր բարձր դիրքով կառավարիչը Դուրասն էր՝ Տիգրանի եղբայրը[48], իսկ շնորհիվ իր փորձառության և մեքենաներ կառուցելու նուրբ վարպետության՝ այն նույն Կալլիմաքոսը, որն այնքան գլխացավանք պատճառեց Լուկուլլոսին Ամիսոսի տակ։ Լուկուլլոսը Մծբինի պարիսպների մոտ ճամբար խփեց և, գործի դնելով պաշարողական արվեստի բոլոր հնարանքները, շուտով քաղաքը գրոհով գրավեց։ Դուրասն անձնատուր եղավ կամովին, ուստի և արժանացավ սիրալիր վերաբերմունքի։ Կալլիմաքոսին, սակայն, չնայած սա հռոմեացիներին խոստացել էր ցույց տալ մեծաքանակ թանկարժեք իրերով լի գաղտնի գանձանոցները, Լուկուլլոսն անգամ չլսեց և հրամայեց շղթայել, որպեսզի հետագայում նրան պատժի այն ավերիչ հրդեհի համար, որը քարուքանդ արեց Ամիսոսը և որը Լուկուլլոսից խլեց ինքնասիրությունը

շոյելու և հելլեններին իր բարեհաճությունը հայտնելու հնարավորությունից։

XXXIV. (Պուբլիոս Կլոդիոսի) այդ մեղադրանքներն[49] իրենց ներգործությունն ունեցան Լուկուլլոսի բանակի վրա և այն չգնաց իր զորավարի հետևից ո՛չ Տիգրանի և ո՛չ էլ Միհրդատի դեմ։ Վերջինս չհապաղեց Հայաստանից վերատին Պոնտոս ներխուժել և հարձակվով ետ էր նվաճում իր թագավորությունը[50], իսկ հռոմեական զինվորներն անբան նստել էին Կորդուքում՝ պատրվակելով ձմեռային եղանակները և սպասելով, թե ուր որ է կգա Պոմպեոսը կամ մեկ ուրիշ զորավար՝ Լուկուլլոսին փոխարինելու։

XXXV. Սակայն, երբ լուր ստացվեց, թե Միհրդատը ջախջախել է Ֆարիոսին[51] և շարժվում է ընդդեմ Սորնատիոսի ու Տրիարիոսի, նրանք իրենց վարմունքից ամոթահար՝ գնացին Լուկուլլոսի հետևից։ Տրիարիոսը, փառատենչությունից մղված՝ չսպասելով Լուկուլլոսին, որն արդեն մոտ էր, ցանկանում էր դյուրին, ինչպես թվում էր իրեն, հաղթանակ ձեռք բերել, բայց դրա փոխարեն դաժան պարտություն կրեց. ճակատամարտում, ինչպես պատմում են, յոթ հազարից ավելի հռոմեացիներ ընկան, այդ թվում հարյուր հիսուն գենտուրիոն և քսանչորս ռազմական տրիբուն։ Բանակատեղին ընկել էր Միհրդատի ձեռքը[52]։ Եվ, երբ մի քանի օր անց եկավ Լուկուլլոսը, նա ստիպված էր թաքցնելու Տրիարիոսին մոլեգնած զինվորներից։ Միհրդատը խույս էր տալիս Լուկուլլոսի հետ ճակատամարտելուց՝ սպասելով Տիգրանին, որը մեծաքանակ ուժերով գալիս էր իր հետ միանալու, և Լուկուլլոսը վճռեց շարժվել Տիգրանին ընդառաջ ու ճակատամարտ տալ նրան ավելի շուտ, քան հակառակորդները կհասցնեին վերստին միավորվել։ Ճանապարհին, սակայն, ֆիմբրիականները[53] խռովություն բարձրացրեցին՝ լքելով իրենց տեղերը մարտաշարքում, փաստարկելով այդ նրանով, որ իրենք սենատի որոշմամբ արձակված են զինծառայությունից, և Լուկուլլոսն այլևս իրավունք չունի իրենց հրամայելու, քանզի պրովինցիաները հանձնված են ուրիշի[54]։ ... Նա (Լուկուլլոսը) բոլոր զինվորներին միասին էր պահում և ոչինչ այլևս նրանց չէր հարկադրում և չէր տանում ընդդեմ թշնամու, միայն թե նրանք իրեն չլքեին։ Նա ստիպված էր հաշվել այն իրողության հետ, որ Տիգրանը ամայացնում էր Կապադովկիան[55], որ Միհրդատին էր վերադարձել նախկին հանդգնությունը, այն Միհրդատին, որի մասին

զեկուցել էր սենատին, թե նրա վերջը տրված է։ Այդ զեկույցից հետո Հռոմից այստեղ ուղարկվեցին թվով տասը պաշտոնական անձինք՝ Պոնտոսում, որպես վերջնականապես հպատակեցված երկրում, գործերը կարգավորելու նպատակով, իսկ երբ նրանք ժամանեցին այստեղ, ապա համոզվեցին, որ Լուկուլլոսը նույնիսկ ինքն իրեն չի կարող կառավարել՝ նրան, ինչպես ցանկանում էին, բռնադատում էին իր իսկ զինվորները։

1. Խոսքը Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորի (111—63) մասին է, որը Միհրդատյան երկրորդ պատերազմի ժամանակ (73—71 թթ.) պարտություն էր կրել Լուկուլլոսից։

2. Կաբիրա— անտիկ ամրոց Պոնտոսի հարավարևելյան մասում, այժմ Նիքսար՝ Կելկիտ գետի ափին։ Այստեղ 71 թ. ամռանը Միհրդատը ծանր պարտություն կրեց հռոմեացիներից և մազապուրծ փախավ Հայաստան։

3. Պլուտարքոսը նկատի ունի այն, որ Տիգրանի կարգադրությամբ սելևկյան Սելենե թագուհին մահապատժի էր ենթարկվել։

4. Տալավրայի տեղադրությունը դեռևս լուսաբանված չէ։

5. Միհրդատ Եվպատորը Հայաստան փախավ 71 թ. աշնան սկզբներին։

6. Ցեղեր, որոնք այդ ժամանակ մտնում էին Պոնտական թագավորության կազմի մեջ։ Տիբարեններն ու խալդայները բնակվում էին Սև ծովից հարավարևելք ընկած տարածքում։

7. Դեռևս մ. թ. ա. II դարի վերջերին Միհրդատ Եվպատորը գրավել էր Փոքր Հայքը և այն մտցրել Պոնտոսի կազմի մեջ։

8. Ապպիոս (Պուբլիոս Ապպիոս Կլավդիոս)— հռոմեական պետական գործիչ, 58 թ. ժողովրդական տրիբուն, Ցիցերոնի երդվյալ հակառակորդը. Լուկուլլոսի կնոջ՝ Կլավդիա Պուլխրայի, ավագ եղբայրը։

9. Քաղաք Սև ծովի հարավային ափին, Իրիսի գետաբերանից արևմուտք։

10. Անտիոքը հիմնադրել էր Սելևկոս I-ը մ. թ. ա. 300 թվականին և անվանել իր հոր անունով։ Արդեն մ. թ. ա. II դարի վերջին այն ուներ 500 հազար բնակիչ և համարվում էր Հին աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը։ Իր շքեղությամբ հայտնի էր հատկապես Անտիոքի արվարձանը՝ Դափնե գբոսավայրը, որի անունից քաղաքը հաճախ անվանում էին «Դափնեին կից Անտիոք»։ Մ. թ. ա. 83 թ. Տիգրան II-ը նվաճելով Սելևկյան Ասորիքը՝ Անտիոքը դարձրեց իր տերության երրորդ՝ հարավային մայրաքաղաքը։

11. Այդ ժամանակ Տիգրանը շրջապատել էր Սելևկյան վերջին հենակետերից մեկը հանդիսացող Պտղոմայիս քաղաքը, ուր պատսպարվել էր Կլեոպատրա-Սելենե թագուհին։

12. Նվաճված երկրների բնակչության բռնի վերաբնակեցումը, որ հսկայական մասշտաբներով կատարվում էր Տիգրանի ժամանակ, նպատակ ուներ բավարարելու Հայաստանի սոցիալ-տնտեսական աճող պահանջները։ Մոտավոր

հաշվումներով Տիգրանի օրոք Հայաստան է բերվել կես միլիոնից ոչ պակաս սաարթիկրացի (տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 60)։

13. Այս վկայություններից չպետք է մակաբերել, թե իբր արաբական թափառական ցեղերը զբաղվելու էին առևտրով։ Տիգրանը նրանց հանձնարարել էր տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողությունն ու պաշտպանությունը։

14. Մետրոդորոս Սկեպսիացի— հույն հռետոր ու փիլիսոփա՝ «Հռոմեասյաց» մականվամբ։ Երկար տարիներ ծառայել է Միհրդատ Եվպատորին՝ վարելով Պոնտոսի գերագույն դատավորի պաշտոնը, այնուհետև դավաճանել է վերջինիս և ապաստան գտել Տիգրանի արքունիքում։ Եղել է Տիգրանի պալատական պատմագիրը և գրել «Տիգրանի պատմությունը» վերտառությամբ մի երկասիրություն, որը մեզ չի հասել։

15. Ամփիկրատես Աբենացի— հույն նշանավոր հռետոր։ Աբենքից արտաքսվելուց հետո ապաստան գտավ Տիգրանակերտում, որտեղ զբաղվում էր գրական գործունեությամբ, գրել է «Տիգրանի վարքը» երկը, որը մեզ չի հասել։

16. Տիգրիսյան Սելևկիան այդ ժամանակ պարթև Արշակունիների նստավայրն էր։

17. Լիկաոնիան գտնվում էր Կիլիկիայից հյուսիս-արևմուտք։

18. Լուկուլլոսի հայկական արշավանքն սկսվել է մ. թ. ա. 69 թ. գարնանը։

19. Մոփքի ավազանին, ըստ երևույթին, հույս ուներ իր այս քայլով, հռոմեացիների օգնությամբ, վերականգնելու ոչ հեռու անցյալում իր վայելած անկախությունը։

20. Եփեսոս— հին հունական քաղաք Փոքր Ասիայի արևմուտքում՝ էգեյան ծովի ափին, կախտորոսի գետաբերանի մոտ։ Մ. թ. ա. 133 թվականից գտնվում էր Հռոմի կազմում։

21. Մեհերուժան (Միհրոբարդան, Միհրոբուզան)— սա, հավանաբար, Մոփքի սատրապն էր, որը նշանակվել էր Տիգրանի կողմից այդ երկրամասը նվաճելուց հետո։ Ենթադրվում է, որ Մեհրուժանը իր ծագմամբ պատկանում էր Մոփքի Զարևհյանների թագավորական տանը։

22. Տաքսիլեսը Միհրդատի ամենաառաջի ընկնող զորավարներից էր, մասնակցել է Միհրդատյան առաջին պատերազմին (88—84 թթ.)։ Սա, ըստ երևույթին, Տիգրանի մոտ կատարում էր ռազմական խորհրդականի դեր։

23. Խոսքն այստեղ Պարսից ծոցի մասին է։

24. Պլուտարքոսն այստեղ, ըստ երևույթին, նկատի ունի Արաքսի գետաբերանի շուրջն ընկած տարածքում բնակվող ցեղերին։

25. Այսպիսով, ըստ Պլուտարքոսի, հայկական բանակի թիվը Տիգրանակերտի ճակատամարտում կազմում էր 300 հազար զինվոր, որն ակնհայտ չափազանցություն է։ Փոքրասիական շեղոք պատմիչներ Մեմնոնի և Փլեգոնի վկայությունների համաձայն՝ հայկական բանակն ուներ 70—80 հազար մարտիկ։

26. Պլուտարքոսը խեղաթյուրված թվեր է բերում նաև Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցած հռոմեական զորքի քանակության մասին՝ գրելով, որ Լուկուլլոսն ուներ ընդամենը 14 հազար զինվոր։ Բերված թվաքանակը վերաբերում է միմիայն հռոմեացիներից կազմված զորամասերին, մինչդեռ Լուկուլլոսն իր տրամադրության տակ պետք է ունենար նաև դաշնակիցների զորամասերը,

որոնց հետ միասին նրա բանակը ուներ շուրջ 35—40 հազար զինվոր, որը միայն կիսով չափ էր պակաս հայկական բանակից և ոչ քան, ինչպես ջանում է ներկայացնել Պլուտարքոսը։

27. Ուսումնասիրողները գտնում են, որ այդ վայրը Բաթման-սու գետի ձախ ափի հարթավայրն է՝ Բաթման-սու և Ցարկին-սու գետերի միախառնման տեղում։

28. Կիմբրացիներ— գերմանական ցեղ, որը մ. թ. ա. 105 թ. հոկտեմբերի 6-ին գլխովին ջախջախեց Գնեոս Սերվիլիոս Կեպիոնոսի հռոմեական բանակին։

29. Այս միջադեպի մասին եղած մատենագրական վկայությունները (Պլուտարքոս, Մենոն, Փրոնտինոս, Դիոն Կասսիոս և այլք) խիստ հակասական են։ Ուսումնասիրողները գտնում են, որ սա թխված ու հերյուրված է հենց Լուկուլլոսի կողմից՝ իր փառքն էլ ավելի շեշտելու միտումով։

30. Այսպիսով, ըստ Պլուտարքոսի, 100 հազարից ավելի սպանված հայերի դիմաց հռոմեացիներն ունեցել են միայն հինգը։ Բանակների կորուստների մասին բերված այս տվյալները ևս խիստ խեղաթյուրված են։ Փլեգոնն, օրինակ, խոսում է ընդամենը հինգ հազար հայ զինվորի կորստյան մասին։

31. Անտիոքոս Իմաստասեր Ասկալոնացի (125—68)— հայտնի հույն փիլիսոփա, Աթենքի պլատոնյան դպրոցի ուսուցչապետը, Ցիցերոնի դաստիարակը։ Նրա երկասիրությունները մեզ չեն հասել։

32. Սարբարոնի այս երկասիրությունը, որը դժբախտաբար մեզ չի հասել, նվիրված է եղել մ. թ. ա. 146—27 թթ. իրադարձությունների նկարագրությանը։

33. Խոսքը հռոմեական հայտնի պատմագիր Տիտոս Լիվիոսի (մ. թ. ա. 58— մ. թ. 17 թթ.) մասին է, որը գրել է 142 գրքից բաղկացած «Հռոմեական պատմություն, սկսած քաղաքի հիմնադրումից» մնծածավալ երկասիրությունը։ Պլուտարքոսն այս վկայությունը վերցրել է Լիվիոսի մեզ չհասած 98-րդ գրքից։

34. Պլուտարքոսի սույն վկայությունը կարևոր է այն տեսակետից, որ Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավել է ոչ այնքան ռազմական ուժի, որքան քաղաքի այլասերու բնակչության գավաճանության ու ապստամբության շնորհիվ։

35. Այսպիսով, Տիգրանակերտից Լուկուլլոսը տարել է ութ հազար տաղանդ արծաթ, որ հավասար է 17 միլիոն ոսկի ռուբլու, բացի այդ, հռոմեական ամեն մի զինվոր ստացել էր 800-ական դրաքմե, այսինքն՝ 280 ոսկի ռուբլի յուրաքանչյուրը։

36. Այսինքն՝ այժմյան կշռով մոտ 120 հազար տոննա։

37. Խոսքը Պարթևաց Հրահատ III (70—57) թագավորի մասին է։

38. Հայ-պարթևական այս բանակցությունները նախաձեռնել էր Տիգրանը, որը հորդորում էր Հրահատ III-ին՝ դաշնակցել իր հետ Հռոմի դեմ մղվող պատերազմում, խոստանալով նրան հանձնել «Ցոթհանասուն հովիտներն» ու Հյուսիսային Միջագետքում որոշ տերիտորիաներ։

39. Այսինքն՝ մ. թ. ա. 68 թվականի ամռանը։

40. Պլուտարքոսի հիշատակված սույն մարդերը բնակվում էին Կասպից ծովի հարավային ափերին։

41. Այսինքն՝ Հայոց թագավոր Տիգրան II-ը, Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորը և Ատրոպատյան Մարաստանի թագավոր Միհրդատը, որը Տիգրանի դստեր ամուսինն էր։

42. Հայկական և հռոմեական բանակների միջև այս ճակատամարտը տեղի է ունեցել 68 թ. սեպտեմբերի կեսերին՝ Արածանի գետ ափին, Բագավանից հյուսիս, այժմյան Ղարաքիլիսայից 25—30 կմ դեպի արևելք։ Պլուտարքոսը հռոմեացիների համար Արածանիի ճակատամարտի ելքը բնորոշում է որպես հաղթություն, սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ այստեղ հռոմեացիների տարած որևէ հաղթանակի մասին խոսք անգամ լինել չի կարող, ընդանք պարզապես պարտություն էին կրել, որի մասին ակնարկում է նաև Դիոն Կասսիոսը (տե՛ս 285-րդ էջի № 9 ծան.)։

43. Այսինքն՝ 68 թվականի սեպտեմբերի 22-ին։

44. Պլուտարքոսի սույն հաղորդմանը չպետք է հավատ ընծայել, որովհետև Հայաստանում ցրտերն սկսվում են ոչ թե սեպտեմբերի կեսերին, այլ շատ ավելի ուշ։ Հետևաբար, հռոմեական բանակի նահանջի իրական պատճառը չէին կարող լինել ձյունը, սառնամանիքները, գետերի սառցապատումը և այլն։

45. Խոսքը Արտաշատ մայրաքաղաքի մասին է։

46. Այս կոնտեքստում Պլուտարքոսի ներկայացրած աննկուն զորավարի և բուլամորթ զորքի հակադրման տեսարանից, անշուշտ, շահում է Լուկուլլոսը, երբ հռոմեացիների Հայաստանից նահանջելու պատասխանատվությունը դրվում է միմիայն զորքի վրա։ Հռոմեական զորքի բարոյալքումն ու վհատությունը հետևանք էին նախ և առաջ բանակի հսկայական կորուստների, աննդամքերքի ու ռազմամթերքի պակասության և նախօրոք կրած պարտության։

47. Երկրամաս Հյուսիսային Միջագետքում՝ Մծբին կենտրոնով։

48. Արքահեղքայր Գուրասը ոչ միայն Միգդոնիայի, այլ նաև Միջագետքում հայկական գերիշխանության ոլորտում գտնվող մյուս երկրների վերակացուն էր կամ փոխարքան։

49. Պուբլիոս Կլոդիոսը՝ վերը հիշատակված Ապպիոս Կլավդիոսի եղբայրը, չնայած Լուկուլլոսի ազգականն էր, բայց առաջիններից մեկն էր, որ սկսեց զինվորներին գրգռել գլխավոր հրամանատարի դեմ, բացահայտորեն նրան մեղադրելով ձգձգվող ու անօգուտ պատերազմի մեջ։ Սա հետագայում, կաշառքի գնով, ազատ արձակեց Հռոմ տարված և այնտեղ բանտարկված Տիգրան Կրտսերին։

50. Միհրդատ Եվպատորը Պոնտոս մտավ 68 թ. ուշ աշնանը։

51. Ֆաբիոս Հադրիանոս— հռոմեական զորավար, որին Լուկուլլոսը թողել էր Պոնտոսում տեղաբաշխված հռոմեական բանակի հրամանատար։ Սա գլխովին ջախջախվեց Միհրդատից և իր զորքերի մնացորդներով փախավ ու ամրացավ Կաբիրա բերդաքաղաքում։

52. Այս դեպքերը տեղի են ունեցել հաջորդ՝ 67 թվականին, երբ Զելա ամրոցի մոտ հայ-պոնտական բանակները, Միհրդատի գլխավորությամբ, գլխովին ջախջախեցին Գայոս Վալերիոս Տրիարիոսի զորամասերին։

53. Ֆիմբրիականներ— այսպես էին կոչվում այն կոհորտի զինվորները, որոնց լծատն էր Գայոս Փլավիոս Ֆիմբրիան։ Այս կոհորտն աչքի էր ընկնում իր ըմբոստ ու խռովարար բնավորությամբ և մի քանի առիթներով Ֆիմբրիան օգտագործել էր նրանց՝ գլխավոր հրամանատարության համար մղվող պայքարում։

54. Իրոք, 67 թ. ժողովրդական տրիբուն Գաբինիոսի օրենքով՝ Լուկուլլոսը պաշտոնանկ էր հայտարարվել. նրանից վերցվեցին Բյութանիա և Պոնտոս պրո-

վինցիաները և տրվեցին նույն թվականի կոնսուլ Դլաբրիոնին։ Այդ օրենքով արձակուրդ էր տրվում նաև ծառայության ժամկետը լրացրած Լուկուլլոսի զինվորներին։

55. Տիգրանը կապադովկիա ներխուժեց 67 թ. կեսերին և այստեղից դուրս քշեց հռոմեական դրածո Արիոբարզան թագավորին։ Այսպիսով, Լուկուլլոսի հայկական արշավանքն ավարտվեց լիակատար պարտությամբ։

ՓՈՔՐ ՀԱՅՔԸ ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XII, 3

28. Փառնակիայի[1] և Տրապեզունտի գավառներից վերև մինչև Փոքր Հայք Տիբարեններն են և Խալդայները։ Փոքր Հայքը բավական բարիքեր երկիր է։ Այն ևս, ինչպես Սոփենեն, միշտ կառավարել են իշխանները, որոնք մերթ եղել են մյուս Հայոց[2] բարեկամ, մերթ էլ իրենց գործերը վարել ինքնուրույն[3]։ Նրանց հպատակվել էին խալդայներն ու տիբարենները. այնպես որ իրենց իշխանությունը տարածել էին մինչև Տրապեզունտ և Փառնակիա։ Իսկ Միհրդատ Եվպատորը ուժեղանալով, դարձավ տերը Կոլխիսի և այս բոլոր (երկրների), որոնց Սիսիդի որդի Անտիպատրոսը հանձնեց նրան[4]։ Միհրդատը այնպես հոգ տարավ այդ վայրերի մասին, որ այնտեղ կառուցեց 75 ամրոց, որտեղ պահ դրեց իր գանձերի մեծագույն մասը։ Սրանցից հիշատակության ամենաարժանիներն են՝ Հյուդրարան, Բասգոյդարիզան և Սինորիան[5]. սա առաջացել է Մեծ Հայքի սահմանի վրա, որի համար էլ Թեոփանեսը այն կոչում է Սինորիա[6]. Պարիադրեսի ամբողջ լեռնոտ երկիրը, լինելով ջրառատ, անտառաշատ և ամեն կողմից գահավեժ ձորերով ու վիհերով բաժանված, այդպիսի շատ հարմարություններ ուներ։ Ուստի և այստեղ կառուցեց իր գանձատների մեծագույն մասը և վերջում էլ Միհրդատը՝ Պոմպեոսի արշավանքի ժամանակ[7], ապաստանեց այստեղ, Պոնտական թագավորության ծայրամասում, և Ակիլիսեններում, Դաստեյրայի[8] մոտ գրավելով ջրառատ մի լեռ, քանդի մոտ էր Եփրատը, որը բաժանում է Ակիլիսենեն Փոքր Հայքից, մինչև որ պաշարվելուց հետո ստիպվեց լեռների միջով փախչել Կոլխիս և այնտեղից էլ Բոսփոր։ Պոմպեոսը այս վայրի մոտ՝ Փոքր Հայքում կառուցեց Նիկոպոլիս քաղաքը[9], որը այժմ ևս մնում է և լավ է բնակեցված։

1. Փառնակիա (Կերասունտ)— քաղաք Պոնտոսում, այժմ՝ Գիրեսուն նահանգիստը Թուրքիայում։

2. Նկատի ունի Մեծ Հայքը։

3. Փոքր Հայքը մ. թ. ա. III—II դդ. (մինչև Պոնտոսին միացվելը) առանձին հայկական թագավորություն էր՝ Եփրատի և Անտիտավրոսի միջև ընկած տարածքում։

4. Անտիպատրոս— Հայ իշխանավոր, որը մ. թ. ա. 112 թ. Փոքր Հայքը հանձնեց Միհրդատ Եվպատորին։

5. Ամրոցներ Փոքր Հայքում. սրանցից միայն Սինորիայի տեղադրությունն է որոշակի։ Այն գտնվել է Գաղտառիճից Սատաղ տանող ճանապարհի վրա՝ Աշկալայից մոտ 15 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Եփրատ գետի մոտ։

6. Սինորիա նշանակում է «սահմանային»։

7. Պոմպեոսը Միհրդատի դեմ իր արշավանքն սկսեց մ. թ. ա. 66 թ. գարնանը։

8. Դաստեյրա— ամրոց Փոքր Հայքում, միջնադարյան հայկական Դաստատրակ գյուղն է, այժմ՝ Դոստալի գյուղը Ջիմարայի մոտ։

9. Նիկոպոլիս— այս քաղաքը հիմնադրել է Գնեոս Պոմպեոսը՝ ի նշանավորումն Միհրդատ Եվպատորի դեմ տարած հաղթանակի, Դայլ (Լյուկոս) գետի ափին՝ այժմյան Բյուրգ կամ Պյուրկ գյուղի մոտ։

ՀԱՅ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՊՊԻԱՆՈՍԻ

Ապպիանոս Ալեքսանդրիացին ականավոր պատմագրության կարկառուն դեմքերից մեկն է։ Նա ծնվել է մ. թ. մոտավորապես II դարի սկզբին, եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում՝ նույն մեծատոհմիկի ընտանիքում։ Բարձր իրավաբանական պաշտոններ է վարել ծննդավայրում և Հռոմում։ Ապպիանոսը մահացել է II դարի 70-ական թվականներին։

Մոտավորապես 160-ական թվականներին նա հունարեն լեզվով գրել է 24 գրքից բաղկացած «Հռոմեական պատմություն» երկասիրությունը։ Ամբողջությամբ պահպանվել են 6—8-րդ և 11—17-րդ գրքերը, իսկ 18—24-րդ գրքերը կորել են, մնացածներից մեզ են հասել միայն առանձին պատառիկներ։ Այստեղ, առանց որոշակի ժամանակագրության, Ապպիանոսը շարադրել է Հռոմի պատմությունը՝ քաղաքի հիմնադրումից մինչև Տրայանոս կայսեր տարիները (մ. թ. II դարի սկզբները)։

Նկարագրելով Հռոմի վարած ճվաճողական պատերազմները՝ Ապպիանոսը անդրադառնում է նաև հերթական պատերազմի օբյեկտ հանդիսացող այս կամ այն երկրի ու ժողովրդի, այդ թվում

և Հայաստանի, բաղաբական պատմության» հիմնական գաղափարը Հռոմեական կայսրության փառաբանումն է: Պատմագիրը ջանք չի խնայում շեշտելու Հռոմի վեհության ու հզորությունը, արդարացնելու վերջինիս նվաճողական պատերազմները:

Հելլենիստական Հայաստանի II—I դդ. պատմության ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն են ներկայացնում Ապպիանոսի աշխատության 11-րդ (Սիրիական) և 12-րդ (Միհրդատական) գրքերը:

Ապպիանոսից ստորև բերված հատվածները տալիս ենք Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է «Appiani Alexandrini Historia Romana, Bibl. Teubner., I—II, Lipsiae, 1879» հրատարակությունից:

ԱՊՊԻԱՆՈՍ

ԳԻՐՔ XI, ՍԻՐԻԱԿԱՆ

48. Եվ Հայաստանի թագավոր Տիգրանը՝ Տիգրանի[1] որդին, հպատակեցնելով իրենց սեփական դինաստներին ունեցող մի շարք հարևան ազգերի, այնուհետև հռչակվեց արքայից արքա և արշավեց Սելևկյանների վրա, որոնք չէին կամեցել հպատակվել նրան: Անտիոքոս Եվսեբեսը[2] չկարողացավ դիմադրել նրան, և Տիգրանը տիրեց Եփրատից այն կողմ գտնվող Սիրիային, մինչև Եգիպտոս բնակվող սիրիական ցեղերի (երկիրը): Միաժամանակ նվաճեց Կիլիկիան, քանզի այն ևս հպատակվում էր Սելևկյաններին և այդ բոլորի վրա ստրատեգոս նշանակելով Մագադատեսին[3], 14 տարի (իշխեց)[4]:

49. Մինչ Հռոմեացիների զորավար Լուկուլլոսը հետապնդում էր Տիգրանի մոտ ապաստանած Միհրդատին, Մագադատեսը գնաց իր զորքով Տիգրանին օգնելու, Անտիոքոս Եվսեբեսի որդի Անտիոքոսը[5] թաքուն մտավ Սիրիա և իշխեց սիրիացիների վրա, նրանց կամքով:

66. Անտիոքոս (Էպիփաներսը)[6] թագավորեց ոչ լրիվ 12 տարի. այդ ընթացքում նա հաղթեց Հայ Արտաշեսին[7] և արշավեց Եգիպտոս[8] Պտղոմեոսի[9] դեմ, որը որբ էր մնացել եղբոր հետ միասին:

69. Անտիոքոս Գրյուպոսի[10] որդի Սելևկոսին[11] հաջորդում է Անտիոքոս (Եվսեբեսը)՝ Կիզիկացու[12] որդին...: Այս Եվսեբեսը ամուսնացավ Սելեներին, որը եղել էր նրա հոր՝ Կիզիկացու, ինչպես և նրա հորեղբոր՝ Գրյուպոսի կինը: Այս պատճառով էլ աստված նրան պատժեց և նրան Տիգրանը քշեց իշխանությունից:

ԳԻՐՔ XII, ՄԻՀՐԴԱՏԱԿԱՆ

15. «Հայ Տիգրանը Միհրդատի[13] փեսան էր, իսկ պարթև Արշակը՝ բարեկամը»[14]:

67. Միհրդատը իր փեսա Տիգրանին համոզեց ներխուժել Կապադովկիա, իբր ինքնաբերաբար: Այս խորամանկումը չվրիպեց Հռոմեացիներից. բայց Հայը Կապադովկիան պաշարելով[15], մոտ 30 բյուր մարդ տեղահանեց ու տեղափոխեց Հայաստան և նրանց, այլոց հետ միասին, համաբնակեցրեց մի վայրում, որտեղ նա առաջին անգամ հագավ Հայաստանի թագը և (այդ) վայրը իր անունով կոչեց Տիգրանակերտ և կամ՝ Տիգրանապոլիս[16] (Տիգրանի քաղաք— Ս. Կ.):

83. (Լուկուլլոսը) բարեկամություն հաստատեց Միհրդատի որդի Մաքարեսի հետ, որը թագավորում էր Բոսփորում և իրին ուղարկել էր ոսկե պսակ, ապա Տիգրանից պահանջեց Միհրդատին: Եվ վերադառնալով Ասիա... հաղթանակի առթիվ զոհաբերման տոնախմբություններ կատարեց, իբրև թե պատերազմը ավարտվել էր հաղթական:

84. Զոհեր մատուցելուց հետո նա երկու ընտիր լեգեոններով և 500 հեծյալներով արշավեց Տիգրանի վրա[17]: Անցնելով Եփրատը, նա բարբարոսներից, որոնց երկրով անցնում էր[18], պահանջում էր միայն այն, ինչ անհրաժեշտ էր, քանի որ նրանք չէին կռվում և ոչ էլ ուզում էին որևէ բանով տուժել, այլ թողնում էին, որ Լուկուլլոսը և Տիգրանը իրենք լուծեն իրենց վեճը: Տիգրանին ոչ ոք չէր հաղորդում Լուկուլլոսի մոտենալու մասին: Քանզի առաջին իսկ մարդը, որն ասել էր այդ մասին, կախաղան էր հանվել նրա կողմից, որովհետև նա կարծում էր, որ այդ մարդը խուճապ էր առաջացնում քաղաքներում: Բայց երբ արդեն Տիգրանն իմացավ (այդ մասին), Մեհրուժանին[19] երկու հազար հեծյալներով ուղարկեց առաջ, որպեսզի փակի Լուկուլլոսի ճանապարհը: Իսկ Մանկա-

յոսին[20] հանձնարարեց պաշտպանել Տիգրանակերտը. այն քաղաքը, որը, ինչպես նախապես ասել եմ, թագավորն իր պատվին կառուցել էր այդ վայրում, և (երկրի) լավագույններին կանչում էր այնտեղ, սպառնալով, որ այն ինչ չեն բերի իրենց հետ, կբռնագրավվի։ Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով[21], որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվախոռներ։ Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ, ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով։ Մեր ձակատում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ։ Այս ամենը Մանկայոսին հանձնելով՝ ինքը շրջում էր երկիրը զորք հավաքելու նպատակով։ Լուկուլլոսը Մեհրուժանին, առաջին իսկ բախումից հետո, հաղթեց և փախուստի մատնեց։ Իսկ Սեքստիլիոսը, Մանկայոսին Տիգրանակերտում փակելուց հետո, կողոպտեց արքունի պալատը, որը պարբսպապատ չէր, քաղաքի և բերդի շուրջ խանդակ փորեց, (պաշարողական) մեքենաներ պատրաստեց և պարսպի տակ ականներ փորեց։

85. Մինչ Սեքստիլիոսը զբաղված էր այս գործերով, Տիգրանը հավաքելով մոտ 25 բյուր հետևակ և 5 բյուր հեծյալ, նախ նրբանցից մոտ 6000-ին ուղարկեց Տիգրանակերտ, որոնք հռոմեացիների միջով մտնելով բերդ, այնտեղից խլեցին ու դուրս բերեցին թագավորի հարճերին։ Իսկ զորքի մնացած մասով ինքը՝ Տիգրանը շարժվեց Լուկուլլոսի վրա։ Այնժամ Միհրդատը առաջին անգամ գալով նրան տեսության, խորհուրդ տվեց կռվի չբռնվել հռոմեացիների հետ, այլ միայն հեծելազորով արշավել նրանց շուրջը և, ավերելով երկիրը, եթե հնարավոր է, նրանց սովի մատնել, ինչպես և ինքը Լուկուլլոսի կողմից Կյուզիկոսի[22] մոտ առանց կռվի ուժասպառ էր եղել և կորցրել իր զորքը։ Իսկ Տիգրանը ծաղրելով Միհրդատի այդ ռազմավարությունը, առաջ է շարժվում, պատրաստ կռվելու։ Տեսնելով, որ հռոմեացիները սակավաթիվ են, նա այսպես հեգնեց. «Եթե սրանք դեսպաններ են, շատ են, իսկ եթե բշնամի՝ հույժ սակավ»։ Լուկուլլոսը, Տիգրանի թիկունքում հարմար մի բյուր նկատելով, իր հեծյալներին հրամայեց բշնամուն անհանգստացնել ճակատից, նրան քաշել իրենց կողմը և կամովին ետ նահանջել, որպեսզի հետապնդող բարբարոսների շարքերը քայքայվեն։ Իսկ ինքը հետևակի հետ անցնելով (բշնամու) թիկունքը, աննկատ բարձրացավ բլուրը։ Եվ երբ նա տեսավ, որ բշնամին (հեծելազորը) հալածելիս իբր թե հաղթած լինելով՝ շատ էր ցրվել, իսկ նրա ամբողջ գումակը գտնվում էր ներքևում, գոչեց. «Զինվորնե՛ր, մենք հաղթում ենք» և առաջինը ինքը վազելով հարձակվեց գումակի վրա։ Գումակն իսկույն ազմկալից փախչելով, ընկավ հետևակի վրա. իսկ հետևակը՝ հեծելազորի։ Շուտով պարտությունը եղավ լիակատար, որովհետև արդեն հռոմեացի հեծյալները ետ դարձան ու կոտորեցին նրանց, որոնք հետապնդելիս ցրվել էին հեռուները, իսկ գումակը խուճապի մատնված՝ ընկնում էր մյուսների վրա։ Եվ այդ ամբոխի մեջ իրար էին կոխոտում առանց ճշդիտ իմանալու, թե որտեղի՞ց էր սկսվել նրանց համար այդ արհավիրքը։ Մեծ եղավ կոտորածը, քանի որ ոչ ոք կողոպտությամբ չէր զբաղվում, Լուկուլլոսը սպառնալով արգելել էր այդ, ուստի և սպարանջաններն ու մանյակներն իսկ թողնելով, նրանք շարունակում էին սպանել մոտ 120 ասպարեզի վրա, մինչև գիշերը վրա հասնելը։ Միայն դրանից հետո նրանք վերադարձան և սկսեցին կողոպտել, քանի որ Լուկուլլոսը արդեն այդ թույլ էր տվել։

86. Մանկայոսը Տիգրանակերտից տեսնելով այդ պարտությունը, կասկածելով հելլենների վրա, որոնք նրա մոտ վարձկաններ էին, բոլորին զինաթափեց։ Սրանք ձերբակալումից վախենալով՝ բերերով զինված գնացին և բանակեցին բացօթյա։ Երբ Մանկայոսը նրանց դեմ հանեց զինված բարբարոսների, նրանք իրենց զգեստները վահանների փոխարեն կապկպելով ձախ ձեռքերին՝ խիզախաբար վազեցին նրանց վրա։ Եվ ում որ սպանում էին, իսկույն բաժանում էին նրա զենքերը իրար միջև։ Երբ, այսպիսով, նրանք հնարավորին չափ իրենց բավարարեցին (զենքով), դրավեցին միջաշտարակային մի քանի մասեր և դրսից հռոմեացիներին կանչելով, բարձրացողներին ներս թողեցին։ Այսպես գրավվեց Տիգրանակերտը և կողոպտվեց մեծ հարստություն, ինչպիսին կլիներ նորակառույց և փառասիրությամբ բնակեցված քաղաքում։

87. Տիգրանը և Միհրդատը շրջելով երկիրը՝ հավաքում էին նոր բանակ, որի հրամանատարությունը հանձնվեց Միհրդատին, քանի որ Տիգրանը մտածում էր, որ նրա կրած անհաջողությունները դաս եղած կլինեն։ Նրանք նաև դեսպաններ ուղարկեցին Պարթև թագավորի[23] մոտ, նրանից օգնություն խնդրելով։ Նրանց հակառակ՝ Լուկուլլոսը ևս դեսպաններ ուղարկեց, պահանջելով կամ

դաշնակցել իր հետ, կամ չեզոք մնալ։ Իսկ Պարթևը երկուսի հետ էլ գաղտնի դաշն կնքեց, բայց ոչ մեկին չօգնեց։ Մինչդեռ Միհրդատը ամեն քաղաքում զենք էր պատրաստում և զինվորագրում գրեթե բոլոր հայերին։ Նրանցից ընտրեց լավագույններին, շուրջ 7 բյուր հետևակ և դրա կեսի չափ հեծյալների, մնացյալին ազատ արձակեց։ (Ընտրվածներին) նա բաժանեց ջոկատների և վաշտերի, հռոմեական զորքերի նման, և հանձնեց պոնտացի զինվորականներին, նրանց վարժեցնելու համար։ Երբ Լուկուլլոսը շարժվեց նրանց դեմ, Միհրդատը ամբողջ հետևակով և հեծելազորի մի մասով ամրացել էր բլրի վրա, իսկ Տիգրանը մնացյալ հեծյալներով հարձակվեց պարսն հավաքող հռոմեացիների վրա, բայց պարտվեց։ Դրանից հետո հռոմեացիները առավել աներկյուղ պարսն էին հավաքում և բանակեցին իրեն իսկ՝ Միհրդատին մոտիկ։ Ու դարձյալ մեծ փոշի բարձրացավ, ազդարարելով Տիգրանի մոտենալը։ Շրպտիրն այն էր, որ Լուկուլլոսը մնար երկու թագավորների միջև։ Բայց Լուկուլլոսը այդ դրալով, իր լավագույն հեծյալներին ուղարկեց բավական առաջ, Տիգրանի հետ կռվի բռնվելու և խանգարելու նրան, որպեսզի ճանապարհի ընթացքից չկարողանա մարտական կարգ հաստատել։ Իսկ ինքը Միհրդատի շուրջ խրամատներ փորելով նրան մարտի էր դրդում, բայց չկարողացավ դրդռել, մինչև որ ձմեռը վրա հասավ և բոլորի գործը խանգարեց։

88. Արդ, Տիգրանը քաշվեց Հայաստանի ներքին մասերը, իսկ Միհրդատը գնաց Պոնտոսի իր թագավորության մնացած մասերը, իր հետ ունենալով 4000 յուրայինների և նույնքան էլ Տիգրանից ստանալով։

104. Պոմպեոսը արշավեց Հայաստան, պատճառ բռնելով, թե Տիգրանը օգնել է Միհրդատին։ Եվ արդեն նա մոտեցել էր արքայանիստ Արտաշատին։ Տիգրանը որոշել էր այլևս չպատերազմել։ Նա Միհրդատի դստրից ունեցել էր երեք որդի, որոնցից երկուսին սպանել էր ինքը՝ Տիգրանը, մեկին պատերազմում, երբ (որդին) կռվել էր իր դեմ, մյուսին՝ որսի ժամանակ, քանի որ սա, երբ Տիգրանն ընկել էր, հոգատար չէին եղել, այլ, մինչդեռ հայրը պառկած վիճակում էր, թագը դրել էր իր գլխին[24]։ Իսկ երրորդը՝ Տիգրանը, որը որսի ժամանակ շատ էր անհանգստացել իր հոր համար, թագ էր ստացել նրանից, այսուհանդերձ, քիչ ժամանակ անց սա ևս ապստամբելով՝ հեռացավ, պատերազմեց հոր դեմ և պարտվելով[25],

ապաստանեց պարթևների թագավոր Փրաատի[26] մոտ, որը նոր էր ժառանգել իր հոր՝ Սինտրիկոսի[27], իշխանությունը։ Երբ Պոմպեոսն արդեն մոտեցել էր, որդին Փրաատի հետ խորհրդակցելով, ստացավ նրա համաձայնությունը ևս, քանի որ Փրաատը նույնպես ձգտում էր Պոմպեոսի բարեկամությանը, ապաստանեց Պոմպեոսի մոտ իբրև խնդրարկու, մանավանդ որ ինքը Միհրդատի թոռն էր։ Բայց Պոմպեոսի արդարամտությունը և հավատարմությունը մեծ համբավ ուներ բարբարոսների մոտ, ուստի և հայր Տիգրանը ևս, հուսալով այդ բանին, առանց նախապես լրատար ուղարկելու, գնաց նրա մոտ։ Սա ամբողջապես իրեն վստահելով Պոմպեոսի արդարամտությանը՝ ուղում էր մեղադրել որդուն Պոմպեոսի առաջ։ Երբ Պոմպեոսը, ի պատիվ նրա, հրամայեց իր տրիբուններին և հեծելապետներին գնալ նրան դիմավորելու, Տիգրանի հետ եղողները ճանապարհին վախեցան և ետ փախան, քանի որ գնում էին առանց նախապես լրատարի միջոցով հայտնելու։ Բայց Տիգրանը եկավ և, Պոմպեոսին առավել հզոր համարելով, բարբարոսական ձևով երկրպագեց։ Կան նաև ասողներ, որ Տիգրանին, որը նախապես հրավիրված է եղել Պոմպեոսի կողմից, առաջնորդել են լիկտորները[28]։ Ինչևէ, գալով Պոմպեոսի մոտ, (Տիգրանը) բացատրվեց կատարված դեպքերի համար և տվեց իրեն՝ Պոմպեոսին, 6000 տաղանդ[29], զինվորներից յուրաքանչյուրին՝ 50 դրաքմե, (յուրաքանչյուր) վաշտապետին՝ հազար, իսկ (յուրաքանչյուր) տրիբունին՝ 10 հազար (դրաքմե)[30]։

105. Պոմպեոսը ներեց նրան կատարված դեպքերի համար, հաշտեցրեց որդու հետ և որոշեց, որ որդին իշխի Ոսփքի և Կորդուքի վրա, որոնք այժմ կազմում են Փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը՝ մյուս Հայաստանի վրա, և որ տղան պետք է լինի ժառանգորդը։ Իսկ նրա նվաճած երկրները պետք է վերադարձվեն։ Եվ Տիգրանը թողեց Ասորիքը, Եփրատ գետից սկսած մինչև ծովը, քանզի Տիգրանը նվաճել էր այդ երկիրը և Կիլիկիայի մի մասը, այդ երկրից դուրս քշելով Եվսեբես մականվանյալ Անտիոքոսին։ Հայերից նրանք, ովքեր լքել էին Տիգրանին Պոմպեոսի մոտ գնալիս, քանի որ կասկածում էին վերջինիս վրա, որդուն, որը դեռևս Պոմպեոսի մոտ էր, համոզում են հարձակվել հոր վրա։ Բայց քանի որ նա մինչև այդ փորձել էր պարթևներին ոտքի հանել Պոմ-

պեոսի դեմ, ձերբակալվեց, շղթայակապ արվեց, տարվեց նրա հաղթահանդեսին ու (հետագայում) սպանվեց[31]։

1. Խոսքը վերաբերում է Արտաշես I-ի որդիներից Տիգրանին (Տիրան), որն իր ավագ եղբոր՝ Արտավազդ I-ի մահից հետո հռչակվեց Հայաստանի թագավոր։ Նա հայրն էր Տիգրան II Մեծի։

2. Սա Սելևկյան տերության թագավոր Անտիոքոս X Եվսեբեան է (95—92)։ Սակայն, այս իրադարձությունների ժամանակ Անտիոքոս Եվսեբեան արդեն վաղուց սպանված էր և պայքարը Տիգրան II-ի դեմ գլխավորում էր նրա խորթ մայրն ու կինը՝ Սելենե-Կլեոպատրան։

3. Մազդաեես (Բագդատես)— սա Ասորիքի հայկական կուսակալ Բագարատն է, Տիգրան II-ի մերձավորներից մեկը։ Ուսումնասիրողները, իրավամբ, այս Բագարատին համարում են Բագրատունիների տոհմի ներկայացուցիչ։

4. Այսինքն՝ ըստ Ապպիանոսի, Տիգրան Մեծի իշխանությունը Ասորիքում տևել է ընդամենը 14 տարի՝ 83—69 թվականները, իսկ Տրոգոս-Հուստինոսի համաձայն՝ 83-ից մինչև 66 թվականը, այսինքն՝ 17 տարի (տե՛ս 226-րդ էջ, № 9 ծան.)։

5. Խոսքը Անտիոքոս X Եվսեբեսի և Սելենե-Կլեոպատրայի որդու՝ Անտիոքոս XIII Ասիացու (68—64) մասին է, որը Լուկուլլոսի հովանավորությամբ թագավոր էր հռչակվել Ասորիքում։

6. Խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս IV Էպիփանեսի (175—164) մասին է։

7. Նկատի ունի Մեծ Հայքի թագավոր Արտաշես I-ին։ Ապպիանոսի սույն վկայության համաձայն, ինչպես տեսնում ենք, հայ-սելևկյան այս պատերազմը (մոտ մ. թ. ա. 165 թ.) ավարտվել է հայերի պարտությամբ, սակայն իրականում Արտաշես I-ը հաղթել է մղել սելևկյան զորքերի հարձակումը (տե՛ս նաև 210-րդ էջ, № 6 ծան.)։

8. Անտիոքոս IV-ը եգիպտոս է արշավել երկու անգամ՝ 169 և 168 թվականներին։

9. Նկատի ունի եգիպտոսի թագավոր Պտղոմեոս VI Փիլոմետորին (180—145)։

10. Խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս VIII Գրյուպոսի (125—96) մասին է։

11. Նկատի ունի Սելևկոս VI-ին (96—95)։

12. Խոսքը Անտիոքոս IX Կիզիկացու (114—95) մասին է։ Սա կրտսեր եղբայրն էր Անտիոքոս VIII-ի։

13. Ապպիանոսն այստեղ նկատի ունի Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորին։

14. Խոսքը Պարթևստանի թագավոր Միհրդատ II-ի (դինաստիական անունով Արշակ IX՝ 123—87) մասին է, որն ամուսնացած էր Տիգրան II-ի դուստր Ավտոմա-Արիագաեսի հետ։

15. Հայկական զորքը արշավանքներ է ձեռնարկել դեպի Կապադովկիա 93, 91, 74 և այլ թվականներին։ Այստեղ խոսքը 74 թ. արշավանքի մասին է։

16. Տիգրանակերտը տեղադրվում է Ազձնիք նահանգում՝ Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի՝ Նիկեփորիոնի (Ջարկին-սու) հովտում։

17. Մ. թ. ա. I դարի վերջերին հռոմեական լեգեոնում հաշվվում էր 7 հազար դինվոր, հետևաբար, ըստ Ապպիանոսի, դեպի Հայաստան արշավող Լուկուլլոսի բանակն ուներ ընդամենը 14.500 դինվոր, որն, անշուշտ, ճիշտ չէ (այդ մասին տե՛ս նաև 251-րդ էջ, № 26 ծան.)։

18. Պլուտարքոսի մի վկայությունից հայտնի է, որ Լուկուլլոսը Հայաստան է ներխուժել Ծոփքի վրայով։

19. Տե՛ս 251-րդ էջի № 21 ծանոթագրությունը։

20. Մանկայոս (Մամկայոս)— հայ մեծատոհմիկ, Տիգրանակերտի վերակացուն։ Ուսումնասիրողները սրան համարում են Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչ։

21. 50 կանգունը հավասար է մոտ 25 մետրի։

22. Նավահանգստային քաղաք Մարմարի ծովի ափին, որտեղ 72 թ. Միհրդատը ծանր պարտություն էր կրել Լուկուլլոսից։

23. Ապպիանոսը նկատի ունի Պարթևստանի թագավոր Հրահատ III-ին (70—57)։

24. Միհրդատ Եվպատորի դուստր Կլեոպատրայի և Տիգրան Մեծի ավագ որդին այլ աղբյուրներից հայտնի Զարեհն էր, երկրորդ որդու անունը չի պահպանվել։

25. Տիգրան Կրտսերի ապստամբությունը բռնկվել էր 67 թվականին։

26. Նկատի ունի Հրահատ III-ին։ Տիգրան Կրտսերն ամուսնացած էր սրա դստեր հետ։

27. Խոսքը Հրահատ III-ի հոր՝ Պարթևստանի թագավոր Սանատրուկի (76—70) մասին է։

28. Տե՛ս 268-րդ էջի № 5 ծանոթագրությունը։

29. Տե՛ս 268-րդ էջի № 6 ծանոթագրությունը։

30. Հանրապետական Հռոմի դրաքմեն հավասար էր մոտ 35 ռուսական ոսկի կոպեկի։

31. Տե՛ս 268-րդ էջի № 11 ծանոթագրությունը։

ՄԵՄՆՈՆԸ ՀԱՅ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Մ. թ. ա. I դարի Հայաստանի քաղաքական պատմության, հայ–պոնտական, հայ–հռոմեական հարաբերությունների, Լուկուլլոսի դեպի Հայաստան կատարած արշավանքի և հարակից այլ հարցերի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մեմնոն Հերակլեացին։

Մեմնոնի մասին մեր գիտելիքները սուղ են։ Անգամ նրա ժամանակաշրջանը հայտնի չէ, միայն ենթադրվում է, որ նա ապրել է մ. թ. II դարում։ Հայտնի է, որ նա ծնվել ու ապրել է Պոնտական

Հերակլեա քաղաքում և զբաղվել է մատենագրությամբ, գրել պատմական երկասիրություններ:

Մեմնոնից մեզ հասած միակ երկը ներված է նրա հայրենի քաղաքի պատմությանը, որը հենց այդպես էլ խորագրված է՝ «Պոնտական Հերակլեայի պատմություն»: Դժբախտաբար, Մեմնոնի տույն գրվածքը ամբողջությամբ չի պահպանվել, մեզ են հասել միայն նրա առանձին բեկորները: Մեմնոնի վկայությունները՝ պատմական այս կամ այն անցքի վերաբերյալ, հիմնականում վստահելի են ու արժանահավատ, քանի որ նա պատկանում է փոքրասիական չեզոք հույն հեղինակների խմբին և Հռոմի նկատմամբ չունի այն շեշտված աչառու մոտեցումը, ինչ նկատվում է հռոմեասեր հույն և լատին հեղինակների մոտ:

Մեմնոնից ստորև բերված հատվածները տալիս ենք ըստ Հ. Հ. Մանանդյանի թարգմանության, որը կատարված է «Memnonis Historiarum Heracleae Ponti, edid. C. Orellius, Lipsiae, 1896» հրատարակությունից:

ՄԵՄՆՈՆ

ՊՈՆՏԱԿԱՆ ՀԵՐԱԿԼԵԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք XV

XLIII. (2) Միհրդատը ուղարկեց դեսպաններ Սկյութացոց թագավորների, Պարթևաց թագավորի և իր փեսա Տիգրան Հայի մոտ[1]: Սակայն առաջիններից նա սոսկալի մերժում, իսկ Տիգրանը, որին շարունակ անհանգստացնում էր ու աղերսալից խընդրում Միհրդատի դուստրը[2], վերջիվերջո խոստացավ օգնել:

XLVI. (2) Լուկուլլոսը ուղարկել էր Տիգրանի մոտ իրրև դեսպան՝ Ապպիոս Կլավդիոսին և պահանջում էր իրեն հանձնել Միհրդատին[3]: Սակայն Տիգրանը չտվեց, ասելով, որ բոլոր մարդիկ իրեն կպախարակեն, եթե նա Լուկուլլոսի ձեռքը հանձնի իր կնոջ հորը: Թե ինչպիսի վատ մարդ է Միհրդատը, այդ ինքն էլ գիտի, սակայն խաղք ու խայտառակ կլինի իր ազգականության առջև: (3) Նա նաև նամակ է գրում Լուկուլլոսին, որ բովանդակում էր իր մեջ նրա ասած այդ խոսքերը, որը զայրացրեց վերջինիս, քանի նա (Տիգրանը) իրեն չէր անվանել իմպերատոր՝ հանդիմանելով նրան այն բանի համար, որ նա (Լուկուլլոսը) նամակներում իրեն չէր անվանել արքայից արքա:

Գիրք XVI

LV. Միհրդատը, մնալով մեկ տարի և ութ ամիս Հայաստանի կողմերում՝ դեռևս չէր ներկայացել և չէր տեսնվել Տիգրանի հետ: Եվ երբ Տիգրանը, անհարմար զգալով, խնդրեց, որ Միհրդատն իրեն տեսության գա, նա նրան ընդունեց շուքով և արժանի արեց թագավորական պատիվների[4]: Մոտ երեք օր նա գաղտնի խորհրդակցություն ունեցավ Միհրդատի հետ և ապա բարեկամաբար նրան պարգևեց փարթամ զգեստներ, տվեց տասը հազար հեծելազոր և ուղարկեց Պոնտոս:

LVI. (2) Երբ Հայաստանը շատ կողմերից այսպես պաշարված էր՝ Տիգրանը մարդ ուղարկեց և իր մոտ հրավիրեց Միհրդատին: Նա (Տիգրանը) նույնպես զորք ուղարկեց Տիգրանակերտ քաղաքը, որի մեջ գտնվում էր նրա (Տիգրանի) կանանոցը: Սրանք գալով այնտեղ և նետադրությամբ կարելով հռոմեական ճամբարից դուրս գալու ճանապարհը՝ դուրս բերին գիշերով նախապես Տիգրանի կանանոցն ու թանկագին ամենաարժեքավոր իրերը: Իսկ լուսաբացին հռոմեացիները և նրանց հետ նաև թրակիացիները արիաբար կռվեցին, հայերից շատերին սպանեցին և կենդանի բռնվածներից շատերին էլ գերի վերցրին: Սակայն այն, ինչ որ նախապես ուղարկված էր՝ փրկվեց ու հանձնվեց Տիգրանին:

LVII. (1) Սա (Տիգրանը), հավաքելով 80 հազար զորք[5], իջավ ցած, որպեսզի հարստահարիչների ձեռքից փրկի Տիգրանակերտը և թշնամիներին հեռացնի: Կամենալով այդ շուտ վերջացնել և տեսնելով, որ հռոմեացիների զորաբանակը սակավաթիվ է՝ նա ասաց. «Եթե նրանք ուզում են որպես դեսպաններ ներկայանալ՝ մեծ բազմությամբ են եկել, իսկ եթե որպես թշնամիներ են եկել՝ չափազանց քիչ են»: Եվ այդ ասելուց հետո՝ նա բանակ դրեց: (2). Իսկ Լուկուլլոսը վարպետությամբ ու հոգացողությամբ ճակատամարտի համար մարտակարգ կազմեց և, քաջալերելով իր զորքը՝ իսկույն փախուստի մատնեց աջ թևը, հետո սրա միջոցով նա մղեց հարևան զորքը և ապա հերթով՝ ամբողջ զորքը: Հայերն ահա-

քեկված ու անզուսպ կերպով դիմեցին փախուստի և մարդկանց թվի համեմատ էր նաև նրանց կոտորածը։ Իսկ Տիգրանն իր արքայական խույրը և ապարոշը ուղարկեց որդուն և ինքը փախավ իր ամրոցներից մեկը։

Բայց Լուկուլլոսը, վերադառնալով Տիգրանակերտ, պաշարեց քաղաքն ավելի համարձակորեն։ Իսկ քաղաքում գտնվող Միհրդատի զորավարները, որ բոլորովին հուսահատվել էին, իրենց փրկելու համար քաղաքը հանձնեցին Լուկուլլոսին[6]։

1. Ըստ երևույթին, Միհրդատ Եվպատորը, օգնության խնդրանքով, իր դեսպաններին նշված երկրներն էր ուղարկել 72 թ. Կիզիկոս քաղաքի տակ հռոմեացիներից կրած ծանր պարտությունից հետո։

2. Մեմնոնը նկատի ունի Միհրդատ Եվպատորի դուստր Կլեոպատրային, որը Տիգրան Մեծի կինն էր։

3. Միհրդատը Հայաստան էր ապաստանել 71 թ. Կաբիրայի ճակատամարտում հռոմեացիներից կրած վճռական պարտությունից հետո։

4. Տիգրանի և Միհրդատի այս տեսակցությունը, ըստ Հ. Մանանդյանի, տեղի է ունեցել 69 թ. գարնան վերջերին կամ ամռանը, երբ արդեն սկսվել էր հայ-հռոմեական պատերազմը և Լուկուլլոսն էլ շրջափակել էր Տիգրանակերտը։

5. Մեմնոնի սույն վկայությունը խիստ կարևոր է Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցած հայկական զորքերի քանակությունը որոշելու համար։ Եթե Պլուտարքոսն ու Ապպիանոսը խոսում են 300 հազար, ապա Մեմնոնը՝ 80 հազար, իսկ Փլեգոնը՝ 70 հազար մարտիկների մասին։ Այս վերջին երկու պատմագիրները չեզոք են, հետևաբար՝ առավել վստահելի, քան Լուկուլլոսին ներբողներ հյուսող Պլուտարքոսը։

6. Այստեղից ակներև է, որ Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավել է ոչ թե ռազմական գործողությունների շնորհիվ, այլ դավաճանության։ Քաղաքը նրան էր հանձնվել օտարերկրացիների դավադրության միջոցով (տե՛ս նաև Դիոն Կասիոս, Հռոմեական պատմություն, XXXVI, 2, Ապպիանոս, Միհրդատական, 86)։

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՄՊԵՈՍԻ ՀԵՏ ԸՍՏ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

ՋՈՒԳԱՀԵՌ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պոմպեոս

XXXII. ... Այստեղից[1] Միհրդատը շարժվեց դեպի Հայաստան՝ Տիգրանի մոտ։ Սակայն այն բանից հետո, երբ Տիգրանը նրան

ապաստան չտվեց և նույնիսկ հարյուր տաղանդ[2] պարգև խոստացավ նրա գլխի համար՝ Միհրդատը անցնելով Եփրատի ակունքները, իր փախուստը շարունակեց Կողքիսով։

XXXIII. Այդ ընթացքում[3] Պոմպեոսը ներխուժեց Հայաստան, ուր նրան հրավիրեց Տիգրան Կրտսերը։ Վերջինս արդեն ապստամբել էր[4] իր հոր դեմ և Պոմպեոսին դիմավորեց Արաքս գետի մոտ։ Այս գետը, ինչպես և Եփրատը, սկիզբ է առնում նույն վայրից, սակայն թևքվելով արևելք՝ թափվում է Կասպից ծովը։ Պոմպեոսը և Տիգրան Կրտսերը, գրավելով ճանապարհին հանդիպող քաղաքները՝ առաջ էին շարժվում։ Սակայն Տիգրան Թագավորը, որը վերջերս էր պարտություն կրել Լուկուլլոսից, իմանալով Պոմպեոսի մեղմ և բարեհոգի բնավորության մասին՝ հռոմեական պահակապորային ջոկատին թույլատրեց մտնելու իր պալատը, իսկ ինքը մտերիմների ու ազգականների ուղեկցությամբ գնաց Պոմպեոսի մոտ, որպեսզի անձնատուր լինի նրան։ Երբ արքան ձին հեծած մոտեցավ հռոմեացիների ճամբարին, Պոմպեոսի երկու մականակիրները[5] ներկայացնելով նրան՝ պատվիրեցին ձիուց իջնել և հետիոտն շարունակել ճանապարհը, քանզի հռոմեական ճամբարում դեռ երբեք ոչ մի հեծյալի չէին տեսել։ Տիգրանը հնազանդվեց և անդամ արձակելով իր սուրը՝ հանձնեց նրանց։ Վերջապես, երբ արքան ներկայացավ Պոմպեոսին, հանեց իր գլխից խույրը և ցանկանում էր այն դնել նրա ոտքերի մոտ և, որ ամենաամոթալին էր՝ ծնկի գալ։ Պոմպեոսը, սակայն, հասցրեց բռնել արքայի աջ ձեռքից և մոտեցնելով իրեն՝ գրկեց նրան։ Այնուհետև նա արքային բազմեցրեց իր կողքին, իսկ մյուս կողքին՝ նրա որդուն։ Պոմպեոսը ասաց, որ անցյալի նրա բոլոր դժբախտությունների մեղավորը Լուկուլլոսն էր, որը խլել էր նրանից Ասորիքը, Փյունիկիան, Գալատիան և Սոփքը։ Իսկ նվաճված այն երկրամասերին, որոնք դեռևս մնում են նրա տիրապետության տակ, թող արքան տիրի՝ հռոմեացիներին հասցրած վիրավորանքի համար վճարելով յոթ հազար տաղանդ[6], իսկ Սոփքում թագավոր կլինի նրա որդին։ Այս պայմանները Տիգրանը հաճույքով ընդունեց և այդ ժամանակ հռոմեացիները նրան ողջունեցին, ինչպես պատշաճ է արքային, իսկ Տիգրանը չափազանց ուրախացած՝ խոստացավ ամեն մի զինվորի տալ կես մինա արծաթ[7], ցենտուրիոնին՝ տաս մինա[8], տրիբունին՝ մեկ տաղանդ[9]։ Որդին, ընդհակառակը, խիստ վրդովված էր, և երբ

նրան հրավիրեցին հյուրասիրության, հայտնեց, որ ինքը կարիք չունի Պոմպեոսի կողմից շնորհ արված այդ մեծարանքներին, քանզի կարող է իր համար այլ հռոմեացի գտնել[10]։ Այնժամ Պոմպեոսը կարգադրեց նրան շղթայել և պահել բանտում՝ իր հաղթահանդեսի համար[11]։ Քիչ անց Հրահատը՝ պարթևաց թագավորը[12], դեսպաններ ուղարկելով Պոմպեոսի մոտ, պահանջեց իրեն հանձնել Տիգրան Կրտսերին՝ որպես իր փեսայի և առաջարկեց երկու տերությունների սահման համարել Եփրատը։ Պոմպեոսը պատասխանեց, որ Տիգրանը ավելի ազգակից է իր հորը, քան աներոջը, իսկ ինչ վերաբերում է սահմանագծին, ապա այն կորոշվի համաձայն արդարության։

1. Վճռական ճակատամարտը Պոմպեոսի և Միհրդատ Եվպատորի միջև տեղի է ունեցել մ. թ. ա. 66 թ. ամռան սկզբներին՝ Գայլ գետից դեպի հարավ, Էնդերեսից մոտ 10 կմ հեռավորության վրա գտնվող այժմյան Պյուրկի մոտ։ Այստեղից Միհրդատը փոքրաթիվ ուղեկիցներով փախավ Մեծ Հայքին սահմանամերձ Սինորիա ամրոցը՝ Աշկալայից մոտ 15 կմ դեպի հյուսիս-արևմուտք։ Տվյալ կոնտեքստում Պլուտարքոսը նկատի ունի հենց այս Սինորիա ամրոցը։

2. Մոտավորապես 210.000 ռուսական ոսկի ռուբլի։

3. Պոմպեոսը Հայաստան ներխուժեց 66 թ. կեսերին։

4. Տիգրան Կրտսերի ապստամբությունը տեղի է ունեցել 67 թվականին։

5. Հին Հռոմում մականակիրներ (լիկտոր) էին կոչվում բարձրաստիճան պաշտոնյայի առջևից գնացող հատուկ անձինք, որոնք իրրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների մի կապոց, ծայրին կացին ամրացրած։

6. Այստեղ ակնհայտ բյուրիմացություն է. Պլուտարքոսի բնագրում, ինչպես նաև Ապպիանոսի ու Ստրաբոնի մոտ նշված է վեց հազար տաղանդ, այսինքն՝ մոտավորապես 12,5 միլիոն ոսկի ռուբլի։

7. Մոտավորապես 17,2 ոսկի ռուբլի։

8. 350 ոսկի ռուբլի։

9. 2100 ոսկի ռուբլի։

10. Արտաշատի հաշտության պայմանագրից Տիգրան Կրտսերի դժգոհության պատճառներից մեկն էլ այն էր, որ Հայաստանից գանձվող ռազմատուգանքը Տիգրան Մեծը վճարեց Սոփռոմ գտնվող արքայական գանձարաններից։

11. Պոմպեոսը Տիգրան Կրտսերին, նրա կնոջն ու դստերը, ինչպես նաև Տիգրան Մեծի կնոջը՝ Զոսիմային, ցուցադրեց 61 թ. սեպտեմբերին Հռոմում կազմակերպված իր հաղթահանդեսի ժամանակ։ Տիգրան Կրտսերը Հռոմեական բանտում մնաց մինչև 58 թվականը, երբ Հռոմում կաշառակերությամբ հայտնի ժողովրդական տրիբուն Կլոդիոսը ինքնակամ նրան ազատեց կալանքից։

12. Խոսքը պարթևաց Հրահատ III թագավորի մասին է։

ԿՐԱՍՍՈՍԻ ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

ԶՈՒԴԱՀԵՌ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրասսոս

XIX. Կրասսոսին[1] մանավանդ քաջալերեց Արտավազդը՝ Հայոց արքան։ Նա բանակատեղի ժամանեց վեց հազար հեծյալներով, որոնք, ինչպես նրանց անվանում էին, արքունական դրանիկներ ու թիկնապահներ էին։ Արտավազդը խոստացավ ևս մեկ բյուր սպառազեն հեծելազոր և երեք բյուր հետևազոր՝ իր վրա վերցնելով նրանց պարենավորումն ու ծախքը[2]։ Արքան համոզում էր Կրասոսին Պարթիա ներխուժել Հայաստանի վրայով, քանզի այստեղ նա (Կրասոսը) առատորեն կունենա զորքի համար անհրաժեշտ ամեն բան, որի մասին կհոգա ինքը՝ արքան, այլև ճանապարհները կլինեն ապահով՝ ընտամուց պաշտպանված լեռներով, անվերջանալի բլրաշարքերով և ընդհանրապես այնպիսի տեղանքով, որը դժվարանցանելի էր պարթևների միակ ռազմունակ ուժի՝ հեծելազորի համար։ Կրասոսը շատ գոհ մնաց արքայի բարեհաճությունից ու պատրաստակամությունից, նրա առատաձեռնությունից, սակայն ասաց, որ ինքը շարժվելու է Միջագետքի վրայով, ուր թողել է բաղում քաջարի հռոմեացի զորականների[3]։ Այնուհետև Հայոց արքան հեռացավ։

XXII. Արդ, բարբարոսը[4] համոզելով Կրասոսին և նրան հեռացնելով գետից՝ հռոմեացիներին տարավ հարթավայրային մի ճանապարհով[5], որը սկզբից հարմար էր ու դյուրին, իսկ այնուհետև բավականին դժվարանցանելի, քանզի այն ծածկված էր խոր ավազուտներով։ Հատկապես շատ տաժանելի էր շարժվել անտառազուրկ ու անջրդի տափարակով, որը տարածվում էր մինչև անտեսանելի, անծայրածիր հեռուները։ Զինվորները ոչ միայն ուժասպառ էին լինում ծարավից և ճանապարհի անասելի չարչարանքներից, այլև վհատվում էին տխուր ու միօրինակ տեսարաններից, նրանց չհանդիպեցին ոչ թփուտներ, ոչ առվակ, ոչ սարա-

լանջ, ոչ բուսածածկույթ՝ նրանց հայացքը դիպչում էր միմիայն զորքը ամեն կողմից շրջապատած ավազակույտերի ծովանման ալիքներին։ Դրանով արդեն ի դերև ելավ նենգ մտադրությունը։ Իսկ այդ ժամանակ Արտավազդ Արմենի մոտից սուրհանդակներ ժամանեցին և հայտնեցին այն մասին, թե նա շատ ծանր իրավիճակում է գտնվում իր վրա հարձակված Օրոդեսի[6] հետ պատերազմելիս[7], ուստի, զրկված լիներով Կրասոսին օգնություն առաքելու հնարավորությունից, խորհուրդ էր տալիս նրան կամ, որը և ամենից լավագույնը կլիներ, ետ վերադառնալ ու միանալով հայերին՝ համատեղ պատերազմել ընդդեմ Օրոդեսի, և կամ՝ շարունակել ճանապարհը, սակայն այդ դեպքում խուսափել հեծելազորի համար հարմար տեղանքից և ճամբար դնել միշտ բարձունքներում։ Կրասոսը, սակայն զայրույթով ու անխոհեմությամբ լի, ոչինչ չգրեց ի պատասխան և հրամայեց միայն հայտնել, որ այժմ նա ժամանակ չունի զբաղվելու Հայաստանով, բայց ավելի ուշ նա կգա և հաշվեհարդար կտեսնի Արտավազդի հետ դավաճանության համար։

XXXII. Սուրենը[8] Հայաստանում գտնվող Օրոդեսին ուղարկեց Կրասոսի գլուխն ու բազուկը[9], իսկ ինքը սուրհանդակների միջոցով Սելևկիա[10] լուր ուղարկեց, թե Կրասոսին ողջ-առողջ այնտեղ

Նկար 15. Արտավազդ II-ի արծաթե դրամը (մ. թ. ա. 38 թ.)

Նկար. 16. Արտավազդ II-ի արծաթե դրամը։ Խորագիրը վերևից-ներքև՝ «Արքայից արքայի Արտավազդի»

ֆ տանում և կազմակերպեց խեղկատակային շքերթի նման մի բան, զավեշտորեն այն անվանելով հաղթահանդես։

XXXIII. Այն ժամանակ, երբ այս բոլորը տեղի էր ունենում, Օրոդեսն արդեն հաշտվել էր[11] Արտավազդ Արմենի հետ և համաձայնվել նրա քրոջ և իր որդի Բակուրի ամուսնության։ Նրանք միմյանց համար խնջույքներ ու գինարբուքներ էին կազմակերպում, որոնց ընթացքում հաճախ բեմադրվում էին հունական ներկայացումներ, քանզի Օրոդեսին անծանոթ չէին հունական լեզուն և գրականությունը, իսկ Արտավազդը հորինում էր նույնիսկ ողբերգություններ և գրում ճառեր ու պատմական երկասիրություններ, որոնցից մի քանիսը մինչ այժմ պահպանվել են։ Այն պահին, երբ արքունիք բերեցին Կրասոսի գլուխը, ճաշասեղաններն արդեն հավաքված էին և ողբերգակ դերասան Յասոն Տրալլացին արտասանում էր Եվրիպիդեսի «Բաքոսուհիներից»[12] հատվածներ, որոնց խոսվում էր Ագավայի մասին[13]։ Այն ժամանակ, երբ նրան ծափահարում էին, դահլիճ մտավ Սիլլակեսը[14] և երեսն ի վայր ընկավ արքայի առաջ, և ապա նա սրահի մեջտեղը նետեց Կրասոսի գլուխը։ Պարթևներն ուրախ ճիչերով ծափահարում էին, իսկ մանկլավիկներն արքայի հրամանով հրավիրեցին Սիլլակեսին ընկղմանել մահճին։ Յասոնը այնուհետև դերասաններից մեկին հանձնելով Պենթևսի[15] բեմահագուստը, վերցրեց Կրասոսի գլուխը և բաքոսային մոլեգին խանդավառությամբ սկսեց ոգևորությամբ արտասանել հետևյալ տողերը.

Մենք տուն վերադառնալով՝
Բերում ենք լեռներից
Նոր կտրած բաղեղը,
Որսի երջանիկ արդյունքը։

Ներկա գտնվողներին սա պատճառեց մեծագույն հաճույք, քանզի բոլորն էլ հիացած էին։ Իսկ երբ Յասոնը հասավ այն տողերին, որտեղ երգչախումբն ու Ագավան փոխ առ փոխ երգում էին՝

Ո՞վ սպանեց նրան.
Իմն է այդ սխրանքը[16]...

ապա Էքսաթրոսը[17], որ ներկա էր խնջույքին, վեր թռավ տեղից և Յասոնից խլեց գլուխը ի նշան այն բանի, որ իրեն ավելի, քան

դերասանին պատշաճ է ասել այս խոսքերը։ Արքան սքանչացած պարգևատրեց նրան իր երկրի սովորույթի համաձայն, իսկ Յասոնին տվեց մեկ տաղանդ արծաթ։ Ասում են, այսպես ավարտվեց Կրասոսի արշավանքը, որը վերջացավ ողբերգության նման։

Սակայն և՛ Օրոդեսի անգթությունը, և՛ Սուրենի ննջգությունը ստացան իրենց արժանի հատուցումը։ Շուտով Օրոդեսը Սուրենին սպանել տվեց՝ նախանձելով նրա փառքին, իսկ ինքը կորցրեց իր որդի Բակուրին, որը ճակատամարտում պարտվել էր Հռոմեացիներից[18]։ Իսկ հետո, երբ նա հիվանդացավ փորուքացքով[19], նրա մյուս որդին՝ Հրահատը շար դիտավորությամբ Հորը ընձախոտ[20] խմեցրեց։ Սակայն թույնը ներգործեց որպես դեղամիջոց և ջրի հետ դուրս եկավ, այնպես որ հիվանդը սկսեց առողջանալ, և այնժամ Հրահատը, ընտրելով ամենաապահով միջոցը՝ խեղդամահ արեց Հորը[21]։

1. Մարկոս Լիկինիոս Կրասոսը (115—53)— Հռոմի ալքի ընկնող քաղաքական ու ռազմական գործիչ։ Առաջին եռապետության (60 թ.) կազմակերպիչներից մեկը, 55 թ. կոնսուլ։ 55 թ. վերջերին նշանակվել է Սիրիա պրովինցիայի պրոկոնսուլ և արևելքում հռոմեական զորքերի գլխավոր հրամանատար։ 54 թ. գարնանը Կրասոսը նախնական որոշ ռազմական գործողություններ է սկսում պարթևների դեմ, հենց այդ ժամանակ Կրասոսի մոտ՝ Ասորիք է ժամանում Հայոց Արտավազդ II թագավորը (55—34)։

2. Այսպիսով, Արտավազդը Կրասոսի տրամադրության տակ էր դնելու հայկական բանակի կեսը՝ 46 հազար զինվոր։

3. Կրասոսի պարթևական արշավանքը սկսվել է 53 թ. գարնան սկզբին, նրա տրամադրության տակ էր գտնվում յոթ լեգեոն, այսինքն՝ շուրջ 42 հազար զինվոր։

4. Պլուտարքոսը նկատի ունի Հռոմի դաշնակից Օսրոենեի Աբգար II թագավորին, որը ուղեկցի դեր էր կատարում Կրասոսի մոտ։

5. Անցնելով Եփրատը Զևգմայի մոտ՝ Կրասոսը Եփրատի հոսանքն ի վար իջավ ներքև և Միջագետքի տափարակներով շարժվեց դեպի Սելևկիա ու Տիզրոն։

6. Խոսքը պարթևական Օրոդես II թագավորի (57—38) մասին է։

7. Արտավազդը այնպես էլ չհասցրեց մասնակցել Կրասոսի արշավանքին, որովհետև Օրոդես II-ը նախահարձակ լինելով՝ ներխուժեց Հայաստան, և հայկական բանակը զբաղված էր երկիրն ասպատակող պարթևական զորքերին հակահարված տալով։

8. Սուրեն— պարթևական ականավոր զորավար, համանուն հուշակավոր տոհմի ներկայացուցիչ (տե՛ս նաև 297-րդ էջ, № 3 ծան.)։

9. Պարթևական այրուձին Սուրենի հրամանատարությամբ 53 թ. մայիսի 6-ին, Խառան քաղաքի մոտ շրջապատել և գլխովին ջախջախել էր Կրասոսի զոր-

քերին։ Այստեղ հռոմեացիները տվեցին 20 հազար սպանված և 10 հազար գերի։ Սպանվեց նաև Կրասոսը։

10. Սելևկիա— հելլենիստական աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը՝ Տիգրիսի աջ ափին։

11. Ըստ երևույթին, հայ-պարթևական համաձայնագիրը կնքվել էր այն բանից հետո, երբ Օրոդեսի զորքերը հակահարված էին տացել հայերից։ Արտավազդը, որը շահագրգռված չէր այս պատերազմում, դաշինք կնքելով պարթևների հետ, նպատակ ուներ համատեղ պայքարելու հռոմեական նվաճողների դեմ։

12. Հույն նշանավոր թատերագիր Եվրիպիդեսը (484—406) գրել է շուրջ իննսուն ողբերգություն, որոնցից մեզ են հասել միայն տասնչորսը, այդ թվում նաև «Բաքոսուհիները»։ Այս երկը նվիրված է գինու, գինեգործության, խմբապարերի ու շվայտանքի աստծո՝ Դիոնիսոս-Բաքոսի հետ շրջող և նրան երկրպագող կանանց։

13. Ագավան «Բաքոսուհիներ» ողբերգության գլխավոր հերոսուհին է։ Նա դուստրն էր Հարմոնիայի և Թեբեի արքա Կադմոսի։

14. Սա Միջագետքի պարթևական սատրապության կուսակալն էր։

15. Պենթևս— Թեբեի արքան՝ Էքիոնոսի և Ագավայի որդին, Կադմոսի թոռը։ Պենթևսը ժխտում էր Դիոնիսոսի Զևսի որդին լինելու հանգամանքը և չէր ճանաչում նրա աստվածային ծագումը։ Դաժանորեն հետապնդում ու հալածում էր Դիոնիսոսի երկրպագուներին և Բաքոսյան տոնախմբություններին մասնակցողներին։ Զայրացած Դիոնիսոսը որոշում է պատժել նրան։ Մի անգամ, երբ Պենթևսը բարձրանալով եղևնու վրա՝ գաղտագողի հետևում էր բաքոսուհիներին, որոնց մեջ էր նաև նրա մայրը՝ Ագավան, Դիոնիսոսի կոչով բաքոսուհիները տապալում են եղևնին և կտոր-կտոր անում Պենթևսին, կարծելով թե նա վայրի գազան է։ Բաքոսյին մոլագարությամբ Ագավան հափշտակում է Պենթևսի արնաթաթավ գլուխը և բաքոսուհիների հետ երգելով շարժվում դեպի Թեբե։ Ճանապարհին նրանք հանդիպում են Կադմոսին, որը և Ագավային սթափեցնում ու բացատրում է եղելությունը, և այնժամ է միայն Ագավան հասկանում, թե ինչ սոսկալի ոճիր է գործել ինքը։

16. «Բաքոսուհիներ» ողբերգության 1169—1171-րդ և 1178—1179-րդ տողերը։

17. Էքսաբրոս (Պոմաքսաքրոս)— սա էր սպանել Կրասոսին, թեև Պլուտարքոսը բերում է նաև մեկ այլ վկայություն, որ Էքսաքրոսը միայն կտրել է արդեն սպանված Կրասոսի գլուխն ու բազուկը և դրանք հանձնել Սուրենին։

18. Այսինքն՝ մ. թ. ա. 38 թվականին։

19. Խոսքը ջրգողություն (водянка) հիվանդության մասին է։

20. Ընձախոտ (քնախոտ, ակոնիտոն)— գոլտնուկազգիների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս, որի պալարները թույն են պարունակում։

21. Հրահատը սպանելով իր հորը (մ. թ. ա. 38 թ.)՝ բարձրացավ պարթևական գահ Հրահատ IV անունով (38—2)։

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԸ Մ. Թ. Ա. 69—66 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը (շուրջ 155—235) ուշ անտիկ շրջանի հռոմեական խոշորագույն պատմիչներից մեկն է: Նա ծընվել է Բյութանիայի Նիկիա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում: Ստացել է իր ժամանակի համար փայլուն կրթություն: Տարբեր տարիների ընթացքում վարել է պետական մի շարք պաշտոններ: Եղել է Հռոմի սենատի անդամ (180 թ.), կոնսուլ (211 և 229 թթ.), Պերգամոնի կառավարիչ (216 թ.) և այլն: 216 թ. Դիոնը ուղեկցել է Անտոնինոս Կարակալլա կայսրին՝ վերջինիս ձեռնարկած արևելյան արշավանքի ժամանակ և հասել է մինչև Հայաստան:

Սեպտիմիոս Սևերոս կայսեր (193—211) տարիներին Դիոն Կասսիոսը սկսում է իր գրական գործունեությունը: Այդ ժամանակ է, որ նա միտք է հղանում գրելու հռոմեական պետության ամբողջական պատմությունը՝ սկսած նրա առասպելական հիմնադիր էնեասից մինչև իր ժամանակները: Շուրջ 30 տարվա ընթացքում (200—229 թթ.) Դիոն Կասսիոսը շարադրում է «Հռոմեական պատմություն» մեծածավալ երկասիրությունը: Այս աշխատությունը բաղկացած է եղել 80 գրքից, սակայն դրանից ամբողջությամբ պահպանվել են միայն 24-ը (XXXVI—LX գրքերը), այսինքն՝ մ. թ. ա. 68 թվականից մինչև մ. թ. 47 թվականի միջև ընկած ժամանակահատվածի պատմության նկարագրությունը: Մնացած գրքերից մեզ են հասել միայն առանձին հատվածներ, որոնք խաղվածաբար մեջ են բերել ուշ շրջանի բյուզանդական տարեգիրներ Քսիփիլինոսը (XI դ.), Զոնարասը (XII դ.) և Ցեցեսը (XII դ.):

Դիոն Կասսիոսի երկասիրությունը կարևորագույն սկզբնաղբյուր է ընդհանրապես Հին աշխարհի և մասնավորապես՝ մ. թ. ա. I դ.— մ. թ. II դ. Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Վաղ շրջանի պատմությունը շարադրելիս՝ Դիոնը մեծապես օգտվել է իրեն նախորդող պատմագիրներից, սակայն նա կուրորեն չի հետևել նրանց: Տարիներ շարունակ զբաղեցնելով զինվորական և քաղաքացիական բարձր պաշտոններ՝ նա լայն հնարավորություններ է ունեցել օգտվելու պետական պաշտոնական վավերագրերից ու արխիվային նյութերից, որոնցից շատերը մուծել է

իր պատմության մեջ՝ դրան տալով ավելի արժանահավատ բնույթ Սակայն Դիոնի ծագումը, սոցիալական դիրքն ու զբաղեցրած պետական բարձր պաշտոններն իրենց կնիքն են թողել նրա պատմության վրա: Նա որոշ պատմական անցքեր նկարագրել է կողմնապահությամբ՝ հօգուտ Հռոմի և ի վնաս Արևելքի ժողովուրդների:

Դիոն Կասսիոսից ստորև բերված հատվածները քաղել ենք «Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 9-րդ հատորում (Երևան, 1976) գետեղված պատմական Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող Դիոնի Պատմության մասերի հայերեն թարգմանությունից, որը կատարել է Ս. Մ. Կրկյաշարյանը «Cassii Dionis Cocceani Historiarum Romanorum quae supersunt. Ed. Boissevain, Berolini, 1895» հրատարակությունից:

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք երեսունվեցերորդ

Այդ ժամանակ[1] Լուկիոս Լուկուլլոսը պատերազմում հաղթելով Ասիայի տիրակալներ Միհրդատին և արմեն Տիգրանին, և սոսկալով նրանց խուսափել ճակատամարտից, պաշարում էր Տիգրանակերտը: Բայց բարբարոսները նետաձգությամբ և (պաշարողական) մեքենաների վրա թափած նավթով[2] մեծապես վնասեցին նրան: Այս դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցընել: Այս բանից Տիգրանը նորից սրտապնդվելով, այնքան մեծ զորքով առաջ եկավ, որ նույնիսկ ծիծաղեց այնտեղ գտնվող հռոմեացիների վրա. պատմում են, ուրեմն, որ նա իբր ասել է՝ եթե եկել են պատերազմելու, քիչ են, իսկ եթե եկել են դեսպանության՝ շատ են եկել: Սակայն նրա հրճվանքը երկար չտևեց, այլ շուտով նրան պարզ դարձավ, թե որքան քաջությունն ու արվեստը գերազանցում են ամեն մի

թվի։ Նրա փախուստից հետո զինվորները, գտնելով նրա խույրը և մոտիկ ընկած ապարոշը, հանձնեցին Լուկուլլոսին, քանզի վախենալով նրանց կողմից ճանաչվելով բռնվելուց, (արքան) պոկել էր դրանք ու դեն շպրտել[3]։

1 ... Եվ քանի որ (Միհրդատը) ենթարկվել էր բախտի երկու ծայրահեղություններին, (Տիգրանը) նրան հանձնեց (զորքի հրամանատարությունը ՞)։ Քանզի շատ անգամներ պարտվելով և հաղթելով, ենթադրվում էր, որ նա ոչ պակաս հմուտ էր դարձել ռազմական արվեստին։ Ուստի և նրանք ասես թե նոր էին պատրաստվում պատերազմ սկսելու, դեսպաններ ուղարկեցին հարևաններին և, իմիջիայլոց, նաև Արշակ Պարթևին[4], թեպետև սա Տիգրանի հանդեպ թշնամություն ուներ վիճելի մի երկրամասի պատճառով[5], և խոստացան այն զի-
2 ջել նրան. միաժամանակ նրանք մեղադրում էին հռոմեացիներին, ասելով, որ եթե իրենք առանձին մնան և հռոմեացիները հաղթեն իրենց, ապա անհապաղ կարշավեն նաև նրա դեմ։ Քանզի ամեն մի հաղթողի բնականից հատուկ է անհագությունը և նրա ընչաքաղցությունը ոչ մի սահման չի ունենում. այսպես էլ հռոմեացիները, որոնք ուժով տիրել են շատերին, չեն ցանկանա զրկվել այդ ամենից։

2,1 Մինչդեռ նրանք այդպես էին գործում, Լուկուլլոսը Տիգրանին չհետապնդեց, այլ թույլ տվեց նրան շատ ազատորեն փրկվել։ Այս պատճառով էլ Լուկուլլոսը քաղաքացիների և մյուսների կողմից պաշտոնանկ հայտարարվեց այն մեղադրանքով, որ իբր չի ցանկանում վերջ տալ պատերազմին, որ-
2 պեսզի կարողանա իր իշխանությունը երկարաձգել։ Ուստի և նրանք Ասիայում իշխանությունը վերադարձրին պրետորներին[6] ու դրանից հետո, երբ պարզ դարձավ, որ նա շարունակում է նույն եղանակով գործել, նրանք ուղարկեցին այդ տարվա կոնսուլին՝ փոխարինելու Լուկուլլոսին։ Մինչդեռ
3 նա Տիգրանակերտը գրավեց այնտեղ բնակեցված օտարների ապստամբության հետևանքով[7]։ Քանզի նրանց մեծ մասը կիլիկեցիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից, և այժմ գիշերով հռոմեացիներին ներս թողե-
4 ցին։ Այնուհետև մնացած ամեն ինչը հափշտակվեց, բացի կիլիկեցիների ունեցվածքից...։

3,1 Եվ նրանցից[8] տեղեկանալով Տիգրանի և Միհրդատի կողմից Արշակին ուղարկված դեսպանության մասին, ինքը ևս դրան հակառակ, դաշնակիցներից ոմանց ուղարկեց նրա մոտ, սպառնալիքներով՝ եթե օգնելու լինի նրանց, և խոս-
2 տումներով՝ եթե ընտրելու լինի իրեն։ Իսկ Արշակը այժմ, քանի որ դեռևս զայրացած էր Տիգրանի դեմ և միաժամանակ ոչ մի կասկած չուներ հռոմեացիների հանդեպ, փոխադարձ դեսպաններ ուղարկեց (Լուկուլլոսի մոտ) և բարեկամություն
3 ու դաշնակցություն հաստատեց։

4,1 Այդ տարին ահա Լուկուլլոսն այսպես գործեց և գրավեց Հայաստանի շատ մասերը։ ... Լուկուլլոսը արդեն ամռան
2 կեսին սկսեց արշավանքը, քանզի ցրտերի պատճառով անկարելի էր զարնանը ներխուժել թշնամու երկիրը, և ավերեց երկրի որոշ մասերը, որպեսզի բարբարոսները պաշտպանելով այն, ներքաշվեն պատերազմի մեջ. բայց քանի որ նը-
5,1 րանք դարձյալ չշարժվեցին, ինքն արշավեց նրանց վրա։ Եվ այս ընդհարման ժամանակ հռոմեացի հեծյալներին թշնամու հեծելազորը դժվար դրության մատնեց, իսկ հետևակի հետ նրանցից ոչ մեկը ձեռնամարտի դուրս չեկավ, այլ նըրանք փախչում էին ամեն անգամ, երբ Լուկուլլոսի վահանակիրները օգնության էին հասնում հեծելազորին։ Այսուհանդերձ, թշնամիները որևէ վնաս չկրեցին. այլ նրանք ետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին խու-
2 կույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին։ Ուվերքերը ծանր էին և դժվար բուժելի. քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում, արագորեն սպանում էին, ո-
րովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ[9]։

6,1 Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այդտեղից և արշավեց Նիսիբիսի[10] վրա։ Այս քաղ-
2 քը կառուցված է Միջագետք կոչված երկրում, քանզի այսպես է կոչվում Տիգրիսի և Եփրատի միջև գտնվող ամբողջ

(երկիրը), և այժմ այն պատկանում է մեզ և համարվում է մեր գաղութը: Բայց այդ ժամանակ Տիգրանը պարթևներից վերցնելով այն, իր գանձերը և այլ հարստությունների մեծ մասը այնտեղ էր կենտրոնացրել և իր եղբորը[11] այնտեղ բերդապահ էր կարգել: Լուկուլլոսը ամռանը հասնելով այս քաղաքը, թեպետև հարձակվում էր ոչ իմիջիայլոց, բայց ոչինչ չկարողացավ վճռել. քանզի (քաղաքի) պարիսպները և՛ կրկնակի, և՛ աղյուսաշեն լինելով, մեծ հաստություն ունեին և բաժանված էին խորը խրամատով. այնպես որ ոչ մի տեղում չկարողացավ (պարիսպը) ոչ քանդել, ոչ իսկ խախտել. ուստի և Տիգրանը նույնիսկ օգնության չեկավ յուրայիններին: Բայց երբ ձմեռը վրա հասավ, և բարբարոսները դարձան առավել անզգույշ, քանի որ իրենք գերազանցել էին հռոմեացիներին և երբեք չէին սպասում, որ նրանք իրենց տեղերից կշարժվեն, (Լուկուլլոսը) ընտրելով անլուսնկա մի գիշեր, երբ ուժեղ տեղատարափ էր և ամպրոպ, ուստի և թշնամին չէր կարող նախապես ոչինչ տեսնել, ոչ իսկ լսել, լքեց արտաքին շրջապարիսպը և միջակա խրամատը՝ թողնելով մի փոքր խումբ, և շատ տեղերում մոտեցավ պարսպին, առանց դժվարության անցավ հողաթմբերը և հեշտությամբ սպանեց այնտեղ թողնված ոչ մեծաթիվ պահակներին: Եվ այսպիսով, խրամատի մի մասը լցրեց, քանզի բարբարոսները քանդել էին կամուրջները, իսկ ուժեղ տեղատարափի պատճառով ո՛չ նետաձգությունը, ո՛չ իսկ կրակը չէին կարողանում նրան վնասել: Ուստի անցնելով այն, անմիջապես գրավեց ամեն ինչ, քանի որ ներքին շրջապարիսպը այնքան ամուր չէր, որովհետև արտաքին պատի ամրությունը վստահություն էր ներշնչում: Իսկ միջնաբերդ փախածներին, որոնց մեջ էր նաև Տիգրանի եղբայրը, հետագայում ստիպեց հանձնվել: Այսպիսով և՛ մեծաքանակ հարստություն ձեռք բերեց, և՛ այնտեղ էլ ձմեռեց:

Ուստի Նիսիբիսն այս կերպ նա գրավեց, բայց Հայաստանի, ինչպես և Պոնտոսի շուրջը գտնվող մի շարք երկրամասեր կորցրեց: Քանզի Տիգրանը, կարծելով, որ Նիսիբիսը անառիկ է, օգնություն չուղարկեց, այլ արշավեց դեպի վերոհիշյալ երկրամասերը, որպեսզի, քանի դեռևս Լուկուլլոսը

զբաղված էր Նիսիբիսի շուրջը, ինքը կարողանար ետ նվաճել դրանք: Այնժամ նա Միհրդատին ետ ուղարկեց իր երկիրը, իսկ ինքը եկավ իր Հայաստանը և այստեղ իրեն դիմադրած Լուկիոս Փաննիոսին շրջապատեց ու պաշարեց, մինչև որ Լուկուլլոսն այդ մասին իմանալով, օգնություն ուղարկեց:

Մինչ այս դեպքերը տեղի էին ունենում, Միհրդատը, մըտնելով մյուս Հայաստանը[12] և նրա մերձակա շրջանները, հռոմեացիներից շատերին, որոնք թափառում էին երկրով մեկ, հանկարծակի հարձակվելով՝ ոչնչացրեց, իսկ մյուսներին պատերազմում ջարդեց. և դրանով իսկ երկրի մեծագույն մասը արագորեն նվաճեց:

... (Գայոս Մանիլիոսը)[13] Պոմպեոսին[14] կարգեց Տիգրանի և Միհրդատի դեմ մղվող պատերազմի հրամանատար, ինչպես և Բյութանիայի և Կիլիկիայի վրա կառավարիչ:

* * *

Այդ ժամանակ էլ (Պոմպեոսը) ցանկանալով փորձել Միհրդատի մտայնությունը, ուղարկեց Մեսրոպհանեսին[15] նրա մոտ բարեկամական առաջարկներով: Իսկ Միհրդատն այնժամ նրան արհամարհեց, քանի որ պարթևների թագավոր Արշակը այդ ժամանակ մահացած լինելով, նա հույս ուներ իր կողմը գրավել նրան հաջորդած Փրաատեսին[16]: Սակայն Պոմպեոսը կանխեց նրան, Փրաատեսի հետ շտապ կերպով նույն պայմաններում բարեկամություն հաստատելով և համոզելով նրան անհապաղ ներխուժել Տիգրանին (պատկանող) Հայաստանի մասերը:

Իսկ Միհրդատը առժամանակ խույս էր տալիս, քանզի նրա զորքերը առավել թույլ էին, և (Պոմպեոսի) առաջ երկիրը շարունակ ավերում էր, ստիպում նրան երկար թափառել և միաժամանակ պարենամթերքի պակաս զգալ. բայց երբ Պոմպեոսը ներխուժեց Հայաստան[17] և՛ պարեն գտնելու նպատակով, և՛ որպեսզի այն գրավի, թեպետև ամայացած, այնժամ Միհրդատը, վախենալով, որ այն կարող է գրավվել նախքան իր տեղ հասնելը, ինքը ներխուժեց այդ երկիրը...:

Երբ (Պոմպեոսը) արդեն այդ բոլորը (պարենը) հաստատապես հայթայթում էր և ոմանց օգնությամբ տիրացավ Հա-

յաստանին պատկանող Անահտական երկրին[18], որը նվիրված էր Համանուն մի աստվածուհու, այդ բանից հետո շաոերը ևս հարեցին նրան և, դրանից բացի, Մարկիոսի[19] զինվորները ևս միացան (Պոմպեոսի) զորքերին, Միհրդատը վախեցավ և այլևս չմնաց այդ երկրում, այլ իսկույն գիշերով աննկատելի հեռացավ և այնուհետև գիշերային երթերով առաջացավ դեպի Տիգրանի Հայաստանը:

50,1 Այնժամ Միհրդատը շտապեց դեպի Տիգրանը. բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին՝ Տիգրանը[20], ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ վեճը իր դեմ: Ուստի և Տիգրան (արքան) ոչ միայն չընդունեց նրան, այլև նրա կողմից եկած բանագնացներին կալանավորեց ու բանտարկեց: (Ահա այս բոլորից հետո) Միհրդատը հուսախաբ լինելով, շուտ եկավ դեպի Կոլխիս...:

51,1 Պոմպեոսը այսպես էր գործում. իսկ Տիգրանը՝ Տիգրանի որդին, վերցնելով իր հետ հզորներից[21] ոմանց, որովհետև նրանց հաճելի չէր ծերունու[22] իշխանությունը, փախավ Փրաատեսի մոտ. և մինչդեռ սա Պոմպեոսի հետ կնքված դաշինքի պատճառով մտածում էր իր անելիքի մասին, համոզեց նրան ներխուժել Հայաստան: Եվ նրանք եկան մինչև Արտաշատ, իրենց առաջ ընկած երկիրը հպատակեցնելով, մինչև իսկ հարձակվեցին (Արտաշատի վրա). քանզի ծերունի Տիգրանը վախենալով նրանցից, ապաստանել էր լեռները. բայց երբ պարզվեց, որ (քաղաքի) պաշարման համար ժամանակ էր պետք, Փրաատեսը զորքերի մի մասը թողնելով (Տիգրանի) որդուն, վերադարձավ իր հայրենի երկիրը. այնժամ էլ հայրը դուրս եկավ արդեն մենակ մնացած որդու դեմ և հաղթեց. իսկ նա փախչելով, նախ ուղևորվեց դեպի Միհրդատը՝ իր մեծ հայրը. բայց երբ իմացավ, թե նա պարտվել է և ավելի շուտ ինքն է օգնության կարիք զգում, քան թե ի վիճակի է ուրիշին օգնելու, գնաց Հռոմեացիների մոտ. և Պոմպեոսը նրան օգտագործելով իբրև առաջնորդի, արշավեց Հայաստան, նրա հոր դեմ:

52,1 Եվ Տիգրանը իմանալով այս մասին և տագնապելով, իսկույն նրա մոտ հաշտության բանագնացներ ուղարկեց և նրան հանձնեց Միհրդատի դեսպաններին: Եվ քանի որ իր որդու հակառակվելու պատճառով չէր կարող մեղմ պայմանների հասնել, և երբ արդեն Պոմպեոսն էլ Արաքսն անցնելով մոտեցել էր Արտաշատին, այնժամ Տիգրանը թե՛ քաղաքը հանձնեց նրան և թե՛ ինքը հոժարակամ եկավ նրա զորակայանը: Նա զգեստավորվել էր այնպես, որ դրսևորվեր և՛ իր նախկին շքեղությունը, և՛ այժմյան խոնարհ վիճակը, որպեսզի նրան արժանի երևա թե՛ հարգանքի և թե՛ կարեկցանքի: Քանզի նա իր վրայից հանել էր սպիտակաշերտ պատմուճանը և համակ ծիրանի վերարկուն, բայց գլխին կրում էր խույրը և ապարոշը: Արդ՝ Պոմպեոսը իր մականակիրներից[23] մեկին ուղարկելով նրան ընդառաջ, ձիուց վար իջեցնել տվեց, որովհետև նա, իրենց սովորության համաձայն, հեծյալ վիճակում էր մտել ամրոցյուն: Բայց երբ Պոմպեոսը տեսավ նրան, որ հետիոտն ներս մտավ և դեն նետելով գլխի ապարոշը գետին ընկավ և ուզում էր իրեն երկրպագել, գթաց և տեղից վեր կենալով բարձրացրեց նրան և ապարոշը կապելով նրա գլխին, նստեցրեց նրան իր կողքի բազմոցին և մխիթարելով ասաց նաև, թե նա ոչ միայն չի կորցրել Հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել հռոմեացիների բարեկամությունը:

53,1 Այս խոսքերով նա քաջալերեց նրան և ընթրիքի հրավիրեց: Իսկ որդին, որը նստած էր Պոմպեոսի մյուս կողքին, հորը տեսնելիս վեր չկացավ և ոչ իսկ որևէ մի այլ ձևով նրան պատվեց. նույնիսկ ճաշի հրավիրված լինելով հանդերձ, չգնաց: Այս պատճառով էլ նա մեծապես ատելի դարձավ Պոմպեոսին:

2 Այսպիսով, հաջորդ օրը (Պոմպեոսը) լսելով նրանց, ավագին[24] վերադարձրեց նրա ամբողջ հայրենի իշխանությունը. բայց նրա կողմից նվաճված երկրները, որոնց մեջ նաև Կապադովկիայի և Ասորիքի մասերը, ինչպես նաև Փյունիկիան և փոքր երկիր Ծոփքը, վերցրեց նրանից, ինչպես նաև դանձեր պահանջեց նրանից. իսկ կրտսեր (Տիգրանին) պարգևեց միայն Ծոփքը: Եվ քանի որ պատահմամբ Ծոփքում էին գտնվում գանձատները, ուստի և երիտասարդը սրանց

պատճառով վիճեց և հաջողություն չունենալով, քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը, դժգոհեց և մտադրվեց փախչել: Սակայն Պոմպեոսը, տեղեկանալով այդ մասին, նրան հսկողության տակ վերցրեց առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ, հրամայեց նրանց, որ
4 այդ բոլորը հանձնեն նրա հորը: Եվ որովհետև նրանք չհնազանդվեցին, ասելով, թե երիտասարդ (Տիգրանը), որին այժմ պատկանում է այդ երկիրը, պետք է այդ բանը հրամայի իրենց, ապա (Պոմպեոսը) նրան ուղարկեց դեպի բերդերը: Եվ սա, բերդերը փակ գտնելով, մոտիկ գնաց և դժկամությամբ հրամայեց բաց անել դրանք: Եվ երբ նրանք այլևս չէին հնազանդվում, առարկելով, որ նա այդ հրամանը տվել է ոչ թե կամովին, այլ հարկադրված, Պոմպեոսը զայրացավ և շղթայեց (երիտասարդ) Տիգրանին:

5 Եվ այսպիսով, Ծերունի (արքան) ստացավ դանձարանները. իսկ նա[25] զորքը երեք մասի բաժանելով, ձմեռեց Անահտական երկրում և Կյուռնոս[26] գետի մոտ ու Տիգրանից էլ մեծ քանակությամբ այլ բաներ ևս ստացավ, ինչպես նաև պայմանավորվածից ավելի շատ գանձեր: Եվ առավելապես
6 այդ իսկ պատճառով, քիչ ժամանակ անց, նա (Տիգրանին) դրանցեց (Հռոմեական ժողովրդի) բարեկամների ու դաշնակիցների ցուցակի մեջ և նրա որդուն հսկողության տակ բերեց Հռոմ:

Գիրք երեսունյոթերորդ

5,1 ... Փրաատեսը ևս (դեսպաններ) ուղարկեց նրա (Պոմ-
2 պեոսի) մոտ՝ դաշինքը վերանորոգելու ցանկությամբ: Քանզի սա, տեսնելով Պոմպեոսի այս հաջողությունները, և այն, որ նրա տեղակալները[27] ևս շարունակում էին հնազանդեցնել Հայաստանի և Պոնտոսի մնացած մասերը, և որ Գաբինիոսը[28] նույնպես անցնելով Եփրատը, առաջացել է մինչև Տիգրիս, վախ զգաց նրանց հանդեպ և ցանկացավ հաշտության
3 պայմաններ հաստատել. այսուհանդերձ, նա ոչինչ չկարողացավ իրագործել: Քանզի Պոմպեոսը, ելնելով առկա իրավիճակից, ինչպես նաև հուսադրված այդ բոլորից, արհա-

մարհեց նրան և գոռոզությամբ պատասխանեց դեսպաններին, իմիջիայլոց, պահանջելով նաև Կորդուենե[29] երկիրը,
4 հանուն որի Փրաատեսը վեճ ուներ Տիգրանի հետ: Եվ քանի որ նրանք ոչինչ չպատասխանեցին, քանզի այդ մասին նրանք ոչ մի հանձնարարություն չունեին, (Պոմպեոսը) մի գիր գրեց Փրաատեսին, բայց առանց որևէ պատասխանի սպասելու, իսկույն Ափրանիոսին ուղարկեց (Կորդուենե) երկիրը,
5 և այն առանց մարտի գրավելուց հետո, հանձնեց Տիգրանին:

6,1 Այսպիսի վերաբերմունք ունեցավ Պոմպեոսը Փրաատեսի նկատմամբ իր հզորության ժամանակ... և դրա հետ մեկտեղ արհամարհեց նրա տիտղոսը[30], որով նա փառաբանվում էր մնացած բոլորի, ինչպես նաև իրենց՝ հռոմեացիների առաջ, որը և սրանք օգտագործում էին ամեն անգամ նրբան դիմելիս: Քանզի, մինչդեռ նա կոչվում էր «արքայից
2 արքա»[31], (Պոմպեոսը) հատեց «արքայից» կոչումը և նրան հղած իր նամակում դիմեց նրան միայն «արքա» անվանելով: Դեռ ավելին. այդ տիտղոսը, հակառակ ընդունված կարգի, նա շնորհեց գերեվարված Տիգրանին[32], երբ ինքը Հռոմում իր հաղթահանդեսը տոնեց: Այդ իսկ պատճառով Փրաատեսը, քանզեւ վախենում էր նրանից և ձգտում էր սիրաշահել նրան, վշտացավ այդ դեպքից, ասես իր իսկ թագավորությունից զրկված լիներ, և դեսպաններ ուղարկելով, մեղադրում էր նրան իր կրած բոլոր անարդարությունների համար և համոզում նրան եփրատը չանցնել:

4 Եվ քանի որ ոչ մի հաշտարար պատասխան չստացվեց, (Փրաատեսը) իսկույն արշավեց Տիգրանի վրա, սրա որդու ուղեկցությամբ, որին իր աղջկան էր (կնության) տվել[33], դա այն ամռանն էր, երբ կոնսուլ էին Լուկիոս Կեսարը և Գայոս Փիգուլոսը. նախ կռվում պարտվեց, բայց հետո նա գերազանցություն ձեռք բերեց: Եվ երբ Տիգրանը դիմեց Ասորիքում գտնվող Պոմպեոսի օգնությանը, նա դարձյալ նրա մոտ դեսպաններ ուղարկեց և Տիգրանին շատ բաներում մեղադրեց, միաժամանակ նաև շատ ակնարկություններ արեց
7,1 հռոմեացիների դեմ. այնպես որ Պոմպեոսը և՛ ամաչեց, և՛ զարմացավ: Ուստի և ո՛չ Տիգրանին օգնություն ուղարկեց, ո՛չ էլ Փրաատեսի դեմ թշնամական որևէ բան ձեռնարկեց,

պատճառաբանելով, թե իրեն չի կարգադրված այդպիսի մի արշավանք կատարել, և որ Միհրդատը դեռևս գտնվում է
2 դինված վիճակում։ ... (Նա) վախենալով և ահաբեկված դեպքերի անկայունությունից, չձեռնարկեց պատերազմ, թեպետև շատերը նրան դրդում էին (այդ անել). միաժամանակ և բարբարոսի[34] զանգատներին ուշադրություն չդարձրեց, անպատասխան թողնելով. իսկ ինչ-որ սահմանների վերաբերյալ Տիգրանի հետ ունեցած նրա վեճի մասին ասաց,
3 որ այդ հարցը կկարգավորեն երեք մարդ, որոնց և նա ուղարկեց։ Սրանց էլ (թագավորները) ընդունելով իբրև ճշմարիտ դատավորների, պարզեցին իրար նկատմամբ ունեցած բոլոր զանգատները։ Տիգրանը զայրացել էր, որ ինքը օժանդակություն չէր գտել, իսկ Փրաատեսը ցանկանում էր գերազանցել Հայոց (թագավորին), այն հաշվով, որ անհրաժեշտ դեպքում նրան օգտագործի իբրև դաշնակցի հռոմեացիների դեմ։ Քանզի նրանք երկուսն էլ լավ գիտեին, թե իրենցից ով որ մյուսին գերիշխի, դրանով նպաստած կլինի հռոմեացիների գործին և ինքն էլ նրանց կողմից առավել հեշտ կհպատակեցվի։
5 Այս նկատառումներով էլ նրանք իրար հետ հաշտվեցին։

1. Այսինքն՝ մ. թ. ա. 69 թվականին։

2. Հայաստանում նավթի օգտագործման մասին Դիոնի սույն վկայությունը վերջերս իր հաստատումը գտավ Արտաշատի հնագիտական պեղումների ժամանակ։ Արտաշատի պարիսպների մոտ հայտնաբերվել է մեծ քանակությամբ նավթ, որն արդեն սառցել էր սև, չորացած կուպրի տեսքով։

3. Ինչպես արդեն նշել ենք (տե՛ս 252-րդ էջ, № 29 ծան.) այս միջադեպը հնարովի է։

4. Խոսքը պարթևական Հրահատ III թագավորի մասին է։

5. Ըստ ուսումնասիրողների, այս երկրամասը, հավանաբար, ընդգրկել է Տիգրան Մեծի՝ պարթևներից գրաված Միջագետքը, Ադիաբենեն և «Յոթանասուն հովիտները»։

6. Պրեսոր— պաշտոն և պաշտոնական անձ հին Հռոմում։ Սկզբնապես կոնսուլների և դիկտատորների տիտղոս, հետագայում՝ անձ, որին պատկանում էր դատական գերագույն իշխանությունը, իսկ պրովինցիաների կազմակերպումից հետո՝ նաև դրանց կառավարումը։ Սուլլայի ժամանակ պրետորների թիվը Հռոմում հասնում էր ութի։

7. Դիոնի սույն վկայությունը խիստ կարևոր է. պարզվում է, որ Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավել է ոչ այնքան ռազմական ուժի միջոցով, որքան քաղա-

քում ապրող օտարերկրացիների ապստամբության հետևանքով (տե՛ս նաև 266-րդ էջ, № 6 ծան.)։

8. Խոսքը Կոմմագենեի Անտիոքոս I թագավորի (69—34) և արաբ իշխանավոր Ալքամդոնիոսի՝ Լուկուլլոսի մոտ ուղարկած դեսպանների մասին է։

9. Արածանիի ճակատամարտի մասին Դիոնի սույն հաղորդումը հիմնովին հակասում է Պլուտարքոսի համապատասխան վկայությանը (տե՛ս 253-րդ էջ, № 42 ծան.), ըստ որի, իբր հայկական բանակը այստեղ ծանր պարտություն էր կրել։ Այստեղ պարզվում է, որ հայկական բանակը ոչ միայն պարտություն չէր կրել, այլ, ընդհակառակն՝ ինքն էր ծանր հարված հասցրել հակառակորդին։

10. Նիսիբիս— հայկական աղբյուրների Մծբինն է՝ քաղաք Հյուսիսային Միջագետքում։

11. Չնայած Դիոնը չի հիշատակում Տիգրան Մեծի երբոր անունը, սակայն Պլուտարքոսը (տե՛ս Լուկուլլոս, XXXII) նրան անվանում է Դուրաս։

12. Խոսքը Փոքր Հայքի մասին է։

13. Գայոս Մանիլիոս— մ. թ. ա. 66 թ. Հռոմի ժողովրդական տրիբուն։

14. Պոմպեոս (Պոմպեոս Գնեոս Մագնուս՝ 106—48)— հռոմեական զինվորական և քաղաքական գործիչ։ Ակքի ընկնող դեր է կատարել Իսպանիայում Սերտորիուսի դեմ մղված պատերազմներում (77—72 քք.), Սպարտակի ապստամբության ճնշելիս (71 թ.) և Միջերկրական ծովում ծովահենների դեմ պայքարելիս (67—66 քք.)։ 66 թ. հաշանակվել է Միհրդատ եվպատորի և Տիգրան Մեծի դեմ գործող հռոմեական բանակների հրամանատար։

15. Մեսոբոփանես— Սա Միհրդատ եվպատորի նախկին դեսպանն էր, որն այժմ ծառայում էր հռոմեացիներին։

16. Խոսքը պարթևական Հրահատ III թագավորի մասին է։ Դիոնը շփոթում է. Հրահատի հայր Արշակ XII-ը (Սանատրուկ) մահացել էր ոչ թե 66 թվականին, այլ՝ 70։

17. Այսինքն՝ Փոքր Հայք, որն այդ ժամանակ մտնում էր Պոնտական թագավորության կազմի մեջ։

18. «Անահտական երկիրը» պատմական Հայաստանի եկեղյաց գավառն է (կամ նրա մի մասը), որը Հայոնի էր Անահիտ աստվածուհու տաճարով և այնտեղ կատարվող տոնախմբություններով (տե՛ս Ստրաբոն, XI, 14, 16, XII, 3, 37)։

19. Մինչ այդ, Պոմպեոսը հանձնարարել էր Մարկիոս Ռեքսին հռոմեական երեք լեգեոններով պաշտպանել Կիլիկիան և Կապադովկիան, իսկ այժմ, զգալով այդ զորամասերի կարիքը, Պոմպեոսը Մարկիոսին կանչում էր օգնության։

20. Սա Տիգրան Կրտսերն է՝ Տիգրան II Մեծի և Կլեոպատրայի որդին։

21. Խոսքը հայկական ռազմատորկատիրական ավագանու որոշ ներկայացուցիչների մասին է։

22. Նկատի ունի Տիգրան II Մեծին։

23. Հին Հռոմում մականակիրներ էին կոչվում բարձրաստիճան պաշտոնյայի առջևից գնացող հատուկ պաշտոնատար անձինք, որոնք, իբրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների մի կապոց՝ ծայրին կացին ամրացրած։

24. Խոսքը վերաբերում է Տիգրան II Մեծին։

25. Այսինքն՝ Պոմպեոսը։

26. Սա Քուռ գետի անվան հունական ձևերից մեկն է։

27. Բնագրում՝ «ենթադրավարները»։

28. Պարինիոս—մ. թ. ա. 67 թ. Հռոմի ժողովրդական տրիբուն, հռոմեական զորավար, որին Պոմպեոսը թողեց իր փոխանորդը Արևելքում։

29. Կուդուենե (Կորդուք)— հայկական աղբյուրների «Կորդվաց աշխարհն» է՝ Մեծ Հայքի Կորճայք նահանգը։ Տեղադրվում է Արևելյան Տիգրիսից հարավ։

30. Խոսքը վերաբերում է «արքայից արքա» տիտղոսին (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը)։

31. «Աբհայից աբհա»— տիտղոս, որ կրում էին պարթև Արշակունի թագավորներն սկսած Միհրդատ I-ից (171—138)։ Սակայն, երբ 87—86 թթ. Տիգրան II-ը չախչախեց պարթևներին և գրավեց «Յոթանասուն հովիտները», Մարասանն ու Միջագետքը՝ պարթևական թագավոր Գոտարզ I-ը (Գոդերզ՝ 87—80) ոչ միայն ընդունեց Հայաստանի գերիշխանությունը, այլև հրաժարվեց «արքայից արքա» տիտղոսից՝ հօգուտ Տիգրան II-ի։ Այս տիտղոսը շարունակում էին կրել նաև Հայոց Արտավազդ II (55—34), Արտաշես II (30—20) և Տիգրան IV (8—5, 2—1) թագավորները։

32. Խոսքը Տիգրան Կրտսերի մասին է։ Սակայն, Տիգրան Կրտսերը, ինչպես հայտնի է, երբեք էլ գահ չի բարձրացել, ուստի Պոմպեոսը փառասիրությունից դրդված է Տիգրանին շնորհել «արքայից արքա» տիտղոսը, որը վերջինս իրավունք չուներ կրելու։

33. Դիոնը ակնհայտորեն շփոթում է. 64 թ., երբ կատարվում էին այս հատվածում նկարագրվող դեպքերը, Տիգրան Կրտսերը չէր կարող Հրահատ III-ի մոտ եղած լինել, քանի որ նա դեռևս 66 թ. Պոմպեոսի կարգադրությամբ կալանավորվել էր ու ապա տարվել Հռոմ։

34. Խոսքը Պարթևաց Հրահատ III թագավորի մասին է։

ԱՆՏՈՆԻՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԸՍՏ ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍԻ

ՀՐԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գիրք առաջին

363 Ոչ շատ ժամանակ անց Անտոնիոսը վերադարձավ Պարթիայից[1]։ Կլեոպատրայի համար որպես նվեր բերելով Տիգրանի որդի Արտաբազեսին[2], քանի որ դրամների և (պատերազմական) ամբողջ ավարի հետ միասին պարթևին[3] նրան պարգևեց։

Գիրք տասնհինգերորդ

104 Եվ Անտոնիոսը, Հայաստանը նվաճելուց հետո, Տիգրանի որդի Արտաբազեսին՝ նրա որդիների ու սատրապների հետ միասին կալանավոր ուղարկում է Եգիպտոս և Կլեոպատրային է նվիրում նրանց, ինչպես նաև թագավորության ամբողջ զարդերը, որ հափշտակել էր այնտեղից։ Իսկ Հայաստանի թագավոր դարձավ (Արտաբազեսի) անդրանիկ որդին՝

105 Արտաքսիասը, որն այդ իրադարձությունների ժամանակ (կարողացել էր) փախչել։ Սրան էլ Արքելաոսը[4] և կեսար Ներոնը[5] վտարեցին[6] և գահի վրա հաստատեցին նրա կրտսեր եղբայր Տիգրանին[7]։

1. Այսինքն՝ Պարթևստանից։

2. Խոսքը Հայոց Արտավազդ II թագավորի մասին է։

3. Հովսեպոսը բացահայտորեն շփոթում է՝ Արտավազդին անվանելով պարթև։

4. Սա Կապադովկիայի Արքելաոս թագավորն էր (36—17)։ Գահ է բարձրացել Անտոնիոսի աջակցությամբ։ Դործակցելով վերջինս հետ՝ Արքելաոսը ստացավ նաև Փոքր Հայքի թագավորությունը և Կիլիկիայի մի մասը։

5. Կեսար Ներոն (Տիբերիոս Կլավդիոս Ներոն)— հռոմեական զորավար, որին Օգոստոսը մ. թ. ա. 20 թ. ուղարկել էր Հայաստանը հանդարտեցնելու։ Օգոստոսի որդեգիրը, հետագայում՝ Հռոմի կայսր (14—37)։

6. Հովսեպոսը սխալվում է, երբ գրում է, թե Կլավդիոսը Հայաստանից վտարեց Արտաշես II-ին։ Արտաշես II-ի բացահայտ հակահռոմեական քաղաքականությունը նրան ատելի էր դարձրել Հռոմի պաշտոնական շրջանակներում։ Այստեղ վաղուց դավեր էին նյութվում այս ինքնատիպ, ակտիվ և ուժեղ թագավորի դեմ։ Ըստ երևույթին, հենց Օգոստոսի ուղղակի ցուցումներով՝ հայ հռոմեասերները մ. թ. ա. 20 թ. դավադրություն կազմակերպեցին ու սպանեցին Արտաշեսին։

7. Խոսքը վերաբերում է Արտավազդ II-ի կրտսեր որդուն՝ Հռոմի կողմից Հայաստանի թագավոր հռչակված Տիգրան III-ին (20—8)։

ԱՆՏՈՆԻՈՍԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

ՋՈՒԳԱՀԵՌ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անտոնիոս

XXXVII. Երբ Հրահատը սպանեց Օրոդեսին՝ իր Հորը և տիրացավ թագավորական իշխանությանը[1], բազմաթիվ պարթևներ

փախան հայրենիքից, որոնց թվում էր և Մոնեսը՝ մի նշանավոր ու հզոր այր[2]։ Սա ապաստան գտավ Անտոնիոսի[3] մոտ, որը նմանեցնելով նրա ճակատագիրը Թեմիստոկլեսի[4] ճակատագրի հետ, իսկ սեփական իշխանությունն ու վեհանձնությունը՝ պարսից արքաների վեհանձնությանն ու իշխանությանը, ընծայեց նրան երեք քաղաք՝ Լարիսան, Արետուսը և Հիերոպոլիսը, որը նախկինում Բամբիկա էր հորջորջվում[5]։ Իսկ այնուհետև պարթևաց թագավորը Մոնեսին հավաստիացրեց իր բարեհաճության մեջ, և Անտոնիոսը սիրով արձակեց նրան՝ Հրահատին մոլորեցնելու գաղտնի խորհուրդով։ Անտոնիոսը խնդրեց հազորդել թագավորին, որ համաձայն է խաղաղություն կնքել, եթե պարթևները ևս վերադարձնեն Կրասոսին ջախջախելու ժամանակ գավթած հռոմեական դրոշները և դեռևս ողջ մնացած ռազմագերիներին[6], իսկ ինքը՝ Կլեոպատրային[7] ևս ուղարկելով Եգիպտոս՝ Արաբիայի վրայով մտավ Հայաստան։ Այստեղ հռոմեական զորաբանակին դիմավորեց դաշնակից թագավորների մեծ բազմությունը, որոնց մեջ հզորագույնը Արտավազդ Արմենն էր, որը դուրս էր բերել վեց հազար հեծյալ և յոթ հազարանոց հետևազոր[8]։ Անտոնիոսը զորատես կատարեց։ Հռոմեական հետևազորը 60 հազար էր, սրանց օժանդակելու էր կելտական ու իսպանական տասը հազարանոց այրուձին, մնացած բոլոր դաշնակիցներից, հեծյալներն ու թևթևազենները միասին վերցրած, հավաքվեց 30 հազարանոց զորաբանակ։ Եվ այս վիթխարի ուժը, որից ահաբեկվում էին անգամ Բակտրիայից այն կողմ գտնվող հնդիկները, որը սարսափի մեջ էր պահում ամբողջ Ասիան, կորստյան մատնվեց անտեղի, ինչպես ասում են Կլեոպատրայի պատճառով։ Եվ ճշմարիտ, մտածելով միայն մի բանի մասին, թե ինչպես ձմեռը նրա հետ անցկացնի՝ Անտոնիոսը արշավանքն սկսեց ժամանակից շուտ[9], այն էլ առանց պահպանելու մարտակարգը և առանց պատշաճ կարգապահության, քանդի ինչ-որ դյուքթանքի կամ կախարդական բալասանի ազդեցության ներքո նա կորցրեց իր ողջամտությունը, և նրա հայացքը անընդհատ ուղղվում էր դեպի Եգիպտոս՝ մտքում տենչալով ոչ թե հաղթանակ թշնամիների դեմ, այլ շուտափույթ վերադարձ։

XXXVIII. Նախ և առաջ նա պետք է ձմեռեր Հայաստանում և հանգիստ տար իր հոգնատանջ բանակին, որը ութ հազար ստադիոն[10] ռազմերթից հետո կարիք ուներ հանգստյան, իսկ գարնան

նամուտին, մինչ պարթևական զորքը դուրս կգար ձմեռանոցներից՝ դրավեր Մարաստանը։ Անտոնիոսը, սակայն, չսպասեց այդ հարմար պահին, այլ անմիջապես առաջ շարժվեց և ձախ կողմում թողնելով Հայաստանը՝ մտավ Ատրպատական ու սկսեց ամայացնել երկիրը։ Երեք հարյուր սայլերով հռոմեացիները տանում էին պաշարողական մեքենաները, այդ թվում պարսպակործան մի խոյ՝ ութսուն ոտնաչափ երկարությամբ, բայց եթե սրանցից որևէ մեկը վնասվում էր, այն այլևս հնարավոր չէր վերանորոգել, քանզի Ներքին Ասիայում անհրաժեշտ ամրության և երկարության փայտանյութ չկար, և Անտոնիոսը, որի համար այդ գումակը միայն բեռ էր և դանդաղեցնում էր ռազմերթը, թողեց այն Ատրպատեսի գլխավորած պահակազորային ջոկատի պահպանության ներքո, իսկ ինքը պաշարեց Փրաասպա մեծ քաղաքը[11], ուր գտնվում էին մարական թագավորի կանանոցն ու երեխաները։ Շատ շուտով պարզվեց, թե ինչպիսի մեծ սխալ է նա գործել, լքելով պաշարողական մեքենաները։ Անտոնիոսն ընդհուպ մոտենալով քաղաքին սկսեց հողապատնեշ կառուցել, սակայն աշխատանքը շատ ծանր էր և այն դանդաղ էր առաջ գնում։ Իսկ այդ ժամանակ Հրահատը հսկայական զորաբանակով արդեն շտապում էր շրջապատվածներին օգնության և իմանալով պաշարողական մեքենաներով լքված սայլերի մասին՝ հեծելազորային մի ուժեղ ջոկատ ուղարկեց, որը շրջապատեց Ստատիանոսին և տասը հազար հռոմեական զինվորների ոչնչացրեց։ Ինքը՝ Ստատիանոսը, նույնպես սպանվեց, իսկ մեքենաները բարբարոսները ջարդուփշուր արեցին։ Բացի մեքենաներից, նրանց ձեռքն ընկան բազմաթիվ գերիներ, որոնց թվում և Պոլեմոն թագավորը[12]։

XXXIX. Այս անսպասելի անհաջողությունը հենց սկզբում, հասկանալի է, խորը հուսալքության մատնեց Անտոնիոսին և նրա մարդկանց, իսկ Հայոց թագավոր Արտավազդը հռոմեացիների արշավանքը տանուլ տված համարելով՝ իր յուրայիններին վերցնելով հեռացավ, թեև հենց ինքն էր պատերազմի հիմնական մեղավորը։

XLIX. Վերջին ճակատամարտից վեց օր անց հռոմեացիները հասան Մարաստանը Հայաստանից սահմանազատող Արաքս գետը։ Արտաքինից այն թվում էր խոր և դժվարանցանելի, բացի այդ, լուրեր էին պտտվում, թե ոսոխը դարան է պատրաստել և

իրենց հարվածելու է գետանցի ժամանակ։ Իսկ երբ բարեհաջող ու անվտանգ անցան գետի մյուս ափը և ոտք դրին հայկական հողին, ապա ասես բաց ծովում երկար դեգերելուց հետո առաջին անգամ ցամաք տեսնելով, նրանք համբուրում էին քարերն ու ավազը և ուրախությունից սկսեցին արտասվել ու միմյանց հետ գրկախառնվել։ Այնուհետև ընթանալով ծաղկուն և խիտ հարուստ (Հայաստան) երկրի միջով, նրանք չափից ավելի կերան ու խմեցին այդքան չարչարանքներից ու սովահարությունից հետո։

L. Այստեղ Անտոնիոսը զորահանդես կատարեց և պարզեց, որ կորսված են քսան հազար հետևակորայիններ և չորս հազար հեծյալներ։ Բայց դրանցից բոլորը չէ, որ ընկել էին ճակատամարտերում, կեսից ավելին մահացել էր հիվանդություններից։ Դուրս գալով Փրաասպայի մոտ գտնվող բանակատեղիից՝ հռոմեացիները քսանչոր օր գտնվում էին ճանապարհին և այդ ընթացքում նրանք պարթևների նկատմամբ տասնութ հաղթանակ տարան, սակայն այդ բոլորը խաբուսիկ և անհույս հաղթանակներ էին, քանզի Անտոնիոսը չէր կարող իրապես հետապնդել հակառակորդին։ Պարզ էր ու համոզեցուցիչ, որ արշավանքի անհաջող արդյունքով նա պարտական էր հատկապես Արտավազդ Արմենին։ Եթե նրա տրամադրության տակ մնային այն տասնվեց հազար հեծյալները, որոնց Արտավազդը տարավ Մարաստանից, որոնք զինված էին համարյա պարթևականի նմանությամբ ու սովոր էին նրանց դեմ մարտնչելու, ապա հռոմեացիները կջախջախեին հակառակորդին բաց ճակատամարտում, իսկ հայերը կսրատեին փախչողներին և թշնամին անկարող կլիներ ուշքի գալու այդքան պարտություններից հետո։ Արդ, բնական է, որ բոլորը գաղափած էին և դրդում էին Անտոնիոսին հաշվեհարդար տեսնել Հայոց արքայի հետ։ Անտոնիոսը, սակայն, լավ էր հասկանում, որ իր զորաբանակը ուժասպառ է և կարոտ ամենաանհրաժեշտ պետքերի, ուստի նա անսաց իր բանականությանը և խոհեմաբար Արտավազդին դավաճանության մեղադրանք չներկայացրեց[13], այլ առաջվա նման վերաբերում էր բարեկամաբար ու սիրալիր և արքային պատշաճ պատիվներ էր մատուցում։ Հետագայում, սակայն, նորից մտնելով Հայաստան, նա բազում խոստումներով ու հավաստիացումներով համոզեց Արտավազդին գալ իր մոտ, բայց հետո ձերբակալեց նրան

և շղթայակապ տարավ Ալեքսանդրիա և ցուցադրեց հաղթանդեսի ժամանակ[14]։

LIV. Առելության մի նոր ալիք առաջացրեց Անտոնիոսը, երբ իր զավակների միջև երկրների բաժանում կատարեց, որը կազմակերպվել էր Ալեքսանդրիայում՝ ցուցադրական փայլով լի, մեծամտությամբ ու թշնամանքով դեպի այն ամենը, ինչ հռոմեական էր[15]։ Ամբոխով լեցուն դիմնասիոնում[16], արծաթե հարթակի վրա դնելով երկու ոսկե գահ՝ իր և Կլեոպատրայի համար, ինչպես նաև ավելի ցածր և հասարակ գահեր իր երեխաների համար՝ նա, նախ և առաջ, Կլեոպատրային հայտարարեց Եգիպտոսի, Կիպրոսի, Աֆրիկայի և Կոյլե-Սիրիայի թագուհի՝ Կեսարիոնի գահակցությամբ. սա որդին էր համարվում ավագ Կեսարի, որը, ինչպես ասում են, հղի էր թողել Կլեոպատրային. այնուհետև Կլեոպատրայից ծնված իր որդիներին նա հռչակեց արքայից արքաներ և նրանցից Ալեքսանդրին նշանակեց Հայաստանի, Մարաստանի և Պարթևստանի (հենց որ այս երկիրը նվաճվեր) թագավոր, իսկ Պտղոմեոսին տվեց Փյունիկիան, Ասորիքը և Կիլիկիան։ Անտոնիոսը Ալեքսանդրին ներկայացրեց մարական լրիվ հանդերձանքով՝ խույրով, վարսակալով և պատկաթագով, Պտղոմեոսին՝ ճտքակոշիկներով, մակեդոնական քիկնոցով և զարդանախշ ապարոշով։ Դա Ալեքսանդրի (Մակեդոնացու— Պ. Հ.) հետևորդների հագուստն էր, իսկ այն առաջինը՝ Հայաստանի և Մարաստանի արքաներինը։ Տղաները ողջունեցին ծնողներին, և մեկին անմիջապես շրջապատեցին հայ դրանիկները, իսկ մյուսին՝ մակեդոնացիները։ Կլեոպատրան այն օրը, ինչպես միշտ, երբ հայտնվում էր ժողովրդին, Իսիդայի[17] սրբազան հագուստով էր, նա իրեն այդպես էլ հորջորջում էր՝ նոր Իսիդա։

1. Պարթևաց թագավոր Օրոդես II-ի սպանությունը և Հրահատ IV-ի գահ բարձրանալը տեղի է ունեցել մ. թ. ա. 38 թվականին։

2. Ուսումնասիրողները կարծում են, որ Մոնեսի փախուստը Անտոնիոսի մոտ՝ սոսկ մի խաղ է եղել, որի նպատակն էր հռոմեական կողմի իրավիճակի խոր հետազոտությունը։

3. Մարկոս Անտոնիոս (83—30)— հռոմեական քաղաքական ու ռազմական գործիչ, Հուլիոս Կեսարի մերձավորագույն մարդկանցից մեկը, 44 թ. կոնսուլ, երկրորդ եռապետության (43 թ.) կազմակերպիչներից մեկը, 41 թ. նշանակվել է Սիրիա պրովինցիայի պրոկոնսուլ։

4. Խոսքը աթենական պետական գործիչ և զորավար Քեմիստոկլեսի (525—460) մասին է։

5. Նշված երեք քաղաքներն էլ գտնվում են Ասորիքում։ Պլուտարքոսը տվյալ կոնտեքստում նկատի ունի այն հանգամանքը, որ հալածական Քեմիստոկլեսը ապաստան գտնելով պարսից Արտաքսերքսես I թագավորի (465—424) մոտ՝ նրանից ընծա ստացավ երեք քաղաքներ։

6. Խոսքը 53 թ. մայիսի 6-ին Խառան քաղաքի մոտ Կրասոսի բանակի ջախջախումից հետո պարթևների կողմից գերի վերցրած 10 հազար հռոմեացի զինվորների մասին է։

7. Կլեոպատրա VII-ը դուստրն էր Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս XII Սրնգահարի (Ավլետես), որի մահից հետո (51 թ.) գահում է իր եղբոր՝ Պտղոմեոս XIII-ի գահակիցը (51—47), իսկ այնուհետև գահընկեց անելով եղբորը՝ սկսում է իշխել միանձնորեն (47—30)։ Եղել է Հուլիոս Կեսարի սիրուհին, ապա Մարկոս Անտոնիոսի կինը։

8. Այսինքն՝ 13 հազար զինվոր։ Ինչպես տեսնում ենք, Արտավազդը եռակի անգամ պակաս զինվոր էր տրամադրում Անտոնիոսին, քան Կրասոսին։

9. Անտոնիոսի զորաբանակը Կարնո դաշտից, որտեղ գտնվում էր նրա ճամբարը, դուրս եկավ 36 թվականի հունիսի կեսերին։

10. Այսինքն՝ մոտավորապես 1350 կմ (ստադիոնը հավասար է 185 մետրի)։

11. Փրաասպան Ատրպատականի մայրաքաղաքն էր։

12. Սա մ. թ. ա. 38 թվականին Անտոնիոսի կողմից Պոնտոսի թագավոր հռչակված Պոլեմոն I-ն էր։

13. Տե՛ս 297-րդ էջի № 15 ծանոթագրությունը։

14. Անտոնիոսի հաղթահանդեսը Ալեքսանդրիայում կազմակերպվեց 34 թվականի աշնանը։

15. Այս արարողությունը պատմության մեջ հայտնի է «Ալեքսանդրիայի նվիրատվություններ» անվամբ։

16. Դիմնասխոն— ուսումնամարզական բացօթյա հաստատություն Հին Հունաստանում և Հելլենիստական Արևելքի երկրներում։

17. Իսիդան հին եգիպտական դիցարանի գլխավոր աստվածուհիներից մեկն էր։ Համարվում էր ննջեցյալների թագավորության աստծո՝ Օսիրիսի քույրն ու կինը, պտղաբերության, արգասավորության և մարդկանց մահից պաշտպանող աստվածուհի։

ԿՐԱՍՈՍԻ ԵՎ ԱՆՏՈՆԻՈՍԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ

ՀՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք քառասուներորդ

16,1 Կրասոսը[1] երբ ներխուժեց Միջագետք, ինչպես ասվել է, Օրոդեսը[2] նրա մոտ, Սիրիա, դեսպաններ ուղարկեց, մեզադրելով նրան ներխուժման համար և պահանջեց հայտնել պատերազմի պատճառները. միաժամանակ նա Սուրենին[3] զորքով ուղարկեց նվաճված և ապստամբած շրջաններ-

2 րը. քանզի ինքը մտադիր էր արշավել Հայաստան, որը մի ժամանակ Տիգրանի[4] երկիրն էր, որպեսզի Արտավազդը[5] Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագավորում էր (այնտեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգ-

3 նություն չուղարկի հռոմեացիներին։ Բայց Կրասոսը պատասխանեց նրան, թե պատերազմի պատճառը կհայտնի Սելևկիայում[6]. սա քաղաք է Միջագետքում, որի բնակչության մեծագույն մասը այժմ ևս հելլենական է։ Եվ պարթևներից մեկը իր ձախ ափին մյուս ձեռքի մատներով խփեց ու նրան պատասխանեց, թե՝ «Ավելի հեշտ այստեղ մազեր կբուսնեն, քան դու կլինես Սելևկիայում»։

Գիրք քառասունիններորդ

25,1 Եվ նա[7] առաջացավ մինչև Եփրատ, կարծելով թե այն զուրկ էր պահակազորներից։ Իսկ երբ նա համոզվեց, թե գետի ամբողջ շրջանը խստորեն պահպանվում է, ետ դարձավ. բայց նա որոշեց արշավանք ձեռնարկել մեդացիների թագավոր Արտավազդի[8] դեմ, որը թշնամի էր Մեծ Հայքի իրեն անվանակից թագավորին[9]. ուստի և այդ վիճակում նա իսկույն շարժվեց դեպի Հայաստան և այնտեղ իմանալով,

2 որ Մեդացին շատ էր հեռացել իր հայրենի երկրից, դաշնակից պարթև (թագավորին)[10] օժանդակելու համար, իր դուստրը և զորքի մի մասը թողեց Օպակիս Ստատիանոսի հետ, պատվիրելով նրանց հետևել իրեն, մինչդեռ ինքը, վերցնելով հեծելազորը և հետևակի հզորագույն մասը, շտապեց

3 առաջ, համոզված, որ առանց դիմադրության կգրավի թշնամու (ամրությունները). և նա, նետվելով նրանց արբայանիստ Փրաասպա[11] (քաղաքի) վրա, սկսեց հողաթմբեր պատրաստել և հարձակումներ գործել։ Այդ բոլորի մասին տեղեկանալով, Պարթևն ու Մեդացին թույլ տվեցին, որ նա իզուր

4 շարշարվի, քանզի պարիսպները հզոր էին և նրանց կողմից լավ էին պաշտպանվում, բայց և այնպես՝ անհապաղելի հար-

ձակվեցին Ստատիանոսի վրա, երբ սա ճանապարհին էր ու հոգնած, և բոլորին սպանեցին, բացի Պոնտոսի թագավոր Պոլեմոնից[12], որն այդ ժամանակ միացել էր (Ստատիանոսի) արշավանքին. միայն սրան կենդանի գերեցին և փրկա-
5 ղին ստանալով՝ ազատ արձակեցին։ Նրանք կարողացան այս անել, քանի որ Արմենը[13] ներկա չեղավ կռվին, բայց և, ինչպես ասում են ոմանք[14], նա կարող էր օգնել հռոմեացիներին, սակայն ոչ այդ արեց, ոչ էլ եկավ Անտոնիոսի մոտ, այլ մեկնեց տուն։

31,2 Ինչ վերաբերում է Արմենին, թևպետև (Անտոնիոսը) նրա վրա զայրացած էր, որովհետև նա իրենց լքել էր[15], ու թեև ցանկանում էր պատժել նրան, այնուամենայնիվ սիրաշահեց նրան և հարգանք մատուցեց, որպեսզի նրանից կեն-
3 սամթերք և դրամ ստանա և, վերջապես, քանի որ զինվորները չէին կարող դիմանալ ավելի երկար ճանապարհի և այն էլ ձմռանը, մյուս կողմից էլ պետք է իզուր տանջվեին, քանզի նա մտադիր էր կարճ ժամանակ անց վերադառնալ Հայաստան, նրան մեծապես շողոքորթեց, միաժամանակ բաղում խոստումներ տվեց, որպեսզի (թագավորը) թույլ տա իրենց ձմեռել (իր) երկրում, ասելով, որ գարնանը նա նո-
4 րից պետք է արշավի պարթևների դեմ։

33,1 Այդ ժամանակ նա այդպես վարվեց. իսկ հաջորդ տարին[16], երբ կոնսուլներ էին Պոմպեոսը և Կոռնուտիֆիկիոսը, (Անտոնիոսը) արշավանք ձեռնարկեց (Արտավազդ) Արմենի դեմ, մեծապես հույս դնելով Մեդացու վրա, որը զայրացած էր Փրաատեսի դեմ, որովհետև սա ավարից իրեն շատ բաժին չէր տվել և ոչ իսկ որևէ այլ ձևով պատվել, և միաժամանակ նա կամենում էր (Արտավազդ) Արմենին պատժել՝ հռոմեացիներին (իր երկրի դեմ) բերած լինելու համար.
2 ուստի նա Պոլեմոնին ուղարկեց Անտոնիոսի մոտ, բարեկամություն և դինակցություն հայցելու (Անտոնիոսը), իհարկե, այնպես ուրախացավ այս առիթից, որ ոչ միայն նրա հետ դաշինք կնքեց, այլև փոքր-ինչ ուշ Պոլեմոնին, որպես վարձատրություն նրա միջնորդության, տվեց Փոքր Հայքը[17]։ Արդ՝ (Արտավազդ) Արմենին նա նախ հրավիրեց Եգիպտոս իրեն բարեկամի, որպեսզի նրան առանց դժվարության ձեռք

գցելով, այնտեղ ոչնչացնի. բայց քանի որ սա, կռահելով այդ ամենը, հրավերին չպատասխանեց, նա մտածեց մի
3 այլ ձևով խաբել նրան։ Ուստի և (Անտոնիոսն) իր զայրույթը նրա հանդեպ բացահայտ ցույց չէր տալիս, որպեսզի չքշնամանա իր հետ. բայց նրան անպատրաստ գտնելու նպատակով՝ նա շարժվեց Եգիպտոսից, իբրև թե արշավում էր պարթևների դեմ։ Ճանապարհին, սակայն, տեղեկանալով, որ Օկտավիան[18] Հռոմից ժամանում է, այլևս առաջ չշարժվեց, այլ ետ վերադարձավ։

* * *

39,1 Մինչ այդ Անտոնիոսը նույն օրն իսկ հրաժարվեց իշխանությունից[19], իր փոխարեն կարգելով Լուկիոս Սեմպրոնիոս Ատրատինոսին, այստեղից էլ ահա, ոմանք կոնսուլներին թվարկելիս ոչ թե Անտոնիոսի, այլ Սեմպրոնիոսի անունն են
2 տալիս։ Որպեսզի կարողանա (Արտավազդ) Արմենից առանց դժվարության վրեժ լուծել, (Անտոնիոսը) նրա մոտ ուղարկեց ոմն Կվինտոս Դելլիոսին, որը մի ժամանակ իր սիրելին էր եղել, խնդրելով նրա աղջկան[20] կնության տալ իր Ալեքսանդր որդուն[21], և խոստանում է նրան շատ պարգևներ
3 շնորհել։ Եվ, ի վերջո, գարնանամուտին նա հանկարծ եկավ Նիկոպոլիս[22], որը հիմնել էր Պոմպեոսը, և նրան հրավիրեց այնտեղ, իբրև թե նրա հետ խորհրդակցելու և պարթևների դեմ համագործակցելու նպատակով։ Ու քանի որ (Արտավազդը), կասկածելով դավադրության մասին, նրա մոտ չժամանեց, ապա նա նորից Դելլիոսին ուղարկեց բանակցություններ վարելու համար և ինքն էլ ոչ պակաս շտապողա-
4 կանությամբ առաջացավ դեպի Արտաշատ։ Այս կերպ, վերջապես, երկար ժամանակ հետո, թե՛ բարեկամների միջոցով նրան համոզելով, թե՛ իր զորքերով երկյուղ պատճառելով և թե՛, ընդհանրապես, իբրև բարեկամի նամակ գրելով և ամեն միջոց գործադրելով, նրան հարկադրեց գալ իր ռազմա-
5 կան ճամբարը։ Եվ այստեղ ձերբակալելով նրան, սկզբում պահում էր առանց կապանքների և շրջագայում նրա հետ այն ամրոցները, որտեղ գտնվում էին գանձերը, որպեսզի կարողանա դրանք ստանալ առանց պատերազմի, արդարա-

նալով, որ իբր նրան ձերբակալել է միայն այն պատճառով,
6 որպեսզի հայերին հարկադրի տուրք վճարել նրա անձի և նրա թագավորության փրկության համար։ Իսկ երբ գանձերի պահապանները ուշադրություն չդարձրին նրան և ղենք կրողներն էլ (Արտավազդի) փոխարեն թագավոր ընտրեցին նրա որդիներից ավագագույնին՝ Արտաշեսին[23], (Անտոնիոսը) Արտավազդին կապեց արծաթե շղթաներով. քանզի թվում էր, թե ամոթալի կլիներ նրան, որ թագավոր էր եղել, կապել երկաթե շղթաներով։ Եվ այնուհետև (Անտոնիոսը) տի-
40,1 րացավ ամբողջ Հայաստանին, ոմանց հոժարակամ, ուրիշներին բռնությամբ նվաճելով, իսկ Արտաշեսը, քանի որ պատերազմի բռնվեց, բայց պարտվեց, փախավ Պարթևի[24] մոտ։ Այս բոլորն անելուց հետո (Անտոնիոսը) իր որդուն
2 նշանեց Մեդացու աղջկա[25] հետ, որպեսզի նրա հետ առավել սերտ բարեկամություն հաստատի. և ապա իր լեգիոնները թողեց Հայաստանում ու վերադարձավ Եգիպտոս, իր
3 հետ տանելով թե՛ այլ առատ ավար և թե՛ Արմենին՝ իր կնոջ ու որդիների[26] հետ։ Եվ մյուս գերիների հետ սրանց ևս իր առջևից Ալեքսանդրիա ուղարկելով իրը հաղթահանդեսի շքերթի համար, ինքը քաղաք մտավ մարտակառքի վրա. և բացի այլ ամենից, որ շնորհեց Կլեոպատրային, նրան բերեց ընտանյոք հանդերձ նաև Արմենին, որը ոսկե կապանքների մեջ էր։ Իսկ (Կլեոպատրան) նստած էր բազմության մեջտեղ, արծաթապատ բեմում, ոսկեզօծ գահավորակի վրա։ Սակայն բարբարոսները[27] ոչ աղերսեցին նրան, ոչ իսկ երկրպագեցին, թեպետև նրանց շատ էին ստիպում և շատ էին հուսադրում՝ ազատություն խոստանալով. ու որովհետև նրան պարզապես իր անունով կոչեցին[28], նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով էնթարկվեցին խիստ չարշարանքների։

41,1 Այս բանից հետո Անտոնիոսը խնջույքով պատվեց ալեքսանդրիացիներին և հավաքույթի ժամանակ իր կողքին բազմեցրեց Կլեոպատրային ու նրա որդիներին և դիմելով ժողովրդին, կարգադրեց, որպեսզի նրան կոչեն արքայից թագուհի, իսկ Պտղոմեոսին, որին Կեսարիոն[29] անունն էին տը-
2 վել, կոչեն արքայից արքա։ Այնժամ (պրովինցիաների) մի

նոր բաժանում կատարելով, նրանց պարգևեց Եգիպտոսը, ինչպես նաև Կիպրոսը։

3 Իսկ Կլեոպատրայից ծնված իր որդիներին խոստացավ տալ (հետևյալ երկրները). Պտղոմեոսին՝ Սիրիան ու Եփրատից այս կողմ գտնվող բոլոր երկրները՝ մինչև Հելլեսպոնտոս, Կլեոպատրային՝ Կյուրենե երկիրը Լիբիայում, իսկ նրանց եղբայր Ալեքսանդրին՝ Հայաստանը ու Եփրատից այն կողմ ընկած բոլոր երկրները՝ մինչև Հնդկաստան. և այս
4 ամենը նա պարգևում էր, կարծես արդեն նվաճած լիներ[30]։

1. Կրասոս— տե՛ս 272-րդ էջի № 1 ծանոթագրությունը։

2. Օրոդես— պարթևական Օրոդես II (Արշակ XIV) թագավորն է (57—38)։

3. Պարթև տաղանդավոր զորավար։ Արշակունի տոհմից հետո, իր նշանակությամբ երկրորդ՝ Սուրեն տոհմի ներկայացուցիչ։ Սուրեն տոհմին էր վերապահվում պարթևական արքաներին թագադրելու պատիվը (տե՛ս Պլուտարքոս. Կրասոս, XXI)։

4. Խոսքը Տիգրան II Մեծի մասին է։

5. Այսինքն՝ Հայոց Արտավազդ II թագավորը։

6. Սա Սելևկյան թագավորների հիմնադրած համանուն Սելևկիա քաղաքներից մեկն էր, հելլենիստական աշխարհի խոշորագույն քաղաքային կենտրոններից մեկը։ Այն գտնվում էր Տիգրիսի աջ ափին՝ Տիզրոնի դիմաց և հանդիսանում էր պարթև Արշակունիների ձմեռային նստավայրը։

7. Խոսքը վերաբերում է հռոմեական քաղաքական ու ռազմական գործիչ Մարկոս Անտոնիոսին, որը մ. թ. ա. 43 թ. Գայոս Օկտավիանոսի և Մարկոս Լեպիդոսի հետ կազմել է երկրորդ եռապետությունը։

8. Սա Ատրպատական-Մարաստանի (Մեդիա-Ատրոպատենե) թագավոր Արտավազդն էր։

9. Խոսքը վերաբերում է Հայաստանի թագավոր Արտավազդ II-ին։

10. Այսինքն՝ պարթևների Հրահատ IV թագավորը (38—2)։

11. Փրաասպա— Ատրպատականի մայրաքաղաքն է. տեղադրվում է Կապուստան (Ուրմիա) լճի հարավարևելյան կողմում։

12. Պոնտոսի Պոլեմոն I թագավորն է։ Սա հռետորի որդի էր՝ Կիլիկիայի Լաոդիկեա քաղաքից։ 40 թ. Անտոնիոսը նրան շնորհում է Կիլիկիայի մի մասը, իսկ այնուհետև՝ նաև Պոնտոսի թագավորությունները։

13. Խոսքը Արտավազդ II-ի մասին է։

14. Դիոնը հավանաբար նկատի ունի Պլուտարքոսին։

15. Հունա-հռոմեական մատենագիրներն ու նրանց հետևությամբ նաև նոր ժամանակների որոշ հետազոտողներ Արտավազդի սուլն արարքը գնահատել են որպես դասալքություն և անգամ դավաճանություն։ Ճիշտ է նկատված, որ այս

վարկածի ակունքը Անտոնիոսն է։ Պարթևական ձախողված արշավանքի ամբողջ պատասխանատվությունը Անտոնիոսը փորձում էր բարդել Արտավազդ II-ի վրա, որը, իրականում, չէր ցանկանում գործիք դառնալ հռոմեական նվաճողական քաղաքականությանը և ձգտում էր վարել շրջահայաց չեզոքություն։

16. Այսինքն՝ մ. թ. ա. 35 թվականին։

17. Փոքր Հայքի թագը Անտոնիոսը Պոլեմոնին շնորհել է 33 թվականին։

18. Օկտավիա— Գայոս Օկտավիանոսի քույրն է, որը 40 թ. Բրունդիզիումյան համաձայնագրից հետո ամուսնացել էր Անտոնիոսի հետ։ Սակայն Օկտավիանոսի և Անտոնիոսի հարաբերությունների վատթարացման հետևանքով՝ վերջինս 37 թ. ապահարզան է տվել Օկտավիային։

19. Խոսքը կոնսուլի պաշտոնի մասին է, որից Անտոնիոսը հրաժարվեց 34 թվականին։

20. Խոսքը Արտավազդ II-ի դստեր մասին է։

21. Սա Անտոնիոսի և Եգիպտոսի թագուհի Կլեոպատրա VII-ի որդին էր, որին անվանում էին Ալեքսանդր Հելիոս։

22. Նիկոպոլիս (հայերեն բառացի թարգմանությամբ՝ «Հաղթության քաղաք»)— հիմնել է Պոմպեոս Գնեոսը Միհրդատ VI Եվպատորին հաղթելու վայրում։ Տեղադրվում է Փոքր Հայքում՝ Գայլ գետից հարավ, էնդրեսից մոտ 10 կմ հեռավորության վրա։

23. Սա Հայոց թագաժառանգ Արտաշեսն էր, հետագայում՝ Հայաստանի թագավոր Արտաշես II-ը (30—20)։

24. Խոսքը պարթևների Հրահատ IV թագավորի մասին է։

25. Սա Մար Արտավազդի դուստր Իոտապեն էր։

26. Այսինքն՝ Արտավազդ II-ի կինը (Հայոց թագուհին) և երկու որդիները՝ տրքայազուններ Տիգրանն ու Արտավազդը։

27. Նկատի ունի Արտավազդ II-ին ընտանյոք հանդերձ, որոնք ներկայացված էին 34 թ. Ալեքսանդրիայում Անտոնիոսի կազմակերպած «հաղթահանդեսին»։

28. Այսինքն՝ հայերը հրաժարվեցին Կլեոպատրային անվանել թագուհիների թագուհի։

29. Կեսարիոն— Կլեոպատրայի և Հուլիոս Կեսարի որդին, Անտոնիոսի որդեգիրը։ Մ. թ. ա. 30 թ. Ալեքսանդրիան գրավելուց հետո՝ Օկտավիանոսի կարգադրությամբ Կեսարիոնը գլխատվեց։

30. Դառը ճակատագիր էր սպասում Կլեոպատրայի և Անտոնիոսի զավակներին։ Անտոնիոսի և Կլեոպատրայի ինքնասպանություններից հետո, Օկտավիանոսի կարգադրությամբ գլխատվեց Անտոնիոսի ավագ որդին՝ Անտիլը, իսկ Կլեոպատրայից ծնված «Հայաստանի թագավոր» Ալեքսանդր Հելիոսը, Կլեոպատրա-Սելենեն և Պտղոմեոս Փիլադելփոսը գերեվարվեցին Հռոմ և ներկայացվեցին Օկտավիանոսի այստեղ կազմակերպած հաղթահանդեսին։ Հետագա տարիներին նրանք դաստիարակվում ու կրթվում էին Օքտաուսի պալատում։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ՏԻԳՐԱՆ ՄԻՋԻՆԻ (ԵՐԿՐՈՐԴ) ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴ ԵՐԿՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ԺԴ

ՏԻԳՐԱՆ ՄԻՋԻՆԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ՀՈՒՆԱՑ ԶՈՐՔԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼԸ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆ ԱՐՇԱՎԵԼԸ

Արտաշես Առաջինից հետո թագավորում է նրա Տիգրան[1] որդին՝ պարսից Արշական թագավորի քառասունիններորդ տարում[2]։ Հայոց զորքերը ժողովելով՝ նա գնում է Հունաց[3] զորքերի դեմ, որոնք նրա հոր՝ Արտաշեսի մահից և նրա զորքերի ցրվելուց հետո՝ նրանց հետապնդելով մեր երկրի վրա էին գալիս։ Տիգրանը նրանց դեմ դուրս գալով՝ նրանց արշավանքն արգելում է և ետ է մղում։ Իր քրոջ ամուսնուն՝ Միհրդատին[4] վստահելով Մաժաքը[5] և Միջերկրյա[6] կողմերը և շատ զորք նրա մոտ թողնելով դառնում է մեր երկիրը։

(Այդտեղից) անմիջապես դիմում է Պաղեստին աշխարհը Պտղոմյան Կլեոպատրայից[7] վրեժ առնելու՝ նրա Դիոնիս որդու գործած հանցանքի համար իր հոր (Արտաշեսի) դեմ։ Հրեաներից շատ գերի վերցնելով շրջապատում է Պտղոմայիդ քաղաքը։ Իսկ հրեաների Աղեքսանդրիա կամ Մեսաղինա թագուհին[8], որ Հուդա Մակաբեի Շմավոն եղբոր որդի Հովհաննեսի որդի Աղեքսանդրի կինն էր եղել և այդ ժամանակ գրավում էր հրեական թագավորությունը՝ մեծ դանձ տալով (Տիգրանին) այնտեղից ետ դարձրեց։ Որովհետև (Տիգրանը) լսել էր, թե Վայկունն[9] անունով մի ավազակ անհանգստացնում է Հայաստանը, գրավելով այն ամուր լեռը, որ մինչև այսօր էլ այդ ավազակի անունով կոչվում է Վայկունիք։

ԺԵ

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ՊՈՄՊԵՈՍ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԵԶ ՎՐԱ ԴԱԼԸ, ՄԱԺԱՔԸ ԴՐԱՎԵԼԸ ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՄԱՀԸ

Այն ժամանակ հռոմեացիների Պոմպեոս զորավարը մեծ զորքով գալիս հասնում է Միջերկրյա կողմերը և իր Սկավրոս սպա-

բապետին ուղարկում է Ասորիք՝ Տիգրանի հետ պատերազմելու։ Նա գալիս է, բայց չի հանդիպում Տիգրանին, որովհետև նա վերադարձել էր իր երկիրը ավազակի հարուցած խուճապի պատճառով։ Սկավրոսն անցնում է Դամասկոս և, տեսնելով, որ Մետեղը և Ղուղը քաղաքն առել են, նրանց հալածում է այնտեղից, ինքը շտապում է հասնել Հրեաստան Արիստաբուղի[10] վրա, իբրև օգնական նրա ավագ եղբոր Հյուրկանոս քահանայապետին[11], որ Աղեքսանդրի որդին էր։

Իսկ Պոմպեոսը Միհրդատի դեմ պատերազմելով՝ հանդիպում է սաստիկ դիմադրության և ահավոր կռիվների. նա մեծ վտանգի է ենթարկվում. սակայն բազմությունը հաղթում է, և Միհրդատը փախուստ է տալիս Պոնտոսի կողմերը։ Նրանից Պոմպեոսն ազատվելով՝ որն ինքը չէր սպասում, գրավում է Մաժաքը, բռնում է նրա որդուն՝ Միհրդատին, քաղաքում զորք է թողնում և առանց նրան հետամուտ լինելու՝ շտապում է Ասորիքով անցնել Հրեաստան։ Նա Պոնտացի Պիղատոսի հոր ձեռքով Միհրդատին սպանում է թունավոր դեղով։ Այս բանին վկայում է և Հովսեպոսը[12] բալասանին վերաբերող գլխում, ասելով. «Երիքովի մոտ Պոմպեոսին հասնում է Միհրդատի մահվան ավետավոր լուրը»։

ԺԶ

ՏԻԳՐԱՆԻ ՀԱՐՁԱԿՎԵԼԸ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ԶՈՐՔԵՐԻ ՎՐԱ. ԳԱԲԻԱՆՈՍԻ ՀՈՒՅՍ ՏԱԼԸ ԵՎ ՆԻՍԱՍԱՐԴ ՄԻՀՐԴԱՏԻՆ ԱՁԱՏԵԼԸ

Իսկ հայոց թագավոր Տիգրանը գերի հրեաներին տեղավորելով Արմավիրում և Վարդգեսի ավանում[13], որ գտնվում է Քասախ գետի վրա, ավազակներին լեռներից բնաջինջ անելով և Միհրդատի սուգը կատարելով՝ այնուհետև շարժվում գնում է Ասորիք, հռոմեացիների զորքերի դեմ վրեժ առնելու։ Նրա դեմ է գալիս Գաբիանոսը՝ հռոմեացիների զորքի սպարապետը[14], որին այնտեղ թողել էր Պոմպեոսը Հռոմ վերադառնալիս։ Գարիանոսը չի համարձակվում Տիգրանի հետ ընդհարվել և Եփրատի մոտից դառնում գնում է Եգիպտոս, պատճառ բերելով Պտղոմեոսին։ Եվ Տիգրանի հետ գաղտնի հաշտություն կնքելով ետ է տալիս Միհրդատի որդուն՝ պատանի Միհրդատին, որ Տիգրանի քեռորդին էր և որին բռնել էր Պոմպեոսը Մաժաքում, ասելով, թե գաղտնի փախավ։

ԺԷ

ԿՐԱՍՍՈՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՏԻԳՐԱՆԻՑ ՆՐԱ ՍՊԱՆՎԵԼԸ

Հռոմեացիները կասկածելով՝ Գաբիանոսին փոխում են և նրա տեղ ուղարկում են Կրասոսին։ Նա գալով գրավում է ամբողջ գանձերը, որոնք գտնվում էին Երուսաղեմում աստծո տաճարում, և հետո դիմում է Տիգրանի վրա։ Եփրատն անցնելով սպանվում է բոլոր զորքերի հետ Տիգրանի դեմ պատերազմելիս։ Տիգրանը նրա գանձերը հավաքելով վերադառնում է Հայաստան[15]։

ԺԸ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՍՍԻՈՍԸ ԴԻՄԱԴՐԵՑ ՏԻԳՐԱՆԻՆ, ԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ԱՊՍՏԱՄԲՎԵԼՆ ՈՒ ԿԵՍԱՐԻԱՆ ՇԻՆԵԼԸ

Հռոմեացիք զայրանալով ուղարկում են Կասսիոսին[16] անթիվ զորքերով։ Սա գալով՝ դիմադրում է Հայոց զորքերին և թույլ չի տալիս Եփրատն անցնել և ասպատակել Ասորիքը։

Այս ժամանակները Տիգրանի մեջ կասկած է ծագում պատանի Միհրդատի մասին, թե իր քեռորդին չէ, ուստի նրան ոչ մի իշխանություն չի տալիս, ոչ իսկ նրա երկիրը՝ Վրաստանը։ Միհրդատը արհամարանք կրելով իր քեռի Տիգրանից՝ ապստամբվում է ու ապավինում է Կեսարին[17], և նրանից Պերգե քաղաքի իշխանությունն ստանալով՝ նրա հրամանով օգնում և աջակցում է Հերովդեսի հորը, Անդիպատրոսին։ Սա Մաժաք քաղաքը շենացնում է ավելի ընդարձակ և պայծառ շինություններով և ի պատիվ Կեսարի այն կոչում է Կեսարիա։ Այս ժամանակից սկսած այդ քաղաքի վրայից վերանում է Հայոց իշխանությունը։

ԺԹ

ՏԻԳՐԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՊԱՂԵՍՏԻՆ ԱՍՊԱՏԱԿՈՂ ԶՈՐՔ ՈՒՂԱՐԿԵԼԸ. ՀՅՈՒՐԿԱՆՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԵՎ ԲԱԶՄԱԹԻՎ ՀՐԵԱՆԵՐԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ապա Տիգրանը Ադշունյաց նախարարության նահապետ Բարդափրանին[18] սպարապետ նշանակելով հայոց և պարսից զորքերին՝ ուղարկում է հռոմեացիների զորքերի դեմ և հրաման է

տալիս՝ Ասորիքի ու Պաղեստինի բնակիչներին հաշտության բերել և խաղաղեցնել։ Բարզափրանին ընդառաջ է գալիս մեկը Պակարոս[19] անունով, որի հայրը եղել էր ասորիների թագավոր, իսկ ինքը խնամի էր Անտիգոնոսին Արիստաբուղյան տոհմից։ Գալով Ռշտունյաց նահապետ և հայոց ու պարսից սպարապետ Բարզափրանի մոտ, խոստանում է հինգ հարյուր գեղեցիկ կին և հազար քանքար[20] ոսկի, եթե իրեն օգնի հրեաների Հյուրկանոսին թագավորությունից զրկելու և Անտիգոնոսին թագավորեցնելու։

Երբ հրեաների քահանայապետ ու թագավոր Հյուրկանոսը և Հերովդեսի եղբայր Փասայելը տեսան, որ Բարզափրանը հռոմեացիների զորքերին փախցրեց՝ ոմանց դեպի ծովը, ոմանց զանազան քաղաքներ, և ինքը խաղաղությամբ անցնում է երկրով, իրենք էլ նրա հետ բանակցում են խաղաղության համար։ Նա էլ Գնել անունով մեկին Գնունյաց ցեղից, որ հայոց թագավորի տակառապետն էր, հեծելազորքով ուղարկում է Երուսաղեմ՝ խաղաղություն կնքելու պատրվակով, բայց գաղտնապես՝ Անտիգոնոսին օգնելու նպատակով։ Հյուրկանոսը տակառապետին ներս չի ընդունում Երուսաղեմ բոլոր զորքերով, այլ միմիայն հինգ հարյուր հեծյալներով։ Եվ տակառապետը դավաճանորեն խորհուրդ է տալիս Հյուրկանոսին գնալ Բարզափրանի մոտ երկրի ավերմունքի մասին (խոսելու) և խոստանում է իր կողմից ևս բարեխոս լինել։ Հյուրկանոսը Բարզափրանից երդում է խնդրում, նա էլ երդվում է արեգակով, լուսնով և իրենց բոլոր երկնային պաշտելիքներով, նաև Արտաշեսի և Տիգրանի աևևով։ Այս բանին վստահանալով՝ Հյուրկանոսը թողնում է Հերովդեսին Երուսաղեմի վրա և իր հետ վերցնելով Հերովդեսի ավագ եղբորը՝ Փասայելոսին, գալիս է Բարզափրանի մոտ՝ ծովի ափը, Եքտիպոն կոչված գյուղը։

Բարզափրանը խորամանկությամբ նրանց պատվում է, բայց հանկարծ այդ տեղից մեկնելով, մնացած զորքին հրաման է տալիս նրանց բռնել և Անտիգոնոսի ձեռքը մատնել։ Եվ Անտիգոնոսը Հյուրկանոսի վրա ընկնելով՝ ատամներով կտրում է նրա ականջները, որպեսզի եթե հանգամանքները փոխվեն, նա այլևս անկարող լինի քահանայապետություն անել, որովհետև (հրեական) օրենքը պահանջում է, որ քահանա լինեն միայն ողջանդամները։

Իսկ Բարզափրանը հրաման տվեց հայոց թագավորի տակառապետ Գնելին, որ Երուսաղեմում Հերովդեսին որսա։ Գնելը ջանաց խաբեությամբ Հերովդեսին պարսպից դուրս բերել, բայց Հերովդեսը հանձն չառավ, միևնույն ժամանակ չվստահացավ քաղաքում ևս մնալ Անտիգոնյանների զատվելու պատճառով, այլ գիշերը ծածուկ ընտանիքով փախավ եդոմայեցիների մոտ, և ընտանիքը Մասադան ամրոցում թողնելով, ինքն շտապեց Հռոմ հասնել։ Բայց հայոց զորքը Անտիգոնյանների օժանդակությամբ Երուսաղեմ մտնելով՝ ոչ ոքի չվնասեցին, այլ միայն Հյուրկանոսի գույքերն առան, ավելի քան երեք հարյուր քանքար։ Եվ գավառն ապատակելով՝ Հյուրկանյաններին (հավատարիմ տեղերն) առան վերեցին. մարիսացիների քաղաքն էլ առնելով, այնտեղ թագավոր դրին Անտիգոնոսին։ Իսկ Հյուրկանոսին կապելով՝ գերիների հետ միասին բերին Տիգրանին, և Տիգրանը Բարզափրանին հրամայեց՝ մարիսացիների քաղաքից բերված հրեա գերիներին բնակեցնել Շամիրամի քաղաքում[21]։ Սրանից հետո Տիգրանն ապրելով ոչ ավելի քան երեք տարի, վախճանվում է, երեսուներեք տարի թագավորելուց հետո։

Ի

ՀԱՅՈՑ ՄԻ ԱՅԼ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ. ՍԻՂՈՆԻ ԵՎ ԲԵՆԴԻԴԻՈՍԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հերովդեսը Հռոմ անցնելով՝ Անտոնիոսի, Կեսարի և սինկլիտոսի[22] առաջ պատմում է իր հավատարմությունը հռոմեացիներին, և Անտոնիոսից Հրեաստանի թագավոր նշանակվելով՝ իրեն օգնական է վերցնում Բենդիդիոս սպարապետին հռոմեական զորքերով, որպեսզի հայոց հետ պատերազմի և Անտիգոնոսին տապալի։ Ասորիք հասնելով՝ նա փախուստի է մատնում հայոց զորքերը և Սիղոնին թողնելով, որ հայերին դիմադրի Եփրատի մոտ և Պակարոսին սպանելով, ինքը դառնում է Երուսաղեմ՝ Անտիգոնոսի դեմ։ Բայց հայերը նորից օգնություն ստանալով պարսիկներից՝ դիմում են Սիղոնի վրա և հալածում են նրան, շարտում Բենդիդիոսի մոտ, անչափ արյունահեղություններ անելով[23]։

ԻԱ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՆՏՈՆԻՈՍԸ ԱՆՁԱՄԲ ՀԱՅՈՑ ՋՈՐՔԵՐԻ ՎՐԱ ԴԻՄԵԼՈՎ ԴՐԱՎՈՒՄ Է ՇԱՄՇԱՏ ՔԱՂԱՔԸ

Անտոնիոսը զայրանալով ինքը անձամբ գալիս է հռոմեական բոլոր զորքերով։ Շամշատ[24] հասնելիս լսում է Տիգրանի մահը, քաղաքն առնելով, Սովսիոսին օգնական թողնելով Հերովդեսին՝ Երուսաղեմում Անտիգոնի դեմ կռվելու, ինքը ձմեռանոց է գնում Եգիպտոս։ Նա շտապում էր այնտեղ հասնել կնամոլ մարդու վավաշոտությամբ, վառված ցանկությամբ դեպի Կլեոպատրան՝ եգիպտացիների թագուհին։ Այս Կլեոպատրան Պտղոմեոս Դիոնիսի դուստրն էր, Պտղոմյան Կլեոպատրայի թոռը և շատ սիրելի էր Հերովդեսին. այս պատճառով էլ Անտոնիոսն առավելապես հանձնարարում էր Հերովդեսը Սովսիոսին։ Սա քաջապես կռվելով առնում է Երուսաղեմը, սպանում է Անտիգոնոսին և թագավորեցնում է Հերովդեսին ամբողջ Հրեաստանի և Գալիլիայի վրա[25]։

ԻԲ

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹԱԳԱՎՈՐՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵԼԸ

Հայաստանում թագավորում է Տիգրանի որդի Արտավազդը։ Սա իր եղբայրներին և քույրերին բնակեցնում է Աղիովիտ և Առբերանի գավառներում[26], նրանց ժառանգություն թողնելով այդ գավառներում գտնված արքունական գյուղերը, առանձին նկամուտով և ուտեստով, նման նրանց այն ազգականներին, որ գտնվում էին Հաշտյանքի[27] կողմում, (սահմանելով) որ նրանք ավելի պատվավոր և ավելի թագավորազն ճանաչվեն, քան այն մյուս Արշակունիները. միայն սահմանում է, որ նրանք չապրեն Այրարատում, թագավորի բնակության տեղում։

Բայց ուրիշ ոչ մի արիություն ու քաջագործություն ցույց չտրվեց, այլ անձնատուր լինելով կերուխումի, թափառում էր ճախճախուտ տեղերում, եղեգնուտներում, քարափներում, վայրի էշեր և խոզեր հետապնդելով. անփույթ լինելով ուսման, քաջության և բարի հիշատակների, միայն իր փորի ծառան և ստրուկը դառնալով՝ աղբանոցներն էր մեծացնում[28]։ Իր զորքերից պախարակվելով իր անգործ ծուլության և սաստիկ որկրամոլության պատճառով, մանավանդ որ Անտոնիոսը Միջագետքն առել էր նրանից, զայրացած հրամայում է զորքեր հանել՝ Ատրպատականի նահանդի բյուրավորներին, Կովկաս լեռան բնակիչներին աղվանների և վրացիների հետ, շարժվում գնում է Միջագետք և հալածում է հռոմեացիների զորքերը։

ԻԳ

ԱՆՏՈՆԻՈՍԻ ՁԵՐԲԱԿԱԼԸ ԱՐՏԱՎԱԶԴԻՆ

Առյուծի նման գազանաբար մոնչաց Անտոնիոսը, մանավանդ գրգռվելով Կլեոպատրայից, որ քեն էր պահում իր տատի կրած շարչարանքների համար Տիգրանից։ Ոչ միայն հայերին էր լինում մահաբեր, այլև ուրիշ շատ թագավորների, որպեսզի նրանց իշխանություններին տիրի։ Ուստի և Անտոնիոսը շատ թագավորներ սպանելով, նրանց իշխանությունները վստահում էր Կլեոպատրային, բացի Տյուրոսից և Սիդոնից և առհասարակ բացի նրանցից, որոնք Ազատ գետի մոտերքն էին։ Վերցնելով զորքերի բազմությունը՝ դիմում է Արտավազդի վրա. Միջագետքով անցնելով՝ սաստկապես կոտորում է հայոց զորքերը, ձերբակալում է նրանց թագավորին և Եգիպտոս վերադառնալով՝ Կլեոպատրային է պարգևում Տիգրանի որդի Արտավազդին, նաև ուրիշ շատ իրեր պատերազմի ավարից։

1. Խորենացու արքայացանկի համաձայն, Տիգրան II-ը որդին է Արտաշեսի, մինչդեռ, ըստ Ապպիանոսի, Տիգրան II-ի հոր անունը ևս Տիգրան է եղել (Տիգրան I)։

2. Դերադասելի են Խորենացու «Հայոց պատմության» ձեռագրերի այն տարընթերցվածքները, որտեղ խոսքը Արշականի հաջորդ Արշանակի և նրա 19-րդ տարվա մասին է։ Հաշիվը, սակայն, չի փոխվում՝ Արշականի իշխած 30 տարիներին գումարվում է 19 տարի և ստացվում 49։

3. Խորենացին այստեղ նկատի ունի Սելևկյաններին։

4. Միհրդատ— Խորենացին նկատի ունի Միհրդատ Եվպատորին, սակայն, նախ՝ նախ կարծում է, թե Միհրդատը Տիգրանի քրոջ ամուսինն էր, մինչդեռ, ինչպես հայտնի է, Տիգրանը Միհրդատի դստեր՝ Կլեոպատրայի ամուսինն էր։

5. Մաժաք (Կեսարիա Կապադովկիոյ)— Կապադովկիայի մայրաքաղաքն է, այժմ՝ Ղայսերի։

6. Միջերկրյա— այսպես էին կոչվում Փոքր Ասիայի երկրները հայ մատենագրության մեջ։

7. Պաղոմյան Կլեոպատրա— խոսքը Սելևկյան թագուհի, Եգիպտոսի Պտղոմեոս VIII թագավորի դստեր՝ Կլեոպատրա-Սելենեի մասին է։

8. Խորենացին նկատի ունի Հրեաստանի Ալեքսանդրա-Սոլոմեա թագուհուն (76—67)։

9. Հ. Մանանդյանը ենթադրում է, որ այս «վայկուն անունով ավազակը», որը վրդովել էր հայոց խաղաղությունը և դրանով իսկ ստիպել էր Տիգրան Երկրորդին վերադառնալ Պաղոմայիս (Պտղոմայիդ) քաղաքից Հայաստան, նույն հռոմեական զորավար Լուկուլլոսն էր։

10. Արիստաբուղ— Հրեաստանի թագավոր Արիստոբուլոսն է (67—63), որին գահընկեց արեցին հռոմեացիները։

11. Հյուրկանոս— Հրեաստանի քահանայապետ ու թագավոր Հյուրկանոս II-ն է (63—40), Արիստոբուլոս II-ի ավագ եղբայրը։

12. Այս իրադարձությունների նկարագրության համար Խորենացին որպես աղբյուր օգտագործել է հրեա նշանավոր մատենագիր Հովսեպոս Փլավիոսի աշխատությունները։ Շատ դեպքերում, անշուշտ կամ էական ճշգրտումներով ու փոփոխություններով, Խորենացին կրկնում է Հովսեպոսին (տե՛ս Հովսեպոս Փլավիոս, Հրեական պատերազմի մասին, գիրք I, էջ 35 և այլն)։

13. Վարդգեսավան— քաղաք Արարատյան դաշտավայրում, ապագա Վաղարշապատ քաղաքի տեղում։

14. Խոսքը հռոմեական զորավար, պետական գործիչ, 67 թ. ժողովրդական տրիբուն, 58 թ. կոնսուլ Գաբինիոսի մասին է, որին Պոմպեոսը թողել էր Արևելքում որպես իր փոխանորդը։

15. Այստեղ ակնհայտ շփոթմունք է, քանզի Կրասոսի գործունեությունն Արևելքում աղերսվում է ոչ թե Տիգրան II-ի, այլ վերջինիս որդու՝ Արտավազդ II-ի հետ։ Բացի այդ, Կրասոսը պարտություն է կրել ու սպանվել ճակատամարտում ոչ թե հայերից, այլ պարթևներից։

16. Կասսիոս— խոսքը վերաբերում է Կրասոսի բանակի քվեստոր Գայոս Կասսիոս Լոնգինոսին, որը, Կրասոսի պարտությունից հետո, դարձավ Արևելքում հռոմեական զորքերի հրամանատար։

17. Նկատի ունի հռոմեական ականավոր պետական ու ռազմական գործիչ Գայոս Հուլիոս Կեսարին (100—44)։

18. Բարզափառան— Հովսեպոսի մոտ հիշատակված է Բարզափռանես ձևով, և այն էլ ոչ թե որպես Հայոց սպարապետ ու Ռշտունյաց տոհմի նահապետ, այլ պարթևների զորավար և ատրպատ Խորենացու սույն հաղորդումից կարելի է եզրակացնել, որ մ. թ. ա. 40 թ. դեպի Ասորիք պարթևների կազմակերպած այս արշավանքին մասնակցել են նաև հայկական զորամասերը։

19. Այստեղ ևս շփոթմունք է. Պակարոսը (Բակուր) ոչ թե Ասորիքի թագաժառանգն էր, այլ Պարթևստանի։

20. Այսինքն՝ հազար տաղանդ։

21. Նկատի ունի Վան քաղաքը։ Խորենացու սույն վկայությունները Տիգրան Միհրնի գործունեության մասին, կարիք ունեն ճշգրտման։ Հայ-պարթևական զոր-

քերի ատրպատականյան այս արշավանքը, հրեաների գերեվարությունը Հայաստան և այլն, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, կատարվել են Արտավազդ II-ի օրոք։ Խորենացու մոտ Արտավազդ II-ը փոխարինվել է Տիգրան II-ով, որը բացատրվում է Տիգրանի փառքով և կատարած գերեվարություններով։

22. Սինկլիտոս— հունարեն բառ է, որը նշանակում է համաժողով։ Այստեղ Խորենացին նկատի ունի հռոմեական ծերակույտը (սենատ)։

23. Այս իրադարձությունները տեղի են ունեցել մ. թ. ա. 39 թվականին։

24. Նամշատ— Կոմմագենեի թագավորության մայրաքաղաքն էր։

25. Հրեաստանի թագավոր Անտիգոնոսը սպանվեց մ. թ. ա. 37 թվականին, նույն թվականին էլ, հռոմեացիների օգնությամբ, Հրեաստանի թագավոր ու քահանայապետ հռչակվեց Հերովդես I Մեծը (37—4)։

26. Աղիովիտը գավառ է Տուրուբերանում՝ վանա լճի հյուսիսային ելքերում, իսկ Առբերանը՝ Վասպուրականում, Վանա լճի հյուսիսարևելյան մասում։

27. Հաշտությանը Չորրորդ Հայքի գավառներից մեկն էր։

28. Արտավազդ II-ի սույն նկարագիրը, որը տալիս է Խորենացին, չի համապատասխանում պատմական իրականությանը։ Հունա-հռոմեական աղբյուրներից մենք գիտենք, որ Արտավազդը եղել է իր ժամանակի ամենաուսյալ և գիտուն անձնավորություններից մեկը, նա հմուտ դիվանագետ էր ու խոշոր ռազմական գործիչ։

ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԸՍՏ ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք հիսունչորսերորդ

9,1 Օգոստոսը[1] հպատակ երկրները կառավարում էր հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից (երկրներին) թույլ էր տալիս կառավարվել իրենց հայրենի օրենքների և վանդությունների համաձայն։ Եվ նա նպատակահարմար չէր գտնում ոչ այս մեկին որևէ բան ավելացնել, ոչ իսկ թույլ տալ որևէ նոր բան տիրանալու, այլ ճշտորեն բավարարվել եղածով։

4 Իսկ քանի որ մյուս հայերը[2] մեղադրում էին Արտաշեսին[3] և (դեսպանություն ուղարկելով) խնդրում էին Հռոմում գտնվող նրա Տիգրան եղբորը[4], ապա Օգոստոսն ուղարկեց Տիբերիոսին[5], որպեսզի (Արտաշեսին) հեռացնի թագավորու-

5 թյունից և (Տիգրանին) հաստատի գահի վրա։ Սակայն (Տի-

բերիոսն) այս պատրաստություններին համապատասխան ոչինչ չկատարեց, քանզի հայերն իրենք արդեն սպանել էին Արտաշեսին[6]։ Իսկ Տիբերիոսը խիստ մեծարվեց, մանավանդ որ այս բոլորի առթիվ որոշվեց զոհաբերություններ կատարել, կարծես թե քաջարիություն էր ցուցաբերել։

Գիրք հիսունհինգերորդ

10a,4 Այսուհանդերձ պարթևների դեմ պատերազմ չսկսվեց. քանզի Փրատակեսը[7] լսելով, որ Գայոսը[8] Սիրիայում է գտնվում իբրև կոնսուլ, միաժամանակ կասկածելով, որ իր երկրում ևս իրավիճակը առաջվա պես դարձյալ անբարենպաստ

Նկար 17. Տիգրան IV-ի և էրատոյի պղնձե դրամը (մ. թ. ա. 2 թ.)։ Մորագիրը՝ «Արքայից արքայի Տիգրանի» և «էրատո. արքայի Տիգրանի քույրը»

էր, շտապեց համաձայնության գալ (հռոմեացիների հետ) այն պայմանով, որ ինքը կհեռանա Հայաստանից և իր եղ-
5 բայրները կմնան ծովից այն կողմ[9]։ Սակայն հայերը, քանի որ Տիգրանը[10] բարբարոսների[11] դեմ մղած ինչ-որ պատերազմի ժամանակ սպանվել էր, իսկ էրատոն[12] էլ հրաժարվել էր իշխանությունից, պատերազմի ելան հռոմեացիների դեմ, որովհետև նրանց (վրա իշխանությունը) հանձնել էին ոմն մեդացի Արիոբարզանեսի[13], որը մի ժամանակ Տիրիդատեսի[14] հետ եկել էր հռոմեացիների մոտ. այս դեպքերը կատարվեցին հաջորդ տարին[15], երբ կոնսուլներ էին Պուբլիոս

6 Վինիկիոսը և Պուբլիոս Վարոսը։ Ու թեպետ հայերը նշանակալից որևէ գործ չկատարեցին, բայց ոմն Ադդոն, որը տիրում էր Արտագերսին[16], համոզեց Գայոսին ընդհուպ մոտենալ պարիսպներին և խոցեց նրան[17]. այս պատճառով էլ
7 (Արտագերսը) պաշարման ենթարկվեց ու երկար դիմադրեց։ Բայց երբ վերջապես այն վերցվեց, ոչ միայն Օգոստոսը, այլև Գայոսը նույնպես ստացել էր իմպերատորի տիտղոս և Հայաստանն այնժամ Օգոստոսի և սենատի կողմից ստացավ Արիոբարզանեսը և ոչ շատ ժամանակ անց նրա մահից հետո՝ նրա որդի Արտավազդը[18]։ Այսպես, Գայոսը վերքի պատճառով թուլացավ և քանի որ ոչ մի կերպ չէր առողջանում, սկսեց բանականությունը կորցնել և առավել ևս բթամըտացավ։

1. Խոսքը վերաբերում է Հռոմի առաջին կայսր Գայոս Օկտավիանոս Օգոստոսին (մ. թ. ա. 27 թ.— մ. թ. 14 թ.)։

2. «Մյուս հայերը»— սրանք Հայաստանում հռոմեասեր հոսանքի ներկայացուցիչ հայ մեծամեծներն էին։

3. Արտաշես— Արտավազդ II-ի ավագ որդին է, Հայաստանի թագավոր Արտաշես II-ը (30—20), որն իր հոր նենգադավ ձերբակալությունից հետո գլխավորեց հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ հռոմեացիների։ Սա Արտավազդ II-ի եղերական սպանության վրեժը լուծում է սրի քաշելով Հայաստանում մնացած բոլոր հռոմեացիներին։

4. Տիգրանը Արտաշես II-ի կրտսեր եղբայրն է. Անտոնիոսը նրան գերեվարել էր Եգիպտոս, որտեղից Օկտավիանոսը փոխադրեց Հռոմ, ուր տասը տարի մնալուց հետո ուղարկվեց Հայաստան՝ Արտաշես II-ի թափուր գահը զբաղեցնելու։ Հայաստանի թագավոր Տիգրան III-ն է (20—6)։

5. Տիբերիոսը Օգոստոս կայսեր որդեգիրն էր, նրա ամենամերձավոր խորհրդականը Արևելքի հարցերում։ Սա է, որ Հայաստանում գահ բարձրացրեց Հռոմի դրածո Տիգրան III-ին։ Հետագայում՝ Հռոմի կայսր (14—37)։

6. Ուսումնասիրողներից շատերը ենթադրում են, որ Արտաշես II-ը սպանվել է անձամբ Օգոստոս կայսեր դրդմամբ։

7. Փրատակես— պարթևական Հրահատ V (Հրահատակ) թագավորն է (մ. թ. ա. 2— մ. թ. 4 թթ.)։

8. Գայոս Կեսար— հռոմեական զորավար, Օգոստոս կայսեր թոռն ու որդեգիրը։ Մ. թ. 1 թ. Օգոստոսի կողմից ուղարկվեց Արևելք։ Հռոմեական զենքի ուժով ճնշեց մ. թ. ա. 2 թ. հայ ժողովրդի բարձրացրած ապստամբությունը։

9. «Ծովից այն կողմ» ասելով՝ Հրահատ V-ը նկատի ուներ Հռոմը։

10. Սա Հայաստանի թագավոր Տիգրան III-ի որդին էր՝ «արքայից արքա» Տիգրան IV-ը (8—5, մ. թ. ա. 2— մ. թ. 1 թթ.)։

11. Խոսքը կովկասյան լեռնաբնակների մասին է, որոնք մ. թ. 1 թ. ապստամբում էին Հայաստանի հյուսիսարևելյան մասում։

12. Էրատո— թագուհի Մեծ Հայքի (8—5, 2—1, 6—11), Հայոց թագավոր Տիգրան III-ի դուստրը և Տիգրան IV-ի խորթ քույրը, վերջինիս գահակիցն ու կինը, Արտաշեսյան հարստության վերջին ներկայացուցիչը։

13. Արիոբարզանես— սա Ատրպատականի թագավոր Արտավազդի որդին էր, որին մ. թ. 2 թ. Գայոս Կեսարը հռչակեց Մեծ Հայքի թագավոր (2—4)՝ նպատակ ունենալով Մեծ Հայքի թագավորությունը ձուլել Ատրպատականի թագավորության հետ։

14. Տիրիդատես— Տրդատ անվան հունականացված ձևն է։

15. Այսինքն՝ մ. թ. 2 թվականին։

16. Սա հռչակավոր Արտագերս ամրոցն է, որը գտնվում էր պատմական Հայաստանի Արշարունյաց գավառում։

17. Ադդոնը (ըստ Երևույթին՝ Ատոմ) Գայոս Կեսարին դաշույնով ծանր վիրավորեց 2 թ. սեպտեմբերի 9-ին։

18. Մեծ Հայքի և Ատրպատականի թագավոր Արիոբարզանի որդին է, որը հոր մահից հետո, Օգոստոս կայսրի կողմից հռչակվեց Մեծ Հայքի ու Ատրպատականի թագավոր։ Հայոց Արտավազդ IV թագավորն է (4—6)։ Հայերը չճանաչեցին սրա իշխանությունը և, ապստամբելով, սպանեցին (6 թ.)։

«ԱՆԿՅՈՒՐԱՅԻ ԿՈԹՈՂԸ» ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մ. թ. ա. I դարի վերջերի Հայաստանի հաղաքական պատմության, ինչպես նաև հայ-հռոմեական հարաբերությունների մասին կարևոր ազբյուր է «Ասիվածային Օգոստոսի գործերը» վերտառությամբ հայտնի արձանագրությունը: Սա, փաստորեն, Օգոստոս կայսեր կյանք-հաշվետվությունն է իր կատարած գործերի վերաբերյալ: Հաշվետվության 35 գլուխներից յուրաքանչյուրում թվարկված են Օգոստոսի ծառայությունները Հռոմի հանդեպ, վեր են հանված նրա ներքին ու արտաքին հաղաքականության բոլոր էական կողմերը: Հաշվետվությունը, որը կազմել է ինքը՝ Օգոստոսը, կայսեր կյանքի համաձայն գետեղվել է Հռոմում գտնվող նրա դամբարանի մուտքի մոտ: Չնայած այդ արձանագրությունն ամբողջովին հայտնաբերված չէ, սակայն գիտությանը հայտնի են նույն կյանքի երեք պատճենները, որոնցից առավել ամբողջական է դեռևս 1555 թ. Անկարայում հայտնաբերված արձանագրությունը:

Հունարեն և լատիներեն լեզուներով գրված այդ արձանագրությունը փորագրված է եղել Օգոստոս կայսեր տաճարի պատերից մեկի վրա: Դա է պատճառը, որ այս արձանագրության ուսումնասիրության և հրատարակման գործում (1865 և 1883 թթ.) նշանակալից ավանդ ունի գերմանացի պատմաբան Թ. Մոմզենը: «Անկյուրայի կոթողից» ստորև բերված հատվածը տալիս ենք ըստ Հ. Հ. Մանանդյանի թարգմանության, որը կատարված է Մոմզենի աշխատասիրած վերջին հրատարակությունից [տե՛ս «Res gectae divi Augusti» (Monumentum Ancyranum), ed. Th. Mommsen, Berlin, 1883]:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ ԳՈՐԾԵՐԸ, V

25—32. Մեծ Հայաստանը թեև ես կարող էի նրա Արտաշես թագավորի[1] սպանությունից հետո դարձնել նահանգ, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիների օրինակին՝ այդ թագավորությունը տալ Տիգրանին[2], որն Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը, հանձնարարելով այդ Տիբերիոս Ներոնին[3], որն այն ժամանակ իմ որդեգիրն էր:

Այնուհետև, երբ այդ ժողովուրդն ընդվզեց և ապստամբեց՝ նրան նվաճեցի իմ որդու՝ Գայոսի[4] ձեռքով և թագավորական գահը տվեցի Արիոբարզանին[5] մեդացիների Արտավազդ թագավորի որդուն, որպեսզի նա երկիրը կառավարի, իսկ սրա մահից հետո, նրա որդուն՝ Արտավազդին[6]: Երբ սա սպանվեց՝ ուղարկեցի այդ թագավորությունը Տիգրանին, որը Հայոց արքունի տոհմից էր[7]:

1. Խոսքը Արտավազդ II թագավորի ավագ որդու՝ Հայոց թագավոր Արտաշես II-ի մասին է։

2. Սա Հայոց թագավոր Տիգրան III-ն էր, Արտաշես II-ի կրտսեր եղբայրը (տե՛ս 309-րդ էջ, № 4 ծան.)։

3. Օգոստոսը նկատի ունի իր խորթ որդուն՝ Տիբերիոս Կլավդիոս Ներոնին, որի մայրը՝ Լիվիա Դրուզիլլան մ. թ. ա. 30 թվականին ամուսնացել էր Օգոստոսի հետ։ Մ. թ. 4 թ. Օգոստոսը սրան հռչակեց ժառանգորդ և վերանվանակոչեց՝ Տիբերիոս Հուլիոս Կեսար։ Տիբերիոսը Օգոստոսի մահից հետո հռչակվեց կայսր։

4. Գայոս Կեսար— սա Օգոստոսի թոռն էր՝ նրա դստեր Յուլիայի և հայր-

նի զորավար Մարկոս Վիպսանիոս Ագրիպպայի որդին։ Ծնվելուց անմիջապես հետո (մ. թ. ա. 20 թ.) Օգոստոսը սրան որդեգրեց և հռչակեց ժառանգորդ։ Սակայն Գայոս Կեսարի վաղաժամ մահից հետո (տե՛ս 310-րդ էջ, № 17 ծան.), Օգոստոսը որդեգրեց Տիբերիոսին։

5. Արիոբարզան— Մեծ Հայքի թագավոր (2—4), հռոմեական դրածո, Անտոնիոսի բարեկամ Ատրպատականի թագավոր Արտավազդի որդին։

6. Սա Հայոց Արտավազդ IV թագավորն է (4—6), հռոմեական դրածո։ Հայերը չճանաչեցին Արտավազդ IV-ի իշխանությունը և ապստամբելով՝ սպանեցին Նրան։

7. Այստեղ խոսքը Հրեաստանի Հերովդես I թագավորի թոռան՝ Տիգրանի մասին է։ Այս Տիգրանը իգական գծով Արտաշեսյան շառավիղ էր. նրա մայրը՝ Գլափյուրան դուստրն էր Կապադովկիայի Արքելաոս թագավորի և Արտաշեսյան արքայադստեր։ Հռոմեական դրածո Տիգրան V-ը Հայաստանում իշխեց ընդամենը մեկ տարի (մ. թ. 6 թ.), հայերը սրան ևս գահընկեց արեցին։

ՏԻԳՐԱՆ V-Ը ԵՎ ՏԻԳՐԱՆ VI-Ը ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ ԸՍՏ ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍԻ

ՀՐԵԱԿԱՆ ՀՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիրք տասնութերորդ

139 Իսկ Ալեքսանդրը՝ Հերովդես թագավորի[1] որդին, որն իր հոր ձեռքով սպանվել էր, ունեցել էր երկու որդի՝ Ալեքսանդրին և Տիգրանին՝ Կապադովկիայի թագավոր Արքելաոսի[2] դստերից[3]։ Եվ Տիգրանը, որը թագավորում էր Հայաստանում[4], անզավակ մեռավ այն բանից հետո, երբ ամբաստանվելով տարվեց Հռոմ։ Իսկ Ալեքսանդրը ունեցավ իր եղբոր անվանակից որդի՝ Տիգրանին, որը հետագայում Ներոնի[5] կողմից ուղարկվեց որպես Հայաստանի թագավոր[6]. այս Տիգրանն էլ ունեցավ Ալեքսանդր անունով որդի։

1. Հերովդես— Հրեաստանի թագավոր Հերովդես I Մեծն է։
2. Արքելաոս— Կապադովկիայի թագավոր (36—17)։
3. Հովսեփոսը մեկ այլ տեղ («Հրեական պատերազմի մասին», գիրք I, 552) հիշատակում է Արքելաոսի դստեր անունը՝ Գլափյուրա։ Ուսումնասիրողներն իրավացիորեն նշում են, որ սույն Գլափյուրայի մայրը եղել է Արտաշեսյան տոհմի հայ թագավորի դուստր։

4. Սա Մեծ Հայքի թագավոր Տիգրան V-ն է, որը գահ բարձրացավ Օգոստոս Կայսեր բուլլավությամբ։ Իգական գծով Արտաշեսյան շառավիղ էր։
5. Խոսքը Հռոմեական կայսր Ներոնի (54—68) մասին է։
6. Տիգրան— Ներոն կայսր դրածոն հայկական գահի վրա՝ «Մեծ թագավոր Հայոց Մեծաց» Տիգրան VI (60—61)։

ՎՈՆՈՆ ԱՐՇԱԿՈՒՆԻՆ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐ ԸՍՏ ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍԻ

ՀՐԵԱԿԱՆ ՀՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գիրք տասնութերորդ

48 (Պարթևները) հրավիրում են թագավորելու Մեդիայի (թագավոր) Արտաբանոսին[1] Արշակունի տոհմից։ Իսկ Արտաբանոսը հավանություն է տալիս ու գալիս է իր զորքի հետ։ Վոնոնեսը[2] դուրս է գալիս նրան դիմագրավելու։ Եվ սկզբում, քանի դեռ պարթևների մեծամասնությունը իրեն համամիտ էր, կռիվ մղելով, նա հաղթում է, իսկ Արտաբա-
49 նոսը փախչում է դեպի Մեդիայի սահմանները։ Բայց շատ չանցած (Արտաբանոսը), համախմբելով իր զորքերը, հարձակվում է Վոնոնեսի վրա և հաղթում նրան, իսկ Վոնոնեսը հեծյալ փախչում է իր փոքրաթիվ մերձավորների հետ Սելևկիա[3]։ Եվ Արտաբանոսը, որը բարբարոսներին ահաբեկելու նպատակով ճանապարհին մեծ ջարդեր գործեց, իր բազմու-
50 թյամբ մեկնում է Կտեսիփոն[4]։ Եվ Արտաբանոսը թագավորում է պարթևների մոտ[5], մինչդեռ Վոնոնեսը ապաստան է գտնում Հայաստանում։ Սկզբում սա փորձեց տիրել երկրին[6] և դեսպանություն ուղարկեց հռոմեացիների մոտ։ Սակայն
51 Տիբերիոսը[7] նրա խնդրանքը մերժեց, նրա փոքրոգության, ինչպես նաև պարթևական (թագավորի) սպառնալիքների պատճառով, քանի որ (Արտաբանոսը) դեսպանություն ուղարկելով, սպառնացել էր պատերազմ սկսել։ Մինչդեռ Վոնոնեսը թագավոր դառնալու ոչ մի այլ հնարավորություն չուներ, քանի որ Նպատի[8] շուրջ բնակվող հայ մեծամեծները հարել էին Արտաբանոսին, որոնք և Վոնոնեսին հանձնեցին
52 Սիրիայի տարատեգոս Սիլանոսին[9]։ Եվ (Վոնոնեսը), հանուն

Հռոմում իր ստացած դաստիարակության, ապաստան գըտավ Սիրիայում. իսկ Հայաստանը Արտաբանոսը տվեց իր որդիներից մեկին՝ Օրոդեսին[10]։

1. Հովսեպոսը չփոթում է. Արտաբանոս-Արտավանը մինչև Պարթևաց թագավոր դառնալը Մեդիայի թագավոր չէր, այլ եկել է Վրկանից աշխարհի և կըրմանի կառավարիչ։

2. Վոնոնես (Վոնոն)— Պարթևաց Հրահատ IV թագավորի ավագ որդին է, որն իր դաստիարակությունն ստացել էր Հռոմում։ Օգոստոս կայսեր կողմից նշանակվել էր Պարթևստանի թագավոր (7—12)։

3. Սելևկիա քաղաքը կառուցվել է մ. թ. ա. IV դարի վերջին Սելևկոս Նիկատորի կողմից՝ Տիգրիսի աջ ափին, այժմյան Բաղդադից փոքր-ինչ հարավ։

4. Կտեսիփոն— պարթև Արշակունիների գահանիստ կենտրոններից մեկը, հետագայում՝ Սասանյան Պարսկաստանի մայրաքաղաքը։ Հայկական աղբյուրներում հայտնի է առավելապես Տիզբոն անունով։ Գտնվում է Տիգրիսի ափին՝ Սելևկիայի մոտ։

5. Արտավան III— Պարթևստանի արքայից արքա (12—38)։ Պարսկաստանում հիմնադրել է Արշակունյաց հարստության կրտսեր ճյուղը։

6. Փախչելով Հայաստան՝ Վոնոնը օգտվելով երկրի խառնակ ու շփոթ վիճակից, իրեն հռչակում է Մեծ Հայքի թագավոր (12—16)։ Սակայն և՛ Հռոմը, և՛ Պարսկաստանը չճանաչեցին նրա թագավորությունը։

7. Խոսքը վերաբերում է հռոմեական կայսր Տիբերիոս Կլավդիոս Ներոնին։

8. Բնագրում՝ Նիփատես։

9. Սիլանոս— հռոմեական Սիրիա-Ասորիք պրովինցիայի կուսակալ Կրետիկոս Սիլանոսն է։ Հայաստանից վտարվելուց հետո, Վոնոնը բնակվում էր կուսակալության կենտրոն Անտիոքում՝ Սիլանոսի խիստ հսկողության ներքո։

10. Օրոդեսն այնպես էլ Հայաստանում գահ չբարձրացավ։ Հայ մեծամեծները գերազանցեցին պոնտական թագավորազն Զենոնին, որը 18 թ. Տիբերիոսի հրամանագրով՝ Գերմանիկոսի ձեռքով Արտաշատում թագադրվեց Մեծ Հայքի թագավոր։

ՊԱՐԹԵՎԱ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Մ. Թ. I ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ) ԸՍՏ ԳԱՅՈՍ ԿՈՐՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ

Գայոս Կոռնելիոս Տակիտոսը կայսերական ժամանակաշրջանի Հռոմի ամենանշանավոր պատմագիրն է: Նա ծնվել է մոտավորապես 55—57 թթ., ևեծյալի ընտանիքում: Ստացել է ևուճական դասական կրթություն, սովորել է Հռոմում նշանավոր Քվինտիլիանոսի ճարտասանական դպրոցում: Հետագայում նա դարձել է ճանաչված հռետոր և աշխի ընկնող պետական գործիչ (81 թ.՝ ֆվետոռ,

88 թ.՝ պրետոր, 97 թ.՝ կոնսուլ, 112 թ.՝ Ասիա պրովինցիայի պրոկոնսուլ):

Քաղաքական գործունեությանը զուգընթաց Տակիտոսը զբաղվում է նաև գրականությամբ: Նրա առաջին գրական երկը նվիրված էր իր աներոջ մանվանը և կոչվում էր «Հուլիոս Ագրիկոլայի կյանքի ու բարի մասին» (98 թ.): Տակիտոսի գրչին են պատկանում նաև «Գերմանացոզովրդի ծագման և Գերմանիայի տեղադրման մասին» (98 թ.), «Տրամախոսություն հռետորների մասին» (102—103 թթ.), «Պատմություն» (ավարտել է 110 թ.) երկասիրությունները: Տակիտոսի սեղծագործությունների գլուխգործոցը

մնում է նրա հռչակավոր «Տարեգրություններ»: Աշխատությունը բաղկացած է եղել 16 գրքից, որոնցից պահպանվել են միայն 1—4, 12—16 գրքերը և հատվածներ 5-րդ, 6-րդ և 11-րդ գրքերից: «Տարեգրությունների» վրա հեղինակը աշխատել է մինչև իր կյանքի վերջը (մոտավորապես 125 թ.):

Լինելով սենատական արիստոկրատիայի ներկայացուցիչն ու գաղափարախոսը՝ Տակիտոսն իր երկերը շարադրել է Հռոմի զավթողական հաղթականության ջատագովի տեսանկյունից: Ձնայած այս հանգամանքին, անգնահատելի նշանակություն ունեն Տակիտոսի համապատասխան վկայությունները Հայաստանի և հայերի մասին: Դրանք մեր ժողովրդի այդ ժամանակաշրջանի պատմության կարևորագույն աղբյուրներն են և որոշակիորեն լույս են սփռում I դարի հայ ժողովրդի պատմության շատ հարցերի վրա:

Տակիտոսից ստորև բերված հատվածները, անհրաժեշտ ուղղագրական սրբագրումներով, քաղել ենք Պ. Սոսեիկյանի թարգմանությունից *(Կ. Տակիտոս*, Երևան, 1941):

ԳԱՅՈՍ ԿՈՐՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք երկրորդ

Գլուխ 1. *Սիսեննա Ստատիլիոս (Տավրոսի) և Լուկիոս Լիբոնի կոնսուլության[1] ժամանակ Արևելքի պետությունները և Հռոմի պրովինցիաները[2] խռովության մեջ էին. դա սկսվում է պարթևների*

մոտ, որոնք Հռոմից խնդրած և ստացած թագավորին, թեպետև Արշակունիների տոհմից էր նա, իբրև օտարի՝ արհամարհանքով մերժում են։ Դա Վոնոնն[3] էր, որը Փրաատի[4] (Հրահատի) կողմից տրված էր Ավգուստոսին[5] իբրև պատանդ։ Չէ՞ որ Փրաատը, թեպետև հռոմեական զորքը և առաջնորդներին դուրս էր քշել[6], դեպի Ավգուստոսը ցույց էր տալիս հարգանքի բոլոր նշանները և իր բարեկամությունն ամրապնդելու նպատակով ուղարկել էր իր զավակների մի մասը Հռոմ, ոչ այնքան մեղնից վախենալու պատճառով, որքան համերկրացիների հավատարմությանը չվստահելու հետևանքով։

Գլուխ 2. Փրաատի և սրան հաջորդող թագավորների[7] վախճանից հետո, ներքին արյունահեղությունների պատճառով պարթևների առաջավոր տոհմիկների կողմից Հռոմ եկան պատգամավորներ, որպեսզի նրա որդիներից երիցագույնին՝ Վոնոնին հրավիրեն։ Կայսրն[8] իր համար այդ բանը պատվաբեր համարեց ու շուք և ուժ տվեց նրան։ Եվ բարբարոսներն ընդունեցին նրան այն ուրախությամբ, որով համարյա միշտ ընդունում են նոր իշխանավորին։ Շուտով նրանց միրեց ամոթը. ասում էին, թե պարթևներն այլասերվել են, ուրիշ երկրից, թշնամիների սովորույթներով վարակված՝ թագավոր են խնդրել. Արշակունիների գահը հռոմեացիների պրովինցիաների մեջ է մտնում և իբրև պարգև է տրվում։

Ո՞ւր է Կրասոսին խողխողողների և Անտոնիոսին դուրս քշողների փառքը, եթե պարթևներին պիտի միրի կայսեր այն ստրուկը, որ այնքան տարիներ ստրկությունը համառաբար տարել է։

Գլուխ 3. Այդպիսով հրավիրվում է Արտաբանը[9] (Արտավանը), արյունով[10] Արշակունի, մեծացած Դահաս[11] ժողովրդի մոտ, հենց առաջին իսկ բախման մեջ պարտվում ու հետո ուժեր է պատրաստում և տիրանում թագավորությանը։ Պարտված Վոնոնի համար Հայաստանն ապաստարան ծառայեց[12], այն Հայաստանը, որի գահը այդ ժամանակ թափուր էր[13] և որը, գտնվելով պարթևների և հռոմեացիների ուժերի միջև, անհավատարիմ էր Անտոնիոսի ոճրագործության պատճառով[14], Անտոնիոսի, որը Հայաստանի թագավոր Արտավազդին, գրավելով բարեկամության անվան տակ, հետո շղթայել ու սպանել էր։ Սրա որդի Արտաքսիասը (Արտաշեսը)[15] իր հոր հետ կապված հիշողության պատճառով՝ մեզ թշնամացած էր. նա պաշտպանեց թե՛ իր անձը և թե՛ պետությունն Արշակունիների ուժով։ Մերձավորների նենգությամբ կատարված Արտաքսիասի սպանությունից հետո, Հայաստանին կայսեր կողմից տրվեց Տիգրանը[16], որին Տիբերիոս Ներոնի[17] շնորհիվ ուղեկցեցին դեպի իր թագավորությունը։ Ո՛չ Տիգրանի, ո՛չ էլ սրա որդիների տիրապետությունը երկարատև չէր, թեպետ վերջիններն, ըստ օտար (ոչ-հռոմեական) սովորության, ամուսնացել էին միասին թագավորելու նպատակով[18]։

Գլուխ 4. Հետո Ավգուստոսի հրամանով Արտավազդը[19] գահ բարձրացավ և տապալվեց ոչ առանց կորուստ պատճառելու մեզ։ Այդ ժամանակ Հայաստանը խաղաղեցնելու համար՝ ընտրվում է Գայոս Կեսարը[20]։ Սա ծագումով մեդ Արիոբարզանին[21] հայերի ցանկությամբ նշանակում է Հայաստանի պետ, նրա մարմնի նշանավոր գեղեցկության և շատ աչքի ընկնող քաջության պատճառով։ Արիոբարզանը մահացավ պատահական մահով։ Սրա հետնորդների[22] իշխանությունը հայերը չտարան։ Կնոջ իշխանությունը փորձելուց (այդ կնոջ անունն էր Էրատո)[23] և սրան շուտով արտաքսելուց հետո, անհաստատ լինելով, և ավելի շուտ առանց պետի մնալու, քան ազատության մեջ լինելու համար՝ հայերը թագավոր են ընդունում փախստական Վոնոնին։ Բայց քանի որ Արտաբանը սպառնում էր, իսկ Վոնոնը չնչին պաշտպանություն էր գտնում Հայաստանում, և եթե պաշտպանվեր մեր ուժով՝ անխուսափելի կլիներ պատերազմը պարթևների դեմ, Սիրիայի փոխանորդ Կրետիկոս Սիլանոսը[24] կանչում է Վոնոնին և շրջապատում նրան հսկիչ պահակախմբով, սակայն պահպանում է նրա շուքն ու թագավորական անունը[25]։

Գլուխ 56. Այս ժողովուրդը հնուց ի վեր տատանվող է թե՛ մարդկանց բնավորության և թե՛ երկրների տեղադրության պատճառով։ Այդ երկիրը լայնորեն սահմանակից է մեր պրովինցիաներին և տարածվում է հեռու՝ մինչև Մեդերի աշխարհը։ Մեծագույն պետությունների միջև է տեղավորված Հայաստանը և շատ հաճախ հայերը երկպառակ են, որովհետև նրանք թե՛ ատում են հռոմեացիներին և թե՛ նախանձում են պարթևներին։ Այդ ժամանակաշրջանում Վոնոնին հեռացնելուց հետո, թագավոր չունեին, սակայն ժողովրդի տրամադրությունը հակվում էր դեպի Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդի՝ Զենոնը[26], որովհետև հենց մանկությունից նա կրթվել էր հայերի սովորույթներով ու կենցաղով. որսագնացու-

քյան, խրախճանքների և բարբարոսների մոտ հաճախ գործադրվող այլ սովորությունների միջոցով նա իրեն հետ էր կապել ՔՀ ազնվականներին և ՔՀ հասարակ ժողովրդին։ Այսպիսով, Գերմանիկոն[27] Արտագատա (Արտաշատ) քաղաքում մեծամեծների հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ՝ նրա գլխին դրեց թագավորական զարդանշանը։ Մնացածները հարգանք մատուցելով թագավորին, ողջունում էին՝ Արտաշես անվանելով։ Այսպես կոչեցին նրան քաղաքի անվան օրինակով[28]։

1. Սիսեննա Ստատիլիոսն ու Լուկիոս Սկրիբոնիոս Լիբոնը կոնսուլներ են եղել 16 թվականին։

2. Տակիտոսը նկատի ունի այն հանգամանքը, որ այդ ժամանակ կայսրության հյուսիսարևմտյան ծայրամասերում գտնվող պրովինցիաները՝ Գերմանիան ու Պաննոնիան բռնկված էին ապստամբական բոցերով և որտեղ կայսրությունը կրում էր մեծ անհաջողություններ։

3. Սա Պարթևստանի Վոնոն Արշակունի թագավորն էր՝ Հրահատ IV-ի որդին։ Մ. թ. ա. 10 թ. Հրահատ IV-ը իր չորս որդիներին, որոնց թվում և Վոնոնին, ինչպես նաև չորս թոռներին ուղարկել էր Հռոմ։

4. Փրաատ— Պարթևստանի Հրահատ IV թագավորն է։

5. Խոսքը Հռոմի առաջին կայսր Գայոս Օկտավիանոս Օգոստոսի մասին է։

6. Պատմագիրը նկատի ունի մ. թ. ա. 36 թ. Անտոնիոսի պարտությունը և Օպպիոս Ստատիանոսի երկու լեգեոնի շրջապատումն ու ջախջախումը պարթևների կողմից։

7. Հրահատ IV-ի սպանությունից հետո պարթևական գահ են բարձրանում նրա կրտսեր որդին՝ Հրահատակը (մ. թ. ա. 2— մ. թ. 4) և Օրոդես III-ը (4—7)։

8. Այսինքն՝ Օգոստոսը։

9. Արտաբան— Պարթևստանի թագավոր Արտավան III-ն է (12—38)։ Մինչ գահ բարձրանալը նա Վրկանից աշխարհի և Կրմանի կառավարիչն էր։

10. Արտավանը միայն մոր կողմից էր Արշակունի. գահընկեց անելով Վոնոն Արշակունուն՝ նա հիմնադիր դարձավ Արշակունյաց հարստության կրտսեր ճյուղին։

11. Սկյութական ցեղ է, որն ապրում էր Կասպից ծովից հարավ-արևելք ընկած տարածքում։

12. Ապաստան գտնելով Հայաստանում՝ Վոնոնն այստեղ հռչակվում է Մեծ Հայքի թագավոր (12—16)։

13. Մինչ այդ հայերը գահընկեց էին արել էրատո Արտաշեսյանին (Հայոց թագուհի երրորդ անգամ՝ 6—11)։

14. Տակիտոսը նկատի ունի Արտավազդ II-ի ստոր ձերբակալությունն ու մահապատիժը, որը կազմակերպել էին Անտոնիոսն ու Կլեոպատրան։

15. Սա Հայաստանի թագավոր Արտաշես II-ն է՝ Արտավազդ II-ի ավագ որդին։

16. Տիգրան— Արտավազդ II-ի կրտսեր որդին է։ Նրան Օկտավիանոսը Ալեքսանդրիայից տարել էր Հռոմ, ուր տասը տարի ապրելով՝ յուրացրել էր հռոմեացիների բարքերն ու սովորությունները, նրանց լեզուն։ Իր ավագ եղբայր՝ Արտաշես II-ի սպանությունից հետո հռոմեացիների կողմից հռչակվել է Հայաստանի թագավոր։

17. Տիբերիոս Կլավդիոս Ներոն— արևելքում հռոմեական բանակների գլխավոր հրամանատար, Օգոստոսի որդեգիրը, հետագայում՝ Հռոմի կայսր։

18. Պատմագիրը նկատի ունի Տիգրան III-ի զավակներ՝ արքայից արքա Տիգրան IV-ի և վերջինիս խորթ քույր էրատո թագուհու ամուսնական կապը։

19. Խոսքը Արտավազդ II-ի որդու՝ Արտաշես II-ի ու Տիգրան III-ի կրտսեր եղբայր՝ Արտավազդ III-ի մասին է, որը շուրջ 25 տարի գտնվում էր Հռոմում և Օգոստոսի կարգադրությամբ՝ գահընկեց արված Տիգրան IV-ի փոխարեն հռչակվեց Հայոց թագավոր (5—2)։

20. Սա Օգոստոսի թոռն ու որդեգիրն էր, որը մ. թ. ա. 2 թ. հռոմեական մեծ բանակով ուղարկվել էր Հայաստանը հանդարտեցնելու։

21. Մեդ (Մար) Արիոբարզան— Ատրպատականի Արիոբարզան թագավորն է, Անտոնիոսի բարեկամ Մար Արտավազդի որդին, իգական գծով՝ Արտաշեսյան։ Մ. թ. 2 թ. Գայոս Կեսարը սրան հռչակում է Հայոց թագավոր։

22. Նկատի ունի Արիոբարզանի որդուն՝ Մեծ Հայքի և Ատրպատականի թագավոր Արտավազդ IV Մարին։

23. Թագուհի Մեծ Հայքի (8—5 ,2—1, 6—11)։

24. Քվինտոս Կրետիկոս Սիլանոս— 7 թ. կոնսուլ, Սիրիա պրովինցիայի կուսակալ (11—17)։ Տիբերիոսի կարգադրությամբ նա 16 թ. իր մոտ է հրավիրում Վոնոնին և այնս թույլ չի տալիս ետ վերադառնալ Հայաստան։

25. Տարիներ շարունակ Վոնոնը ապրում էր Անտիոքում, իսկ այնուհետև՝ Կիլիկիայի Պոմպեուպոլիս քաղաքում։ Կաշառելով իրեն հսկող պահակազորը՝ 19 թ. Վոնոնը փորձ է անում փախչել Հայաստան, սակայն այդ ավարտվում է անհաջողությամբ և նա սպանվում է (19 թ.)։

26. Զենոնը Պոնտոսի Պոլեմոն I թագավորի և Տիբերիոս կայսեր ազգականուհի Պյութագորայի որդին էր, որին 18 թ. հռոմեացիները հռչակեցին Մեծ Հայքի թագավոր (18—34)։

27. Խոսքը Տիբերիոս կայսեր եղբորորդու և նրա որդեգրի՝ հռոմեական հայտնի զորավար Գերմանիկոս Հուլիոս Կեսարի (մ. թ. ա. 15— մ. թ. 19) մասին է, եղել է 12 և 18 թվականների կոնսուլ։

28. Տակիտոսը չփոթում է. Զենոնին հայերը Արտաշես կոչեցին ոչ թե Արտաշատ «քաղաքի անվան օրինակով», այլ սա դինաստիական «Արտաշէս» անունն էր, որը սիրելի էր հայերին ու հիշեցնում էր Արտաշեսյանների հզոր թագավորության օրերը։

ՎՐԱՑԱԿԱՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՆՔ ՀԱՅՔԻ ԳԱՀԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՍՏ ԳԱՅՈՍ ԿՈՌՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք վեցերորդ

Գլուխ 31. *Գայոս Կեստիոսի և Մարկոս Սերվիլիոսի կոնսուլության ժամանակ*[1] *պարթև մեծամեծներն եկան Հռոմ, առանց թագավոր Արտաբանի գիտության։ Նա (Արտաբանը), վախենալով Գերմանիկոսից, հավատարիմ էր հռոմեացիներին ու հավասարապես էր վերաբերվում յուրայիններին։ Շուտով նա մեր նկատմամբ դառնացավ և դաժանացավ իր հայրենակիցների վերաբերմամբ։ Պարծենալով շուրջը գտնվող ժողովուրդների դեմ հաջող վարած պատերազմներով, արհամարհելով Տիբերիոսի անուժ ծերությունը, ենթադրելով գրավել Հայաստանը, Արտաբանն Արտաշես թագավորի մահից հետո իր որդիներից երիցագույնին՝ Արշակին*[2]*, թագավոր դրեց Հայաստանում։ Որովհետև Արշակունիների ցեղից ոչ ոքի չէին կարող պետության գլուխ դնել, քանի որ մեծ մասը սպանված էր Արտաբանի կողմից կամ թև դեռ չէր հասունացած, սրանք հրավիրեցին նաև այլ մեծամեծների ու Հռոմից պահանջում էին Փրաատ թագավորի որդի Փրաատին*[3]*, ասելով, թե կարիք ունեն միայն անվան ու հոգատարի, որպեսզի կայսեր հաճությամբ Արշակի ցեղը հանդես գա Եփրատի ափին։*

Գլուխ 32. *Հենց այդ էր ցանկանում Տիբերիոսը։ Նա շքազարդում է Փրաատին և, նախապատրաստելով հայրական թագի համար, գոտի է կապում նրան։ Մինչդեռ Փրաատը թողնելով հռոմեական կենցաղը, որին այնքան տարիներ ընտելացել էր, ձեռք էր բերում պարթևների սովորությունները, դեռ չուժեղացած այդ հայրենի սովորությունների մեջ՝ հիվանդությունից մեռավ Սիրիայի մոտ։ Բայց Տիբերիոսը ձեռնարկած գործը չթողեց։ Արտաբանի դեմ ախոյան է ընտրում նույնպիսի ծագում ունեցող Տիրիդատին*[4]*, իսկ Հայաստանը հետ գրավելու համար՝ իբերացի (վրացի) Միհրդատին*[5] *(Միհրդատին)։ Միացնում է նրան վերջինիս եղբայր՝ Փարասմանին*[6] *(Փարսմանին), որի ձեռքումն էր գտնվում ցեղի*

իշխանությունը։ Այն բոլոր ձեռնարկությունների, որ նախապատրաստվում էին Արևելքում, գլուխ էր կանգնեցրել Լուկիոս Վիտելլիոսին։

Գլուխ 33. *Եվ թագավորիկներից առաջինը Միհրդատն (Միհրդատն) էր, որ ստիպեց Փարասմանին թե՛ նենգությամբ և թե՛ ուժով օգնել իր ձեռնարկած գործերին։ Գտնված գայթակղիչներն Արշակի ծառայողներին շատ ոսկով հանցագործության են դրդում։ Միաժամանակ իբերացիք մեծ զորքով ներս են խուժում Հայաստան և տիրանում Արտաշատ քաղաքին։ Երբ Արտաբանն իմանում է այդ, պատրաստում է իր որդի Օրոդին, իբրև վրիժառուի տալիս է պարթևական զորք և մարդիկ է ուղարկում, որպեսզի վարձու օժանդակ ուժեր պատրաստեն։ Դրան հակառակ Փարասմանը միացնում է ալբաններին (աղվաններին) և հրավիրում է սարմատներին։ Սրանց սկեպտուխները*[7]*, երկու կողմից էլ նվերներ ընդունելով, համաձայն իրենց ցեղի սովորության, իրենց վրա են վերցնում հակադիր պարտականություններ։ Սակայն իբերները, այդ տեղերի տերը հանդիսանալով, կասպյան ճանապարհով արագորեն բաց են թողնում Հայաստանի վրա սարմատներին, իսկ ովքեր գալիս էին պարթևներին օգնելու, հեշտությամբ հետ էին մղվում, որովհետև թշնամին փակել էր մյուս մուտքերը. մնում էր մի մուտք, որը գտնվում էր ծովի և Ալբանիայի սահմանամերձ լեռնե-*րի[8] *միջև և ամառը խանգարվում էր, որովհետև պասսատային քամիների հետևանքով ծանծաղուտները լցվում են ջրով, իսկ ձմեռը հարավային քամին հետ է քշում ջրերը, և ծովը ներս մղվելով՝ բացում է ափերի նեղ մասերը։*

Գլուխ 34. *Այդ ժամանակամիջոցում Փարասմանը, ստանալով օժանդակ ուժեր, մարտի էր կոչում դաշնակիցներից զուրկ Օրոդին, և հարձակվեց մարտից խուսափող թշնամու վրա։ Հեծելազորով մոտենում էր բանակատեղիին և թշնամական գործողություններով խանգարում ձիերի կերի գործը։ Հաճախ պաշարման ձև տալով, շրջափակում էր նրան պահակախմբերով, մինչև որ վիրավորանքներին անսովոր պարթևները շրջապատում են թագավորին*[9] *և մարտ են պահանջում։ Սակայն պարթևների ուժը միայն հեծելազորն էր, իսկ Փարասմանն ուժեղ էր նաև հետևակներով։ Արդարև, իբերները և ալբաններն, ապրելով անտառապատ լեռնոտ*

վայրերում, ավելի են ընտելացել բիրտ կյանքին ու համբերատարությանը։

Գլուխ 35. Արդեն ալբաննները և իբերները բռնում էին հակառակորդին, դիրքից դուրս էին գցում, մարտը թշնամու համար դարձնում էին ճգնաժամային. սրանց ուժեղ հարվածում է վերևից հեծելազորը, իսկ մյուս կողմից՝ հետիոտն զորքը, որը մոտիկից վերքեր է հասցնում։ Այդ միջոցին Փարասմանն ու Օրոդը, որ մերթ հանդես էին գալիս քաջարար կռվողների մոտ և մերթ օգնում էին տատանվողներին, նկատելի դառնալով և դրա շնորհիվ իրար ճանաչելով, ձիերի վրա հարձակվում են իրար դեմ՝ դոռալով և գործադրելով հարձակման զենքեր։ Փարասմանն ավելի համառ էր կռվում. սաղավարտի վրայով նա վերք հասցրեց հակառակորդին և էլ չկարողացավ կրկնել հարվածը, որովհետև ձին նրան առաջ քշեց. վիրավորին պաշտպանում էին թիկնապահներից ամենաուժեղները։ Սակայն սպանված լինելու անհիմն լուրին հավատացին, և այդ ահաբեկեց պարթևներին, և նրանք հաղթությունը կորցրին։

Գլուխ 36. Շուտով Արտաբանը պետության բովանդակ ուժով գնաց վրեժ լուծելու։ Իբերներն ավելի լավ էին կռվում, որովհետև ծանոթ էին տեղերին։ Բայց նա (Արտաբանը) չէր հեռանա, եթե Վիտելլիոսը, հավաքելով լեգեոնները և լուր հանելով, թե մտադիր է հարձակվել Միջագետքի վրա, հռոմեական սպառնալի պատերազմի վտանգ ստեղծած չլիներ։ Այդ ժամանակ Արտաբանը թողնում է Հայաստանը, դրանից հետո նրա գործերը ձախողվում են[10]։

Գիրք տասնմեկերորդ

Գլուխ 8. Մոտավորապես այդ ժամանակ[11] Միթրիդատը (Միհրդատը), որը Հայաստանի պետն էր... և որը Դայոս Կեսարի (Հրամանով), ինչպես ես հիշատակել էի, շղթայվել էր[12], Կլավդիոսի հորհրդով իր թագավորությունը վերադարձավ, վստահ լինելով Փարասմանի օժանդակության վրա։ Այս վերջինը, լինելով իբերների թագավոր և միաժամանակ Միթրիդատի եղբայրը, հայտնում էր, որ պարթևների մոտ երկպառակություն է, բարձրագույն իշխանության տիրապետումը տատանման մեջ է և մանր գործերը չեն արժանանում ոչ մի ուշադրության։ Արդարև Վոտադրը[13], շափաղանց շատ դաժանություններ անելով, նախապատրաստել էր սպանել նաև իր եղբայր Արտաբանին[14], սրա կնոջն ու տղային. այդ սարսափ էր ազդել մնացածներին, և կանչեցին Վարդանին[15]։ Այս վերջինը, մեծ ձեռնարկումների մեջ վճռական լինելով, երկու օրվա ընթացքում արշավելով տիրում է երեք հազար ստադիոն[16] տարածություն և անտեղյակ ու ահաբեկված Գոտարզին քշում է։

Գլուխ 9. Այժմ, երբ Արևելքի զորքերը բաժանված էին և հայտնի չէր, թե որ կողմը կթեքվեն այդ ուժերը, Միթրիդատին պատեհ առիթ տրվեց գրավելու Հայաստանը, ընդ որում ամրացված բարձունքները պիտի ոչնչացվեին հռոմեական զինվորի ուժով, միաժամանակ իբերների (վրացիների) զորքերը պիտի ասպատակեին դաշտերը։ Եվ իսկապես հայերը չդիմադրեցին, երբ ճակատամարտի հանդգնած մարզպան Դեմոնաքսի[17] ուժերը ցրվեցին։ Փոքրիկ դանդաղեցրեց գործը Փոքր Հայքի թագավոր Կոտիսը[18], որի կողմն էին անցել մեծամեծներից ոմանք. հետո նա զսպվեց շնորհիվ կեսարի[19] նամակի, և բոլորն անցան Միթրիդատի կողմը, որը դուրս եկավ ավելի դաժան, քան հարմար էր նոր թագավորության։

Գիրք տասներկուերորդ

Գլուխ 44. Նույն տարին[20] հայերի և իբերների միջև պատերազմ ծագեց. այդ եղավ պատճառ այն ծանրագույն շարժումների, որ տեղի ունեցան պարթևների և հռոմեացիների միջև։ Պարթևական ցեղի իշխողն էր Վոլոգեսը[21], որը մոր կողմից հունական ծագում ունեցող հարճից էր. եղբայրների զիջողության հետևանքով՝ նա սեացավ թագավորությունը. իբերների վրա իշխում էր Փարասմանը հնագույն իրավունքի հիման վրա, իսկ նրա եղբայր Միթրիդատը մեր զորքերի շնորհիվ տիրում էր Հայաստանին։ Փարասմանն ուներ Ռադամիստ (Հռադամիզդ) անունով մի որդի։ Սա հայտնի էր բարձր հասակով, վայելչակազմությամբ և ալքի ընկնող մարմնական ուժով. սովորել էր հայրենական արվեստները[22], դրացիների մոտ ուներ փառավոր համբավ։ Նա այնքան անզուսպ էր, որ չէր կարողանում իր իղձը թաքցնել, և հաճախ էր գանգատվում, որ հոր ծերության պատճառով կաշկանդված է Իբերիայի

չափավոր սահմաններով։ Այդպիսով, Փարասմանն, իր ալևոր ծերության պատճառով, վախենալով ճարպիկ կարողության տեր պատանուց, որը հենվում էր իր համերկրացիների ուժեղ համակրանքի վրա, սկսեց նրան ներշնչել այլ հույսեր և ցույց էր տալիս Հայաստանը, ասելով, որ պարթևներին դուրս քշելուց հետո ինքն է տվել Միթրիդատին այդ երկիրը. բայց պետք է հետաձգել ուժի գործադրությունը, լավագույնն է դավադրությունը, որով կարելի է անզգույշ Միթրիդատին ոչնչացնել։ Այդպիսով, Ռադամիստը, ձեվացնելով թե գժտված է հոր դեմ՝ իբր թե խորթ մոր ատելությունը չտանելու պատճառով, ուղևորվում է Հորեղբոր մոտ։ Վերջինիս կողմից նա ընդունվում է իբրև որդի մեծ սիրալիրությամբ ու հարգանքով։ Ռադամիստը Հայաստանի մեծամեծներին գայթակղեցնում է հեղաշրջում կատարելու, այն ինչ Միթրիդատը ոչ միայն չգիտեր այդ մասին, այլ նաև շուք ու զարդ էր տալիս նրան։

Գլուխ 45. Հաշտվելու պատրվակի տակ Ռադամիստը վերադառնում է հոր մոտ և հայտնում է, թե ինչ որ կարելի է կատարել ներդամտությամբ՝ պատրաստ է, մնացածը պետք է զենքով ձեռք գցել։ Այդ ժամանակամիջոցում Փարասմանը հնարում է պատերազմելու առիթներ, ասելով, թե երբ ինքը կռվում էր ալբանների դեմ և օգնության էր կանչում հռոմեացիներին, եղբայրը նրան ընդդիմանում էր, թե ինքը այդ վիրավորանքի համար պիտի գնա վրեժ առնելու և կործանելու նրան։ Միաժամանակ նա մեծ զորք հանձնեց իր որդուն։ Հանկարծակի ներխուժումից ահաբեկված ու դաշտավայրերից զրկված Միթրիդատին Ռադամիստը քշեց Գորնեաս[23] (Գառնի) ամրոցը, որն ապահով էր թե՛ տեղադրության և թե՛ հռոմեական կայազորի պաշտպանության հետևանքով։ Այդ կայազորի հրամանատարներն էին պրեֆեկտ[24] Կելիոս Պոլլիոնը և ցենտուրիոն[25] Կասպերիոսը։ Բարբարոսներին ոչ մի բան այնքան խորթ չէ, որքան պաշարման մեքենաների և խորամանկ հնարամտությունների գործադրությունը (իսկ մեզ՝ պատերազմական գործողությունների այդ մասը շատ լավ ծանոթ է)։ Այդպիսով, Ռադամիստը, կամ խղուր և կամ թե կորուստներ տալով, փորձում է վերցնել ամրությունները։ Դրանից հետո նա ձեռնարկում է ամրոցի պաշարման և, որովհետև նրա ուժն արհամարհվում է, նա կաշառում է ազատ պրեֆեկտին։ Կասպերիոսն աղերսում է թույլ չտալ, որ դաշնակից թագավորը և հռոմեական ժողովրդի նվեր՝

Հայաստանը տապալվեն հանցագործության և կաշառակերության պատճառով։ Վերջապես, որովհետև Պոլլիոնը նենգորեն մատնանշում էր Բշնամու մեծաքանակ լինելը, իսկ Ռադամիստը՝ հոր հրամանները, Կասպերիոսը զինադադար է կնքում և հեռանում, որպեսզի, եթե չկարողանա վախեցնելով Փարասմանին պատերազմից հետ կանգնեցնել, տեղեկացնի Սիրիայի կառավարիչ՝ Ումմիդիոս Կվադրատոսին, թե ինչ դրության մեջ է Հայաստանը։

Գլուխ 46. Յենտուրիոնի հեռանալուց հետո պրեֆեկտը, կարծես ազատված լինելով հսկիչից, սկսում է հորդորել Միթրիդատին՝ դաշինքը վավերացնել, ուշադրության առնելով թե՛ եղբայրական մերձավորությունն առհասարակ և՛ Փարասմանի տարիքով ավագ լինելը և թե՛ ազգակցության այլ հանգամանքները, ասելով, որ Միթրիդատը ամուսնացած է նրա աղջկա հետ, որ նա Ռադամիստի աներն է, որ իբերները դաշինքը չեն մերժում, քանի որ վերջերս վայրկյանում նրանք ավելի ուժեղ են, որ նա չունի այլ հենարան՝ բացի ամրոցից, որը պաշարեղենի կարիք ունի, որ նա պիտի ձգտի ընդունել անարյուն դաշինքի պայմանները և ոչ թե զենքով փորձի այն՝ ինչ կասկածելի է։ Այդ ժամանակամիջոցում Կասպերիոսը եկավ Փարասմանի մոտ և աղդու կերպով պահանջում էր, որպեսզի իբերները հետ կանգնեն պաշարումից։ Փարասմանը, բացահայտորեն անորոշ և շատ հաճախ ղիջող պատասխաններ տալով, գաղտնի սուրհանդակների միջոցով համոզում է Ռադամիստին շտապեցնել ամրոցի առումն ինչ ձևով ուզում է լինի։ Խայտառակ արարքների վարձատրությունը բարձրանում է, և Պոլլիոնը ծածուկ կաշառքներով դրդում է զինվորներին, որ խաղաղություն պահանջեն և սպառնան լքել կայազորը։ Այդ անհրաժեշտությունից դրդված՝ Միթրիդատն ընդունում է դաշն կնքելու օրն ու տեղը և ամրոցից դուրս է գալիս։

Գլուխ 47. Սկզբում Ռադամիստն ընկավ նրա գիրկը և ձևացնում էր, թե հնազանդ է, անվանելով նրան հայր ու աներ։ Ավելացնում էր, երդվելով, թե բռնություն չի գործադրի ո՛չ թրով, ո՛չ էլ թույնով. միաժամանակ քաշում տանում է մերձակա պուրակը, ասելով, որ իր հրամանով այնտեղ զոհաբերություն է նախատեսված և պատրաստված, որպեսզի խաղաղությունն ամրապնդվի աստված-վկաներով։ Թագավորներն ունեն մի սովորություն, որ ամեն անգամ, երբ իրար են հանդիպում դաշն կնքելու համար,

միախառնում են իրենց աջ ձեռքերը, բուռ մատները միասին կապում և հանգուցով ամրացնում։ Հետո, հենց որ արյունը դեպի ծայրանդամներն է հոսում, թևքև ծակոցով արյունը հանում և փոխադարձաբար լիզում են։ Այդ տեսակ դաշինքը համարվում է գաղտնի ուժ ունեցող, իբրև փոխադարձ արյունով սրբագործված։ Սակայն այդ ժամանակ այդ կապերը դնողը ձևացնում է, թե ընկավ, բռնում է Միթրիդատի ծնկներից և նրան փռում է գետին։ Միաժամանակ մոտ են վազում շատ մարդիկ և շղթայում են։ Եվ նրան քարշ էին տալիս ոտքի շղթայից, իսկ դա բարբարոսների մոտ համարվում է խայտառակություն։ Հետո հասարակ ժողովուրդը, որին Միթրիդատը դաժան էր պահում, հայհոյանք է թափում և սպառնում ծեծով. և՛ ընդհակառակը, կային այնպիսիները, որոնք խղճում էին բախտի այդպիսի փոփոխության համար։ Նրա հետևից գնացող կինը փոքրիկ երեխաներով ուժգին հեծկլտում էր, լացի ձայնը լսվում էր շուրջը։ Նրանց տանում են առանձին, ծածկված սայլերով, մինչև որ կհարցնեն Փարաամանի հրամանները։ Փարաամանի թագավորելու տենչն ավելի ուժեղ էր, քան զգացմունքը դեպի եղբայրն ու աղջիկը. նրա հոգին հանցագործությունների համար էր պատրաստված. սակայն նա խնայեց իր տեսողությունը և ցանկացավ, որ նա սպանվի ոչ իր աչքերի առաջ։ Եվ Ռադամիստը, իբր թե հավատարիմ իր երդմանը, իր քրոջ և հորեղբոր դեմ չգործադրեց ո՛չ թույր, ո՛չ էլ թույն, այլ սպանում է նրանց՝ գցելով գետին և ծածկելով բազմաթիվ ու ծանր դորգերով։ Միթրիդատի որդիները նույնպես սպանվում են, որովհետև ողբացել էին ծնողների սպանությունը։

Գլուխ 48. Եվ Կվադրատոսը, իմանալով, որ Միթրիդատը դաժանաբարո սպանված է և թագավորությունը գրավել են մարդասպանները, խորհրդակցություն է հրավիրում, հաղորդում է փաստերը և խորհրդակցում է, արդյոք վրեժ առնի՞։ Հանրային պատիվը քչերի մոտ է հոգատարության առարկա, շատերն արտահայտվում են հօգուտ անվտանգության։ Բոլոր արտաքին հանցագործությունները պետք է ուրախությամբ ընդունվեն, նույնիսկ առելության սերմեր պետք է ցանել, ինչպես հաճախ հռոմեական պրինցեպսները[26] հենց նույն Հայաստանը, առատաձեռնության պատրվակի տակ, շնորհել են բարբարոսներին՝ նրանց ոգին խառնակելու նպատակով։ Թող իշխի Ռադամիստը հանցանքով ձեռք

բերածին, միայն թե լինի առելի, փառաղուրկ, որովհետև այդ ավելի ձեռնտու է, քան եթե նա փառքով արտաքսված լիներ։ Այդ կարծիքը հավանություն ստացավ։ Սակայն որպեսզի չթվա, թե հանցանքը խրախուսվել է և կայսրը տարբեր կարգադրություն չունի, Փարաամանի մոտ ուղարկվում են սուրհանդակներ՝ ասելու, որ նա հեռանա Հայաստանի սահմաններից ու հետ կանչի իր որդուն[27]։

Գլուխ 50. Որովհետև Վոլոգեսը կարծում էր, որ հասել է ատիթը հարձակվելու Հայաստանի վրա, որը իր նախնիների[28] տիրապետության տակ էր և որին այժմ տիրում է օտար թագավորը՝ շնորհիվ զազրելի արարքի, զորք է ժողովում և պատրաստում է իր եղբայր Տիրիդատին այնտեղ թագավոր դարձնել, որ իր ընտանիքի որևէ մասն առանց իշխանության[29] չմնա։ Պարթևները հարձակվում են. իրերներն առանց դիմադրելու արտաքսվում են, Հայաստանի Արտաքսատա (Արտաշատ) և Տիգրանոկերտա (Տիգրանակերտ) քաղաքներն ընդունում են նրա հպատակությունը։ Հետո դաժան ձմեռը, ինչպես և նախատեսված պաշարի պակասությունը և այդ երկու պատճառներից ծագած համաճարակը, ստիպում են Վոլոգեսին թողնել նվաճած երկիրը։ Ռադամիստն ավելի ահարկու, քան առաջ, ներխուժում է լքված Հայաստան, իբրև դավաճան երկիր, որը պատեհ ժամին պատրաստ է նորից ապստամբվելու։ Իսկ հայերը... համբերությունից դուրս են գալիս և զինված շրջապատում են թագավորական պալատը։

Գլուխ 51. Ռադամիստին չէր մնում փրկվելու այլ միջոց, քան ապավինել ձիերի արագավազությանը։ Ձիերը փախցրին թե՛ նրան և թե՛ կնոջը։ Բայց հղի կինը՝ փախուստի առաջին մասը բշնամիներից վախենալու և ամուսնուն սիրելու պատճառով մի կերպ տարավ. հետո, երբ շարունակական արշավընթացից նրա ընդերքն ու արգանդը ուժգին կերպով ցնցահար են լինում, սկսում է աղերսել, որ իրեն պատվավոր մահով ազատի գերության անարգանքներից։ Ռադամիստը սկզբում գրկելով բարձրացնում է և քաջալերում, մերթ զարմանալով նրա քաջությանը, մերթ հիմնադգին տանջվելով վախից, թե ուրիշը կտիրանա կնոջը, եթե ինքը նրան լքի։ Վերջապես սիրո ուժի ազդեցության տակ և անծանոթ չլինելով հանցագործություններին, նա մերկացնում է նրանը[30] և վիրավոր կնոջը քարշ է տալիս Արաքսի ափին և հանձնում գե-

տին, որպեսզի նույնիսկ մարմինը տարվի-հեռանա։ Ինքը գլխապատառ սլանում է Հայրենական թագավորությունը՝ Իբերիա (Վրաստան)։ Այդ ժամանակամիջոցում հուվիվները, շնորհիվ ծովանքի հանդարտության, նկատում են, որ Զենոբիան (այդ էր կնոջ անունը) շնչում է, ուշադրության են առնում կյանքի բացահայտ նշաններն ու ազնիվ արտաքինից եղրակացնում են, որ հասարակ ծագում ունեցող կին չէ այդ, կապում են վերքը և գործադրում են գյուղական դեղամիջոցներ. անունը և արկածն իմանալուց հետո, տանում են նրան Արտաքսատա քաղաքը. այնտեղից հասարակական ծախսով կինն ուղարկվում է Տիրիդատի մոտ, ընդունվում է սիրալիր և ապրում է թագավորական կենցաղով[31]։

1. Այսինքն՝ 35 թվականին։

2. Սա Պարթևստանի Արտավան III թագավորի ավագ որդին էր ու թագաժառանգը, որը Զենոն-Արտաշեսի մահից հետո հռչակվեց Մեծ Հայքի թագավոր (34—35)։ Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ այս Արշակը հայկական ավանդությունների Սանատրուկ I-ն է (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 168)։

3. Փրաատը (Հրահատ) Հրահատ IV-ի կրտսեր որդին էր, Պարթևստանի թագավոր Վոնոն Արշակունու եղբայրը։ Սակայն այնպես էլ պարթևական գահի հավակնորդ այս Հրահատը գահ չբարձրացավ, նա մահացավ 35 թ. Աստրիքոսում։

4. Տիրիդատ (Տրդատ)— խոսքը Հրահատ IV-ի թոռան մասին է, որը, որպես պատանդ, տարիներ շարունակ գտնվում էր Հռոմում։ Արտավան III-ից դժգոհ պարթևական ավագանին 36 թ. սրան հռչակում է Պարթևստանի թագավոր՝ Տրդատ III անունով (36—37)։

5. Միթրիդատ (Միհրդատ)— վրացական Փառնավազյան թագավորական տան ներկայացուցիչ, իգական գծով Արտաշեսյան շառավիղ, եղբայրը Իբերիայի թագավոր Փարսման I-ի։ Հայկական թագի հռոմեական այս դրածոն 35 թ. թունավորել է տալիս Արշակ-Սանատրուկին և բարձրանում է հայկական գահ (35—37)։

6. Իբերիայի թագավոր Փարսման I Փառնավազյանն է (35—74), որի կինն էր Արտաշեսյան հարստության շառավիղ՝ Համազասպուհին։

7. Սկեպտուխ (գայիսոնակիր)— բարձրագույն պաշտոնյա կամ առաջնորդ ակյուբական-սարմատական (ալանական) ցեղերի մոտ։

8. Խոսքը Դերբենդի անցքի մասին է։

9. Պատմագիրը նկատի ունի Արտավան III-ի որդի Օրոդին (Օրոդես)։

10. Տակիտոսը ակնարկում է 36 թ. հռոմեական դրածո Տրդատ III Արշակունու կողմից Արտավան III-ի գահընկեցությունը և նրա փախուստը Վրկանից աշխարհ։ Սակայն մեկ տարի անց՝ 37 թ. Արտավանը նորից վերագրավում է իր գահը։

11. Այսինքն՝ 43 թվականին։

12. Ինչպես երևում է Տակիտոսի սույն հատվածից, նախքան այս դեպքը, նա հաղորդել է Կալիգուլա կայսեր (37—41) կողմից Միհրդատի գահընկեցության ու ձերբակալության մասին (37), սակայն «Տարեգրություններ» այդ մասը չի պահպանվել, հետևաբար անհայտ է մնում կայսեր այդ գործողության դրդապատճառը։ Միհրդատը աքսորում մնացել է ուղիղ վեց տարի (37—43) և միայն Կլավդիոս Դրուզ կայսեր (41—54) կարգադրությամբ է, որ նա երկրորդ անգամ բարձրանում է հայկական գահ (47—51)։

13. Գոտարզ (Գոդերձ)— Արտավան III-ի եղբոր՝ Ատրպատականի թագավոր Վոնոնի ավագ որդին է, որը Արտավան III-ի մահից հետո հռչակվեց Պարթևստանի թագավոր. Գոտարզ II (ընդմիջումներով՝ 38—51)։

14. Տակիտոսը շփոթում է. Արտավանը Գոտարզի ոչ թե եղբայրն էր, այլ հորեղբայրը։

15. Վարդան— Գոտարզի կրտսեր եղբայրն է, նրա մրցակիցը պարթևական գահի համար։ Գահընկեց անելով եղբորը՝ հռչակվել է թագավոր. Վարդան I (39—47)։

16. Երկարության միավոր, որը հավասար է մոտավորապես 185 մետրի։

17. Մարզպան Դեմոնաքս (Demonax praefectus)— Հայոց սպարապետ Գիսակ Դիմաքսյանն է, որը գլխավորել է հայ ժողովրդի պայքարը երկրի անկախության համար հռոմեա-իբերական միացյալ ուժերի դեմ։

18. Սա Պոնտոսի Պոլեմոն I թագավորի թոռն էր, Պոլեմոնի դստեր՝ Անտոնինա Տրիբոնիայի ու Թրակիայի Կոտիս թագավորի որդին, Մեծ Հայքի թագավոր Զենոն-Արտաշեսի քրոջ որդին։ Եղել է Կալիգուլա կայսեր ամենամտերիմ անձնավորություններից մեկը, 38 թ. նրա կողմից նշանակվել է վերականգնված Փոքր Հայքի թագավորության գահակալ։ Ըստ երևույթին, նա ճանաչվել է նաև Մեծ Հայքի թագավոր, սակայն այստեղ նրա իշխանությունը ունեցել է ձևական բնույթ և երկիրը փաստորեն կառավարել է Հայոց սպարապետ Գիսակ Դիմաքսյանը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 722)։

19. Խոսքը Կլավդիոս Դրուզ կայսեր մասին է։

20. Այսինքն՝ 51 թվականին։

21. Նկատի ունի Պարթևստանի թագավոր Վաղարշ I-ին (52—80)։

22. Այսինքն՝ ռազմական ու մարզական արվեստները։

23. Գոբենաս— ուսումնասիրողները գտնում են, որ սա Գառնի ամրոցն էր։

24. Պրեֆեկտ— բառացիորեն՝ պետ։ Դատական, վարչական ու զինվորական պաշտոն, ինչպես նաև այդ պաշտոնը կրող անձնավորություն, վաղ կայսրության շրջանում՝ պրովինցիաների պրետորների օգնական, կամ առանձին պրեֆեկտուրաների (վարչական միավոր) կառավարիչ։

25. Յենտաուրիոն— զինվորական աստիճան, հարյուրապետ։

26. Պրինցեպս— բառացիորեն՝ «(ծերակույտի) ավագ»։ Այսպես էին կոչվում մ. թ. I—III դդ. հռոմեական կայսրերը, ընդգծելով իրենց ձգտումը՝ պահպանել հանրապետական կարգերը դեռ արտաքնապես։

27. Հառամիզդը Փարսման I-ի և նրա երկրորդ կնոջ՝ Դադանա թագուհու որդին էր, փեսան էր իր հորեղբոր՝ Հայաստանի թագավոր Միհրդատի, որի Զե-

Նորիա դստեր հետ էր ամուսնացած։ Պալատական հեղաշրջում կազմակերպելով ու սպանելով Միհրդատին՝ 51 թ. Կապադովկիայի կաշառված կուսակալ Պելիգնոսի կողմից Արտաշատում թագադրվել է Մեծ Հայքի թագավոր (51—54)։

28. Տակիտոսը նկատի ունի այն հանգամանքը, որ, անիշխանության շրջանում, պարթև Արշակունիները ժամանակ առ ժամանակ գահ էին բարձրանում Հայաստանում։

29. Վաղարշն իր կրտսեր եղբայր Բակուրին նշանակել էր Ատրպատականի թագավոր, իսկ մյուս եղբորը՝ Տրդատին որոշել էր թագավորեցնել Հայաստանում։ 52 թ. նա Տրդատին հռչակում է Հայաստանի թագավոր։

30. Նուռն (ակինակ)— արևելյան կարճ և ուղիղ դաշույն։

31. Զենոբիան միաժամանակ ապրում էր Տրդատի արքունիքում, որտեղ էլ ծննդարերեց ու արու զավակ ունեցավ. սա հետագայում թագավորեց Իբերիայում իբրև Փարսման II (100—114)։

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՐԲՈՒԼՈՆԻ ԲԱՆԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՎԵՐՈՒՄԸ ԸՍՏ ԳԱՅՈՍ ԿՈՐՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք տասներեքերորդ

Գլուխ 6. *Տարվա*[1] վերջում անհանգիստ լուրեր են տարածվում, որ պարթևները նորից ներխուժել և հափշտակում են Հայաստանը, դուրս քշելով Ռադամիստին, որը հաճախ է տիրացած այդ թագավորությանը և ապա փախստական դարձած, որ այժմ նա նույնիսկ պատերազմից հրաժարվում է...։

Գլուխ 7. *Այս ու նման լուրեր էին տարածում ժողովրդի մեջ։ Ներոնը հրամայում է Արևելքի լեգեոնները լրացնելու համար մերձակա պրովինցիաներում ժողովված երիտասարդությունը մոտեցնել և տեղավորել Հայաստանի սահմանների մոտ, իսկ երկու հին թագավորների՝ Ագրիպպային*[2] *ու Անտիոքոսին*[3] *ռազմի համար զորքեր նախապատրաստել, որոնցով պիտի ներխուժեին պարթևական սահմանները։ Միաժամանակ կարգադրում է Եփրատ գետի վրա կամուրջներ գցել։ Եվ Փոքր Հայքը հանձնում է Արիստոբուլոսին*[4]*, իսկ Սոֆենեի թագավորությունը (Ծուփաց երկիրը)՝ Սոհեմին*[5]*, երկուսին էլ տալով թագավորական նշաններ։ Հենց այդ ժամանակ Վոլոգեսի*[6] *դեմ առաջ եկավ նրա որդի Վարդանն իբրև ախոյան. պարթևները հեռացան Հայաստանից, կարծես թե պատերազմը հետաձգում էին։*

Գլուխ 8. *Սակայն ծերակույտում... ուրախանում էին, որ Հայաստանը պահելու համար նշանակել էր Դոմիտիոս Կորբուլոնին*[7] *և թվում էր, թե առաքինությունների համար ասպարեզ է բացված։*

Արևելքի զորքերն այնպես էին բաժանված, որ օժանդակ զորքերի մի մասն և երկու լեգեոն մնում էին Սիրիա պրովինցիայում, լեգատ Ումմիդիոս Կվադրատոսի[8] ղեկավարությամբ, իսկ հռոմեական և դաշնակից նույնաքանակ զորքը՝ Կորբուլոնի հրամանատարության տակ, որին պիտի ավելանան Կապադովկիայում ձմեռող կոհորտներն ու հեծելազորերը։

Գլուխ 34. ... Թեպետև Հայաստանին տիրելու համար պարթևների և հռոմեացիների միջև եղած պատերազմը մինչ այժմ դանդաղ էր ընթանում, այս տարվա սկզբում սուր բնույթ ընդունեց, որովհետև Վոլոգեսը թույլ չէր տալիս, որ իր եղբայր Տիրիդատը հեռացվի այն թագավորությունից[9], որն ինքն էր տվել նրան, կամ թե ուրիշ պետությունից ընդունի այն իբրև նվեր. իսկ Կորբուլոնն էլ հռոմեական ժողովրդի մեծությանն արժանի էր համարում, որ Լուկուլլոսի և Պոմպեոսի երբեմնի նվաճած երկիրը հետ ստացվի։ Ընդամին հայերն էլ երկկողմանի հավատարմության հետևանքով հրավիրում էին թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի զորքերին։ Հայերը տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով։

Գլուխ 37. Եվ Տիրիդատը, բացի իր սեփական կողմնակիցներից, օգնություն ստանալով իր եղբայր Վոլոգեսից, արդեն ոչ թե գաղտագողի, այլ բացահայտ թշնամական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ։ Նա ավերում էր նրանց, ում մեզ հավատարիմ էր համարում, իսկ եթե նրա դեմ զորք էր դուրս բերվում, նա խույս էր տալիս և, թողնելով մեկ այստեղ, մեկ այնտեղ, ավելի շատ ահաբեկում էր համբավով, քան պատերազմով։ Այդպիսով Կորբուլոնն իզուր էր երկար ժամանակ ձգտում մարտի բռնվել և ստիպված էր թշնամիների օրինակով պատերազմը շրջացրել։ Նա բաժանում է իր ուժերը, որպեսզի լեգատներն ու պրեֆեկտները տարբեր տեղերում հավասարապես ներխուժեն։ Միաժամանակ նա խորհուրդ է տալիս Անտիոքոս թագավորին՝ հարձակվել իրեն մերձակա շրջանների վրա։ Փարասմանը, սպանելով իր որդի Ռադամիստին իրև դավաճանի, որպեսզի դրանով վկայվի նրա հավատարմությունը դեպի մեզ, հայերի վրա ավելի եռանդուն կերպով էր թափում իր հին ատելությունը։ Եվ հենց այդ ժամանակ առաջին անգամ մեր կողմը գրավված մոսքերը[10] հարձակվեցին Հա-

յաստանի հեռավոր վայրերի վրա։ Այս ցեղն ուրիշներից ավելի հավատարիմ էր հռոմեացիներին։ Այդպիսով Տիրիդատի մտադրությունները հակառակ հետևանքներ տվին։ Տիրիդատն ուղարկում էր պատգամավորներ, որոնք թե՛ Տիրիդատի և թե՛ պարթևների անունից պիտի բացատրություն պահանջեին, թե ինչո՞ւ, երբ նոր են տրվել պատանդներ և վերանորոգված է բարեկամությունը, որը տեղ է բացում նոր բարի գործերի համար, ինքը Տիրիդատը պիտի վտարվի Հայաստանի իր հին տիրապետությունից։ Վոլոգեսը դեռևս տեղից չի շարժվել այն պատճառով, որ գերադասում է բանակցել, քան բռնի ուժով գործել. իսկ եթե հռոմեացիները պիտի պնդեն պատերազմի վրա, Արշակունիներին չի պակասի ոչ արիությունը, ոչ էլ բախտը, որը հռոմեացիներն արդեն շատ հաճախ փորձել են կրած պարտություններում։ Դրան ի պատասխան Կորբուլոնը, որին հաստատապես հայտնի դարձավ, որ Վոլոգեսը հապաղում է Հիրկանիայի անջատման պատճառով[11], խորհուրդ է տալիս Տիրիդատին՝ գնալ խնդրել կայսրին. նա կարող է կայսրից ստանալ հաստատուն թագավորություն և խույս տալ արյունահեղությունից, եթե, թողնելով հեռավոր ու տարաժամ հույսը, հետամուտ լինի առկային և ավելի լավին։

Գլուխ 39. Թագավորը (Տիրիդատը), որովհետև միաժամանակ մեր զորքերը չափազանց շատ տեղեր էին արշավում, հապճեպ հեռացավ՝ կամ նենգություն կասկածեց, կամ թե Պոնտական (Սև) ծովի ու Տրապեզունտ քաղաքի վրայով դեպի մեզ եկող պաշարեղենի փոխադրամիջոցները գրավելու նպատակ ուներ։ Սակայն նա չկարողացավ բռնություն գործ դնել մեր փոխադրամիջոցների վրա, որովհետև դրանք շարժվում էին պահակախմբերով պաշտպանված լեռներով. իսկ Կորբուլոնը, որպեսզի պատերազմն անհետևանք չձգձգվի և հայերին ստիպի պաշտպանել իրենց դույքը, մտադրվում է քանդել ամրությունները։ Նա իր վրա է վերցնում Վոլանդ[12] կոչված ամրությունը, որն ամենաուժեղն էր այդ շրջանում, իսկ փոքր ամրությունները հանձնում է լեգատ Կորնելիոս Ցելակիոսին ու ճամբարների պրեֆեկտ՝ Ինստեոս Կապիտոնին։ Երեք ամրություններ մի օրում վերցնելուց հետո, մնացածներն անձնատուր եղան մասամբ ահից, մասամբ էլ բնակիչների ցանկությամբ։

Գլուխ 40. Այստեղից առաջ է գալիս այն համոզումը, որ պետք

է հարձակվել հայկական ցեղի մայրաքաղաք՝ Արտաքսատայի (Արտաշատի) վրա։ Սակայն լեգեոնները տարվում են ոչ ամենամոտ ճանապարհով, որովհետև, եթե լեգեոնները փոխադրվեին Արտաքսատայի պարիսպները ողողող Արաքս գետի վրա եղած կամրջով[13], հարվածի տակ կընկնեին. նրանք անցան հեռու տեղից[14] ու ավելի լայն ծանծաղուտներով։ Իսկ Տիրիդատն ամոթի ազդեցության տակ, ու վախենալով, որ, եթե հնարավորություն տա թշնամուն պաշարելու, կպարզվի իր անզորությունը, իսկ եթե դիմադրի, իրեն ու հեծելազորային ուժերը կկաշկանդի անհարմար տեղերում, որոշեց վերջապես իր մարտական շարքերն ի ցույց դնել ու որոշ օր մարտը սկսել կամ թե փախուստ ձևացնելով՝ դարան նախապատրաստել։ Այդպիսով նա հանկարծ ցրված ուժերով շրջապատում է ընթացքի մեջ գտնվող հռոմեական զորքը, ընդ որում, մեր առաջնորդն անտեղյակ չէր և զորքը տեղավորել էր այնպես, որ նա հավասարապես ունակ լինի թե՛ ընթանալու և թե՛ մարտի բռնվելու։ Տիրիդատը զանազան կողմերից էր արշավում, բայց այնքան չէր մոտենում, որ նիզակի հարվածը հասնի, մե՛րթ սպառնում էր, մե՛րթ ահաբեկված էր ձևանում, փորձելով, արդյոք չի՞ կարող մեր շարքերը կարել ու անջատ-անջատ հարձակվել։ Երբ ոչ մի պատահական անջատում մեր շարքերի մեջ տեղի չունեցավ, այլ միայն հեծելազորի մի դևկուրիոն (տասնապետ), ավելի խիզախ առաջ ընկած լինելով, նետահար եղավ և այդ օրինակը մնացածների հնազանդությունն ամրապնդեց, Տիրիդատը հեռացավ, երբ մութն ընկնելու վրա էր։

Գլուխ 41. Եվ Կորբուլոնն այդ տեղում բանակեց և մտածում էր, արդյո՞ք գիշերը չպիտի գնա Արտաքսատայի վրա ու պաշարի այն. նա կարծում էր, որ Տիրիդատն այնտեղ է նահանջել։ Հետո, երբ հետախույզները հաղորդեցին, որ թագավորը երկար ճանապարհ է բռնել և հայտնի չէ, թե ուր է գնում՝ մեդերի՞ թե ալբանների մոտ, Կորբուլոնը սպասում է լույսին։ Թեթև զինված զորքը առաջ ուղարկվեց, որպեսզի այդ միջոցին շրջապատեն Արտաքսատայի պարիսպներն և հեռվից սկսեն պաշարումը։ Բայց քաղաքացիներն իրենց կամքով բաց արին դարպասները, անձնատուր եղան և իրենց գույքը հանձնեցին հռոմեացիներին։ Այդ նրանց փրկություն բերեց. Արտաքսատան հրդեհվեց, քարուքանդ արվեց և հավասարեցվեց հողին, որովհետև պարիսպների լայնածավալության պատճառով առանց ուժեղ պահակազորի չէր կարելի պահել այն, ոչ էլ մենք այնքան ուժ ունեինք, որ զորքը բաժանվեր թե՛ պահակազորն ուժեղացնելու և թե՛ պատերազմը վարելու համար, իսկ եթե մայրաքաղաքն անվթար մնար և առանց պահակազորի, ոչ մի օգուտ և փառք չկար նրանից, որ քաղաքն առնված է[15]։

Այդ հաղթության պատճառով Ներոնը բարձրաձայն ողջունվում է իբրև իմպերատոր, ծերակույտի որոշմամբ մաղթանք է կատարվում. որոշվում է պրինցեպսի համար արձաններ դնել, հաղթականամարներ կառուցել և տալ շարունակական կոնսուլություններ, որոշվում է, որ տոնական հայտարարվին թե՛ տարած հաղթանակի, թե՛ այդ մասին հայտարարելու և ղևկուցելու օրերը, ինչպես նաև ընդունվում են այլ նման ձևի որոշումներ...։

1. Այսինքն՝ 54 թվականի վերջերին։

2. Ագրիպպան Ասորիքում գտնվող Խալկիդիկե (Քաղկիդիկե) փոքրիկ պետության և Հյուսիսային Պաղեստինի թագավոր Հերովդես Ագրիպպա II Կրտսերն է (53—100)՝ Հրեաստանի թագավոր Հերովդես I Մեծի ծոռը։

3. Սա Կոմմագենեի Անտիոքոս IV Էպիփանես թագավորն է (38—72)։

4. Արիստոբուլոսը Խալկիդիկեի թագավոր Ագրիպպա II-ի կրտսեր որդին է։ 54 թ. Արիստոբուլոսը Ներոնի կողմից նշանակվում է Փոքր Հայքի թագավոր։

5. Սա Սոփքի թագավոր Սոհեմոսն է։ 55 թ. Ներոնը Սոփքը անջատելով Մեծ Հայքից՝ այստեղ թագավոր է հռչակում Սոհեմոսին (55—63), որը Սոփաց արքայական տան շառավիղն էր և Ասորիքում գտնվող Էմեսա (Հոմս) փոքրիկ թագավորության գահակալը։

6. Խոսքը պարթևական թագավոր Վաղարշ I-ի մասին է։

7. Գնեոս Դոմիտիոս Կորբուլոն— հռոմեական հայտնի զորավար և քաղաքական գործիչ։ 55 թ. նշանակվել է Կապադովկիայի կուսակալ, լեգատ և արևելքում հռոմեական ու «դաշնակից» պետությունների զորքերի գերագույն հրամանատար։

8. Գայոս Ումմիդիոս Կվադրատոս— Սիրիա պրովինցիայի կուսակալ, լեգատ։

9. Հայկական գահի հավակնորդ Տրդատ Արշակունին, Հռադամիզդի երկրորդ փախուստից հետո, 55 թ. նորից մտել էր Հայաստան։

10. Մոսխներ (մեսխեր)— քարքվելական ցեղ, որը 37 թ. պայմանագրով Հայաստանից Իբերիա-Վիրքին անցած Գոդերձական երկրի հիմնական ազգաբնակչությունն էր։

11. Այդ ժամանակ Վրկանից երկիրը նորից ապստամբական վիճակում էր։

12. Վալանդ— ամրոց Հայկական Պար լեռնաշղթայի Գալլատու (Կուջաղ) լեռնանցքում, Արտաշատից ոչ հեռու՝ դեպի արևմուտք։

13. Խոսքը այժմյան Խորվիրապի մոտ գտնվող Տափերական կամուրջի մասին է։

14. Հռոմեական բանակը Արաքսն անցել է Վարդանակերտ ավանի գետանցքով՝ այժմյան Մարգարայի կամրջի մոտ։

15. Կորբուլոնը Արտաշատը գրավեց 58 թ. կեսերին և 58—59 թթ. ձմեռը անցկացրեց այնտեղ։ 59 թ. գարնանը, Արտաշատից դուրս գալուց առաջ, Կորբուլոնի հրահանգով Հայոց մայրաքաղաքը հիմնովին ավերվեց։

ԿՈՐԲՈՒԼՈՆԻ ԲԱՆԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԵՎ ՆԱՀԱՆՋԸ ԸՍՏ ԳԱՅՈՍ ԿՈՐՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք տասնչորսերորդ

Գլուխ 23. Եվ Կորբուլոնն Արտաքսատան քանդելուց հետո[1], կարծում էր, որ պետք է օգտվել նոր ներշնչված ահից՝ Տիգրանակերտը գրավելու համար։ Այս քաղաքը քանդելուց հետո պետք է խորացնել թշնամիներին ազդած ահը...։

Գլուխ 24. Ինքն ու զորքը մարտում ոչ մի վնաս չկրեցին. բայց այդ պայմաններում շատ էին նեղվում թե՛ պաշարի պակասությունից և թե՛ լարվածությունից, ստիպված էին քաղցը (լոկ) կենդանիների մսով հագեցնել. սրան ավելացրած՝ ջրի պակասությունը, կիզիչ ամառը. երկար ճանապարհների դժվարությունները մեղմվում էին միայն առաջնորդի համբերատարությամբ, որը տանում էր նույնն ու ավելին, քան շարքային զինվորը։ Այնտեղից գալիս են մշակված վայրեր[2], որտեղ ցանքսերը հնձված էին, և երկու ամրոցներից[3], ուր փախել էին հայերը, մեկը գրոհով վերցրին. որոնք որ առաջինը գրոհը հետ էին մղում, պաշարումով հաղթվեցին։ Կորբուլոնն այնտեղից անցավ Տավրավնիտների (տարոնցիների) շրջանը։ Փոքր-ինչ հետո, Տիգրանակերտից ուղարկված պատգամավորները հայտնում են, որ քաղաքի պարիսպները բաց են և քաղաքացիները սպասում են հրամանի, ու միաժամանակ հանձնում են ոսկե պսակ՝ իրեն նվեր հյուրին։ Կորբուլոնն ընդունեց նրանց պատվով. և քաղաքից ոչինչ չհափշտակվեց, որպեսզի չթալանված ժողովուրդն ավելի պատրաստ լինի հնազանդության։

Գլուխ 26. Տիրիդատը Մեդիայի վրայով մտավ Հայաստանի ծայրագավառները։ Կորբուլոնը նախ ուղարկեց լեգատ Վերուլանոսին օժանդակ զորքով, հետո ինքն անձամբ շարժեց լեգեոնները

և իսկապես ստիպեց նրան (Տիրիդատին) հեռանալ և թողնել պատերազմելու հույսը. որոնց որ Կորբուլոնը ճանաչում էր իբրև մեզ հակառակորդ, սպանություններով և հրդեհներով ավերում էր. և ձեռք էր բերում Հայաստանի տիրապետությունը, երբ եկավ Տիգրանը[4], որն ընտրված էր Ներոնի կողմից Հայաստանին տիրապետելու համար։ Այդ Տիգրանը կապադովկների ավագանուց էր, Արքելաոս[5] թագավորի ծոռն էր, բայց որովհետև երկար ժամանակ Հռոմում պատանդ էր եղել, իջել էր մինչև ստրկական համբերություն։ Նա ընդունվեց ոչ բոլորի համաձայնությամբ, քանի որ մի քանիսների մոտ համակրանքը դեպի Արշակունիները դեռ շարունակվում էր. սակայն մեծամասնությունը, խիստ ատելով պարթևների գոռոզությունը, շատ էր ցանկանում ունենալ Հռոմից տրված թագավոր։ Նրան (Տիգրանին) տվին պահակազոր՝ բաղկացած հազար լեգիոնարներից, երեք դաշնակից կոհորտներից և հեծելազորային երկու ջոկատից, և, որպեսզի ավելի հեշտ լինի նոր թագավորությունը պահպանել, Հայաստանի որոշ մասերը, նայած թե ում էին սահմանակից, հրաման ստացան հնազանդվել Փարասմանին, Պոլեմոնին, Արիստոբուլոսին և Անտիոքոսին[6]։ Կորբուլոնը հեռացավ Սիրիա, որը լեգատ Ումմիդիոսի մահից հետո թափուր էր մնացել և տրվել իրեն՝ Կորբուլոնին։

Գիրք տասնհինգերորդ

Գլուխ 1. Այդ ժամանակամիջոցին պարթևների Վոլոգես թագավորը, իմանալով Կորբուլոնի հաջողությունների մասին և թե Հայաստանում գահ է բարձրացված օտար ծագում ունեցող Տիգրանը, թե միաժամանակ իր եղբայր Տիրիդատն արտաքսված էր Արշակունիների արժանապատվությունն արհամարհված է, ցանկանում է գնալ վրեժխնդիր լինել։ Մյուս կողմից նկատի ունենալով Հռոմի մեծությունն ու շարունակվող դաշինքը, լինելով դաղկոտ բնավորության տեր և գտնվելով Հիրկանիայի[7] (Վրկանիայի) անջատման ազդեցության տակ, Հիրկանիայի, որը պատկանում է ուժեղ ժողովրդին, և գիտակցելով, որ այդ անջատման պատճառով ինքը կապված էր մի շարք պատերազմներով, Վոլոգեսը գալիս էր հակառակ խոհերի։ Բայց, մինչդեռ նա տատանման մեջ էր, ավելացավ վիրավորանք բերող նոր լուրը, որը խթանեց

նրան. և իսկապես, դուրս գալով Հայաստանից, Տիգրանն ավերել էր Ադիաբենը[8] սահմանակից երկիրը, ավերել էր ավելի լայն շափերով և ավելի երկարատև, քան այդ լինում է ավազակության ժամանակ. և այդ բանը դառնությամբ էին տանում ժողովուրդների առաջնորդները. նրանք գանգատվում էին, թե արհամարհանքն այն աստիճանի է հասել, որ արշավում են ոչ թե հռոմեացի առաջնորդների հրամանատարության տակ, այլ մի պատանդի հանդըգնության շնորհիվ, որն այնքան տարիներ շարունակ եղել է ստրկության մեջ: Նրանց կսկիծն ավելի էր բորբավառում Մոնոքաղոսը (Մանավազը)[9], որն Ադիաբենի կառավարիչն էր, և շարունակ հարցնում էր, թե ի՞նչ օգնություն խնդրի, ո՞ւր դիմի. եթե արդեն զիջել են Հայաստանը, այժմ թալանի են ենթակա մերձակա երկրները. և եթե պարթևները չպիտի պաշտպանեն, ավելի տանելի կլինի հռոմեացիների մոտ ստրկություն անձնատուր եղածների, քան գերի ընկածների համար: Գահազուրկ եղած Տիրիդատն ավելի ևս ծանր էր իր լուռությամբ կամ զսպված տրտունջներով, ասելով, թե անգործունեությամբ չէ, որ պահվում են մեծ պետությունները, այլ մարդկանց ու զենքի մրցակցությամբ: Մարդկանց բախտի դագաթնակետում այն է ավելի արդարը, ինչն ավելի ուժեղ է: Մասնավոր ընտանիքների գործն է՝ իրենը պահելը, իսկ ուրիշինը վերճի առարկա դարձնելը կազմում է թագավորների փառքը:

Գլուխ 2. Այդպիսով, ազդվելով դրանից, Վոլոգեսը խորհրդակցություն է հրավիրում և իրեն ամենից ավելի մոտ նստեցնում է Տիրիդատին ու այդպես է սկսում իր ասելիքը. «Ես ու սա ծնված ենք միևնույն հորից, և, որովհետև, չնայած իր երիցությանը, նա զիջել է ինձ բարձրագույն իշխանությունը, ես նրան տվի Հայաստանի տիրապետությունը: Տիրիդատի տիրապետությունը մեր հզորության երրորդ աստիճանն է կազմում, որովհետև դրանից առաջ Պակորոսը (Բակուրը) տիրացել էր Մեդիային: Եվ թվում էր, թե հակառակ եղբայրների առաջվա առելության ու մրցակցության, մեր ընտանիքի գործերը ես կանոնավոր կերպով կարգավորել էի: Հռոմեացիները խանգարում ու խախտում են խաղաղությունը, որը երբեք չեն խախտած իրենց համար հաջող կերպով, իսկ այժմ խախտել են իրենց ի կորուստ: Ես չեմ բացատում, որ ես միշտ ավելի ցանկացել եմ մեր պապերի նվաճածը պահել արդարությամբ՝ քան արյունով, իրավունքով՝ քան զենքով: Եթե դանդաղ-

կոտությանս պատճառով բաց եմ թողել, կուղեմ արիությամբ: Ձեր ուժն ու փառքն անսասան են մնացել, ավելացել է համեստության համբավը, որը չպիտի արհամարվի մահկանացուներից ամենամեծերի կողմից և աստվածների կողմից էլ գնահատված է»: Միաժամանակ նա Տիրիդատի գլխին թագ դրեց, պատրաստի հեծելազորային գունդը, որն ըստ սովորության, ուղեկցում էր արքային, հանձնեց մեծատոհմիկ Մոնեսին, ավելացրեց ադիաբենացիների օժանդակ զորքը և հանձնարարեց դուրս վտարել Տիգրանին Հայաստանից, մինչդեռ ինքը, հաշտություն կապելով հիրկանների հետ, պետության խորքերից հավաքում է ուժեր և հսկայական ռազմամթերք ու սպառնում է հռոմեական պրովինցիաներին:

Գլուխ 3. Երբ Կորբուլոնը հաստատ աղբյուրից իմանում է այդ մասին, Տիգրանին իբրև օժանդակություն ուղարկում է երկու լեգեոն Վերուլանոս Սևերոսի և Վետտիոս Բոլանոսի հետ, զաղտնի կարգադրությամբ՝ բոլոր գործերում լինել ավելի շրջահայաց, քան շտապող, քանի որ նա ավելի շատ ցանկանում է ունենալ պատերազմ, քան վարել այն. և գրել էր կայսրին[10], որ կարիք կա հատուկ հրամանատարի, որը պիտի պաշտպանի Հայաստանը, որ, եթե Վոլոգեսը Սիրիա ներխուժի, սուր վտանգի մեջ կընկնի այդ երկիրը:

Գլուխ 4. Մինչդեռ այդ նախապատրաստվում էր Կորբուլոնի կողմից Սիրիայի պաշտպանության համար, Մոնեսը շտապ շարժում է զորքը, որպեսզի ավելի շուտ հասնի, քան լուրն իր մասին, ընդհարվում է Տիգրանի հետ, որն այնքան էլ անտեղյակ չէր և անակնկալի չէր եկած: Տիգրանը գրավել էր Տիգրանակերտ քաղաքը, որն ուժեղ էր թե՛ պաշտպանների շատությամբ և թե՛ պարիսպների մեծությամբ: Ընդամին ոչ արհամարհելի լայնություն ունեցող Նիկեֆորիում գետը[11] շրջապատում էր պարիսպների մի մասը, իսկ այնտեղ, որտեղ գետով չէր պաշտպանված, անց էր կացրած հսկա մի խրամ:

Գլուխ 5. Սակայն Կորբուլոնը, թեև գործերը հաջող էին գնում, կարծում է, որ պետք է չափավորություն պահպանել հաջողության համար, ուղարկում է Վոլոգեսի մոտ, որպեսզի բացատրություն պահանջեն պրովինցիան ներխուժելու համար, թե ինչո՞ւ են պաշարում Հռոմի դաշնակից ու բարեկամ թագավորին և հռոմեական կոհորտները. ավելի լավ է, թող թողնի պաշարումը, թե չէ ինքը՝

Կորբուլոնը, նույնպես բանակ կղնի թշնամու երկրում: Այդ առաքելության մեջ ընտրված էր ցենտուրիոն Կասպերիոսը, որը Տիգրանակերտից երեսուն ու յոթ հազար ոտնաչափ[12] հեռավորության վրա գտնվող Նիսիբիս (Մծբին) քաղաքի[13] մոտ տեսնում է թագավորին ու խրոխտաբար հայտարարում է հանձնարարությունը: Վոլոգեսն ուներ հին և խորը թափանցած կանոն՝ խուսափել հռոմեական պատերազմից. ներկայումս էլ գործերը հաջող չեն ընթանում: Պաշարումն իզուր է. Տիգրանն ապահով է թե՛ զորքի և թե՛ պաշարի տեսակետից: Այդպիսով, Վոլոգեսը, խոր թաքցնելով վախն ու ծածկվելով մեղմությամբ, պատասխանում է, թե մտադիր է պատգամավորներ ուղարկել հռոմեական կայսեր մոտ թե՛ Հայաստանը պահանջելու և թե՛ խաղաղությունն ամրապնդելու համար: Վոլոգեսը հրամայում է Մոնեսին՝ բողնել Տիգրանակերտը. ինքը հետ է դառնում:

Գլուխ 6. Հռոմում շատ շատերն այդ բանակցությունները նկատում էին իբրև հետևանք թագավորի վախի և Կորբուլոնի սպառնալիքների ու գտնում էին հրաշալի: Մյուսները մեկնաբանում էին, թե կա գաղտնի համաձայնություն, որ երկու կողմից էլ պատերազմը դադարեցնում են, Վոլոգեսը հետ է քաշվում, իսկ Տիգրանը նույնպես Հայաստանից պիտի հեռանա: Իսկապես, ինչո՞ւ հռոմեական զորքը հեռացվեց Տիգրանակերտից. ինչո՞ւ խաղաղ ժամանակ թողին այն տեղը, որը պատերազմի ժամանակ պաշտպանում էին. մի՞թե ավելի լավ է ձմեռել Կապադովկիայի սահմաններում շատ խիտ վրաններում, քան թագավորության նոր պաշտպանած մայրաքաղաքում: Պատերազմն ուղղակի հետաձգված է, որպեսզի Վոլոգեսը պատերազմի ոչ թե Կորբուլոնի, այլ ուրիշի հետ, իսկ Կորբուլոնն էլ՝ վտանգ չստեղծի այդքան տարիների ընթացքում իր ձեռք բերած փառքի համար: Չէ որ, ինչպես զեկուցեցի, Հայաստանը պաշտպանելու համար նա պահանջել էր հատուկ հրամանատար, լուր էր տարածվել, որ Կեսեննիոս Պետոսը[14] գալիս է: Արդեն նկավ. զորքերն այնպես բաժանված էին, որ չորրորդ և տասներկուերորդ լեգեոնները և Մեսիայից (Մյուսիայից)[15] նոր շարժած հինգերորդ լեգեոնը, ինչպես նաև պոնտական, գալատական և կապադովկիական օժանդակ ուժերը հնազանդվում էին Պետոսին:

Գլուխ 7. Մոտավորապես հենց այդ ժամանակ Վոլոգեսի պատգամավորները, որոնց մասին հիշատակել էի, որ ուղարկվել են հռոմեական պրինցեպսի մոտ, վերադարձան ձեռնունայն, և պարթևները սկսեցին բացահայտ պատերազմ: Պետոսն էլ չհակառակվեց. նա մուտք է գործում Հայաստան՝ երկու լեգեոններով...:

Գլուխ 8. Սակայն Պետոսը... զորքը շտապ փոխադրում է Տավրոս լեռնաշղթայով՝ Տիգրանակերտը հետ վերցնելու համար, ինչպես ինքն էր ասում, և ավերելու այն շրջանները, որ Կորբուլոնը թողել էր անվնաս: Եվ նա վերցրած մի քանի ամրություններն ու ձեռք բերած փոքր-ինչ փառքը և մի քիչ ավարը կպահեր, եթե փառքի հետ ունեցած լիներ նաև չափավորություն, իսկ ավարի հետ նաև հոգատարություն: Երկար անցումներով ու վազքով անցան այնպիսի տարածություն, որը չէր կարող պահել, և փչացնելով գրավված պաշարը, երբ ձմեռն արդեն վրա էր հասնում, (Պետոսը) զորքը հետ տարավ և կայսեր անունով կազմեց մի նամակ, իբր թե պատերազմը վերջացած է: Նամակը լի էր փքուն բառերով, բայց անբովանդակ էր:

1. Կորբուլոնը Արտաշատից դուրս եկավ 59 թ. գարնանը:

2. Պատմագիրը նկատի ունի Հարքի և Տարոնի (Մշո դաշտ) բարեբեր հովիտները:

3. Հ. Մանանդյանը այս ամրոցները տեղադրում է Հայկական Պար լեռնաշղթայի հարավկողմում՝ Տիգրանակերտ տանող ճանապարհի վրա և գտնում է, որ դրանք Բագավան և Սումբ ամրություններն էին (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա, Երևան, 1944, էջ 338):

4. Սա Մեծ Հայքի թագավոր Տիգրան VI-ն է (60—61): Տիգրանը Հրնաստանի թագավոր Հերովդես Մեծի թոռն էր, Հայոց թագավոր Տիգրան V-ի եղբոր՝ Ալեքսանդրի որդին:

5. Արքելաոսը Կապադովկիայի և Փոքր Հայքի թագավորն էր (36—17): Տիգրան VI-ը իրական գծով թոռն էր այս Արքելաոսի:

6. Հայաստանից անջատված այդ երկրամասերը գտնվում էին նրա հյուսիս-արևմտյան մասերում: Ուսումնասիրողները գտնում են, որ Մեծ Հայքից անջատված հողերից Պոնտոսի Պոլեմոն II թագավորը պետք է ստացած լիներ Ճորոխի վերին հոսանքում գտնվող Սպեր գավառը, Իբերիայի Փարսման I-ը՝ ամբողջ Գուգարքը, Փոքր Հայքի Արիստոբուլոս թագավորը՝ Ակիլիսինե-Եկեղյաց, Դարանաղի, Աղյուն և Մզուր գավառները, իսկ Կոմմագենեի Անտիոքոս IV թագավորը, հավանաբար, ստացել էր Կիլիկիայի արևելյան սահմանամերձ շրջաններից և Միջագետքի Առավելեն գավառից որոշ տերիտորիաներ: Մեծ Հայքի թագավորության տերիտորիայի չլատման ու փոքրացման սույն քաղաքականության հիմ-

քում, ինչպես դժվար չէ եղրակացնել, ընկած էր Հռոմի ձգտումը՝ Հայկական պետությունը դարձնել երկրորդական, երրորդական կարգի «դաշնակից» թագավորություն։

7. Հայկական աղբյուրների Վրկանից աշխարհն է։ Տեղադրվում է Կասպից ծովի հարավ և հարավարևելյան մասում՝ ներկայիս Գիլանի նահանգի տեղում։

8. Ադիաբենե երկիրը գտնվում էր Տիգրիսի միջին հոսանքի շուրջն ընկած տարածքում և ընդգրկում էր պատմական բուն Ատրեատանի մեծ մասը։ Նրա մայրաքաղաքն էր Արբելան։ Ըստ Ստրաբոնի մի վկայության, Ադիաբենեում կար հոծ հայկական բնակչություն (տե՛ս Ստրաբոն, XVI, 1, 19)։

9. Մաեոբազոս— Ադիաբենեի Մոնոբազոս (Մանավազ) II թագավորն էր։

10. Խոսքը Հռոմի կայսր Ներոնի (54—68) մասին է։

11. Նիկեֆորիում (Նիկեփորիոն)— Տիգրիսի վերին հոսանքի ձախակողմյան վտակներից մեկն է՝ ներկայիս Ջարկին-սու գետակը։ Հենց այս գետակի ափին՝ Աղձնիքի նիփրկերտ գավառում էր գտնվում Տիգրանակերտ մայրաքաղաքը։

12. Այսինքն՝ շուրջ 60 կիլոմետր հեռավորության վրա։

13. Քաղաք Հյուսիսային Միջագետքում։

14. Լուկիոս Կեսեննիոս Պետոս— Հռոմեական քաղաքական ու ռազմական գործիչ, Ներոնի ամենամտերիմ անձնավորություններից մեկը։ 61 թ. Հռոմի կոնսուլ։ Նույն թվականի վերջերին նշանակվել է Հռոմեական Կապադովկիա պրովինցիայի կուսակալ և Հայաստանում գործող Հռոմեական բանակի գերագույն հրամանատար։

15. Մեսիա— Հռոմեական պրովինցիա Դանուբի ստորին հոսանքի շուրջն ընկած տարածքում։

ԴԱՅՈՍ ԿՈՐՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒԱՆԴԵԱՅԻ ԴԱՇՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք տասնհինգերորդ

Գլուխ 13. ... Ձորքի այդ հուսահատական դրության[1] ազդեցության տակ՝ հրամանատարն[2] առաջին նամակն է գրում Վոլոգեսին, ոչ սպառնական, այլ գանգատի ձևով կազմած. գանգատվում էր, թե Վոլոգեսը թշնամություն է անում հայերի պատճառով, որոնք միշտ կամ Հռոմի իշխանության տակ են, կամ ենթակա են կայսեր կողմից ընտրված թագավորին, թե խաղաղությունը հավասարապես երկուսին էլ օգտավետ է, թե միայն ներկան չէ, որ պետք է ուշադրության առնել, թե ինքը՝ Վոլոգեսը երկու լեգեոն-

ների դեմ եկել է ամբողջ թագավորության ուժերով, այնինչ հռոմացիների մոտ պատերազմին օգնելու համար մնում է մի ամբողջ աշխարհ։

Գլուխ 14. Դրան Վոլոգեսն ըստ էության ոչինչ չպատասխանեց, այլ գրեց, որ ինքը պետք է սպասի իր եղբայրներ Պակորոսին և Տիրիդատին. որոշեց տեղն ու ժամանակը այն խորհրդակցության, ուր պիտի որոշվի Հայաստանի բախտը։ Ատելվածներն ավելացրին Արշակունիներին արժանի մի կետ՝ միաժամանակ պետք է որոշում ընդունել նաև հռոմեական լեգեոնների մասին։ Դրանից հետո Պետոսի կողմից պատգամավորներ ուղարկվեցին՝ խնդրելու թագավորից[3], որ բանակցություն տեղի ունենա. Վոլոգեսը հրամայում է գնալ հեծելազորի պետ Վասակին[4]։ Այդ ժամանակ Պետոսը հիշատակում է Լուկուլլոսին, Պոմպեոսին և այն, ինչ արել են կայսրերը Հայաստանին տիրելու և այդ երկիրը պարգևելու համար, իսկ Վասակը մատնանշում է, թե Հայաստանը պահելու կամ պարգևելու միայն պատրանքն է մեզ (հռոմեացիների) մոտ, իսկ իրական ուժը պարթևների ձեռքումն է։ Փոխադարձ երկար քննարկումից հետո, հետևյալ օրը նրանց միանում է ադիաբենցի Մոնոբազոսը[5] իրեն վկա կնքվելիք պայմանագրի։ Որոշվում է, որ լեգեոնները պաշարված դրությունից պիտի ազատվեն, որ ամբողջ հռոմեական զորաբանակը պիտի թողնի Հայաստանի սահմանները, որ ամրություններն ու պաշարեղենը պիտի հանձնվեն պարթևներին. որոշվում է՝ այդ բոլորը կատարելուց հետո Վոլոգեսին տալ հնարավորություն՝ պատգամավորներ ուղարկելու Ներոնի մոտ։

Գլուխ 15. Այդ ժամանակամիջոցում Արտանիաս (Արտաշես) գետի[6] վրա, որը ճամբարի առջևից էր հոսում, կամուրջ գցվեց այն պատրվակով, թե իբր այդ կամուրջն իրեն պիտի ճանապարհ ծառայի, սակայն պարթևներն իբր ապացույց տարած հաղթության՝ կամուրջն իրենց իշխանության տակ առան։ Եվ իսկապես այդ կամուրջը նրանց պետք եղավ, իսկ մերոնք գնացին հակառակ ուղղությամբ։ Դրան լուր ավելացավ, թե լեգեոններն անց են կացրել լծի տակով[7], և պատմում էին այլ անհաջողություններ, որոնց ներման բան հայերի կողմից ի կատար էր ածվելու։ Հռոմեական զորքի հեռանալուց առաջ թշնամիները մտան ճամբարի ամրությունները, շրջապատեցին ճանապարհները. նրանք ճանաչում էին մի ժամա-

նակ հռոմեացիների կողմից գերի վերցրած իրենց ստրուկներին և գրաստն ու հետ էին խլում. հափշտակում էին անգամ հագուստեղենը, պահած զենքերը. վախեցած զինվորը զիջում էր, որպեսզի մարտի ոչ մի առիթ չծագի: Վոլոգեսը սպանվածների զենքերից և մարմիններից կույտեր էր դիզել, որպեսզի դրանով վկայվի մեր պարտությունը:

Գլուխ 16. ... Կորբուլոնն էլ հայտարարեց..., որ ինքը գտնըվում է ոչ ավելի, քան երեքօրյա ճանապարհի հեռավորության վրա: Նա ավելացնում է, որ Պետոսը դրոշակների առաջ, այն մարդկանց ներկայությամբ, որոնց թագավորն ուղարկել էր վկա լինելու, երդումով ապահովում էր, որ հռոմեացիներից ոչ ոք մուտք չի գործի Հայաստան առաջ, քան կստացվի Ներոնի նամակն այն մասին, թե համաձա՞յն է արդյոք խաղաղության: Եթե այդ հնարված է նրա (Պետոսի) անփառունակությունը խորացնելու համար, ապա մնացածը ծածկված չէ խավարով՝ Պետոսը մի օրում կտրել անցել է քառասուն հազար քայլ (40 մղոն)[8] տարածություն, տեղ-տեղ ձգելով վիրավորներին, և նրա այդ շտապ փախուստը ոչ պակաս խայտառակ է, քան եթե նա մարտում թիկունք ցույց տված լիներ:

Գլուխ 17. ... Դրանից հետո Պետոսը ձմեռեց Կապադովկիայում: Վոլոգեսն ուղարկեց Կորբուլոնի մոտ սուրհանդակներ, որպեսզի Կորբուլոնը քանդի անդրեփրատյան ամրությունները, և գետը, ինչպես մի ժամանակ էր, լինի սահմանագիծ. Կորբուլոնն էլ պահանջում էր, որ թագավորը, զանազան պահակախմբերը հեռացնելով, դատարկի Հայաստանը: Եվ վերջապես թագավորը զիջեց. Կորբուլոնի կառուցած անդրեփրատյան ամրությունները քանդվեցին, Հայաստանն էլ մնաց առանց միջնորդ իշխանավորի:

Գլուխ 24. Այդ դեպքերի ընթացքում, գարնան սկզբին եկան պարթևների պատգամավորները և բերին թագավորի հետևյալ ձևի հանձնարարություններն ու նամակը: Այժմ նա (Վոլոգեսը) թողնում է այն վեճը, որն առաջ և քանի-քանի անգամ ծագել էր Հայաստանին տիրապետելու մասին, որովհետև աստվածները, որոնք կարգադրիչներ են նույնիսկ կարող ժողովուրդների, Հայաստանի տիրապետությունը տվել են պարթևներին՝ ոչ առանց խայտառակության հռոմեացիների համար: Նորերս շրջափակված էր Տիգրանը[9], հետո՝ Պետոսն ու լեգեոնները, թեպետ կարող էր նրանց ճզմել, բայց անվնաս բաց է թողել. պարթևների ուժը բավակա-

նին փորձված է, տրված է նաև չափավորության ապացույցը: Եվ Տիրիդատը մտադիր չէ թագավորական թագն ընդունելու համար հրաժարվել Հռոմ գնալուց, եթե նրան չպահեին քրմության պարտականությունները. նա կգնա հռոմեական դրոշակների և պրինցեպսի[10] արձանի մոտ, այնտեղ լեգեոնների առաջ նա սրբագործությունների[11] միջոցով կստանա թագավորությունը:

Գլուխ 25. Որովհետև Վոլոգեսի նամակն ուներ այդպիսի բովանդակություն, իսկ Պետոսը գրել էր ուրիշ բան, իբր թե գործերն անվթար են, հարցրին դեսպանների հետ եկած ցենտուրիոնին, թե ի՞նչ վիճակում է Հայաստանը: Նա էլ պատասխանեց, որ այնտեղից բոլոր հռոմեացիները դուրս են եկել: Այդ ժամանակ հասկանալով բարբարոսների ծաղրը, որոնք պահանջում էին այն, ինչ խլված ունեին, Ներոնը խորհրդակցություն ունեցավ պետության ամենանշանավոր մարդկանց հետ, թե ի՞նչ են գերադասում՝ պատերազմ անհայտ ելքով, թե անպատիվ խաղաղություն: Պատերազմի մասին ոչ մի տատանում չկար: Եվ Կորբուլոնը նշանակվում է այդ գործը վարելու համար...: Այդպիսով պատգամավորները ձեռնունայն հետ են ուղարկվում, սակայն տրվում են նվերներ, որպեսզի Տիրիդատը, եթե անգամ խնդրելիս լինի (Հայաստանի թագը— Պ. Հ.), չզրկվի նույնը խնդրելու ոչ ապարդյուն հույսից:

Գլուխ 26. Կորբուլոնը... Հայաստան տարավ վեցերորդ և երորդ լեգեոնները, որոնց զինվորական կազմը մնացել էր անվթար և վարժված էր հաճախակի ու հաջող ռազմական գործողություններ մեջ. նա ավելացրեց հինգերորդ լեգեոնը, ... նաև տասնհինգերորդականներին (այսինքն՝ տասնհինգերորդ լեգեոնի զինվորներին— Պ. Հ.), որոնք նոր էին բերված, ավելացրեց նաև ընտիր ջոկատներ Իլլիրիայից[12] և Եգիպտոսից և եղած բոլոր հեծելազորային և հետևակ ջոկատներն ու թագավորների օժանդակ զորքերը, որ ի մի էր հավաքել Կորբուլոնը Մելիտենեի[13] մոտ. այդտեղից նա պատրաստվում էր անցնել Եփրատը:

Գլուխ 27. Հետո նա (Կորբուլոնը— Պ. Հ.) գնում է այն ճանապարհով, որով մի ժամանակ մտել էր Հայաստան Լուկիոս Լուկուլլոսը, ազատելով այն երկար ժամանակի հետևանքով առաջացած արգելքներից: Տիրիդատից և Վոլոգեսից եկած խաղաղության պատգամավորներին նա չարհամարհեց, նրանց ավելացրեց ցեն-

տուրիոններ, տալով վերջիններին ոչ անմեղ բնույթի հանձնարարականներ. քանի որ մինչև այժմ գործերն այնպես չեն գնացել, որ կարելի լինի ծայրահեղ կռվի: Շատ բան է հաջողվել հռոմեացիներին, մի քանի հաջողություններ ունեցել են նաև պարթևները, թող այդ ծառայի իբրև խրատ գոռոզության դեմ: Արդ՝ Տիրիդատին օգտավետ է ավերածություններից ղերծ մնացած թագավորությունն ընդունել իբրև նվեր, իսկ Վոլոգեսի համար ավելի լավ է հոդալ պարթևական ժողովրդի օգուտը, դաշնակցելով հռոմեացիներին, քան փոխադարձաբար կորուստներ պատճառել իրար:

Գլուխ 28. ... Տիրիդատը պահանջում է նշանակել բանակցության օրն ու տեղը: Բարբարոսներն ընտրեցին ամենամոտ ժամանակը և այն տեղը, որտեղ նորերս պաշարված էին Պետոսի լեգեոնները, որովհետև այդ վայրը[14] ուրախ հիշողություններ էր առաջացնում նրանց մեջ: Կորբուլոնն էլ չխուսափեց դրանից, որպեսզի բախտի տարբերությունն էլ ավելի բարձրացնի իր փառքը: Պետոսի խայտառակությունն անհանդստություն չէր պատճառում Կորբուլոնին. այդ ավելի ևս ակնբախ դարձավ նրանով, որ Պետոսի որդուն, որը տրիբուն էր, հրամայից ջոկատը տանել և դժբախտ մարտի մնացորդները թաղել: Պայմանավորված օրը Տիրիդատի համբարն եկան՝ վերջինիս պատիվ ցույց տալու համար, ականավոր հռոմեական հեծելազորական՝ Տիբերիոս Ալեքսանդերը, որը տրված էր Կորբուլոնին իբրև օգնական պատերազմում, և Կորբուլոնի փեսա՝ Վինիկիանոս Աննիոսը..., այդ ապահովությունը տրված, որպեսզի Տիրիդատը չվախենա դավադրությունից. հետո վերջին քանակական հեծյալներ: Եվ Կորբուլոնին տեսնելուն պես, թագավորն առաջինը ցատկեց ձիուց. Կորբուլոնն էլ սպասեցնել չտվեց իրեն, այլ ոտքի վրա կանգնած նրանք իրար աջ ձեռք տվին: Հետո հռոմեացին գովեց երիտասարդին (այսինքն՝ Տրդատին— Պ. Հ.), որը թողնելով վտանգավոր ճանապարհը, բռնել է ապահով և երկար ուղին: Տիրիդատը նախապես շատ խոսելով իր ցեղի մեծատոհմիկության մասին, համեստորեն ավելացնում է հետևյալը. «Ինչպես կգնա Հռոմ և կտանի կայսրին նոր պատիվ՝ աղերսարկու Արշակունուն, քանի պարթևները պարտված չեն պատերազմում»: Այդ ժամանակ որոշվեց, որ Տիրիդատը կայսեր արձանի մոտ դնի թագավորական նշանը և հետ վերցնի միայն Ներոնի ձեռքից. բանակցությունն ավարտվեց համբույրով:

Գլուխ 29. Հետո, մի քանի օր անց, երկու կողմից էլ փայլուն տեսքով հանդես եկան և կանգնեցին զորքերը՝ այնտեղ դասակնեռով դասավորված պարթևական հեծելազորն իր հայրենի զարդարանքներով, այստեղ՝ հռոմեական լեգեոնները փայլուն արծիվներով, դրոշակներով և աստվածների արձաններով, կարծես տաճարում լինեին. մեջտեղում կառուցված էր բեմ, բեմի վրա դրված էր կուրուլ աթոռ[15] և կուրուլ աթոռի վրա՝ Ներոնի արձանը: Դրան մոտեցավ Տիրիդատը, համաձայն սովորության զոհեր մատուցանելով. գլխից վերցրած սպարոշը մոտեցնում է Ներոնի արձանի ստորին մասին, ընդ որում բոլորի սրտերը շատ հուզվեցին, սրանց հույզն ավելի ևս սաստկանում էր նրանից, որ հռոմեական զորքերի աչքերի առաջ մինչև այժմ պատկերանում էր սպանությունը կամ պաշարումը, իսկ այժմ դեպքերը հեղաշրջվեցին. Տիրիդատը պիտի գնա ի ցույց ժողովուրդներին և ո՞րչափ է նա պակաս գերի լինելուց:

Գլուխ 30. ... Հետևյալ օրը Տիրիդատը խնդրեց ժամանակ, որպեսզի նա այդպիսի երկար ճանապարհ ընկնելուց առաջ տեսնի իր եղբայրներին և մորը. այդ միջոցին նա իբրև պատանդ թողեց իր աղջկան և աղերսական նամակ ուղարկեց Ներոնին:

Գլուխ 31. Եվ բաժանվելով Պակորոսից Մեդիայում[16], նա Վոլոգեսին գտնում է էկբատանում (Համադանում)[17], վերջինս հոգում էր իր եղբոր մասին, և իսկապես նա սեփական սուրհանդակների միջոցով պահանջում էր Կորբուլոնից, որ Տիրիդատը չկրի սուրկության նման որևէ վիճակ, ստիպված չլինի զենքը հանձնել, պահանջում էր, որ պրովինցիաների կառավարիչները չհրաժարվեն եղբայրաբար գրկախառնվելուց և չստիպեն իրենց սպաժարվեն եղբայրաբար գրկախառնվելուց և չստիպեն իրենց սպասել դուրսը, որ Հռոմում նրան ցույց տրվի կոնսուլին հավասար պատիվ:

1. Պատմագիրը նկատի ունի այն հանգամանքը, որ 62 թ. աշնանը Հռոմեական բանակները Անձիտ-խարբերդի դաշտում, Արածանի գետի հարավային ափին գտնվող Հռանդեա վայրում շրջապատված էին հայ-պարթևական մեծաքանակ զորքերի կողմից:

2. Խոսքը Հայաստանում գտնվող հռոմեական բանակի գերագույն հրամանատար կենտիոս Պետոսի մասին է:

3. Նկատի ունի պարթևների Վաղարշ (Վոլոգես) I արքայից արքային:

4. Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ «հեծելազորի պետ Վասակը» հայ ազնվականության ներկայացուցիչ էր:

5. Նկատի ունի Ադիաբենեի թագավոր Մոնոբազոս (Մանավազ) II-ին։

6. Արածանի գետը Արևելյան Եփրատն է, այժմ՝ Մուրադ-չայ։

7. «Անց են կացրել լծի տակով»— գետնի մեջ խրված երկու նիզակների վրա դրվում էր երրորդը՝ մոտ մեկ մետր բարձրությամբ։ Ճակատամարտում պարտված կողմը պետք է անցներ այդ անցքով, նախապես գցելով զենքն ու վերնազգեստը։ «Լծի տակով անցնելը» հին ժամանակներում համարվում էր ամենամեծ ստորացումը և պարտվողների ստրկացման ապացույցը։

8. Քառասուն հռոմեական մղոնը հավասար է մոտավորապես 62 կիլոմետրի։

9. Խոսքը «Մեծ թագավոր Հայոց Մեծաց», հռոմեական դրածո Տիգրան VI-ի մասին է։

10. Այսինքն՝ Ներոն կայսրի։

11. Խոսքը զոհեր կատարելու ծիսակատարության մասին է։

12. Իլլիրիա— երկրամաս Բալկանյան թերակղզու հյուսիսարևմտյան մասում, Ադրիատիկ ծովի ափին։ Մ. թ. ա. 27 թ. հռոմեական Իլլիրիկ պրովինցիան է։

13. Մելիտենե (Մալաթիա)— քաղաք Եփրատի աջ ափին, հետագայի Երրորդ Հայքի մայրաքաղաքը։

14. Այսինքն՝ Հռանդեան, որտեղ Պետոսը պարտություն էր կրել։ Հենց այստեղ էլ՝ 64 թ. կնքվեց Հռանդեայի դաշնագիրը, որի համաձայն Տրդատ Արշակունին ճանաչվում էր Հայաստանի թագավոր։

15. Հատուկ բազմոց, որի վրա նստելու իրավունք ունեին միայն բարձրաստիճան պաշտոնյաները՝ կոնսուլը, պրետորը, ցենզորը և կուրուլ էդիլը։

16. Այստեղ խոսքը Ատրպատականի մասին է։

17. Էկբատանը (Համադան) Մարաստանի մայրաքաղաքն էր, պարթև Արշակունիների ձմեռային նստավայրերից մեկը։

ԿՈՐԲՈՒԼՈՆԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏՐԴԱՏ I ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ ԸՍՏ ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք վաթսուներկուերորդ

19,1 Մինչ նա[1] այս գործերով էր զբաղված, լուր ստացվեց Հայաստանից և միաժամանակ հաղորդության դափնի։ Քանզի Կորբուլոնը[2] (Հռոմեական) ցրված զորամասերը միավորելուց և լքվածներին վարժեցնելուց հետո, թե՛ Վոլոգեսոսին[3], պարթևների թագավորին, թե՛ Տիրիդատեսին[4], Հայաստանի առաջնորդին, ահաբեկից սոսկ իր մոտիկ գալու հաղորդու-

2 մով իսկ։ Քանզի նա նման էր առաջին հռոմեացիներին ոչ միայն իր պայծառ ծագումով և ուժեղ մարմնով, այլև ուներ խորաթափանց միտք. և նա մեծ քաջություն, մեծ արդարություն և խորը հավատարմություն էր ցուցաբերում բոլորի՝ թե՛ յուրայինների և թե՛ թշնամիների հանդեպ։ Այդ իսկ պատ-

3 ճառով Ներոնը պատերազմը վարելու համար իր փոխարեն ուղարկեց նրան, տրամադրելով այնքան զորք, ինչքան չէր տվել ոչ մեկ ուրիշի[5], հավասարապես վստահ լինելով, որ սա կկարողանա թե՛ հաղթել բարբարոսներին և թե՛ իր դեմ

4 չապստամբել։ Եվ նա այս երկու հարցում էլ նրան հուսախաբ չարեց, թեպետև Կորբուլոնը շատ մարդկանց վշտացրեց հենց այս անգամ, քանի որ հավատարիմ մնաց Ներոնին. որովհետև նրանք այնքան ցանկանում էին նրան խմպերատոր տեսնել Ներոնի փոխարեն, որ նրա այս վարմունքը համարում էին նրա միակ թերությունը։

* * *

20,1 Ահա այս Կորբուլոնը առանց դժվարության վերցրեց Արտաշատը[6] և քաղաքը հիմնահատակ կործանեց։ Այս անելուց հետո նա շարժվեց դեպի Տիգրանակերտ, խնայելով բոլոր իրեն հանձնվողների երկիրը, բայց ավերելով դիմադրողների երկիրը, իսկ Տիգրանակերտը նրան հանձնվեց կամովին[7]։ Նա այլ պայծառ ու փառավոր գործեր ևս կատարեց, որոնց պատճառով էլ նույնիսկ Վոլոգեսոսին, որը թեպետև ահեղ էր, ստիպեց հռոմեացիների պատվին արժանի հաշտություն կնքել։

2 Եվ Վոլոգեսոսը տեղեկանալով, որ Ներոնը Հայաստանը պարգևել է ուրիշներին, իսկ Ադիաբենե երկիրն[8] էլ ավերվում է Տիգրանի[9] կողմից, ինքը պատրաստվեց արշավելու Սիրիա՝ Կորբուլոնի վրա, իսկ Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսին և պարթև Մոնեսեսին[10] ուղարկեց Հայաստան։ Սրանք

3 Տիգրանին պաշարեցին Տիգրանակերտում։ Ու քանի որ իրենց պաշարումով սրանք ոչ մի վնաս չէին կարողանում հասցնել (Տիգրանին) և ամեն անգամ հարձակվելիս ետ էին մղվում թե՛ նրա և թե՛ նրա զորքում գտնվող հռոմեացիների կողմից, իսկ Կորբուլոնն էլ մեծ ճշտությամբ պահպանում

4 էր Սիրիան, ապա (Վոլոգեսոսը) հրաժարվեց իր մոտ գրությունից ու թողեց պատրաստությունը և Կորբուլոնի մոտ (բանագնաց) ուղարկելով, կարողացավ դինադադար կնքել այն պայմանով, որ պետք է մի նոր դեսպանություն ուղարկի Ներոնի մոտ, վերացնի (Տիգրանակերտի) պաշարումը և իր դինվորներին Հայաստանից դուրս բերի[11]: Իսկ Ներոնը նույնիսկ այդ ժամանակ նրան ոչ իսկույն, ոչ էլ հստակ պատասխան չտվեց, իսկ Լուկիոս Կեսեննիոս Պետոսին[12] ուղարկեց Կապադովկիա, հետևելու համար, որ Հայաստանում ոչ մի ապստամբություն չբարձրանա:

21,1 Վոլոգեսոսը հարձակվեց Տիգրանակերտի վրա և Պետոսին, որը եկել էր նրանց օգնելու, ետ շպրտեց. և երբ վերջինս դիմեց փախուստի, հալածեց նրան, կոտորեց նրա կողմից Տավրոսի վրա հաստատված պահակազորը և նրան պաշարեց Հռանդեայում, որը գտնվում էր Արսանիաս[13] գետի
2 մոտ: Եվ նա ետ էր վերադառնալու ոչինչ չարած— քանզի որևէ կետում ամրության մոտենալ չէր կարողանում, քանի որ նա չուներ հոպլիտներ, ու թեև զորքի մեծ բազմությամբ, բայց առանց անհրաժեշտ պատրաստության եկած լինելով, զրկված էր պարենամթերքից— եթե Պետոսը չվախենար մինչև ռազմական ճամբարը հասնող նետահարումներից, ինչպես նաև ամեն տեղ հայտնվող նրա հեծյալներից և հաշտության համար լուր չուղարկեր նրան ու չընդուներ նրա պայմանները. նա երդվեց, որ կթողնի ամբողջ Հայաստանը, և որ Ներոնը այն կպարգևի Տիրիդատեսին: Պարթևն ուրա-
3 խացավ այս ամենից, որովհետև կարծում էր, թե առանց դժվարության կգրավի երկիրը և հռոմեացիներին իր ողորմածությամբ կդնի մեծ պարտքի տակ. մյուս կողմից էլ նա տեղեկացել էր, որ Կորբուլոնը, որի մոտ Պետոսը, նախքան
4 պաշարվելը, մարդ էր ուղարկել օգնություն խնդրելով, արդեն մոտենում է, ուստի թողեց պաշարվածներին, նախապես պարտադրելով նրանց իր համար կամուրջ կապել Արսանիաս գետի վրա, ոչ այն պատճառով, որ ինքը կամրջի կարիքն ուներ, քանզի ինքը հետիոտն էր գետն անցել, այլ ցույց տալու համար նրանց իր գերազանցությունը: Բայց այս դեպքում ևս ինքը կամրջի վրայով չհեռացավ, այլ

մեկնեց փղի վրա նստած. իսկ մնացածները՝ ինչպես և առաջ:

22,1 Երբ դեռ նոր էր կապիտուլյացիան կատարվել, ահա և Կորբուլոնը անհնարին արագությամբ մոտեցավ Եփրատին և այնտեղ սպասեց: Երբ երկու զորքերը[14] հանդիպեցին իրար, ամեն ոք կարող էր նկատել լեգեոնների և նրանց զորավարների միջև եղած մեծագույն տարբերությունը. սրանք ուրախանում և հրճվում էին իրենց արագության համար, իսկ
2 նրանք վշտացած և ամոթահար՝ հաշտության համար: Իսկ Վոլոգեսոսը Մոնեսեսին ուղարկելով Կորբուլոնի մոտ, պահանջեց նրանից լքել Միջագետքի ամրությունը. ու նրանք երկար բանակցեցին իրար հետ Եփրատի վրա գցած նույն այդ կամրջի վրա, նախապես քանդելով դրա միջին մասը:
3 Քանի որ Կորբուլոնը խոստացավ հեռանալ երկրից, եթե Պարթևը թողնի Հայաստանը, ապա այդ երկուսն էլ կատարվեց, մինչև որ Ներոնը, իմանալով տեղի ունեցածների մասին և ընդունելով Վոլոգեսոսի իսկույն ևեթ ուղարկած դեսպաններին, պատասխանեց նրանց, թե Հայաստանը կտա Տի-
4 րիդատեսին, եթե սա Հռոմ գա. իսկ Պետոսին իշխանությունից զրկելով և նրա հետ եղած զինվորներին այլ վայրեր ուղարկելով, Կորբուլոնին դարձյալ կարգադրեց պատերազմել նրանց դեմ: Թեև ինքն անձամբ ուզում էր մասնակցել այդ արշավանքին, սակայն զոհ մատուցելիս ընկել էր. ուստի և չհամարձակվեց արշավանքի դուրս գալ, այլ մնաց երկրում:

23,1 Կորբուլոնը թեպետև բացահայտ պատերազմի էր պատրաստվում Վոլոգեսոսի դեմ, հարյուրապետի ուղարկելով, պատվիրեց Վոլոգեսոսին հեռանալ երկրից. հատկապես խորհուրդ տվեց իր եղբորն[15] ուղարկել Հռոմ և համոզեց նրան,
2 քանզի թվում էր, թե ինքը նրանից առավել ուժեղ է: Այսպիսով, նրանք դումարվեցին այդ նույն Հռանդեայում, թե՛ Կորբուլոնը, թե՛ Տիրիդատեսը. քանզի այս վայրը հաճելի էր երկուսին էլ. մեկին՝ որովհետև այստեղ պաշարելով հռոմեացիներին, կապիտուլյացիայի ենթարկեցին ու բաց թողեցին, իրեն ապացույց ողորմած վերաբերմունքի, իսկ մյուսին՝ այդ վայրը նախկինում յուրայինների կրած անպատ-
3 վությունը ջնջելու հնարավորություն էր տալիս: Այստեղ

բարձր բեմ պատրաստվեց, և դրա վրա կանգնեցվեցին Ներոնի պատկերը[16], և Տիրիդատեսը հայերի, պարթևների ու հռոմեացիների բազմության առաջ մոտեցավ դրանց ու խոնարհվեց, այնուհետև զոհ մատուցելով դրանց և հանդիսավոր կոչելով, իր գլխից խույրը[17] վերցրեց ու դրեց դրանց
4 վրա. և Մոնոբազոսն ու Վոլոգեսոսը ևս եկան Կորբուլոնի մոտ ու պատանդներ տվեցին նրան: Եվ այդ դեպքերի առթիվ Ներոնը մի շարք անգամ իմպերատոր հռչակվեց և, հակառակ ընդունված կարգի, հաղթահանդես կատարեց:

5 Եվ ահա Կորբուլոնը, թեպետ ուներ և՛ մեծ ուժ, և՛ ոչ պակաս փառք, և կարող էր հեշտությամբ դառնալ նույնիսկ իմպերատոր, քանի որ մարդիկ խստագույնս ատում էին Ներոնին, իսկ իրենով ամեն կերպ հիանում, բայց ինքը ո՛չ որևէ խռովություն բարձրացրեց, ո՛չ էլ մեղադրվեց նման
6 բանում: Նա այժմ իրեն ավելի խոհեմ էր պահում. նա Աննիոսին՝ իր փեսային, որն իր փոխհրամանատարն էր, Հռոմ ուղարկեց, Տիրիդատեսին ուղեկցելու պատրվակով, բայց իրականում նրան դիտավորյալ կերպով ուղարկեց Ներոնի մոտ պատանդության: (Ներոնը) այնքան վստահ էր, թե նա չի ապստամբելու, որ նրա փեսային, որը թեև նախկինում պրետոր էր եղել, թույլատրեց վերցնել իրեն տեղակալ:

Գիրք վաթսուներեքերորդ

1,1 Երբ (Հռոմում) կոնսուլներ էին Գայոս Տելեսինոսը և Սուետոնիոս Պավլինոսը[18], տեղի ունեցավ ամենափառահեղ մի բան, միաժամանակ նաև մեկ ուրիշ ամենաամոթալի դեպք: (Մի կողմից) Ներոնը մասնակցեց կիթառահարների մրցությանը, և երբ Մենեկրատեսը, կիթառահարության ուսուցիչը, ձիարշավարանում նրա պատվին հաղթահանդես
2 կազմակերպեց, ինքը հանդես եկավ իբրև կառավար: (Մյուս կողմից) Տիրիդատեսը ներկայացավ Հռոմ, իր հետ բերելով ոչ միայն իր, այլև Վոլոգեսոսի և Պակորոսի[19] և Մոնոբազոսի[20] որդիներին. ու նրանց ամբողջ երթը Եփրատի մոտից սկսած նմանվում էր հաղթահանդեսի: Քանդի ինքը՝ Տիրիդատեսը թե՛ տարիքով, թե՛ գեղեցկությամբ և թե՛ ծագումով

2,1 ու խելքով ծաղկուն վիճակում էր. և նրա ամբողջ շքախումբն ու արքունի հանդերձանքը ուղեկցում էր նրան. ու երեք հազար պարթևական, ինչպես նաև մեծ թվով հռոմեացի հեծ-
2 յալները հետևում էին նրան: Նրանց թե՛ քաղաքներն էին դիմավորում տոնազարդ և թե՛ ժողովուրդը՝ բարձրագոչ և հրճվագին. և ամբողջ պարենը նրանք ստանում էին անվճար, այնպես որ նրանց ամենօրյա ծախսը հանրային գանձարանից հաշվվում էր քսան բյուր (դրաքմե)[21]: Եվ այս նույն ձևով կատարվում էր շարունակ ինն ամիս տևած նրանց ամբողջ ուղևորության ընթացքում, (Տիրիդատեսը) ամբողջ ճա-
3 նապարհը, մինչև Իտալիա հեծյալ անցավ[22] և նրա կողքին հեծյալ գնում էր նրա կինը, գլխին քողի փոխարեն ոսկե սաղավարտ դրած, որպեսզի ոտնահարած չլինի (մարդկանց) շերեփելու իր հայրենի սովորությը: Իսկ Իտալիայում նա փոխադրվեց Ներոնի կողմից ուղարկված երկձի (կառքով) ու Պիկենումի ճանապարհով եկավ Նեապոլիս[23], (Ներոնի) մոտ:
4 Նա Ներոնին մոտենալիս հրաժարվեց մինչև իսկ ակինակեն մի կողմ դնել, թեպետև իրեն պատվիրել էին, այլ գամերով այն ամրացրեց պատյանին. հետո նա ծնկի եկավ ու ձեռները
3,1 խաչաձևեց և նրան կոչելով իր վեհապետը, երկրպագեց: Ներոնն ահա այս բանի համար ևս նրա վրա հիացավ և նրան ամեն կերպ հյուրասիրելուց բացի, Պուտեոլիում (գլադիատորական) մենամարտեր կազմակերպեց: Ագոնոթետեսն[24] էր Պատրոբիոսը՝ ազատ արձակված իր ստրուկը, որն այնքան շքեղություն և ծախսեր էր ներդրել, որ ամբողջ օրը ուրիշ ոչ ոք, բացի հիվանդապահներից— այրեր, կանայք և երեխաներ— չերևաց թատրոնում: Այս ամենի համար Պատ-
2 րոբիոսին ինչ-որ պատիվ պետք էր մատուցել, ուստի Տիրիդատեսը իր բարձրադիր աթոռից նետահարեց գազաններին և մեկ նետումով, եթե կարելի է հավատալ, միանգամից երկու ցուլի վարսեց և սպանեց:

4,1 Սրանից հետո Ներոնը նրան Հռոմ առաջնորդեց և խույրը դրեց գլխին: Ամբողջ քաղաքը զարդարված էր լույսերով և պսակներով, և ամենուրեք երևում էին մարդկանց հոծ բազմություններ. առանձնապես բազմամարդ էր Ֆորումը[25],
2 կենտրոնում, իրենց աստիճանների համեմատ՝ կանգնած էին

քաղաքացիները, սպիտակազգեստ և դափնեզարդ. իսկ մնացած բոլոր տեղերում՝ պայուծորեն հանդերձավորված զինվորները, որոնց զենքերն ու դրոշները փայլատակում էին։ Եվ նույնիսկ շրջակա բոլոր շենքերի կղմինդրե կտուրներն անգամ չէին երևում (այնտեղ) բարձրացած բազմություններից։
3 Այս ամենն այսպես պատրաստվել էր գիշերվա ընթացքում, իսկ լուսաբացին Ներոնը մտավ ֆորում, հագած հաղթահանդեսի զգեստը, սենատի և պրետորականների հետ ու բարձրանալով բեմ, նստեց արքունի գահավորակի վրա։ Դրանից հետո Տիրիդատեսը և նրա ուղեկիցներն անցան երկուս-
5,1 տեք կանգնած հոպլիտների շարքերի միջով ու մոտենալով բեմին, երկրպագեցին նրան, ինչպես նախկինում։ Երբ այս առիթով աղաղակ առաջացավ, Տիրիդատեսը ահաբեկվեց և որոշ ժամանակ մնաց անխոս, վախենալով, թե արդեն կոբրստի է մատնված։ Այնուհետև, երբ լռություն տիրեց, նա վերագտավ իր կորովը, և բռնադատելով իր հպարտությունը, պատեհության և անհրաժեշտության առաջ դարձավ ծառայամիտ, առանց ուշադրություն դարձնելու, թե ստորացուցիչ ինչ խոսք էր բարբառելու իր ստանալիք պարգևի հույսով։ Նա խոսեց այսպես. «Ես, ո՛վ վեհապետ, Արսակեսի[26] հետնորդն եմ, Վոլոգեսոս և Պակորոս թագավորների եղբայրը, իսկ քո՝ ծառան։ Ու եկել եմ ես դեպի քեզ, իմ աստծուն, երկրպագելու քեզ, ինչպես Միհրայինին[27], և քող ինձ համար կատարվի այն, ինչ դու ինքդ կամենաս. քանզի դու
3 ես իմ վիճակը և իմ բախտը»։ Իսկ Ներոնը նրան այսպես պատասխանեց. «Եվ դու լավ արեցիր անձամբ գալով այստեղ, որպեսզի քո ներկայությամբ իմ ներկայությունը վայելես. և այն ամենը, ինչ ոչ քո հայրը քեզ ժառանգություն թողեց, ոչ ևս քո եղբայրները քեզ տալուց հետո պահպանեցին, ես բոլորը քեզ պարգևում եմ և դարձնում Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանան, թե ես կարող եմ թագավորությունները և՛ վերցնել, և՛ պարգևել»։ Այս ասելով նա պատվիրեց բեմի առաջ հատկապես այդ առիթով պատրաստված աստիճանի վրա բարձրանալ. և երբ (Տիրիդատեսին) նստեցրին նրա ոտքերի առաջ, նա խույրը դրեց նրա գլխին։ Այնժամ մեծ և բազմապիսի աղաղակ բարձրա-

6,1 ցավ։ Այնուհետև, (սենատի) հատուկ որոշման համաձայն, թատերական հանդիսություն տեղի ունեցավ։ Եվ թատրոնը, ոչ միայն նրա բեմը, այլև նրա ամբողջ շրջագիծը ներսից ոսկեպատած էր, և այնտեղ եղած ամեն ինչ ոսկով էր զար-
2 դարված. ուստի և այդ օրը կոչեցին «ոսկե»։ Արևից պաշտպանվելու համար գլխավերևում պարզած վարագույրները ծիրանագույն էին, և դրանց մեջտեղում ասեղնագործած էր Ներոնը՝ ռազմակառքը վարելիս, իսկ նրա շուրջը փայլփլում էին ոսկե աստղեր։

3 Ամեն ինչ ահա այսպես կատարվեց. և պարզ է, որ Ներոնը շքեղ խրախճանք ևս ունեցան։ Եվ Ներոնն այս ամենից հետո հրապարակով կիթառահարեց և ռազմակառք վարեց՝ հագած կանաչ համազգեստ և գլխին դրած կառապանի սա-
4 դավարտ։ Այս բոլորից Տիրիդատեսը զզվանք զգաց Նրա հանդեպ, բայց գովաբանեց Կորբուլոնին, որին միայն մեկ բանում մեղադրեց. այն, որ այսպիսի վեհապետ ունենալով համբերում էր։ Իսկապես նա իր այս խոսքերը չթաքցրեց նույնիսկ Ներոնից, այլ մի անգամ ասաց նրան. «Ո՜վ վեհա-
5 պետ, հանձին Կորբուլոնի լավ ստրուկ ունես»։ Բայց այս ամենն ասվեց նրան առանց հասկացվելու. իսկ բոլոր մյուս դեպքերում նա շողոքորթեց և շատ վարպետորեն փորձեց հաճոյանալ նրան, որի համար էլ նա բազմապիսի նվերներ ստացավ, ինչպես ասում են, հինգ հազար բյուր (դրաքմե)[28] արժողությամբ և Արտաշատը վերաշինելու թույլտվություն[29]։
6 Այս ամենից բացի նա բազմաթիվ վարպետներ վերցրեց իր հետ, մի մասին ստանալով Ներոնի կողմից, մյուս մասին համոզելով փողի միջոցով։ Այսուհանդերձ Կորբուլոնը այդ բոլորին չթույլատրեց անցնել Հայաստան. այլ միայն ներ-
7,1 րանց, ում պարգևել էր Ներոնը։ Դրա համար էլ Տիրիդատեսը (Կորբուլոնի վրա) առավել հիացավ, իսկ Ներոնին՝ արհամարհեց։ Ու նա վերադարձավ ոչ իր եկած ճանապարհով— իլլիրիական երկրով՝ Հոնիական ծովի հյուսիսով— այլ Բրենդեսիումից[30] նավեց մինչև Դյուրրաքիոն[31]։ Նա տեսավ նաև Ասիայի քաղաքները, որի հետևանքով էլ նա զարմացել էր Հռոմեական տերության հզորությունից և գեղեցկությունից։
10 Մի անգամ Տիրիդատեսը պանկրատիոն (մրցություն)[32] դի-

տելիս, տեսնելով, որ մենամարտողներից մեկը վայր ընկնելուց հետո ծեծվում էր հակառակորդի կողմից, բացականչեց. «Մարտն անարդար է, քանզի արդարացի չէ ընկնողին ծեծելը»։

2 Տիրիդատեսն ահա վերաշինելով Արտաշատը, այն անվանեց Ներոնեա[33]. բայց Վոլոդեսոսը չցանկացավ իսկ գալ Ներոնի մոտ, թեպետև բազում անգամներ հրավիրել էր. և, ի վերջո, երբ (այդ հրավերները) ձանձրալի դարձան, պատասխան ուղարկեց նրան, թե՝ «Ավելի քեզ համար է հեշտ, քան թե ինձ համար, այսքան ծովեր անցնելը. ուստի և եթե դու գաս Ասիա, այնժամ մենք կպայմանավորվենք, թե որտե՞ղ հանդիպենք իրար»։ Վերջում այսպիսի հաղորդում հղեց Պարթևը (Ներոնին)։

8,1 Ներոնը թեպետև զայրացել էր նրա վրա, չնավեց նրա դեմ, ոչ էլ եթովպացիների կամ Կասպյան դռների կողմը, ինչպես

2 նախկինում ծրագրել էր։ Այսուհանդերձ նա ուրիշ գործերի հետ միասին, այս երկու կողմերն էլ լրտեսներ ուղարկեց, բայց տեսնելով, որ այդ երկրների հպատակեցումը կարող է ժամանակի և ջանքերի, հույս էր տածում, որ դրանք ինքնարերաբար կմիանան իրեն։

1. Խոսքը Ներոն կայսեր մասին է։

2. Խոսքը հռոմեական զորավար Գնեոս Դոմիտիոս Կորբուլոնի մասին է։

3. Սա Պարթևստանի թագավոր Վաղարշ I-ն է։

4. Վաղարշ I-ի կրտսեր եղբայրն է՝ Հայաստանում Արշակունյաց հարբռատության հիմնադիր Տրդատ I-ը (52, 66—88)։

5. Կորբուլոնի հրամանատարության տակ էին գտնվում արևելքում տեղաբաշխված հռոմեական բոլոր լեգեոնները (շուրջ 30 հազար զինվոր), ինչպես նաև Հռոմի դաշնակից թագավորների զինված ուժերը։

6. Հռոմեացիները Արտաշատը գրավեցին 58 թ. ամռանը։

7. Կորբուլոնը Տիգրանակերտ մտավ 59 թ. վերջերին։

8. Փոքրիկ թագավորություն Տիգրիսի միջին հոսանքի շուրջն ընկած տարածքում՝ Արբելա մայրաքաղաքով։

9. Խոսքը Մեծ Հայքի թագավոր՝ հռոմեական դրածո Տիգրան VI-ի մասին է։

10. Մոնեսես— պարթև մեծատոհմիկ, պարթևական բանակի հեծելազորի հրամանատար։

11. Հռոմեա-պարթևական սույն զինադադարը կնքվել է 61 թ., ըստ որի՝ Վաղարշ I-ը դադարեցնում էր Տիգրանակերտի պաշարումը և իր զորքերը դուրս

բերում Հայաստանից, իսկ Կորբուլոնը Հայաստանից ետ էր կանչում հռոմեական լեգեոնները և Տիգրան VI-ին հայտարարում գահընկեց։

12. Կեսեննիոս Պետոսը Արևելք ժամանեց 61 թվականին։

13. Սրսանիաս— Արածանի գետն է։ Ն. Ադոնցը Հառնդեան տեղադրում է Արածանիի ափին՝ Անձիտ-Խարբերդի դաշտում և նույնացնում է Եռանդ տեղանվան հետ (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 36—37)։

14. Խոսքը Կորբուլոնի և Պետոսի զորամասերի մասին է։

15. Այսինքն՝ Տրդատ I-ը։

16. «Պատկերք» ասելով՝ Դիոնը նկատի ունի Ներոնի կիսանդրին։

17. Բնագրում՝ դիադեմա։

18. Այսինքն՝ 66 թվականին։

19. Խոսքը Վաղարշ I-ի և Տրդատ I-ի եղբայր՝ Ատրպատականի թագավոր Բակուրի մասին է։

20. Սա Ադիաբենի Մոնոբազոս (Մանավազ) II թագավորն էր։

21. Շուրջ 200 հազար հունական դրաքմե է, որը հավասար է 800 հազար հռոմեական սեստերցի կամ 200 հազար ոսկի ֆրանկի։

22. Զրադաշտական կրոնը արգելում էր ծովային հանապարհորդություն կատարել։

23. Իտալական ժամանակակից Նեապոլ քաղաքն է։

24. Ազոեոթեես— անտիկ աշխարհում այսպես էին հորջորջվում գլադիատորական մրցումների կազմակերպիչները, ֆինանսավորողներն ու դատավորները։

25. Ֆորում— Հռոմ քաղաքի վարչական, քաղաքական, կրոնական ու առևտրական կյանքի գլխավոր հրապարակը, կենտրոնը։ Կառուցվել է մ. թ. ա. VI դարի սկզբներին՝ Պլատինյան և Կապիտոլյան բլուրների ստորոտում։ Այստեղ էին գտնվում դատարանը, դրամհատարանը, պետության արխիվը, առավել աչքի ընկնող տաճարները, այստեղ էր իր նստաշրջաններն անցկացնում սենատը (ծերակուտը)։

26. Աբսակես (Արշակ)— ըստ ավանդության, պարթև Արշակունիների նախահայրն է՝ սկյութական պարսն կամ ապարսն ցեղի առաջնորդը։ Ի պատիվ իրենց նախահոր՝ պարթևական բոլոր թագավորները կրում էին «Արշակ» տիտղոսը։

27. Միթրան (Միհր) իրանա-հնդկական դիցարանի գլխավոր աստվածներից մեկն էր, կյանք պարգևող և ցերեկային լույսի աստվածը, նույնացվել է արեգակի հետ։

28. Այսինքն՝ 50 միլիոն դրաքմե, որը հավասար է 200 միլիոն հռոմեական սեստերցի կամ 50 միլիոն ոսկի ֆրանկի։

29. Արտաշատը հիմնահատակ կործանվել էր 59 թ.՝ Կորբուլոնի կարգադրությամբ։

30. Նավահանգստային քաղաք Կալաբրիայում (Հարավային Իտալիա)։

31. Քաղաք Իլլիրիայում՝ Ադրիատիկ ծովի ափին, այժմ՝ Դուռես։

32. Պանկրատիոն— ըմբշամարտի և բռնցքամարտի տարրերից կազմված մենամարտի մի տարատեսակ։

33. Հայերը չընդունեցին իրենց մայրաքաղաքի «Ներոնեա» խորհ անվանու-

մը և Հայաստանի վերականգնված մայրաքաղաքը շարունակվում էր նախկինի պես կոչվել Արտաշատ։

ԱԼԱՆՆԵՐԻ Մ. Թ. 72—74 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԸՍՏ ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍԻ

ՀՐԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գիրք յոթերորդ

244 *Իսկ ալանաց ազգը[1], որը բնակեցրել է Տանայիս գետի[2] և Մեոտիս լճի շրջակայքը, սկյութացիներ են...։ Ահա նը-*
245 *րանք այդ ժամանակները նպատակ ունենալով արշավել Մեդիա և նրանից ավելի այն կողմ ընկած այլ վայրեր ավարառության համար, համաձայնության են գալիս Հյուրկանների[3] թագավորի հետ, որը տերն էր այն անցուղու, որ Ալեքսանդր (Մակեդոնացի) թագավորը փակել էր երկաթյա ա-*
246 *մուր դարպասներով[4]։ Ու քանի որ այդ մուտքը նրանց տրամադրեց, ապա նրանք հոծ բազմությամբ հարձակվեցին մեդացիների վրա, որոնք ոչինչ չէին կասկածում, և ավարի մատնեցին բազմամարդ և ամեն տեսակ անասուններով հա-*
247 *րուստ երկիրը, իսկ ոչ ոք չհամարձակվեց նրանց դիմադրել։ Որովհետև այդ երկրում թագավորող Պակորոսը[5] սարսափահար ապաստանել էր դժվարամատույց վայրեր, մնացած ամեն ինչը նրանց զիջելով, նրանցից կարողացավ հաղիվ իր կնոջն ու հարճերին, որոնք գերի էին ընկել, հարյուր տա-*
248 *ղանդ (փրկագին) վճարելով աղատել։ Շատ հեշտությամբ և առանց մարտի կողոպուտի ենթարկեցին երկիրը մինչև*
249 *Հայաստան ու վերադարձան ամեն ինչ թալանելով։ Իսկ (Հայաստանում) թագավորում էր Տիրիդատեսը[6], որը ռազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց, բայց քիչ էր մնացել, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը գերի ընկ-*
250 *ներ կենդանի։ Որովհետև (ալաններից) մեկը հեռվից պարան ձգեց նրա վրա և նրան արդեն կբռներ, եթե (Տիրիդատեսին) չհաջողվեր իր սրով խզուն կտրել պարանը և ան-*

251 *հապաղ ճողոպրել։ Մինչդեռ ալանները այդ կռվի (ելքից) ավելի ևս գաղազած, երկիրը թալանեցին և երկու թագավորներից էլ մարդկանց մեծ բազմություն և ուրիշ շատ ավար տանելով, նորից վերադարձան իրենց երկիրը։*

1. Ալաններ— Հյուսիսային Կովկասի վաչկատուն ցեղեր. նույնացվում են օսերի հետ։ Սոանք հաճախ անցնելով Կասպից և Ալանաց դռներով, ներխուժում էին Անդրկովկաս, Ատրպատական և Հայաստան։ Ալանների սույն թալանչիական արշավանքը տեղի է ունեցել 72—74 թվականներին։

2. Տանայիս— Դոն գետի անվանումը անտիկ հեղինակների մոտ։

3. Հյուրկանիա (Հիրկանիա)— հայկական աղբյուրների վրկանից աշխարհն է. տեղադրվում է Պարսկական թագավորության հյուսիսարևելյան ծայրամասում՝ Անդրկասպյան շրջաններում։

4. Խոսքը, ըստ երևույթին, վերաբերում է հայկական աղբյուրների «Դրունք Կասպից» լեռնանցքին, որը տեղադրվում է այժմյան Ղարադաղի լեռներում՝ Կասպից ծովի արևմտյան առափնյա շրջաններում։

5. Պակորոս— Պարթևաց Վաղարշ I թագավորի և Հայոց Տրդատ I թագավորի եղբայր Բակուրն է, որին Վաղարշ I-ը հաստատել էր Մեդիա-Ատրպատականի գահի վրա։

6. Տիրիդատես— պարթև Արշակունի Վոնոն II թագավորի (51 թ.) երրորդ որդին, եղբայրը Պարթևաց արքայից արքա Վաղարշ I-ի և Ատրպատականի թագավոր Բակուրի՝ «Մեծ թագավոր Հայոց մեծաց» Տրդատ I։

ԳԱՌՆԻԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գառնիի հունարեն արձանագրությունը հայտնաբերվել է 1945 թ. տեղի գերեզմանատան տարածքում, Մարտիրոս Սարյանի կողմից: Արձանագրությունը սկզբնապես գտնվելիս է եղել բերդապարսպի շարվածքում: Արձանագրության պահպանված մասն ունի 109 սմ երկարություն և 52 սմ բարձրություն: Արձանագրությունը բաղկացած է ինը տողից, տառերի բարձրությունը 5,5 սմ է: Ժամանակի ընթացքում որոշ տառեր հողմահարվել են, քարի աջակողմյան վերջավորությունը կոտրված է, **որով** բոլոր տողերի վերջավորությունները (աջ մասից) բացակայում են:

Սույն արձանագրությունը կատարված է Գառնիի ամրոցի նորոգման առթիվ: Այստեղ հիշատակված են Հայոց թագավոր Տրդատ I-ը (66—88), Հ. Մանանդյանի կարծիքով՝ Տրդատ III-ը, իր տիտղոսներով, շինարարության օբյեկտը և թվագրումը՝ ըստ թագավորի իշխանության տարիների: Արձանագրության երկրորդ

մասում (6—9-րդ տողերը) հիշատակված են ոմն Մեննեաս, որն իր վրա է վերցրել թագավորական ամրոցի նորոգման ծախսը և գործարին նեկա վկայի՝ Մատե անունով մեկի անուն: Արձանագրության այս երկրորդ կեսը առավել առեղծվածային է և, հավանաբար, ուսումնասիրողների ջանքերի, դեռևս բավարար վերծանված չի կարող համարվել:



Նկար 18. Գառնիի հունարեն արձանագրությունը (մ. թ. I դար)

Արձանագրության վերծանությամբ զբաղվել են՝ Ս. Լիսիցյանը, Հ. Մանանդյանը, Ա. Աբրահամյանը, Բ. Առաֆելյանը, Կ. Տեր-Վերը, Գ. Սարգսյանը, Հ. Բարթիկյանը և Ս. Կրկյաշարյանը: Նման բուռն հետաքրքրությունը բացատրվում է նրանով, որ արձանագրությունը անգնահատելի նշանակություն ունի հին Հայաստանի հաղորդական ու մշակութային պատմության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերություններին առնչվող բազմաթիվ հարցերի ուսումնասիրության համար:

Արձանագրության ստորև բերված տեքստը տալիս ենք Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ:

1. Հելիոս[1] Տիրիդատես[2] թագավոր
2. Մեծ Հայքի, թագավորելով
3. իբրև դեսպան[3] (վնհապետ), կառուցեց[4] պայծառափայլ
4. թագուհու համար անհաղթահարելի ամրոցը
5. ԺԱ (11-րդ) տարում[5] իր թագավորության...:

6. Մեննեասը[6] տիրոջ արտոնությամբ [իբրև]
7. լիտուրգոս[7] մեծ սպահպետի[8],
8. ի նշան շնորհակալության,
9. Մատե[9] վկայի ներկայությամբ [գնեց]:

1. Հելիոս— բառացիորեն նշանակում է «արև» և գուցե մասնանշում է Տրդատ I-ի քրմական պարտավորությունը (տե՛ս Տակիտոս, Տարեգրություններ, XV, 24), քանի որ Տրդատը Արևելքում լայն տարածում գտած Միհրը (Միհր), որը նույնացվում է Ապոլլոն-Արևի հետ, աստվածության քրմի պիտի լիներ: Մյուս կողմից էլ հայկական Տիր (Տիրան) աստվածը նույնացվում է Ապոլլոնի հետ, ուստի այս Հելիոսը կարող է լինել Տիրան կամ Տրդատ հայերեն անվան հունարեն թարգմանությունը, որպես Տրդատի տիտղոսը կամ հավելյալ անունը իբրև քրմի: Կարծիք կա նաև, որ Տրդատ I-ը, ժամանակի սովորությամբ աստվածացվելով, նույնացվել է Հելիոս (Արև)— Ապոլլոն-Տիր աստծու հետ, ուստի և արձանագրության մեջ անվանվում է նաև Հելիոս:

2. Որոշ հետազոտողներ (Հ. Մանանդյան և այլք) արձանագրությունում հիշատակված սույն Տրդատին փորձում են նույնացնել Տրդատ III Մեծի հետ:

3. Դեսպան— անսահմանափակ իշխանությամբ օժտված մխապետ:

4. Այստեղից չպետք է եզրակացնել, թե Տրդատ I-ն է կառուցել Գառնիի ամրոցը: Տակիտոսի հաղորդումներից մենք գիտենք, որ I դարի 40—50-ական թթ. Գառնիի ամրոցը արդեն գոյություն ուներ (տե՛ս Տակիտոս, Տարեգրություններ, XII, 45): Հետևաբար, այստեղ խոսք կարող է լինել միայն Տրդատ I-ի կողմից ամրոցի վերակառուցման մասին:

5. «11-րդ տարում»— ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ այս թվականը համապատասխանում է Գառնիի ամրոցի վերակառուցման շինարարական աշխատանքների թվականին, այսինքն՝ Տրդատ I-ի գահակալության (66 թ.) 11-րդ տարին, որը կլինի 76 թվականը:

6. Մեննեաս— հունականացված հայկական անուն է, որը, ուսումնասիրողների կարծիքով, Ամատունի նախարարական տան մեջ լայն տարածում գտած Մանե, Մանուել (սեռական հոլ.) տոհմանունն է:

7. Լիտուրգիա— ծառայություն, որը կատարվում է հասարակական կարգով, անվճար: Լիտուրգոս էր կոչվում այն անձնավորությունը, որը կատարում էր որևէ լիտուրգիա, այսինքն՝ այն ծառայությունը (ռազմանավերի շինարարություն, շինարարական աշխատանքներ, թատերախմբերի ֆինանսավորում, հարկերի գանձում և այլն), որը անտիկ աշխարհում, այս կամ այն պոլիսում, իր իսկ միջոցներով կատարում էր որևէ ունևոր քաղաքացի՝ քաղաքային համայնքի կամ ընդհանրապես պետության օգտին: Միապետության պայմաններում լիտուրգիայի բնույթը սկսի կրել մեծ փոփոխություններ, այս ժամանակաշրջանում արդեն թագավորն ինքը այս կամ այն ծառայությունը՝ լիտուրգիան, հանձնարարում էր այս կամ այն անձնավորությանը: Տվյալ դեպքում Մեննեասին, հավանաբար, հանձնարարված է եղել Գառնիի ամրոցի վերակառուցման աշխատանքների ֆինանսավորումը:

8. Այսինքն՝ սպարապետի։

9. Որոշ հետազոտողներ Մատե անձնանվան մեջ փորձում են փնտրել [Ա]մատ[ունի] նախարարական տան հորջորջումը։

ԱՊԱՐԱՆԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն արձանագրությունը հայտնաբերվել է 1908 թ. Բաշ-Ապարանում, Գարեգին Հովսեփյանցի կողմից: Այժմ այն պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Քարի արձանագրությունը կրող մասը ունի 70 սմ բարձրություն և 45 սմ լայնություն: Արձանագրության ստորին մասը ջարդված է, որի պատճառով էլ արձանագրությունը թերի է: Այն բաղկացած է եղել տասից ավելի տողերից, որոնցից այժմ նկատելի են միայն ինը: Քարի արձանագրություն կրող երեսը հողմաճարված է, տառերը աղճատված են և դժվար են ընթերցվում, իսկ աջ եզրը առավել մաշված է, որի պատճառով էլ տեքստը լրիվ չի վերծանվում:

Արձանագրությունում հիշատակված է Մեծ Հայքի թագավոր Տրդատը (I-ը, II-ը կամ III-ը) իր տիտղոսներով հանդերձ, որը, ինչ-որ ծառայության կամ գործակալության դիմաց, Գնթունիների նախարարական տոհմին շնորհում է Նիգ բաղաքը:

Արձանագրությունը ընթերցել է առաջին անգամ Մ. Ռոստովցևը, այնուհետև նրան անդրադարձել են Հ. Մանանդյանը, Կ. Տրեվերը, Բ. Առաքելյանը, Ս. Կրկյաշարյանը և ուրիշներ: Ստորև բերված տեքստը տալիս ենք Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ:

1. Տիրիդատես[1]
2. Մեծը, Մեծ
3. Հայքի թագա-
4. վորը տվեց
5. Գնթունու (տոհմից)[2]
6. Հոռոմիների[3]
7. Որդուն Հուտեստ[4] *(՞)*
8. Նիգ[5] *նորաքաղաքը*
9. ... փետրվարի[6]*...ι*

1. Տիրիդատես (Տրդատ)— որոշ ուսումնասիրողներ (Մ. Ռոստովցև, Հ. Մանանդյան և այլք) կարծում են, որ այստեղ խոսքը Տրդատ III Մեծի (298—330) մասին է։ Կ. Տրեվերը մերժում է այս տեսակետը և գտնում, որ այն վերաբերում է Տրդատ II-ին (217—252)։ Սակայն արձանագրության հնագրական տվյալները հուշում են, որ այն ավելի շատ վերաբերում է Տրդատ I-ին՝ Արշակունյաց թագավորական հարստության հիմնադրին։

2. Այստեղ տառերը հողմահարված լինելու պատճառով հնարավոր չէ վերծանել պարգև ստացող Գնթունու անունը։

3. Հռոդոմիթր— հայ իրականության մեջ այսպիսի անուն կրող անձնավորություն այլևս չի հանդիպում։ Ս. Կրկյաշարյանի կարծիքով այս անունը Վարդ-Միհր անվան հունարեն թարգմանությունն է։

4. Ամենայն հավանականությամբ, նիգը տրվում էր Գնթունիներին հուտեստ՝ արքունիքում նրանց վարած գործակալության պաշտոնի դիմաց։ Խորենացու մի հաղորդման համաձայն, Գնթունիները Հայոց Արշակունիներին զգեստներ էին հագցնում («Պատմություն Հայոց», գիրք Բ, գլ. է)։

5. Նիգը տեղադրվում է այժմյան Ապարանի տեղում. այն Գնթունի նախարարական տան տոհմակալվածքն էր։

6. Փետրվար ամսանունից հետո արձանագրությունը պարունակել է նաև տարեթիվը, սակայն, դժբախտաբար, այն խիստ հողմահարված է և այժմ չի ընթերցվում։

ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Հռոմեական ականավոր պատմագիր, գիտնական ու քաղաքական գործիչ Գայոս Պլինիոս Սեկունդոսը ծնվել է մ. թ. 23 թվականին՝ Հյուսիսային Իտալիայի Կոմ քաղաքում: Նա ստացել է իր ժամանակների համար բազմակողմանի ու փայլուն կրթություն, ճանապարհորդել է բազմաթիվ երկրներով: Երկար տարիներ վարել է պատասխանատու պաշտոններ (կայսերական պրոկուրատոր՝ Նարբոնյան Գալլիայում, Իսպանիայում և Հռոմեական Աֆրիկայում, հռոմեական հեծելազորի հրամանատար՝ Գերմանիայում և այլն): Պլինիոսը մահացել է 79 թ. օգոստոսի 24-ին՝ Վեզուվի ժայթքման հետևանքով, 56 տարեկան հասակում:

Պլինիոս Ավագը ունեցել է բեղմնավոր գրիչ, գրել է յոթ մեծածավալ ստեղծագործություններ («Գերմանական պատերազմներ»՝ 20 գրքով, «Պատմություն»՝ 31 գրքով, «Բնական պատմություն»՝ 37 գրքով և այլն), որոնցից մեզ է հասել միայն վերջինը: «Բնական պատմությունը» Պլինիոսը գրել է Վեսպասիանոս կայսեր որդու՝ Տիտոսի հանձնարարությամբ և ավարտել է այն 77 թվականին: Պլինիոս Ավագի սույն երկը անտիկ բնագիտական մտքի մի յուրահատուկ հանրագիտարան է, որտեղ արժեքավոր ու

բացառիկ տեղեկություններ են պահպանված տիեզերագիտության, երկրագիտության, աշխարհագրության, բուսական ու կենդանական աշխարհների, հանքաբանության, բժշկության, տեղ-տեղ նաև հին աշխարհի երկրների բաղաքական, մշակութային պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Մեզ համար հատկապես կարևոր են Պլինիոսի տեղեկությունները Հայաստանի բնակլիմայական պայմանների, բնաշխարհի, հանքային հարստությունների, բաղաքների ու վարչական բաժանման մասին, որոնք շատ հաճախ եզակի են ու անփոխարինելի:

Պլինիոս Ավագից ստորև բերված հատվածները տրվում են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է "Plinii Secundi C. Naturalis historiae, vol. 1—10, Cambridge, Mass.—London, 1950—1962 (Loeb Classical Library)» հրատարակությունից:

ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք V

XX. Այստեղ է, որ ամենից ավելի հարմարն է Եփրատի մասին խոսել: Այն բխում է Մեծ Հայքի Կարենիտյան պրեֆեկտուրայում[1]: Այդ գետը ամենամոտից տեսնողներից Դոմիտիոս Կորբուլոնը[2] նրա ակունքը տեղադրում է Աբա լեռան վրա, իսկ Լիկինիոս Մուկիանոսը՝ Կապոտեն լեռան[3] ստորոտին, Զիմարայից[4] 12.000 քայլ վերև: Այդ գետը նախ կոչվում է Պյուքսիրատ<ես>: Այն հոսում է Կապադովկիայից բաժանելով նախ Դերքսենեն[5], ապա Անաիտիսը[6], որոնք Հայաստանի շրջաններն են: Դասկուսան[7] Զիմարայից 75.000 քայլ հեռավորություն ունի: Այնտեղից մինչև Պաստոնա Եփրատը նավարկելի է 50.000 քայլ տարածության վրա. մինչև Կապադովկիայի Մելիտենե քաղաքը (գետի երկարությունն է) 24.000 քայլ, մինչև Հայաստանի Ելեգեա[8] քաղաքը՝ 10.000 քայլ, այս տարածության վրա այն ընդունում է Լյուկոս[9], Արսանիաս[10] և Արսանոս գետերը: Ելեգեայում գետն իր ճանապարհի վրա հանդիպում է Տավրոս լեռանը, որը նրան չի դիմադրում, չնայած 12.000 քայլ հաստություն ունեցող իր զանգվածին: Գետը

Օմիրաս է կոչվում, երբ լեռն է ներխուժում, այն հաղթահարելուց հետո արդեն կոչվում է Եփրատ. նրա հունը ժայռոտ է և հոսանքը արընթաց, նույնիսկ այդ լեռն անցնելուց հետո[11]:

Գիրք VI

IX. Մեծ Հայքը, որը սկսվում է Պարիադրես լեռներից[12], ինչպես ասացինք, Կապադովկիայից բաժանված է Եփրատով, և Եփրատից հետո Միջագետքից բաժանված է Տիգրիսով, որը նվազ հայտնի գետ չէ: (Մեծ Հայքը) ծնունդ է տալիս թե՛ մեկին, թե՛ մյուսին և կազմում է սկիզբը Միջագետքի, որը տարածվում է երկու գետերի միջև. այնտեղ միջանկյալ տարածությունը բնակեցված է Արոեացի[13] արաբների կողմից: Այսպիսով այն ձգում է իր սահմանը մինչև Ադիաբենե, նրանից բաժանված լինելով լայնակի մի լեռնաշղթայով[14], իսկ ձախ կողմում, լայնությամբ տարածվում է մինչև Կյուրոս գետը՝[15] անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ իր երկարությամբ տարածվում է մինչև Փոքր Հայքը, որից բաժանված է Եվքսինյան Պոնտոսի մեջ թափվող Ապսարոս գետով[16] և Ապսարոսին ծնունդ տվող Պարիադրես լեռներով:

X. Կյուրոս (գետը) ծնվում է Հենիոքիական լեռներում, որոնք այլոց կողմից կոչվել են Կորաքսյան[17]: Արաքսը (ծնվում) է միևնույն լեռներում, ինչպես և Եփրատը՝ 6.000 քայլ միջանկյալ հեռավորությամբ և աճելով Մու[ր]սխ գետակով[18], ինքը թափվում է, ըստ մի քանի աղբյուրների, Կյուրոսի մեջ, որը նրան տանում է Կասպից ծով:

Փոքր Հայքում հայտնի քաղաքներն են՝ Կեսարիան, Ազան, Նիկոպոլիսը[19], Մեծ Հայքում՝ Ար<սա>մոսատը[20] Եփրատին մոտ, Կարկաթիոկերտը[21] Տիգրիսի մոտ, Տիգրանակերտը մի բլրի վրա, Արտաշատը՝ դաշտավայրում, Արաքսի մոտ: Ալֆիդիոսի կարծիքով, ամբողջ Հայաստանի տարածությունը 5.000·000 քայլ է, Կլավդիոս կայսրը նրա երկարությունը Դասկուսայից մինչև Կասպից ծովի ափը հաշվում է 1.300.000 քայլ, իսկ լայնությունը (այդ թվի) կեսը, Տիգրանակերտից մինչև Իբերիա[22]: Ստույգ է, որ այն բաժանված է ստրատեգիաներ[23] կոչված պրեֆեկտուրաների, որոնցից մի քանիսը թագավորություններ էին կազմում հնում: Նրանք թվով 120 են և բարբարոսական անուններ ունեն: Արևելքում Հա-

յաստանը սահմանագծված է, սակայն ոչ անմիջապես Կերավնյան լեռներով[24] և Ադիաբեննով։ Միջանկյալ տարածությունը բռնում են Սոփենները[25]։ Սոփեններից այն կողմ մի լեռնաշղթա է գտնվում, իսկ լեռնաշղթայից այն կողմ Ադիաբենն է։ Հայաստանին ամենամոտ բարձունքների վրա ապրում են մենոբարդցիները, մոկսիանները[26]։ Ադիաբեննին շրջապատում են Տիգրիսը և անմատչելի լեռներ։ Նրա (Ադիաբենի) ձախ կողմում մեղացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը, որը, ինչպես իր տեղում կասենք, օվկիանոսից է առաջանում և ամբողջովին շրջապատված է Կովկասյան լեռնաշղթայով։

Հիմա թվարկենք Հայաստանի սահմանամերձ շրջաններում ապրող ժողովուրդներին։

XI. Ամբողջ դաշտավայրը, Կյուրոսից սկսած, բռնում է ալբանների ժողովուրդը, հետո՝ իբերները, որոնք նրանցից բաժանված են Ալազան գետով, որն իջնում է Կովկասից և գնում է թափվելու Կյուրոսի մեջ։ Ամենակարևոր քաղաքներն են Ալբանիայում՝ Կաբալակ(ա)ն[27], Իբերիայում՝ Հարմաստիսը[28] (գետի մոտ), Նեոբիսը։ (Այնտեղ են) Թասիայի և Բրիսարեյի շրջանները[29] մինչև Պարիադրես լեռները։ Նրանցից այն կողմ՝ Կողքիսի ամայի տարածությունները։ Այդ տարածությունների այն մասում, որը նայում է Կերավնյան լեռներին, բնակվում են արմենոխալիբները[30]. մոսխների երկիրը[31] մինչև Իբերոս գետը, որը թափվում է Կյուրոսի մեջ. նրանցից ներքև սակասենները[32], այնուհետև մակրոնները[33] մինչև Ապսարոս գետը. սրանք են դաշտավայրերի և զառիվայրերի բնակիչները։ Հակառակ կողմից, Ալբանիայի սահմաններից սկսած, լեռների ամբողջ շարքի դիմաց գտնվում են սիլվերի վայրի ժողովուրդները, նրանցից ներքև՝ լուբիենների ժողովուրդը, այնուհետև դիդուրները և սոդիացիները[34]։

1. Կարենիայան պրեֆեկտուրա— Կարնո գավառն է՝ Բարձր Հայքի 9-րդ գավառը, այժմյան էրզրումի սանջակը։

2. Խոսքը Հռոմեական նշանավոր զորավար, Կապադովկիայի կուսակալ, լեգատ և Արևելքում Հռոմեական բանակների գլխավոր հրամանատար Դոմիտիոս Կորբուլոնի մասին է։

3. Կապոտեն— Կապույտ (Ծաղկավետ) լեռնաշղթան է, որի հարավային լեռնաբազուկներում են գտնվում բուն Եփրատի (կամ Արևելյան Եփրատ, այժմ՝ Կարա-սու) ակունքները։

4. Զիմարա— քաղաք Փոքր Հայքում։

5. Դերխանե— Դերջանն է, Բարձր Հայքի 6-րդ գավառը։

6. Անահտիս— Անահտական գավառն է (կամ Եկեղյաց), Բարձր Հայքի 4-րդ գավառը, անտիկ հեղինակների Ակիլիսենն, այժմյան Երզնկայի շրջանը։

7. Դասկուսա— բնակավայր Փոքր Հայքում, այժմյան Արաբկիր-չայի գետաբերանից արևմուտք, Կողբենիք գյուղից հյուսիս։

8. Հայաստանի Ելեգեա— Եղեգիսի ջերմուկներն են, այժմ՝ Իլիջա, Կարինից արևմուտք։

9. Կյուկոս— չպետք է շփոթել Իրիս գետի (այժմ՝ Եշիլ-Իրմակ) Կյուկոս վտակի (Գայլ գետ, Թերմոդոն) հետ։ Այստեղ խոսքը այն Գայլ գետի մասին է, որը կի (Գայլ գետ, Թերմոդոն) հետ։ Այստեղ խոսքը այն Գայլ գետի մասին է, որը կի (Գայլ գետ, Թերմոդոն) հետ։ Այստեղ խոսքը այն Գայլ գետի մասին է, որը ակիզբ է առնում Եղի-Դերելար լեռնանցքից և երզնկայի մոտ թափվում է Եփրատը։

10. ԵՒրսանիաս— հայկական սկզբնաղբյուրների Արածանի գետն է (Արևելյան Եփրատ), այժմ՝ Մուրադ-չայ։

11. Իր ակունքներից մինչև Տավրոսյան լեռները, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, Եփրատի երկարությունը կազմում է ավելի քան 600 կիլոմետր։

12. Պարիադրես— խոսքը Պոնտական-Պարխարյան (Խաղտյաց) լեռների մասին է։

13. Պլինիոսն այստեղ նկատի ունի Արուաստան երկիրը, այսինքն՝ անտիկ հեղինակների Միգդոնիան, որի կենտրոնն էր Մծբինը։

14. Խոսքը անտիկ հեղինակների Նիփատես լեռնաշղթայի մասին է, որը գտնվում է Փոքր Խարուր գետից դեպի արևելք։

15. Այսինքն՝ Կուր (Քուռ) գետը։

16. Ապսարոս— Ճորոխի ստորին հոսանքը, որտեղից սկսվում է Պարխարյան լեռնաշղթան։

17. Կոռաքսյան— Պլինիոսը նկատի ունի Կարմիր Փորակ (այժմ՝ Ալահյուակբար) ջրբաժան լեռնաշղթան Կարսի և Արտահանի միջև։

18. Մուսխս— հայկական Մուրց գետն է, այժմ՝ Հասան Ղալա-սու։

19. Այս երեք քաղաքներն էլ գտնվել են Գայլ գետի հովտում։ Ս. Երեմյանի կարծիքով, Կեսարիան պիտի լինի Սատաղը (այժմ՝ Սադաղ), Ազան՝ այժմյան Ազիզ գյուղը, իսկ Նիկոպոլիսը՝ այժմյան Բյուրգ կամ Պյուրկ գյուղի մոտ (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 838)։

20. Ար<սա>մոսատա— հայկական Արշամաշատն է, տեղադրվում է Անթիաս դաշտավայրում, Արածանի գետի ափին՝ այժմյան Խարաբա-Նաջարան ավերակ գյուղի մոտ։

21. Կարկաթիոկերտա— Ծոփքի մայրաքաղաք Արկաթիակերտն է, տեղադրվում է Անգեղ տուն գավառում, այժմ՝ Էգիլ։

22. Այսպիսով, ըստ Պլինիոսի, Մեծ Հայքը արևմուտքից դեպի արևելք ձգվում է 1.300 մղոն (այսինքն՝ 1.950 կմ), իսկ հարավից մինչև հյուսիս՝ 650 մղոն (այսինքն՝ 975 կմ)։ Ուսումնասիրողներն իրավացիորեն նշում են, որ այս թվերը չափազանցված են. իրականում Մեծ Հայքի երկարությունը հավասար էր 870 կմ, իսկ լայնությունը՝ 550 կիլոմետրի (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 838, ծան. 78)։

23. Ստրատեգիա— հին աշխարհում վարչատերիտորիալ միավոր։

24. Կերավնյան լեռները (Շանթային լերինք) Կովկասյան լեռնաշղթայի այն մասն են, որը հյուսիսից եզերում է Աղվանքը։ «Աշխարհացույց»-ում այն կոչվում է «Կապ-կոհ լերինք»։

25. Այսինքն՝ ծոփացիները։

26. Ցեղեր, որոնք ապրում էին Արևելյան Տիգրիսի հովտում և սրան հարող լեռներում։ Մոկսիանների ցեղը ազգակից էր հայերին. նրանց անունից է ծագել Մեծ Հայքի Մոկք (Մոկս) նահանգի անունը։

27. Կարալակա— հայկական աղբյուրների Կապաղակ քաղաքն է, այժմ Կաբալա գյուղը Նիժ գյուղի մոտ։

28. Հարմասախա— խոսքը Արմագի-Մցխեթա քաղաքի մասին է։

29. Խոսքը Թռեղք (Թրիալեթի) գավառի մասին է։

30. Աբմենոխալիբներ— բառացիորեն՝ հայախալիբներ, Հայաստանում բնակվող խալիբներ՝ ցեղեր, որոնք գտնվում էին մերձևծովյան հարավարևելյան շրջանում. խալիբների այն մասը, որը ժամանակի ընթացքում ձուլվեց հայերի հետ։

31. Մոսխերի երկիրը համապատասխանում է հայոց Գոգերձական կուսակալությանը, որտեղ բնակվում էր վրացական մեսխ կամ մոսխ ցեղը։

32. Սակասենե— հայկական Շակաշենն է, Ուտիքի 7-րդ գավառը՝ Կուր գետի հովտի աջակողմյան մասում։

33. Մակրոններ— ցեղեր, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Ճորոխի ավազանում։

34. Սրանք կովկասյան լեռնարնակ ցեղեր էին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

Է

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԹԵ Ո՛ՐՏԵՂԻՑ ՀԻՄՆԵՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀՐԱՄԱՅԵՑ ԿԱՌԱՎԱՐՎԵԼ

Այս գլուխը մեծ է, հավասար պատմություններով լի և արժանի է ընդարձակ ու կոկիկ պատմվելու։ Որովհետև շատ բան կա այստեղ պատմելու տների, ցեղերի, քաղաքների, գյուղերի, դաստակերտների և ընդհանրապես թագավորության կարգերի և կարգավորման վերաբերյալ, ինչպես նաև թագավորության հետ կապված զորքերի, զորապետների, կողմերի կուսակալների և սրանց նմանների մասին։

Արդ՝ նախ և առաջ թագավորը[1] *կարգավորում է ինքն իրեն և իր տունը, սկսելով իր գլխից ու թագից*[2]*։ Եվ Բագարատ կոչվածին, որ հրեաներից էր ծագում*[3]*, շնորհակալություն է հայտնում հենց սկզբից անձնատուր լինելու և թագավորին օժանդակելու համար, ինչպես և նրա հավատարմության ու քաջության համար պարգևում է նրան ցեղի վերը հիշված տանուտիրական պատիվը*[4]*, իրավունք տալով թագ դնել թագավորի գլխին և կոչվել թագադիր*[5]*, այլև սպասետ*[6]*, և մանր մարգարիտից երեք փաթ վարսակալ կրել առավել ոսկու և ակնեղենի, երբ արքունիքում և թագավորի տանը շրջելիս լինի։*

Իրեն զրահատներ հագցնող նշանակում է Զեռեսին, քանանացիների սերնդից և նրա ցեղի անունը դնում է Գնթունի[7]*, չգիտեմ ինչ պատճառով։ Իսկ իրեն զինված թիկնապահներ է նշանակում Հայկազն Խոռի սերնդից ընտիր և քաջ նիզակավոր և սուսերավոր մարդկանց, և նրանց նախարարության գլուխ է նշանակում Մաղխազ անունով մի բարի ու սրտառատ մարդու. բայց ցեղի անունը պահում է սկզբնականը*[8]*։ Իսկ Դատին, որ Գառնիկի զավակներից էր, Գեղամից սերված, նշանակում է արքունական որսերի վրա։ Նա ունեցավ մի որդի Վարժ անունով, որի անունով և այս ցեղը կոչվեց*[9]*, բայց այս հետո եղավ, Արտաշեսի ժամանակ։ Գաբաղ անունով մեկին նշանակում է ձիերի երամակների վրա, իսկ Աբելին սպասների և գահերի*[10] *վրա. նրանց պարգևում է գյուղեր, որոնք նրանց անուններն են կրում, ինչպես նաև նախարարությունները կոչվեցին Աբեղյան և Գաբեղյան*[11]*։*

Իսկ Արծրունիներն[12] *ըստ իս ոչ թե Արծրունի են, այլ արծիվունի, որոնք նրա (թագավորի) առջև արծիվներ էին կրում։ Ես զանց եմ անում առասպելական դատարկաբանությունները, որ պատմում են Հադամակերտում*[13]*, իբր թե երեխայի քնելուն հսկառակվելիս են եղել անձրևն ու արևը, և թռչունը հովանի է եղել թալկացած պատանուն։ Գնունիներն էլ ըստ իս գինիունի են, որ թագավորին արժանի ըմպելիքներ էին պատրաստում. և զարմանալի կերպով դուգադիպեցին նրա գործն ու անունը, որովհետև թագավորին ըմպելիքներ էր պատրաստում ընտիր և համեղ գինիներից և անունն էլ Գին էր, որի վրա վաղարշակը շատ զվարճանալով, ասում են, դասում է նախարարական ցեղերի թվում*[14]*։ Եվ այս երկու տունը, Արծրունիներն ու Գնունիները, Սենեքերիմի*[15] *սերունդներից են։*

Ասեմ նույնպես, որ Սպանդունիներին[16] նշանակում է սպանդանոցների վրա, իսկ Հավունիներին՝ բազեակիրներ և բազե բռնողներ, որովհետև ապրում էին անտառներում[17]։ Եվ եթե դատարկախոս չհամարես ինձ՝ կասեմ, որ Զյունականներին[18] էլ նշանակում է ամառանոցների պահապաններ և ձյունակիրներ, որոնք առաջադիմելով ազնվականություն ստացան, իբրև թագավորներին մտերիմ մարդիկ։

Եվ արքունիքում չորս պահապան գունդ է նշանակում, ամեն մեկը բյուր սպառազեն մարդուց բաղկացած, բուն հին թագավորների սերունդներից, մեր նախնի Հայկից ծագած, որոնք բուն ոստան[19] էին կոչվում, և երբեմն-երբեմն հայրերից ժառանգություն էին ստանում գյուղեր և դաստակերտներ։ Բայց վերջերը, Պարսից թագավորների ժամանակ, ինչպես լսում եմ, ուրիշ գնդեր են կազմվել ու ոստանի կոչվել։ Չգիտեմ, արդյոք նախկին ցեղի սպառվելո՞ւ պատճառով, թե մի որևէ ընդդիմության պատճառով այդ ցեղը դեն գցելով և նրա տեղը ուրիշ գնդեր նշանակելով՝ արքունի անունով։ Բայց առաջինը հաստատ հին թագավորների սերընդից էր, ինչպես և այժմ կան Վրաստանում, որոնք Սեփհեծուլ[20] են կոչվում։ Նաև հրամայում է նույն ցեղից ներքինիներ պատրաստել և նրանց նահապետ է նշանակում Հայրին[21], որի իշխանությունը տարածվում է Ատրպատականից մինչև Ճվաշ և Նախճավան։ Բայց սրա պատմությունը, թե ո՛րպես և ո՛րտեղ պատահեց, հիշատակված չէ, և ես չգիտեմ։

Ը

ՄԱՐԱՑ ԱԺԴԱՀԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԵՐՆԴԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼԸ

Թագավորի տունը կարգավորելուց հետո (Վաղարշակը)՝ թագավորության երկրորդ է նշանակում Աժդահակի՝ Մարաց թագավորի սերնդից, որ այժմ կոչվում են Մուրացյան[22], որովհետև այդ ցեղի նահապետներին չեն ատում Մուրացյան տեր, այլ Մարացիների տեր։ Նրան թողնում է բոլոր գյուղերը, որոնց բնակիչները գերի էին բերված Մարաստանից։ Իսկ արևելյան կողմից, հայերեն խոսակցության վերջի սահմաններում, երկու կուսակալ է նշանակում մի-մի բյուր մարդով, նահապետական տների ցեղերից, Սիսակյաններին[23] և Կադմոսի[24] սերունդներից, որոնց անունները հիշեցինք մեր գրքի նախորդ գլուխներից մեկում[25]։

Սրանից հետո (Վաղարշակը) հաստատում է արևելյան հյուսիսային կողմի մեծ-անվանի բազմաբյուր կուսակալությունը, Կուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ դաշտով (կուսակալ է նշանակում) Առանին[26], որ անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում։ Բայց գիտցիր, որ մենք Առաջին գրքում մոռացանք հիշատակել այս մեծ և անվանի տոհմը, այսինքն՝ Սիսակից սերված ցեղը, որ ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը։ Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչված ամրոցը[27]. երկիրն էլ Աղվանք կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան աղու էին ասում։ Այս (Սիսակի) սերնդից էր այս անվանի և քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրապետ կուսակալ նշանակվեց։ Ասում են, որ սրա զավակներից են սերվել Ուտեացիների ազգը[28] և Գարդմանացիների[29], Շավդեացիների ու Գարգարացիների[30] իշխանությունները։

Իսկ Շարայի[31] զավակներից Գուշարին ժառանգություն տվեց Մթին լեռը[32], այսինքն՝ Կանգարքը և Ջավախքի կես մասը, Կողբը, Շորը, Ջորը[33] մինչև Հնարակերտ ամրոցը։ Բայց Վաղարշակը Աշոցքի[34] տեր և Տաշիրքի[35] սեպուհ է նշանակում Գուշարի զավակներից Հայկազնին։ Իսկ Կովկաս լեռան դեմ հյուսիսի կուսակալ է նշանակում մեծ և հզոր ցեղը և նահապետության անունը դնում է Գուգարացիների[36] բդեշխ, որ Դարեհի Միհրդատ նախարարի սերընդից էր, որին Ալեքսանդրը[37] բերելով իշխան նշանակեց իվերիացիների ցեղի գերիների վրա, որոնց բերել էր Նաբուգոդոնոսորը[38], ինչպես պատմում է Աբյուդենոսը[39] ասելով. «Մեծազոր Նաբուգոդոնոսորը ավելի հզոր էր, քան Հերակլեսը. նա զորք ժողովելով հասնում է լիբիացիների և իվերիացիների երկիրը[40] և հաղթահարելով իրեն է ենթարկում և նրանցից մի մասը տանում բնակեցնում է Պոնտոս ծովի արևմտյան կողմում»[41]։ Իվերիան գտնվում է արևմուտքում՝ աշխարհի եզրում։ Իսկ Բասենի մեծ հովտում նահապետություն է հաստատում Որդունի անունով Հայկի սերունդներից։

Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռ Պասքամից, մի տգեղ,

քարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դժնյա հայացքով մարդու, որին սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա, որ վիթխարի հասակ և ուժ ուներ, արևմուտքի կուսակալ է նշանակում, իսկ ցեղի անունը կոչում է Անգեղ տուն[42] երեսի տգեղության պատճառով։

Բայց եթե ուզում ես, ես էլ նրա մասին անհամ ու անտեղի ասեր կպատմեմ, ինչպես պարսիկները, որ Ռոստոմ Սագճիկի[43] մասին պատմում են, թե հարյուր քսան փղի ուժ է ունեցել։ Որովհետև նրա ուժեղության և սրտոտ լինելու պատճառով երգերը պատմում էին նրա մասին չափազանց անհարմար բաներ, որոնք ո՛չ Սամսոնին են հարմարվում, ո՛չ Հերակլեսին և ո՛չ Սագճիկին։ Որովհետև երգում էին նրա մասին, իբր թե ձեռք էր զարկում որձաքար ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղքվածք չկար, ուզածին պես ճեղքում էր մեծ ու փոքր, եղունգներով տաշում էր, տախտակներ էր ձևացնում և նույնպես եղունգներով նրանց վրա գծում էր արծիվներ և նման բաներ։ Պոնտոս ծովի ափին պատահել է Քշնամիների նավերի և վրա է հարձակվել. նրանք հեռացել են խոր ծովը մոտ ութ ասպարեզ։ Չկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրաձև ժայռեր և շպրտում է նրանց հետևից։ Ջրերի ալեկոծվելուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ հեռու են քշում։ Ո՜հ, չափազանց առասպել է այս, առասպելաց առասպել։ Բայց, ի՞նչ անես, որ մարդը սաստիկ ուժեղ էր և այսպիսի զրույցների արժանի։

Սրանից հետո (Վաղարշակը) հաստատում է Տուփաց նախարարությունը Չորրորդ կոչված Հայքում[44]։ Նույնպես հաստատում է Ապահունյաց նախարարությունը[45], ինչպես և Մանավազյանը[46] և Բզնունականը[47] Հայկի նույն սերունդներից, և բնակիչներից առաջավորներին գտնելով՝ տերեր է նշանակում՝ գյուղերի և գավառների անուններով նրանց կոչելով։

Բայց մոռացանք Սլաք կոչված դժնյա մարդուն, որի մասին հաստատ չեմ կարող ասել, արդյոք Հայկի՞ց էր ծագել, թե՞ նրանից առաջ մեր երկրում ապրողներից, որոնց գոյության մասին պատմում են զրույցները. բայց նա քաջ մարդ էր։ Սրան քիչ մարդկանցով նշանակում է լեռը պահպանելու և քոշեր որսալու. սրանք կոչվեցին Սլկունիներ[48]։ Այսպես և նույնպիսի գործերի վրա նշա-

նակում է անդառնալի Միանդակին, որից սերվեցին Մանդակունիները[49]։

Եվ Վահագնի զավակներից գտնելով մարդիկ, որոնք ինքնակամ խնդրեցին մեհյանների սպասավորությունը, նրանց շատ պատվում է, նրանց է հանձնում քրմությունը, դասում է առաջին նախարարությունների շարքում և կոչում է Վահունիներ[50]։ Նույնպես գտնելով, որ Առավենյանները[51] և Ջարեհավանյանները[52] առաջին թագավորների սերունդներից են, նշանակում է նույնանուն ավաններում։

Իսկ Շարաշանին, որ Սանասարի[53] տնից էր, մեծ բդեշխ և կուսակալ է նշանակում Հարավ-արևմուտքում, Ասորեստանի սահմաններին մոտ, Տիգրիս գետի ափին, նրան գավառներ պարգևելով Արձնը և նրա շրջակայքը[54], Տավրոս լեռը, որ է Սիմը, և ամբողջ Կղեսուրը[55]։

Իսկ Մոկսում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ բազմաթիվ ավազակներ, հաստատում է նախարարություն[56]։ Նույնպես հաստատում է Կորդվացիներին[57], Անձևացիներին[58] և Ակեացիներին[59] նույնանուն գավառներից։ Իսկ Ռշտունիների[60] և Գողթնեցիների[61] մասին գուցե պատմված, թե նրանք անկասկած Սիսական հատվածն են կազմում, բայց չգիտեմ, արդյոք գավառնե՞րն են կոչվել մարդկանց անունով, թե գավառների անունով կոչված են նախարարությունները։

Այս բոլորից հետո Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին։ Վաղարշակը շատ խնդրեց, նույնպես և խոսքերով հարկադրեց հրեա Շամբատի զավակ Բագարատին, որ թագադիր և ասպետ էր, որպեսզի թողնի հրեական կրոնը և կուռքեր պաշտի, բայց երբ նա հանձն չառավ, Վաղարշակ արքան նրա կամքին թողեց։

Նաև հրաման է տալիս նորոգել Շամիրամի քաղաքը, և ուրիշ շատ տեղերում շինել բազմամարդ քաղաքներ, նշանավոր մարդաշատ գյուղեր։

Եվ իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զրոսանքների համար։ Սահմանում է զինվորական կարգեր՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն. և երկու մարդ գրով հիշեցնողներ, մեկը քարին հիշեցնողը, մյուսը՝ վրեժխնդրությունը։ Քարին հիշեցնո-

ղին հրաման է տալիս՝ թագավորի բարկանալու կամ անիրավացի հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը։ Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում։ Հրաման է տալիս, որ քաղաքացիների հարգն ու պատիվը ավելի լինի, քան գյուղացիներինը, որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխանների, բայց որ քաղաքացիները շատ չգոռոզանան գյուղացիների մոտ, այլ եղբայրաբար վարվեն, բարեկարգության և աննախանձ կյանքի համար, որ հիմք է կազմում շենության և խաղաղ կյանքի,— և ուրիշ նման բաներ։

Եվ որովհետև շատ որդիներ ուներ, հարմար գտավ, որ բոլորն էլ միասին իր մոտ չմնան Մծբինում[62], այլ նրանց ուղարկում է բնակվելու Հաշտենից գավառը[63], և նրան սահմանակից Զորը, որ Տարոնից դուրս է գտնվում, նրանց է թողնում բոլոր գյուղերը, ավելացնելով նաև առանձին եկամուտներ և ուտեստ արքունի (գանձարանից)։ Միայն իր առաջին որդուն, որ կոչվում էր Արշակ, պահում է իր մոտ, իբրև թագավորության հաջորդ, նաև նրա որդուն, որին կոչից Արտաշես և որին շատ էր սիրում, որովհետև երեխան հիրավի կայտառ էր և ուժեղ կազմվածքով, այնպես որ ներքան նայողները նախատեսում էին, թե ինչ արիություններ պիտի զարգանան նրա մեջ։ Եվ այս բանն այնուհետև մինչև վերջը օրենք դարձավ Արշակունի թագավորների համար, որ մի որդին ապրի թագավորի հետ՝ թագավորության փոխանորդ լինելու համար, իսկ մյուս որդիներն ու դուստրերը գնան Հաշտենից կողմերը իբրև ցեղի ժառանգներ։

Այսպիսի քաջագործություններից և բարեկարգություններից հետո Վաղարշակը մեռնում է Մծբինում, քսաներկու տարի թագավորելուց հետո։

1. Այսինքն՝ Վաղարշակը։ Ըստ Խորենացու, Հայոց Արշակունյաց թագավորական հարստության հիմնադիրն է։ Ուսումնասիրողները ցույց են տվել, որ այս Վաղարշակը ընդամենը հավաքական անձնավորություն է, սակայն, նա իր հիմնական գծերով նուլնանում է Մեծ Հայքի թագավոր Տրդատ I-ի հետ (տե՛ս 104-րդ էջ, № 3 ծան.)։

2. Խորենացին նկատի ունի այն, որ թագավորը կարգավորում է պալատական նիստուկացը, արարողությունները, սահմանում է թագի ու գահի, արքայական հանդերձների ձևերը։

3. Հայ ավանդական պատմագրությունը, հատկապես Բագրատունյաց ջա-

տագով մատենագիրները, բազմիցս շեշտում են այս տան հրեական ծագումը՝ նրա փառքն ավելացնելու միտումով։

4. Այսինքն՝ Վաղարշակը Շամբատ Բագրատունի։ Նշանակում, որի անունից նրա տոհմը կոչվեց Բագրատունի։

5. «Թագադիր»— հին Հայաստանում թագավորին թագադրելու պաշտոնը վարող գործակալություն։

6. «Ասպետ»— Ստ. Մալխասյանցի կարծիքով, սկզբնական շրջանում, ասպետ էր կոչվում թագավորի մերձավոր խորհրդականն ու երկրի ընդհանուր կառավարիչը։

7. Գնթունիները հայոց արքունիքում վարում էին հատուկ գործակալություն, որի պարտականությունն էր թագավորին զգեստ հագցնելը։ Գնթունիների տան ժառանգական սեփականությունն էր Այրարատի 15-րդ գավառ Նիգը,՝ այժմյան Ապարանի շրջանը։

8. Այսինքն՝ Խոռ անունից այդ տոհմը կոչվեց Խոռխոռունի, իսկ Մաղխազ Խոռխոռունու անունից էլ այդ տոհմի՝ հայոց արքունիքում վարած Մաղխազունի գործակալությունը։ Այս գործակալությունը վարում էր թագավորի բիկնապահ գնդի հրամանատարի և արքունիքի պաշտպանության պարտականությունները։ Խոռխոռունիների նախարարական տան ժառանգական սեփականությունն էր Տուրուբերան նահանգի 16-րդ գավառ Խոռխոռունիքը՝ Բզնունյաց գավառից հյուսիս։

9. Նկատի ունի Վարաժնունի նախարարական տունը, որը ժառանգական տոհմակալվածքներ ուներ (համանուն գավառներ) Այրարատում, Վասպուրականում և Տուրուբերանում։ Այրարատի 18-րդ գավառ Վարաժնունիքը այժմյան Հրազդանի, Սևանի, Դիլիջանի և Կարմիրի շրջանների մեծ մասն էր։

10. Դան— պարսկերեն բառ է, որը նշանակում է տեղ, որից նստելու տեղ, քազմոց, աթոռ։ Ըստ Ստ. Մալխասյանցի, այս կոնտեքստում բառս գործ է ածված նշելու համար այն տեղը, բազմոցը, որ նախարարները գրավում էին թագավորի սեղանի շուրջը կամ առյանում և որով որոշվում էր նախարարներից յուրաքանչյուրի ավագության կարգը։

11. Աբեղյան նախարարական տան ժառանգական սեփականությունն էր Այրարատի 3-րդ գավառ Աբեղյանքը, որը տեղադրվում է Երասխի ձախ ափի ու Մեծթաց լեռների միջև։ Գաբեղյան նախարարական տան սեփականությունն էր Այրարատի 2-րդ գավառ Գաբեղյանքը, որն ընդգրկում էր այժմյան Կաղզվանի շրջանը։

12. Արծրունիների նախարարական տան ժառանգական հայրենիքն էր Աղբակ գավառը։

13. Հագամակերտը Արծրունիների տան ոստանն էր, այժմ՝ Բաշ-Կալե։

14. Ն. Ադոնցի կարծիքով, Գնունիների տան ժառանգական հայրենիքն ընդգրկել է Առբերանի գավառը, Աղիովիտ և Արճիշակովիտ գավառների մի մասը։ Գնունիները տոհմական կալվածքներ ունեին նաև Շիրակում։

15. Նկատի ունի Ասորեստանի թագավոր Սեննեքերիմին (Սինախերիբ), որը թագավորել է մ. թ. ա. 705—681 թվականներին։ Հայ ավանդական պատմագրությունը Արծրունիներին ու Գնունիներին վերագրում է ասորեստանյան ծագում։

16. Սպանդունի նախարարական տան անվանումը, ըստ երևույթին, առաջացել է Սպանդարատ անձնանվան կրճատ ձևից, որը տարածված էր Կամսարականների ընտանիքում։ Ն. Ադոնցը գտնում է, որ Սպանդունիները Կամսարականների շառավիղներն էին։

17. Հավունիների տան ժառանգական կալվածքը Բասենի Հավնունիք գավառն էր՝ Երասխի հարավային կողմում։

18. Զյունական նախարարական ընտանիքի տոհմական կալվածքները, ըստ Ն. Ադոնցի, գտնվում էին Արագածի փեշերին՝ Գնթունիների հարևանությամբ։

19. Հին Հայաստանում Ոստան է կոչվել արքունիքին, ինչպես նաև խոշոր նախարարական ընտանիքներին պատկանող երկիրը կամ քաղաքը։ Համապատասխանաբար ոստանիկներ էին կոչվում արքունի այս երկրից ծագած ազնվականներն ու վերջիններիցս կազմված զորագնդերը։

20. Սեփնձուլ— վրացերեն բառ է, որը բառացիորեն նշանակում է՝ սեփե (թագավոր) և ծուլի (որդի), այսինքն՝ արքայազն, արքայորդի։ Ն. Մառի կարծիքով, վրացերեն սեփե (թագավոր) բառը ծագել է հայերեն սեպուհ բառից։

21. Այստեղ Պատմահայրը նկատի ունի Մարդպետունի նախարարական տան նահապետին։ Այս ընտանիքի ձեռքում էր գտնվում մարդպետությունը զորածակալությունը, որի պարտականությունն էր հսկել թագավորական կալվածքներին, գանձերին, արքունի ամրոցներին և թագավորական կանանոցին։ Մարդպետունի տոհմը իշխում էր Մարդպետական գավառում, որը կազմում էր Վասպուրականի հյուսիսարևելյան մասը, ներառյալ նաև Նախիջևանի գավառը։

22. Ըստ Խորենացու, Մուրացյանների նախարարական տան կալվածքները գտնվում էին Մասիսի ստորոտներում։

23. Ըստ Խորհնացու, հայոց նահապետների ազգացուցակում Սիսակը հետևյալ տեղն էր զբաղեցնում. Հայկ, Արամանյակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Սիսակ։

24. Կադմոսը Հայկի թոռներից էր, Արամանյակի որդին։

25. Տե՛ս գիրք Ա, գլ. ԺԲ։

26. Խորենացին Հայկազյան Առանի անվան հետ է կապում Մեծ Հայքի արևվելյան երկրամասերից մեկի՝ Առանի անվանադրումը։ Առան երկրամասը հնում ընդգրկում էր Խաչեն ու Տրտու գետերի միջին և ստորին ավազանները։

27. Հնաբակերտ (Հունարակերտ)— ամրոց և քաղաք Երամ գետի ափին՝ Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի սահմանների հատման կետում։

28. Ուտեացիների ազգատոհմի անունից է ծագել Մեծ Հայքի 12-րդ նահանգ Ուտիքի անվանումը։

29. Գարդմանացիների նախարարական տան ժառանգական սեփականությունն էր Ուտիքի 6-րդ գավառ Գարդմանը, այժմյան Ղազախի շրջանը։

30. Գարգարացվոց տիրույթները գտնվում էին Գարգար գետի հովտում, այժմյան Միլի դաշտում։

31. Ըստ Խորենացու Հայոց նահապետների տոհմացանկի, Շարան Արամայիսի որդին էր՝ Արամանյակի թոռը։

32. Մթին լեռը նույնացվում է Կանգարաց լեռներին. Մթին անունը պահպանվել է այժմյան Մթնաձոր կամ Խավարաձոր անվան մեջ։

33. Կողբը (Կողբոփոր), Ծոբը (Ծոբոփոր) և Զորը (Զորոփոր) Գուգարքի 3-րդ, 2-րդ և 1-ին գավառներն էին, որոնք հերթականությամբ համապատասխանում են այժմյան Նոյեմբերյանի, Շուլավերի և Թումանյանի շրջաններին։

34. Աշոցքը Այրարատի 14-րդ գավառն է, այժմյան Ղուկասյանի շրջանը։

35. Տաշիրք (Տաշիր, Տաշրատափ)— Գուգարքի 4-րդ գավառն է, համապատասխանում է այժմյան Ստեփանավանի, Կալինինոյի շրջաններին և Թումանյանի շրջանի հարավային մասին։

36. Գուգարքը Մեծ Հայքի չորս դրեշխություններից մեկն էր։

37. Նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացուն։

38. Խոսքը Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի (605—562) մասին է։

39. Աբյուդենոս— մատենագիր, որը գրել է Ասորեստանի և Քաղդեայի պատմությունները, որոնք, սակայն, մեզ չեն հասել։

40. Իվերիացիների երկիր— այստեղ պատմագիրը նկատի ունի Իսպանիայում գտնվող Իբերիա երկրամասը։

41. Այսինքն՝ Կովկասյան Իբերիայում (Վիրք)։

42. Անգեղ տուն գավառը գտնվում էր Աղձնյաց դրեշխության կազմում։ Խորենացին այս գավառի անվանադիր նախնու՝ Տորք Անգեղի անունը առաջացրանել է որպես «տգեղ, անգեղեցիկ»։ Այժմ համարվում է, որ այս անունը առաջացել է Անգեղ հայկական աստվածության անունից, որն ունի տոհմական (Թոշուն) ծագում. Տորքը նույնպես եղել է աստված և հանդիսացել է պտղաբերության ու բուսականության հովանավորողը։ Նրա պաշտամունքը հատկապես տարածված է եղել Հայաստանի հարավարևմտյան շրջաններում՝ հետագայի Անգեղ տուն գավառում։

43. Ռոստոմ Սագճիկը Իրանի ժողովրդական հերոսներից է, որին գովերգել է Ֆիրդուսին։

44. Զորեռող Հայք (Ծուփաց կողմն)— Մեծ Հայքի 2-րդ նահանգն է, որն ընդգրկում էր նախկին Ծուփաց թագավորությունը։

45. Ապահունյաց նախարարության ժառանգական տիրույթը Տուրուբերանի 14-րդ գավառ Ապահունիքն էր, համապատասխանում է այժմյան Մանազկերտի սանջակին։

46. Մանավազյան նախարարական տան ժառանգական տիրույթը Տուրուբերանի 9-րդ գավառ Հաբքն էր, համապատասխանում է այժմյան Բուլանըղին։

47. Բզնունիների տան ժառանգական տիրույթը Տուրուբերանի 11-րդ գավառ Բզնունիքն էր։

48. Սյունիների ժառանգական հայրենիքն էր Տուրուբերանի 3-րդ գավառ Տարոնը։

49. Մանդակունիների նախարարական տան հայրենիքն էր Տուրուբերանի 4-րդ գավառ Արշամունիքը՝ Բյուրակն (Բինգյոլ-սու) գետի հովտում։

50. Վահունիների տոհմական կալվածքը Տարոնի արևմտյան մասն էր՝ Աշտիշատ կենտրոնով։

51. Առավենյանների նախարարական տան կալվածքը, Ն. Ադոնցի կարծիքով, գտնվում էր Այրարատ Հաճանգում, ավելի ստույգ՝ Շիրակում։ Սակայն փաստերն այդ մասին այնքան կցկտուր են, որ դժվար է որևէ բան պնդել։

52. Զարեհավանյանների նախարարական տոհմի ժառանգական հայրենիքը» ըստ Ս. Երեմյանի, Պարսկահայքի 7-րդ գավառ Զարեհավանն էր։

53. Սանասար— ըստ ավանդության, սա Ասորեստանի Սեննեքերիմ թագավորի որդին էր, որը սպանելով հորը, ապաստան գտավ Արարադի երկրում։

54. Այսինքն՝ Աղձնիքը, որը Մեծ Հայքի չորս բդեշխություններից մեկն էր։

55. Կղեսուր— նշանակում է «լեռնանցք»։

56. Մոկաց նախարարական տան ժառանգական սեփականությունը Մեծ Հայքի 5-րդ նահանգ Մոկքն էր։

57. Կորդվացիների երկիրը Մեծ Հայքի 6-րդ նահանգ Կորճայքն էր, որ միաժամանակ նաև բդեշխություն էր։

58. Անձևացյաց նախարարական տան հայրենիքն էր Վասպուրականի Անձևացիք գավառը։

59. Ակեացիների ժառանգական տիրակալությունն էր Վասպուրականի Ակէ գավառը։

60. Ռշտունիների նախարարական տան ժառանգական հայրենիքն էր Վասպուրականի 1-ին գավառ Ռշտունիքը։

61. Գողթնը Վասպուրականի 33-րդ գավառն էր, որը համապատասխանում է այժմյան Ապրակունիսի և Օրդուբադի շրջաններին։

62. Ըստ Խորենացու, Մծբինը Վաղարշակի արքայանիստ քաղաքն էր։

63. Հաշտյանք— Չորրորդ Հայքի 2-րդ գավառն է, համարվում էր Հայոց Արշակունիների տան սեփականությունը։

ՄԵՆ ՀԱՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Հայ աշխարհագրագիտական մտքի եզակի հուշարձաններից մեկի՝ «Աշխարհացոյց»-ի ճեղինակի հարցը երկար ժամանակ վիճաբանությունների առարկա էր հայագիտության մեջ: Քանի որ «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը սովորաբար կցված են եղել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Անանիա Շիրակացու մաթեմատիկական ու տիեզերագիտական աշխատությունների հետ՝ ուսումնասիրողների մի մասը նրա ճեղինակն էր համարում Մովսես Խորենացուն, իսկ մյուս մասը՝ Անանիա Շիրակացուն: Այժմ տիրապետող է այն կարծիքը, որ տվյալ երկը պատկանում է VII դարի ականավոր գիտնական Անանիա Շիրակացուն: Շիրակացին «Աշխարհացոյց»-ը գրելիս օգտագործել է մի շարք հունական աղբյուրներ, հատկապես II դարի հույն աշխարհագիր Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն», Պապոս Ալեքսանդրիացու, Կոստանդին Անտիոքցու և այլոց աշխարհագրագիտական երկերը:

«Աշխարհացոյց»-ում Շիրակացին նկարագրել է Եվրոպա, Լիբիա (Աֆրիկա) և Ասիա մայրցամաքների իրեն հայտնի երկրները,

ավել դրանց ֆիզիկաաշխարհագրական նկարագիրը: Հատկապես խիստ արժեքավոր են «Աշխարհացոյց»-ի այն բաժինները, որոնք նվիրված են Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Կողքիսի, Հյուսիսային Կովկասի, Պարսկաստանի, Ասորիքի, Միջագետքի և Փոքր Ասիայի նկարագրություններ:

«Աշխարհացոյց»-ից ստորև բերված հատվածը տալիս ենք Ս. Տ. Երեմյանի թարգմանությամբ (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 105—112):

Մեծ Հայք երկիրը սկսվում է Կապադովկիական [Պոնտոսից] ու Փոքր Հայքից արևելք, եփրատ գետով մինչև Տավրոս լեռները, որ բաժանում է Մեծ Հայքը Միջագետքից: Հարավային կողմից [Մեծ Հայքը] սահմանակից է Ասորեստանին, ապա սահմանը ուղղվում է դեպի [արևելք]՝ Ատրպատական և Մարաց աշխարհը, մինչև Երասխի թափվելը Կասպից ծով: Իսկ հյուսիսային կողմից (Մեծ Հայքը) սահմանակից է Աղվանքին և Վիրքին և Եգեր[1] աշխարհին, մինչև եփրատ գետի դառնալը դեպի հարավ:

Մեծ Հայքն ունի հայտնի լեռներ և մեծ ու փոքր գետեր և վեց ծովակ[2]:

Մեծ Հայքն ունի տասնհինգ փոքր աշխարհներ, որոնք են.

Առաջին աշխարհ՝ Բարձր Հայք, այսինքն՝ Կարնո երկիրը, երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, այսինքն՝ Ծոփքի երկիրը, երրորդ աշխարհ՝ Աղձնիք, Տիգրիս գետի վրա, չորրորդ աշխարհ՝ Տավրոս բերանը կամ Տարոնո երկիրը, հինգերորդ աշխարհ՝ Մոկք, վեցերորդ աշխարհ՝ Կորճայք, որ սահմանակից է Ասորեստանին, յոթերորդ աշխարհ՝ Պարսկահայք, որ սահմանակից է Ատրպատականին, որ ութերորդ աշխարհ՝ Վասպուրական, որ նրանից (Պարսկահայքից) հյուսիս-արևմուտք է (գտնվում), իններորդ աշխարհ՝ Սյունիք, որ սահմանակից է Երասխին, տասներորդ աշխարհ՝ Արցախ, որ նրան (Սյունիքին) մոտ է գտնվում, տասնմեկերորդ աշխարհ՝ Փայտակարան (Համանուն) քաղաքով, գտնվում է Կասպից ծովի եզերքին, Երասխի գետաբերանին: Տասներկուերորդը Ուտիացվոց աշխարհն է, որ սահմանակից է Աղվանքին Կուր գետով: Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, որ սահմանակից է Վրքին: Տասչորսերորդ աշխարհն է Տայքը, որ սահմանակից է Եգր աշխարհին: Տասնհինգերորդ աշխարհն է Այրարատը, նրանց միջև:

Այժմ ուզում եմ այս աշխարհների մասին մանրամասնաբար պատմել, թեև մի քիչ պիտի աշխատեմ գրքերի և քարտեզների վրա։

Առաջին աշխարհ Բարձր Հայքը ունի ինը գավառ. Դարանաղիք, Աղյուն, Մըզուր, Եկեղյաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղագոմ, Կարին։ Հիրավի, ինչպես ցույց է տալիս անունը, Բարձր Հայքը արդարև բարձր է, ոչ միայն Հայաստանի [մնացյալ] մասերից, այլև ամբողջ երկրից, որի համար էլ այս աշխարհը կոչեցին Կատար Երկրի։ Աշխարհի չորս կողմերը ջուր է արձակում և այնտեղից բխում են չորս հզոր գետեր. Եփրատը՝ դեպի արևմուտք և Բրասխը՝ դեպի արևելք, Գայլը՝ դեպի հարավ և Ակամսիս կամ Վոհ գետը՝ դեպի հյուսիս։ Ունի երեք մեծ լեռնագագաթ, ունի որսի կենդանիներ՝ եղջերու, այծ և քաղ, առն և արտի, վիթ և կըկիթ[3] և խոզ (վայրի), իսկ թռչուններից՝ ճարակավորներին[4], որոնցից են կաքավ, արոս, անիդ և այլք։ (Բարձր Հայքը) ունի ջերմուկներ և աղահանքեր և երկրի բոլոր բարիքները ու Թեոդուպոլիս քաղաքը[5]։

(Մեծ) Հայքի երկրորդ աշխարհն է Չորրորդ Հայքը կամ Ծոփաց աշխարհը։ Հյուսիսից սահմանակից է Բարձր Հայքին, արևմուտքից սահմանակից է Մելիտինեն քաղաքին, հարավից՝ Միջագետքին, իսկ արևելքից՝ Տարոնին։ (Չորրորդ Հայքը) ունի ութ գավառ. հյուսիս-արևելքից՝ Խորձյան, որի միջով, Կողոբերդի մոտով, հոսում է Մյուս Գայլ գետը, Հաշտյանք, որտեղից բխում են Տիգրիս գետի ակունքի աղբյուրները։ Խորձյանից դեպի արևմուտք գտնվում է Պաղնատուն գավառը Համանուն բերդով, իսկ նրա դիմաց, դեպի հարավ (գտնվում է)՝ Բալահովիտ գավառը։ Նրանցից (այսինքն՝ Պաղնատուն և Բալահովիտ գավառներից) արևմուտք (գտնվում է)՝ Ծոփք (գավառը) և սրանցից հարավ՝ Անձիտ գավառը, որտեղ (գտնվում են) Ծովք (լիճը) և Հոռե բերդը։ Եվ նրանցից (այսինքն՝ Ծոփք և Անձիտ գավառներից) արևմուտք, (գտնվում է)՝ Դեգիք գավառը՝ Կոնի, Քրվիկ և Սոկ բերդերով, որոնց դիմաց հարավում (գտնվում է) Գավրեք գավառը, որոնց միջև հոսող Արածանին խառնվում է Եփրատ գետը Լուսաթաղիճ քաղաքի մոտ և, գնալով դեպի արևմուտք, անցնում է Մելիտինեից արևելք գտնվող Փոքր Հայքի սահմաններով։ Ապա Եփրատումն է թափվում Կիակկաս գետը, որ հոսում է արևմուտքից, Զիգոն-Բասիլիկոն կոչվող լեռներից։ Եվ նախքան նրա (Կիակկաս գետի) թափվելը Եփրատ գետում, նրա մեջ է խառնվում Կառամինոն գե-

տը, որը գալիս է Տավրոս լեռներից, և ընդունելով (այս գետերը), Եփրատը հոսում է դեպի հարավ, ճեղքում է Տավրոսյան լեռները, որտեղ գտնվում են բյուրեղի ակների [հանքերը]։ Չորրորդ Հայքը ունի որսի կենդանիներ և թռչուններ, իսկ գազաններից՝ առյուծ։

Երրորդ աշխարհն է Աղձնիքը, Միջագետքից արևելք և Դկղատ (գետից) հյուսիս, ունի տասնմեկ գավառ՝ [Անգեղ տուն], Նըփռետ (կամ Նփրկերտ), Աղձն, որոնց միջև հոսում է Քաղիրթ գետը, որին արաբները կոչում են Շիթիթմա, որ նշանակում է «արյունարբու», որից հետո՝ Քաղ գավառն է։ Իսկ լեռներում (Աղձնիքն) ունի՝ Կեթիկ, Տատիկ, Աղնուաձոր, Երխեթք, Գզեղիս, Սալնիքն) ունի՝ Կեթիկ, Տատիկ, Աղնուաձոր, Երխեթք, Գզեղիս, Սալնաձոր և Սանասուն գավառները։ (Աղձնիքը) ունի նավթ և երկաթ ընտիր, և գաթոր, իսկ թռչուններից՝ դևհուկ[6]։

Չորրորդ աշխարհն է Տավրուբերանը [կամ Տարոնո աշխարհը], գտնվում է Չորրորդ Հայքից դեպի արևելք և ունի տասնվեց գավառ. Խոլթ, Ասպակունյաց ձոր (Ասպականունյաց ձոր), Տարոն, որով հոսում է Մեղ գետը և թափվում է Եփրատ։ Սրանից հյուսիս (գտնվում է)՝ Արշամունիք (գավառը) Սրմանց լեռնագագաթով, որը կոչվում է Կատար Երկրի, և որից բխում են բազմաթիվ աղբյուրներ։ Սրանցից հյուսիս (գտնվում է)՝ Մարդաղի (գավառը) Մեղեդուղխ լեռների ուղղությամբ, մինչև Այծպտկունք լեռնագագաթը, որը բաժանում է Կարին (գավառը) նրանից (Մարդաղի գավառից)։ (Մեղեդուղխ լեռներում) գտնվում են սալակ[7] և ձիղկ[8], և նավթ սպիտակ ու սև։ (Այծպտկունք լեռնագագաթից) արևելք բխում է Մուրց գետը, որը հոսելով դեպի հյուսիս, իջնում է Բասեն գավառը և թափվում է Երասխ, գետանցելով վերջինս։

Մարդաղիից արևելք (գտնվում) է՝ Դասնավորք գավառը, նրանից արևելք՝ Տուարածատափ (գավառը) և նրանից արևելք՝ Դալառ (գավառը)։ Իսկ նրանցից (հիշյալ գավառներից) հարավ (գտնվում են)՝ Հարք և Վարաժնունիք գավառները, մինչև Արածանի (գետը), որը իջնում է Ապահունիք գավառից։ Սրանից հարավ է Բղնունյաց գավառը, որը սկսվելով Սարակն և Նախ-Մասիք (լեռնագագաթներից), պատում է Համանուն (Բղնունյաց) ծովի արևմտյան եղերքը, և տարածվում է մինչև Բաղ[աղ]եշ բերդը և այնտեղից մինչև հարավակողմում գտնվող Երեվարք գավառի սահմանները։ Բղնունիք գավառը իր Համանուն ծովում ունի երեք կղզի՝ Արծկե, Սիպան և Տոքյան[9], որից հարավ, Տավրոս լեռների

և ծովի միջև, գտնվում է երեվարք (գավառը), որտեղ դտնվում է մի լիճ, որ կոչվում է Եղեգի, գոյացած ուղխից, և վարելու ժամանակ եզը ջուր է խմում ակոսից, և ցանածը հասունանում է քառասուն օրվա ընթացքում և տալիս է բերք մեկին հիսուն:

Բզնունյաց ծովի երկարությունն է հարյուր մղոն, իսկ լայնությունը՝ վաթսուն: Բզնունյաց ծովից հյուսիս (գտնվում է) Աղիովիտ գավառը, և նրանից արևմուտք՝ Ապահունիք (գավառը), որի միջով անցնում է Արածանի գետը [և նրանից հարավ գտնվում է Կորի գավառը]: Բզնունյաց (ծովի) ափին է (գտնվում) [Խոռխոռունիք գավառը]: (Տավրուբերանում) դտնվում է պստակ և շագանակ: Ունի և գազպե[10] և անուշ մեղր, բաղդր քան ամբողջ աշխարքում, նավթ և երկաթ...:

Հինգերորդ աշխարհն է Մոկքը, Աղձնիքից արևելք Տավրոս լեռներում: Ունի ութ գավառ. Իշայր, Մեվս (մյուս) Իշայր, Իշոց գավառ, Առուենից ձոր, Միջա, Մոկք Առանձնակ կամ Արքայից գավառ, որտեղ հոսում է Որք գետը, Արգաստովիտ գավառ, Ջերմաձոր, որտեղով հոսում է Ջերմ գետը: Մրգերից ունի գահրշատ և մանրագոր[11], իսկ գազաններից՝ ինձ գեղեցկախայտ, և թռչուններից՝ կաքավ:

Վեցերորդ աշխարհն է Կորճայքը, որ գտնվում է Մոկքից արևելք և սահմանակից է Ասորեստանին: Ունի տասնմեկ գավառ. Կորդուք, որտեղ գտնվում է Թմանը՝ Ասորեստանի սահմանների մոտ, Կորդրիք Վերին, Կորդրիք Միջին, Կորդրիք Ներքին, Այրարուանք, Այգաոր, Մոթոդանք, Որսիրանք, Կարթունիք, Ճահուկ, Փոքր Աղբակ: (Կորճայքը) ունի զաուիկ[12] և պտուղներից՝ շահդանակ, այսինքն՝ գանգար փշի սերմը:

Յոթներորդ [աշխարհն] է Պարսկահայքը, Կորճայքից արևելք, և սևպաձև մտնում է Ատրպատականի մեջ ու Տավրոս լեռների այն կողմերը, որոնք կոչվում են Կոհ ի Նիհորական, մինչև Արասխ գետը: (Պարսկահայքը) ունի ինը գավառ. Այլի, որը նաև Կուտիճան է կոչվում, Մարի-գավառ, Թրաբի-գավառ, Արասխ կամ Ովեա, Առնա, Տամբեր, Զարեհավան, Զարավանդ և Հեր: Որսի կենդանիներից ունի ցիռ[13] և այծյամ:

Ութերորդ [աշխարհն] է Վասպուրականը, Պարսկահայքից արևմուտք և սահմանակից Կորճայքին: Ունի երեսունհինգ գավառ և սրանք են. Ռշտունիք, որ գտնվում է Մոկքի և Բզնունյաց ծովի

միջև, որի մեջ ունի երկու կղզի, Աղթամար և Արտի, և Մանակերտ ցամաքակղզին: Տոսպ (գավառ)՝ Բզնունյաց ծովից արևելք, ապա՝ Բոգունիք, Արճիշակովիտ, Կուղանովիտ (գավառները): [Բզնունյաց ծովից հյուսիս են գտնվում]՝ Աղիովիտ և Գառնի (գավառները) մինչև Կոգովիտ գավառը, որը գտնվում է Ազատ-Մասիս (լեռնագագաթի) ստորոտին: Առբերանի (գավառը) Բզնունյաց ծովից արևելք է, որտեղ գտնվում են՝ Ջքատան և Լիմ կղզիները, Ամյուկ ցամաքակղզին և Առեստ ավանը, որտեղից դուրս է գալիս [տառեխ] ձուկը:

(Վերոհիշյալ գավառներից) արևելք են գտնվում՝ Բուժունիք, Առնո-ոտն, Անձևացիք, Տրպատունիք, Երվանդունիք, [Բուն Մարդաստան], Մարդաստան և Արտազ (գավառները) մինչև Կոգովիտ (գավառը): Սրանցից դեպի արևելք են գտնվում՝ Ակե, Աղբակ Մեծ, Անձախի ձորը, Թոռնավանը և Ճուաշ-ոտտ (գավառը) մինչև Երասխ (գետը): [Ապա]՝ Կըրճունիք, Մեծնունիք, Պալունիք, Գուկան, Աղանդ-ոտտ, Պարսպատունիք, Արտաշիսյան կամ Արտավանյան, Բա[ք]րան կամ Մարանդ, Գաբիթյան, Գազրիկյան, Տայգըրյան, Վարաժնունիք, գինեվետ Գողթնը և Նախճավան գավառը, որտեղ գտնվում է համանուն քաղաքը:

Իններորդ աշխարհն է Սյունիքը, գտնվում է Երասխի և Արցախի միջև և Այրարատից արևելք, ունի տասներկու գավառ. Եղրընջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղարքունի համանուն ծովով, Սոթք, Աղահեճք, Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Ջորք, Արևիք, Կովսական համանուն գետերով, մինչև Նախիջևան քաղաքը իր գետանցքով, և Աղուան գետը: Սյունիքում կա մուրտ[14] և գերերի[15] և ազնիվ նուռ և ամրացված տեղեր:

Տասներորդ [աշխարհն] է Արցախը, սահմանակից Սյունիքին, ունի տասներկու գավառ. Մեվս (մյուս) Հաբանդ [կամ Սիսական ի Կոտակ, կամ Սիսական ի Ոստան], Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծ Կվանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարսականք, Քուստի, Փառնես, Կողբ, որտեղ կա քարախունկ[16]: Այս բոլորը ունի Աղվանքը, հանելով Հայաստանից:

Տասնմեկերորդ [աշխարհն] է Փայտակարանը, Ուտիքից արևվելք, Երասխ գետի վրա: Ունի տասներկու գավառ, որոնք այժմ Ատրպատականի կազմում են. Հրաբուտ-պերոժ, Վարդանակերտ, Յոթնփորակյան բագինք, Ռոտ ի Բաղա կամ Բաղան-ոտտ, Առոս-

պիճան, Հանի, Աթշի-Բագավան, Սպանդարան-պերոժ, Որմիզդ-պերոժ, Ալեվան։ Այնտեղ կա բամբակ անբավ և գարի ինքնաբույս։

Տասներկուերորդ [աշխարհն է] Ուտիքը, երասխ գետից արևմուտք, Արցախի և Կուր գետի միջև։ Ունի ութը գավառ, որոնք այժմ Աղվանքի կազմում են. Առան-ռոտ, Տոի, Ռոտ-Պարսեան, Աղուե, Տուս-Քստակ, Գարդման, Շակաշեն, Ուտի Առանձնակ՝ որտեղ Պարտավ քաղաքն է։ Կա այնտեղ (Ուտիքում) ձիթենի, վարունկենի[17], հասմիկ[18], իսկ թռչուններից՝ կատակ[19]։

Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, Ուտիքից արևմուտք, ունի ինը գավառ. Ջորափոր, Կողբափոր, Շորափոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Ջավախք Վերին, Արտահան, Կղարջք։ Կա այնտեղ անալուի[20], հաճարածառ, սերկևիլ և տոսախ[21]։ Այժմ Վիրքի կազմում է, վերցված՝ Հայաստանից։

Տասնչորսերորդ [աշխարհն է] Տայքը, Գուգարքին հարևան, ամրոցներով ու բերդերով հարուստ, ունի ութը գավառ. Կող (գավառ) արևելյան մասում, որտեղից բխում են Կուր գետի աղբյուրները Կրիակունք կոչված գյուղից։ Եվ Կուր գետը (այստեղից) հոսում է դեպի արևմուտք Արտահան երկայնանիստ գավառով, ապա դառնում է դեպի հյուսիս և իջնում է Սամցխե (գավառը), որից հետո դառնում է դեպի արևելք մինչև Կասպից ծովը։

Իսկ Կող գավառից արևմուտք գտնվում են Բերդացփոր, Պարտիզացփոր, Ճակք, որից արևելք և հարավ (գտնվում են) Բուղխաս, Ոքաղե և Ազորդացփոր գավառները իրենց [համանուն] գետակներով, որոնք խառնվելով իրար՝ թափվում են Վոհ գետը։ Այս գավառներից արևմուտք է Արսյացփոր (գավառը)՝ Պարխար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը, գալով Սպեր (գավառից), անցնում է Թուխարք բերդով Կղարջք (գավառը), այստեղից էլ՝ Եգր (աշխարհ)՝ Նիգալ, Մրուղ և Մրիտ գավառներով հոսելով, թափվում է Պոնտոսի ծովը, որը եգերացիները կոչում են Ակամսիս, իսկ հաղտիքը՝ Կակամար։ Տայքում կա թուղ, թթու նուռ, աղտոր[22], սերկևիլ, պտղախոնկ և նուշ։

Տասնհինգերորդ աշխարհն է Այրարատը, վերոհիշյալ աշխարհների մեջտեղը և ունի քսաներկու գավառ։ Բարձր Հայքի կողմն է Բասյան (գավառը), որի միջով անցնում է Երասխը, որը գետանում է Մուրցամոր գետից։ Երասխ գետը բաժանում է, թողնելով հարավ Հավնունիք և Գարեղյանք (գավառները), իսկ հյուսիսում՝ Արեղյանք (գավառը)։ Այնուհետև Երասխը հոսում է Արշարունիք գավառով, որից հարավ են գտնվում Բագրևանդ և Ծաղկոտն գավառները, իսկ դեպի հյուսիս՝ Վանանդ և Շիրակ (գավառները)։ Այս գավառներից է հոսում Ախուրյան գետը Մեծագետ վտակով, [որ գալիս է Ծովակ Հյուսիսո լճից] և, անցնելով Մավրիկապոլիս, այսինքն՝ Շիրակաշատ ավանը, և Մրենն ու Երվանդաշատ քաղաքը, թափվում է Երասխ։

Եվ Երասխը, Արմավիր քաղաքը Արագածոտն (գավառով) և Արագած լեռնագագաթը, որտեղից բխում են Մեծամոր գետի աղբյուրները, [և Արայի լեռը] թողնում է հյուսիսային կողմը։ [Ապա. Երասխը հոսելով դեպի արևելք, հարավում թողնում է Ճակատք և Մասյացոտն գավառները և] լեռնագագաթ [Ազատ-Մասիսը]։ Եվ Մասիս սարը, որի ստորոտին տարածվում է Կոգովիտ գավառը, դեպի հարավ է թողնում Երասխ գետը։ Իսկ Արածանի գետը սկիզբ է առնում Ծաղկոտն (գավառից), Ոսկիք կոչվող տեղից և, գնալով դեպի հյուսիս, պատելով Նպատական լեռնագագաթը Բագավան գյուղի մոտ, խառնվում է Բագրևանդ գետին։

[Արագածի փեշերից հյուսիս (գտնվում) է Վերին Տաշիրը (՞) և Աշոցք գավառը]։ Իսկ [Արագածից] արևելք (գտնվում) է Նիդ (գավառը), որտեղից բխում են Քասաղ գետի աղբյուրները, [և նրանից (Նիդ գավառից) արևելք գտնվում են Կոտայք և Մազազ գավառները, իսկ նրանցից հյուսիս՝ Վարաժնունիք գավառը, որի միջով անցնում է Հրազդան գետը]։

[Հրազդան գետը] անցնում է Վաղարշապատ քաղաքից դեպի արևելք, որտեղ գտնվում է Մայր եկեղեցին՝ Կաթողիկեն[23], և մարտիրոսուհիների մատուռները[24], որից (Վաղարշապատից) դեպի արևելք բխում են Ասպահեն գետի աղբյուրները, այսինքն՝ Խոզմորը, որը խառնվում է Մեծամոր գետին։ Ապա նրանցից արևելք է Ազատ գետը, և հիրավի ազատ, որի ակունքները բխում են Գեղ լեռնագագաթից, Սախուրակ տեղում, և իջնելով դեպի Դվին (քաղաքը)՝ ոռոգում է ամբողջ Հայոց Ոստանը։ Անցնելով հարավ, [Ազատ գետը] թափվում է Երասխ, որոնց միջև կառուցված է Արտաշատ քաղաքը, որտեղ հին ժամանակները գտնվում էր Մեծամորի գետախառնուրդը, իսկ այժմ, փոխվելով Մեծամորի հունը, (այն) խառնվում է (Երասխին) [Արտաշատ քաղաքի] արևմտյան կողմը։

Դվին [Ոստանից] դեպի արևելք գտնվում են Ուրծաձոր և Աբրածո կողմն գավառները, մտնելով Վայոց ձոր գավառի թիկունքը, և Շարուր դաշտը, որի միջով հոսում է Արփանյալ գետը և, անցնելով Մարավան քաղաքը, դեպի հարավ, թափվում է Երասխ գետը։ Եվ Այրարատ (աշխարհը) ունի լեռներ, գետեր և պիտանի դաշտավայրեր, որսի կենդանիներ և թռչուններ, և ամենայն պարարտություն և Գայլատու ծովակը։ Ունի և սիզաբերյալ արմատի որդը, (որը օգտագործում են) իբրև զարդ կարմիր գույնի[25]։

Սրանով վերջանում է ամբողջ Հայաստանի նկարագրությունը։

1. Եգեր աշխարհը տեղադրվում է Ճորոխ գետի ներքին հոսանքի և Ռիոն գետի հովիտներում, ա՛յնինադարյան հայկական աղբյուրների կողքին է։

2. Հեղինակը նկատի ունի Կապուտան, Բզնունյաց, Գեղարքունյաց, Ծովք, Գայլատու և Ծովակ Հյուսիսո (Ձեվի, Ջըլդըր) լճերը։

3. Կճղակավորների ընտանիքին պատկանող կենդանիներ՝ արու այծ և ոչխար, էգ ոչխար, խոյ, անտիլոպ և այլն։

4. Այսինքն՝ ճարակող, արածող, արոտական թռչուններ։

5. Թեոդուպոլիս (Կարնո քաղաք, Կարին)— ռազմական ու վարչական կենտրոն Արևմտյան Հայաստանում։ Քաղաքը կոչվել է Բյուզանդական կայսր Թեոդոս II Փոքրի (408—450) անունով, որն այստեղ ռազմական շինություններ էր կառուցել, այժմյան էրզրումը։

6. Դեզիուկ— թռչուն, որը հիշատակվում է միայն այստեղ, անհայտ է մընում, թե սա թռչունների որ տեսակին է պատկանում։

7. Ս. Երեմյանի ենթադրությամբ, այստեղ խոսքը վերաբերում է արծաթի հանքերին։

8. Զիգկ— անորոշ տեսակի հանքային նյութ։

9. Կղզիներ, որոնք այժմ գոյություն չունեն։ Լճի մակերևույթի բարձրացման հետևանքով, հիշյալ կղզիները մնացել են ջրի տակ։

10. Գազպե— քաղցր նյութ՝ մանանա, որն արտադրում են ծառերի հացենի ու կաղնի տեսակները։

11. Մաներազոր— թուփ. ունի սիսեռաչափ մանր պտուղներ, որոնք օգտագործվում են որպես քնաբեր կամ թմրեցուցիչ դեղամիջոց։

12. Ջաուիկ— ըստ Հ. Աճառյանի մեկնաբանության՝ մկնդեղ, ոսկեգույն դեղին ներկ։

13. Յիո— վայրի էշ։

14. Մուրտ (մրտենի, մրսի)— մրտազգիների ընտանիքին պատկանող մշտադալար, անուշահոտ թփաբույս։

15. Գևեռի— սնկի մի տեսակ, որն աճում է գետնի տակ։

16. Այստեղ խոսքը պաղեղաքարի (շիր) մասին է։

17. Ըստ Ստ. Մալխասյանցի, «վարնկենի» բառն այստեղ օգտագործված է մերձարևադարձային պտուղների (կիտրոնի և այլնի) նշանակությամբ։

18. Հասմիկ— Ձիթենազգիների ընտանիքին պատկանող մերձարևադարձային բույս։

19. Կատակ— կաշաղակի խմբին պատկանող թռչուն։

20. Ըստ Հ. Աճառյանի, «անալութ» նշանակել է եղնիկ, եղջերու։

21. Տոսախ— մշտադալար, մանրատերև թուփ։ Հայտնի է իր կարծր, դեղին գույնի փայտով։

22. Աղուոր— երիշաքիլ բաժանաթերթ բույսերի ընտանիքին (աղտորազգիներ) պատկանող բույս՝ կոծոխուր, սմաղ։

23. Հեղինակը նկատի ունի էջմիածնի Մայր տաճարը, որը նախապես կառուցել էր Գրիգոր Լուսավորիչը 303 թ., իսկ ամբողջությամբ վերաշինել էր Վահան Մամիկոնյանը՝ 480 թվականին։

24. Խոսքը Հռիփսիմեի և Գայանեի հիշատակին կառուցված մատուռների մասին է։ Հետագայում մատուռների տեղում կառուցվեցին ս. Հռիփսիմե (618 թ.) և ս. Գայանե (630 թ.) վանքերը։

25. Խոսքը համբավավոր «որդան կարմիր» ներկի մասին է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ Մ. Թ. II ԴԱՐՈՒՄ ԵՎ III ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ ԸՍՏ ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք վաթսունութերորդ

17,1 Այնուհետև նա[1] ռազմերթի ելավ հայերի և պարթևների դեմ այն պատրվակով, որ հայոց թագավորը[2] թագը ոչ թե իրենից էր ստացել, այլ պարթևների թագավորից[3]. մինչդեռ իրականում նա տոգորված էր խիստ փառամոլությամբ։

2 Եվ որովհետև (Պարթևին)[4] հայտնի էր, թե նա հարձակվելու է և դրանով իսկ պատրաստ է իրագործելու իր սպառնալիքները, խիստ վախեցավ և մեղմելով իր գոռոզությունը, (դեսպաններ) ուղարկեց[5], աղերսելով նրան չպատերազմել իր դեմ. միաժամանակ խնդրում էր նրան, որ Հայաստանը տրվի Պարթամասիրիսին, որը նույնպես Պակորոսի[6] որդին էր, և թախանձում, որ թագն ուղարկվի սրան։ Քանզի, ասում էր

3 նա, Եքսեդարեսին[7], որը հարմար չէր ոչ հռոմեացիներին, ոչ էլ պարթևների համար, ինքը գահընկեց էր արել։ Իսկ (Տրդատը) ոչ ընծաներն ընդունեց, ոչ էլ որևէ բանավոր

պատասխան տվեց կամ նամակ ուղարկեց. այլ հայտնեց միայն, որ բարեկամությունը որոշվում է գործերով և ոչ թե խոսքերով. հետևաբար, երբ ինքը ժամանի Սիրիա, պատշաճ ամեն ինչ կանի։

* * *

19,1 Պարթամասիրիսը կամայական մի բան կատարեց։ Տրայանոսին ուղարկած իր առաջին նամակը նա հղել էր իբրև «Հայաստանի թագավոր». բայց քանի որ պատասխան չըստացավ, ապա նորից նամակ ուղարկեց, բայց այդ տիտղոսը հանած, և խնդրեց իր մոտ ուղարկել Մարկոս Յունիոսին՝ Կապադովկիայի կառավարիչին, որպեսզի նրա միջոցով իր
2 խնդրանքը հաղորդի։ Սակայն Տրայանոսը նրա մոտ ուղարկեց Յունիոսի որդուն, մինչդեռ ինքը առաջ ընթացավ մինչև Արսամոսատա[8] և այն առանց կռվի վերցնելով, եկավ Սատալա[9] և Անքիալոսին՝ հենիոքների ու մաքելոնների[10] թագավորին, ընծաներ ուղարկեց։ Նա Հայաստանի Ելեգեայում[11] ընդունեց Պարթամասիրիսին։ (Կայսրը) նստած էր պատնեշի եղրին կանգնեցրած բեմի վրա։ Եվ (Պարթամասիրիսը)
3 ողջունելով նրան, գլխից թագը հանեց ու դրեց նրա ոտքերի մոտ, լուռ կանգնեց, սպասելով, որ նա կվերցնի այն[12]։ Երբ այս բանի վրա զինվորները մեծ աղաղակ բարձրացրին և Տրայանոսին, որպես ինչ-որ հաղթություն տանելու համար
4 կոչեցին իմպերատոր— քանզի նրանք առանց կարոսի[13] անարյուն հաղթանակ էին համարում այս, երբ տեսան որ Արշակունի թագավորը՝ Պակորոսի որդին, Օսրոեսի[14] եղբորորդին, կանգնած է (կայսեր) առաջ առանց թագի, որպես դերեվարված— (Պարթամասիրիսը), ահաբեկվեց և կարծեց,
5 թե ինքը ծանակվում է և մատնվելու է կորստի։ Նա շուռ եկավ և ուզեց փախչել, բայց, տեսնելով, որ ինքը շրջապատված է, խնդրեց շնորհ անել, որ ամբոխի առաջ չխոսի։ Եվ այսպիսով, նա ներս տարվեց վրանը, սակայն դարձյալ
20,1 չկարողացավ անել այն, ինչ ցանկանում էր։ Եվ երբ նա զայրացած դուրս եկավ զորաճամբարից, Տրայանոսը նոր կանչել տվեց նրան և նորից բարձրանալով բեմ, հրամայեց, որ նա ի լուր բոլորի ասի այն ամենը, ինչ կամենում է, որպեսզի մարդիկ, անգետ լինելով իրենց երկուսի միջև առանձին խոս-

վածներին, այդ մասին չտան զանազան հնարովի տեղեկություններ։ Այս լսելով, Պարթամասիրիսն այլևս չկարողացավ լռել, այլ խոսեց մեծ համարձակությամբ և, իմիջիայլոց, ասաց, որ ինքը ոչ (պատերազմում) պարտվել է, ոչ իսկ գերի է վերցվել, այլ եկել է կամավոր կերպով, հավատացած լինելով, որ ինքը ոչ մի վիրավորանք չի կրի և կստանա թագավորությունը, ինչպես որ Տիրիդատեսն ստա-
3 ցել էր Ներոնից։ Տրայանոսը նրա բոլոր ասածներին պատշաճ կերպով պատասխան տվեց և ասաց, որ Հայաստանը ոչ ոքի չի տալու— քանզի այդ երկիրը պատկանում է հռոմեացիներին և ունենալու է հռոմեացի կառավարիչ— իսկ իրեն թույլ կտա գնալ ուր որ կամենում է։ Այսպես Պարթա-
4 մասիրիսին և նրան ընկերակցող պարթևներին նա բաց թողեց, տալով նրան հեծյալ ուղեկիցներ, որպեսզի ոչ մեկի հետ չբանակցեն և որևէ խռովություն չբարձրացնեն։ Իսկ նրա հետ եկած բոլոր հայերին հրամայեց մնալ իրենց գտնված երկրում, քանի որ նրանք այժմ իր հպատակներն էին։

Հատված յոթանասունհինգերորդ գրքից

9,6 Երբ Վոլոգեսոսը՝[15] Սանատրուկեսի[16] որդին, պատրաստվել էր Սևերոսի[17] զորքի դեմ ճակատամարտելու և ընդհարումից առաջ պինդարդար էր խնդրել և կնքել, (Տրայանոսը) նրա մոտ դեսպաններ ուղարկեց և Հայաստանի մի մասը[18] շնորհեց նրան՝ խաղաղության առթիվ։

Դիրք յոթանասունմեկերորդ

3,6 Մարտիոս Վերոսն[19] ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոեմոսին[20] վերստին բերի Հայաստան։ Սա զենքի սպառնալիքով, ինչպես և իրեն հանդիպողների նկատմամբ բոլոր դեպքերում ցուցաբերած բարեմտության շնորհիվ, արագ թափով առաջ էր ընթանում։ ... Արդ՝ (Մարտիոսը) գալով Նոր քաղաք[21], որն իր ձեռքում պահում էր Պրիսկոսի դրած հռոմեական կայազորը, ապստամբության փորձ անողներին թե՛ խոսքով և թե՛ գործով հնազանդեցնելուց հե-

տո հայտարարեց, որ (այդ քաղաքը) կլինի գլխավորը Հայաստանում։

Նկար 19. Արտաշատի դրամը (մ. թ. 183 թ.)՝ քաղաքամոր պատկերով

Նկար 20. Նույն դրամի հակառակ կողմը. խորագիրը՝ «Արտաշատ մայրաքաղաքի»

Գիրք յոթանասուներկուերորդ

14,2 Նույնպես և Տիրիդատես սատրապին[22], որը Հայաստանում խռովություններ էր բարձրացրել և սպանել էր հենիոքների թագավորին և իր սուրը թափահարել էր (Մարտիոս) Վերոսի վրա, երբ վերջինս հանդիմանել էր նրան այդ բանների համար, (Մարկոս Ավրելիոսը)[23] չսպանեց, այլ ուղարկեց Բրետանիա։

Գիրք յոթանասունմեկերորդ

1[2] Արդ՝ (Անտոնինոսը)[24] խաբելով Օսրոենների Ավգարոս[25] թագավորին, համոզեց նրան իբրև բարեկամի գալ իր մոտ, որից հետո նրան ձերբակալելով կալանավորեց և այդպիսով Օսրոենեն, որը մնացել էր առանց թագավորի, հպատակեցրեց։

Իսկ Հայոց թագավորին[26], որը վեճի մեջ էր իր որդիների հետ, բարեկամական նամակներով նույնպես կանչեց, իր

2 նրանց հաշտեցնելու պատրվակով, բայց սրանց հետ ևս վարվեց այնպես, ինչպես Ավգարոսի հետ։ Սակայն հայերը՝ չհանդուրժեցին նրան, այլ դիմեցին զենքի, ու այլևս նրանցից ոչ ոք երբևիցե ոչ մի բանում նրան չէր հավատում, այնպես որ նա գործով սովորեց, թե որքան վնասաբեր է կայսեր համար խաբեությամբ վերաբերվել բարեկամներին[27]։

* * *

18,1 Այսպիսի գործեր կատարեց (Անտոնինոսը) Նիկոմեդիայում[28] ձմեռելու ժամանակ. նա մարզեց նաև մակեդոնական փաղանգը[29] և երկու շատ խոշոր մեքենաներ կառուցեց հայկական և պարթևական պատերազմների համար այնպես, որ դրանք քանդած վիճակում նավերի վրա կարողանար փոխադրել Սիրիա...։



Նկար 21. Կոմմոդոս կայսեր լատիներեն արձանագրությունը Վաղարշապատից (185 թ.)

* * *

19,1 Երբ նա[30] արշավեց պարթևների դեմ, այդ պատերազմը պատճառաբանեց նրանով, որ Վոլոգեսոսը[31], երբ ինքը նրա-

նից պահանջեց Տիրիդատեսին[32] և նրա հետ ոմն Անտիոքոսի, նրանց չհանձնեց։ Այս Անտիոքոսը կիլիկեցի էր և սկզբում իբրև թե կիլիկյան փիլիսոփա էր և դրանով պատե-
2 բազմում մեծապես օգնել էր զինվորներին. քանզի երբ զինվորները ցրտաշունչ ձմռան պատճառով հուսահատվել էին, նա կարողանում էր սրտապնդել նրանց՝ իրեն նետելով ձյան մեջ և թավալվելով դրա վրա։ Ուստի և նա շատ դրամ և պատիվներ ստացավ թե՛ Սևերոսից և թե՛ Անտոնինոսից։ Այս ամենից նա այնքան դոռոզացավ, որ հարեց Տիրիդատեսին և սրա հետ միասին փախավ պարթև (թագավորի) մոտ։

* * *

21,1 Երբ պարթև (թագավորը) վախեցավ և Տիրիդատեսին ու Անտիոքոսին հանձնեց (կայսրին), սա իսկույն ևեթ հրաժարվեց արշավանքից. բայց Թեոկրիտոսը, որին զորքով նա ուղարկել էր հայերի դեմ, նրանց կողմից պարտության մատնվեց և ծանր դժբախտության մեջ ընկավ։

Գիրք յոթանասունիններորդ

27,4 Այսուհանդերձ Հայոց (թագավորի) դեմ նրա[33] մղած պատերազմը ևս, ինչպես ասել եմ, դադարեց, երբ Տիրիդատեսը[34] ընդունեց Մակրինոսի կողմից իրեն ուղարկված թագը, ինչպես նաև մորը, որին Տարավտասը[35] տասնմեկ ամիս պահել էր բանտում, ինչպես նաև ստացավ այն ամբողջ ավարը, որ տարածված էր Հայաստանից և բոլոր այն երկրները, որ նրա հայրը[36] ձեռք էր բերել Կապադովկիայում. նա հույս ուներ նաև ստանալու այն փողը, որ ամեն տարի ուղարկում էին հռոմեացիները[37]։

Գիրք ութսուներորդ

3,1 Շատ երկրներում շատ ապստամբություններ ծագեցին, և դրանցից մի քանիսը թեև խիստ ահեղ էին, սակայն ճընշվեցին։

Իսկ Միջագետքում կատարված դեպքերը առավել ահա-

վոր էին և իրականում սարսափ էին գցել բոլորի վրա. ոչ
2 միայն Հռոմի բնակիչների, այլև մյուս վայրերի։ Քանզի ոմն Արտաքսերքսես[38], պարթևներին երեք ճակատամարտում հաղթելուց և նրանց թագավոր Արտաբանոսին[39] սպանելուց հետո, ռազմի ելավ Հատրայի[40] դեմ, այն (գրավելով) հռոմեացիների դեմ իր համար հենարան դարձնելու նպատակով։ Նա թեև կործանեց պարիսպը, բայց կորցնելով իր զին-
3 վորներից շատերին, որոնք դարանի մեջ էին ընկել, ետ նահանջեց Մեդիա և, այս երկրում, ինչպես նաև Պարթիայում, մասամբ բռնությամբ, մասամբ էլ ահաբեկմամբ գրավելով մի շարք շրջաններ, շարժվեց դեպի Հայաստան։ Այստեղ նրան դիմավորեցին տեղի բնակիչները և մեդացիներից ոմանք, ինչպես նաև Արտաբանոսի որդիները և նա, ինչպես ոմանք ասում են, փախավ. իսկ ուրիշները ասում են, թե նա ետ քաշվեց, ավելի մեծ զորք պատրաստելու համար։

1. Խոսքը Տրայանոս կայսեր (98—117) մասին է, որը 113 թ. հոկտեմբերի 27-ին դուրս գալով Հռոմից՝ ուղևց իր արշավանքը դեպի Հայաստան։

2. Այստեղ Դիոնը նկատի ունի Մեծ Հայքի թագավոր Պարթամասիրին (113—114)։

3. Խոսքը վերաբերում է պարթևական խոսրով թագավորին (110—129)։

4. Այսինքն՝ Խոսրովին։

5. Պարթևական դեսպանները Տրայանոսին ներկայացան Աթենքում։

6. Սա Պարթևաց Բակուր II թագավորն էր (78—110)՝ Հայոց թագավոր Պարթամասիրի հայրը։

7. Սիսեդարես— Մեծ Հայքի Աշխադար (Շիդար) թագավորն է (110—113)՝ որին Պարթևաց Բակուր II-ի և ավագ եղբայրը Պարթամասիրի։

8. Արսամոսատա (Արշամաշատ)— Սոփքի նախկին հայկական թագավորության մայրաքաղաքն էր, տեղադրվում է Արածանի գետի ափին՝ այսպես կոչված «Գեղեցիկ դաշտում»։

9. Սատալա (Սատաղ) քաղաքը գտնվում էր Փոքր Հայքում։

10. Մաքիլոնների ու Հենիոքների թագավորությունը գտնվում էր Պարխարյան լեռների ծովահայաց փեշերին և հասնում էր մինչև Սև ծովի ափերը, այժմյան Ռիզեի և Աքինայի միջև (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 785)։

11. Հայաստանի Ելեզեա— Ղեղիսի ջերմուկներն են՝ Կարինից արևմուտք, այժմ՝ Իլիջա։

12. Այս տեսարանը քանդակվել է Տրայանոսի կոթողի վրա, որտեղից այն վերցնելով՝ հետագայում դետեղել են Կոստանդիանոս Մեծի հաղթակամարի վրա, որն այժմ էլ կարելի է տեսնել Հռոմում։

13. Կարռս— հյուսված պատ, որով հին Հունաստանում զարդարում էին խաթմական և պյութիական խաղերում հաղթողներին։

14. Այսինքն՝ Պարթևաց թագավոր Խոսրովի։

15. Վաղգեսոս (Վաղարշ)— Մեծ Հայքի Վաղարշ I թագավորն է (117—144)։ Նրա անվան հետ է կապված Վաղարշապատ քաղաքի հիմնադրումը։

16. Սա Հայոց Տրդատ I թագավորի որդի՝ Մեծ Հայքի թագավոր Սանատրուկն է (88—110), հայրը՝ Վաղարշ I-ի։

17. Կատիլիոս Սևերոս— Կապադովկիայի լեգատ 114 թ. Տրայանոսի կողմից նշանակվել է նաև Փոքր Հայքի և Մեծ Հայքի կառավարիչ։

18. Հայաստանի այդ մասերը, ինչպես ենթադրում են ուսումնասիրողները, հյուսիսարևելյան Հայաստանն էր, որին հռոմեացիները չէին կարողացել հաստատուն կերպով տիրապետել։ Վաղարշ I-ին ամբողջ Մեծ Հայքի թագավոր է ճանաչել Տրայանոսի հաջորդը՝ Հադրիանոս կայսրը (117—138)։

19. Մարտիոս Վերոս— հռոմեական զորավար, Հայաստանում գտնվող հռոմեական բանակներից մեկի հրամանատար։

20. Սոեմոս (Սոեմոս-Տիգրան)— թագավոր Մեծ Հայքի (144—161, 164—186)։ Սա Ասորիքի էմեսա (այժմ՝ Հոմս) փոքրիկ քաղաքի թագավորն էր, որ վանդունիների հայկական թագավորական հարստության շառավիղ։ 144 թ. Հռոմի կայսր Անտոնինոս Պիոսը (138—161) գահընկեց է հայտարարում Վաղարշ I-ին և Մեծ Հայքի թագավոր հռչակում Սոհեմոսին, որին տրվում է նաև Տիգրան անունը։ Սակայն, երբ պարթևները 161 թ. ներխուժեցին Հայաստան, Սոհեմոսը փախավ Հռոմ, որտեղ ընդունեց հռոմեական քաղաքացիություն և շուտով ընտրվեց Սենատի (Սենատ) անդամ։ Այդ ժամանակ Հայաստանում թագավոր հռչակվեց Բակուր Արշակունին (161—163)։ 164 թ. Սոհեմոսը Մարկոս Ավրելիոս կայսեր (161—180) կողմից վերստին հաստատվում է հայկական գահին։

21. Նոր Եղամ— Վաղարշապատ քաղաքն է, որը կառուցել է Հայոց Վաղարշ I թագավորը։ Հռոմեացիներն այն անվանում էին Կայենպոլիս, հայերեն՝ Նոր քաղաք։

22. Որոշ ուսումնասիրողներ այս Տիրիդատես սատրապին նույնացնում են հայ նախարար Տրդատ Բագրատունու հետ, որն ըստ Խորենացու՝ ապրել է II դարի կեսերին (տե՛ս «Պատմություն Հայոց», գիրք Բ, գլ. ԿԴ)։

23. Սա Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսն է։

24. Խոսքը վերաբերում է Անտոնինոս Կարակալլա կայսրին (211—217)։

25. Սա Օսրոենե-Եդեսիայի թագավոր Աբգար X-ն է, որին Կարակալլան 215 թ. գերի վերցրեց, իսկ նրա երկիրն էլ հռչակեց հռոմեական պրովինցիա։

26. Դիոնը նկատի ունի Մեծ Հայքի թագավոր Խոսրով I Արշակունուն (198—216)՝ Հայոց Վաղարշ II թագավորի (186—198) ավագ որդուն։

27. Հայոց թագավոր Խոսրով I-ի ձերբակալությունն ու դրան հետևող Հայաստանում բռնկված հակահռոմեական հուժկու ապստամբությունը տեղի է ունեցել 216—217) թվականներին։

28. Նիկոմեդիա— Բյութանիական թագավորության մայրաքաղաքն էր, հետագայում՝ հռոմեական Բյութանիա պրովինցիայի կենտրոնը։ Հիմնադրել է Նիկոմեդես I-ը՝ մ. թ. ա. 264 թվականին, այժմ՝ Իզմիթ։

29. Փաղանգ (Ֆալանգա)— հին հունական, մակեդոնական և մասամբ՝ հռոմեական բանակների մարտական շարվածք՝ քառանկյունի, զինվորների 8—24 շարքերով։ Փաղանգի ճակատամասը հասնում էր մինչև 500—1000 մետրի՝ յուրաքանչյուր շարքում 1000-ական հոպլիտ։ Մակեդոնական փաղանգը ունենում էր մինչև 28.662 զինվոր։

30. Խոսքը Անտոնինոս Կարակալլա կայսեր մասին է։

31. Սա Պարթևաց Վաղարշ V թագավորն է (208—223)։

32. Հ. Մանանդյանի կարծիքով, այս Տրդատը եղբայրն էր Պարթևաց թագավոր Վաղարշ V-ի։

33. Դիոնը նկատի ունի Հռոմի կայսր Մակրինոսին (217—218)։

34. Սա հռոմեական բանտում մահացած Հայոց թագավոր Խոսրով I-ի ավագ որդի, Մեծ Հայքի թագավոր Տրդատ II Արշակունին էր (217—252), որին Կարակալլայի սպանությունից հետո, Հայաստանում հռչակել էին թագավոր։

35. Տարավտաս— Անտոնինոս Կարակալլա կայսեր մակդիրը։

36. Այսինքն՝ Հայոց Խոսրով I թագավորը։

37. Ուսումնասիրողների կարծիքով, այստեղ խոսքը գնում է դրամական այն նպաստի մասին, որ հռոմեացիները յուրաքանչյուր տարի վճարում էին հայկական հնձելազորի համար։ Հայկական հնձելազորը այս նպաստը ստանում էր կովկասյան լեռնանցքները պաշտպանելու համար։

38. Սա Արտաշիր I Պապական Սասանյանն է (224—241)՝ Պարսք երկրի արքայիկը, որը 224—227 թթ. ապստամբելով պարթևների դեմ՝ տապալեց նրանց տիրապետությունը Պարսկաստանում և այստեղ հիմք դրեց Սասանյանների թագավորական հարստությանը։

39. Աուտաբանոս— Պարթևաց վերջին թագավոր Արտավան V-ն է (209—224)։

40. Հատրա քաղաքը արաբական Հատրենն փոքրիկ թագավորության մայրաքաղաքն էր։ Այս թագավորությունը գտնվում էր Եդեսիա-Օսրոենե և Ադիաբենե թագավորությունների միջև։

ՍԱՍԱՆՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

Ագաթանգեղոսի (V դ.) երկը հայոց պատմագրության առաջնեկներից է։ Այն կոչում է «Պատմութիւն Հայոց» խորագիրը։ Ընդգրկում է III—IV դդ. Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների նկարագրությունը՝ հատկապես Հայաստանում և նրա հարևան երկրներում քրիստոնեության տարածման և պաշտոնական ճանաչում գտնելու պատմությունը։ Նրանում մեծ տեղ է հատկացված քրիստոնեության առաջին քարոզիչների, մասնավորապես Գրիգոր Լուսավորչի, գործունեության շուրջը հյուսված սովանդություններին և հրաշապատումներին։

Պատմությունը V—VI դարերում ենթարկվել է զգալի փոփո-

խություններեի. Եկեղեցու հայրերն աշխատել են այն խմբագրել այնպես, որ համապատասխանի իրենց ժամանակի կրոնադավանաբանական գաղափարախոսության պահանջներին:

Ագաթանգեղոսի Պատմության լավագույն հրատարակությունը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանի կազմած քննական բնագիրն է (Թիֆլիս, 1909): Ագաթանգեղոսի բնագրի համառոտությունը ճնում թարգմանվել է հունարեն, արաբերեն, վրացերեն և այլ լեզուներով: Աշխարհաբար է թարգմանել Ա. Տեր-Ղևոնդյանը, որը լույս է տեսել 1977 թ.՝ «Հայ մատենագիրներ» մատենաշարով: Ստորև բերված հատվածները տրվում են ըստ այս հրատարակության:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

18. Երբ Պարթևների թագավորությունն իր վախճանին հասավ, վերացվեց Վաղարշի որդու՝ Արտավանի տերությունը և նա սպանվեց Սասանի որդի Արտաշիրի ձեռքով: Սա մի նախարար էր Ստահր գավառից[1], որ գալով միավորեց պարսից զորքերը, որոնք լքեցին, հեռացան, մերժեցին ու անարգեցին պարթևների տերությունը և հաճույքով նախընտրեցին Սասանի որդի Արտաշիրի իշխանությունը: Արդ, երբ այս մահվան գույժը հասավ Հայոց Խոսրով թագավորին[2], որը Պարսից տերության մեջ երկրորդն էր[3], որովհետև նա, ով Հայոց թագավոր էր՝ Պարսից տերության մեջ երկրորդ [անձն] էր,— թեպետև նա վաղուց էր բոթը լսել, [այնուհանդերձ] ոչինչ կարողացավ անել պատերազմի պատրաստության գործը ավարտելու համար: Դրանից հետո նա դարձյալ պատահած դեպքերի համար մեծ տրտմության մեջ էր, որովհետև որևէ գործ չկարողացավ անել: [Ուստի] կատարվածի համար մեծապես տրտմելով՝ նորից անցավ, եկավ իր երկիրը:

19. Արդ՝ մյուս տարեմուտին Հայոց թագավոր Խոսրովը սկսեց բանակ կազմել և զորք գումարել: Հավաքեց աղվանից ու վրաց զորքերը և բացեց Ալանաց ու Ճորա Պահակի դռները[4], դուրս բերեց հոների զորքը, ասպատակ սփռեց պարսից երկիրը և արշավեց Ասորեստանի կողմերը մինչև Տիզբոնի դռները[5]:

24. Իսկ երբ Պարսից թագավորը տեսավ այս բոլոր չարիքները, որ նրա վրա հասան, նեղվեց, տառապեց, շփոթվեց, երկմտեց, ինքն իր մեջ մոլորվեց: Իր մոտ կանչեց տերության բոլոր

թագավորներին, կուսակալներին, նախարարներին, զորավարներին, պետերին ու իշխաններին, և խորհրդի նստեցին: Ազաչում էր ամենքին, որևէ հնար փնտրել գտնել. տեսակ-տեսակ պարգևներ էր խոստանում: «Թերևս գտնվի մեկը,— ասում էր նա,— որ կարողանա վրեժը լուծել»: Խոստանում էր շնորհել իր տերության երկրորդ գահը, եթե միայն որևէ մեկը կարողանար իր մեծ վրեժը լուծել: «Միայն աթոռովս ես վեր կլինեմ նրանից [ասում էր], թեկուզ շատ անարգ մարդկանցից լինի, կամ թե պատվականներից»: Խոստանում էր ամեն տեսակ պատիվներ, պարգևներ և վարձի հատուցում շնորհել:

25. Արդ՝ այս խորհրդի մեջ ոտքի ելավ պարթևների տերության մի գլխավոր նահապետ, որի անունն էր Անակ, մեջտեղ գալով՝ խոստացավ վրեժ առնել իր ազգակիցներից իբրև թշնամիներից:

28. Այն ժամանակ Պարթևն իր եղբոր հետ պատրաստվեց հանդերձ ընտանյոք, կանանցով, որդիներով, ամբողջ գերդաստանով շարժվեցին, ճանապարհ ընկան և, զննելով ուղիները, ելան, գաղթելու պատրվակով գնացին Հայաստանի կողմերը, իբրև թե ապստամբել էին Պարսից արքայի դեմ: Եկան հանդիպեցին Խոսրով թագավորին Ուտիք գավառի Խաղխաղ քաղաքում՝ Հայոց թագավորության ձմեռանոցում:

29. Հայոց թագավորը երբ տեսավ, ցնծությամբ ընդառաջ եկավ ու մեծ խնդությամբ ընդունեց նրան, մանավանդ, երբ սա կեղծավորությամբ ու դավով սկսեց խոսել նրա հետ և իր գալու հավատարմությունը ցույց տալ: «Այն բանի համար եմ քեզ մոտ եկել,— ասաց նա,— որ կարողանանք միատեղ ընդհանուրի վրեժը լուծել»:

30. Արդ՝ երբ թագավորը տեսավ այս մարդուն, որ եկել էր իր մոտ ամբողջ ընտանիքով, վստահորեն հավատաց նրան: Այնժամ նրան պատիվ տվեց ըստ թագավորական օրենքների, հանեց նստեցրեց իր թագավորության երկրորդ աթոռի[6] և ձմեռվա ամբողջ ընթացքում՝ ցրտաշունչ, հողմաշունչ սառնամանիքի օրերը ուրախությամբ անցկացրին:

31. Իսկ երբ հասան տաք օրերը, հարավահողմ գարնան դրությունները բացվելու ժամանակը, հեռացավ թագավորը այդ կողմերից:

Եկան իջան Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը։ Եվ մինչդեռ ուրախությամբ հանգստանում էին, թագավորը մտադրվելով զորք կազմեց՝ նորից Պարսից կողմերը արշավելու նպատակով։

32. Երբ Պարթևն այս լսեց, հիշեց այն երդումը, որ տվել էր Պարսից արքային։ Հիշեց նաև պարգևների խոստումները և փափագեց իր բնիկ աշխարհը տեսնել, որը Պահլավ էր կոչվում, շատ միտք հղացավ. իր հարազատ եղբոր հետ թագավորին մի կողմ տանելով՝ իբր թե զրոսանքի կամ նրա հետ խորհուրդ անելու նպատակով, և պողպատե սուսերները կես մերկացրած պահելով՝ հանկարծ անսպասելիորեն զենքերը բարձրացրին և թագավորին դիաթավալ անելով՝ գետին տապալեցին։ Իսկույն եղած իրողությանը իրազեկ դառնալով՝ ամբոխը աղաղակով գույժ բարձրացրեց. մինչ այս, մինչ այն՝ նրանցից յուրաքանչյուրը իր ձին նստելով փախուստի դիմեց։

33. Հայակույտ զորքի մեծամեծները երբ այս իմացան, գունդգունդ բաժանվեցին ու հետապնդեցին։ Ոմանք ցամաքով աճապարեցին հասնելու Արտաշատ քաղաքի դռների մոտակա կամուրջի գլուխը։ Երասխ գետը հորդացած գալիս էր ափեափ լեցուն, սառցախառն, ձյունախառն, ելման ջրերով իր վարարման շրջանում։ Նրանց մի մասն անցավ Վաղարշապատ քաղաքի կամուրջով, որը կոչվում է նաև Մեծամորի կամուրջ։ Աճապարում էին որքան կարելի է շուտ հասնել Արտաշատի կամուրջի գլուխը։ Ճանապարհների կիրճերում կանգնեցրին նրանց և, շրջապատելով Տափերական կամուրջի մոտ, դիտավետ արեցին։ Իսկ իրենք այնտեղից դարձան վայով, ճիշով ու ողրով, և ամբողջ երկիրը հալածված թագավորին էր սգում։

34. Եվ քանի դեռ ջերմ շունչը նրա կրծքից չէր հեռացել, և չէր հասել վախճանը, [թագավորը] հրաման տվեց ոչնչացնել նրանց ազգատոհմը։ Այնժամ սկսեցին սպանել ու կոտորել, մինչև իսկ չթողեցին մանուկներից այնպիսիին, որը բնավ աջն ու ձախը չգիտեր։ Նաև տոհմի իգական մասը սրի քաշեցին։ Միայն Պարթևի որդիներից երկու փոքրիկ մանուկների՝ մի մարդ [երեխաներից] մեկի դայակների միջոցով փրկեց, որոնցից մեկին փախցրեցին Պարսից կողմերը, իսկ մյուսին՝ Հունաց[6]։

35. Երբ Պարսից թագավորը այս ամենը լսեց՝ զվարճացավ, այն օրը ուրախության մեծ տոն արեց և սուրուշաններին շատ զոհ մատուցեց։ Զորք հավաքեց, շարժվեց գնաց ասպատակ սփռեց Հայաստանի կողմերը, խոստնն ու անասունը, ծերն ու տղան, երիտասարդն ու մանուկը ընդհանրապես գերի տարավ[7]։

36. Այդ ժամանակ մի մարդ ավազակից ազատելով փրկում է Հայոց խոսրով թագավորի որդիներից Տրդատ անունով մի փոքրիկ մանկան[8], [որին] դայակները առնելով փախցրին կայսեր արքունիքը, Հունաց կողմերը։ Իսկ Պարսից արքան գալով այնուհետև Հայաստան իր անվամբ կոչեց այդ վայրերը և Հունաց զորքը փախուստի մատնելով հալածեց մինչև Հունաց սահմանները։ Փոսեր փորելով սահմաններ հաստատեց և տեղի անունը դրեց Փոսից դրունք[9] այն վայրերում, որոնք կոչվում էին Սուլզն։ Մնացած քնակիչներին տեղահանեց և երկրին տիրացավ։

37. Տրդատը գնաց Լիկիանես անունով մի կոմսի մոտ դաստիարակություն և ուսում ստացավ...։

1. Ստաեր— գավառ Աքեմենյանների Պերսեպոլիս մայրաքաղաքի մոտ, Պարսք նահանգում։

2. Ագաթանգեղոսը, ինչպես և Խորենացին (տե՛ս 404-րդ էջ, № 3 ծան.) շփոթում են. հիշյալ դեպքերի ժամանակակից թագավորն էր ոչ թե Խոսրով I-ը, այլ վերջինիս որդի Տրդատ II-ը։

3. Նկատի ունի այն հանգամանքը, որ հայ Արշակունիները կրտսեր ճյուղն էին պարթև Արշակունիների։

4. Ալանաց դռները տեղադրվում են այժմյան Դարիալի կիրճի վայրում, իսկ Ճորա Պահակը (Կապան Ճորա, Դուռն Հոնաց, Դուռն Աղվանից)՝ այժմյան Դերբենդ քաղաքի մոտ, Կասպից ծովի ափին։

5. Ուսումնասիրողների կարծիքով, Ագաթանգեղոսի սույն վկայությունը հավաստի հիշողություն է։

6. Այսինքն՝ Բյուզանդիա։ Անակի այս որդին ապագա Գրիգոր Լուսավորիչն էր։

7. Ուսումնասիրողները գտնում են, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել 252 թ., երբ Հայոց թագավորն էր Տրդատ II-ը, իսկ Պարսից՝ Շապուհ I-ը։

8. Սա Հայաստանի ապագա թագավոր Տրդատ III Մեծն է։

9. Փոսից դրունք— լեռնանցք Կարինից դեպի Կողոնիա տանող ճանապարհի վրա՝ Գայլ գետի ակունքների մոտ։

ՀԱՅ-ՍԱՍԱՆՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ՀԱ

ԽՈՍՐՈՎԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԱՍՈՐԵՍՏԱՆ, ՈՐՈՎ ՄՏԱԴԻՐ ԷՐ ՕԳՆԵԼ ԱՐՏԱՎԱՆԻՆ

Երբ Սասանի որդի Արտաշիրը[1] Արտավանին սպանեց և ինքը թագավորեց, պահլավյան երկու ցեղերը, որոնք կոչվում են Ասպահապետի և Սուրենի Պահլավ, նախանձ պահած լինելով իրենց հարազատ ազգից թագավորած ցեղի դեմ, որ Արտաշեսինն էր, հոժարությամբ ընդունեցին Սասանի որդի Արտաշիրի թագավորությունը։ Բայց Կարեն Պահլավի[2] տունը հավատարմություն պահպանելով դեպի իրենց եղբայրական ազգականությունը, պատերազմով դիմադրեց Սասանի որդի Արտաշիրին։ Բայց դեռ ավելի առաջ Հայոց Խոսրով թագավորը[3], հենց որ լսեց ծագած խռովության մասին, աճապարեց օգնության գալու Արտավանին, եթե հնար լինի՝ շտապել ազատելու դոնե միայն Արտավանին։ Բայց երբ նա Ասորեստան մտավ, այստեղ լսեց Արտավանի մահվան բոթը[4], բոլոր պարսից զորքերի և նախարարների միաբանությունը (Արտաշիրի հետ), ինչպես և իր ազգի՝ պարթևների և պահլավիկների, բացի Կարենյան ցեղից։ Ուստի Խոսրովը սրա մոտ պատգամավորներ ուղարկելով՝ մեծ արտմությամբ ու վշտով վերադառնում է մեր երկիրը։ Եվ սակայն շտապով ծանուցանում է Հռոմեացիների Փիլիպպոս կայսրին[5], նրանից օգնություն խնդրելով։

ՀԲ

ԽՈՍՐՈՎԸ ՓԻԼԻՊՊՈՍԻՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՎ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ԴԻՄՈՒՄ Է ԱՐՏԱՇԻՐԻ ՎՐԱ

Փիլիպպոսը՝ իր թագավորության մեջ խռովություն ծագած լինելու պատճառով, չկարողացավ հռոմեացիների գնդերը զբաղեցնել Խոսրովին օժանդակելու համար, բայց նրան օգնեց, գրությամբ հրամայելով, որ բոլոր կողմերից նրան օժանդակեն։ Այսպիսի հրաման ստանալով՝ նրան օգնության են հասնում Եգիպտոսից և անապատից սկսած մինչև Պոնտոսի ծովեզրյա կողմերը։ (Խոսրովը) այսքան բազմության ձեռք բերելով՝ դիմում է Արտաշիրի վրա, ճակատամարտ տալով նրան ստիպում է փախչել և խըլում է նրանից Ասորեստանը և մյուս արքայանիստ երկրները։

Դարձյալ պատգամավորներ է ուղարկում իր առհմային պարթև և պահլավիկ ազգերին և քուշանաց երկրների բոլոր զորքերին, որ գան իր մոտ Արտաշիրից վրեժ առնելու, և (հետո) ինքը նրանց ցից արժանավորին կթագավորեցնի, որպեսզի տերությունը նրանց ձեռքից դուրս չգա։ Իսկ նրանք՝ վերը հիշատակված Ասպահապետի և Սուրենի պահլավները, չհամաձայնվեցին, որի պատճառով Խոսրովը մեր երկիրը վերադարձավ, ոչ այնչափ ուրախանալով տարած հաղթության վրա, որքան ցավելով իր ազգականների հրաժարվելու համար։ Այս ժամանակ նրա մոտ են հասնում մի քանիսն այն պատգամավորներից, որոնք գնացել էին ամենապատվավոր ազգի մոտ, աշխարհի խորքերը, բուն Բահլը[6], և նրան լուր բերին, թե քո ազգական Վեհսաճանը, իր կարենյան պահլավ ցեղով, Արտաշիրին չհնազանդվեց, այլ քո կոչին անսալով, գալիս է քո մոտ։

ՀԳ

ԽՈՍՐՈՎԻ ԿՐԿԻՆ ՀԱՐՁԱԿՎԵԼԸ ԱՐՏԱՇԻՐԻ ՎՐԱ՝ ԱՌԱՆՑ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ

Թեպետև Փիլիպպոսը վախճանվել էր և հռոմեացիների թագավորությունը խառնակ վիճակում էր, և մեկը մյուսի ձեռքից խլում էին տերությունը կարճ ժամանակով, ինչպես էին Դեկիոս, Գալլոս և Վաղերիանոս կայսրերը[7], որոնք Խոսրովին չօգնեցին, բայց նա իր զորքերով և նրան հարած ուրիշ սիրելիներով և հյուսիսային ազգերի օգնությամբ Արտաշիրին հաղթեց և հալածելով քշեց մինչև Հնդկաստան։

ՀԴ

ԱՆԱԿի ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

Այսպես Արտաշիրը Խոսրովից մինչև Հնդկաստան փախչելով և շատ նեղվելով՝ մեծամեծ խոստումներ է անում նախարարնե-

բին, եթե մեկն իրեն ազատի նրանից կա՛մ թույնի միջոցով, կա՛մ գաղտնապես սրով սպանելով. զանազան տեսակ պատիվներ էր խոստանում: «Մանավանդ ձեզ, պարթևազուններիդ, ասում է նա, կարծես ավելի հեշտ կլինի նրա դեմ դավ սարքել սիրո պատրվակով. ազգականության պատճառով նա ձեզ կվստահանա և կխաբվի»: Նրանց խոստանում է վերադարձնել բուն պարթևական տունը, որ կոչվում էր Պահլավ, արքայանիստ Բահլ քաղաքը և ամբողջ Քուշանաց երկիրը[8]: Նաև խոստանում է թագավորական ձև և պատիվներ, արյաց աշխարհի կեսը և իր երկրորդը լինել իր ձեռքի տակ: Այս խոստումներից հրապուրվելով՝ Անակը, որ Սուրենյան պահլավի ցեղից էր, հանձն է առնում Խոսրովին սպանել: Եվ կեղծելով, թե գաղթում է, փախչում է Արտաշիրից. նրան ձևի համար հետամուտ են լինում պարսից զորքերը և իբրև թե փախցնելով, քշում են Ասորեստանով, բերում հանում են Ատրպատականի սահմանների մոտ Կորդուքի միջով: Մեծն Խոսրովը Ոտիքի գավառում[9] այս բանը լսելով՝ կարծում է, թե Կարենյաններն են եկողները և մի գունդ է ուղարկում Անակին օգնության: Սրանք Անակին պատահելով՝ թագավորի հրամանով նրան տանում են Արտազ կոչված գավառը, մի դաշտավայր տեղ...:

Անակը Հայաստան գալուց երկու տարի անցած՝ երրորդում սպանում է Խոսրովին, որ թագավորեց քառասունութ տարի[10]: Ինքը (Անակը) և բոլոր յուրայինները մեռնում են:

ՀՋ

ԱՐՏԱՇԻՐԻ ՄԵՋ ՎՐԱ ԴԱԼԸ ԵՎ ՏԱԿԻՏՈՍ ԿԱՅՍԵՐԻՆ ՀԱՂԹԵԼԸ

Նույն մարդն[11] ասում է, թե Խոսրովի սրախողխող լինելուց հետո հայոց նախարարները միաբանվելով՝ իրենց օգնության են կանչում Փոյուգիայում գտնվող հունաց զորքերը՝ պարսիկներին դիմադրելու և Հայաստանը պաշտպանելու համար: Եվ իսկույն իմաց տվին Վաղերիանոս[12] կայսրին: Բայց որովհետև գոթերը Դանուբ գետն անցնելով շատ գավառներ գերեցին և Կյուկղագի կըզիները[13] կողոպտեցին, ուստի Վաղերիանոսը չի կարողանում մեր երկիրը հովանավորել, նաև նրա կյանքն էլ կարճ է տևում, և նրանից թագավորությունն առնում է Կլավդիոսը և նրանից հետո Ավրելիանոսը, արագ-արագ իրար հաջորդելով. նույնիսկ ամիսներով

թագավորեցին Կյունտոս և Տակիտոս և Փղորիանոս եղբայրները[14]: Այս պատճառով Արտաշիրը[15] համարձակաբար արշավեց մեր երկիրը, հունաց զորքերին դուրս քշեց և մեր երկրի մեծագույն մասը գերելով ավերակ դարձրեց: Հայոց նախարարները՝ Արշակունյաց ցեղի հետ նրանից (խուսափելով) գաղթում ապավինում են հույներին. սրանցից մեկն էր և Արտավազդ Մանդակունին, որ Խոսրովի Տրդատ[16] որդուն առնելով հասցնում է կայսեր պալատը: Ուստի Տակիտոսը հարկադրված գալիս է Արտաշիրի վրա, Պոնտոսի կողմերը, իսկ իր եղբոր՝ Փղորիանոսին ուրիշ գնդով ուղարկում է դեպի Կիլիկիա: Իսկ Արտաշիրը Տակիտոսին հասնելով՝ նրան փախցնում է, որ և յուրայիններից սպանվում է պոնտացիների ճանյուքում, այսինքն՝ Խաղտիքում, այսպես և նրա Փղորիանոս եղբայրն (սպանվում է) Տարսոնում ութսունութ օր հետո:

ՀԷ

ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՅՆԵՐԻ ՄԵՋ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ ԵՎ ԱՐՏԱՇԻՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԿԱՐԳ ՊԱՀԵԼԸ ԱՆԻՇԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Բայց հույների վրա թագավորեց Պռոբոսը[17] և Արտաշիրի հետ խաղաղություն կնքելով՝ մեր երկիրը բաժանում է, սահմանացույց փոսեր փորելով: Արտաշիրը նվաճեց նախարարական ցեղերը, գաղթածներին նա դարձրեց, ամուր տեղերը ապավինածներին ներքև իջեցրեց, բացի Ամատունյաց ցեղի Օտա անունով մի նախարարից, որ Սլկունյաց ցեղի փեսա էր և սնուցում էր Խոսրովի դուստր Խոսրովիդուխտին Անի ամրոցում, իբրև մի որջում ապահով թաքնվելով:

Իսկ Արտաշիրը գեղեցիկ կարգավորում է Հայաստանը, վերականգնում է նախկին կարգերը: Նաև այն Արշակունիներին, որոնք հրաժարեցրած էին թագից և Այրարատում բնակվելու իրավունքից, նա նույն տեղերում հաստատում է եկամուտներով և ուտեստով, ինչպես որ առաջ էին[18]: Մեհյաններին պաշտամունքն էլ ավելի զարգացնում է, այլև հրամայում է անշեջ պահել որմզդական հուրը Բագավանի բագինի վրա[19]: ... Մեր երկիրը նա հարկատու է դարձնում և ամեն բանում իր անունն է հաստատում:

Նաև Արտաշեսի հաստատած սահմանները՝ դետնի մեջ քարեր կանգնեցնելով, նա նորոգեց և իր անունով կոչեց Արտաշիրական։ Նա մեր երկիրը կառավարեց պարսիկ գործակալների ձեռքով, ինչպես իր երկրներից մեկը, քսանվեց տարի և նրանից հետո նրա որդին, որ կոչվեց Շապուհ[20], այսինքն՝ արքայի որդի, թագավորեց մեկ տարի, մինչև Տրդատի թագավորելը[21]։

ՀԸ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՑԵՂԻ ԿՈՏՈՐՈՒՄԸ ԱՐՏԱՇԻՐԻ ՁԵՌՔՈՎ

Բայց Արտաշիրը լսել էր, թե հայոց նախարարներից մեկը Խոսրովի որդիներից մեկին առնելով փախցրել ազատել է՝ կայսեր պալատը հասցնելով։ Եվ քննելով, թե ո՞վ է այդ մարդը, իմացավ, որ Արտավազդն է, Մանդակունիների ցեղից[22]. ուստի հրամայեց նրա բոլոր ցեղը կոտորել ոչնչացնել։ Որովհետև երբ հայերը Արտաշիրից գաղթեցին, Մանդակունիները ևս մյուս նախարարական ցեղերի հետ գաղթեցին, իսկ երբ Արտաշիրը մյուսներին նվաճեց, նրանք էլ ետ դարձան և բոլորը սրով կոտորվեցին։

1. Արտաշիր Պապականը Պարսք նահանգի Ստահր գավառի Անահիտ դիցուհու տաճարի քրմապետ Սասանի թոռն էր։ Ապստամբում է Արշակունիների դեմ և 224 թ. պարտության է մատնում պարթևական Արշակուհի վերջին թագավոր Արտավան V-ին, սպանում է նրան և հռչակվում Պարսկաստանի թագավոր՝ այստեղ հիմնադրելով Սասանյան թագավորական հարստությունը։

2. Ըստ ավանդության, Ասպահապետի, Սուրենի և Կարենի պահլավները կրտսեր ներկայացուցիչներն էին պարթև Արշակունիների։

3. Հայ ավանդական պատմագրությունը, հետևելով Խորենացուն, հիշյալ ի-րադարձությունների ժամանակակից ու մասնակից Հայաստանի թագավոր է հիշատակում Խոսրով I Արշակունուն (198—216)։ Մինչդեռ այդ ժամանակ թագավորում էր վերջինիս որդին՝ Տրդատ II-ը (217—252)։

4. Վճռական ճակատամարտը Արտավան V-ի և Արտաշիր I Պապականի միջև տեղի է ունեցել 224 թ. ապրիլի 27-ին, Որմզդական կոչված դաշտում։

5. Խոսքը վերաբերում է Հռոմի կայսր Փիլիպպոս Արաբին (244—249)։

6. Բահլ (Բահլ Առավոտին) քաղաքը գտնվում էր Բակտրիայում՝ Արշակունիների բուն հայրենիքում, Օքսուս գետի (Ամուդարյա) հովտում։ Այժմ նրա ավերակները գտնվում են Աֆղանստանում։

7. Հռոմեական կայսրեր, որոնք համապատասխանաբար իշխել են Դեկիոսը՝ 249—251, Գալլոսը՝ 251—253 և Վալերիանոսը՝ 253—260 թվականներին։

8. Քուշանաց թագավորությունը I—III դդ. ընդգրկում էր ներկայիս Միջին

Ասիայի, Աֆղանստանի, Արևմտյան Պակիստանի և Հյուսիսային Հնդկաստանի տերիտորիաների զգալի մասը։

9. Այլ աղբյուրներից հայտնի է, որ Խոսրովը այդ ժամանակ գտնվում էր Ուտիքի Խաղխաղ բնակավայրում՝ հայոց արքաների ձմեռանոցում։

10. Ըստ Խորենացու ժամանակագրության, Խոսրովը Հայաստանում թագավորել է III դարի առաջին կեսում։

11. Խորենացին նկատի ունի հույն մատենագիր Փերմելիանոս եպիսկոպոսին, որը գրել է իր ժամանակների (մահացել է 260 թ.) պատմությունը, այն, սակայն, մեզ չի հասել։

12. Խոսքը Հռոմի Վալերիանոս կայսեր մասին է։

13. Կյուկղազի կղզիներ— մանր կղզիների արշիպելագոս, որն ընկած է Հունաստանի և Փոքր Ասիայի արևմտյան ափերի միջև։

14. Հռոմեական կայսրեր, որոնք հաջորդաբար իշխել են. Կլավդիոսը՝ 268—270, Ավրելիանոսը՝ 270—275, Քվինտիլոսը՝ 270, Տակիտոսը՝ 275—276 և Փլորիանոսը՝ 276 թվականներին։

15. Այստեղ հիշատակված Սասանյան թագավոր Արտաշիրին Խորենացին ներկայացրել է իրրև ժամանակակից Վալերիանոսի և նրանից հետո իշխած հռոմեական կայսրերի (253 թ. հետո)։ Սակայն հայտնի է, որ Արտաշիր I-ը մահացել է 241 թ. և Իրանում գահ է բարձրացել վերջինիս որդի Շապուհ I-ը (241—272)։ Խորենացու մոտ այս շփոթությունը առաջացել է հետևյալ կերպ. Շապուհ I-ը 261—262 թթ. նվաճելով Հայաստանը՝ այստեղ թագավոր է հռչակում իր որդուն՝ թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրին (262—272)։ Ահա այս Արտաշիրի և Արտաշիր I Պապականի համանմանությունն է, որ շփոթեցրել է Խորենացուն։ Հետևաբար, Արտաշիրի գործունեությունը Հայաստանում պետք է վերագրել ոչ թե Արտաշիր I Պապականին, այլ «Թագավոր Հայոց Մեծաց»՝ Որմիզդ-Արտաշիրին։

16. Ըստ Խորենացու, այս Տրդատը Հայաստանի ապագա թագավոր Տրդատ III Մեծն էր՝ Խոսրով I-ի որդին։ Իրականում Տրդատ III-ը որդին էր Խոսրով II-ի, որի մասին աղոտ տեղեկություններ են պահպանվել։ Ս. Երեմյանը կարծում է, որ «հռոմեացիները սրան անվանապես ճանաչել են Հայոց թագավոր (279—287)։

17. Սա Հռոմեական կայսր Պոորոն է (276—282)։

18. Պատմահայրը նկատի ունի այն կարգը, որ Հայոց Արշակունի արքայազները՝ բացի գահաժառանգից, իրավունք չունեին բնակվելու արքունի ոստանում և նրանց համար առանձնացված էին գավառներ ու նշանակված էր նպաստ։

19. Բագավան (բառացիորեն՝ աստվածների ավան)— բնակավայր և պաշտամունքային կենտրոն Այրարատի Բագրևանդ գավառի հարավարևելյան մասում, նպատ լեռան հյուսիսարևմտյան ստորոտին, Արածանի գետի ձախ ափին, այժմյան Ուչքիլիսե գյուղի տեղում։

20. Այստեղ Խորենացին նկատի ունի Արտաշիր Պապականի որդի, իրանի թագավոր Շապուհ I-ին։ Սակայն, պետք է նշել, որ այստեղ ևս շփոթմունք կա։ Որմիզդ-Արտաշիրից հետո Հայաստանում թագավոր է դառնում Ներսեհ Սասանյանը (272—293)՝ Պարսից ապագա արքայից արքան (293—302)։

21. Նորագույն ուսումնասիրությունների համաձայն, Տրդատ III-ը հռոմեացիների կողմից պաշտոնապես Հայաստանի թագավոր է հռչակվել 287 թ., իսկ 298 թ. Սասանյանների կողմից ևս Տրդատ III-ը ճանաչվեց ամբողջ Մեծ Հայքի թագավոր։

22. Ուսումնասիրողները ենթադրում են, որ այս Արտավազդ Մանդակունին պետք է լինի այլ աղբյուրներից հայտնի «Թագավոր Հայոց Մեծաց» Արտավազդ V-ը (252—262)։ Ինչպես հայտնի է, պարսկա-հռոմեական պատերազմները (249—252 թթ.) ավարտվեցին Հռոմի պարտությամբ և պարսիկները գրավեցին Հայաստանը։ Հայոց Տրդատ II թագավորը փախավ կամ սպանվեց, իսկ Շապուհ I-ը Հայաստանում թագավոր է նշանակում այս Արտավազդին, որին բոլոր հիմքերը կան նույնացնելու Խորենացու հիշատակած Արտավազդ Մանդակունու հետ։

«ՔԱՐԹԼԻՍ ՑԽՈՎՐԵԲԱՆ» ՀԱՅ–ՍԱՍԱՆՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (III ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ)

(Աշխատություններ), էջ 59—64

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐ ԱՍՓԱԳՈՒՐ ԱՐՇԱԿՈՒՆԻԱՆԸ՝ ՄԻՀՐԴԱՏԻ ՈՐԴԻՆ

Եվ Միհրդատից[1] հետո թագավորում էր նրա որդի Ասփագուրը[2]։ Այս Ասփագուրը կառուցեց բերդ-քաղաք Ուշարման[3]։

Իսկ Ալեքսանդրի[4] թագավորությունից սկսած այս բոլոր թագավորներն էին թագավորում Քարթլիում և կոապաշտներ էին։ Եվ այս Ասփագուրը վերջին թագավորն էր Փառնավազյան տոհմից։ Եվ սրա օրոք Պարսկաստանում արքա դարձավ Քասրե Անուշարվան Սասանիանը[5], որը կոտորեց Աժդահայանների[6] թագավորներին։ Իսկ Սոմխիթում արքա դարձավ Կոսարոն[7]։

Եվ այս Կոսարոն՝ սոմեխների արքան, սկսեց պատերազմել Պարսկաստանի Քասրե արքայի դեմ, և նրան օգնում էր Ասփագուրը՝ քարթվելների թագավորը, և այս Ասփագուրը բացեց Կովկասյանների դուռը[8] և բերեց օսերին, լեկերին ու խազարներին, և եկան սոմեխների արքա Կոսարոյի մոտ՝ պարսիկների դեմ պատերազմելու համար։

Եվ Պարսկաստան կատարած առաջին իսկ արշավանքին պարտվեց Քասրեն՝ պարսիկների արքան, և փախուստի մատնեցին նրան և կոտորեցին նրա զորքը։ Եվ այդ ժամանակվանից սրանց չկարողացավ դիմակայել պարսիկների այդ արքան և հաճախակի դարձրին դեպի Պարսկաստան ասպատակելն ու գերեվարելը։

Սակայն վերջացան Քարթլիի Փառնավազյաններ (տոհմի) թագավորները։

ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՔԱՐԹԼԻ ԵՎ ՔԱՍՐԵԻ ՈՐԴԻ ՄԻՐԻԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ

Եվ երբ սոմեխներն ու քարթվելները և հյուսիսային ցեղերը փախուստի մատնեցին Պարսկաստանի արքային և հաճախակի դարձրին Պարսկաստան ներխուժելն ու Պարսկաստանն ավերելը, և երբ չկարողացավ նրանց դիմադրել պարսիկների արքան, այնժամ պարսիկների արքան, լի տրտմությամբ, հրավիրեց աշխարհների (երկրների) գլխավորներին՝ բդեշխներին և էրիսթավներին, և խորհուրդ արեց (նրանց հետ)։ Եվ փնտրում էր միջոց վրա հասած չարագործության դեմ և մեծ պարգև ու պատիվ էր խոստանում (նրան), ով կկարողանա ու կգտնի հնար վրեժխնդրության։

Իսկ այդ ժողովին ներկա էր մի երևելի մթավարի[9] Անակ անվամբ[10], որը սոմեխների Կոսարո արքայի տոհմից էր։ Նա վեր եկավ, (գնաց) արքայի առաջ կանգնեց և ասաց. «Փախուստի է մատնված մեր զորքը սոմեխների Կոսարո արքայի կողմից, կոտորվել են մեր ռազմիկները, և (Կոսարոն) ահ ու սարսափ է տարածել պարսիկների վրա, և հզորացել են նրանք և զորություն չունենք ընդդիմանալու նրանց։ Արդ՝ այս է խորհուրդն իմ, որպեսզի խաղաղությամբ և աղերսանքով ու հարկեր տալով խաղաղեցնենք Կոսարո արքային»։ Այս որ ասաց Անակը, ոչ թե սրտով ասաց, այլ այդ (գումարված) բազմությունից իր սրտի խորհուրդը թաքցրեց։ Մերձեցավ արքային և ասաց (ծածուկ). «Գիտեցիր, որ այս չէ իմ խորհուրդը, որ ասացի, այլ արժանի դարձրու ինձ միայնակ խոսել քո առջև, ապա (այնժամ) կհայտնեմ քո թագավորությանը սրտի խորհուրդը իմ»։ Ապա այդ երևելիները ամեն մեկը խոսեցին արքայի առաջ և գնացին։ Այնուհետև ծածուկ կանչեց արքան Անակին, և Անակն ասաց արքային. «Արքա, ողջ լեր հավիտյանս, ես կգտնեմ Կոսարոյից վրեժխնդրության հնարը։ Կգնամ նրա մոտ իմ ընտանիքով հանդերձ, և նա ինձ կվստահի ազգակից (տոհմակից) լինելու պատճառով, և քո բախտը բարին կբերի, ու կսպանեմ այն արքային և անձն իմ կզոհաբերեմ հանուն քեզ»։

Հավանեց արքան այս խորհուրդը։ Եվ մի քանի օրից հետո գնացին Անակը և նրա եղբայրը իրենց ընտանիքով որպես Պարսից

արքայից հեռացածներ (ապստամբներ)։ Եվ եկավ Սոմխիթի սահմանը, Խիլախիլա կոչվող քաղաքը[11], սոմեխների արքաների ձմեռանոցը։ Տեսնելով նրան, Կոսարո արքան մեծ պատիվներով ընդունեց, քանզի ամենայն հնարքով իր գալուստը (Անակը) հավատարժան էր ցուցադրում։ Եվ տեսնում էր արքան, որ ընտանյոք հանդերձ է եկել իր մոտ, ուստի և արքան պատվի արժանացրեց նրան, իր գահից երկրորդ (բարձին)[12] բազմեցրեց նրան բերկրանքով ու վստահությամբ։ Երբ անցան օրերն ձմեռային, և մոտեցան օրերն ամառային եղանակի, և հորդացան գետերը, այնտեղից արքան ելավ և եկավ Արատ[13] քաղաքը, և նախապատրաստվել էր Կոսարո արքան կրկին Պարսկաստան արշավելու։ Այդ ժամանակ, մի օր արքան որսի գնաց, և նրա հետ էին Անակն ու նրա եղբայրը, որոնք ծածուկ պահել էին բրդյա անձրևակալի տակ սրած թրերը, ապա (հարմար) պահ գտնելով, սպանեցին արքային և փախան։ Սակայն Սոմխիթի մեծավարները հետապնդեցին նրանց և հասան ոմանց կամրջի վրա ու ոմանց ծանծաղուտում և կոտորեցին նեղ տեղում, և ոչ ոք չփախավ, բոլորին էլ սպանեցին։ Եվ կոտորեցին նրանց ողջ տոհմը, բայց (նրանցից) մնացին երկու որդի, որոնց փրկեցին նրանց դայակները. մեկը[14] ապաստանեց Սաբերձնեթի[15] սահմաններում, իսկ մյուսը՝ Պարսկաստանի սահմաններում։

Երբ լսեց այս լուրը պարսիկների արքա Քասրե Սասանիանը, լցվեց բերկրանքով և շարժվեց իր ողջ զորքով։ Նախ նա եկավ Սոմխիթի և գրավեց Սոմխիթը, բնաջինջ արեց և գերեց սոմեխների արքայի ամբողջ տոհմը։ Սակայն Կոսարո արքայի մանկահասակ մի որդին ապաստանեց Սաբերձնեթի սահմաններում և այնտեղ էր դաստիարակվում (մեծանում), որի անունը Թրդատ[16] էր։ Այն ժամանակ, երբ պարսիկների արքան գրավեց Սոմխիթը և մուտք գործեց Քարթլի, մեկնեց քարթվելների թագավոր Ասփագուրը Օվսեթ[17], որպեսզի զորքերը ավելացնի Օվսեթից (բերածով), և ամրացրեց բերդաքաղաքները։ Սակայն երբ Ասփագուրը ժամանեց Օվսեթ, վրա հասավ մահը և այնտեղ մահացավ։

Այս Ասփագուրը արու զավակ չուներ, այլ միայն մի դուստր։ Այնժամ ժողովվեցին Քարթլիի բոլոր էրիսթավները Մցխեթ քաղաքում՝ սպասպետի[18] մոտ, որին Մաեժան էին անվանում։ Խորհուրդ արին միասին լի տրտմությամբ և ասացին. «Թույլ չտանք վիշտն իշխի մեր սրտին, որպեսզի այն չզրկի մեզ բանականությունից, այլ մեր ցավի և փորձության դեմ հնար գտնենք»։ Ապա ասաց, Մաեժան սպասպետը. «Եթե մենք այնչափ զորություն ունենայինք, որ Պարսկաստանի մեկ երորդին հավասարվեինք, ապա մահու կտայինք մեր անձն ու նրանց դեմ կելնեինք։ Եվ եթե մեր թագավորներից, որն արժանի լիներ թագավորելու, (այդ դեպքում) կամրանայինք բերդ-քաղաքներում, մահու կտայինք մեր անձն ու անգամ մարդու միս կուտեինք, ինչպես մեր նախնիները։ Սակայն տվյալ պահին այնպես է ստացվել, որ սպանվել է Սոմխիթի մեծն արքան պարսիկների կողմից, նվաճված է Սոմխիթը, որից կախված էր մեր թագավորությունը, և պարսիկների արքան բացել է իր երախը ողջ երկիրը կլանելու միտումով։ Մեր մեջ չկա ոչ ոք, (որ) նրա դեմ ելնի և մենք մնացել ենք որբի պես, ինչպես ոչխարն առանց հովվի։ Արդ՝ այս է խորհուրդն իմ, որ պարսիկների արքային հպատակություն հայտնենք և խնդրենք նրանից ողորմածություն՝ խնդրենք նրանից տալ իր որդուն որպես թագավոր Ասփագուրի դուստրը։ Հայտնենք, որ այդ օրհորդը վոր մեզ և աղերսենք, որպեսզի կնության առնի իր որդուն[19] մեր քարթլոսիաններին և Ներբոթիաններին, մեծն Արշակունիաններին և մեր թագավորներ Փառնավազյաններին ազգակից է, և խնդրենք նրանից պահպանել հավատը մեր նախնիների, և խնդրենք, որ մեզ հետ չհաշտվեն պարսիկները, և մեծ պատվով իշխի մեզ վրա։ Եվ եթե ընդունի մեր այս աղերսանքը և անի ամեն ինչ այսպես, և եթե ընդունի մեր նախնիների հավատը, և եթե պարսիկներին մեզանից վեր դասի կամ թե մեր թագավորների ազգակիցներին կոտորի, ապա մահը գերադասելի է, քան նման իրողությանն ականատես լինելը։ (Այդ դեպքում) կամրանանք բերդում ու քաղաքներում և բոլորս էլ կկոտորվենք»։

Այնժամ բոլոր էրիսթավները հավանեցին Մաեժան սպասպետի խորհուրդը, և ուղարկեցին պատվիրակ պարսիկների արքայի մոտ, և զեկուցեցին այն ամենի մասին, ինչ խորհուրդ էին արել։

1. «Քարթլիս ցխովրեբայի» արքայացանկում այս Մհերդատը 22-րդ թագավորն է։

2. Ասփագուրը կիսապատմական անձնավորություն է։

3. Ուջարմա— ամրոց, իսկ այնուհետև քաղաք Արմազիից արևելք, այժմ՝ Նուչանուն գյուղը։

4. Նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացուն։

5. Խոսքը Պարսք երկրի արքայիկ Արտաշիր Պապական Սասանյանի մասին է, որը ապստամբելով պարթև Արշակունիների դեմ՝ տապալեց նրանց հարյուրամյա իշխանությունը և բարձրացավ գահ։

6. Այսինքն՝ պարթև Արշակունիներին։

7. Կոսարո (Խոսրով)— հետևելով հայկական պատմական ավանդությանը, Լեոնտի Մրովելին այս ժամանակաշրջանի համար Հայաստանի թագավոր է ճանաչում Խոսրով Մեծին, մինչդեռ հիշյալ իրադարձությունների մասնակիցը հայոց Խոսրով I թագավորի որդի՝ Տրդատ II Արշակունին էր։

8. Հեղինակը նկատի ունի Ալանաց դուռը, Հյուսիսային Կովկասից գեպի հարավ՝ Դարիալի կիրճով անցնող ուղին։

9. Մթավարի— բառացիորեն նշանակում է իշխան։

10. Ավանդության համաձայն, Անակը պարթև Արշակունիների, հետևաբար և հայ Արշակունիների, ազգականն էր՝ Սուրենյան Պահլավի տոհմի ներկայացուցիչը, տոհմ, որը հավակնում էր Արշակունիներից հետո երկրորդը լինելու։

11. Խլխախլա— հայկական խաղխաղ քաղաքն է, Մեծ Հայքի Ուտիք նահանգում՝ Կուրի աջ ափին, Ջակամ վտակի միախառնման տեղում։

12. Այսինքն՝ Անակը պետք է դառնար պետության մեջ երկրորդ անձը։ Ըստ երևույթին, սա «երկրորդական գահ» գործակալությունն էր, որի մասին ակնարկում է նաև Խորենացին (տե՛ս «Հայոց պատմություն», գիրք Բ, գլ. ԾԱ)։

13. Աբատ— խոսքը Արտաշատ մայրաքաղաքի մասին է։

14. Ավանդության համաձայն, Անակի մանկահասակ այդ որդուն (ապագա Գրիգոր Լուսավորիչին) նրա դայակ Սոփին, փրկելով Արշակունիների վրեժխնդրությունից, փախցնում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, որտեղ Գրիգորը կրթվում ու դաստիարակվում է քրիստոնեական ոգով։

15. Նկատի ունի Բյուզանդիան։

16. Բրդատ— սա Հայաստանի ապագա թագավոր Տրդատ III Մեծն էր։

17. Այսինքն՝ Օսեթիա։

18. Սպասպետ— այսինքն՝ սպարապետ։

19. Վրացագիտության մեջ այժմ այն տեսակետն է գաղաքացիություն ստացել, որ քրիստոնեությունը Վրաստանում որպես պետական կրոն ընդունվել է 337 թ.՝ Միրիան (Միհրան) թագավորի օրոք։ Հետևաբար, ավյալ կոնտեքստի Միրիանը՝ պարսից Քասրե արքայի որդին, չի կարող լինել IV դարի 30-ական թվականների անձնավորություն, քանի որ նա (ըստ Մրովելու) III դարի 30-ական թվականների անձ էր։ Այստեղ անախրոնիզմն ու շփոթմունքը ակնհայտ է։

ՊԱՐՍԿԱ–ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ III ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ՋՈՆԱՐԱՍԻ

Հովհաննես Զոնարասը (XII դ.) բյուզանդական աչքի ընկնող պետական գործիչ է և մատենագիր: Նրա գրչին է պատկանում ճամաշխարհային պատմությանը նվիրված մի ընդարձակ ժամա-

նակագրություն, որը կոչում է «Համառոտ պատմություն» խոռագիրը: Զոնարասի երկն ընդգրկում է նսկայական ժամանակահատված՝ աշխարհաշինությունից մինչև 1118 թվականը: Ժամանակագրությունը շարադրելիս նա օգտագործել է մեծ թվով պատմական երկասիրություններ, որոնցից շատերը մեզ չեն հասել: Հատկապես արժեքավոր են Զոնարասի երկում պահպանված տեղեկությունները Հայաստանի III դարի պատմության տարբեր անցքերի վերաբերյալ:

Զոնարասից ստորև բերված հատվածները տալիս ենք Հ. Հ. Մանանդյանի թարգմանությամբ, որը կատարված է «Ioannis Zonarae. Epitomae historiarum, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1870» հրատարակությունից:

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԳԻՐՔ XII

XIX. Ապա [Գորդիանոսին] հաջորդեց Փիլիպպոսը[1], որը տեր դառավ Հռոմեական կայսրության։ ... Նա հաշտություն կնքելով Պարսից թագավոր Շապուհի[2] հետ՝ դադարեցրեց պատերազմը պարսիկների հետ և զիջեց նրանց Միջագետքն ու Հայաստանը[3]։ Բայց երբ նա տեսավ, որ հռոմեացիները վշտացած են այդ երկրների կորստի պատճառով՝ մի փոքր հետո դաշնագիրն անվավեր համարեց և երկրները ետ վերցրեց։

XXI. Նորից սրա [Գալլոսի] ժամանակ[4] սկսեցին պարսիկների խլրտումները և նրանք նվաճեցին Հայաստանը։ Այս երկրի Տրդատ[5] թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին Պարսից կողմերը։

1. Խոսքը Հռոմի կայսր Փիլիպպոս Արաբի մասին է։

2. Սա Սասանյան Շապուհ I թագավորն է։

3. Պարսկա-հռոմեական այս պայմանագիրը կնքվել է 244 թվականին։ Ուսումնասիրողները, վիճարկելով Զոնարասի տույն վկայությունը, գտնում են, որ բյուզանդական մատենագիրը կամ նրա աղբյուրը, ակնհայտորեն շփոթում են, քանի որ Մեծ Հայքի թագավորությունը լինելով անկախ պետություն, չէր կարող զիջված լինել Պարսկաստանին։

4. Այսինքն՝ 251—253 թվականներին։

5. Այստեղ խոսքը Հայոց Տրդատ II թագավորի մասին է։

ՀԱՅՈՑ ԱՐՏԱՎԱԶԴ V ԹԱԳԱՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՇԱՊՈՒՀ I–ԻՆ ԸՍՏ ՏՐԵԲԵԼԼԻՈՍ ՊՈԼԼԻՈՆԻ

Մ. թ. II—III դարերի Հռոմի պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից է «Կայսերական» («Կայսերի կենսագրություններ») ժողովածուն: Սա հռոմեական կայսերի կենսագրությունների մի ուրույն ճավաքածու է, որը սկսվում է Ադրիանոսից և ավարտվում Նումերիանոսի գահակալության տարիներով: Այսինքն՝ այն ընդգրկում է 117—284 թվականների միջև ընկած ժամանակաշրջանը: Ժողովածուն կազմելու աշխատանքներին մասնակցել է նաև III դարի հռոմեական պատմիչ Տրեբելլիոս Պոլիոնը, որի մասին, ցավոք, կենսագրական տվյալներ համարյա չկան:

Պոլիոնը վալերիանոս կայսեր կենսագրությունում բերում է Հայոց թագավոր Արտավազդ V–ի ճամակը ուղղված Պարսից Շապուհ I թագավորին: Արտավազդ V–ի մասին տեղեկությունները ճակատական են ու կցկտուր: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ Արտավազդը գահակալել է Շապուհ I–ի օգնությամբ, երբ 249—252 թթ. պարսկա–հռոմեական պատերազմից հետո Հայաստանը ենթարկվեց Սասանյանների գերիշխանությանը, իսկ Հայոց թագավոր Տրդատ II–ը փախավ կամ սպանվեց: Կարծիք է ճայտնվել նաև, որ Արտավազդ V–ը Արշակունի չէր, և բուն այդմ նրան նույնացնում են Մովսես Խորենացու մոտ հիշատակված Արտավազդ Մանդակունու հետ (տե՛ս 406–րդ էջի № 22 ծանոթ.):

Տրեբելիոս Պոլիոնից ստորև բերված հատվածը տալիս ենք Հ. Հ. Մանանդյանի թարգմանությամբ, որը կատարված է «Trebellius Pollio, Valerianus pater et filius» տե՛ս «Scriptores Historiae Augustae», edid. E. Hohl, vol II, Lipsiae, 1927) հրատարակությունից:

ՏՐԵԲԵԼԼԻՈՍ ՊՈԼԼԻՈՆ

Վալերիանոս

6. Արտավազդը[1] Հայոց թագավորը, ուղարկեց Շապուհին[2] հետևյալ նամակը.— «Համակիր եմ քո փառքին, բայց երկյուղ եմ կրում, որ դու ոչ այնքան հաղթել ես, որքան հրահրել ես մո-

լեդին կռիվը[3]: Վալերիանոսին այժմ պահանջում են ազատ արձակել և՛ նրա որդին[4], և՛ Թոռը, և՛ հռոմեական զորավարները, և՛ ամբողջ Գալլիան, ամբողջ Աֆրիկան, ամբողջ Իսպանիան, ամբողջ Իտալիան, ու նաև բոլոր ժողովուրդները, որոնք ապրում են Իլլիրիկումում[5], նաև Արևելքում ու Պոնտոսում, և որոնք կողմնակից են հռոմեացիներին կամ նրանց հպատակ են: Դու վերցրիր գերի մի այն մի ծերունու, իսկ քեզ հետ խիստ թշնամացրիր երկրագնդի բոլոր ժողովուրդներին. գուցե նաև մեզ հետ, որ ուղարկել էինք քեզ օգնական զորքեր[6]. մենք, որ քո հարևաններն ենք՝ միշտ ծանր դրության մեջ ենք ընկնում, երբ դուք իրար հետ կռվում եք»:

1. Արտավազդ V-ը Հայաստանի թագավոր է եղել 252—262 թվականներին:

2. Սա Պարսկաստանի Շապուհ I թագավորն է:

3. Արտավազդ V-ը ակնարկում է 256—260 թթ. պարսկա-հռոմեական պատերազմը, որն ավարտվեց Եդեսիայի մոտ հռոմեացիների կրած ծանր պարտությամբ (260 թ.): Ճակատամարտի ժամանակ պարսիկները գերի վերցրեցին նաև Հռոմի Վալերիանոս կայսրին (253—260), որը գերության մեջ էլ մահացավ:

4. Նկատի ունի Վալերիանոս կայսեր որդուն՝ Պուբլիոս Գալլիենոսին, որը հոր գերեվարությունից հետո հռչակվեց կայսր (260—268):

5. Նկատի ունի հռոմեական Իլլիրիկ պրովինցիան, որը զբաղեցնում էր Բալկանյան թերակղզու հյուսիսարևմտյան տարածքը՝ Դանուբի միջին հոսանքից մինչև Ադրիատիկ ծովը:

6. Արտավազդ V-ի սույն ակնարկից ակներև է, որ Հայաստանը, իբրև դաշնակից Պարսկաստանի, մասնակցել է այս պատերազմին ընդդեմ Հռոմի:

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՂՈՐԴՄԱՄԲ

Հնագույն շրջանում հայ ժողովրդական բանաձյուսության մեջ տիրապետողը առասպելներն էին՝ բնապաշտական պատկերացումներով և դիցաբանական գուճավորումներով հանդերձ: Բայց արդեն մ. թ. ա. II դարի սկզբներից սկսած մինչև մ. թ. III դարի վերջերը հայ ժողովրդական բանաձյուսության հիմնական բովանդակությունը դառնում են պատմական եղելությունները, որոնցում արտացոլվում են հայ ժողովրդի պայքարը արտաքին դշնամիների դեմ, ժողովրդի ներքին կյանքը, նրա հավատալիքները, սովորույթները և կենցաղը:

Ինչպես հնագույն առասպելների առանձին փշրանքներ, այնպես էլ հայ ավանդական վիպական շարքի վերաբերյալ մեզ հասած հատվածները, ժամանակին գրի է առել պատմահայր Խորենացին ու ավանդել հետագա սերունդներին, փրկել դրանք անդառնալի կորստից: Քերթողահայրը այդ ավանդույթներն ու զրույցները լսել է Գողթան գավառի ժողովրդական երգիչներից, քաղել հնագույն մատյաններից և դրանք գետեղել իր Պատմության էջերում: Որոշ դեպքերում Խորենացին դրանք բերում է բառացի, շատ հաճախ էլ վերապատմելով դրանց բովանդակությունը՝ կատարելով միջամտություններ ու տալով բացատրություններ: Այստեղ գետեղված Գողթան երգերից հնագույնը Վահագնի ծննդին նվիրված երգն է:

Մեծ ամբողջությամբ բերել ենք նաև Արտաշես I-ի անվան շուրջ հյուսված վեպը, որն այս շարքում ամենից ավելի ամբողջական է ու հղկված: Գողթան երգերի ստորև բերված հատվածները տալիս ենք Ա. Շ. Մնացականյանի թարգմանությամբ:

Վահագնի ծնունդը

(Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ԼԱ)

Երկնում էր երկինքը,
Երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի.
Ծովում երկունքով էր բռնված
Նաև եղեգնիկը կարմրիկ:
Եղեգնի փողից ծո՛ւխ էր ելնում,
Եղեգնի փողից բո՛ց էր ելնում,
Եվ բոցի միջից
Վազում էր խարտյաշ մի պատանյակ.
Հո՛ւր էին վարսերը նրա,
Բո՛ց էր մորուքը նրա,
Իսկ աչքերն էին արեգակներ[1]:

Արտաշես և Սաթենիկ

(Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Ը)

Քեզ եմ դիմում, ո՛վ քաջ Արտաշես,
Որ հաղթեցիր ալանաց քաջ ազգին[2],
Ե՛կ համաձայնիր խոսքին ալանների գեղաչվի դստեր,
Վերադարձրու այդ պատանին,
Քանզի քինախնդրության պատճառով
Դյուցազունն իրավունք չունի
Վերացնել ուրիշ դյուցազունների զարմը,
Ոչ էլ նրանց ծառայեցնելով,
Սարուկների դասը դասել,
Եվ երկու քաջ ազգերի միջև՝
Սերմանել մշտատև թշնամանք:

* * *

Կամ որտեղի՞ց պիտի տա Արտաշեսը քաջ
Հազար հազարներ
Եվ բյուր բյուրեր՝
Քաջազգի ալանների կույս օրիորդի դիմաց[3]։

* * *

Հեծավ Արտաշես արքան արի՝ իր սևուկին գեղեցիկ
Եվ հանեց շիկափոկ պարանը ոսկեօղ
Եվ սրաթև արծվի պես անցավ գետը
Եվ նետեց շիկափոկ պարանը ոսկեօղ,
Օղակեց իրանը ալանաց օրիորդի,
Խիստ ցավեցրեց օրիորդի իրանը նուրբ
Եվ հասցրեց փութով իր բանակը նրան[4]։

* * *

Ոսկու անձրև էր տեղում
Արտաշեսի փեսայության ժամանակ.
Մարգարիտ էր տեղում
Սաթենիկի հարսնության ժամանակ[5]։

Արտաշես և Արտավազդ[6]

(Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Լ, գիրք Բ, գլ. ԿԱ)

Եվ ասում են, թե Արտավազդն՝
Այն քաջ որդին Արտաշեսի,
Տեղ չգտավ Արտաշատում
Իր ապարանքը հիմնելու,
Քշեց, գնաց մարերի մեջ
Եվ Մարակերտը կառուցեց
Շարուր կոչվող դաշտավայրում[7]։

* * *

Ո՞վ կտար ինձ ծխանի ծուխ
Եվ առավոտ նավասարդյան,
Եղնիկների վազք, հաղերումների սլացք,
Որ մենք փո՛ղ փչեինք, և թմբո՛ւկ խփեինք
Արքայակա՛ն ծեսով[8]։

* * *

Դու գնացիր
Եվ ողջ երկիրը տարար քեզ հետ,
Ես ավերակների վրա ինչպե՞ս թագավորեմ[9]։

* * *

Եթե դու որսի ելնես
Ազատ Մասիսն ի վեր,
Թող քաջքերը բռնեն քեզ,
Տանեն Ազատ Մասիսն ի վեր,
Որ այնտեղ մնաս
Եվ լույս չտեսնես[10]։

1. Վահագնը հայկական հնագույն աստվածներից մեկն է։ Համարվել է ամպի, անձրևի և ամպրոպի աստվածը (տե՛ս 426-րդ էջ, № 8 ծան.)։ Վահագնը համադրվում է հնդկական Ինդրա, պարսկական Վերեթրագնա, պահլավական Վարհրան ամպրոպի աստվածներին։ Ըստ դիցաբանության, Վահագնը սիրո և գեղեցկության աստվածուհու՝ Աստղիկի ամուսինն էր. նրանց ոսկեձույլ արձանը գտնվում էր Աշտիշատի Վահեվանյան մեհյանում։ Ինչպես իր դուգահեռը կազմող հին արևելյան ամպրոպի մյուս աստվածները, այնպես էլ Վահագնը, կռվում է վիշապի հետ և հաղթում նրան։ Այստեղից էլ «վիշապաքաղն Վահագն» արտահայտությունը։ Հելլենիստական դարաշրջանում Վահագնը համադրվել է հունական Հերակլեսին։

2. Ավանդազրույցի համաձայն, Հյուսիսային Կովկասի լեռնաբնակ ալանական ցեղերը գրավելով Վրաստանը, անցնում են Կուր գետը և ներխուժում Հայաստան։ Հայոց Արտաշես I թագավորը չախչախում է ալաններին՝ գերեվարելով նրանց պատանի արքայազնին։ Արտաշեսը մերժում է ալանների թագավորի խնդրանքը՝ հաշտության կնքելու և գերի արքայազնին նրա վերադարձնելու վերաբերյալ։ Դրանից հետո է, որ ալանների արքայադուստր գեղաշլա Սաթենիկը Կուրի հանդիպակաց ափից գիմում է Արտաշեսին և խնդրում, որ նա իր գերբոնն աղատի։ Տեսնելով ալանաց օրիորդին, Արտաշեսը սիրահարվում է նրան։

3. Այս խոսքերով ալանների թագավորը մերժում է Արտաշեսի դայակ Սմբատային, որն իր արքայի կողմից խնամիության էր ուղարկվել ալանների մոտ՝ Սաթենիկի ձեռքը խնդրելու։

4. Այս հատվածում ցույց է տրվում, թե ինչպես Արտաշեսը, գայրանալով թագավորի մերժումից՝ փախցնում է ալանաց օրիորդին։

5. Արտաշեսի և Սաթենիկի հարսանյաց հանդեսի վերաբերյալ բերված այս հատվածը վկայում է հայոց մեջ հնուց ի վեր գոյություն ունեցող այն սովորության

մասին, որ Նորահարսի ու Նորափեսայի պլխներին շաղ էին տալիս դրամներ, մրգեր, ցորեն՝ ի նշան պտղաբերության և արգասավորության։

6. Արտավազդը, ըստ Խորենացու մոտ պահպանված ավանդության, Արտաշես I-ի ավագ որդին էր, որը հաջորդում է հորը։ Հին հայ վիպական շարքում Արտավազդի կերպարն ամենաբարդին է ու հակասականը։ Նրա անվան շուրջ հյուսված առասպելախառն վկայում, որ բերում է Խորենացին, Արտավազդը ներկայացված է որպես շար, նախանձոտ ու դիվական անձնավորություն։

7. Այստեղ, ըստ երևույթին, ակնարկվում է Արտավազդի պայքարն ընդդեմ Մուրացյան կամ Վիշապազանց տոհմի, որի նահապետ Արգավանը (Արգամ) ձգտում էր Հայոց գահին և դավադրություն էր հյուսում Արտաշեսի դեմ։ Ավանդության համաձայն, Արտավազդը խլում և սեփականացնում է Մուրացյանների բոլոր տիրույթները՝ Արաքսից հյուսիս գտնվող Շարուրի դաշտավայրը նախճավանով հանդերձ։ Արտավազդը ոչնչացնում է Մուրացյան տոհմը և սպանում նրա նահապետ Արգավանին։

8. Ըստ ավանդության, այս խոսքերն Արտաշեսը արտասանել է իր մահից քիչ առաջ՝ դիմելով հարազատներին, մերձավորներին ու զինակիցներին։ Արտաշեսի վեպից բերված այս գոտորիկ հատվածը պահպանվել է XI դարի նշանավոր մատենագիր Գրիգոր Մագիստրոսի մոտ (տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ագնքսանդրապոլ, 1910, թուղթ 33, էջ 87)։

9. Երբ քաղում էին Արտաշեսին, հեթանոսական սովորության համաձայն, շատերն ինքնասպանություն գործեցին, որպեսզի թաղվեն նրա հետ։ Տեսնելով այս ամենը՝ Արտավազդը նախանձում է հորը և նեղսրտած դիմում է նրան այդ խոսքերով։

10. Արտաշեսի այս անեծքը, ուղղված չար ու նախանձ որդուն, ըստ վեպի՝ կատարվում է. որսորդության ժամանակ նրան կլանում են Մասիսի վիհերը։ Խորենացին գրում է, որ Արտավազդի մասին գրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ՝ երկաթե շղթաներով կապված։ Արտավազդի առասպելը առնչվում է Մհերը աստծու առասպելների շարքին։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՐՏԱՇԵՍ I-Ի ԺԱՄԱՆԱԿ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ՄԲ

Որովհետև Արտաշեսի ժամանակ շատ գործեր կատարվեցին, ուստի մենք շատ գլուխների բաժանեցինք, որպեսզի խոսքի երկայնությունը ձանձրալի չդառնա ընթերցողներին. այս վերջին գլուխն էլ նրա համար է, որ հիշատակենք Արտաշեսի ժամանակ կատարված մյուս գործերն էլ։ Որովհետև թեպետ նախորդ գլուխներում հիշատակած կարգերն ու գեղեցիկ սովորությունները սահ-

մանվեցին վաղարշակից[1] և ուրիշ հին թագավորներից, բայց նրանք մեծամեծ արհեստներից ու գիտություններից զուրկ էին մնացել, ավելի կողոպուտների և ասպատակությունների էին հետևում, իսկ այնպիսի գիտությունների կա՛մ անփույթ էին, կա՛մ ձեռնհաս չէին, ինչպես շաբաթներ, ամիսներ, տարվա շրջաններ (սահմանելը), նրանք այսպիսի բաներ չգիտեին, գործ էին ածում ուրիշ



Նկար 22. Ոսկյա մանյակ. Դարույնք (մ. թ. ա. V դար)

ազգերինը։ Նույնպես և չկար նավաշինության մեր երկրի ծովակների վրա, ոչ էլ ճանապարհորդության գետերով, ոչ ձկնորսության գործիքներ, նույնիսկ երկրագործությունն ամեն տեղ տարածված չէր, այլ քիչ տեղերում. նրանք հյուսիսային ազգերի նման ապրում էին հում մսով և սրա նման բաներով[2]։ Այս բոլորը սահմանվեցին Արտաշեսի ժամանակ։

1. Վաղարշակ— *ըստ Խորենացու՝ Հայոց Արշակունյաց հարստության հիմնադիրը (տե՛ս 104-րդ էջ, № 3 ծան.)։*

2. *Արտաշես I-ի վիպական կերպարը Խորենացու գրչի տակ շատ դեպքերում համընկնում է պատմական ճշմարտությանը, սակայն այս կոնտեքստում Պատմահայրը ակնհայտորեն գունազարդել ու իդեալականացրել է իր սիրելի հերոսի կերպարը։ Չի կարելի համաձայնել այն պնդման հետ, թե իբր Արտաշեսից առաջ հայերը ծանոթ չէին տոմարին, նավաշինությանը և այլն։ Ինչպես հնագիտական, այնպես էլ մատենագրական բազմաթիվ փաստեր հակառակն են ապացուցում։*

ՍՏՐԱԲՈՆԸ ԱՆԱՀԻՏ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, XI, 14

16. Արդ, պարսից բոլոր սրբավայրերը պաշտում են նաև մարերը և հայերը. բայց Անահիտի[1] սրբավայրերը հայերը (պաշտում են) առանձնահատուկ. տարբեր վայրերում[2], և հատկապես Ակիլիսենեում[3] հաստատված են նրա (սրբավայրերը), որտեղ կարգված են ստրուկներ և ստրկուհիներ: Զարմանալին այս չէ, այլ այն, որ ամենաերևելիները դիցուհուն նվիրաբերում են կույս դստերին, որոնք, ըստ սովորության, երկար ժամանակ դիցուհու մոտ պոռնկանալուց հետո, տրվում են ամուսնության. ոչ ոք անվայել չի համարում այսպիսիների հետ կենակցելը[4]: Նման մի բան պատմում է նաև Հերոդոտոսը լյուդուհիների[5] մասին. քանզի նրանք բոլորն էլ պոռնկանում էին: Նրանք այնքան բարեհաճ են վերաբերվում սիրեկաններին, որ թե՛ հյուրընկալություն են շնորհում և թե՛ փոխադարձ նվերներ տալիս, բազմապատիկ առավել, քան ստանում են, (քանզի) նրանց ապահովում են բարեկեցիկ տները: Նրանք օտարներից պատահածին չեն ընդունում, այլ առավելապես (իրենց) հավասար աստիճանի եղողներին:

1. Անահիտը պտղաբերության, արգասավորության, մայրության, լուսնի, Հայաստան երկրի և Արտաշատ մայրաքաղաքի հովանավորող աստվածուհին էր:

2. Աղբյուրներում հիշատակվում են Անահիտի մեհյանները Արտաշատ, Արմավիր, Աշտիշատ, Աթոռն Անահտա, Դարբնաց քար, Բագարան, Անահտաձոր և այլ վայրերում:

3. Ակիլիսենն հայկական նկեղիք կամ նկեղյաց դավառն է, որի երիզա (այժմ Երզնկա) ավանում էր գտնվում Անահիտի գլխավոր մեհյանը: Այս շրջանում նրա պաշտամունքն այնքան էր տարածված, որ ամբողջ գավառը և քիչ հեռվում գտնվող Կապուտա (այժմ՝ Կոպ-Դաղ) լեռնաշղթան կոչվում էին նաև Անահտական:

4. Ինչպես նշել է դեռևս Ֆ. Էնգելսը, բարձրաշխարհիկ օրիորդների կրոնական այս հետևրիզմը, որը կապված էր Անահիտի պաշտամունքի հետ, շատ ավելի հին ժամանակներում գոյություն ունեցած խմբամուսնության մնացուկ էր (տե՛ս Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965, էջ 87—88):

5. Լյուդիա— պետություն Փոքր Ասիայում՝ Փռյուգիայի և Էգեյան ծովի միջև:

ԱՆԱՀԻՏ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳԻ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԳԻՐՔ XXXIV

Ասում եմ, որ ոսկեձույլ առաջին արձանը, որ նախորդել է նույնիսկ հոլոսփյուրատոն[1] բրոնզաձույլ արձաններին, կանգնեցվել է Անահիտիս աստվածուհու տաճարում: Մենք դուլց ենք տը-

Նկար 23. Անահիտ աստվածուհու բրոնզե արձանի գլուխը. Սատող (բարձր. 38 սմ, շրջանագիծը 93 սմ)

վել[2], թե որ երկրին[3] է պատկանում այդ անունը: Արձանը մեծ պաշտամունքի առարկա է այդ երկրի ժողովուրդների մոտ: Այն տարվել է որպես ավար պարթևների դեմ Մարկոս Անտոնիոսի մղած պատերազմի ժամանակ[4]: Այդ կապակցությամբ պատմում են բոնոնիացի մի վետերանի հայտնի սրախոսությունը. նրա մոտ հյուր էր Ավգուստոսը[5], և ճաշի ժամանակ կայսրը նրան հարցրեց՝

ճիշտ է արդյո՞ք, որ այդ արձանը սրբապղծող առաջին մարդը մահացել է կուրանալուց և անդամալույծ լինելուց հետո։ Վեսերանը պատասխանեց, որ Ավգուստոսի պատվին տրված ճաշը հենց աստվածուհու արձանի մեկ ազդրից էր, որ հենց ինքն էր այդ արձանի առաջին հափշտակողը, և իր ամբողջ հարստությունը այդ ավարի շնորհիվ էր գոյացել։

1. Հոլոսիյուրատոն— բառացիորեն նշանակում է «մուրճով կոփված»։
2. Պլինիոս Ավագը նկատի ունի «Բնական պատմության» V գրքի 20-րդ գլուխը, որտեղ խոսում է Անահիտա գավառի մասին (տե՛ս 367-րդ էջ, № 6 ծան.)։
3. Այսինքն՝ Հայաստանին։
4. Հեղինակը շփոթում է, քանզի Անտոնիոսը այս ոսկեձույլ արձանը եկեղյաց գավառի Անահիտի տաճարից տարել է ոչ թե պարթևական, այլ հայկական արշավանքի ժամանակ, այսինքն՝ մ. թ. ա. 35 թ. ընթացքում։
5. Խոսքը Հռոմի կայսր Գայոս Օկտավիանոս Օգոստոսի մասին է։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ԱՆԱՀԻՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

48. Մեծ Հայքի արքա Տրդատի[1] առաջին տարում շարժվեցին նկան, Հասան եկեղյաց գավառը, Երիզա գյուղը, Անահիտի մեհյանը, որպեսզի այնտեղ զոհեր մատուցեին։ Երբ անարժան գործը կատարեցին, իջան, տեղավորվեցին այն գետի ափին, որը Գայլ է կոչվում[2]։

49. Թագավորը նկավ մատավ վրանը, ընթրիքի բազմեց. երբ գինովցան, թագավորը հրաման տվեց Գրիգորին[3], որպեսզի պատկներ ու ծառերի թավ ճյուղեր[4] նվիրաբերի Անահիտի բագինին[5]։ Սակայն նա հանձն չառավ աստվածների երկրպագության պաշտամունքը կատարել։

53. Ասաց արքան[6]. «Իմացած եղիր, ի չիք դարձրիր այն վաստակը, որ ինձ մոտ ես վաստակել, և որին ես վկա եմ։ Արդ՝... բազմաթիվ նեղություններ եմ տալու քեզ, ... բանտ ու կապանք և մահ կտամ..., եթե հանձն չառնես աստվածներին պաշտամունք մատուցել։ Մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որը մեր ազգի փառքն է ու կենսատուն, որին բոլոր թագավորներն են պաշտում, մանավանդ Հունաց թագավորը[7]։ Նա է բոլոր զգաստությունների

մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնության և դուստրը՝ մեծ, քաջ Արամազդի[8]։

68. Թագավորն սկսեց խոսել ու ասաց. «... Դու նրանց (հեթանոսական աստվածների) պատիվը զանազատ՝ սուտ արարիչ ես համարում, և որոնք որ ճշմարիտ արարիչներ են, անարգում ես։ Նաև մեծ Անահիտին, որով ապրում է և կենդանություն ունի մեր Հայոց երկիրը, ինչպես նաև մեծ և արի Արամազդին, երկնքի և երկրի արարիչին, նրանց հետ և մյուս աստվածներին անշրջունջ և անմոռուկ կոչեցիր...»։

1. Խոսքը Հայոց Տրդատ III Մեծ թագավորի մասին է։
2. Գայլ գետը Եփրատի վտակն է, որը թափվում է նրա մեջ՝ Երզնկա քաղաքի մոտ։
3. Գրիգոր— խոսքը Գրիգոր Լուսավորչի մասին է։
4. Ագաթանգեղոսի սույն հաղորդումը խիստ կարևոր է այն տեսակետից, որ այն ցույց է տալիս, թե Անահիտի պաշտամունքը աղերսվել է ծառերի ու բույսերի պաշտամունքի հետ։ Այսպիսով, որպես պտղաբերության աստվածուհի, Անահիտը աղերսվում էր նաև բուսականության հետ։
5. Բագին— աստվածներին նվիրված մեհյաններ ու տաճարներ հեթանոսական Հայաստանում։ Բագին էին կոչվում նաև մեհյաններում կանգնեցված աստվածների արձանները։
6. Տրդատ III-ը դիմում է Գրիգոր Լուսավորչին։
7. Անահիտին համադրում ու նույնացնում էին հունական Արտեմիսի և հռոմեական Դիանայի հետ։
8. Արամազդը հայկական հեթանոսական դիցարանի գերագույն աստվածն էր։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆԻ ՀԵԼԼԵՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ԺԲ

(Արտաշեսը)[1] Ասիայում[2] գտնելով Արտեմիդի[3], Հերակլեսի[4] և Ապոլոնի[5] պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր երկիրը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում։ Քրմապետները, որոնք վահոնիների[6] ցեղից էին, Ապոլոնի և Արտեմիդի արձաններն առնելով կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Սկյուղեսի և կրետացի Դիսիևոսի գործն էր[7], իրենց նախնի

Նկար 24. Կոմմագենեի թագավոր Անտիոքոս I Թեոս, Հռոմեասեր-Հելլենասեր
Երվանդունին (69—34) և Վահագն-Հերակլես աստվածը. Նեմրուդ լեռ

վահագնը[8] համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում՝ Արտաշեսի մահից հետո։

Բայց Ելլադայումն էլ վերցնելով Դիոսի[9], Արտեմիդի, Աթենասի[10], Հեփեստոսի[11] և Ափրոդիտեի[12] արձաններըՙ ուղարկում է Հայաստան։ (Բերողները) դեռ մեր երկրի ներսերը չհասած՝ լսում են Արտաշեսի մահվան բոթը և արձանները փախցնում հասցնում են Անի ամրոցը[13]. քուրմերն էլ արձանների հետ դնալով՝ նրանց մոտ էլ մնում են։

ԺԴ

Իբրև առաջին գործ նա (Տիգրան Միջինը[14]— Պ. Հ.) կամեցավ մեհյաններ շինել։ Իսկ քրմերը, որ եկել էին Հունաստանից, մտածելով, որ իրենց Հայաստանի խորքերը չքշեն, սուտ գուշակություններ հնարեցին, իբրև թե աստվածները հենց նույն տեղում կամենում են բնակվել։ Տիգրանն այս բանին համաձայնվելով՝ Օլիմպիական Դիոսի արձանը կանգնեցնում է Անի ամրոցում, Աթենասինը՝ Թիլում[15], Արտեմիդի մյուս արձանը՝ Երիզայում և Հեփեստոսինը՝ Բագայաոիճում[16]։ Բայց Ափրոդիտեի արձանը, իբրև Հերակլեսի տարփածուի[17], հրամայում է կանգնեցնել հենց Հերակլեսի արձանի մոտ, Հաշտից տեղում[18]։ Եվ դայրանալով Վահունիների վրա, որոնք իրենց սեփական (գյուղում) համարձակվել էին կանգնեցնել իր հոր[19] ուղարկած Հերակլեսի արձանը, զրկում է քրմությունից և սիսականացնում է այն գյուղը, որտեղ արձանները դրվել էին։

Եվ այսպես մեհյաններ շինելով և մեհյանների առաջ բագիններ կանգնեցնելով՝ բոլոր նախարարներին հրամայում է զոհեր մատուցել և երկրպագություն անել։

1. Խոսքը Հայոց Արտաշես I թագավորի մասին է։
2. Խորենացին նկատի ունի Փոքր Ասիան։
3. Աւռեմիդ (Արեմիս)— լուսնի և որսորդության հունական աստվածուհի, ամուսնության, պտղաբերության և հարսանյաց հովանավորուհի։ Համադրվել ու նույնացվել է հայկական Անահիտի հետ։
4. Հերակլես— Զևսի և մահկանացու Ալքմենեի որդին, իր տասներկու սքանչագործություններով դարձավ Հունաստանի հերոսներից մեծագույնը։ Վերջում

անմահություն ստացավ և որպես աստված ապրում էր Օլիմպոսում։ Համադրվել ու նույնացվել է հայկական Վահագնի հետ։

5. Ապոլոնը համարվել է լույսի, արևի, արվեստի, երաժշտության, իսկ սկզբում՝ հոտերի պահապանության աստվածը։ Համադրվել ու նույնացվել է հայկական Տիր աստծու հետ։

6. Վահունի— նախաարարական ազգատոհմ, որին ժառանգաբար պատկանում էին հնթանոսական Հայաստանի քրմական բարձր պաշտոնները։

7. Նշանավոր հույն քանդակագործներ, որոնք ապրում էին մ. թ. ա. VI դարում՝ Արգոսում և Սիկիոնում։

8. Վահագն— հայկական դիցարանում ամպի, անձրևի և ամպրոպի աստվածը։ Վահագնը քաջության էր պարգևում հայոց ռազմիկներին։ Ըստ դիցաբանության, Վահագնը նախապես մահկանացու լինելով՝ հետագայում էր աստվածացել. համարվում էր Վահունյաց տոհմի նախնին։ Համադրվել ու նույնացվել է հունական Հերակլեսի հետ։

9. Դիոս— հունական դիցարանի գերագույն աստված Զևսն է, աստվածների և մարդկանց տիրակալը։ Համարվել է բնաանական, հասարակական կարգի գերագույն օրենսդիրը, քնական երևույթների արարիչն ու կառավարիչը։ Համադրվել ու նույնացվել է հայկական Արամազդի հետ։

10. Աթենաս— Զևսի դուստրը, համարվել է հավերժական կուսության, իմաստության և գիտության աստվածուհին։ Համադրվել ու նույնացվել է հայկական Նանե աստվածուհու հետ։

11. Հեփեստոս— Զևսի որդին, կրակի և դարբնության աստվածը։ Համադրվել ու նույնացվել է հայկական Միհր աստծու հետ։

12. Ափրոդիտե— հավերժ դեռատի և գեղեցկադեմ աստվածուհի, հունական դիցարանում սիրո և գեղեցկության աստվածուհին։ Համադրվել ու նույնացվել է հայկական Աստղիկի հետ։

13. Անի— ամրոց և հնթանոսական սրբատեղի Բարձր Հայքի Դարանաղյաց գավառում, Երզնկա քաղաքից հարավ-արևմուտք, Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոնը։ Այժմ՝ Քեմախ։

14. Խորենացու Տիգրան Միջինը համապատասխանում է Տիգրան II Մեծին։

15. Թիլ— ավան Բարձր Հայքի Եկեղյաց գավառում, Երզնկայից ութ կիլոմետր հյուսիս-արևմուտք, այստեղ էր գտնվում Նանե աստվածուհու մեհյանը։

16. Բագայարիճ (Բագարիճ)— ավան Բարձր Հայքում՝ Կարինից արևմուտք։ Այստեղ էր գտնվում Միհր աստծո մեհյանը։

17. Ըստ դիցարանության, Ափրոդիտեն Հերակլեսի սիրուհին էր, ինչպես հայկական Աստղիկը՝ Վահագնի։

18. Հաշտ (Հաշտիշատ)— Աշտիշատ ավանն է՝ Մեծ Հայքի Տարոն նահանգում, Արածանի գետի աջ ափին։ Աշտիշատը հնթանոսական Հայաստանի կրոնական գլխավոր կենտրոններից մեկն էր։ Այստեղ էին գտնվում Անահիտի, Աստղիկի և Վահագնի մեհյանները։ Աշտիշատը Վահունի քրմական-նախաարարական ընտանիքի ժառանգական սեփականությունն էր։

19. Ըստ Խորենացու, Տիգրան Միջինի հայրը Արտաշես I-ն էր։

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ՕՐՈՔ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ԼԲ

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սրա[1] ժամանակ արքունիքը Արմավիր[2] կոչված բլրից փոխադրվում է, որովհետև Արաքս գետը հեռացել էր, և ձմեռն երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորանիստ տեղի համար խմելու բավական ջուր չէր ճարվում։ Սրանից Երվանդը նեղվելով, մանավանդ մի ավելի ամուր տեղ փնտրելով՝ արքունիքը տեղափոխում է դեպի արևմտյան կողմը, միակտուր ապառաժ բլրի վրա, որը շրջապատում է Արաքսը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը։ (Երվանդը) բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարեր կտրել տալով, իջեցնում է մինչև բլրի հատակը, գետի (մակերևույթին) հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով։ Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ պղնձե դռներ է դնում և երկաթե սանդուղքներ ներքևից մինչև վեր, մինչև դուրս. սանդուղքի վրա, աստիճանների միջև, շաղտեր որոգայթներ է շինում, որպեսզի եթե մեկը կամենա գաղտնի բարձրանալ թագավորին դավելու նպատակով, բռնվի։ Սանդուղքը, ասում են, երկու տեսակ էր սարքված, մեկը ցերեկվա ճանապարհ արքունի սպասավորների և ընդհանրապես ելումուտի համար, իսկ մյուսը գիշերային էր և դավադիրների դեմ[3]։

Խ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԻՆԵՑ ԿՈՒՐՔԵՐԻ ՔԱՂԱՔ ԲԱԳԱՐԱՆԸ

Բայց Երվանդն իր քաղաքը շինելով՝ Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ, բացի կուռքերից, որովհետև իր համար օգտակար չհամարեց նրանց էլ իր քաղաքը փոխադրել, որ միգուցե

երբ ժողովուրդը զոհաբերության համար այնտեղ գա, քաղաքն զգուշությամբ չպահվի։ Ուստի նրանից հյուսիս, մոտ քառասուն ասպարեզ հեռու, Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան[4], այսինքն՝ Քե բագիններն այնտեղ են տեղավորված. և այնտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը։ Շինեց նաև մեհյաններ և իր երվազ եղբորը քրմապետ նշանակեց։

Նկար 25. Կնոջ մարմարե արձանիկ. Արտաշատ (բարձր. 57 սմ)

ԽԱ

ՅՆՆԴՈՑ ԿՈՉՎԱԾ ԱՆՏԱՌԸ ՏՆԿԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տնկում է նաև մի մեծ անտառ գետի հյուսիսային կողմում, պարիսպներով ամրացնում է և ներսում արգելափակում է արագավազ այծյամներ, եղնիկների և եղջերուների ցեղեր, ցիռներ[5], վարազներ, որոնք աճելով ու բազմանալով անտառը լցրին, և նրանցով Բագավորն ուրախանում էր որսի օրերին։ Անտառը նա կոչում է Յննդոց անտառ[6]։

ԽԲ

ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ ԿՈՉՎԱԾ ՁԵՌԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ[7] դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով։ Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը։ Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին։ Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը։ Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերանում էր մի բերան, իր երկու շրթունքներով։ Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է Բագավորանիստ բարձրավանդակի վրա։ Արդարև բերրի և Բագավորական դաստակերտ։

Երվանդի այս բոլոր շինածները Տրդատ Մեծը[8] պարգևում է կամաբարականների ցեղի մարդկանց, իբրև իր մտերիմներին և Արշակունյաց ցեղի արյունակիցներին։

1. Խոսքը վերաբերում է Հայոց Երվանդ IV Վերջին Բագավորին։
2. Արմավիր— հին Հայաստանի մայրաքաղաքներից մեկը, գտնվում էր Երասխի ձախ ափին՝ Արարատյան դաշտում։ Խորենացին Արմավիրի հիմնադրումը վերագրում է Հայկ Նահապետի Թոռ Արամայիսին։
3. Երվանդաշատը Երվանդունիների վերջին մայրաքաղաքն էր, գտնվում էր Երասխաձոր գավառում՝ Երասխ գետի ձախ ափին, նրա և Ախուրյանի միախառնման տեղում։ Այժմ Երվանդաշատ գյուղը՝ ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանում։
4. Բագարան— պաշտամունքային կենտրոն և բերդաքաղաք Այրարատյան աշխարհի Արշարունյաց գավառի հյուսիսարևելյան ծայրում՝ Ախուրյանի աջ ափին։
5. Ցիռ— վայրի էշ։
6. Յննդոց անտառ— ուսումնասիրողները ենթադրում են, որ այս անտառը ընկած էր Արաքսի ձախ ափին՝ Արմավիր ու Երվանդաշատ քաղաքների միջև։
7. Երվանդակերտ— քաղաք Այրարատ նահանգի Երասխաձոր գավառում՝ Երասխ և Ախուրյան գետերի միախառնման վայրից քիչ հեռու։
8. Նկատի ունի Մեծ Հայքի Բագավոր Տրդատ III Մեծին։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՊԱՏՄԱԳԻՐ ՈՂՑՈՒՄՊ ՔՈՒՐՄԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՑՈՑ, ԳԻՐՔ Բ

ԽԸ

Այն ժամանակ Սմբատը[1] Երվազի[2] ծառաներին, որ գերել էր Բագարանից[3], տանում բնակեցնում է Մասիսի Թիկունքում (իր)

ձեռակերտում, որը միևնույն անունով կոչեց Բագարան։ Հետո անցնում գնում է Պարսկաստան, ընծաները Դարեհին տանելով, հումեական տերության նկատմամբ անփույթ լինելով։ Իսկ երբ Սմբատը գնում է Պարսկաստան, Հայոց սահմաններն են գալիս կայսեր հարկահանները ծանր զորքով։ Արտաշեսը հարկերը կրկին վճարելով և աղաչելով հաշտեցնում է։ Այս բանը մեզ հաստատապես պատմում է Հանիի[4] Ուղյուպ բուրմը[5], որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մենք պատմելու ենք, որին վկայում են նաև պարսից մատյանները և Հայոց վիպասանների երգերը։

1. Խոսքը Արտաշես I-ի դայակ և զորավար Սմբատ Բագրատունու մասին է։
2. Երվագը Երվանդ Վերջինի եղբայրն էր, Հայոց բրմապետը։
3. Բագարան— պաշտամունքային կենտրոն Ախուրյանի աջ ափին, որը կառուցել էր Երվանդ Վերջինը։
4. Հանի (Դարանաղյաց Անի)— ամրոց և պաշտամունքային խոշոր կենտրոն հին Հայաստանում՝ Դարանաղի գավառում, Եփրատ գետի ափին։
5. Ուղյուպ (Ուղյումպ) բուրմի ու նրա Պատմության մասին մանրամասն տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, գլուխ երրորդ։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՎՐՈՅՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ, ԳԻՐՔ Բ

ԾԳ

Իսկ Արտավազդը[1] *Սմբատի*[2] *գնալուց հետո Հորից*[3] *ստանում է բոլոր զորքերի իշխանությունը, որին փափագում էր։ Սրա վրա նրա եղբայրներն*[4] *իրենց կանանցից զրգռվելով սկսեցին նախանձել, ուստի Արտաշեսը Վրույրին, որ խաստում և բանաստեղծ մարդ էր, նշանակում է հազարապետ և նրան է վստահում արքունական տան բոլոր գործերը, իսկ Մաժանին նշանակում է Անիում Արտավազդի կուռքի քրմապետ։*

1. Խոսքը Արտաշես I-ի ավագ որդու՝ գահաժառանգ Արտավազդի մասին է։
2. Խոսքը Սմբատ Բագրատունու մասին է։
3. Այսինքն՝ Եռաշես I-ից։
4. Ըստ Խորենացու մոտ պահպանված ավանդության, Արտաշես I-ը ունեցել է վեց որդի՝ Արտավազդ, Վրույր, Մաժան, Զարեհ, Տիրան, Տիգրան։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՓԵՈԴԱԼԻԶՄԻ ԴԱՐՇՐՋԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ III ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ IV ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ԻՐ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

Փավստոս Բուզանդի (V դ.) երկը կոում է «Պատմություն Հայոց» կամ «Բուզանդարան պատմություն» խորագիրը: Նախնական բնագիրը բաղկացած է եղել վեց դպրությունից: Մեզ հասել է միայն վերջին չորսը, որոնք ընդգրկում են 330—387 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի Հայոց պատմությունը, պարունակում են հարուստ տեղեկություններ IV դարի ֆեոդալական Հայաստանի ներքին կյանքի, նախարարական կարգերի, դասակարգային և ներդասակարգային փոխհարաբերությունների, սովորությունների, հավատալիքների մասին: Զգալի տեղ է հատկացված ժողովրդական բանահյուսությանը:

Պատմությունը հրատարակվել է մի քանի անգամ: Լավագույններից է Պետերբուրգի 1883 թ. հրատարակությունը, որը վերնագրված է «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց»: Աշխարհաբար թարգմանել է Ս. Մալխասյանցը՝ «Պատմություն Հայոց» վերնագրով (Երևան, 1947), որը վերահրատարակվել է 1968 թ.՝ «Հայ մատենագիրներ» մատենաշարով: Սառն բերված հատվածները արվում են ըստ այս հրատարակության:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. III, գլ. Ա. Թագեոս առաքյալի քարոզությունից և նրա մարտիրոսական վախճանից մինչև Դրիդորի վարդապետության վերջն ու նրա վախճանը, և առաքելասպան Սանատրուկ թագավո-

րից մինչև Տրդատ թագավորի ակամա հնազանդվելը (քրիստոնեական) կրոնին ու նրա վախճանը,— անցյալ հին անցքերի ու առաքինի անձերի վարքի մասին, ինչպես և նրանց հակառակորդների ու դիմադրողների մասին՝ բոլորը ուրիշների կողմից արդեն գրված են։ Բայց մենք էլ մեր պատմության ընթացքում փոքրիշատե նշանակեցինք, առանց հիշատակության չթողեցինք՝ պատշաճ կարգը պահպանելու համար, որովհետև տեղ կա, որ մեր Պատմությունը առաջինն է, և տեղ կա, որ վերջինը. իսկ ինչ որ միջին է, այն ուրիշների ձեռքով արդեն գրվեց։ Բայց որպեսզի մեր պատմության մեջ ընդհատում չնկատվի, հիշատակեցինք՝ ինչպես մի աղյուս դրված շենքի պատի մեջ՝ բովանդակությունը ամբողջացնելու համար։ Այսպես անելուց հետո ինչ որ այնուհետև պատահել է, այստեղ հաջորդաբար պատմվում է։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒՆԳ ՏՐԴԱՏ ԱՐՇԱԿՈՒՆՈՒԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

39. Այդ օրերում գոթերի իշխանը զորաժողով արեց և բազում զորք կուտակելով եկավ պատերազմելու Հռոմաց իշխանի[1] դեմ։ Այսօրինակ պատգամ հղեց, թե՝ «Ինչո՞ւ ենք անմտորեն ելնում պատերազմի, մեր զորքը սպառում և միաժամանակ երկրին վնասում ու տաժանալի հասցնում։ Ահավասիկ ես քո դեմ եմ դուրս գալիս իբրև ախոյան մեր զորքի միջից և դու էլ իմ դեմ՝ հռոմեական կողմից։ Գնանք հանդիպենք մարտի վայրը և եթե ես քեզ հաղթեմ, հույներն ինձ կհնազանդվեն, իսկ եթե դու ինձ հաղթես, մեր կյանքը քեզ կպատկանի ու կհնազանդվենք քեզ և առանց արյան ու կոտորածի երկու կողմերի համար էլ խաղաղություն կլինի»։

40. Երբ Հռոմաց թագավորը այս ամենը լսեց՝ վախեցավ, որովհետև չէր կարող համձն առնել օրինավոր պատրաստությամբ գունդ առ գունդ հակառակել և ոչ էլ կարող էր տույն պատգամի պահանջին համաձայնվել, քանի որ տկար ոսկորներ ուներ և ահաբեկվելով զարհուրեց ու չգիտեր ինչ պատասխան տալ այդ խոսքերին։

44. Ապա թագավորը պատմեց իշխաններին գոթերի թագավորի բոլոր պատգամները։ Այդ ժամանակ Լիկիմեհես սկսեց խոսել արքայի հետ և ասաց. «Քո իմ տիրոջ սիրտը բոլորովին չզարհուրի, քանզի այստեղ քո պալատում մի մարդ կա, որի միջոցով այս գործը գլուխ կգա։ Նրա անունը Տրդատ է՝ Հայոց աշխարհի թագավորական տոհմից»։ ... Այնժամ հրաման տվեց, և Տրդատին բերեցին թագավորի առջև...։ Ապա մարտի պատրաստության ժամ որոշեցին, առավոտյան պատերազմով իրար դեմ ելնելու։

45. Իսկ մյուս օրը առավոտյան հրամայեց (կայսրը) ծիրանի պատմուճանը Տրդատի վրա նետել, և զարդարեցին կայսերական զարդով, գցելով նրա վրա թագավորական նշանը, ոչ ոք չգիտեր նրա մասին։ Հրամանն ելավ ամենքին, թե սա ինքն իսկ կայսրն է։ ... Երբ միմյանց դիմաց կանգնեցին կայսերակերպն ու (գոթեր) թագավորը՝ ձիերին մտրակելով իրար հասան։ Այնտեղ կայսերակերպը հաղթեց թագավորին և բռնելով նրան բերեց կանգնեցրեց կայսեր առաջ։

1. Խոսքը Հռոմի կայսր Դիոկղետիանոսի (284—305) մասին է։

ՍԵՔՍՏՈՍ ՌՈՒՓՈՍԸ ՄԵԲԻՆԻ 40-ԱՄՅԱ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Սեքստոս Ռուփոսը III դարի վերջերում և IV դարի սկզբներում ապրած հեղինակ է, ազգությամբ՝ հռոմեացի։ Ռուփոսը գրել է «Հռոմեական ժողովրդի համառոտ պատմություն» աշխատությունը, որը լույս է տեսել „Rufi Festi (Sexti) Breviarium rerum gestarum populi Romani, ed. Förster, 1874“ հրատարակությամբ։

Նրա հաղորդած տեղեկությունը՝ պարսիկների դեմ հռոմեական բանակի տարած հաղթանակի մասին, գրաբար թարգմանությամբ մեջ է բերել Ա. Մ. Գարագաշյանը «Քննական պատմություն Հայոց» աշխատության II հատորում (էջ 277), որից ստորև բերված հատվածը աշխարհաբար է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը։

Դիոկղետիանոս կայսեր ժամանակ[1] մեծ հաղթանակ տարավ (Հռոմեական բանակը) պարսից դեմ։ Գալերիոս կեսարն[2] առաջին ճակատամարտում փոքրիկ զորագնդով թեև թափով հարձակվեց թշնամու անթիվ բազմության վրա, բայց պարտություն կրեց և ետ դարձավ[3]։ Դիոկղետիանոսը Գալերիոսին ընդունեց անշափ ցասումով. հրամայեց նրան մեկ հրապարակ[4] ոտքով քայլել իր կառքի առ-

ջևից, թեև նա կրում էր ծիրանի։ Մեծ դժվարությամբ Գալերիոսը թույլտվություն ստացավ կրկին անգամ փորձելու իր բախտը զենքի զորությամբ։ Իր բանակն ամրացնելով նոր գնդերով, նա բանակ դրեց սահմանագլխի Դակիա կոչվող վայրում։ Հասնելով Մեծ Հայք, Գալերիոսը երկու հեծյալներով անձամբ գնաց հետախուզության՝ ծանոթանալու համար թշնամու զորությանը։ Ապա քանհինգ հազարով արշավեց պարսից ամրության վրա։ Հանկարծակի հարձակվեց թշնամու անթիվ զորքի բաղմության վրա և մեծ ջարդ տվեց[5]։ Պարսից Ներսեհ թագավորը[6] հաղիվ կարողացավ փախչել և ազատվել, բայց նրա կանայք և աղջիկները գերի ընկան և պահվեցին մեծ ողջախոհությամբ։ Սրա վրա զարմանում էին պարսիկները և խոստովանում, որ հռոմեացիները բարձր են իրենցից ոչ միայն զենքի զորությամբ, այլև բարրի ազնվությամբ։ Եվ նրանք վերադառձրին Միջագետքի Անդրտիգրիսյան հինգ նահանգները[7], հաղաղություն կնքվեց ի նպաստ կայսրության, որը տևեց մինչև մեր օրերը[8]։

1. Խոսքը Հռոմի կայսր Գայոս Վալերիոս Ավրելիոս Դիոկղետիանոսի մասին է։

2. Նկատի ունի Դիոկղետիանոսի կառավարչակից Գայոս Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսին, հռոմեական կայսր (293—311)։

3. Գալերիոսի պարտությունը պարսկական զորքերից տեղի է ունեցել 296 թ.՝ Խառանի ճակատամարտում։

4. Հրասախ (փարսախ)— երկարության միավոր, հավասար է եղել 30 ասպարեզի, այսինքն՝ 5000 մետրի։

5. Այս ճակատամարտը տեղի է ունեցել 297 թվականին։

6. Խոսքը վերաբերում է Պարսից Ներսեհ թագավորին (293—302)։

7. Այսինքն՝ Անգեղ տունը, Ծոփքը, Աղձնիքը, Կորդուքը և Ծավդեքը։

8. Հռոմեացիների և պարսիկների միջև այս պայմանագիրը կնքվել է 298 թ. Ծրբինում՝ 40 տարի ժամանակով։

ՊԵՏՐՈՍ ՊԱՏՐԻԿԻՈՍԸ ՄԾԲԻՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Պետրոս Պատրիկիոսը VI դարի բյուզանդական ամենաաչքի ընկնող դիվանագետներից է։ Նա ճայտնի է նաև որպես պատմագիր։ Պատրիկիոսի գրչին են պատկանում բազմաթիվ երկասիրություններ, որոնցից արժեքավոր էր հատկապես «Պատմությունը»։

Սա ընդրված էր երկրորդ հռապետությունից մինչև Հուլիանոս կայսեր ժամանակաշրջանի Հռոմի պատմությանը։ Դժբախտաբար, Պատրիկիոսի սույն երկից մեզ են հասել միայն չնչին հաղվածքներ՝ կատարված XI դարում, Կոստանդին Միրահածինի կողմից։

Պատրիկիոսից ստորև բերված հատվածը տալիս ենք Հ. Հ. Մանանդյանի թարգմանությամբ, որը կատարված է „Petrus Patricius Fragmenta“ հրատարակությունից (տե՛ս „Historici Graeci minores, I, ed. L. Dindorfius, Lipsiae, 1870“, էջ 443)։

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

14. Արդ՝ դեսպանության[1] առաջադրած գլխավոր կետերը հետևյալներն էին. արևելյան երկրամասում Հռոմեացիներին են պատկանելու Ինգիլենեն՝ Ծոփքի, Աղձնիքի, Կորդուքի և Ծավդեքի հետ միասին[2]։ Արմենիայի սահմանը լինելու է Զինթա ամրոցը[3], որը գտնվում է Մեդիայի սահմանում։ Իբերիայի թագավորն իր թագավորական նշանները պետք է ստանա Հռոմեացիներից։

1. Խոսքը հռոմեական դեսպանության մասին է, որը գլխավորում էր Սիկոբրիոս Պրոբոսը։

2. Կայսրությանն անցած հայկական այս հինգ նահանգները, կազմելին այսպես կոչված «Սատրապական Հայաստանը» վարչական միավորը, որը երկար ժամանակ պահպանեց իր ներքին անկախությունը։

3. Զինթա ամրոցը տեղադրվում է Կապուտան (Ուրմիա) լճի հարավ-արևմուտքում, Զագրոսի լեռների արևելակողմում։

ՏՐԴԱՏ III ՄԵԾԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

46. Այն ժամանակ թագավորը[1] հույժ բարձրացրեց Տրդատին և մեծամեծ պարգևներ տվեց նրան, թագ դրեց գլխին և ծիրանի պատմուճաններով զարդարելով՝ պատվեց նրան[2]։ Կայսերական զարդով շքեղացնելով մեծարեց և օգնական բազում զորք հանձնելով՝ ուղարկեց նրան սեփական Հայոց աշխարհը։

47. Հաղթական մարտում քաջություններ գործելուց հետո Մեծ Հայքի Տրդատ արքան վերադարձավ Հունաց կողմերից։ Թագավո-

րը[3] շարժվեց եկավ Հայոց կողմերը և հասնելով գտավ այնտեղ Պարսից մեծաքանակ զորք, որ երկիրը գրավել էր, հպատակեցրել։ Շատերին կոտորեց և շատերին փախստական դարձնելով՝ Պարսից կողմերը քշեց, իսկ Հայրենի տերությունը նվաճեց ու զրաց[4] նրա սահմանների վրա։

1. Նկատի ունի Հռոմի կայսր Դիոկղետիանոսին։
2. Հռոմեացիները Տրդատ III-ին Մեծ Հայքի թագավոր են հռչակել 287 թվականին, իսկ իրականում, նա գահակալել է 298 թվականից։
3. Այսինքն՝ Տրդատ III-ը (298—330)։
4. Հայ-հռոմեական զորքերը, Տրդատ III-ի և հռոմեական զորավար Գալերիոս Մաքսիմիանոսի հրամանատարությամբ, 297 թ. Բասենի Ոսկա գյուղի մոտ չախչախեցին Պարսից Նրսեհ արքայի բանակներին և ազատագրեցին Հայաստանը։

ՏՐԴԱՏ III–Ի ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Բ, գլ. ՁԲ. Որովհետև չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության, ուստի մանրամասն հետազոտությամբ գրտանք, որ Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, և այս կողմերն է եկել մեծ զորքով։ Երբ նա Կեսարիա հասավ, նախարարներից շատերը նրան ընդառաջ գնացին։ Եվ երբ հասավ մեր երկիրը, տեսավ, որ Օտան սնուցել է իր խոսրովիդուխտ քրոջը և պահպանել է գանձերն ու ամրոցը մեծ համբերությամբ. և իսկապես էլ նա համբերող էր, ժուժկալ և շատ խելացի, որովհետև նա թեպետ աստծու մասին ճշմարտությունը չիմացավ, բայց կուռքերի ստությունը հասկացավ։ Նրա պես էր և նրա սան խոսրովիդուխտը, որ մի օրինավոր համեստ կույս էր և ուրիշ կանանց նման չուներ բոլորովին անդուռ բերան։

Տրդատը Հայաստանի հաղարապետ է նշանակում Օտային և շնորհակալությամբ պատվում է նրան, մանավանդ պատվում է իր դայեկորդի Արտավազդ Մանդակունուն, որ պատճառ եղավ իր փրկության և հայրենական փառքին հասնելուն. ուստի նրան է հանձնում հայոց զորքերի սպարապետությունը։ Նույն պատճառով նրա քրոջ ամուսին Տաճատին Աշոցք գավառի (տեր) է դարձնում։ Սա էր, որ հետագայում հայտնեց իր աներ Արտավազդին, և սա թագավորին, նախ՝ որ Գրիգորն Անակի որդին է, և հետո՝ Գրիգորի որդիների մասին. այս բաները նա իմացել էր Կեսարիայում ապրած լինելով։

Իսկ քաջ Տրդատը արագ-արագ բազմաթիվ ճակատամարտեր տալով նախ Հայաստանում և ապա Պարսկաստանում՝ ինքն անձամբ առնում է հաղթությունը։ Մի անգամ նա ավելի (մեծ քաջությունն ցույց տվեց), քան հնում Եղիսանեը և իր նիզակը կանգնեցրեց նույնքան թվով վիրավորների օգնական։ Մի երկրորդ անգամ՝ պարսից կորովի զորականները փորձով իմանալով հսկայի աստիճ ուժը և կուռ զրահների ամրությունը, նետեր արձակելով շատ վերքերով պատեցին ձիուն և սպանեցին, որ գետին փռվելով թագավորին վար գցեց։ Իսկ նա ոտքի կանգնելով և հետիոտն հարձակվելով, թշնամիներից շատերին գետին գլորեց և մեկի ձին բռնելով արիաբար հեծավ։ Մի երրորդ անգամ նա կամավորապես ձիուց իջավ և հետիոտն հարձակվելով՝ սրով ցրեց փղերի երամակները։ Այսպիսի քաջագործություններով բավական երկար մնաց Պարսկաստանում և Ասորեստանում, և Տիզբոնից էլ այն կողմն անցավ։

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

48. Մեծ Հայքի արքա Տրդատի առաջին տարում (հայոց զորքերը) շարժվեցին եկան, հասան Եկեղյաց գավառը, Երիզա գյուղը, Անահիտի մեհյանը, որպեսզի այնտեղ զոհեր մատուցեն։ Երբ անարժան գործը կատարեցին, իջան, տեղավորվեցին այն գետափին, որը Գայլ է կոչվում։

49. Թագավորը եկավ մտավ վրանը, ընթրիքի բազմեց. երբ գինովցան, թագավորը հրաման տվեց Գրիգորին, որպեսզի պատկներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերի Անահիտի բագինին։ Սակայն նա հանձն չառավ աստվածների երկրպագության պաշտամունքը կատարել։

122. Այսչափ հարցերից ու տանջանքներից, գանահարություններից ու բանտերից, գնդապաններից ու կախաղաններից, դառն նեղություններից և ամեն խոշտանգումներից հետո, որոնք նա մեծ համբերությամբ հանձն առավ տեր մեր Հիսուս Քրիստոսի անվան համար։ Երբ թագավորը այս էլ իմացավ, թե իսկապես դա որդին է Անակ Պարթևի, որն սպանել էր նրա հորը՝ Խոսրովին, հրաման տվեց կապել ոտքերը, ձեռքերն ու պարանոցը, և տարան նրան Աշտարատ գավառը, հանձնեցին Արտաշատ քաղաքի բերդի դղյակը և իջեցրին ներքին վիրապը, որի խորությունից դուրս գալը

անհնարին էր, որպեսզի խսկույն մեռներ։ Այդ վիրապում նա մնաց տասներեք տարի։

124. Այն տասներեք տարիներում, որ Գրիգորը մնաց բանտի բերդում և խորվիրապում, մի այրի կին, որ այդ բերդում էր, երազում հրաման առացավ, որ օրական մի նկանակ պատրաստելով՝ խորվիրապից վայր գցեր։ Այսպիսով՝ Աստծու հրամանով նա կերակրվեց այնտեղ մնացած տարիներին։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՀՌԻՓՍԻՄՅԱՆ ԿՈՒՅՍԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

137. Այդ ժամանակներում պատահեց, որ Դիոկղետիանոս կայսրը կամեցավ իր համար կին առնել, և այնուհետև իր տերության բոլոր կողմերը սկսեցին շրջել նմանահան ճարտար նկարիչներ, և դեմքի գեղեցկությունը, մրազարդ հոնքերը ճշգրտորեն, հաւանակին հարմար, համապատասխան ներկերով նկարում էին տախտակների վրա, որպեսզի դեմ դիմաց ցույց տան թագավորին՝ ի հաճույս նրա։

138. Այդ ժամանակ գալով Հռոմ քաղաքը, գտան կույսերի մի արգելավանք, որոնք լեռներում մեկուսացած, բուսակեր, ժուժկալ, պարկեշտ և սրբամտեր կանայք էին...։

139. Երբ եկան հասան, բռնությամբ մտան առաքինի կանանց սուրբ կայանը, տեսնելով պարկեշտագեղ Հռիփսիմեին[1], սքանչելի տեսիլքով ապշած, զարմացած՝ նկարը տախտակի վրա նկարեցին և թագավորին հասցրեցին։

140. Երբ թագավորը տեսավ Հռիփսիմեի կերպարանքի նկարի հիասքանչ վայելչությունը, կատաղի ցանկության տոփանքով լցվեց, որովհետև հիմար, մոլեգին, անկարգ ցանկությունը ստիպում էր. [և նա] հարսանիքի ուրախության ժամ որոշելով, տադնապով շտապեց հարսանեկան ուրախությունն անել...։

149. Սրանից հետո սուրբ Գայանեն Հռիփսիմե սանով ու մյուս պարկեշտ ընկերներով հանդերձ գնացին, հեռացան՝ փախուստ տալով, որպեսզի իրենց անձերը սրբությամբ պահպանեն...։

150. Այն ժամանակ նրանք եկան հասան Հայոց երկիրը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը, որը նաև Նորաքաղաք է կոչվում, Հայոց թագավորների նստավայրը: Այնուհետև եկան մոգ այգեստանների հնձաններըը, որոնք շինված էին հյուսիսարևելյան կողմում: Սնվում էին իրենց ունեցվածքը քաղաքում վաճառելով, չունեին իրենց հետ ապրուստի միջոցներ, միայն թե նրանցից մեկը գիտեր ապակեգործության արհեստը, ապակյա ուլունքներ էր պատրաստում և իրենց օրական ապրուստի ու պարենի դրամն էին ճարում:

151. Այդ ժամանակ քիչ խռովություն չբարձրացավ Հունաց աշխարհում. ամեն կողմերում լարված որոնում էին, սուրհանդակներ ուղարկում, որ թերևս կարողանան նրանց գտնել: Պատվիրակ եկավ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ և ներկայացավ նրան Վաղարշապատ քաղաքում: Երբ հրովարտակը մատուցեց նրան, սա վերցրեց այն ուրախությամբ:

161. Արդ՝ նրանք գտնվում էին շենքերի հնձաններում, և երբ Հունաց մեծ թագավորի հրովարտակը հասավ Մեծ Հայքի արքա Տրդատին, պակաս խռովություն չեղավ Հայոց աշխարհում, քանզի պահպանում էին պողոտաների և բոլոր գավառների ամեն անցքերը և տարբեր կողմեր ելնելով իրարանցման մեջ փնտրում էին: Իսկ մեկը, տեսնելով, պատմեց նրանց մասին:

162. Երբ նրանց մասին իրողությունը հայտնի դարձավ, ապա երկու օր վահանափակ շրջապատեցին նրանց՝ հետևակ զորքի մի լեգեոնի հանձնարարելով պահել նրանց այնտեղ, ուր գտնվում էին: Ապա երկու օր անց Հռիփսիմեի պարկեշտության ու չքնաղ գեղեցկության համբավը հռչակվելով՝ բազմամբոխ հրապարակներում տարածվեց, և ամեն մարդ մյուսին իր զարմանքն էր հայտնում:

178. Արդ՝ սպասավորները բռնի տարան սուրբ Հռիփսիմեին՝ մերթ բարձրացրած, մերթ քարշ տալով...:

208. Սրանից հետո մոտեցան ու պատառոտեցին նրանց հանդերձները և պրկեցին նրանց՝ յուրաքանչյուրին չորս ցցի վրա... սրով կտրեցին նրանց գլուխները:

209. Արդ՝ ամենը, որ նրանց հետ միաժամանակ եկել էին Հռոմեացիների երկրից, և բոլորը միասին հասել մեր Հայաստան աշխարհը, ավելի քան յոթանասուն հոգի էին: Իսկ որոնք սպանվեցին սուրբ տիկնանց՝ Գայանեի ու Հռիփսիմեի հետ, նրանց հետ

մեկտեղ, որ հիշվեցին նահատակների թվում, ընդամենը երեսունյոթ մարդ էին:

210. Նահատակվեց սուրբ Հռիփսիմեն սրբերի դասով մեկտեղ Հոռի ամսի քսանվեցին երեսուներեք նահատակից ընկերներով: Իսկ Հոռի ամսի քսանյոթին սուրբ Գայանեն իր երկու ընկերներով, որոնք նրա հետ մարտնչեցին, պսակներ ընդունեցին և առան հաղթության թագը:

211. Արդ՝ վեց օր խոր տխրության և անտանելի տրտմության մեջ էր թագավորը, Հռիփսիմեի գեղեցկության նկատմամբ ունեցած տենչալի սիրո պատճառով: Այնուհետև, որսի ժամ որոշեց, բոլոր զորքերին հրամայեց հավաքել բերել որսի զենքերը, տագնապ դցել, որսի ցանցեր պատրաստել, թակարդներ լարել. կամենում էր որս անել Փառական Շեմակաց դաշտում:

1. Հռիփսիմյան կույսերի նահատակության ավանդությունը, ինչպես պարզված է, Ագաթանգեղոսի պատմության մեջ է մտցվել հետագայում:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՏՐԴԱՏ III–Ի ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

212. Մինչդեռ կառքի վրա նստած թագավորը քաղաքից դուրս էր եկել, իսկույն նրա վրա տիրոջ պատուհասը հասավ, և պիղծ դևը խփելով թագավորին կառքից վայր տապալեց: Անմիջապես սկսեց մոլեգնել ու ինքն իրեն ուտել...:

214. Այն ժամանակ Աստծուց տեսիլ երևաց թագավորի քրոջը, որի անունն էր Խոսրովիդուխտ: Արդ՝ եկավ պատմեց մարդկանց իր տեսիլքը՝ ասելով. «Ինձ տեսիլք երևաց այս գիշեր. մի մարդ լույսի նմանությամբ եկավ պատմեց ինձ, թե ձեզ վրա հասած հարվածներից բժշկություն չի լինի, եթե [մարդ] չուղարկեք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերելու կապյալ Գրիգորին: Նա գալով կազատեցնի ձեզ ցավերից բուժվելու դեղը»:

215. Երբ մարդիկ լսեցին, սկսեցին ծիծաղել նրա խոսքերի վրա: Խոսեցին նրա հետ ու ասացին. «Ուրեմն դու էլ մոլեգնեցիր և դիվահար եղար: Ինչպե՞ս է, որ ահա տասնհինգ տարի նրան գցել են առյուծի խորվիրապը, և դու ասում ես, թե կենդանի է: Որտե՞ղ

են նրա ոսկորները, նույն օրն իսկ, երբ նրան այնտեղ իջեցրին, օձերի հենց տեսքից նույն ժամին մեռած կլինի»:

216. Սակայն նույն տեսիլքը դարձյալ երևաց կնոջը հինգ անգամ և սպառնալիքով կրկնեց, որ եթե տեսիլքը շուտ-շուտ չպատմի, մեծամեծ տանջանքներ կկրի, և մարդկանց ու թագավորի հարվածները առավել ևս կասկականան մահվամբ ու պես-պես տանջանքներով: Այդ ժամանակ խոսրովիդուխտը գնաց և մեծ երկյուղով ու զգուշությամբ պատմեց հրեշտակի խոսքերը:

217. Իսկ նրանք շուտափույթ այնտեղ ուղարկեցին մի ավագ նախարարի, որի անունն էր Օտա: Նա գնաց Արտաշատ քաղաքը՝ նրան վիրապի խոր բանտից հանելու: Երբ Օտան եկավ հասավ Արտաշատ քաղաքը, քաղաքացիք նրան ընդառաջ ելան՝ գալու պատճառը հարցնելու: Ասաց նրանց, թե «կապյալ Գրիգորին տանելու համար եմ եկել»: Նրանք զարմացած առհասարակ ասացին. «Ո՞վ գիտե՝ ո՞ղջ է, քանզի ահա շատ տարիներ են, որ նրան այնտեղ են գցել»: Իսկ նա պատմեց տեսիլքի դեպքերը և ամեն ինչ, որ եղել էր:

218. Եվ նկան բերեցին երկայն ու հաստ պարաններ ու իրար կապելով իջեցրին ներքև: Մեծ ձայնով աղաղակեց Օտա նախարարը ու ասաց. «Գրիգո՛ր, ուր որ ես, դո՛ւրս եկ, քանզի քո տեր Աստվածը, որին պաշտում էիր, հրամայեց հանել քեզ այդտեղից»: Սա անմիջապես ոտքի կանգնեց, իսկույն շարժեց պարանը ու ամուր բռնեց:

219. Իսկ սրանք, իմանալով քաշեցին, վեր հանեցին նրան և տեսան, որ նրա մարմինը թեթևացել էր, ածուխի նման սևացել: Իսկույն հանդերձներ մատուցելով հագցրին նրան և խնդությամբ Արտաշատ քաղաքից առան գնացին Վաղարշապատ քաղաքը: Այն ժամանակ սարսափելի տագնապալի ցավերից թագավորը դևի կողմից տարվելով՝ ելավ խոզերի երամից ու գնաց նրան ընդառաջ մերկ, խայտառակ [վիճակում]: Իսկ նախարարները քաղաքից դուրս նրանց էին սպասում:

220. Երբ հեռվից տեսան նրանց՝ Գրիգորին Օտայի հետ մեկտեղ և այլ բազմաթիվ մարդկանց, որոնք նրանց հետ գալիս էին Արտաշատ քաղաքից, ընդառաջ շարժվելով, մոլեգնելով և իրենց ուտելով դիվահարում էին ու փրփրում նրա առջև:

221. Իսկ նա անմիջապես ծունկի գալով աղոթեց, և նրանք իսկույն գազանացան: Ապա հրամայեց հանդերձներ գցել նրանց վրա, որ ծածկեն իրենց ամոթը: Թագավորն ու նախարարները մոտենալով բռնել էին սուրբ Գրիգորի ոտքերից ու ասում էին. «Խնդրում ենք քեզանից՝ ներիր մեր հանցանքները, որ մենք քո նկատմամբ գործել ենք»:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

778. Ապա թագավորը իսկույն տիրաբար հրաման տվեց, ամենքի հավանությամբ, գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից ջնջի: Ապա ինքն իսկ թագավորը, ամբողջ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ դիցուհու բագինը[1] և այն, որ երազամուքն կոչված տեղերում էր գտնվում: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմիզդի գրչի Դիվան կոչված, երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծու ճարտարության ուսման մեհյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել:

782. Եվ [Գրիգորը] առհասարակ ամենքի համար աստվածապաշտության խոսքը սերմանեց և բոլորին Տիրոջ ճանապարհի վրա կանգնեցրեց՝ արարչի պատվիրաններին տեղյակ դարձնելով: Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում, ավաններում ու զարակներում ցույց տվեց եկեղեցու տեղերը:

784. Ապա հանձնելով նրանց Աստծու ամենապատ շնորհներին, ինքն առավ թագավորին, շարժվեց գնաց, որպեսզի Հայաստան աշխարհի բոլոր սահմանների վրա, ուրիշ կողմերում ևս կենաց խոսքը սերմաններ: Գնաց հասավ Դարանաղյաց գավառը, որպեսզի այնտեղ ևս կործաններ սուտ աստվածների բագինը, որը Բորդան գյուղում էր, սպիտակափառ Բարշամինա անվանված աստծու մեհյանը: Նախ այն կործանեցին ու նրա արձանը փշրեցին

և բոլոր գանձերը, ոսկին ու արծաթը ավարի մատնեցին ու աղքատներին բաշխեցին։ Եվ գյուղը բոլոր դաստակերտներով հանդերձ ու սահմաններով՝ եկեղեցուն նվիրեցին և ամենափրկիչ նշանի օրինակը այնտեղ ևս կանգնեցրին։

Նկար 26. Գառնիի հեթանոսական տաճարը (I դար)

785. ... Երբ նրանց ևս հաստատեց, գնաց հասավ Անի անվանված ամուր վայրը՝ Հայոց արքաների գերեզմանների թագավորանոց կայանը։ Այնտեղ կործանեցին բագինը Ձևս-Արամազդ աստծու, որը բոլոր աստվածների հայրն էր անվանված։ Այնտեղ ևս տերունական [խաչի] նշանը կանգնեցրին, և ավանը իր ամրություններով հանդերձ եկեղեցուն ի ծառայություն նվիրեցին։

786. Դարձի եկած զորքերով այնտեղ հասածները, սուրբ Գրիգորը թագավորով հանդերձ, փշրեցին Անահիտ դիցուհու ոսկի արձանը, ամբողջ վայրը քանդեցին, փշացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին։ Այնտեղից Գայլ գետի վրայով այն կողմ անցան ու քանդեցին Արամազդի դստեր՝ Նանեի մեհյանը Թիլ ավանում։ Երկու մեհյանների գանձերը ավարելով՝ Աստծու սուրբ եկեղեցու ծառայությանը նվեր թողեցին տեղերով հանդերձ։

790. Եկավ հասավ Արամազդի որդի կոչված Միհրի մեհյանը, այն գյուղում, որը Բագայարիճ են կոչում պարթևներեն, և այն ի հիմանց բրելով քանդեցին, կուտակված գանձերը ավարի մատնեցին ու աղքատներին բաժանեցին և այդ տեղերը եկեղեցուն նվիրեցին, իսկ երկրի բնակիչներին ճշմարիտ դիտության մեջ հաստատեցին...։

795. Այնժամ թագավորը շուտափութ և երկյուղածությամբ մեծ խնդությամբ հոգալով՝ հավաքեց երկրների գլխավոր նախարարներին ու կուսակալներին։ Առաջինը՝ Անգեղտան իշխանը, երկրորդը՝ Աղձնյաց իշխանը, որը մեծ բդեշխն է, երրորդը՝ մարդպետության իշխանը, չորրորդը՝ ասպետական իշխանության թագադիր իշխանը, հինգերորդը՝ սպարապետության իշխանը, Հայոց աշխարհի զորավարը, վեցերորդը՝ Կորդվաց երկրի իշխանը, յոթերորդը՝ Ծոփաց երկրի իշխանը, ութերորդը՝ Գուգարաց երկրի իշխանը, որն անվանվում էր մյուս բխեշխ, իններորդը՝ Ռշտունյաց երկրի իշխանը, տասներորդը՝ Մոկաց երկրի իշխանը, տասնմեկերորդը՝ Սյունյաց երկրի իշխանը, տասներկուերորդը՝ Ծավդեից երկրի իշխանը, տասներեքերորդը՝ Ուտիացոց երկրի իշխանը, տասնչորսերորդը՝ Զարեվանդ և Հեր գավառի շահապ իշխանը, տասնհինգերորդը՝ մաղխազության տան իշխանը, տասնվեցերորդը՝ Արծրունյաց իշխանը։

796. Սրանք են Հայաստան աշխարհի, Թորգոմի տան ընտիր իշխանները, կուսակալները, կողմնակալները, հազարապետները, բդյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թագավորը և ուղարկեց Կապուտկացոց կողմերը, Կեսարիա քաղաքը, որը հայերեն Մաժաք են կոչում, որպեսզի տանելով Գրիգորին, իրենց երկրի քահանայապետ դարձնեն, ու պատրաստվեցին ճանապարհ ընկնելու[2]։

809. Երբ եկավ հասավ Հայաստանի սահմանները, Գրիգորը լսեց, թե վահեվանյան մեհյանը մնացել է Տարոնի երկրում՝ մեծագանձ մեհյանը լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների ձոնած բազում նվերներով։ Պաշտամունքի ութերորդ հռչակա-

վոր [վայրն] էր Վիշապաքաղն Վահագնի անվամբ, Մեծ Հայքի թագավորների զոհերի տեղը, Քարքե լեռան լանջին, Եփրատ գետի վրա, Տավրոս մեծ լեռան դիմացը, որը և պաշտամունքի վայրերի հաճախաշատ լինելու պատճառով անվանված էր Աշտիշատ: Քանդի այնժամ դեռևս շեն էին նրանում երեք բագինները, առաջինը՝ Վահեվանյան մեհյանը, երկրորդը՝ Ոսկեմայր Ոսկեծին աստվածուհու, և բագինը այս անվամբ էլ կոչված էր Ոսկեհատ Ոսկեմայր դիցուհու, երրորդը՝ Աստղիկ դիցուհու մեհյանը, Սննյակ Վահագնի կոչված, որը հունական ձևով Ափրոդիտես է: Արդ՝ այնտեղ դիմեց սուրբ Գրիգորը, որպեսզի այն ևս քանդի, քանզի տակավին տգետ մարդիկ շփոթությամբ զոհ էին մատուցում այս մնացած բագիններին:

837. Ուր և երանելի Գրիգորը իր ուսուցչությունը ի գործ դրեց և հավաքվածներին ընդունելի դարձնելու համար քաղցրացրեց ու ծռմռացրեց վարդապետության խորությունը, լիքը լցրեց ամեն հոգևոր բարություններով: Դրանից հետո նա շրջեց, վերահաստատ և ղավ Հայաստան աշխարհի բոլոր կողմերին՝ շինելով եկեղեցիներ բոլոր նահանգներում, գավառներում, կողմերում, քաղաքներում, ավաններում, շեններում, գյուղերում ու ագարակներում: Այդպես էլ թագավորը իր ամբողջ իշխանության մեջ առհասարակ նշանակեց չորսական ծխի հոգաբաժին բոլոր ագարակ տեղերում, իսկ ավաններում՝ յոթական ծխի հոգաբաժին ի ծառայություն սպասավորության քահանայության, [որպես] նվեր պտղի՝ Տիրոջը մատուցեց:

839. Նույնպես [Գրիգորը] համոզեց թագավորին, որպեսզի զանազան գավառներից, կողմերից, այլևայլ տեղերից մանկանց բազմություն հավաքեն ուսուցանելու նպատակով...:

840. Տրդատ թագավորը Հայոց երկրի տարբեր կողմերին հրաման տվեց՝ իր իշխանության նահանգներից, գավառներից, ուսման համար մատաղ մանուկների բազմություն բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել: Առավելապես քրմերի պղծագործ ցեղին և նրանց մանուկներին այնտեղ հավաքել, հարմար տեղերում դաս-դաս խմբել և ապրուստի ճշդակ նշանակել: Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հելլենականի[3]:

842. Այսպես Հայոց ամբողջ երկրում, ծայրից ծայր, ջանաչ, ափռեց, տարածեց քարոզության ու ավետարանության գործը՝ Սա-

ղաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը, Կղարջքի մոտ, բնդհուպ մինչև Մասքութների սահմանները, մինչև Ալանաց դռները, Կասպից սահմանները և Հայոց թագավորության Փայտակարան քաղաքը: Ամիդ քաղաքից մինչև Մծբին քաղաքը, անցնելով Ասորիքի սահմանները, Նոր Շիրական երկիրը, Կորդուք գավառը մինչև Մարաց ամուր աշխարհը, մինչև Մահքր-Տան իշխանի երկիրը և Ատրպատական՝ սփռում, տարածում էր իր ավետարանական քարոզը:

845. Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում հաստատեց դաշտաբնակ, շենաբնակ, լեռնական, անձավաբնակ, արգելաբնակ վանականների բազում ու անհամար խմբեր: Քրմերի որդիներից ոմանց առավ աշակերտ, ձեռնասուն դարձրեց, ջանում էր ուսում տալ նրանց հոգևոր խնամքով ու երկյուղով դաստիարակել: Ով որ եպիսկոպոսության աստիճանին արժանի էր, նրան ձեռնադրում էր: Նրանցից առաջինի անունը Աղբիանոս էր, որը հետո Եփրատ գետի կողմերում եպիսկոպոս եղավ, երկրորդինը՝ Եվտաղիոս, որը Բասեն գավառի կողմերում հոգևոր հովիվ կարգվեց, երրորդինը՝ Բասոս, չորրորդինը՝ Մովսես, հինգերորդինը՝ Եվսեբեոս, վեցերորդինը՝ Հովհաննես, յոթերորդինը՝ Ագապես, ութերորդինը՝ Արտեմես, իններորդինը՝ Արսուկես, տասներորդինը՝ Անտիոքես, տասնմեկերորդինը՝ Տիրիկես, տասներկուերորդինը՝ Կիրակոս: Սրանք էին, որ առանձնացվեցին քրմերի որդիներից՝ տարբեր կողմերի եպիսկոպոսներ լինելու, քարոզություն տարածելու համար: Մյուսների անունները, եթե որևէ մեկը կամենա, չի կարող թվել:

1. Անահիտ աստվածուհու, ինչպես և հին հայկական հեթանոսական մյուս աստվածների մասին, արժեքավոր ուսումնասիրություն է հանդիսանում Ղ. Ալիշանի «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց» աշխատությունը (Վենետիկ, 1895):

2. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը կեսարիայում կարող էր տեղի ունեցած լինել 313 թ., Միլանի էդիկտի հրապարակումից հետո միայն. Ագաթանգեղոսի մոտ շփոթություն գոյություն ունի:

3. Հայաստանում նոր կրոնի քարոզիչները հույներն էին և ասորիները, քրիստոնեական գրականությունը այդ լեզուներով էր, ուստի, բնական է, որ նոր կրոնի հետ ծանոթանալու համար այդ լեզուներն իմացող հայ թարգմանիչներ էին հարկավոր, այդ նկատի ունենալով է, որ բացվում են դպրոցներ հունարեն և ասորերեն լեզուներով:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵՎ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՎՆԵՐԸ ԸՍՏ ԶԵՆՈԲ ԳԼԱԿԻ

Զենոբ Գլակը, ըստ իր տեղեկության, IV դարի գործիչ է, եղել է ասորի այն եկեղեցականներից, որոնց Գրիգոր Լուսավորիչը Ասորիքից հրավիրել էր Հայաստան քրիստոնեության տարածմանը նպաստելու համար: Անձամբ մասնակցել է հեթանոսների դեմ մղված պատերազմներին՝ գնվելով Լուսավորչի ռազմական արշավախմբում: Պատերազմը վերջանալուց հետո նշանակվել է Տարոնի Գլակի վանքի վանահայր և Լուսավորչի հանձնարարությամբ ձեռնամուխ է եղել գրելու Տարոնում տեղի ունեցած պատերազմների պատմությունը: Զենոբի այդ երկը կցված է VII դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությանը:

Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկը, Զենոբ Գլակի բնագրի հետ միասին, հրատարակվել է մի քանի անգամ: Օգտագործված է 1941 թվականի հրատարակությունը, որը լույս է տեսել «Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ» վերնագրով: Ստորև բերված հատվածները աշխարհաբար է թարգմանել Ս. Գ. Աբրահամյանը:

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, էջ 78—95

Եվ մենք (պատմիչը նկատի ունի Գրիգոր Լուսավորչի արշավախումբը, որի մեջ եղել է և ինքը— Ա. Ա.) դուրս գալով այնտեղից (այսինքն՝ Թորդանից— Ա. Ա.), ուզեցինք անցնել Կարին և Հարք: Սակայն իշխաններից ոմանք տեղեկացրին սուրբ Գրիգորին, թե Տարոնի գավառում երկու մեհյան է մնացել, ուր դեռևս զոհ են մատուցում կուռքերին: Ուստի նա դարձավ այդ կողմը՝ այն ևս կործանելու նպատակով: Եկավ Պալունյաց երկրի Գիսանե ավանը և Կոատ գյուղաքաղաքը:

Եվ քրմերից նրանք, որոնք այստեղ էին գտնվում, անմիտ մարդկանցից իմացան, որ վաղը կործանելու են Գիսանե և Դեմետր մեծ աստվածների մեհյանները, դիշերով գաղտնի գնացին կուռքերի վայրը և գանձերը լցրին գետնափոր տան մեջ: Եվ նրանք տեղեկացրին Աշտիշատի քրմերին, թե՝ «Հավաքեցեք բոլոր պատերազմող մարդկանց և փութապես վաղը հասեք մեզ մոտ, որովհետև Գիսանեն պատերազմի է դուրս գալու ուրացող իշխանների դեմ»: Միաժամանակ (նրանք) Կուատում գտնվող զորքը դարանամուտ թաքցրին այգիների ցանկապատների մոտ, իսկ մի մասն էլ՝ անտառում: Գլխավոր քուրմը, որի անունը Արձան էր, և նրա որդին՝ Դեմետրը, վերցնելով Կուատի տանից չորս հարյուր մարդ, բարձրացան այն լեռը, որը գտնվում է Կուատի դիմաց: Եվ մնացին աչքտեղ, սպասելով՝ մինչև որ այլ վայրերից նրանց օգնության հասնի:

Հայոց զորքը հաջորդ օրը անցնում էր լեռան ստորոտով իր սովորական զորարշավի երթով: Սուրբ Գրիգորը, իր հետ վերցրած Արծրունյաց, Անձևացյաց, Անգեղտան իշխաններին ու փոքր թվով մի զորամաս՝ շուրջ երեք հարյուր հոգի, երկրորդ ժամին բարձրացավ բլուրը, ուր թաքնված էր Արձանը: Նրանք գնում էին անհոգ, բնավ կասկած չունենալով: Եվ երբ մոտեցան բլրի բարձունքին, Արձանն ու Դեմետրը առաջ գալով հնչեցրին պատերազմի փողը և հանդգնաբար հարձակվեցին նրանց վրա: Իշխաններն այդ տեսնելով, սաստիկ ընդոստացան, որովհետև երիվարները լսելով փողի ձայնը, սկսեցին վրնջալ և իրար անցնել: Իսկ Անգեղտան իշխանը ձայն տալով ասաց. «Այո՛նյա՛ց իշխան, առա՛ջ անցիր և տես, գուցե զորքը հյուսիսային իշխանինն է»: Իսկ նա (հետախուզությամբ) գնալով, չկարողացավ պարզել, թե ովքեր են ու ետ դառնալով, ասաց. «Գրիգորին իր ընկերների հետ փախցրու ապահով մի վայր, գուցե բռնեն նրան և մենք ամաչենք Թագավորի առաջ: Իսկ դու մեկն ու մեկին ուղարկիր մեր զորքերի ետևից, որ նրանք ետ դառնան, քանի որ պատերազմող հակառակորդի մոտ մեծաթիվ և բազում փողփողող դրոշակներ են երևում:

Անգեղտան իշխանը սուրբ Գրիգորին տալիս է Մոկաց իշխանին և ասում. «Շուտափույթ հասցրու Ողկան ամրոցը, մինչև տեսնենք թե ինչ է լինելու»: Եվ ինքը երեք հոգի ուղարկեց զորքերին իմաց տալու:

Մոկաց իշխանը, վերցնելով Գրիգորին, իջնում է լեռից՝ կամենալով գնալ Կուատ: Իսկ տեղի մարդիկ կամեցան նրա ճանապարհը կտրել: Սուրբ Գրիգորը նկատելով, որ տեղում մեծ վտանգ կա, մասունքը թաքցրեց մի աղբյուրի մոտ՝ ձորի այն կողմը, գյուղի դիմաց և նշան արեց: Եվ Տերը ծածկեց այդ տեղը, և ոչ ոք չկարո-

զացավ տեսնել, մինչև որ սուրբ Գրիգորը վերադարձավ իր տեղը։ Գյուղի մարդիկ հետապնդեցին մեզ։ Եվ մենք, ամեն մեկս նստելով մեր ձիերը, փախստական գնացինք Ողկան ամրոցը և նրանցից առաջ մտանք ներս։ Մեզ ընդառաջ եկան տեղի մարդիկ և ներս տարան։ Իսկ գյուղի մարդիկ եկան անցան այն կողմը և պաշարեցին ամրոցը։ Մենք վախենալով, գիշերով մեկին ուղարկեցինք Անգեղտան իշխանի մոտ և գրությունով հայտնեցինք նրան եղելությունը։ Սա չորս հազար ընտիր սուսերամարտիկներ ուղարկեց, որոնք հաջորդ օրը եկան անցան գետի այս կողմը։ Եվ երեք օրվա ընթացքում նրանք վերցրին քաղաքները, կործանեցին բնակավայրերը և տեղի մարդկանց բերին անցկացրին Մեղտի։

Իսկ իշխանները, երբ բարձրացան բլրի վրա և տեսան Արձանին, որ միայն չորս հարյուր մարդ ուներ, անմիջապես հարձակվեցին քաջ իշխանների վրա և փախուստի մատնեցին զորքը։ Իսկ Հայոց մյուս զորամասերը, երբ լսեցին բոթի ձայնը, բոլորն էլ հասան լեռը։ Իսկ Արձանն առաջ գալով, սկսեց նախատել Հայոց իշխաններին՝ ասելով. «Առա՛ջ եկեք, ո՛վ հավատը կորցնողներ, հայրենի աստվածներին ուրացողներ և բարեփառ Դիտանեի թշնամիներ, չգիտե՞ք, որ այսօր մեծն Դիտանեն կռվի է դուրս գալու ձեր դեմ, մատնելու է ձեզ մեր ձեռքը և հարկանելու է ձեզ կուրությամբ ու մահվամբ»։ Իսկ Արծրունյաց իշխանը պատասխանելով ասում է. «Ո՛վ դու, որ խրոխտանում ես մեզ վրա, եթե աստվածների համար ես մարտնչում՝ սուտ ես, իսկ եթե երկրի՝ բոլորովին անմիտ, քանի որ այստեղ են Անգեղտան իշխանը, Սյունյաց տան իշխանը և այլ պատվավոր մարդիկ, որոնց դու իսկ ճանաչում ես»։ Իսկ Դեմետրը՝ Արձանի որդին, ասում է. «Լսեցե՛ք մեզ, Հայոց իշխաններ, այս քառասուն տարի է, որ ծառայում ենք մեծ աստվածներին և հայտնի է նրանց զորությունը, գիտեք որ մեհյաններում պաշտոնյաների թշնամիների հետ իրենք են մարտնչում։ Այժմ կռվով մենք ձեզ չենք կարող դիմադրել, որովհետև մեր դեմ Հայոց թագավորի տունն է, իսկ դուք Հայոց արքայի իշխաններն եք։ Սակայն թող այս հայտնի լինի ձեզ, որ թեև հաղթել չենք կարող, սակայն լավ է մեզ մահանալ մեր աստվածների համար, քան տեսնել նրանց ձեր կողմից ապականված։ Դրա համար ատենք հյանքս և սիրենք մահը։ Իսկ դո՛ւ, որ Անգեղտան իշխանն ես, առաջ անցիր, մենամարտենք ես և դու»։

Այն ժամանակ Արձանն ու Անգեղտան իշխանն առաջ գալով սկսեցին հարձակվել իրար վրա։ Արձանն աճապարեց, տեգով հարվածեց նրա ազդրին՝ կամենալով վայր ձգել նրան։ Իսկ իշխանը դառնալով դեպի նա ասաց. «Իմացի՛ր, ո՛վ Արձան, որ այսօր դու պիտի արձանանաս այս տեղում»։ Եվ վեր բարձրացնելով իր ձեռքը, հարվածեց սրով թիկունքի աջ կողմից և կտրեց պարանոցը։ Եվ նա գետին ընկնելով թավալվում էր։ Եվ հավաքեցին քարի կտորներ նրա վրա։ Եվ նա թաղվեց նույն տեղում, որի համար և Արձան են անվանում այդ տեղը։

Եվ մինչ այս տեղի էր ունենում այսպես, փութանակի Վիշապ քաղաքից մեկավ հասավ քրմերի զորքը։ Եկան նաև Պարախուի և Մեղտիի մարդիկ և բոլորը հասան ու հավաքվեցին նրանց մոտ։ Ուրիշներ ևս եկան Հաշտենից և հասան այնտեղ։ Բոլորը միասին, ինչպես հետո նրանք ասում էին, հինգ հազար չորս հարյուր հիսուն մարդ էր։

Եվ երբ հասան լեռան գլուխը, ձայնը դուժեց երկուսի գնդերում։ Եվ քրմերի դասը համախմբված հարձակվեց Հայոց զորքերի վրա և փախուստի մատնեց նրանց՝ քշելով նրանց լեռան վրայից դեպի գյուղի կողմը։ Իսկ գյուղի մարդիկ, որոնք դարանամուտ էին մեր եկած զորքերին, աջքանի մեջ առան Հայոց զորքը և սկսեցին կոտորել։ Իսկ Անգեղտան իշխանը, ճեղքելով քրմերի շրջապատը, անցավ ետևի կողմ՝ նպատակ ունենալով վերցնել բլուրը, որովհետև տեղի հետևակ մարդիկ, որոնք գտնվում էին բլուրի գառիվայր մասում, քարերով մեծ վնասներ էին հասցնում ձիերին։

Դեմետրը երբ տեսավ, որ Անգեղտան իշխանը բլուր բարձրացավ, թողնելով զորքը՝ ուշադիր հետևեց նրան։ Զորքը ևս ձիախաղաց այնտեղ հասավ։ Եվ երբ բարձրացան բլուրը, ճակատեցին դարձյալ իրար դեմ։ Եվ մեր իշխաններն իրենց զորքի հետ էին, քանի որ բոլորը չէին հավաքվել. չորս հազար հոգի դեռ գտնվում էին Մեղտիում, ուր սահում էին գերիներին, երեք հազար հոգի էլ անցել էին Բասեն և Հարք, իսկ մյուսները դեռ դաշտում ցրված զորաշարժի մեջ էին։ Եվ երբ իրար դեմ ճակատեցին և կամենում էին խառնվել, վրա հասավ երեկոն։ Եվ նրանք այդ վայրից իջևանելով, դարձար առան մինչև առավոտ։ Եվ երբ լուսացավ, հասավ Հայոց զորքը։ Եկան նաև ուրիշներ Տիգրանակերտ քաղաքից՝ մոտ յոթ հարյուր հոգի՝ օգնելու քրմերին։ Երբ եկան, ու բազմացան երկու

կողմերի զորաբանակները՝ քրմերի զորքի թիվն էր վեց հազար [1] ինը հարյուր քառասունվեց հոգի, իսկ Հայոց իշխանների զորքը՝ ութ հազար ութսուն։

Ապա հնչեցրին պատերազմական փողը և հարձակվեցին իրար վրա։ Սկզբում Հայոց զորքերը հաղթեցին քրմերին։ Սակայն Հաշտենից իշխանը, որ Հայոց իշխանների հետ էր, բաժանվելով նրանցից, յոթ հարյուր հոգով անցավ քրմերի կողմը և սկսեց կռվել Հայոց իշխանների դեմ։ Հայոց իշխանները տեսնելով այդ, սկսեցին հուսահատվել, քանի որ նա հաղթող, կորովի և ռազմական գործում առաջադեմ այնպիսի մեկն էր, որ Հայոց բոլոր իշխաններ դողում էին նրանից։ Եվ նա սկսեց անխնա կոտորել։ Այդ ժամանակ ամբողջ զորքը աղաղակ բարձրացրեց Սյունյաց իշխանի առջև, իսկ սա, դիմելով Հաշտենից իշխանին, ասաց. «Ա՛յ դայլի ձագ, հիշեցիր քո հոր բարքը և նորից գեղակերությա՞ն դարձար»։ Իսկ նա ասաց. «Ա՛յ արծվի ձագ, որ թևերովդ ես պարծենում, եթե ընկնես թակարդիս լարի մեջ, ես ցույց կտամ քեզ իմ զորությունը»։ Իսկ Սյունյաց իշխանը, չհանդուրժելով այդ անարգանքը, հարձակվեց նրա վրա, հարվածեց մուրճով նրա սաղավարտին։ Եվ առանձնացնելով նրան զորքից, փախուստի մատնեց լեռան արևելյան կողմը, ապա հասնելով նրան Իննակնյան վայրում, վար ձգեց ձիուց և, իջնելով, կտրեց նրա գլուխը, իսկ մարմինը գահավեժ անելով՝ ասաց. «Կտեսնեն քեզ անզգները և կիմանան, որ արծիվն է խփել նապաստակին»։ Եվ ինքը նա դարձավ։ Դրա համար էլ մինչև այսօր Արծվիք են անվանում այս տեղերին։

Իսկ Արծրունյաց իշխանը, հետապնդելով Աշտիշատի քրմապետին, որի անունն էր Մեստակես, փախցրեց նրան մինչև անտառի ծայրը՝ տեսանելի մի վայր։ Եվ երբ հասավ նրան, Մեստակեսը հարձակվեց և խոցեց նրա ազդրը, իսկ նա սոսկալի զայրացած՝ աճապարեց կտրել նրա գլուխը և պարանոցից վայր ձգեց, իսկ դիակը ցած գլորեց։ Եվ այդ պատճառով տեղի անունը Մեստակես են անվանում։

Իսկ Արջոց իշխանը փախչելով թաքնվեց այդ նույն վայրում։ Այդ տեսնելով, Արծրունյաց իշխանը չտեսնելու տվեց և, գալով մոտենալով նրան, հանկարծակի հարձակվեց նրա վրա։ Իսկ նա փախավ անտառ, ուր փայտի կտորը մխրճվեց նրա սիրտը և դրանից

էլ մահացավ։ Իսկ նա (Արծրունյաց իշխանը), վերցնելով ձիերը, նա վերադարձավ։ Եվ այդ տեղերը կոչեցին Արջոց ձոր։

Եվ երբ նա վերադարձավ այդ տեղերից, եկավ հենց այն ժամանակ, երբ Դեմետրը և Անգեղտան իշխանը մարտնչում էին իրար հետ։ Եվ նա, հարձակվելով Դեմետրի վրա, խոցեց նրա աջ ուսը և վար գլորեց, ապա կտրեց նրա գլուխը և ձգեց իր մախաղի (պարկի) մեջ։ Հետո դառնալով քրմերի զորքերին, սկսեց անխնա կոտորել նրանց. դիաթավալ արեց հազար երեսուն հոգու։ Նույն պատերազմում Դեմետրը սակայն սպանեց Մոկաց իշխանի որդուն, որը և մեծ սուգ պատճառեց իշխաններին։

Երբ պատերազմում մահացավ Դեմետրը, Սյունյաց իշխանը հնչեցրեց պատերազմական փողը խաղաղության համար։ Եվ դադարեցին երկու կողմերն իրար կոտորելուց։ Այդ ժամանակ, տեղի մարդիկ, որոնք քրմեր էին, աղաչեցին իրենց իշխաններին խաղաղության հաստատելու համար, որ կարողանան թաղել իրենց սպանվածներին։ Եվ թույլատրվեց։ Երկու կողմերը, հավաքելով իրենց սպանվածներին, գերեզման փորեցին և թաղեցին։ Ու նրանց վրա արձան կանգնեցրին, գրելով այսպես.

«Այս առաջին պատերազմն էր։ Գլխավոր հրամայետ Աբձաճճ այստեղ է թաղված։ Նրա հետ միասին թաղված են հազար երեսուներեք հոգի։ Այս պատերազմը տեղի ունեցավ հանուն Գիսաճեի, Գիսաճեի կուռքերի և Քրիստոսի»։

1. Հայ հեթանոսական վերջին քրմերը, ինչպես երևում է Ջենոբ Գլակի տեղեկություններից, մեծ քանակությամբ հետևորդներ են ունեցել և ճակատ առ ճակատ կռվել են Տրդատի և Գրիգոր Լուսավորչի գլխավորած պետական զորաբանակի դեմ։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԵԹԱՆՈՍ ՀՌՈՄԻ ՄԻՋԵՎ ԸՍՏ ԵՎՍԵԲԵՈՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ

Եվսեբեոս Կեսարացին (IV դ.) վաղ քրիստոնեական եկեղեցական աշխարհի ընկնող գործիչներից է, գրել է «Եկեղեցական պատմություն» վերնագրով աշխատություն, որը հայերեն է թարգմանվել հինգերորդ դարում։ Հրատարակվել է 1875 թ. Վենետիկում՝

«Պատմութիւն եկեղեցւոյ» խորագրով: Քրեստոմատիայում բերված հատվածը տրվում է ըստ այս հրատարակության (թարգմանությունը՝ Ա. Գ. Աբրահամյանի):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք IX

Գլ. 8. Բռնակալ Մաքսիմինոս Դայան[1] պատերազմ հայտարարեց արմեններին, այն մարդկանց, որոնք ի սկզբանե բարեկամ և նիղակակից էին Հռոմեացիներին: Եվ որովհետև նրանք քրիստոնյա էին և ջերմեռանդ պաշտում էին աստծուն, ուստի աստվածատյացը ջանաց նրանց բռնությամբ ստիպել, որ դառնան կուռքերի և դևերի պաշտամունքին: Դրանով նա բարեկամին ատելի դարձրեց, դաշնակցին՝ թշնամի... Արդ՝ նա հենց ինքն իր բանակի հետ, արմենների դեմ պատերազմելիս, ջախջախվեց[2]:

1. Հռոմեական կայսր Մաքսիմինոս Դայան գահակալել է 305—313 թվականներին:

2. Եվսեբեոս Կեսարացու այս տեղեկությունից հետևում է, որ քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնապես ավելի վաղ է ընդունվել, քան Հռոմում:

ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

ՄԻՋՆԵՈԴԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍԲՈՒՄԸ ԽՈՍՐՈՎ III–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դար. III, գլ. Գ. Սրանից հետո թագավորեց Խոսրով Կոտակը[1] (Մեծ) Խոսրովի թոռը, քաջ և հզոր Տրդատ թագավորի որդին: Սրա օրոք հայրական աթոռը նստեց և իր հոր ու եղբոր փոխարեն քահանայապետեց Վրթանեսը՝ Գրիգորի ավագ որդին: Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղությունը և շենությունը, մարդաշատությունը և առողջությունը, պտղաբերությունը, առատությունը և գործի հաջողությունը, աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարքը: Սուրբ Վրթանեսը իր հոր և եղբոր նման նրանց լուսավորում էր ու առաջնորդում: Այն դարում ծաղկած էին իրավունքն ու արդարությունը:

III, գլ. Դ. Այն ժամանակները մեծ խռովություն ծագեց Հայոց աշխարհում, որովհետև երկու մեծ նախարարներ ու իշխաններ, դավանների ու աշխարհների տերեր, իրար հետ թշնամացան, մեծ ոխակալությամբ կռիվ բորբոքեցին և միմյանց հետ պատերազմում էին առանց իրավունքի ու պղտորում էին Հայոց մեծ աշխարհը. մեկը Մանավազյան տոհմի իշխանն էր, իսկ մյուսը՝ Որդոմյաց տոհմի նահապետը: Սրանք մեծ պատերազմով կռվեցին, և շատ մարդիկ կոտորվեցին ու ոչնչացան: Ապա Խոսրով թագավորը և Վրթանես մեծ եպիսկոպոսապետը Աղբիանոս պատվական մեծ եպիսկոպոսին ուղարկեցին նրանց մոտ, որպեսզի հորդորելով հաշտեցնի և խաղաղություն հաստատի: Եվ երանելի Աղբիանոսը գնաց նրանց մոտ, որ համոզի, իրար հետ հաշտեցնի: (Բայց)

նրան անարգեցին, նրա բարեխոսությունը չլսեցին, ուղարկողներին արհամարհեցին, եպիսկոպոսին մեծ անարգանքով ետ դարձրին և արքունական տունն առան ու ավերեցին, և խիստ զայրացած, ճապճեպ կերպով պատերազմում էին միմյանց դեմ: Ապա թագավորը, սաստիկ զայրանալով, նրանց վրա ուղարկեց Արտավազդի որդի Վաչեին՝ Մամիկոնյան տոհմի նահապետին, Հայոց սպարապետության տոհմից, իր զորքերի մեծ զորավարին՝ այդ երկու տոհմը ոչնչացնելու, վերացնելու: Ապա Վաչե զորավարը գնաց նրանց վրա. երկու տոհմն էլ ջարդեց, ոչնչացրեց, երկու տոհմերից էլ ոչ մի արու զավակ չթողեց, ինքը վերադարձավ Հայոց Խոսրով թագավորի և Վրթանես քահանայապետի մոտ: Եվ (թագավորը) Աղբիանոս եպիսկոպոսին տվեց Հօգոստ եղեկեցու Մանավազյանների ավանը ու նրանց նահապետի բուն աթոռանիստ գյուղը, (այսինքն) Մանավազակերտը յուր բոլոր սահմաններով և նրա շուրջն եղած գավառակով՝ Եփրատ գետի կողմերում: Իսկ Որդունիների Որդորու անունով բուն գյուղը, յուր բոլոր սահմաններով, որ գտնըվում է Բասենի երկրում, տվին Բասենի եպիսկոպոսին, որ Որդորու գյուղից էր:

1. Խոսրով Կոտակը Տրդատի որդին է, նրան հաջորդողը, գահակալել է 330—338 թվականներին:

ՓԱՎՍՏՈՍԸ ՄԱՍՔՈՒԹՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ III, պլ. է. Այն ժամանակ Մասքութների՝ Սանեսան թագավորը, սաստիկ բարկանալով Բշնացամաճ իր ազգակից Հայոց Խոսրով թագավորի հետ և հավաքեց, գումարեց բոլոր զորքերը— հոներ, փոխներ, թավասպարներ, հեծեմատակներ, իժմախներ, դաքեր, գղվարներ, գուգարներ, շղբեր, ճղբեր, բաղասիճներ, եգերսվաններ և այլ խառնիճաղանջ, թափառական վաչկատուն ցեղերի անթիվ բազմություն, որոնց առհասարակ ինքն էր իշխում: Եկավ, անցավ իր սահմանը, մեծ Կուր գետը, սփռվեց ու լցրեց Հայոց աշխարհը: Թիվ չկար նրա հեծյալ գնդերի բազմությանը և ոչ հաշիվ՝ տապարավոր հետևակ զորքին, որովհետև իրենք էլ չէին կարողանում իրենց զորքը հաշվել: Բայց երբ մի նշանավոր հրևելի տեղ

էին հասնում և հանդես էին կազմում ըստ գնդերի, դրոշակների և վաշտերի, հրամայում էին, որ ամեն մի մարդ մի ձեռքի քար բերի, մի տեղ ածեն, կույտ կազմեն, որպեսզի ինչքան որ լինի՝ նրանով էլ հասկացվի բազմության չափը, և ապագայի համար մնա անցած օրերի այս ահավոր նշանը: Եվ որտեղից որ անցնում էին, այսպիսի նշաններ էին թողնում ճանապարհների խաչվող տեղերում, պողպատների վրա: Նրանք եկան, լցվեցին, Հայոց ամբողջ երկիրը ծածկեցին. քանդեցին, գերեցին ամբողջովին ավերեցին, երկրի բոլոր սահմաններում ծավալվեցին մինչև Սատաղ փոքրիկ քաղաքը, մինչև Գանձակ՝ Ատրպատականի սահմաններում: Շարժվեցին, մի սահմանված տեղ հավաքվեցին Այրարատյան գավառում, որտեղ մեծ բանակ դոյացավ:

Եվ Հայոց Խոսրով թագավորը խուսք տվեց իր եղբորից, այսինքն՝ Մասքութների Սանեսան թագավորից, և գնաց Կովկի երկիրը, ընկավ ամուր Դարեոնք բերդը: Նրա հետ էր նաև Հայոց ծերունի եպիսկոպոսապետ Վրթանեսը:

Ապա եկավ հասավ Մեծ Հայքի զորավար Վաչեն՝ Արտավազդի որդին, Մամիկոնյան տոհմից, որ այդ ժամանակ երկար ճանապարհորդություն էր կատարել Հունաց կողմերում: Նա հավաքեց նախարարներից քաջերին, խիստ բազմամարդ գունդ կազմեց և հարձակվեց (Սանեսանի) բանակի վրա լուսադեմին պաշտամունքային արարողության ժամանակ: Նրանք բանակ էին դրել Ցլու գլուխ կոչված լեռան վրա: (Վաչեն) նրանց բոլորին սրի քաշեց, ոչ մեկին կենդանի չթողեց և գերիների ողջ բազմությունը ետ դարձրեց: Հետո հավաքեց ավարը և գնաց իջավ Այրարատյան գավառի դաշտը: Այնտեղ նա Վաղարշապատ քաղաքում գտավ Մասքութների Սանեսան թագավորին բուն գնդի հետ, որ անհամար բազմություն էր կազմում: Վաչեն զորքը վերցնելով՝ հանկարծակի հարձակվեց քաղաքի վրա, և տերը նրանց նրա ձեռքը մատնեց:

Երբ Բշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա, քաղաքից դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական բերդի կողմը՝ ապավինելով այն անապատին ու քարքարոտ տեղերին: Սաստիկ մեծ պատերազմ եղավ: Եվ Հայոց զորավարի նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհրանդակ և Դարեցին Իրշտունիները, Ամատունյաց տոհմի նախարար Վահանը, Վարազ Կամինականը, Տասան, խփեցին, կոտորեցին ալանների, մասքութ-

ների, հոների ու մյուս ազգերի զորքերը և ամբողջ առապարի դաշտը առհասարակ լցրին մեռածների դիակներով, այնպես որ արյունը գետի նման առատ հոսեց, և թիվ չկար սպանված զորքերին։ Սակավաթիվ մնացորդներին էլ առաջները գցած հալածում էին մինչև բազասիճների աշխարհը։ Սանեսան մեծ թագավորի գլուխն էլ բերեցին Հայոց թագավորի մոտ։ Իսկ նա երբ տեսավ, սկսեց լալ ու ասաց. «Իմ եղբայրն էր, Արշակունի ցեղից»։ Այնուհետև թագավորը Հայոց մեծ եպիսկոպոսապետի հետ եկավ ճակատամարտի տեղը։ Տեսան սպանված զորքերի կուտակածը. մեռածների հոտից երկիրը լցվել էր գարշահոտությամբ։ Հրաման տվին՝ երկրից գուգազ[2] հանել, դիակները թաղել, քարակույտերով ծածկելով, որ երկիրը մեռելների դիակների գարշահոտությունից ու թարախից չապականվի։

Երկիրը խաղաղվեց բավական տարիներ։ Այսպես տուրը Գրիգորիսի վրեժը լուծվեց Սանեսան թագավորից և նրա բանակից, որովհետև նրանցից ոչ մեկը չմնաց։

III, գլ. Ը. Երբ Հայոց երկիրն առժամանակ խաղաղվեց, ապա Հայոց Խոսրով թագավորը հրամայեց պարգևներ տալ այն քաջ մարդկանց, որոնք իր համար չարչարվեցին և պատերազմների ճակատամարտերում իրենց անձը դրին Մեծ Հայքի աշխարհի համար։ Նա վաչե զորավարին տվեց Ջանջանակի ակունքները, Ջրաբաշխքը և Ցլու գլուխը բոլոր գավառներով, նույնպես և մեծամեծ պարգևներ՝ մյուս նախարարներին։

1. Մասքութները սկյութական ցեղեր էին, որոնք, ըստ Շիրակացու «Աշխարհացույց»-ի, ապրել են Կասպից ծովի ափին՝ Դերբենդից հյուսիս ընկած տարածքում։

2. Գուգազ հանել՝ նշանակում է պարտադիր կարգով մարդիկ հավաքագրել ֆիզիկական աշխատանքների համար։

ՄԱՍՔՈՒԹՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. Ի. Սրա ժամանակ հյուսիսային Կովկասի բնակիչները միաբանվելով, իմանալով նրա (Խոսրովի) թուլասրտությունն ու ծուլությունը, մանավանդ հրապուրվելով Սանատրուկի թելադրությունից, պարսից Շապուհ թագավորի գաղտնի հրամանով արշավեցին ու հասան մեր երկրի կենտրոնական վայրերը մեծ բազմությամբ՝ մոտ երկու բյուր մարդով։ Պատերազմով նրանց դեմ դուրս եկան Հայոց արևելյան և արևմտյան զորքերն իրենց զորապետներով, այսինքն՝ Բագարատ ասպետով և Ամատունյաց Վահան նահապետով։ Որովհետև մեր հարավային գնդերը Խոսրովի մոտ էին Մուշից աշխարհում, իսկ Միհրանին սպանել ու մեր հյուսիսային գունդը ջարդել ու փախցրել էին Բշնամիները և հասցրել էին մինչև Վաղարշապատ ու պաշարել։ Նրանց վրա հանկարծակի հարձակվեցին մեր արևելյան և արևմտյան զորքերն և ետ վանեցին դեպի Օշականի առապարը և թույլ չտվին, որ նրանք ցրիվ գալով նետաձգություն կատարեն ըստ իրենց սովորության, այլ քաջաձի հեծյալները նրանց շտապ-շտապ ու արագապես հետամուտ լինելով, մղեցին քարքարոտ դժվար տեղերը, այնպես որ Բշնամիները ակամայից ստիպվեցին ճակատամարտ տալ։

Նրանց նիզակավորների զորագլուխն էր մի վիթխարի հսկա՝ սպառազինված և ամբողջ մարմինը ծածկված խիտ թաղիքով. այսպես նա արշավում էր զորքի մեջ։ Հայոց քաջերն աչքները դեպի նա պահելով՝ հարձակվում էին վրան, բայց չէին կարողանում վնասել, որովհետև երբ նիզակով խփում էին, թաղիքակիրը շրջվում էր։ Այս ժամանակ քաջ Վահան Ամատունին... ձիու դավակից խփելով՝ գետին գլորեց ահագին հսկային։ Այս դեպքը առիթ դարձավ Բշնամիների փախուստին և հայոց զորքին զորացրեց հաղթանակ տանելու։

Այստեղից Մուշից աշխարհը դառնալիս՝ Բագարատն առանց նախանձի հաստատապես վկայում է թագավորին Վահանի քաջագործություններն և այս հերոսական դիպվածի մասին։ Ուստի թագավորը նրան է պարգևում ճակատամարտի տեղը՝ Օշականը, որտեղ Վահանն ինքնակամ դեմ ելավ ու մենամարտեց։ Իսկ Միհրանի փոխարեն զորքի վրա նշանակում է Գարջույլ Մաղխազին՝ Խորխոռունիների նահապետին։

ՓԱՎՍՏՈՍԸ ԽՈՍՐՈՎԱԿԵՐՏ ԱՆՏԱՌԸ ՏՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ. III, պլ. Ը. Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ երկրից բազմաթիվ մշակներ հանել, անտառներից վայրի կաղնի բերել ու տնկել Այրարատյան գավառում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչ Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում։ Եվ այսպես անտառ տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնոնի ապարանքը։ Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի։ Մի ուրիշ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, Եղնդնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով, որա անունն էլ դրին Խոսրովակերտ[1]։ Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ։ Երկու անտառներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար։ Անտառն աճեց ու բարձրացավ։ Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ որսի կենդանիներ ու գազաններ հավաքել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի և ուրախության տեղեր դառնան։ Վաչե զորավարը անմիջապես կատարեց թագավորի ասածները։

1. Խոսրովի անտառը՝ Հայաստանում արհեստական տնկած հնագույնն է և պահպանվել է առ այսօր։

ՓԱՎՍՏՈՍԸ ՏԻՐԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ. III, պլ. ԺԱ. Սրանից հետո դարձյալ խիստ պատերազմ տեղի ունեցավ պարսիկների և հայերի միջև, որովհետև (պարսիկները) մեծ բազմությամբ հավաքվեցին, եկան Հայոց աշխարհն առնելու։ Ասպա Մեծ Հայքի սպարապետ և զորավար Վաչեն հավաքեց նախարարական զորքերի ազատների բանակը և դուրս եկավ

Պարսից զորքերի հետ պատերազմելու։ Երկու կողմից էլ անասելի կոտորած էր լինում, և շատ մեծամեծ ավագանիներ կոտորվում, չնչանում էին։ Այս պատերազմում ընկավ նաև Վաչեն՝ Հայոց մեծ սպարապետը. և ամբողջ աշխարհը մեծ ազի մեջ ընկավ, որովհետև տերը շատ անգամ նրա ձեռքով փրկություն էր շնորհել հայերին։ Ասպա Վրթանես եպիսկոպոսապետը հավաքում մխիթարում էր բոլորին, իրեն՝ Խոսրով թագավորին, և բոլոր զորքերին, որոնք սրբլորին, իրեն՝ Խոսրով թագավորին, թախծալից հոգսերով, մեծ լացուտակեզ ողբով ու արտասուքով, թախծալից հոգսերով, մեծ լացուկոծով բռնված սգում էին՝ զնացածների տառապանքները մնացածներին համարելով։

Եվ Վրթանես մեծ քահանայապետը օրենք սահմանեց՝ երկրում տարեցտարի նրանց հիշատակը կատարել, ինչպես և նրանց, որոնք նույն կերպով երկրի փրկության համար կմեռնեին։ Կանոն դրեց՝ սրանց անունները հիշել սեծու սեղանի առաջ պատարագի ժամանակ՝ երբ սրբերի անունները հիշատակվեն, որոնցից հետո՝ սրանցը, իսկ ընկածների հարազատներին հոգ և խնամք տանեին։ Որովհետև, ասում էր, սրանք պատերազմի ճակատամարտում ընկան Հուդա և Մատաթիա Մակաբեների ու նրանց եղբայրների նմանությամբ։

Սրանից հետո մեռավ քաջարանց աշխարհաշեն Խոսրովը՝ Մեծ Հայքի թագավորը։ Ամբողջ Մեծ Հայքի աշխարհներից ու գավառներից հավաքվեցին, սուգ արին, լացին ու տարան իր նախնիների մոտ, Անի, Դարանաղիի նկևղյաց գավառը։ Նրանից հետո մեռավ նաև Վրթանեսը՝ մեծ քահանայապետը։ Ամբողջ Հայոց աշխարհը հավաքվեց և մեծ արարողությամբ, սաղմոսներով ու հոգևոր երգերով, կանթեղներով, մոմերով, անուշահոտ խնկով՝ արքունական կառքերով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով՝ որ որբ մնացին իրենց բնիկ տիրոջից և հոգևոր վարդապետից. և մեծ լացով ու կոծով և տրտմությամբ հուղարկավորեցին Դարանաղյաց գավառի Բորդան գյուղը ու Գրիգոր մեծ հայրապետի մոտ նրա մարմինը ամփոփեցին և նրա կենդանի մշտակատար հիշատակը կատարելով՝ ետ դարձան։

III, պլ. ԺԲ. Երբ Խոսրով թագավորը մեռավ, Մեծ Հայք աշխարհի թագավորական իշխանությունն ստանձնեց Խոսրովի որդին՝ Տիրանը[1]։ Նույնպես և մանուկ սուրբ Հուսիկը հաջորդեց ու գրավեց Հայոց հայրապետների տեղը։ Տիրան թագավորը, սովո-

թության համաձայն, նրա հետ գումարեց մեծ նախարարներին՝ Վաղարշ մեծ հազարապետին, որ Մեծ Հայքի հազարապետության տոհմից էր ու Անձիտի իշխանն էր, և նրա հետ Մեծ Ծոփքի Զարեհ իշխանին և (մյուս) Ծոփաց աշխարհի Վարազ Շահունի իշխանին ու Հաշտենից գավառի Գնիթ իշխանին Կամինական տոհմից և Վանանդի գավառի իշխան Որոթին և Անձևացյաց տոհմի իշխան Շահենին և Գողթնի իշխան Ատամին և Կողբացոց իշխան Մանավազին և Զորի աշխարհի իշխան Գորութին և Խորխոռունյաց տոհմից մախազության տան իշխան Մանասպին և Սահառունյաց տոհմի իշխան Տիրոցին և Գնունյաց իշխան Աբային:

1. Տիրանը ծնվել է Կոտակի որդին է, գահակալել է 338—350 թվականներին:

ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՏԻՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ. III, գլ. Ի. Բայց դեռ բարեկամություն էր տիրում երկու թագավորների՝ Հայոց և Պարսից միջև: Այս ժամանակ Ատրպատականում նստում էր մի բարձր պաշտոնյա, որի անունն էր Շապուհ-Վարազ: Արդ՝ մինչ կատարյալ խաղաղություն էր տիրում երկու թագավորների միջև, տիրոջ կամքով՝ մի չնչին բանի պատճառով խռովություն ծագեց մի անարգ մարդու ձեռքով, որ մոլորությամբ դևից պակաս չէր, անունը Փիսակ, որը Տիրան թագավորի ասեղնակապանն էր՝ Սյունյաց տոհմից: Սա պատվիրակ էր գնացել Վարազ-Շապուհի մոտ, որին Պարսից թագավորը սահմանապահ էր թողել Ատրպատականում:

Այն ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում էին: Այդ ձին մուգ շագանակագույն և պուտպուտիկ էր, ուժով լի, հոյակապ, հոչակված, բոլոր ձիերից մեծ և բարձր, տեսքով բոլորից գեղեցիկ ու սիրուն, որի նման ուրիշը չկար: Փիսակը՝ թագավորի ասեղնակապանը, պատվիրակ գնալիս այս ձին մատնեց Վարազին, որի հետ բարեկամացել էր, և նրանից թուղթ առնելով՝ բերեց մատուցեց Հայոց թագավորին: Դրան համաձայն չլինելով՝ թագավորը չկամեցավ (ձին) տալ: Բայց որովհետև այն մարդուց կասկածում էր, միգուցե երկու թագավորների միջև խռովություն առաջացնի, որոնեց և գտավ այն գույնի մի ձի՝

նույն նշանով, նույն տեսքով, բացի մեծությունից,— որովհետև այնպիսի մեծությամբ ուրիշ տեղ չկար,— նույն տեսակ պուտպուտիկ, մուգ շագանակագույն, և հրովարտակով ու ընծաներով Ատրպատականի իշխանին՝ Վարազին ուղարկեց նույն մոլի Փիսակի ձեռքով: Նրան խրատում ու խորհուրդ էր տալիս, թե՝ «Ասա՛, այս այն ձին է, որ խնդրեցիր. քո սիրո համար քեզ չխնայեց»: Իսկ նա երբ Վարազի մոտ հասավ, խնայելու գաղտնիքը բացեց և ջանաց գրգռել՝ չկամենալով ազատվել իր նենգախոսությունից. նա ավելի սրեց իր չարախոսությունը, ասելով. «Հայոց Տիրան թագավորն այնքան լցված է նախանձով, չկամությամբ, թշնամությամբ ևատելությամբ, այնքան անհավատարիմ և աներկյուղ է Պարսից թագավորի և Պարսից բոլոր զորքերի նկատմամբ, որ մինչև իսկ մի կաշի խնայեց ու թաքցրեց և, քեզ խաբելով ու ծաղրելով, մի ուրիշ ձի քեզ ուղարկեց իմ ձեռքով: Եվ միայն այս չէ,— ասում էր նա,— նա հույս է դրել կայսեր ու նրա զորքի վրա, մտադրվել է Սասանի ցեղից խլել Պարսից թագավորությունը, որովհետև, ասում է, այդ տերությունը մերն է եղել և մեր հայրերինը. ես, ասում է, չեմ հանգստանա, մինչև մեր նախնի հայրերի պատիվը ետ չդառնա, մինչև նախնի թագավորությունը նորից չդարձնեմ հայրենի զավակներին, այսինքն իմ տոհմին, իմ տանը և ինձ»: Այս և այսպիսի խոսքերով անօրեն Փիսակը գրգռում էր Վարազին իր բնիկ տիրոջ դեմ, իր թագավորի համար մահ էր նյութում:

Երբ Վարազ-Շապուհը՝ Ատրպատականի մարզպանը, այս բոլորը լսեց կատաղախոս, շնաբերան Փիսակից, անմիջապես ամբաստանության թուղթ գրեց Հայոց թագավորի մասին և ուղարկեց Պարսից Ներսեհ թագավորին: Եվ այն աստիճան Պարսից թագավորին գրգռեց, գայրացրեց, գրդեց, չարացրեց, բարկացրեց Հայոց թագավորի դեմ, որ նրանից հրաման ստացավ, թե արդյոք հնար կա՞ որևէ միջոց որոնել ու գտնել Հայոց թագավորին մեքենայությամբ գայթակղելու, որսալու և բռնելու:

Այն ժամանակ Վարազը պատվիրակ ուղարկեց Հայոց թագավորի մոտ՝ հաշտության և խաղաղության պատրվակով խոսելու նրա հետ: Նա սերն ու կարոտը պատճառ բերելով՝ թույլտվություն էր խնդրում նրան այցելության գալու: Երբ Հայոց Տիրան թագավորն այս լսեց, փութով, մեծ ուրախությամբ հրամայեց հրավիրել նրան: Դեռ նա չեկած՝ թագավորը իր սենյակի ներքին սպասա-

վրաններին հետ խորհուրդ էր անում։ Նա ասում էր. «Մեզ մոտ եկող հյուրին հարկավոր է զվարճացնել և ուրախացնել որսերով, կերուխոմով ու ամեն տեսակ վայելչություններով։ Բայց պետք չէ, որ նա այստեղ մեր երկրում առատ որսի տեղեր տեսնի, որովհետև Պարսից ազգը շարասիրտ, նախանձոտ, չարաբարո, նենգ է. այլ պետք է գտնել որսով ոչ հարուստ տեղեր, որով նրան զվարճացնենք, բայց առատ որս չանենք, որսի մեծ կուտորածներ չանենք ցույցի համար. միայն ձևի համար անենք՝ պարսիկների դառնության և չարության պատճառով։ Ապահունյաց երկրում Մեծ Մասիսի ստորոտում որս անենք, այնտեղ, որի անունը կոչվում է Աղիորսք քաղաք»։

Շապուհ-Վարազը եկավ հասավ երեք հազար մարդով, ներկայացավ թագավորին Ապահունյաց երկրում և մեծ պատվով նրանից մեծարվեց։ Իսկ այն խոսքերը, որ թագավորը որսի մասին ասաց, անմիջապես Պարսից զորավարի ականջին հասան այն քսու և բանսարկու, այն տիրանենդ ու տիրադրուժ, տիրասպան ու տիրամատնիչ Փխաակի, այն աշխարհավեր մարդու բերանով։

Սակավ օրեր նրանք միասին ուրախություն էին անում, բայց Պարսից իշխանը իր մեջ ունեցած թշնամությունը խորամանկությամբ ծածուկ էր պահում և հարմար առիթի էր սպասում, որ դավը գլուխ բերի։

Դեպքն այնպես բերեց, որ այդ ժամանակները զորավարներն այնտեղ չէին, այլ խռովել հեռացել էին, այսպես էլ մյուս ազատանին, մեծամեծ նախարարներն ու ավագ տանուտերերը. նույնպես էլ արքունական զորքերը իրենց տներում, իրենց կացարաններում հանգստանում էին։ Թագավորի մոտ ուրիշ մարդ չէր մնացել, ո՛չ հետևազոր և ո՛չ այրուձի, բայց միայն սակավաթիվ սպասավորներ, որսորդական շների պահապաններ, ճանապարհների մշակներ, վրանապահ, խառնիճաղանջ դինվորներ և աշխարհազոր։ Այնտեղ էին նաև տիկինը և արքայորդին՝ մանկահասակ Արշակը։ Այսպես, քիչ մարդիկ կային այնտեղ այդ ժամանակ. որովհետև թեպետ տանում էր, որ Պարսից զորավարը ուժեղ գունդով է եկել,— որովհետև երեք հազար լավ սպառազինված մարդիկ կային նրա հետ,— բայց չէր զգուշանում ու կասկածում, քանի որ տեսնում էր, թե նա խաղաղության համար է եկել մեծ նվերներով, ընծաներով և շքեղ մեծարանքներով։

Ոչ շատ օրեր անցնելուց հետո թագավորին ընթրիքի հրավիրեցին՝ նրան պատվելու համար։ Երբ խմելն սկսեցին, թագավորը և նրա հետ եղողները սաստիկ հարբեցին, և այս ժամանակ դահճական զորքը անսպասելի կերպով, հանկարծակի հարձակվելով սեղանակիցների վրա՝ յուրաքանչյուրին առանձին բռնեցին, իսկ վահանավորներն ու տապարավորները Տիրան թագավորին շրջապատեցին։ Բռնելով, նրա ոտքերն ու ձեռքերը կապեցին երկաթե շղթաներով. ամբողջ բանակը, ինչ որ գտան, ավար առան։ Թագավորի գանձերը, գույքը, կինը, որդիները, ինչ որ բանակում գտան, Ապահունյաց երկրից տարան։

Եկան հասան մի գյուղ, որին ասում էին Դալարիք։ Երբ Պարսից զորավարը եկավ Դալարիք գյուղը մտավ, իր հետ տանում էր կապված Տիրան թագավորին։ Եվ Վարազն ասաց. «Ապա ածուխ գտեք, որով երկաթ շիկացնենք, որ Հայոց այս թագավորի աչքերը դաղենք»։ Իսկույն ածուխ բերին և Տիրանի աչքերը դաղեցին։

III, գլ. ԻԱ. Այն ժամանակ Հայոց ավագանին մեծ նախարարքներից (բաղկացած պատգամավորություն) ուղարկեց Հունաց թագավորի մոտ նվերներով (առաջարկելով), որ նրան ձեռք մեկնեն և հնազանդությամբ նրան ծառայեն. իսկ նա իրենց թիկունք լինի և օգնի վրեժխնդիր լինելու թշնամիներից։ Ուղարկեցին Սյունյաց Անդովկ նահապետին և Արշարունյաց Նահապետ Արշավիր Կամսարականին։ Սրանք գնացին հասան Հունաց աշխարհը, կայսերական պալատը, հանձնեցին հրովարտակը, բերած նվերները առաջ բերին և թագավորին ներկայացրին ամբողջ ժողովրդի խնդրանքը։ Կայսրը բոլոր հանգամանքները լսելով՝ մեծ փութով ու պատրաստությամբ ձեռնարկեց գործին վերահասու լինելու և թիկունք ու օգնական լինելու Հայոց աշխարհին, մանավանդ որ հիշում էր այն դաշինքը՝ երդումով կնքված ու հաստատված Կոստանդիանոս կայսեր և Տրդատ թագավորի միջև։

Եվ մինչ պեսպանները, որոնք Հայոց աշխարհից կայսերական պալատն էին գնացել, դեռ չէին դարձել իրենց աշխարհը, արեվելքի կողմից ինքը՝ Պարսից Ներսեհ թագավորը, շարժվեց ու եկավ, որ Հայոց աշխարհը գրավի, այրի, ավերի, ամբողջապես փշացնի և ամբողջ սահմաններով իր երկրին կցի։ Նա եկավ իր բոլոր զորքով, բոլոր աղխով, մեծ կարավանով, բազմաթիվ փղե-

յով, անչափ մթերքներով, բոլոր կանանցով և տիկնանց տիկինով. եկավ մտավ Հայաստանի սահմանները, ամբողջ աշխարհը բռնեց։ Այս ժամանակ Հայոց նախարարների աղնվական զորքերն իրենց ընտանիքներն առնելով փախչում էին Հոնաց կողմերը, գուժում էին (այս լուրը) կայսերական բազմագունդ բանակի նախարարներին։ Հոնաց թագավորը երբ այս բոլորը լսեց, ապա ինքն էլ իր զորքը գումարեց և շարժվեց, եկավ Հայոց աշխարհը՝ Պարսից թագավորի դեմ։

Նա բանակը թողնց Սատաղ[1] քաղաքի մոտերը. ինքն ընտրեց Հայկական բանակից երկու զլխավոր խելոք մարդ, այսինքն Արշավիրին և Անդովկին, որոնք իբրև պատվիրակներ նրա մոտ էին գնացել առաջ։ Նրանց հետ միասին ինքը՝ կայսրը, շինականի կերպարանքով, իբրև կաղամբավաճառ մտավ Պարսից բանակը, որ այդ ժամանակ գտնվում էր Բասյան գավառում, Ոսխա կոչված գյուղում։ Նրանք մտան Պարսից թագավորի բանակը, դիտեցին, քննեցին, նրանց զորքերի զորության չափն առան և այստեղից դարձան իրենց բանակը։ Կազմակերպվեցին, պատրաստվեցին, վրա հարձակվեցին և գտան Պարսից բանակը նույն տեղում բանակած՝ մեղկ, անհոգ, միամիտ, աներկյուղ խաղաղությամբ։ Ցերեկով նրանք հարձակվեցին Պարսից թագավորի վրա, ամբողջ բանակը սրի քաշեցին, ոչ մեկին կենդանի չթողին։ Բանակը կողոպտեցին, ավար առան, բռնեցին թագավորի կանանց ու Բամբիշին (տիկնանց տիկին) և նրանց հետ տիկիններին, նրանց բոլոր դույլն ու ստացվածքները, գանձերը, պաշարեղենը, սարքը կանանց հետ միասին գերի վերցրին։ Միայն թագավորը հազիվհազ պրծնելով, մի առաջընթաց ձիավոր տուրհանդակով փախավ, հազիվ կարողացավ իր աշխարհն ընկնել։ Իսկ կայսրը մեծ շքեղությամբ պերճացած երևաց բանակում. բոլոր չափահասներին կոտորեցին, իսկ մնացածներին գերի տարան Հոնաց երկիրը։ Իսկ (Հայոց) աշխարհի վրա վերակացու թողեց երկու իշխաններին՝ Անդովկին և Արշավիրին, որոնց մեծ պարգևներով մեծարեց. և նրանց հանձնելով բոլոր իշխաններին ու երկիրը՝ ինքը վերադարձավ Հոնաստան՝ իր երկիրը։

Այն ժամանակ Հոնաց Վաղես թագավորը[2] հրովարտակ գրեց Պարսից թագավորին. «Նախ դու,— ասում է,— ետ դարձրու Հայոց աշխարհից տարածդ գերիները, Տիրան թագավորով հանդերձ,

և առհասարակ ինչ որ այնտեղից առել ես. երբ դու այս անես, ապա ես էլ ետ կդարձնեմ՝ ինչ որ առել եմ. ուրեմն առաջ դու նրանցից առածդ ավարը վերադարձրու, ապա ես քոնը կվերադարձնեմ»։

Պարսից թագավորը երբ այս հրամանը լսեց, իսկույն նրա սածները կատարեց. կապված Տիրանին բանտից ու կապանքներից արձակեց. քաղցրությամբ խոսեց հետը, թե նրան կրկին կթագավորեցնի և պատվով իր աշխարհը կուղարկի։ Իսկ Տիրանը պատասխանեց, թե «Ինձ կույր տեղովս, անօգուտ, անպատշաճ, նույնիսկ անկարելի է թագավորությունն անել. իմ փոխարեն թագավորեցրու իմ որդուն՝ Արշակին»։

Այն ժամանակ (Պարսից թագավորը) նրա Արշակ որդուն թագավորեցնում է Հայոց աշխարհի վրա և թագավորի կանանց ու մյուս բոլոր գերիներին, գանձերով, ընծաներով, ստացվածքներով հանդերձ, առհասարակ գերությունից ետ է դարձնում. իրեն՝ Տիրան թագավորին էլ Պարսից թագավորը մեծ պատրաստությամբ ու պատվով իր երկրից ուղարկեց Հայոց աշխարհը։ Այսպես նա հավատարմությամբ կատարեց Հոնաց թագավորի հրամայածները։

1. Սատաղ— Փոքր Հայքի քաղաքներից է, գտնվել է Բաբերդից ոչ հեռու (տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, էջ 62)։

2. Վաղեսը Վալենտինիանոս I-ի եղբայրն է, որին նա հանձնել էր կայսրության արևելյան երկրների կառավարումը։ Վաղեսը գահակալել է 364—378 թվականներին։

ԱՐՇԱԿ II-Ի ՋԱՆՔԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. IV, գլ. Ա. Երբ հաշտությունը կայացավ, և կատարյալ խաղաղություն հաստատվեց Հոնաց թագավորի ու Պարսից Ներսեհ թագավորի միջև, ապա սիրով համաձայնվեցին մեկը մյուսի կամքը կատարել, և Հոնաց կայսրը ետ դարձրեց Պարսից թագավորի գերիներին։ Ապա Պարսից Ներսեհ թագավորն էլ թագավորեցրեց Տիրանի Արշակ որդուն և նրա հոր, նրանց կանանց և բոլոր գերիների հետ, նրանց ամբողջ գանձերով ու ստացվածքներով

ուղարկեց մեծ փառքով։ Արշակը՝ Մեծ Հայքի թագավորը, Ասորեստանում թագավոր դառնալով (այնտեղից)՝ իր հոր և բոլոր ընտանիքների հետ միասին եկավ հասավ Հայոց աշխարհը, երկրի ցրվածներին հավաքեց ու նրանց վրա թագավորեց[1]։

Այն ժամանակ մեծ խաղաղություն հաստատվեց։ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ, որոնք կորել էին, փախել ու թաք էին կացել, հավաքվեցին և ապահով ու խաղաղ ապրեցին Արշակ թագավորի հովանավորության տակ։ Աշխարհն էլ երկու թագավորների միջև խաղաղվեց, բարեկարգվեց, կազմակերպվեց, և այնուհետև (մարդիկ) բնակվում էին խաղաղությամբ, յուրաքանչյուրը վայելում էր իր ունեցվածքն ու արդյունքը։

IV, գլ. Բ. Այն ժամանակ Արշակ թագավորը դուրս եկավ փրկտրելու քաջ Մամիկոնյան զորավարների տոհմը, մանավանդ որ նրբանք իր դայակներն ու մանուկներն էին եղել։ Գնաց, նրանց զրտավ Տայքի ամուր վայրերում, իրենց աշխարհում. նրանց սիրտն առավ ու հաշտեցրեց, որովհետև նրանք Տիրանի խելագար գործերի ժամանակից ի վեր պատասխանել, անջատվել էին Հայոց միաբանությունից և բոլոր գործերից։ Թագավորը վարդանին՝ ավագ եղբորը, նշանակեց նրանց տեղի նահապետ, միջին եղբորը՝ Վասակին, իր դայակին, նշանակեց սպարապետ և զորավար պատերազմական գործերում, նույնպես և կրտսերին նշանակեց զորապետ։ Նույնպես և մյուս մեծամեծ նահապետների զորքերն ըստ իրենց աստիճանների հաստատեց՝ ինչպես որ նախկին թագավորների ժամանակ եղել էր։ Մեծամեծներին էլ հնազանդության էր բերում, բոլորի զորքերը կողմերի վրա բաշխելով՝ Հայաստանի սահմանների վրա սահմանապահ էր նշանակում։

Եվ Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ, ինչպես առաջ. մեծամեծներն իրենց պահերում, գործակալներն իրենց աստիճաններում։ Եվ առաջին գործակալ-հազարապետ նշանակեց շինականներին շենացնող Գնունյաց տեղը, որպեսզի իբրև ամբողջ երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհաշեն, աշխարհը կերակրող դյուղացիությանը։ Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում, ճակատ առ ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր ու ազնվազգի, աղավնակիր զրոշակներով, արծվի՝ վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախամարտիկ, քաջանուն,

բարենշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյանների ցեղից, բուն նախնյաց կարգերի համաձայն, որին երկինքը միշտ և հանապազ պարգևում էր հաղթության ու քաջության թարի անուն պատերազմական գործերում, և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր զորքերի վրա։ Այս ցեղերից զատ՝ խոնարհ աստիճանի գործակալներ, որոնք թագավորի ներկայությամբ բարձերի վրա բազմում էին, պատիվներ գլխներին,— չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերներին, լոկ միայն գործակալները՝ ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի հոտնկայս սպասավորության պաշտոնյաներից։

IV, գլ. Գ. Ապա Արշակ թագավորի մոտ ժողովի գումարվեցին նախարարական շատ ցեղերի ու տոհմերի մեծամեծ նահապետները, գնդերի ու զորշակների տերերը, բոլոր սատրապները, նախարարներն ու ազնվականները, պետերը, իշխանները, զորավարներն ու սահմանապահները։ Ընդհանուր համաձայնությամբ խորհուրդ արին, որ հավաքվեն ու մտածեն իրենց առաջնորդի մասին, թե ո՛վ է արժանավոր հայրապետական աթոռը նստելու և Քրիստոսի բանական հոտը հովվելու։ Բոլոր ժողովականների մեջ այս միտքն ընդհանուր հավանություն գտավ, որ առաջնորդ ընտրեն Գրիգորի տան հետնորդներից, նրա սերնդից։ Որովհետև բոլորն ասում էին թագավորին. «Ինչպես, որ աստված նորոգեց ձեր թագավորությունը, պետք է նույնպես նրա սերնդից նորոգել հոգևոր նահապետությունը. երբ այդ աթոռը նորոգվի,— ասում էին,— ապա և պայծառ վարքուբարքը կնորոգվի Հայոց աշխարհում»։

Ապա աշխարհաժողով բազմությունը հականէ հանվանե հիշեց Ներսեսին՝ Աթանագինեսի որդու՝ Հռոսիկ քահանայապետի թոռանը, Վրթանեսի որդու, որ առաջին մեծ քահանայապետ Գրիգորի որդին էր. նրա մոր անունն էր Բամբիշ, որ Տիրան թագավորի քույրն էր։ Սա մանկության հասակում աշխարհականի կյանք վարելով՝ ամուսնացած էր. փոքր հասակից ի վեր սնվել ու սովորել էր Գամիրքի Կեսարիա քաղաքում, վստահելի ուսուցիչների ձեռքի տակ և սիրելի էր դարձել իր դասընկերներին։ Իսկ այս ժամանակ նա զինվորական պաշտոնյա էր, Արշակ թագավորի սիրելի սենե-

կապետն էր, թագավորի կյանքի բոլոր կարգերին հավատարիմ ներքուստ և արտաքուստ։

IV, գլ. Դ. Այնուհետև գումարեցին մեծամեծ իշխաններին, որ ցանկալի Ներսեսին առնեն տանեն այնտեղ, որտեղ սովորաբար հայրապետներին օծում էին։ Նաև Հայոց եպիսկոպոսների բազմությունը հավաքվեց թագավորի մոտ նույն հարցի առիթով։ Բոլորը միաբան խորհուրդ անելով որոշեցին, որ նա նստի գլխավորի աթոռը։ Եվ բոլորի միաձայն հավանությամբ— եպիսկոպոսների և թագավորի և աշխարհականների բազմության պատվիրակները ճանապարհ ընկան ու գնացին. մարզպետության մեծ իշխան Հայրը, սպասպետության մեծ իշխան Բագարատը, Ծուփքի մեծ իշխան Դանիելը, Մեհենդակ Ռշտունին, Սյունյաց Անդովկ իշխանը, Շիրակի և Արշարունյաց իշխան Արշավիրը, մյուս Ծուփքի իշխան Նոյը, Ամատունյաց տան իշխան Պարգևը։ Սրանց բոլորին պատրաստեցին և ճանապարհ ձգեցին մեծամեծ նվերներով ու ընծաներով և հավաստի հրովարտակներով, որ գնան Գամիրքի երկիրը, Կեսարիա մայրաքաղաքը, կաթողիկոսների կաթողիկոս Եվսեբեոսի մոտ, որպեսզի այնտեղ սուրբ Ներսեսին ձեռնադրեն Մեծ Հայքի կաթողիկոս։

1. Արշակ II-ը՝ Տիրանի որդին, գահակալել է 350—368 թվականներին։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. Ի. Արշակի թագավորության երրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ եղավ Աթանագինեսի որդի Մեծ Ներսեսը[1]։ (Աթանագինեսը) Հուսիկի որդին էր, սա Վրթանեսի որդին, իսկ այս վերջինը էր սուրբ Գրիգորի որդին։ Բյուզանդիայից Կեսարիա վերադառնալով՝ նա եկավ Հայաստան և իր հայրերի բոլոր ուղիղ կարգերը նորոգեց, և ավելի ևս, որովհետև ինչ բարեկարգություններ, որ նա տեսավ Հունաց աշխարհում[2], մանավանդ թագավորանիստ քաղաքում, նույնը սահմանեց և մեր երկրում։ Նա եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմաններով հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արեց անօրենությունը, որ մեր երկրում ի բնե սովորական էր։ Որովհետև բորոտները հալածվում էին իբրև օրենքով պիղծ ճանաչված մարդիկ, ուրուկներին էլ փախուստի էին ենթարկում, որպեսզի ախտը նրանցից ուրիշների վրա չփոխադրվի, նրանց կացարաններն անապատներն էին և ամայի տեղերը, նրանց ծածկույթը՝ քարերն ու մացառները, իրենց ըշվառության մեջ նրանք ոչ ոքից մխիթարություն չէին գտնում։ Բացի դրանցից, հաշմանդամները չէին խնամվում, անծանոթ հյուրեր չէին ընդունվում, օտարականները պաշտպանություն չէին գտնում։

Իսկ նա հրամայեց, որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ, առանձնացած անբնակ տեղերում, որպեսզի հունաց հիվանդանոցների նման մխիթարություն լինեն մարմնով վշտացածներին։ Այս (հիվանդանոցների) վրա բաշխեց ավանները և ագարակները, որպեսզի իրենց արտերի արդյունքներից, արածող անասունների կթից ու բրդից բաժին հանեն և պարտավորաբար նրանց պետքերը հոգան հեռվից հեռու, իսկ նրանք դուրս չգան իրենց բնակության շենքերից։ Այս գործը նա հանձնեց խոհ անունով իր սարկավագին, որ Կարինի Մարգից էր։ Նույնպես սահմանում է, որ բոլոր գյուղերում իջևաններ շինվեն օտարականների համար, անօնդի տեղեր որբերի և ծերերի համար և խնամք չքավորների համար։ Շինում է նաև անապատ և անմարդաբնակ տեղերում եղբայրանոցներ և մենաստաններ և մենակյացների համար խրճիթներ։ Սրանց վրա հայր և վերահսկիչ է նշանակում Շաղիտացին, Եպիփանին, Եփրեմին և Գինդին Սյունյաց ցեղից և ուրիշ մի քանիսին։

Եվ նախարարական ցեղերի միջից վերացնում է այս երկու բանը. առաջին՝ խնամիությունը մերձավոր աղգականների միջև, որ գործադրում էին սեպուհական աղնվականության համար աչք տնկելով, և երկրորդ՝ որ մեռածների վրա ոճիրներ էին գործում հեթանոսական սովորությամբ։ Այնուհետև մեր երկրի մարդիկ արդեն բարարոտների պես այլանդակված չէին, այլ քաղաքացիների նման պարկեշտացած։

1. Ներսես Պարթևը Հայաստանում կաթողիկոս է եղել 353—373 թվականներին։

2. Խորենացու Պատմության թարգմանության մեջ սխալմամբ՝ «Հայաստանում»։

ԱՐՇԱԿԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԿՈՐՍԱՆՈՒՄԸ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. IV, գլ. ԺԲ. Այս ժամանակ թագավորը իր համար մի դաստակերտ շինեց Հովիտ կոչված Կոդ գավառում և իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց. հրամայեց, որ ամեն տեղ մունետիկները կանչեն հրապարակներում, բոլոր գավառներում, բոլոր կողմերում հայտնեն թագավորական հրամանը, որ «Եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին մի բանով վնասել է, թող բոլորը գան այդ դաստակերտը և ապահով կլինեն։ Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին վնասել է, կինը տարել է, կամ պարտապան է, կամ մեկի գույքը գրավել է, կամ որևէ մեկից երկյուղ ունի, թող գա այնտեղ, նրա դեմ դատ ու պահանջ չի լինի, եվ եթե մեկը մեկին մի բան պարտք է, և պարտատերը այդ տեղը գա (պահանջելու), նրան առանց դատի ու արդարադատության բռնեն ու դուրս հանեն»։

Երբ թագավորից այս հրամանը դուրս եկավ, ապա այդտեղ հավաքվեցին բոլոր գողերը, ավազակները, արյունապարտները, մարդասպանները, ստախոսները, խաբերանները, վնասարարները, գանձագողները, դրկողները, դատի մեջ ստողները, դրպարտողները, կողոպտողները, հափշտակողները, ժլատները։ Շատ հանցանքներ էին գործում և այնտեղ ապավինում։ Շատ կանայք իրենց ամուսիններին թողնում էին ու այնտեղ ընկնում. շատ տղամարդիկ իրենց կանանց թողնում էին և ուրիշների կանանց առնելով այնտեղ էին ընկնում. շատ ծառաներ իրենց տերերի գանձերը հափշտակելով փախչում այնտեղ էին ընկնում. շատ ավանդառուներ իրենց մոտ պահեստի դրված ավանդները վերցնում այնտեղ էին ընկնում. ամբողջ երկիրը թալանում ավերում էին։ Թեպետև ամեն կողմից խիստ աղաղակ բարձրացավ, բայց դատ չկար, ոչ ոքի իրավունքը արդունիքից չէր պաշտպանվում։ Այս պատճառով բոլոր մարդիկ վա՜յ տալով հառաչում էին. բոլորի բերանում ընդհանուր խոսք էր դարձել և միշտ ասում էին, թե «Իրավունքը մեռավ. եթե նա գոյություն ուններ, բայց կորած լիներ, կփնտրեինք, մի տեղ կգտնեինք նրան»։

Իսկ այն տեղը ավան ու քաղաք դարձավ, մեծացավ, բազմամարդացավ, ամբողջ Հովիտը բռնեց։ Արշակ թագավորը հրամայեց այդ դաստակերտի անունը իր անունով դնել Արշակավան։ Նրա մեջ նաև թագավորական ապարանք շինեցին։ Այնուհետև այլևս տիրոջից ամենևին չէին վախենում, ամենքը ղրկանքներ էին կրում այդ պատճառով արտունջ, բողոք, աղաղակ երկինքն էին բարձրացնում։

IV, գլ. ԺԳ. Արդ՝ երբ Ներսես հայրապետը Հայաստան վերադարձավ, վերահաստու եղավ իր տեղապահի՝ սուրբ Խադի գործերին և տեսավ, որ նա ճշմարտությամբ և ուղղությամբ է գործել, գնացել էր տեր աստծու ճանապարհով, ո՛չ աջ էր շեղվել և ո՛չ ձախ, ուստի մեծ գոհություն էր մատուցում աստծուն, որ իր հոգևոր որդուն՝ Խադին, տեսավ այնպես, ինչպես ինքն էր կամենում։ Նրան ընդունեց սիրով և կարոտով։ Բայց երբ Խադից լսում էր թագավորի բոլոր անօրինությունները, շար գործերը, ծուռ ընթացքը, սրբոմում, լացուկոծ էր անում, ողբում էր ծանր հեծեծանքով, մանավանդ Արշակավան քաղաքի պատճառով, որ շինվեց շատ մեղքերով, անօրինությամբ, շարությամբ և հափշտակությամբ։

Ապա սուրբ Ներսես հայրապետը մտավ թագավորի մոտ, խոսեց նրա հետ և ասաց. «Ինչո՞ւ դու մոռացար տիրոջը... ինչո՞ւ թողեցիր նրա պատվիրանները, արարչին, որ ամեն ինչ ոչնչից ստեղծեց, որ որբերի հայրն է, այրիների դատավորը, որ մեզ համար աղքատություն կրեց. նա որ աղքատներին անտես չի անում, այլ իր մարդասիրությամբ նրանց խնամում է։ Աստված արդար դատավոր է, հզոր և երկայնամիտ։ Նա բոլոր տառապյալներին լսում է և ոչ ոքի արհամարհանքը իր վրա չի վերցնում։ Դու ինչպե՞ս և ինչի՞ց դրդված արհամարհեցիր նրա պատվիրանները. չէ՞ որ քո հայրն էլ այսպիսի ամբարշտության պատճառով կորավ։ Իսկ դու դեռ չհիշեցի՞ր նրան, որ քո հոր մեղքերը չհիշեց և քեզ տվեց նրա տեղը, այսինքն՝ քո հոր թագն ու աթոռը։ Դու քո տեր աստծու առաջ սկսեցիր անօրինություններ դործել, ամբարշտություն, անիրավություններ բոլորովին սոդոմացիների նման, և այս բաները դու հայտնապես պարծենալով պատմում ես։ Ամբողջ երկիրը վայ է, վա՜յ է կանչում այն ղրկանքների և հափշտակությունների պատճառով, որոնցով դու կամեցար մեծանալ. դու չհագեցար քո ըն-

դարձակ թագավորության հարստություններով, որ քեզ պարգևեց բոլորիս տեր Քրիստոսը։

Արդ՝ լսի՛ր, ինչ որ քեզ ասում եմ, և կատարի՛ր, որպեսզի կարողանաս քեզ փրկել ատածու բարկությունից, և թշվառ Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի. որովհետև ես երազ տեսա, որ Հայոց կորստական աշխարհի համար կորուստ և կործանում է պատրաստվում դալ։ Դու հրաման տուր, որ այն տեղը քանդեն, քո ժողոված մարդկանց ցրիր, որ գնան, տարածվեն սփռվեն իրենց տեղերը, գնան և ամենքին վերադարձնեն ինչ որ պարտք են, որպեսզի բարկության ու չարիքների խորքերը չընկնես և չկորչես։ Իսկ քո գործած մեղքերի համար ամբողջ երկրին հրաման կտանք, որ քո փոխարեն պաս պահեն, աղոթք անեն, և մենք էլ քեզ հետ միասին ապաշխարության մեջ մտնենք, գուցե տերը ների քո գործած անչափ մեղքերը։ Եթե դու այն տեղին շատ ես փափագում, ես ինքս կշինեմ արդարության համար և շեն կպահեմ քեզ համար»։

... Հազիվ էր անցել երեք օր, որ ասված Արշակավան գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց։ Մարդկանց և անասունների վրա սկսեցին դուրս գալ չարորակ պալարներ, որ ոմանք կոչում են ժանտ[2]։ Այս հարվածը երեք օրից ավելի չտևեց, որ (քաղաքը) անմարդացավ, մոտ քսան հազար բնակիչ կոտորվեց, մարդկանցից ոչ ոք կենդանի չմնաց, որովհետև բոլորը հանկարծակի կոտորվեցին, ոչնչացան. կոտորածն ընդհանուր էր։

1. Արշակավանի կործանումը, ըստ տեղեկությունների, տեղի է ունեցել 358 թվականին։

2. «Ժանտը» ժանտախտն է, որը հայ մատենագրության մեջ հիշատակվում է առաջին անգամ։

ԱՐՇԱԿԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԿՈՐՍԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. ԻԷ. Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմիտ գործ գործեց։ Մասիս լեռան թիկունքում նա շինեց մի դաստակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի. և հրաման արձակեց, թե ով կարողանա այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա դատական օրենքը չի գործի։ Անմիջապես ամբողջ հովիտը ծովացած լցվեց մարդկանց բազմությամբ. որովհետև ավանդատուներն ու պարտապանները, ծառաներն ու հանցագործները, գողերն ու մարդասպանները, ուրիշների կանանց փախցնողները և ուրիշ սրանց նմանները փախչում ապաստանում էին այնտեղ,— և նրանց դեմ հարցաքննություն ու դատաստան չկար։ Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակը նրանց չլսեց այն ատելության, որ նրանք մինչև Շապուհին դիմեցին։ Եվ երբ Շապուհը Հունաստանից ետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ գնդով ուղարկեց, որ երբ հարմար լինի, Արշակին բռնի, բայց նա խուսափեց նրանից, փախավ Կովկասի կողմերը, վրացիների հետ միանալով։

Իսկ Պարսից սպարապետը Հայաստան գալով՝ նախարարների օժանդակությամբ առնում է Անի ամրոցը, ավարում են այնտեղ պահված բոլոր արքունական գանձերը, այլև թագավորների ոսկորները, չգիտեմ՝ Արշակին նախատինք հասցնելու նպատակո՞վ, թե որևէ հեթանոսական հմայքի համար։ Բայց հետո նախարարները խնդրեցին ետ ստացան (ոսկորները) և թաղեցին Աղցք ավանում, որ Արագած կոչված լեռան ստորոտում է։ Որովհետև նրանք չկարողացան ջոկել հեթանոսների և հավատացյալների ոսկորները, քանի որ գերողները խառնել էին իրար հետ, ուստի արժան չհամարեցին թաղել սրբերի հանգստարանում՝ վաղարշապատ քաղաքում։

Իսկ Հայոց նախարարները հավաքվելով՝ դիմեցին թագավորական դաստակերտ Արշակավանի վրա, սրով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կատաղած էին իրենց ծառաների և վնասարարների դեմ։ Այս բանը թեպետ իմացավ Մեծ Ներսեսը, բայց չկարողացավ կոտորածից առաջ հասնել, այլ հասավ վերջում, երբ կոտորվածների երեխաներին բաժանելով ուզում էին գերի տանել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաներ։ Մեծ Ներսեսը նրանց ազատեց և հրամայեց քթոցներով կրել մի գոմ. նրանց համար սնուցիչներ և անունդ նշանակեց։ Հետո նրանք (մեծանալով) ավան կազմեցին, որ այս պատճառով կոչվեց Որթք (քթոցներ)։

ՀԱՅ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԱՐՇԱԿ II–Ի ԺԱՄԱՆԱԿ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլր. IV, գլ. ԻԴ. Այն ժամանակ Հայոց թագավորի դեմ ապըստամբվեց մեծ նախարարներից մեկը Արծրունյաց ցեղից՝ Մերուժան անունով։ Նա գնաց ներկայացավ պարսից Շապուհ թագավորին և երդումով ուխտ դրեց նրա հետ, որ առմիշտ նրա հպատակը կլինի։ Նախ ուրացավ իր կյանքը, իր աստվածը, որովհետև հրաժարվեց քրիստոնեությունից... (Այնուհետև) պատրաստեցին առաջինից ավելի մեծ քանակությամբ Պարսից զորք՝ Հայոց աշխարհը ասպատակելու. նրանց առաջնորդն եղավ չարագործ Մերուժանը։ Մերուժանի առաջնորդությամբ Հայոց աշխարհը հանկարծակի կրակի և ավերածի մատնեցին. ոմանց փղերով ոտնակոխ էին անել տալիս, կանանց սայլերի ցցի վրա էին հանում, Հայոց աշխարհի վերին գավառներն առնում, բոլոր բնակիչներին կոտորում էին։

Մինչդեռ Արշակ թագավորը ուտեստի՝ կերակրվելու համար սեղրին գավառների կողմերում էր՝ Անգեղտանը, պարսից զորքերը միջնաշխարհը բարուրանդ էին անում։ Ապա Հայոց Վասակ զորավարը զորք է հավաքում. նա կարողացավ այն ժամանակ կազմակերպել ու սարքավորել տասը հազար ընտիր ու քաջ հեծելազոր, նրանցով առաջ շարժվեց, փութով հասավ Պարսից զորքի վրա։ Երբ Պարսից թագավորի զորավարներն իմացան, թե Հայոց Վասակ սպարապետը զորք է հավաքել իրենց դեմ, երկրում մնացածներին կողոպտեցին, դերի վերցրին ու շտապ-շտապ փախան իրենց աշխարհը։ Նրանց հետամուտ եղավ Վասակ Մամիկոնյանը և հասավ, երբ նրանք անցնում էին Ատրպատականով։ Պարսից թագավորի զորքերը դերիները թողին ու փախան Մերուժանի հետ։ (Հայոց) զորքերը դերությունից ազատեցին անչափ ու անթիվ բազմությունը և խաղաղությամբ դարձան Արշակ թագավորի մոտ։

IV, գլ. ԻԴ. Սրանից հետո տխրահռչակ Մերուժանը Պարսից Շապուհ թագավորին գրգռելով ասստիկ բարկացրեց Արշակ թագավորի վրա։ Ապա Պարսից Շապուհ թագավորը զորք է հավաքում, լրտեսներ է ուղարկում՝ Հայոց Արշակ թագավորին դիտելու։ Եվ մինչ Հայոց Արշակ թագավորն իր զորքով Ատրպատականի սահմանների մոտ էր գանվում, այդ կողմերից զգուշանալով—

որովհետև այդտեղ էր նա ապատում Պարսից զորքերին— սրանք Մերուժանին առաջնորդ բռնելով՝ ուրիշ կողմ շուռ տալով ասպատակեցին Հայոց աշխարհը։ Նրանք անցան Աղձնիքով, Մեծ Ծոփքով, Անգեղտանով, Անձիտ գավառով, Շահունի Ծոփքով, Մզուր գավառով, Դարանաղիով, եկեղյաց գավառով։ Պարսից Շապուհ թագավորը անթիվ զորքերով այս գավառները մտավ ու ծավալվեց հեղեղի նման։

Կրակի ու ավերածի էին մատնում երկիրը, անթիվ մարդիկ էին կոտորում իրենց սրերով, կանանց ու երեխաներին սայլերի ցցերի վրա էին հանում, մի մասն էլ կամերի տակ էին գցում, կալսել էին տալիս, տղամարդկանց բազմությունը գցում էին փղերի ոտքերի տակ՝ կոխան լինելու և անթիվ քանակությամբ մանր երեխաների գերի էին տանում։ Շատ ամրոցներ քանդում էին, շատ ամուր բերդեր ավերում։ Նրանք առան Տիգրանակերտ մեծ քաղաքը, որ Աղձնիք գավառում էր, Բդեշխի իշխանության մեջ, և այնտեղից քառասուն հազար ընտանիք անմիջապես գերի քշելով՝ բնակեցրին Մեծ Ծոփք գավառը։ Այնտեղ էլ կային բերդեր, որոնց մի մասը գրավեցին, իսկ մի մասը չկարողացան առնել։ Այնտեղից եկան պաշարեցին Անգեղ ամուր բերդը Անգեղտան գավառում, որովհետև այնտեղ կային Հայոց շատ Արշակունի թագավորների գերեզմաններ և վաղուց ի վեր այնտեղ ամրացված էին շատ գանձեր։ Գնացին պաշարեցին բերդը և երբ, տեղի ամրության պատճառով, չկարողացան առնել, թողին ու գնացին։ Շատ բերդեր էլ թողին անցան, որովհետև չէին կարողանում այն ամրոցների հետ կռվել։ Նրանց ձեռքն անցավ միայն Անի բերդը Դարանաղի գավառում, որովհետև չարագործ Մերուժանը մի հընարք մեքենայեց այդ ամուր բերդի դեմ։ Վեր էին բարձրանում, պարիսպները կործանում էին և բերդից անհամար գանձեր էին դուրս բերում։ Բաց էին անում Հայոց նախկին թագավորների, քաջ Արշակունիների գերեզմանները և թագավորների ոսկորները գերի էին տանում։ Չկարողացան բանալ միայն Սանատրուկ թագավորի շիրիմը՝ նրա հսկայական պինդ ու ճարտար շինվածքի պատճառով։ Այնտեղից հեռանալով ուրիշ կողմ, ասպատակեցին, առաջ շարժվելով դեպի Բասենի կողմերը. մտադրվում էին բիկունքից հարձակվել Հայոց թագավորի զորքերի վրա։

Երբ այս ամենը կատարվում էր, գուժկան եկավ Արշակ թա-

գավորի մոտ. նրան հայտնեցին, թե՝ «Դու այդտեղ Ատրպատականում նստած՝ թշնամուն սպասում ես դիմացից, իսկ թշնամիները, քո թիկունքը անցնելով, ներկիրը կոտորեցին և հիմա գալիս են քեզ վրա»: Երբ այս լսեցին Հայոց Արշակ թագավորը և նրա վասակ զորավարը, զորահանդես կազմեցին: Վասակ զորավարի ձեռքի տակ այդ ժամանակ պատրաստ գտնվեց պատերազմական գործի պիտանի մոտ վաթսուն հազար մարդ, ընտիր պատերազմողներ, որոնք միաբան, միասիրտ, հոժարակամ գնում էին պատերազմի, որպեսզի հասնեն ու պատերազմեն իրենց կանանց ու որդիների համար, իրենց կյանքը զոհեն երկրի համար, իրենց բնակած տեղերի համար, կռվեն իրենց եկեղեցիների համար, սուրբ եկեղեցիների սպասավորների համար, իրենց հավատի ու աստծու համար, իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների համար: Որովհետև նույնիսկ թագավորների ոսկորներն ու բազմաթիվ ժողովուրդ տեղահան արված՝ օտարության էին քշված:

Ապա Վասակ սպարապետը իր վաթսուն հազարով առաջ շարժվեց. իր եռևը թողնց Արշակ թագավորին սպասավորների հետ Մարաց աշխարհում մի ամուր տեղում, իսկ ինքը եկավ հասավ Հայաստանի միջնաշխարհը՝ Այրարատյան գավառը. այնտեղ գտնում է Պարսից զորքերը, որոնք այնտեղ կոտակվել, բանակ էին դրել մեծ բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին՝ բանակած Այրարատյան գավառում: Վասակն իր հետ եղած գնդով այնտեղ հասնելով՝ գիշերով անսպասելի կերպով գրոհ է տալիս Պարսից թագավորի բանակի վրա: Եվ տեղնուտեղը սրի են անցկացնում Պարսից բոլոր զորքերը. միայն թագավորը հազիվ ճողոպրում, փախչում է մի ձիով: Մնացածներին հալածելով, փախցնում են իրենց սահմաններից դուրս և նրանցից անթիվ ու անհամար ավար են խլում, որ շափ ու հաշիվ չունեին: Նրանց բոլորին առհասարակ կոտորեցին իրենց սրերով, խլեցին նրանցից իրենց թագավորների ոսկորները, որ պարսիկները գերի էին տանում Պարսից աշխարհը: Որովհետև նրանք, ըստ իրենց հեթանոսական կրոնի՝ ասում էին. «Նրա համար ենք մենք Հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհը տանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու քաջությունը այստեղից թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»: Արդ՝ Վասակը խլում է նրանցից Հայաստան աշխարհի բոլոր գերիները, իսկ թագավորների ոսկորները, որ նրբանցից Վասակը խլեց, տարան, թաղեցին Աղձք կոչված ամուր գյուղում՝ Այրարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան նեղ ու դժվարամուտ խորշերից մեկում: Իսկ իրենք հոգ տարան աշխարհը խաղաղացնելու, բարեկարգելու, գերիները տեղավորելու, այրածն ու ավերածը նորոգելու: Բայց այս ամենամ էլ չարագործ Մեծուժանը Պարսից թագավորի հետ փախչում, ազատվում է: Այնուհետև Արշակ թագավորը Վասակ զորավարի հետ պահպանում է երկիրը, սահմանապահի երկու գոնեներն ղգուշությամբ պահելով՝ որքան ժամանակ որ կենդանի էին:

ԱՄՄԻԱՆՈՍ ՄԱՐԿԵԼԼԻՆՈՍԸ ԿՈՍՏԱՆԴԻՈՍԻ ԵՎ ԱՐՇԱԿ II-Ի ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամմիանոս Մարկելլինոսը IV դարի հույն հեղինակ է: Մասնակցել է Հուլիանոս կայսեր Արևելք և Գալլիա ձեռնարկած արշավանքներին: Երկար տարիներ ապրել է Անտիոքում և Հռոմում: Գրել է լատիներեն 31 հատորից բաղկացած պատմական մի աշխատություն՝ «Գործունեություններ» (Res gestae) վերնագրով՝ նպատակ ունենալով այն դարձնել Տակիտոսի «Տարեգրություններ» և «Պատմություն» աշխատությունների շարունակությունը: Մեզ են հասել հեղինակի այդ աշխատության միայն 18 հատորները, որոնց մեջ նկարագրված են կայսրության պատերազմները պարսիկների, գոթերի և այլ ժողովուրդների դեմ: Հեղինակը նկարագրված իրադարձություններին մեծ մասամբ ականատես է:

Ներկա թարգմանության համար օգտագործված է Յու. Կուլակովսկու և Ա. Սոննիի ռուսերեն թարգմանությունը (տե՛ս Аммиан Марцеллин, История, в. 1—3, Киев, 1906—1908): Ամմիանոսից ստորև բերված հատվածները հայերեն է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք XI

1—3. Այդ ժամանակ (այսինքն՝ 360 թ.— Ա. Ա.) Կոստանդիոսը, երբ գտնվում էր Կեսարիա քաղաքում, իր մոտ կանչեց Հայոց Արշակ թագավորին[1], մեծ պատվով ընդունեց նրան և ամեն ջանք գործ դրեց հորդորելու, որ նա մնա մեր (այսինքն՝ Հռոմեա-

ցիների) հավատարիմ բարեկամը։ Կոստանդիոսը ձգել էր, որ Պարսից թագավորը խաբեբայության, սպառնալիքի և նենգության ճանապարհով փորձեր է անում, որպեսզի հարկադրի Արշակին հրաժարվելու Հռոմի բարեկամությունից և ամուր կապի իր հետ։

Արշակը բազմիցս երդվեց, որ ինքն ավելի շուտ վերջ կտա իր կյանքին, քան կփոխի իր մտադրությունը։ Եվ նա վերադարձավ առատաձեռն պարգևատրված, ինչպես ինքը, այնպես և իր հետ տարած շքախումբը։ Արշակը այնուհետև չէր համարձակվում դրժել իր տված խոստումը։ Կոստանդիոսից նա ստացել էր բազմաթան շնորհումներ, որոնցից ամենամեծը այն էր, որ նրան կին էր տվել Օլիմպիային՝ անձնապահապետ Աբլաբիոսի աղջկան, որն առաջներում իր Կոստաս[2] եղբոր նշանածն էր եղել։

1. Խոսքը Հայոց Արշակ II թագավորի մասին է։

2. Սա Կոստանդիոս կայսեր (337—361) կրտսեր եղբայրն էր, նրա կայսրակիցը (337—350)։

ԱՄՄԻԱՆՈՍԸ 363 ԹՎԱԿԱՆԻ «ԱՄՈՒՍԱՒ» ՊԱՏՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ԴԻՐՔՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք VII

9—12. (Շապուհ) Թագավորը համառորեն պահանջում է, որ իրեն վերադարձվեն, ինչպես ինքն էր ասում, այն երկրամասերը, որոնք խլվել էին Մաքսիմիանոսի ժամանակ։ (Բանակցությունների ընթացքում) սակայն պարզվեց, որ նա պահանջում է Անդրտիգրիսյան հետևյալ հինգ գավառները՝ Աղձնիքը, Մոկքը, Ծավդքը, Ռեհիմենեն (Հեր և Զարևանդը) ու Կորդուքն՝ իրենց 15 ամրոցների հետ միասին։ Բացի այդ (պահանջում էր) Մծբինը, Սինգարան քաղաքները և Կաստրա-Մավրորումը, որն իր դիրքով կարևոր ամրություն էր։

Մեզ համար ավելի լավ էր տալս անգամ կռվել, քան ընդառաջել այդ պահանջներից որևէ մեկին։ Սակայն վախկոտ կայսրի վրա ազդեցություն գործեց քծնողների խումբը, որոնք տալիս էին ահեղ Պրոկոպիոսի անունը և պնդում, որ եթե կայսրը չշտապի վերադառնալ, ապա Պրոկոպիոսն իմանալով Հուլիանոսի մահը, դյուրությամբ, առանց դիմադրության հանդիպելու, պետական հեղաշրջում կկատարի թարմ ուժերով, որոնք գտնվում են նրա հրամանատարության տակ։

Այս չարամիտ խոսակցություններն այնքան հաճախ էին կրկնվում, որ Հովիանոսն առանց տատանվելու տվեց այն ամենը, ինչ որ պահանջում էին պարսիկները և դժվարությամբ պայմանադրում միայն նշվեց, որ Մծբինը և Սինգարան պարսիկների իշխանության տակ անցնեն առանց բնակիչների և թույլ տրվի հռոմեացիներին հանձնված ամրություններից հեռանալ տեղամասպահ պահակակետերի պաշտպանության տակ։

Բացի այդ, պայմանագրում արվեց շատ ավելի ծանր ուխտապանց մի հավելում, ըստ որի, այդ համաձայնությունից հետո այլևս օգնություն չպիտի տրվեր մեր մշտական և հավատարիմ բարեկամ Արշակին ընդդեմ պարսիկների, եթե նա այդ մեղանից խնդրելու՝ լիներ։ Սրանում կրկնակի դիտավորություն կար. նախ պատժել այն մարդուն, որը կայսեր հանձնարարությամբ ավերել է Հիլիոկոմը և ապա սպասել հարմար ժամանակի՝ առանց դրժվարության հարձակվելու Հայաստանի վրա։

Եվ դրա հետևանքով էր, որ հետագայում, երկպատակությունների և խռովությունների ժամանակ, այս Արշակը կենդանի գերի վերցվեց պարսիկների կողմից, և խլվեց Հայաստանից ընդարձակ մի երկրամաս, որը սահմանակից էր Մեդիային։ Գրավվեց նաև Արտաշատ քաղաքը։

ՓԱՎՍՏՈՍԸ ՀԱՅ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԱԿ II–Ի ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. IV, գլ. ՃԳ. Սրանից հետո պարսից Շապուհ թագավորը գարձյալ (պատգամ) ուղարկեց Հայոց Արշակ թագավորին և ասաց. «Եթե ես և դու իրար հետ հաշտ ենք, ապա եկ, միմյանց հետ տեսակցենք և այնուհետև իբր հայր և որդի լինենք միմյանց, իսկ եթե չես ուզում ինձ տեսնել, ուրեմն պատերազմ ես ուզում մեր երկուսի միջև»։ Արշակը նրանից խնդրեց ուխտի հավատարիմ երդում, որ անկասկած լինելով գնա։ (Շապուհը) Պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով բերել տվեց աղ,

կնքեց վարագոյր մատանիով և ուղարկեց (Արշակին, ասելով), որ եթե այդ երդումից հետո էլ չգա, ապա թող պատրաստվի պատերազմի։

Երբ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ այս տեսան ու լսեցին, ապա ստիպեցին, բռնադատեցին, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա, գնա, ներկայանա Պարսից Շապուհ թագավորին։ Այնուհետև Հայոց Արշակ թագավորը կամ-ակամա վեր կացավ վերցրեց իր հետ Հայոց զորավար սպարապետ (Վասակին), իր դայակին, ճանապարհ ընկավ Հայոց աշխարհից Պարսից աշխարհը, Պարսից Շապուհ թագավորի մոտ. գնաց, ներկայացավ Պարսից Շապուհ թագավորին։ Երբ նրանց տեսան, երկոսին էլ՝ Արշակ թագավորին և Վասակ սպարապետին բռնեցին և ազատ պահում էին ազնվական թիկնապահ զորքերի մեջ։ Եվ Շապուհ թագավորը կանչեց Արշակ թագավորին ու խիստ նախատեց նրան իբրև իր ծառայի, իսկ նա նրա առաջ իրեն հանցավոր և մահապարտ ճանաչեց։ Դրանից հետո նրան դարձյալ թիկնապահների գնդին հանձնեցին, որ պահեն։

IV, գլ. ՃԴ. Ապա Պարսից Շապուհ թագավորը կանչում է վհուկներին, աստղահմաններին ու քավդյաններին, նրանց հետ խոսում է և ասում. «Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց։ Ես նրա հետ խաղաղության դաշն կապեցի, և նա երդվեց քրիստոնեական կրոնի գըլխավոր (սրբության) վրա, որին Ավետարան են ասում. նախ այն երդումը դրժեց... Որովհետև Հայոց Արշակ թագավորը ահա երեսուն տարի է, որ Արյաց հետ պատերազմ է մղում, և ոչ մի տարի մենք չկարողացանք հաղթել, իսկ այժմ ինքն իր ոտքով ելել եկել է ինձ մոտ։ Բայց եթե գիտենայի, թե այսուհետև նա կմնա իմ պայմանին և հնազանդության անկեղծ ուխտով, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կուղարկեի իր աշխարհը»։

Քավդյանները նրան պատասխան տվին և ասացին. «Այսօր մեզ ժամանակ տուր, վաղը քեզ կպատասխանենք»։ «Հաջորդ օրը բոլոր քավդյաներն ու աստղահմանները հավաքվեցին եկան և ասացին թագավորին. «Հիմա որ Հայոց Արշակ թագավորը եկել է քեզ մոտ, ինչպե՞ս է քեզ հետ խոսում, ի՞նչ լեզու է բանեցնում կամ ինչպե՞ս է իրեն պահում»։ Թագավորն ասաց. «Նա իրեն համարում է ինչպես մեկը իմ ծառաներից. ուզում է իմ ոտքի հողը

դառնալ»։ Նրանք ասացին թագավորին. «Դե՛, արա ինչ որ քեզ ասում ենք. նրանց այստեղ պահիր, մարդիկ ուղարկիր Հայոց աշխարհը, բերել տուր այնտեղից՝ Հայաստանի սահմաններից մոտ երկու բեռ հող և մի ամանով ջուր։ Հետո հրամայիր, որ քո սենյակի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը. ապա դու ինքդ Հայոց Արշակ թագավորի ձեռքից կբռնես, նախ կտանես սենյակի այն տեղը, որտեղ բնական գետինն է, և նրան հարցուփորձ կանես։ Հետո նրա ձեռքը բռնած, հայկական հող շաղ տված տեղը կտանես և կլսես թե ինչ է խոստում։ և այն ժամանակ կիմանաս, թե երբ նրան արձակելու լինես Հայաստան, քո ուխտն ու դաշինքը կպահի՞, թե՞ ոչ։ Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի, իմացի՛ր, որ Հայոց աշխարհը հասնելուն պես հենց նույն օրը նույն լեզուն կբանեցնի, նույն պատերազմը կնորոգի քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամությունը կշարունակի»։

Պարսից թագավորը քավդյաններից այս լսելով՝ մարդիկ ուղարկեց Հայաստան արագավազ ուղտերով հողի և ջրի, որ գան և նրա համար պարզեն հմայքը։ Քիչ օրերից հետո եկան ու բերին այն, ինչի որ նա նրանց ուղարկել էր։ Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր սենյակի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուր լցնել, իսկ մյուս կեսը՝ թողնել բնիկ երկրի նույն հողը։ Եվ Հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ ու հրամայեց մյուս մարդկանց հեռացնել և նրա ձեռքից բռնած ճեմելով շրջում էր։ Սենյակում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ և քեզ ինձ որդի դարձնել, իսկ դու իմ դեմ խստացար, ինքնակամ, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար, և ահա ամբողջ երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցիր»։

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ. որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալ. բայց իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին։ Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առաջը բերեց, ու ահա եկա քո առաջ, և ահա ես՝ քո ծառան, քո ձեռքում եմ. ինչպես ու-

դում ես վարվիր ինձ հետ, եթե կամենում ես սպանիր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»։

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով. անմեղ ձևանալով նրան բերում էր հայկական հող շաղ տված հատակի վրա։ Իսկ երբ (Արշակը) այն տեղն էր հասնում, հայկական հողի վրա ոտք էր դնում, սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով, խոսքը փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ նների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը։ Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի, բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չդրավենք»։

(Շապուհը) դարձյալ նրա ձեռքից բռնած տանում է պարսկական հողի վրա. այն ժամանակ (Արշակը) ղջռում էր ասածների համար, խոնարհվում էր, նրա ոտքերն էր ընկնում. ամաստիկ ափսոսում, ղջռում էր իր ասած խոսքերի համար։ Իսկ երբ ձեռքից բռնած տանում էր հայկական հողի վրա, առաջվանից ավելի խիստ էր խոսում։ Նորից հեռացնում էր այդ հողի վրայից, սկսում էր խոսքերով ապշախարել։ Առավոտից մինչև երեկո շատ անգամ փորձեց նրան, որ երբ հայկական հող շաղ տված հատակի վրա էր տանում, խոստանում, ամբարտավանանում էր, իսկ հենց որ կանգնում էր հատակի բուն գետնի վրա, ղջռում էր։

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս բերել շղթաներ և գցել Արշակի պարանոցը, իսկ ոտքերին և ձեռքերին դնել կապանքներ և տանել նրան Անդմըշն բերդը, որին ասում են Անհուշ բերդ[1], և կապած պահել այնտեղ մինչև մեռնի։

Հաջորդ օրը Շապուհ թագավորը հրամայեց իր առաջը բերել Վասակ Մամիկոնյանին՝ Մեծ Հայքի զորավար-սպարապետին։ Սկսեց նրան անարգել. որովհետև Վասակը փոքր էր մարմնով, Պարսից Շապուհ թագավորը ասաց նրան. «Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ չարշարեցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ինչպե՞ս ես, որ ես քեզ աղվեսի մահով սպանեմ»։ Վասակը պատասխան տալով ասաց. «Այժմ դու ինձ տեսնելով մարմնով փոքր, իմ մեծության չափը չղգացի՞ր, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս։ Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա

էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա։ Երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»։ Շապուհ թագավորը հարցրեց և ասաց. «Դե ասա իմանանք, այդ ի՞նչ լեռներ են, որ դու գետին էիր տանում»։ Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը. քանի որ աստված հաշտ էր մեզ հետ, քեզ էլ էի գետին տանում, Հունաց թագավորին էլ, քանի որ մեր հոր՝ Ներսեհի օրհնությունը մեզ վրա էր, և աստված մեզ ձեռքից չէր թողնի։ Քանի որ մենք նրա խոսքը լսում էինք և նրա խրատով էինք շարժվում, կարողացանք քեզ խրատ տալ, մինչև որ մենք ինքներս բաց աչքերով խորխորատի մեջ ընկանք։ Հիմա ինչ ուզում ես արա»։ Ապա Պարսից թագավորը հրամայեց՝ Հայոց Վասակ զորավարի մորթը հանել, խոտով լցնել և տանել նույն Անդմըշն բերդը, որ Անհուշ է կոչվում, որտեղ թանտարկեցին և Արշակ թագավորին։

1. Անհուշ բերդը կամ պարսկերենով Անդմըշնը թարգմանվում է «Մոռացության բերդ»։ Ուսումնասիրողներից ոմանք այն նույնացնում են Խուժիստանի Անդիմիշկի հետ։

ԱՄՄԻԱՆՈՍԻ ԱՐՇԱԿԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք XII

1—4. Պարսից երկարակյաց Շապուհ թագավորը, որն իր գահակալության առաջին տարիներից սկսած հակում ուներ հափշտակության, Հուլիանոս կայսեր մահվանից և ամոթալի խաղաղության պայմանագիրը կնքելուց հետո, որոշ ժամանակ դեռ պահպանում էր բարեկամությունը մեզ հետ։ Սակայն իր ծերության թեթևած տարիքում, հանկարծ ոտքի տակ տալով Հովիանոսի հետ կնքած պայմանագրի պայմանները, ցանկանալով իր գերիշխանությանը ենթարկել Հայաստանը, սկսեց ձեռք մեկնել Հայաստանին այն պատճառաբանությամբ, որ իբրև թե պայմանագիրն արդեն կորցրել է իր ուժը։ Սկզբում նա գործ դրեց տարբեր տեսակի խարդավանքներ, սակայն բնակչության կողմից հանդիպելով դիմադրության, սկզբից մերթ դավով և բռնությամբ նեղում էր երկիրը և մերթ աշխատում իր կողմը թեքել նախարարների և աղնվական-

ների, երբեմն ավազակաբար հարձակումներ գործում երկրի վրա։ Հետո, գործի դնելով հրապուրանք և երդմնազանցություն, նա կարողացավ ձեռք գցել Արշակին։

Եվ Շապուհը Արշակին մի անգամ հրավիրելով խնջույքի, կարգադրեց նրան տանել գաղտնի դռնով, հանել նրա աչքերը, շըղթայել արծաթյա շղթայով, որը նրանց մոտ ավելի պատվավոր մարդկանց պատժի համար համարվում էր դատարկ մխիթարության միջոց, ապա աքսորեց նրան Ագաբանա անունով բերդը, ուր նա, զանազան տանջանքներից հետո մահապատժի ենթարկվեց։

ԱՐՇԱԿ II–Ի ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. V, գլ. Է. Այն ժամանակները դեռևս կենդանի էր Հայոց Արշակ թագավորը Պարսից թագավորության իշխանության երկրում՝ Խուժաստանի կողմերում, Անդմշըն բերդում, որին ասում են Անհուշ բերդ։ Այս ժամանակ պարսիկները դադարեցրին պատերազմները հայերի հետ, որովհետև Քուշանաց Արշակունի թագավորը, որ նստում էր Բալխ[1] քաղաքում, պատերազմ սկսեց պարսից Շապուհ թագավորի դեմ, որ Սասանի տոհմից էր։ Եվ Շապուհ թագավորը պարսից բոլոր զորքերը գումարեց և տարավ նրա դեմ պատերազմելու, նույնպես և Հայոց աշխարհից տարած գերությունից բոլոր հեծելազորը իր հետ պատերազմի տարավ, մինչև անգամ Հայոց Արշակ թագավորի ներքինուն։ Հայոց Արշակ թագավորի այդ ներքինին հավատարիմ պաշտոնյա էր, մեծ իշխանության տեր, շատ սիրված ու պատիվների արժանացած. նրա անունն էր Դրաստամատ։

Երբ Քուշանաց թագավորի և Պարսից թագավորի միջև պատերազմ սկսվեց, քուշանների զորքերը շատ նեղեցին Պարսից զորքերին, շատերին կոտորեցին Պարսից զորքերից, շատերին ձերբակալեցին և մյուսներին հալածեցին, փախուստի մատնեցին։ Իսկ Դրաստամատ ներքինին, որ Հայոց Տիրան թագավորի և նրա որդու՝ Հայոց Արշակ թագավորի տարիներին իշխում էր Անգեղտան գավառի վրա, հավատարմությամբ պահում էր Անգեղ բերդի գան-

ձերը, նույնպես և բոլոր արքունական բերդերը, որ գտնվում էին այն կողմերում։ Նույնպես և Մոփաց աշխարհում Բնաբեղ բերդում եղած գանձերը նրա տեսչության տակ էին և նրա բարձր բոլոր նախարարների բարձերից վեր էր։ Եվ որովհետև այս պաշտոնը և Հայր կոչված մարդպետությունը ներքինիներին էին հանձնվում Արշակունյաց թագավորության ամենահին ժամանակներից ի վեր, ուստի այս ներքինի Դրաստամատին՝ Անգեղտան իշխանին էլ դերի էին տարել Պարսկաստան այն ժամանակ, երբ Հայոց Արշակ թագավորին բռնեցին։

Այս Դրաստամատը պատահեց այն ճակատամարտում, որի մեջ քուշանները հաղթեցին Պարսից Շապուհ թագավորին։ Դրաստամատն այնտեղ անպատմելի քաջություններ գործեց, Շապուհ թագավորի համար անչափ կռվեց, որ կարողացավ նրան մահից ազատել և քուշաններից շատերին կոտորեց և շատ ախոյանների գլուխներ բերեց նրա առջև։ Պարսից Շապուհ թագավորին էլ փրկեց, երբ նրան պատերազմի խառնուրդի մեջ թշնամիները շրջապատել ու նեղն էին գցել։ Իսկ երբ Պարսից Շապուհ թագավորը դարձավ, եկավ Ասորեստան, մեծ շնորհակալություն հայտնեց ներքինի Դրաստամատին նրա ծառայությունների համար. և ասաց նրան Պարսից Շապուհ թագավորը. «Խնդրի՛ր դու ինձանից, ինչ որ ուզում ես, քո խնդրածը կտամ, չեմ մերժի»։ Դրաստամատը ասաց թագավորին. «Ես քեզանից ոչինչ չեմ ուզում, բացի միայն նրանից, որ հրաման տաս ինձ՝ գնամ իմ իսկական տիրոջը՝ Հայոց Արշակ թագավորին տեսնեմ։ Եվ միայն մի օրվա համար, երբ ես նրա մոտ գնամ, հրաման տուր նրան կապանքներից արձակել, և ես իրավունք ունենամ լվանալ նրա գլուխը, օծել, ազնիվ զգեստ հագցնել, նրա համար սեղան պատրաստել, նրա առաջ խորտիկներ դնել, գինի տալ և ուրախացնել նվագարաններով. ճիշտ մի օր»։

Շապուհ թագավորն ասաց. «Դժվար բան խնդրեցիր, որովհետև այն ժամանակից ի վեր, որ Պարսից թագավորությունը կանգուն է և այն բերդը կոչվել է Անհուշ, չի եղել որևէ մարդ, որ համարձակված լինի թագավորներին հիշեցնել, թե թագավորները որևէ մեկին այնտեղ բանտարկել են, չի հիշատակվել որևէ մարդ, որին բանտարկել են այն բերդում, ուր մնաց թագավոր մարդը և իմ հավասարը՝ հակառակորդը, որ կապված է այն բերդում։ Այնինչ դու անհանգստացրիր մեզ։ Դու ահա մահդ աչքդ առար և

հիշեցրիր Անհուշը՝ անհիշելին, որ Արյաց թագավորության մեջ սկզբից ի վեր չի պատահել այսպիսի բան: Բայց որովհետև մեծ է քո՝ ինձ ցույց տված ծառայությունը, ինչ կատարվի խնդիրքդ. գրե՛, ինչ որ խնդրեցիր, տալիս եմ: Բայց դու պետք է քո սեփական օգուտը մտածեիր, երկրներ, գավառներ կամ գանձեր խնդրելիր: Բայց երբ դու այդ խնդրեցիր, ինչ այդ բացառություն լինի Արյաց թագավորության օրենքից: Գնա՛, քեզ տվի, ինչ որ դու ինձնից խնդրեցիր քո ծառայության փոխարեն»:

Եվ նրան տվեց մի հավատարիմ թիկնապահ ու հրովարտակ արքունական մատանիով կնքված, որ ելնի գնա Անդմըշն բերդը և ինչպես որ կամենա, ինչպես որ խնդրեց, այնպես էլ վարվի կապյալ Արշակի հետ, որ Հայաստանի թագավոր էր եղել մի ժամանակ: Եվ Դրաստամատը արքունական հրովարտակով թիկնապահի հետ գնաց Անհուշ բերդը, տեսավ իր իսկական տեր Արշակին, արձակեց երկաթե կապանքներից, ձեռնակապերից ու ոտնակապերից և անուրներից, նրա գլուխը լվաց, նրան լողացրեց. նրան ազնիվ զգեստներ հագցրեց, սեղան սարքեց նրա համար, նրան բազմեցրեց, նրա առաջ թագավորավայել ընթրիք դրեց, գինի դրեց առաջը, ինչպես թագավորների կարգն է, նրան զվարթացրեց, մխիթարեց և նվագարաններով ուրախացրեց:

Երբ աղանդերի հերթը հասավ, նրա առաջ դրին միրգ, խընձոր, վարունգ ու ամիճ[2] և դանակ տվին, որպեսզի կտրի և ուտի, ինչպես կամենում է: Դրաստամատն էլ ոտքի կանգնած՝ նրան շատ ուրախացնում էր և մխիթարում: Երբ նա խմեց, գինին գլուխն ընկավ, նա հարբեց ու հպարտացավ և ասաց. «վա՛յ ինձ, Արշակիս. որտեղի՞ց ուր ընկա և ի՞նչ օրի հասա»: Այս ասելով՝ դանակը, որ ձեռքին բռնած ուներ, որով միրգը կամ ամիճը պիտի կտրեր, խրեց իր սիրտը և իսկույն մեռավ հենց նստած տեղում: Դրաստամատը երբ այս տեսավ, վրա ընկավ, դանակը քաշեց հանեց նրա մարմնից և խրեց իր կողը: Նա էլ նմանապես նույն ժամին մեռավ:

1. Բալխը հին Պարսկաստանի վաճառաշահ քաղաքներից մեկն էր, գտնվել է Պարապամիս և Տյան-Շան լեռների միջև, այն Զրադաշտի ծննդավայրն է համարվում, հիշվում է Դարեհ Վշտասպյանի սեպագիր արձանագրություններում:

2. Ամիճը որսի մսից պատրաստված համեղ ուտելիք էր:

ՊՐՈԿՈՊԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻՆ ԱՐՇԱԿ II-Ի ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պրոկոպիոս կեսարացին (VI դ.) բյուզանդական պատմիչ է, ծնվել է V դարի վերջին և ապրել մինչև 562 թվականը: Եղել է զորավար Բելիսարիոսի քարտուղարը և իրավական գործերի խորհրդատուն: Հեղինակ է մի շարք աշխատությունների, որոնցից պատմական մեծ արժեք ունի «Պատերազմների մասին»-ը, որը գրել է 550—554 թթ.: Այդ աշխատությունը բաղկացած է ութ գրքից, որոնցից երկուսը նվիրված է պարսկական պատերազմներին:

Այդ երկու գրքում արժեքավոր տեղեկություններ կան նաև Հայաստանի մասին: Պատմական կարևոր սկզբնաղբյուր է Պրոկոպիոսի «Անեկդոտան» կամ «Գաղտնի պատմությունը», որտեղ հեղինակը հիմնականում շարադրել է կայսրության ներքին կյանքը: Այստեղ ևս տեղեկություններ կան Հայաստանի, ինչպես նաև Բյուզանդիայի հայկական գաղթավայրերի մասին: Պրոկոպիոսի աշխատությունների մեջ եղած այն հատվածները, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, առանձնացրել և թարգմանել է պատմական գիտությունների դոկտոր Հ. Բարթիկյանը և հրատարակել է 1967 թ. «Պրոկոպիոս Կեսարացի» ընդհանուր վերնագրով: Ստորև բերված հատվածները վերցված են այդ հրատարակությունից:

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիրք I

5. ... Հայոց պատմությունը պատմում է[1], թե Անհուշ բերդի մասին պարսկական օրենքը միայն մի անգամ խախտվեց՝ հետևյալ կերպ:

Պարսիկների և հայերի միջև Պարսից Պակուր արքայի[2] և Հայոց Արշակ Արշակունու ժամանակ երեսուներկու տարի շհայտարարված պատերազմ էր գնում: Այս պատերազմի երկարատևության պատճառով երկու կողմերն էլ անչափ վնաս կրեցին, մասնավորապես՝ հայերը: Երկուսի միջև անվստահությունն այնքան խորացավ, որ ոչ ոք չէր կարողանում բանակցությունների մեջ մտնել մյուս կողմի հետ: Այդ միջոցին պատերազմ ծագեց պար-

սիկների և հայերից ոչ հեռու բնակվող այլ բարբարոսների միջև։ Հայերը, ցանկանալով պարսիկներին ցույց տալ դեպի նրանց ունեցած իրենց բարյացակամությունը և հաշտություն կնքելու պատրաստակամությունը, անսպասելիորեն հարձակվեցին այդ բարբարոսների երկրի վրա (նախօրոք տեղյակ պահելով պարսիկներին) և թշնամիների գրեթե բոլոր տղամարդկանց կոտորեցին։ Պակուրը կատարվածից անչափ գոհ մնալով, Արշակի մոտ ուղարկեց մեծամեծներից ոմանց, հավատարմության նշանակներ տվեց և հրավիրեց իր մոտ։ Երբ վերջինս հասավ [Պակուրի] մոտ, արքան նրան հյուրընկալեց և եղբոր նման հավասար համարեց։ Այնտեղ երկուսն էլ մեծ երդում տվեցին, որ պարսիկները և հայերը միմյանց բարեկամ են և դաշնակից, որից հետո Պակուրը թողեց, որ Արշակը գնա իր հայրենիքը։ Քիչ ժամանակ անց, ոմանք զրպարտեցին Արշակին, իբր նա ուզում է ապստամբություն բարձրացնել։ Այդ բանին Պակուրը հավատաց և անմիջապես Արշակին իր մոտ կանչեց, ասելով, որ լավ կլիներ բոլոր հարցերի շուրջը նրա հետ խորհրդակցել։ [Արշակին] իսկույն գնաց նրա մոտ՝ իր հետ տանելով ամենատաղմոմնակ հայերից ոմանց, ինչպես, նաև Վասիլիոսին, որը նրա զորավարն էր և խորհրդականը՝ շատ քաջ և խելացի։ Պակուրը և՛ Արշակին, և՛ Վասիլիոսին սկսեց բացեիբաց պախարակել և ամբաստանել, որ նրանք դրժել են երդումը և ուզում են շուտով ապստամբություն բարձրացնել, մի բան, որ նրանք մերժեցին, անվերջ երդվելով, որ իրենք երբեք նման մտադրություն չեն ունեցել։ Պակուրն սկզբում նրանց կալանավորեց, ապա հարցրեց մոգերին՝ ինչպե՞ս վարվել նրանց հետ։ Մոգերը արդար չէին համարում դատապարտելը, քանի որ նրանք չէին ընդունում մեղադրանքը և բացեիբաց չէին խոստովանում, և խորհուրդ տվեցին այնպես անել, որ Արշակը ստիպվի ինքն իրեն մեղադրել։ Մոգերն առաջարկեցին արքայական վրանի հատակը ծածկել գոմաղբով՝ կեսը Պարսից երկրի, իսկ մյուս կեսը՝ Հայոց։ Արքան այդպես էլ արեց։ Այն ժամանակ մոգերը վրանի շուրջը մոգություններ կատարելուց հետո առաջարկեցին արքային, որ նա Արշակի հետ պատուլա կատարի և մեղադրի Արշակին դաշինքը խախտելու և երդմնազանցության մեջ։ Մոգերը ևս պետք է ներկա լինեին այդ խոսակցությանը՝ որպես ղրույցի վկաներ։ Պակուրը հրավիրեց Արշակին, նրա հետ շրջեց վրանում, ուր ներկա էին մո-

գերը, և հարցրեց՝ թե ինչո՞ւ է նա, դրժելով երդումը, պատճառ դառնում պարսիկների և հայերի մեծ դժբախտության։ Քանի դեռ խոսակցությունը տեղի էր ունենում այն մասում, ուր պարսկական հողն էր փռված, Արշակը չէր ընդունում մեղադրանքը, ամենասարսափելի երդումներով հաստատում էր և վստահեցնում, որ ինքը Պակուրի հավատարիմ ծառան է։ Բայց երբ խոսակցության ընթացքում հասնում էին վրանի կենտրոնը, ապա անցնում Հայոց երկրի գոմաղբով ծածկված վայրը, ահա այստեղ Արշակն անսպասելի կերպով, չգիտեմ ինչից դրդված, ոչ միայն փոխում էր խոսակցության շեշտը, դառնում ավելի հանդուգն՝ սպառնալով Պակուրին և պարսիկներին, այլև հայտարարում էր, որ վրեժ կլուծի նման անպատվության համար, երբ ինքը շուտով իր անձի տերը դառնա։ Համարձակությամբ այդ ասելով նա ճեմում էր, մինչև որ շրջելով հասավ Պարսից երկրի գոմաղբը։ Այստեղ նա նորից նույն երգն էր երգում, որ ինքը Պակուրի ծառան է և այլ ողորմագին խոսքեր ասում։ Երբ նորից հասավ Հայոց հողի վրա, նա անցավ սպառնալիքներին։ Եվ այսպես բազմիցս մի հողի վրայից մյուսն անցնելով, ոչ մի գաղտնի բան չթողեց։ Ահա դրանից հետո մոգերը մեղադրեցին նրան դաշինքը խախտելու և երդմնազանցության մեջ։ Պակուրը Վասիլիոսին մորթազերծ արեց, մորթին լցրեց ծղոտով և կախեց շատ բարձր ծառից։ Իսկ Արշակին (քանի որ չէր կարող սպանել արքայական արյուն ունեցող մարդուն) բանտարկեց Անհուշ բերդում։

Որոշ ժամանակ անց, Արշակին Պարսից երկիրը ուղեկցող ամենամերձավոր մարդկանցից մի հայ մասնակցեց պարսիկների արշավանքին՝ բարբարոս մի ժողովրդի դեմ։ Պակուրը, տեսնելով այդ մարդու՝ պատերազմում ցուցաբերած քաջագործությունները և այն, որ նա պարսիկների հաղթության պատճառ դարձավ, պահանջեց նրանից ուլածը խնդրել, խոստանալով բավարարել նրա ամեն մի ցանկությունը։ Սա միայն մի բան խնդրեց, որ իրեն թույլատրվի մեկ օր ծառայել Արշակին։ Դա [արքային] շատ դժվար դրության մեջ դրեց, որովհետև նա ստիպված էր խախտել վաղեմի օրենքը, սակայն ցույց տալու համար, որ իր խոսքի տերն է, թույլ տվեց, որ խնդիրքը կատարվի։ Արքայի թույլտվությամբ նա մտավ Անհուշ բերդը, համբուրեց Արշակին և երկուսը զրկախառնված ողբացին իրենց ճակատագիրը և հազիվհազ իրարից բաժանվեցին։

Ողբից հետո, հայր լողացրեց Արշակին և արեց ինչ որ ընդունված էր. հագցրեց նրան արքայական հանդերձանքը ու բազմեցրեց բազմոցի վրա։ Այնտեղ Արշակը արքայավայել, ըստ նախկին սովորության, հյուրասիրեց ներկա եղողներին։ Ճաշկերույթի ժամանակ բազմաթիվ կենացներ և այլ խոսքեր ասվեցին, որոնք շատ դուր եկան Արշակին։ Գինարբուքը երկարեց մինչև գիշեր և խոսակցությամբ շատ ուրախացան և անշափ բավարարություն ստացած՝ հագիվ բաժանվեցին իրարից։ Պատմում են, որ այն ժամանակ Արշակն ասել է թե լավագույն օրն է անցկացրել, հանդիպել է իր ամենասիրած մարդուն, և որ այլևս ի վիճակի չէ տանել կյանքի տառապանքները։ Այդ ասելուց հետո ինքնասպանություն է գործել այն դանակով, որ ճաշկերույթի ժամանակ դիտմամբ թաքցրել էր, և ահա այդ ձևով վախճանվել։ Արշակի մասին այս [վկայությունը] Հայոց պատմությունն է տալիս և, ինչպես վերևում ասվեց, այդ ձևով Անհուշ բերդի մասին օրենքը խախտվեց։ Իսկ ես շարունակում եմ ընդհատածս [պատմությունը]։

1. Պրոկոպիոսի ակնարկը, թե՝ «Հայոց պատմությունը պատմում է», անշուշտ, վերաբերում է Փավստոս Բուզանդի Պատմությանը։ Պրոկոպիոսն ամբողջապես և բառացի վերցրել է Արշակի և Վասակի Պարսկաստան կանչվելու հատվածը, Արշակի դատաքննությունը՝ հայկական հողի և ջրի միջոցով, Արշակի բանտարկությունը Անհուշ բերդում, Դրաստամատի և Արշակի ինքնասպանությունը և այլ մանրամասնություններ։ Քիչ հավանական է, որ Փավստոսի բնագիրը Պրոկոպիոսի ժամանակ գոյություն է ունեցել հունական թարգմանությամբ, մրնում է կարծել, որ կամ Պրոկոպիոսն իմացել է հայերեն, օգտվել է հայկական բնագրից և կամ ուրիշներն են այդ հատվածները թարգմանել հունարեն։

2. Խոսքն այստեղ Պարսից թագավոր Շապուհ II-ի մասին է։

ՓԱՎՍՏՈՍՆ ԱՐՏԱԳԵՐՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ IV, գլ. Ծե. Այնուհետև պարսից Շապուհ թագավորը Հայոց աշխարհի վրա ուղարկեց իր իշխաններից երկուսին, մեկի անունը Ձիկ, մյուսինը՝ Կարեն, հինգ հարյուր բյուր[1] զորքով, որ գան Հայոց աշխարհը քարուքանդ անեն։ Նրանք եկան Հայոց աշխարհի վրա։ Երբ Հայոց աշխարհի տիկինը՝ Հայոց Արշակ թագավորի Փառանձեմ կինը, տեսավ, որ Պարսից թագավորի զորքերը

գյուղերին Հայոց աշխարհը, առավ իր հետ մոտ տասնմեկ հազար ընտիր սպառազինված պատերազմող մարդիկ ազատներից և Պարսից զորքերից խույս տալով, դիմեց, գնաց Արտագերս բերդը Արշարունյաց գավառում[2]։ Հետո Պարսից բոլոր զորքերը հասան, բերդի շուրջը նստեցին, պատեցին, պաշարեցին։ Իսկ նրանք ներսը ամրացան՝ հույս դնելով տեղի ամրությանն վրա, իսկ սրանք բանակ զարկելով, նստեցին դուրսը, ձորերի շուրջը։ Այսպես տասնեօթ ամիս բերդի շուրջը նստեցին և չկարողացան բերդն առնել, որովհետև տեղը շատ ամուր էր։ Ամբողջ երկիրը քանդեցին, ավերեցին, դուրս էին գալիս շրջակա գավառները և երկիրները ավարի էին առնում, մարդիկ և անասուններ գերելով, բերում էին իրենց բանակը, ուրիշ տեղերից կենսամթերք էին բերում և ուտում՝ բերդը պաշարման մեջ պահելով։

Իսկ Պապը՝ Արշակի որդին, այդ ժամանակ Հայոց աշխարհում չէր. նա Հռոմաց թագավորի մոտ էր, իսկ ազատների տոհմերից բաղկացած ամբողջ բանակը այս բաները լսելով՝ գնաց իրենց համար օգնություն խնդրելու. նրանց զորագլուխն էր Մուշեղը՝ Վասակ սպարապետի որդին։ Նրանք գնացին իրենց արքայորդու մոտ և բանակցում էին Հռոմաց թագավորի հետ, նրան համոզում էին իրենց թիկունք լինել։ Իսկ Հայոց աշխարհը նրանք հաճախ սուրհանդակներ էին ուղարկում երկրի տիկնոջ՝ Փառանձեմի մոտ, որ տոկա, բերդը պաշտպանի, պարսից ձեռքը չհանձնվի։ Նրա որդուց՝ Պապի կողմից էլ հաճախակի պատվիրակներ էին գալիս շաբաթ շաբաթի վրա, գաղտնի դռնով մի հնարով բերդ էին մտնում, միրտ էին տալիս տիկնոջը. այսպես բերդի պաշարումը տևեց տասներեք ամիս։ Իսկ պատվիրակները շարունակ գնում գալիս էին՝ ասելով, թե՝ «Պի՛նդ կաց, Պապ որդիդ գալիս է և կայսերական գունդ է բերում օգնության»։ Այս քաջալերությունը երկար ձգձգվում էր, որովհետև ասում էին. «Մի քիչ էլ, մի փոքր ժամանակ էլ համբերի՛ր, օգնությունը հասել է»։

Տասներորդ ամսից հետո աստծուց հարված հասավ բերդում ապաստանած զորեհարկանների վրա. բերդում եղողների մեջ մահ ընկավ, աստվածային պատուհաս... Մահը սկսվելու օրից մի ամիս էլ չտևեց, որ բոլորը կոտորվեցին, մոտ տասնմեկ հազար տղամարդ և մոտ վեց հազար կին. մի ամիս չանցավ, որ բերդում եղածները բոլորը կոտորվեցին... Իսկ Փառանձեմ տիկինը տես-

նելով, որ մենակ մնաց, բերդի դուռը բացեց և Պարսից զորքը թողեց բերդից ներս։ Սկան տիկնոջը բռնեցին և բերդից իջեցրին։ Հետո Պարսից զորավարները բերդը բարձրացան, ավար առան Հայոց թագավորի գանձերը, որ բերդում պահվում էին. բոլորը վար իջեցրին։ Ինը օր, ինը գիշեր շարունակ իջեցնում էին, ինչ որ գտան Արտագերս բերդում, և տիկնոջ հետ միասին գերի քշեցին։

Այնուհետև եկան Արտաշատ մեծ քաղաքը, գրավեցին, նրա պարիսպները կործանեցին. այնտեղ էլ պահված գանձերը առան և ամբողջ քաղաքը գերեվարեցին։ Արտաշատ քաղաքից գերի տարանինը հազար տուն հրեա, որոնց Արշակունի Տիգրան թագավորը գերի էր բերել Պաղեստինից, և քառասուն հազար տուն հայ։ (Այսքան մարդ) Արտաշատ քաղաքից տարան։ Քաղաքի շինություններից փայտաշենները կրակ տվին այրեցին, քարաշենները քանդեցին, նույնպես և պարիսպը. քաղաքի բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չթողին, քաղաքը բնակիչներից թափուր, անմարդի, ավերակ դարձրին։

Գրավեցին Վաղարշապատ քաղաքն էլ. քանդում, բրում, հիմքից կործանում էին. այս քաղաքից էլ գերի տարան տասնինը հազար տուն։ Ամբողջ քաղաքում շենք չթողին, բոլորը քարուքանդ արին, կործանեցին։ Ասպատակներ ուղարկելով՝ բոլոր շափահաս մարդկանց կոտորում էին, կանանց, երեխաներին գերի էին վերցնում։ Հայոց թագավորության բոլոր բերդերն առան, մեծ քանակության պաշարեղեն հավաքեցին նրանց մեջ և բերդապահներ թողին։

Առան Երվանդաշատ մեծ քաղաքն էլ. այստեղից դուրս բերին քսան հազար տուն հայ և երեսուն հազար տուն հրեա, իսկ քաղաքը հիմնահատակ կործանեցին։ Հետո առան Բագրևանդի Զարեհավան քաղաքը. այնտեղից էլ գերի վերցրին հինգ հազար տուն հայ և ութ հազար տուն հրեա և քաղաքը հիմնիվեր կործանեցին։ Առան նաև Զարիշատ մեծ քաղաքը Աղիհովիտ գավառում, (գերի վերցրին) տասնչորս հազար տուն հրեա և տասը հազար տուն հայ և այն էլ հիմնահատակ կործանեցին։ Առան նաև Վան ամուր քաղաքը Տոզը գավառում, կրակ տվին այրեցին, հիմքերը քանդեցին. այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ և տասնութ հազար տուն հրեա։

Հրեաների այս ամբողջ բազմությունը, որ Հայոց աշխարհից գերի տարան, Հայոց Տիգրան մեծ թագավորը բերել էր Պաղեստինից հին ժամանակ, երբ նա գերեց և Հայաստան բերեց հրեաների Հյուրկանոս քահանայապետին։ Տիգրան մեծ թագավորը այս բոլոր հրեությունը իր դարում բերեց, բնակեցրեց Հայաստանի քաղաքներում։ Իսկ այս ժամանակ (պարսիկները) ավերեցին այդ քաղաքները, նրանց բնակիչներին գերեցին, նրանց հետ միասին՝ Հայոց ամբողջ աշխարհն ու գավառները։ Դուրս բերին գերիներ զանազան գավառներից, կողմերից, ձորագավառներից, աշխարհներից, հավաքեցին բերին Նախճավան քաղաքը, որ իրենց զորքերի բանակատեղին էր։ Այս քաղաքն էլ առան, քանդեցին, այնտեղից էլ հանեցին երկու հազար տուն հայ և տասնվեց հազար տուն հրեա և մյուս գերիների հետ տարան։

Հայոց աշխարհում թողին ոստիկաններ ու վերակացուներ՝ երկրի մնացորդ ժողովուրդը հպատակեցնելու, իսկ իրենք Փառանձեմ տիկնոջը առնելով, գանձերով ու բազմաթիվ գերիներով տարան Պարսից աշխարհը. նկան, բերին հասցրին Պարսից աշխարհը Շապուհ թագավորի մոտ։

Երբ Փառանձեմ տիկնոջը բերին հասցրին Պարսից աշխարհը և Հայաստանի բոլոր գերությունն ու գանձերը և Փառանձեմ տիկնոջը թագավորի առաջը հանեցին, Պարսից թագավորը մեծ շնորհակալություն հայտնեց իր զորավարներին։ Պարսից Շապուհ թագավորը կամեցավ նախատինք հասցնել (Արշակունյաց) տոհմին, Հայոց աշխարհին և թագավորությանը։ Հրամայեց կանչել իր բոլոր զորքերին, իր մեծամեծներին, սատրին պաշտոնյաներին և իր տիրած աշխարհի բոլոր մարդկանց, և այս բազմության մեջ բերել Հայաստանի տիկնոջը՝ Փառանձեմին։ Եվ հրամայեց հրապարակում շինել ինչ-որ սարք, որի վրա գցել տվեց տիկնոջը և արձակել նրա վրա՝ անասնական պիղծ խառնակության համար։ Այս կերպ սպանեցին Փառանձեմ տիկնոջը։ Իսկ գերիների ամբողջ բազմությունը տարան բնակեցրին մի մասը Ասորեստանում, մյուս մասը՝ Խուժաստան երկրում։

1. «Բյուրը» 10 հազարն է. հարյուր բյուրը հավասար է մեկ միլիոնի, անկասկած, այս թիվը չափազանցված է։

2. Արշարունյաց գավառի Արտագերս բերդը Հայաստանի խոշոր և անմատչելի բերդերից մեկն էր։

ԱՄՄԻԱՆՈՍ ԱՐՏԱԳԵՐՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք XII

5—8. Պարսից Շապուհ թագավորը այդ անաղնիվ չարությունը կատարելուց հետո (նկատի ունի Արշակի բանտարկությունը— Ա. Ա.), ներքինի Գլակին և Արտավանին հանձնեց Հայաստանը՝ հանձնարարելով նրանց բոլոր ջանքերը գործ դնել ոչնչացնելու համար Արտագերսը։ Նրանցից մեկը՝ Գլակը, ներքինի էր, իսկ մյուսը՝ Արտավանը՝ բանակի հրամանատար։ (Արտագերսը բերդաքաղաք էր. այն ուներ ամուր պարիսպներ և ուժեղ պահակազոր)։ Այստեղ էր պահվում Արշակի գանձարանը, այստեղ էր գտնվում նաև Արշակի կինը՝ տղայի հետ միասին։

Կատարելով Շապուհի հրամանը, առաջնորդները ձեռնարկեցին Արտագերսի պաշարումը։ Բայց բերդը գտնվում էր անմատույց բարձունքում և անկարելի էր մոտենալ, մանավանդ՝ ձմեռը, երբ գետինը ծածկված էր ձյունով ու սառույցով։ Գլակը, որպես ներքինի, ընդունակ էր կանանց հետ փաղաքշանքով վարվելու, ուստի Արտավանի ուղեկցությամբ եկավ անմիջապես պարիսպի տակ՝ հայտնելով, թե ինքը ինչ-որ բան ունի ասելու։ Հավաստիություն ստանալով, որ իր անձը վտանգի չի ենթարկվի, իր ընկերոջ հետ միասին մտավ բերդի ներսը։

Նա թագուհուն և կայազորին սկսեց սարսափահար անել, խորհուրդ տալով շոտափույթ անձնատուր լինել և մեղմացնել Շապուհի կատաղությունը՝ նշելով նրա հանրահայտ դաժանությունը։ Խոսակցությունը երկար տևեց։ Բոլոր նրանք, ովքեր վճռականապես համաձայն էին բերդը հանձնելու մտքին, թագուհու արցունքներից ազդված, որ լաց էր լինում ճակատագրի դաժանության համար, խղճալով թագուհուն՝ փոխեցին իրենց կարծիքը։ Գլակը և Արտավանը, հույս ունենալով, որ հետագայում առատ վարձատրություն կստանան հռոմեացիներից, զգաստի խորհրդակցելով համոզեցին (պաշտպաններին), որ ուժեղ մի գունդ, բաց անելով բերդի դուռը, գիշերվա պայմանավորված ժամին, անսպասելի հարձակում գործի Թշնամու ճամբարի վրա։ Նրանք աշխատեցին այնպես անել, որ դավադիրները մնան անհայտ։ Համաձայնությունը հաստատվեց երդումով։

Գլակը և Արտավանը դուրս եկան բերդից և հայտարարեցին, որ բերդաքաղաքի պաշարվածները խնդրում են երկու օր ժամանակ տալ, որպեսզի խորհրդակցեն, թե ինչպես են վարվելու իրենց։ Դրանով նրանք կարողացան պարիսպների մոտ առաջացնել կատարյալ անհոգություն։

Եվ ահա գիշերը, երբ բոլորը քնած էին խորը քնով, բացվեց բերդաքաղաքի դուռը. այնտեղից արագ դուրս եկավ մարտիկների մի զորամաս՝ սրերը հանած, գաղտագողի կամացուկ հարձակվեց Թշնամու ճամբարի վրա, ուր վտանգ չէր ակնկալվում, և առանց դիմադրության հանդիպելու, սկսեց կոտորել բազմաթիվ քնած մարդկանց։

Այս անսպասելի դավադրությունը և պարսիկների հանկարծակի կոտորածն անչափ կատաղեցրեց Շապուհին։ Դրան ավելացավ նաև այն, որ վալենտինիանոս կայսրն ընդունել էր Արշակի որդի Պապին, որը մոր խորհուրդով փախել էր նրա մոտ փորձիկ Նեոշբախմբով։ Կայսրը նրան բնակության վայր էր հատկացրել Նեոկեսարիան՝ Պողնմոնական Պոնտոսի նշանավոր քաղաքը, և տվել էր նրա կոչմանը համապատասխան ապրուստի միջոցներ և ընդունել հարգանքով։

Գլակը և Արտավանը վալենտինիանոս կայսեր վերաբերմունքից քաջալերված, դեսպանություն ուղարկեցին նրա մոտ և խնդրեցին ռազմական օգնություն ցույց տալ և թագավոր նշանակել Պապին։ Կայսրը նկատի ունենալով այդ ժամանակ ստեղծված իրադրությունը, մերժեց օգնություն ցույց տալ, սակայն հանձնարարեց Տերենտիոս զորավարին՝ Պապին տանել Հայաստան իրրև երկրի կառավարիչ՝ առանց թագավորի անուն և աստիճան կրելու։ Այս արվեց միանգամայն ճիշտ դիտավորությամբ. (կայսրը) ցանկանում էր խուսափել խաղաղության պայմանագիրը խախտելու մեղադրանքից։

Շապուհը, տեղեկություններ ստանալով Արտագերսի իրադարձությունների մասին, գազանային կատաղության մեջ ընկավ. նա հավաքեց մեծ բանակ և մտավ Հայաստան ու ենթարկեց երկիրն անլուր ավերածության։ Պապը, վախենալով ներխուժումից և ոչ մի տեղից օգնություն չակնկալելով, փախավ բարձր այն լեռները, որտեղ բաժանում են մեր սահմանները Լազիկայից։ Այնտեղ նրանք հինգ ամիս թաքնվեցին խիտ անտառներում և լեռնային կիրճե-

րում։ Շապուհի բոլոր ջանքերը՝ բռնելու թագավորին, ապարդյուն անցան։

Շապուհ թագավորը նկատի ունենալով, որ ձմռան ցրտերը վրա հասնելուց հետո իզուր ժամանակ է վատնելու, կրակի մատնեց բոլոր պաղատու ծառերը։ Ուժով կամ դավադրության միջոցով նա կարողացավ տիրել Հայաստանի ուժեղ պահակազորով ամրացված բերդերն ու ամրություններր։ Ապա նա իր բոլոր զորքերով պաշարեց Արտագերսը։ Երբ նրան հաջողվեց հաճախակի գրոհներով բերդաքաղաքի կայազորը հասցնել ուժասպառության, պաշտպանները ստիպված եղան բաց անել ամրոցի դռները։ Նա հրդեհեց ամրոցը։ Այնտեղից նա տարավ Արշակի կնոջը՝ թագավորական գանձերի հետ միասին։

Կայսրը այս դեպքերը նկատի ունենալով՝ այդ կողմերը ուղարկեց կոմս Արինթեոսին, որպեսզի նա օգնի հայերին, եթե պարսիկները կրկին անգամ փորձեն անհանգստացնել նրանց...։

Պարսիկները կարող էին կործանել Հայաստանը, եթե չվախենային պաշտպանության նկատ Արինթեոսից և չհետաձգեին իրենց նախատեսած նոր արշավանքը։ Նրանք այժմ սահմանափակվեցին միայն նրանով, որ դեսպանություն ուղարկեցին կայսեր մոտ՝ խնդրելով, որ նա չպաշտպանի հայ ժողովրդին, ինչպես որ պայմանավորված էր եղել իր և Հովիանոսի միջև կնքված պայմանագրով։ Նրանց խնդրանքը մերժվեց։ Հետո, երբ Սավրոմակը, որի մասին քիչ առաջ հիշեցի, դուրս քշվեց Իբերական թագավորությունից, Տերենտիոսը նորից ետ ուղարկվեց Հայաստան տասներկու լեգեոնով։

1. Վալենտինիանոս I-ը Հովիանոս կայսեր (363—364) հաջորդն է, որպես Բյուզանդիայի կայսր գահակալել է 364 թվականին։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ԶԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. ԼԷ. Մեհրուժանը Խորասանի երկրում Շապուհին[1] իմաց տվեց, թե ինչպիսի մեծ օգնություն ցույց տվեց Թեոդոսը[2] Պապին. ուստի Շապուհից հրաման է տրվում, որ պարսից ամբողջ զորքը Մեհրուժանի հետ Հայաստան գնա պատերազմի։ Այս-

պես և Պապն ու Տերենտիանոսը իմաց են տալիս Թեոդոսին, թե Շապուհը բոլոր զորքերին հրամայեց մեր դեմ դուրս գալ, բացի դրանիկներից[3]։ Ապա նաև Թեոդոս Օգոստոսը Ադդն մեծ կոմսին հրամայեց գնալ Պապին օգնության, իր հետ վերցնել բոլոր հուսալի զորքերը, ոչ ոքի բաց չթողնել, վերցնել նույնիսկ քաղաքական զորքերը, ոչ ոքի բաց չթողնել, վերցնել նույնիսկ քաղաքների հետևակ պահապաններին, որոնք մետաքսյա վիշապանիշ դրոշներ էին կրում։

Պատերազմը գոամարվեց Զիրավ կոչված դաշտում, և ճակատները իրար մոտեցան։ Հայոց քաջ նախարարների պատանիները իրենց կամքով խիզախելով՝ մտան երկու ճակատների մեջ, առաջնորդությամբ իրենց սպարապետ Սմբատ ասպետի՝ Բագրատի որդու, որ Բագրատունյաց ցեղից էր։ Պարսից զորքերի միջից էլ դուրս եկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մեջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրիվ եկան։ Երբ պարսից պատանիները հետևից և ինչպես փոթորիկ, որ անտառը տերևաթափ է անում, այնպես էլ նրանք արագորեն նիզակներով նրանց վայր էին գցում ձիերից և սաոը դիակները գետնի երեսին փռում, քանի որ նրանք չէին կարողանում իրենց ճակատի մեջ մտնել։ Իսկ երբ պարսիկները էին մերոնց հետ դարձնում, սրանք մտնում էին հունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իրրև մի ամուր քաղաք, և ամենևին չէին վնասվում։ Որովհետև Գորգոնոսը՝ հետևակ զորքի հրամանատարը, այսպես վահաններով պատեց Պապի ճակատը, որպես պարսպով։

Որովհետև հունաց զորքերն սպառազինված էին ոսկեղեն և արծաթեղեն զենքերով և նրանց ձիերն էլ նույնպես զարդեր էին կրում, ուստի նրանք կարծես մի պարիսպ էին կազմում, որոնցից շատերը իրենց զգեստների ջղյա և կաշյա պահպանակների պատճառով կարծր քարերի տեսք էին ստանում, և նրանց վրա անխտրաբար գեսերը, իրրև նշաններ, ծածանվում էին սաղարթախիտ ծառերի սաղարթների նման։ Իսկ վիշապների (վիշապի նկարով դրոշակներ) գալարումները, որոնք քամուց ուռչելով ահագին կերպով բացել էին բերանները, ուրիշ բանի չեմ կարող նմանեցնել, քան եթե մի ադամանդյա լեռան, որ իջնում է դեպի ծովը,— այսինքն՝ հունաց ամբողջ ճակատը դեպի պարսկական զորքը, որովհետև սրանք էլ նմանվում էին մի հզոր գետի, դեպի մի կողմ ծավալ-

ված, որոնց հագած զրահները արդարև ջրի գույնի տպավորություն էին թողնում։

Երբ Մեծ Ներսեսը այս բոլորը տեսավ, բարձրացավ նպատ լեռան գլուխը և ձեռքերը դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում...։

Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դեմուդեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և (այդ ճակատից) դուրս էին թռչում մեր նախարարներից լավ զրահավորվածները ինչպես փայլատակող ճառագայթներ, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, որովհետև (դեմացից) ծագած արևի պատճառով չէր կարող դեմուդեմ նայել։ Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսկական գնդի դեմ։ Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը հանդիպեց մի մեծ խմբի, որի մեջ էր քաջ Ղեկաց (լեզգիների) թագավոր Շերփիրը, որ ճակատի մեջտեղում սինդ կանգնած էր՝ միջին գնդի գլուխն անցած։ Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուռ տալով փախուստի մատնեց։ Եվ այսպես հունաց և հայոց զորքերն առհասարակ, երկնային օգնությամբ զորացած, թշնամիների դիակներով ամբողջ դաշտը լցրին և մնացածներին փախցնելով հալածեցին։ Սրանց հետ էր և Ուռնայրը, Աղվանից թագավորը, որ խոցված էր Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղից, պատերազմից դուրս հանեցին։

Բայց չարագործ Մեհրուժանը ձիու վիրավորված լինելու պատճառով չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ, Հայոց Սմբատ սպարապետը ամասպարելով հասավ նրա մոտ, նրա հետ եկող զորքերին կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոգայովտի եղեգնուտի ափին։ Մտածելով, թե գուցե Մեծ Ներսեսը նրան փրկի, այն պատճառով բանակ չտարավ, այլ նույն տեղերում չարագործին փչացնելու համար պատրաստ է գտնում վրանաբնակներ, որոնք կրակ էին վառել, որպեսզի մխա խորովեն երկաթե շամփուրով։ Նա շամփուրը տաքացնելով երկու փաթ բոլորեց պսակի ձևով և շիկացնելով ասաց. «Քեզ պսակում եմ, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորելու և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»։ Եվ

մրակի նման շիկացած (շամփուրը) դրեց Մեհրուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց։ Այնուհետև երկիրը խաղաղվեց՝ Պապի ձեռքի տակ նվաճվելով։

1. Պարսից արքա Շապուհ երկարակյացը գահակալել է 309—379 թթ.։ Նա անընդմեջ հարձակումներ է գործել Հայաստանի վրա և փորձել է խառնվել նրա քաղաքական ու ներքին կյանքին։

2. Բյուզանդական Թեոդոս կայսրը հայտնի է նաև Թեոդոս Մեծ մականունով, գահակալել է 379—395 թվականներին։

3. Դրանիկներ են կոչվել պալատական զորքերը։

ՓԱՎՍՏՈՍԸ ՊԱՊԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ V, գլ. Բ. Ապա Վասակի որդի Մուշեղը՝ Մեծ Հայքի սպարապետը, ընտրեց քառատուն հազար ընտիր և հավատարիմ մարդիկ ազնվականներից ու ազգականներից, միաբան և միակամ, պատրաստեց նրանց համար ձի, զենք, ուտեստ և իր հետ առնելով գնաց Ատրպատականի սահմանում նստեց՝ Հայոց աշխարհը պահպանելու համար։ Նույն ժամանակ Պարսից Շապուհ թագավորն էլ իր զորքով ամենայն պատրաստությամբ եկավ Ատրպատական աշխարհը. և նրա բանակի մի գնդի առաջնորդն էր Մեհրուժանը, իսկ թագավորի բուն գունդը մնաց Թավրեժում։

Եվ Հայոց զորավար ու սպարապետ Մուշեղը իր քառատուն հազարով գալիս հարձակվում է (Շապուհի) բանակի վրա ու կոտորում է բոլորին։ Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողոպրում է, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի է անցկացնում Մուշեղը Հայոց զորքով։ Շատերին կոտորեցին, Պարսից ավագներից շատերին ձերբակալեցին, ավար առան Պարսից թագավորի գանձերը, բռնեցին նաև տիկնանց տիկնոջը՝ մյուս կանանց հետ միասին։ Մուշեղ սպարապետը ձեռք գցեց նաև ամբողջ մաշկավարդանը, իսկ մոտ վեց հարյուր ավագների Հայոց Մուշեղ զորավարը հրամայեց մորթազերծ անել, մորթերը հանել ու խոտով լցնել և ապա բերել տվեց Հայոց Պապ թագավորի մոտ։ Այսպես էր նա անում իր հոր՝ Վասակի վրեժն առնելու համար։

Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չտվեց Հայոց Մուշեղ զորավարը, այլ հրամայեց բոլորի համար ժանվարներ պատրաստել և նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից: Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ, իսկ Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարության, քաջության և ազնվության վրա, որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ: Այդ ժամանակները Մուշեղը մի ճերմակ ձի ուներ, իսկ Պարսից Շապուհ թագավորը, երբ գինու (գավաթը) ձեռքն էր առնում, երբ ուրախության ժամանակ իր զորքին հյուրասիրում էր, ասում էր. «ճերմակաձին թող գինի խմի»: Եվ մի գավաթի վրա նկարել տվեց Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձի հեծած, և ուրախությունների ժամանակ այդ գավաթը գնում էր իր առաջ ու շարունակ նույն բանն էր կրկնում՝ «ճերմակաձին թող գինի խմի»:

Իսկ Մուշեղը և Հայոց բոլոր զորքերը Պարսից բանակի ավարն առան ու լիացան դանձերով և ստացվածքներով. ավարից մեծ բաժին պահեցին իրենց Պապ թագավորի համար, նույնպես և Հայոց այն զորքերի համար, որ մնացել էին Պապ թագավորի մոտ: Ավարից մաս հանեցին նաև Հունաց զորավարների համար, որոնք Պապ թագավորի մոտ էին, այնպես էլ բոլոր զորքերին բաժին էին հանում բերած ավարներից: Բայց երբ Հայոց զորքերն իրենց երկիրը դարձան, Հայոց զորքերից շատերը Պապ թագավորի առաջ ամբաստանեցին Մուշեղ սպարապետին, թե ինչո՞ւ նա ազատ արձակեց Պարսից թագավորի կանանց, որ մեր թշնամին է. և Հայոց Պապ թագավորը այս բանի պատճառով երկար ժամանակ ոչ քիչ թշնամությամբ էր վարվում Մուշեղի հետ:

V, գլ. Դ. Սրանից հետո Պարսից թագավորը նորից զորահավաք է կատարում և իր ամբողջ ուժով ու զորությամբ և բոլոր զորքերով շարժվում գալիս հասնում է Ատրպատական աշխարհը: Ինքը քիչ զորքերով մնում է այնտեղ, իսկ զորքերի ամբողջ բազմությունը պատերազմի ուղարկում Պապ թագավորի դեմ: Պարսից զորքը գալով ասպատակում է և հասնում մինչև Հայաստանի միջնաշխարհը: Այն ժամանակ Հայոց Պապ թագավորն էլ հրամայում է զորաժողով անել Բագավանում: Հունաց զորքն էլ, որ գտնվում էր Եռանդում ու Բախիշում, եկավ, միասին հավաքվեցին Պապ

Բագավորի մոտ, իրենց բանակի շուրջը փոս կտրեցին Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու, կազմակերպվեցին, պատրաստվեցին ճակատամարտի:

Ահա Հայոց զորավար Մուշեղ սպարապետը հավաքում է հայկական ամբողջ զորքը. ավելի քան իննսուն հազար մարդ կազմակերպվեցին, պատրաստվեցին: Իսկ երբ Պարսից Շապուհը իր զորքերը դասավորում է Հայոց աշխարհի և Հունաց զորքերի դեմ, այնտեղ՝ Պարսից թագավորի մոտ է լինում Աղվանից Ուռնայր թագավորը: Արդ՝ Ուռնայրը առաջ է գալիս և Պարսից Շապուհ թագավորից պարգև է խնդրում, ասելով. «Այրերի մեջ քաջ, եթե կամենում ես, ինձ իբրև պարգև հրաման տուր, որ Պապ թագավորի հայկական զորքերի դեմ ես ինքս դուրս գամ իբրև առաջապահ կռվող իմ գնդով, որովհետև Արյաց գնդին պատշաճ է Հունաց զորքերի դեմ դուրս գալ, իսկ ես իմ գնդով Հայոց իշխանների դեմ դուրս կգամ»: Եվ Շապուհ թագավորը հավանություն տվեց, շնորհակալություն հայտնեց ու հրաման տվեց: Բայց Մերուժան Արծրունին պատասխան տվեց ու ասաց Ուռնայրին. «Դու դաշ գրկեցիր, շատ զարմանալի կլինի, եթե հավաքել կարողանաս»: Եվ Մերուժանը մի մարդու միջոցով գաղտնապես լուր ուղարկեց Հայոց Մուշեղ զորավարին. «Դիտցի՛ր և պատրաստվի՛ր, Մուշեղ, որ Աղվանից Ուռնայր Բագավորը մեծ պարծանքով քեզ պարգև է խնդրել: Նայի՛ր, թե ինչ պիտի անես»:

Բայց մինչև Պարսից զորքերը չվոմ գալիս էին Հայոց վրա, նրանց հետ էր և Աղվանից Ուռնայր թագավորն իր գնդով: Աղվանից թագավորը խոսում է իր մոտ եղողների հետ և ասում. «Ձեզ այժմվանից հիշեցնում եմ, որ մտքներում պահեք, երբ մենք Հունաց զորքերը ձերբակալենք, նրանցից շատերին կենդանի թողնք, որպեսզի կապենք ու տանենք Աղվանք և իբրև կավատործ, գալատոս և որմնադիր աշխատեցնենք մեր քաղաքների, ապարանքների և ուրիշ պիտույքների համար»:

Երբ Պարսից և Հունաց երկու գնդերը եկան իրար մոտեցան և պատրաստվում էին կռվի, Հայոց Պապ թագավորն էլ դինվեց ու պատրաստվեց ճակատամարտի մեջ մտնելու: Բայց Տերենտը՝ Հունաց զորավարը, թույլ չտվեց, որ Պապ թագավորը կռվի մեջ մրտնի: Նա ասաց. «Հունաց թագավորը մեզ ուղարկեց քեզ համար, թե գնացե՛ք նրան պահպանեցե՛ք: Արդ՝ եթե քեզ մի բան պատա-

հի, մենք ի՞նչ երեսով պետք է տեսնենք մեր թագավորին, կամ ի՞նչ պիտի պատասխանենք: Սիրե մենք այստեղ առանց քեզ կենդանի մնանք և մեր թագավորի մոտ հասնենք, մենք գլխապարտ կմնանք մեր թագավորի առաջ: Դու, արքա, արա՛, ինչ որ ասում ենք քեզ. ա՛ռ ներսես եպիսկոպոսապետին, գնա՛ Նպատ լեռը, մի ամուր անվտանգ տեղ նստի՛ր և թող առաք Ներսես եպիսկոպոսապետը աղոթք անի և խնդրի աստծուց, որ մեզ հաղթություն տա: Այնտեղից բարձրից կնայես և կտեսնես մեր ջանքերն ու աշխատանքը պատերազմի ընթացքում, ամեն մեկի քաջությունն ու երկչոտությունը, որ քո առաջ կկատարվենք»:

Իսկ պատերազմի մեջ աստծու օգնությունը հասնում է հույներին, և հաղթություն է շնորհվում Հայկական գնդին: Պարսից գնդերը պարտություն կրեցին, փախուստի դիմեցին և ցրվեցին, սփռվեցին դաշտերում, լեռների կատարներին, խորերում և ձորերում: Նրանց հետամուտ էին լինում Հունաց և Հայոց զորքերը, հասնում ու կոտորում էին մեծ ու փոքր առհասարակ. շատերից քչերը, որոնք լավ ձիեր ունեին, կարողացան փախչել: Փախստականների ետևից էին ընկնում Հայոց զորքերը և շատերին կոտորում էին ճանապարհին, և այսպիսով Պարսից զորքերին հալածում էին մինչև Ատրպատական, Հայաստանի սահմանները:

Իսկ Մուշեղ Հայոց սպարապետը չարաչար կոտորում էր Պարսից զորքերը և, աչք պահելով, հանդիպում է Աղվանից գնդին ու բոլոր զորքերը ջարդում է. հասնում է Աղվանից Ուռնայր թագավորին, մինչդեռ նա փախչում էր: Մոտենալով՝ իր նիզակի կոթով երկար ծեծում է նրա գագաթը՝ ասելով. «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագավոր մարդուն չեմ սպանի, մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»: Եվ թույլ տվեց նրան ձիավորների հետ փախչել գնալ Աղվանից աշխարհը:

Իսկ երբ Հայոց բոլոր զորքերը ետ դարձան, թիվ չկար ախոյանների այն գլուխներին, որ Հայոց Մուշեղ քաջ զորավարը բերել էր Հայոց Պապ թագավորի առաջ: Այնպես էլ բոլոր նախարարներն ու մեծամեծները և ամբողջ զորքը, ամեն մեկն իր չափին: Եվ մեծ հաղթություն եղավ Հայոց աշխարհի ու Հունաց զորքերի համար: Նրանք լիացան մեծ ավարով՝ գանձերով, զենքերով, զարդերով, ոսկով ու արծաթով, շատ կարասիներով, ձիերով, ջորիներով և

ուղտերով, որ խլեցին (պարսիկներից): Ավարը շատ շատ էր. ներան թիվ ու չափ չկար:

V, գլ. ե. Ապա Աղվանից Ուռնայր թագավորը գաղտնի լուր է ուղարկում Մուշեղին. նրա մոտ մարդ է ուղարկում և տեղեկություն հաղորդում՝ ասելով. «Շատ շնորհակալ եմ քեզանից, որ ինձ չսպանեցիր. աստված ինձ քո ձեռքը տվեց, բայց դու ինձ խնայեցիր, այս քո լավությունը չեմ մոռանա, քանի կենդանի եմ: Բայց իմաց եմ տալիս քեզ, որ Պարսից Շապուհ թագավորը պատրաստվում է բոլոր իր զորքերով անապատելի կերպով հարձակվել քո վրա»: Այն ժամանակ Հունաց ստրատելատը կազմակերպեց իր ձեռքի տակ եղած զորքերը և շարժեց տարավ Ատրպատական աշխարհից՝ Դանձակի կողմից դեպի Հայաստանի սահմանները: Այնպես էլ Հայոց Մուշեղ զորավարը մի տեղ հավաքեց Հայոց բոլոր զորքերը, որոնք իննսուն հազար ընտիր մարդիկ էին, լավ զինված, նիզակները ձեռքներին, չհաշված ասպարակիրներին: Սրանք էլ, ստացված տեղեկության համաձայն, շտապով վաղօրոք հասան իրենց սահմանները. միայն թագավորը մնաց Հայոց աշխարհում: Ներսես եպիսկոպոսապետն ևս մնաց երկրում և հրամայեց ամբողջ երկրում աղոթք անել այն զորքերի համար, որ գնացել էին պատերազմի:

Իսկ Պարսից Շապուհ թագավորը իր ամբողջ զորքերով գալիս հասնում է պատերազմի տեղը և տեսնում է, որ Հունաց զորքերը և Հայոց գունդը արդեն կազմ ու պատրաստ են պատերազմի: Երկու ճակատները խառնվում են իրար, և Պարսից զորքը պարտություն է կրում: Մանավանդ նիզակավորների գնդերը մոլեգնաբար հարձակվելով՝ իրենց ձիերի վրայից հարվածելով՝ քաջությամբ գետին էին գլորում իրենց ախոյաններին Պարսից Շապուհ թագավորի դեմուդեմ: Երբ գետին էին գլորում, Հայոց բոլոր զորքերը քաջալերական ձայներով ազաղակում էին. «Ա՛ռ, քաջ Արշակ»: Ամեն անգամ, որ այդ պատերազմում մի ախոյան էին սպանում, նրան էին նվիրում իրենց նախկին թագավոր Արշակին՝ ասելով. «Մեր Արշակ թագավորին մատաղ եղիր»: Երբ Հայոց ազատների նիզակավոր ախոյանները խմբովին հարձակվում էին Պարսից նիզակավորների վրա ու վեր էին գլորում, քաջալերությամբ ասում էին. «Ա՛ռ, քաջ Արշակ». իսկ երբ այս ախոյաններին մորթում, գլխատում էին, ասում էին. «Արշակ թագավորին մատաղ եղիր»:

Իսկ լեգեոնների զորքի բազմությունը, այսինքն Հունաց ասպարակիր զորքը, նույնպես և Հայոց ասպարակիրները, պահպանում էին Հայոց զորքի թիկունքը, վահաններով պատսպարված լինելով, ինչպես մի ամուր քաղաք (կովողների) թիկունքում։ Երբ Պարսից զորքերը փոքր-ինչ վանում էին Հունաց զորքերին կամ Հայոց նիզակավոր գնդերը, սրանք Հունաց վահանավոր լեգեոնների կամ Հայոց ասպարակիրների մեջ էին մտնում՝ ինչպես բերդերի մեջ և հանգստանում էին։ Իսկ երբ մի փոքր շունչ էին քաշում, ապա այնտեղից դուրս գալով հարձակվում էին և պարսիկներից անթիվ մարդիկ իրենց ոտքերի տակ էին գլորում և սպանում ու գլխատում էին՝ նույն քաջալերական խոսքերն ասելով իրենց Արշակ Թագավորի համար։ Այսպիսով նրանք անչափ և անթիվ զորքեր կոտորեցին պարսիկներից։ Հետո երբ պարսիկները փոքր-ինչ նրանց հաղթում էին, նրանք դարձյալ իբրև մի բերդ ապաստանում էին լեգեոնի վահանավոր զորքերի մեջ, որոնք իրենց վահանները բաց անելով, նրանց ներս էին ընդունում ու փակում։ Այդ օրը Հունաց զորքն ու նրանց Տերենտ սատրատելատը և Հայոց գնդերն ու նրանց Մուշեղ սպարապետը Պարսից զորքերը ջարդեցին, ոչնչացրին։ Պարսից Շապուհ Թագավորը քիչ մարդկանցով փախչում է այդ պատերազմից։ Իսկ սրանք սահմանապահներ են դնում և դառնում են իրենց Պապ Թագավորի մոտ բարի անունով, մեծ ավարով և շքեղությամբ։

ԱՄՄԻԱՆՈՍԸ ՊԱՊԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԴՈՐՁՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք I

18—23. Տերենտիոսի՝ Պապ Թագավորի մասին հաճախակի արած բամբասանքների, ինչպես և Պապին Տարսոն կանչելու և բռնելու անհաջող փորձի հետևանքով՝ սատակացավ կայսեր անհաշտ ատելությունը Պապի նկատմամբ. սկսեցին անընդմեջ նորանոր նենգություններ հորինել՝ նպատակ ունենալով գրկել նրան կյանքից։ Այս (դավադրությունը) գլուխ բերելու գործը գաղտնի գրությամբ հանձնարարվեց Տրայանոսին, որն այն ժամանակ Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար էր նշանակված։ Աշխատելով նենգագույն խորամանկությամբ, սա մեկ նրան էր հանձնում վաղեսի նամակները՝ հավատացնելով նրա բարյացա-

կամ վերաբերմունքը, մեկ ինքն էր գալիս Պապի մոտ ճաշկերույթի և, վերջիվերջո, երբ դավադրությունը լիովին կազմակերպվեց, շատ քաղաքավարի ձևով Պապին հրավիրեց իր մոտ ճաշի։

Թագավորը ոչ մի վտանգ չզգալով, եկավ և նստեց իրեն տրամադրված պատվավոր տեղում։ Մատուցվեցին ընտիր կերակուրներ։ Ընդարձակ դահլիճը դղրդում էր լարավոր և փողավոր գործիքների հնչյուններից։ Երբ գինին տաքացրեց գլուխները, ինքը՝ հրավիրող Տրայանոսը, դուրս գնաց բնական կարիքը բավարարելու պատրվակով։ Ապա ներս եկավ ահեղատես մի բարբարոս, որը կոչվում է սուպրե։ Վայրենին սպառնացող հայացքով, թափահարելով պատյանից հանած սուրը, մոտեցավ երիտասարդ Թագավորին, որ սպանի նրան, որի առջև փակված էին դուրս պրծնելու բոլոր ճանապարհները։

Թագավորը նրան տեսավ այն ժամանակ, երբ փոքր-ինչ թեքված էր բազկաթոռում։ Վեր կացավ և հանեց դաշույնը, որպեսզի որքան կարող է, պաշտպանի իր կյանքը, սակայն նա վայր ընկավ կրծքից խոցված որպես ամրոցալի մի զոհ։ Նա հոշոտվեց կրկին հասցված հարվածներից։ Ահա այսպիսի նենգությամբ խարդախվեց դյուրահավատության։ Հյուրընկալության ժամանակ օտարականի արյունը թափվեց շքեղ սեղանածածկոցների վրա՝ աստծո հյուրասիրության դեմ հանդիման, մի բան, որը նույնիսկ Եվրիպեան Պոնտոսի կողմում խղճմտությամբ երկյուղածության արժանի վարմունք է համարվում։ Այնուհետև, ճաշկերույթի մասնակիցները, չափից դուրս հագեցած պատահարից, սարսափահար դուրս փախան։

1. Բյուզանդական իշխանությունները Պապին ցանկացել են սպանել այս դավադրությունից առաջ. նրանք Պապին այդ նպատակով կանչել էին Տարսոն, նա էլ գնացել էր, բայց տեղ հասնելիս, հոռոմեական բանակում հայ ծառայողներից մեկը զգուշացրել էր Պապին, որ իրեն կանչել են ոչ բարի նպատակով։ Իմանալով այդ մասին, Պապն իր թիկնապահ զինվորների հետ միասին, անմիջապես փախել և դուրս էր եկել թակարդից։ Ամմիանոսը «անհաջող փորձ» ասելով՝ այդ է նկատի ունեցել։

ՊԱՊԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. V, գլ. ԼԲ. Եվ Պապ Թագավորը իր միտքը ծռեց ու սիրտը շուռ տվեց Հունաց Թագավորից և կամեցավ սեր և միաբանություն

հաստատել Պարսից թագավորի հետ. սկսեց իրեն թիկունք դարձնել Պարսից թագավորին, նրա մոտ պատգամավորներ ուղարկեց միաբանության հաստատելու համար... Թեպետ Մուշեղը և Հայոց բոլոր իշխանները շատ հորդորեցին թագավորին, որ Հունաց թագավորության հետ իր ուխտը չխզի, նրանց չլսեց և հայտնի կերպով ցույց տվեց իր թշնամությունը Հունաց թագավորի դեմ:

Իսկ Հունաց իշխաններն ու զորքերը դեռ Հայոց աշխարհումն էին: Իշխաններից մեկի անունը Տերենտ էր, մյուսինը՝ Ադեն: Եվ Հունաց թագավորը գաղտնի մի դեսպան ուղարկեց Հայաստանում եղած իր զորքերի իշխանների մոտ և հրաման տվեց Հայոց Պապ թագավորին սպանել: Երբ Հունաց իշխանները Հայաստանում այս հրամանը ստացան իրենց թագավորից, հարմար դեպքի էին սպասում, որ Հայոց Պապ թագավորին սպանեն: Պատահեց մի հարմար ժամանակ, երբ Հունաց զորավարները՝ Տերենտն ու Ադեն, իմացան, թե Հայոց Պապ թագավորը մենակ է, երբ Հայոց մեծամեծներն ու զորքը այնտեղ չէին, և Պապ թագավորի բանակը գտնվում է Բագրևանդ գավառում՝ Խու կոչված տեղում մի դաշտում, իսկ Հունաց զորքերի բանակը գտնվում էր Հայոց թագավորի բանակին մոտ, ապա Հունաց զորավարները փառավոր հացկերույթ սարքեցին և Հայոց մեծ թագավոր Պապին ընթրիքի հրավիրեցին մեծ պատվով՝ համաձայն նրա արժանավորության, ինչպես թագավոր մարդու հրավիրում են փառավոր հացկերույթի. ամեն բան կազմել պատրաստել էին:

Պապ թագավորն ընթրիքի գալով՝ մտավ ու բազմեց կերուխումի: Եվ երբ թագավորը մտնում է Հունաց Տերենտ զորավարի սենյակը, լեգեոնի ասպարակիր զինվորները, ձեռքներին վահան, դռներում սակր, ներսը, սենյակի պատերի մոտ, շրջապատելով պահպանում էին. նույնպես և (սենյակից) դուրս պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վրայից սովորական զգեստ հագած (զինվորներ): Իսկ Պապ թագավորն իր խելքով այնպես էր կարծում, թե իրեն պատվելու համար են այդպես անում: Եվ մինչ ընթրիքի ժամանակ նա ուտում էր, սակրավոր զինվորները նրա ետևը կանգնած նրան ամեն կողմից պատում էին: Երբ սկսեցին խմել, ուրախության առաջին բաժակը մատուցեցին Պապ թագավորին, և իսկույն հնչեցին թմբուկներն ու սրինգները, քնարներն

ու փողերն իրենց ներդաշնակ ձայներով: Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապ թագավորը ուրախության գինին բռնած էր մատներով ու նայում էր գուսանների խմբին, մինչ ձախ ձեռքը արմունկին հենած՝ մատներում բռնած ուներ ոսկե թասը, իսկ աջ ձեռքը դրել էր նրանի կոթին, որ կապած ուներ աջ ազդրին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմեր, իսկ աչքերով հառած նայում էր գուսանների զանազան խմբերին, Հունաց զորքերին աչքի ակնարկով նշան է տրվում. և երկու սակրավոր զինվորներ, որ հետևից կանգնած էին սպասավորության ոսկեպորտ վահաններով, հանկարծորեն միասին սակրերը բարձրացնելով զարկում են Պապ թագավորին, մեկը ուղիղ վիզն է կտրում, մյուս սակրավորը զարկում է աջ ձեռքի թաթին, որ դրված էր նրանի կոթի վրա, կտրում և դեն է նետում: Պապ թագավորը տեղնուտեղն ընկնում է բերանքսիվայր. թասով գինին, պարանոցից հոսող արյունը և նրա մարմինը միասին ընկնում են սեղանի վրա: Պապ թագավորն անմիջապես մեռնում է: Երբ սեղանատանը աղմուկ և շփոթություն ընկավ, Անձևացյաց գավառի տեր Գնելը բազմած տեղից վեր կացավ, սուրը քաշեց և սպանեց զինվորներից մեկին, որ խփել էր թագավորին: Այն ժամանակ Հունաց Տերենտ զորավարը իր սուրը հանելով խփում է և Գնելի գլխից սկավառակը կտրվելով աչքերի վրա է շուռ տալիս, և ուրիշ ոչ ոք ոչինչ չհանդգնեց ասել նրանց և ոչ մի խոսք:

V, գլ. ԼԹ. Եվ Հայոց բոլոր մեծամեծ իշխանները հավաքվեցին միասին, և՛ Մուշեղ սպարապետը, և՛ Հայր Մարդպետը, և՛ բոլոր իշխանները. «Ի՞նչ անենք, ի՞նչ գործենք,— ասում էին նրանք,— մեր թագավորի վրեժը պահանջե՞նք, թե ոչ»: Վերջը խորհրդի մեջ այս միտքն ընդունվեց. «Մենք չենք կարող հեթանոս պարսիկների ծառայության տակ մտնել և Հունաց թագավորին թշնամացնել, ոչ էլ երկուսին ևս թշնամացնել, որովհետև առանց որևէ մեկի թիկունքի չենք կարող ապրել»: Ապա խորհրդում այսպես որոշվեց. «Ինչ որ եղավ՝ եղավ, թող էլի Հունաց թագավորին ծառայենք, Հունաց թագավորի իշխանությանը հնազանդվենք, թող Հունաց թագավորները մեզ հետ վարվեն ինչպես ուզում են»: Այլևս չմտածեցին վրեժ լուծել կամ մի ուրիշ բան անել, այլ տեղներում լուռ նստեցին:

ՓԱՎՍՏՈՍԸ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ V, գլ. ԼԴ. Հայոց Պապ թագավորի մահից հետո Հունաց թագավորը Հայոց աշխարհի վրա թագավորեցրեց մի ոմն Վարազդատի, որ նույն Արշակունի տոհմից էր։ Նա մեծ շքեղությամբ եկավ Հայոց աշխարհը և թագավորեց Հայոց աշխարհում։ Նա տարիքով մանուկ էր, արիասիրտ, հզոր ձեռքերով, քաջ սրտով, բայց թեթևամիտ, երեխայի նման խելքը պակաս, մանկամիտ։ Բայց նրան տեսան, Հայոց մեծամեծների ու նախարարների բոլոր տոհմերը նրա մոտ հավաքվեցին՝ ուրախանալով, որ նա իրենց վրա թագավորեց։

Իսկ Հայոց Մուշեղ սպարապետը առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները, ինչպես սովոր էր երկիրը բարեկարգ պահել, և բարի խրատներ էր տալիս մանուկ Վարազդատ թագավորին։ Եվ միշտ հոգս էր քաշում Հայոց աշխարհի թագավորության համար, թե ինչպես շեն պահի, և միշտ բարեմտությամբ աշխատում էր, որ թագավորությունը հաստատ մնա. նա խորհրդակցում էր Հունաց իշխանների հետ և նրանց միջոցով՝ կայսեր հետ, թե հարկավոր է Հայոց աշխարհում քաղաքներ շինել ամեն մի գավառում, որտեղ մի-մի քաղաք, որտեղ երկու-երկու, ամուր պարիսպներով շրջապատած, որպեսզի զորանիստ տեղեր գտնեն ամբողջ Հայոց աշխարհում, մինչև Դանձակ սահմանագլուխը, որ սահման էր Պարսկաստանի և Հայաստանի միջև։ (Նույնպես խորհուրդ էին անում) Հայոց բոլոր ազնվականներին զինավորել կայսերական ծախսով, այնպես էլ Հայոց աշխարհի զորքերը, որպեսզի այս կերպով ամեն զգուշություն ձեռք առնեն իրենց թշնամիների՝ Պարսից զորքերի դեմ։ Եվ Հունաց թագավորը մեծ ուրախությամբ հանձն առավ այս բաները կատարել, որպեսզի այս բոլոր միջոցներով երկիրը հաստատ ու անշարժ կապվի իր հետ, և Պարսից թագավորը չկարողանա Հայոց աշխարհը գրավել։

V, գլ. ԼԵ. Բայց երբ Հայոց մեծ նախարարները տեսնում են, թե Հայոց Վարազդատ թագավորը դյուրահավատ մանուկ է, չարը բարուց զանազանել չգիտե, սկսեցին այնուհետև թագավորին խաղացնել իրենց ուզածի պես. իրենց խոսքերով էին նրան կառավա-

րում, ինչպես իրենք կամենում էին։ Նա ավելի լսում էր մանուկներին, որոնք տարիքով իրեն հասակակից էին, քան իմաստուն ծերերին, որոնք կարող էին նրան օգտակար խրատներ տալ։

Իսկ Բատը, որ Սահառունյաց տոհմի նահապետն էր, Վարազդատ թագավորի դայակն ու ուսուցիչը, միտք դրեց Մուշեղից հափշտակել զորավարության՝ սպարապետության գործը։ Այս պատճառով նա սկսեց մատնություններ անել նրա մասին իր սանիկին՝ Վարազդատ թագավորին... Եվ այսպիսի խոսքերով շարունակ դաղտնի գրգռում էին թագավորին, մինչև որ համաձայնվեց Հայոց զորավար-սպարապետին սպանել ըստ նրանց ցանկության։

Հետո խորհուրդ արին, թե ինչպե՞ս կարողանան նրան բռնել, որովհետև նրանից շատ էին վախենում։ «Եթե գլխի ընկնի,— ասում էին,— մեծ պատերազմ կհարուցի, և ոչ ոք չի կարողանա նրա քաջությանը դեմ դնել. պետք է մի հնարք, խորամանկություն բանեցնել»։ Եվ այսպես սպասում էին։ Ապա մի օր Հայոց Վարազդատ թագավորը հրաման տվեց մեծ ընթրիք սարքել մեծ պատրաստությամբ և հրամայեց ընթրիքին հրավիրել բոլոր ավագ, պատվավոր մարդկանց, մեծամեծներին և Մուշեղ զորավարին։ Վարազդատը պատրաստեց ընտիր, ուժեղ, հզոր մարդիկ, որ պատրաստ լինեն գործին՝ հանկարծակի, հանպատրաստից, անսպասելի ժամին Մուշեղի վրա հարձակվելու։ Հյուրերին շատ ուրախացնում է, շատ գինի է խմել տալիս և շատ զվարճացնում է։ Վարազդատ թագավորը նախապես նշան էր տվել իր պատրաստած սպանողներին, թե՝ «Երբ կտեսնեք, որ Մուշեղ սպարապետը լավ հարբել է և հարբեցողությունից խելքը կորցրել է, ես վեր կկենամ իբր թե արտաքնոց գնալու համար, դուք այդ ժամանակ նրան շրջապատեցեք»։ Բոլորը չափից դուրս խմեցին, գինովցան, բայց Վարազդատը գինի խմելուց զգուշանում էր։ Երբ նա նկատեց, թե հարբեցողությունից խելքները կորցրել են, վեր կացավ, իբր թե ջուր թափելու գնալու համար, և սեղան բազմած բոլոր ավագները ոտքի կանգնեցին՝ նրան պատվելու համար։ Եվ հանկարծ այն մարդիկ, որոնց հրաման էր տվել, տասներկու մարդ միանգամից միասին հետևի կողմից Մուշեղին բռնեցին, վեց մարդ մի ձեռքից և վեց մարդ մյուս ձեռքից։ Երբ թագավորը ոտքի կանգնեց, (Մուշեղը) նրան նայեց (հարցական կերպով), թե ինչի՞ց է այս, և թագավորը պատասխանեց ու ասաց. «Գնա՛ Պապ թագավորի մոտ,

հարցրո՛ւ և կիմանաս, թե ինչի՛ց է»: Այս ասելով՝ թագավորը դեպի դուռն ուղղվեց ու դուրս եկավ: Եվ Մուշեղն ասաց. «Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու, քրտինքս սլաքներով սրբելու վարձատրությունն ա՞յս եղավ: Բայց, այս մահը երանի թե ձիու վրա ինձ հասներ»... Այսքան միայն կարողացավ ասել, ավելի ոչինչ: Իսկույն Բատ Սահառունին՝ վարազդատ թագավորի դայակը, ազդրից կախած նրանը հանելով՝ խրեց Մուշեղ զորավարի շնչափողը և իսկույն գլուխը կտրեց: Նրա մարմինը վերցրին ու տարան իր դյուղը:

V, գլ. ԼԶ. Երբ Մուշեղ սպարապետի մարմինը իր տունը, իր ընտանիքի մոտ տարան, տնեցիները նրա մահվանը չհավատացին, թեպետև տեսնում էին գլուխը մարմնից զատված: Նրանք ասում էին. «Դա անթիվ անգամ կռիվների մեջ էր մտել, ոչ մի վերք չէր ստացել, ոչ մի նետ դրան չէր կպել և ոչ մի ուրիշ զենքով դա չէր խոցվել»: Իսկ ոմանք էլ հույս ունեին, թե նա կկենդանանա. ուստի գլուխը կարելով կցեցին իրանին և հանեցին մի աշտարակի տանիքը դրին՝ ասելով. «Որովհետև քաջ մարդ էր, առլեզները կիջնեն ու սրան կկենդանացնեն»: Պահապան դրին և սպասում էին նրա հարությանը, մինչև որ մարմինը սկսվեց նեխվել: Ապա աշտարակից վար իջեցրին, լացին ու թաղեցին, ինչպես կարգն էր:

V, գլ. ԼԷ. Իսկ Վարազդատ թագավորը զորավարության ու սպարապետության գործը հանձնեց Բատին՝ Սահառունյաց տոհմի նահապետին, որ իր դայակն էր և Մուշեղի քսու բանսարկուն ու սպանողը: Նա Մուշեղի փոխարեն դարձավ ամբողջ Հայաստանի զորավար-սպարապետը: Իսկ Մամիկոնյան տոհմին նահապետ ու տանուտեր նշանակեց թագավորը Վաչեին՝ նույն Մամիկոնյան տոհմից:

Այս ժամանակ Պարսկաստանի գերությունից վերադարձան Մամիկոնյան տոհմից երկու եղբայր, որոնց գերի էր տարել Շապուհ թագավորը, մեկի անունը Մանուել, մյուսինը՝ Կոմս:

Երբ Մանուելը իր Կոմս եղբոր հետ եկավ հասավ Հայոց աշխարհը, և երբ նրանց տեսավ Վաչեն, որ նրա գալուց առաջ (Մամիկոնյանների) նահապետն էր, նրան հանձնեց իր իշխանական պատիվը, որ ստացել էր Վարազդատ թագավորից, որովհետև տոհմի մեջ ավագագույնը նա էր: Այսպիսով Մանուելը ստացավ իրենց

տոհմի տանուտերության և նահապետության պատիվը, իսկ Վաչեն դարձավ նրա երկրորդը:

Իր տերության պատվին ու փառքին հասնելուց հետո Մանուելը նախ և առաջ առանց Վարազդատ թագավորի հրամանի, հափշտակեց զորավարությունն ու սպարապետությունը: Ինչ որ նրա նախնիները բուն սկզբից ունեին, և ինչ որ Վարազդատ թագավորը շնորհել էր իր դայակ Բատին, այդ իշխանությունը Մանուելը ետ խլեց իր համար: Իսկ այնուհետև Հայոց Մանուել սպարապետը պատգամ է ուղարկում Վարազդատ թագավորին և ասում է. «Մենք ամբողջ տոհմով հին ժամանակներից ի վեր հավատարմությամբ ծառայել ենք ձեզ՝ Արշակունիներիդ, մեր կյանքը զոհել ենք ձեզ համար. սպրել ու մեռել ենք ձեզ համար... Առաջին Արշակունի թագավորները գիտեին, թե ովքե՛ր ենք մենք և ո՛րտեղացի ենք. բայց դու, որովհետև Արշակունի չես, հետացի՛ր այս աշխարհից և իմ ձեռքից մի՛ մեռնիր»:

Իսկ Վարազդատ թագավորը պատասխան-պատգամ է ուղարկում Մանուել զորավարին և ասում է. «Ես իսկական Արշակունի եմ, որ իմ Արշակունի նախնիների թագը դրի և իմ նախորդների աշխարհին տիրեցի, և իմ հորեղբոր՝ Պապի վրեժն առա քո չարագործ եղբորից՝ Մուշեղից»:

Երբ շատ անգամ պատգամավորները գնացին եկան, և ավելի ու ավելի խիստ և վիրավորական խոսքեր իրար ուղարկեցին, դրանից հետո ժամ նշանակեցին պատերազմով իրար հանդիպելու: Նշանակված ժամին եկան հասան ու պատերազմ սկսեցին իրար հետ: Վարազդատ թագավորն առնում է իր զորքի բանակն ու գալիս հասնում է ճակատամարտի տեղը, լավ սպառազինված ու պատերազմի պատրաստ: Եվ Մանուել սպարապետը, ավելի մեծ պատրաստությամբ, իր գնդով նույն տեղն է հասնում, և կարինի դաշտում երկու կողմերի գնդերն ընդհարվում են:

Այդ օրն արքայական փունդը պատրաստյուն կրեց Մանուելի գնդից: Ոչ սակավ սպանվածները ընկած էին դաշտի վրա. շատերը խոցված, հաշմացած, վիրավորված, շատ նախարարներ կատորվեցին և շատերն էլ հալածվելով փախուստի դիմեցին:

Իսկ Վարազդատ թագավորին հալածեցին Հայոց աշխարհի սահմաններից դուրս: Նա գնաց Հունաց աշխարհը, այնտեղ էլ ապրեց, այնտեղ էլ մեռավ:

Իսկ Հայոց զորավար-սպարապետ Մանուելը երկիրը նվաճեց, Հայոց բոլոր մեծամեծներին ու նախարարներին իր մոտ հավաքեց, ինքը նրանց առաջնորդ ու գլուխ եղավ և վարում էր իր իշխանությունը։ Երկրին հրամաններ էր արձակում թագավորի փոխարեն և երկիրը շեն էր պահում։ Եվ Պապ թագավորի կնոջը՝ Զարմանդուխտ տիկնոջը, ու նրա Արշակունի որդիներին իբրև թագավոր էր պահում և շրջեցնում էր պատվով։ Մեծ իմաստությամբ և մեծ հաջողությամբ, խելացի կերպով առաջնորդում էր Հայոց աշխարհին, որքան ժամանակ որ ապրում էր։ Արշակունի պատանիների անուններն էին՝ մեծինը՝ Արշակ, փոքրինը՝ Վաղարշակ։ Մանուել սպարապետը նրանց սնուցում էր իբրև սաներ, իսկ նրանց Զարմանդուխտ մորը մեծապես պատվում էր իբրև տիկնոջ։

Բայց Մանուելը երբ տեսնում է, թե իր արածը հակառակ է Հունաց թագավորի հրամաններին, մտածում է, թե պետք է որևէ մեկին իրենց թիկունք ունենալ. ուստի տիկնոջ հետ խորհուրդ անելով որոշեցին իրենց թիկունք անել Պարսից թագավորին։

V, գլ. ԼԸ. Սրանից հետո Հայոց Զարմանդուխտ տիկինը և Մանուել սպարապետը Պարսից թագավորի մոտ ուղարկեցին Գարջույլ Մաղխազին շատ հայ նախարարների հետ, հրովարտակներով, ընծաներով ու նվերներով, (խոստանալով) նրան ձեռք մեկնել, նրան հպատակվել և հավատարմությամբ նրան ծառայել ու Հայոց աշխարհը նրան տալ։ Գարջույլը և նրա հետ եղողները հասան Պարսից թագավորի դուռը, մատուցեցին նրան տիկնոջ ու Հայոց սպարապետի հրովարտակները և հաղորդեցին հնազանդության վերաբերող պատգամը։ Պարսից թագավորը երբ նրանց տեսավ, մեծ ուրախությամբ նրանց ընդունեց, մեծ հարգանքով պատվեց և մեծ պարգևներ շնորհեց Գարջույլին։

Նրա հետ Հայոց աշխարհն է ուղարկում պարսիկ Սուրենին՝ իր նախարարներից մի երևելիի, և նրա հետ տասը հազար լավ սպառազինված ձիավոր զորք, որ Սուրենը Հայոց աշխարհը գա իբրև թիկունք Մանուել սպարապետին՝ Զարմանդուխտ տիկնոջը թշնամիներից պաշտպանելու համար։ Եվ Պարսից թագավորը Սուրենի ձեռքով Զարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ ու պատմուճան և թագավորական վառ (թագավորական դրոշակ— Ա. Ա.) և երկու մանուկների՝ Արշակի ու Վաղարշակի համար թագեր։

Իսկ Մերուժան Արծրունին երբ տեսնում է այս բոլոր փառքն ու պատիվները, որով Պարսից թագավորը Մանուելին շքեղացրեց, որովհետև եղբոր նման, որդու նման նրան պատվեց,— շատ նախանձեց Մանուելի փառքին, և մի հնարք էր փնտրում՝ նրանց Պարսից թագավորի աչքից ցցելու, որպեսզի նրա փոխարեն ինքը դառնա սիրելի։ Եվ երբ նա ոչ մի հնարք չգտավ, նենգության ոչ մի դուռ չգտավ պարսիկների մոտ մտնելու, ապա նա իր մտքում նենգության չար միջոց մտածեց, իր մտադրությունը հաջողեցրեց կեղծավորության միջոցով։ Նա հույս դրեց Մանուել զորավարի միամտության վրա, ուստի նախ սկսեց անձնվիրությամբ նրա համակրանքը շահել, մտերմությամբ նրա խելքը առավ։ Ապա իրեն հոգացող և խնամատար էր ցույց տալիս նրան։ Հետո գալով՝ իր գլխից հնարած սուտ լուր է հաղորդում ու ասում. «Գիտցած եղիր, ո՛վ Մանուել, Պարսից թագավորից դեսպան է եկել, քո վերաբերյալ հրաման են բերել Սուրենին, որ քեզ բռնեն ու կապեն, կա՛մ այստեղ սպանեն, կա՛մ ձեռք, ոտք ու պարանոց կապած մեծ զգուշությամբ տանեն Պարսից թագավորի մոտ։ Հիմա դու գիտես. մտածի՛ր, թե ի՛նչ պիտի անես»։ Մանուելը երբ այս լսեց, ապշած, զարմացած մնաց իր տեղում և ասաց. «Ես պարսիկների դեմ ոչ մի հանցանք չեմ գործել, ուրեմն ինչո՞ւ նա այդպիսի բան պետք է մեզ անի»։ Իսկ Մերուժանն ասում է Մանուելին. «Ես ճշգրտեցի ու հաստատեցի, որ այդ բանը ճիշտ է, քեզ շատ սիրելուց ու վրադ հոգալուց այս լուրը քեզ գաղտնի հաղորդեցի»։ Երբ Մանուելը Մերուժանի խոսքին հավատաց և համոզվեց, թե իր լսած բաներն ստույգ են, ապա շատ զորք կուտակեց իր մոտ. Հայոց Մանուել զորավարը գունդ կազմակերպեց, և մինչդեռ Սուրենը իր բանակով խաղաղ բնակվել էր, միամիտ, անկասկած, անհոգ, աննենգ խաղաղասիրությամբ, մինչդեռ չկար ոչ մի նենգություն ու դավաճանություն, ինչպես սուտ լուր էր տարածել չարագործ Մերուժանը, Հայոց Մանուել զորավարը հանկարծակի անսպասելի կերպով հասնում հարձակվում է Սուրենի բանակի վրա և տասը հազար պարսիկներին ամբողջապես կոտորում է։ Բայց Սուրեն մարզպանին մի ձիով բաց է թողնում, որ գնա. նրա արևը նրան պարգև է շնորհում։ Սուրենը զարմացավ այս բանի վրա, թե ինչո՞ւ նա այդ արեց, և Մանուելը ասաց Սուրենին. «Քեզ իբրև բարեկամի սիրելով աղատում եմ, ողջ-առողջ գնա քո ճանապարհը, բայց ես այլևս

պարսիկների թակարդի մեջ չեմ ընկնի»։ Ինքը՝ Մանուելը, պատրաստում է զորքերը, գնդեր է կազմակերպում, որովհետև գիտեր, որ մեծ թշնամություն ու գրգռմունք առաջացրեց Պարսից թագավորի հետ։ Այնուհետև Հայոց Մանուել զորավարը բոլոր գնդերով իբրև թագավոր շրջեցնում էր Զարմանդուխտ տիկնոջը՝ Պապ թագավորի կնոջը՝ իբրև պետ, և ինքը երկրի շենության համար պատերազմներ էր մղում ամեն կողմից թշնամիների ու իրենց շրջակա սահմանակիցների, մանավանդ Պարսից զորքերի դեմ իր կյանքի բոլոր օրերում։ Իսկ Մերուժանը նորից գնում է Պարսից թագավորի մոտ՝ Մանուելին ամբաստանելու համար։

V, գլ. ԽՐ. Սրանից հետո յոթ տարի պարսիկներն այլևս չշարունակեցին Հայաստանի սահմանները մտնել և երկիրը խաղաղվեց։ Մանուել զորավարի մոտ հավաքվեցին երկրում ցրվածները, եկան մեկտեղացան ու անհոգ ապրում էին, և Հայոց Մանուել զորավարը նրանց առաջնորդում էր... Նույնպես բոլոր գավառներում Հայոց Մանուել սպարապետը նշանակում է նահապետներ և գավառների տերեր ու խաղաղությամբ կառավարում է բոլորին։ Եվ ամբողջ Հայոց աշխարհը ապրում է խաղաղության մեջ, Մանուելի հովանու տակ, որքան ժամանակ կենդանի էր նա։ Բոլոր մարդիկ վայելքի մեջ էին. ուտում, խմում, ուրախանում էին Մանուելի տերության այն յոթը տարիներում, մինչև Հայոց աշխարհի բաժանումը և թագավորության պառակտումը։

ԳԱՂԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԱՆՈՒԵԼԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. V, գլ. ԽԹ. Իսկ Մերուժան Արծրունին վաղուց ի վեր, դեռ Արշակ թագավորի ժամանակ, ապստամբվել էր Հայոց թագավորի դեմ, ինքնակամ ձեռք էր մեկնել Պարսից թագավորին, ընդունել էր մազդեզական կրոնը և ուրացել քրիստոնեական հավատը։ Նա շատ անգամ առաջնորդ էր դարձել Պարսից զորքերին, մեծամեծ չարիքներ էր հասցրել Հայոց աշխարհին և դեռ Պարսից թագավորի մոտ էր գտնվում։ Ահա այս Մերուժանը Պարսից թագավորին գրգռեց և, նրանից շատ զորք առնելով, եկավ հասավ Հայոց աշխարհը։ Նա մեծապես պարծեցել էր Պարսից թագավորի առաջ, որ կա՛մ Մանուելին բռնելով կապած կտանի Պարսից թագավորի մոտ և կա՛մ գլուխը կտրելով նրան կներկայացնի։

Նա Պարսից զորքի ամբողջ բազմությամբ գալիս հասնում է Հայոց աշխարհը, Պարսից զորքի բանակը թողնում է Կորճայք գավառում, իսկ ինքն իր սեփական գնդով, հավաքած հրոսակներով, անջատվում է Արյաց գնդից։ Նա մտքում դրել էր՝ գաղտնի անսպասելի կերպով հարձակվել Մանուելի վրա, իրեն անուն վաստակել. ջանք էր անում ինքը մենակ կատարել գործը, պատերազմի գործն անձամբ գլուխ բերել, որ իրեն պարծանք լինի։

... Գուժական հասավ Հայոց Մանուել զորավարին, թե՝ «Ճարդ տես, Մերուժան Արծրունին մեծ գնդով եկել հասել է քեզ վրա»։

Այս տեղեկության համաձայն, Հայոց գնդի բոլոր զորքերը և Մանուել սպարապետը պատրաստվեցին, ուխտի գնացին Հովհաննես (Մկրտչի) սուրբ ոսկորներին, որ այն գյուղում էին, ուխտ դրին, աստծուն խնդրում էին, արդար դատավորին օգնության կանչում... Մանուելը հրաման է տալիս մանուկ Արտավազդին՝ վաշեի որդուն, որ նա ևս կանանց հետ գնա, իսկ նա հակառակվում է, չի համաձայնվում։

Երբ տիկնոջը ամբողջ տուն ու տեղով ամուր տեղ ուղարկեցին, ապա իրենք էլ սպառազինվեցին, կազմակերպվեցին, պատերազմի համար մի տեղ խմբվեցին։ (Մանուելը) նշանները բացած, ծածանվող դրոշակներով, դուրս է գալիս Ավան գյուղից դեպի արևմուտք, և հենց այդտեղ նրա առաջն է ելնում Մերուժանն իր գնդով, որ եկել էր նրանց վրա։ Զարագործ, մեղավոր Մերուժանն իր զենքն ու զարդը և իր սաղավարտի նշանը շատերին էր տվել, շատերին իր գնդում իր տեսքն էր տվել, իսկ ինքն իր նշանները չէր կրում։ Մանուելը նրանց գունդը տեսնելով՝ իր առյուծի գնդով վարազի պես վրա է հարձակվում, խառնվում է նրանց գնդին, ուշադրություն դարձնելով նրանց վրա, որոնք Մերուժանի նշաններն էին կրում։ Շատ ախոյանների գլուխներ կտրեցին, որոնք կրում էին Մերուժանի նշանները, կարծելով թե Մերուժանին սպանեցին, բայց տեսնում էին, որ նա չէ։

Այն ժամանակ սպարապետ Մանուելը խոսեց իր նիզակակից Բաբիկի հետ և ասաց. «Տեսնո՞ւմ ես որքան մեզ խաբում է այդ կախարդ Մերուժանը։ Բայց առաջ, հաշտության ժամանակ, ես

շատ անգամ նրա հետ միասին եմ եղել, ես նրա մի նշանը գիտեմ. երբ նա ձի է հեծնում, նրա ազդրը մինչև ծնկները հուպ չի գալիս, այլ ձիուց զատ է մնում։ Ե՛կ երկուսով այս նշանին ուշադիր լինենք, գուցե կարողանանք ճանաչել այն ետ եկած կախարդին»։ Ապա երկուսով դիտելով՝ տեսան ու ճանաչեցին Մերուժանին այդ նշանով. նա իրեն կերպարանափոխել էր և իր նշանները չէր կրում։ Այն ժամանակ Մանուելը ձայն տվեց, առաջ կանչեց Մերուժանին ու ասաց. «Ա՛յ կախարդ, մինչև ե՞րբ պիտի խաբես մեզ, և քո պատճառով ուրիշներին ջարդել տաս։ Քեզ մենք վերջապես ճանաչեցինք, որ այդտեղ կանգնած ես, և մեր ձեռքից քեզ այսօր փրկություն չկա, որովհետև աստված այսօր քո կատարած չարիքները քո գլխի վրաածեց և քեզ մեր ձեռքը մատնեց»։ Իսկ Մերուժանը, երբ այդ լսեց, իսկույն նիզակը ձեռքին առաջ անցավ, Մանուելին ախոյան դուրս եկավ։ Բայց որովհետև երկուսն էլ հաղթահասակ մարդիկ էին, նիզակներով իրար հարվածելիս երկուսն էլ ձիերից վայր ընկան։ Անմիջապես Մանուելի նիզակակից Բարիկը՝ Սյունյաց գավառի տերը, վրա է հասնում, նիզակով կողից վերից վար խփելով (Մերուժանին) կարում է գետնին, և նա այլևս չի կարողանում վեր կենալ։ Իսկ Մանուել սպարապետին նրա ձիապան սպասավորները ձի են հեծեցնում։ Եվ Մերուժանի գլուխը կտրեցին, ու բոլոր զորքերը երբ տեսան, թե Մերուժանը մեռավ, փախուստի դիմեցին։ Իսկ այս կողմից Մանուելի գունդը խրախուսվելով՝ հարձակվեց Մերուժանի գնդի վրա, ջարդեցին, կոտորեցին, կենդանի մարդ չթողին։

Բայց մանուկ Արտավազդը Մանուելից գաղտնի գնացել էր պատերազմի. նա սպառազինված, Մանուելի գնդից ծածուկ, զբնաց Եփրատ գետի ափը, այնտեղ Մերուժանի գնդից անթիվ սպառազինված մարդ կոտորեց։ Իսկ մեկը, որ Մերուժանի նշանն էր կրում, երբ Արտավազդին տեսավ, նրան արհամարհեց, տեսնելով, որ մի կայտառ անմորուք պատանի է, գեղեցիկ դեմքով։ Ապա նշանը նիզակին փաթաթելով՝ հարձակվեց նրա վրա։ Իսկ նա ուժերը լարելով՝ նետով զարկեց նրան, և նետը մարմինը թափանցելով գետին ընկավ։ Ապա նիզակն առնելով հարձակվեց փախստականների հետևից և սրի քաշեց Մերուժանի զորքերը։ Այդ օրը բոլորից ավելի Վաչեի որդի մանուկ Արտավազդը կոտորած

արեց ու ինքը (ետ դարձավ) մեծ անունով և լավ ավարով, որ Քշնամու զորքերից կողոպուտ մնաց։

Բայց այդ օրը մեծ, անփոխարինելի վնաս է պատահում, որովհետև Վաչեի ձին, գլխի վրա գալով, նրան սպանում է։ Նույնպես և Գարջուլ Մաղխազին ձին փախցրեց ու սպանեց, որովհետև երկուսն էլ անվարժ ձիեր էին հեծել։

Իսկ Մանուելը գնում հասնում է տիկնոջ բանակը. իրենց հետ տանում են նաև Մերուժանի գլուխը։ Բայց Սամուելը՝ Վահանի որդին, Մանուելի հետ չպատահեց, որովհետև նա բանակ էր դարձել։ Մանուելի բանակում եղած կանայք տերը Մերուժանի գլուխը տեսան, մեծ ճիչ ու աղաղակ բարձրացրին, որովհետև կարծեցին, թե այն գլուխը Վահանի որդի Սամուելինն է, որովհետև այն երկուսը՝ Մերուժանն ու Սամուելը, իրար նման էին։ Բայց հետո տեսան Մերուժանի գլուխը, որից ծամը կախված էր, իմացան, որ Սամուելինը չէ, այլ Մերուժան Արծրունունը, բայց ասացին. «Այնուամենայնիվ, դա էլ մեր եղբայրն էր»։ Ապա բանակ բերին Արտավազդի հոր՝ Վաչեի մարմինը, նույնպես և Գարջուլ Մաղխազի մարմինը. մեծ սուգ արին ու լացին նրանց վրա։ Բերին նաև Մերուժանի նշանը կրող մարդուն, որին Արտավազդն սպանել էր նետով. բոլորը զարմանում էին նայելով, որովհետև նետն ամբողջ մարմնով թափանցել էր... Իսկ Պարսից այն զորքերը, որոնց Մերուժանը թողել էր Կորճայք գավառում, երբ լսեցին, թե Մերուժանն սպանվել է, և նրա հետ եղած գունդը ոչընչացել է, իրենք էլ փախան գնացին Պարսից աշխարհը, և Հայոց աշխարհում ընդհանուր խաղաղություն տիրեց։

ԱՐՇԱԿ III–Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Դպր. V, գլ. ԽԴ. Այս բոլոր գործերը կատարելուց հետո Մանուել զորավար-սպարապետը Արշակունի տիկնոջ և երկու մանուկների՝ Արշակի ու Վաղարշակի հետ Հայոց ամբողջ բանակով, մեծամեծ ավատներով ու նախարարներով գնում հասնում է Կարին քաղաքը։ Բոլոր տանուտերերն էլ նրա հետ էին։ Եվ Մանուել սպարապետը իր Վարդանդուխտ դստերը կնության տվեց Արշակունի մանուկ Արշակին ու իրեն փեսայացրեց. նաև հարսանիք

է անում նրա եղբոր՝ Վաղարշակի համար և նրան կին է տալիս Բագրատունի ասպետի դուստրը Սպեր գավառից, որոնք (Բագրատունիները) ի բնե Արշակունյաց տոհմի թագավորների թագակապներն ու թագադիրներն էին եղել: Շատ փառավոր հարսանիք արին, որ մեծ ցնծություն և ուրախություն պատճառեց ամբողջ Հայոց աշխարհին: Այնուհետև դարձյալ մի տեղ հավաքելով Հայոց աշխարհի բոլոր մարդկանց՝ մանուկ Արշակին թագավորեցրեց Հայոց աշխարհի վրա և Վաղարշակին նրան երկրորդ նշանակեց: Սրանով էլ մեծ ուրախություն ու ցնծություն եղավ ամբողջ Հայոց աշխարհում:

Սրանից հետո Հայոց զորավար-սպարապետ Մանուելը հիվանդացավ մահառիթ հիվանդությամբ: Նա կանչեց իր Արտաշիր որդուն, նրան հանձնեց իր տանուտիրական իշխանությունն ու իր զորավար սպարապետությունը: Նրան պատվիրեց հնազանդ ու հպատակ լինել Արշակ թագավորին, հավատարիմ լինել, ջանալ և աշխատել, Հայոց աշխարհի համար պատերազմել: «Ուրախությամբ հանձն առ մահ երկրի համար, ինչպես և քո քաջ նախնիները, որովհետև,— ասաց,— դա արդար և աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք, աստված ձեզ անտես չի անի: Երկրի վրա քաջության անուն թողեք և ձեր արդարությունը երկնքին նվիրեցեք: Մահից ամենևին մի՛ վախեցեք, այլ հույս դրեք նրա վրա, որ ամեն ինչ ստեղծեց և հաստատեց: Ձեզ հեռու պահեցեք նենգությունից, պղծությունից և չարությունից ու ձեր աստծուն ծառայեցե՛ք մաքուր սրտով և հավատարմությամբ: Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն աստծու համար է, նրա եկեղեցիների և եկեղեցական ուխտի, այս աշխարհի բնիկ տերերի՝ Արշակունիների համար»: Սրանից հետո նա հրովարտակ գրեց Հունաց թագավորին և նրան հանձնեց Հայոց աշխարհն ու Արշակ թագավորին:

Սրանից հետո, երբ նա հիվանդ պառկած էր անկողնում և բոլորը հավաքված էին նրա շուրջը, այնտեղ էին և՛ Արշակ թագավորը, և՛ Վարդանդուխտը՝ թագավորի կինը, և՛ Հայոց բոլոր ավագները, մեծամեծներն ու նախարարները, առհասարակ բոլոր երևելի մարդիկ, տղամարդ թե կին, ապա Մանուելը այս բոլորի առաջ բացեց իր բոլոր անդամները, մերկացավ և ցույց տվեց, որ նրա մարմնի վրա մի դրամի մեծության չափ ողջ տեղ չէր

մնացել, ամբողջ խոցված էր պատերազմների մեջ... «Մանկությունից ի վեր ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձ եմ առել քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի նման մեռնեի: Որքա՞ն լավ կլիներ, եթե պատերազմի մեջ մեռնեի երկրի համար, որպեսզի եկեղեցիները և աստծո պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեին: Ո՞ւր է թե ինձ վիճակվեր մեռնել մեր երկրի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդիների համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես շատ հանդուգն էի ինձ պահում, բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»:

Այս և սրանից էլ ավելի շատ բաներ խոսեց Արշակ թագավորի ու բոլորի առջև: Նաև աղաչեց Արշակ թագավորին ու ասաց. «Ես ապրել եմ աստծով իբրև ջերմեռանդ քրիստոնյա, ինձ վրա անհուսությամբ լացուկոծ չսարքեք անկարգաբար, հեթանոսների նման: Որովհետև չպետք է լաց լինել նրանց համար, որոնք հույս ունեն մյուս անգամ հարություն առնելու և կենդանանալու Քրիստոսի գալուստի ժամանակ, իսկ ես մինչև այժմ ապրել եմ հույսով և երկյուղածությամբ: Բայց դուք աստվածային պատվիրաններից մի՛ շեղվեք, արդարության հոգ տարեք և ավելի շատ ողորմություն: Որովհետև Ներսես մեծ հայրապետը մեզ շարունակ այս էր պատվիրում և ինքն էլ իր կենդանության ժամանակ նույնն էր անում. ինչ որ ինքը գործում էր, նույնն անել սովորեցնում էր ուրիշներին. նա ողորմում էր աղքատներին, տնանկներին, գերիներին, անտիրականներին, օտարականներին, պանդուխտներին, և նա ասում էր. «Աստծու առաջ ավելի պատվական բան չկա, քան ողորմություն անելը կամ (աղքատներին) տուրք տալը»: Եվ մեռելների վրա լացուկոծ անելը ծանր մեղք էր համարում և իր ապրած ժամանակ այս բանը վերացրեց Հայոց աշխարհից. որովհետև նրա օրերով ոչ ոք չէր համարձակվում լացուկոծ անել, բայց նրա մահից հետո անմիտ մարդիկ համարձակվեցին այդ բանն անել: Բայց ինձ համար թող ոչ ոք կոծ չանի. մեղապարտ լինի, ով որ անի: Բայց ես իրավունք չունեմ իմ մահից հետո մեկին ասատել, որ չանի, ինչ որ ես չեմ կամենում, այլ ով որ ինձ սիրում է, իմ հիշատակի համար թող այսպես անի:

Պատերազմի մեջ մահից մի՛ վախենաք, որի մեջ ես չմեռա, որովհետև առանց աստծո ոչինչ չի լինում»։

Եվ էլի այսպիսի շատ բաներ խոսեց. իր ձեռքով անչափ շատ գանձեր բաժանեց աղքատներին ու կարոտյալներին. իր ստացվածքից շատ մասեր տվեց նկուղեցիներին ու վկայարաններին, շատ գանձ էլ տվեց քահանայապետներին, քահանաներին ու պաշտոնյաներին և հետո ինքն էլ մեռավ։

Բայց երբ մեծ Մանուել սպարապետը մեռավ, ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա հրամանին կոծի նկատմամբ, այլ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ՝ ազնվականներ ու շինականներ առհասարակ կոծում, լալիս, ողբում էին դառնապես։ Որովհետև ամեն մարդ նրան սգում էր ինչպես իր հորը՝ նրա քաղցրության, մարդասիրության, հեզության, հանդարտության, խնամատար բարեպարության համար, ողբում էին բարեհնչյան և աշխարհաշեն Մանուելին։ Բոլորը բերանները բացած հառաչում էին նրա համար, կարոտագին մղկտում էին իրենց քաջ զորավարի, իրենց փրկչի, իրենց հաղթական, անվանի և բազմարդյուն (սպարապետի համար), որ հեռացավ ու գնաց, բաժանվեց իրենցից։

ՓԱՎՍՏՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ VI, գլ. Ա. Բայց Հայոց Մանուել զորավարի մահից հետո Արշակի թագավորությունը ի վիճակի չեղավ կարգավորվել երկրում, այլ Հայոց նախարարներից շատերը դասվեցին, գնացին Պարսից թագավորի մոտ. Հայոց աշխարհը նրա ձեռքը մատնեցին և նրանից խնդրեցին Արշակունի թագավոր։ Նա մեծ ուրախությամբ հանձն առավ՝ իր կողմից իր խոսքով (թագավոր) նշանակել Հայոց նույն Արշակունի թագավորների տոհմից ու նրա միջոցով Հայոց աշխարհը իրեն գրավել։ Ապա նա գտավ նույն տոհմից մի մանուկ՝ Խոսրով անունով, նրա գլխին թագ կապեց և նրան կին տվեց իր Զրվանդուխտ քրոջը, իր բոլոր զորքերը նրա հետ դրեց ու Զիկ նվիրակին դաստիարակ նշանակեց Խոսրով թագավորի համար։ Այսպես նրանք գնան եկան Հայոց աշխարհը։ Արշակ թագավորը երբ նրանց տեսավ, տեղի տվեց, քաշվեց գնաց

Հունաց սահմանները։ Եվ թիկունք եղան Արշակ թագավորին Հունաց թագավորը, իսկ Խոսրովին՝ Պարսից թագավորը։

Ապա Հունաց զորքերը եկան (Արշակ թագավորին) օգնության, որ Եկեղյաց գավառումն էր, իսկ Պարսից զորքերը և Խոսրով թագավորը Այրարատ գավառումն էին։ Ապա Հունաց և Պարսից թագավորների դեսպաններն ու պատգամավորները իրենց մեջ երթևեկություն ունեցան, և երկու թագավորները՝ Հունաց և Պարսից, իրար հետ խորհուրդ արին և համաձայնության եկան։ Նրանք հարմար համարեցին նախ Հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մեջ։ Նրանք ասում էին. «Մեր երկուսի միջև ընկած է այս հզոր և հարուստ թագավորությունը. լավ կլինի, որ այս միջոցով թուլացնենք ու խանգարենք այս թագավորությունը. նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագավորներով, որոնց նշանակեցինք, հետո կաշխատենք նրանց էլ թուլացնել, աղքատացնել և մեր ծառայության հնթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանան գլուխ բարձրացնել»։

Այսպես մտածելով՝ նրանք երկու մասի բաժանեցին երկիրը. Պարսից կողմի բաժինը մնաց Խոսրով թագավորին, իսկ Հունաց կողմի բաժինը՝ Արշակ թագավորին։ Բայց նրանցից էլ շատ գավառներ այս ու այնտեղ խուզվեցին, կտրվեցին, և երկուսի երկրներից մի փոքր մասը մնաց երկու թագավորներին։ Բայց Հայոց թագավորության հիմնական գավառները երկու բաժիններում Հայոց երկու Արշակունի թագավորները՝ Արշակն ու Խոսրովը, սահմաններով խաղաղությամբ բաժանեցին և Հայոց աշխարհի երկու մասերը հնազանդվում էին ամեն մեկը իր թագավորին. բայց Խոսրովի բաժինն ավելի մեծ էր, քան Արշակինը։ Եվ երկուսից էլ շատ գավառներ կտրվեցին. և այն ժամանակ ու այնուհետև Հայոց թագավորությունը բաժանվեց, ցրվեց, նվազեց, իր նախկին մեծությունից ընկավ։

ԴԱՍՏԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Դազար Փարպեցին (V դ.) ճայ պատմագրության ականավոր դեմքերից է։ Կրթություն է ստացել իշխան Վահան Մամիկոնյանի ճեռ՝ վրաց Աշուշա բդեշխի տանը։ Հետագայում դարձել է հոգե-

վոռական և նշանակվել էջմիածնի վանքի վանահայր: Հալածանքների է ենթարկվել խավարամիտ կղերականների կողմից, ուստի ճարկադրված է եղել թողնել վանքը և փախչել Ամիդ: Այստեղից նա վանահ Մամիկոնյանին է ուղարկում իր նշանավոր «Թուղթը», որտեղ մերկացնում է էջմիածնի հետադեմ հոգևորականության: Վանահ Մամիկոնյանը ստանալով այդ նամակը՝ անհապաղ նրան էլ կանչում: Վերադարձից հետո նա Վանահ Մամիկոնյանի հանձնարարությամբ գրում է իր «Պատմութիւն Հայոց» երկասիրությունը:

Փարպեցու «Հայոց պատմությունը» պարունակում է V դարի պատմությունը՝ ընդհուպ մինչև 485 թ. Վանահի մարզպան նշանակվելը: Հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությունը նա շարադրել է ճարհան վրաց և աղվանից ժողովուրդների ազատագրական շարժումների հետ սերտորեն առնչված: Փարպեցու «Հայոց պատմությունը» արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն հայ ժողովրդի, այլև հարևան վրաց և աղվանից ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Փարպեցու «Հայոց պատմության» գիտահամեմատական բնագիրը հրատարակվել է «Ղազար Փարպեցոյ պատմութիւն Հայոց և բուղր առ Վահան Մամիկոնեան» վերնագրով (Տփխիս, 1904): Ներկա թարգմանության համար հիմք է ծառայել այս հրատարակությունը (թարգմանությունը՝ Ա. Գ. Աբրահամյանի):

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Դրվագ Ա

Ջ. Արշակունիների թագավորությունը երկուսի բաժանվելուց հետո Հայոց աշխարհի արևմտյան մասն ընկավ Հունաց կերիշխանության տակ և ենթարկվեց նրա տերությանը, իսկ արևելյան մասն ենթարկվեց Պարսից թագավորի դառը և բռնակալ իշխանությանը:

Պարսկական մասի Հայոց նախարարները գնացին (Շապուհ թագավորի մոտ) և խնդրեցին իրենց թագավոր տալ Արշակունյաց տոհմից՝ նախնյաց կարգի համաձայն: Պարսից Շապուհ թագավորը կատարելով նրանց խնդրանքը, թագավոր տվեց Խոսրով անունով մեկին՝ Արշակունյաց տոհմից:

Հայոց նախկին Արշակ թագավորը միանձնյա իշխանություն ուներ Հայոց ողջ աշխարհի վրա: Երբ նա տեսավ, որ իր տոհմի թագավորական իշխանությունը քայքայվելով բաժանման ենթարկվեց, մեծ տրտմությամբ, վրդովված տարակուսանքի մեջ ընկավ. տեսնում էր նախ Հայոց աշխարհը երկու թագավորների ծառայական լծին ենթակա, ապա՝ Հայոց աշխարհի մեծ, լավ, պիտանի և արգավանդ մասը Պարսից իշխանության տակ ընկած: Թեև ուրիշ շատ գավառներ բաժին էին հասել Հունաց թագավորին, բայց նրանք համեմատ էին միայն Այրարատյան գավառին:

Ը. Այդ պատճառով Հայոց Արշակ թագավորն, ինչպես գերի, հանապարհվեց, հեռացավ գնաց Այրարատյան գավառից: Նա լավ համարեց գնալ (Հայոց) փոքր բաժնի երկրամասը և հնազանդվել Հունաց թագավորին, քան մնալ ցանկալի գավառի վայելչության մեջ:

Թ. Որոշ ժամանակ անցնելուց հետո Պարսից իշխանության տակ գտնվող նախարարները գժտվեցին իրենց Խոսրով թագավորի հետ: Արշակունյաց թագավորության աստիճանաբար նվաղելու հետևանքով, բազմացան չար գործերը... Հայ նախարարները գնացին Պարսից Շապուհ թագավորի մոտ, բանաարկությոան արին, թե՝ «Խոսրովը մեզ ցույց է տալիս իբրև թե քեզ սիրելի է ու հնազանդ, իրականում այդ կեղծ է և շինծու, որովհետև նրա դաշինքն ու գաղտնի խորհուրդը Հունաց թագավորի հետ է, և նա միշտ գրությունների և երթևեկ պատգամավորներով բանակցում է նրա հետ հաշտություն կնքելու համար»:

Պարսից Շապուհ թագավորը ուրախությամբ և սիրով լսեց այդ: Նա հրամայեց շտապ հրովարտակով Խոսրովին արքունիք կանչել: Խոսրովը, տեղյակ չլինելով Հայոց նախարարների բանսարկությանը, անհապաղ արքունիք եկավ իր իշխանների և բարեկամների մոտ: Շապուհը նրան պատժեց, սակայն, ցանկանալով նրան հոժարակամ հեռացնել, չուզեց բերել չարախոսների դեմ, այլ անմիջապես զրկեց թագավորական իշխանությունից և, ցանկանալով, որ նա այլևս չտեսնի Հայոց աշխարհը, բռնեց պահեց այնտեղ՝ Պարսից աշխարհում: Խոսրովի գահընկեցությունից հետո, հայերը խնդրեցին Շապուհին իրենց տալ մի այլ թագավոր:

եվ նա ընդառաջելով, նրանց թագավոր նշանակեց Արշակունյաց ազգատոհմից նույն Խոսրովի եղբայր Վռամշապուհին։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ
ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. ՃԵ. Վռամշապուհը քսանմեկ տարի թագավորելով մեռնում է, թողնելով Արտաշես անունով մի տասնամյա որդի։ Այն ժամանակ մեծն Սահակը գնաց պարսից Հազկերտ թագավորի դուռը՝ կապված Խոսրովին խնդրելու, որ Արտաշիրի մահից հետո (կապանքներից) լուծվելով՝ արձակ պահվում էր Անհուշ բերդում Վռամի ժամանակ։ Հազկերտը համաձայնվելով կատարում է նրա խնդիրը, (Խոսրովին) տերություն տալով ուղարկում է Հայաստան։

Նրանից հետո Հազկերտը ոչ թե նրանցից, այլ իր Շապուհ որդուն թագավորեցրեց Հայոց վրա այսպիսի չար դիտավորությամբ, որ նախարարները դրանով նրա մոտ լինելով՝ նրան կընտելանան խոսակցությամբ, առնել-տալով, խնջույքներով, որսի զբոսանքներով, այլև խնամությամբ նոր ազգականություններով կմոտենան, և գուցե հնար լինի նրանց սայթաքեցնել դեպի մազդեզական կրոնը, որով բոլորովին կանջատվեն հույներից։ Անմիտը չգիտեր, թե «Տերը ցրում է հեթանոսների խորհուրդները», թեպետ միտաժամանակ հաջողվեց (նրա խորհուրդը), որովհետև Համազասպը մեռավ և Սահակն էլ մեծ սգի մեջ ընկավ, ոչ ոք Հայոց գնդերը չհավաքեց, չմիաբանեց։ Ոստի Շապուհը հեշտությամբ մուտք գործեց մեր աշխարհը՝ իր հետ բերելով Հրահատին և բոլոր աքսորականներին. բայց նա չկարողացավ նախարարների համակրությունը շահել, այլ բոլորը նրան ատեցին և թագավորաբար չէին մեծարում որսի կամ խաղերի ժամանակ։

Գ, գլ. ՃԶ. Չորս տարի անարգաբար թագավորելուց հետո Շապուհը լուր է ստանում իր հոր հիվանդության մասին և գրնում է շտապով, իր տեղակալին ու զորագլխին հրամայելով, որ հայոց մեծամեծներին բռնի և տանի Պարսկաստան։ Բայց երբ Շապուհը Տիգրոն հասավ, մեռավ նրա հայր Հազկերտը...։

Գ, գլ. ՃԸ. Իսկ (Վռամ) թագավորը հաշտություն հաստատելով՝ (նախարարների) հանցանքները մոռացության տալու թուղթ է կնքում և նրանց խնդրանքով թագավոր է նշանակում Վռամշապուհի որդի Արտաշեսին՝ փոխելով (անունը), Արտաշիր կոչելով, և նրան է վստահում Հայաստանը առանց պարսիկ վերակացուի։

Գ, գլ. ԿԳ. Բայց Հայոց Արտաշիր թագավորը սկսեց թաղվել անչափ անառակ ցանկություններ մեջ այն աստիճան, որ բոլոր նախարարները նրանից զզվեցին։ Նրանք եկան մեծն Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի) վրա չարախոսեն պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն գցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող։ Իսկ (մեծն Սահակը) ասաց. «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի, ամոթալի արարմունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է։ Արդ՝ պետք է մի կարճ ժամանակ տանել այդ մարդու թերությունը, մինչև մտածենք մի ելք գտնենք հանուց Թեոդոս կայսեր միջոցով, բայց ո՛չ թե անօրեններին մատնենք և ծառը ու խայտառակ լինենք»։

Իսկ նրանք չէին կամենում, ջանք էին անում նրան իրենց համամիտ դարձնել։ Բայց նա ասաց. «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին...»։

Իսկ նախարարները մտածելով, թե խաբելու նպատակով է այդպես անում, որպեսզի իրենց անելիքը հետաձգել տա և թագավորին պատրաստի, միաբերան ասում են. «Որովհետև դու չկամեցար մեզ հետ համակերպվել, որ նա չթագավորի, ահա մենք էլ չենք կամենում, որ դու մեզ քահանա լինես»։ Եվ բոլորը միաբանությամբ ելան գնացին պարսից Վռամ թագավորի մոտ, մի ոմն փառամոլ քահանայի՝ արծկեացի Սուրմակի հետ, չարախոսելու իրենց Արտաշիր թագավորի վրա և մեծն Սահակի վրա, թե նրանք հույների կողմն են թեքվել։

Գ, գլ. ԿԴ. Այն ժամանակ պարսից Վռամ թագավորը արքունիք կանչեց Հայոց Արտաշիր թագավորին և մեծն Սահակին,

և խնդրում էին, որ Արտաշիրին ամբաստանի, իսկ նա հրաժարվեց առհասարակ որևէ բան ասելուց, չար կամ բարի։

Այն ժամանակ Վռամը գայրացած՝ մեծ հրապարակում քննություն է կատարում, և ուշադրություն չդարձնելով Արտաշիրի խոսքերին՝ հոժարությամբ լսում է չարախոսների ասածները, մանավանդ Սուրմակի խիստ աղտեղի խոսքերը։ Որովհետև ընդհանրապես արամադրված հակառակասեր նախարարները նրան էին խոստացել եպիսկոպոսապետության աթոռը, ուստի ինքնասիրությունից դրդված՝ իր լեզուն սպանիչ սուր դարձրեց։ Վերջապես Վռամը հրամայեց՝ թագավորությունն առնել Արտաշիրից և նրան (Պարսկաստանում) արգելել ու նրա ցեղի բոլոր գուլքը հարքունիս դրավել. նույնպես և մեծն Սահակին, կաթողիկոսական տունը հարքունիս դրավել, և նրա փոխարեն Հայոց եպիսկոպոսապետության աթոռը տալ այն Սուրմակին։ Իսկ նախարարներին ուղարկեց մեծամեծ պարգևներով՝ մի պարսիկ մարզպանի հետ, որի անունն էր Վնեմիհրշապուհ։

ԳԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ
ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գրվագ Ա

ԺԲ. (Վռամշապուհից) հետո մահացավ Պարսից Շապուհ թագավորը և գահակալեց նրա որդի Վռամ Կրմանը։ Հայերը նրանից թագավոր խնդրեցին Վռամշապուհի եղբայր Խոսրովին, որին առաջներում Պարսից իշխանության տակ գտնված հայերը բանսարկության միջոցով հեռացնել էին տվել Հայոց թագավորությունից։ Վռամը կատարելով նրանց խնդրանքը, դարձյալ թագավորեցրեց զառամած Խոսրովին։ Խոսրովը՝ գալով Հայոց աշխարհը, մահացավ՝ ապրելով միայն ութ ամիս։

Վռամ արքայի մահից հետո Պարսից աշխարհի վրա թագավորեց Շապուհի որդի Հազկերտը։ Նա չցանկանալով Հայոց աշխարհի վրա թագավորեցնել Արշակունյաց ազգից, նշանակում է նրանց վրա Շապուհ անունով իր որդուն...։

Պարսից թագավոր Շապուհի որդի Հազկերտի մահից հետո Արյաց աշխարհի վրա թագավորեց նրա որդի Վռամը։ Հայոց աշ-

խարհի իշխանները գալով Պարսից Վռամ արքայի մոտ, Արշակունյաց ազգից իրենց համար թագավոր խնդրեցին։ Նա թագավոր նշանակեց նրանց վրա Վռամշապուհի Արտաշես որդուն, որը Հայոց թագավորների տոհմից էր։

ԺԳ. Արտաշեսը մանուկ էր... և իր թագավորությունը անառակությամբ էր վարում։ Հայոց նախարարները չկարողանալով այդ տանել... միաբանված գնացին պարսից արքունիք և ներկայացան Վռամ արքային։ Նրանց հետ էր նաև Բզնունյաց գավառի Արծկե գյուղից Սուրմակ անունով մի երեց, որը նույն գավառի քահանաների տոհմից էր։ Նա միաբանվեց նախարարներին, ընդունելով սուրբ Սահակ հայրապետի խրատը, և Հայոց նախարարներից ավելի անմիտ և աղտեղի խոսքեր ասաց Պարսից արքային Արտաշես թագավորի մասին...։

ԺԴ. Վռամը, պալատի բոլոր մեծամեծների հետ միասին, լսելով այս խոսքերը (այսինքն՝ նախարարների ամբաստանությունները— Ա. Ա.), շատ ուրախացավ և հրամայեց Արտաշեսից շուտով վերցնել թագավորությունը, իսկ Սահակից՝ կաթողիկոսությունն այն բանի համար, որ նա չմիաբանվեց՝ նախարարներին վկայություն տալու։ Եվ այսպես իրագործվեց Պարսից արքայի հրամանը։ Այնուհետև վերացավ Արշակունյաց տոհմի թագավորությունը Արտաշեսի վեցերորդ տարում՝ բուն Ներսես քահանայապետի նախատեսածի, և Հայոց աշխարհն ընկավ պարսից անօրեն իշխանության ծառայության տակ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԸՍՏ ԵՂԻՇԵԻ

Եղիշեն հինգերորդ դարի Վարդանանց հերոսամարտի ականատես պատմիչն է: Ըստ ավանդության, եղել է Մեսրոպ Մաշտոցի այն աշակերտներից, որոնք ուղարկվել են Աղեքսանդրիա ուսման մեջ կատարելագործվելու նպատակով: Ենթադրվում է, որ նա եղել է Վարդանի անձնական քարտուղարը և գործուն մասնակցություն է ունեցել ազատագրական շարժումներին:

Եղիշեի հեղինակությամբ մեզ հասել են մի շարք աշխատություններ, որոնցից պատմական բացառիկ արժեք ունի նրա «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատությունը, որը գրել է Մամիկոնյանների տան երեց Դավիթի պատվերով:

Պատմական այս աշխատությունը բաղկացած է յոթ մասից, որոնք կոչվում են «եղանակ»: Աշխատության մեջ խոսվում է Սասանյան արքունիքի՝ Հայաստանի և նրա հարևան վրաց ու աղվանից ժողովուրդների նկատմամբ վարած ճնշող քաղաքականության վերաբերյալ: Մանրամասն նկարագրվում է հայ ժողովրդի ընդվզումը այդ քաղաքականության դեմ, ապստամբությունը, Ավարայրի հերոսական նակատամարտը և նրան հաջորդած պարտիզանական կռիվները: Աշխատությունը տոգորված է հայրենասիրական վառ զգացմունքներով, գրված է պատկերավոր, գեղեցիկ լեզվով:

Եղիշեի Պատմությունը հայոց մեջ միշտ եղել է ամենասիրված և տարածված երկերից մեկը. այն անցյալում հրատարակվել է ավելի քան քառասուն անգամ, թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Եղիշեի երկը ռուսերեն է թարգմանել ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին: Գիտահամեմատական բնագիրը կազմել է պրոֆ. Ն. Տեր-Միքայելյանը և հրատարակել 1957 թվականին՝ «Եղիշէ, վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» վերնագրով: Աշխարհաբար է թարգմանել Ն. Տեր-Միքայելյանը՝ «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» վերնագրով և հրատարակել է 1946 թ.: Նույնը վերահրատարակվել է 1958 և 1971 թթ.: Քրեստոմատիայում օգտագործված է 1971 թ. հրատարակությունը:

ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Սասանյան արքունիքի քաղաքականությունը
Հայաստանի նկատմամբ*, էջ 21—34

Երբ Արշակունյաց ցեղը[1] վերացավ, Հայոց աշխարհին տիրեց Պարսիկ Սասանի ցեղը[2], որ իր իշխանությունը վարում էր մոդերի կրոնի համաձայն և շատ անգամ կռիվ էր մղում նրանց հետ, ովքեր չէին ընդունում նույն կրոնը. Սկսելով Տիրանի որդի Արշակ Թագավորի[3] օրերից՝ կռվում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշես արքայի[4] վեցերորդ տարին: Եվ երբ սրան էլ զրկեց Թագավորությունից, իշխանությունն անցավ Հայոց նախարարներին. որովհետև թեպետև հարկը Պարսից արքունիքն էր գնում, սակայն Հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ: Այս պատճառով էլ աստվածապաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում, արքայից արքա Շապուհի[5] Թագավորության սկզբից մինչև Վռամի որդի արքայից արքա Հաղկերտի երկրորդ տարին[6], որին սատանան իրեն գործակից գտավ, և հավաքված ամբողջ թույնը դուրս թափեց և լցրեց նրան ինչպես թունավորված նետերով լի կապարճ:

Որովհետև նրան շատ սիրելի էր խռովությունն ու արյունահեղությունը, այդ պատճառով էլ ինքն իր մեջ ալեկոծվում էր, թե

* *Այս և մյուս ենթավերնագրերը դրված են մեր կողմից— Ա. Ա.:*

ո՞ւմ վրա թափեմ դառն թույներս կամ ուր արձակեմ բազմաթիվ նետերս։ Եվ սաստիկ հիմարության պատճառով, ինչպես կատաղի գազան, հարձակվեց Հունաց երկրի[7] վրա, հարվածեց մինչև Մծբին քաղաքը և ասպատակ սփռելով՝ ավերեց Հռոմեների շատ գավառներ, հրդեհեց բոլոր եկեղեցիները, ավար ու գերի հավաքեց և ահաբեկեց երկրի ամբողջ ղորքը։

Իսկ երանելի Թեոդոս կայսրը[8], որովհետև խաղաղասեր քրիստոնյա մարդ էր, չկամեցավ նրա դեմ պատերազմի դուրս գալ, այլ Անատոլ անունով մի մարդու, որ Արևելքի նրա սպարապետն էր, շատ գանձերով նրա մոտ ուղարկեց։ Եվ բռնեց ու նրա ձեռքը տվեց այն սրասիրտ մարդկանց, որոնք քրիստոնյա լինելու պատճառով փախել էին և գտնվում էին կայսեր քաղաքում։ Եվ այն ամենը, ինչ որ ասաց [Հաղկերտը] ժամանակին, [Թեոդոսը] կատարեց նրա կամքի համաձայն և իջեցրեց նրա մեծ բարկությունը. և այսպիսով Հաղկերտը վերադարձավ իր քաղաքը՝ Տիզբոն[9]։

Երբ անօրեն իշխանը տեսավ, որ իր չարությունը հաջողվեց, սկսեց մի այլ խորհուրդ էլ մտածել, ինչպես մի մարդ, որ բորբոքված կրակի մեջ շատ վառելափայտ է ավելացնում։ Որովհետև որտեղից մի քիչ կասկած ուներ, այնտեղից լիովին ապահովվեց. այդ պատճառով էլ քրիստոնյաների սուրբ ուխտից շատերին խախտեց՝ մեկին սպառնալի խոսքերով, մյուսին շղթաներով ու տանջանքներով, երրորդին չարաչար մահով սպանելով։ Հափշտակում էր նրանց առացվածքն ու կալվածքները. և մեծ անարգանքով տանջում էր բոլորին։ Եվ երբ տեսավ, որ ցիրուցան եղան այս ու այն կողմ, խորհրդի կանչեց ձախակողմյան պաշտոնյաներին...։

Մոգերն[10] ասում են. «Քա՛ջ թագավոր, աստվածները տվին քեզ այս տերությունը և հաղթություն. նրանք ամենևին մարմնավոր հարստության կարոտ չեն, միայն թե մի կրոնի դարձնես քո տերության մեջ գտնված բոլոր ազգերին ու ժողովուրդներին. այն ժամանակ Հույների երկիրն էլ հնազանդվելով՝ կենթարկվի քո իշխանությանը։ Արդ, մեր մի խոսքը շուտով կատարի՛ր, արքա՛, ղորք հավաքիր և գունդ կազմիր, վեր կաց գնա Քուշանների[11] երկիրը և բոլոր ազգերին ժողովիր և անցկացրու Պահ դռնից[12] ներս, և այնտեղ շինիր քո բնակությունը։ Երբ բոլորին արդելես ու

պահես հեռավոր օտարության մեջ, քո կամքն ու խորհուրդները կկատարվեն և, ինչպես երեում ես մեր գուշակությունների մեջ, դու կտիրես նաև Քուշանների երկրին և մինչև անգամ Հույները քո իշխանության դեմ դուրս չեն գա։ Միայն թե քրիստոնյաների կրոնը մեջտեղից վերացրու»։ Այս խորհուրդը հաճելի եղավ թագավորին ու իրեն համամիտ մեծամեծներին. հրովարտակներ դրեց, արագագնաց սուրհանդակներ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը։

Այս պատճենի համաձայն հրովարտակ հասավ Հայոց, Վրաց և Աղվանից և Լփնաց[13], Ծավղից[14] և Կորդվաց[15], Աղձնյաց աշխարհները[16] և շատ ուրիշ հեռավոր տեղեր, որոնք առաջ պարտավոր չէին այն ճանապարհը գնալ։ Ձորք էր ժողովում մեծ Հայքից ազնվականներին և ազատորդիներին և թագավորական կալվածներից՝ ոստանիկ մարդկանց։

Եվ անմեղությամբ չիմանալով թագավորի խարդախ միտքը՝ յուրաքանչյուրը իր երկրից զվարթությամբ և սիրասեր խորհրդով ելան դնացին, աներկբա հավատով կատարելով [իրենց] պինվորական ծառայությունը։

Ապա, երբ թագավորը տեսավ բարբարոսների գնդի ամբողջ պատրաստությունն ու բազմությունը, որոնք հոժարակամ եկել էին արքունի ծառայության, ավելի ևս ուրախացավ իր մեծամեծների և զորքերի ամբողջ բազմության առաջ։ Արտաքուստ թաքցնում էր իր մտադրությունները և ակամա առատ-առատ պարգևներ էր տալիս նրանց։ Ելավ գնաց Հոնաց աշխարհի տերության վրա, որին Քուշանք են անվանում, և երկու տարու չափ կռվելով՝ նրանց ոչ մի վնաս հասցնել չկարողացավ։ Հետո զինվորներին ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը և նրանց փոխարեն ուրիշներին կանչեց իրեն մոտ նույնպիսի պատրաստությամբ։ Եվ այսպես տարեցտարի կարգ սահմանեց, և այնտեղ իրեն համար բնակության քաղաք շինեց, իր թագավորության չորրորդ տասվանից սկսած մինչև իր իշխանության տասնմեկերորդ տարին։

Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է ընկած [նրանց] մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այդպիսի մարդը ցնորական բաներով է անցկացնում իր կյանքը, իսկ մահվան ժամանակ էլ անդառնալի կորըստ-

յան մասնվում։ Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն։ Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից. իսկ ով գիտե մահը, նրանից չի երկնչում։

Եվ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից։ Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից։ Լավ է աչքով կույր [լինել], քան մտքով կույր։ Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնական տեսողությունից։

Եվ երբ տեսավ, որ ծածուկ հնարագիտությունը բանի տեղ չանցավ, այլ դիմացիններն ավելի շատ էին գործում... սկսեց հալումաշ լինել և հառաչելով հոգոց հանել։ Ակամա հայտնեց գաղտնի մտադրությունները. բարձրաձայն հրաման տվեց և ասաց. «Իմ իշխանության ներքո գտնված բոլոր ազգերն ու ժողովուրդները թող բոլորը ձեռք քաշեն [իրենց] մոլար կրոններից և գան երկրպագություն անեն միմիայն արեգակին, զոհեր մատուցելով և աստված անվանելով [նրան], և սպասավորելով կրակին. բացի այս ամենից՝ մոգության օրենքներն էլ կատարեն, առանց որևէ բան պակաս թողնելու»։

Այս ասելով՝ բարձրաձայն հրապարակում էր [հրամանը] մեծ բանակի մեջ և խիստ պատվեր էր տալիս ամենքին. և փութով սուրհանդակներ էր ուղարկում բոլոր հեռավոր ազգերի մոտ, այդ նույն հրամանը հասցնում էր բոլորին։

Դենշապուհի[17] աշխարհագիրը, էջ 34—35

Բացի այս ամենից՝ մի այլ չարություն էլ նյութեց։ Իր հավատարիմ ծառաներից մեկին, որի անունը Դենշապուհ էր, գործով ուղարկեց Հայոց երկիրը. սա եկավ տեղ հասավ արքունի հրամանով, բերեց մեծ թագավորի ողջույնը, և խաղաղասեր կեղծավորությամբ ամբողջ Հայոց երկիրը աշխարհագիր արեց՝ իբր թե հարկերը ներելու ու այրուձիի ծանրությունը թեթևացնելու նպատակով։ Թեպետև երեսանց կեղծավորություն էր անում, բայց ներքուստ երևում էին չարագույն դիտավորությունները։

Առաջին, եկեղեցու ազատությունը հարկի տակ դրեց։

Երկրորդ, վանքերում բնակված միայնակյաց քրիստոնյաներին նույն աշխարհագրի տակ գցեց։

Երրորդ, երկրի հարկն ավելի ծանրացրեց։

Չորրորդ, նախարարներին բանսարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան մեջ խռովություն գցեց։

Եվ այս ամենն անում էր, որպեսզի գուցե [կարողանա] քանդել միաբանությունը, և եկեղեցու ուխտը ցրվի, և միայնակյացներին փախցնի, և շինականներին տկարացնի. և [նրանք] չափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը։

Բայց ամենից վատթարը հինգերորդն էր. որովհետև նա, որ երկրի հազարապետն էր, համարվում էր քրիստոնյա աշխարհականների վերակացու հայրը. սրա դեմ դրգռելով՝ ամբաստանություն հարուցեց, և նրան գործից հանելով՝ նրա փոխարեն մի պարսիկ բերեց [մեր] աշխարհը, և մի մոգպետի էլ աշխարհին դատավոր [կարգեց], որպեսզի եկեղեցու փառքը նսեմացնեն։

Կրոնափոխության առաջարկը, էջ 35—50

Եվ երբ տեսան, թե այս ամենով չկարողացան զզվեցնել, այն ժամանակ հայտնապես հրաման տվին մոգերին և մոգպետներին մի նամակ գրել՝ իրենց ձախուժուռ հավատի համաձայն։ Եվ նամակի պատճենն այս է.

«Մի՛հրներսե՛հ[18] վզուրկ[19] հրամանատար Երան և Աներան[20] Հայոց Մեծաց շատ ողջույն».

«Իմացած եղեք, որ ամեն մարդ, ով բնակվում է երկնքի տակ և չունի դեհիմազդեզն կրոնը, նա խուլ է և կույր և Հարամանիի[21] դևերից խաբված։

«Մարդ, երկու բան կա ձեր առաջ. կա՛մ կետ առ կետ պատասխան տվեք այս նամակին և կա՛մ վեր կացեք Դուռն եկեք և ներկայացեք Մեծ տայանին»։

... Բոլոր եպիսկոպոսները և բազմաթիվ քորեպիսկոպոսներ և պատվական երեցներ զանազան տեղերից եկեղեցու սուրբ ուխտի հետ միասին՝ միաբան և միահավան, միահամուռ ժողովվելով թագավորանիստ վայր Արտաշատում՝[22] մեծամեծ նախարարների և աշխարհի ամբողջ բազմության հավանությամբ գրեցին նամակի պատասխանը։

«Հովսեփ եպիսկոպոս[23], ինձ հետ միաբանածների հետ մի-

սին մեծամեծներից մինչև փոքրերը, Արիների և Անարիների[24] Միհրներեսեն մեծ նազարապետին շատ ու շատ ողջույն խաղաղասեր մտով, ինչ և Աբյաց ամբողջ զորաթանակին»:

«Աստվածատուր պատվիրանի համաձայն նախնիներից սովորություն ունենք աղոթք անել թագավորի կյանքի համար և անդադար խնդրել աստծուց նրա համար երկար կյանք, որպեսզի խաղաղությամբ վարի այն տիեզերական իշխանությունը, որ աստված է հանձնել նրան. որպեսզի նրա երկարատև խաղաղ կառավարության ժամանակ մենք էլ առողջությամբ և աստվածապաշտությամբ անցկացնենք մեր կյանքը:

«Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված:

Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքումն են, և մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես...»:

Ամբողջ բազմությունը, մեծերից մինչև փոքրերը, միաբանվեցին այս մեծ վկայությանը. անսուտ երդում դրին՝ կյանքով և մահով հաստատ մնալ նրա վրա:

Երբ այս նամակն արքունիք հասավ... չարասեր մոգպետը մեծ հաղարապետի հետ միասին չարախոսություն շնչեց և թագավորին, իբրև անշիջանելի հուր, բորբոքեց:

Այն ժամանակ դառնացած ծերը խոսք վրա բերեց և ասաց թագավորին. «Ինչի՞ համար է այդ քո մեծ տրամությունը. որովհետև եթե կայսրը քո հրամանից դուրս չի գալիս, և հոները քեզ են ծառայում, էլ ո՞ր մարդն է երկրի վրա, որ կարող է ընդդիմանալ քո հրամանին: Տիրաբար հրաման տուր ներսը, և ինչ էլ որ ասես՝ իսկույն կկատարվի»:

Նախարարների Տիգրոն կանչվելը, էջ 50—57

Նվ թագավորն անմիջապես ներս կանչելով դպրապետին՝ հրամայեց հրովարտակ գրել. բայց այլևս ո՛չ թե սովորության համաձայն, այլ զայրագին խոսքեր ինչպես ատելի և անպիտան անձերի, ամենևին չհիշելով տիրասեր մարդկանց մեծամեծ ծառայությունները, այլ միայն անուն-անուն կանչելու հրաման տալով այն մարդկանց, որոնց ինքը ճանաչում էր և որոնք են՝

Սյունյաց տոհմից Վասակ անունով.
Արծրունյաց տոհմից Ներշապուհ անունով.
Ռշտունյաց տոհմից Արտակ անունով.
Խորխոռունյաց տոհմից Գադիշո անունով.
Մամիկոնյան տոհմից Վարդան անունով.
Մոկաց տոհմից Արտակ անունով.
Ապահունյաց տոհմից Մանեե անունով.
Ամատունյաց տոհմից Վահան անունով.
Վահևունյաց տոհմից Գյուտ անունով.
Անձևացյաց տոհմից Շմավոն անունով.

Այս նախարարներին անուն-անուն կանչեցին արքունի դուռը: [Հայ նախարարների] մի մասը հենց իրեն մոտ էին՝ բանակում, մյուսներն էլ հյուսիսային կողմերը՝ Հոնաց պահակում. նախարարներից ոմանց էլ թողել էր Հայոց աշխարհում:

Երբ հասան արքունի դուռը՝ զատկի ավագ շաբաթ օրը ներկայացան թագավորին:

Առաջվան ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանգեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների և մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը:

Իսկ այն օրը սրանցից և ոչ մեկն էլ չհիշեց, այլ ինչպես մի շար դև՝ չէր դադարում ձմեռվա բուքը հուզելուց և շարժելուց...:

Մոնչալով ձայն արձակեց և ասաց. «Երդվել եմ մեծ աստված արեգակով, որ իր ճառագայթներով լուսավորում է ամբողջ տիեզերքը և իր ջերմությամբ կենդանացնում է բոլոր արարածներին, որ եթե վաղն առավոտյան, սքանչելու ծագելուն պես բոլորդ ինձ հետ միասին ծունր չդնեք նրա առաջ՝ նրան աստված դավանելով, ձեզ ամենևին ողջողություն չեմ անի, ամեն տեսակի նեղություն

ու չարչարանք կթափեմ ձեզ վրա, մինչև որ ակամա կատարեք իմ կամքն ու հրամանը»։

Այն ժամանակ երանելի նախարարներն առհասարակ բարձրացրին իրենց ձայնը և ասացին բոլորի առաջ. «... Ուրեմն, ինչ ձևով ուզում ես վարվել՝ վարվի՛ր, բոլորս պատրաստ ենք այն ամեն հարվածների ու տանջանքների մեքենաների համար, որ սպառնացիր, ո՛չ միայն չարչարվելու, այլև մեռնելու։ Եվ եթե դարձյալ նույն բանը հարցնես, ամեն մեկիցս սրանից էլ ավելի [կտրուկ] պատասխան կլսես»։

Այն ժամանակ թագավորը՝ լեղուց ավելի դառնացած՝ որովայնի մեջ կուտակված կամավոր մաղձի ծովը փուլ էր ածում, և նրա քթից ու բերանից առհասարակ ջերմախառն գոլորշի էր դուրս գալիս, ինչպես սաստիկ հնոցից թանձր ծուխը։

Եվ անմիջապես հրամայեց պատվական նախարարներին մեծ անարգանքներով հեռացնել իր աչքի առաջից, և զգուշությամբ հրաման տվեց դահճապետին, որ նրանց առանց կապելու յուրաքանչյուրին իր իջևանում պահի, իսկ ինքը՝ իրենից դուրս եկած՝ անմխիթար տրտմությամբ նորից վերադարձավ և հազիվ ընկավ իր օթևանը։

Թագավորի ներքին խորհրդակիցներից մեկը գաղտնի կապված էր [նրանց հետ] Քրիստոսի անքակտելի սիրով, որովհետև նույնիսկ մկրտված էր կենդանի ավազանի մեջ, և մեծապես հոգ էր տանում վշտացածների կյանքը փրկելու։ Եվ երբ հաստատապես ստուգեց, որ թագավորն իր սպառնացած բազմաթիվ չարիքները բոլորը ուզում է կատարել Հայոց աշխարհի դլխին, թեպետև նրանցից ոչ բոլորին, բայց մի քանիսին խրատ տվեց և սովորեցրեց, թե ինչ հնարք գործ դնեն, որ առժամանակ իրենց փրկեն այն նեղ դրությունից։

Եվ ամենքն այս անքակտելի ուխտը դնելով աստծու հետ, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրության վրա, իրենց միևնույն խրատատուին պատգամավոր ուղարկեցին ներս, իբր թե կատարվելու է նրա (թագավորի) անօրեն կամքը։

Երբ այս լսեց թագավորը՝ չափազանց ուրախացավ, ցնծաց և կարծելով թե աստվածներն իրեն օգնության են հասել, շրջելով և ոչնչացնելով աստծու ծառաների հաստատուն մտադրությունները, և ահա երկրպագություն են մատուցանում արեգակին, պատվելով նրան զոհերով և մոգության բոլոր օրենքներով։

Բայց այս բանը չկարողացավ հասկանալ ցնորվածը, թե արդարության արեգակի անստվեր լույսը մաշում և ոչնչացնում էր նրա խավարային մտադրությունները և եղծում ապականում էր նրա ամբողջ խեղաթյուր կամքը։ Եվ ճշմարիտ հայտնությունից զրկված՝ ամենևին չհասկացավ այն պատրանքը ու խաբեությունը, որով մոլորեցրին նրան։ Նրանց առաջ երկրավոր պարգևներ էր թափում և նորից բոլորին վերադարձնում էր իրենց պատիվն ու գահը, առաջ քաշելով և երևելի դարձնելով նրանց իր ամբողջ տիեզերական իշխանության մեջ։ Եվ նրանցից յուրաքանչյուրին անչափ առատությամբ ագարակներ ու ավաններ էր շնորհում արքունիքից, սիրելիներ և բարեկամներ էր անվանում նրանց և կամակոր մտքի հպարտ հանդգնությամբ կարծում էր, թե ճշմարտությունը կփոխանակվի ստության հետ։

Եվ այս անելուց հետո՝ շատ այրուձի ուղարկեց նրանց հետ, և մոգերից էլ ոչ պակաս, քան յոթ հարյուրից ավելի ուսուցիչներ հղեց նրանց հետ և մի մեծ իշխանի էլ նրանց վրա մոգպետ կարգեց։ Խոնարհվում էր և աղաչում պատվիրելով, թե մինչև ես այս պատերազմից խաղաղությամբ հետ դառնամ, դուք ամեն բան արեք ու կատարեցեք իմ կամքի համաձայն։ Եվ այսպես շքով ու պատվով երկար ճանապարհ էր դնում նրանց դեպի Հայոց երկիրը։ Իսկ ինքն ուրախալի ավետիս ուղարկեց շատ ատրուշանների, գրեց և հայտնեց մոգերին ու մոգպետներին և զանազան երկրամասերի բոլոր մեծամեծներին, թե ինչպես աստվածների օգնականությամբ իր առաքինի գործը առաջ տարավ։

Իսկ այն գարշելիներն այնուհետև դուրս գալով յուրաքանչյուրն իր խավար դարանից՝ փափագում էին շուտով կատարել [թագավորի] հրամանը. ձայն տվին հեռավոր երկրները, որ վեր կենան, դնան արևմտյան աշխարհը։ Եվ դեռ չէին հասել Հայոց մեծ աշխարհը, որ փայտի միջոցով վիճակ էին գցում, թե ո՛ր ժողովուրդը [մոգերի] ո՛ր դասին է բաժին ընկնելու աշակերտելու համար։ Որովհետև առհասարակ հրաման էին առել արքունիքից մտնել ինչպես Հայոց, այնպես էլ Վրաց և Աղվանից և Լփնաց, Աղձնյաց և Կորդվաց և Ծաղդեից և Դասն աշխարհները, և դարձ-

յալ ուր որ զանազան տեղեր Պարսից իշխանության մեջ ծածուկ պաշտում էին քրիստոնեությունը։

Ապստամբության սկիզբը, էջ 63—73

Իսկ Հայոց զորագունդը բոլոր օգնականներով ու բազմաթիվ մոգերով չորրորդ ամսին եկան հասան Հայոց աշխարհը, մի մեծ գյուղաքաղաք, որի անունն էր Անդղ[25]։ Այդտեղ բանակ դրին, հավաքվեցին, տեղավորվեցին, և ամեն կողմերից անթիվ բազմություն ժողովվեց այնտեղ։

Եվ այնպես պատահեց, որ քսանհինգ օրից հետո մի կիրակի օր մոգպետն ինքը մոգերի հետ միասին եկավ մեծ ուժով, որպեսզի քանդի եկեղեցու դռները. ուզում էր փորձել, թե գործը ինչ ընթացք կստանա։ Իսկ սուրբ Ղևոնդ երեցը[26] առաջին խորհրդակիցների և բազմաթիվ ուխտակիցների հետ միաբան այնտեղ պատրաստ դտնվեց։ Թեպետև լավ տեղյակ չէր բոլոր նախարարների մտադրություններին և ո՛չ էլ մոգպետի ուժին ու զորությանը, ամենևին չսպասեց բոլոր եպիսկոպոսներին և նույնիսկ մի քիչ էլ չհամբերեց ու չներեց անօրեն իշխանին, այլ մեծ աղմուկ ու տագնապ առաջացրեց զորքերի և մոգերի մեջ։ Որովհետև դագանակները ձեռքներն առած՝ մոգերի և մոգպետի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին իրենց կացարանները, իսկ իրենք պաշտամունքը վերսկսելով եկեղեցում՝ կիրակնօրյա կարգն էին կատարում, շարունակելով այն ամբողջ նույն կիրակի օրը։

Մի գիշեր ուխտի ամբողջ բազմությունը խորհուրդ կազմեց և զորքերի սպարապետին էլ կանչեցին խորհրդի. հարցրին, քննեցին և տեղեկացան, որ նրա դիտավորությունն անդրդվելի է և մի փոքր անգամ չի թերացել Քրիստոսի սիրուց։ Ընդունեցին առաքինիների շարքը։ Նրա միջոցով շատերին էլ գրավեցին նույն միաբանության մեջ, ովքեր առաջին միաբանությունից անջատված չէին. եկան հավաքվեցին և մեծ զորագունդ կազմեցին։

Այն ժամանակ բոլորն այնպես բորբոքվեցին զայրույթով, որ մինչև անգամ բոլոր տեսնողների երիկամները դողում էին. նրանք ոշնչի տեղ դրին արքունի պարգևները և ոտնատակ տվին ահաղդու հրամանները։ Շտապով վազեցին դեպի իրենց զենքերը, ամբողջ գիշերը սպառազինվեցին՝ պատրաստվեցին և արևը ծագելուն պես զորքը երեք մասի բաժանելով՝ վրա տվին բանակին։

Առաջին գունդն արևելյան կողմից, երկրորդ գունդն արևմտյան կողմից և երրորդ գունդը հյուսիսային կողմից շուրջանակի իրենց մեջ առան, փակեցին մեծաթիվ բանակը. շատերին կոտորեցին, էլ ավելի շատերին երևելի մարդկանցից կապեցին և ամուր բերդերում բանտարկեցին իրենց իշխանության տակ։ Եվ բանակի կողոպուտը, թալանն ու ավարը մի տեղ ժողոված պահում էին իբր թագավորի հրամանով։

Իսկ երբ մարզպանին էլ ձերբակալեցին, նա երդումով միաբանվեց նրանց հետ, որ հաստատ կմնա ուխտին, զղջում էր, որ առաջ բաժանվել էր նրանցից։

Այնուհետև տերը ծառայից ավելի չէր երևում, և ո՛չ էլ փափուկ մեծացած ազատը՝ տառապյալ գեղջուկից, և ո՛չ էլ մեկը մյուսից ավելի պակաս քաջության մեջ։ Միևնույն հոժար սիրտն ունեին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղա և Քրիստոսի անունով բոլոր միաբանվածները։

Այն ժամանակ նորից հարձակվեցին այն բերդերի և ավանների վրա, որ երկրի զանազան ամուր տեղերում գրավել էին պարսիկները. կործանեցին, քանդեցին նրանց բնակավայրերը։ Նախ՝ մեծ Արտաշատը իր ավաններով. և առան անմատչելի ամրոցները՝ Գառնի քաղաքը, Անին, Արտագերսը և իրենց ավանները. Երկայնորդն ու Արխին և իրենց ավանները, Բարձրաբողը, Խորանիստը, Ծաիսանիստը, ապահով Ողականը և սրանց հետ իրենց ավանները. Արփանյալը, Վան ավանը, նրա հետ նաև իր ավանները. Գոյալն ու Կապուտը, Որոտն ու Վաշակաշատը[27]։

Այս բոլորն ամեն մեկն իր գյուղերով ու ագարակներով, զորքերով ու զորագլուխներով նույն տարին առան ու կործանեցին, և տղամարդկանց ու կանանց գերի տարան իրենց գույքերով ու ստացվածքներով, թանկագին գանձերով ու կահկարասիով։ Տապալում քանդում էին նրանց շենքերը և հրկիզում էին կրակի պաշտամունքի տեղերը։ Մաքրում էին կռապաշտությունների պղծությունը և գրավում էին ատրուշանների սարքուկարգը, բերում էին սուրբ եկեղեցում և սուրբ քահանաների միջոցով նվիրում էին ի ծառայություն տերունական սեղանի։

Հայերի ռազմական օգնությունը Աղվանից ժողովրդին, էջ 73—82

Եվ ահա շատ օրեր անցնելուց հետո եկավ հասավ Աղվանից

հազարապետը նույն աշխարհի սուրբ եպիսկոպոսի հետ միասին, մեծ տագնապով շտապեցնում էր զորքին՝ ասելով. «Հոների աշխարհի[28] կողմերը գտնված Պարսից զորքը ետ դարձավ այս կողմը, եկավ մտավ մեր երկիրը. և շատ ուրիշ այրուձի էլ արքունիքից եկավ...»:

Իսկ Հայոց զորքը երբ լսեց այս դառն գույժը, ամենևին չթուլացավ քաջությունից և չվհվեց, այլ դարձյալ ամբողջ երկրից հավաքված ժողով արին [աղվանից] բոթաբեր պատգամավորների վերաբերմամբ, որոնք եկել էին նրանց մոտ: Եվ միաբանությամբ քաջալերելով՝ արձակեցին նրանց...:

Այն ժամանակ մեծ նախարարներից մեկին Գնունյաց տոհմից՝ Ատոմ անունով, շտապով ուղարկեցին Արևմտյան երկիրը, որ Արևելքի չարամիտ թագավորի այս բոլոր մտադրությունները հայտնի, միաժամանակ պատմի նաև իրենց քաջությունները, որ կատարեցին գործով, ոտի տակ տալով ահեղ հրամանը, և մոգերին մեծապես սատկեցնելը, և նրանից [կայսրից] օգնություն ու օժանդակություն խնդրի, և եթե նա կամենա, նրա ծառայության տակ մտնեն:

Եվ երբ ներկայացան մեծ թագավորին և կարդացին Հայոց աշխարհի աղաչական գրությունն ու նախնիքների հիշատակարանները, շատ գրքեր մեջ բերին՝ կարդացին և նրանց մեջ էլ գտան նույն հաստատուն ուխտը:

Եվ մինչդեռ երանելի Թեոդոսը[29] հարցուփորձ էր անում ամբողջ Սինկղիտոսին և կամենում էր գործի համար մի հնար գտնել խաղաղությամբ և մեծ հոժարությամբ հոգ էր տանում, որ Արևելքի եկեղեցիները չհափշտակվեն անօրեն հեթանոսների կողմից, այն նույն ժամանակ շուտով հասավ նրա կյանքի վախճանը և օգնության գործը չարաչար խափանվեց:

Եվ նրա փոխարեն թագավորեց Մարկիանոս կայսրը[30]. սա իր խրատատու վատթար ծառաների շնորհիվ, այն է՝ Անատոլ սպարապետի և Եղիսարիոս ասորու,— երկուսն էլ անարգ ու վատթար, միևնույն ժամանակ և անաստված մարդիկ,— նրանց կողմն անցնելով թագավորը՝ չկամեցավ ուշադրություն դարձնել Հայերի միաբան ուխտին, որ իրենց ամբողջ ուժով ընդդիմադրել էին հեթանոսների չարությանը: Իսկ այս անարի մարդը ավելի լավ էր համարում իր դաշինքը պահել հեթանոսների հետ մարմնական

խաղաղության համար, քան թե քրիստոնեության ուխտին պատերազմակից լինել: Այս պատճառով էլ շտապեց. դեսպաններ ուղարկեց Պարսից թագավորի մոտ նույն Եղիսարիոսին և հաստատուն դաշն կնքեց նրա հետ՝ օգնություն ցույց չտալ Հայոց զորքին ո՛չ զորքով և ո՛չ էլ ղենքով ու ամեն տեսակ օժանդակությամբ:

Թևպետև թագավոր չունեին իրենց առաջնորդ, և ո՛չ էլ դրսից որևէ օգնական օտարներից, բայց բոլոր նախարարներն անձնական առաքինությամբ և սուրբ վարդապետների մխիթարությամբ իրենց բոլոր զորքերի հետ միասին ամեն մեկն իր տնից շտապով նկան մի տեղ հավաքվեցին, նաև ուրիշ շատ հեծելազոր, որ թագավորական տնից էին:

Եվ ամբողջ զորքը երեք գնդի բաժանեցին:

Առաջին գունդը տվին Ներշապուհ Ռմբոսյանին և ուղարկեցին նրան երկիրը պահպանելու Ատրպատական աշխարհի սահմաններին մոտիկ:

Երկրորդ գունդը տվին Հայոց Վարդան զորավարի Ճիռքը, որ վրաց սահմանից անցնի Ճորա մարզպանի վրա, որ եկել էր Աղվանից եկեղեցիներն ավերելու:

Իսկ երրորդ գունդը հանձնեցին Սյունյաց Վասակ իշխանին, որն իր ներքին մտադրություններով հեռացած չէր հեթանոսների ուխտից:

Այս բանը գրեց և հասկացրեց մարզպանին, որի անունը Սեբուխտ էր[31]: Իսկ նա, երբ իմացավ, լսեց Վասակից այս բոլոր խրախուսանքները և ստուգելով համոզվեց, որ Հայոց սպարապետը սակավաթիվ գնդով է գալիս նրա վրա, այլևս չմնաց Ճորա կողմերում, այլ հավաքեց իր ամբողջ բազմաթիվ զորքը և շտապով անցավ Կուր անունով մեծ գետը և հանդիպեց նրան Վրաց սահմաններին մոտիկ Խաղխաղ քաղաքի[32] հանդեպ, որ Աղվանների թագավորների ձմեռոցն էր: Անցավ սփռվեց իր ամբողջ զորքով, բանակ դրեց և դաշտի ամբողջ մեծությունը բռնեց. դինված ու լիուլին սպառազեն դուրս եկան կռվելու Հայոց զորքի դեմ:

Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնված ամբողջ զորքը, երբ տեսան հեթանոսների գնդի մեծ պատրաստությունը, նայեցին նաև իրենց սակավությանը. թեև թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենևին չվախեցան նրանց մեծ բազմությունից...:

Խումբ կազմեցին ու հարձակվեցին, և աջ թևը ճնշելով՝ ձախ կողմը գցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրա և փախչորին մինչև անտառի ամուր տեղերը՝ լռինաս գետի[33] խոր ձորերի մոտ։ Այստեղ Բաղասական[34] թագավորի թագավորազններից ոմանք ետ դարձան, Հայոց նախարարներից մեկին ձիուց վայր գցեցին, Դիմաքսյան գնդից Մուշին սպանեցին և Գազրիկին վիրավորեցին։

Այնտեղ աչքը վեր բարձրացրեց Արշավիր Արշարունին, մոբնչաց առյուծի պես և հարձակվեց վարազի նման, խփեց սատկեցրեց Լփնաց թագավորի եղբայր քաջ Վուրկին և նրա բազմաթիվ համհարզներին էլ նրա հետ սպանեց։ Եվ այսպես առհասարակ յուրաքանչյուրն իր ախոյանին գետին էր գլորում։ Եվ սաստիկ հանդուգն հարձակման պատճառով գետը թափածների թիվն ավելի շատ էր, քան թե ցամաքի վրա սրի անցրածներինը։ Եվ ընկած դիակների բազմությունից գետի հատակ ջրերը արյուն դարձան և նրանցից ոչ ոք չկարողացավ փրկվել և թաք կենալ դաշտերի խիտ անտառներում։ Բայց թշնամիների զորականներից մեկը իր զենքերով միասին բարձրանալով ձիու մեջքին՝ անցավ մեծ գետը, մազապուրծ եղավ պատերազմից՝ գույժ տարավ մնացած բուն բանակին, որոնք փախան գնացին մեծ շահաստանը (Պարտավ քաղաքը— Ա. Ա.)։

Այն ժամանակ Հայոց զորքերը պատերազմի մեծ գործն ավարտելով՝ սկսեցին դիակների կողոպուտը, հավաքեցին բանակի մեծ ավարը և կողոպտեցին ընկած դիակները. ժողովեցին շատ արծաթ ու ոսկի, արի մարդկանց և լավ երիվարների զենքերն ու զարդերը։

Դարձյալ ոչ պակաս քաջությամբ հարձակվեցին այն բերդերի և քաղաքների վրա, որ գրավել էին պարսիկներն Աղվանների աշխարհում, հզորապես մարտնչելով հրդեհում էին նրանց ամուր բերդերը. և մոգերի այն խմբերը, որոնց պատրաստել բերել էին երկրում գայթակղություն գցելու համար, ո՛ւր էլ գտնում էին ամուր-ամուր տեղերում, սրի ճարակ դարձնելով՝ թողնում էին երկրնքի թռչուններին և երկրի գազաններին կերակուր։ Այն տեղերը մաքրեցին բոլոր պիղծ ղոհերից և եկեղեցիները փրկեցին, ազատեցին անտառների նեղությունից։

Աղվանից նախարարներից ու բոլոր շինականներից շատերն

էլ, որոնք աստծու անվան համար ցիրուցան էին եղել Կապկոհ լեռների[35] ամուր տեղերում, երբ տեսան այդ գործի հաջողությունը, որ աստված կատարում էր Հայոց զորագնդի միջոցով, նրանք նույնպես եկան ժողովվեցին և խառնվեցին Հայոց զորքի հետ, և նրանց հետ միաբան ու հավասար մասնակցեցին քաջության գործին։ Այնուհետև գնացին արշավեցին Հոների պահակի[36] վրա, որ բռնությամբ գրավել էին պարսիկները. առան, բանդեցին Պահակը և կոտորեցին ներսում բնակված զորքը և Դուռը հանձնեցին Վահանին, որ Աղվանների թագավորների ցեղից էր։ Եվ այս բոլոր քաջագործություններն անելիս՝ նրանցից ամենևին ոչ ոք չվիրավորվեց, բացի մեկ երանելուց, որ նահատակվեց մեծ պատերազմի մեջ։

Եվ տեղնուտեղը այն մարդուն, որին հանձնել էին Դուռը, հենց նրան էլ դեսպան ուղարկեցին Հոների երկիրը և Հոների երկրին գործակից ուրիշ շատ բարբարոս ազգերի մոտ՝ նրանց հետ բանակցելու և դաշն կնքելու, որ հաստատ մնան այդ միաբանության վրա։ Իսկ նրանք երբ այս բոլորը լսեցին, շտապով եկան հասան այնտեղ և իրենց աչքով տեսան հաղթության գործը։ Եվ չհապաղեցին երդումով դաշն կնքել իրենց օրենքով ու կարգով. ընդունեցին նաև քրիստոնյաների երդումը՝ հաստատ պահելու միաբանությունը նրանց հետ։

Երբ այս բանն ավարտեցին և [հայերը] իրենց համար մեծ ապահովություն ձեռք բերին, և դեռևս նույն վայրում տեղավորված էին հանգիստ կերպով, Հայոց աշխարհից մի գուժկան հասավ, ճակատը վիրավորված ու օձիքը պատառոտված, [և պատմեց] ապստամբ Վասակի մասին. «Հեռացել է քրիստոնեության ուխտից և ավերել Հայոց աշխարհի շատ տեղերը, մանավանդ արքունի ամեռոցները...»։

[Հայոց զորքը] խիստ շտապով չվեց այնտեղից՝ մեծ ավարով ու անչափ հարստությամբ նորից Հայոց աշխարհը վերադառնալու համար։

Եվ որովհետև ձմեռ ժամանակը վրա էր հասել, և պաշարները թշնամիների գունդը ավարել էր, [Վարդանը] չկարողացավ ամբողջ զորքը մի տեղում պահել ու մատակարարել, այլ սփռեց տարածեց երկրի զանազան գավառները՝ ձմեռը հանգստանալու համար։ Պատվեր տվեց, որ կազմ ու պատրաստ լինեն գարնան

պահին։ Եվ ավագ նախարարների խմբից քչերին իրեն գործակից թողնելով՝ ուժեղացավ և գրավեց թագավորանիստ տեղերը։

Ավարայրի եպիսկոպոսը, էջ 96—115

Որովհետև երբ մեծ Վարդանը տեսավ իր աշխարհի երկպառակությունը, ամենևին չվախեցավ թերահավատությամբ։ Թեպետև ստուգեց իմացավ դեռևս իրեն հետ միաբանվածներից շատերի երկմտություն էլ, այնուամենայնիվ ինքն իրեն սիրտ տվեց և իր զորքերն էլ քաջալերեց, քանի որ հենց ինքը դեռ գրաված էր պահում թագավորանիստ տեղերն այն նախարարների հետ միասին, որոնք չանջատվեցին սուրբ ուխտից։ Հրաման տվեց ամբողջ զորքին հավաքվել Արտաշատ քաղաքը. այն ետ կացածների փոխարեն, որոնք գնացին Սյունյաց իշխանի հետևից, կարգեց նրանց եղբայրներին կամ որդիներին կամ եղբորորդիներին և ամեն մեկին տվեց նրանց զորքերը, որովհետև ամբողջ երկիրը դեռ նրա իշխանության տակ էր։

Եվ նրանք բոլորը շտապով եկան Հասան պատերազմի վայրը, յուրաքանչյուրն իր զորքով ու ամբողջ պատրաստությամբ, նրանք և ովքեր ի բուն հաստատ էին մնացել իրենց տեղում։

Ներշապուհ Աղծոունի,
և Խոռեն Խորխոռունին,
և իմբր սպարապետր,
և Աբտակ Պալունին,
և Վահան Ամատունին,
և Վահևունյաց Գյուտը,
և Թաթուլ Գիմահսյանը,
և Աղշավիր Աղշարունին,
և Շմավոն Անձավացին,
և Տաճատ Գնթունին,
և Ատոմ Գնունին,
և Խոսրով Գաբեղյանը,
և Կարեն Սահառունին,
և Հմայակ Գիմահսյանը,
և էլի մի ուրիշ Գիմահսյան՝ Գագրիկը,
և Ներսեհ Քաջբերունին,

և Փարսման Մանդակունին,
և Աբսեհ Ըննայացին,
և Այրուկ Սղկունին,
և Վրեհ Տաշրացին,
և Ապրսամ Աղծոունին,
և արծունի Շահխոռապետը,
Խուրս Սրվանձտյանցը,
և Քողյաններ, և Ակեացիներ, և Տրպատունիներ, և Ռշտունիների գնդի, և արծունի բոլոր գործակալներն ամեն մեկն իր զորքերի հետ միասին։

Սրանք բոլորը համախմբված հասան պատերազմի գործի համար Արտազի դաշտը[37], և նրանց ընդհանուր թիվը եղավ վաթսունվեց հազար մարդ ձիավոր և հետևակ։

Նրանց հետ եկան սուրբ Հովսեփը, սուրբ Ղևոնդ երեցը և բազմաթիվ այլ քահանաներ և էլ ավելի բազմաթիվ [հոգևոր] պաշտոնյաններ։ Որովհետև նրանք էլ ամենևին չվախեցան պատերազմի գալ նրանց հետ, քանի որ ո՛չ թե մարմնական էին համարում այն կռիվը, այլ հոգևոր առաքինության կռիվ. ցանկանում էին իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել։

Սպարապետը նախարարների միաբանությամբ սկսեց խոսել զորքի հետ և ասաց.

«Շատ պատերազմներ եմ մղել ես, և դուք էլ ինձ հետ. տեղյակ էր, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ. բայց ավելի շատն այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված։ Բայց այդ բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր թագավորի հրամանով էինք մարտընչում։ Ով փախչում էր, վատանուն էր երևում աշխարհում և նրանից անողորմ մահ էր ստանում. իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում, քաջի անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցավոր ու մահկանացու թագավորից։ Եվ մեղնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջություններ էլ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացվել։...

«Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի վեր եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հո-

ժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին։ Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունք-ներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա Հըշմարտության կողմը. իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, [մահն] ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»։

Առաքինի զորավարն այս ամենը խոսեց ամբողջ բազմության առաջ. դարձյալ և նրանցից սրան-նրան ծածուկ քաջալերում էր ու սիրտ տալիս և բոլոր պակասությունները ու թերությունները լրացնում։ Զորականներից ո՛րը ոչինչ չուներ, հոգում էր իր սեփականությունից և ընկերներից. ով ղենք չուներ, ղենք էր հայթայթում նրա համար, ում ղգեստ էր պետք, ղգեստ էր հագցնում, և ում ձի էր պետք, ձի էր տալիս։ Եվ առատ պարեներով ուրախացնում էր բոլորին, և ինքն իրեն դվարթ էր ցույց տալիս ամենքին։ Եվ պատերազմական կարգի համաձայն՝ քաջ տղամարդկանց հիշատակության արժանի գործերը շարունակ կրկնում էր նրանց առաջ...։

Մի քանի օրից հետո Պարսից զորագլուխը առաջ խաղաց ամբողջ հեթանոս բազմության հետ. եկավ հասավ Հայոց երկիրը՝ Հեր և Զարևանդ գավառը[38]։ Այնտեղ՝ գավառում կանգ առնելով, բանակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատերով փակեց, և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես քաղաք։ Նրա զորքերից մեծաթիվ գունդ բաժանվեց, ասպատակելով արշավեց և կամենում էր բազմաթիվ գավառներ կողոպտել։

Երբ այդ բանը լսեց Հայոց զորքը, բոլոր զորականների միջից ընտրեցին Ամատունյաց ցեղից մի սեպուհի Առանձար անունով, որ իմաստությամբ և քաջությամբ լցված մի մարդ էր։ Սա երկու հազարով դուրս եկավ նրա դեմ, ջարդեց, սատկեցրեց նրա գնդից շատերին, իսկ մնացածներին փախցրեց, հասցրեց իրենց բանակը։ Իսկ ինքը ողջ և առողջ վերադարձավ, և այն օրը մեծ ուրախության տոն եղավ Հայոց զորքի համար։

Իսկ քաջ Վարդանը առաջ գալով՝ հարցուփորձ արեց մեծա-

մեծներին և բոլորի տված խորհրդի համաձայն զորագլուխներ նշանակեց։

Առաջին զորամասը հանձնեց Արծրունյաց իշխանին և նրան նիզակակիր կարգեց Մոկաց մեծ իշխանին. և ուրիշ բազմաթիվ նախարարների այս երկուսին նիզակակից նշանակեց, և զորամասի ամբողջ բազմությունը այս ու այն կողմից օգնական տվեց նրանց։

Երկրորդ զորամասը հանձնեց Խորեն Խորխոռունուն, և նրան նիզակակից կարգեց Ընծայինին և Ներսեհ Քաջբերունուն։

Երրորդ զորամասը հանձնեց Թաթուլ Վանանդացուն և նրան նիզակակից կարգեց Տաճատ Գնթունուն, և շատ քաջ մարդիկ էլ այս ու այն կողմից օգնական տվեց նրանց։

Ինքը վերցրեց չորրորդ զորամասը և իրեն նիզակակից՝ քաջ Արշավիրին և իր հարազատ եղբայր Համազասպյանին։

Այսպես կարգավորեց ու ճակատ կազմեց՝ սփռելով դաշտի ամբողջ երեսին, Արյաց զորքի դեմուդեմը, Տղմուտ գետի ափին[39]։

Եվ երբ այս այսպես պատրաստվեց, երկու կողմերն էլ սրբությամբ և մեծ բարկությամբ զայրացան և գազանացած զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպես իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները։ Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների դենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր։ Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից։ Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, և թե ինչպե՛ս վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները։

Այնտեղ պետք էր տեսնել, թե ի՛նչ մեծ տագնապ և անչափ իրարանցման սրտնեղություն կար երկու կողմերում էլ, երբ հանդուգն հարձակումով իրար էին բախվում. որովհետև թանձրամիտները հիմարանում էին և վախկոտները՝ վհատվում. քաջերը խիզախում էին, և անվեհեր կորիճներն՝ աղաղակում։ Եվ ամբողջ բազմությունը իրար գլխի խմբվելով՝ գետն ամեն կողմից փակեցին, և գետն [անցնելու] դժվարությունից վախեցած Պարսից զորքը սկսեց իր տեղում վխտալ։ Իսկ Հայոց զորքն անցավ գետը,

և ձի նստած մեծ զորութեամբ հարձակվեց։ Ուժգին թափով իրար զարկվելով՝ երկու կողմից էլ բազմաթիվ վիրավորներ գետին ընկած թպրտում էին։

Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ Պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները Հայոց զորքի ձախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և Պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գաղանների կողմը և շուրջը պտտելով կոտորեց մինչև նույն տեղը։ Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում դցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի[40] հաստատուն կազմակերպությունը քայքայվեց, ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց։

Ապա աչքերը վեր բարձրացրեց Մուշկան Նիսալավուրտը[41] և տեսավ, որ Հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում։ Ուստի և աղաղակ բարձրացրեց, քաջալերեց իր շուրջը գտնված Արյաց զորքին, որոնք կանգնած էին Վարդանի գնդի հանդեպ։ Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտված էին զգում, և ընկած դիակների թիվն այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդուբորդ բարակույտերի։

Երբ այս բանը տեսավ Մուշկան Նիսալավուրտը, սպասում էր Արտաշիրի գաղաններին, որը նրանց վրա նստած էր բարձր դիտանոցում, ինչպես միջնաբերդում և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերով շրջապատեց նրան [Վարդանին]։

Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը։

Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարաժամեց և երեկոյան դեմ դադարեց. շատերն իրենց մահվան օրհասը գտան. մանավանդ որ ընկածների դիակներն այնպես խիտ էին ու իրար մոտ թափված, ինչպես անտառի կտրատված փայտերը։

Այնտեղ պետք էր տեսնել նիզակների կոտրատումն ու աղեղների խորտակումը. ուստի և չէին կարողանում ստույգ որոշել երանելիների սուրբ մարմինները. և սաստիկ խուճապ ու իրարանցում էր երկու կողմերի ընկածների համար։ Իսկ ովքեր [կենդանի] էին մնացել, ցիրուցան եղան ամուր ձորերի լեռնադաշտերում. և երբ պատահում էին միմյանց, դարձյալ սպանում էին

մեկմեկու։ Եվ այսպես դաժան գործը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը։

Եվ որովհետև ժամանակը գարնանային էր, ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահոս արյունով։ Մանավանդ երբ մեկը տեսնում էր ընկած բազմաթիվ դիակների կուլտերը՝ սիրտը կտրատվում էր, և աղիքները գալարվում, լսելով խոցվածների մրմռոցը, և ջարդվածների մռնչյունը, վիրավորների թավալգոր սողալն ու շարժվելը, վախկոտների փախուստը, վհատվածների թաք կենալը, անարի մարդկանց սրտաբեկությունը, թուլասիրտների ճիչերը, սիրելիների ողբը, մերձավորների սուգը, բարեկամների վայնասունը։ Որովհետև ո՛չ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին։

Բայց որովհետև Հայոց զորավարն ընկել էր մեծ պատերազմում, այնուհետև էլ ոչ ոք գլխավոր չկար մեջտեղում, որին հենված ժողովվեին մնացած զորքերը։ Թեպետև ողջ մնացածներն ավելի շատ էին, քան թե մեռնողները, սակայն նրանք ցանուցիր եղան և քաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով տիրեցին շատ գավառների ու բերդերի, որոնք ոչ ոք մինչև այդ առնել չէր կարողանում։

Եվ սրանք են այն քաջ նահատակների անունները, որոնք այդ նույն տեղում վախճանվեցին.

Մամիկոնյանց ցեղից Քաջ Վարդանը հարյուր երեսուն և երեք մարդով.

Խորխոռունյաց ցեղից Կորովի Խորենը տասնինը մարդով.

Պալունյաց ցեղից Արի Արտակը հիսուն և յոթը մարդով.

Գնթունյաց ցեղից Զարմանալի Տաճատը տասնինը մարդով.

Դիմաքսյանց ցեղից Իմաստուն Հմայակը քսաներկու մարդով.

Քաջբերունյաց ցեղից Հրաշակերտ Ներսեհը յոթը մարդով.

Գնունյաց ցեղից Մանուկ Վահանը երեք մարդով.

Ընծայնոց ցեղից Արդար Արսենը յոթը մարդով.

Սրվանձտյան ցեղից Հառաջադեմ Գարեգինը երկու հարազատներով և տասնութը մարդով։

Այս երկու հարյուր ութսունյոթ նահատակները՝ ինը մեծամեծ նախարարների հետ՝ հենց այնտեղ վախճանվեցին։ Եվ Բագավորական տնից և Արծրունյաց տնից և մյուս նախարարների

ունից, բացի այս երկու հարյուր ութսունյոթ հոգուց՝ [դարձյալ ընկան] էլի յոթ հարյուր քառասուն հոգի, որոնք ամենքն էլ այն օրը մեծ պատերազմում իրենց անունները գրեցին կյանքի մատյանի մեջ։ Եվ այս բոլորը միասին լինում է հազար երեսունվեց մարդ։

Իսկ ուրացողների կողմից այն օրը ընկան երեք հազար հինգ հարյուր քառասունչորս մարդ։ Նրանցից ինը հոգի խիստ պատվավորներից էին, ուստի և շատ խոր վշտացավ Մուշկան Նիսալավուրը։ Մանավանդ երբ տեսավ, որ իր զորքի ստացած սաստիկ հարվածները երեք անգամ ավելի մեծ էին, քան հայերինը, նրա ուժն ու զորությունը կոտրվեց, ընկավ, և նրա սիրտը չէր հանգստանում, որ մտածի ու որոշում անի. որովհետև պատերազմն այնպես չվերջացավ, ինչպես ինքը կարծում էր։

Պատմական կոիվներ, էջ 118—183

Այնուհետև յուրաքանչյուրը թողնց իր գյուղը, ավանն ու ադարակը։ Հարսները դուրս եկան առագաստներից և փեսաները՝ սենյակներից, ծերերն ընկան աթոռներից և երեխաները՝ [ծնողների] գրկերից. երիտասարդներն ու կույսերը և տղամարդկանց ու կանանց ամբողջ բազմությունը գնացին բռնեցին անմարդաբնակ վայրերի ամրոցներն ու բազմաթիվ լեռների ապահով տեղերը։...

Սրանք (վաստակյանք) առաջ շարժվեցին դեպի Միջնաշխարհը[42] և պատերազմ սկսեցին Կապուլա լեռան մեծ ամրոցների դեմ։ Իսկ ներսում գտնվողները քաջությամբ կռվելով ջարդեցին Պարսից զորքից շատերին և մնացածներին փախցրին, հասցրին բանակը։ Իսկ նրանք դարձյալ անուշ խոսքերով դիմելով՝ ուզում էին խաբեությամբ նվաճել նրանց։

Իսկ ովքեր Տմորիքի[43] ամրոցներում էին, երբ լսեցին արքունի զորքի կատարած այս բոլոր չարագործությունները, էլ ամենևին օգտակար չհամարեցին ամրոցներում նստելը։ Քաջությամբ դուրս եկան և հարձակվեցին ամրոցականների օգնությամբ և հասնելով պարսիկների մոտակա երկիրը, անխնա կոտորելով՝ արյան նախճիրներ գործեցին, մնացածներին էլ գերի վերցնելով՝ տարան, գցեցին ամրոցները և ջարդը ձեռքներն առած՝ այն երկրի շինությունները հրի ճարակ դարձրին։

Նույնպես և Խաղտյաց լեռներում գտնվածները՝ երբ տեսան, որ Պարսից զորքը հանդգնաբար և աներկյուղ դիմում է Հայոց աշխարհի ամրոցների վրա, նրանք էլ մեծ զորությամբ հարձակվեցին Տայքի ձորագավառի վրա։ Այնտեղ նրանք գտան արքունի զորքերից մի մեծ գունդ, որոնք ուզում էին այն երկրում ամրացած մարդկանց գերի առնել. նմանապես և կարծում էին, թե նախարարների գանձերն այնտեղ են, ուստի և անխնա հետախուզում էին այն վայրերը։

Այնտեղ տեսան նաև, որ երկու գյուղերում այրել են եկեղեցիները. այս բանի պատճառով է՛լ ավելի բարկացան ու նախանձախնդրությամբ լցվեցին։ Հարձակվեցին, բախվեցին միմյանց և հզորապես հաղթելով՝ ջարդեցին Պարսից գնդի զորությունը. ընթանցից շատերին կոտորեցին, իսկ մնացածներին բշնցին փախցրին երկրից։

Եվ անշափ հանդուգն հարձակումից միմիայն Հայոց Վարդան սպարապետի եղբայր Երանելի Համայակը՝ անձնազոհ քաջությամբ կռվելով՝ նահատակությամբ վախճանվեց միաբանությանն սուրբ ուխտի համար։ Իսկ մնացած բոլորը ողջ և առողջ փրկվելով [կռվից]՝ հալածում էին փախստականներին։

Եվ երբ այս այսպես կատարվեց, թագավորի զորքը դադարեց անխոհեմ կերպով ամեն տեղ գործի մեջ խառնվելուց, և մանավանդ զգուշանում էին եկեղեցիներին ձեռք տալուց։ Նորից մի անգամ էլ սկսեցին հարցնել արքունիքին։

Երբ թագավորը լսեց աշխարհի ամրողջ ավերածությունը և առուգեց մեծ պատերազմի հանգամանքները, սիրտը կոտրվեց իջավ մեծ-մեծ խորհրդածությունից, և լսեց ու դադարեց մշտական խաբեբա մտադրություններից. հարցուփորձ էր անում և քննում այդ անխելք գործի վրիպման պատճառները և ուզում էր իմանալ, թե «Ո՞վ կարող է այդ գործերի մասին իրեն ստույգ տեղեկություններ տալ»։...

Այն ժամանակ [թագավորը] Հայոց աշխարհի մարզպանությունը հանձնեց իր ավագ նախարարներից մեկին՝ Ատրորմիզդ անունով, որի իշխանությունը սահմանակից էր Հայոց աշխարհին, և զորավարի գործակիցն էր նույն պատերազմում։...

Եվ մինչդեռ թագավորը այնտեղ ձմեռոցում էր, հրամայեց հարցուփորձի ատյան կազմել նրանց միջև։ Եվ հազարապետը

նստեց, որ երկու կողմերին էլ լսի։ Եվ երբ ամբաստանությունը երկար օրեր շարունակվեց, ուրացողների կողմը հանցավոր ճանաչվեց։

Որովհետև ցույց տվին այն թղթերը, որ Վասակը և բոլորը նրա հետ եղածները տվել էին, թե նրա հետ միաբան են ապստամբության ուխտի մեջ. մի թուղթ Վրաց աշխարհը և մի թուղթ Աղվանից աշխարհը. նույնպես և Աղձնիք գրած մի թուղթ և մի գրություն Հունաց թագավորին և մի թուղթ էլ Անտիոքի մեծ սպարապետին։ Այս բոլոր թղթերի վրա դրված էր Վասակի վավերական մատանին։...

Արդ՝ դուրս եկավ դահճապետը և շտապով մոտեցավ, բոլոր մեծամեծների առաջ հանեց նրանից՝ արքունիքից ստացած շքազգեստները և նրան մահապարտի զգեստ հագցրեց։ Ոտներն ու ձեռները կապեցին և կնոջ նման մատակ ձի նստեցրին տարան և հանձնեցին այն զնդանը, որտեղ բոլոր մահապատներն էին...։

* * *

Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ. շարունակ բորիկ ու ոտքով էին գնում աղոթատները, առանց ձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը։ Ովքեր իրենց մանկությունից հորթերի ուղեղներով և էրեների փափուկ մսով էին սնվել, մեծ ուրախությամբ խոտեղեն կերակուր էին ընդունում վայրենիների նման և ամենևին չէին հիշում իրենց սովորական փափուկ կյանքը։ Նրանց մարմինների մորթը սև գույն ստացավ, որովհետև ցերեկն արևակեզ էին լինում և ամբողջ գիշերներն էլ գետնի վրա էին քնում։

Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, գարուն հասավ և նոր ծիծեռներ եկան. կենցաղասեր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբեք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին։ Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու։ Որսի բարակները սպառվեցին և բոլորովին դադարեցին որսորդների արշավանքները։ Նրանք հիշվեցին միայն գրված հիշատակարաններով, և ոչ մի տարեկան տոն նրանց հետու օտարությունից տուն

չբերեց. նրանց ճաշատեղերին նայեցին ու արտասվեցին և բոլոր ատյաններում հիշեցին նրանց անունները։ Շատ արձաններ էին կանգնեցրած նրանց անվանը, և ամեն մեկի անունը նշանակված էր նրանց վրա։

1. Հայ Արշակունիների տոհմը պարթև Արշակունիների կրտսեր ճյուղերից է, այն հայկական գահի վրա է գտնվել մ. թ. 66—428 թվականներին։

2. Սասանյան հարստությունը Պարսկաստանում իշխել է 226—651 թվականներին։

3. Նկատի ունի Հայոց թագավոր Արշակ II-ին։

4. Հայոց Արշակունյաց վերջին գահակալ Արտաշեսը կամ Արտաշիրը, թագավորել է 422—428 թվականներին։

5. Այստեղ հիշված Շապուհը՝ պարսից Շապուհ III թագավորն է, որը գահակալել է 383—388 թվականներին։

6. Հազկերտ II-ը Պարսկաստանում գահակալել է 439—457 թվականներին։

7. «Հունաց երկիր» ասելով՝ նկատի են ունեցել Արևելյան Հռոմեական կամ Բյուզանդական կայսրությունը։

8. Թեոդոս II կայսրը Բյուզանդիայում գահակալել է 408—450 թվականներին։

9. Սասանյանների Տիզբոն մայրաքաղաքը գտնվում էր Բաղդադից 16 կմ հարավ՝ Տիգրիսի ձախ ափին։ Մնացել են նրա ավերակները։

10. Մոգ է կոչվում զրադաշտական կրոնի քուրմը։

11. Քուշանները հոնական ցեղախմբերից մեկն էին. սրանք ապրում էին Պարսկաստանի հյուսիսարևելյան մասում՝ Ներկայիս Խորասանում և Հաճախակի հարձակում գործում Պարսկաստանի վրա։

12. «Պահ դռան» ճիշտ տեղը հայտնի չէ, ենթադրվում է, որ այն գտնվել է Պարսկաստանի հյուսիսարևելյան կողմերում։

13. Լփնաց աշխարհ էր կոչվում Հյուսիսային Կովկասում ապրող լեռնականների երկրամասերից մեկը։

14. Ծավդեից աշխարհ— տվյալ դեպքում՝ Հյուսիսային Կովկասի երկրամասերից է։

15. Կորդվաց աշխարհ— գտնվել է Տիգրիսի ափին՝ Բոհտան-սուի և Խարբուրի միջև և տարածվել է մինչև Մոսուլի սահմանը։

16. Աղձնյաց աշխարհը Աղձնիքն է։

17. Ներսեհապետը պարսկական արքունիքից Հայաստան էր ուղարկվել նախարարների ներքին անկախությունը վերացնելու և գանձվող հարկերը ծանրացնելու նպատակով։

18. Միհրներսեհը պարսից Հազկերտ թագավորի պալատական բարձր պաշտոնյաներից էր։

19. Վկուրկ— պարսկական բառ է, նշանակում է «ավագ», «մեծ»։

20. Եռան և Անեռան— նշանակում է «Իրան և ոչ Իրան»՝ «իրանցիներ» և ոչ իրանցիներ»։

21. Հաբեանան կամ Խաբեանան— Ակրիմանն է՝ զրադաշտականների չարության աստվածը։

22. Արտաշատի ժողովը տեղի է ունեցել 449 թվականին։

23. Հովսեփ եպիսկոպոսը՝ Հովսեփ կաթողիկոս Վայոցձորցին է, որը կաթողիկոսական գահի վրա է գտնվել 437—452 թվականներին։

24. Արիներ և ոչ արիներ՝ գործ է ածվել «պարսիկներ» և «ոչ պարսիկներ» նշանակությամբ։

25. Անգղ գյուղաքաղաքը գտնվել է Այրարատի Մաղկոտն գավառում։

26. Ղևոնդ քահանան V դարի ազատագրական շարժման այքի ընկնող մասնակիցներից է, որը կազմակերպել է Անգղ ավանի բնակիչների ընդվզումը Պարսկաստանից եկած զրադաշտական մոդերի դեմ։

27. Եղիշեի այստեղ թվարկած ոչ բոլոր վայրերի տեղադրությունն է հայտնի։

28. Հոնաց աշխարհը գտնվել է Հյուսիսային Կովկասում, ներկայիս Դերբենդից հյուսիս տարածվող երկրամասում։

29. Բյուզանդական կայսր Թեոդոսի մոտ գնացած հայկական պատգամավորության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ղազար Փարպեցին։

30. Բյուզանդիայի Մարկիանոս կայսրը գահակալել է 450—457 թվականներին։

31. Սեբուխտը Աղվանքում գործող պարսկական զորքերի հրամանատարն էր։

32. Խազխազ քաղաքը, ըստ տեղեկությունների, Աղվանից թագավորների ձմեռանոցն էր։ Գտնվել է Ուտիք կոչվող նահանգում, ներկայիս Ջիգամ գետի ափին։

33. Լոփնաս— ենթադրվում է, որ նույն Ջիգամ գետն է։

34. Բազասական դաշտը գտնվել է Աղվանից երկրում, հոներին սահմանակից վայրում։

35. Կապկոհ լեռները Կովկասյան լեռներն են։

36. «Հոնաց պահակը» («Ճորա պահակ», «Աղվանից դուռ») ներկայիս Դերբենտի մոտ՝ Կովկասյան լեռների և Կասպից ծովի միջև եղած նեղ անցքն է, որը պարսպապատված է եղել հյուսիսային ժողովուրդների արշավանքներից պաշտպանվելու համար։

37. Արտագը գտնվել է Արարատ լեռան հարավարևելյան կողմում։ Արտագի սահմաններում է Ավարայրի դաշտը, ուր և տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ի ճակատամարտը։

38. Հերը և Ջարևանդը Պարսկահայքի գավառներից են։

39. Տմոնաց Արաքսի վտակներից է, հոսում է պատմական Արտագ գավառի միջով։

40. Մատյան գունդը եղել է պարսկական բանակի ամենամարտունակ զորաբաժինը, որի մեջ օգտագործել են նաև փղեր։

41. Մուշկան Նիսալավուրան եղել է պարսկական զորահրամանատարն Ավարայրում տեղի ունեցած ճակատամարտում։

42. Եղիշեն «Միջնաշխարհ» ասելով՝ նկատի ունի Այրարատյան նահանգը։

43. Տմորիք— գտնվում է Կորդվաց երկրի և Կորդրիքի կողքին։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ V ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գրվագ Գ

Վահան Մամիկոնյանը և Պերոզի բաղաքականությունը Հայաստանում*

ՅԹ. Հազկերտ Թագավորի տասնյոթերորդ տարում Վրաց Աշուշա իշխանը[1] թախանձագին խնդրեց արքունիքի մեծամեծներին, անթիվ ընծաներ տվեց նրանցից յուրաքանչյուրին, մանավանդ՝ Միհրներսեհ անօրեն հազարապետին, և մեծ ջանքով ու աշխատությամբ համոզեց նրան, որպեսզի նա միջնորդի Հազկերտ Թագավորի առջև՝ Մամիկոնյան երանելի նահատակ Համայկի որդիներին իրեն հանձնելու համար... (Նրանք պատանդ էին պահվում— Ա. Ա.)։ Մարդասեր Աստվածը, նրանց ծնողների սուրբ արյան բարեխոսությամբ, Թագավորի միտքը ողորմագութ դարձրեց. նա ընդառաջեց Աշուշային, իբրև չափազանց սիրելի ու գործունյա մարդու, և (կատարեց) Աշուշայի բոլորին անհավատալի թվացող մեծ խնդրանքը։

Կ. Պարսից Հազկերտ Թագավորը հասնելով հասուն տարիքի, վախճանվեց Փարսում։ Նրա երկու որդիները ընդհարվեցին իրար հետ, հարձակվեցին իրար վրա և կռվեցին իրար հետ. կրտսերը սպանեց մեծին ու ինքը Թագավորեց։ Նրա անունը Պերոզ էր[2]։

Պերոզն իր գահակալության առաջին տարում հրամայեց դայակորդի Հզատվշնասպին, որին անչափ սիրում էր՝ կապանքներից արձակել Հայոց նախարարներին և նրանց ոռճիկ սահմանել Հրեշտում. «Թող մնան այնտեղ,— ասաց նա,— իրենց այրուձիով և զրատարեն, ինչ որ նրանց կհանձնարարի Հզատվշնասպի հայր Աշտատը»։ Հզատվշնասպը եկավ նախարարների մոտ և ավետեց նրանց ասելով. «Արքայից արքան ձեր մահապարտությունը ներեց, հրամայեց կապանքներից արձակել և ձեզ ոռճիկ սահմանեց Հրե-

---

* Այս և մյուս ենթավերնագրերը դրված են մեր կողմից (Ա. Ա.)։

վում, իսկ ձեր կանանց՝ իրենց աշխարհում։ Հրամայեց, որ դուք գտնվեք արքունիքի ծառայության մեջ և լսեք ու կատարեք այն, ինչ կհանձնարարի իմ հայր Աշտատը»։

ԿԲ. Նահատակվածների ու արքունիքի պալատում բանտարկվածների կանայք թեպետ նեղության մեջ էին, սակայն ծուլ և անպիտան կանանց նման չէին, այլ քաջ արիությամբ սուրբ Վարդանի հետ նահատակվածների՝ Մամիկոնյանների, Կամսարականների և մյուս տոհմերի փոքրահասակ երեխաներին, մեծ հոգացողությամբ կրթելով և կրթել տալով, օգտակար գործ էին կատարում, մանավանդ՝ սուրբ Վարդանի Համայակ եղբոր կինը, որը երևելի հանդիսացավ Հայաստանում եղած բոլոր կանանցից և բարձր՝ մտավոր զարգացմամբ։ Նա մեծացրեց և դաստիարակեց իր որդիներին Վրաց աշխարհում՝ Աշուշա բդեշխի տանը։ Նրանց առաջնել էր Աշուշա բդեշխը Պարսից Հաղկերտ թագավորից, ինչպես հիշեցինք առջևում, և բերել տվել իրենց մոր մոտ, որի անունը Զվիկ էր. Զվիկի Անուշվոամ անունով քույրը Վրաց Աշուշա բդեշխի կինն էր[3]։ Մանուկներն այստեղ մեծացան, կրթվեցին և ամեն բանի մեջ առաջադեմ ու անվանի եղան։ Դեռևս մանկության հասակում, նրանք բոլոր դիտորդներին, գործունյա և զարմանալի էին երևում։ Նրանցից առաջինի անունը Վահան էր, երկրորդինը՝ Վասակ, իսկ երրորդինը՝ Արտաշես։ Բայց նրանք Վարդ անունով մի փոքր եղբայր էլ ունեին, որը Տայոց աշխարհում դայակների մոտ էր գտնվում։

ԿԳ. Այսպիսի բարեմասնություններով օժտված և բարի կամեցողությամբ ավելի փութաջան էր առանձնապես Համայակի Վահան անունով ավագ որդին։ Նա խելացի, ողջամիտ ու բարեսեր մեկն էր և ինչ գործ որ սկսում էր, Աստված հաջողություն էր տալիս՝ կատարելու համար և զորացնում նրան։ Պարսիկ վերակացուները, որոնք գալիս էին թագավորի պալատից, թեպետ ակամա, բայց Աստծու ազդեցությամբ, սիրում էին նրան և պատվում։ Նրանք Պարսից թագավորի առաջ գովում էին Վահանի քաջությունը ու մշտապես հիշում։ Նույնիսկ Պերոզ թագավորը կատարելապես ճանաչեց նրան և քաջերի կարգում էր դասում, ամենքի մոտ գովում էր ու պատվի արժանի համարում։ Նրա խելացիության ու քաջության համար թեպետև մտադրվում էր արժանավոր կերպով մեծարել նրան, բայց հիշելով նրա հայրերի և

պապերի գործերը՝ թե ինչպես միշտ ընդդիմությամբ ու պատերազմով անհանգստացրել էին իրենց, հետաձգում էր։ Նա հրաժարվում էր արժանավոր պատիվ տալ նրան, մանավանդ, երբ հաճախ լսում էր նախանձողների բանսարկությունը, որոնք երկյուղի պատճառով (Վահանին) այդ ժամանակ Հայոց նախարար էին անվանում. նրանց սաստիկ վախեցնում էր Վահան Մամիկոնյանի առաջադիմությունը և հաջողությունը։

ԿԴ. Բայց դավաճանները, երբ տեսնում էին Վահան Մամիկոնյանին այսպիսի երևելի պատիվների մեջ, գունատվում էին, թուլանալով թորշոմում և հնարքներ էին փնտրում, որով կարողանան նրան ու նրա եղբայրներին խորտակել։ Տեղեկացնում էին արքունիքի մեծամեծներին, այլև՝ թագավորին, որ Վահանն առանց ապստամբության չի կարող մնալ Հայաստանում։ Նրանք մեկիկ-մեկիկ հիշեցնում էին Արյաց արքունիքի նկատմամբ Վահանի պապերի արած գործերը, թե՝ չի եղել նրանցից մեկը, որ ապստամբություն բարձրացրած չլինի Արյաց աշխարհի դեմ և մեծամեծ վնասներ պատճառած ու արյունահեղություն արած չլինի, ուրեմն, երբևիցե, ասում էին նրանք, սա նույնպես խռովություններ է հարուցելու ձեր դեմ։ Նրանք (այսինքն՝ արքունի մարդիկ— Ա. Ա.) քսության այս բոլոր խոսքերը հաճախ լսելով բանասարկու ուրացողներից, կասկածում էին Վահանի համբավի վրա, իսկ մյուս կողմից, տեսնելով նրա հաջողությունը և խելացիությունը, տրտմում էին նրան սիրելու պատճառով։

Վահանը նկատի ունենալով նախանձողների իր վրա այսքան գրգռված լինելը, որոնք բնավ չէին դադարում նախանձությամբ լցված խոսքեր ասելուց, չկարողացավ տանել ամենօրյա թշնամությունը, գնաց թագավորական պալատ և տկարացավ հավատքի մեջ։ Սակայն Հայաստան վերադառնալուց հետո ևս նա չկարողացավ չարախոսների բերանները փակել։ Ըստ որում, նա՛, ով հրապարակում ուղիղ խոսել անգամ չգիտեր իշխանավորի առաջ, նրան (Վահանին) էր առում. նա՛, ով որսին կամ դրած նշանին նետով խփել չէր կարողանում, նրան էր մեղադրում. «Նա նստում է,— ասում էին,— և ամենքի վրա քթի տակ ծիծաղում»։ Նա՛, ով իր հմտությամբ թագավորական ծառայություններ չէր կարողանում կատարել, անհաջողության պատճառը նրա վրա էր

ձգում։ Ասում էին. «Նա ամեն գործում առաջ է ընկնում և ոչ մեկին թույլ չի տալիս գործել և օգտվել»։

Նա (այսինքն՝ Վահանը— Ա. Ա.) Վրիվ անունով, ոչ հայտնի ցեղից, անփորձ մի գործակից ուներ՝ ասորի մի մարդու որդի, որն իր շատախոսությամբ ու դատարկաբանությամբ գերազանցում էր ասորի ազգին։ Սա չկարողանալով պետության համար շնորհալի մի գործ անել, գնաց ամբաստանեց Վահանին Պերոզ թագավորի առաջ, թե՝ «Չթողեց ինձ ոսկի կարելու գործին մոտենալ, ինքը երկրի ողջ ոսկին հավաքել է, մտածում է գնալ կայսեր մոտ կամ Հոնաց աշխարհը և կամ ոսկի տալով՝ ցանկանում է զորք խընդրել և ապստամբվել»։

Ապստամբության մասին ասված այս բոլոր խոսքերը՝ կապված իր հետ, երբ իմացավ շրջահայաց Վահանը, փութանակի վերցրեց իր մոտ եղած ոսկիները և հասավ թագավորական պալատը։ Պերոզ թագավորը լսելով Վահանի շտապ գալը, զարմանքով ասաց, թե «Վահանի այսպես շուտ գալը՝ Վրիվի ասածի հակառակն է ապացուցում, մանավանդ եթե մի բան էլ իր հետ բերած լինի»։

Վահանը ներկայացավ թագավորին։ Պերոզը նրանից իմացավ, որ, արդարև, նա որոշ բան բերել է իր հետ։ Նա լսելով Վահանի բերած ոսկու մեծ քանակության մասին՝ սաստիկ ուրախացավ։ Ապա Վահանի ներկայությամբ Վրիվին ասել տվեց այն խոսքերը, ինչ առաջուց նա ասել էր։ Վահանը լսելով Վրիվի բոլոր ասածները, պատասխանեց թագավորին և ասաց. «Հասկանում եմ իմ մասին Վրիվի թույլ աված հիմարությունները, բայց ես այնքան կույր չեմ, որ Արյաց ուժը տեսնել և հասկանալ չկարողանամ... Եթե ես ինչ-որ մի բանի համար նեղացած լինեի ձեկանից և կամենայի օտար մի երկիր գնալ ու կորչել, այսքան ոսկի այստեղ ինչո՞ւ կբերեի, չէ՞ որ այն մինչև իմ մահը, եթե անգամ երկար ապրեի, ո՞չ միայն ինձ, այլև ինձ հետ տասը հոգու ապրուստի համար շատ էր»։

Պերոզ թագավորն ու մյուս մեծամեծները լսելով Վահանի այսպիսի խելացի խոսքերը, բոլորն էլ իրավացի գտան Վահանի ասածը, քան թե Վրիվինը։ Վահանն ատյանից դուրս եկավ արդարացած, իսկ ասորու որդի Վրիվը՝ ամոթահար ու արհամարհված։ Վահանը պալատից հեռացավ պատվով, մեծարանքով ու շքեղությամբ և վերադարձավ Հայոց աշխարհը։

ԿԶ. Այն ժամանակ, երբ Վահանը հոգեկան ծանր ալեկոծության մեջ էր հավատափոխության պատճառով, հանկարծակի մեծ ապստամբություն տեղի ունեցավ Վրաց աշխարհում։ Պերոզի գահակալության քսանհինգերորդ տարում Վախթանգն[4] սպանեց անօրեն Վազգեն բդեշխին։ Հայոց աշխարհի կռվող մարդկանցից շատերը, որոնք նույն տարում Ադվանքում էին գտնվում և մասնակցում ապստամբ լեռնականների կռվին, լսեցին այդ մասին։ Նրանց բոլորի զորագլուխը Ջարմիհր Հազարավուխտն էր[5], իսկ Հայոց աշխարհի մարզպանը՝ Հոզմանդյան Ատրվշնասպը[6]։ Հայոց քրիստոնյա մարդիկ, որ նույն տարում այնտեղ կռվի մեջ էին, ավելի էին վրդովված, որովհետև ավելի էին նեղվում Հայոց ստոր իշխանների ծայրահեղ արհամարհանքներից ու նախանձից, քան թե պարսիկ զորագլուխների խիստ բռնություններից, որոնք ուրացությամբ գոռոզացած՝ փքվում էին։ Եվ երբ նրանք լսեցին Վրաց թագավորի ապստամբությունը, ամբողջ սրտով ուրախացան։ Նրանք լուր ստացան, որ Վրաց թագավորն ասել է, թե «Ես ոչ մեկին չեմ թողնի որ կռիվ անի, այլ այնքան հոնաց զորք կհանեմ, որոնց չեն կարող պարսից զորքերը դիմադրել»։ Քրիստոսասերները քաջալերված այսպիսի համբավից, քանի որ իրենց օգտին Բարձրյալից բարի այցելություն գտնելուն էին սպասում, բայց վախենում էին, թե չլինի հանկարծ Պարսից զորահրամանատարները Հայոց զորքը տեղափոխեն Պարսից թագավորի բանակը։

Բայց Քրիստոսն ազատեց նրանց այնպիսի կասկածանքներից։ Նրանք եկան Հայաստանի Շիրակ գավառի այն դաշտը, ուր բնակվում էր Հայոց մարզպան Հոզմանդյան Ատրվշնասպը։ Նրա մոտ էր Հայոց հազարապետ Վհևվհևնամը։ Այստեղ մի քանի հայ նախարարներ խորհուրդ անելով, որոնք Վահան Մամիկոնյանի տրտմելն ու տարակուսելը վաղուց գիտեին՝ մոգության կրոնին հարելու համար, և ասում էին, թե «Փրկության այս ժամը շատ հարմար է ինչպես մեզ, այնպես և Վահանի համար. նա կազատվի իր խղճահարությունից, իսկ մենք՝ ամենօրյա կասկածներից ու մշտական տանջանքից, որին ենթակա ենք հեղձամաղձուկ սրտեղեցիկ նեղությունից ստիպված։ Վրաց այդ Վախտանգը քաջ է, ո՛վ գիտե, գուցե բազմողորմ Աստվածը նայի մեր նեղությանը և օգնի

մեզ. Թերևս վրաց հետ միասին կարող լինենք փոքր-ինչ հոգս պատճառել պարսիկներին»: Այսպես մտածեցին նախարարներից ոմանք, և այդ խորհուրդը ընդունելի եղավ մյուսներին: Աստծու օգնությամբ, բոլոր նրանք, ովքեր լսեցին, համաձայնվեցին կամովին և հոժարությամբ:

Այնուհետև իրենց մտադրությունը մի գիշեր վստահեցին հայտնել Վահան Մամիկոնյանին: Նա, երբ լսեց, ասաց ամենքին. «Ձեզանից ոմանք, Թագավո՛ր, ոչ բոլորը, որոնք այս մտադրությանն են, գիտե՞ն, թե ես որքան եմ չարչարվում ու տանջվում ժամ առ ժամ այս սուտ անվանս համար, որ ստելությամբ եմ կրում ինձ վրա... Բայց միաբանել այդ խորհրդին, որ դուք մտադիր եք, և ասել ձեզ՝ թե ճիշտ է ձեր խորհուրդը, կատարեցե՛ք, չեմ կարող և չեմ վստահում: Վասնզի քաջ գիտեմ ինչպես Արյաց ուժն ու հանդգնությունը, այնպես և Հոռոմոց թուլությունն ու խաբեությունը: Ես փորձով ծանոթ եմ, գիտեմ, թե ինչպե՞ս (հոռոմները) մեր հայրերի հետ երդման ուխտ դրին ու ստեցին: Վրաց ու Հոնաց թագավորների մասին, որ ասում եք, (այսպես է). Վրաստանը փոքր աշխարհ է և քիչ այրուձի ունի, իսկ հոները, ո՞վ գիտե, կհամաձայնվե՞ն գալ, թե ոչ. նրանք դեռ մեջտեղում չկան և չեն երևում, իսկ եթե ինձ եք հարցնում և իմ խոսքը կհավանեք ու կկատարեք, թողե՛ք ձեր այդ մտադրությունը...»:

Հայոց նախարարները Վահան Մամիկոնյանից լսելով այս բոլոր խոսքերը, միաբանությամբ պատասխանեցին և ասացին. «Այդ բոլոր ասածներդ ճիշտ են և պատշաճում են քո իմաստությանը, բայց մեր հույսը ո՛չ հոռոմների վրա է դրված և ո՛չ էլ հոների, այլ նախ՝ Աստծու ողորմության, սուրբ Գրիգորի բարեխոսության ու նախնյաց նահատակների վրա, որոնք իրենց նահատակությամբ ցանկալի եղան փրկիչ Քրիստոսին, և ապա՝ մեր անձի մահվան պատրաստ լինելու վրա, վասնզի գերադասում ենք մահանալ, քան թե տեսնել ամեն օր եկեղեցու և քրիստոնյաների անարգանքները և (երկրի) ավերումը»:

Վահան Մամիկոնյանը և նրա քաջ եղբայր Վասակը լսելով մահվան անունը, սիրտ առան, զորացան և, սուրբ հոգու շնորհքով լցված, համաձայնեցին: Վահան Մամիկոնյանը սկսեց խոսել և ասաց. «Դուք գիտեք, որ իմ վարդ եղբայրը արքունիքում է, և գիտեմ, երբ պարսիկները լսեն մեր մտադրությունը, կկապեն նրան և կշարշարեն, բայց մահվանը հոժար եմ, քան թե այսպիսի ուրացության մեջ մնալը: Ես համաձայն եմ ձեզ հետ, արե՛ք ինչ կարող եք»:

Այս ասելուց հետո քրիստոնյաները և ուրացողները միասին վեր կացան և աղոթելով պահանջեցին սուրբ Ավետարանը: Բանակի մեջ գտնվող Բջնի աշքի ընկնող գյուղի Աթիկ քահանան, որ խելացի ու գաղտնապահ մարդ էր, բերեց սուրբ Ավետարանը. ամենքը ոտքի հանվեցին և յուրաքանչյուրը ձեռքը դրեց վրան և երդվեց...:

Կէ. Հայոց նախարարներից Վարազշապուհ անունով մեկը, որ Ամատունյաց տոհմից էր, բաժանվելով նրանցից, ինչպես Հուդան բաժանվեց սուրբ առաքյալների խմբից, նույն գիշերը գնաց և պատմեց մարզպանին ու մյուսներին Ավետարանի վրա կատարած երդման և Հայոց նախարարների խոսակցության մասին: Երբ այդ լսեցին Ատրվշնասպ մարզպանը և մյուս պարսիկներն ու հայ ուրացողների խումբը, սարսափահար եղան և զարհուրեցին: Նրանք գիշերվա մնացած մասը երկյուղից անցկացրին անքուն և, երբ լուսացավ, հեռացան այնտեղից, գնացին և սրտնեղած բանակ դրին Անի բերդի պարսպի մոտ: Խաբեության մեջ ընկածները և մարզպանը այդ օրը մնացին այնտեղ՝ հայտնելով ամենքին հաստատապես, որ իրենք իբրև թե հաջորդ օրն էլ այդտեղ են մնալու: Այնինչ մարզպանը, հազարապետը և նրանց հետ եղողները, մինչդուն գիշերը նստելով իրենց ձիերը, փախան: Հայոց նախարարները, երբ այդ իմացան, հետապնդեցին փախչողներին: Բայց որովհետև մարզպանը ու հազարապետը փախան տեղանքին ծանոթ առաջնորդներով, ուստի գնացին ոչ թե ուղիղ, այլ պարտուղի ճանապարհներով, մինչև որ հասան Արտաշատի բերդը: Հայոց նախարարները չկարողացան հասնել նրանց, միայն վերցրին ճանապարհին պարսիկների թողած բոլոր գրաստները, ինչպես բռնեցին Գադիշո Մադխագին և բերեցին իրենց հետ: Երբ նրանք Դվին հասան, գնացին պաշարեցին Արտաշատի բերդը: Մարզպանն ու հազարապետը նույն գիշերը ծածուկ դուրս եկան բերդից և փախան գնացին Ատրպատականի կողմերը:

Ակոռիի ճակատամարտը

Կէ. Ուրացող հայ ամբարիշտ նախարարներից ոմանք խորհուրդ տալով Հայոց մարզպան Ատրվշնասպին, ասում էին. «Վրաց

Թագավորն ապստամբել է և հոներին ցանկանում է ոտքի հանել, բայց դեռ չի հանել։ Դարձյալ՝ հայերը կայսրից զորք են խնդրել և դեռ չեն ստացել, իրենք էլ դեռ լավ պատրաստված չեն, ինչպես պետք է։ Եվ եթե դու այժմ անհապաղ հարձակվես նրանց վրա, հեշտ ու թեթև ճանապարհով շատ մեծ գործ կատարած կլինես և լավ անուն կվաստակես, և մենք ու դուք արքայից պատիվներ և շատ պարգևներ կստանանք։ Բայց եթե ծուլանաս և ուշացնես, վախենում ենք որ նրանք անձամբ զորանան և կամ ուրիշ տեղից օգնություն առանան, այդ դեպքում չգիտենք ինչով կվերջանա, և մենք կզղջանք։

Այս խոսքը հաճելի թվաց մարզպանին և նրա հետ գտնված բոլոր մարդկանց։ Նրանք Ատրպատականից, Կոպրյաց մարզպանից շտապ զորք վերցրին և այնտեղ գտնված Կատշաց[8] գնդի հետ միասին, եկան հասան Հայոց աշխարհը, երասխի գետեղրը և կամեցան անցնել Նախճավան անվանված գյուղը, որը գտնվում է Սյունիքին սահմանակից վայրում։

ԿՀ. (Պարսիկների գալը) տեղեկացրին Բագրատունի Սահակ իշխանին, որին հայերը և Հայոց զորավար Վահանն այդ ժամանակ Հայոց մարզպան էին նշանակել։ Սահակ ասպետին տրված մարզպանությունը, իսկ Վահանին՝ Մամիկոնյանների գահերեց իշխանությունը և Հայոց սպարապետությունը, հաստատապես Վերինի (այսինքն՝ Աատծու— Ա. Ա.) հրամանով էր, և հայերի կողմից հաճույքով ընդունելի եղավ։ Նրանք երբ լսեցին Պարսից զորքի գալը և տեսան, որ դեռևս իրենց զորքը կատարելապես պատրաստ չէ, մտածեցին որոշ ժամանակ տեղափոխվել Տայոց գավառի ամուր վայրերը[9]։

Աստվածային ներշնչումով մտածեցին նաև, որ Սահակ մարզպանը, Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը և մյուս նախարարներից մի քանիսը մնան մայրաքաղաքում՝ գնացողներին քաջալերելու և հուսադրելու, անօրեններին սարսափահար անելու և նրանց սրտերը կոտրելու համար։

Նրանք, որոնք պատրաստվեցին կռվի գնալու, հետևյալներն էին՝ Բաբգեն Սյունին, որին այդ նույն ժամանակ Սյունյաց տերության իշխան անվանեցին, Վահան սպարապետի եղբայր ամենաքաջ սեպուհ Վասակ Մամիկոնյանը, Գարջույլ Մաղխազը, Երանելի Արշավիր Կամսարականի երկու որդիները՝ Շիրակի իշ-

խան Ներսեհը և նրա եղբայր Հրահատը, երկու հոգի Գնունյաց տոհմից՝ Գնունյաց Ատոմ իշխանը և նրա եղբայր Առաստոմը։ Նրանց հետ գտնվում էր չորս հարյուր հոգի։

(Կռիվ գնացողները) հրաժեշտ տալով մարզպան Սահակ ասպետին, Հայոց զորավար Վահան Մամիկոնյանին և նրանց մյուս ընկերակիցներին, որոնք մնալու էին մայրաքաղաքում, գնացին պատերազմի խնդալից հոժարությամբ։ Նրանք մտադիր էին և ասում էին, թե՝ «Գուցե կարողանանք հասնել (Արտքսի) գետանցին այն ժամանակ, երբ Պարսից զորքերը անցնելիս լինեն. մենք կսպասենք գաղտնի մի տեղում և երբ տեսնենք, որ զորքի կեսը գետից անցել է, կջարդենք նրանց, իսկ մնացածներին դյուրությամբ կարող ենք ձեռք ձգել»։

Գալով Վարազկերտ գյուղը, նրանք լսեցին, որ պարսկական ողջ զորքը, թվով յոթ հազար հոգի, արդեն անցել է գետը։ Մամիկոնյան քաջ Վասակ սեպուհը, որ այդ օրն առաջապահ էր, գնաց դեպի Կռվակ կոչված գյուղը[10]. «Գուցե մի հնար լինի,— ասում էր,— պարզել Պարսից զորքի որպիսությունը և իմանալ, թե նրանք մի բան իրենցից ներկայացնո՞ւմ են, թե ոչ»։ Գնաց հասավ Կռվակ գյուղը՝ գիշերելու։ Առավոտյան լուսաբացին Մամիկոնյան Վասակը, հասնելով այդ գյուղը, հանկարծ իմացավ, որ պարսիկ Ատրվշնասպ մարզպանը այդ գյուղում է։ Մամիկոնյան քաջ Վասակ սեպուհն, իմանալով Ատրվշնասպի և նրա հետ եղողների այնտեղ գտնվելը, անմիջապես քաջությամբ մտածեց փրկության հնար գտնել՝ իր գունդը ազատելու համար։ Հրամայեց երկու-երկու, երեք-երեք և կամ ավելի շատ թվով, գյուղի զանազան ծածուկ տեղերից և փողոցներից դուրս գան և իրարից անկախ շտապեն հասնել Վարազկերտ գյուղը, ուր գտնվում էին Հայոց նախարարներն ու այրուձին, և տեղեկություն տալ նրանց։ Իսկ ինքը՝ քաջ սեպուհ Վասակ Մամիկոնյանը, պատրողական խոսքերով փորձեց հիմարացնել Ատրվշնասպին։ Պատգամավորների միջոցով հայտնեց նրան, թե՝ «Ես հայոց մասին այնպիսի լուր ունեմ հայտնելու քեզ, որ դու և քեզ հետ եղողները լսելով՝ հաստատապես Արյաց թագավորին և Հայոց աշխարհին հաճելի և օգտավետ կհամարեք»։

Ատրվշնասպը լսելով այդ, թեպետ մտքում ծածուկ ուրախացավ, կարծելով, թե հայերը, իրոք, ցանկանում են հնազանդվել,

բայց նրա մոտ ուղարկած մարդու միջոցով խիստ կերպով ասաց. «Մի երկիր որ ապստամբ է, ինձ ի՞նչ պատգամ է ուղարկում»։

Մամիկոնյան քաջ սեպուհ Վասակը երբ իմացավ, որ իր այրուձին անվնաս արդեն ազատվել է և ոչ մի կասկած չկա, այնուհետև, Ատրշվնասպի իր մոտ ուղարկված մարդկանց ասաց. «Մենք մինչև այժմ ոչ մի վատ բան չենք արել և թագավորական գործերին վնաս չենք տվել, ուստի հրաման տուր, որ ես գամ և բերածս լուրը հայտնեմ, լսեք դուք այն, նայեք կարևորությանը, ապա մտածեք թե ի՞նչ է հարկավոր անել»։

Պատգամավորին ճանապարհ դնելով, նա հեծավ ձին և ասաց այնտեղ գտնվող պարսիկներին. «Ես ծաղրելով ձեզ այն խոսքերն ասացի ինձ մոտ եկածներին. ոչ մեկն ինձ ձեզ մոտ պատգամավոր չի ուղարկել, ես եկա ձեզ տեսնելու՝ թե ինչպիսի՞ն եք դուք և իմացա, որ դուք վատ ու անպիտան մարդիկ եք, եկել եք վատություն անելու, ուստի փորձանքի կհանդիպեք»։ Քաջ մարդն այդպես ասելով, հանգիստ ու աներկյուղ հեռացավ։

Նա եկավ հայոց գունդը և հայտնեց. «Թեև շատ զորք կա, բայց նրանցից շատերն անպիտան մարդիկ են՝ քրջեր հավաքողներ են ու էշ քշողներ»։

Հայոց զորքի բոլոր մարդիկ լսեցին Մամիկոնյան քաջ սեպուհի այս խոսքերը, խորհուրդ արին և որոշեցին, թե պետք է դաշտից լեռան կողմը փոխադրվել։ Բոլորը միասին մտածեցին այսպես. «Կռվի բռնվելով, Աստծու օգնությամբ, եթե հարվածենք և այն հաջող ու օգտակար ստացվի, լավ, բայց եթե հակառակը լինի, մեր պաշտպանության համար լեռնակողմի ամրությունն ավելի է օգտակար»։ Ուստի նրանք եկան ու բանակ դրին Մասիսի **Ակոռի գյուղում**[11]։

Կթ. լսեցին, որ պարսից գունդը հաջորդ օրն է գալու իրենց հետ կռվելու։ Ըստ ավանդական սովորության, շտապեցին գիշերային պաշտամունք կատարել, իսկ առավոտյան, աղոթքը վերջացնելուց հետո, զորքը պատրաստվեց թշնամու հետ կռվելու։ Նրանք՝ չորս հարյուր հոգին, անմիջապես բաժանվեցին չորս մասի. միջին գնդի հրամանատարներ նշանակեցին Սյունյաց Բաբգեն իշխանին և Մամիկոնյան քաջ Վասակին, ձախ կողմում՝ Գարջույլ Մաղխազին, աջ կողմում՝ Ատոմին և նրա եղբայր Առաստոմ Կընունի իշխաններին։ Իսկ երկու մասերի միջև դասավորեցին Շի-

րակի քաջ ու ընտիր իշխան Ներսեհ Կամս[illegible]վին խոսելով Հրահատին՝ հանձնարարելով նրանց, որ [illegible] Սրանա, շուտով հասնեն օգնելու, և բոլոր կողմ
Ըստ որում, բոլորն էլ վստահ էին իրենց մարդկ
ուխտապահ քաջերի ու հավատարիմների։

Չորս հարյուր մարդկանց զորագունդը դասակ
պես... դուրս եկան Ճակատամարտի բարձրավանդակի
մի վրա։ Պարսից զորքերը տեսնելով հայերի այսպիսի [illegible]
թյունը, ուրիշ բան չմտածեցին, այլ ասացին. «Խելացնո[illegible]վել և մահ որոնելու են եկել»։

Պարսից ընտիր զորքերը հայոց վրա հարձակում գործեցին շատ հեռվից։ Նրանցից վատ ձի ունեցողներից շատերը ետ էին մնացել, իսկ լավ ձի ունեցողներն առաջ գալով, հասել էին պատերազմի վայրը։ Այդ նույն ժամանակ Գարջույլ Մաղխազը իր հետ ունեցած հարյուր հոգով, խախտելով Ավետարանի ուխտը, անցավ պարսից կողմը. Հայոց զորքը մնաց երեք հարյուր հոգով...։

Հայոց զինվորները հարձակվեցին պարսիկների վրա, Բարձրյալի օգնությամբ, առաջ անցան և պատերազմող ընտիր (պարսիկ) զինվորների դիակները այդ նույն տեղում գետին փռեցին, իսկ Պարսից զորքի մյուս բազմությունը, ցրիվ տալով ձորերում և ժայռոտ տեղերում, ոչնչացրին։ Մամիկոնյան քաջ Վասակի և Բաբգեն Սյունու ձեռքով սպանվեցին Ատրշնասպ մարզպանը և այլ ղեկավար անձինք ու հայ ուրացող նախարարները։ Շատ պարսիկներ կոտորվեցին նաև Ատոմի և Առաստոմի մարդկանց կողմից...[12]։

Արդարության թշնամի սատանան գործակից գտավ Գնթունյաց և Սահառունյաց տոհմից Վաղգոշին և Վասակին, որոնք առավոտյան լուսաբացին շտապ եկան Դվին և գուժեցին Հովհան սուրբ հայրապետին (Հովհան Մանդակունի— Ա. Ա.) և Հայոց երկու ավագ իշխաններին՝ Սահակ մարզպանին ու Վահան Մամիկոնյանին հետևյալը. «Կողմերը սաստկապես խառնվեցին իրար և կռվեցին. մերոնք բնավ պատրաստված չէին մարտի, պարսից կողմը զորացավ, հայոց գունդը պարտվեց և փախավ, քաջերը սպանվեցին թշնամիների սրով. սպանվեցին Մամիկոնյան քաջ Վասակը, Սյունի Բաբգենը, Շիրակի իշխան Ներսեհը և նրա սի-

րելի եղբայր Հրահատը, Գնունի Ատոմը և Առաստոմը. Հայոց ամբողջ զորքի դիակները փռված են Ակոռի գյուղի լանջակողմերում՝ գետնի վրա, միայն մենք մնացինք և, որպես Հոբի գուժաբերներ, ահա եկանք հայտնելու»:

Այս համբավը դեռ չէր տարածվել Դվինում, որպեսզի չարքաշն ավելի ուրախանար քաղաքն աղմկելով, երբ շուտով եկավ հասավ Գնունյաց տոհմից ավետավոր լրաբեր, որի անունն էր Առաստոմ. նա բարձր ձայնով բղավեց, ասելով. «Հաղթե՛ց սուրբ խաչի զորությունը և միշտ հաղթում է»:

Հ. (Հայերը) Վրաց Վախթանգ թագավորի մոտ շտապ պատգամավոր ուղարկեցին, որպեսզի իր խոստման համաձայն, հոնական զորքեր տա: Նա ժամավաճառ խոսքերով ձգձգում էր խոստումը կատարելը, հետո մի տեղից միայն երեք հարյուր հոնհավաքեց և ուղարկեց Հայաստան, սակայն ձմեռվանից մի ամիս չանցած, ստիպողական, կարիքի պատճառաբանությամբ, հոներին ետ կանչեց:

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը մարդ ուղարկեց երևվելի և հայտնի Արծրունյաց, Անձևացյաց և Մոկաց տոհմերի և Իշտունյաց աղնվականների մոտ, ասելով. «...Ջեզանից նա, ով հոգ է տանում իր անձի փրկության համար և ցանկանում է անմահ կյանքի ժառանգորդ լինել, թող գա իր սուրբ եկեղեցու անպատվության վրեժը լուծելու, որը խիստ անարգվեց արհամարհող ուրացողներից: Իսկ նրանք, որոնք մտածում են մարմնի երկյուղածության համար և ցանկանում են ծառայել ցնորամիտ մոլորության, թող շարունակեն մնալ խավարում...»:

Անձևացյաց Հոհան անունով մի սեպուհ և երվանդունի մեկը՝ Ներսեհ անունով, միաբանելով բարի ցանկության գործին, եկան միացան նրանց: Եկան նաև ճշմարտության նվիրված այլ մարդիկ ևս, որոնք գնացին խառնվեցին Հայոց զորավար Վահան Մամիկոնյանի զորքին:

Ներսեհապատի ճակատամարտը

ՀԱ. Անցան ձմռան խիստ ցուրտ օրերը, և վրա հասավ գարնանային բարեխառն եղանակը: Լսեցին, որ պարսկական մեծ զորաբանակը եկել հասել է Հեր և Ջարևանդ գավառի սահմաններին՝ բազում զորահրամանատարներով. նրանք են հետևյալները՝ Սուրեն Պահլավը, Ատրներսեհը՝ փուշտիպան սպարը[13], Վին Խոռյանը[14], Ատրվշնասպ Տապյանը և Սյունյաց տեր Գիհհոնը: Սրանք բոլորը թեև բարձր դինվորականներ էին, բայց նրանց հրամանատարը և ավագ զորավարը փուշտիպան սպարն էր:

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը շտապ իր հետ վերցրեց Հայոց տեր Հովհան սուրբ հայրապետին... նախարարներին, ազատներին, բոլոր ռամիկներին, որոնք կամավոր ուրախությամբ ցանկանում էին գնալ պատերազմելու: Հայոց զորքերը ի մի հավաքելով, շտապեց պատերազմի: Նա (Վահանն) ասում էր. «(Շտապենք), թերևս պարսից բազմությունը չանցնի Հայաստանիցներս»: Հայոց զորքը Դվինից դուրս գալով և անցնելով կանգառներով, հասավ Արտազ գավառը և մոտենալով պարսից գնդին, բանակ դրեց Ներսեհապատ գյուղի մոտ[15]:

(Հաջորդ օրը կողմերը— Ա. Ա.) պատրաստվեցին կռվի: Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը հարմար կերպով դասավորեց իր զորաբանակը. նա ճակատի միջի մասը, շատ այրուձիով, հանձնեց քաջ սպասէտ Սահակ մարզպանին, աջ թևի վրա հրամանատարներ կարգեց Վահևունի Բարշղին, Սյունի Բարգենին, Ատոմ Գնունուն և Պալունի Փապակին՝ ամեն մեկն իր այրուձիով և հետևակներով: Ձախ կողմում կարգեց ուխտապահ կամսարականներին՝ սիրելի եղբայրներ Վահանին, Ներսեհին. և Հրահատին, իսկ աջ կողմի գնդերը, յուրաքանչյուրն իր այրուձիով, ինքը վերցրեց: Կազմակերպեց նաև ընտիր մի այլ հեծելագունդ Վրեն Վանանդացու զլկավարությամբ՝ նրան օգնական տալով Արտակունյաց Պապին՝ Բաբոցի որդուն, որը ոստանիկ անձնավորություն էր: Նա հրամայեց բոլոր զորահրամանատարներին հետևյալը. «... Պետք է մենք նախահարձակ լինենք, և եթե Քրիստոսի օգնությամբ, կարողանանք թևերից մեկը տեղաշարժել և ստիպել փախուստի դիմել, ապա մյուսները մեր և ձեր առաջ դիմանալ չեն կարող»:

Վահան Մամիկոնյան Հայոց սպարապետի հրամանը Պապը հասցրեց բոլոր զորամասերի հրամանատարներին: Նրանք թեպետ կամենում էին գործել զորավարի հրամանի համաձայն, բայց Պարսից զորքերի ճնշման տակ հնարավոր չեղավ: Նրանք (պարսիկները) հարձակվեցին աջ թևի վրա, ուր Վահևունի Բարշղն էր, և փախուստի մատնեցին: Սահակ սպասէտը նիզակով հարձակվեց թիկնեապահների գլխավորի վրա: Կռվելիս երկուսի նիզակներն էլ

վրիպեցին, հետո ձիերն իրար մոտեցնելով՝ միմյանց մազերից բռնած էին կռվում։

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը տեսնելով, որ Հայոց զորքը խուճապի մատնվեց ու տկարացավ Թշնամիների առաջ, ձայն տվեց Վրեն Վանանդացուն. «Հարձակվի՛ր Թշնամիների վրա և սկսի կռվել»։ Իսկ նա սարսափահար եղած, ասաց. «Ձեմ կարող, այս ժամին ինձ վրա հույս մի՛ դիր»։ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը սրտապնդված, խաչ հանեց երեսին և, երկու կամսարականների հետ միասին, հարձակվեց մոտեցող Թշնամիների վրա, որոնք չկարողացան բոլորովին դիմանալ, վասնզի Վահանն ու ընկերները սրընթաց հարձակումով իրենց դիմացի հակառակորդներին փախուստի մատնեցին։ Ետ մղելով այդ Թևը, հարձակվեցին միջին Թևի վրա։ Երկու կողմերի գնդերն իրար խառնվեցին։ Նրանք (հայերը) փոքր լանջակողմում քաջ մարդկանց անթիվ բազմություն դիաթավալ արեցին գետնին և մեծ կոտորած սարքեցին։ Միայն Խոռյան Վինն էր, որի զորքը, երկու այլ նիզակակիցներով, շարունակում էր հանդգնաբար դիմադրել։ Այստեղ քաջ զորավար Վահան Մամիկոնյանը խիզախաբար սպաննեց նրան։ Շիրակի իշխան Ներսեհ Կամսարականը Տապյան Ատրպվշնասպին և մյուս շատ քաջ մարդկանց, ամենքին գետին փռեց։ Բարշղը և հայոց փախստականները, տեսնելով, որ Պարսից զորքի ուժը թուլացավ, և փախուստի մատնվեց Հայոց զորավար Վահանի գնդի առաջից, սիրտ առնելով զորացան և, կրկին ետ դառնալով, հետապնդեցին Թշնամուն և շատերին սպանեցին ու մյուսներին էլ հետապնդելով հալածեցին։ Պարսից զորքի սպանվածների Թիվն ավելի մեծ էր, քան փախած-ազատվածներինը, վասնզի զանազան տեղերում մահացած վիրավորների Թիվը բավականին մեծ էր, քան Թե ռազմադաշտում պարսից զորքի սպանվածներինը։

Հայոց զորքը ռազմադաշտից վերադարձավ բարի անունով, մեծ փառքով, լավ ավարով և մեծ հարստությամբ[16]։

ՀԲ. Երբ քաջալերված ուրախալի սրտով Հայոց զորքը վերադառնում էր պատերազմից, որը Աստծու զորությամբ կատարվեց ըստ սուրբ Հովհան Հայրապետի և Հայոց զորքերի ցանկության համաձայն, տեղի ունեցավ երկրորդ մեծ ուրախությունը. Հանկարծ լուր տարածվեց Հայոց բանակում, որ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանի եղբայր Վարդը, Աստծու զորությամբ, կապանքներից ազատված ողջ-առողջ եկավ։ Հայոց ողջ աշխարհը լցվեց այնպիսի ուրախալի համբավով, որ ամեն մարդ շտապում էր տեսնելու այդ մեծ այցելությունը, որ Աստված պարգևեց Հայոց աշխարհին։

Օգնություն Վրաստանին

ՀԳ. ... Այնուհետև Հայոց զորքը եկավ հասավ Ծաղկոտն գավառը՝ ցանկանալով փոքր-ինչ հանգստանալ Վարշակի կոչված ջերմուկի մոտ[17]։ Այդ ժամանակ Վրաց Վախթանգ թագավորից պատգամավոր եկավ, Թե՝ «Պարսկական մի մեծ զորագունդ մտավ Վրաց երկիրը, և ես, տեսնելով որ չեմ կարող դիմադրել, քաշվեցի Վրաց սահմանի մոտ գտնված Հայոց լեռները և սպասում եմ ձեզ»։ Վախթանգը խարեությամբ նամակ էր գրել, Թե՝ «Հոների զորքերին հրամայեցի գալ և դեռ չեն եկել, բայց մինչև դուք գաք, նրանք կհասնեն, այնուհետև դուք, մենք և հոները կոչնչացնենք նրանց (պարսիկներին)։ Բայց ինձ Թվում է, Թե երբ հոների զորքերը հասնեն, մեզ բնավ չարչարվելու գործ չի մնա, նրանք գործը կվերջացնեն, որովհետև հրամայեցի անթիվ բազմությամբ գալ»։

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, Հայոց սեպուհներն ու նախարարները և ողջ զորքը անհապաղ գնացին Վրաց Թագավորին օգնության, որովհետև խաչով ու Ավետարանով երդում կար Վրաց Վախթանգ Թագավորի հետ։ Նրանք փոքր-ինչ կանգ առան Կանգարաց գավառում։ Հայոց գունդը դաշինք ուներ Վրաց Թագավորի հետ. ինչ որ մի անգամ ասում էին ստույգ կամ սուտ, Ավետարանի երկյուղի տակ, աշխատում էին բոլորը կատարել։ Թեպետ տոթ ժամանակ էր, բայց ստիպվեցին իջնել ճարմանալի դաշտը[18]։ Հայոց իշխաններից ոմանք իրենց զորքի Վրաստան գալը անտեղի էին համարում. այդ մասին Թեպետ շատ անգամ ասացին, բայց ասողներին ոչ մեկը չլսեց, այդպիսով, բոլորն էլ լռեցին։

Հայոց գունդը երբ հասավ Վրաստան, բանակ դրեց նշված վայրում։ Երեք կամ չորս օր չանցած, եկավ հասավ և Միհրանը[19] ու բանակ դրեց հայոց զորքի դեմ՝ Կուր կոչվող գետի այն կողմը։

Հայոց բանակը շարժվեց և բանակ դրեց Պարսից բանակից ավելի հեռու մի այլ վայրում։

Վրաց Թագավորը, հասնելով պատերազմի վայրը, խոսեց այդ ժամանակ Հայոց զորավար Վահանի, մյուս մեծ նախարարների ու ազնվականների հետ ու ասաց. «Լավ եղավ, որ մենք ենք կռվելու այսօր Պարսից զորքի հետ, որովհետև մենք բավական ենք, նրանք չեն կարող մեզ դիմադրել, բայց եթե այսօր էլ մենք ծուլանայինք, այն ժամանակ հոների զորքերը կգային և հաղթության փառքը ու ավարի օգուտը նրանք կվայելեին»։

ՀԴ. ... Վահան Մամիկոնյանը պատերազմի պատրաստությունն տեսավ ըստ կարգի. բանակի աջ թևը տվեց Բարշղ Վահևունուն և Սատոն Գաբեղյանին, ձախը՝ Վրաց Վախթանգ Թագավորին, իսկ միջինը ինքը վերցրեց՝ երանելի Արշավիրի երկու որդիների ու Գնունյաց իշխանի հետ։ Երանելի Սահակ ասպետին ու Բաբգեն Սյունուն կանգնեցրեց իր ու Բարշղի միջև։

Հայերն ու պարսիկներն հարձակվեցին իրար վրա։ Հայոց զորավար Վահանը, Կամսարական երեք եղբայրների հետ, մարտնչելով Շնամու զորքերի դեմ, ցանուցիր արեց ու փախցրեց. Պարսից զորքերից շատերին քշեց Կուր գետի մյուս կողմը և նրանց երևելի մարդկանցից շատերին կոտորեց քաջի պես։

Կռվում Մամիկոնյան քաջ Վասակը նիզակով ուժգին հարվածեց Պարսից գնդից մի քաջ մարդու և գետին փռեց։ Բայց իր նիզակը հանկարծակի կոտրվեց։ Քաջ Վասակը փնտրեց մի ուրիշ նիզակ և, գտնելով այն, շուտով կրկին ուրախությամբ ետ դարձավ։ Եվ նա հանդիպեց Շիրակի իշխան Կամսարական Ներսեհին, որը նույնպես իր նիզակը կոտրել և ուրիշ նիզակ էր որոնում։ Քաջ Վասակը ձայն տալով նրան ասաց. «Շտապի՛ր Ներսեհ, նիզակ գտիր և արագ ետ դարձիր, է՛կ, վասնզի բնավ չենք կարող այսպիսի հրաշալի առևտուրի ժամ գտնել, երբ մահը՝ անմահություն է, ժամանակավորը՝ հավիտենական, և ապականվողը՝ անապական կյանք ունեցող։ Շտապի՛ր, վասնզի մենք անմահ մնալ չենք կարող, գուցե զրկվելով այս երևելի ու փառավոր առիթից, անանուն ու անարգ մահով հեռանանք այս աշխարհից»։ Այս խոսքերը՝ սրբազան մահվան մասին, երդվելով շատ անգամ մեզ պատմեց Շիրակի տեր Ներսեհ Կամսարականը։

Երբ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանն այսպես կռվում

էր իր Վասակ եղբոր ու Կամսարական Արշավիրի երկու որդիների հետ, հանկարծ փախուստի դիմեցին և Վրաց զորքերը ու հեռացան։

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը ռազմադաշտում հանդիպեց Սյունի Բաբգենին, որը պարսիկներից ծանր վիրավորված ընկած էր գետնին։ Զորավարը նրան նստեցնելով իր նժույգի վրա, դուրս հանեց պատերազմի դաշտից և փրկեց։

Հայոց ողջ զորքը, նրա հետ և Վրաց անպիտան զորքերը, իրենց Վախթանգ Թագավորի հետ միասին, ցիրուցան եղան։ Պարսից զորքերը նրանց հետապնդեցին։ Շատերն էլ զանազան տեղեր փախչելով, ազատվեցին։ Սակայն Հրահատ Կամսարականի ձին ուժեղ արշավելիս վայր ձգեց նրան։ Պարսիկները հասան, երբ նա ոտքով էր, և բռնելով տարան Միհրանի մոտ։ Միհրանը նրան տեսնելով, շատ ուրախացավ։ Նախատեց խիստ խոսքերով, ապա կապել տվեց՝ զգուշությամբ պահելու համար, և ուր որ Հայոց աշխարհում գնում էր, իր հետ շրջեցնում էր։ Նրա հետ բռնեցին նաև Սյունիքի Յազդ անունով մի սեպուհի և ուրիշ մի քանիսների էլ՝ Վրաց աշխարհից[20]։

Ազատագրական պայքարի հետագա ընթացքը

ՀԸ. Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը որոշ ժամանակ տեղափոխվեց Տայոց աշխարհի ավելի ամուր տեղերը։ Հայոց փախստականների մնացորդները և Հայոց նախարարներից ոմանք, հավաքվեցին նրա մոտ։ Երկու Կամսարականները միշտ նրա հետ էին՝ նրանից անբաժան և նրա հետ միաբան։ Միհրանն իր գնդով հետապնդում էր նրանց, և աշխատում էր կա՛մ կռվում սպանել Վահանին, կա՛մ հնարքներով բռնել և կա՛մ համոզել ու հպատակեցնել։

Արյաց խոշոր զորաբանակը եկել էր Պարսից և Հոռոմոց սահմանի մոտ և (կանգ առել) Դու անունով գյուղում[21]։ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը գտնվում էր նրանից շուրջ երկու հրասախ հեռավորության վրա՝ Մկնաւոնջ գյուղում՝ իր հետ ունենալով մոտավորապես հարյուր մարդ։ Միհրանը հազարավոր զինվորներով բանակ էր դրել այն տեղում, ուր գտնվում էր Հայոց

զորավար Վահան Մամիկոնյանը։ Այդ վայրը գտնվում էր Պարսից թագավորի իշխանության սահմանում։ Աստված իր մեծ զորության շնորհն այնքան առատությամբ է թափել քաջ Վահան Մամիկոնյանի վրա, որ Միհրանն իր զորագնդով՝ այնքան շատ ու քաջ զորավար զորքով, դողալով սարսափում էր նրանից, չէր վստահում հարձակվել նրա վրա, որ կարողանար իր ցանկացածին սպանել, կամ հալածել ու ոչնչացնել մնացած փախստականներին, այլ քաղցր խոսքերով ամեն օր պատգամավորների միջոցով խոսում էր նրա հետ հաշտության համար, ասելով, թե «Մի՛ վախեցիր, արքայից արքայի ծառայությունից մի՛ դուրս եկ ու Հայոց այս աշխարհը ցիրուցան անելով մի՛ տար դեպի ոչնչացում, հնազանդվի՛ր թագավորին, ես միջնորդ կլինեմ։ Նա իր բարերարությամբ սիրում է ինձ և իմ խոսքերը լսում. ես կաղաչեմ թագավորին, կհաշտեցնեմ նրան քեզ հետ, և ինչ էլ որ արժանի է քեզ տալ, կաշխատեմ որ տա»։

Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը պատասխանելով, ասաց Միհրանին. «Արյաց տերը, որպես թագավոր, պարտավոր է ճշմարիտ աչքով նայել ամեն մի մարդու վրա և թագավորին վայել՝ արդարապես տեսնել ու արդարապես լսել։ Բայց թագավորը ուղիղ աչքով չի նայում ծառաներին ու ուղիղ լսողությամբ չի լսում մեկի խոսքերը, այլ բոլորովին բռնությամբ է վարվում, և ոչ արդար իրավունքների քննություն կատարում։ Բայց ավելի շատ դաժան է և երկրի կործանման պատճառ, երբ մշտապես այդ անում է՝ տեսնելով ուրիշի աչքերով, լսելով ուրիշի ականջներով. ծանր է և դառն այդպիսի ծառայությունը և վտանգավոր»։

ՀՋ. Երբ Միհրանն ու Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը խոսում էին իրար հետ այսպիսի խոսքեր, հանկարծ դեսպան եկավ թագավորից, և Միհրանին շտապ արքունիք կանչեցին։ Նա շուտով, իր հետ ունեցած ողջ բազմությամբ, գնաց Պարսկաստան՝ տանելով իր հետ կապված Հրահատին, երանելի Յազդին և մյուս կապվածներին։ Նրանց ետևից տրտմությամբ և մեծ արագությամբ հետևում էր Հրահատի սիրելի եղբայր՝ Շիրակի իշխան Ներսեհն ընտիր մարդկանցով... Շատ իջևաններ հետևելով նրան, ոչ մի հնար չէր գտել ազատելու։ Համարյա մի օրվա ճանապարհ էր մնացել, որ սուրբ նահատակ Գրիգորի բնակության տեղը հասնեին... Փրկիչ Աստվածն այդ նույն տեղում ազատեց Հրահատին պահա-

պանների շրջափակ զգուշությունից և ուղարկեց իր սիրելի եղբոր մոտ, իր աշխարհը։

ՀԷ. (Պարսկական զորքի Հայաստանից հեռանալուց հետո— Ա. Ա.) Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը եկավ Այրարատ գավառի Վաղարշապատ քաղաքը և ուխտապահ նախարարների և Հայոց զորքերի հետ միասին կատարեց իր ուխտը...։

Երբ փոքր-ինչ կամենում էին հանգստանալ և շունչ քաշել տանջանքից, Հայոց զորավար Վահանի մոտ հանկարծ Վրաց կողմերից սատանայի հոգի կրող ու խելագար մարդիկ եկան, խոսեցին սուտ խոսքեր և պատմեցին խաբեական տեսիլներ, որ չէին տեսել՝ նպատակ ունենալով զորքը դայթակղեցնել և երկպառակտել։ Եվ նրանք ասացին ամենքին, թե՝ «Սքանչելի Սահակ աստպետը և քաջ Վասակ Մամիկոնյանը ողջ և առողջ են և նրանք մեզ ուղարկեցին ձեզ մոտ...»։

... Վահան Մամիկոնյանն ասաց. «Այդ խոսքերն ու խորհուրդները չարամիտ և չարահնար մարդկանց կողմից են հնարված. գարնանը Պարսից զորքերի Հայոց երկիր գալն իմանալով, մտածեցին, թե կարող են այդ միջոցով մայրաքաղաք Դվինում եղած Հայոց զորքերին պատակտել, քայքայել և այս ու այն կողմ ցիրուցան անել...»։ Այնժամ լսելով անխորհուրդ ու թեթևամիտ մարդկանց և մանավանդ նահատակվածների կանանց ու նրանց ընտանիքներին ու դայակներին՝ Մամիկոնյան Մուշեղ սեպուհին բազում ընտիր մարդկանց գնդով, շաղավաշուրթ և խաբեբա մարդկանց հետ ուղարկեցին անօգուտ գործի համար, որի ինչ լինելը չգիտեին։ Տանելով այդ մարդկանց Վրաստանի սահմանները՝ իզուր քարշ էին տալիս սատանայի հետևից, և իրենք իսկ նրա արբանյակներն էին։ Եվ շատ սուտ պատճառներ հորինելով, ասում էին նրանց. «Սպանողներից փախչելով ծածուկ տեղերում են թաքնվում՝ ծառախիտ բարձր սարերի գագաթներում և զանազան քարանձավների խորքերում»։ Շատ օրեր խելացնոր պտտեցնում էին ասպետ Մուշեղ Մամիկոնյանին և նրա հետ եղած գնդին և այսպես մինչև սաստիկ ձմեռվա ցրտաշունչ հողմերի վերջանալը։

ՀԸ. Երբ եկավ գարնանային ծաղկոցների բուրելու ժամանակը, որոնք մերկ չքավոր մարդկանց տաքացնելու ավետաբեր օրեր են հանդիսանում, հանկարծ մեր երկիրը հասավ Ջարմիհր Հազարավուխտը անչափ մեծ և ընտիր մարդկանցից կազմված

զորքով։ Նա արագ անցավ Երասխ գետի կամուրջով և նույն օրը քանակ դրեց Արտաշատ գյուղաքաղաքում։ Հայոց աշխարհի ուխտատեղանցները հավաստի տեղեկություններով իմաց էին տվել Նրբան՝ Հայոց զորքի կեսի Վրաստան գնալու և Վահան Մամիկոնյան սպարապետի փոքրաթիվ նախարարներով և սակավ այրուձիով մայրաքաղաքում գտնվելու մասին։

Հազարավուխտը և նրա հետ գտնվող մեծամեծները ստանալով այսպիսի տեղեկություններ, առավել ուրախացան, և առավոտյան շտապ հարձակվեցին Հայոց զորավար Վահան Մամիկոնյանի և նրա հետ գտնվող զորքերի վրա։ Հասնելով Դվին քաղաքի մոտ, Հազարավուխտը զորքը պատրաստեց ճակատամարտի՝ բանակը դասավորելով Խոսրովակերտ կոչված անտառից մինչև դաստակերտը և այն լեռնակողմը, որին Ջրվեժ են անվանում։

Հայոց Վահան սպարապետը, նրա հետ եղած Հայոց մյուս նախարարները և ռազմիկ հեծելազորը, նկատելով Պարսից զորքերի այնքան բազմությունը, թեպետ գիտեին դիմադրելու համար իրենց փոքրաթիվ և անկարող լինելը, բայց որ տեսան ողջ դաշտը Պարսից անթիվ զորքերով բռնված, շատ չվախեցան, բաժանվելով մասերի՝ մեկ-մեկ, երկու-երկու, նախարարների հետ հարձակվեցին պարսիկների վրա։ Համարձակ կարողացան Պարսից զորքերի ճակատը ճեղքել ու շատ հայտնի մարդկանց գետին փռելով, իրենց ձիերի դլուխները շուռ տալով՝ բաջի նման հեռացան։ Ըստ որում, հզոր մարդու քաջարար փախչելը սաստիկ երկյուղ է գուշակում՝ նկատի ունենալով թշնամիների հետ մյուս անգամ կրվելու հնարավորությունը, որը հետո տեղի ունեցավ և ակնբախ դարձավ շատերին, և եղան մարդիկ, որոնք ճաշակեցին նրա համն ու զարմացան։

ՀՔ. Եվ այսպես, Հայոց զորքերն այս ու այնտեղ ցիրուցան եղան։ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանն ինքը և իր հետ եղած նախարարները, իրենց դայակներով ու սիրելի ծառաներով, տեղափոխվեցին Խաղտյաց սահմանների մոտ գտնվող ամուր վայրերը՝ ցանկանալով շունչ քաշել և առժամանակ հանգստանալ, հուսալ ու սպասել Տիրոջ փրկությանը։

Անհանգիստ Հազարավուխտն իր ամբողջ զորքով հետապնդում էր նրանց։ Բազմաթիվ տեղերում զորաշարժի ժամանակ նա քան-

դում, ավերում էր Հայոց ամրոցները, բնակիչներից շատերին կոտորում էր և արյունահեղություններ անում։ Սաստիկ դողդողացնելով՝ քաջ Վահան Մամիկոնյանին ձերբակալելու կամ կովում սպանելու հնարներ էր փնտրում, որ ապա կարողանա հանգստանալ։

Հազարավուխտը գնալով Ոքաղ[22], բանակ դրեց Գյուղիկ և Վարդաշեն կոչված գյուղերի մոտ։ Այդտեղ ժամանած օրն՝ առավոտյան նա լսեց, որ Վահան Մամիկոնյանը գտնվում է իրեն մոտիկ Հոռոմոց բաժնի Վարայր-Վարոյում, այն գավառում, որ Շադաղամ է կոչվում։ Կարծելով, թե շրջահայաց Մամիկոնյան Վահանը, գտնվելով Հոռոմոց աշխարհում, անհոգ կլինի, գիշերը դաղտնի, ծանոթ մարդկանց առաջնորդությամբ, տեղ հասավ առավոտյան լույսը բացվելիս։ Բայց այնտեղ նա գտավ այլ մարդկանց բազմություն, որոնց մեջ էին նաև Շիրակի իշխան Ներսեհ և Հրահատ Կամսարականների կանայք։ Պարսից զորքերը հանկարծակի հարձակվելով նրանց վրա, Հայոց ռամիկ մարդկանցից շատերին կոտորեցին և Ներսեհ ու Հրահատ Կամսարականների կանանց տարան Պարսից բանակը։

Այնտեղ մի օր անց, արքունիքից պատվիրակ եկավ (Հազարավուխտի) մոտ հրովարտակով, որի մեջ Պերոզ թագավորը գրել և տեղեկացրել էր (Հազարավուխտին)՝ պարսկական ողջ բանակով հեփթաղների[23] վրա իր գնալը։ Եվ նրան հրամայում էր մեկնել Վրաստան՝ կա՛մ բռնել Վրաց Վախթանգ թագավորին, կա՛մ սպանել և կա՛մ երկրից դուրս վտարելով փախցնել, իսկ Միհրանի տոհմից Շապուհին իր զորքով թողնել մարզպան Հայոց աշխարհում։

ՁԱ. Հազարավուխտի Վրաստան գնալուց հետո՝ Շապուհը մրնաց Ոքաղում և աշխատում էր Հազարավուխտի հրամանը կատարել. փնտրում էր Վահան Մամիկոնյանին, աշխատում էր գտնել, որպես նրան անպատրաստ վիճակում և սպանել, բայց չէր կարողանում, վասնզի Վերինի զորությունը շրջապատված պահում էր նրան։ Բայց Մամիկոնյան Վահանն ամեն օր իր զորքով հանգիստ չէր տալիս պարսիկների բանակին, այլ ամեն գիշեր նետաձգությամբ խոցոտելով կոտորում էր նրանց, իսկ երբեմն իրենք՝ պարսիկները, խռնված շնչահեղձ էին լինում։

Մուշեղ Մամիկոնյանը և Շիրակի իշխան Ներսեհը կարնո ծո-

վի հյուսիսում գտնվելիս, որոշ ժամանակ, հայոց զորավար Վահան Մամիկոնյանին կորցրած լինելով, շփոթված գնում էին քիչ մարդկանցով։ Նրանք մոտեցան Կարինի Արծաթ անունով գյուղին[24], հասան գյուղի մոտ գտնված մի հեղեղատի և կամենում էին այդ հեղեղատի եզրին փոքր-ինչ հանգստանալ։ Այնտեղ՝ չորս կողմերում, արտեր հնձողներն աշխատում էին։ Երբ պարսիկները տեսան, որ չկարողացան նրանց հասնել, ցանկացան այնտեղ գտնվող մշակներին սպանել, ասելով նրանց, թե «Ինչո՞ւ եք արքայից արքայի բոլոր ծառաներին թույլ տալիս շրջել ձեր աշխարհում»։

Շիրակի իշխան Կամսարականի դայակորդի Խուրսը, որ Արշամունյաց գավառի Շիրմաց գյուղից էր, տեսավ պարսիկ զինվորներից մեկին, որ կամենում էր մի կարնեցի մշակի սպանել, իսկ մշակը պտտվելով մի բարդու շուրջը, փախչում էր սպանողից։ Ներսեհ Կամսարականի դայակորդի Խուրսը տեսնելով այդ, զայրացած Մուշեղ Մամիկոնյանի և Ներսեհ Կամսարականի վրա, ասաց աներկյուղ. «Չէ՞ որ ուրիշները ևս, եթե պարսիկներից են սպանվում, վրեժխնդիր Աստված մեզանից կպահանջի»։ Եվ Խուրսը հարձակվելով այդ պարսիկի վրա, նույն տեղում սպանեց ու կարենցուն ազատեց սպանել ցանկացողից։ Մամիկոնյան Մուշեղն ու Շիրակի իշխան Կամսարական Ներսեհը, զրգռված Խուրսի խոսքերից, նրա արարքը տեսնելով, որ այնպիսի բաջությամբ գործեց, նկատելով, որ իրենց հետապնդողներն այնքան էլ շատ չեն, իրենց եղած փոքրաթիվ մարդկանցով հարձակվեցին պարսիկների վրա և, Աստծու օգնությամբ զորացած, նույն տեղում շատերին սպանեցին, իսկ մյուսներին փախուստի մատնելով, ամոթահար ետ դարձրին։ Յոթանասուներկու մարդ սպանեցին այդտեղ։

ԶԲ. Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը և իր հետ գտնված զորքն այդ գիշեր հանգիստ քնով քնեցին՝ պաշտպան ունենալով Երեզ գյուղի մարդկանց. ամեն մարդ երկյուղով և կամավ լսում էր Վահանի հրամանն՝ ինչպես թագավորի, որն Աստծուց է կարգված երկրի վրա։ Աստված ինքը նրա հետ էր ամեն գործում և ուղղություն էր տալիս նրա կամեցողությանը։

Վահան Մամիկոնյանն իր հետ առած զորքը և Երեզի շինականներին, գիշերը հարձակվեց պարսկական բանակի վրա։

Որեզացիները, շրջապատելով կռվի վայրը, տեղատարափ, շատ չյունի նման սաստիկ նետաձգությամբ, պարսից զորքերին սարսափահար արին՝ իրար խառնելով բանակի մեջ եղած զինվորներին. պարսիկներն իրենք իրենց ոտքի տակ տալով, ավելի ևս կոտորվում էին։ Անօրենների բանակից լացի և գույժի ձայներ էին լսվում։ Հայոց գնդից միայն Գաբեղյան Գարաղ սեպուհը եռանդուն կռվելով, մեծ քաջություն ցույց տվեց և վիրավորվեց. այդ վիրքերից, սակավ օրեր հետո, արժանի եղավ Աստծուց մարտիրոսության պսակն ընդունելու։

ԶԳ. Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը թշնամիների կոտորածից դառնալուց հետո, գնաց և գիշերվա մնացած մասը՝ մինչև առավոտ հանգստացավ Ողին գյուղի, որ Շեյա են կոչում, դոմերում։ Լույսը երբ բացվեց, նա դնաց բանակ դրեց Շեյա գյուղում։

Երբ Վահան Մամիկոնյանի Հայոց զորքերն ուզում էին հանդրստանալ գիշերվա ծանր աշխատությունից հետո, աչքները վեր բարձրացնելով տեսան, որ ահա իրենց վրա է հարձակվել պարսից զորավար Շապուհը։ Նա (Վահանը) խիստ զայրացած սրտով՝ գազանի նման մռնչում էր, վասնզի բոլոր օրերից, այն գիշերվա մնասներն ավելի չարաչար էին թվում։ Իրապես, այդպես էլ եղավ. ոչ մի բան նման չէր վերահաս մեծ կոտորածին, որ խոկուցն լինելու և բոլորովին կործանելու էր։ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, տեսնելով պարսից զորավար Շապուհի զորքի բազմության հանկարծահաս հարձակվելը, թեպետ իր գունդն անպատրաստ էր և թշնամիների բազմաթիվ զորքերի համեմատությամբ՝ շատ փոքրաթիվ, բնավ չվախեցավ, այլ հրամայեց դասավորել իր ուժերը։ Վահան Մամիկոնյանը, ուխտապահ փոքրաթիվ մարդկանց հետ միասին, որոնք մնացել էին իր մոտ, քաջաբար հարձակվեց Պարսից զորքի վրա... Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, իր հետ եղած միասիրտ փոքրաթիվ մարդկանցով, Աստծու աջի օգնությամբ, ինչպես ջրերի մեծ հոսանքը պատռում է դետինը և առաջ անցնում, այնպես էլ ինքը, իր քաջ ուխտակիցներով, առյուծի նման ճեղքեց և դուրս եկավ շրջապատումից՝ վիրավորելով Պարսից զորքից շատ ուժեղ մարդկանց։

ՁՐ. Վաղարշի թագավորության երկրորդ օրը[25] Հազարավուխտը, մեծամեծների համախոհությամբ, խոսեց Վաղարշ թագավորի հետ ու ասաց. «Ձեր եղբայր արքայից արքա Պերոզը, ինչպես դուք էլ գիտեք, բռնակալ, դժմիտ ու անհավան մեկն էր։ Նրա արհամարհող կամակորության պատճառով շատերը հեռացել են Արյաց թագավորությունից և բավականին մեծ, և ոչ սակավ՝ վնաս են պատճառել Արյաց աշխարհին։ Նախ և առաջ Հայոց մեծ աշխարհը, որը ձեր ծառայությունից այսօր դուրս են հանել։ Եվ այն մարդը, որը դուրս հանեց աշխարհը ձեռնից, եղել է նա, ով չի հասկացել նրա պիտանիությունը. Պերոզը կորցնելով դուրս հանեց այդ մարդուն Արյաց ծառայությունից, երկիրն էլ՝ նրա հետ։ Իսկ թե որքա՜ն վնասներ ու հարվածներ հասավ այդ մարդուց Արյաց աշխարհին, այդ ամենը, թվում է թե դուք լսել եք և տեղյակ եք։ Սակայն Շապուհ-Միհրանը, որին դուք նշանակեցիք (մարզպան), ավելի լավ գիտի նրա (Վահանի) բաջությունը և մեզ տրված խրատը, եթե հարցնեք ու լսել կամենաք, նա ինքն այդ մասին կասի ձեզ»։

Վաղարշ թագավորը հարցրեց Շապուհ-Միհրանին հայոց գործերի մասին. «Հայոց աշխարհում ի՞նչ գործ են կարողացել գործել, Վահանն ի՞նչ մտադրություն և ի՞նչ ուժ ունի, և ինչպե՞ս կարողացավ այսքան տարի Արյաց դիմադրել»։ Միհրանը պատասխանելով ասաց. «Արյա՛ց քաջ, այն կոիվը, որ Հազարավուխտը մեզ հետ միասին Վահանի հետ վարեց, եթե Վահանի բոլոր զորքերն այնտեղ լինեին, երևի նա հաղթություն տաներ՝ թևպետ մենք հաղթեցինք, այս էլ գիտեմ, որ մեզանից անթիվ մարդիկ կոտորեցին։ Ձեր թագավորության պատիվն ու բախտը բերեց, զի հայոց գնդի ընտիր մարդկանց կեսն ուրիշ տեղ էր գնացել, բայց թե մնացած փոքրաթիվ մարդկանցով ինչպիսի՞ հարված հասցրեց, Հազարավուխտն ինքը և այնտեղ գտնված պարսից մեծամեծ մարդիկ լավ գիտեին։

Հայոց աշխարհի մեծությունն ու օգուտը դուք շատ լավ գիտեք։ Վահանը և նրա հետ եղած մարդիկ, եթե այսօր խաղաղությամբ ձեր ծառայության մեջ լինեին, ես այդ հաջողության և միխիթարության շատ մեծ գործ կհամարեի, վասնզի՝ երբ հայերը

նման մարդկանցով մերն էին, վրացիք և աղվանները բնավ չէին համարձակվում իրենց ընթացքը շեղել և հակառակ բան մտածել»։

Վաղարշ թագավորն այդպիսի օրինավոր խոսքեր լսեց Միհրանից, Հազարավուխտից և Արյաց մյուս բոլոր մեծամեծներից. նրանք ամենքը հաստատում էին Միհրանի ասածը, թե՝ «Ստույգ այդպես է, ինչպես խելացի կերպով ճշմարտորեն ասացիր»։

Եվ Նիխոր Վշնասպատին[26], որը հեղ, խելացի ու աշխարհաշեն մարդ էր, շատ ընտիր մարդկանցով շուտափույթ ուղարկեցին Հայաստան։ Ինքն իսկ թագավորը, Հազարավուխտի և պալատի մյուս մեծամեծների մեծագույն հոգատարությամբ, պատվիրեց նրան. «Գնա՛ Հայաստան, ի՛նչ կերպ ուզում է լինի, Վահանի և նրա ընկերների ցանկությունները հաշվի ա՛ռ ամենայն քաղցրությամբ, սիրով հնազանդեցրու նրանց և Արյաց ծառայության բեր»։

ՁԲ. Նիխորը գալով Հայոց աշխարհը, չվստահեց Հայոց հողը մտնել, այլ մնաց Հեր գավառի Նվարսակ[27] կոչվող գյուղում։ Նա պատգամավոր ուղարկեց Վահանի մոտ խորհուրդի դպիր Շապուհին և ճվարշացի Միհր-Վշնասպին, որոնց միջոցով նրան հայտնեց իր Հայաստան գալու նպատակը, թե՝ «Վաղարշ թագավորից ու Արյաց աշխարհում գտնված բոլոր մեծամեծներից հրովարտակ և պատգամ ունեմ ձեզ հետ խաղաղության բանակցություն վարելու համար, ուրեմն՝ եկե՛ք, լսեցե՛ք և ինչ որ ձեզ համար լավ է ու հաճելի, այն էլ ընտրեցե՛ք»։

Եվ առավոտյան շտապ բոլոր հայ մարդիկ հավաքվեցին Վահան Մամիկոնյանի մոտ՝ իրենց նախկինում ունեցած իրավունքների, գործի, պահանջի և խնդիրների մասին խորհրդակցելու համար։ Ատյան եկան և Նիխորի պատգամավորները։ Վահանը սկսեց խոսել և պատասխանել Նիխորի հարցերին. «Մենք ապստամբության և այսպիսի խիստ ու մահաբեր գործը նախաձեռնելու համար բազում կարևոր խոսքեր ունենք հայտնելու, որոնք հնար չէ գրով կամ պատգամով արտահայտել, բայց միայն՝ Արյաց թագավորի և ձեզ հետ, որ պալատի մեծամեծներն եք, երես առ երես խոսելով։ Մենք երեք առաջարկություն ունենք, եթե պարսիկները հանձն առնեն ընդառաջելու մեր պահանջներին, կծառայենք նրանց որպես բնիկ և հավատարիմ ծառաներ, իսկ եթե չուզենան հանձն առնել և խոստանալ դրանք կատարել, կհեռանանք երկ-

բից, կկորչենք և ուրախությամբ կմեռնենք, բայց պարսիկ մարդու առջև չենք խոնարհվի։

Երեք առաջարկներից կարևոր և պիտանի առաջարկը, նախ և առաջ, հետևյալն է. մեր հայրենի սեփական կրոնը թողնեք մեզ պաշտել. ոչ մի հայ մարդու մոգ չդարձնեք, ոչ մեկին մոգության ընդունելու համար իշխանություն ու պատիվ չտաք, Հայոց աշխարհից վերացնեք կրակարանները և թույլ չտաք այսուհետև աղտեղի ու անպիտան մարդկանց նկեղեցուն անարգանքներ հասցնել, ինչպես մինչև այժմ լինում էր և մենք տեսնում էինք։ Թույլ պիտի տաք քրիստոնյա հավատացյալներին և քահանաներին քրիստոնեության կարգն ու պաշտոնը կատարել համարձակ ու աներկյուղ՝ ուր կամենան, ինչ որ լավ համարեն։ Մեր առաջին պահանջն այս է։

Երկրորդ պահանջն այն է, որ մարդուն ճանաչեք ո՛չ թե պաշտոնով, այլ արդարությամբ, տարբերեք լավը վատթարից, պիտանին անպիտանից, ճանաչեք տոհմիկը և ոչ տոհմիկը, վերցնեք լավը, պատվականը, քաջը, օգտակարը և արհամարհեք ու մերժեք վատն ու անպիտանը, սիրեք վաստակավորին և ատեք անվաստակին, ընդունեք իմաստուններին և խորհրդակցեք նրանց հետ, իսկ հիմարներից հեռու կանգնեք և ասպարեզից հեռացնեք։ Երբ այս ամենն այսպես լինի, Արյաց աշխարհի բոլոր գործերը բարեհաջող ու անսխալ կընթանան։ Իսկ եթե հակառակը սիրեք՝ ոչ վայելը, ինչպես արել եք մինչև այժմ, գործերը հակառակ կընթանան, ինչպես եղան և այժմ դուք տեսնում եք։

Մեր երրորդ պահանջն այն է, որ նա՛, ով Արյաց տերն է և աշխարհի թագավորը, ինքն իր աչքերով տեսնի, իր ականջներով լսի և ինքնուրույն որոշի մարդու լավն ու վատը և հարկավորն ուրիշի բերանով չասի։ Այդպիսի դեպքում տեսածն ուղիղ չի լինում և ոչ էլ լսածը՝ արդար, այլ հաճախ խոսքերը սուտ են լինում, իսկ հրամանները՝ անպետք, անիմաստ և բոլորովին այլայլված։ Եվ երբ այս ամենն այսպես է լինում, գործը խափանվում և ոչնչանում է ծառաների հետ միասին, որի հետևանքով աշխարհն ու նրա բնակիչները չեն կարող անշարժ ու հաստատուն մնալ։ Բայց երբ թագավորն իր աչքով է տեսնում և աննախանձ իր ականջով է լսում ու արդար խոսքով խոսում իր ծառաների հետ, այդ ժամանակ ծառաները բաջալերվելով՝ չեն ջլանում աշխատելուց, օր-

օրի բազմապատկում են վաստակը, ջանում են ավելացնել բարիքը և այսպես աշխարհը շինվում է և տերն էլ փառավորվելով՝ մշտապես պայծառանում։

Արդ՝ եթե այդ ամենը կարող եք խոստանալ և խոստացածները գրով ու կնիքով հաստատված տալ մեզ, այդ դեպքում կանչի՛ր, հոժարությամբ կգանք ու կլսենք ձեր խոսքերը, կհնազանդվենք թագավորի հրամանին՝ ինչ էլ որ ասի։ Իսկ եթե այս երեք պահանջը չեք կարող մեզ խոստանալ, գիտեք որ հնարավոր չէ, այդ դեպքում մենք մահը աչքի առաջ առած պատրաստ ենք մեռնել, բայց Արյաց թագավորին ծառայել չենք կարող։ Ունեցածս մյուս խոսքերը՝ եթե ես գալու լինեմ, ինքս կխոսեմ (թագավորի) հետ, իսկ եթե գալս չհաջողվի, այդ դեպքում խոսքերն էլ կմնան, գործերն էլ»։

Ղ. Վահան Մամիկոնյանն այս բոլոր խոսքերն ասաց խորհուրդի դպիր Շապուհին և ճվարշացի Միհր-Վշնասպին ու ճանապարհ դրեց նրանց։ Վահան Մամիկոնյանն իր մարդկանց ևս ուղարկեց Նիխորի պատգամավորների հետ...

Շապուհը և Միհր-Վշնասպը ատյանի առջև Նիխորին հանձնեցին Վահան Մամիկոնյանի առաջարկները։ Նիխորը լսելով Վահան Մամիկոնյանի բոլոր ասածներն ու առաջարկությունները, ուրախությամբ լցված, ամենքի ներկայությամբ ասաց. «Այդ բոլոր առաջարկները, որ ուղարկել է Վահանը, ճշմարիտ են և աստվածային հավանության արժանի»։

Այնուհետև Նիխորը շտապ կանչեց նույն պատգամավորներին՝ խորհուրդի դպիր Շապուհին և ճվարշացի Միհր-Վշնասպին ու նամակ գրեց Վահան Մամիկոնյանին հետևյալ բովանդակությամբ. «Լսեցի,— ասում է,— իմ պատգամավորներից, որոնց ես ուղարկել էի քեզ մոտ, քո ասած բոլոր խոսքերը։ Նրանց բոլորի մասին գրեցի այս նամակում քեզ հայտնելու համար։ Նրանք հավաստի ինձ հայտնեցին ամեն ինչ, և ես լսեցի։ Ուրեմն ե՛կ ինձ մոտ վըստահությամբ. քո բոլոր պահանջները, որոնք ձեռքով ինձ ուղարկեցիր, և ուրիշ ինչ էլ որ դու ուզենաս, Արյաց տերն ու բոլոր մեծամեծներն ուխտել են լիովին խոստանալ ու կատարել, իսկ քեզ հետ եղածներին Արյաց տերը կվարձատրի և Հայաստան կուղարկի քո ցանկության համաձայն»։

Նիխորը սիրով ընդունեց Վահան Մամիկոնյանի կողմից եկած նախարարներին, պատվեց նրանց ու ճանապարհ դրեց իր պատգամավորների հետ՝ խստիվ հանձնարարելով՝ շտապ և անհապաղ բերել Վահան Մամիկոնյանին։

Պատգամավորները հասնելով Վահան Մամիկոնյանի մոտ, հանձնեցին Նիխորի նամակը։ Նա գրածից իմացավ, որ Նիխորը պատգամավորներից լսել և տեղեկացել է այն ամենը, ինչ ինքը առաջարկել էր. չկար Վահան Մամիկոնյանի խոսքերից այնպիսին, որ նշած չլիներ Նիխորը։ Պատգամավորներից նա տեղեկացավ նաև՝ թե Նիխորն ինչպիսի ուրախությամբ և սիրով է ընդունել և մեծարել նրանց։ Պատմեցին նաև ուրացող խմբի շարաչար խայտառակվելու և այն մասին, թե ինչպես Նիխորը փափագում է նրա շտապ գնալը։ Նիխորի պատգամավորները ևս ստիպում և շտապեցնում էին նրան գնալու համար։

ՂԱ. Այնուհետև Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը և իր բոլոր ուխտապահ նախարարները, որ լսել էին Նիխորի Վահան Մամիկոնյանի հետ ունեցած պայմանավորվածության մասին, իրենց պատրաստի գնդի հետ միասին, գնացին նրա (Նիխորի) մոտ կամովին և ուրախությամբ։

(Տեղ հասնելու հաջորդ օրն— Ա. Ա.) արևածագին Վահան Մամիկոնյանը եկավ Նիխորի մոտ։

Նիխորը Վահան Մամիկոնյանին և նրա ուխտակից մյուս նախարարներին ընդունեց ցնծալից ուրախությամբ. երկար իր դիրկն ընդունելով, ողջունում էր նրան և հաղորդում Արյաց Վաղարշ թագավորի ու բոլոր մեծամեծների ողջույնը։ Մեծ սիրով, մեկ-մեկ՝ անուններով ողջունում էր Վահան Մամիկոնյանի նախարարներին, ինչպես և՝ զորքի մեծ ու փոքր մարդկանց։

Վահան Մամիկոնյանը, լսելով Պարսից թագավորի ու պալատի բոլոր մեծամեծների ողջույնը, շնորհակալությամբ երկրպագություն տվեց և կատարյալ ուրախությամբ ընդունեց։ Նիխորը հրամայեց Վահան Մամիկոնյանի զորքի բոլոր մարդկանց ներս կանչել, ինչպես և հրամայեց պարսիկ մեծամեծներին՝ մնալ ներսը՝ ատյանում։ Կատարեցին Նիխորի առաջարկը։ Ատյանը լցվեց Մամիկոնյանի հետ գնացած և պարսիկ մյուս մարդկանցով։ Նիխորը սկսեց խոսել Վահան Մամիկոնյանի հետ և ասաց. «Թեև դու ինձ հետ միևնույն երկրում չես ապրել, բայց ես բազում անգամ հան-

դիպել եմ քեզ պալատում և լսել քո մասին ձեր երկրի ոչ թե անծանոթ ու անպիտան, այլ լավագիտակ ու խելացի հայ և պարսիկ մարդկանց ասածները, իսկ այժմ փորձով ամենքս դրանում հաստատապես համոզվեցինք։ Պատերազմի գործը քաջությամբ է վարվում, մանավանդ, առավել ևս՝ հանճարով ու խելացիությամբ։ Իսկ այդ երկուսն էլ դու Արյաց աշխարհին համոզեցուցիչ տեսնել և ճանաչել տվեցիր։ Դու քաջություն ցույց տվեցիր քո փոքրաթիվ մարդկանցով, վասնզի քիչ մարդկանցով կռվեցիր շատերի հետ և մեծամեծ հարվածներ տվեցիր ու անհանգստացրիր։ Խելացիությամբ ցույց տվեցիր՝ հասկանալով կռվելու, նահանջելու, զորքն անվնաս պահելու և հաջորդ ժամին պատրաստ լինելու ու չվախենալու (ռազմական արվեստը)։ Թե որ այդ երկու շնորհքները քեզ մոտ կատարյալ չլինեին, հնարավոր կլիննե՞ր այդքան փոքրաթիվ մարդկանցով դիմադրել կռվող մարդկանց անթիվ բազմությանը և երբեմն սարսափեցնել ու անհանգստացնել... Արարքներիցդ ոչ մեկը, որ դու մտածեցիր այդպես գործել և կատարել, չի կարող մեղադրության հիմք հանդիսանալ. ո՛չ ոք՝ ո՛չ Արյաց այժմյան տերը և ո՛չ պալատի ավագանին, որոնք ներկայումս կան և որոնց դու ճանաչում ես։ Արքայից արքա Պերոզը, երբ իր անձի և իր որդիների համար չկարողացավ հոգ տանել, նրա բարի ծառան ի՞նչ լավ բան կարող էր մտածել ու կատարել։ Քո բոլոր գործերը, ինչ որ դու արեցիր, չէր կարող չվստահել և չգործել այն ժամանակ ամեն մի ծառա. տեսնելով (արքունիքի) ամենօրյա խստությունը, չէր կարող չձեռնարկել և չուզենալ մեռնել։ Բայց դու և քեզ հետ միաբանված մարդիկ, մահն արհամարհելով, քաջի նման ձեռնարկեցիք այդ գործը. ձեր սպանվածների արյունը աստվածները պահանջելու են ամբարտավան Պերոզից, իսկ ապրել ցանկացողներդ, որ այժմ կենդանի եք, անպարտ եք և անմեղ։

ՂԳ. Առավոտյան հավաքեցին բոլոր մարդկանց բազմությունը հրապարակում։ Նիխորը, երբ ինքը առանձին էր, հրամայեց իր սենյակը բերել Վահան Մամիկոնյանին։ Այդ ժամանակ, միայնակ լինելով, նա շատ ժամեր խոսեց Վահանի հետ՝ աշխարհի կարևոր գործերի և իշխանների հոգացողության մասին։ Նրանք երկուսով միասին եկան ատյան։ Նիխորը հրամայեց Վահան Մամիկոնյանի հետ եկած բոլոր նախարարներին և ռամիկներին ներս դալ իր մոտ։ Նա կանչեց նաև իր պարսիկ ավագանուն։

Այդ ժամանակ Վահան Մամիկոնյանը երկրորդեց ասյանի մեջ իր մի այլ անգամ Նիխորին ասած խոսքերը. «Ամեն մի մարդ իր խնդրի և օգտի համար է գործում։ Այստեղ գտնված նախարարներդ, ազատներդ, ոստանիկներդ և ձիավոր զորքի զինվորականներդ հասկացող եք և այժմ կարող եք և գիտեք արժանին տալ։ Ես և ինձ հետ եղած ուխտապահ նախարարները, ինչ որ խնդրեցինք քեզանից պատգամավորների միջոցով և նամակներով, որոնց մասին երեկ և այսօր քեզ հետ դեմ հանդիման խոսեցի, և դու, Արյաց թագավորի և պալատի բոլոր մեծամեծների հրամանով, խոստացար տալ մեզ դրով ու կնիքով. առանց դրա անհնար է մեզ ապրել ու ծառայել ձեզ։ Քրիստոնեության հավատի հաստատությունը, մոգության և ատրուշանների Հայոց երկրից վերացումը, մեր կամքի համաձայն եկեղեցու պայծառությունն ու պաշտոնը, որ հարկավոր է մեզ և պետքական, թագավորի կնիքով հաստատիր մեզ համար, և նամակի մեջ ուրիշ ինչ որ գրված է, ամենը գիտես, հարկավոր չէ շատախոսել քո առաջ։ Բայց իշխանության, պատվի և փառավորության համար, նայելով ամեն մեկի աշխատությանը, առանց հետին մտքի, տվեք և մի՛ զրկեք արժանավորին»։

ՂԴ. Նիխորը լսում էր նրա բոլոր ասածները սիրով և հաճությամբ հանձն առնում կատարելու։ Նա խնդրեց Վահանից Հայոց սեպհական արյուձին ուղարկել Պարսկաստան. «Կազմակերպիր,— ասում է,— Պարսկաստան ուղարկիր այրուձին, վասնզի Պերոզի որդի Զարեհն ընդդիմանալով Արյաց գործերին՝ դեռ զորք է կազմակերպում իր և իրեն համակիր անձանց կորստի համար, դու շատպիր ուղարկել Հայոց այրուձին արքունիք հասնելուցդ առաջ. քո արած գործը մեծ ծառայություն կհամարվի թագավորի և բոլոր արյաց համար»։

Վահան Մամիկոնյանը կազմակերպելով Հայոց այրուձին, ուղարկեց Պարսկաստան, հանձնելով այդ գունդը Վրեն Վանանդացուն։ Նրա հետ ուղարկեց նաև նահատակված իր Վասակ եղբոր որդի Գրիգորին։ Նրանք շուտով հասան թագավորական պալատ և ուղարկվեցին պատերազմի գործը կազմակերպելու։

Կռվում, երբ երկու զորքերը իրար բախվեցին, Զարեհի զորքերը պարտվեցին։ Ապնվական Գրիգոր Մամիկոնյանը, հոր նմանությամբ, այնտեղ մեծ քաջություն գործեց, որը և հայտնի դարձավ զորավարին և ամբողջ զորքին։ Նրա հռչակված քաջության համբավը հասավ մինչև իսկ Վաղարշ թագավորին։ Վրեն Վանանդացի սեպուհը ևս աչքի ընկավ իր քաջություններով։ Իսկ Զարեհը փախավ և ամրացավ լեռնոտ մի վայրում։ Սակայն նրան ձերբակալեցին, բերին արքունի ատյան և հենց այնտեղ անխնա գլխատեցին անասունի նման։

ՂԵ. Շուտով Վահան Մամիկոնյանը ստիպված, հավաքելով Հայոց այրուձին, ինքն իր ուխտակից նախարարների հետ, վեր կացավ գնաց Վաղարշ թագավորի մոտ։ Թագավորը և Արյաց բոլոր մեծամեծները, երբ լսեցին Վահանի Պարսկաստան գալը, շտապ ընդունելության ժամ նշանակեցին։ Եվ նա ներկայացավ թագավորին ու Արյաց բոլոր մեծամեծներին։ Վաղարշ թագավորը, նկատի ունենալով Վահան Մամիկոնյանի ճանապարհորդության ժամանակ կրած հոգնածությունը, հետաքրքրվեց միայն նրա առողջությամբ և ուրախացավ։ Այդ օրը նրանից ավելի բան չհարցրեց։ Հաջորդ օրը առավոտյան հավաքվեցին արքունի պալատի մեծամեծները և Արյաց բոլոր մյուս բազմությունը. թագավորի մեծ բնակարանը լցվեց բազում մարդկանցով։

ՂԶ. Թագավորն ու Արյաց բոլոր մեծամեծները հանձնաբարեցին Վահան Մամիկոնյանին նստել նախարարության գահի վրա՝ տալով նրան իր նախնյաց օրինական իրավունքը և Հայոց աշխարհի սպարապետությունը[28]։ Նույն ժամին մյուս ուխտապահ Հայոց նախարարներին ևս, որոնք Հայոց սպարապետի և Մամիկոնյան իշխանի հետ միաբանության մեջ էին, շնորհավորեցին ամեն մեկին՝ ըստ պատշաճ արժանավորության։ Վաղարշ թագավորն ու բոլոր մեծամեծները Վահան Մամիկոնյանին և նրա մարդկանց ընդունեցին սիրով, արժանավայել պատվով և, ապա հրաժեշտ տալով, խաղաղությամբ ճանապարհ դրին Հայոց աշխարհ։

ՂԹ. Վաղարշ թագավորը, արքունիքի և Արյաց բոլոր մեծամեծների հավանությամբ, հրամայեց հրովարտակ ուղարկել Հայաստան և Հայոց զորավար Վահան Մամիկոնյանին Հայոց աշխարհի մարզպան կարգել[29]։ Մարզպանության հրովարտակը բերին հանձնեցին Հայոց զորավար Վահան Մամիկոնյանին և, հղոր Աստծու ձեռքով, նրան Հայոց աշխարհի մարզպան նշանակեցին ու հաստատեցին։

Մամիկոնեից տեր Հայոց զորավար ու մարզպան Վահանը դեսպանից ընդունելով մարզպանության հրովարտակը... չհամարձակվեց թագավորին ընդդիմանալ ու նրա հրամանին չհնազանդվել։ Վերցնելով հրովարտակը, շուտով պահանջեց անդրվար (ջրիններով լծված սայլակառք— Ա. Ա.)՝ սուրբ եկեղեցի գնալու համար։ Քաղաքում գտնված մարդիկ այս լսելով, բոլորը՝ նախարարներն ու ազատները, ազնվականներն ու ռամիկները, այր և կին, ծեր և տղա, առագաստի հարսներն անգամ, առժամանակ մոռանալով նույնիսկ հարսնության ամոթը, խռնված՝ եկեղեցի գնացին։ Եկեղեցում բոլորին տեղ չլինելու պատճառով, մարդիկ լցվեցին դրսի սրահները, փողոցները և չորս կողմի ազատ տեղերը։ Աստվածասեր բարեսերների ու բարեմիտների համար այդ օրը անհագ խնդություն ու անվերջանալի ուրախության պահ եղավ, իսկ չարամիտների ու խարդախների համար՝ մեծ սուգ ու անմխիթար տրտմություն։

1. Աշուշան Քարթլիի բդեշխն էր, որը 449 թ. հայ նախարարների հետ Տիզբոն էր կանչվել որպես ազատագրական շարժման ղեկավարներից մեկը և պատանդ պահվել։ 451 թ. Ավարայրի ճակատամարտից հետո, երբ պարսկական արքունիքը հարկադրված էր եղել զիջումների դիմել, պատանդությունից ազատվել էր նաև Աշուշան։

2. Պարսկաստանի Պերոզ թագավորը գահակալել է 459—484 թվականներին։

3. Անուշվոամբ Արծրունյաց տան դուստրն էր, որն ամուսնացել էր վրաց Աշուշա բդեշխի հետ։ Նրա քույրն էր Զվիկը՝ Համայակ Մամիկոնյանի կինը, որի երեք որդիները՝ Վահանը, Վասակը և Արտաշեսը պատանդ էին պահվել. ազատվելուց հետո, իրենց մոր հետ միասին ապրում էին Աշուշա բդեշխի տանը։ Վահան Մամիկոնյանը դաստիարակվել էր իր մոր և մորաքրոջ հսկողության ներքո՝ Աշուշայի տանը։

4. Վախթանգ Գորգասար— Քարթլիի թագավորը 446—499 թվականներին։

5. Զարմիհր Հազարավուխտը պարսկական գործող զորքերի հրամանատարն է եղել Ազվանից աշխարհում։

6. Արտվազդ Հոդմանդյանը Հայաստանի մարզպանն է եղել V դարի 80-ական թվականներին։

7. Ազատամրությունը, ըստ Փարպեցու տեղեկության, տեղի է ունեցել Պերոզի գահակալության 25-րդ տարում։ Հայտնի է, որ Պերոզը գահակալել է 459 թվականին, հետևապես, ազատամրությունը, պետք է տեղի ունեցած լիներ 484 թվականին։ Սակայն որոշ իրադարձություններից երևում է, որ այն բռնկվել է 481 թ. աշնանը։

8. Կապրիճ կամ Կապրյաց, ինչպես և Կատշաց աշխարհներ— գտնվել են Պարսկաստանի հյուսիսային մասում, Ատրպատականի մոտ։

9. Տայք— պատմական Հայաստանի 15 աշխարհներից մեկը։

10. Վարազկերտ և Կովակ գյուղերը գտնվել են Նախճավան (Նախիջևան) գավառի արևմտյան մասում՝ Արաքսի ափին։

11. Ակոռի գյուղը գտնվել է Մասյացոտն գավառում՝ Մասիս լեռան փեշերին, հետագայում կործանվել է երկրաշարժից։

12. Ակոռիի ճակատամարտը տեղի է ունեցել 481 թ. աշնանը։

13. Փուշտիպան սպարը եղել է Թագավորի թիկնապահ զորքերի հրամանատարը։

14. Վիճ Խոյան և Աուռվշնասպ Տապյան— պարսից բանակի զորահրամանատարների անուններն են։

15. Ներսեհապատ գյուղը գտնվել է Արտազ գավառում՝ ոչ հեռու Ավարայրից, այդտեղ Վահանի հորեղբայրը 31 տարի առաջ ճակատամարտ էր տվել պարսիկներին։

16. Ներսեհապատի ճակատամարտը տեղի է ունեցել 482 թ. գարնանը։ Ըստ Փարպեցու տեղեկության, հայերը պարսից զորքերի հարձակման մասին տեղեկություններ են ստացել զատիկի ժամանակ։ Այդ տարի զատիկը եղել է 482 թ. ապրիլի 25-ին, հետևապես, Ներսեհապատի ճակատամարտը դրանից մի քանի օր հետո պիտի տեղի ունեցած լինի։

17. Վարշակի ջերմուկ— գտնվում է Շադկոտն գավառում, ներկայիս Դիադինի հուշակավոր տաք աղբյուրներն են՝ Արածանի գետի ակունքների մոտ։

18. Ճարմանայի դաշտը գտնվում է Վրաստանում, Կուր գետի աջ ափին։

19. Մհհրանը Վրաստանում գտնվող պարսկական զորքերի հրամանատարն է եղել։

20. Ճարմանայի ճակատամարտը տեղի է ունեցել 483 թ. գարնանը։

21. Դու գյուղը գտնվել է Բասեն գավառում։

22. Ոքաղը Տայոց աշխարհի գավառներից է, ուր և գտնվել են Գյուդիկ և Վարդաշեն գյուղերը։

23. Հեփթաղներ— հոնական ցեղախումբ, որոշ աղբյուրներում հիշվում են «սպիտակ հոներ» անունով։

24. Արծաթի կամ Արծաթաղբյուրի կոչվող Աղբերաց դաշտը գտնվում է Բասենի հարավ-արևմուտքում, Կարինի հյուսիսային կողմում։

25. Վաղարշ (Բալաշ) թագավորը Պարսկաստանում գահակալել է Պերոզից հետո՝ 484—488 թվականներին։

26. Նիխոր Վշնասպդատ— պարսկական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա. նա է Հեր գավառի Նվարսակ գյուղում բանակցություններ վարել Վահան Մամիկոնյանի հետ։

27. Նվարսակ— Հեր գավառի պարսպապատված նշանավոր գյուղերից է, գտնվում է ներկայիս Կոտուր գետի ափին։

28. Վահան Մամիկոնյանը պարսկական արքունիքի կողմից Հայոց սպարապետ է նշանակվել 485 թ. գարնանը։

29. Վահան Մամիկոնյանը մարզպանության պաշտոնում է նշանակվել 485 թ. աշնանը։

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԱՇՏԻՇԱՏԻ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշտիշատի ժողովը տեղի է ունեցել 354 թվականին: Ժողովի որոշումները, վեց հիմնական կանոնների ձևով, զետեղված են Փավստոսի պատմության մեջ՝ առանձին գլխի տակ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ IV, գլ. Դ. (Ներսես Պարթև կաթողիկոսը) գնաց հասավ Տարոն գավառի կողմերը և իր մոտ հավաքեց Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին: Հավաքվեցին Աշտիշատ[1] գյուղում, որտեղ առաջին անգամ եկեղեցի էր շինված, որովհետև նա էր մայր եկեղեցին և նախնյաց եկեղեցական ժողովների ժողովատեղը: Բոլորը հոժարությամբ ժողովի եկան և օգտակար խորհրդակցություն ունեցան՝ աշխարհական կարգերը բարեկարգելու, հավատի ընդհանուր կանոնները սահմանելու: (Այս ժողովում) կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին և Հայոց աշխարհի ամբողջ ժողովուրդը դարձրին իբրև վանականների մի ընդհանուր միաբանություն, թուլլ չտալով ամուսնություն: Ներսես եպիսկոպոսապետն ամենքի վրա տարածում էր առաքյալներից սահմանված կանոնները, բոլորին խրատ էր տալիս, հորդորում էր, առաջնորդում էր դեպի բարեգործություն և նախանձախնդիր էր լինում. նաև ինքն էր անում, ապա ուրիշներին նույնը ուսուցանում: Նույնը հրամայում էր կատարել Հայոց ամբողջ աշխարհում, գավառներում, կողմերում, անկյուններում: Որոնում գտնում էին պատշաճ տեղեր, գտնում էին՝ նրանց մեջ աղքատանոցներ շինելու համար, որտեղ պետք է հավաքեին ախտավորներին, բորոտներին, հաշմանդամներին, ցավագարներին: Որոշեցին շինել ուրկանոցներ[2], սահմանել նրանց սնունդ և դարման, իսկ աղքատների համար՝ պատսպարան: Որովհետև Ներսես մեծ եպիսկոպոսապետն այսպես հրամայեց, և սուրբ ժողովը հավանություն տվեց, որ այսպիսի մարդիկ նստած մնան իրենց կացարաններում, դուրս չգան տառապանքով մուրալու, և բոլորովին իրենց դռներից ոտք դուրս չդնեն, այլ որ ամեն մարդ պարտական լինի նրանց (խնամելու): Կարևոր է, ասում էին, որ աշխարհի կարգը չխանգարվի, այլ պետք է, որ բոլորն անխտիր ողորմած լինեն և զգուշությամբ տանեն նրանց կերակուրը ու նրանց կարիքները հոգան: Այսպես էլ շինեց, կազմակերպեց և հաստատեց:

Ուրիշ շատ տեսակ ողորմածություններ էլ սովորեցրեց աշխարհին և շատ հայրենական կարգեր ու կանոններ հաստատեց: Նա խրատ էր տալիս, որ միշտ պետք է նկատի ունենալ հարության հույսը, չկարծել, թե մարդու մահն անդառնալի է, թե նորից կենդանանալու հույս չկա. ուստի և պետք չէ մեռածի վրա անհուսությամբ լացուկոծ անել, անչափ ու անկարգ սուգ անել, այլ հույսով նկատի ունենալ Տիրոջ (երկրորդ) գալուստը և հավատյամբ նորոգվելը, ուրեմն սպասել Տիրոջ գալստյանը, երբ ամեն մարդ հավիտենական հատուցում կստանա ըստ իր գործերի: Նաև խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, որ ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարքեն, հեռու մնան աղգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից: Եվ կանոն էր դնում՝ մեռած անասուն և արյուն չուտել, ամսականի ժամանակ կնոջ չմերձենալ, որովհետև դրանք պիղծ են Տիրոջ առաջ:

(Նա դատապարտում էր) նենգությունը, մատնությունը, ագահությունը, ուրիշին նախանձելը, ցանկասիրությունը, զրկողությունը, արվամոլությունը, իգանալը, բամբասանքը, մոլի հարբեցողությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, պոռնկությունը, թշնամուց վրեժխնդրությունը, ստախոսությունը, թշնամությունը, անողորմածությունը, սուտ երդումը, արյունահեղ սպանությունը,

պիղծ անասնամոլությունը, (երկրորդ) հարության հույս չունենալը, անհուսությամբ մեռելներին սգալը— այս բոլորը համարում էր միանման կորստյան խորխորատ։ Եվ ամբողջ երկրին պատվիրում էր նա, հենց իրեն՝ թագավորին, մեծամեծներին և առհասարակ նրանց, որոնք ուրիշի վրա իշխանություն ունեին, որ գութ ունենան իրենց ծառաների, ստորադրյալների և աշակերտների նկատմամբ, սիրեն նրանց իբրև իրենց հարազատների, ապօրինի կերպով ու չափազանց հարկերով նրանց չնեղեն, հիշեցնելով, որ նրանց համար էլ աստված կա երկնքում։ Այսպես էլ ծառաներին պատվիրում էր հավատարիմ և հնազանդ լինել իրենց տերերին, հիշեցնելով նրանց, որ դրա համար վարձք կստանան Տիրոջից։

Եվ բոլոր եկեղեցիները նրա օրերում խաղաղություն ու նորոգություն գտան. ամբողջ Մեծ Հայքում եպիսկոպոսների պատիվը մեծացավ, եկեղեցիների կարգերը ծաղկեցին, լիովին պայծառացան, ամենայն վայելչությամբ հաստատվեցին կաթողիկե եկեղեցիների կարգերը, սուրբ պաշտամունքի կարգերը աճեցին, պաշտոնյաներն ավելացան։ Եկեղեցու կարգերը շատացրեց շեն ու անշեն տեղերում, նույնպես կրոնավորների թիվը բազմացրեց։

Ջանադան տեղերում, Հայաստանի բոլոր գավառներում հիմնեց դպրոցներ՝ հունարեն և ասորերեն լեզուներով։ Շատ նեղվածների փրկում էր, գերության մեջ տառապողներին գերությունից ազատում էր՝ նմանց քարոզելով Քրիստոսի ահը, և մյուսներին փրկանք տալով՝ գնում ազատում էր ու իրենց տեղերը դարձնում։ Այրիներին, որբերին, չքավորներին հանդիսա ու անունդ էր ապահովում, աղքատները միշտ նրանով ուրախանում էին. իր սեղանատունն ու սեղանը միշտ բաց էին աղքատների, օտարականների ու հյուրերի համար։ Եվ այնքան մեծ էր նրա աղքատասիրությունը, որ թեպետ բոլոր գավառներում աղքատանոցներ շինեց ու նրանց համար դարման նշանակեց, այնպես որ իրենց անկողիններից վեր կենալուց ավելի նեղություն չքաշեն, բայց և այնպես առանց նրանց սեղան չէին նստում, այլ կաղերը, կույրերը, հաշմանդամները, վերքոտները, խուլերը, տնանկները, կարոտյալները նրա հետ սեղան էին նստում ու կերակրվում։ Եվ ինքը իր ձեռքերով բոլորին լվանում էր, օծում, (վերքերը) կապում, իր ձեռքով նրանց կերակուր էր բաժանում, իր բոլոր ունեցածը նրանց

վրա էր ծախսում. բոլոր օտարականները նրա հովանու տակ դադար առած հանգստանում էին։

1. Աշտիշատը հայ մատենագրության մեջ հիշվում է նաև Հաշտիշատ ձևով։ Գտնվում է Տարոն գավառում։ Հնթանոսական շրջանում եղել է կրոնական գլխավոր կենտրոնը. այստեղ են գտնվել Վահագնի, Անահիտի և Աստղիկի մեհյանները։

2. Ուրկանոցները հասարակական բնույթի հիմնարկներ էին, ուր հավաքում, պահում էին ուրուկներին՝ բորոտներին։

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՄՇԱԿՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Շահապիվանի[1] ժողովը տեղի է ունեցել 444 կամ 445 թվականներին։ Կանոններում ժամանակակից իշխանավորներից հիշվում են Հայոց մարզպան Վասակ Սյունին, հազարապետ Վահան Ամատունին և մադիազ Վրեն Խորխոռունին։

Ինչպես այս, այնպես էլ այլ եկեղեցական ժողովների որոշումներ և կանոնական ցուցուրիվ նյութերը VIII դարի սկզբներին, ժամանակի հայոց եկեղեցական ու բաղաքական գործիչ Հովհան Օձնեցին հավաքելով՝ կազմել է «Կանոնագիրք Հայոցի» առաջին ժողովածուն։ Հետագայում Կանոնագիրք են մուծվում նաև այլ կանոնախմբեր ևս։

Կանոնագրքում զետեղվել են եկեղեցական այն որոշումները կամ գրությունները, որոնք շոշափել են ֆեոդալական հասարակական խավերի փոխհարաբերությունները, անձնական վարվեցողության ձևերը, ժառանգության, բաղաքացիական, բրեական իրավունքի ու իրավարաեական այլ և այլ հարցեր։ Կանոնագրքի հիմնական առանցքն են կազմում ինչպես ազգային՝ իսկուսություն, այնպես էլ օտար՝ բարգմանական կանոնական որոշումներն ու փաստաթղթերը, տիեզերական, տեղական ու հայկական եկեղեցական ժողովների որոշումները, հայ և հույն եկեղեցական նշանավոր գործիչների գրությունները և այլն։

«Կանոնագիրք Հայոցի» գիտական համահավաք բնագիրը հրատարակել է Վ. Հակոբյանը (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, Երևան, 1964, հատ. Բ, Երևան, 1971)։ Կանոնագրից ստորև բերված բոլոր հատվածները, որոնք աշխարհաբար

է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը, տրվում են ըստ այս հրատարակության:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 450, 461—466

14. Եպիսկոպոսը կամ երեցը, սարկավագը կամ հոգևոր պաշտոնյաներից ու միաբաններից ով ուզում է լինի, իրավունք չունի տանտիկին պահելու, ինչպես մեծնեականների սովորությունն է: Իսկ եթե պահի, և այդ վկայությամբ հաստատվի, այդ անձը, ինչպիսի կոչում էլ ուզում է ունենա, պիտի հեռացվի իր պաշտոնից իբրև ամբարիշտ և մաքսավոր, քանի որ սուրբ եկեղեցին և տերունական սուրբ խորհուրդն անարատներին է ընդունում, արատավորներն անարատների միջոցով են փրկվում:

19. Եթե մեկը մեծնեությա[2] մեջ գտնվի՝ լինի դա երեց, սարկավագ կամ աբեղաներից, պիտի հոգևոր կոչումից կարգալույծ լինի, աղվեսադրոշմ պիտի դրվի ճակատին և տարվի ճգնավորների մոտ ապաշխարության: Իսկ եթե կրկին անգամ նա գտնվի մեծնեության մեջ, նրա երկու ջլերը պիտի կտրել և ուրկանոց տանել, քանի որ «Մարդը պատվի մեջ էր և չհասկացավ»: Այդ նույն պատիժը վերաբերում է նաև աբեղաներին: Իսկ եթե տղամարդն իր կնոջ և որդիներով գտնվի այդ աղանդի մեջ, տղամարդկանց, կանանց և դիտակցության հասած մանուկների ջլերը պետք է կտրել, աղվեսադրոշմ դնել ճակատներին և տանել զոդենոց՝ ապաշխարության համար: Իսկ այն մանուկները, որոնք դեռ չեն գիտակցում պղծությունը, նրանք պետք է վերցվեն և տրվեն Աստծու սուրբ պաշտոնյաների ձեռքը, որպեսզի կերակրեն և սովորեցնեն նրանց ճշմարիտ հավատը և Տիրոջ երկյուղը:

20. Եթե որևէ տեղ ժողովրդի մեջ գտնվի չարագործ, երեցներն իմանան ու չհայտնեն եպիսկոպոսին, հետո երբ քննությամբ պարզվի որ, իրոք, այդպես է եղել՝ երեցը օրեր ու ամիսներ առաջ իմացել է այդ մասին և չի բողոքել եպիսկոպոսին, երեցը ենթակա է այն պատժին, որը սահմանված է մեծնեության համար: Նման երեցը չպիտի երեցություն անի իր ողջ կյանքում, որպեսզի նրան փոխարինող երեցը կամ վանականը տեսնելով այդ, ճշմարտությամբ հովվի ժողովրդին:

Իսկ եթե երեցը իմացել է և հայտնել է եպիսկոպոսին ու վկա-

յությամբ պարզվի, որ եպիսկոպոսը կաշառք վերցնելով՝ ծածկել է կամ աշառու է գտնվել, և վկայությամբ հաստատվի, որ, իրոք, եպիսկոպոսը ականջի ետև է ձգել երեցի բողոքը, արհամարհել է Աստծու պատվիրանը և կորստյան մատնվածի խնդրով չի զբաղվել, աստվածային օրենքներին նախանձախնդիր և վրեժխնդիր չի գտնվել, նա պաշտոնանկ պիտի լինի շնացողներին թաքցնելու համար, իսկ այդ դեպքում երեցն անպարտ է:

Իսկ եթե եպիսկոպոսը չանացել է վրեժխնդիր լինել, և եպիսկոպոսի տարած այդ աշխատանքի մասին վկայեն երեցներն ու այլ մարդիկ, և երբ հաստատվի որ նա, իրոք, չարագործին հայտնաբերել և հայտնել է իշխանությանը, իսկ տվյալ երկրամասի իշխանը ծածկել է շնացողներին, թաքցրել է կորստաբեր արծաթի կամ աշառության և կամ այլ ծառայության պատճառով, չի սիրել Քրիստոսին, չի կատարել նրա պատվիրանները և Տիրոջ օրենքները, մարդկանց հոգու և մարմնի նկատմամբ վրեժխնդիր չի գտնվել, այդպիսին թող նզովյալ լինի, եկեղեցուց վտարվի, մինչև որ պղծագործին տան եպիսկոպոսի ձեռքը:

Եթե պղծությունները կատարվի նախարարի տանը, և հանցագործ լինի նրա կինը, կամ նրա դուստրը, կամ որդին և կամ անձամբ ինքը, և եթե նա ոչ ընտանիքն է տալիս եպիսկոպոսի ձեռքը և ոչ էլ ինքն է վերադառնում սրբության՝ ցանկանալով բանի ապաստան տալ չարագործին, թող այդպիսին ողջ տնով, ծնունդով և կյանքով նզովյալ լինի, չհամարձակվի ժողովրդի մեջ դուրս գալ, թող ընկերները ու բոլոր մարդիկ նրա հետ հաղորդակցության մեջ չմտնեն այնքան ժամանակ, որքան ժամանակ որ նա գտնվում է պղծության մեջ, մինչև որ ետ կդառնա սրբության: Իսկ եթե ինքը չէ պղծության մեջ, այլ ընտանիքի անդամները կամ ծառաները, թող նրանց տա գլխավոր եպիսկոպոսի ձեռքը՝ կըշտամբանքի համար:

Իսկ եթե պղծությունը կատարվի ոստիկանի տանը, և այդ անողը լինի ինքը կամ ընտանիքի անդամը, ինչպես ասացինք, ընտանիքը թող պատժի ենթարկվի օրինական այն պատժով, որը սահմանեցինք: Իսկ եթե ինքը ևս իր ընտանիքով մեծնեության մեջ գտնվի, թող բռնեն պղծագործին և իր ընտանիքով բերեն հրապարակ՝ գլխավոր եպիսկոպոսի, մեծամեծ իշխանների ու ավագ դատավորների առջև և համատեղ վրեժխնդիր լինեն՝ ըստ

աստվածային օրինաց, որ ուրիշները, տեսնելով այդ, սրբությամբ և երկյուղով պաշտեն բոլորիս Արարչին, որպեսզի հաստատուն ու կատարյալ լինի աստվածապաշտության կարգը, որպեսզի հետամուտ լինեն և հարգեն սրբերին, որպեսզի խոսքով և գործով լինենք Աստծու ճշմարիտ ծառաներ և մեր բարի հատուցումով բարերար Աստծուց ակնկալենք և ժառանգենք անվախճան պարգևները, հավիտյանս հավիտենից, ամեն։

1. Շահապիվան— ավան Բագրևանդ գավառում, եղել է «բանակատեղի թագաւորացն Հայոց»։

2. Մծղնեությունը քրիստոնեության վաղ շրջանում աղանդավորական քողի տակ հանդես եկած սոցիալական շարժումներից է, որի դեմ պայքարել է պաշտոնական եկեղեցին։

ՎԱՉԱԳԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ

Աղվանից թագավոր Վաչագանը պարսից Պերոզ (459—484) և Վաղարշ (484—488) թագավորների ժամանակակիցն է: Նա հայտնի է Աղվանից կատարած մի շարք բարեփոխություններով: Ցանկանալով երկրում հաստատուն կարգ ու կանոն սահմանել, հրավիրել է ժողով և հաստատել իր անունով հայտնի կանոնախումբը, որը բաղկացած է 21 հոդվածներից: Կանոնախումբը զետեղված է Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ:

Մովսես Կաղանկատվացին (VII դ.) հայ պատմագրության ականավոր դեմքերից է: Ծնվել է Հայոց Արևելից կողմանց Ուտիք նահանգի Կաղանկատուք գյուղում: Գրել է մի երկասիրություն «Պատմութիւն Աղուանից աշխարհի» խորագրով: Մեծ չափով օգտվել է Խորենացուց և այլ հեղինակներից և հաղվագեպ կատարել նրանցից: Պատմության մեջ արժեքավոր տեղեկություններ կան իր ժամանակի կարևոր իրադարձությունների մասին: Որպես հրիստոնյա պատմագրող՝ զգալի տեղ է հատկացրել եկեղեցական հարցերին: Պատմությունը X դարում շարունակել է մի այլ հեղինակ՝ Մովսես Դասխուրանցին:

Կաղանկատվացու գրաբար բնագիրն առաջին անգամ հրատարակել է Կ. Շահնազարյանը՝ 1860 թ. Փարիզում: Աշխարհաբար է թարգմանել Վ. Առաքելյանը՝ «Պատմություն Աղվանից աշխարհի» վերնագրով, որը հրատարակվել է 1969 թ.՝ «Հայ մա-

տենագիրներ» մատենաշարով: Ստորև բերված հատվածները տրվում են ըստ այս հրատարակության:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Գիրք Ա, գլ. ԻԶ

Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում, որ կայացավ մարերի ամսի տասներեքին:

Ես Վաչագան՝ Աղվանից արքաս (ապա հիշվում են ժողովի մյուս մասնակիցները— Ա. Ա.)... Որոշեցինք հետևյալը.

Ա. Այն քահանաները, որոնք գյուղերում են լինում, տարեկան երկու անգամ երկրպագում են եպիսկոպոսին և հոգևոր կարգ ու կանոն են սովորում նրանից՝ ըստ Աստվածաշնչի. և ինչպես կարդն է, տարվա մեջ եպիսկոպոսին ընծա պետք է տարվի:

Բ. Երբ քահանա և սարկավագ են ձեռնադրում, չորս դրամ քահանային, իսկ երկու դրամ սարկավագին պետք է տան[1]:

Գ. Ազնվական կամ թագավորական ցեղին պատկանող որևէ մեկը կենդանության ժամանակ իր ձեռքով հոգու բաժին պետք է տա. ասենք՝ ձի թամբով ու սանձով և կամ ինչ հարստություն որ ունի, դրանից պետք է տա. եթե կենդանության օրոք չտա, ապա նրա մահից հետո ընտանիքն է պարտավոր տալ:

Դ. Քահանային ժողովրդի կողմից տալու կարգը այսպես է լինելու. ունևորը պետք է տա չորս գրիվ[2] ցորեն, վեց դրիվ գարի, տասնվեց փաս[3] բաղդու. իսկ նա, որ հացասակավ է, դրա կեսը պետք է տա. ինչ վերաբերում է գինուն, թող տա այնքան, որչափ կարող է: Վարուցանք և այդի չունեցողից չպետք է առնեն. իսկ նա, որ իր հոգու համար սրանցից ավելին կտա, բարիք կանի: Ինչպես Պողոսն է ասում. «Նա, որ առատությամբ է սերմանում, առատությամբ էլ կհնձի»: Իսկ նա, ով ոչխար ունի, պետք է տանից մի ոչխար տա, երեք գզաթ բուրդ ու մի գլուխ պանիր. ով ձիեր ունի տանը, պետք է տա մի քուռակ, իսկ խոշոր եղջերավոր անասուն ունեցողը՝ մի հորթ:

Ե. Աշխարհականներից ոչ ոք՝ ազնվական, շինական կամ մեկ ուրիշը, տարվա ընթացքում պատարագը բաց չպետք է թողնի,

այսինքն՝ մեռելների հիշատակը պետք է կատարի, ինչպես որ կարող է. իրենց վաստակից մեռելներին անմաս չպետք է թողնեն. մեռած մարդու համար մի ձի, եթե ձի կա, մի խոշոր եղջերավոր անասուն՝ արջառ, եթե կա. մեռելի տերը եկեղեցուն պետք է տա, դրանցից որ մեկը կամենա։

Զ. Եթե վանահերեցը կամ որևէ վանական վանքին վնաս է հասցնում (գողանում է) և վրան հաստատվում է, պետք է անարգեն ու տեղից հեռացնեն, իսկ գողացածը գրավեն եկեղեցու համար։

է. Եթե մի վանքի քահանաները շատ են, իսկ ժողովուրդը՝ քիչ, և մի այլ վանքի ժողովուրդն է շատ, բայց քահանաները քիչ են, շատ ժողովուրդ ունեցող վանքից ժողովրդի մի մասը վերցնում և հանձնում են այլ վանքին, որի քահանաներն են շատ։

Ը. Եթե քրիստոնյա մարդը կովում և արյուն է թափում. ներկայացնում են եպիսկոպոսին ու ըստ օրենքների պատժում։

Թ. Այն քահանան, որ հովվում է մեծ գյուղի վրա, մի այլ գյուղ ևս չպետք է պահի. իսկ եթե երկու գյուղեր միմյանց մոտ են, կարող է հովվել մի քահանա և առհասարակ քահանան սպասարկում է այնքան, որքան կարողանում է կառավարել։

Ժ. Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք է առնի և եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա։

ԺԱ. Ով առանց պատճառի կնոջը բաց է թողնում ու առանց պսակի կին է առնում, ով անօրեն ու մարդասպան է և կամ կախարդահարցությամբ է զբաղվում, նրան կապկպով թագավորի մոտ պետք է տանել ու չարաչար կերպով սպանել։

ԺԲ. Նրանց, որոնք լացուկոծում են տան գլխավորին, գուսանների հետ պետք է կապել, տանել թագավորի դուռը և պատժել. իսկ հարազատները չպետք է համարձակվեն նրանց հետևից լաց լինել։

ԺԳ. Նրան, որ գնչ է ուտում, և նրան, որ քառասունքին միս է ուտում, կիրակի օրը աշխատում է ու եկեղեցի չի գնում. քահանան ժողովրդի հետ միացած, պատժում է։

ԺԴ. Նա, որ չորեքշաբթի կամ ուրբաթ ազուհացից առաջ միս է ուտում, մի շաբաթ պաս պետք է պահի. իսկ եթե մեկը գա ու քահանայի մոտ այդ մասին վկայություն տա, թե պասը չի պահել, գյուղի տանուտերը նրանից պետք է մի եղ առնի ու տա քահանային։

ԺԵ. Եթե ազնվականները տասանորդ են տալիս, պետք է մի մասը բուն գլխավոր եկեղեցուն տան, մյուս մասը՝ իրենց եկեղեցուն։

ԺԶ. Կիրակի օրը տերն ու ծառան պետք է գնան մայր եկեղեցի, աղոթքներ ու հիշատակ կատարեն եկեղեցում, իսկ կրոնավորը հոգեբաժինը եկեղեցուն պետք է տա։

Ի. Ազնվականները առանց եպիսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել՝ չնայած որ իրենց դաստակերտն է. եպիսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի։ Եթե ազնվականից կամ ժողովրդից քահանային վտանգ է սպառնում, քահանան էլ իրավունք չունի հեռանալու առանց եպիսկոպոսի թույլտվության։

1. Այստեղ, թվում է, թե բնագրային ազավաղում կա, որովհետև այլ կանոններից հայտնի է, որ քահանաները կամ սարկավագները ձեռնադրվելիս իրենք ևն դրամ տվել ձեռնադրողին։

2. Դրիվ— ծանրության չափ է, ունի մոտ տաս կիլոգրամ քաշ։

3. Փաս— հեղուկի չափ է, որի տարողությունը ճշտությամբ հայտնի չէ։

ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՑՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՉՀԱՆԱՁԱՆՎՈՂ ԾԱՌԱՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ

Աթանաս Աղեքսանդրիացին (295—373) վաղ բրիստոնեական աշխի ընկնող եկեղեցական գործիչներից է, եղել է Աղեքսանդրիայի նոգևոր առաջնորդը։ Հանդես է եկել արիոսականների դեմ և պաշտպանել Նիկիայի տիեզերական ժողովի կանոնները։ Նրան վերագրվող կանոնախումբը բաղկացած է 88 հոդվածներից։ Հայերեն է թարգմանվել V դարում։

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 303

30. Հարց. Եթե մեկի ծառան անհնազանդ դտնվի և նրա տերը բազմաթիվ անգամ նրա վրա ղայրանալով խփի և սպանի, ինչպիսի՞ պատասխանատվություն պիտի սահմանել, նրան ի՞նչ պատիժ պիտի տանք։

Պատասխան. Սպանողը պիտի պատասխարի։

Հարց. Եթե որևէ մեկը գողության ժամանակ խփի և սպանի գողին, ինչպե՞ս վարվել սպանողի հետ։

Պատասխան. Սպանողը պիտի ապաշխարի։

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 319—320

71. Հարց. Եթե քահանայի ծառաներն ապստամբվում են և հեռանում նրա տանից, և տերը այլ ծառաներ է ուղարկում նրանց ետևից՝ ետ բերելու իրենց տիրոջ մոտ, սակայն հասնելով նրանց, սպանության է լինում, քահանան պատասխանատո՞ւ է արդյոք դրա համար, նա քահանայության պաշտոնը անխղճմտանք կարո՞ղ է շարունակել, թե ոչ։

Պատասխան. Եթե քահանան պատվիրեց, թե՝ «Վնաս չտաք, այլ քաղցրությամբ բռնեք և բերեք», և նրանք, հասնելով նրանց, սպանել են, քահանան անպարտ է, իսկ եթե խստությամբ ուղարկեց նրանց ետևից՝ նրանց մահվանը մեղսակից է և իրավունք չունի քահանայություն անել։

ԼԱՎՈԴԻԿԻԱՅԻ ԿԱՆՈՆԸ ՎԱՇԱՒՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լավոդիկիայի կաւոնները՝ բաղկացած 55 հոդվածներից, ըստ տեղեկությունների, կազմվել են 314 թվին:

Հայերեն է թարգմանվել V դարում:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 229

5. Վայել չէ քահանային փող տալ և վաշխ ու տոկոս պահանջել և ոչ էլ ամենևին՝ տոկոսների փորը մասն անգամ վերցնել։

ԿԵՍԱՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Կեսարիայի կաւոնները՝ բաղկացած 55 հոդվածներից, ընդունվել են Կապադովկիայի Կեսարիա քաղաքում 314 թվին: Հայերեն են թարգմանվել V դարում:

10. Գողերը, ավազակները, մարդասպանները և նրանք, որոնք մահաբեր դեղերով անողորմ խողխողում են մարդկանց, նրանք, որոնք կրակով այրում, հրդեհում են որոշ մարդկանց վաստակը և շենքը, մեծամեծ ոճիրներ են գործում, բազում հարվածներ, բազմաձև և բազմատեսակ չարիք են պատճառում մարդկանց։ Նրանք և՛ արդար մարդկանց արյունն են թափում, նրանք և՛ սրբություններ են կործանում, նրանք և՛ եկեղեցու պաշտոնյաներին են խողխողում, նրանք և՛ բարձրաձայն հայհոյանքներ են անում։ Օրենքը և նախնյաց կանոնները այսպիսիներին հրամայում են սպանել, իսկ ոմանց՝ խրատել։ Նրանք արժանի են մահվան, եթե չար ճանապարհից ետ չդառնան։

ԿՅՈՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՑՈՒ ԿԱՆՈՆԸ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կյուրեղ Աղեքսանդրիացին IV դարի վաղ բրիստոնեական եկեղեցական գործիչներից է: Նրան է վերագրվում ճինգ փոքրիկ հոդվածներից բաղկացած մի կանոնախումբ: Հայերեն է թարգմանվել V դարում:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Բ, էջ 59—60

3. Նրանք, ովքեր ամուսնացել են հեթանոսների հետ և Աստված ժամանակ է տալիս նրանց ապաշխարության, ամբողջ կյանքում պիտի ապաշխարեն արտասուքով և ողորմություն տալով։ Նրանք իրենց ողջ գույքը թող տան աղքատներին և տարեկան մեկ անգամ հաղորդվեն ըստ օրինաց։ Իսկ եթե չկա (ապաշխարության) նման միջոց, (մեղսակիցը) չի կարողանում ազատվել անօրինության կապանքներից, թող ծառաներ գնի և ազատություն տա, որքան կարող է շատ, որպեսզի հետին թոշակին կարողանա արժանի լինել։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՎԱՇԽԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գրիգոր Լուսավորչին է վերագրվում 30 կանոններից բաղկացած մի կանոնախումբ, որը, ըստ մատենագրական մի տեղեկության, հայերեն է թարգմանել Եզնիկ Կողբացին՝ Սահակ Պարթևի հանձնարարությամբ:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 245—248

3. Այն քահանան, որը արծաթի (այսինքն՝ արծաթի դրամ— Ա. Ա.) է վարձով տալիս, պիտի հեռացվի եկեղեցուց:

4. Նրանք, որոնք գնում են հեթանոսների տունը, ուտում-խմում են անխտիր, այդպիսինները երեք տարի դրսում պիտի ապաշխարեն, որից հետո միայն արժանի լինեն հաղորդության:

16. Նրանք, ովքեր գաղտնի գերեզման են բաց անում, պիտի ապաշխարեն 4 տարի դրսում և մեկ տարի ներսում:

17. Նրանք, ովքեր դիակ են կողոպտում, պիտի ապաշխարեն 15 տարի դրսում և մեկ տարի ներսում:

23. Եթե մեկը պոռնկության պատճառով թողնում է կնոջը, կարող է թողնել, միայն թե մեկ տարի պիտի ապաշխարի, որ փարատվի մեղքերից:

26. Եթե քահանաներից և աշխարհականներից մեկը կաշառք վերցնի, այդպիսինի վրա Թող Սիմեոն կախարդի անեծքը գա և կցորդ լինի մատնիչ Հուդային: Գենզի բորոտությամբ թող այրվեն կաշառառուները:

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ

Բարսեղ Կեսարացին IV դարի վաղ հրիստոնեական գործիչներից է (331—379), նրան է վերագրվում մի կանոնախումբ՝ բաղկացած 51 հոդվածներից: Մաշտոցյան շրջանի թարգմանություններից է:

97. Նրանց մասին, որոնք պատերազմում արյուն են թափում:

Եթե անօրեն թշնամին հարձակվում է երկրի վրա և այդ հայտնի է դառնում երկրի իշխանին, որը դուրս գալով թշնամու դեմ, կռվում է և սպանություն է տեղի ունենում (իր զինվորներից) մեկնումեկի ձեռքով, այդպիսին անպարտ է թափած արյան համար: Բայց երբ կռիվը վերջանում է (բնագրում՝ սուրը վերանում է— Ա. Ա.) և գերի ընկածը սրատման է ենթարկվում, նրա արյունը սպանողի վրա է ընկնում, քանի որ նա անտեղի արյուն թափեց:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Բ, էջ 161—162

223. Այն քահանան, որ ծածկում է որևէ չարիք՝ կաշառք վերցնելու կամ երկյուղի և կամ ամոթի պատճառով, Թող մինչև մահը Հուդայի մեղքերին բաժնեկից լինի:

ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՆԵՐՇԱՊՈՒՀ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՀՄԱՆԱԴ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՎԱՇԽԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ

«Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի» կանոնախմբի հեղինակներն են Ներսես Բագրեւանդցին և նրա ժամանակակից Մամիկոնյան տան եպիսկոպոս Ներշապուհը: Կանոնախումբը բաղկացած է 37 կանոններից:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 486, 489

21. Քահանաները պարտավոր են բոլորովին խուսափել դրամ վաշխ տալուց՝ հաշվի առնելով սուրբ գրքերում վաշխ տվողների մասին եղած անարգանքը: Անհրաժեշտ է փախչել հարբեցողությունից՝ հիշելով հարբեցողության մասին եղած սահմանումները:

32. Քահանաները չպետք է արբեցող լինեն, ոչ էլ հանգանակություն կատարող, չպետք է դրամով գնված արծաթագին աղախիններ վերցնեն և կամ բանադրված զարշելիներին տուն տա-

նեն, որն արգելվում է օրենքով։ Այն վանականները, որոնք գյուղերում են բնակվում, պետք է մեկուսացած լինեն, պահեն իրենց պահքով, աղոթքով և համեստ ապրուստով, որպես Քրիստոսի զինվոր՝ Աստծու տված բավական համարեն։

35. Կան ձիաբույծներ, վաճառականներ, վաշխառուներ, որոնք կրոնավորության փոխարեն, շահի են հետամուտ։ Այսուհետև պետք է դադարեն իրենց գործարքներից և ապաշխարեն իրենց գործած մեղքերը, ապա թե ոչ՝ իրենց ասածի համապատասխան պատիժներ կկրեն։

ԽՈՐԵՆԱՑԻՆ V ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. ԿԸ. Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց ապիտությամբ չարափառությունը։

Ողբում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ՝ բեմիդ բարեկարգությունից անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված[1]։ Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ անվելիս և ոչ էլ փարախի մեջ հավաքված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում։

Երանի՛ առաջին և երկրորդ փոփոխություններին[2], որովհետև եղավ մի ժամանակ, որ փեսան և խաչեղբայրը հեռացան, բայց դու, հարսդ, համբերեցիր, ողջախոհությամբ պահելով ամուսնությունդ, ինչպես մեկը մեզանից առաջ իմաստնաբար ասաց[3]։ Մյուս անգամ էլ, երբ մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու, հարսդ չապականվեցիր. թեպետ բռնի կերպով փեսան վտարվեց— երբ ընդվզող որդիները իրենց ծնողին անարգեցին, նման այն խորթերին, որոնք արժանապես անարգում են օտար հորը և եկվոր խորթ հորը,— բայց դու

այս անգամ էլ ամեն բանով լքված չմնացիր. ակնարկելով քո (փեսայի) դարձին, դու հովվակցի ձեռքով մանուկներիդ փայփայիցիր, ոչ ինչպես տեգերջ, այլ ինչպես նույն զավակների տեր երկրորդ հոր ձեռքով։ Իսկ այս երրորդ անգամ հեռանալիս՝ այլևս չկա դարձի ակնկալություն, որովհետև մարմնից բաժանվեց իր բնակերջ ու գործակցի հետ։

Նրանց համար լավ է Քրիստոսի հետ բնակվել, Աբրահամի գոգում հանգչել և հրեշտակների խմբերը տեսնել։ Բայց դու ես, որ այրիությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, և մենք ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից։ Որովհետև այնպես չէ (մեր վիճակը), ինչպես հնում այն (իսրայելացիների) ժողովուրդը, այլ մեր թշվառությունն ավելի է։ Որովհետև Մովսեսը վերացվում է, բայց Հեսուն չի հաջորդում, որ առաջնորդի դեպի Ավետյաց երկիրը։ Ռոբովամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց Նաբատի որդին, և աստծու մարդուն ոչ թե առյուծը ոչնչացրեց, այլ հիսուն տարիքը։ Եղիան համբարձվեց, բայց Եղիսեն չմնաց կրկնակի հոգով՝ Հեուեին օծելու, այլ դեռ Ազայելն էլ հրավիրվեց Իսրայելին կոտորելու։ Սեդեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբաբելը, որ տերությունը նորոգի։ Անտիոքոսը հարկադրում է թողնել հայրենի կրոնը, բայց Մադաթիան չի դիմադրում. պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում։ Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք, արհավիրք հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր։

Ավա՛ղ այս զրկանքներին, ավա՛ղ այս թշվառ պատմությանը։ Ինչպես դիմանամ այս ցավերին, ինչպես ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս հատուցեմ խոսքով ծնունդի և սնունդի փոխարեն։ Որովհետև նրանք ինձ ծնեցին և սնեցին իրենց տված ուսումով և ոտիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու։ Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ ամենիմաստ գիտությամբ և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ դիմելով, հույս ունեինք հարստանիքներում պարել խիզախ և արագ շարժումներով, և առագաստի երգեր երգել,— այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ

Հասցրի տեսնել նրանց աչքերի փակվելը, լսել նրանց վերջին ձայնն ու օրհնությունը։

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում։ Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը շեղվածների համար. ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ էր գրավում, ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանդստացողը, կորավ ժողովուրդը, ծածկվեց նավահանգիստը, լքեց օդնականը, լռեց խրախուսիչ ձայնը։

Ո՞վ այսուհետև պետք է հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր՝ աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճություն պիտի արտահայտի՝ մասամբ իր՝ որդուց հաղթվելով։ Ո՞վ պետք է զսպի առողջ վարդապետությանը հակառակ դուրս ելնողների հանդգնությունը, որոնք ամեն բանով քանդված ու քայքայված՝ շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը. ամեն խոսքի առթիվ նրբանք հավասարապես նեղանում են, և մարդկանց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհատատ և որևէ պիտանի արվեստից զուրկ։ Ո՞վ պետք է նրանց պատանձեցնի սաստելով և մեղ սփոփի զովելով և չափ դնի խոսքի և լռության։

Երբ մտածում եմ այս բանների մասին, սիրտս հառաչում և արտասվում է և ցանկանում եմ ախորալից և սգավոր խոսք ասել։ Եվ չգիտեմ ի՞նչպես հորինեմ իմ ողբը և կամ ո՛ւմ արտասվեմ.— արդյոք իմ թշվառ մանուկ թագավորի՞ն, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ դեն նետվեց և, նախքան մահով մեռնելը, անարգաբար աթոռից կործանվեց, թե ինձ, որի գլխից վերցվեց փառավորող գեղեցիկ կյանքին օգտակար պսակը, արդյոք իմ հո՞րն ու քահանայապետին, այդ վսեմ մարքին, որ ուր գնում, տանում էր կատարյալ խոսքը, որով կառավարում էր և բարեկարգում, և սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս դեմքերին ու սանձահարում էր օտարոտի լեզուները. թե ինձ, նրա հոգու խանդից զրկվածիս ու տնանկիս. արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր բղխում ամբարշտությունը, թե ինձ, նրա

խրատները խմելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս. արդյոք մեր երկրին արդեն եկա՞ծ աղետները, թե՞ ապագայում սպասվածները։

Ո՞վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտմությանը, ո՞վ մեզ կընկերանա՝ ցավակցելով մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու Զարթի՛ր, Երեմիա, զարթի՛ր և մարգարեանալով հանդերձ ողբա այն, ինչ թշվառություններ որ կրեցինք և ինչ դեռ պիտի կրենք. գուշակի՛ր, որ տգետ հովիվներ պետք է երևան գան, ինչպես (գուշակեց) Զաքարիասը իսրայելացիների համար։

Ուսուցիչները տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ Աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոդով, ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը։

Կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, անափառ, պատվամոլ, քան թե աստվածասեր։

Վիճակավորները հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական դրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող։

Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են։

Աշխարհականները ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, ժառանգությունից փախչող[4]։

Զինվորականները անարի, պարծենկոտ, դենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ, ավազակներին համարարու։

Իշխանները ապստամբ, գողերին զողակից, կաշառակեր, կըծծի, ժլատ, ագահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր, սարուկներին համախոհ։

Դատավորները տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող։

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած։

Եվ ի՞նչ կա այս բոլորի դիմաց, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը երաշտացած, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած,

ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև։ Քամիները բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղյամաբեր. ջրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. հողի պտուղների անբերրիություն և անասունների անառելություն, այլև երկրաշարժեր և սաստանումներ։ Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբարիշտներին խաղաղություն չկա։

Որովհետև (մեզ) տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս. կառավարիչները կարդ չեն պահպանում, անօրդոր են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած. հավատը ծախվում է այս ունայն կյանքի համար։ Ավազակներ են գալիս անհատնում և շատ կողմերից. տները թալանվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում աղնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ։ Աստվածապաշտությունը մոռացված է, և կա դժոխքի ակնկալություն։

1. Նկատի ունի Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին։

2. Ըստ տեղեկությունների, Սահակ Պարթևը երկու անգամ է գահընկեց արվել պարսկական արքունիքի կողմից։

3. Խորենացին նկատի ունի վաղ քրիստոնեական աստվածարան Գրիգոր Նազիանզացուն։

4. Խորենացու «ժառանգությունից փախչողի» մասին հայագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել. գուցե խոսքը կալվածատիրոջ մոտից փախչող գյուղացիների մասին է։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ԳՅՈՒՂԵՐ ԵՎ ԴԱՍՏԱԿԵՐՏՆԵՐ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Ա, գլ. Լ. Այս էլ է պատմվում, թե այս գործը վերջանալուց հետո (Տիգրանը) իր քույր Տիգրանուհուն թագավորավայել

ու մեծ բազմությամբ ուղարկում է Հայաստան՝ այն ավանը, որը Տիգրանը շինեց իր անունով, այսինքն՝ Տիգրանակերտ, և այն գավառները հրամայում է նրա ծառայության մեջ դնել։ Եվ այդ կողմերի ոստան[1] կոչված ազնվական դասակարգն, ասում է, սրա սերունդից է առաջացել, իբրև թագավորական սերունդ։

Իսկ Աժդահակի առաջին կնոջը, Անուշչին, և շատ աղջիկներ Աժդահակի սերունդից՝ պատանիներով և գերիների բազմությամբ հանդերձ, ավելի քան մի բյուր մարդ, (Տիգրանը) բնակեցնում է մեծ լեռան արևելյան կողմը մինչև Գողթնի սահմանները. սրանք են Տամբատ, Ոսկիոզա, Դաժգունք և գետեզրյա ուրիշ դաստակերտներ, որոնցից մեկն է վրանջունիքը, մինչև նախճավան ամրոցի դեմուդեմը։ Նրանց է թողնում նաև երեք ավաններ— Խրամ, Ջուղա[2] և Խո(ր)շականիք՝ գետի մյուս կողմում ամբողջ դաշտը, որի գլուխն է Աժդանականը, մինչև նույն նախճավանի ամրոցը։ Բայց վերը հիշված Անուշ կնոջն իր որդիներով հանդիսատ բնակեցնում է մեծ լեռան փլվածքի վերջում։ Այս փլվածքն, ասում են, առաջ է եկել մի ահագին երկրաշարժից. այս բանը պատմում են այն մարդիկ, որոնք, Պաղոմեոսի հրամանով ընդարձակ ուղևորություններ կատարելով, ասպարեզներով չափեցին մարդկանց բնակության տեղերը, մասամբ նաև ծովը և անբնակ վայրերը Այրեցյալ գոտուց մինչև Քիմյուռոն։ Իսկ Անուշչին սպասավորներ տալիս է նույն այն մարերից, որ լեռան ստորոտում բնակվեցին։

1. «Ոստան» է կոչվել Արշակունյաց թագավորի սեփական կալվածքը։ Մի քանի բնագրերում այն ունի նաև «մայրաքաղաք» նշանակությունը։

2. Ջուղան Հայաստանի հնագույն վաճառաշահ քաղաքներից է, գտնվել է Նախճավան գավառում, Արաքս գետի ափին, այժմ՝ Ջուլֆա։

ՏԱՐՈՆԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ԿԱՎԱՍՄԱՆԱՆ ԳՅՈՒՂԵՐՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ

Հովհան Մամիկոնյանը (VII դ.) եղել է Տարոնի գավառի Գլաքա վանքի վանահայրը։ Գրել է Տարոնի պատմությունը։ Օգտվել է վանքի արխիվային վավերագրերից և այնտեղ գտել Ջենոբ Գլակի պատմական աշխատությունը, որը գետեղել է իր աշխատության առաջին մասում։ Պատմիչը պարզ և պատկերավոր լեզվով նկա-

րագրել է իր ժամանակ տեղի ունեցող կարևոր իրադարձություններ: Նա լայն տեղ է տվել նաև ավանդություններին:

Հովհան Մամիկոնյանի աշխատությունը առաջին անգամ հրատարակվել է Կ. Պոլսում՝ 1719 թ.: Վերջին անգամ հրատարակվել է 1941 թ.՝ Ա. Գ. Աբրահամյանի աշխատակցությամբ՝ «Պատմութիւն Տարօնոյ» խորագրով: Մտորև բերված հատվածները աշխարհաբար է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը:

ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, էջ 110—112

Երբ սուրբ Գրիգորը հիմնեց (Տարոնի սուրբ Հովհաննու— Ա. Ա.) եկեղեցին, դրեց այնտեղ մասունքներ: Նա Գիսանեի կուռքերի տեղում կանգնեցրեց տերունական խաչի կոթողը և եկեղեցու պաշտոնյաներ թողեց Անտոնին և Կրոնիդեսին: Իսկ հայր Օպիփաներ հաստատեց վանականությունն իր ձեռքով: Նա այդտեղ թողեց 43 կրոնավոր և տվեց 12 դաստակերտ, որպեսզի սպասարկվեն տեղի հոգևորականները: Այդ դաստակերտներից են Կուառը, Մեղտին, Բրենքը, Տումբը, Խորնին, Կեղքը, Բազուն: Սրանք մեծամեծ ավաններ են, ինչպես նշված է Մամիկոնյանների իշխանության տան մատյանում: Կուառն ունի 3200 տուն, տալիս է 1030 հեծյալ և 2200 հետևակ զինվոր: Մեղտին ունի 2700 տուն, տալիս է 800 հեծյալ և 1030 հետևակ զինվոր: Տումբն ունի 900 տուն, տալիս է 400 հեծյալ զինվոր: Խորնին ունի 1906 տուն, տալիս է 700 հեծյալ և 1007 հետևակ զինվոր: Իսկ Բրենքն ունի 3200 տուն, տալիս է 2040 հեծյալ և 840 աղեղնավոր, 1080 տեգավոր և 280 պարսավոր զինվոր: Այս ավաններն ի բնե տրված էին մեհյաններին ծառայության և իշխանները նորից հաստատեցին եկեղեցիների վրա երեսուն տարով: Այս այսպես կարգվեց սուրբ Գրիգորի կողմից:

ՓԱՎՍՏՈՍԸ ՀՈՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՂԵՐ ԵՎ ԱԳԱՐԱԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գլուխ VI, պլ. ժ. Այս Հոհան եպիսկոպոսը՝ Փառենի որդին, երբ գնում էր Հայոց թագավորների մոտ, նրանց համար խեղկատակություն էր անում: Այսպես խեղկատակություն անելով՝ ինքն իրեն վարժեցնում էր ագահության, որին անհագաբար ծարավ էր, և (այդ խեղկատակությունները) նրան իբրև միջոց էին ծառայում: Նա թագավորների առաջ ձեռքերի և ոտքերի վրա ընկնելով՝ չորեքթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր, ուղտի նման շրջելով: Կառաչելու ժամանակ մի-մի խոսք էր խառնում կառաչելու ձայնով ու ասում էր. «Ո՛ւղտ եմ, ո՛ւղտ եմ, թագավորի մեղքերը վերցնում եմ. վրաս դրեք թագավորի մեղքերը, որ վերցնեմ»: Իսկ թագավորները գյուղերի կամ ագարակների պարգևագրեր գրելով ու կնքելով՝ դնում էին Հոհանի մեջքի վրա իրենց մեղքերի փոխարեն: Եվ այսպես ուղտ լինելով ու մեղքեր վերցնելով՝ նա Հայոց թագավորներից ձեռք բերեց գյուղեր, ագարակներ ու գանձեր: Այսպիսի մարդ էր այս Հոհանը, որ իր ամբողջ կյանքում վարակված էր ագահությամբ ու ժլատությամբ և ագահության պատճառով անվայել գործեր էր կատարում:

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՆԵՐԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԸՍՏ ԳԱՀՆԱՄԱԿԻ

Գահնամակը Արշակունյաց Հայաստանի, ինչպես նաև մարզպանության շրջանի հայոց նախարարների արխունիխում ունեցած տեղերի, գահերի կամ պատվաստիճանների հռովարտակ է: Նախարարների գահակալությունը որոշվում էր նրանց տնտեսական ու ռազմական հզորությամբ: Այն վավերացնում էր թագավորի կողմից՝ հատուկ հռովարտակով: Մեզ հասել են Գահնամակի մի քանի տարբերակներ, որոնք միմյանց նկատմամբ խիստ հակասական են, բացի այդ, դրանք լրիվ չեն արտահայտում հայկական բոլոր նախարարությունները: Գահնամակի իսկական բնագիրը հայտնաբերել է Գ. Ախվերդյանը մի ձեռագրում, որին այն կցված է եղել որպես պահպանակ: Պատվաստիճանների այս ցուցակը, ինչպես երևում է նրա առաջաբանից, կազմել և Սասանյան արխունիխին վավերացման է ներկայացրել Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը (387—439):

Սահակ Պարթևին վերագրվող Գահնամակում չնայած հիշատակվում է ընդամենը 70 նախարարական գահ, սակայն այլ օրինակներում դրանց թիվը հասնում է մինչև 167-ի: Հիշատակություններ կան հին Հայաստանում 400, անգամ 900 նախարարա-



Նկար 27. Գահնամակի բնագիրը (1-ին էջ)

կան գաճերի մասին: Սաճակ Պարթևին վերագրվող Գահնամակը մեզ է հասել խիստ աղճատված ու եղծված վիճակում, որը դժվարացնում է բնագրի լրիվ ու ճիշտ ընթերցանությունը: Սույն Գահնամակը առաջին անգամ հրապարակել է Մ. Էմինը՝ Խորենացու Պատմության 1858 թ. ռուսերեն հրատարակությունում: Գահնամակի լավագույն և մանրամասն ուսումնասիրությունը պատկանում է Ն. Ադոնցին (տե՛ս «Армения в эпоху Юстиниана», էջ 249—257):

Գահնամակի առումն բերված տեքստը արվում է ըստ Ադոնցի հրատարակության (էջ 249—250): Առաջաբանի թարգմանությունը կատարելիս օգտվել ենք Ստ. Մալխասյանցից (տե՛ս Խորենացու Պատմության 201-րդ ծանոթագրությունը, էջ 371):

ԳԱՀՆԱՄԱԿ

Ես՝ Սահակս, խնդիր հարուցեցի Արտաշես թագավորի արքունիքի առջև, Տիկբոնում, ասելով, որ ես տեսա ոսմական նամակը Արտաշիրի[1] դիվանում, քաղոց ամսի 17-ին, և ես՝ Սահակ կաթողիկոսս, գրեցի Վռամ արքայից արքային[2] և բարերարին, թե թող ձեր բարերարությունը հրաման տա՝ Հայոց ազատների և տանուտերների ցուցակագրությունը կազմել ձեր դիվանում այնպես, ինչպես առաջներում եղել է հայոց ազգի մեջ, որպեսզի այսուհետև հայոց ազատների և տանուտերների գահերը հայտնի լինեն: Ըստ այմ, Ներսեհը[3] արքայից արքայի հրամանով և ես՝ Սահակ կաթողիկոսս, կնքեցինք գահնամակը և վրան դրինք արքայից արքայի և մեր մատանիները: Եվ այսպես է արդարև ու ճշմարիտ:

[Առաջին իշխանք Հայոց և Մադխազր[4]]

1. Սյունյաց տեր
2. Ասպետ[5]
3. Արծրունյաց տեր
4. Մամիկոնեից տեր
5. Շահապը՝ Ռուփաց տեր[6]
6. Մոկաց տեր
7. Ռշտունյաց տեր
8. Վահունյաց տեր
9. Կասպեից տեր
10. Անձավացյաց տեր
11. Ապահունյաց տեր
12. Կամսարականը
13. Այլ Ապահունի
14. Վանանդացին
15. Ամատունյաց տեր
16. Փոքրիկան տեր
17. Գնունյաց տեր
18. Այլ Անձավացի
19. Տայոց [տեր]
20. Բասենի դատավորը



Նկար 28. Կահնամակի 2-րդ էջը

21. Գնթունյաց տեր
22. Վարձավունին
23. Դարդմանա տեր
24. [Մաղխազ]
25. Սահառունին
26. Գաբեղենից տեր
27. Աբեղենից տեր
28. Սյունյաց երկրորդը
29. Աբծրունյաց երկրորդը
30. Աբծրունյաց երրորդը
31. Մամիկոնենից երկրորդը
32. Ռոփսյանը
33. Աշոցյանը
34. Դիմաքսյանը
35. Բուխա Դիմաքսյանը
36. Այլ Աբեղյանը
37. Այլ Դիմաքսյանը
38. Պալունին
39. Առավեղյանը
40. Աշահմարյանը
41. Համբուժյանը
42. Վարաստակյանը
43. Զյունականը
44. Ակեացին
45. Զարեհավանյանը
46. Ընծայեցին
47. Մանդակունին
48. Սղկունին
49. Տայգրյանը
50. Երմանթունին[7]
51. Սպանդունին
52. Առավենյանը
53. Տրունին
54. Մամբերացին
55. Հավնունին
56. Բժնունին
57. Քաջբերունին
58. Մեհնունին
59. Նախճերին
60. Քաղաքապետն արքունի[8]
61. Որսապետն արքունի[9]
62. Արտաշեսյանը
63. Վանանդացի երկրորդը
64. Յուլը
65. Վիժանու(նի)
66. Աքածու
67. Շիրակի Դիմաքսյան
68. Գապրիկյանը
69. Մարացյան տ(եր)
70. Վագրատպու(նին)

1. Ն. Ադոնցի կարծիքով, ինչպես առաջին դեպքում (Արտաշես), այնպես էլ երկրորդ դեպքում (Արտաշիր) խոսքը վերաբերում է միևնույն անձնավորությանը, այն է՝ Հայոց Արտաշես (Արտաշիր) IV Բագավորին (422—428):

2. Խոսքը վերաբերում է Սասանյան Վռամ IV Բագավորին (388—399):

3. Նկատի ունի այդ ժամանակի Պարսից հազարապետ Միհրներսեհին:

4. «Մաղխազը» Խորխոռունիների տոհմական տիտղոսն էր: Այստեղից էլ՝ «Մաղխազությունն» գործակալությունը, որը հանձնված էր Խորխոռունիների տոհմին: Այս գործակալության իրավասությունն էր Բագավորի անձի պաշտպանությունը: Խորենացու վկայության համաձայն Մաղխազը արքունի քիկնապահների գլխավորն էր:

5. «Ասպետը» Բագրատունիների տոհմական տիտղոսն էր: Այստեղից էլ՝ «Բագակաց ասպետություն» գործակալությունը, որը հանձնված էր Բագրատու-

Նիններին։ Իբրև թագադիր ասպետներ, գահակալության ժամանակ նրանք թագ էին դնում թագավորի գլխին։

6. Ենթադրվում է, որ սա Շահունյաց Տոփքի իշխանն էր։

7. Ըստ երևույթին՝ երվանդունի։

8. Պետք է ենթադրել, որ սա արքունի քաղաքներից մեկի, ամենայն հավանականությամբ՝ Արտաշատի, քաղաքագլուխն էր։

9. Նկատի ունի Վարաժնունիների նախարարական տունը։



Նկար 29. Ամրոց Վասպուրականում

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ԸՍՏ ՋՈՐԱՆԱՄԱԿԻ

Ջորանամակը Արշակունյաց Հայաստանում գործածվող պետական վավերագիր էր, որը սահմանում և դասակարգում էր երկրի ռազմական ուժերն ըստ զորավարությունների (Հարավային, Հյուսիսային, Արևելյան և Արևմտյան)։ Ջորանամակը մեզ է հա-

սել միակ ձեռագիր օրինակով, որը կցված է եղել Անանիա Շիրակացու ժամանակագրությանը։ Այն առաջին անգամ հրատարակել է Հովհ. Շահխաթունյանցը (1842), վերահրատարակել են Ղ. Ալիշանը (1890) և Ն. Ադոնցը (1908)։

Ջորանամակի ստորև բերվող տեքստը տրվում է ըստ Ղ. Ալիշանի հրատարակության (տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 424—425)։

ՋՈՐԱՆԱՄԱԿ

Արևմտյան մասում	Արևելյան մասում
Անգեղ տուն— 3400	*Սյունի— 19400*
Աղձնյաց բդեշխը— 4000	*Ամասկոնի— 200*
Բղնունական— 3000	*Ավածացին— 200*
Մանավազյան— 1000	*Վարձավունի— 200*
Բագրատունի— 1000	*Տամրաթացի— 100*
Խորխոռունի— 1000	*Մազազացի— 100*
Տոփացի— 1000	*Յողկևպան— 100*
Վահունի— 1000	*Գրզճունի— 50*
Ապահունի— 1000	*Վառնունի— 50*
Դնունի— 500	*Բաքան— 50*
Բասենացի— 600	*Կճրունին— 50*
Պալունի— 300	*Գուկանը— 50*
Ընծաքին— 4000	*Պատապարունին— 50*
Մանգակունի— 300	*Դաղրիկան— 50*
Սադունի— 300	*Վիժանունին— 50*
Վարաժնունի— 300	*Ջանդաղան— 50*
Այծենական— 100	*Տոզացի— 50*
Առվենյան— 300	*Աքաժեցի— 50*
Վարաժնունյան— 100	*Աճընյան— 50*
Սպան(գ)ունի— 300	*Կինան— 50*
Խափոյան— 100	*Տագրյան— 50*

Հյուսիսային մասում	Հարավային մասում
Գուգարաց բդեշխ— 4500	*Կաղմեացի— 13200*
Կամսարական— 600	*Կորդվացի— 1000*

Կասպեցի— 3000	*Արծրունի— 1000*
Ուտեացի— 1000	*Ռշտունի— 1000*
Ծավդեացի— 1000	*Մոկացի— 1000*
Տայեցի— 600	*Գողթնեցի— 500*
Մամիկոնյանը— 1000	*Անձևացի— 500*
Վանանդացին— 1000	*Հարուժյան— 100*
Գարդմանացին— 1000	*Տրպատունի— 100*
Որդունի— 700	*Մեհնունի— 100*
Առվեղյանքը— 500	*Ակեացի— 300*
Աշոցյան— 500	*Ջարեհվանյան— 300*
Դիմաքսյան— 300	*Եր(վ)անթունի—300*
Գնթունի— 300	*Համամատունյան—100*
Բոխայեցի— 300	*Արտաշեսյան— 300*
Գաբեղյան— 300	*Բագրատունի— 100*
Աբեղյան— 300	*Աբրահամյան— 100*
Հավնունի— 300	*Տրունի— 300*
Սահառունի— 300	*Բուժունի— 200*
Զյունականը— 300	*Քաջբերունի— 100*
Աշխադարյան— 100	*Բոդունի— 100*
Վարազդատիկյան— 100	*Մուրացան— 300*

Ռազմիկների թիվը՝ ըստ տոհմերի, լինում է ութսուն և չորս հազար, չհաշված արքունիքի սպասավորները, այսինքն՝ ոստանիկները, որոնք կռվի էին դուրս գալիս թագավորի հետ, և մարդպետական կոչվածները, որոնք խնդիր ունեին պահպանել թագուհուն և արքունի գանձերը։ Հայոց զորքի թիվը, բոլոր միասին վերցրած, հավասար էր հարյուր քսան հազարի[2]։

1. *Այն փաստը, որ Ջորանամակում հիշատակված են Մանավազյան, իսկ ատրև նաև՝ Որդունյաց նախարարական ընտանիքները, ինքնըստինքյան վկայում է այն մասին, որ այս փաստաթուղթը պետք է ստեղծված լիներ մինչև Հայոց Խոսրով III Կոտակ թագավորը։ Ինչպես հայտնի է, Խոսրով Կոտակի կարգադրությամբ՝ սպարապետ Վաչե Մամիկոնյանը գլխովին ոչնչացրեց հիշյալ ապըստամբ նախարարական ընտանիքներին, իսկ նրանց կալվածքները գրավեց «յարքունիս»։*

2. *Այսպիսով, Արշակունիների օրոք Հայոց զորքի ընդհանուր թվաքանակը եղել է 120 հազար մարտիկ, որից 84 հազարը կազմել են նախարարական, իսկ 36 հազարը՝ ոստանիկ և մարդպետական գնդերը։*

ՀԱՑԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ III—V ԴԱՐԵՐՈՒՄ

ՓԻԼՈՍՏՐԱՏՈՍԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐՈՎ ՄԱՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Փիլոստրատոսը Կարակալլա կայսեր (211—217) ժամանակակից մատենագիր է։ Մանյակի վրա եղած հայկական գրերի մասին նա հաղորդում է իր «Վարք Ապոլոնիոս Դիանացու» («De vita Apollonis Tianei») աշխատության մեջ։ Թարգմանված և հրատարակված է Ի. Հարությունյանի «Հայոց գրերը» աշխատության մեջ (Թիֆլիս, 1892, էջ 252), որից և մեջ ենք բերում հետևյալ հատվածը։

ՎԱՐՔ ԱՊՈԼՈՆԻՈՍ ԴԻԱՆԱՑՈՒ

Ինչ որ մեր Տավրոսի մասին ասում են, և որ երկար ժամանակ ոչ ոք չէր հավատում, թե նա Հայաստանի սահմաններից էլ անցնում է, հաստատում են այն հովազները, որ, ինչպես գիտեմ, բռնվում են համեմատաբար առատ Պամփյուլիայում, որովհետև այս կենդանիները սիրում են անուշ բուրմունք, ուստի դուրս են գալիս Հայաստանից և դիմում դեպի այն կողմերը, որտեղից քամին բերում է այդ անուշ հոտը։ Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն տառերով հետևյալը. Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն, այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից։ Այս Արշակն այն ժամանակ Հայոց թագավորն էր և յուր բռնած հովազը, այդ կենդանու մեծության պատճառով, նվիրել էր Դիոնիսոսին[2]։ Դիոնիսոսը հնդկական Նյուսիայի պատճառով հնդկացիներից և արևելյան ժողովուրդներից կոչվում էր Նյուսոս։ Այս կենդանին միաժամանակ իրեն բոլորովին բնաւոյի եղած

և թույլ էր տալիս իրեն ձեռքով շոշափել և փաղաքշել, սակայն երբ գարունն եկավ, երբ հովազները նույնպես հաղթահարվում են սիրուց, արուի պահանջ զգալով, փախավ դեպի լեռները և յուր հետ տարավ նաև յուր զարդը, ապա գրավվելով համեմունքի բուրմունքից, բռնվեց ստորին Տավրոսի վրա։

1. Բանասերներից ոմանց հայտնած այն կարծիքը, որ մ. թ. I դարում Արշակ անունով Հայաստանի թագավոր չի եղել և նրանց փորձերը՝ դրա հիման վրա արժեքազրկելու Փիլոստրատոսի այս տեղեկությունը, ճիշտ չէ. հավանական է, որ հեղինակը նկատի է ունեցել Պարթևաց թագավոր Արտավանի որդի՝ Հայոց Արշակ I (34—35) թագավորին, որի մասին տեղեկություն է հաղորդում Տակիտոսը (տե՛ս «Տարեգրություններ», VI, էջ 31)։

2. Փիռնիխոսը, ըստ հին հունական առասպելաբանության, համարվել է Ջևս աստծու որդին, խաղողագործության աստվածը։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՆԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Բ, գլ. ԿՉ. Մեզ այս բանները պատմում է Բարդածանը[1], որ Եդեսիայից էր։ Որովհետև նա վերջին Անտոնինոսի ժամանակ[2] պատմագիր հանդիսացավ։ Նա առաջ հետևում էր Վաղենտիանոսի աղանդին[3], որը նա հետո անարգեց, ստությունը երևան հանելով, սակայն ինքը ճշմարտության չհանդեց, այլ միայն նրանից զատվելով՝ իրենից նոր աղանդ հնարեց։ Բայց պատմության մեջ չընտեց, որովհետև հզոր էր խոսքով. նա նույնիսկ համաձայնվեց թուղթ գրել Անտոնինոսին, շատ բան գրեց մարկիոնացիների աղանդի և ճակատագրի դեմ և մեր երկրի կուռքերի պաշտամունքի մասին։

Որովհետև նա մեր կողմերն եկավ՝ հուսալով, թե կկարողանա որևէ հետևող գտնել վայրենի հեթանոսներիս մեջ, բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը։ Նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը թարգմանեց ասորերենի և ապա նրանից հունարենի։ Իր մատյանում՝ մեհենական պաշտամունքի վերաբերմամբ պատմում է, թե Հայոց թագավոր Տիգրան Վերջինը պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագավանում, Բագրևանդ գավառում, գերեզմանի վրա բագին շինելով, որպեսզի այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրեր ընդունվեն գիշերելու համար։ Հետո Վաղարշն այդ տեղում ժողովրդական տոն սահմանեց նոր տարվա սկզբին, Նավասարդի ամսագլխին։ Մենք այս պատմությունից առանք ու գրեցինք քեզ Արտավազդի թագավորությունից մինչև Խոսրովի արձան (կանգնեցնելը)։

1. Բարդածանը (154—223) ասորի հեղինակ է, համարվում է ասորական քրիստոնեական մատենագրության հիմնադիրներից մեկը։

2. Ենթադրվում է, որ սա Անտոնինոսների հարստության վերջին կայսր Կոմմոդոսն է (180—192)։

3. Նկատի ունի II դարում գործող Վալենտինի ուսմունքին հետևող ագանդավորներին։

ՀԻՊՊՈԼԻՏՈՍ ՊԱՏՄԻՉԸ ՀԱՅԵՐԻ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիպպոլիտոսը հռոմեացի մատենագիր է։ Նա ժամանակակից է Ալեքսանդր Սևերոս կայսրին (222—235)։ Մեզ հետաքրքրող աշխատությունը, որի մեջ հիշատակություն կա հայկական դպրության մասին, գրի է առնված Սևերոսի գահակալության 13-րդ տարում, այսինքն՝ 234—235 թվականներին։ Հեղինակն իր աշխատության մեջ, առանձին գլխի տակ, թվարկել է այն ժողովուրդներին, որոնք դպրություն ունեն, և անա նրանց մեջ հիշում է նաև հայերին։ Թարգմանված է „Hippolitus Werke, IV Bd. Die Chronik, Hergestellt von A. Bauer, Leipzig, 1929“ հրատարակությունից, որը կատարել է Ա. Գ. Աբրահամյանը։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, էջ 58

Սրանցից նրանք, որոնք դպրություն ունեն, հետևյալներն են. Երրայեցիները, լատինացիները, որով և Հռոմեացիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը և հայերը[1]։

1. Հիպպոլիտոսի այս հատվածը թարգմանաբար բերել է նաև Անանիա Շիրակացին իր «Ժամանակագրության» մեջ (էջ 360)։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՄԵՀՅԱՆԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

778. Ապա (Տրդատ) թագավորն իսկույն տիրաբար հրաման տվեց, ամենքի հավանությամբ գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից ջնջի։ Ապա ինքն իսկ թագավորը, ամբողջ զորքով հանդերձ, վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ դիցուհու բագինը և այն, որ երազամուղն կոչված տեղերում էր գտնվում։ Նախ ճանապարհին հանդիպեցին բրմական զորության դպիր, Որմիզդի գրչի Դիվան կոչված, երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծու ճարտարության ուսման մեհյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել։

ՓԱՐՊԵՑԻՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ
Դրվագ Ա

Ժ. Հայոց սուրբ Սահակ կաթողիկոսը, երանելի Մաշտոցին հետը վերցրած, եկավ Վռամշապուհ թագավորի մոտ և հայտնեց նրանց իրենց ձեռնարկած գործի կարևորության մասին։ Թագավորը հիշեց այդ մասին մի վանականի իրեն հայտնած տեղեկությունը, պատմեց այդ նրանց և ուրախացրեց։ Եվ նրանք լսելով թագավորի պատմածը, հորդորեցին նրան, ասելով՝ «Փութա՛, շտապի՛ր, որպեսզի Հայոց երկրի համար օգտակար այդ մեծ գյուտը քո ժամանակ կատարվի, որը հետագայում շատ ավելի շահ, անմոռաց հիշատակ և երկնավոր վայելչություն կբերի, քան քո թագավորական իշխանությունը և կամ քեզնից առաջ քո նախնիների արածները, որոնք Արշակունիների ցեղից էին»։ Թագավորը լսելով այդ՝ ուրախացավ, փառք տվեց Աստծուն, որ իր թագավորության ժամանակում է Հայոց աշխարհն այսպիսի հոգևոր փառք ժառանգում։

Թագավորը վաղվաղակի Վահրիճ անունով մեկին կանչեց իր բնակավայրից (բնագրում՝ ծնողների մոտից— Ա. Ա.), հրովարտակ տվեց նրան և դեսպան ուղարկեց Հաբել անունով երեցի մոտ, որն առաջներում հայտնել էր իրեն և մերձավոր մեկն էր բարեպաշտ Դանիել եպիսկոպոսի, որի մոտ կային հայերեն նշանագրեր։

Երանելի Հաբելը, վերցնելով Վահրիճից հրովարտակը և ծանոթանալով եղելության հետ, փութանակի հասավ սքանչելի Դանիել եպիսկոպոսի մոտ։ Եվ այստեղ նա Դանիելի միջոցով նախ ծանոթացավ նշանագրերի շարքի հետ, ապա, վերցնելով նշանագրերը, բերեց հասցրեց թագավորին, Հայոց սուրբ Սահակ հայրապետին և երանելի Մաշտոցին։ Իսկ Հայոց արքան, Հայոց սուրբ Սահակ կաթողիկոսը և երանելի Մաշտոցը, ստանալով նշանագրերը Հաբելից, ուրախացան։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. ՍԲ. Այդ ժամանակ Արկադը հիվանդացավ, Բյուզանդիոնում մեծն Հովհաննեսի պատճառով ահագին շարժում և հրդեհներ ծագեցին և Հունաց թագավորությունը շփոթության մեջ ընկավ. զորքերը պատերազմում էին իրար և պարսիկների դեմ։ Ուստի Վռամը, մեր Վռամշապուհ թագավորին հրամայեց իջնել Միջագետք, որպեսզի խաղաղեցնելով կարգի բերի նրանց և երկու կողմերի գործակալների (վեճերը) վճռի։ Երբ նա գնաց այս ամենը կարգավորելու, քիչ նեղություն չկրեց քարտուղարի պատճառով, որովհետև այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, նա ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում։ Այս առիթով նրան ներկայացավ Հաբել անունով մի քահանա և խոստացավ հայերեն լեզվի տառեր ստեղծել՝ որ հարմարեցրել էր Դանիել եպիսկոպոսը՝ իր մերձավորը։ Թագավորն անփույթ գտնվեց, և Հայաստան գալով տեսավ, որ բոլոր եպիսկոպոսները հավաքել են մեծն Սահակի և Մեսրոպի մոտ, հայերեն գրերի գյուտի մասին հոգալու։ Երբ թագավորին իմաց տվին այս մասին, նա նրանց պատմեց ինչ որ վանականն ասել էր։ Երբ այս լսեցին, նրան սկսեցին թախանձել, որ այդ կարևոր բանին հոգ տանի։

Ուստի նա ծագումի ցեղից վահրիճ անունով մի մարդու, որ հարգված էր Հայաստանում, իրեն հավատարիմ էր և շատ փափագում էր այդ գործին, պատգամավոր ուղարկեց հիշյալ Համբեքի մոտ։ Նրան հետն առած՝ միասին գնացին և Դանիելից լավ համոզյան վաղուց գրված տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով, բերին մատուցեցին մեծն Սահակին ու Մեսրոպին, որոնք սովորելով ու երեխաների էլ վարժեցնելով քիչ տարիներ, համոզվեցին, որ այդ նշանագրերը, այդ մուրացված գծագրությունը, ընդունակ չէր վանկ առ վանկ հիշատ արտահայտելու հայերեն բառերի հնչյունները։

ԿՈՐՅՈՒՆԸ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Կորյունը մեսրոպատառ առաջին պատմական աշխատության հեղինակն է։ Եղել է Մաշտոցի ավագ աշակերտը և նրա գործակիցը։ Գրել է վաստակաշատ իր ուսուցչի կենսագրությունը՝ «Վարք Մաշտոցի» վերնագրով։ Իր փոքրիկ, բայց շատ արժեքավոր այդ աշխատության մեջ, նա ճկարագրել է Մաշտոցի գործադրած վիքխարի ջանքերը՝ հայկական գրի ստեղծման, դպրոցների բացման և նորաստեղծ հայագիր և հայալեզու մատենագրությունը հիմնադրելու գործում։

Կորյունի աշխատությունը հրատարակվել է մի քանի անգամ և թարգմանվել տարբեր լեզուներով։ Գիտամեթոդական բնագիրը կազմել և հրատարակել է Մ. Աբեղյանը 1941 թ., զրաբար բնագրին զուգընթաց զետեղելով նաև իր կատարած աշխարհաբար թարգմանությունը։ Ստորև բերված հատվածները տրվում են ըստ այս հրատարակության։ Օգտագործված են նաև Մ. Աբեղյանի ծանոթագրություններ։

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

Գ. Մաշթոց էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու։ Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից[1], Վարդան անունով երանելի մարդու որդին։ Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, [ապա] եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը[2], կացել էր արքունի դիվանատանը՝

դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հաղարապետության ժամանակ։ Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին։ Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանդամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում։

Գ. Եվ դրանից հետո նա՝ ըստ ավետարանական կանոնի՝ դարձավ մարդասեր աստծու ծառայությանը. այնուհետև մերկացավ [իրենից] իշխանական ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ գնաց եկավ ամենակեցույց խաչվածի հետևից։

Նկար 30. Մեսրոպ Մաշտոց (գործ՝ Ստ. Ներսիսյանի)

Ե. Երանելին այնուհետև իր հավատացյալներին (այսինքն՝ աշակերտներին— Ա. Ա.) առավ, գնաց, իջավ Գողթնի անկարգ ու անխնամ [թողած] տեղերը։

Զ. Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն [խնդրով] զբաղվելուց հետո՝ վեր կացավ այնուհետև [եկավ], հասավ Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ էր[3], որին և պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ։ Եվ նրանք միասին սիրով մեկտեղ գալով՝ առավոտը կանուխ մեծ աղոթքներով Աստծուն [էին դիմում], որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը։ Եվ այդ անում էին շատ օրեր։

Ապա ամենաբարի Աստծուց պարգևվեց նրանց՝ Երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդը ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել։

Շատ հարցուփորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին Հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում։

Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու, Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերին լեզվի այսիարհանքներ—նշանագրեր։ Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գտածի մասին[4], արքային հոժարեցրին, որ հոգ տանի այն պիտույքի համար։ Նա էլ վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հարել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր։

Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային Հայոց երկիրը։ Նրա թագավորության հինգերորդ տարում* հասցրեց նրան [նշանագրերը]։ Իսկ արքան՝ սուրբ Սահակի և Մաշթոցի հետ միասին՝ նշանագրերն առանալով Հաբելից՝ ուրախացան։

Ապա Երանելի հոգաբարձուներն [իրենց] հանկարծագյուտ ուզածն առնելով՝ էլի խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել։ Եվ

* Ենթադրվում է թե աղճատված է, ուստի առաջարկվում է «հինգերորդը» ուղղել «երրորդ»։

երբ նրանցից շատերը սովորեցին, ապա [թագավորը] հրամայեց ամեն տեղ նույն [նշանագրերով] կրթել. որով և Երանելին հասավ նույնիսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ։

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբանները—կապերն ամբողջությամբ արտահայտելու համար,— մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ պարբերություններից թաղված և հարություն առած հանդիպեցին,— ապա զարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան։

Է. Դրա համար Երանելի Մաշթոցը՝ արքայի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը և, սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո, ճանապարհ ընկավ, գնաց Հայոց արքա Վռամշապուհի հինգերորդ տարում. և գնաց, հասավ Արամի կողմերը[5], ասորոց երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա[6] է կոչվում և երկրորդի անունն է Ամիդ[7]։ Ներկայացավ սուրբ եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բաբիլաս[8] էր և երկրորդինը՝ Ակակիոս։ [Նրանք] կղերականների և քաղաքների իշխանների հետ միասին հանդիպեցին և շատ մեծարանքներ ցույց տալով հանողներին՝ ընդունեցին հոգ տանելով [նրանց համար] քրիստոնյաների կարգի համաձայն։

Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկու [խմբի] բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամոսատական[9] քաղաքը։

Ը. ... Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ—հայերեն լեզվի նշանագրեր։ Եվ այնտեղ* շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով—կապերով։

Եվ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին՝ իր օգնականների հետ միասին իջավ Սամոսատ քաղաքը, ուր մեծապատիվ կերպով մեծարվեց եպիսկոպոսից և եկեղեցուց։

* Այսինքն՝ Եդեսիայում։

Եվ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրագիր, Հռոփանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո՝ ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից[10], և երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական տրնից[11]։ Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», որ և գրվեց այն գրագրի ձեռով. միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագիրներ [պատրաստելով] նույն դպրության համար։

Թ. ... Եվ բոլոր իրայիններով աստծու շնորհիվ ճանապարհ ընկավ, օթևաններ անցավ, աջողությամբ ու հոգելից ուրախությամբ եկավ հասավ Հայաստան աշխարհը, Այրարատյան գավառի կողմերը, Նոր Քաղաքի[12] սահմանների մոտ, Մեծ Հայաստանի արքա Վռամշապուհի վեցերորդ տարում[13]։

Մեծ Մովսեսն էլ այնպես ուրախ չէր Սինա լեռնից[14] իջնելու ժամանակ. չենք ասում, թե ավելի [ուրախ էր, այլ նույնիսկ] շատ պակաս ուրախ էր։

Եվ արդ, երբ հիշելին* եկավ, մոտեցավ թագավորական քաղաքին, իմաց տվեցին թագավորին և սուրբ եպիսկոպոսին։ Նրանք նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն առնելով՝ քաղաքից դուրս եկան, Ռահ գետի[15] ափին դիմավորեցին երանելիին։ Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարձրաձայն օրհնություններով ետ դարձան քաղաքը, և տոնական ուրախությամբ անց կացրին օրերը։

Ժ. Այն ժամանակ թագավորից շուտով հրաման առավ՝ սկսելով [սովորեցնել] Մարաց խուժադուժ կողմերը, որոնք դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դիվական, սատանայական, ճիվաղական բարքի, այլև խեցբեկազուն և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով։ Ձեռք զարնելով և նրանց շատ տարիների ծնունդնե-

* Հիշելին—հիշվելու արժանին, այսինքն՝ Մաշտոցը։

րին կոկելու՝ դարձրին [նրանց] պարզախոս, հեռատրաման, կրքոված, աստվածատուր իմաստությանը ծանոթ։ Եվ այնպես հանգամանորեն խորամուխ եղան նրանք օրենքների ու պատգամների մեջ, որ մինչև անդամ բոլորովին դուրս եկան իրենց ազգակցությունից*։

ԺԱ. Եվ այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով՝ սկսեցին ավետարանական արվեստը— թարգմանել, գրել և սովորեցնել։

ԺԲ. Եվ իսկապես՝ եկեղեցու սյուներն սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու տեղերը խումբ-խումբ ուղարկեց ճշմարտության աշակերտներին, գիտության մեջ կատարելության հասցվածներիս [խմբերը]՝ կարող [համարելով] ուրիշներին էլ սովորեցնելու։ Նրանց համար կանոն և օրինակ դրեցին իրենց վաստակը և պատվիրեցին նույն կանոնի մեջ մնալ։

ԺԳ. Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար։ Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ գնաց, իջավ Վրաց կողմերը։ Եվ գնաց, ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր, և աշխարհի եպիսկոպոսին, [անունը]՝ Մովսես։ Եվ թագավորն ու ազնվականները, բոլոր գավառներով միասին, շատ անսացին նրան ըստ աստվածային օրենքի։

Եվ նա իր արվեստն առաջարկելով՝ խրատեց, հորդորեց նրանց, և այն ժամանակ ամենքը հանձն առան նրա ուղածը կատարել։ Եվ վրացերեն լեզվի մի թարգմանիչ գտավ, որ անվանվում էր Ջաղա, մի գրագետ և ճշմարտահավատ մարդ. այնուհետև Վրաց արքան հրամայեց իր իշխանության զանազան կողմերից և խառնաշաղանջ գավառներից մանուկներ ժողովել և տալ վարդապետի ձեռքը։

ԺԴ. Եվ շտապեց, շատ աշակերտների հետ գնաց հունական կողմերն անցնելու։ Եվ իր բարի գործերի մեծ համբավի համար, որ առաջուց այնտեղ նրա մասին հռչակված էր հյուսիսային

* Այսինքն՝ այլևս նման չէին իրենց բնիկ ազգակիցներին։

կողմերից, [նա այնտեղ] մտնելու ճանապարհի հենց սկզբից մեծ մտերմությամբ ընտանեբար պատիվ ստացավ աշխարհի եպիսկոպոսներից և իշխաններից ու գավառացիներից, մանավանդ աշխարհի սպարապետից, որ անվանվում էր Անատոլիս։ Սա [Մաշթոցի] մատղաշ բանը գրով հայտնեց կայսրին, որի անունը Թեոդոս[16] էր կոչվում, Արկադ[17] կայսրի որդին, որից և հրաման դուրս եկավ, որ վայել մեծարանքով Ակումիա* անունով կոչեն սրբին։

Իսկ նա իր աշակերտների բազմությունը տարարավ Մելիտինե[18] քաղաքը, հանձնեց քաղաքի սուրբ եպիսկոպոսին, որ Ակակիոս էր կոչվում, և աշակերտների համար ղեկավոր թողեց նրան, որ Ղևոնդեոս էին կոչում, մի հավատարիմ և ճշմարտապաշտ մարդու։ Եվ [ապա] երանելին հետն առավ Դերջանի[19] պատվական եպիսկոպոսին, որի անունը Գինթ էր, և այնտեղի աշակերտների քշերին, և նստելով հանրային անդրուարը** և շատ պատիվ գտնելով՝ հասան թագավորանիստ Կոստանդինական քաղաքը։ Նրա մասին իսկույն պատմեցին արքունիքում, և նա պատվական աթոռի առաջ մտնելով՝ ներկայացավ աստվածակարգ թագավորներին և աշխարհամուտ գոան հայրապետ սուրբ կաթողիկոսին, որի անունն Ատտիկոս էր, և շնորհք գտավ նրանցից։ Հրամայվեց՝ մի որոշ ժամանակ այնտեղ, տիեզերական քաղաքում մեծարել [նրանց] եկեղեցուց, արքունիքից և քաղաքի պատվական իշխաններից կարգված ապրուստով։

Եվ ապա զատիկն անելուց հետո՝ կայսրին բացատրեց նա պիտույքի հանգամանքները և անընդդիմանալի հրաման առավ՝ կայսերագիր դրոշմած սակերներով[20] հայոց կես ազգից սովորեցնելու նպատակով մանուկներ ժողովելու, բարբարիանոսների ժանտագործ մարդկանց ու եկեղեցու հաստատության համար, ինչպես և մեծամեծ պարգևներով [նրան] պատվելու համար։ Արդարև այդ մասին համոզեց պալատականներին, ինքը բան չառնելով՝ թողեց [նրանց]։ Եվ երկրպագեց ծիրանափառ օգոստականներին[21] ու սուրբ կաթողիկոսին և [հրաժեշտի] ողջերթ ընդունեց եկեղեցուց ու քաղաքի երևելի իշխաններից, և բոլոր իրայիններով աջողությամբ նստեցին արքունիքից տրված դևսպակների ու կառ-

* Ակումիա— *աթոռ, անբուն, հսկող, ինչպիսին էր Մաշտոցը։*

** Անդրուար— *սայլակառք, պատգարակ։*

քերի մեջ, և մեծ փառքով ու պատվով բռնեցին թագավորական ճանապարհները։ Եվ բոլոր քաղաքները դիմավորում էին, [և ամեն] քաղաքում երևելի էին հանդիսանում։

Եվ մեծամեծ պարգևներ ստանալով, եկան հասան ժամադիր կողմերը։ Եվ իսկույն ևեթ հանդիպեցին Հայաստանի սպարապետին, կայսրի սակերներով ներկայացան [նրան]։ Եվ երբ նա ստացավ կայսերական դրոշմներով սակերները, շտապեց իսկույն հրամանը կատարելու։ Եվ այնուհետև պատգամավորներ ուղարկեց կայսրի իշխանության մեջ եղած հայոց կես ազգի գավառները՝ բազմաթիվ մանուկներ ժողովելու և նրանց թոշակ նշանակելու հարմարավոր տեղերում, ուր և երանելին իր ուսուցչությունը գործադրում և քաղցրացնում էր ժողովվածների համար։

Ժէ. Եվ ապա դրանից հետո մնաք բարով ասաց՝ Աղվանքի կողմերը գնալու համար։ Եվ գնաց իջավ նրանց աշխարհը և հասնելով թագավորական տեղերը՝ տեսավ Աղվանից սուրբ եպիսկոպոսին, որի անունը Երեմիա էին ասում, և նրանց թագավորին, որի անունն Արսվաղ էր, որոնք և բոլոր ազատանիներով հանդերձ մեծ հնազանդությամբ ընդունեցին [նրան] Քրիստոսի անվան համար։ Ապա երբ հարցրին, նա բացատրեց իր գալու նպատակը։ Եվ նրանք, երկու զուգակիցները՝ եպիսկոպոսն ու թագավորը, հանձն առան ընդունել դպրությունը և հրամայեցին իրենց իշխանության գավառներից ու տեղերից դպրության արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավոր տեղերում դասատներ-դպրոցներ [կազմել] և [նրանց] ապրուստի համար թոշակ նշանակել։

Իսկ երբ հրամանն իսկապես գործով գլուխ եկավ, ապա այնուհետև երանելի Երեմիա եպիսկոպոսն սկսեց շուտով աստվածային գրքերի թարգմանությունն անել, որով իսկույն մի ակնթարթում Աղվանքի վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարո մարդիկ մարգարեագետ և առաքելածանոթ և Ավետարանի ժառանգներ դարձան և բոլոր աստվածային ավանդություններին ոչ մի բանով անտեղյակ [չմնացին]։ Դարձյալ՝ Աղվանքի աստվածավախ թագավորն ավելի ևս հավատարիմ հոգացողությամբ սաստիկ հրամայեց սատանայակիր և դիվամոլ ժողովրդին՝ ձեռք քաշել, ազատվել հնացած դատարկ բաներից և հնազանդվել Քրիստոսի ամենահեշտ լծին։

ԺԲ. Դրանից հետո երկու երանելիներն էլ ուշադրություն դարձրին, որ իրենց ազգի դպրությունն ավելի զարգացնեն և հեշտացնեն։ Մեծ Իսահակն սկսեց թարգմանել և գրել իր առաջվա սովորությամբ։

Պատահեց դարձյալ, որ նրանք իրենց աշակերտներից երկու եղբայրների*, [առաջինը] Հովսեփին[22], որ վերևում հիշեցինք, և երկրորդը՝ [մեկին] Եղնիկ անունով[23], Այրարատյան գավառից, Կողբ գյուղից, ուղարկեցին Ասորոց կողմերը, Եդեսիա քաղաքը, որպեսզի նրանց սուրբ հայրերի ավանդությունները ասորերեն լեզվից հայերենի դարձնեն ու գրեն։

Իսկ թարգմանիչները հասան այնտեղ, ուր ուղարկվեցին, և նրանց պատվերը կատարեցին և [թարգմանություններն] ուղարկեցին պատվական հայրերին, [իսկ իրենք] անցան գնացին Հունական կողմերը, ուր և ուսանելով և համառանալով՝ կարգվեցին հելլենական լեզվից թարգմանիչներ։

Ապա մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ պատահեց, որ մեր Հայաստան աշխարհից գիմեցին [ջան Հունական կողմերը մի քանի եղբայրներ, որոնց առաջինի անունը Վահանես էր, և երկրորդը, ես Կորյունս [էի], և Կոստանդնուպոլսական քաղաքում մոտեցան, հարեցին Եղնիկին, իբրև ընտանեգույն աննդակից, և այնտեղ միասին կատարեցին հոգևոր պիտույքի խնդիրը (այսինքն՝ թարգմանության գործը— Ա. Ա.)։ Հետո նրանք աստվածատուր գրքերի հաստատուն օրինակներով և շատ շնորհագիր հայրերի հետագա ավանդություններով և Նիկիական[24] ու Եփեսոսականի[25] կանոններով՝ եկան երևացին Հայոց աշխարհում և հայրերի առաջ դրեցին սուրբ եկեղեցու կատակարանները[26], որ բերել էին իրենք։

Իսկ երանելի Սահակն առաջ հունարեն լեզվից հայերեն էր դարձրել եկեղեցական գրքերի ամբողջությունը և շատ սուրբ հայրապետների իմաստություն։ Դրանից հետո դարձյալ նա Եղնակի հետ միասին սկսեց (և) առաջվա հանկարծագյուտ շտապովի թարգմանությունները հաստատուն բերված ստույգ օրինակներով։ Եվ Գրքի շատ էլ մեկնություն թարգմանեցին[27]։

ԻԴ. Դրանից հետո պատահեց, որ երանելի Սահակը նույն ճշմարտությամբ, օրերով ու շատ տարիներով լցված և աստծու

* եկեղեցական իմաստով՝ եղբայր—կրոնավոր։

ված պատուղների բարիքներով վայելչացած, Վաամի որդու, Պարսից աշխարհին թագավոր դարձած Հազկերտի առաջին տարում Բագրավանդ գավառում[28], Բլրոցաց գյուղում [էր] նավասարդ ամ-

Նկար 31. Երուսաղեմի մոզաիկ արձանագրությունը (V—VI դդ.)

սի վերջում[29], երբ և երանելիի ծննդյան օրն էին հիշում. ծերունին օրվա երկրորդ ժամին, անուշահոտ յուղի պաշտամունքի ժամանակ աստվածահաճո աղոթքներով (հոգին) Քրիստոսին ավանդեց...։

ԻՋ. ... Հենց միևնույն տարում, երանելի Սահակի մահից վեց ամիս անցնելուց հետո, Հայոց բանակը սուրբ Վարդապետի հետ միասին գտնվում էր Այրարատյան Նոր Քաղաքում, և միևնույն հոգեկրոն վարքով հասավ սրբի քրիստոսակոչ վախճանը մի քանի օրվա հիվանդությունից հետո մեհեկան ամսի տասնեւրեքին։...

Վահանն ու Համայակը[30], աշխարհական բազմության հետ, վերջին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով

ու բորբոքած ջահերով և բուրող խնկերով, և ամբողջ լուսաճաճանչ աշտանակով, և այն լուսավոր առաջխաղաց խաչանշանով, բարձրացան Օշական և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրինավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն աներևույթ եղավ և նրանք ետ դարձան յուրաքանչյուրն իր տեղը։

Իսկ երեք տարի անցնելուց հետո՝ Վահան Ամատունուն հաջողվեց՝ քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնել տալած, քանդակած քարերով, և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը[31]։

ԻԲ. Եվ արդ՝ երանելիի հավատքի տարիների հաշիվը լինում է քառասուն և հինգ տարի, և հայոց դպրությունից մինչև Սրբի վախճանը՝ երեսուն և հինգ տարի, որ այսպես են համարվում. Պարսից արքա Կրմանը թագավորել է վեց տարի, և Հազկերտը՝ քսան և մեկ տարի [և Վռամը տասնութ տարի][32] և Վռամի որդի երկրորդ Հազկերտի առաջին տարում վախճանվեց Երանելին[33]։

Եվ արդ՝ սուրբ հավատքի տարիների հաշիվն սկսվում է Կրման արքայի չորրորդ տարուց մինչև Վռամի որդի երկրորդ Հազկերտի առաջին տարին, և հայոց դպրությունն սկսվել է Հազկերտի ութերորդ տարուց[34]։

1. Հաթեկաց գյուղը գոյություն ուներ մինչև 1915 թ., միայն հին անունն էր փոխվել, անվանվում էր Խասգեղ։

2. «Փուռն» ասելով՝ նկատի ունի արքունի պալատը։

3. Սահակը Գրիգոր Լուսավորչի տոհմից՝ ներսես կաթողիկոսի որդին էր, կաթողիկոս է օծվել 388 թվականին մահացել է 439 թ. սեպտեմբերի 7-ին։

4. Նկատի ունի Դանիելյան գրերը։

5. Աստվածաշնչում «Արամեա» է կոչվում Ասորիքը։ Այդ անունը տարածվում էր Միջագետքի ու Ասորեստանի վրա։

6. Եդեսիան Ուռհա հին նշանավոր քաղաքն էր Հյուսիսային Միջագետքում, Եփրատ գետից արևելք։

7. Ամիդը այժմյան Դիարբեքիր քաղաքն է՝ Տիգրիս գետի վրա։

8. Ուսումնասիրողները առաջարկում են «Բարիլաս» անունն ուղղել «Բաբուլաս»։ Ըստ Մարկվարտի, սա Եդեսիայի եպիսկոպոսական աթոռակալ Բարուլասն էր։

9. Սամոսատ— գտնվում է Եդեսիայից հյուսիս՝ Եփրատի աջ կողմում։

10. Եկեղյաց գավառ— այժմյան Երզնկան է։

11. Պաղաճական տուն կամ Պաղնատուն— Պաղնա գավառն է Չորրորդ Հայքում։

12. «Նոր քաղաք» ասելով՝ Կորյունը նկատի ունի Վաղարշապատը, որն այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր։

13. Վռամշապուհի վեցերորդ տարին լինել չի կարող. տարեթիվն անշուշտ աղավաղված է։

14. Սինայի լեռը գտնվում է Կարմիր ծովի հյուսիս-արևելքում, Թևրակղու վրա։

15. Ռաճ— Թևրես ագավաղումն է Երասխ կամ Քասախ գետերի անունների։

16. Ենդոն— Բյուզանդիայի կայսր (408—450)։

17. Արկադիոսը գահակալել է 395—408 թվականներին։

18. Մելիտինե— այժմյան Մալաթիա քաղաքն է։

19. Դևրջան— Բարձր Հայքի գավառներից է։

20. «Մակերք» է կոչվում կայսերական պաշտոնական դրությունը՝ հրովարտակը, նամակը։

21. Օգոստոս բառն ունի «սուրբ, սրբազան, վեհ, վեհափառ» նշանակություններ։ Այդ մականունն առաջին անգամ գործածվել է Օկտավիանոս կայսեր համար. նրանից հետո՝ սիրտոս բոլոր հռոմեական կայսրերի։

22. Կորյունը Հովսեփ անունով երկու անձնավորություն է հիշում, երկուսն էլ Մաշտոցի աշակերտներից։

23. Եզնիկ (Եզնակ)— Եզնիկ Կողբացին է՝ «Եղծ աղանդոց» նշանավոր գրքի հեղինակը։

24. Նիկիա— քաղաք Բյութանիայում։ Այստեղ 325 թ. Կոստանդիանոս կայսրի նախաձեռնությամբ գումարվել է Նիկիայի տիեզերական ժողովը։

25. Եփեսոս— քաղաք Փոքր Ասիայի արևմտյան կողմում, Էգեյան ծովի ափին՝ Զմյուռնիայից հարավ։ Այստեղ 431 թ. գումարվել է Եփեսոսի տիեզերական ժողովը։

26. «Կտակարաններ»— գործ է ածվել Աստվածաշնչի, այսինքն՝ Հին և Նոր կտակարանների նշանակությամբ։

27. «Մեկնութիւն գրոց»— այստեղ գործ է ածվել Աստվածաշնչի մեկնության նշանակությամբ։

28. Բագրավանդ— Այրիվերտ գավառն է։

29. Նավասարդ— հայկական տարվա առաջին ամիսն է։

30. Հմայակ Մամիկոնյանը Վարդան Մամիկոնյանի եղբայրն էր։

31. Մաշտոցի գերեզմանի վրա ներկայումս գոյություն ունեցող եկեղեցին կառուցվել է 1870-ական թվականներին։

32. Բնագրի մեջ պակասում են Վռամ թագավորի տարիները։ Սկզբնապես անպայման եղել են։

33. Մաշտոցը վախճանվել է մեհեկան ամսի 13-ին, այսինքն՝ 440 թ. փետրվարի 17-ին, շաբաթ օրը։

34. Հազկերտ II-ի առաջին տարին, որ Կորյունը մատնացույց է անում, բննում է 439—440 թվականներին։ Մաշտոցի կրոնավորության տարիները հաշվում է 45, որը հանելով 439-ից, ունենում ենք 394 թվականը։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ V—VI ԴԱՐԵՐՈՒՄ

ԿՈՐՅՈՒՆԸ ԲՈՐԲՈՐԻՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

ԺԲ. Ապա դրանից հետո (այսինքն Մաշտոցի՝ բյուզանդական արքունիքից Արևմտյան Հայաստանում դպրոցներ բաց աննելու թույլտվությունը ստանալուց և վերադառնալուց հետո— Ա. Ա.) ձեռնարկեց նա անպատշաճ ու ծուռ բարբարիանոս աղանդը[1] քննելու։ Եվ երբ ոչ մի հնար չգտավ ուղղության բերելու, սկսեց թշվառացնող գավազանը գործադրել խիստ ծանր պատուհասներով, տանջանքներով, գելաբաններով[2]։ Իսկ երբ դրանով էլ փրկությունից զուրկ մնացին, [այն ժամանակ] ջարդ ավին, ապա խանձեցին, մրեցին ու պետպետ ձևերով խայտառակեցին և աշխարհից դուրս քշեցին։

1. Բորբորիտների մասին տեղեկություն են հաղորդում Կորյունը և Խորենացին։ Ժամանակներից ոմանք այդ անունը ցանկանում են ստուգաբանել հունարեն βορβορος՝ «կեղտ», «տիղմ» նշանակությամբ։ Ոմանք փորձել են բորբորիտների դաղափարախոսության հիմքը համարել նեստորականությունը, որ ճիշտ չէ (Այս շարժման մասին տե՛ս Ն. Տեր-Միքելյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, էջ 63—73)։

2. Գելաբան— տանջելու գործիք է, որով պրկում, ոլորում, ճզմում էին պատժվողին։

ԱՏՏԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԹՈՒՂԹԸ ԲՈՐԲՈՐԻՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. Մէ. Կոստանդնուպոլսի անկախ եպիսկոպոս Ատտիկոսը մեր սիրելի եղբորը և աթոռակցին՝ Հայոց Սահակ եպիսկոպոսին, ողջունում է տիրոջ միջոցով։

Շատ գոհություն ենք մատուցում աստծուն քո բարի համբավիդ համար...։

Արդ՝ մեր ինքնակալ Ավգոստոսի հրամանով քեզ իրավունք է տրվում ուսուցանել մեր կողմի (Հայաստանը), իսկ բորբորիտոնների աղանդը կամ հավանություն բեր, կամ հալածիր քո վիճակից։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ԲՈՐԲՈՐԻՏՆԵՐԻՆ ՀԱԼԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. ՄԸ. Այս ժամանակ հայոց նախարարներից շատերը եկան Մեծ Սահակին հրավիրելու, որպեսզի գա միջամտի և բոլորին միաբանության բերի։ Որովհետև պարսից Վռամ թագավորը իմանալով, որ առանց հայոց նախարարների չի կարող մեր երկիրը պահել, հաշտության բանակցություն է սկսում Սրմբատ ասպետի միջոցով։ Ուստի (Սահակը) Մեսրոպին է հանձնում արևմտյան կողմի ուսուցման գործը և նրա մոտ է թողնում իր Համայակ և Համազասպյան թոռներին՝ Վարդան սպարապետի[1] եղբայրներին։ Հրամայում է քննել պղծագործ բորբորիտոններին, և եթե ո՛չ մեղմությամբ, և ո՛չ խստությամբ ուղղության չգան, ապա չարչարանքներով հալածել, ինչպես թշնամիներ թշնամիներից վրեժ առնեն, որպեսզի իրավացի մահով հոգիների անիրավ մահը խայտառակվի։

1. Վարդան սպարապետ— հայ ժողովրդի ազգային հերոս Վարդան Մամիկոնյանն է։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՄ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գիրք Գ, գլ. Կ. Որովհետև հեթանոսական աղանդից մնացած դառն արմատը անիշխանության ժամանակ նորից երևան էր եկել և շատերի մեջ տարածվել, Երանելին նրանց բնաջինջ արեց Շարիթի որդի հայրաբարո Գիտի օգնությամբ, որ այդ դավառի իշխանն էր։ Նաև տեղեկացավ, որ չարության առաջին ու-

սուցիչները Բաղասական[1] կողմերումն են։ Նա գնաց այնտեղ, շատերին ուղղության բերեց և քչերին անդառնալի կերպով հալածեց Հոնաց երկիրը։ Այդ կողմերի ուսուցման գործը վստահելով Մուշեղ անունով եպիսկոպոսին՝ ինքը դարձավ Գարդմանի ձորի[2] կողմերը, որովհետև լսեց, թե այնտեղ ևս կան նույն աղանդին հետևողներ։ Նրանց էլ գտնելով՝ ուղիղ ճանապարհի է բերում, նորից ուղղության բերելով գարդմանացիների իշխանին, որի անունն էր Խուրս։ Այստեղից նրան հրավիրում է գուգարացիների Աշուշա թագեշխը, խնդրելով որ նույն գործի համար գա իր իշխանության երկիրը, Տաշիրք գավառը։

1. Բաղասական աշխարհը Փայտակարանն է։
2. Գարդմանի ձորը Ուտիքի գավառներից մեկն է։

ՀԱՑԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

Տիրելով Արևմտյան Հայաստանին՝ Բյուզանդիան աստիճանաբար նրան պարտադրեց ռազմավարչական, բաղաքացիական, դատական և ժառանգական այն կարգերը, որ գոյություն ունեին բուն կայսրությունում։ Արևմտյան Հայաստանի ներքին անկախության վերացման գործում կարևոր նշանակություն ունեցան հատկապես Հուստինիանոս կայսեր (527—565) համապատասխան հրովարտակները (նովելներ)։

Հուստինիանոսի հրովարտակների ստորև բերված տեքստերը տրվում են Հ. Մ. Բարթիկյանի թարգմանությամբ, որոնք կատարված են «Corpus juris Civilis, vol. II, Codex Justinianus, recognovit et retractavit Paulus Kreuger, vol. III, Novellae, Appendices, Edictum III de Armeniorum successione, Berolini, 1959» հրատարակությունից (տե՛ս *Պրոկոպիոս Կեսարացի*, Երևան, 1967, հավելված, էջ 299—306)։

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՈՒԹՅՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

**«Հուստինիանոս կայսրը Ջեռայինի[2] Հայաստանի,
Պողեմոնյան Պոնտոսի և ազգությունների
փառավոր յալ զորավարին.**

Շնորհիվն Աստծո, ստանալով հռոմայեցիների իշխանությունը, մենք, մղված հոգատարությունից և խոհեմ կշռադատելով գտանք, որ անհրաժեշտ է Հայաստանի, Պողեմոնյան Պոնտոսի և

ազգությունների համար սույն հրովարտակով հիմնադրել հատուկ ռազմական դևկավարի պաշտոնը։ Մենք քո պայծառափայլությանը, որն իր նախկին գործունեությամբ աչքի է ընկել, նշանակում ենք այդ պատասխանատու պաշտոնին։ Հայոնի պրովինցիաներից Մեծ Հայքը, որը և Ներքնագույն է կոչվում, և ազգությունները (այն է՝ Անղետենան, Ինգիլենան, Ասպիանենան, Սոֆենան, Սոֆանենան՝ Մարտիրոպոլիս քաղաքով և Բալաբիտենան)[3], նաև Առաջին և Երկրորդ Հայքերը հանձնում ենք քո հոգատարությանը՝ նրանց դուքսերի հետ միասին, որով միանգամայն վերանում է կոմեսի պաշտոնը։ Քո տրամադրության տակ ենք դնում որոշ լեգեոններ՝ ոչ միայն նրանք, որոնք մենք նոր ենք հավաքագրում, այլև առանձնացնելով մայրաքաղաքի զորքերի կազմից, ինչպես և Արևելյան ու այլ զորքերից։ Դրանով սակայն այս վերջին զորաբանակների լեգեոնների թիվը չի կրճատվում, քանի որ մենք նախապես նրանց կյանք էինք բաղում լեգեոններ. դրանով մենք պետությանը չենք ծանրաբեռնում, ոչ էլ ավելորդ ծախսեր անում։ Մենք այժմ վերոհիշյալ զորաբանակներից վերցնում ենք որոշ լեգեոններ, բայց դրանից հետո նրանց կազմում մնում է ավելին, քան կար մինչև մեր երջանիկ թագավորությունը»։

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ ԷԴԻԿՏԸ ՀԱՅՈՑ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ[4]

«Հայոց ժառանգական [իրավունքի] մասին.

Մենք ցանկանում ենք հայերի վրա ևս ամբողջությամբ տարածել մեր օրենքները, տալ նրանց պատշաճ հավասարություն, ազատել նրանց նախկին անարդարությունից։

Գլուխ Ա

Մենք վերջերս իմացանք նրանց մոտ գոյություն ունեցող բարբարոսական և կոպիտ մի օրենքի մասին, որ վայել չէ ո՛չ հռոմայեցիներին, ո՛չ էլ մեր պետության արդարության ոգուն. այն, որ ծնողներին ժառանգելու [իրավունք] ունեն միայն տղամարդիկ, բայց ոչ երբեք կանայք։ Այդ իսկ պատճառով սույն սըրբազան օրենքով հրամայում ենք քո պայծառափայլությանը[5], որ

ժառանգելու իրավունքը նույնը լինի, ինչպես թելադրում են հռոմայեցիների օրենքները, որ Հայաստանում ժառանգելու իրավունքը տարածվի և՛ տղամարդկանց, և՛ կանանց վրա։ Մենք այդ նպատակով ենք մեր օրենքները այնտեղ ուղարկել, որպեսզի նման հարցերի կապակցությամբ դիմեն նրանց։

1. Եվ քանի որ մենք բոլորովին անտեղի ենք համարում [վերանայել] այն, ինչ արդեն կատարվել է անցյալում, այդ պատճառով հրամայում ենք, որ սույն օրենքը ուժի մեջ մտնի մեր բարեպաշտ թագավորության սկզբից հաշված[6], և այդ օրից մինչև այժմ վախճանված մարդկանց թողած ժառանգության հարցերը լուծել այս [նոր] օրենքի համաձայն, բացառյալ այն դեպքերը, երբ հարցն արդեն լուծված է, և այս կամ այն կերպ որոշված։ Այսպիսի դեպքերում հրամայում ենք հարցը չվերանայել և թողնել ուժի մեջ։

2. Մենք ցանկանում ենք, որ նշված ժամանակվանից կանայք ևս իրավունք ունենան, այսպես կոչված, տոհմային կալվածքներից ժառանգություն ստանալու։ Իսկ եթե գտնվեն այնպիսիք, ովքեր հակառակ իրենց սովորութային ժառանգական իրավունքի, իրենց դուստրերին արդեն դրանցել են որպես ժառանգորդ, այդ դեպքում այդ կանայք և նրանցից ծնված երեխաները մասնակից թող դառնան տոհմային կալքի ժառանգմանը։

[Վերջաբան]

Քո գերազանցությունը թող պահպանի և ի կատար ածի սույն սրբազան օրենքով արտահայտված մեր կամքը, որպեսզի մեր օրենքները տարածվեն և ուժ ունենան բոլորի վրա։ Սույն օրենքը, ինչպես ասացինք, գործողության մեջ է մտնում մեր թագավորության սկզբից, որից սկսած պետք է խստիվ ղեկավարվել նրանով, և բոլորը [պարտավոր են] այն պահպանել»։

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ 21-ՐԴ ՆՈՎԵԼԱՆ՝ ՀԱՅՈՑ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ[7]

«Հայերի մասին, որպեսզի նրանք ևս ամեն ինչում հետևեն հռոմայեցիների օրենքներին։ Նույն կայսրը Ակակիոսին, Հայաստանի գերապայծառ անթյուպատոսին.

[Ներածություն]

Յանկանալով, որ Հայոց աշխարհում գործեն լավ օրենքներ և այնպես անել, որ այն ոչնչով չտարբերվի մեր պետությունից, մենք զարդարեցինք այն հռոմեական վարչաձևով, վերացրինք նրա նախկին անվանումները։ Մենք սովորեցրինք նրանց օգտվել հռոմեական կարգ ու կանոնից և կարգադրեցինք, որ նրանք [կառավարվեն] միայն այն օրենքներով, որոնք ընդունված են հռոմայեցիների մոտ։ Մենք որոշեցինք սույն օրենքով վերացնել նրանց այդ սխալը, որպեսզի, հակառակ իրենց բարբարոսական սովորույթին, ծնողներին, եղբայրներին և մնացած ազգականներին ժառանգելու իրավունք ունենան ո՛չ միայն տղամարդիկ, այլև կանայք, որ կանայք առանց պռույգի չամուսնանան, և որպեսզի նրանք այսուհետև չդնվեն իրենց ապագա ամուսինների կողմից. մի առավել բարբարոսական սովորույթ, որ մինչև օրս նրանց մոտ օրենքի ուժ ունի։ Լոկ նրանք չեն, որ նման վայրենի սովորություն ունեն, այլև ուրիշ ժողովուրդներ ևս։ Դա մարդկային բնության անպատվությունն է, կանանց սեռի ստորացումը։ Կնոջը դիտում են որպես ցածր և անպատիվ մի էակի, ամեն մի պատվից զրկված լինելու արժանի, կարծես նա աստծուց չի ստեղծվել և չի մասնակցում սերնդի հարատևմանը։

Գլուխ Ա

Արդ, սույն սրբազան օրենքով սահմանում ենք, որ հայերի մոտ ևս ուժ ունենան կանանց՝ ժառանգելու մասին մեր իրավունքը, մեր օրենքները, ոչ մի տարբերություն գոյություն չունենա տղամարդկանց և կանանց միջև։ Ինչպես որ սահմանված է մեր օրենքներով ծնողների ժառանգելու իրավունքի մասին, այն է՝ հորը, մորը, պապին, տատին և այսպես վերընթաց գծով, կամ էլ վարընթաց գծով՝ որդուն, դստերը ժառանգելու մասին, ահա այդ նույն կարգով կատարվի նաև հայերի մոտ և Հայաստանում գործող օրենքները ոչնչով չտարբերվեն հռոմայեցիների [օրենքներից]։ Քանի որ նրանք մեր պետության հպատակներն են և մյուս ժողովուրդների հետ միասին մեզ են ծառայում և վայելում մեր [բարիքները], ապա չի կարելի, որ միայն նրանց մոտ կանայք չօգտվեն այն հավասարությունից, որ գոյություն ունի մեզ մոտ։ Բոլորի վրա հավասարապես թող տարածվեն մեր օրենքները, և այն [օրենքները], որոնք մենք վերցրել ենք հներից և զետեղել մեր ինստիտուցիաների և դիդեստաների մեջ, ինչպես նաև նախկին ինքնակալների և մեր կողմից հրապարակված օրենքները։

Գլուխ Բ

Մենք սահմանում ենք, որ այս բոլորը ուժի մեջ լինեն ընթացիկ տասնևչորսերորդ ինդիկտիոնի սկզբից[8], սույն օրենքի հրապարակումից։ Մենք գտնում ենք, որ անցյալի վրա այն տարածելը ոչ թե կկարգավորեր հարցը, այլ ընդհակառակը՝ առաջ կբերեր խառնաշփոթություն։ Այն թող ուժի մեջ մտնի, ինչպես ասացինք, ընթացիկ ինդիկտիոնի սկզբից. այսուհետև ժառանգելու մեջ հավասարություն կա, ժառանգելու իրավունքը հավասարապես տարածվում է և՛ կանանց, և՛ տղամարդկանց վրա։ Անցյալում կատարվածը և՛ տոհմական կալվածների, և՛ որևէ այլ կայքի [ժառանգության] վերաբերյալ՝ թույլ ենք տալիս մնա անփոփոխ, և կանայք ոչ մի դեպքում չպետք է մաս ունենան այդ տոհմական կալվածքներից և ընդհանրապես ժառանգությունից, որն արդեն տարվել է մինչև 13-րդ ինդիկտիոնը ներառյալ։ Մեր սույն օրենքը ուժի մեջ է մտնում միայն նշված ժամանակվանից, այն է՝ 14-րդ ինդիկտիոնից։

Վերջաբան

Քո պայծառափայլությունը և քեզանից հետո պաշտոնդ ստացողները մեր սույն սրբազան օրենքը թող հավիտյան պահպանեն»։

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ 31-ՐԴ ՆՈՎԵԼԼԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի չորս արխոնտների նշանակման մասին

Նույն կայսրը Արևելքի սրբազան պրետորիոնի երկիցս պրեֆեկտին, ամենափառավորյալ Հովհաննեսին՝ ապոհյուպատոսին և պատրիկին.

[Ներածություն]

Այն ինչ թափթփված է և դեսուդեն ցրված, եթե պետք եղած կարգի բերվի և դասավորվի՝ բոլորովին այլ տեսք կստանա։ Տգեղը գեղեցիկ կդառնա, վատը՝ լավ, այն, ինչ նախկինում ցրված էր և խառնիճաղանջ, ձև կստանա և որոշակիություն ձեռք կբերի։ Մենք ահա այդպիսի վատ դրության մեջ գտանք Հայոց երկիրը և որոշեցինք ընդհանուր ձևի բերել այն, որպեսզի բարեկարգ վիճակը նրան անհրաժեշտ հզորություն տա և պետք եղած կարգ ու կանոնը հաստատվի։

Գլուխ Ա

Այդ իսկ նպատակով մենք կազմակերպեցինք չորս Հայք, մեկը՝ Ներքնագույնը, որի մայրաքաղաքը կրում է մեր բարեպաշտ անունը, անցյալում Բազանիս կամ Լեոնտուպոլիս։ Նրան մենք շնորհեցինք անթյուպատոսություն և նրա կառավարիչ նշանակեցինք պայծառափայլ Ակակիոսին, որի պաշտոնը համարում ենք սպեկտաբիլային[10] և շնորհում նրան բոլոր այն, ինչ հասնում է անթյուպատոսությանը։ Մենք նրան շնորհեցինք անթյուպատոսի նշանակներ և օժտեցինք բոլոր այն իրավունքներով, որ հասնում են այդ պաշտոնին։ Ներքնագույն [Հայքին] մենք տալիս ենք հետևյալ քաղաքները. Թեոդոսուպոլիսը, որը նախկինում ևս նրա կազմի մեջ էր մտնում, Սատալան, Նիկոպոլիսը, Կոլոնիան՝ վերցնելով այն, այսպես կոչված, Առաջին Հայքից, Տրապիզոնն ու Կերասունը՝ նախկին Պոդեմոնյան Պոնտոսից։ Այսպիսով, որոշ [քաղաքներ] վերցնելով պրովինցիայի պայծառափայլ արխոնտից, ինչպես և երևելի մոդերատորից, կազմում ենք մեկ ամբողջական պրովինցիա՝ յոթ քաղաքով և նրանց շրջաններով։

1. Մենք կազմակերպեցինք Երկրորդ Հայքը, որ նախապես Առաջին [Հայք] էր կոչվում՝ Սեբաստիա կենտրոնով։ Մենք նրան տվեցինք Սեբաստուպոլիս քաղաքը, որն անցյալում էլ նրա կազմում էր, դրա վրա ավելացրած նաև Կոմանան՝ վերցնելով այն անցյալում Պոդեմոնյան Պոնտոս կոչվածից, Զելան՝ Հելենոպոնտոսից, նաև Բրիսան, այնպես որ այս պրովինցիայի կազմում կա հինգ քաղաք, իսկ կառավարման հեգեմոնային ձևը թողնում ենք,

ինչպես որ նախկինում էլ էր, իսկ կառավարչին չտվեցինք ավելի բարձր աստիճան, այլ թողեցինք նույնը, ինչ նախկինում ուներ։

2. Այնուհետև կազմեցինք Երրորդ Հայքը, որ նախկինում Երկրորդ [Հայք] էր կոչվում։ Կենտրոնը հին, երևելի Մելիտենն քաղաքն է, որ գտնվում է շատ հարմար վայրում, ունի առողջ կլիմա և գտնվում է Եփրատի հոսանքից ոչ հեռու։ Մենք ներկա հրամանագրով հարմար գտանք այն բարձրացնել սպեկտաբիլային աստիճանի, նրա արխոնտին հորջորջել Հուստինիանոսյան կոմես, և որպես ռոճիկ սահմանում ենք յոթ հարյուր սոլիդ, նրա օգնականին՝ յոթանասուներկու սոլիդ, իսկ նրա դիվանատանը՝ վաթսուն սոլիդ և այն ամենը, ինչ սահմանված է նման աստիճանների համար։ Տաքսեոտ կոչվածները [պարտավոր են] զբաղվել ինչով որ իրենք անցյալում զբաղվում էին, մասնավորապես պետական հարկերի գանձման գործով։ Նրանց անունն է միայն փոխվում և կոչվում են այժմ կոմիտիանոսներ, իսկ մնացած ամեն ինչը մնում է անփոփոխ, ինչպես նախկինում տաքսեոտների ժամանակ։ Նրան տալիս ենք հետևյալ քաղաքները. Արքա, Արաբիսոս, Արիարաթիա, Մյուս Կոմանա (սա կոչվում է նաև Ոսկե [Կոմանա]), Կուկուսոս, որոնք և անցյալում էլ ուներ, և այսպիսով նրա կազմում կա վեց քաղաք։

3. Մենք կազմեցինք նաև Չորրորդ Հայքը, որ նախկինում պրովինցիայի կառուցվածք չուներ։ Նա բնակեցված լինելով ազգություններով, կրում էր տարբեր բարբարոսական անուններ՝ Յոֆաննեն, Անզիտենե, Յոճանե, Ասթիաննեն, Բալաբիտենե[11] և գտնվում էր սատրապների իշխանության ներքո։ Այս իշխանության նման հորջորջումը ո՛չ հռոմեական է, ո՛չ էլ մեր նախնիներից է գալիս, այլ ներմուծված է օտար պետությունից։ Մենք այնտեղ ևս քաղաքացիական կառավարում հաստատեցինք՝ քաղաքացիական արխոնտ նշանակելով, և նրան տվեցինք Մարտիրոպոլիս քաղաքը ու Կիթարիզոն ամրոցը։ Եվ քանի որ մենք նրան կոնսուլային դարձրինք, հետևաբար նա դասվեց օրդինար[12] պրովինցիաների շարքը, այնպես, որ չորս Հայքերից երկուսը սպեկտաբիլային են, որոնցից մեկը կառավարվում է անթյուպատոսի կողմից, մյուսը՝ կոմեսի, Առաջին Հայքի կառավարիչը անթյուպատոս է, իսկ Երկրորդ Հայքինը՝ կոմես։ Ինչ վերաբերում է Երրորդ և Չորրորդ [Հայքի] կառավարիչներին, ապա նրանք օրդինար են։ Մենք

կարդադրեցինք, որ մինչև հինգ հարյուր դահեկան դումարի բողոքարկման հարցերով չդիմեն երջանիկ քաղաքին, այլ մերձակա սպեկտաբիլյային արխոնտաներին։ Այդ իսկ պատճառով մենք սահմանում ենք, որ Սևաստիա, Առաջին Հայքի արխոնտին, այն է՝ անթյուպատոսին ուղղվեն բողոքարկումները Երկրորդ Հայքից, իսկ մինչև վերոհիշյալ դումարի չափով բողոքարկումները Չորրորդ Հայքից՝ Մելիտենե, Երրորդ Հայքի կոմեսին։

Գլուխ Բ

Այս բոլորից հետո մենք նպատակահարմար գտանք, որ Երրորդ Հայքի կառավարիչ նշանակենք մի հայտնի մարդու, որն արդեն երկար ժամանակ ծառայել է մեզ և արժանի է այդ մեծ և կարևոր պաշտոնին։ Այդպիսին մենք համարում ենք պայծառափայլ Թովմային, որը երկար ժամանակ պաշտոնավարել է Հայաստանում, բացի դրանից նա օգտակար է և ազնվորեն է մեզ ծառայել ու ծառայում։ Ահա նրան ենք մենք առաջ քաշում այդ պաշտոնին, որպեսզի նա կառավարի այս պրովինցիան մեր կողմից սահմանված կարգի համաձայն, հոգ տանի կատարելու մեր այլևայլ կարգադրությունները, որոնք ուղղակի մեր կամ անուղղակի՝ սրբազան կոմմոնիտորիաների կողմից են տրվում նրան, և՛ իրեն վստահված պրովինցիայի, և՛ մյուս [պրովինցիաների] վերաբերյալ։ Այդ առթիվ մենք պատրաստել ենք նրա համար բազում և զանազան հարցերի վերաբերյալ սրբազան կոմմոնիտորիաներ, որոնք նա պետք է ի կատար ածի շրջաններում ևս։

1. Ինչպես բազմիցս ասել ենք, հոգևորականության վերաբերյալ պետք է պահպանել նախկին իրավիճակը, ոչ մի բան չի փոխվում ո՛չ մետրոպոլիտների իրավունքների հարցերում, ո՛չ էլ նրանց ձեռնադրության գործում։ Ովքեր որ անցյալում իրավունք են ունեցել ձեռնադրելու, այժմ էլ թող ձեռնադրեն, և նախկին մետրոպոլիտները թող մնան իրենց վիճակում։ Այդ հարցում որևէ նորամուծություն չի կատարվում։

Գլուխ Գ

Միանգամայն հասկանալի է, որ քանի որ Երրորդ Հայքի կոմեսին մենք ոչ միայն քաղաքացիական, այլև ռազմական իշխանություն ենք տվել, ապա նրան են ենթարկվում նաև այդ [պրովինցիաներում] գտնվող զինված ուժերը։ Նա, որպես ռազմական դեկավար, իրավունք ունի իր կողմից կարգադրություններ անելու նրանց, հոգ տանելու և ապահովելու նրանց մատակարարումը, բննելու նրանց թույլ տված ապօրինությունները, թույլ չտալու, որ զինվորները բռնանան հպատակների վրա։ Եթե ավելի ծանր հանցանք կատարվի, ապա նա [պետք է] լսի այդ բռնական գործը՝ եթե օրինազանցները զինվորականներ են։ Նա օժտված է այն բոլոր լիազորություններով, ինչ որ ռազմական դեկավարները։ Ինչպես որ մենք ռազմական լիազորություններ ավելցրինք Իսավրիայի, Պակատյան Փռյուգիայի կոմեսներին, նույնպես և Լիկաոնիայի, Պիսիդիայի և Թրակիայի պրետորներին, այնպես և նա ոչ միայն քաղաքացիական գործերում իշխանություն ունի, այլև ռազմական։ Նա իրավասու է և՛ զինվորական, և՛ քաղաքացիական անձնավորություններին կարգադրություններ կատարելու, որպես միասնական իշխանության կրող։ Նրա հիմնական հոգսը պիտի լինի այն, որ պրովինցիաներում ոչ մի հանցագործություն տեղի չունենա, անհրաժեշտ պատիժ սահմանի [զանցանքների համար]։ Նրա այդ իրավասությունը տարածվում է պրովինցիայի բոլոր անձնավորությունների վրա [հավասարապես], մասնավոր անձնավորություն է նա, զինվորական, թե պետական պաշտոնյա։ Մենք ուզում ենք, որ մեր հպատակների մեջ մշտապես տիրի անդորրություն, որպեսզի աշառությունը օրենքի հանդեպ արհամարանք չառաջացնի։

Վերջաբան

Այդպիսով քո գերազանցությունը թող ջանա այժմ և միշտ պահպանել այն, ինչ ներկայացրել ենք մենք՝ չորս Հայքերի կազմակերպման մասին կարգադրությամբ, մասնավորապես Երրորդ [Հայքի] մասին, որը և պատճառ դարձավ սույն սրբազան օրենքի հրապարակման, և ամեն ինչ անի, իր կողմից նույնիսկ հատուկ կարգադրություններ հրապարակելով, մեր սահմանած ամենամյա հարկերը հավաքելու համար»։

1. Տվյալ հրովարտակը հրապարակվել է Հուստինիանոսի գահակալության առաջին տարիներին (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 135)։
2. Խոսքը հայոց ղորավար Սիտտասի (Զնտա) մասին է։

3. Ըստ հերթականության, հայկական Հանձիթ, Անգեղ տուն, Հաշտեն, Փոքր Ծոփք, Մեծ Ծոփք և Բալահովիտ գավառներն են։

4. Հրապարակվել է 535 թ. հուլիսի 23-ին (տե՛ս Ն. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 184)։

5. Հրովարտակում չի պահպանվել այն անձնավորության անունը, որին ուղղված է եղել այն։ Ն. Ադոնցի կարծիքով, նա եղել է Արևելքի պրետորյան պրեֆեկտ Հովհաննեսը (տե՛ս Ն. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 185)։

6. Հուստինիանոսի տվյալ հրովարտակը որոշ դժգոհությունների տեղիք է տվել, դրա համար էլ Հուստինիանոսը հաջորդ տարին հրապարակել է մի նոր հրովարտակ, որի մեջ վերանայել է նախորդը։

7. Հրապարակվել է 536 թ. մարտի 18-ին (տե՛ս Ն. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 184)։

8. 14-րդ ինդիկտիոնը սկսվում է 535 թ. սեպտեմբերից։

9. Հրապարակվել է 536 թ. մարտի 18-ին (տե՛ս Ն. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 184)։

10. Հուստինիանոսը տվյալ ռեֆորմներով նկատի է ունեցել ո՛չ միայն վարչական նկատառումները, այլև՝ դատավարությունից ակնկալվող շահերը։ Մինչև Հուստինիանոսը, տվյալ պրովինցիայի ղեկավարը իրականացնում էր նաև դատավարությունը։ Հուստինիանոսի ռեֆորմով՝ մինչև 500 սոլիդ հայցագին ունեցող գործերի վերաբերյալ կառավարիչների որոշումները վերջնական էին (տե՛ս Ն. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 163—164)։

11. Տե՛ս սույն էջի № 3 ծանոթագրությունը։

12. Ըղդինար համարվող դատավորի վճիռը մինչև 300 սոլիդ հայցագին ունեցող գործերի մասին վերջնական էր (տե՛ս Ն. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 164)։

ԳՐՈԿՈՊԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիրք III

Գլ. 1. Նախորդ գրքում ես խոսեցի այն մասին, թե ինչպես Հուստինիանոս կայսրը ամրություններով ապահովեց Արևելքը։ Ձեռնարկելով պատմել հռոմեական պետության պարսկական սահմանների վրա նրա կառուցած ամրությունների մասին, ես նպատակահարմար գտա սկսել հայերից, որոնք բնակվում են Ամիդից մինչև մյուս Թեոդոսուպոլիսը՝ պարսիկների դիմաց ընկած շրջաններում։ Նախքան [Հայաստանում] կատարված կառուցումների մասին խոսելը, ես կարևոր եմ համարում հիշատակել, թե ինչպես կայսրը նախկինում չափազանց անապահով վիճակում ապրող հայերին արժանացրեց այժմյան կայուն անվտանգության։

նա այդտեղի բնակչությանը փրկեց ոչ այնքան շինարարությամբ, որքան այլ խնդիրներում իր ցույց տված հոգատարությամբ, որի մասին ես այստեղ մանրամասն կպատմեմ։ Սկսենք քիչ հեռվից։

... Այն ժամանակ էր, որ պարթևական արքաներից մեկը, իր Արշակ անունով եղբորը հաստատեց Հայոց թագավոր, ինչպես այդ մասին հիշատակում է Հայոց պատմությունը[1]։ Ոչ ոք ահա չկարծի, որ Արշակունիները հայկական ծագում ունեն։ Եվ այսպես [հայերի] և [պարթևների] միջև հինգ հարյուր տարվա ընթացքում խաղաղություն էր տիրում, որը պայմանավորված էր [իշխող հարբստությունների] աղգակցական կապերի առկայությամբ։ Հայոց թագավորը նստում էր Մեծ Հայք կոչված [երկրում], լինելով դեռ վաղուց հռոմեական կայսեր հպատակը։ Որոշ ժամանակ անց Հայոց մի ինչ-որ [ուրիշ] Արշակ թագավոր[2] ունենում է երկու որդի, որոնց անուններն էին Տիգրան և Արշակ։ Իր կյանքի վերջում նա կտակ թողեց, որի համաձայն երկու որդիներն էլ դառնում էին իշխանության ժառանգորդներ։ Բայց նա պետությունը հավասար կերպով չբաժանեց նրանց միջև։ Նա Տիգրանին թողեց քառապատիկ ավելի բաժին։ Ահա հայր Արշակը, այս կերպ կարգադրելով թագավորության գործերը, վախճանվեց, իսկ որդի Արշակը, որին փոքր բաժին էր հասել, շատ զայրացած և դժգոհ, հարց բարձրացրեց հռոմայեցիների կայսեր առջև, հույս ունենալով բոլոր միջոցներով վերացնել եղբոր թագավորությունը և հոր անարդարացի որոշումը չեղյալ հայտարարել։ Այն ժամանակ հռոմայեցիների վրա իշխում էր Արկադիոսի[3] դեռ շատ մանկահասակ որդի Թեոդոսը։ Տիգրանը, վախենալով կայսեր հաշվեհարդարից, իր թագավորության հետ միասին հանձնվեց պարսիկներին, գերագասելով ապրել Պարսկաստանում որպես մասնավոր անձնավորություն, քան թե եղբոր հետ արդարացի լուծել հարցը և միասին, արդար ու օրինավոր թագավորել հայոց վրա։ Արշակն իր հերթին, ոչ պակաս երկյուղ զգալով պարսիկների և իր եղբոր ոտնձգություններից, որոշ պայմաններով, որոնց մասին ես խոսել եմ պատերազմների մասին գրքում[4], իր թագավորությունը զիջեց Թեոդոս կայսրին։ Եվ ահա որոշ ժամանակ Հայոց երկիրը դարձավ հռոմայեցիների և պարսիկների կռվախնձոր և վերջիվերջո նրանք եկան համաձայնության, որ պարսիկները տիրեն Տիգրանի բաժնին, հռոմայեցիները՝ Արշակի։ Երկու կողմերն էլ այդ հաստատեցին պայմանա-

գրով, որից հետո հռոմայեցիների կայսրը Հայոց իշխան էր նշանակում՝ երբ որ ցանկանար և ում որ ցանկանար։ Այդ իշխանին անվանում էին, ինչպես և այժմ, Հայաստանի կոմես[5]։

Բայց որովհետև այդպիսի ղեկավարությունը, զուրկ լինելով ռազմական ուժից, ի վիճակի չէր դիմադրելու Թշնամիների հարձակումներին, և Հուստինիանոս կայսրն էլ համոզվեց, որ դրա պատճառով Հայաստանը մշտապես տակնուվրա է լինում ու, բացի դրանից, բարբարոսների համար այն դյուրամատչելի է, ապա վերացրեց այդ իշխանությունը և հայերի վրա նշանակեց զորավար, Թշնամուն դիմադրելու համար տալով նրան բավարար քանակությամբ զորք։ Ահա նա այդպես տնօրինեց Մեծ Հայք կոչված [երկրի] գործերը։ Ինչ վերաբերում է մյուս Հայքին, որը գտնվում է Եփրատ գետից այս կողմ և տարածվում է մինչև Ամիդ քաղաքը, այնտեղ իշխում էին հինգ հայ սատրապներ[6], որոնց իշխանությունը ժառանգական էր և ցմահ։ Նրանք հռոմայեցիների կայսրից ստանում էին միմիայն նշանակներ։ Այդ նշանակների մասին արժե խոսել, քանի որ դրանք ոչ ոք չի տեսնելու այլևս։ Դա բրդյա քղամիդ էր, սակայն ոչ թե ոչխարի բրդից, այլ ծովից հավաքված։ Այդ բուրդը բուսնում է պիննոս կոչված ծովային կենդանիների վրա։ Սիրանիի այն մասը, որի վրա սովորաբար գցվում էր բեհեզը, ոսկուց էր։ Քղամիդի վրա ամրացված էր լինում ոսկե ճարմանդ՝ մեջտեղում թանկագին քար։ Այդ ճարմանդից ոսկե լայն շղթայով կախված էր երեք հակինթ։ [Քղամիդից բացի] կար նաև մետաքսյա պատմուճան, ամենուրեք պատճռված ոսկե զարդերով, որոնց սլյումիա են անվանում, և մինչև ծունկը հասնող կարմիր կոշիկներ, որոնք սովորաբար հագնում են հռոմայեցիների և պարսից թագավորները։

Հռոմեական զորքը երբևիցե օգնություն չի ցուցաբերել ո՛չ Հայոց թագավորին, ո՛չ էլ սատրապներին։ Պատերազմական գործերում նրանք ինքնուրույն էին։ Որոշ ժամանակ անց, Զենոնի թագավորության միջոցին, երբ Իլլոսն ու Լեոնտիոսը ապստամբություն բարձրացրին կայսեր դեմ[7], սատրապներից մի քանիսը որոշեցին բացահայտ կերպով նրանց միանալ։ Այդ էր պատճառը, որ երբ Զենոն կայսրը ճնշեց Լեոնտիոսի և Իլլոսի [ապստամբությունը], մի շատ թույլ և աննշան իշխանություն ունեցող սատրապի՝ Բալաբիտենն կոչված երկրում թողեց նախկինի պես իշխել

միայն, իսկ մնացած բոլորին, զրկելով իշխանությունից, չտվեց այն նրանց ցեղակիցներին, այլ, ինչպես հռոմեական բոլոր մյուս իշխանություններում էր, դարձրեց ոչ ժառանգական՝ ըստ կայսեր ցանկության։ Բայց նրանց իշխանության տակ եղած զորքը բաղկացած էր ոչ թե հռոմայեցիներից, այլ փոքրաքանակ հայերից, ինչպես ընդունված էր հնում, որի պատճառով էլ նրանք ի վիճակի չէին դիմադրել Թշնամիների հարձակումներին։ Իմանալով այդ, Հուստինիանոս կայսրն անմիջապես վերջ տվեց սատրապների իշխանությանն և այնտեղի ցեղերի վրա նշանակեց երկու, այսպես կոչված, դուքսերի։ Նա նրանց տվեց հռոմեական մեծաքանակ զորք, որպեսզի պահպանեն հռոմեական սահմանները, իսկ նրանց համար կառուցեց հետևյալ ամրություններն։

Գլ. 2. Ես կսկսեմ Միջագետքի շրջաններից, որպեսզի իմ այս պատմությունը վերևում ասվածի շարունակությունը լինի։ [Հուստինիանոսն] ահա հայկական ցեղերի վրա իշխող [երկու] իշխաններից՝ դուքս կոչվածներից մեկին հաստատեց Մարտիրոպոլիս կոչված քաղաքում[8], իսկ մյուսին՝ մի ամրոցում, որն անվանում են Կիթարիզոն։ Ես այժմ կբացատրեմ, թե հռոմեական պետության ո՛ր շրջանում են գտնվում այս վայրերը։ Սոֆանենե կոչված Հայքում գտնվում է Մարտիրոպոլիս անունով քաղաքը՝ Նիմֆիոս գետի ափին, Թշնամիներին ամենից մոտ վայրում, որովհետև այստեղ հռոմայեցիների և պարսիկների սահմանը Նիմֆիոս գետն է։ Գետի մյուս ափին է գտնվում Արքսանենե երկիրը[9], որ դեռ վաղուց հպատակ էր պարսիկներին։ Այն պատճառով, որ [Մարտիրոպոլիսը] հռոմայեցիների կողմից անուշադրության էր մատնված, նա շարունակ ենթակա էր բարբարոսների վտանգին։ Օրինակ, երբ Անաստասիոսի թագավորության օրոք Պարսից արքա Կավադը ներխուժեց հռոմայեցիների երկիրը, նա զորքը տարավ Մարտիրոպոլսի վրայով, որովհետև նա գտնվում էր Ամիդից լավ քայլող մարդու համար մեկ օրվա ճանապարհից մի քիչ ավելի հեռավորության վրա։ Նա քաղաքը գրավեց չափազանց հեշտությամբ, իմիջիայլոց, առանց պաշարելու, հարձակվելու կամ դրոհելու, այլ պարզապես ասելով, որ դալիս է, որովհետև այդտեղի բնակիչները, լավ դիտենալով, որ իրենք մի վայրկյան անդամ ի վիճակի չեն դիմանալ պաշարման (նրանք տեսել էին, որ մարերի զորքը արդեն մոտեցել է), Սոֆանենեի սատրապի սատ-

բապական հանդերձանքը կրողի՝ Թեոդորոսի հետ միասին անմիջապես գնացին Կավադի մոտ, հանձնելով նրան և՛ իրենց, և՛ Մարտիրոպոլիսը, ինչպես նաև երկու տարվա պետական հարկերը։ Կավադը այդ բանից գոհ, ձեռք չտվեց ո՛չ քաղաքին, ո՛չ էլ [շրջակա] երկրին՝ որպես պարսից իշխանության պատկանող, բնակիչներին էլ ոչ մի վնաս չհասցրեց, ոչ մի ավարառություն չարեց, քաղաքում ոչ մի փոփոխություն չմտցրեց, այլ նույն Թեոդորոսին նշանակեց սատրապ և որպես երախտագիտության ապացույց՝ նրան տվեց իշխանության նշանակներ, որպեսզի պահպանի պարսից երկիրը։ Այնուհետև նա զորքը առաջ տանելով, պաշարեց ու գրավեց Ամիդը և վերադարձավ պարսից երկիրը։ Այդ մասին ես պատերազմների մասին գրքում ասել եմ[10]։ Անաստասիոս կայսրը, լավ գիտենալով, որ անհնարին էր փրկել ոչ մի ամրություն չունեցող Մարտիրոպոլիսը թշնամիների հարձակումներից, բոլորովին չզայրացավ Թեոդորոսի և սոֆաններեցիների վրա, այլ շատ շնորհակալություն հայտնեց նրանց այդ նախաձեռնության համար։ Մարտիրոպոլսի պարսպի հաստատությունը մոտ չորս ոտնաչափ էր, իսկ բարձրությունը՝ մինչև քան, այնպես որ թշնամիները կարող էին այն գրավել ոչ միայն գրոհով, կամ մեքենաների օգնությամբ, այլ պարզապես շատ հեշտությամբ նրա վրայից ներս ցատկելով։

Այդ պատճառով Հուստինիանոս կայսրը մտածեց հետևյալը։ Պարսպից դուրս հիմքեր փորեց և կառուցեց մի այլ պարիսպ՝ չորս ոտնաչափ հաստությամբ, երկու պատերի արանքում թողնելով նույնպես չորս ոտնաչափ լայնությամբ տարածություն։ Այդ [նոր] պարիսպը ևս նա բարձրացրեց քսան ոտնաչափ և այնպես արեց, որ բոլոր չափերով այն համընկնի նախկին պարսպին։ Դրանից հետո նա այդ երկու պատերի միջև եղած տարածությունը լցրեց քարերով և կրաշաղախով և այդպիսով ստացվեց տասներկու ոտնաչափ լայնությամբ մի կառույց։ Դրա վրա մոտավորապես նույն հաստության պարիսպ բարձրացրեց և դարձրեց նախկինի կրկնապատիկը։ Բացի դրանից, նա քաղաքի համար կառուցեց ամուր նախապարիսպ, մի խոսքով, այն բոլորը, ինչ անհրաժեշտ է քաղաքի ամրությունների պաշտպանության համար։

Գլ. 3. Մարտիրոպոլսից արևմուտք գտնվում է Ֆեյսոն անունով վայրը, նույնպես Սոֆաններն կոչվող Հայքում, Մարտիրոպոլսից մեկ օրվա ճանապարհից մի քիչ պակաս հեռավորության վրա։ Այս վայրից այն կողմ, մոտ ութ մղոն հեռավորության վրա բարձրաբերձ և բոլորովին անանցանելի լեռներն իրար միանալով, կազմում են երկու՝ իրար շատ մոտ գտնվող լեռնանցքներ, որոնց սովորաբար կոչում են Կլեյսուրներ։ Պերսարմենիայից Սոֆաննեն գնացողների համար, որտեղից էլ նրանք գնան՝ պարսկական սահմաններից, թե Կիթարիզոն ամրոցի վրայով, պետք է անցնեն միայն այդ երկու լեռնանցքներից։ Տեղացիք [լեռնանցքներից] մեկն անվանում են Իլլիրիսոս, իսկ մյուսը՝ Սաֆխաս։ Թշնամիներին այս ճանապարհից դրկելու համար, այս վայրերը կարող էին առավել ապահովության և հոգատարության. ընդհակառակը, անցյալում մարդիկ անպաշտպան էին թողել դրանք։ Հուստինիանոս կայսրը և՛ Ֆեյսոնում, և՛ լեռնանցքներում նշանավոր և անառիկ ամրություններ կառուցեց, կայազոր հաստատեց և այդպիսով երկիրը բարբարոսների համար միանգամայն անմատչելի դարձրեց։ Ահա այն, ինչ կատարեց Հուստինիանոս կայսրը Սոֆաննեն երկրում։

[Հուստինիանոսն այնուհետև] Կիթարիզոն վայրում, որը գտնվում է Ասթիաննեն կոչված [երկրում], բարձրադիր տեղում, հսկայական, միանգամայն անառիկ և բոլորովին նոր ամրոց կառուցեց։ Նա մշտահոս ջուր բերեց, բնակիչներին ամեն ինչով ապահովեց և, ինչպես արդեն ասել եմ, մյուս դուքսին բավական մեծ կայազորով հաստատեց այստեղ։ Այդ ձևով ահա նա ապահովեց հայկական ցեղերի անվտանգությունը։

Կիթարիզոնի, Թեոդոսուպոլսի և Երկրորդ Հայքի մեջտեղում գտնվում է Խորզանե երկիրը[11], որի տարածությունը մոտ երեք օրվա ճանապարհ է։ Նա պարսիկների հետ ոչ մի սահմանագիծ չունի՝ լիճ, գետ հոսանք, կամ լեռնանցք։ Նրանց սահմաններն այստեղ խառնիխուռն են, այնպես որ, բնակիչները, որոնք կա՛մ հռոմայեցիներին, կա՛մ էլ պարսիկներին են հպատակ, մեկը մյուսից որևէ ոտնձգության մասին կասկածելու ոչ մի վախ չունեն։ Ընդհակառակը, նրանք իրար միջև խնամիական կապեր են հաստատում, առևտուր անում և միասին երկրագործությամբ զբաղվում։ Իսկ այն դեպքում, երբ թագավորի հրամանով որևէ կողմի զորահրամանատարները զորքով հարձակվեն մյուս կողմի վրա, հարեւաններին միշտ գտնում են անպաշտպան, որովհետև իրար շատ

մոտ գտնվող անչափ մարդաշատ բնակավայրերը դեռ հնուց ոչ մի ամրություն չունեին։ Այդ էր պատճառը, որ Պարսից արքայի համար հռոմեական սահմաններն այստեղից անցնելը շատ դյուրին ու հեշտ գործ էր, մինչև որ Հուստինիանոս կայսրը այս հարցը լուծեց հետևյալ կերպ։ Այդ երկրի մեջտեղում գտնվում է Աբտալեսոն անունով բնակավայրը, որն ամրապատկ պարսպով շրջապատելով, դարձրեց աննկատանելի ամրոց, այնտեղ հաստատեց կայազոր մշտական զորահրամանատարի գլխավորությամբ, որին հռոմայեցիները լատիներեն լեգիով անվանում են դուբս։ Ահա այսպես [Հուստինիանոսը] պարսպապատեց ամբողջ այդ հեռավոր տանը։

Գլ. 4. Կայսրն այսպիսի գործունեություն ծավալեց այնտեղ։ Այժմ ես կպատմեմ այն մասին, թե ինչ արեց նա մյուս Հայաստանում։ Սատալա քաղաքն[12] անցյալում քիչ հույսեր էր ներշնչում, որովհետև գտնվում էր Բշնամու երկրին մոտիկ և հարթավայրում, որի շրջապատող բազմաթիվ բլուրների ստորոտում։ Այդ պատճառով նա կարիք ուներ հզոր պարիսպների՝ բնդդեմ Բշնամու հարձակումների։ Հակառակ այդպիսի տեղանքին, պարիսպներն էլ խախուտ էին, որովհետև կառուցվել էին սխալ սկզբունքով, առանց անհրաժեշտ ջանքերի և բացի դրանից երկար ժամանակից ամենուրեք ճեղքեր էին տվել։ Կայսրը ամբողջությամբ քանդեց (պարիսպը) և նորը կառուցեց, այնքան բարձր, որ կարծես գերազանցում է շրջակա բլուրների բարձրությանը և այնքան լայն, որ կարողանա անվնաս կրել այդպիսի մեծ բարձրություն։ Նրա շուրջը կառուցելով նաև ամուր նախապարիսպ, ապշեցրեց Բշնամիներին։ Նա Սատալայից ոչ շատ հեռու մի չափազանց հզոր ամրոց կառուցեց Օսրոենն կոչված վայրում։

Այդ նույն երկրում, ուղղաբերձ բլրի գագաթին գտնվում է հրնում կառուցված մի ամրոց, որը հռոմայեցի զորավար Պոմպեոսը, դրավելով և պատերազմով տիրանալով երկրին, շատ ամրացրեց և անվանեց Կոլոնիա։ Սա ևս, որ այդքան երկար ժամանակ ավերակ էր, Հուստինիանոս կայսրը վերականգնեց ամբողջ հզորությամբ, տեղացի բնակչությանը տվեց անհամար դրամ՝ ագարակներում ամենուրեք նոր ամրություններ կառուցելու, կամ էլ խախտվածները վերանորոգելու նպատակով։ Այդպիսով գրեթե բոլոր ամրությունները, որոնք այստեղ են գտնվում, Հուստինիանոս կայսեր

գործն են։ Նա այնտեղ կառուցեց նաև ամրոցներ՝ Բայբերդոն կոչվածը[13] և Արեռնը։ Նա խախտված Լյուսիորմոնը վերականգնեց, ինչպես նաև Լյուտարարիզոնը, իսկ Գերմանոսի Ֆուսատոն կոչված վայրում կառուցեց նոր ամրոց։ Հայաստանի Սեբաստիա[14] և Նիկոպոլիս[15] քաղաքների պարիսպները, որոնք երկար ժամանակից խախտված լինելով՝ փլվելու վրա էին, նա վերականգնեց և նորոգեց։ Այդ բոլորից բացի, նա այնտեղ կառուցեց եկեղեցիներ և վանքեր. Թեոդոսուպոլսում Աստվածածնի տաճար կառուցեց, իսկ Պետրիոս կոչված տեղում, ինչպես նաև Կուկարիզոնում[16] վերանորոգեց վանքերը։ Նիկոպոլսում նա կառուցեց Քառասունհինգ Սբրոց վանքը, իսկ Բիզանայում[17] Գևորգ Վկայի սրբարանը։ Թեոդոսուպոլսի մոտակայքում վերանորոգեց Քառասուն Մարտիրոսաց վանքը։

Հնում Փոքր Հայք կոչված [երկրում], Եփրատ գետից ոչ շատ հեռու, գտնվում էր մի վայր, ուր հաստատվել էր հռոմեական զորագունդ։ Վայրը կոչվում էր Մելիտենե[18], իսկ զորագունդը՝ լեգեոն։ Հռոմայեցիները հնում այստեղ ցածրադիր վայրում կառուցել էին քառակուսի ամրություն, որը զինվորների համար բավականաչափ զորանոցներ ուներ։ Նրանք այնտեղ էին պահում նաև իրենց դրոշները։ Այնուհետև հռոմայեցիների կայսր Տրայանոսի որոշմամբ վայրը ստացավ քաղաքի իրավունք և դարձավ շրջանի մայրաքաղաքը։ Ժամանակի ընթացքում Մելիտենե քաղաքը մեծացավ և մարդաշատ դարձավ։ Եվ երբ ամրությունից ներս այլևս տեղ չմնաց բնակվելու (ինչպես ես ասացի, տարածությունը շատ փոքր էր), հաստատվեցին [քաղաքի] շրջակայքում, ուր և եկեղեցիներ, վարչական շենքեր, հրապարակ, խանութներ կառուցին, սյունաշարքեր, բաղանիքներ, թատրոններ, [անցկացրին] քաղաքային փողոցներ և ինչ որ անհրաժեշտ է մի մեծ քաղաք զարդարելու համար։ Բայց դրա հետևանքով Մելիտենեի մեծ մասը քաղաքի սահմաններից դուրս եկավ։ Անաստասիոս կայսրը ձեռնարկեց ամբողջ քաղաքի պարսպապատումը, սակայն նա իր ծրագիրը չիրականացրած մահացավ։ Հուստինիանոս կայսրն ամեն կողմից պարիսպներով շրջապատելով այն, Մելիտենեն դարձրեց Հայոց հզոր ամրություն և զարդ։

Գլ. 5. Ահա այդ կատարեց [Հուստինիանոսը] Եփրատ գետի աջ ափին գտնվող Հայաստանում։ Այժմ ես կպատմեմ, թե ինչ

կատարեց նա Մեծ Հայքում։ Երբ հռոմայեցիների կայսր Թեոդոս ստացավ Արշակի տերությունը, որի մասին ես քիչ առաջ պատմեցի[19], բլուրներից մեկի վրա ամրոց կառուցեց, որը սակայն մատչելի էր Քշնամիներին, և այն Թեոդոսուպոլիս անվանեց։ Պարսից արքա Կավադը, երբ ուղիղ Ամիդի վրա էր շարժվում, հարձակվեց և գրավեց այն։ Հռոմայեցիների կայսր Անաստասիոսը մի քիչ անդ այստեղ քաղաք կառուցեց՝ պարսպի մեջ առնելով այն բլուրը, որի վրա էր գտնվում Թեոդոսի ամրոցը։ Նա քաղաքին տվեց իր անունը, բայց, այնուամենայնիվ, նրան չհաջողվեց ջնջել քաղաքի հինանդրի՝ Թեոդոսի անունը, որովհետև թեև մարդիկ կողմնակից են անընդհատ վերափոխել ընդհանուրի կողմից ընդունվածը, սակայն նախկին անուններից դժվար են հրաժարվում։ Թեոդոսուպոլսի պարիսպը բավական ամուր էր, բայց բարձրությունը չէր համապատասխանում այդ ամրությանը։ Նրա բարձրությունը մոտավորապես երեսուն ոտնաչափի էր հասնում և գրոհող թշնամիների համար, մասնավորապես պարսիկների, այն շատ դյուրամատչելի էր։ Նա մատչելի էր նաև այն պատճառով, որ պաշտպանության համար չուներ ոչ նախապարիսպ, ոչ էլ խրամ։ Բացի այդ, քաղաքին մոտիկ կար մի բարձունք, որը պարսպի վրա էր կախված։ Հուստինիանոս կայսրը դրա առաջն առավ հետևյալ կերպ. նախ և առաջ նրա շուրջը շատ խոր խրամ փորեց։ Դրանից հետո նշված բարձունքը հարթեց և վերածեց անանցանելի և աննվաճելի փապարների։ Որպեսզի պարիսպը շատ բարձր լինի և միանգամայն անառիկ, նա վարվեց այնպես, ինչպես Դարա քաղաքում։ Պարսպի ատամնաշարերը նա սեղմեց իրար, ատամների միջև թողնելով այնքան տարածություն միայն, որ բավական լիներ այնտեղից հարվածել պաշարողներին, ապա նրանց վրա պարսպի ամբողջ երկարությամբ քարից էմբոլոն կառուցեց, որի վրա վարպետորեն տեղադրեց այլ ատամնաշար։ Այնուհետև [պարիսպը] շրջապատեց նախապարիսպով, որի յուրաքանչյուր աշտարակը մի-մի բերդ էր, և ամբողջ ամրությունը շատ նման էր Դարա քաղաքի [ամրությանը]։ Նա այնտեղ հաստատեց բոլոր զինված ուժերը և Հայքերի[20] զորավարին, ու այնպես արեց, որ հայերը լինեն ավելի հզոր և այլևս չսարսափեն պարսկական հարձակումներից։

1. Պրոկոպիոսի ակնարկած «Հայոց պատմությունը», ուսումնասիրողների մեծամասնության կարծիքով, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունն» է։ Պրոկոպիոսը և մի քանի այլ մատենագիրներ Արշակունիների նախահայրն են համարում պարթևների թագավորի եղբայր Արշակին։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Սարգսյանը, սակայն, հնարավոր չի համարում, որ Պրոկոպիոսը տվյալ ցուցումը վերցրած լինի Խորենացուց կամ Անանունից։ (Տե՛ս Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1966, էջ 127)։

2. Նկատի ունի Արշակ III-ին, որի ժամանակ՝ 387 թ. տեղի ունեցավ Հայաստանի առաջին բաժանումը։

3. Խոսքը Թեոդոս Մեծի որդի Արկադիոսի մասին է, որը թագավորել է 395—408 թվականներին։

4. Տե՛ս «Պարսկական պատերազմի մասին», գիրք Բ, գլ. 3։

5. Հայաստանի կոմսների նստավայրը Թեոդոսուպոլիս քաղաքն է եղել։

6. Պրոկոպիոսը սատրապություն ասելով՝ նկատի ունի Հարավային Հայաստանի վեց ինքնավար նախարարությունները։

7. Իլլոսի և Լեոնտիոսի գլխավորած այդ ապստամբությունը Զենոն կայսեր դեմ տեղի է ունեցել 484 թվականին։

8. Մարտիրոպոլիս— հայ մատենագրության մեջ հիշված Մարտիրոսաց քաղաքն է, գտնվում էր Նիմֆիոս (Բաթման-սու) գետի ափին։

9. Ամիդ— Հայոց Ամձն կամ Արզն գավառն է։

10. Տե՛ս «Պարսկական պատերազմների մասին», գիրք Ա, գլ. 9։

11. Խորզանե— Խորձյան գավառն է։

12. Սամոսատ (Սամսատ)— Առաջին Հայքի խոշոր քաղաքն էր, Հուստինիանոսի ռեֆորմից հետո մտավ Ներքնագույն Հայքի սահմանի մեջ։

13. Բայբերդոն— Բաբերդն է։

14. Սեբաստիա— ժամանակակից Սվազ քաղաքն է։

15. Նիկոպոլիս— ներկայիս Շապին Գարահիսարն է։

16. Կուկարիզոն— գտնվել է Կարինի մոտ։

17. Բիզանդան հայկական մատենագրության մեջ հիշվում է Վժան ձևով։

18. Մելիտենե— ներկայիս Մալաթիան է։

19. Տե՛ս «Կառուցումների մասին», գիրք Գ, գլ. 1։

20. Նկատի ունի I, II, III և IV Հայքերը։

ՊՐՈԿՈՊԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱԿԱԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

II, 3. Այդ միջոցին մի ուրիշ բան էլ պատահեց։ Ֆարանգիոնը[1] հռոմայեցիներին հանձնող Սիմեոնը[2], պատերազմի թեժ պահին համոզում է Հուստինիանոս կայսրին՝ հայ մարդկանց պատ-

կանող գյուղերն իրեն նվիրել։ Նա տիրանում է այդ գյուղերին, բայց հետո զոհ դառնում դրանց նախկին տերերի դավագրությանը։ Ոճրագործության կազմակերպիչները փախչում են Պարսից երկիրը։ Նրանք երկու եղբայրներ էին՝ Պերոզի որդիները։ Կայսրն իմանալով այդ, գյուղերը տալիս է Սիմեոնի եղբորորդի Համազասպին և նրան նշանակում Հայոց իշխան։ Որոշ ժամանակ անց Հուստինիանոս կայսեր մտերիմ մարդկանցից մեկը՝ Ակակիոս անունով, Համազասպին վրպարտում է, մեղադրելով Հայաստանում չարագործություններ կատարելու և Թեոդոսուպոլիսն ու այլ քաղաքներ պարսիկներին հանձնելու մտադրության մեջ։ Դրանից հետո Ակակիոսը կայսեր համաձայնությամբ նենգորեն սպանում է Համազասպին և կայսրից ստանում Հայոց իշխանությունը։ Նա ի բնե նենգ լինելով՝ հնարավորություն ստացավ կատարել ինչ որ իր հոգին էր ցանկանում, և իր հպատակների համար ամենադաժան մարդը դարձավ. նա առանց որևէ պատճառի հափշտակում էր մարդկանց ունեցվածքը։ Նա հայերի վրա չորս կենտինար հարկ դրեց, մի բան, որ երբեք չէր եղել։ Բայց հայերը, ի վիճակի չլինելով տանել Ակակիոսին, համաձայնության եկան ու սպանեցին նրան և փախչելով ապաստան գտան Ջարանդիոնում։

Այդ պատճառով Բյուզանդիոնից կայսրը նրանց դեմ ուղարկեց Սիտտասին[3]. Հռոմայեցիների և պարսիկների միջև հաշտության պայմաններում Սիտտասը [Բյուզանդիոնում] էր ապրում։ Երբ նա Հայաստան եկավ, սկզբում ցանկություն ցույց չէր տալիս պատերազմելու [հայերի դեմ], այլ ուզում էր հորդորել նրանց վերադառնալու իրենց երկիրը, խոստանալով համոզել կայսրին վերացնելու նոր հարկի դանձումը։ Սակայն, որովհետև կայսրը, դրդված Ադոլիոսի՝ Ակակիոսի որդու ոտնձգություններից, շատ էր վատաբանում և պախարակում Սիտտասին՝ դանդաղկոտության համար, վերջինս անմիջապես պատրաստվում էր ընդհարվելու [հայերի հետ]։ Նախ և առաջ փորձեց մեծ գումար խոստանալով կաշառել [հայերից] ոմանց և իրեն դաշնակից դարձնել, որպեսզի կարողանա ավելի հեշտությամբ հաղթել մնացածներին։ Նրան էր ուղում հարել մեծ և բազմամարդ Ասպետյանների տոհմը[4], որ մարդ ուղարկեց Սիտտասի մոտ, խնդրելով գրավոր հավաստիացում, որ եթե իրենք, Ասպետյանները, այդ գործի ժամանակ լքեն իրենց ցեղակիցներին և անցնեն հռոմայեցիների կողմը, ոչ մի պա-

տիժ չեն կրելու վերջիններիս կողմից և պիտի շարունակեն տիրել իրենց ունեցվածքին։ [Սիտտասն] ուրախությամբ այդ մասին դրեց մի փոքր գրություն, տվեց նրանց պահանջած հավաստիացումը և կնքելով գրությունը, ուղարկեց նրանց։ Նա համոզված էր, որ [Ասպետյանների] օգնությամբ կկարողանա առանց պատերազմի հաղթել, և ամբողջ զորքով շարժվեց Օշնոքալակոն վայրի վրա, որտեղ ճամբարել էին հայերը։ Սակայն գրությունն ստացողները, պատահմամբ ուրիշ ճանապարհով գնացին և չկարողացան հանդիպել Ասպետյաններին։ Այդ միջոցին հռոմեական բանակի մի զորամաս հանդիպեց [Ասպետյանների] մի փոքր խմբի և ձնոք բևեռված համաձայնության անտեղյակ, կոտորեց նրանց որպես թշնամիների։ Սիտտասն էլ մի քարայրում գերի վերցրեց նրանց երեխաներին ու կանանց և սպանեց. կամ այն պատճառով, որ չիմացավ թե ովքեր են նրանք, կամ էլ որովհետև զայրացել էր Ասպետյանների դեմ, որ հակառակ համաձայնության, չէին անցնում իր կողմը։

[Ասպետյանները], զայրացած, մյուս բոլոր [հայերի] հետ միասին պատրաստվեցին մարտի։ Որովհետև երկու կողմերն էլ գտնվում էին դժվարանցանելի և զառիթափ տեղանքում, իրար դեմ չէին կռվում մի տեղում կենտրոնացած, այլ ցրված՝ լեռների ստորոտներում և ձորերում։ Այնպես պատահեց, որ հայերի մի փոքրաթիվ խումբ և Սիտտասը իր զորքի մի փոքր մասով հայտնվեցին իրար շատ մոտիկ։ Նրանց բաժանում էր մի ձոր։ Երկու հակառակորդներն էլ հեծյալ էին։ Սիտտասը փոքրաթիվ մարդկանցով անցավ ձորը և շարժվեց հակառակորդների վրա, իսկ հայերը նահանջելով կանգ առան։ Սիտտասն այլևս չէր հալածում նրանց և կանգ էր առել։ Հանկարծ հռոմայեցի զինվորներից մեկը, ծագումով էրուլոս, որը հալածում էր թշնամիներին, զայրացած ետ վերադարձավ։ Սիտտասն այդ ժամանակ գետնի մեջ էր խրել իր նիզակը. էրուլոսի ձին մեծ թափով ընկավ նիզակի վրա և ջարդեց այն. դա անչափ տխրեցրեց զորավարին։ Մի հայ ճանաչեց նրան և հայտնեց մյուսներին, թե սա հենց ինքը՝ Սիտտասն է։ Նրա դիմին սաղավարտ չկար, իր զորքն էլ փոքրաթիվ էր, և դա հնարավորություն տվեց, որ թշնամին իրեն ճանաչի։ Սիտտասը, երբ լսեց հայի ասածը, քաշեց թուրը (իր նիզակը, ինչպես ասացինք, ջարդված ընկած էր գետնին) և որոշեց անմիջապես անցնել ձորը։

Թշնամիները մեծ արագությամբ շարժվեցին նրա վրա, և մեկը ձորում հասնելով նրան, թրի շեղ հարվածով վերք հասցրեց գլխին, ու թեև գանգի կաշին լրիվ տարավ, բայց մետաղը չդիպավ ոսկորին։ Սիտտասը նախկինից ավելի թափով առաջ նետվեց, սակայն Հովհաննեսի որդի Արտավան Արշակունին[6] թիկունքից հարձակվելով՝ հարվածեց նիզակով ու սպանեց նրան։ Ահա այսպես անփառունակ վախճան ունեցավ Սիտտասը, վախճան, որին արժանի չէր առաքինի և թշնամիների հանդեպ [քաջությունն] ցուցաբերած մի մարդ։ Նա շատ գեղեցիկ էր, քաջ կռվող, լավագույն զորավար, ոշնչով չզիջող իր ժամանակի [զորավարներին]։ Ոմանք պատմում են, որ Սիտտասին սպանողը ոչ թե Արտավանն էր, այլ Սոլոմոնը՝ հայերի մեջ բոլորովին անհայտ մի մարդ։

Սիտտասի վախճանվելուց հետո կայսրը Բուզեսին հրամայեց արշավել հայերի վրա։ Վերջինս, երբ տեղ հասավ, [հայերին] նամակ ուղարկեց, որով խոստանում էր նրանց հաշտեցնել կայսր հետ և այդ կապակցությամբ առաջարկում էր, որ մեծամեծներից մարդիկ գան իր մոտ բանակցություններ վարելու։ Սակայն [հայերը] Բուզեսին հավատալու ոչ հիմքեր ունեին, ոչ էլ նրա խոսքերին ականջ դնելու ցանկություն։ Բուզեսը մի մոտիկ ընկեր ուներ՝ [ծագումով] Արշակունի, անունը Հովհաննես, որը Արտավանի հայրն էր։ Վերջինս, հույս դնելով Բուզեսի հետ ունեցած բարեկամության վրա, իր փեսա Վասակի և մի քանիսի հետ եկավ նրա մոտ։ Նրանք հասան և ապաստանեցին մի վայրում, որտեղ հաջորդ օրը պետք է հանդիպեին Բուզեսի հետ, բայց զգացին, որ հռոմեական զորքերը շրջապատել են իրենց։ Հովհաննեսի փեսա Վասակը շատ էր աղաչում Հովհաննեսին փախուստի դիմել, բայց երբ չհաջողվեց համոզել, մենակ թողնելով նրան, հռոմայեցիներից գաղտնի, մնացածների հետ նույն ճանապարհով վերադարձավ։ Այսպիսով Բուզեսը միայն Հովհաննեսին գտավ և սպանեց, որից հետո հայերը հռոմայեցիների հետ համաձայնության գալու բոլոր հույսերը կտրեցին. ի վիճակի չլինելով պատերազմում պարտության մատնել կայսրին, գործունյա Վասակի գլխավորությամբ նրանք գնացին Պարսից արքայի մոտ։

1. Ֆարանգիոն— ոսկու հանք է, որը գտնվում է Ղազանի լեռնաշղթայի արևմտյան փեշերին՝ ձորոխ գետի ակունքների մոտ։

2. Սիմեոնը սկզբում Ֆարանգիոնի տնօրենն էր և ենթարկվում էր պարսկական արքունիքին, սակայն հետագայում, երբ սրվեցին պարսկա-բյուզանդական հարաբերությունները, նա տեղափոխվեց Բյուզանդիա և ծառայության մըտավ այնտեղ։ Այս մասին Ն. Ադոնցն ունի առանձին ուսումնասիրություն «Հայաստանի ոսկեհանքը» վերնագրով (տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», էջ 206—222)։

3. Սիտտասը Բյուզանդիայի աչքի ընկնող զորավարներից էր, ազգությամբ հայ։ Ադոնցը կարծում է, որ Սիտտասը նրա երկրորդ անունն է. նախկին անունը եղել է Ուրսիկիոս։ Սիտտասը խնամիական կապեր է ունեցել Հուստինիանոսի ընտանիքի հետ։

4. Ուսումնասիրողներից ոմանք, Ասպետյանների անվան տակ ուզում են տեսնել Աբեղյանների տոհմը, սակայն Հ. Բարթիկյանը, նկատի ունենալով, որ այդ տոհմի ավագը հիշվում է որպես «ասպետ», հավանական է համարում, որ այն լինի Բագրատունիների տոհմը։

5. Արտավան Արշակունու մասին ուշագրավ ուսումնասիրություն ունի Ն. Ադոնցը՝ «Արտավան Արշակունի» վերնագրով (տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», էջ 297—319)։

ՊՐՈԿՈՊԻՈՍԸ ՀԱՅ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ՝ ՍՊԱՆԵԼՈՒ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԿԱՅՍՐԻՆ

ԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

III, 32. Ահա այսպիսին էին կայսեր փոխհարաբերությունները Արտավանի ու Գերմանոսի հետ։ Բյուզանդիոնում էր գտնվում Արտավանի ազգակիցներից հայազգի ոմն Արշակ Արշակունի։ Սա փոքր առաջ ձերբակալվել էր պետության դեմ ոտնձգություններ կատարելու, նաև բացահայտված դավաճանության՝ Պարսից արքա Խոսրովի օգտին՝ հռոմայեցիների դեմ խռովություն բարձրացնելու փորձի համար։ Կայսրը առանձնապես չպատուհասեց նրան, միայն գանակոծության ենթարկեց, այն էլ ոչ խիստ, և ուղտի վրա ման ածեց քաղաքով մեկ, բայց մարմնական վնաս չհասցրեց նրան, ոչ էլ ձեռք տվեց նրա ունեցվածքին, դեռ ավելին, չաքսորեց նույնիսկ։ Հակառակ դրան, Արշակը, կատարվածից դժգոհ, սկսեց դավադրություններ կազմակերպել Հուստինիանոսի և պետության դեմ։ Երբ տեսավ, որ իր ազգական Արտավանը ևս իր պես վիրավորված է, սկսեց ավելի գրգռել նրան, դիշերցերեկ հանգիստ չտալ ու պախարակել, անվանելով քաջ մարդ և միաժամանակ ձվատ. նա քաջ էր՝ ի դժբախտություն ուրիշների, երբ բռնատիրությունը ճնշեց և առանց պատճառի բռնեց ու սե-

փական ձեռքով սպանեց իր ընկեր և սեղանակից Գոնթարիսինո։ Իսկ այժմ, երբ իր հայրենիքը ամուր կապանքների մեջ է առնված, նրա վրա են դրված անօրինակ ծանր հարկեր, երբ իր հայրը սպանվել է, հակառակ նրան տրված երաշխիքների, երբ ամբողջ իր հարազատ [ժողովուրդը] ստրկացված և ցրված է ամբողջ հռոմեական երկրով մեկ, ինքը վախեցած ու անզոր նստած է։ Նման պայմաններում Արտավանը իրեն բավարարված է զգում, որովհետև ինքը հռոմայեցիների ղորավար է և հյուպատոս է կոչվում։ «Դու,— ասաց նա,— լինելով իմ ազգակիցը, բոլորովին չես մտնում իմ դրության մեջ. ես անչափ մեծ դժբախտությունների հանդիպեցի։ Սակայն խղճում եմ քեզ երկու կնոջ հետ ունեցածդ անհաջողության համար, և՛ այն կնոջ համար, որից դու հակառակի պես զրկվեցիր, և՛ նրա համար, որի հետ ստիպվեցիր կենակցել։ Մի քիչ խելք ունեցողի համար ծայրահեղ անմտություն է Հուստինիանոսին առանց պլանալու և որևէ վախի սպանելուց հրաժարվելը։ Նա, առանց պահապանների, զառամյալ հոգևորականների հետ շարունակ, մինչև ուշ գիշեր նստած է ինչ-որ ժողովարանում, խորհրդածելով քրիստոնեական դոգմաների շուրջը։ Նույնիսկ Հուստինիանոսի ազգականներից ոչ ոք այդ բանը չի ժխտի։ Նրանցից ամենահզորը Գերմանոսն է, որը, կարծում եմ, հաճույքով կմիանա քեզ իր երիտասարդ որդիների հետ։ Նրանց տարիքից բխող ավյունը և ունեցած զայրույթը նրա դեմ, հույս ունեմ, որ ինքնաբերաբար մասնակից կդարձնեն նրանց [այս] գործին, որովհետև [Հուստինիանոսը] այնքան է վիրավորել, վնաս պատճառել նրանց, որքան ո՛չ մեզ և ո՛չ էլ հայերից որևէ մեկին»։ Ահա այսպիսի խոսքերով Արշակը անդադար խելքահան էր անում Արտավանին և, երբ տեսավ, որ սա տեղի տվեց, նույն գործով դիմեց մի այլ պարսկահայի[2] Խանարանգես անունով։ Այս Խանարանդեսը երիտասարդ էր, զեղեցիկ կաղմվածքով, բայց շատ թեթևամիտ և չափից ավելի տհաս։

Ահա՛, երբ Արշակը համաձայնության եկավ Արտավանի հետ, հեռացավ, խոստանալով գործին մասնակից դարձնել Գերմանոսին և նրա որդիներին։ Գերմանոսի որդիներից ավագը՝ Հուստինոսը, թեև երիտասարդ էր և նրա ազվամազը դեռ նոր էր բուսնում, բայց կարող էր և շատ գործունյա։ Նա քիչ առաջ արժանացել էր հյուպատոսի աստիճանին։ Արշակը, դնալով նրա մոտ, ա-

սաց, որ ցանկանում է գաղտնի հանդիպել նրան որևէ մի եկեղեցում։ Երբ երկուսն էլ մտան եկեղեցի, Արշակը նախ պահանջեց Հուստինոսից երդվել, որ իրենց խոսակցության մասին բացի իր հորից ոչ մեկին բան չի ասելու։ Երբ նա երդվեց, [Աբշակը] պաղատագին խարակեց նրան, որ կայսեր մերձավորագույն ազգականը լինելով, հանգիստ նայում է, թե ինչպես երկրի իշխանությունն անցնում է շուկայի, անարժան ու կոպիտ մարդկանց ձեռքը, և ինքը լինելով այսպիսին՝ համաձայնվում է, որ պետության գործերը վարեն հասարակ ծագում ունեցող մարդիկ. նա ասաց, որ [կայսրը] արհամարհում է ո՛չ միայն նրան, այլև նրա հորը, անչափ առաքինի մարդու, որ իր եղբորը՝ Հուստինիանոսին շարքային քաղաքացիների վիճակում է թողել. նույնիսկ հորեղբոր հարստությունը չկարողացավ ժառանգել, թեև Բորայիդեսի ցանկությամբ ինքն էր ժառանգելու այն, բայց հետագայում անտեղի զրկվեց նրա մեծ մասից. հակառակ այդ բոլորին, իրենք դեռ քաշելիք ունեն, երբ Բելիսարիոսը շուտով Իտալիայից վերադառնա, քանզի լուր էր ստացվել, որ նա արդեն Իլլիրիայում է գտնվում։ Արշակն այս ասելով, հորդորում էր երիտասարդին՝ մասնակցելու դավադրության ընդդեմ կայսեր, միաժամանակ հայտնելով նրան իր և Արտավանի ու Խանարանգեսի միջև սույն գործի կապակցությամբ կայացած համաձայնության մասին։ Հուստինոսը լսելով այս՝ ապշահար եղավ, սարսափահար պատասխանեց Արշակին, որ ոչ ինքը, ոչ էլ իր հայր Գերմանոսը նման քայլի երբեք չեն դիմի։

Արշակը եղածի մասին հայտնեց Արտավանին, իսկ Հուստինոսն էլ իր հերթին ամեն ինչ պատմեց հորը։ Վերջինս այս հարցի շուրջը խորհրդակցեց պալատական կայազորի պետ Մարկելլոսի հետ, ձեռնտո՞ւ է արդյոք այդ մասին հայտնել կայսրին։

Մարկելլոսը շատ լուրջ մարդ էր, բարոյական, սակավախոս, նա չէր գործում շահից դրդված, չէր կարողանում տանել թեթևսոլիկ մարդկանց ասածն ու արածը, չէր սիրում անհոգ կյանքը։ Նա մշտապես վարում էր խիստ և հաճույքներից զուրկ կյանք, բայց արդարության թունդ պահապանն էր, ճշմարտասիրության ջերմ պաշտպանը։ Նա չթողեց, որ այդ մասին անմիջապես հայտնվի կայսրին։ «Քեզ համար,— ասաց նա,— ձեռնտու չէ հայտնել այդ մասին, որովհետև, եթե ցանկանաս գաղտնի կերպով որևէ

բան ասել կայսրին, Արտավանի մարդիկ անմիջապես կիմանան մատնության մասին, և եթե Արշակին հաջողվի թաքուն փախչել, դավադրությունը հնարավոր չի լինի ապացուցել։ Ես մինչև մանրակրկիտ կերպով ամեն բան չստուգեմ, ոչ ինքս հավատ կընծայեմ դրան, ոչ էլ կայսրին կհայտնեմ։ Ես ցանկանում եմ կամ խոսակցությունը իմ ականջով լսել և կամ էլ դուք այնպես կազմակերպեք, որ իմ մարդկանցից որևէ մեկը այս [գործի] մասին որևէ հատակ բան լսի նրա կողմից»։

Գերմանոսը լսելով այդ՝ հրամայեց իր որդի Հուստինոսին անել այնպես, ինչպես կկարգադրի Մարկելլոսը։ Արշակին դիմելու միտք չուներ, քանի որ, ինչպես արդեն ասացի, [Հուստինոսը] մերժել էր նրա առաջարկը։ Նա հարցով դիմեց Խանարանգեսին, նրա մոտ եղե՞լ է արդյոք Արշակը՝ հայտնի ծրագրով, Արտավանի կարգադրությամբ։ [Խանարանգեսը] պատասխանեց, թե «ես երբեք չէի խիզախի նրա նման մարդու որևէ գաղտնիք վստահել։ Բայց եթե դու ուզում ես տվյալ գործի կապակցությամբ որևէ բան ասել, ապա ինձ հետ խորհրդակցելով, կարելի է գործը հաջող գլուխ բերել»։ Այդ հարցի շուրջը Խանարանգեսը խորհրդակցեց Արտավանի հետ և Հուստինոսին հայտնեց այն ամենը՝ ինչ նախապես Արշակն էր ասել իրեն։

Երբ Հուստինոսը համաձայնվեց անել ամեն ինչ և խոստացավ հորը համամիտ դարձնել այդ գործին, Գերմանոսը որոշեց Խանարանգեսին տեսակցության հրավիրել և սահմանեց խորհրդակցության օրը։ Այդ մասին Գերմանոսն իմաց տվեց Մարկելլոսին և խնդրեց, որ իր մերձավորագույններից որևէ մեկին ուղարկի՝ Խանարանգեսի ասելիքին ականջալուր լինելու համար։ [Մարկելլոսը] ուղարկեց Աթանասիոսի փեսա Լեոնտիոսին, մի ճշմարտախոս և շատ արդարասեր մարդու։ Գերմանոսը նրան [իր] տունը մտցնելով, նստեցրեց մի սենյակում, որտեղ կախված էր մի հատ պատառ՝ վարագույրն այն բազմոցի, որի վրա նստած նա ճաշում էր։ Ահա այդ վարագույրի ետևում նա թաքցրեց Լեոնտիոսին, իսկ ինքն իր որդի Հուստինոսի հետ [վարագույրից] դուրս մնացին։ Երբ ժամանեց Խանարանգեսը, Լեոնտիոսը նրանից լսեց այն ամենի մասին, ինչ ծրագրել էին ինքը՝ Խանարանգեսը, Արտավանն ու Արշակը։ Նա ավելացրեց նաև, որ եթե կայսրին սպանեն այն ժամանակ, երբ դեռ Բելիսարիոսը չի ժամանել Բյուզանդիոն, ծրագիրը անհաջողության կմատնվի, որովհետև եթե իրենք կայսր հայտարարեն Գերմանոսին, Բելիսարիոսը, անկասկած, Թրակիայի բնակավայրերից մեծ զորք գումարելով՝ իրենց վրա կշարժվի և նրան դիմադրել հնարավոր չի լինի։ Դրա համար անհրաժեշտ է, որ գործը հետաձգվի մինչև Բելիսարիոսի վերադարձը, որպեսզի երբ նա հասնի Բյուզանդիոն և լինի պալատում, կայսեր մոտ, այն ժամանակ, ուշ երեկոյան դաշույններով անսպասելի հայտնվեն և սպանեն կայսր հետ միասին նաև Մարկելլոսին և Բելիսարիոսին. դրանից հետո ավելի աներկյուղ կտնօրինեն գործերը։

Նույնիսկ այն ժամանակ, երբ Մարկելլոսը Լեոնտիոսից իմացավ այդ մասին, նա ոչինչ չասաց կայսրին և շարունակեց անչափ դանդաղ. նա վախենում էր, որ հանկարծ իր շտապողականությամբ անմտորեն Արտավանին ձեռքից բաց կթողնի։ Իսկ Գերմանոսը, երկյուղ զգալով, որ իր հապաղումը որևէ մեկի մոտ կասկած կհարուցի իր դեմ, որը, ի դեպ, և տեղի ունեցավ հետագայում, ամեն ինչ հայտնեց Բուզեսին և Կոստանդիանոսին։

Մի քանի օր անց, երբ լուր տարածվեց, որ Բելիսարիոսը շատ մոտիկ է գտնվում, Մարկելլոսը կայսրին ամեն ինչ պատմեց. վերջինս անմիջապես հրամայեց բանտ նետել Արտավանին և նրա համախոհներին, իսկ իշխանավորներից ոմանց հանձնարարեց [ձերբակալվածներին] քննել։ Երբ դավադրությունը ամբողջությամբ լույս աշխարհ եկավ և [հարցաքննությունը] հանգամանորեն դրի առնվեց, կայսրը բոլոր սենատորներին պալատ հրավիրեց՝ այնտեղ, ուր սովորաբար քննվում էին վիճելի հարցերը։ Ներքանք կարդացին այն բոլորը, ինչ [Արտավանը] ասել էր քննիչներին, բայց, այնուհանդերձ, ոչ պակաս մեղավոր հանեցին Գերմանոսին և նրա որդի Հուստինոսին, մինչև որ Գերմանոսը, դիմելով Մարկելլոսի և Լեոնտիոսի վկայությանը, կարողացավ ցրել կասկածը, որովհետև նրանք, նաև Կոստանդիանոսն ու Բուզեսը երդումներով հաստատում էին, որ Գերմանոսը ոչ մի բան չի թաքցրել, որ ամեն ինչ կատարվել է այնպես, ինչպես ես քիչ առաջ պատմեցի։ Ահա բոլոր սենատորները արդարացրին նրան և նրա որդուն՝ օրպես պետության հանդեպ ոչ մի հանցանք չգտատրածներին։

Երբ բոլորը մտան կայսեր հարկաբաժինը, կայսրը շատ զայրացած և վրդովված՝ կատաղել էր Գերմանոսի դեմ, որ նա հապաղել է իրեն հայտնել, իսկ իշխանավորներից երկուսը, որոնք սպասարկում էին [կայսրին], հաստատում էին նրա ասածը և ցույց տալիս, որ նույնպես վրդովվել են։ Ջանալով կայսրին հանդոյանալ՝ ուրիշներին դժբախտացնելով, նրանք անչափ բորբոքեցին կայսեր զայրույթը։ Իսկ մնացածները երկյուղած, չհակառակվելու համար կայսրին, լռում էին։ Միայն Մարկելլոսը ճշմարտություննասաց և կարողացավ փրկել մարդուն։ Նա ամբողջ մեղքը իր վրա վերցրեց և ասաց, որ Գերմանոսը ժամանակին է հայտնել իրեն [դավադրության] մասին, բայց ինքը ավելորդ մանրակրկիտությամբ հապաղեց և գործը ձգձգեց։ Ահա այս կերպ նա կարողացավ մեղմել կայսեր զայրույթը։ Մարկելլոսը դրանով բոլորի մոտ մեծ հռչակ վաստակեց, որպես ամենադժվարին պահին առաքինություն ցուցաբերած։ Իսկ Հուստինիանոս կայսրը զրկեց Արտավանին իր ունեցած պաշտոնից, բայց ուրիշ պատիժ չտվեց, ոչ էլ մնացածներին, այլ միայն բանտարկեց, այն էլ ոչ պետական բանտում, այլ պալատում[3]։

1. Նկատի ունի Մասանյան արքայից արքա Խոսրով Անուշիրվանին (531—579)։

2. Այսինքն՝ Պարսկաստանին ենթակա Հայաստանի բնակիչ։

3. Հայ քաղաքական շրջանների կազմակերպած այս դավադրությունը Հուստինիանոսի դեմ տեղի է ունեցել 548 թվականին։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ ԸՍՏ ՍԵԲԵՈՍԻ

Սեբեոսը VII դարի պատմիչ է։ Նրա մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել։ Ենթադրվում է, որ նա եղել է Բագրատունյաց իշխանական տան եպիսկոպոսը, որը մասնակցել է 654 թ. Դվինում հրավիրված ազգային-եկեղեցական ժողովին։

Սեբեոսի Պատմությունը սկսում է Հայկի և Բելի առասպելով. հետևում են հայկական, պարսկական և հռոմեական թագավորների ժամանակագրական ցանկերը, որոնք գիտության մեջ համարվում են այլ՝ Անանուն հեղինակի գործ։ Սեբեոսը տալիս է Հայաստանի VI դարի հակիրճ պատմությունը, ապա անցնում

VII դարի ծավալուն պատմություններ՝ նկարագրելով արաբների արշավանքները և Հայաստանի նվաճումը։ Աշխատության մեջ զետեղված են մի շարք արժեքավոր նամակների և այլ վավերագրերի պատճենները։ Սեբեոսը իր Պատմության մեջ զգալի տեղ է հատկացրել միջազգային հարաբերություններին, ուստի այն կարևոր սկզբնաղբյուր է համարվում նաև Արևելքի երկրների ընդհանուր պատմության համար։

Սեբեոսի Պատմության համեմատական բնագիրը հրատարակել է Ստ. Մալխասյանցը, որը լույս է տեսել 1939 թվականին՝ «Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն» վերնագրով։ Սեբեոսից ստորև բերված հատվածները տրվում են Ա. Գ. Աբրահամյանի թարգմանությամբ։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Ջ. Այդ ժամանակ (այսինքն՝ Պերոզի մահվանից հետո— Ա. Ա.) Պարսից աշխարհում գահակալեց նրա որդի Կավատը։ Եվ որովհետև նրա խոշոր բանակը ջարդվել էր, այդ պատճառով էլ չկանկացավ պատերազմել ոչ մեկի դեմ և խաղաղություն հաստատեց ամենքի հետ։ Նա խաղաղություն կնքեց նաև հայերի հետ։ (Այդ նպատակով) նա Վահանին հրավիրեց արքունիք և մեծարեց նրան բազմաթիվ պատիվներով։ Տվեց նրան նաև Հայոց երկրի մարզպանությունը և Մամիկոնյան տոհմի իշխանությունը։ Նրանից նաև երդում վերցրեց հավատարմությամբ ծառայելու համար և բաց թողեց իր երկիրը։

Վահանից հետո իշխանությունը կարճ ժամանակով վարեց նրա եղբայր Վարդ Պատրիկը և մահացավ։ Նրանից հետո եկան պարսիկ մարզպաններ։ Հայերն այդ ժամանակ չէին կարող կռվել, (ուստի) մնացին հնազանդության մեջ մինչև մարզպան Սուրենը և Մամիկոնյան իշխան Վարդանը։

Խոսրովի գահակալության քառասունմեկերորդ տարում[1] *Վարդանը ապստամբեց։ Նա համաձայնության գալով բոլոր հայերի հետ, դուրս եկավ Պարսից թագավորի ծառայությունից։ Նրանք հանկարծակի հարձակվելով Սուրենի վրա Դվին քաղաքում՝ սպանեցին նրան, վերցրին մեծ ավար և գնացին հույների մոտ ծառայության։*

Հունական թագավորը[2] երդումով խոստում տվեց հայերին և վերահաստատեց այն պայմանագիրը, որը կնքված էր երկու նրանելիների միջև՝ Տրդատի և Կոստանդիանոսի, և տվեց նրանց կայսերական օգնական զորք։

Այդ զորքով նրանք հարձակվեցին Դվինի վրա, պաշարեցին քաղաքը, ավերեցին այն և այնտեղից դուրս վտարեցին պարսկական զորքը։ Բայց այդ ժամանակ, անսպասելիորեն, վրա հասավ մի մեծ դժբախտություն. պարսիկներն այրեցին սուրբ Գրիգորի եկեղեցին, որը կառուցված էր քաղաքին մոտիկ և պարսիկները վեր էին ածել պահեստի։ Այդ մեծ խռովության տեղիք տրվեց։

Դրանից հետո բավական հազար հոգուց բաղկացած զորքով և բազմաթիվ փղերով Վարդանի վրա հարձակվեց Միհրան Միհրևանդակը։ Տեղի ունեցավ մեծ ճակատամարտ խազամախյան դաշտում. պարսիկների զորքը սոսկալի պարտության մատնվեց. բոլորին էլ սրահար արեցին և խլեցին նրանց ունեցած բոլոր փղերը։ Ինքը՝ Միհրանը, փոքրաթիվ մարդկանցով փրկվեց և գնաց իր երկիրը։

Այդ նույն Վարդանի վրա հարձակվեց Պարսից թագավորը, որի անունը խոսրով Անուշ Ղովան էր[3]։ Նա ուներ բազմաթիվ և անչափ լավ զինված զորք և բազմաթիվ փղեր։ Նա (թագավորը) շարժվեց Արտազ գավառի միջով, անցավ Բագրևանդը, և շրջանցելով Կարին քաղաքը, հետապնդեց (հայոց զորքին) մինչև Մելիտինե և ճամբար դրեց նրա դիմաց։

Հետևյալ առավոտ շտապ դասավորեցին բանակները ըստ ռազմական կարգի և գնդերի ու զրոհեցին իրար վրա։ Տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ։ Այստեղ Տերը պարտության մատնեց պարսկական թագավորին և նրա ողջ զորքը։ Նրանք բոլորը սրահար արվեցին, իսկ մնացածները, սարսափահար, խուճապի մատնված, փախուստի դիմեցին հայոց առջևից։ Չանոթ չլինելով փախուստի ճանապարհի հետ, նրանք իրենց գցեցին այն մեծ գետը, որը կոչվում է Եփրատ։ Ջրառատ գետը տարավ բազմաթիվ փախչողների՝ ինչպես մորեխների. քչերին հաջողվեց այդ օրը փրկվել։ Բայց թագավորին, փոքրաթիվ մարդկանց հետ, հաջողվեց ազատվել շնորհիվ փղերի և ձիերի։ Նա փախավ Աղձնիք, իսկ այնտեղից էլ իր բնակության վայրը։

Իսկ նրանք (այսինքն՝ հայերը— Ա. Ա.) դրավեցին պարսիկների ճամբարը և թագավորական ողջ գանձարանը։ Վերցրին բամբիշին[4] և ճամբարը, գրավեցին մաշապերճանը[5], շատ տաղանդ արժեք ունեցող ոսկեղեն դեսպակ՝ պատրաստված թանկարժեք բարերով և մարգարիտներով, որը կոչվում է «փառքի դեսպակ»։ Վերցվեց նույնպես և Հրատը՝[6] անշեջ կրակը, որը թագավորը մշտապես պատեցնում էր իր հետ և որը պաշտվում էր նրանց մոտ ավելի, քան մյուս ամեն տեսակ կրակները և կոչվում էր Աթաշ։ Այն ջրասույզ եղավ գետում մոգպետաց մոգպետի և բազմաթիվ մեծամեծ ազնվականների հետ։

1. Պարսից թագավոր Խոսրով Անուշիրվանը գահ է բարձրացել 531 թ., հետևապես, նրա 41-րդ տարին կլինի 572 թվականը։

2. Բյուզանդիայում այդ ժամանակ կայսր էր Հուստինոս II-ը (565—578)։

3. Նկատի ունի պարսից Խոսրով Անուշիրվան թագավորին։

4. Բամբիշ— թագուհի։

5. Մաշապերճան (մաշկապաճյան և այլն)— պարսից թագավորի կանանոցվրանը։

6. Հրատ— զրադաշտական կրոնում «անշեջ» համարվող կրակը։

571—572 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԸՍՏ ԱՍՈՂԻԿԻ

Ստեփաննոս Ասողիկը XI դարի պատմիչ է։ Իր հեղինակած աշխատությունը՝ «Պատմութիւն տիեզերական», գրել է Սարգիս կաթողիկոսի (992—1019) պատվերով։ Հաջողակ գրիչ և ասմունող լինելու պատճառով նրան «Ասողիկ» են անվանել։ Սովորել է Անիում։ Ստացել է փայլուն կրթություն, իմացել է մի բանի լեզուներ։ Կազմել է ընդհանրական, իր բառերով ասած՝ «տիեզերական» պատմություն, որտեղ, սակայն, ծանրացել է հայ ժողովրդի պատմության վրա։ Աշխատությունը բաղկացած է երեք բաժիններից, որոնք կոչվում են «ճանդեսներ»։ Առաջին երկու մասերի նյութը՝ հին պատմություններ է, որը վերցրել է հայ հին պատմիչներից։ Հատկապես արժեքավոր է երկասիրության երրորդ մասը, որտեղ նկարագրված իրադարձություններին հեղինակը ժամանակակից է։

Ասողիկի Պատմությունը հրատարակվել է երկու անգամ։ Լավագույնը Ստ. Մալխասյանցի հրատարակությունն է, որը լույս

է տեսել Պետերբուրգում 1885 թ.՝ «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական» վերնագրով:

Ասողիկից ստորև բերված հատվածը տրվում է այս հրատարակությունից (աշխարհաբար թարգմանությունը՝ Ա. Գ. Աբրահամյանի):

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ

II, գլ. Բ. Պարսից Խոսրով Թագավորը Հայաստանում հազարապետ է նշանակում իր ազգակից ոմն Սուրենի, որի անունն էր Ճիհովը-Վշնասպ: Սա, գալով մեր երկիրը, անշափ բռնություններ է գործադրում Հայոց նախարարների վրա, շնանում է ազատների կանանց հետ՝ ծույլ չտալով, որ ամուսինը տեր լինի իր կնոջը: Սրա վրա զայրացած բդեշխ Վարդանը՝ Վասակի որդին, որ Մամիկոնյան տոհմից էր, հարմար ժամ ընտրելով, սուսերահար է անում մարզպան Սուրենին և գետին տապալում: Այդ տեղի է ունեցել Խոսրովի Թագավորության քսանմեկերորդ տարում, երբ Հուստինիանոսի Թագավորության յոթերորդ տարին էր, արեգ ամսվա քսաներկուսին, որը փետրվար ամսին էր՝ երեքշաբթի օրը[1]:

Հայոց իշխանները բոլորն էլ ապստամբելով պարսից դեմ, օգնություն են ստանում հույներից, և նրանց հետ միասին, դիմադրում Ջնջամուն կատաղի կռիվներով: Իսկ Վարդանը, վերցնելով ընտանիքը և իր ազնվականներին, փախչում է Հունաց երկրի արքայանիստ Կոստանդնուպոլիս քաղաքը: Նա դիմում է Հուստինիանոսին, որը սուրբ Սոֆիայի տաճարը կառուցեց, և հորդորում է նրան օրինապես իր անունով կոչել Սոֆիայի ավագ դուռը, որը և մինչև այսօր կոչվում է Հայոց դուռ:

Այս ծանր մի ժամանակաշրջան էր՝ երկպառակության հետեվանքով առաջացած կռիվների, անթիվ սպանությունների, գերազավարության և ավարառության, խռովության, կապանքների, նեղությունների, պակասությունների, սովի, խիստ սրածության և մարդամահության, ավանների ավերածության, շենքերի հրդեհումների և բոլոր տեսակի վնասների՝ բազում երկրներում: Աղետը երկու կողմից էր հասնում:

1. Ստ. Մալխասյանցի կարծիքով, այս դեպքը տեղի է ունեցել 572 թ. փետրվարի 2-ին, և ոչ թե 22-ին, ինչպես նշված է բնագրում: Այստեղ խոսքը վերաբերում է Հուստինոս II-ին:

571—572 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԸՍՏ ՀՈՎՀԱՆ ԵՓԵՍԱՑՈՒ

Հովհան Եփեսացին VI դարի ասորի պատմիչ է: Եղել է բարձրաստիճան եկեղեցական և գործուն մասնակցություն ունեցել դավանաբանական վեճերին: Երկար տարիներ ապրել է Կոստանդնուպոլսում և մոտիկ փոխհարաբերությունների մեջ եղել արևմտյան բարձր շրջանների հետ: Հեղինակ է մի շարք երկերի, որոնցից պատմական կարևոր սկզբնաղբյուր է նրա «եկեղեցական պատմությունը»: Այստեղ առանձին գլխի տակ նա տեղեկություններ է հաղորդում հայ ժողովրդի պարսկական իշխանության դեմ մղած ազատագրական պայքարի մասին: Այդ տեղեկությունները նա ստացել է ազատագրական մարտերից հետո Կոստանդնուպոլսում ապաստանած Հովհաննես Գաբեղյան կաթողիկոսից և նրա հետ գտնվող մյուս մարդկանցից:

Հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հատվածները ասորերենից հայերեն է թարգմանել Հ. Գ. Մելոնյանը, որը հրատարակվել է «Ծոտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով (Երևան, 1976):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գիրք II, գլուխ 18

Այն մասին, թե ինչ պատմեցին Դվինի հաղաթի կաթողիկոսը[1], որը բնակվում էր Պարսկական Մեծ Հայքում, և այլ եպիսկոպոսներն, որոնք նրա հետ ժամանել էին (Կոստանդնուպոլիս).

Չնայած մենք խոստացել էինք գրել միայն այն մասին, ինչի որ ականատես ենք եղել, և այն փորձությունների մասին, որոնց մոտ էինք կանգնած. այժմ մտածում ենք, որ արդյո՞ք ճիշտ կլիներ գրել այն հիշողությունների մասին, որոնց ականատես չենք եղել, անձամբ չենք իմացել և ոչ էլ դրանց արժանահավատությունը անձամբ կարող ենք հաստատել: Թեև մենք հեռու ենք այն երկրներից, որտեղ տեղի են ունեցել այդ բաները, բայց որովհետև այդ ամենն իմացել ենք ոչ թե հասարակ և կամ ցածր խավի մարդկանցից, այլ Պարսկական Հայաստանի՝ Դվինում (բազմած) գլխավոր կաթողիկոսից և նրան ընկերակցող եպիսկոպոսներից (դրա համար գրեցինք): Նրանք այդ իրադարձությունների մասին

մեզ պատմեցին Հռոմների թագավորական քաղաքում (Կոստանդնուպոլսում) բազմության ներկայությամբ։ Փախչելով պարսկական իշխանությունից, նրանք ապաստան էին գտել քրիստոնեական պետության մեջ և մեծ հարգանքով ընդունվել Նորին հաղթական մեծության (կայսրի) կողմից. նրանք շատերի ներկայությամբ աղնվությամբ ու երդումով հետևյալը պատմեցին։

Գլուխ 19

Այն մասին, թե մոգերն ինչ ասացին Խոսրով թագավորին նրանց (հռոմեների) մասին.

Այն ժամանակ հավաքվեցին բոլոր մոգերը և Խոսրովին՝ իրենց արքային ասացին. «Թագավոր ապրած կենաս, ահա մենք իմացանք, որ Հռոմների կայսրը, բոլոր նրանցից, որոնք ապրում են իր պետության մեջ, պահանջում ու ստիպում է, որ ընդունեն իր կրոնն ու հավատը, և բոլոր նրանք, որոնք իրեն չեն ենթարկվում, ամբողջ իր պետությունից արտաքսում ու հալածում է։ Թող Ձեր աստվածային մեծությունը ևս այդպես հրամայի, որպեսզի բոլոր կրոնները համակերպվեն քո կրոնին, և քո իշխանության ներքո ապրող անձինք պաշտեն այն, ինչ որ դու ես պաշտում։ Եվ նրանք, որոնք կհամարձակվեն քո հրամանին հակառակվել, թող այլևս չապրեն (մահվան դատապարտվեն)։ Եվ երբ Խոսրով արքան լսեց մոգերից այս խոսքերը, համաձայնվեց նրանց ասածին և ընդունեց նրանց խորհուրդը, և անմիջապես սկսեց նախ՝ քրիստոնյաներից, և ուղարկեց, որ բռնեն երեք եպիսկոպոսների և շատ կղերականների, և հրամայեց նրանց հրաժարվել իրենց հավատից և իր հետ պաշտել կրակն, արևն ու այլ աստվածություններ։

Սակայն նրանք առարկեցին նրան և քաջաբար դիմադրեցին ու խոստովանեցին, ասելով. «Մենք քրիստոնեական հավատք ունենք և պաշտում ու պատվում ենք Աստծուն, որը ստեղծել է երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, որ կա նրանց մեջ, և մենք չենք կարող թողնել նրան՝ ամեն ինչի արարչին ու պաշտել նրա արարածներին։ Մի՛ մոլորվիր արքա, որովհետև դու (ճիշտ է) մեր մարմինների վրա իշխանություն ունես և կարող ես ուզածդ անել, բայց մեր հոգիները Նրանն են (Աստծուն), և դրանց վրա դու բացարձակապես ոչ մի իշխանություն չունես»։ Եվ երբ արքան լսեց

եպիսկոպոսներին արժանի այս և նման այլ խոսքեր, հրամայեց և անմիջապես նրանց տարան ու (ապա) մահացրին (սպանեցին)։ Եվ քրիստոնյաներին պատճառած բազմաթիվ այլ չարիքներից բացի, նա ավերեց բազում վանքեր և եկեղեցիներ, և շատերին էլ կապեց շղթայով և գցեց բանտը։ Իր սրտում թագավորը հպարտացավ և հայհոյում էր Քրիստոսին և ասում. «Տեսնենք քրիստոնյաների աստված՝ Քրիստոսն ի՞նչ է անելու ինձ, որովհետև ես չգիտեմ, թե ո՞վ կամ ի՞նչ է նա»։ Այս և նման այլ շատ բաներ պատմեցին եպիսկոպոսներն այն մասին, թե ինչ է խոսել ու կատարել պարսիկների թագավորը, մինչև այն ժամանակ, երբ Հայաստանը ենթարկվեց Հռոմներին։ Այդ պատճառով էլ, նա (Խոսրովը) հրամայեց կրակի ատրուշաններ կառուցել ամբողջ Պարսկական Հայաստանում։

Գլուխ 20

Պարսիկների թագավորի՝ Մեծ Հայքում (ապրող) Քրիստոնյաների դեմ սկսած հալածանքների մասին.

Այս բոլորից հետո կաթողիկոսն ու նրան ընկերակցողները ասացին. «Նա (Խոսրովը) 2000 զինված ձիավորներով մի մարզպան ուղարկեց մեր երկիրը, որոնք նախ եկան մեր քաղաքը և հրամայեցին մեզ կրակի ատրուշան կառուցել, որպեսզի թագավորի հավատի համաձայն ծես կատարվի»։ Այսպես պատմեց և ասաց կաթողիկոսը. «Երբ նա ցույց տվեց ինձ և քաղաքացիներին հրամանը, ես նախանձախնդրությունից բորբոքվեցի և հակառակվեցի նրան. ես և բոլոր քաղաքացիներն ասացինք. «Չնայած մենք իսկապես արքայից արքայի ծառաներն ենք և նրան հարկ ենք վճարում, բայց մենք քրիստոնյաներ ենք և հավատի խնդրում չենք ենթարկվում նրան, եթե նույնիսկ պետք լինի մեռնել մեր հավատի սիրույն։ Նույնը փորձեցին անել նաև արքայից արքա Շապուհի ժամանակ, որը նույնպես ցանկացավ պաշտամունքի համար ատրուշան կառուցել, սակայն ժողովուրդը հավաքվեց ու միասնաբար (դիմադրեց), և պատերազմը տևեց յոթ տարի, և վերջում համաձայնության եկավ և հրաման տվեց, որ քրիստոնեության հարցը այլևս երբեք մեզ մոտ քննարկման ու հետա-

պնդման առարկա չի լինելու։ Շապուհ թագավորի այս հրովարտակի կրկնօրինակը ևս ցույց տվեցին նրան, սակայն նա չհամաձայնվեց մեզ հետ, և ինչպես հրամայված էր, նա բոնի (ատրուշանի) տեղը նշանակեց և (սկսեցին) հիմքը փորել և պատերը կառուցել, նույն ժամանակ ճակատամարտի համար նախապատրաստություններ տեսավ։ Չնայած ես նրան խնդրեցի և աղաչեցի, բայց նա ինձ չլսեց, ոչ էլ (ասածներիս) ուշադրություն դարձրեց։ Ի վերջո տեղեկություն ուղարկեցի մեր երկրի բոլոր բնակիչներին, և երբ նրբանք լուրն իմացան, Քրիստոսի հավատի նախանձախնդրությունից տարված, բոլորը՝ մոտ տաս հազար մարդ, մեկ մարդու նման, հավաքվեցին, դինվեցին ու ճակատամարտի պատրաստվեցին Քրիստոսի համար ապրելու կամ մեռնելու հաստատ որոշումով, որ թույլ չեն տա մոգերին հեթանոսական ատրուշան կառուցել մեր երկրում։ Երբ հավաքվեցին երկրի բոլոր տերերն ու մեծերը, մենք գնացինք մարզպանի մոտ, այնտեղ, որտեղ նա սկսել էր կրակի ատրուշանի կառուցումը, և երկար զրույց ունեցանք, նրա հետ վիճելով՝ ասացինք. «Մենք քրիստոնյաներ ենք և արքայից արքայի հպատակները, բայց հավատի հարցում, մենք չենք ենթարկվի կամ լսի որևէ մեկին, եթե նույնիսկ ինքը՝ թագավորը անձամբ գա, և մինչև որ մեզանից վերջինը չմահանա, ոչ մի հեթանոսական տաճար չի կառուցվելու մեր երկրում։ Ուստի առանց պատերազմի ու ավերածության գնա՛ մեր երկրից և ասա՛ արքային մեր հավատը պաշտպանելու հաստատ որոշման մասին։ Նա իրավունք ունի հրամայելու, որ ամեն ինչ անենք, սակայն մինչև բոլորս չենք մեռնի, մենք թույլ չենք տա մոգերի ատրուշան կառուցել մեր երկրում»։

Երկար բանակցություններից հետո, մարզպանն, ինչպես հրամայված էր իրեն, պատրաստվեց (ատրուշանի) կառուցման։ Նա առարկում էր ու ասում մարդկանց. «Նայե՛ք, դուք ապստամբվում եք արքայից արքայի հրամանի դեմ և դուք (այս ձևով) անպատվում եք նրան։ Նա կարող է ձեզ դաժան մահով պատժել. հասկացեք թե դուք ինչ եք անում»։

Երբ մարզպանը տեսավ նրանց հաստատակամությունը և իրեն դիմադրելու պատրաստակամությունը, և (մանավանդ) հասկացավ, որ նրանք ավելի ուժեղ են քան ինքը, (ուստի) նա մեկնեց բարկությամբ ու սպառնալիքներով։ Մեծ բարկությամբ գնաց և բոլոր տեղի ունեցածը պատմեց արքային. նա (արքան) երբ իմացավ, սաստիկ ջղայնացավ և ցասումով լցվեց ու որոշեց մահով (պատժել) Հայաստանի բնակիչներին։ Նա նրանց դեմ ուղարկեց մարզպանին՝ 15.000 մարդկանցով պատերազմելու համար, հրամայելով, որ եթե նրանք հակառակվեն իր հրամանին, ոչնչացնեն նրանց, և այնտեղ կրակի ատրուշան կառուցեն։ Երբ բնակիչներն իմացան այդ մասին, 20.000 մարդ հավաքվեցին մեկ մարդու նման, մարտի պատրաստ, նույնիսկ մինչև մահ (եթե անհրաժեշտ լինի) պաշտպանելու համար իրենց քրիստոնեությունը։ Երբ նրանք (պարսիկները) մոտեցան, սրանք (հայերը) նրանց դեմ տեղավորվեցին ճակատամարտելու համար ու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով, աղաղակելով հարձակվեցին նրանց վրա։ Քրիստոսն ընկճեց նրանց (ուժը) այս երկրի բնակիչների առաջ, և նրանց բոլորին, մինչև վերջին մարդը կոտորեցին։ Նրբանք (հայերը) սպանեցին նաև մարզպանին, վերցրին նրա գլուխը ևս ուղարկեցին պատրիկ Հուստինոսին, որ այն ժամանակ բանակել էր սահմանի վրա՝ Թեոդոսուպոլիս քաղաքում։

Այս և այլ իրադարձություններն, որոնք հետագայում տեղի ունեցան, պատմելու ու նկարագրելու համար բավական երկար են։

Գլուխ 21

Այն մասին, թե ինչ տեղի ունեցավ դրանից հետո Մեծ Հայքում Խոսրովի նկատմամբ, և թե ինչպես (հայերն) անջատվեցին Նրանցից, և ամբողջ երկիրը հպատակեցրին հոռոմներին.

Երբ այս բոլորը տեղի ունեցավ և ամբողջ Մեծ Հայքի ժողովուրդը տեսավ, որ իր դեմ դժվար մի պատերազմ արծարծվեց, պարսկական անզգամ պետության կողմից, որպես քրիստոնյաներ, հավաքվեցին բոլոր գավառներից, վախեցած ուղեցին ապաստան որոնել քրիստոնեական պետության (հոռոմների) մոտ, ասելով, որ «Սրանից հետո քրիստոնյա պետության ծառաներ լինենք և փախչենք, որպեսզի ապաստան գտնենք հոռոմների պետության մեջ և փրկվենք մոգության վայրագություններից»։ Այս և այլ բաներ պատմեցին կաթողիկոսն ու իրեն ընկերացած եպիսկոպոսները արեգուլ կայսրի և ամբողջ սենատի առաջ, որոնցից միայն մի

փոքր մասը գրի առա որպես հիշողություն։ Ապա նրանք պատմեցին այնտեղ եղած պատերազմական ճակատամարտերի, մեծ ավերածությունների մասին։ Թե ինչպես հետո նորից բանակներն իրար ընդհարվեցին և, թե ինչպես պարսիկները շատ անգամ պարտվեցին, և թե ինչպես նրանցից (նույնիսկ) փղեր գրավեցին, և որովհետև այս բոլորը շատ (երկար) է, մենք այժմ դրանք մի կողմ կթողնենք։

Գլուխ 22

Այն մասին, թե ինչ էին պատմել կաթողիկոսը և նրան ընկերացածները, և այլն.

Այս ամբողջն ու այլ շատ բաներ է պատմվել մեր հռոմների մայրաքաղաքում շատերի ներկայությամբ Դվինի, որը (գտնվում) է Մեծ Հայքի շրջանում, կաթողիկոսի և իրեն ընկերացած եպիսկոպոսների և ազատների կողմից։ Երբ նա (կաթողիկոսը) և իր հետ այլ եպիսկոպոսներ ու (մի քանի) մեծամեծներ Հայաստանից ժամանեցին, բոլորն էլ մեծ պատվով ընդունվեցին և ստացան թագավորական պատիվներ ու նվերներ։ Բոլորին, որոնք նրա հետ այնտեղից ժամանել էին, տրվեց բարձր աստիճան, հարուստ տրներ և ամուր թագավորական դղյակներ, իսկ նրանց, որոնք մնացել էին (իրենց) երկրում, շատ ոսկի ու տիտղոսներ ուղարկվեցին. նույնպես նրանք հռոմների կայսրից երեք տարով ազատվեցին (հարկից)։ Հրամայվեց, որ օգնություն ցույց տան նրանց, որոնք կռվում են պարսիկների դեմ, ինքնապաշտպանության ու ամբողջ հայկական հողերի ազատագրման համար։ Եվ նրանք երկար ժամանակ այն կատարեցին (պայքարեցին), և մոգերի ժողովուրդը հաճախ, որոշ առիթներով, հարձակվում էր քրիստոնյաների վրա, և պատերազմը տևեց վեց տարի։ Հետագա (իրադարձությունների) մասին իր ժամանակին շատից քիչը կհաղորդենք։

Կաթողիկոսն երկու տարի հետո մահացավ մայրաքաղաքում և չվերադարձավ իր հայրենիքը[2]։

Գլուխ 24

Այն մասին, թե ինչ պատահեց հետո, երբ հայերը չհնազանդվեցին, և թե այդ պատմության շարունակությունը հետագային եմ թողնում, որովհետև այն չափազանց ընդարձակ է.

Մենք տեսնում ենք, որ մեր ժամանակ և հատկապես այժմ, մեր օրերում պատահածներից շատ բան, մանավանդ եթե (գրենք)... Պարսկական Հայաստանի հռոմներին ենթարկվելու մասին (մանրամասնությունները), ապա մեր պատմության սահմաններից դուրս կգանք, որովհետև այդ դեպքը պատճառ եղավ, ամեն կողմից հարատև ու բազում պատերազմների ծագման, ահավոր ավերածությունների ու շատ արյուն թափվելուն։ Որովհետև մոգն իր խորամանկությամբ, նորից վեր կացավ ու հարձակվեց Հայաստանում եղած հռոմների զորքի վրա, հուսալով, որ կոչնչացնի և կբնաջնջի նրանց։

Երբ չկարողացավ այդ անել (հաղթել), ետ վերադարձավ և մտավ Հռոմների Հայաստան, այն հույսով, որ կպաշարի ու կգրավի Կապադովկիական Կեսարիան։ Սակայն (հռոմների) զորքը նրան շրջապատեց, պահեց (կանգնեցրեց) առաջխաղացումը և (ապա) կապադովկիայի մուտքի մոտ հարձակվեց նրա վրա։ Եթե (հռոմ) հրամանատարները համագործակցեին, նա (խոսրովը) կենդանի չէր վերադառնա։ Հռոմների կայսրը նորից Հայաստանը հարստացրեց նվերներով, պարգևներով ու բանակ (ավելացրեց Հայաստանում), այնպես որ ամբողջ Պարսկական Հայաստանը պաշարվեց ու նվաճվեց հռոմներից։ Շատ անգամ նրանք հաղթեցին և որոշ ժողովուրդների էլ նվաճեցին ու ենթարկեցին իրենց։

1. Նկատի ունի Հովհաննես II Գարեղյան կաթողիկոսին (557—574)։
2. Կաթողիկոսը, իրոք, մահացել է Կ. Պոլսում։

ՍԵԲԵՈՍԸ ՄՈՐԻԿ ԿԱՅՍԵՐ ՀԱՅՏՀԱԼԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԺԳ. Մորիկի[1] ենեգ մտադրությունը՝ իշխաններին Հայաստանից վերացնելու մասին։ Բազմաթիվ իշխանների փախուստը հունական մասից պարսկական մասը.

Այն ժամանակ հունաց Մորիկ թագավորը հրամայեց գիր գրել Պարսից թագավորին, մեղադրական դրուքյուն՝ ընդդեմ Հայաստանի բոլոր իշխանների և նրանց զորքի. «Մեր և ձեր միջև,— ասում է,— խոտոր և անհնազանդ մի ազգ կա, որ միշտ պղտորում է։ Ահա, արի՛,— ասում է,— ես իմ մասի մարդկանց հավաքեմ և ուղարկեմ Թրակիա, դու էլ քո մասի մարդիկ հավաքիր և հրամայիր Արևելք տանել, եթե նրանք մեռնեն՝ մեր թշնամիները կմեռնեն, եթե նրանց սպանեն, ապա մեր թշնամիներին կսպանեն և մենք խաղաղ կապրենք։ Որովհետև, եթե դրանք իրենց երկրում մնան, մենք հանգիստ չենք կարող»։

Միաբանեցին երկու թագավորները։ Եվ սկսեց կայսրը հրաման տալ, որ բոլորին էլ հավաքեն և Թրակիա ուղարկեն։ Եվ համառությամբ պահանջում էր, որ հրամանը կատարվի։ Եվ այն կողմերից հայ իշխաններն սկսեցին փախչել և գալ պարսկական թագավորին ծառայության, մանավանդ նրանք, որոնց տիրույթները գտնվում էին պարսկական իշխանության տակ։ Իսկ Պարսից Խոսրով թագավորը նրանց ընդունում էր սիրով և ավելի մեծ պարգևներ էր տալիս, քան նրանց կայսրն էր տալիս։ (Պարսից թագավորը) երբ տեսնում էր մանավանդ նրանց փախուստը կայսրից, է՛լ ավելի մեծ սեր էր ցույց տալիս, ցանկանալով նրանց գրավել իր կողմը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՋԼԱՏՄԱՆ ՄՈՐԻԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՍԵԲԵՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԾԸ. Կայսրի նոր հրամանը՝ հեծելազոր հավաքել Հայաստանում և ուղարկել Սահակ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու միջոցով։ Սմբատի ետ դառնալն այնտեղից և ապստամբության մտադրությունը։ Սմբատի բռնվելը և Կոստանդնուպոլիս բերվելը։ Նրան սպանելու նպատակով կրկես ձգելու վճիռ կայացնելը և ողորմություն ցույց տալը։ Վերջում՝ նրան աքսորելը Աֆրիկա.

Այն ժամանակ նորից հրաման եկավ կայսրից՝ վերստին Հայաստանում զորահավաք կատարել, հավաքել երկու հազար լավ

սպառազեն ընտիր հեծելազոր և շտապ ուղարկել երկու հավատարիմ մարդկանց ղեկավարությամբ։

Կատարեցին զորահավաքը. ընտրեցին երկու հազար սպառազեն և հանձնեցին երկու հազարը երկու հավատարիմ մարդկանց՝ մեկ հազարը Սահակ Մամիկոնյանին, մյուս հազարը՝ Սմբատ Բագրատունուն՝ Մանուելի որդուն։ Եվ շարժվեցին նրանք (դեպի Կ. Պոլիս) ո՛չ նույն ճանապարհով. Սահակ Մամիկոնյանը մեկ հազարով ճանապարհվեց Սերաստիայի վրայով, իսկ Սմբատ Բագրատունին մյուս հազարով՝ խաղտիքի։ Սահակը զորքը տարավ հասցրեց պալատ և ներկայացավ կայսրին։ Իսկ Սմբատը հասնելով խաղտիք՝ կանգ առավ, որովհետև զորքը ճանապարհին վախեցավ և չուզեց գնալ այնտեղ, ուր պահանջում էր թագավորը։ Այդ մասին տեղեկություն հասցրին թագավորին։ Նա հրովարտակ ուղարկեց հավատարիմ պատգամավորի միջոցով, երդումով խոստացավ Սմբատին մեծ պատվով ետ ուղարկել իր երկիրը։ Եվ զորքին խոստացավ մեծամեծ պարգևներ և նվերներ ու այս միջոցներով խաղաղեցրեց։ Եվ բոլորը համաձայնվելով՝ գնացին և ներկայացան թագավորին։ Թագավորը հանդերձավորեց, զինեց զորքը և ուղարկեց Թրակացոց սահմանը, իսկ Սմբատին մեծ պատվով ու մեծամեծ նվերներով ետ ուղարկեց իր երկիրը։

Այդ ժամանակ երկրում մնացած Հայոց նախարարները սկսեցին նորից միաբանել և մտածել դուրս գալ Հունաց թագավորի հպատակությունից, թագավոր դնել, որպեսզի այսուհետև իրենք չմեռնեն Թրակացոց կողմերում, այլ մնան և մահկանան իրենց աշխարհի համար։ Սակայն այս խորհրդին բոլորը չէ, որ միաբան գտնվեցին։ Նրանցից ոմանք դավադրաբար լուրը հասցրին թագավորի ականջը, իսկ իրենք ցրվեցին այս ու այն կողմ և թաքնվեցին։

Այդ ժամանակ եկան արքունական պատվիրակները հրովարտակով, բռնեցին Սմբատին յոթ ուրիշների հետ և տարան թագավորի մոտ։ Քննության առնելով բազմամբոխ ժողովում՝ վճռեցին մերկացնել Սմբատին և ձգել կրկեսում գազանների առաջ։

Սմբատը հսկա մեկն էր, արտաքինով գեղեցիկ, բարձր հասակով և լայն թիկունքով, ամուր, մկանուտ մարմնով։ Նա քաջ էր և պատերազմող, բազում պատերազմներում նա ցույց էր տվել իր քաջությունը և ուժը։ Ահա նրա հզորությունից մի փաստ. մեկ ան-

գամ Սմբատը խիտ անտառով, ամուր ծառերի տակից անցնելիս, հաղթանդամ և ուժեղ երիվարի վրա նստած, բարձրանում և բռնում է մի ծառի ճյուղից և ամուր սեղմելով ոտքերը երիվարի կողերին, կտրում է երիվարը գետնից։ Ողջ զորքը տեսնելով այդ՝ ահաբեկ եղած զարմանում է։

Եվ ահա նրան մերկացրին, հագցրին անդրավարտիք և ձգեցին կրկեսում (գաղանների առաջ— Ա. Ա.)։ Նրա վրա բաց թողեցին արջը։ Երբ արջը նրա վրա եկավ, նա բարձրաձայն գոռալով հարձակվեց արջի վրա, բռունցքով խփեց արջի ճակատին և սատկեցրեց նրան իր տեղում։

Երկրորդ անգամ նրա վրա բաց թողեցին ցուլը։ Նա բռնեց ցուլի եղջյուրներից... ցուլը հոգնեց նրա հետ մարտնչելուց։ Սմբատը ոլորեց նրա պարանոցը և ջարդեց ղույգ եղջյուրները։ Թուլացավ ցուլը և ետ-ետ գնալով փախուստի դիմեց։ Գնալով նրա ետևից, Սմբատը բռնեց նրա պոչից և ոտքի մի սմբակից։ Սմբակը մնաց նրա ձեռքում, իսկ ցուլը փախավ մերկ մի ոտքով։

Երրորդ անգամ նրա վրա բաց թողեցին առյուծը։ Երբ առյուծը հարձակվեց նրա վրա, Աստծու օգնությամբ այնպես հաջողվեց, որ նա կարողացավ բռնել առյուծի ականջից և նստեց նրա վրա։ Ապա անմիջապես բռնեց առյուծի կոկորդից, խեղդեց և սպանեց։ Այդ ժամանակ ներկա բազմության բարձրաձայն բացականչությունները երկինք բարձրացան. բոլորը խնդրեցին թագավորին ներել նրան։

Իսկ նա, շահելով մարտը, նստեց սպանված առյուծի դիակի վրա, որպեսզի մի քիչ հանգստանա։ Այդ ժամանակ թագուհին ընկնելով կայսեր ոտքերը, խնդրեց ներել նրան, որովհետև Սմբատը ինչ-որ մի ժամանակ եղել էր կայսրի և նրա կնոջ սիրելի մեկը։ Կայսրը զարմացած Սմբատի ուժի և ամրության վրա, լսելով կնոջ և ողջ արքունի մարդկանց աղերսանքը՝ ներելու նշան տվեց։

Եվ ահա տարան նրան բաղնիք լողացնելու. մաքրեցին, հագցրին և հրավիրեցին արքունիք ընթրիքի։ Որոշ ժամանակ անց, ոչ անձամբ թագավորի չար դիտավորության, այլ նախանձորդների չարախոսությունների հետևանքով, թագավորը հրամայեց նավ

նստեցնել Սմբատին և աքսորել հեռավոր կղզի։ Իսկ հետո նա հրամայեց նրան անցկացնել Աֆրիկա և նշանակել այնտեղ գտնվող զորքի հրամանատար։

1. Մորիկը (Մավրիկիոս) Բյուզանդիայում գահակալել է 582—602 թվականներին։ Ենթադրվում է, որ նա ծագումով հայ է եղել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԻ ԿՈՂՄԻՑ

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, էջ 285—286

(Խոսրովի սպանությունից) ութ տարի անց[1] Աբդուահիմը՝ Մահմեդի քեռու տղան, խոշոր բազմությամբ, տասնութ հազար հոգուց բաղկացած հեծելազորով, եկավ Հայաստան և հարկ պահանջեց։ Տիրանը կռվելու համար հրամայեց բոլոր տեղերից զորքեր հավաքել։ Բայց վրաց Ջոջիկ իշխանը, Վաշդենի որդին, հորդորեց բոլոր հայերին, որ չկատարեն նրա հրամանը։ Տիրանը տեսնելով գործի անհաջողությունը, դիմեց իր մոտ կամավոր եկած ութ հազար զինվորներին հետևյալ խոսքերով. «Ո՛վ քրիստոնյա ժողովուրդ, լավ է ինձ մեռնել, քան Աստծու եկեղեցին հարկատու տեսնել արաբներին»։

Նա շտապ հավաքեց զորքը Գրգուռ լեռան ստորոտը։ Ճակատամարտը տեղի ունեցավ լեռան հարավային կողմում գտնվող դաշտում։ Կռիվը տևեց առավոտից մինչև երեկո։ Տիրանը փախուստի մատնեց արաբներին։ Բայց այդ ժամանակ ապստամբվեց Անձևացոց իշխան Սահուռը և հարձակվեց հայոց զորքի վրա... Ֆշնամին աջացնի մեջ վերցրեց[2] հայոց զորքը և կոտորեց մեծ մասին։ Կոտորածից փախշող-ազատվողները ապաստանեցին Օձ քաղաքում... Աբդուահիմն անցավ Հարք, Բասեն, Ջավախք, Վիրք և Վանանդ, հարկ վերցրեց և վերադարձավ Արբիա[3]։

1. Ստեփանոս Տարոնեցու տեղեկությամբ նույնպես արաբական արշավանքը տեղի է ունեցել Խոսրով Թագավորի սպանությունից ութ տարի հետո։ Հայտնի է, որ Խոսրովը սպանվել է 628 թ. փետրվարի 25-ին, հետևապես նրա սպանության 8-րդ տարին կլինի 636 թվականը, որ ճիշտ չէ արաբական այդ արշավանքի համար։ Արաբական պատմիչները Աբդուահիմի արշավանքը դնում են Հիջրայի 19-ին, որ լինում է 640 թվականը։ Այդ տարեթվի ճշտությունը ստուգվում է «Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց» բնագրում հաղորդվող տեղեկությամբ, ուր այդ արշավանքը թվագրվում է՝ «... յետ ութսուն ամի թուականութեան Հայոց» և «յետ ութ ամի այսմ լինելոյ», որով ունենում ենք 639/640 թ. (551/552+80+8=639/640 թ.։

2. Բնագրում անորոշ է, թե ով է եղել հայկական զորքն աջացնի մեջ վերցնողը՝ Անձևացոց իշխան Սահո՞ւռը, թե՞ արաբական զորքը։

3. Արաբների մինչև Ջավախք և Վիրք հասնելու մասին տեղեկությունը կասկածելի է, հավանական է, որ այն ուշ ժամանակի ընդմիջարկություն լինի։

ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Իբն ալ-Ասիրը արաբական աշխի ընկնող պատմիչներից է, ծնվել է 1160 թ., մահացել է 1233-ին։ Գրել է պատմական մի ֆանի աշխատություններ, որոնցից կարևորը «Ընդհանուր պատմությունն է» («Թարիխ ալ-Քյամիլ»)։ Այստեղ նա օգտագործել է խալիֆայության վաղ շրջանի մեզ չհասած որոշ սկզբնաղբյուրներ։ Հայաստանին վերաբերող ստորև բերված հատվածը հայերեն է թարգմանել Բ. Խալաթյանցը (տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, էջ 127

Օմարը[1] գրեց Սադ իբն Աբու ալ-Վաքքասիին, թե Աստված հնազանդեցրեց Ասորիք և Իրաք (Բաբելոն). այժմ զորք ուղարկիր Միջագետք... Սադ ուղարկեց Իյադին, որ բանակեցավ իր գնդով Ուռհայի հանդեպ, բնակիչը նոցա խաղաղության պայմանագիրը կապեցին նորա հետ, որ և՝ խառանցիք։ Իյադ ուղարկեց Աբու-Մուսային Մծբին, որ հպատակեցավ, իսկ ինքն արշավեց Դարա և առավ քաղաքը։ Ապա նա ուղարկեց Օսման իբն Աբուլ-Ասին Զորրորդ Հայք, որի ժողովուրդը պատերազմեցավ նորա հետ (Սաֆֆահ իբն Մուաթթուլ նահատակվեցավ կռվի մեջ), բայց հետո խաղաղություն հաստատեց նորա հետ հարկ տալու պայմանով[2]։

1. Օմար իբն ալ-Խաթիբը արաբական աչքի ընկնող խալիֆներից մեկն է, Մուհամեդի մոտիկ գործակիցը։ Նրա ղեկավարությամբ արաբական զորքերը նվաճեցին Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Իրաքը և արշավանք ձեռնարկեցին դեպի Չորրորդ Հայք։

2. Արաբական այս արշավանքը, ըստ Իբն ալ-Ասիրի տեղեկության, տեղի է ունեցել Հիջրայի 19-ին (ներկա թվականով՝ 640—641 թթ.)։

ՍԵԲԵՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Խ. Ավերածություններ գործող արաբական զորքը Ասրհատանի կողմից Զորի ճանապարհով խուժեց Տարոնի շրջանը։ Նրանք գրավեցին այն, ապա վերցրին նաև Բղնունիքը ու Աղիովիտը և ուղղություն վերցնելով Բերկրիի Զորը, շարժվեցին Որդոսպ[1] և Կոգովիտ ու խուժեցին Այրարատ։ Ոչ ոք չկարողացավ Դվին ապավանում գտնվող հայկական զորքերին տեղեկություն հասցնել, միայն թե երեք իշխաններ, որոնք գնացել էին զորք հավաքելու՝ Թեոդորոս Վահևունին, Խաչյան Առավեղյանը և Շապուհ Ամատունին, փախստական գալով Դվին, հասնելով Մեծամորի կամուրջը, քարուքանդ արեցին այն, իսկ իրենք հասնելով ավանը, գուժեցին սպառնացող վտանգի մասին։ Նրանք բերդի մեջ հավաքեցին շրջանի բոլոր մարդկանց, որոնք դուրս էին եկել խաղողահավաքի։

Իսկ Թեոդորոսը գնացել էր Նախիջևան քաղաքը։ Եվ Թշնամի Բուշան[2] հասնելով Մեծամորի կամուրջը, չկարողացավ անցնել։ Բայց նրանք իրենց ուղեկից ունեին Վարդիկ իշխանին՝ Մոկսից, որ կոչվում էր Ակնիկ։ Նրանք ապա անցնելով Մեծամորի կամուրջը, սկսեցին ասպատակել երկիրը։ Վերցնելով ավար և մեծ թվով գերիներ, եկան և ճամբար դրեցին Խոսրովակերտ անտառի մոտ։

Իրենց գալու հինգերորդ օրը նրանք հարձակվեցին քաղաքի վրա։ Նրանց հաջողվեց վերցնել քաղաքը, որովհետև կրակ վառեցին քաղաքի չորս կողմում, ծխով և նետաձգությամբ կարողացան հեռացնել պարիսպների վրայի եղած պահապաններին, աստիճաններ դրեցին, բարձրացան պարիսպը և ներս մտնելով քաղաք, բաց արեցին քաղաքի դարպասները։

Թշնամու զորքերը ներս մտնելով քաղաք, կոտորեցին բնակիչներից շատերին և քաղաքից վերցնելով մեծ քանակությամբ

ավար և կողոպուտ, դուրս եկան ու հավաքվեցին նախկին ճամբարում։ Այդ տեղի ունեցավ տրե ամսի 20-ին, ուրբաթ օրը[3]։ Մի քանի օր դադար տալուց հետո, նրանք հեռացան այն ճանապարհով, որով եկել էին։ Իրենց հետ նրանք գերի տարան երեսուն հինգ հազար հոգի։

Հայոց Ռշտունի իշխանը դարանակալելով Կոգովիտ գավառում, փոքր ուժերով հարձակվեց նրանց վրա, բայց չկարողացավ դիմադրել և փախուստի դիմից. արաբները հետապնդելով՝ կոտորեցին շատերին, իսկ հետո հեռացան գնացին Ասորիք։ Այս տեղի ունեցավ Եզրի կաթողիկոսության ժամանակ։

1. Որդոսպ կամ Որդոպու բերդը գտնվում է Բերկրի-Կոգովիտ ճանապարհի վրա (տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի կիսավոր ճանապարհները, էջ 148—153)։

2. Ըստ Հովհան Մամիկոնյանի տեղեկության, արաբական առաջին արշավող զորաբանակի ղեկավարն է եղել Արդուլ Ռահմանը (Արդռահիմ), իսկ այստեղ հիշվում է Բուշան. արդյո՞ք դրանք նույն անձնավորությունն են տարբեր անուններով, թե՞ դա մի այլ զորահրամանատար է։

3. «Տրե ամսի 20-ին, ուրբաթ օրը»— հայոց շարժական տոմարով այն կհամապատասխանի ներկա թվարկության 640-ի հոկտեմբերի 6-ի ուրբաթ օրվան։

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

Ղևոնդը ապրել և գործել է VIII դարի երկրորդ կեսին։ Ենթադրվում է, որ նրա ծննդավայրը Գողթանն է։ Սովորել է Դվինի կաթողիկոսարանում։ Իր ենդիանական «Պատմությունը» գրել է VIII դարի 90-ական թվականներին։ Այն ընդգրկում է հայ ժողովրդի պատմության համեմատաբար փոքր, բայց կարևոր մի ժամանակաշրջան՝ 620-ից մինչև 780 թվականները։ Ղևոնդը իր ներկայացրած պատմական իրադարձությունների զգալի մասի ժամանակակիցն է։

Ղևոնդի երկը կարևոր սկզբնաղբյուր է հայ ժողովրդի արաբական ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար, արժեքավոր տեղեկություններ է պարունակում արաբա-բյուզանդական հարաբերությունների, նրանց միջև տեղի ունեցող ռազմական ընդհարումների մասին։ Ղևոնդի երկը կարևոր սկզբնաղբյուր է համարվում նաև Առաջավոր Ասիայի պատմության

համար: Հրատարակվել է 1887 թ. Պետերբուրգում՝ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց» խորագրով: Ստորև բերված աշխարհաբար թարգմանությունը կատարել է Ա. Գ. Աբրահամյանը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Բ. Հաջորդ տարի[1] իսմայելացիները սկսեցին սպառնալ Պարսից թագավորին: Նրանք հավաքելով մեծ թվով զորք, դուրս եկան Պարսից Հազկերտ թագավորի դեմ, որը Խոսրովի թոռն էր: Հազկերտը ևս հավաքելով իր զորքը, կռվեց նրանց դեմ, բայց չկարողացավ դիմադրել. պարսկական զորքը գլխովին ջարդվեց, իսկ թագավորն սպանվեց: Այնուհետև փուլ եկավ պարսից թագավորությունը, որի իշխանությունը գոյություն ունեցավ 481 տարի: Իսմայելացիները կողոպտեցին երկիրը և արքունի գանձերը ու տարան իրենց երկիրը:

Իսմայելացիներն այնուհետև իրենց բանակից առանձնացնելով խոշոր մի զորամաս, հարձակվեցին Հայոց աշխարհի վրա Պարսկաստանի կողմից: Նրանք ասպատակեցին Մարաց ավանները, Գողթան գավառը և Նախիջևան գաստակերտը: Տղամարդկանցից շատերին կոտորեցին, իսկ մյուսներին՝ կանանց և երեխաներին անգթաբար գերի տարան: Ապա զորքը երկուսի բաժանեցին, մի մասը գերիներին տարավ իրենց երկիրը, իսկ բաժանված մի գունդը ասպատակել սկսեց Արտազ գավառը և (հարձակվեց) հունական զորքի վրա, որի զորավարի անունն էր Պրոկոպիոս:

Հունական զորքը բանակ էր դրել Կոգովիտում՝ Բազուձորի և Մարդուցայքի[2] սահմանի վրա: Այդ երբ հայտնի դարձավ, Թեոդորոսը, որը Ռշտունյաց տոհմից էր, դիմեց հունաց զորավարին, ասելով. «Պշնամու զորքը հարձակվել է և գալիս է մեզ վրա»: Սակայն Պրոկոպիոսը, որը հիմնվել էր ոչ թե Աստծու վրա, որը հաջողություններ է տալիս պատերազմում, այլ՝ իր զորքի բազմության, արհամարհեց պատասխանել հայոց իշխանին: Բայց որովհետև Թեոդորոսը կսկծում էր Հայոց աշխարհի կորստյան և զորավարի ծուլության վրա, ուստի նա կրկնեց իր խնդրանքը երկրորդ և երրորդ անգամ: Զորավարը բարկացավ և նրա վրա նետեց իր

վարոցը: Թեոդորոսը ջղայնացած դուրս եկավ նրա մոտից, անմիջապես հավաքեց այն զորքը, որը գտնվում էր իր հրամանատարության տակ և ասաց. «Պատրաստվեցեք և դուրս եկեք իսմայելացիների դեմ»: Եվ նրանք հեծնելով իրենց ձիերը, զարան մտան մի փոքր բլրի ետև, որին եղբայրք են անվանում: Կտրելով կիրճի մուտքը, նրանցից շատերին կոտորեցին: Թեոդորոսը վերցրեց ընտիկածների կողոպուտը, բաժանեց զինվորների միջև և դնաց Գառնի գավառը:

Այդ ժամանակ Պրոկոպիոսը հրամայեց իր զորքերին հարձակվել Բշնամու վրա: Բայց Բշնամին հակահարված տալով կոտորեց, ջարդեց հունական զորքի մեծ մասը և մյուսներին փախուստի մատնեց մինչև նրանց ճամբարը ու վերադարձավ իր բանակատեղը: Ասում են, թե հունական զորքի թիվը հասնում էր մինչև 60.000-ի, այնինչ իսմայելացիների զորքը ընդամենը 10.000 էր:

Իսմայելացիները հաջորդ օրը հավաքեցին հռոմեացիների բանակի թողած ավարը և վերադարձան իրենց երկիրը: Այս ամենը տեղի ունեցավ Աբու-Բաքրի, Օմարի և Օսմանի իշխանության 22-րդ տարում[3]:

1. «Հաջորդ տարին» անորոշ է. նրն նկատի է ունեցել Քադեսիայի ճակատամարտը, ապա այն տեղի է ունեցել 637 թվականին:

2. Մարդուցայքը Մարդաստան կամ «Սեպհական գունդ» կոչվող երկրամասն է. գտնվում է Վասպուրականի և Այրարատի սահմանի վրա՝ Արտազից արևմուտք:

3. 22-րդ տարին՝ Ք. Պատկանյանի կարծիքով, համապատասխանում է 640 թ., որը, սակայն, չի համընկնում Հիջրայի թվականը սկզբնավորող տարվա հետ (632 թ.):

ԴՎԻՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Գ. Հռոմեական կայսր Կոստանդինի երկրորդ տարում[1], որը Հերակլի թոռն էր, երբ Թեոդորոս Ռշտունուն տեղեկություն հասավ, որ իսմայելացոց բանակը հարձակվել է Հայոց աշխարհի վրա, վերցրեց իր զորքը և դուրս եկավ Բշնամու դեմ՝ ցանկանալով կտրել Զորա կիրճի[2] անցքը: Սակայն նա չկարողացավ ճիշտ ժամանակին հասնել, որովհետև Բշնամին քամու արագությամբ, թևա-

վոր օձի նման սլացավ՝ իր հետևում թողնելով հայոց զորքը։ Իսմայելացիները շարժվեցին դեպի Դվին մայրաքաղաքը։ Քաղաքը նրանք դատարկ գտան կռվողներից, որովհետև կռվող մարդիկ գը-

Նկար 32. Ս. Հռիփսիմեի վանքը էջմիածնում (618 թ.)

նացել էին Թեոդորոս իշխանի հետ, մնացել էին միայն կռվի անընդունակ կանայք, երեխաները և հասարակ ժողովուրդը, որոնք կռվող մարդիկ չէին։ Իսմայելացիները հարձակվեցին քաղաքի վրա, շատ շուտ գրավեցին ամրոցը, կոտորեցին այնտեղ գտնված տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին՝ թվով երեսուն հազար, գերի տարան[3]։

1. Կոստանդին (Կոստաս II) կայսրը գահակալել է 641 թվականին, հետևապես նրա երկրորդ տարին կլինի 642 թվականը։

2. Զուռա կիրճ— Կղեսուրի կամ Կլեյսուրի լեռնանցքն է, գտնվում է Սասունից արևմուտք՝ Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածում (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 225, ծան. № 1)։

3. Ըստ Սամուել Անեցու տեղեկությյան, Դվինում սպանվել է 12.000, իսկ գերի է տարվել 35.000 մարդ (տե՛ս Սամուել Անեցի, Հավաքմունք..., էջ 80)։

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՐՇԱՓԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԸՍՏ ՍԵԲԵՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԽԲ. Հաջորդ տարի Իսմայելի զորքը մտավ Ատրպատական (Այստեղ) նա բաժանվեց երեք զորախմբի. մի զորախումբը մտավ Այրարատ, մյուսը՝ Վասպուրականի կողմերը[1], և երրորդը՝ Աղվանք։ Այն զորամասը, որը նախատեսված էր Վասպուրականի կողմերի համար, ցրվեց ողջ երկրամասում, սրի մատնեց ամենքին, կողոպտեց, հավաքեց ավարը և գերիները։ Այնուհետև նրանք եկան և հավաքվեցին Երևանում[2]։ Գրոհեցին բերդի վրա, բայց չկարողացան վերցնել։ Այստեղից շարժվեցին Որդոսպ։ Այնտեղ ևս ոչինչ չկարողացան անել։ Ապա գնացին Արծափ և ճամբար դրին բերդի հանդեպ, գետի մոտ։ Սկսեցին կռվել բերդի հետ և բազում վնասակար ռմիրներ գործեցին այնտեղ։ Բերդը ելք ուներ թիկունքից, որը դուրս էր գալիս դեպի Ասորենի կողմը, որին Կախանկտուց են անվանում։ Մի քանի հոգի բերդի այդ ելքից ներքև իջան՝ նպատակ ունենալով օգնություն խնդրել Դարոնից։ Սմբատ Բագրատունին, վարազ Սահակի որդին, տվեց 40 հոգի։ Այդ նույն գիշերը նրանք բարձրացան բերդը և անզգույշ գտնվեցին. իսմայելացիներն իմացան անցքի տեղը, գնալով նրանց հետքով, բարձրացան բերդ և բռնեցին բերդի անցքը մինչև առավոտ։ Տեղի տասը պահակներին նրանք քնած գտան և սպանեցին։

Գլ. ԽԳ. Կոստանդին կայսեր երկրորդ տարում, երբ հոռի ամսի քսաներեքն էր, օրը կիրակի[3], առավոտյան իսմայելացոց զորքը առջևից և հետևից, սրընթաց դրոհով մտավ Արծափի բերդը և սկսեց կոտորածը։ Շատերը դահավեժ լինելով մահացան։ Կանանց և մանուկներին իջեցրին բերդից և ցանկանում էին կոտորել։ Թիվ չկար գերիներին և վերցրած անասունների բազմությանը։

Եվ պատահեց այնպես, որ վաղ առավոտյան եկավ և նրանց վրա գրոհեց Հայոց զորավար Թեոդորոս Ռշտունին և անթիվ կոտորած արեց։ Սպանեց երեք հազար սպառազիննների, որոնք իս-

մայելացոց զորքի ամենից ընտիր մարտիկներն էին։ Եվ ոչ ոք չազատվեց նրանց ձեռքից։ Քչերին հաջողվեց ճողոպրել հետիոտն ու ամրանալ եղեգնուտում։ Տերը փրկեց այդ օրը բազմաթիվ գերիների իսմայելացիների ձեռքից և խորտակեց նրանց մեծ կործանումով։ Սպանվեցին նաև իսմայելացի երկու իշխաններ՝ Օթմանը և Օգոման։ Հայոց զորավարը մեծ հաղթանակ տարավ։ Նա նվեր տվեց տանելու Կոստանդին կայսրին պատերազմից (վերցված) հարյուր ընտիր ձիեր, որի համար կայսրն ինքը և իր բոլոր պալատականները մեծ շնորհակալություն հայտնեցին։

1. Բնագրում՝ «ի կողմանս Սեպհական գնդին», որ Ք. Պատկանյանի կարծիքով Վասպուրականի կողմերն են (տե՛ս «История Себеоса», ծան. № 175)։
2. Երևան քաղաքի առաջին հիշատակությունն է հայ մատենագրության մեջ։
3. Պատմիչները տվյալ իրադարձության վերաբերյալ տարբեր տարեթվեր են տալիս։ Ամենից հավատին Սեբեոսի հաղորդածն է՝ «Հոռի ամսի 23-ին՝ կիրակի», որը ներկա թվականով կլինի 650 թ. մարտի 28-ը, իսկ այդ օրը եղել է, իրոք, կիրակի։

ԱՐՇԱՓԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Գ... Այնուհետև իսմայելացիները նրա (այսինքն՝ արաբական իշխանության— Ա. Ա.) 36-րդ տարում[1], զորք հավաքեցին և նորից հարձակվեցին Հայոց աշխարհի վրա։ Նրանց գլխավորներն էին Օթմանը և Օգբան։ Եվ երբ նրանք հասան Հայաստանի սահմանը, զորքը բաժանեցին երեք զորախմբի և ցրվելով երկրում, սկսեցին ասպատակություն անել։ Այդ զորախմբերից մեկը հասավ Վասպուրական աշխարհը։ Նրանք վերցրին մինչև Նախիջևան քաղաքը եղած ավանները և ամրոցները։ Մի այլ խումբ գնաց Տարոնի կողմը։ Երրորդը՝ շարժվեց Կոգովիտ և պաշարեց Արծափի ամրոցը։ Նրանք գտան բերդի մուտքը, գաղտագողի գիշերը բարձրացան վեր, որովհետև պահապանները քնած էին, վերցրին ամրոցը և գտնված մարդկանց կապանքի մեջ առան... Բայց ամենատես Աստվածը, որը ողորմած է, անտես չթողեց իր անվան հավատացյալներին, այլ վրեժխնդիր եղավ չարին։ Թեոդորոս իշխանը, իր հետ ունենալով 600 հոգի զինված մարտիկներ, ինչպես խոյացող արծիվ, հարձակվեց թշնամու վրա, կոտորեց թշնամիներից շուրջ

երեք հազար հոգի, կապվածներին արձակեց և թշնամու փոքրաթիվ մնացորդներին փախուստի մատնեց ու գերիներին ազատեց։ Հավաքելով թշնամիների ավարը և կողոպուտը, նա ետ վերադարձավ խնդությամբ՝ փառավորելով Աստծուն, որ վրեժխնդիր եղավ իրենց թշնամիներից։ Իսկ արաբական այն զորքերը, որոնց մասին առջևում ասացի, վերցրին ավար ու գերիներ, գնացին Աստրաց աշխարհը։

1. Մատենացույց արված թվականը սխալ է, նախնական բնագրում եղած պիտի լինի 26-րդ տարում։

ՂԵՎՈՆԴԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽԱԼԻՖԱԹԻՑ ՎԱՍԱԼԱԿԱՆ ԿԱԽՄԱՆ ՄԵՋ ԸՆԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Դ. ... Իսմայելի իշխանավորը հրովարտակ ուղարկեց Հայոց աշխարհին, որ «եթե դուք հարկ չտաք ինձ և իմ լծի տակ չմրտնեք, բոլորիդ սրի եմ քաշելու»։ Այդ ժամանակ Ներսես կաթողիկոսը՝[1] սուրբ Գրիգորի եկեղեցու կառուցողը, և երկրի նախարարները հավաքվեցին ժողովի և համաձայնվեցին հարկ վճարել արաբական բռնակալությանը։ Նրանցից պատանդ պահանջեցին։ Եվ հայերը պատանդ տվեցին Հայոց երկու նախարարների՝ Գրիգորին՝ Մամիկոնյան տնից և Սմբատին՝ Բագրատունի տնից։ Եվ նրանք տարվեցին արաբական Մուավիա իշխանի մոտ։ Եվ հայերի վրա հարկ սահմանեցին տարեկան 500 դահեկան, որ վճարեն և աներկյուղ ապրեն իրենց բնակավայրերում։

Մուավիան իր գահակալության երկրորդ տարում, իր մոտ կանչեց Գրիգորին և Սմբատին, որոնք արքունի դռան պատանդներ էին, Գրիգորին տվեց Հայաստանի իշխանությունը և բազում մեծամեծների հետ ուղարկեց Հայաստան։ Եվ երկարատև խաղաղություն եղավ նրա իշխանության ժամանակ։

Իսկ Հայոց Գրիգոր իշխանը, իր կառավարչության տարիներին, ապահովեց երկիրը բոլոր տեսակի ավազակություններից և հարձակումներից։ Նա աստվածասեր և երկյուղած անձնավորություն էր, եղբայրասեր և օտարասեր, դարմանիչ աղքատների և կատարյալ՝ աստվածապաշտության մեջ։

1. Ներսես Իշխանեցին կաթողիկոս է եղել 641—661 թվականներին, իսկ Թեոդորոս Ռշտունու, Սմբատ իշխանի և Ներսես կաթողիկոսի որոշումը՝ Խալխաքի հպատակության տակ մտնելու մասին, եղել է 646 թվականին։

ՄՈՒԱՎԻԱՅԻ ԵՎ ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆՈՒ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԸՍՏ ՍԵԲԵՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Լե. Այդ նույն տարում հայերը ապստամբվեցին, դուրս եկան հունական հպատակությունից և հնազանդվեցին ու ծառայության մեջ մտան Իսմայելի արքային։ Թեոդորոսը՝ Ռշտունյաց տերը և (Հայոց) բոլոր իշխանները դաշինք կնքեցին մահվան ու դժոխքի հետ՝ անտեսելով Աստծուն։ Խոսեց նրանց հետ Իսմայելի իշխանը և ասաց. «Այս թող լինի հաշտության ուխտ իմ և ձեր մեջ՝ որքան ժամանակ որ դուք կամենաք։ Երեք տարի ես ձեզանից հարկ չեմ առնելու, իսկ հետո հարկ կտաք ձեր երդման համաձայն, որքան դուք կամենաք։ Ձեր երկրի մեջ դուք պետք է պահեք տասնըհինգ հազար հոգուց բաղկացած հեծելազոր և նրանց դուք ինքներդ պիտի պարենավորեք. արժեքը ես դուրս կգրեմ արքունի հարկից։ Հեծելազորը ես Ասորիք չեմ տանի, սակայն ուրիշ տեղ, ուր որ հրամայեմ՝ պետք է պատրաստ լինեն գալու։ Ձեր բերդերը ամիրաներ չեմ ուղարկի, ոչ էլ արաբ սպա և ոչ էլ բաղում հեծյալներից մի պինվոր։ Թշնամին չպիտի մտնի Հայաստան։ Իսկ եթե հույները ձեզ վրա հարձակվեն, ձեզ օգնական զորք կուղարկեմ, որքան որ ուզենաք։ Երդվում եմ մեծ Աստծու անունով, որ սուտ չեմ խոսում»։ Եվ այսպես Նեռի արքանյակը պատակտեց, բաժանեց նրանց (այսինքն՝ հայերին— Ա. Ա.) հույներից։ Ինչեպետ կայսրը բաղում անգամ աղաչանք և պաղատանք գրեց նրանց, կանչեց նրանց իրենց մոտ, բայց չցանկացան լսել նրան։ Ապա նա ասաց. «... Ես կգամ ձեզ մոտ և ձեզ նյութական օգնություն ցույց կտամ և կմտածենք միասին, թե ի՞նչ է հարկավոր անել»։ Բայց, այնուամենայնիվ, չկամեցան լսել նրան։

Հռոմեական բոլոր զորքերը դանգատվում էին և մեղադրում Ռշտունիքի տիրակալին և հայերին՝ իրենց թագավորի Մարդոցեքում կրած պարտության համար։ Նրանք ասում էին, թե «Հայերը միաբանել էին իսմայելացիների հետ, մեզ հուսադրեցին, իրենց զորքը ցրեցին Ատրպատականում ասպատակության, իսկ (արաբ-

ներին մեզ վրա բերեցին հանկարծակի և մեզ ջարդել տվին. մեր եղած-չեղածն այնտեղ ոչնչացավ, այժմ թույլ տուր մեզ դնանք Հայաստան և մեր ցանկությունը կատարենք»[1]։

1. Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև պայմանագիրը կնքվել է պարսից Հազկերտ III թագավորի 20-րդ, բյուզանդական Կոստաս II կայսեր 11-րդ և հիսմայելացոց տերության (այսինքն՝ Հիջրայի) 19-րդ տարում։ Հազկերտը գահակալել է 632 թ., հետևապես նրա 20-րդ տարին կլինի 652 թվականը։ Կոստասը գահակալել է 641 թ. հետևապես նրա 11-րդ տարին կլինի 652 թ.։ Հիջրայի սկիզբն ընդունելով 633-ը, նրա 19-րդ տարվան կլինի 652 թվականը։

ՂԵՎՈՆԴԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՎ ԱՇՈՏ ՊԱՏՐԻԿԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Ե. ... Աշոտի կառավարման չորրորդ տարում[1] *իսմայելացոց մի զորամաս, բաղկացած հանցանաց որդիներից և անօրինության զավակներից, կատարեց ապօրինություններ մարական ավաններում, Խրամոմ, Ջուղայում և Խոշկունիսում. նրանք մարդկանց խոշտանգում էին հարկապահանջությամբ, իսկ կանանց ցանկանում էին խայտառակել զազրելի պղծությամբ ըստ իրենց անօրինության։ Երբ նրանց չարության համբավը հասավ Աշոտին, նա հրամայեց զորքին անմիջապես դուրս գալ նրանց դեմ։ Նա անողոքաբար սրի քաշեց շատերին, իսկ մնացածներին փախուստի մատնեց։ Սատանայի խորամանկ որդին, երբ տեսավ, որ հարձակվող զորքը ճնշում է. կարգադրեց զորքին իրենց հավաքած գանձը ցրել դաշտում հայոց զորքի առաջ։ Իսկապես, հայերն անմտաբար դարձան դեպի ավարը. թուլացան և չհետապնդեցին։ Միայն Աշոտը փոքրաթիվ հեծյալներով հետապնդեց նրանց։ Թշնամիներն ուժեղանալով նաև դարձան նրանց վրա և վիրավորեցին Հայոց իշխանին։ Այն ժամանակ զորքը ճիշ բարձրացրեց։ Եվ մնացածները շտապ օգնության եկան և կոտորեցին թշնամիներին։ Իրենք վերցրին ծանր վիրավորված իշխանին և բերեցին Կողովիտ, ուր և մահացավ նա իր անկողնում և թաղվեց իր կալվածքի Դարյունք գյուղի գերեզմանատունը։*

1. Աշոտ պատրիկը, ըստ տեղեկությունների, հաջորդել է Գրիգոր Մամիկոնյանին։ Սա սպանվեց խազարներից 685 թվականին, հետևապես, Աշոտ պատրիկի իշխանության չորրորդ տարին կլինի 689 թվականը։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻՆ
ՄՈՒՀԱՄԵԴ ԻԲՆ ՄՐՎԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Գիրք III

Գլ. ԺԶ. Հայոց հարյուր քառասունվեց թվականին[1] Հայաստան է գալիս Մահմետ երկրորդը. այնտեղից Աղվանքով շտապում և մտնում է Ջոր։ Իսկ ապստամբված հայերը արաբներին արգելափակում են Դվինում և դրանցից վաթսուներկու հազար կոտորում՝ Բյուզանդիայից շատ զորքեր բերելով... Մահմետը Ջորից վերադարձավ, եկավ, երեք տարի պաշարեց Սևան ծովապատ բերդկղզին. ապա գրավեց այն և կղզում, ում որ գտավ, սրածեց։ Այնտեղից անցնելով Հայաստան՝ կոտորեց բյուզանդական և հայկական զորքերը։

1. Հայոց Մեծ թվականի 146-ը կհամապատասխանի 697—698 թվականներին։

ԲԱԼԱԶՈՐԻՆ ԱՐԱԲՆԵՐԻ ԵՎ ԴՎԻՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԴՐԻ ՄԱՍԻՆ

Բալաձորին IX դարի պատմիչ է. մահացել է 899 թ.: Նրա երկը, որ վերնագրված է «Գիրք երկրների նվաճման մասին», պատմում է արաբների տարբեր երկրներ ձեռնարկած արշավանքների մասին.

Բալաձորի սույն երկը արաբերենից ռուսերեն է թարգմանել Պ. Կ. Ժուզեն (Баладзори, Книга завоевания стран, Баку, 1927), որից և օգտվել ենք:

ԳԻՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ, էջ 10

Դվին քաղաքի բնակիչներն ամրանալով (բերդում), սկսեցին նրա վրա (այսինքն՝ արաբական զորքի հրամանատար Հաբիբ իբն Մասլամայի[1] վրա— Ա. Ա.) տեղալ նետերի տարափ։ Այդ ժամա-

նակ նա քաղաքի պարիսպներին մոտեցրեց քարընկեց մեքենաներ և սկսեց քարեր տեղալ բնակիչների վրա այնքան ժամանակ, մինչև նրանք հաշտություն և ողորմածություն խնդրեցին։ (Այնուհետև պատմիչը բերում է արաբ հրամանատարի առաջարկած պայմանագիրը— Ա. Ա.) «Հանուն ողորմած և գթասիրտ Աստծո, Հաբիբ իբն Մասլամայի կողմից այս գիրը տրվում է Դվին քաղաքի քրիստոնյաներին, նրա մոգերին և հրեաներին, ինչպես ներկաներին, այնպես էլ բացականերին, առ այն, որ ես երաշխավորում եմ ձեր անձը և գույքը, ձեր եկեղեցիները և վանքերը և ձեր քաղաքի պարիսպը։ Դուք գտնվում եք անվտանգության մեջ և մենք պարտավորվում ենք պայմանը կատարել ձեզ հետ միասին այնքան ժամանակ՝ որքան և դուք կկատարեք այն, կվճարեք ջիզյաթ և խարաջ (գլխահարկ և հողահարկ— Ա. Ա.)... Այս գիրը վավերացնում է Հաբիբ իբն Մասլաման իր կնիքով»[2]։

1. Սա արաբական ականավոր զորավարներից էր, ալբի էր ընկել բյուզանդացիների դեմ մղված կռիվներում։

2. Հաբիբ իբն Մասլամային 654 թվականին անձամբ Հայաստան էր ուղարկել Օսման խալիֆը (644—656)։

ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻՆ ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սամուել Անեցին ծնվել է Անի քաղաքում՝ XII դարի 20-ական թվականներին և մահացել նույն դարի վերջերին: Կրթությունը ստացել է Հովհաննես Իմաստասերի Անիում հիմնած բարձրագույն դպրոցում: Նրա երկասիրությունը կոչվում է «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», այսինքն՝ հատվածներ պատմագիրների աշխատություններից:

Ժամանակագրությունը սկսվում է նախահրիստոնեական շրջանից և հասնում մինչև իր օրերը: Օգտվել է Խորենացուց և այլ մատենագիրներից: Պատմական իրադարձությունները շարադրել է ըստ ժամանակագրական հաջորդականության՝ դեպքերի նկարագրություններ տալով թվականներին համապատասխան: Անեցու ժամանակագրությունը շարունակել են ուրիշները՝ հասցնելով մինչև XVII դար: Հրատարակել է Ա. Տեր-Միքելյանը վաղարշա-

պատում՝ 1893 թվականին: Ստորև բերված հատվածները աշխատասիրաբար է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը:

ՀԱՎԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ, էջ 82

Եվ արաբական զորավարը անխախտ երդումով մուրհակ տըվեց Հայոց աշխարհին, որ համարձակ կարող են պաշտել քրիստոնեությունը, թույլ տվեց մնալ իրենց հավատքում: Ամեն մի տնից նա վերցնում էր չորս դրամ, երեք մոթ խորբալ (այսինքն՝ մաղած ցորեն— Ա. Ա.), մեկ ձիու տոպրակ, մեկ մազից պարան և մեկ ձեռնոց: Իսկ քահանաներից, ազատներից և հեծյալ զինվորներից հրամայեց հարկ չվերցնել:

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Ը. Երբ Մահմետ զորավարը գնաց Ասորիք, Հայոց աշխարհի վրա իրեն փոխարինորդ թողեց իսմայելացի մեկին: Սա մըտքում չար խորհուրդ հղացավ՝ վերացնել Հայոց աշխարհից ազատախումբ նախարարական տոհմը՝ նրանց հեծելազորի հետ միասին: Եվ նրա այս նենգ մտադրությունը շուտով հայտնի դարձավ Սմբատին, որը Բագրատունի տոհմից էր և մյուս նախարարներին և նրանց հեծելազորայիններին: Նրա նյութած այդ դավադրությունը հայտնի դառնալուց հետո Սմբատ Բագրատունին իր մոտ կանչեց իր ազատախումբ բանակը, Աշոտի որդի Սմբատ իշխանին, Թեոդրոս իշխանի որդի Վարդին, իր եղբայր Աշոտին և այլ նախարարներ ու խորհրդակցեց նրանց հետ՝ թե ինչպես կարող են ազատվել: Եվ որոշեցին նրանք թողնել երկիրը և գնալ Հունաց Թագավորի երկիրը... Ճանապարհ ընկնելով Երասխ գետի ափով, նրանք անցան Ուղայեի սահմանը և հասան Ակոռի մեծ ավանը: Իսկ Իսմայելի զորքը, որը գտնվում էր Նախիջևանում, հետապնդեց նրանց: Իսմայելացիք ավելի քան հինգ հազար հոգի էին[1] ու ցանկանում էին կենդանի բռնել նրանց:

Երբ լուրը հասավ Հայոց զորքին, որ Թշնամու բանակը հետապնդում է իրենց, նրանք անցան Երասխ գետը և բանակ դրեցին Վարդանակերտ ավանում[2]: Արաբական զորքը հետապնդելով՝

եկավ հասավ նրանց: Հայոց զորքը լուր ուղարկեց արաբական զորքին՝ ասելով. «Ինչո՞ւ եք հետապնդում մեզ, ի՞նչ մնաք ենք գործել, ահավասիկ մեր երկիրը ձեր առջևում է. ձեզ ենք տվել մեր քնակավայրերը, մեր այգիները և անտառները, մեր անդաստանները, այժմ է՞լ ինչ եք ուզում մեզանից»: Իսկ արաբական զորքը չուզեց լսել հայերին: Տիրոջից կարծրացել էր նրանց սիրտը, որպեսզի նրանց մահնի սրածուբյան:

Հայոց զորքը ամրացնելով ավանի փողոցները, պատրաստեցին նշանակեց մինչև առավոտ լուսանալը... արևածագին, առավոտյան ժամերգությունից հետո, մատուցվեց պատարագ. արժանավորները հաղորդվեցին Տիրոջ մարմնով և արյունով՝ որպես իրենց կյանքի վերջին հաղորդումը: Ընդունեցին նաև փոքր-ինչ անունդ՝ մարմնի զորության համար: Միաժամանակ հարդարվեցին գունդ առ գունդ, հակատ առ հակատ և մտան մարտի մեջ: Այդ ժամանակ Հայոց զնդերին օգնության հասավ մեծազոր Աստվածը. նրանք թեև փոքրաթիվ էին, ընդամենը երկու հազար հոգի, սակայն կարողացան իսմայելացիներից շատերին սրի քաշել: Քանի որ ցրտաշունչ սառնամանիքի օրեր էին, ուստի դառնաշունչ ցուրտ եղանակն ավելի էր դժվարացնում արաբներին ցուցադրելու իրենց սովորական քաջությունը, մանավանդ որ նրանք ամբողջ գիշեր սառած մնացել էին ձիու վրա նստած: Լույսը բացվելուն պես շեր սառած մնացել էին ձիու վրա նստած: Լույսը բացվելուն պես թշնամին ընկավ սրի հարվածի տակ: Եվ թշնամիներից նրանք, ովքեր փախան սրից, նետվեցին Երասխ գետը, որն այդ ժամանակ սառնամանիքի պատճառով սառել էր: Եվ երբ զինվորների բազմությունը սառույցի վրա հավաքվեց, սառույցը ջարդվեց, և նրբանք, ովքեր ազատվել էին սրից, հեղձամահ լինելով վերջացրին իրենց կյանքը: Նրանցից շատ քչերը, մոտ երեք հարյուր հոգի, փախչելով ապավինեցին [Ներսեհ Կամսարականի] տիկնոջ՝ Շուշանիկի մոտ:

Աշոտի որդի Սմբատը, իր զորքով հետապնդելով նրանց, ցանկանում էր բոլորին էլ կոտորել: Սակայն նրա առաջ դուրս եկավ տիկին Շուշանը և բազում աղերսանքով փրկեց մերկ, բոկոտն, հետիոտն և վիրավոր մարդկանց կյանքը: Հագուստ տվեց նրանց և վերցրեց իր խնամքի տակ: Նա բուժեց նրանց վերքերը, առողջացրեց, հագուստ տվեց, գրաստ տվեց իր երամակից և ուղարկեց իսմայելացոց իշխան Աբդլ Մելիքի[3] մոտ: Դրա համար

նրանից ստացավ շնորհակալություն և մեծամեծ պարգևներ ու նվերներ։

Իսկ հայոց զորքը լիացած թշնամու ավարով, ուրախալի լուր ուղարկեց Հունաց թագավորին իրենց հաղթանակի մասին։ Նրան նվեր ուղարկեցին ավար վերցրած արաբական ընտիր ձիեր և ընկած դրակների քթերը[4]։

Կայսրն ընդունեց այդ նվերը, իր գոհունակությունը մատուցեց Արարչին և շնորհակալություն հայտնեց Սմբատին ու նախարարներին և նրանց զորքերին, որոնք գտնվում էին նրա հետ։ Եվ ըստ թագավորական սովորության պարգևատրեց Սմբատին կյուրապաղատության տիտղոսով։

1. Ղևոնդի Պատմության փարիզյան հրատարակության բնագրում արաբական զորքերի թիվը նշված է 8000։
2. Վարդանակերտը գտնվում է Արաքսի ձախ ափին՝ Ադի ավանի դիմաց։
3. Աբդլ Մելիքը խալիֆ է եղել 685—705 թվականներին։
4. Վարդանակերտի ճակատամարտը տեղի է ունեցել 702—703 թթ. ձմռանը։

ՌՇՏՈՒՆԻՔԻ ԳՈՒԿԱՆՔ ԳՅՈՒՂԻ ՁԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Ը. ... Այդ նույն ժամանակ հայոց զորքի վրա հարձակվեց թշնամու մի այլ ավազակախումբ, որը գտնվում էր Վասպուրականի կողմում։ Եվ հայոց զորքին հանդիպեց Ռշտունյաց Գուկանք կոչվող գյուղում։ Թշնամին երբ տեսավ, որ հայոց զորքը փոքրաթիվ է, հարձակվեց նրա վրա։ Այստեղ ևս Աստված, իր ողորմած զորությամբ, օգնող թիկունք հանդիսացավ հայոց. նրանք կոտորեցին բոլորին, միայն երկու հարյուր ութսուն հոգի կարողացան փախչել և մտնել եկեղեցին։ Հայ զինվորականները՝ փորձեցին դուրս հանել նրանց եկեղեցուց։ Երբ այդ անկարելի եղավ, մտածեցին այրել նրանց սրբության տան մեջ, բայց այդ նրանց թույլ չտվեց Վասպուրականի իշխան Սմբատը, որը Աշոտ իշխանի որդին էր՝ անվայել գործ համարելով այդ։

ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ԱՅՐԵԼԸ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ ԵՎ ԽՐԱՄՈՒՄ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Ժ. ... Անիրավ Մահմետը կատարելով վլիթ խալիֆի հրամանը, հանձնարարեց ումն կասըմի, որը Նախիջևան քաղաքի կող-

մերում եղած երկրամասի կառավարիչն էր, իր մոտ կանչել Հայոց Նախարարներին իրենց զորամասերով այն պատրվակով, որ իբրև թե ցանկանում է հաշվառում կատարել՝ ռոճիկ նշանակելու համար։ Եվ հայ նախարարները, ըստ սովորական պարզամտության, կատարեցին իրենց գաղտնածածուկ որսացողների ցանկությունը։ Երբ նրանք տեղ հասան, հրամայեցին նրանց երկուսի բաժանվել, մի մասին հավաքեցին Նախիջևանի եկեղեցում, իսկ մյուսներկեցին Խրամի ավանը և լցրին նրա եկեղեցին։ Այդ անելուց հետո պահակներ նշանակեցին նրանց վրա և սկսեցին մտածել, թե ինչպես ոչնչացնեն նրանց Հայոց եկեղեցիներում։ Շուտով գործի անցան. դուրս հանեցին միայն տոհմիկ ազատներին, իսկ մյուսներին, որոնք գտնվում էին սրբարաններում (այսինքն՝ եկեղեցիներում— Ա. Ա.) հրդեհի տալով այրեցին և տոչորեցին հայ նախարարներին աստվածային տանը[1]։

1. Հայ նախարարների հրկիզումը տեղի է ունեցել 705-ին. այդ թվականը հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի է «կրակի տարի» անունով։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻՆ ՀԵՐԹԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

Գիրք III

Գլ. ԺԲ. ... Իսկ հայոց հարյուր յոթանասունչորս թվականի[1] ամառը անասունների համաճարակ եղավ, իսկ ձմռանը տեղի ունեցավ Հերթի աշխարհագիրը. մարդկանց, անասուններին և հողային տարածությունները հարկի տակ դրեցին[2]։

1. Այսինքն՝ 725 թվականին։
2. Սույն հատվածի թարգմանությունը՝ Ա. Գ. Աբրահամյանի։

ՀԵՐԹԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԺԷ. Սրանից հետո (այսինքն՝ Եղիդ II-ից հետո— Ա. Ա.) գահակալեց Շամը, որը կոչվում է և Հեշմ, 19 տարի[1]։ Եվ սա իր իշխանության առաջին տարում հղացավ մի չար խորհուրդ. Հայոց աշխարհն ուղարկեց մի զորավար, որի անունը Հերթ էր, աշխարհա-

դիր կատարել և ծանրացնել ժողովրդի հարկատվական ծառայության լուծը տեսակ-տեսակ չարիքներով։ Նա այդ պատճառաբանում էր նրանով, որ Օմարի ժամանակ անիրավաբար ծախսվել է նրանից առաջ եղած իշխանավորների հավաքած գանձը։ Եվ նա այնքան մեծ վնաս հասցրեց երկրին, որ բոլորը անքում էին դառը ճնշումից և ոչ մի հնար չկար աղատվելու անտանելի վտանգից։ Եվ այնուհետև նրա ձեռքն ավելի ծանրացավ Հայոց աշխարհի վրա։

1. Հիշմը (Հիշամ) խալիֆ է եղել 724—743 թվականներին։

ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԻՀ. Եվ Մրվանին փոխարինեց Աբդուլան[1]։ Նա իր եղբորը՝ մյուս Աբդուլային ուղարկեց շրջելու իր իշխանության տակ գտնվող բոլոր երկրները։ Սա նկավ նախ Հայոց աշխարհը և բազում բռնություններով և ճնշումներով չարչարեց բոլորին՝ հասցնելով նրանց չքավորության և սնանկության։ Նա հարկ պահանջեց նույնիսկ մահացածներից։ Սարսափելի ձևով սկսեց չարչարել բազմաթիվ որբերի և այրիների՝ ենթարկելով չարաչար տառապանքների։ Քահանաներին և աստվածային խորանի մյուս պաշտոնյաներին ենթարկեց խոշտանգումների, ծաղր ու ծանակի. ծեծի ենթարկեց նրանց, պահանջելով հայտնել վախճանվածների անունները։ Բռնություններով և դառը հարկապահանջությամբ խոշտանգում էր բնակիչներին՝ յուրաքանչյուր մարդուց պահանջելով գուլի (արծաթ դրամ— Ա. Ա.)՝ կնիք դնելով յուրաքանչյուրի պարանոցին։

Իսկ տոհմիկ նախարարները, կամա թե ակամա, ընծա էին բերում ձիեր և ջորիներ, պատվական հանդերձներ և այլ ոսկյա և արծաթյա իրեր, որպեսզի կարողանան լցնել վիշապի բերանը, որը հարձակվել էր երկրի վրա՝ երկիրն ավերելու նպատակով։

1. Աբդուլա— Արաս Աբդուլա էլ-Մաֆֆահը խալիֆ է եղել 750—754 թթ., նա համարվում է Աբասյանների հարստության հիմնադիրը։

ՂԵՎՈՆԴԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԼԳ. Եղիդի հրամանատարության և մյուս Աբդուլայի իշխանության ժամանակներում հույժ ծանրացավ հարկապահանջության անլուր լուծը Հայոց աշխարհի վրա, քանի որ չարանենգ թշնամու դժոխաձև ագահությունը չէր հագենում. Քրիստոսի ընտրյալ հոտի մարմինը ուտելուց և նրա արյունը խմելուց իբրև ջուր։ Հայոց ողջ երկիրն ընկավ անտանելի վտանգի մեջ, որովհետև վերջացավ արծաթը երկրից։ Մարդիկ իրենց վերջին ունեցվածքը տալով չէին կարողանում ելք գտնել վճարման համար, որ կարողանային ազատվել կատանքից, գելարաններից, կախաղաններից և դառը տանջանքից։ Դրա հետևանքով շատերը փախչում, թաքնվում էին երկրի այրերում, քարանձավներում։ Ոմանք ձյունախեղդ էին լինում, մյուսներն անտանելի ազետի պատճառով իրենց նետում էին գետը, որովհետև չէին կարողանում հարել այն, ինչ իրենցից պահանջում էին, իսկ այդ ժամանակ հարկը բոլորից պահանջում էին միայն արծաթով։ Զրկելով ողջ ունեցվածքից, Հայոց աշխարհը շղթայել էին աղքատության և թշվառության կապանքներով։ Ընդհանրապես, բոլորն էլ ճաշակում էին աղքատության հնոցից՝ թե՛ նախարարները և թե՛ ազնվականությունը։ Զնայած Սահակ իշխանը և Տրդատ հայրապետը, որը Վանանդ գավառի նախարարական տոհմից էր, հաճախ բողոքում էին, սակայն Եղիդը, որը հավաքում էր հարկը, ուշադրություն չէր դարձնում նրանց հառաչին։

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԽԱԼԻՖԱԹԻ ԴԵՄ

748—750 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. ԻԱ. Իսմայելի տիրակալ Հեշմ (խալիֆը) Սեթի փոխարեն, որին Հարաշ էին անվանում, Հայաստան ուղարկեց Մրվանին՝ Մահմետի որդուն։ Երբ Մրվանը հասավ Դվին քաղաքը, նրան դիմավորելու դուրս եկան Հայոց նախարարները, որոնց հետ նա խոսեց շատ սիրալիր։ Նա իր մոտ կանչեց Բագրատունյաց տոհմից Վասակի որդի Աշոտին և նշանակեց Հայաստանի պատրիկ և, Հեշմի հրամանով, բազմաթիվ պատիվներով պատվեց նրան։

Սմբատի տղաները, տեսնելով Հեշմի և զորավար Մրվանի կողմից Աշոտին ցույց տրվող մեծարանքը, սկսեցին խիստ նախանձել։ Երբ Մահմետի որդին՝ (Մրվանն) իմացավ Աշոտի նկատմամբ նրանց այդ վարմունքը, անմիջապես հրամայեց ձերբակալել Գրիգոր և Դավիթ Մամիկոնյաններին[1] և ուղարկեց Իսմայելի տիրակալին։ Նա զրպարտագիր ուղարկեց, որ նրանք խռովարարներ են և չեն հնազանդվում Աշոտին։ Հեշմը կարգադրեց տանել նրանց Եմանի անապատը, բանտարկել ու թողնել բանտում մինչև նրանց մահը։

Պատրիկության պաշտոնում հաստատվելուց հետո Աշոտը մեկնեց Իսմայելի տիրակալի մոտ՝ երկրի ծանր վիճակում գտնվելու պատճառով, որովհետև երեք տարի էր, ինչ դանձարանից չէին վճարում հայ իշխանների և հեծելազորի ռոճիկները։ Ներկայանալով Հեշմին, նրա հետ խոսեց շատ խելացի և իմաստալից,

դրա համար խալիֆը մեծարեց նրան և կատարեց նրա խնդրանքը. կարգադրեց հաշվել և վճարել երեք տարվա (ռոճիկը)՝ տարեկան հարյուր հազար (դրամ)։ Սրանից հետո հայկական հեծելազորը մշտապես ստանում էր այդ ռոճիկը...։

Գլ. ԻԲ. Այն ժամանակ, երբ խալիֆաթում տեղի էին ունենում անկարգություններ և ներքին կռիվներ, Սմբատի տղաները (Գրիգորը և Դավիթը— Ա. Ա.) վլիթ խալիֆի կարգադրությամբ ազատվեցին կալանքից։ Բայց մինչ նրանք կհեռանային Սիրիայից, Վլիթ (խալիֆը) սպանվեց և նրանց նորից պահեցին և թույլ չտվին հեռանալ այդ երկրից։ Բայց հետագայում շարունակվող կռիվների ընթացքում նրանց հաջողվեց (ազատվել և) գալ Հայաստան...։

Խռովությունները վերջանալուց հետո Մրվան խալիֆն Աշոտին նորից հաստատեց կառավարիչ և ուղարկեց Հայոց երկիր մեծ պատիվներով։ Բայց այդ ժամանակից Գրիգորը դեռ չէր դադարում որոգայթ լարել Աշոտի դեմ՝ իր եղբոր վրեժն առնելու համար։ Թեպետև նա վախից, բռնության տակ, խոսքով հաշտվել էր Աշոտի հետ, բայց սրտում պահում էր ոխը և անհամբեր սպասում հարմար ժամի, որպեսզի իրագործի իր չար մտադրությունը։

Գլ. ԻԳ. Մինչ խալիֆայությունում կռիվները շարունակվում էին, մեր բոլոր իշխանները որոշեցին իրենց վրայից դեն նետել իսմայելական հպատակության լուծը (ապստամբություն բարձրացրին և դադարեցին հարկ վճարելուց— Ա. Ա.)։ Այդ գործին նրանց հրահրեց Գրիգորը՝ Մամիկոնյան իշխանական տոհմից, շարժմտադրությամբ ցանկանալով խլել Աշոտից իշխանությունը։

Հայ իշխանները հավաքվելով Աշոտ իշխանի մոտ, հարկադրեցին նրան համաձայնվել և աջակցել իրենց անօգուտ ձեռնարկին։ Աշոտը տեսնելով ազնվականների և նրանց հեծելազորի միաբանությունը, որովհետև նրանք բոլորն էլ ոգևորված էին դրանով, վարանեց հանձն առնել։ Նախարարներին մեկ-մեկ նա իր մոտ կանչեց, թախանձագին շատ խնդրեց, որ չձեռնարկեն խճճված նման մի գործ։ Նա ասաց. «Ես այդ գործում չեմ տեսնում խոհական միտք, այլ միայն ծուռ մտադրություն և ապարդյուն նպատակ։ Մեր զորքը իսմայելական զորքի համեմատությամբ փոքրաթիվ է, մենք ի վիճակի չենք կռվելու նրանց հետ և ազատագրելու մեր երկիրը վիշապի երախից, այլ միայն կենթարկվենք նոր ճնշումների և վտանգների։ Եթե ցանկանում եք լսել իմ խորհուրդը՝

թողնենք այդ ձեռնարկումը, վճարենք հարկը և առաջվա պես հանդիստ տիրենք մեր ունեցվածքին, այգիներին, անտառներին և դաշտերին»։ Բայց նրա իմաստուն խորհուրդը ընդունելություն չգտավ հայ ազնվականների կողմից, որոնք առարկեցին նրան, թե՝ «Եթե դու չհամաձայնվես մեր առաջարկին, ոչ ոք չի մնա քո զորքի մեջ, որովհետև մենք չենք կարող տանել այն թշվառությունը, որի մեջ գտնվում է մեր երկիրը»։

Դրանից հետո, Աշոտն ակամա գիջեց նրանց, համաձայնվեց միանալ Գրիգորին և մյուս նախարարներին։ Նրանք բոլորը, միշնորդությամբ Քրիստոսի խալխ, երդումով խոստացան անխախտ պահել մեր սերտ միաբանությունը[2]։

Եվ երբ այս դաշինքը կնքեցին, բաժանվեցին Հայաստանի կառավարչից, իրենց ընտանիքներով և ունեցվածքով տեղափոխվեցին Տայոց աշխարհի ամրություննները՝ հույս դնելով ավելի հունական թագավորի զորքի վրա, որը գտնվում էր Պոնտական երկրներում, քանի որ Կոստանդին կայսեր հրամանով նրանց հետ խաղաղության պայմանագիր ունեին կնքած։ Հանցանաց բոլոր որդիները եկան և միացան ապստամբների զորքին, որոնք վախ չունեին ո՛չ Աստծուց, ո՛չ իշխաններից և ո՛չ էլ հարգանք ունեին ավագների նկատմամբ։ Նրանք, այլազգիների նման, ասպատակ էին սփռում, գերեվարում էին իրենց եղբայրներին և ազգակիցներին ու բաղում ավարառություններ կատարում. խոշտանգում էին, ծեծում և տանջում իրենց եղբայրներին։ Այդ պատճառով դադրեց աստվածային հոգատարությունը, որը քանդեց նրանց միաբանությունը. ամբողջ տարվա ընթացքում գլուխ չեկավ նրանց անօրեն ձեռնարկը։

Իսկ այդ ժամանակ Աշոտը բաժանվելով նրանցից, մի քանի նախարարների հետ, եկավ Բագրևանդի Հաղր գյուղը՝ ցանկանալով միաբանել Իսմայելի որդիների հետ։ Սակայն նրա հետ եղած խարդախ նախարարներից ոմանք, նենգություն անելով՝ հայտնեցին չարասեր Գրիգորին նրա մտադրությունը։ Իսկ նա, որ վաղուց ցանկանում էր գլուխ բերել դավադրությունը, անմիջապես հավաքեց իր զորքը, հետապնդեց նրան։ Ագռավի նման անցնելով լեռներով, հասավ նրան գիշերը և շրջապատեց նրան այն ժամանակ, երբ նա կանգ էր առել հանգստանալու։ Գրիգորը, համոզված լինելով նրա զորքի երկմտության վրա, որն իսկապես օգնություն

ցույց չտվեց, Աշոտին բռնելով՝ հանձնեց Դավիթի ծառաներին և հրամայեց կուրացնել։ Եվ ստվերամած խավարով նա նսեմացրեց ողջ աշխարհի պարծանքին՝ խորը տխրություն պատճառելով ոչ միայն իրեն, այլև իր բոլոր ազգակից նախարարներին[3]։ Բոլոր նրբանք, ովքեր հետո իմացան այդ մասին, օգտակար ոչինչ անել չկարողանալով՝ նստած դառնապես լաց եղան նրա համար, որովհետև ընկավ նրանց գլխից պերճության պսակը և ջարդվեց. այսուհետ վերացավ հայոց ազգի փառքը։ Իսկ ապերախտ Գրիգորը, որպես մեծ քաջագործությունից վերադարձող, եկավ Կարին քաղաքը և ամենուրեք տեղեկություններ էր տարածում իր հաղթության մասին։ Շատ օրեր հետո Աստծո դատաստանը հասավ նրա վրա՝ արժանի իր գործերին. ուռավ նրա որովայնը վտանգավոր ցավով և շատ տանջանքներ պատճառեց նրան։ Եվ այսպես նա մահացավ առանց հիշատակի։

1. Գրիգորը և Դավիթը Սմբատ Մամիկոնյանի որդիներն էին, որոնք թշնամական հարաբերությունների մեջ էին գտնվել Բագրատունիների իշխանական տան հետ։ Վեհնդը, որպես Բագրատունիների տան պատմիչ, աշխատում է պաշտպանել Բագրատունիների խալիֆայության հետ վարած բանակցությունները և մեղադրել Մամիկոնյաններին։

2. Հայկական ազատագրական այս շարժման տարեթվերի մասին հայագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել։ Ս. Մելիք-Բախշյանի կարծիքով, այս շարժումն ավելի լայն շրջանակներ է ընդգրկել՝ սկսվել է 744-ից և տևել մինչև 754 թվականը։

3. Ըստ տեղեկությունների, Աշոտ Բագրատունին կուրացումից հետո ապրել է 13 տարի և մահացել է 761 թվականին։

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գլ. Լ. Այն ժամանակ չէին դադարում երկրից անօրեն ազգի խժդժություննները։ Քանի որ ամենուրեք Բելիարի հանցանաց որդիք չէին լքում իրենց չարագործության բնածին ձգտումը։ Նրանցից մեկը, որի անունն էր Սուլեյման, իր հետ ունենալով հանցանաց որդիներին, Պարսկաստանի կողմից, դիմելով անաստվածության, օձի նման ասպատակում էր Վասպուրականի կողմերը՝ կատարելով ամոթալի արարքներ իրենց չար ծագման հա-

մաձայն։ Նրանց դեմ դուրս եկան Արծրունիների տնից Սահակ և Համազասպ նախարարները փոքրիկ զորագնդով և ընկան Թշնամու բանակի շրջապատման մեջ։ Երբ նրանք նկատեցին, որ հայերը փոքրաթիվ են, շրջապատելով նրանց, կամենում էին կոտորել։ Իսկ Սահակը և Համազասպը, շրջապատված Թշնամիներով, տեսնելով, որ ոչ մի տեղից փրկություն չկա, գործի դրեցին իրենց սուրը. շատերին խողխողեցին և իրենք մի կողմ քաշվելով՝ ջանացին դուրս գալ։ Բայց այդ ժամանակ Համազասպը ծանր վիրավորված՝ ընկավ ձիուց։ Թշնամին շրջապատեց նրան և սպանեց։ Սահակը, երբ տեսավ իր եղբոր սպանությունը, որին անչափ սիրում էր, մահն աչքի առաջ առնելով, ցած իջավ ձիուց, կոտրեց ոտքի սրունքը և մենամարտելով, շատերին դիաթավալ արեց, մինչև որ կարողացավ եղբոր վրեժը լուծել։ Վերջում պարտվելով մարտում՝ վախճանվեց։ Այսպես վերջացրին իրենց կյանքը փառաբանված նախարարները՝ Վահան Արծրունու որդիները։

Երբ տեղեկություն հասավ նրանց եղբայր Գագիկին և այլ նախարարների, որոնք նրա հետ էին, դուրս եկան (կովի) վայով ոճ ճիչով, բայց չկարողացան հասնել նրանց։ Դրանից հետո նրանք վերադարձան ողբով և լացուկոծով, թաղեցին մահացածներին, իսկ Թշնամիները վերադարձան իրենց եկած ճանապարհով։

Բայց Սուլեյմանը, որոշ ժամանակ հետո ընկավ Գագիկ Արծրունու ձեռքը, որը սպանեց նրան ուրիշ շատերի հետ միասին։

774—776 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԸՍՏ ՂԵՎՈՆԴԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դլ. ԼԴ. Այժմ կպատմեմ վայրենամիտ իսմայելական ազգի կատարած խստասիրտ դառնությունների մասին։

Այն ժամանակ, երբ հայ նախարարները տեսան իրենց սպառնացող վերահաս վտանգը, մահն աչքի առաջ առնելով, ձեռնարկեցին այնպիսի մի գործ, որը գլուխ բերել չէին կարող, քանի որ փոքրաթիվ էին։ Սակայն նրանք լավ համարեցին մահանալ քաջությամբ, քան ապրել վտանգի մեջ, ուստի ձեռնամուխ եղան ապստամբության։

Այս գործի սկիզբը դրվեց Արտավազդի ձեռքով, որը Մամիկոնյան տոհմից էր։ Սա գալով Դվին մայրաքաղաքը, լավ կազմակերպեց իր զորամասը, ստացավ այնտեղ զենք և պատերազմական այլ պիտույքներ և սպառազինվեց զրահով, սաղավարտով և բոլոր տեսակի սպառազինություններով։ Ինքը իրեն մտերիմ մեկը ձևացրեց արաբական զորքին՝ ցույց տալով, որ իբրև թե ցանկանում է կռվել նրանց Թշնամիների դեմ։ Սակայն բաժանվելով ընթացից, եկավ Շիրակ գավառի Կումայրի գյուղը։ Այստեղ նա սպանեց հարկահավաքին և ինչ որ գտավ նրա մոտ, վերցրեց և, իր հետ առած բոլոր տեղացիներին, գնաց Վրաց աշխարհի կողմերը՝ իր հետ տանելով երկրի նախարարներից ոմանց։

Երբ լուրը հասավ Դվին քաղաքը՝ թե ինչ ոճիր են գործել Համայկի որդիները, Մահմետն անհապաղ, բազմաթիվ զորք վերցրած, հետապնդեց նրան։ Հասնելով Վրաց երկրի այն գավառը, որը կոչվում է Սամցխե, բռնեց կիրճերի անցքերը, խլեց տարած ավարի մի մասը և նրան փախստական դարձրեց, վտարեց Հայոց երկրից։

Փախստականները գնացին Եգերաց երկիրը[1]։ Արտավազդն[2] այստեղ իշխանություն ստացավ Եգերաց և Վիրքայի, այսինքն՝ Վիրքի վրա։ Այդ ավելի գրգռեց զորահրամանատար Հասանին, որը շատ հարկահավաքներ ուղարկեց իր իշխանության տակ գտնվող բոլոր կողմերը և սկսեց մեծ բռնություններով հարկ հավաքել։ Նման հարկահավաքից հույժ սաստկացավ երկրի թշվառությունը, որովհետև դժվար էր տվյալ ժամանակում արծաթ գտնել Հայոց աշխարհում։

Այդ ժամանակ հայ նախարարներից մեկի սիրտը լցվեց զայրույթով. դա Հրահատ կոմսի որդին էր՝ Մամիկոնյան տոհմից, որի անունն էր Մուշեղ։ Նա, միաբանելով հայոց մի քանի նախարարների հետ, դուրս եկավ իսմայելացիների հպատակությունից և կռվել սկսեց նրանց հետ։ Իր գավառում և իր տանը հանդիպելով Իսմայելի որդիների, որոնք եկել էին սպանվածների արյան գինը պահանջելու, նրանց բոլորին էլ սրահար արեց և կոտորեց, իսկ ինքը ընտանիքի հետ տեղափոխվեց Արտագերս ամրոցը։ Ապա նա գնաց Բագրեւանդ գավառն՝ իր հետ ունենալով երկու հարյուր վաթսուն մարտիկ, բռնեց տեղում գտնվող հարկահավաքին, որի անունն էր Ապումճուր, նրան և նրա հետ եղած զինվորներին բոլո-

րին էլ սրահար արեց և կոտորեց՝ աղատելով բնակչությանը հարկ վճարելուց։

Այն ժամանակ, երբ նա կատարում էր այդ գործերը, նրա մոտ հավաքվեցին բոլոր վշտակիր և հոգով վտանգված մարդիկ, բոլոր կողմերում ոտքի ելան թշնամիների վրա։

Բայց նախքան այս, Իսմայելի որդիները կարին քաղաքից, թվով երկու հազար հոգի, շատ լավ սպառազինված, եկան Մուշեղի վրա։ Մուշեղը նրանց շրջապատեց... այգեստանում. նրանք թըշնամու վրա փլցրին այգեստանի պարիսպը, որը պատրաստված էր ոչ թե հողից, այլ քարերից։ Ղըրղյունով ընկած քարերը դիպչելով ձիերին՝ խրտնեցրին նրանց, որոնք վայր ձգեցին հեծյալներին և կոխկռտեցին։ Մուշեղը վերցրեց ընկածների կողոպուտը, զենքը և ձիերը բաժանեց (իր զինվորներին), իսկ ինքը դնաց իր ամրոցը։

Այս աղետալի լուրը երբ հասավ Դվին քաղաքը, Իսմայելացի զորավար Մահմետին և մյուս արաբներին, բոլորն էլ տագնապի մեջ ընկան։ (Մահմետը) հավաքեց Դվին քաղաքում ունեցած իր զորքը, հանձնեց մի զորավարի, որի անունը Ապունճիպ էր և կարգադրեց գնալ Մուշեղի վրա՝ սպանվածների արյան վրեժը լուծելու,

Այդ զորավարը չորս հազար ընտիր հեծյալներ վերցրած, արքունի պողոտայով շարժվեց դեպի Բագրևանդ գավառը և կանգ առավ Բագավան գյուղում։ Այստեղ նա հարձակվեց Մուշեղի վրա, որն իր հետ ուներ ընդամենը երկու հարյուր մարտիկ։ Շուտով սկըսվեց նրանց միջև մարտը։ Մուշեղը, Տիրոջ օգնությամբ, վճռական պարտության մատնեց Իշնամուն. իսմայելացիներից շատերին սպանեց, իսկ մնացածներին փախուստի մատնեց։ Նա հետապնդեց նրանց մինչև Արուճ ավանը, ոչ մեկին կենդանի բաց չթողեց, այդ թվում և զորավարին, ու մեծ հաղթությամբ ետ վերադարձավ՝ լիացած Իշնամու թողած բազում ավարով։

Փախչողներից շատ քչերին հաջողվեց հասնել Դվին քաղաքը։ Նրանց դիմավորելու դուրս եկան իրենց աղգականները. մարդ, կին, վայով ու ճիչերով, հողը գլխներին լցնելով, ճակատներին հարվածելով, օձիքները պատառոտելով, ողբով և լացուկոծով լցվեցին քաղաքի փողոցները։ Մեծ սարսափի մեջ ընկավ սարակինոսների գունդը։ Նրանք համարձակ չէին կարողանում քաղաքից դուրս գալ. սկսեցին հոգ տանել քաղաքի ամրացման վրա։

Հայոց նախարարները, տեսնելով իրենց գործի այսպիսի հաջողությունը, միաձնաբար որոշեցին ապստամբության անմիտ ձեռնարկը, մանավանդ որ նրանց ոգևորում էր մի միայնակյաց, որը, մոլորված հոգով, սնոտի մարգարեություն էր անում, ասելով. «Ահա մոտենում է ձեր փրկության ժամը»։

Հայոց նախարարները ի մի հավաքվելով, երդվեցին, ուխտ և դաշինք կապեցին՝ ապրելու և մեռնելու իրար հետ։ Հավաքվեց հինգ հազար հոգի։ Նրանց զորագնդերի մեջ մտան զգալի թվով ռամիկ գյուղացիներ։ Այստեղից նրանք շարժվեցին և պաշարեցին Թեոդուպոլիս քաղաքը, որ կարինն է։ Նրանք կառուցեցին աշտարակ և պատ քանդող մեքենայով անցքեր բաց արեցին պարսպի մեջ, բայց ոչինչ չկարողացան անել, միայն թե քար նետող մեքենայով սպանեցին քաղաքացիներից շատերին։

Աշոտ Բագրատունին, որը Բագրատունյաց տոհմից էր, իշխան Սահակի որդին, որը իմաստուն մեկն էր, ո՛չ միայն չմիացավ վնասակար և աղետավոր այս գործին, այլև խրատ տվեց նրանց՝ թողնել իրենց վտանգավոր մտահղացումը, որ ներշնչել էր նրանց մոլեկան միայնակյացը և մտածել իրենց մասին, իրենց ընտանիքի մասին, որովհետև նա ասում էր. «Դուք մանկահասակ եք, դեռևս չեք հասել չափահասության, և ես գիտեմ, որ դուք չեք կարող դիմադրել բազմագլուխ վիշապի զորությանը։ Մեծ է նրա ուժը և անթիվ է նրա ձեռքի տակ եղած զորքի բազմությունը, անչափ է զենքի պաշարը նրա զինանոցներում։ Բոլոր այն թագավորությունները, որոնք հակառակեցին նրան, ջարդուփշուր են արվել, ինչպես բրուտի անոթներ։ Հոռոմների թագավորությունն էլ չհամարձակվեց ձեռք բարձրացնել նրանց վրա և դողում է նրանց առջև և չի համարձակվում գնալ Աստծու կամքի դեմ։ Հունաց թագավորի զորության, անձնական քաջության և զորքերի բազմության ու պատրաստության հետ դուք տեղյակ չեք։ Եվ սակայն նա բոլորովին չցանկացավ խլել Հայոց աշխարհը... Արդ, եթե հաճելի է ձեզ, ընդունեցեք իմ խորհուրդը, որովհետև ես տանջվում եմ ձեր օգտի և մեր աշխարհի կարիքների ու անդորրության համար։ Ահա ինչ տեսակ ելք պիտի ունենա ձեր ձեռնարկությունը. կամ դուք կվերադառնաք և կհպատակվեք նրանց իշխանությանը և խաղաղ կապրեք մեր աշխարհում, կամ թե փախուստով հարկադրված կլինեք հեռանալ ձեր երկրից ձեր բոլոր ընտանիքների հետ, կլքեք ձեր հայրերի ժառանգությունը՝ ձեր անտառները, անդաս-

տանները և ձեր նախնիների գերեզմաններն ու կապրեք օտարության մեջ՝ Հունաց թագավորի իշխանության տակ։ Իսկ եթե ոչ այս լինի, ոչ այն, դուք մի օր կընկնեք ձեր ճնշողների ձեռքը և դաժան մահով կմեռնեք, որովհետև ես լավ գիտեմ Իսմայելի իշխանի անաստված բարքը. նա չի դադարի, մինչև որ չկատարի իր անձի կամքը»։

Իսկ նրանք չընդունեցին նրա իմաստուն խորհուրդները, ուշադրություն չդարձրին նրա վրա, այլ այդ համարեցին նենգադավություն, որովհետև նրանք շատ էին հավատում կեղծ միայնակյաց մարդուն, որն ամեն օր հավատացնում էր նրանց, որ չպետք է կասկածեն գործի հաջողության վրա։

Նրանց համաձայնությունը, ձեռնարկած գործի անտեղի լինելը շուտով դրսևորվեց, երբ առաջացավ անհամաձայնություն և նրբանք բաժանվեցին իրարից։ Արծրունյաց տոհմի նախարարներ Համազասպը և իր եղբայրներն իրենց զորամասերով, մնացին Վասպուրականում, իսկ Աշոտի որդի Վասակը, Ամատունյաց և Տրունյաց իշխանների հետ, իրենց զորամասերով մնացին Դարյունք գյուղի բերդում և Մակուի կիրճում, իսկ մի մասն ամրացավ Արագեղոտում և այնտեղից ցրվեց հարևան շրջանները սննդամթերք ձեռք բերելու համար, ապա վերադարձան իրենց տեղերը։ Իսկ արաբական զորքը, դուրս գալով Դվինից, ասպատակում էր մոտակա շրջանները, կատարում կողոպուտ և արյունահեղություն՝ Պրտղունքում, Թալինում, Կողբում և շատ ուրիշ տեղերում, ամեն տեղ թափելով սրահարված դիակներ։

Հաջորդ գարնանը Իսմայելի տիրակալ (Աբդուլան) զորք հավաքեց Խորասանի երկրից՝ շուրջ երեսուն հազար ընտիր հեծելազոր և հանձնարարեց մի զորավարի, որի անունն էր Ամր։ Նա սրան ուղարկեց իրենց ընդարձակածավալ և հռչակավոր Բաղդադ քաղաքից, որը կառուցել էր ինքը՝ Աբդուլան և շրջապատել անմատչելի պարիսպներով։

Զորավարը, դուրս գալով Ասորիքից, եկավ հասավ Հայոց աշխարհի խլաթ քաղաքը՝ շարժվելով մեծ զգուշությամբ և զենքի մեծ պաշարով։ Երբ նա մտավ քաղաք, հարցուփորձ արեց քաղաքացիներից, թե քանի՞ հոգի են նրանք և ովքե՞ր են նրանց զեկավարները, արդյո՞ք միաբան են իրար հետ, թե՞ պառակտված են, քա՞ջ կովողներ են, թե ոչ, պահեստված զենք ունե՞ն, թե ոչ։ Այս ամենը

իմանալով, այս բոլորը հաշվի առնելով, նշանակեց իր զորահրամանատարներին։

Սահակի որդի Աշոտը, որը այդ քաղաքում էր, հայտնեց Հայոց նախարարներին Քշնամու գալստյան մասին, որպեսզի նրանք միավորեն իրենց ցրված ուժերը և պաշտպանեն իրար մահվան դեմ։

(Աշոտի) գրության մեջ հայտնած լուրը անհավատալի թվաց Հայոց նախարարներին. նրանք կարծում էին, թե Աշոտը դավող խորամանկությամբ կամենում է փրկել Թեոդուպոլիս քաղաքը պաշարումից, որպեսզի դրանով իրեն մտերիմ ցույց տա իսմայելացիներին։ Այս նկատի ունենալով, նրանք ընդունելի համարեցին նրա խորհուրդը և ձեռնարկեցին իրագործել իրենց մտադրությունը։

Սրանից հետո Արծրունյաց տոհմի նախարարները՝ Համազասպը և իր եղբայրները, հավաքեցին Վասպուրականի զորքը։ Նրանց միացան Ամատունի եղբայրները իրենց զորամասերի հետ։ Օդնության կանչեցին Աշոտի որդի Վասակին Բագրատունյաց տոհմից՝ Սմբատ սպարապետի եղբորը, և նրա զորամասերով և հավաքված այս ուժերով շարժվեցին Արճեշ ավանի վրա՝ ցանկանալով հիմնահատակ կործանել այն և այնտեղ գտնված իսմայելական զորքը սրի քաշել։ Հասնելով Առբերանի գավառի Բերկրի գյուղը, նրանք կանգ առան, սպասելով մյուսների գալստյան։ Ըստ որում, նրանց հաջողվեց բազմաթիվ գյուղացիների ընդգրկել զորամասերում և տանել իրենց հետ կռվի։

Դեռ նրանց չէր հաջողվել իրագործել իրենց մտադրությունը, երբ լուր ստացվեց իսմայելացիների զորքի գալստյան մասին։ Ինչոր մեկը գալով պատմեց նրանց, որ «իսմայելական բազմաթիվ զորքեր եկել են և սպասում են ձեզ»։ Արծրունյաց տեր Համազասպը չհավատաց լրաբերին և, որպես կեղծ լուրեր տարածողի, ենթարկեց նրան տանջանքի։ Իսկ ինքը խրոխտացած՝ իր զորքով շարժվեց Արճեշ ավանի վրա։

Երբ նա հասավ գյուղաքաղաքին, սրա բնակիչներն իսկույն տեղեկացրին Խլաթ քաղաքում գտնվող արաբական Ամր զորավարին՝ Հայոց նախարարների իրենց վրա հարձակվելու մասին։ Եվ սա մեծաթիվ զորքով եկավ և դարան մտավ Արճեշի մոտ։ Մինչ Հայոց դունդը կռվում էր ամրոցի դեմ, արաբները դուրս եկան

թաքստոցից և հարձակվեցին հայոց զորքերի վրա և փախուստի մատնեցին նրանց։ Իսմայելացիները կոտորեցին հետևակ զորքի զինվորների մեծ մասին, որոնք շինականներ էին, քանի որ անզեն էին և պատերազմի գործին անփորձ։ Նրանք ճաշակեցին օրվա դառը պտուղները և, սրի մատնելով, անխնա կոտորվեցին։ Շատերը վտանգից սարսափահար՝ իրենց գետը և ծովը գցեցին և խեղդվեցին։ Տոհմիկ նախարարներից սպանվեցին չորս հոգի, որոնցից երեքը Տրունյաց տոհմից էին, մեկը՝ Հուրծա գյուղից։ Իսկ հասարակ ժողովրդից սպանվեց հազար հինգ հարյուր հոգի։ Մնացածները փախչելով՝ հազիվ կարողացան աղատել իրենց կյանքը։ Այդ սարսափելի իրադարձությունը տեղի ունեցավ հրոտից ամսվա չորսին, շաբաթվա չորեքշաբթի օրը[3]։ Թշնամին հետապնդեց հայոց զորքին մինչև այն վայրը, որը կոչվում է Տայ գյուղ։ Ապա նրանք ետ դարձան հետապնդումից և մեծ ուրախություն արեցին իրենց բանակում...։

Հայկական այն զորքը, որը շրջապատել էր Կարին քաղաքը, հասցրել էր քաղաքացիներին ուժասպառության. քաղաքում ուժեղացրել էր սովը, և նրանք, ակամա, ցանկանում էին հանձնել քաղաքը։ Բայց երբ պարտության բոթը հասավ Կարին քաղաք, հայոց կռվող զինվորներն սկսեցին վհատվել, թողեցին քաղաքի պաշարումը։ Չնայած նրանք կարող էին անցնել Հունաց կողմը և աղատվել այլազգիների ապիրատությունից, սակայն լավ համարեցին մեռնել, քան տանել երկրի կորուստը և Քրիստոսի եկեղեցու ավերումը։ Այսպես մտածելով, թեև նրանք փոքրաթիվ էին, քան թշնամին, ինքնակամ հոժարությամբ գնացին դեպի խորտակում։ Հավաքելով իրենց զորագնդերը՝ շուրջ հինգ հազար հոգի, դուրս գալով Կարնո քաղաքից, անցան Բասենի սահմանը և հասան Բագրևանդի շրջանը։ Այստեղ նրանք անցան Արածանի գետը, քաջասրտությամբ հարձակվեցին թշնամիների վրա։ Կռվի մեջ մտնելուց առաջ՝ նրանք պատերազմի դաշտից բավական հեռու մի տեղ թողեցին իրենց ծանրոցներն ու ձիերը և հետևակ շարքերով, կատաղությամբ պատրաստվեցին հանդիպել թշնամուն։ Բայց թշնամու զորքն էլ դուրս եկավ նրանց առաջ մեծ պատրաստություններով։ Արևը ծագելիս սկսվեց պատերազմը։ Առաջին հարձակումով հայոց գունդը գերազանցություն ունեցավ. հայերը թշնամուն փախուստի մատնեցին և նրանցից շատերին կոտորեցին։

Բայց փախչողները, օգնություն ստանալով, կանգ առան ու կատաղությամբ ետ դարձան և սարսափ ազդեցին ռամիկ հետևակներին։ Իշխաններից մի քանիսին նրանք փախուստի մատնեցին իրենց հեծյալների հետ, իսկ ռամիկներից շատերին կոտորեցին։

Իսկ քաջահաղթ նահատակները, թեև թվով մեծ չէին շարաշուք ոստիների համեմատությամբ, բայց վախկոտություն ցույց չտվին դառն օրհասի պահին։ Նրանք սեղմեցին իրենց շարքերը և իրար սիրտ տալով ասում էին. «Քաջությամբ մեռնենք մեր երկրի և ժողովրդի համար, մեր աչքերը թող չտեսնեն ոտնատակ արված մեր սրբությունները և մեր Աստծու փառաբանված տեղերը։ Թող առաջ մեր դեմ ուղղված լինեն թշնամու սրերը, իսկ այնուհետև թող լինի այնպես, ինչպես լինելու է։ Զոհվենք մեր ճշմարիտ հավատի համար. մեր մահը ժամանակավոր կլինի, իսկ կյանքը՝ հավիտենական»։ Գոտևորված Վերինի օգնությամբ, նրանք ետ չկանգնեցին նախորոշված նպատակադրությունից, թեև հինգ հազար հոգի էին երեսուն հազար թշնամիների դիմաց... Հայերը իրենց վրեժը լուծում էին սարսափելի արյունահեղությամբ, որ կատարում էին թշնամու շարքերի մեջ։ Բայց շուտով նրանց թևերը հոգնեցին զենքի ծանրությունից։ Մյուսները, զրկվելով զենքից, ընկան թշնամիների ձեռքը։ Այսպես նրանք հրաժեշտ տվին մեղանչական կյանքին։

Զորքի քաջ առաջնորդներից նահատակվեցին հետևյալները. Բագրատունյաց տոհմից՝ Սմբատ սպարապետը և Սահակը, որը նրա բարձակիցն ու նիզակակիցն էր. Մամիկոնյան տոհմից՝ Մուշեղ զորավարը և Մամիկոնյանների տեր Սամուելը՝ դեռ երիտասարդ և գեղեցիկ մի տղամարդ, մեծ սպարապետի անները. Գնունյաց տոհմից՝ Վահանը։ Եվ ուրիշ շատ ընկածներ նախարարներից և ռամիկներից, որոնց ես չեմ կարող անվանապիր հիշատակել՝ թվով երեք հազար։ Նրանց մահը դառն էր և վիճակը ողբալի, որովհետև հող էլ չգտնվեց թշվառ դիակների թաղման համար. նրանք մնացին բաց դաշտում, զոհ դարձան արևին, փոշուն, անձրևին, փոթորիկներին և քամիներին։

Այդ ժամանակ Հայաստանում ամեն տեղ բարձրացան ողբ ու հեծեծանքներ. նրա մեծ զորավարները և գլխավոր առաջնորդները ոչնչացել էին մի ակնթարթում, և մեր երկիրը, ընկղմված խորին

տխրության մեջ, կոծելով կոծում էր, ողբում իր քաջ և փառավոր պաշտպանների մահը։ Զրկվելով նրանց օգնությունից, երկիրը թողնվեց գազանաբարո և անգութ թշնամիների կամայականությանը...։

Այդ դժբախտությունը տեղի ունեցավ հրոտից ամսի 14-ին[4], երկուշաբթի, ոչ ուշ Արեգնի պարտությունից։ Այսուհետև հարըստահարությունն ավելի սաստկացավ. հնարավոր չէր անդամ մահացածներն համար ողբալ և ոչ էլ սգո հաց տալ իրենց տներում կամ դերեզմանատներում։

1. Նգերաց աշխարհը ընդգրկել է այժմյան Արևմտյան Վրաստանի տերիտորիան, հատկապես՝ Փասիս գետի հովիտը։

2. Արտավազդը հետագայում վրեժխնդիր է եղել իր դեմ հարուցված հալածանքի համար. բյուզանդական արքունիքի կողմից նշանակվելով Անատոլիկոն թեմի ստրատեգ, 778 թ. բյուզանդական երեք հայ զորավարների՝ Տաճատ Անձևացու, Վարազտիրոցի և Գրիգորիսի գործակցությամբ, նա ծանր հարվածներ հասցրեց խալիֆայությանը արաբա-բյուզանդական պատերազմում՝ Գեղամանիկ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում։

3. Արձեշի ճակատամարտը, ըստ Ղևոնդի տեղեկության, տեղի է ունեցել հրոտից ամսվա չորսին՝ շաբաթ օրը, որը լինում է 775 թ. ապրիլի 15-ին՝ շաբաթ օրը։

4. Ճակատամարտը Բագրևանդի Արձն գյուղի մոտ, ըստ Ղևոնդ պատմիչի տեղեկության, տեղի է ունեցել հրոտից ամսվա 14-ին՝ երկուշաբթի օրը։ Ինագրում սխալ է ապրիլ. հրոտից ԺԳ-ն դարձել է ԺԴ, որն ուղղելուց հետո լինում է 775 թ. ապրիլի 24-ը՝ երկուշաբթի։

851 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ

Թովմա Արծրունին Արծրունիների տան տոհմական պատմիչն է։ Ապրել է X դարում։ Եղել է եկեղեցական։ Գրել է «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկասիրությունը։ Օգտվել է բազմաթիվ աղբյուրներից։ Արծրունու Պատմությունը բաղկացած է չորս դրվագությունից, որոնցից պատմական մեծ արժեք ունի IX—X դարերին վերաբերող չորրորդ դպրությունը։ Պատմությունը գրել է Դերենիկ Արծրունու պատվերով, բայց չի ավարտել։ Տարիներ հետո այն շարունակել և ավարտել է Գագիկ Արծրունու պահանջով։ Պատմությունը հասցրել է մինչև 937 թվականը։ Հավանական է, որ այդ թվականին էլ մահացել է։ Շարադրության ոճը տեղ-տեղ պատկերավոր է և գեղեցիկ, իսկ որոշ տեղերում՝ մանվածապատ և խրթին։ Հրատարակվել է երեք անգամ։ Աշխարհաբար թարգմանու-

թյունը կատարել է Վ. Վարդանյանը (տե՛ս *Թովմա Արծրունի և Անանուն*, «Պատմություն Արծրունյաց տան», Երևան, 1978)։

Թովմա Արծրունուց ստորև բերված հատվածները տրվում են ըստ այս հրատարակության։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ

Դպր. II, գլ. Զ. Արդ՝ մյուս տարի, վեցերորդ հոբելյանին, 72-րդ օլիմպիադային, 20-րդ ինդիկտիոնին[1] և Հայոց թվականության 300-ին թագավորն իր սինկղիտոսների և բաբելացի բոլոր մեծամեծների հետ հաստատ նպատակադրվեց Հայոց աշխարհի իշխաններին զրկել իրենց իշխանությունից, որպեսզի խլեն նրանց ժառանգությունը։ (Կամեցան) ամենից առաջ ձեռք գցել Աշոտին՝ իր տոհմի հետ, և Բագարատին ու իր տոհմին։ Որովհետև ասում էին՝ «եթե նրանց վերացնենք մեջտեղից, ոչ ոք չի կարող ընդդիմակայել մեզ»։

Նույն այդ ժամանակ արքան գումարեց զորք ընտիր հեծյալներից, զորեղ այրերից, զորքով ու զորապետներով և տվեց ինչ-որ Հովսեփի[2], Ապուսեթի որդու ձեռքը։ Նա ստացավ Հայոց աշխարհը, փոխանակ հոր՝ Ապուսեթի, որովհետև սա մահացավ ճանապարհին, Ասորեստանի կողմերում։ Մտավ հայերի երկիրը, որպեսզի, ինչպես մտադրվել էին, տանջեն նրանց։ (Արքան) ասաց նրան. «Եթե քեզ հաջողվի մեր խորհածը հայերի ու նրանց իշխանների վերաբերյալ, կկատարվեն մեր իղձերն ու ցանկությունները, և (եթե) դու կարողանաս Հայոց իշխաններին, մանավանդ Վասպուրականի Աշոտ իշխանին մեղ մոտ հասցնել կապանքներով, այդ երկիրը կտամ քեզ և քո զավակին ի ժառանգություն։ Ուրեմն փութա՛, պինդ կա՛ց, հասի նրանց հետևից, մի՛ տատանվի ու թուլանա այդ գործում»։

Այնժամ զորապետը մեկնեց նրա մոտից և լցվեց չար դիտավորություններով ու հնարիմացությամբ։ Ատրպատականի կողմից մտավ Վասպուրական երկրի Աղբակ գավառը և բանակեց Արծրունյաց ոստան Ադամակերտում։ Այնտեղից սկսեց ասպատակներ սփռել, ավարի մատնել և ագահաբար իր մոտ հավաքել երկրից կողոպտածը։ Նա ձեռացավ բարեկամ ու խաղաղասեր և արքունի հարկերի պատրվակով իր մոտ կանչեց (Աշոտ) իշխանին։ Բայց

արաբները նույն զորագնդից իմաց էին տվել իշխանին՝ չգնալ նրա մոտ, հասկացրել էին, թե ինչ էր նա խորհել իր մասին։

Իսկ (Աշոտ) իշխանը զինավառվեց, բաղում պատրաստություններով, իր ազատազորքով և իրեն ենթակա բոլոր տեղական իշխանների հետ խույս տվեց և շրջում էր Մարդաստանի[3], Հասկոձորի[4] կողմերը։ Ապա զորապետի մոտ ուղարկեց դեսպանների և գրեց այսպիսի մի հրովարտակ.

«Թագավորների ու աշխարհակալների սովորությունն է մեծ հոգածությամբ խնամ տանել երկրի բարեշինության մասին, թեթևացնել իշխանության լուծը, ծանրությունները, մեղմացնել հարկերի համար կատարվող խոշտանգումները, որպեսզի իսպառ չվերանա երկրի բարեկարգությունն ու զորությունը, կուսակալների, քաղաքային պաշտոնյաների ծառայական պաշտոնավարությունը, հարկերի ու զորքերի հավաքումը, որպեսզի երկիրը լինի շենության ու խաղաղության մեջ, և անխափան ուղարկվեն արքունի հարկերը։ Հույս ունենք, որ դուք էլ եք կամենում նույնը։ Եվ մենք տեսնելով քո բարյացակամ խնամարկությունը երկրին և բարեկամության երախտիքը մեր հանդեպ, կծառայենք սիրահոժար, հավատարմորեն և մեծ փութով կկատարենք քո հրամանները»։ Այսպիսի հաճելի ու դյուրընկալ շատ խոսքեր գրեց իր թղթում։ Նույնպես և Աշոտ իշխանի մայրը՝ Սահակի և Տարոնի իշխան Բագարատի քույրը, որը իմաստուն կին էր՝ թե՛ խոսքի և թե՛ գործի մեջ, և հույժ խոհեմ ու աստվածասեր, մեկնեց բազմաթիվ ընծաներով և հանդիպեց Հովսեփին, խնդրեց հաշտություն, խաղաղություն հաստատել իր որդիների և ամբողջ Վասպուրական աշխարհի հետ։ Իսկ նա ընդունեց պարգևը և կատարեց խնդիրքը։ Ապա պատանդներ վերցրեց անվանի ու պատվական մարդկանցից և մեծ պատվով վերադարձրեց Աշոտի մորը։ Իսկ ինքը խաղաղությամբ, առանց մեծ վնասների անցավ Վասպուրական աշխարհի միջով և իր հետ տարավ պատանդներին։ Ապա անցավ Բզնունական գավառով, մտավ Խլաթ[5], քանզի կամենում էր սպասել պատեհ ժամի, որպեսզի նենգությամբ խաբի և որսա (իշխաններին)։

Երբ ամիրան հասավ Խլաթ, մտավ և բանակեց քաղաքի մեջ եղած ամրոցում։ Ապա բարևի թղթով հրավիրակներ ուղարկեց Բագարատի մոտ, որպեսզի առանց կասկածների ու վախի գա իր մոտ։ Նույն թղթում գրում էր, թե Հայաստան աշխարհը վստահում է

նրան, քանի որ ինքը մեկնելու է արքունիք, իբր թե վերահաս ձմեռային եղանակի սաստկությունից և հյուսիսային սառնաշունչ օդի խստությունից, որոնց անընտել էր համարում իրեն։

Իսկ իշխան Բագարատը, քանզի չուներ նենգադրուժ կասկածներ թագավորի ու նրա զորքի հանդեպ, անխիղճ համարձակությամբ ու տիրասեր մտածումով ելավ գնաց ժամանած կոչնակների հետ, որպեսզի կատարի զինվորական ծառայությունը ըստ աստվածային պատվիրանի ու թագավորական հրամանի։ Ոչինչ չգիտեր նրա խաբեության մասին, ուստի սխալվեց։ Հետը վերցրեց նաև Աստվածաշունչ գրքի սուրբ կտակարանները, քահանայական դասի պաշտոնյաների բազմության հետ։ (Հովսեփը) բռնեց նրան և իր ամբողջ ազգատոհմը՝ Բագրատունյաց տոհմից, կապեց երկաթյա կապանքներով և ուղարկեց Սամառա։ Իսկ ինքը եկավ ձմեռելու Տարոնի Մուշ քաղաքում, ունենալով իր հետ նաև պատանդներ վասպուրականի Արծրունյաց նախարարներից և նրանց ազատներից։ (Տարոն) գավառի բնակիչներին գերեվարեց, Աստրեստանի և արաբական տերության բոլոր կողմերում վաճառելու համար։ Իսկ գերիների կեսին պահեցին իրենց մոտ, քաղաքում, որպեսզի իրենց համար ջրկիրություն անեն և փայտ կոտրեն։ Աշխատեցնում, չարչարում էին նրանց՝ ձմեռվա դառնաշունչ սառնամանիքին։ Իսկ ազատվածները փախան երկրի տարբեր կողմերը։ Ամբողջ գավառն ավերվեց, բացի լեռնակողմից, որի (բնակիչները) մնացին Խութ[6] անվանված լեռների վրա, իրենց ամրոցներում։

Գլ. է. Երբ ձմեռը կես եղավ, եղանակը խստացավ, դարձավ միգախառն ու մրրկալից։ Բանձր ձյունը հարթ ու հավասար դիրվեց լեռան ստորոտներում, որտեղ կառուցված էր Տարոնի քաղաքը*։ Այդտեղ էր ամրացել արաբների զորապետը, նման ծերացած արջի, որը ձմեռ ժամանակ սնվում է արմատիքներով և, անցնելով կենաց ու մահվան միջով, որջանում իր բնում։ Իսկ երբ փչում է հարավային քամին, սփռում երկրի վրա իր ջերմության զորությունը, զվարթացնում է հողի տակ մնալուց և հյուսիսային սառնաշունչ օդից ընդարմացած արմատներն ու բույսերը։ Գարնանը՝ դիշերահավասարին, որջացած գազանները, թռչունները, երբ զգում են օդի ջերմությունը, դուրս են գալիս յուրաքանչյուրն իրենց բներից։

* Այսինքն՝ Մուշը։

Եվ շատերը նույն ժամանակ սատկում են, իսկ մի մասը դյուրությամբ բռնվում է որսորդներից։ Կենդանի մնացածները սաստիկ վնասներն են հասցնում ում որ հանդիպեն, թե՛ մարդկանց և թե՛ ուրիշ կենդանիների։ Նույն ձևով այն մարդը՝ Հովսեփը, արաբների զորապետը, սպասում էր ձմեռն անցնի, որպեսզի հարձակվի Հայոց երկրի վրա, սրածությամբ, դերեվարությամբ ու մեծ-մեծ հարվածներով երկրի մեծամեծներին գերության տանի, երկրում նշանակի գործավարներ, որոնք իրենց հրամաններով պիտի հորինեին երկրի կարգերը և իրենց ընտանիքներով հանդերձ նստեին Հայաստանի ամրոցներում։

Այն ժամանակ լեռան բնակիչները, երբ տեսան, որ իշխանին տարան գերության, և իրենց ևս սպասում են նույն փորձությունները, ինչ կրեցին դաշտեցիները, եկան խումբ մեկնագենների բազմությունները, ձմեռային կարիքների համար ձեռք բերած արհեստի իրենց միջոցներով։ Նրանք վերցրել էին իրենց նիզակները, որ միշտ կրում էին, ի զգուշություն անտառներում որջացած գազանների կամ իրենց վրա հարձակվող թշնամիներիւ Հարձակվեցին (Մուշ) քաղաքի վրա, պաշարեցին այն, զորքը մատնեցին սրի, արգելանոցից հանեցին վաստպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ ավարը։

Բայց ինքը՝ կարծեցյալ մարզպանը, փախավ ընկավ մեծ եկեղեցին, որը հանուն Փրկչի, մեծ ծախսով՝ 300 հաղար (դահեկանով) կառուցել էր Բագարատ իշխանը։ Եվ այն ժամանակ նա սարսափից զուգահար՝ թաքնվեց գմբեթում։ Մեկնագենները շրջապատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը և ինչ-որ մեկը աշտեով հարվածեց (Հովսեփի) թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով։ Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես։

Ես իմ աչքով տեսել եմ այն մարդուն, ով հարվածել էր (Հովսեփին)։ Սրա մասին տեղեկացա նրանից։

Գուժկանը փութապես հասավ թագավորի մոտ և (գուժեց), թե սպանվել է քո զորապետը և Հայոց երկիրն ապստամբել է քո պետության դեմ։

Այստեղ մի փոքր ցույց կտամ լեռան բնակիչների որպիսությունը՝ թե ինչպիսիք են և կամ ովքեր են, ինչպես են նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով ձեռք բերում իրենց

ապրուստը և բավարարում իրենց կարևոր պետքերը։ Նրանք բնակվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթներին։ Ապրում են առանձին, ազգատոհմերով և այնչափ հեռու են միմյանցից, որ եթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավի, նրա ձայնի բոմբյունը հազիվ կարող է որևէ տեղ լսվել և տպավորություն է թողնում, թե արձագանք է ժայռերի միջից։ Նրանց կեսը խոտոռել է հայրենի բնական լեզվից՝ հեռանալ լինելու պատճառով։ Միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր և օտարոտի լեզվով։ Եվ այնքան խրթնախոս են և միմյանց անծանոթ, որ մինչևիսկ կարիք ունեն թարգմանների։ Կերակրի պետքերի համար գործ են ածում ինչ-որ սերմեր, առավելապես կորեկ կոչվող բույսը, որ սովի ժամանակ ոմանք անվանում են հաց։ Այդ սերմերը նրանք ոտոդում են ոտքերով՝ անտառների բացատներում կամ ցանում են երկմատանի փայտատներով։ Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում են բրդյա շորեր. ոտնամաններ պատրաստում են կոշիկների ձևով՝ այծերի մորթուց։ Ամառ թե ձմեռ բավարարվում են միևնույն սնունդով և միևնույն հա-



Նկար. 33. Սասուն. Մարութա (Մարաթուկ) սարը

գուստով։ Լեռներում բնակվող գաղաններից պաշտանվելու համար ունեն աշտե զենքը, որ կրում են մշտապես։

Երբ թշնամիներն հարձակվում են իրենց երկրի վրա, լեռնականները միաբան գալիս են իրենց իշխաններին օգնության, քանզի տիրասեր են։ Երկնքից վար թափվող անկայուն ձյան վրա մանգալու համար հնարել են փայտի կտորներ, որ օղակի պես չվանով ամրացնում են ոտքերի շուրջը և դյուրությամբ ընթանում ձյան վրայով՝ իբրև գետնի։ Գաղանաբարո են և արյունարբու, առ ոչինչ են համարում հարազատ եղբայրների, նույնպես և իրենց սպանությունը։ Սրանք կոչվում են արագագնաց մեկնազեններ, բնակվում են այն լեռան վրա, որն Աղձնիքը բաժանում է Տարոնից։ Խրթին և անհասկանալի խոսակցության, բարքերի պատճառով անվանվում են Խութ։ Իրենց անունով լեռն էլ է Խութ անվանվում։ Անգիր գիտեն հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որ մշտապես ունեն շուրթերին։ Սրանք ասորեստանցի ռամիկներն են, որ գաղթեցին Ադրամելեքից և Սանասարից՝ Ասորեստանի և Նինվեի թագավոր Սեննեքերիմի որդիներից հետո և նրանց անունով իրենց անվանադրեցին Սանասնայք։ Հյուրասեր են և պատիվ տվող։

1. Բերված հաշվումների մեջ ինչ-որ անճշտություն է նկատվում. Հայոց Մեծ թվականի 300-ին (ներկա թվականության 851-ին) ինդիկտիոնը եղել է ո՛չ թե 20, այլ՝ 14, Օլիմպիադայի 72-րդը ճիշտ կարելի է համարել, եթե ընդունելու լինենք, որ այն եղել է Օլիմպիադայի չորս տարիներից ոչ թե առաջինում, այլ՝ չորրորդում։

2. Թովմա Արծրունու մոտ հիշված Հովսեփը՝ արաբական զորահրամանատար, ազգությամբ թուրք՝ Յուսուֆ իբն Ապուսեթն է։

3. Մարդաստանը Վասպուրականի գավառներից մեկն է։

4. Հասկո ձորը գտնվել է Մարդաստանի հյուսիսում։

5. Խլաթը գտնվել է Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառում։

6. Խութեցիները Սասունի Խութի լեռնականներն են, որոնք հայտնի էին իրենց ինքնատիպ վարքուբարքով և քաջությամբ։

ԲՈՒՂԱՅԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԸՍՏ ԹՈՎՄԱ ԱՐՏԵՐՈՒՆՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԵՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ

Դար. III, գլ. Ա. Նույն ժամանակ թագավորի մոտից մեկնեց այդ մարդը՝ Բուղան[1], որի ներսում որջացել էր սատանան իր զո-

րությամբ և որի բաղձանքն ու ախորժելի զբաղմունքն էր անմեղ մարդկանց միսն ու արյունը, ինչով հագեցնում էր իր չլսված, գազանաբարո կատաղությունը։

Գլ. Բ. Այն ժամանակ Բուղան եկավ մտավ Խլաթ քաղաքը, ճանապարհվեց դեպի Ապահունիք[2] կողմերը։ Զորքը բաժանեց երկու մասի և հրաման տվեց մտնել Վասպուրական երկիրը, ողողել, գերել, թալանել, ավերել ու բնաջինջ անել, սրի քաշել, մարդաթափ անել բազմամարդ գյուղերն ու ավանները, մնացածներին, կանանցով ու մանուկներով հանդերձ վարել գերության։ Իսկ իշխան Աշոտին կապանքներով տանել թագավորի մոտ, որպեսզի վրեժով հատուցի իր արարքների և արաբացոց տերության դեմ ապստամբելու համար։ Այնուհետև զորքի մի մասը տվեց ժիրաք անունով ինչ-որ զորապետի ձեռքը և հղեց նրան Ռշտունիքի կողմերը։

Բայց քանի որ Հողցի[3] պահպանությունն ամուր էր, ժիրաքը փութապես եկավ հասավ Ռշտունյաց դավառ և զորքն առաջ շարժեց Առվանից ձորը[4], Մոկաց կողմերը։ Այնտեղ գտան Ռշտունիքի բնակիչներին, որոնք թափառական ընկել էին անողորմ, արյունարբու և գիշակեր շների ձեռքը։ Նրանց սրակոտոր արեցին և արյամբ լցրեցին երկիրը։ Կեսին գերի վերցրին և տարան իրենց հետ, հրդեհեցին շենները, ավաններն ու ագարակները, դարձրեցին մարդկանցից և անասուններից անբնակ։ Իսկ Ռշտունիքի Նորագեղջ ավանի ռամիկներին վերցրեցին բերեցին Ռշտունյաց Ոստանի[5] վանքատեղին, չվանն անցկացրեցին պարանոցները և սրի քաշեցին, ապա այնտեղից գնացին Ածանա ձոր, փախստականներին որոնելու համար։ Հասան նահանգներից և սրի քաշեցին ու գերի տարան նրանցից շատերին։

Իսկ ինքը՝ Բուղան շարժվեց (Աշոտ) իշխանի նահից։ Նրա հետ էին նաև Հայաստանի արաբները, որ բնակվում էին մեր աշխարհի այլևայլ կողմերում և առաջնորդում էին Բուղային՝ մեր երկրում ելումուտ անելիս։

Աշոտ իշխանը կամաց-կամաց ամփոփվեց ընտանյոք հանդերձ։ Նրա հետ էին ոմանք իր ազատներից՝ Մուշեղ Վահևունին, որ ուներ տանուտերական պատիվ, Վահրամ սեպուհը՝ իշխանի թիկնապահը, Վահրամ Տրունին, Հասանը և պաշտոնավոր սեպուհներից ուրիշներ։ Նկան մտան Նկան բերդ-ղղյակը[6], որը Թոռնա-

վան գավառում էր։ Փնտրում էին, քննում, թե ինչպես կարող են նրք գտնել վերահաս վտանգից։

Երբ արաբացոց զորքն իմացավ, որ իշխանը մտավ ամրոցը, այնուհետև բազմությամբ հետամտելով՝ իսկույն շրջապատեց այդ անել վանդակի պես ամրոցը։ Հիմնական զորաբանակն ուղարկեց Ղոկորվատ ավանը։ Իրենց հետ ունեին գերիների բազմությունը, որ հավաքել էին ինչպես հողը։ Իսկ Վահան Ամատունին գավառից փախավ ձորը, որը մոտ էր այն ամրոցին, ուր իրենց իշխանն էր։

Ապա փոքր-ինչ հետո վինեց զորքը՝ պատերազմելու բերդականների դեմ, ամրոցն առնելու համար։ Եվ ինքն իսկ՝ զորապետ Բուղան, նստած երիվարին, զինավառվելով՝ ելիմացիների կորովի աղեղնավորներին ու ընտիր հեծյալներին իր հետ տանում էր պատերազմի ընդդեմ (Աշոտ) իշխանի։ Նրա զինվորներն ունեին տեսակ-տեսակ վաղրեր, սուսերներ, սվիններ, տապարներ, քարհատ գործիքներ, մեքենաներ, քար նետող գործիքներ, վահաններ և նիզակներ։ Վերցնում էին նաև կրակ, ծծումբ և նավթ՝ պատերազմելու համար։ Լուծույթը լցնում էին ապակեղեն անոթների մեջ, ամանր ծծումբ խառնում նրա հետ և դնում մեքենայի պարսատիկի վրա, նրա հետ նաև՝ կրակը և հնար գտնում գցելու ամրոցի վրա։ Եվ ովքեր որ ճակատում էին պարիսպների մոտ, ունեին բրդյա ղգեստներ։ (Բուրդը) բազուկների ուժով սեղմել և կպցրել էին միմյանց։ Այդ նուրբ մազը կոչում էին թաղիք, որը ջրի մեջ դրվելիս ծծում է իրրև սպունգ, և նրանով զինված մարդիկ ավելի սաստիկ են կռվում, մնում են աներկյուղ հրից այրվելուց։

Իսկ (Աշոտ) իշխանը նյավ պարսպի վրա, հպարտությամբ ճեմում էր, ինչպես առյուծի կորյուն, առ ոչինչ համարելով հրոսակներին, որ վրա էին հասել ու շրջափակել իրեն։ Որովհետև կարծում էր, թե իր նիզակակիրները, ազատագունդ զորքը, զորագլուխները, որ մտել էին իր հետ Նկանի անձավը, համախոհ են ու գործակից իրեն։ Մինչդեռ (արաբներն) ավելի ու ավելի էին սաստկացնում մարտը։

Մինչդեռ այսպես էին խոսում ու խորհում միասին, նույն ժամանակ բերդում արդելվածները՝ ազատ տոհմերից, որոնք մասնակցում էին խորհրդին, իսկույն անջատվեցին ուխտած միաբանությունից, մեջտեղ բերեցին շար մտադրություն, կեղծեցին բա-

րեկամությունը, ինչպես երեկ և նրանից էլ առաջ, ու հանձն առան մեկնել զորապետի մոտ և խնդրել խաղաղություն։

Այս լսելով, հաստատ իմացավ նրանց նենգագործությունը և այբերը բարձրացնելով առ աստված, աղոթեց, ճաշակեց մի քիչ հաց ու գինի, գոհացավ և թախանձագին նայեց իր ընտանիքին, ապա վեր կացավ, իջավ ամրոցից, եկավ վայրի ոսոխի առջև...։

Գլ. Դ. Այն օրերին, մինչ մնում էին կապանքների մեջ (Աշոտ) իշխանն ու նախարարները՝ յուրաքանչյուրն ընտանյոք, (Բուղան) կազմեց զինվորների զորագունդ, ընտիր այրուձի, զինավառվեց բաղում պատրաստությամբ և Աշոտ իշխանին ու նրա որդի Գրիգորին, Վահան Արծրունուն և նրա որդի Գագիկին, որը նաև Ապուսմբրվան էր կոչվում, Վահանի եղբայր Մուշեղին, Հրանուշ տիկնոջը և ազատատոհմիկներից ուրիշների, կապեց, նստեցրեց ուղտերի վրա և վտարեց Սամառա։ Նրանց դրեցին տոպրակաձև տաղավարների ներքո և ուղարկեցին Պարսկաստանի կողմերը։ Ճանապարհեց Ատրպատականով. կասկածում էր, թե գուցե Գուրգենը կամ որևէ մեկը Արծրունյաց տոհմից և նրանց ազատներից՝ վասպուրականի կորովի հեծյալներից, վրա հասնի և ազատի նրանց իր զորքից և դուրս հանի յուրայինների ձեռքից։

Երբ (Աշոտ) իշխանը հասավ արքունիք, նրա ոտքերը կապել տվեցին կրկնակի շղթաներով և դրեցին բանտի մեջ։ Ապա (արքան) սպառազեն զինվորներին հրամայեց պահել նրան, մինչև ինքը կնստի գահաստանի, նրանց կմտցնի ատյան՝ հարցուփորձի և կքննի այն գործերը, որ կուտակել դրել էին իշխանի վրա։

Արքան իր զորապետին այն ժամանակ դրել ու ծանուցել էր, թե ինչ էր պետք կատարել։

Գլ. Դ. Սրանից հետո Բուղան իր մոտից գատեց ավելի քան 15 հազար մարդու՝ բոլոր ազգատոհմերից, մեծամեծներից, կուսակալներից, ինչպես և պարսիկներից, ելիմացիներից, բաբելացիներից ու արաբներից, որոնք թագավորի ու մեծ զորապետի հրամանով եկել էին նրա հետ՝ պատերազմ վարելու, և նրանց հանեց Գուրգենի դեմ, որպեսզի ուր էլ լինի, բերեն նրան իր մոտ, լիներ այդ ստապատիր ձևով, խորամանկ կեղծավորությամբ, խարդախությամբ կամ պատերազմով և մեծամեծ զորությամբ, ամենայն պատրաստությամբ, արքունի զորությամբ, ինչպես որ կարող են, հասցնեն իր մոտ։

Իսկ (Գուրգենն) անցավ Որսիրանք գավառը[7]։ Նրա հետ ազատների, մեծամեծների, Արծրունյաց նախարարությյան և նրանց ողջ զորքի բազմությունը։ Բանակեցին Թով գյուղի եռևում, լեռան վրա, նրա հովտում, որ կոչվում է Արյան լիճ, քանզի այնտեղ կա մի մեծ լիճ, մոտիկ այն տեղին, ուր Վասպուրականի մեր քաջ իշխանների զորքի արիությունների ու ճակատամարտերի ասպարեզն էր։ Այնտեղ էր հավաքվել գաղթականների մեծաթիվ բազմությյուն՝ Աղբակ, Զարեհավան և Ակե գավառներից, Աղզո լեռնակողմերից, Առնո ոտնից, Ջողա լեռան[8] և ավելի այն կողմերից։ Անհուն բազմությյունը պատել էր լեռան շուրջը, ինչպես մարախը և ծովի ավազն անթիվ։ Ապավինել էին քաջ զորավար Գուրգենին և նրա հետ եղած հայոց զորքին, իբրև մեծ ու ապահով ամրոցի։

Իսկ (արաբների) զորքը, որ եկել էր Գուրգենի եռևից, եկավ հասավ երկրի սահմաններին, ուր էր Գուրգենն իր զորքով։ (Նրանք) բանակեցին Զալ[9] կոչված գետի եզերքին։ Իսկ զորքի զորագլուխներն էին՝ Մուքթադիրը, Յուսուֆը՝ Տփղիս քաղաքից, Իսհիմի որդի Յուսուֆը և Ելիի[10] տեր Աբուհեշիմը և նրա հետ Պարսից ամիրա Համդոյի զորքը։ Ուղարկեցին Գուրգենի մոտ դեսպաններ, որպեսզի գա իրենց մոտ՝ առանց ամոթի ու երկյուղի և առանց մի կասկածի, միայն թե պատահեն միմյանց սիրով ու խաղաղությյամբ և (Գուրգենը) նրանից ստանա պատիվներ՝ ըստ զորապետի հրամանի և տիրի իր եղբոր փոխարեն, նրա ամբողջ երկրին։ Իսկ (Գուրգենը) նրանց մոտ հղեց դեսպան՝ ոմն Աբդլայի, որ ծանոթ էր զորապետին, տեսնելու, թե հաստա՞տ է, ինչ ասացին դեսպանները, թե՞ ստապատիր ձևով ջանում են կորցնել իրենց։ Բայց նրանք, չհայտնելով իրենց չար մտադրությյունը, վերադարձրին (Աբդլային), որպեսզի (Գուրգենը) առանց կասկածի գա իրենց մոտ։ Երկիցս, երիցս և բազում անգամ նույնը հաստատեցին երդմամբ, որպեսզի անվնհար համարձակությյամբ գա իրենց մոտ։ Եվ իրենց ամբողջ զորքը շարժեցին հայոց զորագնդի դեմ, ասելով (Գուրգենին). «Ահա մեկնեց մեր մոտից զորքը, և քչերն են մեզ մոտ. դու նույնպես սակավ կամ թե ավելի մարդկանցով եկ և հանդիպենք միմյանց»։ Այնժամ (Գուրգենը) տվեց զորքը Մուշեղ Ապուպելճի՝ Գուրգենի եղբոր ձեռքը, իսկ ինքը ելավ գնաց եկած կոշնակների եռևից։ Արգելեցին նրան մեծամեծ նախարարները,

քայց բնավ չանսաց որևէ մեկին։ Եվ ամենքը միասին լացեցին արտասվալիր։ Մինչև զորագլուխների մոտ հասնելը, (Գուրգենը) գնում էր (կոշնակներից) երկու մղոն հեռավորությյամբ։ Նրանք մտքներում դրել էին, որ եթե գա իրենց եռևից, կբռնեն նրան, զորքը կհուսահատվի, ու դյուրությյամբ կհաղթեն նրան։

Կիրակի օրվա երրորդ ժամն էր, երբ մեծաթիվ հեծյալներ շարժվեցին Սմբատա կոչված բերդի ավերակների կողմը։ Ավերվել էր նախկինում, պարսից զորքից։ Փողփողում էին զորագնդերի դրոշները առանձին-առանձին, և լեռը պատել էր զորքի բազմությյունը, իսկ գաղթականների կարավանը տեսնում էր զենքերի շաղափը, սրերի շողշողալը և այս ու այնտեղ ինչպես ոչխարները գայլերից՝ խուճապահար եղած հալածյալներին։ (Արաբների) զորքին իմաց էր տրվել, թե ինչ է կատարվում։ Նրանք ևս լսում էին, որ ձայնը զորքի է և հույժ սաստիկ։ Գետինն էլ ձայնեց, ամբողջ բազմությյունը աղաղակ բարձրացրեց, և կարծես հիմքերից լեռ տապալվեց։ Ահեղ որոտ էր, թնդյուն ու զարհուրանք։ Զենքերի սաստիկ փայլից, թրերի շողշողալուց և սպառազինված երիվարների զարդերից թվում էր, թե լեռն է այրվում հրից կամ ամպը շանթ ու որոտ է արձակում և ցած է գցում կայծակը՝ կարկտաբեր անձրևի ժամանակ։ Այդպես էր թվում նաև երիվարների խրխնջոցից ու արագ առաջ շարժվելուց։

Այնժամ, երբ Հայոց զորավարն իմացավ որ ոչ մի բանով չի կարող համաձայնեցնել նրանց, մանավանդ, որ միակամ հրամայեցին (արաբացոց) զորքին՝ ելնել պատերազմի, ուստի Գուրգենը իր զորագնդին հրամայեց պատրաստվել պատերազմի, կազմել մարտաշարքեր և կռվել այլազգիների դեմ։ Իսկ ինքը բարձրացրեց ձեռքերը դեպի երկինք, հորդ արտասուքներով աղոթեց, ասաց երեսուն ու չորրորդ և ութսուներկուերորդ սաղմոսները։ Եվ ահա այլազգիները մոտեցան մարտի մեջ մտնելու, իսկ զորագլուխները փութացին զորքի հետ։ Հայոց զորագունդը շարժվեց նրանց դեմ՝ վիմաձև, միմյանցից անքակ և ըստ ազգատոհմերի։ Արծրունյաց տոհմից՝ Գուրգենը, Վասակը, Պետքը, Մուշեղը, Սահակը, Ապումկղեմը և Աշոտը, Գնունիներից՝ Վահանը, Շապուհը, Ապուսեթը, Պատրիկը, Ապուսեքմը և Վարդանը, Գաղրիկյաններից՝ Ապուսեքմը, Վասակը և Վահանը, Ամատունիներից՝ Մուշեղը, Ասիթը և Սահակը, Վարաժնունիներից՝ Մլեհը, Ռստոմը և Վարազ-

շապուհը, Ընտրունիներից՝ Գևորգը, Հիսեն և Սահակը, Ակեացիներից՝ Վասակը, Վահևունիներից՝ Քաբարակը և Հրահատը, Անձևացիներից՝ Պատրիկը, Գևորգը, Դավիթը, Հասանը և Դավիթ զորապետը։ Կարգեցին, հորինեցին ճակատ։ Ինքը՝ Գուրգեն զորավարը, գլխավորեց ճակատի ձախակողմը, որպեսզի Թիկունք լինի հետևակազոր մարտակիցների զորագնդին, իսկ աջ թևը տվեց Ապումկոնմին։ Մյուսները մեկմեկու ետևից կանգնեցին մարտակարգում։...

Ապա խիտ շարքերով, հանդուգն հարձակմամբ դիմեցին առաջ, բախվեցին զորագնդին, ճեղքեցին ճակատը ու ետ դարձրին այլազգիներին։ Դուշում էին վիշապաձայն, պատառոտում առյուծաբար, խոցում ինչպես վարազը և մատնում էին մահվան ու պարտության։ Յուրաքանչյուր տղամարդ գետին էր գցում իր ախոյանին և նետվում մյուսի ետևից։ Բազմակուտակ նիզակների սաստիկ բախումից, զենքերի փայլից, սրերի շողշողալուց և լարված աղեղների սուլոցից կայծակ էր դուրս ցայտում, ինչպես ամպի որոտից, և թվում էր, թե լեռն այրվում էր հրից։ Պատերազմը երկարեց մինչև օրվա տասներորդ ժամը. այլազգիներին հասցրեցին մեծամեծ հարվածներ։ Սպանվածների թիվը 1800 էր, բացի բազում վիրավորները, ավարն ու ձերբակալվածները։...

Ջարդեցին, հալածեցին և ի փախուստ դարձրին զորքին։ (Հայոց զորագնդի) կեսը հետամտեց փախչողներին, մինչև գիշերվա մթության թանձրանալը, դուրս հանեցին Հայոց սահմաններից ոմանց Ելիի, ոմանց՝ Ատրպատականի ու Պարսից կողմերը։

Գլ. ե. Այնուհետև (արաբացոց) զորագլուխներն ընկան տարակուսական մտքերի մեջ՝ հայոց զորագնդերից իրենց զորքի կրած հարվածների պատճառով։ Գրել և իմաց տալ գլխավոր զորապետին չէին համարձակվում, ծածկել, թաքցնել չէին կարող, լուրթյամբ ու կնճռիքով ի վիճակի չէին հաճոյացնել զորապետին։ Հանձն չէին առնում հայտնել, ներկայացնել սպանվածների թվի մասին, և այն, թե սոսկ 900 տղամարդ զորեղ ձեռքերով հաղթեցին 15.000-ի։ Որովհետև ստուգեցին և իմացան, որ ամեն մի (հայ) տղամարդուց ընկել էին իրենց երկուսը, բացի վիրավորները, ավարն ու ձերբակալվածները։...

Այնուհետև (Բուղան) դարձյալ ուղարկեց Համդոյին՝ Պարսից ամիրային, արքունի զորապետներից ազդով Թուրք Հեթումին և

նրանց հետ 10.000 հեծյալներ, որոնք սպառազինված էին ավելի լավ, քան նախորդները։ Ապա գրեցին մի թուղթ, կնքեցին խորամանկությամբ, կեղծավորությամբ ու խարդախությամբ, ըստ Իսմայելի որդիների հնարագիտության։ Եվ մտան այնտեղ, ուր բանակել էր հայոց զորքը։ Թուղթն ուղարկեցին (Գուրգենին)։ Այն լի էր սատանայական հնարների թույնով, իբրև կապարճ, որ լի է թունավոր նետերով՝ աղեղից ծածկաբար դեպի նպատակը թռցնելու համար։

Իսկ (Գուրգենն) ընթերցեց նամակը, ուր գրված էր երդում՝ ի խայտառակություն նրանց կանանց և մոլար մարդարեի։ Հանձն էր առնում տալ նրան իրենց բնիկ տերության իշխանությունը։ (Երդվում էր) իրենց Մուհամմեդով։ (Գուրգենը) ելավ գնաց փառքի և իշխանասիրության ցանկության ետևից, որով և սխալվեց։

Այնժամ նրա ոտքերը դրեցին երկաթե կապանքների մեջ։ Նրա հետ էր նաև իշխան Գրիգոր Արծրունին, որը և նահատակվեց թագավորի առջև, հանուն Քրիստոսի դավանության։

Այնժամ հայոց բոլոր նախարարներն սկսեցին ցրվել-հեռանալ միմյանցից։ Գնացին և գրավեցին անմատույց տեղերը, ոմանք փութացին մտնել Վասպուրականի ամրոցներն ու բերդերը։ Իսկ զորքը քայքայվեց և ցրվեց երկրի երեսով մեկ։

Այնժամ, երբ (Բուղա) զորապետն իմացավ, որ ամեն ինչ հաջողվեց ըստ իր կամքի ու անօրեն թագավորի հրամանի, և գլուխ եկավ նրանց չար մտադրությունը, որ խորհել էին Վասպուրական աշխարհի իշխանության նկատմամբ և վերջ տվեց բոլոր զորավոր տղամարդկանց, ոչ ոք չկար այնուհետև, որ կարողանար իր սահմաններում փակել նրա առաջը։ Այնուհետև սկսեցին առանց երկյուղի համարձակությամբ սփռվել-տարածվել երկրի երեսին արաբների բոլոր ցեղերը, որ եկել էին նրա ետևից իրենց ընտանիքներով։ Եվ ձեռնամուխ եղան բաժանելու երկիրը իրենց մեջ։ Վիճակ էին գցում, լարեր ձգում սահմանների վրա և բնակվում էին երկրի ամրոցներում առանց վախենալու։ Մինչև իսկ որտեղից մի փոքր կասկած ունեին, այնտեղ նույնպես հաստատվեցին առանց երկյուղի։ Եվ մեծ նեղություն էր ամբողջ երկրում, որպիսին չի եղել ի սկզբանե աշխարհի և այլևս չի լինելու։ Ավերակներ դարձան գյուղերը, ագարակները և ամանները, որկվեցին

զարդարանքից ու վայելչությունից։ Երկրի երեսից վերացան զանազան բույսերի և ծառերի տեսակները։...

Եվ Բուղան հրաման տվեց այնուհետև, որպեսզի գերիների բազմությունը վաճառքի հանեն այլևայլ ցեղերի ու ժողովուրդների մեջ, ում որ դուր կգան։ Իսկ ինքը նլալ գնաց Դվին քաղաքը, այնտեղ պատրաստեց իրեն ձմեռոց, մինչև գարնանային ժամանակը, ունենալով իր հետ բազում կապյալներ։ Մեր երկիրն ավերվել էր իր ելումուտի ժամանակ։

1. Բուղա Նաւրաբի— արաբական զորավար, ազգությամբ թուրք, որն սկզբում եղել է ստրուկ, հետո ազատություն է ստացել և հասել զինվորական բարձր աստիճանի։

2. Ապահունիքը Տուրուբերան նահանգի գավառներից մեկն է, ներկայիս Մանազկերտի սանջակը։

3. Ուտումնասիրողները Հոդց գյուղը տեղադրում են Աղձնիք նահանգում։

4. Առվանից կամ Առվենից ձորը գտնվում էր Մոկք նահանգում։

5. Ոստան քաղաքը գտնվել է Վանա լճից հարավ, եղել է Ռշտունյաց նախարարական տան ժառանգական կենտրոնավայրը։

6. Նկան ամրոցը գտնվել է Վասպուրական գավառում, Վանա լճից հյուսիս-արևելք։

7. Որսիրանք գավառը գտնվել է Կորճայք նահանգում։

8. Ջողա լեռը գտնվում է Կորճայքի Որսիրանք գավառում։ Այժմ՝ Ջիլոգոզ։ Թուրքիայի և Իրանի սահմանագլխին։

9. Ջավ գետը Տիգրիսի վտակներից է։

10. Նլի կամ Այլի— Պարսկահայքի գավառներից է, գտնվում է Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ VII—IX ԴԱՐԵՐՈՒՄ

ԱՂՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՂԱՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Տե՛ս Սամուել Անեցու «Ժամանակագրության» հավելվածում, էջ 286)։

Կանոն և սահմանադրություն աղվանից ժողովի, որը տեղի ունեցավ եղիա Հայոց կաթողիկոսի[1] ժամանակ, որը 31-րդ գահակալն էր սուրբ Գրիգորից հետո:

Այն ժամանակ, երբ Միքայել քահանան կարգվեց քահանայապետության պաշտոնին, խոսեց իր աթոռակիցների հետ, որոնք են՝ Հովհաննես՝ Կապաղակի եպիսկոպոս, Սահակ՝ Ամարասի եպիսկոպոս, Եղիազար՝ Հոշո եպիսկոպոս, Իսրայել՝ Մեծկվանից եպիսկոպոս, Զաքարիա՝ Մեծքրյանց եպիսկոպոս և Հովակիմ՝ Գարդմանա եպիսկոպոս՝ երկրի բարեկարգության և հավատքի ուղղափառության համար։

Արդ, ես՝ Շիրո ապահի պատրիկ՝ Գարդմանա տեր և Աղվանից իշխան, Վարազ-Գրիգոր պատրիկ՝ Աղվանից սպարապետ, Բաբ Շահրփերոզյան, Զարմիհր՝ Վարազ-Գուրդաքյան տոհմից, Թեոդորոս՝ Վստամ-Հարևանյան, Ռոստոմ՝ Վաչագան-Վարազաքյան-Հունսատահյան տոհմից, Վահան՝ Վարազվահանյան տոհմից, Սմբատ՝ Քարոյան տոհմից, Մահումատ՝ Ղանքարյան տոհմից, Գրիգոր՝ Ռահատյան տոհմից, Պատրիկ՝ Քամղիտյան տոհմից, Արևքո՝ Վարոքյան տոհմից, Շիրո՝ Մերդանշահյան տոհմից, Վարդիշ հյուպատոս՝ Թամղիկյան տոհմից, Հայոց ՁԸ[2] թվականին կանոնեցինք այսպես, որ երբ դուք միջոցներ ձեռնարկեք քաղկեդոնական աղանդի և կամ Մայրագոմեցու և կամ պավլիկյանության

դեմ[3], ինչպես և խառը ամուսնությունների դեմ, ինչ էլ որ լինի, ոչ ոք իրավունք չունի դուրս գալ ձեր հրամանից։ Եթե մեկը դուրս գա, Աստծուց թող դատապարտված լինի, և դուք իշխանություն ունեք ըստ ձեր կամեցողության դատելու, և ոչ ոք իրավունք չունի օգնելու (դատապարտվածներին)։

Այս պայմանը, որ մենք կարդացինք, թող հաստատուն մնա։ Կնքեցի այս գրությունը ես Շիրո ապահի պատրիկ, Գարդմանից տեր և Աղվանից իշխան՝ բոլոր ազատների հետ միասին։

1. Նկատի ունի Եղիա I Արճիշեցի կաթողիկոսին (703—717)։

2. Քիչ հավանական է, որ VII դարի առաջին կեսում կարող էին գործածել հայկական թվականը։ Բայց եթե այդ իրողություն համարենք՝ հայոց ՁՀ թվականը կհամապատասխանի 639—640 թվականներին։

3. Սամուել Անեցու բնագրի հրատարակիչ Ա. Տեր-Միքելյանը «պավլիկյանց»-ը սխալմամբ վերծանել է «պայլի կենաց» երկու բառերով։

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻՆ ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հովհան Օձնեցին (VIII դ.) հայոց եկեղեցական գործիչ է։ Եղել է Հայոց կաթողիկոս (717—728)։ Կատաղի հակառակորդն էր պավլիկյան շարժման, որը արմատախիլ անելու նպատակով գումարել է Դվինի 720 թ. և Մանազկերտի 726 թ. եկեղեցական ժողովները։ Պավլիկյանների դեմ գրել է մի աշխատություն՝ «Ընդդէմ պաւղիկեանց» վերնագրով, որը գտնվել է նրա երկերի մատենագրության վենետիկյան հրատարակությունում (1833)։ Քրեստոմատիայում օգտագործված է այս հրատարակությունը։

Հովհան Օձնեցուց ստորև բերված բոլոր հատվածները աշխարհաբար է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը։

ԸՆԴԴԷՄ ՊԱՎԼԻԿԵԱՆՑԻ, էջ 34—47

Եթե սկզբնական ժամանակներում Հովհան Առաքյալն[1] իր Ընդհանրականում, խոսելով Քրիստոսի մարդեղանալու մասին, անհրաժեշտ համարեց նշել, թե «Աշխարհում երևացել են բազմաթիվ նեռեր, որից և մենք իմանում ենք, որ հասել է աշխարհի վերջը», ապա ի՞նչ ասենք մենք, երբ ունենք ավելի չարագույն և բազում նեռեր, քան անցյալ ժամանակներում։ Վերջերս ահավասիկ եկել և հանդիպել ենք այնպիսի ժամանակների, երբ երևացել են հետինից ավելի հետադեմ քարոզիչներ և վկայություններ։ Ես նկատի ունեմ մեր ժամանակները և մեր ժամանակի մարդկանց։ Ահա գտնվել է թակարդը, որը ինչպես թռչնորսների ցանց, ձգված է ազգակից ժողովրդի վրա՝ որսալու համար տխմարներին և պարզամիտներին։ (Դրանք նրանք են), որոնք մի չարագործությունից մյուսին են անցնում, պատկերամարտությունից՝ խաչամարտության և ատելությամբ են լցված դեպի Քրիստոսը, իսկ դրանից անխուսափելի երևում է անաստվածություն և դիվապաշտություն։ Խորամանկելով, նրանք կարողացել են գտնել իրենց չարությանը համակիր՝ քրիստոսասերների դեմ մահացու զենք կրող անձանց՝ դաշնակցության մեջ մտնելով կրավածների[2] և բռնակալների հետ։ Իրենց համբակների խմբավորությանն սկսել են սովորեցնել իրենց ստվերագիր և առասպելապատում գրքերով։ Քանի որ նրանց կամակորությունն ախորժելի դարձավ բանասարկու սատանային, ուստի զարմանալի չէ, որ նրանք դարձան նրա ընտանիքի համախոհ արբանյակները։

Վարագուրվելով մեր ճշմարիտ և աստվածավանդ կրոնով, նրանք հանդգնում են իրենց պղծալի շրթունքներով նախատել մեզ՝ կռապաշտներ անվանելով այն բանի համար, որ մենք պաշտում ենք խաչի նշանը։ Մենք համարձակ և անհողդողդ բանականությամբ այդ փառապանծ նշանը մարմնավորում ենք ամեն իրի մեջ։ Իսկ այն սարսափելի և պատկառելի է անգամ քերովբեից (հրեշտակների) համար, այն բուժիչ է հոգեկան ու մարմնական ախտերի և ահաբեկիչ ու զարհուրելի դևերի համար։ Հիմարացած և խելագարված այս նույն մարդիկ, հույսի անհավատությամբ, պախարակում են մարմնավորված աստվածային կենդանագրված պատկերը՝ մեջ բերելով սուրբ մարդարեների ասույթները, որոնք ասված են հեթանոսական կռամոլությունը հանդիմանելու նպատակով։ Նրանք չեն կարողանում տարբերել, թե ի՞նչ նմանություն կարող է լինել աստվածապաշտության և հեթանոսական բազմաստվածության միջև. մենք պաշտում ենք միայն Աստծու որդու պատկերը և հաղթության սուրբ նշանը, իսկ սատանան հեթանոսներին մոլորեցրել է անթիվ աստվածների պաշտամունքներով։

... Նրանք իրենց մահացածների դիակները դնում են ծածկված, վերևում՝ տանիքի վրա, երդիկի մոտ և հայացքը դեպի եր-

կինք ուղղած, երդվում են տարբեր խոսքերով, ասելով. «Երկնաչինը դիտեց», իսկ երբ կամենում են արեգակին աղոթել, ասում են «Արեգիկ», «Լուսիկ»։ Եվ ծածկաբար կոչում են երկնային դևերին՝ ըստ Մանեսի և Սիմեոն կախարդի մոլորվածությանն։

Նրանք նույնպես սպանում են կնոջ առաջին ծննդաբերած երեխային՝ իբր մեջ ձեռքից ձեռք ձգելով ու այդ միջոցով չարամահ անում։ Եվ այն մարդը, որի ձեռքում մահանում է երեխան՝ նրան նշանակում են աղանդապետ և պատվով մեծարում։ Մոլորվածության մեջ ընկած, նրանք երդվում են աղանդապետի անունով, ասելով. «Երդվում եմ միածին որդուն» և կամ՝ «Քեզ վկա ունեմ այն մարդը, որի ձեռքում միածին որդին հոգի տվեց»։

Եվ այսպես, տեսակ-տեսակ խաբեական խոսքերով, ծածկում են իրենց և անգետներին ու հավատացողներին իրենց քաշում։ Գորտերի նման, որոնք իրենց մարմնի կեսը ճահճի մեջ թաղած կռկռում են, մեկ երևում են ջրի մեջ, մեկ սուզվում, նույնն են անում նաև սրանք։ Տգմասերները և ժանտագործները անպատկառություն են ցույց տալիս պղծության մեջ, իսկ մեզ մոտ աշխատում են պատրողական խոսքերով ծածկել իրենց։ Բայց այդ անկարելի է, քանի որ նրանք չեն հասկանում, որ ինչպես չի կարելի ծածկել հոտը, որն անխուսափելի հասնում է մարդկանց հոտոտելիքներին, այնպես էլ նրանց գործը հողմի արագությամբ հասնում և լսելի է դառնում բոլորի ականջներին։ Բազմազան և խառնիխուռ նրանց չարությունը կուտակվում է, որովհետև, իրապես, սատանայական այս ուսմունքը հավաքվելով մի տեղ՝ ծովացավ նրանց ամբարշտությունը։

Նրանք նախկին մծղնեության-պավլիկյանության մնացորդ բեկորներն են։ (Ժամանակին) նրանք թեև խրատվեցին Ներսես կաթողիկոսի կողմից[3], բայց խելքի չեկան։ Կաթողիկոսի մահվանից հետո, խույս տալով, նրանք գնացին թաքնվեցին մեր երկրի մի տեղում։ Նրանց եկան միացան Աղվանից կաթողիկոսի կողմից կշտամբանքի ենթարկված որոշ թվով պատկերամարտներ, որովհետև ճշմարտություն չսիրողները համակրում են իրար։ Այն ժամանակ, երբ դեռ չէին գտել իրենց առաջնորդ Նեռին՝ վախենում և սարսափում էին իրենց ճշմարիտ ու գերապանծ քրիստոնեական կրոնից, մանավանդ որ անզգամներն իրենք էին դատապարտում իրենց տանջող խորհուրդները։ Բայց երբ նրանք մեծամտացան,

կարծելով թե իրենք իբրև թե հասել են ինչ-որ մի մեծ բանի և նորության, որն, իրականում, հին էր և մաշված, այն ժամանակ սողալով դուրս եկան իրենց դարանամուտ որջերից աշխարհամեջ և ժողովրդարնակ վայրեր։ Նրանց մի մասը հասավ հեղեղուն և հեղձուցիչ այն ջրի մոտ, որը կոչվում է Ջրկա։ Բոլոր վայրերից ամենքն այստեղ խմբվեցին, ինչպես երկրի անդղները՝ գեշի վրա։ Եվ նրանք իրենց անունները սկսեցին կապել նրանց հետ, որոնք ընդունել էին հույսով և կապել իրենց երկնային բարությանը։ Եվ ընտրված մարդկանցից նրանց վրա, ովքեր աստվածային հավանության են արժանի, նրանց վրա, ովքեր երկրի վրա երկնային կատարյալ վարքով են ապրում, անամոթաբար փորձեցին թափել իրենց անհաջողության մաղձը, նրանց անվանելով կուռք պաշտողներ։

... Շատ ձգձգվեց մեր խոսքը, որովհետև մենք նպատակ ունենք պապանձեցնել լեզվագարների պոռոտախոսությունը, որոնք ծամածռված խաթարանքով նպատակ ունեն վարկաբեկել մեղ՝ կռապաշտ անվանելով։ Այս մասին տեղին է ասել, որ «Ով անօրեններից է, նա անօրինություններ է գործում»։ Բայց դուք դուրս եկեք նրանց միջից, մեկուսացե՛ք և պիղծ մարդկանց մի՛ մոտեցեք, որովհետև ամեն մի տունկ, եթե Աստծո կողմից չի տնկված, արմատախիլ կլինի։ Այս ամենը մենք ներկայացնում ենք Բարձրյալին, որի ամենազոր բազուկը կարող է այրել որպես հեթանոսական բույս՝ ինչպես ազարակի փուշ, արմատախիլ անել և դեն նետել՝ քշելով նրանց երկրի դաղանների և երկրի թռչունների որջերը և թաքստոցները։

Այժմ նա ինքն է կոչում մեզ դիմադարձ լինել երկփեղկված և իբար դեմ մենամարտի մտած այլացեղ ղորքի դեմ՝ որը մեզ ամբարտավան ձևով մարտի է հրավիրում, ինչպես եղել է իր ժամանակին (Գողիաթ) Գեթացին՝ Դավթի հետ։ Նրանք սպառնում են ոչնչացնել մեր կենսատու հավատը օձի լեզվի նման, լեզվի սուր նետերով։ Նրանք ճախրում են թռչունների նման դյուրադարձ՝ հոխորտալով կապել մեզ և գաղանաբար հոշոտել։ Դրա համար մենք, որ զինված ենք աստվածային սպառազինությամբ, հավաքենք մեր ղգացմունքների ամրությունը այս անցավոր աշխարհում՝ պահպանելով այն մեր հոգեկան խորհրդարաններում։ Եվ դրանցից ընտրելով ուժեղագույն ու պատշաճ խոսքեր և դնելով դրանք պար-

սատիկի մեջ, դիպուկ հարվածով ջախջախենք այն, ինչ նրանց մոտ ամենից վեհագույնն ու գերազանցն է (համարվում), որպես չարաբաշտության արդասիք։ Մենք նրանց կոչնչացնենք հենց իրենց գարշելի ասածներով, կմերկացնենք և կոչնչացնենք իրենց ընում՝ դերի կվերցնենք նրանց փքված խորհուրդը, որը թշնամանք է և՛ Աստծու, և՛ մեր դեմ։ Նրանք չեն գավանում մեր հավատը և չարամտում են և կեղծում՝ ասելով, թե համաձայն են մեզ հետ և մեր համակիրներն են։ Նրանց այդ դժնդակությունն առանձնապես վտանգավոր է մեզ համար, որովհետև խոսքով ընկեր են ձևանում, իսկ գործով դեպի իրենց են քաշում։ Նրանք հաջողության համար ընտրել են մի ուղի, այդ՝ կեղծելն է և վարկաբեկելը, այդ՝ ստելն է և կեղտոտ լուտանքներ հասցնելը։

Իսկ մենք նրանց երկուսից էլ հեռու ենք այնպես, ինչպես լույսը հեռու է խավարից, ինչպես որ բարեկամություն չի կարող լինել գայլերի և ոչխարների միջև։ Իհարկե, փոքր թշնամություն գոյություն չունի նրանց միջև, որովհետև նրանք իրենց աղանդներով տարբերվում են իրարից. մեկը մի ճանապարհով է ընթանում, մյուսը՝ մի ուրիշ։ Բայց նրանց բոլորի ուղին միանում է մի կետում, որը հավասարապես տանում է նրանց դեպի մոլորություն, որոնք անհարիր են և անհասանելի մարդկության խոսքին։

1. Նկատի ունի ո՛չ թե Հովհաննես Ավետարանիչին, ինչպես սխալմամբ կարծել են ոմանք, այլ Հովհան Առաքյալին։

2. «Կրտվածներ» ասելով՝ նկատի է ունեցել մահմեդական արաբներին։ Վենետիկի հայերեն անհարմար համարելով այդ բառի գործածությունը, 1833 թ. բնագրում բաց են թողել կախման կետերով։

3. Բանասիրության մեջ վեճ է առաջացել, թե խոսքը որ Ներսեսի մասին է. մինչև VIII դարը Ներսես անունով երեք կաթողիկոս է հայտնի՝ Ներսես Պարթև (353—373), Ներսես Բագրեւանդցի (548—557) և Ներսես Իշխանեցի (641—661)։ Օձնեցին, անշուշտ, նկատի ունի երրորդ Ներսեսին՝ Ներսես Իշխանեցուն, որը հայտնի է «Շինող» մականունով։ (Պավլիկյան շարժման մասին տե՛ս Ստ. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953)։

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ[1] ՄՂՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, հատ. Ա, էջ 534—535

ԻԲ. Չպետք է բոլորովին անտարբեր գտնվել և հաղորդություն ընդունել հերձվածողների հետ, այլ պետք է խորշել նրանցից.

չպետք է մասնակցել նրանց հոգեկան և մարմնական սեղաններին, այլ պետք է պատկառող և փափագող լինել միաբանական ուղղափառ ավանդներին։

ԼԲ. Չպետք է չարաղանդ մծղնեականներին[2], որոնք կոչվում են պավլիկյաններ, օթևանելու տեղ տալ կամ միանալ նրանց, խոսակցել նրանց հետ, երթևեկություն անել, այլ պետք է բոլորովին հեռանալ նրանցից, դարշել և ատել նրանց, որովհետև սատանայի որդիներ են և հավիտենական հուրի լուցկիներ. նրանք հեռացել են Արարչին սիրելու կամեցողությունից։

Եթե լինի մեկը, որը հարի նրանց, սիրալիրություն և բարեկամություն անի նրանց հետ, պետք է այդպիսիներին խոշտանգել և ծանր պատիժների ենթարկել։ Իսկ եթե նա վերստին այդ հանցանքում գտնվի, հրամայում ենք ազատել, դուրս վտարել (համայնքից) իբրև Քրիստոսի եկեղեցու անդամության ախտակիր ժանգ, որպեսզի «դառնության արմատը ծավալվելով չնեղի, նրանից շատերը չպղծվեն»։

1. Հովհան Օձնեցու կանոնները հրատարակվել են նաև հեղինակի երկերի մատենագրության հատորում՝ «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւն» խորագրի ներքո՝ 1833 թ. Վենետիկում (էջ 24—33)։

2. Մծղնեական աղանդի մասին հանգամանորեն գրել է Ե. Տեր-Մինասյանը (տե՛ս «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից», Երևան, 1968, էջ 114—148)։

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Գրիգոր Մագիստրոսը XI դարի ականավոր գիտնական, մանկավարժ և հաղթական գործիչ է։ Սերում է Պահլավունյաց իշխանական տնից։ Գործուն մասնակցություն է ունեցել իր ժամանակի Հայաստանում տեղի ունեցած հասարակական և հաղթական իրադարձություններին։ Որոշ տարիներ ծառայության մեջ է գտնվել Բյուզանդիայում. 1048 թ. նշանակվել է Միջագետքի կուսակալ։ Առտակարգ սեր է ունեցել բնափիլիսոփայության նկատմամբ և ամեն կերպ աշխատել է վերականգնել անտիկ գիտության ավանդույթները հայ իրականության մեջ։ Մեզ են հասել նրա մի քանի աշխատություններ՝ «Մեկնություն բերականության», «Եվկ-

լիդեսի երկրաչափությունը» և այլն: Նամակագրական կապերի մեջ է գտնվել աշխի ընկնող բաղաքական և գիտական գործիչների հետ:

Նրա նամակագրությունը՝ «Թղթեր» վերնագրով, 1910 թ. հրատարակել է Կ. Կոստանյանցը՝ Ալեքսանդրապոլում: Այդ հրատարակությունից ստորև բերված հատվածը աշխարհաբար է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը:

ԹՈՒՂԹ ԿԷ

Պատասխան Ասորաց կաթողիկոսի գրության, որը գրված է Գրիգոր Մագիստրոսին այն ժամանակ, երբ նա Վասպուրականի և Տարոնի դուքսն էր: Այն բանից հետո, երբ Գրիգոր Մագիստրոսը Հռոմեական երկրում արմատախիլ արեց մանիքեականներին և պավլիկյաններին, խորտակիչ այդ ժողովրդի մնացորդները գնացին Ամիդ՝ Ասորաց կաթողիկոսի մոտ այն նույսով, որ կկարողանան խաբեության միջոցով համոզել նրան: Այդ առիթով նա (Ասորաց կաթողիկոսը— Ա. Ա.) գրություն ուղարկեց Աշշակունի Գրիգոր Մագիստրոսին: Ահա այդ գրության բովանդակությունը.

... Պավլիկյաններին, որոնք հախարդված են Պողոս Սամոսատցուց, երբ մենք փորձում ենք հարցնել, պատասխանում են, որ «Մենք քրիստոնյաներ ենք»: Ամբողջ Ավետարանը և Առաքելոց դիրքը նրանք բերանացի գիտեն: Իսկ երբ հարցնում ենք՝ քե դուք ինչո՞ւ չեք մկրտվում, ինչպես պատվիրել են Քրիստոսը և առաքյալները, պատասխանում են, քե «Դուք չգիտեք մկրտության խորհուրդը. մեզ պետք չէ մկրտվել, որովհետև մկրտությունը՝ մահ է: Եվ Հիսուսը խորհրդավոր ընթրիքի ժամանակ պատարագելու մասին ոչինչ չի ասել»: Եվ ասում են. «Մենք սիրում ենք Պողոսին, իսկ Պետրոսին անիծում: Եվ Մովսեսը ո՛չ քե Աստծուն է տեսել, այլ՝ սատանային»: Եվ ասում են. «Երկինքը և երկիրը և մարդկային սերը ամբողջապես սատանայի ստեղծածներն են»: Եվ իրենք իրենց անվանում են քրիստոնյաներ:

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

(Թարգմանությունները նումարեն բնագրերից և ծանոթագրությունները Հ. Մ. Բարթիկյանի)

I

ԹԵՈՓԱՆԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ

Սնվել է 752 թ. Կոստանդնուպոլսում, օծվելով կուսակրոն, նա Պրոպոնտիսի ափին՝ Սիգրիանեի մոտ կառուցում է Ագրոս կոչվող մեծ վանքը՝ դառնալով նրա վանահայրը: Նա կատաղի պատկերապաշտ էր, որի համար հալածվում է պատկերամարտ կայսրերի կողմից, ապա և բանտարկվում: Լևոն V Հայկազը նրան աքսորում է Սամոթրակե կղզին, որտեղ և 818 թ. վախճանվում է:

Իր ընկեր Գեորգիոս Սինկելլոսի դրդմամբ գրել է «ժամանակագրություն», որը շարունակությունն է հիշյալ Սինկելլոսի պատմական երկի: Սկսվում է Դիոկղետիանոս կայսրից (284 թ.) և ավարտվում Միխայել I Ռանգաբե կայսեր թագավորությամբ (813 թ.): Մինչև VII դարի դեպքերի շարադրության համար օգտագործել է մեզ հասած աղբյուրները: VII դարի սկզբից մինչև 813 թ. պատմության համար Թեոփանեսը բյուզանդական ամենակարևոր և (եթե նկատի չունենանք Նիկեփոր պատրիարքի «Համառոտ պատմությունը») միակ աղբյուրն է, հանգի նրա օգտագործած աղբյուրները, հավանաբար, պատկերամարտ հեղինակների գրչին պատկանող, ոչնչացվել են: Վերջին ժամանակաշրջանի համար Թեոփանեսն ականատես պատմիչ է:

Թեոփանեսի պատմական երկը շարադրված է ժամանակագրական սկզբունքով՝ տարի առ տարի: Հեղինակն օգտագործել է աշխարհի արարչագործության Ալեքսանդրյան թվականը, որի 5493 թ. համապատասխանում է մ. թ. առաջին թվականին, ի տարբերություն Բյուզանդական կայսրության մեջ տարածում գտած այսպես կոչված Կոստանդնուպոլսի թվականի (5508=1):

873—875 թթ. Թեոփանեսի «ժամանակագրությունը» Հռոմի պապի ճվիրակ Անաստասիոս Բիբլիոթեկարիոսը լատիներեն է թարգմանել:

Մեր թարգմանությունն իրականացված է բնագրի հենական

հրատարակությունից. Theophanis Chronographia, recensuit Carolus de Boor, vol. I textum graecum continens, Lipsiae, 1883.

էջ 427

«... Այդ նույն տարին [752 թ.] Կոստանդինը[1] գրավեց Թեոդոսուպոլիսն[2] ու Մելիտենեն[3] և հայերին գերի վերցրեց...»:

էջ 429

«... Այդ տարին [756 թ.] ... Կոստանդին կայսրը Թեոդոսուպոլսից ու Մելիտենեից բերած ասորիներին ու հայերին Թրակիա վերաբնակեցրեց: Սրանցից [այնտեղ] պավլիկյանների աղանդը տարածվեց...»:

էջ 488

«... [Նիկեփոր կայսրը՝ 802—811] իր մոտիկ հարևանների՝ Փռյուգիայում և Լիկաոնիայում[4] բնակվող մանիքեցիների, (որոնց այժմ պավլիկյաններ են կոչում), ինչպես նաև աթինգանների[5] ջերմ բարեկամն էր: Նա հրճվում էր նրանց գուշակություններով ու խորհուրդներով: Երբ պատրիկ Վարդանը[6] իր դեմ ապստամբության բարձրացրեց, նա նրանց հմայություններով նրան ճնշեց. մի փոսի մեջ եղջյուրներից երկաթե ցցին կապեց գլուխը գետին խոնարհած մի ցլի, և երբ նա բառաչում էր ու դես ու դեն ընկնում, սպանել տվեց, ապա նրա կաշին հակառակ կողմը պտտվող աղացում աղաց և կախարդական երգերի դիմելով, հաղթանակ տարավ, որը նրան Աստված ընձեռեց մեր բաղում մեղքերի պատճառով: Նրանք նրա թագավորության օրոք սկսեցին աներկյուղ գործել և թեթևամիտներից շատերը կործանվեցին նրանց անօրեն գաղափարներից...»:

էջ 494—495

«... Ամենաբարեպաշտ կայսրը՝[7] Աստծո նկատմամբ մեծ ջանասիրությամբ դրդված, հանդես եկավ մանիքեցիների՝ ժամանակակից պավլիկյանների դեմ, ինչպես նաև Փռյուգիայում ու Լիկաոնիայի աթինգանների, սրբաղնագույն պատրիարք Նիկեփորի[8] և բաղում այլ բարեպաշտ մարդկանց խորհրդով նրանց մահապատիժ սահմանեց, բայց այլ փշացած խորհրդականների առաջարկությամբ՝ իր մտադրությունից ետ կանգնեց, իբր թե աղանդավորները կզղջան: Այդ մոլորությամբ հափշտակվածների համար զղջալն անհնարին բան էր: [Խորհրդականները] տգիտաբար քարոզ էին կարդում, թե հոգևորականների համար վայել չէ ամբարիշտներին մահապատիժ սահմանել, թեև Սուրբ Գիրքը այդ բանին հակասում է: Եթե մեծագույն առաքյալ Պետրոսը Անանիային ու Սափիրային սոսկ ստելու համար սպանեց[9], իսկ Պողոս առաքյալն էլ գրում է, թե «այդպիսիները մահվան են արժանի» և դա սոսկ մարմնական մեղք գործողների համար, ապա հոգեկան ու մարմնական աղտեղությամբ լի, դևերին պաշտող այս մարդկանց սրով փրկվելը ինչպե՞ս թե հակասում է [Սուրբ Գրոց]: Բայց այդուհանդերձ բարեպաշտ կայսր Միքայելը նրանցից շատերին սրակոտոր արեց...»[10]:

1. Կոստանդին V Կոպրոնիմոս, բյուզանդական կայսր (741—775):
2. Հայոց Կարինը, այժմ՝ Էրզրում:
3. Այժմ Մալաթիա՝ Թուրքիայում:
4. Փոքրասիական թերակղզու արևմտյան կեսի կենտրոնում գտնվող նահանգներ:
5. Աղանդավորներ, որոնց որոշ ուսումնասիրողներ նույնացնում են գնոստների (ցիգանների) հետ:
6. Անատոլիկոն բանակաթեմի զորավար, մականունը «Թուրք»: Հայազգի պատրիկ էր, ապստամբելով Նիկեփոր I կայսեր դեմ, 802 թ. հուլիսի 19-ին իրեն կայսր հայտարարեց, բայց շուտով տեղի տալով՝ վանական դարձավ:
7. Նկատի ունի Միքայել I-ին (811—813):
8. Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփոր (806—815):
9. Համմ. «Գործք առաքելոց», ե, 5:
10. Համմ. Պետրոս Սիկիլիացու աշխատության մեջ, պարբերություն 175:

II

ՆԻԿԵՓՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ

Ծնվել է VIII դարի կեսերին և վախճանվել 828 թ.: Եղել է Կոստանդնուպոլսի պատրիարք 806-ից մինչև 815 թվականը: «Համառոտ պատմությունը» գրել է այն ժամանակ, երբ դեռ հոգևորական չէր: Ընդգրկում է 602—769 թթ. պատմությունը: Առանձին տեղերում նրա շարադրանքը բառացի համընկնում է Թեոփանեսի «ժամանակագրության» հետ, մի բան, որ միևնույն աղբյուրից

օգտվելու մասին է վկայում: Նիկեփորը հետևողական պատկերապաշտ էր, բայց իր ստեղծագործությունը դեպի պատկերամարտները ավելի զուսպ է արտահայտում, քան Թեոփանեսը:

Նիկեփորը 817 թ. գրել է նաև երեք մասից բաղկացած «Հակաճառություններ» ընդդեմ Կոստանդին V-ի հայացքների, ներքին ու արտաքին քաղաքականության: Ջի պահպանվել Նիկեփորի՝ աղանդավորների դեմ գրած մի ընդարձակ ուսումնասիրությունը, որի մասին հիշատակություն կա Նիկեփորի կենսագրության մեջ, որն աշխատասիրել է Իգնատիոս Սարկավագը:

«Համառոտ պատմության» այստեղ բերված առանձին հատվածների հայերեն թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Sancti Nicephori patriarchae Constantinopolitani Breviarium historicum de rebus gestis post imperium Mauricii, **Migne**, Patrologia graeca, t. 100.

«Հակաճառություններից» քաղված հատվածները՝ Nicephori patriarchae Constantinopolitani Antirrheticus adv. Const. Copr., **Migne**, Patrologia graeca, t. 100.

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

սյունակ 973

«... Կոստանդինն[1] այնուհետև իր որդի Լևոնին[2] կայսր թագադրելով, անհապաղ պատերազմի է դիմում սարակինոսների դեմ: Հասնելով մելիտենացվոց քաղաքը, պաշարում և գրավում է այն, բազում ժողովուրդ գերեվարում և հսկայական ավար տանում...»:

սյունակ 976

«... Կոստանդինն սկսեց կառուցել Թրակիայի քաղաքները, որտեղ բնակեցնում է մելիտենացվոց քաղաքից և Թեոդոսուպոլսից գաղթեցրած ասորիներին ու հայերին, սիրալիր կերպով նվիրելով նրանց կարիքներին անհրաժեշտ ամեն ինչ...»:

ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿՈՊՐՈՆԻՄՈՍԻ

սյունակ 508—509

«... Երբ նրանց[3] միջև բռնկվեց քաղաքացիական պատերազմ և վեճը լուծվում էր զենքով, երբ նրանք սկսեցին միմյանց ոչնչացնել, (Կոստանդինն) ավելի ավազակաբար, քան ռազմագիտաբար,

կատաղածի պես ներխուժում է Հայաստանի տարածքը և բնակիչների համաձայնությամբ գրավում նրա բերդերը: Նրանք հայ և ասորի քրիստոնյաներ էին: Ջհանդիպելով որևէ այլադավանության և խախտելով երդումներով հաստատված ապահովության մասին պայմանները[4], նա նրանց գաղթեցնում է Թրակիայի գյուղերը...»:

1. Նկատի ունի Կոստանդին V-ին (741—775):

2. Ապագա կայսր Լևոն IV Խազարը (775—780): Նախօրոք թագադրվեց և հոր կողմից կայսերակից հռչակվեց հարստության գոյատևումն ապահովելու համար:

3. Նկատի ունի Օմայանների և Աբասյանների գահակալական կռիվները, որ սկիզբ առնելով 748 թ., ավարտվեցին 750 թ.՝ Աբասյանների հաղթանակով և նրանց հարստության հաստատմամբ:

4. Հավանաբար հայերի և ասորիների հետ հաստատված:

III

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ

Իգնատիոսը Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա եկեղեցու սարկավագն էր ու լուսարարը: Հասավ մինչև Նիկիայի մետրոպոլիտի աստիճանին: Գրել է Տարասիոս (784—806) և Նիկեփոր (806—815) պատրիարքների «Վարք»-երը և այլ գործեր: Նիկեփոր պատրիարքի «Վարք»-ը մեր թեմայի համար կարևոր է իր այն վկայությամբ, որ պատրիարքը շարադրել և կայսրին է ներկայացրել աղանդների դեմ գրած իր մի գիրքը, որտեղ խոսվում էր նաև մանիքեցիների (իմա՝ պավլիկյանների) մասին: Այդ գիրքը, դժբախտաբար, կորել է:

Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից. S. P. N. Nicephori Constantinopolitani archiepiscopi Vita scripta ab Ignatio diacono et cimeliarcha sanctissimae et magnae ecclesiae Sanctae Sophiae, ejus discipulo, **Migne**, Patrologia graeca, t. 100.

Գլուխ IV, պարբ. 26,
սյունակ 69

«... Նռանդը նրան[1] դրդում էր այլ ճանապարհով հանդես գալ անհավատ ու հրեշավոր աղանդավորների դեմ, որոնք այն ժամա-

նակ իրենց հիմարության պղծությամբ լի խորհուրդները կատարում էին առանց ամաչելու։ Ես նկատի ունեմ հրեաներին, փոյուգիացիներին և Մանիի աննգամիտ անհավատության խմիչքը դեռ անցյալում ճաշակածներին[2]։ Նա հանդամանալից գիրք շարադրելով նրանց հրեշային կրոնի մասին, կայսրին[3] տեղյակ պահեց, (գրքում) զրույցի ձևով ցույց տվեց, թե ինչպես աղանդավորները (նրա այսուհետև ևս նրանց թույլ տրվի ուզածը գործել) համայն հասարակությունը պիտի պատուհասեն կարծես փտախտով։ Նա իր գրքում խարազանում է հրեաների Տիրասպանությունը, փոյուգիացիների հրեշավոր ծաղրը, խոցում մանիքեական ցնդաբանությունները, այնպես, որ նրանք չհամարձակվեն իրենց պղծությունն առոգանել և իրենց խաբեության հիմարությունները թաքուն ու գաղտնի չշնջան։ Քանի որ իշխանությունները արգելել են նրանց բացահայտ արտահայտվել, ապա այդ ամբարիշտները խուսափում են անգամ որևէ բան թաքուն գործել...»։

1. Նկատի ունի Նիկեփոր պատրիարքին (806—815)։

2. Խոսքը պավլիկյանների մասին է, որոնց գաղափարախոսության հիմքը վարքագիրը համարում է մանիքեությունը։

3. Այսինքն՝ Միքայել I-ին (811—813)։

IV

ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐԻՈՍԻ «ՎԱՐՔ»-Ը

Մակարիոսը ծնվել է Կոստանդնուպոլսում VIII դարի երկրորդ կեսին։ Մտել է Բյութանիայի Պելեկետեի ս. Հովհաննես վանքը։ Լինելով ծայրահեղ պատկերապաշտ, Լևոն V-ի կողմից աքսորվել է։ Նրան աքսորում են պահել նաև Միքայել Բլվատն ու Թեոփիլոսը։ Վախճանվել է Պրոպոնտիսի Աֆուսիա կղզում՝ Թեոփիլոս կայսեր ժամանակ (829—842 թթ.)։

«Վարք»-ը պավլիկյանների պատմության ուսումնասիրության համար կարևոր է այն տեսակետից, որ ապացուցում է նաև պատկերամարտ կայսրերի քշնամական վերաբերմունքը պավլիկյանների նկատմամբ, որ պավլիկյան շարժումը դասակարգային էր՝ ուղղված ֆեոդալական շահագործման դեմ, անկախ այն բանից,

պատկերապաշտների ձեռքում էր գտնվում պետական իշխանությունը, թե պատկերամարտների։

Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից. S. Mncarii monasterii Pelecetes hegumeni, acta graeca. In «Analecta Bollandiana», t. XVI, Bruxelles, 1897.

էջ 159

«13. ... Անարդար դատավորը[1], լսելով այդ խոսքերը, զայրույթը տխմարության հետ խառնելով, խարազանով չարաչար խոշտանգեց սրբի մարմինը։ Չարչարանքներին հաջորդում է բանտը, որտեղ սուրբը շարունակում էր հրաշագործել՝ մարգարեանալով և ապագան կանխագուշակելով։

14. (Նույն) բանտն էին նետվել նաև պավլիկյաններ, այն է՝ մանիքեցիներ, որոնք մահվան դատապարտվեցին։ Սուրբը հորդորում էր նրանց՝ իրենց համար ելից աղոթքը[2] կատարի, բայց ինչպես ասաց սուրբը՝ «լույսն ու խավարը անհամատեղելի են[3] և հենց դրա պատճառով է, որ դուք ստանալու եք ամբարշտության արժանի պատիժ, այդ պատժով չեք պրծնելու, այլ դրանից հետո գնալու եք դեպի դժոխքը հավիտենական»։ Դրա վրա մահապարտներից մեկը որպես փրկության դրավական խոստացավ դարձի գալ և ասաց, թե մտերմանում է սրբին և հավանություն տալիս[4]։ Մակարիոսը սեփական խոսքով կնքեց նրան։ Բոլորն էլ մահապատժի ենթարկվեցին, բայց փրկվեց միայն այդ մեկը, նա իր խոստումն էլ կատարեց՝ հրաժարվեց պիղծ աղանդից և ընդունեց բարեպաշտության լուսավոր դոգմանները...»։

1. Նկատի ունի Թեոփիլոս կայսրին (829—842)։

2. Աղոթք, որ կատարում են մահամերձների վրա։

3. Համմ. «Պաւղոսի առաքելոյ առ Կորնթացիս երկրորդ թուղթ», 2, 14 (այսուհետև՝ Բ Կորնթ.)։

4. Մակարիոսին, որպեսզի նա իր վրա կարդա ելից աղոթքը։

V

ՊԵՏՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ

Վաճական էր, Վասիլ I-ի (867—886) թագավորության սկզբում կայսեր կարգադրությամբ եղել է պավլիկյանների մայրաքա-

դամ Տիվրիկում (Տեֆրիկե) ռազմագերիների փոխանակության ճարտով: Ինձ ամիս մնացել է այնտեղ և հանգամանորեն տեղեկացել շարժման պատմությանն ու գաղափարախոսությանը, այդ մասին գրելով «Պիտանի պատմություն» վերնագիրը կրող իր աշխատության մեջ: Բացի բանավոր տվյալներից, ձեռքի տակ է եղել աղանդավորների շրջանում գրված պավլիկյանների մասին պատմությունը, ինչպես և խոշորագույն աղանդապետ Սերգիոսի (801—835) նամակները, որոնցից առանձին հատվածքներ մեջ է բերել իր պատմական երկում: Պավլիկյան շարժման պատմության ամենագլխավոր աղբյուրն է:

Պետրոս Սիկիլիացին գրել է նաև պավլիկյանների գաղափարախոսության դեմ ուղղված վեց ճառ, որոնցից պահպանվել են առաջին երկուսը և երրորդի սկիզբը: Մինչև վերջերս պավլիկյանների մասին գրած Պետրոս Հեգումենոս անունով հեղինակը նամարվում էր Պետրոս Սիկիլիացուց տարբեր անձնավորություն: Այժմ ապացուցված է, որ նա նույն Պետրոս Սիկիլիացին է, ըստ այդմ էլ մենք այդ երկու գործերը, որպես մեկ հեղինակի երկասիրություններ, բերում ենք միասին:

Պետրոս Սիկիլիացու երկու աշխատությունների հայերեն թարգմանությունը կատարված է բազգրի ճենական հրատարակությունից. Ch. Astruc, W. Conus-Wolska, J. Gouillard, P. Lemerle, D. Papachryssanthou, J. Paramelle, Les sources grecques pour l'histoire des Pauliciens d'Asie Mineure, In «Travaux et Mémoires» du Centre de Recherche d'Histoire et Civilisation byzantines, 4, 1970.

ՊԵՏՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԵՂԵՌՄ ԵՎ ԽՈՐՏԱԿՈՒՄ ՄԱՆԻՔԵՑԻՆԵՐԻ (ՈՐՈՆՔ ՆԱԵՎ ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ) ՍԻՆ ՈՒ ԱՆՀԵԹԵԹ ԱՂԱՆԴԻ՝ ՇԱՐԱԳՐՎԱԾ ԲՈՒԱՎԵՁԻ ՋԵՎՈՎ ԵՎ ՀԱՄԵՑԱԳՐՎԱԾ ԲՈՒԼՂԱՐԻԱՑԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ[1]

1. Թեպետև լավ է, որ տխմարությունը լռությամբ է սքողվում, բայց անհրաժեշտ է երկար լռության չմատնել այն, ինչ լռության արժանի չէ, քանզի «Տէր բանայ զաչս կուրաց»[2] *և հավատքից բխող խոսքերից նախընտրում է հատկապես քրիստոնյաները և ոչ թե հռետորների ցանցապատ ճառերը, որոնք մոլորեցնում են լաբիրինթոսի նման: 2. Արդ և ես, թեև չեմ փայլում ճառելու ընդունակությամբ, կոչ անելով Սուրբ Երրորդությանը՝ միակ ճշմարիտ Աստծուն, ով փառաբանվում է «ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յամենեսին ի մեզ»*[3]*, ով լցնում է ամեն մի բերան, որը բացվում է հանուն նրա*[4]*, ապա և խնդրելով զորավիգ ունենալ ձեր, ո՛վ Տիրոջ նորընտիր սուրբ և պատվավոր հոտի առաջնորդ*[5]*, քեզ ենթակա բոլոր աստվածային հովիվների և եկեղեցու համայն կազմի աղոթքները, որոշեցի ձեզ համար շարահյուսել մանիքեցիներին*[6] *(որոնք նաև պավլիկյաններ են կոչվում) պիղծ աղանդի մասին, ո՞րտեղից, ինչպե՞ս և ո՞ւմ միջոցով այն մոլեգնորեն հասցրեց ներկա ապստամբության: Արդ, չկարծեք, որ պավլիկյաններն ու մանիքեցիները տարբեր բաներ են, նրանք նույնն են և նախորդ աղանդավորների դոգմաների վրա բարդելով իրենց հորինած պիղծ դոգմաները, կորստյան միևնույն խորխորատը փորեցին: Թեպետև իրենք պնդում են, որ (մանիքեցիների) գպրոցական ծուլություններին անհաղորդ են, այդուհանդերձ, նրանց դաղափարների ճշգրիտ պահապաններն են:*

4. Ես ստիպված այս գործին ձեռնամուխ եղա: Աստծո կողմից օծված, աստվածային բոլոր շնորհքներով գերբնականորեն օժտված, հռոմեական[7]*, դու ասա ամենաքրիստոնյա իշխանության գայիսոնը բարեպաշտորեն ու աստվածասիրությամբ վարող (որ և կվարի նա դեռ բազում տարիներ իր սուրբ և աստվածապսակյալ որդիներով, մեր կայսրերով*[8]*, որոնց անվերջ ու հավիտենական հիշատակը կպահպանվի այս և ապագա դարերում՝ մեր սրբազնագույն Տիրուհու, միշտ կույս աստվածածին Մարիամի և համայն սրբոց աղոթքներով ու միջնորդությամբ) մեր մեծ կայսեր*[9] *թագավորության սկզբում կայսերական հանձնարարությամբ ես եղա այնտեղ: Մեր ծառայությունը գնրիների փոխանակություն էր, ինչ որ, հուրախություն նրանց, հաջողությամբ տեղի ունեցավ նրանց սուրբ թագավորության ժամանակ:*

5. Պավլիկյանների մոտ իմ ունեցած ծառայության ընթացքում ես որոշ ժամանակ Տիվրիկում[10] *մնացի, բազմիցս անգամ նրանց հետ խոսակցություն ունեցա, դեռ ավելին, այնտեղ բնակվող բազմաթիվ ուղղափառներից ավելի հանգամանորեն նրանց մասին իմացա: Այդ ամբարիշտների շաղակրատանքից տեղեկացա, որ նպատակ ունեն իրենցից մարդիկ ուղարկել Բուլղարիայի շրջանները՝ մարդկանց ուղղափառ հավատքից պոկելու և իրենց*

պիղծ աղանդի կողմը քաշելու համար, վստահ լինելով և հույս դնելով այն բանի վրա, որ սուրբ քարոզչությունը դեռ նոր է սկսվել այնտեղ[11], որով հեշտությամբ կկարողանան մաքուր և ճշմարիտ ցորենին իրենց որոմը խառնել։ Այդ ամբարիշտները սովորել են այդպես գործել, նրանք բաղում անգամ են այդ բանն արել, սիրով են իրենց վրա վերցնում բաղում աքնուիյուններ, իրենց վտանգների մատնում, սեփական վարակով հանդիպածին վարակելու համար։ Հենց այդ պատճառով ես լծվեցի այս գործին։ 6. Ես՝ տրուպս և որևէ առաքինության անհաղորդս, ձեզ, Քրիստոսի պատգամների փորձված պահպանողներիդ եմ ներկայացնում հոգնաջան աշխատանքով իմ իմացածը՝ բաղմաց անվըտանգությունն ապահովելու համար։ Իսկ դու, ո՛վ աստվածային և սրբազան առաջնորդ, ուշադրություն չդարձնելով ոճիս անպատճառությանը, ընդունիր մեր աշխատանքը արժանիք չփնտրելով, քանզի դու մեր մեջ չես գտնի առաքինության նշույլ անգամ, ոչ էլ ոճի գեղեցկություն, ինչպես կհամոզվես ընթերցելով ստորաբերյալը։

ՊԵՏՐՈՍԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊՐՈԵԴՐՈՍԻՆ[12] ՆԱԽԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ

7. Լույսի առկայությունը սպառում է խավարը, հովիվների հսկողությունը հալածական է անում գողերի և գազանների ոհմակները։ Բանական ճշմարիտ հովիվը[13] նա է, ով հետևորդն է Ճշմարիտ Հովվի[14], ով Նրա նման «դանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»[15], ում արդարությունը ինչպես լույս է ծագում[16], ով հոգատար հոգով, ամեն միջոցով հաջողությամբ ընդդիմանում է Սատանայի ստորություններին։ 8. Թեպետև բազմապիսի են խորամանկի թակարդները, բայց ինչպես սովորել ենք Սուրբ Գրքից՝ «չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա»[17], սովորել ենք ճանաչել նրա որոգայթները՝ ինչպես սարդոստայնը[18] կենարար և բազմիցս փառավորյալ Երրորդության, միակ Աստծո, երկնի և երկրի, տեսանելի և աներևույթ արարչության արարչի, պահապանի և իշխողի օգնությամբ։ 9. Արդ, պետք է ուշադիր լինել, խիիջիայլոց չունկնդրել ասածս։ Սատանայի դեմ կռվում ու մարտում, թշնամական գաղափարների դեմ պայքարում, գիտելիքների տեր մարդիկ հաղթանակ կտանեն, այդ գաղափարները եկեղեցու սրբազան գաղափարների օվկիանոսում ջրասույզ կանեն, բայց պարզամիտները, Առաքյալի խոսքերով ասած՝ նրանք, ովքեր դեռ կաթով են սնվում որպես մանուկներ, նրանց ապահով լինելու միջոցը, որպես լավերի՝ վատերի հետ շփում չունենալն է։ 10. Պարզամիտների համար լավագույն միջոցը այդ պիղծերից գարշելն ու խորշելն է, չփորձելը նրանց ասածներին պատասխանել։ Երբ նրանք հարց տան, անգետ ունկնդիրը, եթե դա հնարավոր է, լավ է լռի ու փախչի, ինչպես օձից, քանզի նրանց հետ խոսակցության բռնվելն անօգուտ է։ 11. Նրանք հենց դրա համար են տգիտների հետ խոսքի բռնվում, որպեսզի սրբությունները նրանց ոտքերով տրորեն, խելամտորեն նրանց դիմադրողի բացակայության պատճառով, բզկտեն երկնային ու աստվածային դոգմաները։ Ինչպե՞ս կարող են նրանք մարդկանց ասածին ականջ դնել, երբ ամեն օր և ամեն ժամ բյուր հայհոյանքների, լուտանքների և աննծքների են ենթարկում միակ աստծուն։

12. Պարզամիտի համար լավագույնը նրանց ճանաչելն է, բայց նրանց հետ խոսակցության երբեք չբռնվելը, քանզի նրանց հետ անփորձ բանավիճողները վտանգի կենթարկվեն։ Դժվար է, որ պարզամիտները նրանցից չհափշտակվեն, քանզի նրանք Ավետարանի և (Պողոս) առաքյալի բոլոր ասույթներից են ճառում, լոկ իրենք տեղյակ լինելով իրենց նենգությանը, քանզի Սուրբ Գրոց քաջատեղյակ են։

13. Այդ պիղծերը, երբ առաջին անգամ են որևէ մեկի հետ խոսքի բռնվում, իրենց առաքինի են ձևացնում, նենգորեն հաստատում և հավանություն տալիս ուղղափառ քրիստոնյաների բոլոր դոգմաներին։ 14. Անօրինաբար և շատ տգիտորեն այլաբանելով ասում են, թե խոստովանում են Սուրբ Երրորդությանն ու Աստծուն, նղովում նրանց, ովքեր այն չեն խոստովանում։ 15. Ասում են, թեև ամբարիշտ ձևով և անաստվածաբար, թե մեր Տերն ու Աստվածը մարդեղացավ կույսի մեջ և նղովում նրանց, ովքեր չեն խոստովանում այդպես։ Խոսքով՝ մի ձևի, իսկ սրտով՝ այլ, նրանք ընդունում են Տիրոջ մարդեղացման վերաբերյալ բոլոր դրույթները, սիրով նղովում Մանիին և նրան հետևած բոլոր պիղծ հերետիկոսներին, ինչպես և Պողոս Սամոսատցուն։ 16. Քանզի իրենք ունեցան չարիքի սրանցից շատ ավելի վատ ուսուցիչներ և

առաջնորդներ։ Նրանք, նայած պայմաններին, արտաքինով ու գեմքով ութոտանու կամ քամելեոնի նման փոխվում են, բեթևամիտներից որևէ մեկին որսալու նպատակով, և երբ տեսնեն, որ այդ մեկը իրենց դատարկաբանությունների ուշադրություն է գարձնում, ահա այն ժամանակ են մի փոքր ծանոթացնում իրենց գաղտնիքներին։ 17. Ահա դրա համար վնասակար բաների ծանոթությունը օգտակար է ոչ պակաս քան առողջի։ Պիտո է իմանալ դա ոչ թե գործածության մեջ դնելու համար, այլ խուսափելու դրանց ավերածություններից։ Անցնենք մեր առաջիկա խնդրին[19]։

36. Նրանց առաջին հատկանշական գիծն այն է, որ խոստովանում են երկու սկզբունք՝ Չար Աստված և Բարի Աստված, գրտնում, որ այս աշխարհի արարիչն ու իշխողը մեկն է, իսկ ապագա աշխարհինը՝ մի ուրիշը։ 37. Նրանց վերաբերյալ բազմիցս ասվել է, որպես պավեշտ, թե նրանք ապատության մեջ եղած ժամանակ, դիմելով որևէ մեկին, ով էլ նա լինի, հարց են տալիս. «Ասա ինձ, ի՞նչն է մեզ տարբերում հոռոմներից»։ Այդ անօրենները, անպիտանները, անհավատները, ապերախտներն ու անբարեսերները իրենց քրիստոնյա են հորջորջում, իսկ մեզ՝ Քրիստոսի, մեր Ճըշմարիտ Աստծո անվան իսկական կրողներիս, հոռոմներ են կոչում, չանալով հատուկ անվան մեջ հնթանոսական բովանդակություն դնել[20], անուն, որով մենք՝ անխարդախ քրիստոնյաներս, ավելի ենք հպարտանում, քան եթե յուրաքանչյուրս տերը լինեինք համայն աշխարհում առկա ոսկուն, արծաթին և թանկագին քարերին։ 38. Նրանք ասում են, թե հոռոմներից իրենց տարբերողն այն է, որ իրենք մի Աստծո են ընդունում որպես այս աշխարհի արարչի, իսկ մի ուրիշ Աստծո էլ, որ այս աշխարհում իշխանություն չունի, այլ կունենա այն ապագայում։ Նրան անվանում են նաև երկնային հայր։ Իսկ մենք միևնույն Աստծուն խոստովանում ենք՝ արարիչ ամենայնի, Թագավոր ամենեցուն և ամենակալ։ Նրանք ասում են մեզ. «Դուք հավատում եք աշխարհի արարիչ (Աստծուն), իսկ մենք նրան, որի մասին Տերն ավետարաններում ասում է. «Դուք ոչ գնայն նորա երբէք լուարուք, եւ ոչ զտեսիլ նորա տեսէք»[21]։ Նրանք այդպես ահա իզուր ու հիմարորեն շաղակրատում են, որի մասին հետո կասվի[22]։

39. Երկրորդ. նրանք ամենափառավորյալ ու միշտ կույս Աստվածածնին խորշում են դասել անգամ սովորական բարի մարդկանց թվում, չեն ընդունում, որ նրանից է ծնվել Տերը, այլ ասում են, թե իր մարմինը նա երկնքից է բերել, որ Տիրոջը ծննդաբերելուց հետո նա Հովսեփից ուրիշ երեխաներ էլ ծննդաբերեց։

40. Երրորդ. Նրանք խորշում են մեր Տիրոջ ու Աստծո մարմնի և արյան հաղորդության սուրբ և սարսափելի խորհրդից և, չբավարարվելով դրանով, ջանում են ուրիշներին էլ համոզել այդպես վարվել, ասելով, թե (խորհրդավոր) ընթրիքի ժամանակ Տերն իր աշակերտներին ոչ թե հաց ու գինի տվեց, այլ փոխաբերաբար իր խոսքերը՝ որպես հաց և գինի։

41. Չորրորդ. Նրանք մերժում են պատվական և կենարար խաչի պատկերը, ներգործությունն ու զորությունը, բազում լուրանքների են ենթարկում այն, որի պատկերը օդում նկարված տեսնելով, դևերն անգամ փախուստի են դիմում՝ իրենց առաջնորդի՝ Սատանայի հետ միասին։

42. Հինգերորդ. Նրանք մերժում են Հին Կտակարանի բոլոր գրքերը, մարգարեներին կոչում մոլորեցնողներ ու ավազակներ, ինչպես այդ մասին իր տեղում ավելի հանդամանորեն կասվի, ընդունում են միայն սուրբ Ավետարանի քառյակը, սուրբ Պողոս առաքյալի տասնչորս թղթերը, Հակոբի կաթողիկե, Հովհաննեսի երեք թղթերը, սուրբ Հուդայի կաթողիկե (թուղթը), Գործք առաքելոցը, որոնք բառացիորեն այնպես են, ինչպես մեզ մոտ։

43. Նրանք ունեն նաև իրենց ուսուցիչ Սերդիոսի աստվածատյաց, ամեն տեսակի ամբարտավանությամբ ու ամբարշտությամբ լի թղթերը։

44. Նրանք մերժում են եկեղեցու մեծ և իսկական հիմքի, երկնից արբայության բանալեպան, առաջին առաքյալ Պետրոսի երկու կաթողիկե թղթերը։ Խորշելով նրանից, բյուր լուտանքների և հայհոյանքների են ենթարկում, չգիտեմ ինչու։ Բայց ինչպես ես եմ ենթադրում (որ նրանց երեսին բազմիցս անգամ ասացի), այն պատճառով, որ նա մարգարեացավ նրանց ապագան, ասելով, թե այն կլինի նրանց ամբարիշտ, չար էությունից բխող։ Երանելի առաքյալն իր երկրորդ թղթում ասում է. «Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ սպասեալ,— նա նկատի ունի Տիրոջ երկրորդ գալուստը,— փոյթ յանձին ունիջիք անբիծք եւ անարատք գտանել նմա ի խաղաղութիւն. եւ զՏնեառն երկայնամտութիւնն փրկութիւն համարեսջիք. զոր օրինակ եւ սիրելի եղբայրն մեր Պաւղոս ըստ շնորհե-

յոլ իմաստութեանն նմա յԱստուծոյ գրեաց ձեզ. Որպէս եւ յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ. յորս զտանի ինչ-ինչ դժուարիմաց, զոր անուսումունքն եւ յողդողդքն կամակորեն, որպէս եւ զամենայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն կորուստ»[23]։ Ահա սրա մեջ է առաքյալին ուղղված պարսավանքի պատճառը, բայց իրականում դա ներբողյան է, ուղղված նրա ճշմարիտ մարգարեութեան, ամեն մի խճողուն հռետորականութեունից զուրկ ներբողյան։

45. Վեցերորդ. Նրանք խորշում են եկեղեցու քահանայապետներից, ասում են, թե քահանայապետները Տիրոջ դեմ ժողովվեցին[24], այդ իսկ պատճառով պետք չէ նրանց հիշատակել, խորշելով նրանց անունից անգամ։ Այդ մասին հետագայում, հատուկ գլխում ավելի խորը քննարկման ժամանակ կասվի[25]։

46. Արդ՝ ժամանակն է սկսել պատմական շարադրանքը...[26]։

84. Նրա (Մանիի)[27] աշակերտներից ոմանք հասան մինչև Հայաստանի Սամոսատը և չարի որոմը այնտեղ սերմանելով, տեղի հայերից շատերին մոլորեցրին։ Որոշ ժամանակ անց վատագույն ցանքը ծլեց և շատերին մահացու պտուղ տվեց, հասնելով մինչև Ֆանարիա[28]։ 85. Սամոսատից մի կին, անունը Կալլինիկե, ունեցավ երկու որդի՝ Պողոսին և Հովհաննեսին։ Ահա այս երկու իժերին նրանց ծննդարերող քարրը սնելով, ամենապիղծ աղանդն ուսուցանելով, Սամոսատից ուղարկեց մոլորությունը քարոզելու։ 86. Նրանք հասնելով Ֆանարիայի շրջանը, եկան մի գյուղ և նրա բնակիչներին գտնելով տգետ ու (հավատքի մեջ) անկայուն, սրբսկեցին նենգության թույնը, ցանեցին թշնամու[29] դառն որոմը։ Ահա այդ պատճառով էլ գյուղը վերանվանվեց էպիսպարիս[30], և մինչև օրս էլ այդպես է կոչվում, իսկ աղանդն էլ ստացավ քարոզողների անունը, քանզի այդ ժամանակից սկսած աղանդավորները մանիքեցիների փոխարեն կոչվեցին պավլիկյաններ։ 87. Մեր ամենաբարեպաշտ ու ուղղափառ կայսրերը, աստվածային եռանդով ղրդված, մտահոգված լինելով, որ այդ պիղծ աղանդը գնալով առավել ևս չտարածվի և մեղանից շատերին չպղծի, հռոմեական տիրապետության սահմաններում հանդիպող մանիքեցիներին ժամանակ առ ժամանակ կոտորում են, ավետարաններում Տիրոջ ասույթի համաձայն, թե «զայնոսիկ որ ոչ կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր եւ սպանէք առաջի իմ»[31]։

88. Աստծո եկեղեցու թշնամիները տարբեր ժամանակներում բազմաթիվ են եղել, բայց Աստծո շնորհիվ եկեղեցու տարած հաղթանակները՝ բյուրապատիկ ավելի։ Քանզի գտիչը չարյաց[32], բարիատյաց Սատանան, որ նման է ամենազարհուրելի, վայրենի ոսոխի, իր կապարճը ապարդյուն դատարկած լինելով նախորդ աղանդների ձևով, իր ամենաօրհասական նետը մարդկանց վրա հետագա ժամանակներում է նետում, քանզի իր ողջ չարությունը դարերի վերջում նա հանդես է բերելու ոչ թաքուն, Աստվածն ամենեցուն թույլ է տալու նրան գործել բացահայտ, համաձայն աստվածաշունչ և ամենաստուրբ ասույթի. «Զարի կողմից ներգործվող բանսարկուն հրաշքներ է գործելու «ի մոլորեցուցանել, թէ հնար իցէ եւ զընտրեալսն»[33]։ 89. Ի դեմս բոլոր աղանդների, նա ցույց տվեց իր ամբարտավանությունը, բայց ի դեմս մանիքեցիների (որոնք և պավլիկյաններ են կոչվում) պիղծ աղանդի, հանդես բերեց իր մեծամտությունն այն աստիճան, որ համոզեց խոցվածներին չհրապարակել վերքերը, արբել թույնը որպես քաղցր դինի։ Բայց այժմ (բանսարկուն) բոլոր աղանդների հետ կանգնած է մարդկանց առջև որպես խեղկատակ, մանկան պես ծաղրուծանակի է ենթարկվում, քանզի իր չարությունը պարտության կրեց մեր բարեպաշտ, ուղղափառ, մեծ կայսրեր Վասիլի, Կոստանդինի և Լեվոնի օրոք[34]։ 90. Հնում պիղծ պավլիկյանների թաքնված չարագույն թույնը, որ գրեթե բոլոր մարդկանց ուշադրությունից վրիպեց, այժմ բացահայտորեն պարտության է մատնվում մեր խաղաղարար, ուղղափառ, մեծ կայսրերի մշտարթուն աղոթքների, անքուն հոգատարության, աստվածընկալ հսկումների և հմուտ կառավարման շնորհիվ։ 91. Այս պիղծ աղանդի թաքուն նենգությունը վրիպեց բոլոր նախկին կայսրերի ուշադրությունից[35], բայց նրան չհաջողվեց թաքնվել մեր աշխարհաշեն, սուրբ մեծ կայսրերի արդար թագավորությունից։ Թեև պետք էր, որ այդ խաբեությունը պարտության կրեր, բայց անհրաժեշտ էր հարթ ու ամենաթագավորական հիմքի[36], թագավորող ուղիղ ճանապարհի առկայությունը, իսկապես բարի և հիասքանչ իր բոլոր պատվական սխրանքների համար հավիտյանս հիշատակվող իր աստվածապսակյալ որդիների և մեր մեծ կայսրերի՝ Կոստանդինի և Լևոնի, հավիտենական օգոստոսների[37] հետ միասին։ 92. Սուրբ և երաշելի, կենարար, աստվածային Երրորդության հստակ լույսով

պայծառացող մեր սուրբ կայսրերի հավասարաթիվ երրորդությունը աստվածիմացության ճառագայթներ է նետում մարդկության վրա, չի դադարում նրան ամեն ձևով բարեգործություն անել: Նրա բարեգործությունների չափը զրում են այլաբանել և վայրենի ազգերն անդամ: Այդ մասին ահա այսքանը:

93. Թե ինչպես սկիզբ առավ այս պիղծ աղանդը, նախապես մանրամասն ասվել է[38], երբ խոսք եղավ Մանիի և մյուսների՝ մանիքեցի կնոջ՝ Կալլինիկեի որդի Պողոս Սամոսատցու և նրա եղբոր Հովհաննեսի մասին: Բայց նրանք, որոնց մասին դեռ ասելու ենք, թեև նախորդ աղանդների (գաղափարների) վրա բարդեցին որոշ շաղակրատություններ, այդ մասին վեց գլուխներում ասվեց, այդուհանդերձ, նախորդ աղանդապետների իսկական աշակերտներն էին, ինչպես այդ մասին դեռ մանրամասն կասվի: Այժմ կասենք, թե ովքեր էին վերջերս հանդես եկած (աղանդապետները), որոնց վրա հենվում են պավլիկյանները և իրենց ուսուցիչներն են համարում:

94. Հերակլի[39] թոռ Կոստանդին կայսեր[40] թագավորության ժամանակ Հայաստանի Սամոսատում, Մանանաղի անունը կրող գյուղում[41], հանդես եկավ Կոստանդին անունով մի հայ: Այս գյուղը մինչև օրս էլ մանիքեցիներ է սնում: 95. Ինչպես ճշգրտորեն մենք տեղեկացանք, այս (Կոստանդինը) մի քանի օր իր տանը հյուրընկալում է Ասորիքից իր հայրենիքը վերադարձող և Մանանաղի գյուղը հասած մի դերի սարկավագի: Դերին իր հետ Ասորիքից երկու գիրք էր տանում՝ սուրբ Ավետարանն ու (Պողոս) առաքյալի թղթերը, որոնք, ի փոխհատուցումն հյուրընկալության, նվիրում է Կոստանդինին: 96. Կոստանդինը, ստանալով երկու գրքերը՝ Ավետարանն ու [Պողոս] առաքյալի թղթերը և տեսնելով, որ իր անօրեն ու պիղծ աղանդը խորշելի է բոլորին, որ մարդիկ խուսափում են դրանից՝ իր մեջ ներփակած զազրելիությունների պատճառով, և կամենալով վերստին կյանքի կոչել չարիքը, հազդմանե Սատանայի խորամանկում է հետևյալը, կոչ է անում Ավետարանից և (Պողոս) առաքյալի թղթերից բացի այլ գիրք չընթերցել, նպատակ ունենալով այդ ճանապարհով սպրդել չարիքից առաջացած վնասը, ինչպես որ թույն ըմպել տվողները մեղրով են այն ծածկում: 97. Նախապես հիշատակված մանիքեական գրքերից վերցնելով յուրաքանչյուր ամբարշտության էությունը, նա

Սատանայի համագործակցությամբ կարողացավ Ավետարանի և (Պողոս) առաքյալի թղթերի իմաստը մեկնելիս աղավաղել ըստ սեփական ցանկության, իսկ բազմիցս հիշատակված մանիքեցիների գրքերը, ինչպես ասվեց, մերժեց ամենից առաջ այն պատճառով, որ տեսնում էր, թե ինչպես շատերը այդ գրքերի պատճառով սրի են քաշվում[42]: 98. Քանզի մեր՝ իսկական քրիստոնյաներիս ամենաաստվածային և ուղղափառ կայսրերը, իրենց բոլոր բարի սխրանքներով հանդերձ, սահմանում են և հետևյալը. «մանիքեցիներին և մոնտանյաններին սրի քաշել, նրանց գրքերը կրակի տալ, այդ գրքերը թաքցնողներին նույնպես մահապատժի ենթարկել, իսկ ունեցվածքը՝ բռնագրավել հօգուտ պետության»:

99. Մանիի աշակերտ Կոստանդինը իրեն աշակերտողներին կատարելապես մոլորեցնելու և կորստյան մատնելու, իր ասածները դյուրավ ընդունելի դարձնելու նպատակով կամեցավ, որպես դժվարընդունելի, հրաժարվել վալենտինոսի[43] վատաբանություններից ու ծայրահեղություններից, ևս նկատի ունեմ երեսուն դարերի և աստվածների մասին, անձրևի մասին Կուբրիկոսի սին առասպելաբանությունից (համաձայն որի անձրևն առաջանում է գեղեցիկ երիտասարդի՝ կույսի հետևից վազելու ժամանակ առաջացած քրտինքից), ինչպես և մի շարք այլ՝ իր հորինածներից, բայց ոչ թե փրկվելու համար մեծագույն փորձանքից, այլ շատերին իրեն ձգելու նպատակով: Արդ, ընդունելով վատանուն Վասիլիդեսի սանձարձակություններն ու խայտառակությունները և բոլոր մնացածների գարշահոտ ճահիճը, նա հրապարակ է գալիս որպես կորստյան նոր առաջնորդ: 100. Ահա սրանից սկսած մանիքեցիների բոլոր հետևորդները, անտեղյակ լինելով այս մեքենայություններին, սիրով նզովում են Սկյութիանոսին, Բուդդասին և Մանիին՝ չարիքի առաջնորդներին, իսկ այս Կոստանդինին, որն իրեն Սիլվանոս վերանվանեց, և նրանից հետո հանդես եկածներին, հարգում են որպես Քրիստոսի առաքյալների՝ Պողոսին հավասար: 101. Այս Կոստանդինը, որ և Սալտանուս[44], թողնելով Մանանաղին, եկավ հաստատվեց Կողոնիայի[45] մոտ գտնվող Կիբոսսա բերդում, հայտարարելով, թե ինքը (Պողոս) առաքյալի թղթերում հիշվող Սիլվանոսն է, որին, որպես հավատարիմ աշակերտի, Պողոսը Մակեդոնիա ուղարկեց: Նա իր աշակերտներին ցույց էր տալիս նախապես հիշատակված դերի սարկավագից ստացած Առաք-

յալի գիրքը և ասում. «Դուք մակեդոնացիներն եք, իսկ ես Պողոսի կողմից ձեզ ուղարկված Սիլվանոսը»։ Եվ դա ասում էր Պողոսի նահատակությունից վեց հարյուր տարի անց, ինչպես ասվեց՝ Հեբրակլի Թոռ Կոստանդինի օրոք։

102. Ամբողջ քսանյոթ տարի այնտեղ մնալով և տեղացիներից շատերին մոլորեցնելով, նա իր վարդապետությանն արժանի վախճանն ունեցավ։ 103. Կայսրը, չգիտեմ ինչպես տեղեկանալով նրա մասին, ուղարկում է մի վասիլիկոսի[46], անունը Սիմեոն, հանձնարարելով քարկոծ անել չարության մշակին, իսկ իրենց անգիտությամբ մոլորված նրա աշակերտներին հանձնել Աստծո եկեղեցիներին դարձի և ուղղման բերելու համար, թեպետև նրանք անուղղելի մնացին։ Սիմեոնն այդպես էլ արեց։ 104. Գալով և իր հետ վերցնելով տեղացի իշխանավորներից մեկին, անունը Տըրյուֆոն, լինում է տեղում, ձերբակալում է բոլորին և բերելով Կողոնիայի հարավային կողմը, կանգնեցնում է թշվառականին իր աշակերտների դիմաց, որոնց հրամայում է քարկոծել նրան։ Աշակերտները վերցնում էին քարերը, բայց ձեռքներն իրենց դատավորներին մոտեցնելով, ետ էին շպրտում քարերը, խնայելով իրենց ուսուցչին, որպես ասվածուստ իրենց ուղարկված։ 105. Սիլվանոսը մի քանի տարի առաջ որդեգրել էր Հուստոս անունով մեկին, նրան ուսուցանել մանիքեական աղանդը, բայց այս դեպքում նրանից ստացավ իր տված դաստիարակությանն ու վարդապետությանը արժանի հատուցում։ Վասիլիկոսի հրամանով Հուստոսը մի քար վերցրեց և որպես նոր Գողիաթի՝ հարվածեց ու սպանեց։ Նրա վրա եկավ Դավթական ասույթը, թե՝ «Գուբն զոր փորեաց եւ պեղեաց, ի նոյն անկցի ի խորխորատ զոր եւ գործեաց» և «դարձցին ցաւք ի գլուխ նորա»[47]։ Այդ վայրը նրա (դիակի) վրա կուտակված քարերի պատճառով Սորոս[48] կոչվեց և այդպես է կոչվում մինչև օրս էլ։

106. Սիմեոնը կայսեր հրամանի համաձայն Կոստանդինի աշակերտներին Աստծո եկեղեցիները հանձնեց՝ դարձի գալու, բայց նրանք անդարձ մնացին, գերադասելով աղանդավոր մեռնել, քան թե ղեկմամբ Աստծո գութը շարժել և հավիտենական փրկության արժանանալ։ Սիմեոնը նրանց քննության ենթարկելով, բայց և աստվածաբանական դաստիարակության անհաղորդ լինելով, դեռ

ավելին՝ լինելով թեթևամիտ, ուսավ այդ կործանարար աղանդը։

107. Վերադառնալով կայսեր մոտ և երեք տարի մնալով Կոստանդնուպոլսում՝ իր տանը, նա ստացավ Սատանայի ներգործությունը և, ամեն ինչ լքելով, ծածուկ փախուստի դիմեց, եկավ վերոհիշյալ Կիբոսոսան, հավաքեց Կոստանդինի աշակերտներին և դարձավ նրա վատթարության ժառանգորդը։ Իր նախորդների նըման ցանկանալով փառավորվել՝ իրեն վերանվանեց Տիտոս։

108. Սակայն ես նրան կոչելու եմ ոչ թե Տիտոս, քանզի նա չնմանվեց Պողոս առաքյալի կողմից Կրետեի եպիսկոպոս ձեռնադրված Տիտոսին, այլ Կիտոս, քանզի նմանվեց ջրերում բույն դրած ծովային կետ (ձկան)։ Ծովային կետի մասին ոմանք պատմում են, թե նա կոչվում է ասպիդոխելոնե, մեծությամբ կղզու չափ է, ունի կոպիտ ձայն։ Նավաստիները, անդիտանալով նրան, նրա վրա են գցում խարիսխները, ցցեր խրում և կապում նավերը։ Իսկ երբ նրա վրա խարույկ են վառում, կենդանին տաքանալով, մեկից սուզվում է և բոլորին ջրահեղձ անում[49]։ 109. Ահա նա էս նրանց, ովքեր չիմացան իր վատթարության չափը, ուշադրություն չդարձրին նրա կոպիտ ձայնին, ընդհակառակը նրա վրա հույսի խարիսխը գցեցին, բոլորին հրո միջով Հադեսի խորխորատները իջեցրեց. նա իր կյանքը խարույկի վրա կործանեց՝ մյուս մոլորվածների հետ միասին և գնաց դեպի հուրն անշեջ։

110. Նա երեք տարի մնաց այնտեղ և շատերին մոլորեցրեց։ Այնուհետև վերոհիշյալ Հուստոսի՝ քարի հարվածով Կոստանդինին սպանողի և Սիմեոնի, որ և Կիտոս, միջև բանավեճ է ծագում (Պողոս առաքյալի) առ Կողոսացիս ուղղված թղթում հանդիպող առաքելական ասույթի շուրջ, թե՝ «Զի նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին, եթէ՛ աթոռք, եթէ՛ տէրութիւնք, եթէ՛ պետութիւնք, եթէ՛ իշխանութիւնք. ամենայն ինչ նովաւ եւ ի նոյն հաստատեցաւ»[50]։ Հուստոսը կանգնեց ու ասաց. «Արդյոք մենք չե՞նք խաբում մարդկանց, ընդունց հոգիները անխոհեմաբար կորստյան չե՞նք մատնում, ուսուցանելով առաքելական ասույթներին հակասող բաներ և այդ մարդկանց հոգու մեղքի համար ահեղ դատաստանի օրը մենք պատասխան չե՞նք տալու»։ Սիմեոնը չէր համոզվում, ընդհակառակը, է՛լ ավելի համառորեն էր շարունակում ազավաղել միտքը, իր համար սովորական բան էր ասույթի մեկնության համար այս-

տեղից, այնտեղից բացատրությունների դիմել։ 111. Հուստոսի և Սիմեոնի միջև ծագում է մեծ վեճ, Հուստոսը ցանկանալով առաքելական ասույթի իսկական իմաստն իմանալ, բարձրանում է Կողոնիայի եպիսկոպոսի մոտ, նրան հայտնում ամեն ինչ՝ և՛ իր մասին, և՛ իր կողմնակիցների և նրանց վարդապետության։ Եպիսկոպոսն անհապաղ նրանց մասին հաղորդում է Հերակլից հետո թագավորած Հուստինիանոս կայսրին[51], որը, տեղեկանալով, հրամայում է բոլորին քննության ենթարկել և մոլորության մեջ մնացողներին հրակեզ անել։ Այդպես էլ եղավ, Սորոսի մոտ մի մեծ խարույկ վառեցին և բոլորին հրկիզեցին։

112. Նրանցից Պողոս անունով մեկը, ծագումով հայ, հայրը երկու որդիների, որոնց անունները Գեղնեսիոս և Թեոդորոս էին, նրանց հետ փախուստի է դիմում և գալիս Էպիսպարիս, որին մենք նախապես մանրամասն հիշատակել ենք, երբ խոսում էինք Կալինիկեի որդիներ Պողոս և Հովհաննես Սամոսատցիների մասին։ Ահա այդ Պողոսից է, որ նրանք մանիքեցիների փոխարեն կոչվեցին պավլիկյաններ։ 113. Պողոսն իր որդի Գեղնեսիոսին, որին վերանվանեց Տիմոթեոս[52], հաստատում է անաստվածության դպրոցիղեկավար։ Բայց երկու եղբայրների միջև, ես նկատի ունեմ Գեղնեսիոսին և Թեոդորոսին, կոիվ է ծագում, մեկն ասում էր, թե ինքն է ստացել (սուրբ) հոգու աստվածային շնորհքը, իսկ մյուսը՝ թե ինքը։ Ահա այդպես գժտվելով, պղծության պաշտպանները կատարյալ ատեցին[53] միմյանց և այդպես մնացին մինչև իրենց կյանքի վերջը։

114. Տեղեկանալով նրանց մասին, կայսրը (այն ժամանակ Լևոն Իսավրացին էր) իր մոտ է հրավիրում Գեղնեսիոս-Տիմոթեոսին, ավելի ճիշտ՝ Թիմոթեոսին[54] և ուղարկում է Կոստանդնուպոլսի պատրիարքի մոտ։

115. Պատրիարքը, տեսնելով նրան, հարցրեց. «Դու ինչո՞ւ ուրացար ուղղափառ հավատքը»։ Նա պատասխանեց. «Նզովյալ լինի նա, ով ուրացել է ուղղափառ հավատքը»։ Ուղղափառ հավատք ասելով նա նկատի ուներ իր աղանդը։

116. Դարձյալ է հարցնում պատրիարքը. «Դու ինչո՞ւ չես հավատում և երկրպագում պատվական խաչը»։ Նա պատասխանեց. «Նզովյալ լինի նա, ով չի երկրպագում և չի պաշտում պատվական ու կենարար խաչը»։ Նա խաչ ասելով նկատի ուներ Քրիստոսին, որ պարզած ձեռքերով խաչի կերպարանք էր ստացել։

117. Վերստին հարց է տալիս նրան. «Դու ինչո՞ւ չես պաշտում և չես երկրպագում սուրբ Աստվածածնին»։ Նա պատասխանեց. «Նզովյալ լինի նա, ով չի երկրպագում ամենասուրբ Աստվածածնին՝ մեր բոլորի մորը, որի մեջ մտավ մեր Տեր Հիսուս Քրիստոսը»։ Նա Աստվածածին ասելով նկատի ուներ Վերին Երուսաղեմը, «ուր կարապետն մեր Յիսուս եմուտ վասն մեր»[55]։

118. Պատրիարքը նրան կրկին հարց է տալիս. «Դու ինչո՞ւ չես հաղորդվում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անարատ մարմնով և պատվական արյամբ, այլ անպատվում ես այդ (խորհուրդը)»։ Թիմոթեոսը պատասխանում է. «Նզովյալ լինի նա, ով անպատվում է ու չի հաղորդվում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարմնով ու արյամբ»։ Նա նկատի ուներ իր ասույթները։

119. Նրան հարց տրվեց նաև սուրբ Կաթողիկե ու առաքելական եկեղեցու մասին և նա տվեց նման պատասխան, Կաթողիկե եկեղեցի կոչելով մանիքեցիների ժողովարանները։

120. Նա այդպիսի պատասխան տվեց մկրտության վերաբերյալ, ասելով, թե Տեր Հիսուս Քրիստոսն է մկրտությունը, քանի գրված է. «Ես եմ ջուրը կենդանի»[56]։

121. Ահա այդպես Թիմոթեոսն ամեն ինչ աղավաղելով և առանձին-առանձին նզովքի տալով[57], անմեղ հայտարարվեց և կայսեր կողմից սիգիլիոն[58] ստանալով, վերադարձավ Էպիսպարիս, որտեղ հավաքելով իր բոլոր աշակերտներին, նրանց հետ փախուստի դիմեց և իջավ աստվածակործան Մանանաղին, որտեղ հանդես էր եկել նախապես հիշատակված Կոստանդինը։

122. Բաղում տարիներ մնալով այնտեղ, ծայրահեղ մոլեգնության հասավ, շար հրեշտակների միջոցով գլխին (Աստծո) ցասումն ու բարկությունը թափվեց, չարչարվեց, Աստծուց պատժվեց, ժանտախտով կյանքը կործանեց[59], ամբողջ երեսուն տարի գլխավորելով ամբարշտությունը։

123. Նա Զաքարիա անունով որդի ունեցավ, ինչպես և վարձով այծ արածեցնող մի (որդեգիր)։ Վերջինիս նա գտել էր ճանապարհին գցած, բարուրի մեջ փաթաթված, նա ապօրինածին էր, պղծված մահճի ծնունդ։ Պոռնիկը գիտե իր երեխաներին փողոց նետել, երկյուղ կրելով իր գործած հանցանքի համար։ 124. Գեղ-

Նեսիոսի մահից հետո նրա աշակերտները երկուսի տրոհվեցին, մի մասը հարեց Զաքարիային, մյուսը՝ Հովսեփ ապօրինածինին։ Նա (Հովսեփ) էր կոչվում։ Նրանց միջև մեծ թշնամություն ծագեց (ինչպես դա տեղի էր ունենում նրանց նախորդների միջև էլ), յուրաքանչյուրը գտնում էր, թե ինքն է ստացել Սուրբ Հոգու շնորհքը, թեպետև ընդհակառակը, անմաքուր հոգու ներգործությունն էին ստացել։ Զաքարիան գազազեց, կարծես զրկվում էր հորենական ժառանգությունից, քարով հարվածեց Հովսեփ-Աֆրոնիտոսին[60] և քիչ մնաց նրան սպաներ։

125. Որոշ ժամանակ անց, նրանցից յուրաքանչյուրը իր աշակերտների գլուխն անցած ցանկացան այդ վայրից փախչել։ Գյուղից մի փոքր հեռացել էին, երբ հագարացիները, կասկածելով, որ նրանք ուզում են Ռոմանիա անցնել, սկսեցին հետապնդել նրանց։ Զաքարիան, տեսնելով հագարացիների հարձակումը, միայնակ փախավ, լքելով իր աշակերտներին, որոնց հասնելով՝ հագարացիները սրի քաշեցին։ Հենց սրա պատճառով էր, որ մյուսների կողմից Զաքարիան պարսավանքի ենթարկվեց, համարվելով «վարձկանն որ ոչ է հովիւ»[61]։ 126. Հովսեփ-Աֆրոնիտոսը, իմանալով այդ մասին, կառքերի ուղղությունը շրջեց դեպի Ասորիք և, երբ սարակինոսները մոտեցան, ասաց նրանց, թե դուրս են եկել պանիր պատրաստելու և անասուններ արածեցնելու։ Հագարացիները այս պատճառաբանությունից բավարարված, հանգիստ թողեցին նրանց ու հեռացան։ 127. Հովսեփ-Աֆրոնիտոսը նպաստավոր առիթից օգտվելով, բոլորի հետ փախավ այդտեղից։ Հասնելով բազմից հիշատակված էպիսպարիս գյուղը, տեղի բնակիչների կողմից ուրախությամբ ընդունվեց։ Բոլորը ջահեր վառած, մեծ պատիվներով, կարծես Քրիստոսի աշակերտը լիներ, ընդունեցին այդ մեծ անպատվության արժանիին։ 128. Այդ մասին իմանալով, տեղի իշխանավորներից Կրիկորակես[62] անունով ասպվածասեր մի այր բազմաթիվ զինվորներով շրջապատեց այն տունը, որտեղ օթևանել էր Մանիի աշակերտը։ Նրա աշակերտներին նա ձերբակալեց, բայց (Հովսեփը) կարողացավ ծածուկ փախչել դեպի Փրոյուգիա, որտեղից էլ գնաց Հաստատվեց Պիսիդիայի Անտիոք (քաղաքում)։ Սա ևս երեսուն տարի մաքառեց հօգուտ չարիքի, իր աշակերտներին ասելով, թե ինքը էպաֆրոդիտոսն է, Պողոս առաքյալի աշակերտը, որ նրա՝ առաքյալի կողմից ուղարկվել է նրանց։

Բայց ես նրան արժանավորապես Աֆրոնիտոս եմ կոչելու, քանզի շատ էր անհաղորդ ուսման ու խելքի։ Նա բաղում մարդկանց առատավոր չարիքին մասնակից դարձնելով, հավիտենական դժոխքին արժանացրեց, ինքն էլ այդտեղ կործանեց իր կյանքը, Խորտակոպիոն կոչվող վայրում։

130. Նրա կենդանության իր աշակերտուհիներից մեկը Հայաստանում, նույնի (ինչպես ասում են հրեա) աշակերտներից մեկի հետ շնանալով, որդի ունեցավ, վաթսարությամբ տխրահռչակ, աղտեղի վահանին։ 131. Հենց այս Վահանն էլ ժառանգում է Աֆրոնիտոսին։ Նա դառնալով չարիքի ուսուցիչ, իր նախորդներից ստացած, ամեն տեսակի աղտեղությամբ լի աղանդը, անփոփոխ պահեց, բաղում անմիտների կատարյալ կործանման տարավ։

132. Շատ չանցած Տաբիա[63] քաղաքի կողմից հանդես եկավ ճշմարտության մի հակառակորդ ևս։ Այդ (քաղաքի) մոտ կա Անիա անունով մի գյուղ, որտեղ բնակվում էր Դրյուինոս անունով մեկը։ 133. Սա մի որդի ունեցավ, անունը Սերգիոս՝ Սատանայի պաշտպան Սերգիոսին, ով շատերին դառներից գայլ դարձրեց և նրանցով ցրիվ արեց Քրիստոսի հոտերը։ Սերգիոսին, գառան կերպարանքով սարսափելի գայլին[64], ով խորամանկորեն իրեն առաքինի ներկայացրեց և այդ ձևով շատերին խաբեց։ Սերգիոսին, Քրիստոսի խաչի թշնամուն[65], բերանն անաստվածության, Աստվածծնի և բոլոր սրբերի հայհոյիչին։ Սերգիոսին, Քրիստոսի առաքյալների թշնամուն, մարգարեներին ատողին, Սուրբ Գրքից խորշողին, դեպի առասպելներն[66] ու կեղծիքը դիմողին։ Սերգիոսին, Քրիստոսին ատողին, եկեղեցու թշնամուն, «որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար. եւ զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ եւ զՀոգին շնորհաց թշնամանեաց»[67]։ 134. Սերգիոսին, ով իրեն Մխիթարիչ[68] էր համարում և Տյուքիկոս կոչում և իր աշակերտների կողմից երկրպագվում որպես Սուրբ Հոգի։ Սերգիոսին, խավարի սիրելուն, իրեն փայլուն աստղ համարողին։ Էլ ի՞նչ եմ երկարում և կարճ չեմ կապում։ Գիտեմ, որ ողջ դարը չի բավականացնի նրան, ով կուզենա ըստ արժանվույն պատմել նրա վատթարության մասին։

135. Այս Սերգիոսը դեռ երիտասարդ հասակում մի մանիքեցի կնոջ հետ խոսակցության է բռնվում և նրանից խաբվելով՝ դառնում է Նեռի կարապետը։ 136. Այդպես էլ պետք է լիներ, որ ամե-

նաոսոխ աղանդի ուսուցիչները ունենան կամ սարակինոսյան, կամ սարկական ծագում, պոռնկության ծնունդ լինեն, կամ էլ կնոջից ստացած լինեն մոլորությունը: 137. Որպեսզի մարդիկ չկարծեն, թե իզուր տեղն ենք նրան պարսավում, կպատմենք նրա մասին հանգամանորեն: Նախ պատմենք, թե ինչպես Թշվառականը հարեց աղանդին, հետո հենց իր ասույթներով կներկայացնենք նրան, թե ինչպիսին է նա, ավելի ճիշտ՝ թե ինչպիսին էր ամենաթշվառականը: 138. Երիտասարդ հասակում, ինչպես ասացինք, նա հանդիպեց թեթև բարքերի տեր մի մանիքեցի կնոջ: Սատանայի աշակերտուհին, լինելով շատ նենգ ու խորամանկ, ասաց նրան. «Լսում եմ քո մասին, տե՛ր Սերգիոս, որ շատ գրագետ և կրթված, ամեն տեսակետից բարի մարդ ես: Ասա՛ ինձ, ինչո՞ւ չես ընթերցում Սուրբ ավետարանները»: Նա կնոջ խոսքերից խաբվեց, բայց և անտեղյակ լինելով այդ կնոջ մեջ թաքնված չարության թույնին, պատասխանեց. «Մենք աշխարհական մարդիկ ենք, մեզ համար անհրաժեշտություն չկա դրանք կարդալ, այլ միայն հոգևորականներին»: 139. Կինն ասաց. «Դա այդպես չէ, ինչպես կարծում ես, քանզի «ոչ է ակնառուիւն առաջի Աստուծոյ»[69]: Նա «զամենայն մարդիկ կամի ղի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն»[70]: Ձեր հոգևորականները «վաճառական լինին բանին Աստուծոյ»[71], նրանք թաքցնում են ձեզանից Ավետարանների խորհուրդները, այդ պատճառով բարձրաձայն չեն ընթերցում ինչ գրված է նրանց մեջ, մի բանը կարդում են, մյուսը՝ ոչ, որպեսքի դուք ճշմարտությունը չիմանաք: 140. Գրված է քանզի Ավետարաններում, թե ոմանք «ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ, Տէր, Տէր, ո՞չ յանուն քո զես հանաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք»: Թագավորը (երկնից) պիտի պատասխանի նրանց. «Ամէն, ամէն ասեմ ձեզ թէ ոչ գիտեմ զձեզ»[72]: Հետազոտի՛ր և տե՛ս, այդպես գրված չէ՞: Այդ ովքե՞ր են, որոնց Տերը կասի. «Ոչ գիտեմ զձեզ»: Սերգիոսը, լինելով տխմարագույն և տգետ, ապշեց ու լռեց:

141. Ավետարանական ասույթը այսպես պետք է հասկանալ: Մինչև օրս էլ կան մարդիկ, որոնք, թեև քրիստոնյա են և կարծում են, թե բարեպաշտ կյանք են վարում, բայց նրանք սովորություն ունեն հաճախ հմայություններով դևերին փախուստի մատնել, հիվանդություններ ու ախտեր բուժել, ինչպես անցյալում Սկևայի

որդիները, այսպես կոչված երդմնեցնողները, որոնց մասին Գործք առաքելոցում գրված է, թե, նրանք դիվահարներին երդմնեցնելով, ասում էին. «Երդմնեցուցանեմ զձեզ ի Յիսուս, զոր Պաւղոս քարոզէ»[73] դուրս եկեք մարդկանց միջից»: Դևերը, Քրիստոսի անունից սարսափահար, փախուստի էին դիմում: 142. Ահա այդպես են վարվում ոմանք այսօր էլ, անգիտանալով, որ հմայություններով կորցնում են իրենց փրկությունը: Հենց նրանք են այդ օրն աղաղակելու «Տէր, Տէր, ո՞չ յանուն քո զես հանաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք»: Սրանց Տերը կպատասխանի. «Ամէն, ամէն ասեմ ձեզ թէ ոչ գիտեմ զձեզ»: 143. Կան և ուրիշներ, որոնք թեև վանականի անբասիր կյանք են վարում, բայց անգիտությամբ ու տգիտությամբ աղանդների մասնակից դարձան, այդ պատճառով էլ նրանք չեն արժանանալու [երկնից] արքայության: Ահա որպեսզի Արդար Դատավորը այդ օրը նրանց և ոչ մի բան պարտական չմնա, այստեղ նրանք բուժման են արժանանում, որպեսզի երբ նրանք աղաղակեն. «Տէր, Տէր, ո՞չ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք» որպես պատասխան լսեն. «Ընկեր, չդրկեմ քեզ, ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քում: Աւ զբոյդ եւ երթ»[74]:

144. Սրան և նմաններին անտեղյակ լինելով, Սերգիոսը փնտրում է ավետարաններում և թշվառական կնոջ ասած խոսքերը գրված գտնելով այնտեղ, հարցնում է. «Ասա՛ ինձ, Տերը ո՞ւմ նկատի ուներ»: Կինը հարցին չպատասխանեց, այլ դարձյալ հարցրեց. «Ո՞ւմ նկատի ուներ Տերը, երբ ասաց. «ի բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն եւ բազմեսցին ընդ Աբրահամու եւ ընդ Սահակայ եւ ընդ Յակովբու յարքայութիւն երկնից: Եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին»[75]: Արդ, ովքե՞ր են «որդիքն արքայութեան»: 145. (Սերգիոսը) չդիտեր, որ պատասխաներ, թե նրանք իսրայելացիներն են, «որոց որդեդրութիւնն եւ պաշտօնն եւ աւետիքն»[76] (Քրիստոսը իսրայելացիներին «որդիք» է անվանում, չէ՞ որ նա Քանանուհուն ասաց. «Ոչ է բարւոք առնուլ զհաց որդւոց»[77]: Նրանք վտարվեցին, քանզի խաչեցին նրան): 146. Թշվառ Սերգիոսն ահա սրանց անտեղյակ, ենթադրելով, որ այդ մոլեգին կինը փրկության առաջնորդ է, սկսեց մանրակրկիտ հարցուփորձ անել նրան արդեն ասվածի մասին: Իսկ կորստյան առաջնորդը «որպէս դերեղման բաց»[78] բերանով սկսեց լուտանքներ թափել

սրբերի հասցեին, ասելով. «Արքայության որդիները» հենց քո սրբերն են, ովքեր փախուստի են մատնում դևերին, բուժում մարդկանց ախտերը, նրանց ես դու պաշտում աստվածների պես, լքելով կենդանի և անմահ Տիրոջը, հենց սրանք են այն օրը լսելու Արդար Դատավորի բերանից, թե՝ «Ոչ երբէք գիտէի զձեզ»[79]։

147. Ահա այդպես անցնելով ավետարաններում գրվածների վրայով, և տեսնելով, թե ինչպես (Սերգիոսը) տեղի է տալիս, սկսեց յուրաքանչյուր բառի իմաստն աղավաղել և շատ չանցած նրանից պատրաստեց Սատանայի գործիք, մարդկության դեմ նա սրեց մի սարսափելի նետ, որի նմանը չկա (Սերգիոսի) բոլոր նախորդների մեջ։ 148. (Սերգիոսից) առաջ հանդես եկածները, թեև աչքի էին ընկնում իրենց վատթարությամբ, աղանդի գարշահոտ ճահճով, պիղծ ու անառակ գործունեությամբ, Աստծուն ուղղված հայհոյանքներով, այղուհանդերձ, մարդիկ խուսափում էին նրանցից, նրանք բոլորի համար գարշելի էին, այդ իսկ պատճառով նրանցից խաբվողների թիվը չնչին էր։ 149. Սակայն այս մեկը թեև հրաժարվեց (նախորդների) խայտառակություններից ու բազմաթիվ անառակություններից, բայց որպես փրկիչ դոգմաներ՝ պահպանեց ամեն տեսակի ամբարշտությունները, նենգորեն մի քանի առաքինություն իրեն վերագրեց, իրեն բարեպաշտ ձևացրեց և գայլին գառան մորթով ծածկեց։ Ուրանալով բարեպաշտության զորությունը, անհեղյակների աչքին փրկության գերազանց առաջնորդ երևաց։ Վատթարն առաքինի է ձևանում, որովհետև էլ ջանք է թափում, որպեսզի ցորեն կարծվի։ 150. Ահա նման խորամանկություններով մինչև օրս անկասկած մարդկանց խաբում են։ Բայց մենք բոլորս թող փրկվենք նրանց վատաբվեստ մեքենայություններից՝ ամենամաքուր և ամենասուրբ մեր Տիրուհու, իսկական ու ճշմարիտ Աստվածածնի, միշտ կույս Մարիամի և բոլոր սրբերի աղոթքներով ու միջնորդությամբ։ 151. Նրանք թշվառականներին մինչև կատարյալ կորստյան չմատնեն, չեն հայտնում իրենց մեծ խորհուրդը՝ ուրացումն Աստծու։

152. Սատանայի առաջամարտիկ Սերգիոսը, կործանարար կնոջից ուսանելով աղանդը և կարծելով, որ բոլոր մարդիկ, ովքեր դավանում են մեր՝ իսկական քրիստոնյաներիս ճշմարիտ, մաքուր և բարեպաշտ հավատքը, կորստյան են մատնված, սատանայական եռանդով լցված հրապարակ է գալիս, դառնալով մոլորության նոր

քարոզիչ։ Իրեն Տյուքիկոս վերանվանելով՝ Պողոս առաքյալի թղթերում հիշատակված Տյուքիկոսի անվամբ, բոլորին հավաստիացնում էր, թե ինքը (Պողոս) առաքյալի աշակերտն է և նրա կողմից է ուղարկվել քարոզելու, սակայն իրականում ոչ բանն Աստծո, այլ ավերիչ մոլորություն։ 153. Նա անդուլ անցավ այն բոլոր քաղաքներով ու գյուղերով, որտեղ ութ հարյուր տարի առաջ (Պողոս) առաքյալը ճշմարտության խոսքն էր քարոզել, և շատերին հեռացնելով ուղղափառ հավատքից, Սատանային բերեց, ինչպես այդ մասին նա իր թղթերից մեկում ասում է. «Ես հոգնել եմ Արևելքից Արևմուտք և Հյուսիսից Հարավ, իմ ծնկների վրա Քրիստոսի ավետարանը քարոզելով»։

154. Նա ամբողջ երեսունչորս տարի դլխավորեց՝ ավգուստա Իրեններից[80] սկսած մինչև Թեոփիլոս[81] կայսրը, հիմքը դնելով այսօրվա ապստամբության, որը կանխագուշակեց Թեսաղոնիկեցիներին Պողոս առաքյալը[82] և որով պղծվեց Քրիստոսի եկեղեցու մեծ մասը։ Նա ոմանց ղրկեց այս ժամանակավոր կյանքից՝ սեփականությունից ղրկելով և անժամանակ սպանելով, ուրիշներին, իր պղծությանը հետևած մարդկանց անմասն դարձրեց նաև հավիտենական կյանքին, բազմաթիվ ամուսինների բաժանեց և իր աշակերտներին տվեց պղծեն նրանց մահիճը, բազմահամար մանուկների իր աշակերտների միջոցով անջատելով մայրական կրծքից, մի մասին սպանեց, իսկ մյուսին, ծնողներից ղրկելով և իր արյամբ բոլորին փրկած կենդանի Աստծուց անջատելով, հագարացիներին վաճառեց։ 155. Ծնողքի մինուճար բազմաթիվ գեղադեմ երիտասարդների և աղջիկների, ծնողքից բաժանելով, բարբարոսներին ստրկության տվեց, բազում եղբայրների և քույրերի, ազգականների ու բարեկամների գժտեցնելով և ունեցվածքից զրկելով, օտար երկիր ուղարկեց, որոնց լացն ու կոծը մինչև երկնակամարն է բարձրացել։ Իրենց կուսությունը Քրիստոսին ընծայած բազմաթիվ վանականների և միանձնուհիների իր աշակերտներով պղծեց և մեծակյաց կյանքից օտարացնելով՝ Աստծուց էլ օտարացրեց։ Բազում քահանաների և ղևտացիների[83], անջատելով ուղղափառ հավատքից, գառներից մարդակեր գազանների վերածեց։ Շատերին կապանքների մեջ, բանտերում սպանել տվեց, ուրիշներին էլ՝ հարուստից աղքատ դարձրեց։ 156. Եվ այսքան չարիքների պատճառ դարձածն արդյո՞ք կարող է երկրպագվել որ-

պես Մխիթարիչ։ Չէ՞ որ նրա աշակերտները նրա անվամբ աղոթելով, ասում են. «Աղոթքը Սուրբ Հոգու Քող ողորմի մեզ»։

157. Սակայն նա ասում է. «Ես այս դժբախտությունների համար մեղք չունեմ, ես բազմիցս կոչ եմ արել նրանց վերջ տալ հռոմայեցիների գերեվարմանը, բայց նրանք չլսեցին ինձ»։ Բայց ինչպե՞ս ես դու քեզ անմեղ համարում։ Եթե նրանք քեզ չէին լսում, ապա ինչո՞ւ համաձայնվեցիր լինել անհնազանդ մի ժողովրդի հետ, որին ի վիճակի չէիր կառավարել։ Ինչո՞ւ մինչև մահ նրանց հետ էիր մնում։ Եթե դու նրանց սովորեցնում էիր ընթանալ Քրիստոսի ճանապարհով, ինչո՞ւ չէիր սովորեցնում և հետևյալը, որ Տերն ասաց. «Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք յայլ»[84]։ 158. Ես պարսավելու եմ քեզ, հենվելով նաև հենց քո ասույթների վրա։ Կողոնիայի (աղանդավորներին) գրում էիր այսպես. «Կանխավ գիտենալով ձեր հավատի չափանիշը, հիշեցնում եմ ձեզ, որ ինչպես որ մյուս եկեղեցիները հովիվներ և ուսուցիչներ են ստացել,— նկատի ունի Կոստանդնին և մնացածներին,— այդպես և դուք ստացել եք պայծառ հրագ, լուսավոր աստղ, փրկության առաջնորդ, բստ գրվածի, «եթէ ակն ոմն առաւ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի»[85]։

159. Ո՛վ երիցս Քշվառական, ամեն տեսակի անօրինությամբ լի, եթե դու, ինչպես պնդում ես, Պողոս առաքյալի աշակերտն ես, ինչո՞ւ չես նմանվում ուսուցչին։ Նա իրեն բոլորի «փարելի» էր համարում, «վիժվածք» և «նվաստագույնն առաքյալներից», իսկ դո՛ւ, այսքան վատություններ գործածդ և ոչ մի լավ բան չանողդ, փարիսեցուց ավելի՞ ես մեծամտանում[86]։ Դու չե՞ս ընթերցել ասույթը այն մասին, թե «իրեն ներբողողն արժեք չունի, թեկուզև ճշմարիտն ասի»[87]։ Դու կատարելապես մթին մտքով ու դատողությամբ ինչպե՞ս կեղծավոր կերպով քեզ լուսավոր աստղ, պայծառ հրագ, փրկության առաջնորդ ես համարում, դո՛ւ, որ այնքան հոգիներ կորստյան մատնեցիր, ինչպե՞ս քեզ Քրիստոսի եկեղեցու մարմնի աչք կոչեցիր, ո՛վ խև ու խելագար։ 160. Դո՛ւ, Քշվառակա՛ծ, լինելով կույր, ինչպե՞ս ուրիշների համար փրկության առաջնորդ դարձար։ Չե՞ս կարդացել, թե «կույր կույրի յորժամ առաջնորդէ, երկոքին ի խորխորատ անկանին»[88]։ Քո ո՞ր մեկ առաքինությանդ նախանձեն, որ գոռում ես, թե «ինձ համաձեռ և ինձնից ստացած ավանդույթները պահպանեք»։ Ահա քո հավատքի և վարդապետության սերմից մեծ ամբարշտություն ծլեց, քո աշակերտները նախքան քեզ ճանաչելը զառներ էին, իսկ այժմ երբ ճանաչեցին քեզ, ավելի ճիշտ՝ երբ նրանք քո կողմից ճանաչվեցին[89], մարդակեր գաղանների վերածվեցին։

161. Մի քիչ հետո նա գրում է. «Ոչ ոք և ոչ մի ձևով[90] չխաբի ձեզ։ Այս ավետիսները[91] ունենալով Աստծուց, արիացե՛ք. հաճի վստահ լինելով ձեր սրտերին, զորս եմ ձեզ, որ բարապանը, բարի հովիվը, Քրիստոսի մարմնի առաջնորդը, Աստծո տան հրագը ես եմ, «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի»[92]։ «Ջի թեպետ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ»[93]։ «Այսուհետեւ ողջ լերուք, հաստատուն կացէք, եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ»[94]։ Ո՛վ դու Քշնամին ճշմարտության, որին Սատանայի, ամենայն չարագործության մրշակ, ինչպե՞ս հանդգնեցիր այդպիսի բաներ ասել, քեզ Աստծուն հավասար համարել[95], չէ՞ որ «ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի»[96], որ իրեն փառավորողի փառքը ոչինչ է[97], որ Սուրբ Հոգին հայհոյողը քավություն չունի ոչ այս աշխարհում և ոչ ապագա[98]։ Դու այս բոլորի համար պատասխանատու ես։

163. Նա շարունակում է. «Աստծիս ավելացնում եմ և հետևյալը. Կորնթոսի եկեղեցին հիմնադրեց Պողոսը, իսկ Մակեդոնիայինը՝ Սիլվանոսն ու Տիմոսը։ Նա Մակեդոնիա ասելով նկատի ունի կիբոսոսայի ժողովարանը, իսկ Կոստանդինին և Սիմեոնին անվանում է Սիլվանոս և Տիմոս։ Աֆայան զարդարեց Տիմոթեոսը։ Աքայա ասելով նկատի ունի Մանանաղին, իսկ Գեղնեսիոսին Տիմոթեոս է անվանում, իսկական Թիմոթեոսին։ Փիլիպեցիների եկեղեցին հովվեց Էպաֆրոդիտոսը։ Նկատի ունի ապօրինածին այծարած Հովսեփին, իսկական Աֆրոնիտոսին, իսկ նրա աշակերտներին անվանում փիլիպեցիներ։ Լավոդիկեցիների ապա և Կողոսացիների եկեղեցիներում Տյուրիկոսն ուսուցանեց։ Կողոսացիք է համարում նա արգաուսցիներին, իսկ լավոդիկեցիներ՝ Կինոխորիոնում բնակվող շներին։ Այս երեքի մասին նա ասում է, թե երեքը մեկ են և մեկի՝ Տյուրիկոսի կողմից են հիշվում։ 164. Դու տեսնո՞ւմ ես, թե ինչպես է նա իրեն ուսուցիչ կանգնեցնում Նեռի ժողովարաններում, և շատերին խաբելու համար հիմարաբար ու շատ անմտորեն (Պողոս) առաքյալի թղթերում հիշված Քրիստոսի եկեղեցիների անունները դնում, անուններ, որ նրանք ստացել են

քազում տարիներ առաջ։ 165. Ասա՛ ինձ, խաբեբա, ճշմարտության մեղադիր, Երուսաղեմից մինչև Իլլիրիկոն և շրջակայքը վարդապետած Պողոսը ինչպե՞ս քե միայն Կորնթացիների եկեղեցին հիմնադրեց։ Եվ եթե քո կողմից հիշատակվածները Պողոսի աշակերտներն էին, ինչպե՞ս կարող էին (Պողոսին) աշակերտել, և ո՞րտեղ, եթե ծնվել են նրանից ութ հարյուր տարի անց։ Ինչո՞ւ ես մաքառում ճշմարտության դեմ։ Ինչպե՞ս չես ամաչում խաբեական խոսքերով և սուտ անուններով այսքան ժողովուրդ խաբելուց։ Ինչո՞ւ ես սիրել մարդկային փառքը և ոչ Աստծո[99]։

166. Դու կոչ ես անում, որ բոլորը քեզ ընդունեն որպես Քրիստոսի առաքյալ, քանզի ասում ես Լևոն Մոնտանացուն. «Դու զգույշ եղիր, վերջ տուր անսասան հավատիդ տրոհելուն։ Դու որևէ մեղադրանք ունե՞ս մեր դեմ։ Ես որևէ մեկին ենթացրե՞լ եմ, կամ մեծամտացե՞լ եմ։ Ձես կարող ասել, բայց եթե ասես էլ, ոչ վկայությունը ճշմարիտ չէ։ Բայց ես, փավ լինի, չեմ ատի քեզ, այլ կոչ եմ անում. այնպես, ինչպես դու ընդունում ես առաքյալներին և մարգարեներին, որոնք չորսն են, ընդունիր և հովիվների ու ուսուցիչների, որպեսզի զազանակեր չլինես»։

167. Մի այլ տեղում ասել ես. «Առաջին պատկությունը, որ Աղամից ենք ժառանգել, բարեգործություն է, բայց երկրորդը ավելի մեծ պատկություն է, որի մասին (Պողոսն) ասում է. «որ պատկին՝ յիւր մարմինն մեղանչէ»[100]։ Դրան ավելացնում ես. «Քրիստոսի մարմինը մենք ենք, իսկ ում, ով հեռանում է Քրիստոսի մարմնի խավանդություններից, այն է՝ իմ, ում մեղանչում է, բանզի դիմում է այլ բան վարդապետողներին և չի լսում առողջ խոսքերին»։ 168. Ասա՛, ամբարշտության պաշտպան, ինչպե՞ս քե պատկությունը բարեգործություն է, որ անգամ պատկագործը արարքը գործելուց հետո դատապարտում է այն, որը բոլոր աստվածաշունչ գրքերը մերժում են։ Դու ինչպե՞ս հանդգնեցիր քո սանձարձակ անզգամությամբ ժխտել տերունական ասույթները, որոնք շնություն են համարում մինչև անգամ հայացքը, չէ՞ որ Տերն ասում է. «Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա»[101], ուզեցիր քո ասույթները հիմնավորել հույս դնելով մարդկանց դատարկամտության վրա, քո կողմը ձգելու համար ստրկամիտ և անառակ մարդկանց, ասելով, քե գոյություն չունի այլ պատկություն, բայց միայն մեկը՝ քեզ-

նից խուսափելը։ Ո՞ւմ կհավատան, ճշմարտության խոսքին, քե քո՝ մոլորեցնողի և ճշմարտության թշնամու։

169. Մենք նրա վայրահաչություններից մի քանիսը միայն քաղեցինք նրան և աշակերտներին դատափետելու համար և այստեղ մեջբերեցինք ցույց տալու համար նրա սրտի չարանենգ դանձարանը, «քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան»[102]։ 170. Բայց ոչ ոք թող չկարծի, քե Սերգիոսի և Մանիի վարդապետած աղանդները տարբերվում են միմյանցից, ո՛չ, միևնույնն են։ Երբ այս Սերգիոսը սկսեց վարդապետել, կամենալով բազում աշակերտներ հավաքել, անջատել նրանց Քրիստոսի եկեղեցուց և իր ետևից տանել, երկիցս և երիցս անգամ ընդդիմացավ Վահանի՝ իր աղտեղի դասընկերոջ ու դավանակցի դեմ, բարեպաշտ ձևանալով՝ սկսեց բոլորին լսելի պարսավել նրան, բայց ոչ հավատքի, այլ նրա անօրինավոր անօրեն արարքների համար։ 171. Վահանն ասում է նրան. «Դու վերջերս հանդես եկար, մեր ուսուցիչներից և ոչ մեկին չես տեսել, հետը չես եղել, իսկ ես տեր էպաֆրոդիտոսի աշակերտն եմ և ուսուցանում եմ այնպես, ինչպես սկզբից ինձ սովորեցրել է։ 172. Սերգիոսը խորշանք զգալով նրա քարոզած գարշահոտ ճահճից, երեսն ի վայր նշավակելով նրան, երկուսի բաժանեց աղանդը, (Վահանի) հետ մնացողներին կոչեց վահանյաններ, իսկ Վահանն էլ սերգիոսականներ կոչեց Սերգիոսի աշակերտներին։

173. Սերգիոսի մահից հետո նրա աշակերտները, չկարողանալով տանել բոլորի կողմից վահանյանների պատճառով իրենց հասցեին ուղղված նախատինքն ու անպատվությունը, սկսեցին վահանյաններին կոտորել, որպեսզի իրենցից սրբեն նրանց խայտառակությունը։ 174. Մի ոմն Թեոդոտոս՝ Սերգիոսի սինեկդեմոսը[103], ասաց. «Հակառակության և ոչ մի հիմք չկա ձեր և այդ մարդկանց միջև, բոլորս էլ մինչև մեր ուսուցչի հանդես գալը միևնույն հավատքն էինք դավանում»։ Դրանով դադարեցրին նրանց կոտորելը։

175. Բարեպաշտ կայսր Միքայել Վանականը[104] և նրանից հետո թագավորած Լևոնը[105], տեսնելով, որ այս աղանդը վարակել է քրիստոնյաների մեծ մասը, հռոմեական պետության բոլոր շրջանները հրաման ուղարկեցին՝ որով այդ պիղծ աղանդի կողմնակիցներին կոտորում էին։ 176. Կայսեր հրամանն եկավ և Արմե-

նիակների (բանակաթեմը)՝ Նեոկեսարիայի[106] եպիսկոպոս Թովմային և էքսարքոս Պարակոնդակեսին։ Ահա կայսեր հրամանի համաձայն՝ աղանդավորներին, որպես դևերի կորուստն առաջնորդողների և մահապատժի արժանիների, կոտորում էին։ 177. Դրա վրա Սերգիոսի աշակերտներից աստատաններ[107] կոչվողներից ոմանք մատնությամբ ու նենգությամբ սրի քաշեցին էքսարքոսին, իսկ կինոխորիտները՝ նմանապես մետրոպոլիտ Թովմային, որից հետո աստատաները փախան Մելիտենե։ 178. Այդտեղի սարակինոսների ամիրան այն ժամանակ Մոնոխերարեսն[108] էր։ Ահա աստատանները, նրանից ստանալով Արգաուսը[109], հաստատվեցին այնտեղ և ամեն տեղից այնտեղ հավաքվելով, սկսեցին ավարառել Ռոմանիան։

179. Սերգիոսը մի քանի տարի իր աշակերտների հետ մնալով Արգաուսում, Աստծո արդար դատաստանի համաձայն կացնահար եղավ, որպես Աստծո եկեղեցին երկուսի հատած, և նետվեց հուրն հավիտենական։ 180. Քանզի Նիկոպոլսի Կաստելլոնից Յանիոնը (Սերգիոսին) գտնելով Արգաուսից վերև գտնվող լեռան վրա տախտակներ տաշելիս, կացինը ձեռքից խլելով՝ հարվածեց նրան ու սպանեց։ 181. Ահա այսպես հեռացավ այս կյանքից վերջին ու ամենամեծ գազանը, աշխարհի արարչագործության վեց հազար երեք հարյուր քառասուներեքերորդ թվականին[110]։

182. Նրա ամենամտերիմ աշակերտներն էին Միքայելը, Կանակարիսը և Հովհաննես Առրատոսը, երեք ստանուն հոգևորականներ, նախապես հիշատակված Թեոդոտոսը, Վասիլիոսը, Զոսիմոսը և շատ ուրիշներ։ 183. Ահա նրա այս աշակերտները, որոնց նրանք նաև սինեկդեմոս են անվանում, որպես ինչ-որ ստանուն հոգևորականներ, Արգաուսում հավաքված համայն ժողովրդին, իրենց ուսուցիչ Սերգիոսի մահից հետո շարունակեցին ավերել նրա և նախորդ (աղանդապետների) վարդապետություններով։ Նրանք նոր ուսուցիչ չհռչակեցին, ինչպես նախկիններն էին անում, այլ բոլորը հավասար էին։ Նրանք ունեն և ավելի ստորադաս ստանուն հոգևորականներ, որոնց նոտար են անվանում։

184. Այն ժամանակները հանդես եկած և այդ ավերիչ ժողովրդի առաջնորդը դարձած Կարբեասը[111], այդ ժողովրդին այնքան բազմացրեց, որ Արգաուսում չէր տեղավորվում, դրա համար նա եկավ, կառուցեց Տիվրիկն ու այնտեղ բնակվեց և՛ ազատվելու

համար իրենց հարևան Մելիտենացի հագարացիների գերիշխանությունից, և՛ մարդկանց հետ շփում չունենալով, կատարելապես դևերին նմանվելու։ Նա ուզում էր մոտենալ Հայաստանին[112] և Ռոմանիային։ 185. Նա նպատակ ուներ իրեն ենթարկվողներին հպատակեցնել և օգտագործել գերեվարության համար, իսկ չենթարկվողներին վաճառել սարակինոսներին, ավարառել Ռոմանիայի Պոնտոսում գտնվող սահմանամերձ շրջանները։ Բացի այդ, օգտվելով տեղի հարմարավետությունից, Ռոմանիայում մահապատժի սպառնալիքի տակ ապրող այդ աղանդի կողմնակիցների համար պատրաստի ապաստարան էր նախապատրաստում, ապա և Տիվրիկի մոտիկ ապրող անառակ, սանձարձակ ու տխմար մարդկանց իր մոտ էր կանչում, քանզի այդտեղ խայտառակ արարքներ գործելու ազատություն կար։ Նրա կենդանությանը հիշյալ ստանուն հոգևորականներից ոմանք կործանեցին իրենց կյանքը, ոմանք էլ մնացին։

186. Նրա մահվանից հետո այդ կործանարար ժողովրդի իշխանությունը ժառանգում է Խրիսոխերիսը[113], նրա եղբորորդին և փեսան։ 187. Մենք նրա օրոք գերի իշխանավորների փոխանակության համար եղանք Տիվրիկում, կայսերական առաջադրանքով, ինչ որ կատարեցինք մեր բարեպաշտ, արդար կայսրեր Վասիլի, Կոստանդինի և Լևոնի թագավորության երկրորդ տարում։ 188. Մենք այնտեղ մնացինք ինն ամիս, երբ դեռ կենդանի էին սինեկդեմոս կոչվող պիղծ Վասիլիոսն ու Զոսիմոսը, և մեր առաջ դրված խնդիրները, ճշգրտորեն հետազոտելով ու աշխատասիրելով, ջանացինք բոլորին հայտնի դարձնել՝ հրամանով մեր սուրբ, ուղղափառ և մեծ կայսրերի, որպես նվաստ ու անարժան ստրուկ, տեղի տալով մեծ երկյուղին։ 189. Բայց սրանց մասին բավական է։ Հաջորդ ճառերում[114] մենք ձեզ կպատմենք նրանց մի քանի ավելի կատարյալ աղանդների մասին, եթե մեզ՝ նվաստներիս Աստված օգնության ձեռք մեկնի, որին՝ Հոր և Որդո և Հոգվույն Սրբո, միակ ճշմարիտ Աստծուն, ամենայն տեսանելի և աներևույթ արարչության արարչին, պահպանչին ու Տիրոջ է պիտո փառքը հավիտյան։ Ամեն։

ՊԵՏՐՈՍԻ ԱՄԵՆԱՆՎԱՍՏ ՎԱՆԱԿԱՆԻ ՈՒ ՎԱՆԱՀՈՐ [ԵՐԿԸ] ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՒՅՆ ՄԱՆԻՔԵԱՑԻՆԵՐՆ ԵՆ

1. Պավլիկյանները, որ նույն մանիքեացիներն են, մանիքեացիների փոխարեն պավլիկյաններ կոչվեցին ոմն Պողոս Սամոսատցու՝

Կալլինիկե անունով մի մանիքեցի կնոջ որդու անունից։ Այդ կինն ունեցավ երկու որդի, հիշյալ Պողոսին և Հովհաննեսին։

2. (Կալլինիկեն) մանիքեական աղանդն ուսուցանելով, նըրանց Սամոսատից Արմենիակների (բանակաթեմն) ուղարկեց իրենց աղանդը վարդապետելու։ Գալով Ֆանարիայի մի գյուղը, նըրանք տարածեցին իրենց աղանդը։ Այսուհետև գյուղը վերանվանվեց էպիսպարիս, իսկ նրանց աշակերտները կոչվեցին պավլիկյաններ։

3. Այս պավլիկյանները հիշյալ, ոչ այնքան անվանի Պողոսի վարդապետությունից մի քանի տարի անց մի ուրիշ ուսուցիչ ունեցան, անունը Կոստանդին, որն իրեն Սիլվանոս վերանվանեց։ (Պավլիկյանները) հենց սրան են համարում իրենց առաջին աղանդապետը և ոչ Պողոսին։

4. Քանզի նա իր հերետիկոսական գաղափարները ոչ գրավոր, այլ անգիր, բանավոր ավանդությամբ ավանդեց նրանց, Ավետարանն ու (Պողոս) առաքյալի (Թղթերը) սակայն գրավոր։ Դրանք և՛ գրությամբ, և՛ բովանդակությամբ բառացիորեն համընկնում են մերիններին, միայն աղավաղվել է յուրաքանչյուր գլխի իմաստը՝ ըստ իր գաղափարների։ Նա նրանց համար կարգ էլ սահմանեց, թե Ավետարանից ու Առաքյալի (Թղթերից) բացի պետք չէ որևէ այլ գիրք ընթերցել։

5. Կոստանդին-Սիլվանոսից հետո նրանք ունեցան երկրորդ ուսուցիչ, անունը Սիմեոն, որն իրեն վերանվանեց Տիտոս։ Երրորդ ուսուցիչը ծագումով հայ էր, անունը Գեգնեսիոս, որն իրեն վերանվանեց Տիմոթեոս, չորրորդը՝ Հովսեփը, որն իրեն վերանվանեց էպաֆրոդիտոս։ Նրանից հետո՝ Զաքարիան, որին, սակայն, որպես վարձկանի, ոչ ճշմարիտ հովվի[115], ոմանք չեն ընդունում։ Վեցերորդը ազտեղի Վահանն էր, իսկ յոթերորդը՝ Սերգիոսը, որն իրեն Տյուքիկոս վերանվանեց։

6. Մանիին, Պողոսին ու Հովհաննեսին և ուրիշներին, ով էլ նրանց առաջարկվի, սիրով նզովում են, բայց Կոստանդինին, որ Սիլվանոս վերանվանվեց, Սիմեոն-Տիտոսին, Գեգնեսիոս-Տիմոթեոսին, Հովսեփ-էպաֆրոդիտոսին, ազտեղի Վահանին և Սերգիոս-Տյուքիկոսին նրանք համարում են իրենց ուսուցիչները և ոչ մի դեպքում չեն նզովում, այլ պատվում են ինչպես Քրիստոսի առաքյալներին։

7. Ընդունում են վեց եկեղեցի. Մակեդոնիան, այն է՝ Կիբոսոսան, Կողոնիայի մի բերդը, ուր ուսուցանեցին Կոստանդին-Սիլվանոսն ու Սիմեոն-Տիտոսը, Աֆյաոն, այն է՝ Մանանաղին, Սամոսատի գյուղը, ուր ուսուցանեց Գեգնեսիոս-Տիմոթեոսը, Փիլիպեցվոցը, այդպես են անվանում Հովսեփ-էպաֆրոդիտոսի և իրենց կողմից վարձկան հովիվ հորջորջված Զաքարիայի աշակերտներին, Լավոդիկեցվոցը, նկատի ունեն արգաուսցիներին, Եփեսացվոցը, այն է՝ մոպսուեստացիներին, և Կողոսացվոցը, նկատի ունեն կինոխորիտներին։ Վերջին երեք եկեղեցիներում, ասում են, Սերգիոս-Տյուքիկոսը ուսուցանեց։

8. Պատվում ու հարգում են այս վեց եկեղեցիները և յոթ ուսուցիչներին, իսկ բոլոր մնացածներին, ով էլ իրենց առաջարկվի, և՛ նզովում են, և՛ մերժում։

9. Իրենց առաջին դոգման մանիքեցիներինն է, սրանք էլ նըրանց նման երկու սկզբունք են խոստովանում։ Ասում են, թե «Հռոմայեցիներից մեզ լոկ մի բան է տարբերում, այն, որ մենք երկնային հորը մի աստված ենք համարում և գտնում, որ նա այս աշխարհում իշխանություն չունի, այլ կունենա այն ապագա (աշխարհում), և մի ուրիշ աստված՝ աշխարհի արարչին, որն ունի այս աշխարհի իշխանությունը։ Իսկ Հռոմայեցիները,— ասում են նրանք,— միևնույն աստծուն խոստովանում են և՛ որպես երկնային հայր, և՛ որպես համայն աշխարհի արարիչ»։ Իրենք իրենց քրիստոնյա են կոչում, իսկ մեզ՝ Հռոմայեցի։

10. Իրենց մասին գաղափար չունեցողներին նրանք պատրաստակամությամբ ասում են. «Հավատում ենք Հոր, Որդուն և Սուրբ Հոգուն, Հորը երկնային։ Նզովյալ լինի նա, ով այդպես չի խոստովանում»։ Նրանք մեծ վարպետությամբ սքողում են իրենց վատությունը, քանզի ասելով «Հորը երկնային», չեն ավելացնում՝ «միակ Աստծուն, ով ստեղծեց երկինքն ու երկիրը և ամեն ինչ, որ նրանցում է»։ Դրա համար մանիքեցու հետ խոսքի բռնվող ուղղափառը պետք է նրանից պահանջի արտասանել հավատո հանգանակը, այն է. «Հաւատամ ի մի Աստուած Հայր ամենակալ, արարիչն երկնի եւ երկրի, տեսանելեաց եւ ամենայն աներեւութից» և շարունակությունը։

11. Այնուհետև առանց չափ ու սահմանի հայհոյում են ամենասրբուհի Աստվածածնին։ Իսկ եթե մեր կողմից ստիպվեն խոս-

տովանել նրան, ասում են այլաբանորեն. «Հավատում եմ ամենասրբուհի Աստվածածնին, որի մեջ մտավ և որից դուրս եկավ Տերը»։ Նկատի ունեն «վերին երուսաղեմը», ուր (Պողոս) առաքյալի ասելով՝ «կարապետ մեր Յիսուս եմուտ վասն մեր»[116]։ Նրանք չեն ասում «Ճշմարիտ սուրբ Մարիամ Աստվածածին», ոչ էլ թե «Տերը նրանից մարդեղացավ»։

12. Հայհոյում են և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պատվական մարմնի և արյան հաղորդության աստվածային խորհուրդը, ասելով, թե «Տերը իր աստվածային մարմինն ու արյունը տալով առաքյալներին, ասում էր. «Առէք, կերայք եւ արբէք»[117], բայց ոչ «հացը և գինին»։ «Պետք չէ,— ասում են նրանք,— հաղորդվել հացով և գինով»։

13. Հայհոյում են նաև պատվական խաչը, ասելով, թե «խաչը ինքը Քրիստոսն է, պետք չէ երկրպագել փայտը, քանզի նա անիծյալ գործիք է»[118]։

14. Մերժում են մարգարեներին և մյուս սրբերին, նաև մեծ առաջին առաքյալ սուրբ Պետրոսին, բոլորից շատ նրան են վատաբանում և նրանից խորշում[119], ասելով, թե սրանցից և ոչ մեկը չի պատկանում ընտրյալների թվին։

15. Երբ մեզ հետ են խոսակցության բռնվում, իրենց ժողովարանները այլաբանորեն կաթողիկե եկեղեցի են անվանում, բայց իրենց շրջանում՝ աղոթարան։

16. «Մկրտություն» ասելով հասկանում են Ավետարանի ասույթները, ինչպես որ Տերն է ասում. «Ես եմ ջուրը կենդանի»[120]։

17. Ահա նման և բազում այլ դեպքերում այդպես այլաբանորեն են արտահայտվում՝ երբ բացահայտվեն կամ անել վիճակում դտնվեն։ Բայց պետք է նրանց հետ մշտապես խելամիտ և պարզիպարզո բանավիճել, քանզի կեղծիքը նրանց համար միշտ պատրաստ է, իրենց սեփական օրենքն է, հատկապես երբ նեղ դրության մեջ են ընկնում։ Նրանցից ինչ էլ պահանջեն կամ ստիպեն որ ասեն, խաբեությամբ կկատարեն, այդ բանի համար իրենց շրջանում անմեղ են համարվում։

18. Քանզի Մանին նրանց հենց այդպես էլ ավանդեց։ Նա ասաց. «Ես անգութ չեմ Քրիստոսի նման, որն ասաց. «Եւ որ ուրացցի դիս առաջի մարդկանց, ուրացայց եւ ես զնա»[121]։ Ես ասում եմ. «Ով մարդկանց առջև ինձ ուրանա և կեղծիքի օգնությամբ ապահովի իր փրկությունը, որպես ինձ չուրացողի, սիրով, առանց

պատասխանատվության ընդունում եմ և՛ կոչը, և՛ կեղծիքը, դա համարում եմ հօգուտ ինձ արված խոստովանություն»։

19. Նրանք նմանապես մերժում են մեր երեցներին և մնացած հոգևորականներին, իրենց հոգևորականներին անվանում են սինեկդեմոսներ և նոտարներ, որոնք և՛ հանդերձանքով, և՛ կենցաղավարությամբ, և՛ կյանքի մնացած բոլոր պայմաններով իրենցից չեն տարբերվում։

20. Նրանք աղավաղված ունեն Ավետարանի և (Պողոս) առաքյալի բոլոր ասույթների (իմաստը), դրանք հակասում են մերիններին։ Նրանք այնպիսի մեկնություն են տալիս դրանց, որ հարմարվեն իրենց գաղափարներին։ Ինչպես ասվեց, այդ (ասույթները)՝ գրությամբ բառացիորեն նույնն են, ինչ մերինները, բայց՝ իմաստն աղավաղած, ինչպես այդ մասին ավելի հստակ ասել եմ իմ հանգամանալից շարադրանքի մեջ[122]։

21. Անհրաժեշտության դեպքում երկրպագում են մեր Ավետարանին, բայց ոչ նրա վրա եղած խաչին, այլ Գրքին, ասելով, «Քրիստոսի խոսքերն են, դրանք ենք երկրպագում»։

22. Նրանցից ոմանք հիվանդանալու կամ այլ ցավ զգալու դեպքում, խաչն իրենց վրա են դնում և երբ ապաքինվեն, ջարդում են այն և կրակը գցում այրելու համար, կամ էլ տրորում են։

23. Նրանցից ոմանք իրենց երեխաներին մկրտում են իրենց մոտ գերի ընկած մեր երեցների ձեռքով։ Ուրիշներն էլ աննկատ մեր ուղղափառ եկեղեցին են մտնում և հաղորդվում աստվածային խորհուրդներին, պարզամիտներին է՛լ ավելի խաբելու համար։

24. Ահա գործի դնելով այդպիսի խորամանկություն ու կեղծիք, նրանք մասնակից են դառնում ամեն տեսակի անառակության ու պղծության, առանց խորության ու վախի խառնակվում են երկու սեռի ներկայացուցիչների հետ։ Ասում են, որ նրանցից ոմանք միմիայն իրենց ծնողներից են քաշվում։

1. Անունը հայանի չէ։
2. «Գիրք սաղմոսաց», սաղմոս ճԽԵ (ճԽԶ), 8 (այսուհետև՝ սաղմոս)։
3. «Պաւղոսի առաքելոյ առ Եփեսացիս Թուղթ», Դ, 6 (այսուհետև՝ Եփես.)։
4. Համմ. սաղմոս 2 (ՁԱ), 11։
5. Բուլղարիան քրիստոնեությունն ընդունեց 865 թ., ցար Բորիսի օրոք (852—889), որը քրիստոնյա դառնալուց հետո իր ժամանակակից բյուզանդական կայսեր անունով կոչվեց Միքայել։

6. Բյուզանդական հեղինակները ջանում են ցույց տալ, որ պավլիկյան աղանդը III դարում ծագած և բազում դարեր բյուզանդական հասարակությանը հուզած մանիքեության վերածնունդն է։ Դրանով նրանք ոչ միայն աշխատում էին ժողովրդական զանգվածներին հեռացնել նորահայտ աղանդից (կայսրությանն հաջողվել էր դարերի ընթացքում հեղինակազերծել մանիքեությունը), այլև պավլիկյանների դեմ օգտագործել մանիքեցիների դեմ գրված ողջ գրականությունը, նրանց դեմ կիրառել մանիքեցիների դեմ հրապարակված օրենքները։

7. Բյուզանդական աղբյուրներում հոռոմայեցի են կոչվում հույները, մեր հասկացողությամբ՝ բյուզանդացիները, իսկ նրանց երկիրը, Բյուզանդական կայսրությունը՝ Ռոմանիա։

8. Նկատի ունի Վասիլ I-ի որդիներ Կոստանդինին և Լևոնին, որոնք հոր կենդանության օրոք, նրա թագավորության սկզբում կայսերակից հռչակվեցին։

9. Նկատի ունի Վասիլ I-ին (867—886)։

10. Այժմ Դիվրիգի՝ Թուրքիայում։

11. Այսինքն՝ Բուլղարիայում։

12. Բառացի՝ նախագահ, այստեղ՝ կրոնապետ, տվյալ դեպքում արքեպիսկոպոս։

13. Այսինքն՝ հոգևորականը։

14. Նկատի ունի Քրիստոսին։

15. Համմ. «Աւետարան ըստ Յովհաննու», ԺԱ, 11 (այսուհետև՝ Հովհ.)։

16. Համմ. «Մարդարէութիւն Եսայեայ», ԿԲ, 1 (այսուհետև՝ Եսայի)։

17. Բ Կորնթ., Բ, 11։

18. Համմ. Եսայի, ՍԲ, 5։

19. Կրճատում ենք 18—35 պարբերությունները, որոնք զուտ դավանաբանական, բանավիճային բովանդակություն ունեն, որտեղ հեղինակը Սուրբ Գրոց բազմաթիվ վկայություններով «հաստատում է» Մարիամի աստվածածին և կույս լինելը, խաչի սրբությունը, և այլն։

20. Միջնադարում հույներն իրենց հռոմայեցի (հայերեն՝ հռոմ) էին անվանում, քանզի «հելլեն»-ը կորցրել էր իր նշանակությունը։ Միջնադարում «հելլեն» նշանակում էր հեթանոս։

21. Հովհ., Ե, 37։

22. Նկատի ունի պավլիկյանների դեմ գրած իր «Ճառերը»։

23. «Թուղթ Պետրոսի երկրորդ», Գ, 14—16։

24. Համմ. «Աւետարան ըստ Մատթէոսի», ԻԶ, 3 (այսուհետև՝ Մատթեոս)։

25. Նկատի ունի պավլիկյանների դեմ գրած իր «Ճառերը»։

26. Կրճատում ենք 46—82 պարբերությունները, որոնք կապ չունեն պավլիկյան շարժման պատմության հետ։ Պետրոս Սիկիլիացին պավլիկյանների աղանդը մանիքեության վերածնունդ համարելով, հիշյալ պարբերություններում տալիս է մանիքեցիների պատմությունը ըստ Կյուրեղ Երուսաղեմացու (Catech. VI, Migne, Patr. graeca, t. 33. col. 573—601), Սոկրատ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմության (Migne, Patr. graeca, t. 67, col. 136—140), և Եպիփան Կիպրացու (De mensuris):

27. Մանիքեության հիմնադիր։ Մահապատժի ենթարկվեց պարսից արքա Վարահրան I-ի կողմից 276/277 թթ.։

28. Ջանարիան գտնվում էր Կողոնիայի և Արմենիակների բանակաթեմի միջև, Իրիս (Եշիլ-Ըրմակ) և Լյուկոս (Կելկիտ-Ըրմակ) գետերի միջև։

29. Իմա՝ Սատանայի։

30. Պետրոս Սիկիլացին կապում է հունարեն ἐπισπείρω «ցանել» բայի հետ։ Բացառված չէ, որ տեղանվան մեջ Սպերն է թաքնված։

31. «Աւետարան ըստ Ղուկասու», ԻԲ, 27 (այսուհետև՝ Ղուկաս)։

32. «Պաւղոսի առաքելոյ առ Հռովմայեցիս Թուղթ», Ա, 30 (այսուհետև՝ Հռոմ.)։

33. Մատթեոս, ԻԴ, 24։

34. Կոստանդինն ու Լևոնը Վասիլ I-ի որդիներն էին, որոնք հոր կենդանության ժամանակ կայսերակից օծվեցին, Կոստանդինը 867 թ. նոյեմբերի 5-ի և 868 թ. փետրվարի 12-ի միջև, իսկ Լևոնը՝ 870 թ. հունվարի 6-ին։ Վասիլի մահից հետո թագավորեց Լևոնը՝ որպես Լևոն VI (886—912)։ Կոստանդինը վախճանվել էր դեռևս 879 թ.։

35. Պետրոս Սիկիլիացին պարզապես հաճոյաբանում է։ Չէ՞ որ ինքը Պետրոսը արդեն ցույց էր տվել, որ բյուզանդական կայսրերը պավլիկյաններին հալածում էին դեռևս VII դարից։

36. Բառախաղ՝ βάσις (հիմք) և λεῖα (հարթ), որով առացվում է βασιλεία: Օգտագործված է դեռևս Բարսեղ Կեսարացու համար։

37. «Օգոստոսը» կայսր բառի հոմանիշն է։

38. Նկատի ունի 46—86-րդ պարբերությունները, որոնց մեծ մասը մանիքեցիներին է վերաբերում։

39. Հերակլ կայսր (610—641)։

40. Նկատի ունի Կոստաս II-ին (641—668)։

41. Անկատած Մանանադի գավառն է, որտեղ հետագայում տարածվեց Բոնդրակեցիների աղանդը։ Համմ. Ակիստակես Լատիվերացի, Պատմություն, գլ. ԻԳ։

42. Տե՛ս Իռավրացիների «էկլոգա» դատաստանագրի 17-րդ տիտղոսի 52-րդ հոդվածը։

43. Վալենտինոսի և նրա գաղափարների մասին խոսում է Կյուրեղ Երուսաղեմացին։

44. Սիլվանոսի փոխարեն գրում է Սալոանուս։ Բառախաղ. հունարեն σαλος նշանակում է «հիմար, խելագար», իսկ անուս՝ «անխելք, անմիտ»։

45. Նախապես մտնում էր Առաջին Հայքի մեջ։ Այժմ Շապին Գարահիսար՝ Թուրքիայում։

46. Այդպես էին կոչվում կայսեր մերձավոր մարդիկ, պալատականները, որ զբաղված էին գլխավորապես դիվանագիտությամբ ու ներքին անվտանգության հարցերով։ Համապատասխանում են նախկին «մագիստրիանոսներին»։ Նրանց հիշում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին՝ «վասլիկոս» ձևով (տե՛ս «Պատմութիւն Հայոց», էջ 284—285)։

47. Սաղմոս է, 16, 17։

48. Սորոս հունարեն նշանակում է «կույտ»։ Բայց գուցե տեղանվան տակ

քաղված է հայերեն «Ձոր»-ը, որ բաղում տեղանուններին կից է հանդես գալիս։

49. Բառացիորեն վերցրել է «Ֆիլիոլոգոս» կոչված աշխատությունից։ J. B. Pitra, Spicilegium Solesmense complectus sanctorum patrum scriptorumque ecclesiasticorum anecdota hactenus opera, t. III, Parisiis, 1855, p. 352. Միջնադարում թարգմանվել է հայերեն «Բարուախօս» վերնագրով (տե՛ս Н. Я. Марр, Сборники притч Вардана, часть III, С.-Петербург, 1894, էջ 129—175)։

50. «Պաւղոսի առաքելոյ թուղթ առ Կողոսացիս», Ա, 16—17 (այսուհետև՝ Կողոս.)։

51. Հուստինիանոս II (685—695, 705—711)։

52. Պողոս առաքյալի մի աշակերտի անունն է։

53. Բնագրում՝ բառախաղ. τέλειον μῖσος ἀλλήλους μισήσαντες οἱ τοῦ μύσους προστάται։ «Ատելի» և «պղծություն» բառերը հունարենում նույն կերպ են հնչում։

54. Բառախաղ։ Տիմոթեոս նշանակում է «աստծո պատիվ», իսկ «Թիմոթեոս»՝ «աստծո ցասում»։

55. «Պաւղոսի առաքելոյ թուղթ առ Երբայեցիս», Զ, 20 (այսուհետև՝ Եբր.)։

56. Համմ. Հովհ., Դ, 10—11։

57. Տիմոթեոսը պարզապես արտասանել է «Ուրացման բանաձևերը», որ եկեղեցին պարտադրում էր աղանդավորներին արտասանել, երբ նրանք «զարձի» էին գալիս։ Այդպիսի «բանաձևեր» պահպանվել են։

58. Նշանակում է «կնիք»։ Դրվում էր պաշտոնական, հատկապես պատրիարքական փաստաթղթի տակ։ Հանդիպում է նաև հայկական աղբյուրներում։

59. Ժանտախտը Բյուզանդական կայսրությունում տարածվել էր 748 թվականին։

60. Աֆրոնիտոս նշանակում է «անմիտ, հիմար»։ Բառախաղ է։ Ինչպես կտեսնենք, Հովսեփն առացել էր Պողոս առաքյալի աշակերտ էպաֆրոդիտոսի անունը։

61. Հովհ., ժ, 12։

62. Մեր կարծիքով Գրիգոր Մամիկոնյանը (մանրամասն տե՛ս Р. М. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961, էջ 48)։

63. Քաղաք Առաջին Գալատիայում։

64. Համմ. Մատթեոս, է, 15։

65. «Պաւղոսի առաքելոյ առ Փիլիպեցիս թուղթ», Գ, 18 (այսուհետև՝ Փիլիպ.)։

66. Համմ. «Պաւղոսի առաքելոյ առ Տիմոթէոս երկրորդ թուղթ», Դ, 4 (այսուհետև՝ Տիմ.)։

67. Եբր., ժ, 29։

68. Հովհաննու ավետարանում Մխիթարիչ (Պարակլետոս) է կոչվում Սուրբ Հոգին, որին Քրիստոսը խոստանում է իր աշակերտներին (Հովհ., ԺԴ, 16, 26, ԺԵ, 26, ԺԶ, 7)։

69. Հռոմ., Բ, 11։

70. Ա Տիմ., Բ, 4։

71. Բ. Կորնթ., Բ, 17։

72. Մատթեոս, ԻԵ, 12։ Համմ. Ղուկաս, ԵԳ, 25, 27։

73. «Գործք առաքելոց», ԺԲ, 13—14։

74. Համմ. Մատթեոս, Ի, 13 և Ղուկաս, ԺԶ, 25։

75. Մատթեոս, Ը, 11—12։

76. Համմ. Հռոմ., Թ, 4։

77. Համմ. Մատթեոս, ԺԵ, 26։ Մարկոս, է, 27։

78. Համմ. Սաղմոս ե, 10։

79. Մատթեոս, է, 23։

80. Իրենն կայսրուհի (780—802)։

81. Թեոփիլոս կայսր (829—842)։

82. Համմ. Բ Թեսաղ., Բ, 3։

83. Այստեղ նշանակում է «քահանաների ապաստավորներ»։

84. Մատթեոս, ԺԱ, 23։

85. Մատթեոս, Զ, 22։

86. Ղուկաս, ԺԸ, 10—13։

87. Համմ. Բ Կորնթ., Ժ, 18։

88. Մատթեոս, ԺԵ, 14։

89. Համմ. Գաղատ., Դ, 9։

90. Համմ. Բ Թեսաղ., Բ, 3։

91. Համմ. Բ Կորնթ., է, 1։

92. Մատթեոս, ԻԸ, 20։

93. Կողոս., Բ, 5։

94. Բ Կորնթ., ԺԳ, 12։

95. Հովհ., Ե, 18։

96. Ղուկաս., ԺԴ, 11, ԺԸ, 14։ Համմ. Մատթեոս, ԻԳ, 12։

97. Հովհ., Ը, 54։

98. Համմ. Մարկոս., Գ, 29 և Մատթեոս, ԻԳ, 12։

99. Համմ. Հովհ., ԺԲ, 43։

100. Մատթեոս, Ե, 28։

101. Մատթեոս, Ե, 28։

102. Նույն տեղում, ԺԲ, 34։

103. Նոր Կտակարանում «սինեկդեմոս» են կոչվում Պողոս առաքյալի ուղեկիցները (Գործք առաքելոց, ԺԲ, 29)։

104. Միքայել I Բանգաբե (811—813)։

105. Լևոն V Հայկազն (813—820)։

106. Այժմ Նիքսար՝ Թուրքիայում։

107. Նշանակում է «անկայուն», մի տեղում չմնացող։ Բացառված չէ, որ հայերեն «հաստատ, հաստատուն» բառն է, որ վերցված է Պողոս առաքյալի թղթերից. «Այսուհետև ոդջ լերուք, ճաստատուն կացէք, եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ., ԺԳ, 12)։

108. Թարգմանաբար նշանակում է «Միաձեռնյան»։ Արաբերեն ալ-Ակտայի հունարեն թարգմանությունն է։ Խոսքը Մելիտենեի ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտայի մասին է, որին Թեոփանեսի Շարունակողը կոչում է Ամեր և Ամբրոն։ Նա Ամբրոն է կոչվում և բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսում։

Իր արտացոլումն է գտել նաև քրդական «Ոսկեձեռնյան խան» էպոսում։ Մանրամասն տե՛ս **Р. М. Бартикян**, Дигенистика в курдском эпосе о Златоруком хане?, «Լրաբեր», № 1, 1967։

109. Այժմ Արդուան՝ Թուրքիայում։

110. Մ. թ. 835 թ.։

111. Մեր կարծիքով Կարապետ անվան փաղաքշականն է՝ Կարբիս։ Բյուզանդական էպոսում նա կոչվում է Կարոս։

112. Հայաստան ենք թարգմանում, թեև բնագրում հոգնակի է՝ταῖς Ἀρμενίαις —Հայաստանները (Հայքերը)։

113. Թարգմանաբար նշանակում է «Ոսկեձեռնյան»։ Հանդիպում է բյուզանդական էպոսում «Խրիսոխերպոս» ձևով։

114. Ինչպես ասել ենք, Պետրոս Սիկիլիացին պավլիկյանների դեմ գրել է նաև զուտ դավանաբանական բնույթի ճառեր, որոնք պահպանվել են։

115. Համմ. Հովհ., ժ, 12—13։

116. Համմ. Երր., 2, 20։

117. Համմ. Մատթեոս, ԻԶ, 26—27։

118. Նկատի ունի Քրիստոսի խաչելությունը, այն, որ Քրիստոսը խաչի վրա մահապատժի ենթարկվեց։

119. «Խորշում» բառից հետո էկսկուրսալի Փ—I—1 ձեռագրում (XI դար) կա հետևյալ հավելումը. «Նրան ուրացող անվանելով։ Այդ ամենասիրտները բանի տեղ չեն դնում նրա դղյակն ու արցունքները, ոչ էլ Քրիստոսի, մեր Աստծո և փրկչի նրա օգտին հարությունից հետո ասված խոսքերը. «Ասացէք ցաշակերտս եւ ցՊետրոս» (Մարկոս, ԺԶ, 7)։ Այնուհետև. «Սիմօն Յովհաննու սիրե՞ս զիս. արածնա զոչխարս իմ, արածնա զգառինս իմ» (Համմ. Հովհ., ԻԱ, 15—17), նմանվելով նավատոսին և նրա աննեղոտամտությունն ընդունելով։ Այդ խայտառակ հավատը դավանողները հանդգնում են հայհոյել Աստծուն և երկնային հոգը, ասելով, թե Քրիստոսի՝ մեր Աստծո, մկրտության պահին վանականի աքեմ հագած Սատանան՝ այս աշխարհի իշխանը, երևաց ու ձայնեց. «Դա է որդին իմ սիրելի» (Մատթեոս, Գ, 17), որ Պետրոս առաքյալը տեսավ վանականի հանդերձանքով ու աքեմով մարգկանց երևացողին։ Հենց սրա համար է, որ նրանք առում են հիշյալ առաքյալին։ Սատանայի կողմից իսկապես մթագնվածները ուսուցանում են, որ Աստծո կողմից հրեշտակի միջոցով մարդկանց ցույց տրված և ընծեռված սուրբ աքեմը, որ վանականներս ենք հագնում, Սատանայի կողմից է ցույց տրվել։

120. Համմ. Հովհ., Գ, 19։

121. Մատթեոս, ժ, 33։

122. Նկատի ունի իր «Պատմության» 42—44, 79—81, 95—97, 138 պարբերությունները։

VI

ԱՄՈՐԻՈՆԻ 42 ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Թեոփիլոս կայսեր ժամանակ բյուզանդա-արաբական պատերազմների թատերաբեմը դարձավ նաև Թեոփիլոսի ծննդավայր

Ամորիոն քաղաքը, որը 838 թ. սեպտեմբերի 24-ին գրավվեց և կործանվեց խալիֆա Մոտասսեմի կողմից: Դա խալիֆայի պատասխանն էր Թեոփիլոսի կողմից Կոմմագենեի Սոզոպետրո (Զապետրա) քաղաքի կործանման համար: Ամորիոնում արաբների ձեռքն ընկան բազմաթիվ ռազմագերիներ, այդ թվում և բյուզանդական 42 նշանավոր բարձրաստիճան զինվորականներ և քաղաքական դեմքեր, որոնք տարվելով Բաղդադ, բանտ նետվեցին, իսկ 845 թ. գլխատվեցին: Նրանց թվում էր և Կողոնիայի դուքս Կալլիստոսը, որը արաբների ձեռքն ընկավ 838 թ. դեպքերից հետո՝ պավլիկյան պարագլուխ Կարբեասի կողմից: «Ամորիոնի 42 նահատակների վարքը», որից հատվածներ ենք բերում թարգմանաբար, մեր նյութի համար կարևոր է այն տեսակետից, որ ավելի ստույգ է դարձնում Կարբեասի ապստամբության ժամանակը (IX դարի 30-ական թվականների վերջ կամ 40-ական թվականների սկիզբ, այնինչ Թեոփանեսի Շարունակողի տվյալներով ապստամբությունն ավելի ուշ ժամանակ է ցույց տրված):

Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից. **В. Васильевский** и **П. Никитин**, Сказания о 42 Аморийских мучениках и церковная служба им. «Записки Императорской Академии наук», серия VIII, т. VII, № 2, С.-Петербург, 1905.

էջ Г. 27

«... Մահվան մահիճում Թեոփիլոսը՝ իր հարազատներին կըտակ է թողնում այն մասին, որ Կողոնիա ուղարկված փառավոր-յալ Կալլիստոսը մնա տեղում և վարի դուքսի պաշտոնը...»։

էջ Г. 29

«... (Կալլիստոսը Կողոնիայում) տեսնում է, որ որոշ աստիճանավոր անձինք տառապում են մանիքեցիների[2] աղանդով։ Սկզբում նա նրանց հորդորում է, կոչ է անում, խնդրում հեռանալ այդ պիղծ աղանդից՝ նրանց պարզ ցույց տալով անաչառ Աստծո սարսափելի դատաստանը, հավիտենական դժոխքը, անմար հուրը, որ Աստված պատրաստել է Սատանայի և նրա դևերի համար, բոլոր նրանց համար, ովքեր մերժում են նրա սուրբ հոգով ճշմարիտ և ոչ երևակայական մարդեղացումը կույսից՝ ի փրկություն և ի վերստին կոչումն մարդկության։ Երբ նա տեսավ, որ նրանք

ավելի նախանձախնդրությամբ են պաշտպանում խաբեությունն ու չեն ուղղվում, հրաժարվեց նրանց հետ մտերիմ լինելուց։ Դրա համար ահա այդ վատթարներից վատթարները և մոլեգնության անունը կրողները[3], այդ բարերարին, իրենց երկրի այդ պիտանի և հեզ առաջնորդին, իշխանին ու սատարին, Աստծո կողմից հանդես եկողին, ո՛վ հիմարություն, թաքուն ու նենգ կերպով մտածեցին Քշնամիների ձեռքը հանձնել։ Իրենց Քշվառական հոգում հղացան և արդարի դեմ նենգամտությունը երկնեցին, ինչպես Հուդան անօրեն մատնությունը։ Քշնամիների դեմ ունեցած մի ընդհարման ժամանակ նրան հանձնում են իրենց աղանդակից մանիքեցիներին, որոնք իրենց ամբարշտությամբ հրաժարվել էին քրիստոնյաների ավանդություններից ու երկրից, ենթարկվել էին Հագարից ծագող արյունարբու ցեղերին... խաղաղության մարդը, բարեպաշտության զորավիգ Կալլիստոսը, համաձայն Աստծո սահմանածի, նույն նենգ եղանակով, ինչ իր Տերը, մատնվում է ամենաՔշվառական կարբեասի իշխանության ներքո գտնվող ապստամբների ձեռքը։ Սկզբում նրան և նրա փոքրաթիվ ծառաներին դատապարտում են բանտարկության և երկաթե կապանքների։ Նա քաջաբար տարավ այդ փորձությունները և ասում էր. «Եթե Քո անվան համար, Տե՛ր, մահվան սովերի միջով անգամ ընթանամ, չեմ երկյուղի փորձություններից, քանզի Դու ինձ հետ ես»։

Հագարացիների ցեղապետն[4] իմանալով նրա մասին, իսկույն կարգադրում է նրան կապանքների մեջ Ասորիք տանել, երանելիի մտերիմներ, Քրիստոսի քաջ մարտիրոսներ Թեոդորոսին, Կոստանդինին, Թեոփիլոսին և Բասեոսին միանալու։ Այդ մարդիկ վեց տարի էր, ինչ Ամորիոնի առումից հետո բանտում, կապանքների մեջ, սովից ու գետնին պառկելուց տառապում էին... Ահա քրիստոնյա զորավարներին է միանում Քրիստոսի կամքով Կողոնիայի դուքսի պաշտոնը վարած մարդը...»։

էջ Դ. 52

«... Քառասուներկու սուրբ մարտիրոսները նահատակվեցին 6353 թվականի մարտի 6-ին, ինդիկտիոնի 6-րդ տարին, երբ հռոմայեցիների վրա թագավորում էին Միքայելը, Թեոդորան և Թեկլան...»[5]։

1. Բյուզանդական Թեոփիլոս կայսրը (829—842)։
2. Իմա՝ պավլիկյաններին։

3. Բառախաղ. մանիքեցի անունը բխեցնում է հունարեն «մանիա»՝ մոլեգնություն բառից։
4. Իմա՝ խալիֆան։
5. Մ. թ. 845 թ. Հիշյալ անձնավորություններն են. Միքայել III կայսրը (842—867), նրա մայրը՝ հայազգի Թեոդորան (842—856) և Թեոփիլոսի ու Թեոդորայի դուստր Թեկլան։

VII

ՀՈՎՍԵՓ ԳԵՆԵՍԻՈՍ

Կոստանդին VII Միրաճածինի ժամանակակիցն էր և բյուզանդական արխունիիում բարձր դիրք ուներ: Նրա պատմական երկը, որ վերնագրված է «Թագավորություններ», գրված է 944—959 թթ. միջև և բաղկացած է չորս գրքից: Այն ընդգրկում է Լևոն V Հայկազնից մինչև Վասիլ I Մակեդոնացի կայսեր մանր ընկած դեպքերի պատմությունը, այն է՝ 813—886 թթ.: Օգտագործել է Գեորգ Վանականի աշխատությունը, Իգնատիոսի աշխատասիրած Նիկեփոր պատրիարքի կենսագրությունը, Նիկետաս Պափլագոնացու շարադրած Իգնատիոսի կենսագրությունը, Թեոփանեսի Շարունակողի օգտագործած աղբյուրները, ինչպես և բանավոր ավանդություններ ու պատմություններ:

Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից. Genesii Regum, ex recognitione **Caroli Lachmani,** Bonnae, 1834.

Գիրք Բ, էջ 33

«... Նա[1] հագարացիների հետ դաշինք է կնքում՝ նրանց առաջնորդի[2] գիտությամբ, Անտիոքի պատրիարք Հորի[3] ձեռքով կայսերական թագ կապում և հագարացիներից, հնդիկներից, եգիպտացիներից, ասորեստանցիներից, մարերից, պարսիկներից, զեխերից, իբերներից, կաբիրներից, սլավներից, հոներից, վանդալներից, գետերից, Մանիի պիղծ աղանդը դավանողներից, լազերից, ալաններից, խալդերից, հայերից և այլ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներից հսկայական զորք հավաքելով, տիրում է համայն Արևելքին, իսկ վերջում ողողում Բրակիայի շրջանները, փորձում գրոհով տիրանալ Բյուզանդիոնին...»։

Գիրք Դ, էջ 115

«... Մեր դլխին թափվեցին նաև Տեֆրիկեից եկող փորձանքնե-

բը։ Այդտեղի չարագործները օգտվեցին և ցամաքում, և ծովում հագարացիների դեմ մղվող պատերազմում մեր զբաղվածությունից։ Սակայն կայսրը Աստծո օգնությամբ և զորավարների հմտությամբ հաղթահարեց այդ ամբարտավաններին...»։

Գիրք Դ, էջ 120—126

«... Տեֆրիկեի աղանդավորների՝ Պողոս Սամոսատցու, Կուբրիկոսի, Մոնտանոսի և այլ տարբեր աղանդապետների հետևորդների դեմ հաղթանակ տարվեց։ Սրանք անցյալում շատ էին ամբարտավանացել, բայց հետագայում Աստծո հզոր բազկի և կայսեր[4] բազում աղոթքների ու հսկումների օգնությամբ հաղթահարվեցին։ Կայսրը նրանց վրա արշավեց երկու անգամ։ Առաջին անգամ նա համայն շրջանները գերեվարությամբ ու հրկիզմամբ ամայացրեց, այնուհետև որոշ ժամանակ պատերազմ մղեց Տեֆրիկեի դեմ։ Անհաջողության մատնվելով, նա վերադարձավ մայրաքաղաք և մտնելով իր իսկ կառուցած Հրեշտակապետաց տաճարը, սրտակոտոր ու հոգեբուխ պաղատանց նրանց, որպեսզի նախքան մեռնելը իրեն արժանացնեն տեսնելու Տեֆրիկեի կործանումը։ Դրանից հետո նա բազում զորքերով դարձյալ արշավեց նրանց դեմ, մեծ կորուստներ պատճառելով։ Այդ ընթացքում (աղանդավորների) գլխին երկնքից թափվեց ամենասարսափելի որոտ, այդ որոտից Տեֆրիկեի տները երերացին, բնակիչները զարհուրած, ենթադրելով, որ դա աստվածուստ է, իրենց դեմ է ուղղված, մի մասը կայսեր կողմն անցավ՝ ողորմածություն աղերսելով, մյուսն էլ փախուստի դիմեց Ասորիքի խորքերը։ Փախուստն այնպիսի ծավալ ստացավ, որ քիչ էր մնացել նրանց քաղաքը մարդաթափ լինի, քաղաք, որին սիրում էր նրա պաշտպան սաղմոսած Խրիսոխիրը։

Այս ամբարտավանը՝ Կարբեասի և Կալլիստոսի հետ (ինչպես և սրա հայրը[5]), քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ բերեց, հասավ մինչև Նիկոմեդիա և Նիկիա, դեռ ավելին, ավարառեց Թրակեսիոն բանակաթեմը, հասավ մինչև Հովհան Աստվածաբանի թեմը, որի տաճարը նրա զինվորները մացրին իրենց ձիերին և մնացած գումակը՝ լուտանքներ թափելով։ Կայսրը, լինելով խաղաղասեր և իսկապես ողորմած, Խրիսոխիրին նամակ է գրում՝ հաշտություն կնքելու կոչով, համաձայն ասույթի. «Շնորհել միմեանց որպէս եւ Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ»[6], բավարարվել ձեռք բերածով, ստանալ իրենից ոսկի, արծաթ և հանդերձներ, վերջ տալ քրիստոնյաների գերեվարությունն ու կոտորածը։ Սակայն լկտին և անհավատը չընդառաջեց խաղաղարար խոսքերին և կայսրին պատասխանեց այսպես. «Ո՛վ կայսր, եթե կամենում ես մեզ հետ հաշտություն կնքել, հրաժարվի՛ր Արևելքի վրա ունեցած քո իշխանությունից և տիրի՛ր Արևմուտքի վրա, ահա այդ դեպքում կխաղաղվենք քեզ հետ, հակառակ դեպքում կչանանք քեզ դահընկեց էլ անել»։ Կայսեր համար պարզ դարձավ, թե ինչ անմիտի հետ գործ ունի, դրա համար լռեց, այլևս նրան պատասխան նամակ չգրեց։

Երկու տարի անց Խրիսոխիրը իր զորքերով դուրս եկավ, հասավ մինչև Անկյուրա քաղաքը, հենց Կոմմատա[7] և հսկայական ավար ձեռք բերելով՝ վերադարձավ։ Սխոլերի դոմեստիկոսը[8] մեկ մղոն հեռավորության վրա նախապատրաստվեց հետապնդելու։ Նա երկյուղում էր մոտիկից հետապնդել Խրիսոխիրը, հասնելով Խարսիանոն[9] բանակաթեմը, վրան է խփում Ագրանայում, իսկ դոմեստիկոսը՝ Սիբորոնում։ Նա հրաման տվեց Արմենիակների և Խարսիանոն բանակաթեմների զորավարներին. «Վերցրե՛ք ձեզ ենթակա զորահրամանատարներին և փորձառու մի քանի հեծյալ, մոտավորապես 12 օրվա պարեն և Խրիսոխիրին հետապնդեցե՛ք մինչև Վաթիռիաքս[10] (վայրը)։ Եթե նա իր բանակի մի մասը, որին հնարավոր է հաղթահարել, ուղարկի Արմենիակների կամ Խարսիանոն բանակաթեմի (զորքերի) վրա, մեզ տեղյակ պահեցե՛ք, իսկ եթե հեռանա Վաթիռիաքսից, վերադարձե՛ք մեզ մոտ»։ Խրիսոխիրը երեկոյան շարժվեց, վրան խփեց ցածրադիր տեղում, իսկ զորավարները բարձրացան լեռան գագաթը և բանակեցին Զոդոլենոն կոչվող վայրում։ Այն քարքարոտ, դժվարամատչելի, խիտ անտառներով մի վայր է։ Հիշյալ զորավարները, երբ հանգստանում էին այնտեղ, զորահրամանատարների միջև տղամարդկանց հատուկ բանավեճ ծագեց, թե ովքեր են ավելի քաջ՝ Արմենիակների բանակաթեմից ծագողները, թե՞ Խարսիանոնի։ Երբ խարսիանոնցիք վիճում էին, իրենց քաջարի համարում, չէին ուզում խափանության դափնիները ուրիշին զիջել, արմենիակները, դիմելով նրանց, ասացին. «Ի՞նչ եք դատարկ վիճում արիության շուրջ։ Ծրկուսս էլ թշնամիների հետ կռվի ենք բռնվելու, հենց այդտեղ էլ

կևրևա ով է ավելի քաջ»։ Զորավարները, լսելով նրանց վեճի մասին, տեսնելով, թե ինչպես այդ վեճը գրգռում է զինվորների ոռնոցը, ասացին. «Ջանադիր եղե՛ք, ո՛վ զինակիցներ, որպեսզի Աստծո օգնությամբ ջարդ տանք թշնամուն»։ Դրան զինվորները արիաբար պատասխանեցին. «Այո՛, կայսրին տված մեր ամենամեծ երդումով հավաստիացնում ենք ձեզ, որ կովի կբռնվենք նրանց հետ։ Վայրը, որտեղ մենք ամրացել ենք, ամենաանառիկներից է, որտեղից եթե նրանց դեմ կարողանանք որևէ սխրանք գործել, այն մեզ համար մրցանակ կհամարենք, իսկ նրանք մեզ ոչ մի վնաս չեն կարող հասցնել»։ Երկու զորավարները շուրջ վեց հարյուր հոգի առանձնացրին, մնացածներին դրոշներով թողեցին իրենց հրամանատարների վրաններում՝ այսպես կարգադրելով. «Մենք զորքով վաղքով կմոտենանք (թշնամուն), երբ մեր վրա շարժվի, մենք կընդունենք մարտը։ Արդ, երբ նրանք հարձակվեն մեր վրա, դուք դիմացից բարձրագոչ աղաղակ բարձրացրեք, մեծաթիվ զորքի առկայության պատրանք ստեղծեք, որպեսզի նրանք կարծեն, թե բանակաթեմերի զորքերով սխոլերի դոմեստիկոսն է տեղ հասել»։ Այս խորհուրդը տալով, զորավարները շարժվեցին մոտեցան թշնամիներին և, նախքան արևը ծագելը, թմբկահարությամբ խուժեցին նրանց վրա։ Նրանց մի մասը Խրիսոխիրի հետ...[11], իսկ մյուսը՝ դրաստներն էր բեռնաթափում։ Ահա երբ նրանք դրանով էին զբաղված, զորավարները իրենց զորահրամանատարներով նրանց վրա հարձակվեցին և ուժգին «խաչը հաղթե՛ց» գոռալով, մարտականորեն խփեցին թմբուկները։ Անակնկալ հարձակումից սարսափած, նրանք առանց ետ նայելու փախուստի դիմեցին, անգամ չէին էլ նայում, կամ ստուգում, ովքե՞ր են իրենց հալածում։ Ջարաշար կոտորվելով Վաթիսիաքսից մինչև Կոստանդնի լեռ կոչվող տեղը երեսուն մղոն տարածության վրա, նրանք հալածական եղան։

Խրիսոխիրը վճռում է մի քանի հոգով փախուստի դիմել։ Նրա ետևից հասնում է գլխարկ հագած Պուլլադեսը[12], այդպիսի նշանավոր անուն ուներ նա։ Անցյալում նա Տեֆրիկեում գերի էր և իր սրամտությամբ Խրիսոխիրի մտերիմն էր դարձել։ (Պուլլադեսը) տեսնելով նրան և ճանաչելով, բարձր գոռաց. «Ահա՛ զորավարները, ահա՛ սխոլերի դոմեստիկոսը»։ Խրիսոխիրը պատասխանեց Պուլլադեսին. «Ո՛վ Քրվառական Պուլլադես, ես քեզ որևէ

վատություն արե՞լ եմ։ Ընդհակառակը, քեզ շատ լավություններ եմ արել, հեռացի՛ր, ինձ խոչընդոտ մի՛ դարձիր»։ Պուլլադեսն ասաց. «Ես գիտեմ, Խրիսոխիր, որ դու ինձ շատ լավություններ ես արել, բայց հույս ունեմ իմ փրկիչ Աստծով այսօր քեզ փոխհատույց լինել»։ Խրիսոխիրը ձիավարելիս հանդիպում է մի փոսի, որի վրայով նրա ձին չէր համարձակվում թռչել և ծառս եղավ։ Խրիսոխիրը ուշադրություն չէր դարձնում Պուլլադեսի վրա, նա իր դիմացն էր նայում, որպեսզի փոսի մեջ չգլորվի։ Պուլլադեսն անակնկալ մոտեցավ և նիզակով խոցեց նրա թևատակին։ Նա ստացած վերքից շփոթվեց, այդ պահին ձին գայթեց և նրան իր վրայից ցած գլորեց։ Խրիսոխիրի ամենամտերիմ սպասավորը՝ անունը Դիակոնիցես (երջանկահիշատակ Լևոն կայսրը[13] սրան, երբ նա պավլիկյանների պիղծ աղանդը ուրացավ և բարեպաշտ դարձավ, մենսուրատորի[14] աստիճանը շնորհեց, լատիներեն աստիճանը այդպես է կոչվում), Խրիսոխիրի գլուխը կրեց իր ծնկներին և սկսեց խնամել նրան։ Այդ պահին վրա հասան զորավարները, բռնեցին (Խրիսոխիրին) և գլուխը կտրելով, անհապաղ, որպես ընծա աստվածապսակյալ արքա Վասիլին ուղարկեցին...»։

1. Նկատի ունի Թովմա Գազիրացուն և նրա բարձրացրած ապստամբությունը Միքայել II Բլվատի (820—829) դեմ։ Գեննեսիոսը Թովմային հայազգի է համարում (էջ 8). ...Θωμᾶν τὸν ἀπὸ λίμνης Γαζουροῦ, καὶ αὐτὸν ἐξ Ἀρμενίων τὸ γένος κατάγοντα", բայց մի այլ տեղում՝ սկյութ, այսինքն սլավոն։

2. Իմա՝ խալիֆա Մամունի (813—833)։

3. Անտիոքի պատրիարք Հոբն աթոռակալել է 813/814—844/845 թթ.։

4. Վասիլ I Մակեդոնացին (867—886)։

5. Բնագրից պարզ չէ ո՞ւմ հոր մասին է խոսքը՝ Խրիսոխիրի, թե՞ Կալլիոտոսի։

6. Տե՛ս., Դ, 32։

7. Լևոն VI-ի թագավորության ժամանակ Բուկելլարների և Անատոլիկոն բանակաթեմերից յոթ շրջան մտան Կապադովկիա բանակաթեմի իրավասության տակ և կազմեցին մեկ տուրմա՝ Կոմմատան։

8. Սպաթարեփեր։

9. Խարսիանոն բանակաթեմի կազմում էին Առաջին Կապադովկիան և Երկրորդ Հայքի հարավային կեսը։ X դարում նրա կենտրոնը Կեսարիան էր։

10. Որոշ հետազոտողներ տեղադրում են ժամանակակից Ենի-խանի տեղում, Սևաստիայից հյուսիս-արևմուտք։

11. Այստեղ բնագիրը եղծված է։

12. Հավանաբար, պարսկերեն Փոլադն է (հայերեն՝ պողպատ)։

13. Լևոն VI (886—912)։

14. Զինվորական աստիճան։

VIII

ԿՈՍՏԱՆԴԻՆ VII ՕՐԱՆԱՑԻՆ

Բյուզանդական կայսր (913—959 թթ.), Վասիլ I Հայկազնի թոռը: Նշանավոր էր հատկապես իր գրական գործունեությամբ: Գրել է բազմաթիվ արժեքավոր երկեր, որոնցից կարևորն են «Կայսրության կառավարման մասին» գործը, իր պապի՝ Վասիլ I-ի կենսագրությունը, որ կազմել է «Թեոփանեսի Շարունակող» պայմանական խորագիրը կրող աշխատության հինգերորդ գիրքը (տե՛ս «Թեոփանեսի Շարունակող»-ի տակ), «Բյուզանդական արխունիի արարողությունների մասին», «Բյուզանդական կայսրության բանակաթեմերի մասին» աշխատությունները և այլն: Կոստանդին Օրանացին ունեցել է գիտական աշխատողների մի ամբողջ խումբ, որի ջանքերով կազմվել են պատմական, իրավագիտական, երկրագործական, օդերևութաբանական և այլ բովանդակության բազմաթիվ աշխատություններ: Մասն բերվում է «Բանակաթեմերի մասին» աշխատությունից մի հատված, բարգմանված բնագրի հենական հրատարակություններից. Constantino Porfirogenito De Thematibus. Introduzione, testo critico, commento a cura di A. Pertusi (Studi e Testi 160), Città del Vaticano, 1952.

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԲԱՆԱԿԱԹԵՄ ԿՈՂՈՆԻԱ

Կողոնիան զառիթափ (վայրում գտնվող) շատ ամուր բերդ է: Այդ քաղաքի անունից էլ ահա շրջանն ստացավ իր հորջորջումը. հույները բարձրադիր և վեր խոյացող վայրերին կոլոնոս էին կոչում: Սա Փոքր Հայքի հողերն է և ծայր առնելով Գրիգոր Սքանչելագործի հայրենիք Նեոկեսարիայում և այսպես կոչված Ճաղատ լեռան մոտ, այն ընդարձակվում է դեպի Արաբրակենացիների քաղաքը՝ հռչակավոր վկա Եվստրատիոսի հայրենիքը, և հասնում է մինչև Նիկոպոլիս և Տեֆրիկն կոչվածը, որը գտնվում էր մանիքեցիների վատահամբավ առաջնորդ Խրիսոխիրի և նրանից ավելի ամբարիշտ՝ Կարբեասի իշխանության ներքո, մանիքեցիների, որոնց քրիստոսասեր տեր Վասիլը՝ իմ պապը, մեր կայսրերից բարեբախտն ու ամենաբարեպաշտը գլխովին ոչնչացրեց և դժոխքի

տարտարոսներն ուղարկեց: Ահա այսքանը Կողոնիայի մասին: Ինչպես նախապես ասացինք, բանակաթեմը ծագում է Առաջին Հայք նահանգից:

IX

ԹԵՈՓԱՆԵՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՂ

«Թեոփանեսի Շարունակող» կամ «Թեոփանեսին հաջորդող գրողներ» պայմանական վերնագրով հայտնի է անանուն ժամանակագիրների մի խումբ, որ Կոստանդին VII Որբանածինի հրամանով շարունակեցին Թեոփանեսի «Ժամանակագրությունը»: Ամբողջ գործը վեց գրքի է բաժանված, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է մեկ կայսրի պատմություն, այն է՝ Լևոն V (813—820), Միխայել II (820—829), Թեոփիլոս (829—842), Միխայել III (842—867), Վասիլ I (867—886) և Լևոն VI (886—912): Վերջին գրքում շարունակաբար արվում է Ալեքսանդրի (912—913), Կոստանդին Որբանածինի առաջին մենիշխանության (913—920), Ռոմանոս I-ի (920—944), Կոստանդին Որբանածինի երկրորդ մենիշխանության (944—959) և Ռոմանոս II-ի (959—963) պատմությունը: Հինգերորդ գիրքը՝ Վասիլ I-ի կենսագրությունը գրել է անձամբ Կոստանդին Որբանածինը, վեցերորդը՝ Թեոդորոս Դաֆնոպատեսը: Վեցերորդը հետագայում է կցվել ամբողջ գործին:

Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից. Theophanes Continuatus, Chronographin, ex recognitione I. Bekkeri, Bonnae, 1838.

Գիրք Դ, էջ 165—167

«16. Ահա այսպիսի փայլուն հաջողություններ ձեռք բերվեցին Արևմուտքում[1], որոնց համբավը տարածվեց ամենուր: Այդ հաջողություններից թևավորված և կարծես ցանկանալով հաղթական ավելի մեծ հուշարձան կանգնեցնել, նա[2] փորձ արեց նաև Արևելքի պավլիկյաններին դարձի բերել դեպի բարեպաշտություն, հակառակ դեպքում կոտորել ու ոչնչացնել, մի բան, որ մեր երկիրը բազում փորձանքներով լցրեց: (Կայսրուհին) իշխանավորներից ոմանց ուղարկեց (նրանց անուններն էին Արգիրոսի որդի, Դու-

կասի որդի[3] և Սուդալիս[4]), որոնք աղանդավորների մի մասին ցցահան էին անում, սրի քաշում, ուրիշներին էլ՝ ծովահեղձ անում։ Կոտորվածների թիվը շուրջ տասը բյուր հոգի էր, նրանց ունեցվածքը գրավվեց և պետական գանձարանը բերվեց ու մուծվեց։ Անատոլիկոն բանակաթեմի զորավարի (նա Թեոդոտոս Մելիսսենոսն էր) մոտ ծառայում էր Կարբեաս անունով մեկը, որ պրոտոմանդատորի[5] աստիճանն ուներ և դավանում էր ու պաշտում պավլիկյանների հավատքը։ Սա, լսելով, որ իր հայրը ցցահան է արվել, այդ բանը գերագույն դժբախտություն համարեց, և գործերը կարգի բերելով, իր հինգ հազար աղանդակիցների հետ փախավ Մելիտենեի այն ժամանակվա ամիրա Ամերի[6] մոտ, այնտեղից էլ՝ խալիֆայի, որի կողմից նա փառավոր ընդունելության արժանացավ։ Դաշինք կնքելով, նրանք, շատ չանցած, դուրս եկան Հռոմեական կայսրության տարածքը և հսկայական ավար ձեռք բերեցին։ (Աղանդավորներն) այնքան բազմացան, որ սկսեցին իրենց համար քաղաքներ կառուցել՝ այսպես կոչված Արգաուսը և Ամարան։ Երբ այս անգամ այնտեղ սկսեցին հոսել նույն փորձանքը դավանողների նոր բազմություններ, մի այլ (քաղաքի) կառուցման ակիզբը դրեցին, որը կոչեցին Տեֆրիկե։ Այնտեղ հավաքվածներից շատերը, նաև Մելիտենեի (ամիրա) Ամերը, որի անվան տառերը աղավաղելով շատերը Ամբրոն կոչեցին, Տարսոնի (ամիրա) Ալին[7], վերջապես ինքը, թշվառական Կարբեասը, հարձակումներ գործելով, չէին դադարում անամոթաբար ավերել հռոմայեցիների տարածքը։ Սրանցից Ալին, ուղարկվելով Հայաստանի ինչ-որ նահանգը կառավարելու, շուտով այնտեղ իր ողջ բանակի հետ կոտորվում է, իսկ Ամերը իր կառավարչակից Սկլերոսի (նա այդպես էր կոչվում) ախոյանության պատճառով ներքին պատերազմի բռնվելով, արյունաքամ էր լինում, ի վիճակի չէր ուրիշների դեմ մարտնչել։ Նրանց վեճը այն աստիճան բորբոքվեց, և այնքան կատաղիորեն էին միմյանց դեմ մաքառում, որ հիսուն հազար հոգուց ավելի թիվ կազմող նրանց ռազմական հզորությունից հազիվ տասը հազարը մնաց։ Երբ (Ամերը) հաղթահարեց իր հակառակորդին, վերստին հանդգնեց հռոմայեցիների դեմ զենք շարժելու՝ կարբեասի հետ միասին։ Նրանց դեմ դուրս եկավ Պետրոնասը, որն այն ժամանակ դոմեստիկոսի պաշտոնն ուներ։ Այդ պաշտոնը Վարդասին էր տրված, բայց քանի որ նա, որպես խնամակալ, զբաղ-

ված էր, այդ պաշտոնի իրական վարումը նա իր եղբոր, Թրակեսիոն բանակաթեմի զորավար Պետրոնասին զիջեց»։

Դիրք Դ, էջ 176—177

«23. Վարդասն ամբողջությամբ կլանված էր կայսրության խնամակալի[8] և կառավարչի պարտականություններով։ Ամեն ինչից բացի նրան արտակարգ սիրում էին նաև որպես կայսեր աղչիկ բացի նրան արտակարգ սիրում էին նաև որպես կայսեր աղգականի։ Կարծես որպես մրցանակ իր քրոջ դեմ տարած հաղթանակի[9], նա ստացավ նաև կուրապաղատի պատվաստիճանը և աղվամազը դեռ նոր բուսնող Միքայելի[10] հետ ամբողջ զորքով պատերազմի գնաց իսմայելացիների[11] և արդեն հիշված Ամերի դեմ։ Ոտք դնելով Թշնամու տարածքը, պաշարում են Սամոսատ[12] կոչվող անառիկագույն քաղաքը։ Այստեղ նրանք համոզվեցին, որ գործ ունեն ոչ թե Թեոդորայի, այլ շատ խորամանկ մարդկանց հետ։ Պաշարման երրորդ օրն էր, շաբաթվա օրերի առաջինն ու գլխավորը[13], (հռոմայեցիները) պատք է կատարեին սուրբ հաղորդության խորհրդի արարողությունն ու հաղորդվեին, բայց այդ բանն անում էին առանց առնելու նախազգուշական միջոցները, կամ էլ անփորձ լինելով՝ բանի տեղ չէին դնում քաղաքում պաշարվածներին, ենթադրելով, որ նրանցից և ոչ ոք չի հանդգնի ձեռք բարձրացնել հռոմայեցիների կայսեր վրա։ Ահա աստվածային խորհրդին հաղորդվելու պահին (թշնամիները) քաղաքի ամեն տեղից զենքերով դուրս թռան։ Հնարավոր չէր տեսնել մի հռոմայեցու, որ փախուստի չէր դիմում։ Ինքը՝ Միքայելը, հազիվ ձի նըստելով, առանց մարտ տալու փախուստի դիմեց և մի կերպ փրկվեց, տեղում թողնելով և վրանները, և սպասարկող անձնակազմը։ Ասում են, թե այնտեղ աչքի ընկավ նաև նախապես հիշատակված Կարբեասը՝ Տեֆրիկեի կառուցողը։ Նա կոտորեց ոչ միայն բազում հասարակ զինվորների, նա գերի վերցրեց մեծամեծ զորավարների՝ Յանգոտուբոս Աբեսալոմին, Սիոն պալատինոսին և այլ, շուրջ հարյուր փոխզորավարների ու տուրմարխների[14]։ Հիշյալ զորավարները պատերազմից հետո բանտ նետվեցին, նրանց ազգականները նրանց համար, որպես փրկագին, Կարբեասին բազում դրամ ուղարկեցին։ Երբ այդ դրամը Կարբեասն իր ձեռքը վերցրեց, իսկույն հարցրեց Սիոնին, ինչպիսի վերաբերմունք ունի դեպի սեռական հարցերը, կարողանո՞ւմ է արդյոք։ Երբ Սիոնը բացասա-

կան պատասխան տվեց, Կարբեասը նույն հարցով դիմեց Աբեսալոմին, որը, տեսնելով նրա վատթարությունն ու ստորությունը, բայց գուցե և իրականում դա այդպես էր, դրական պատասխան տվեց, ասաց, թե կարողանում է։ Կարբեասն ասաց նրան. «Դու ազատվում ես կապանքներից» և նրան ազատ արձակեց, իսկ դիմելով Սիոնին ասաց, թե «Աստված չի ուզում, որ դու բանտից ազատվես»։ Նրա փրկության համար իրեն տրված գումարը հանձնելով նրան, բանտ նետեց, որտեղ էլ նա ավանդեց իր հոգին...»։

Գիրք Ե, էջ 266—276, 312—313

«37. Ահա կարգի բերելով քաղաքի գործերը և ազատվելով այլ հոգսերից[15], գարնան սկզբին նա զինվեց և գլխավորեց բանակը, ցանկանալով որպես իսկական արքա հարատար ժողովրդի համար իրեն վտանգների ենթարկել. նա կամովին իր վրա վերցրեց տառապանքների ու չարչարանքների բեռը՝ հպատակ ժողովրդի ապահովության համար։ Այն ժամանակները Տեֆրիկեի առաջնորդը, որին Երիսոխիր էին անվանում, իրեն քաջ ու խոհեմ մարդ համարելով, դաժան փորձությունների էր ենթարկում հռոմայեցիների երկիրն ու մարդկանց, ամեն օր գերեվարում բազում դյուղացիների և այդ առթիվ անչափ փքվել էր ու գոռոզացել։ Ահա այդ փքվածն ու ամբարտավանը չհամարձակվեց բացահայտ դիմադրել իր վրա արշավող քաջ զորքին, դիմադրել խիզախ ու խոհեմ կայսրին։ Նա նահանջեց՝ մտադիր լինելով պաշտպանել և ամրացնել իր քաղաքը միայն։ Կայսրը ոչ մի խոչընդոտի չհանդիպելով, ասպատակեց, գրավեց, ավերեց ու հրկիզեց Երիսոխիրին ենթակա բոլոր շրջանները և ավանները, ձեռք բերեց անհամար ավար ու գերիներ։ Նա հարձակվեց հենց Տեֆրիկե քաղաքի վրա, փորձեց նետաձգությամբ ու ոչ երկարատև պաշարմամբ գրավել այն։ Բայց ավելի երկարատև պաշարման մտքից նա հրաժարվեց, որովհետև համոզվեց, որ դժվար է քաղաքը գրավել — պարիսպներն ամուր էին, պաշտպանվող բարբարոսներն անթիվ, ապա նաև առատ պարենով ապահովված։ Այդ բոլորից բացի իր մեծաքանակ զորքը կարճ ժամանակվա ընթացքում շրջանն ամբողջությամբ ամայացրել էր և ողջ պարենը գրեթե սպառել։ Վասիլը ավերակ դարձրեց Տեֆրիկեի շուրջը գտնվող Աբարա, Սպաթե և մի քանի այլ ամրոցներ և վերցնելով իր ոչ մի կորուստ չկրած ամբողջ զորքն ու ձեռք բերած մեծաքանակ ավարն ու գերիներին, որոնց մասին խոսք եղավ վերևում, վերադարձավ։

38. Իսմայելացիների Տարանտա կոչվող մյուս քաղաքը, Տեֆրիկեի մեծ կոտորածը տեսնելով, կայսեր մոտ դեսպաններ ուղարկեց խաղաղություն աղերսելով և առաջարկելով դաշնակցել նրա հետ։ Ամենահզոր կայսրը ինչքան որ դիմադրություն ցուցաբերողների հանդեպ խիղախություն էր ցուցաբերում, այնքան էլ զիջողականություն՝ ենթարկվողներին։ Նա ընդառաջեց դեսպաններին, խաղաղություն խնդրողներին խաղաղություն պարգևեց և նրանց այսուհետև թշնամիներից դաշնակից դարձրեց։ Այդ բանից հետո շատերը, այդ թվում և Կուրտիկիոս անունով մի հայ, որն այն ժամանակ տիրում էր Լոկանային և շարունակ ասպատակում էր հռոմեական երկրի ծայրագույն շրջանները, դիմեց կայսրին, նրան հանձնեց իր քաղաքը, ղենքերը և իր ժողովրդին, հպատակվեց ինքնակալին. նա հիացել էր քաջ, միաժամանակ բարի, հզոր, բայց նույն ժամանակ արդար կայսեր վրա։

39. Քանի դեռ թշնամիներն իրենց ուշադրությունը սևեռել էին կայսեր վրա, սպասելով տեսնել, թե ո՞ր կողմից կհարձակվի նա, որպեսզի այդ վտանգի ենթարկված կողմը պաշտպանեն, կայսրը Ջապետրա կոչվող քաղաքի դեմ ընտիր զինվորների մի խումբ է ուղարկում։ Վերջիններս փութանակի անցնելով ճանապարհի նեղանցքներով, հարձակվում են քաղաքի վրա և գրոհով վերցնում այն, շատերին տեղում կոտորում, ձեռք բերում բազում գերիների և մեծ ավար, ազատում երկար ժամանակ բանտերում տարգելափակված մարդկանց։ Այնուհետև նրանք հրի են մատնում ճանապարհին ընկած շրջանները, ավերում Սամոսատը և նույն թափով անցնում Եփրատ գետը. իրենց ոչ ոք չփորձեց դիմադրել, որովհետև կայսրը նրանց պաշարման մեջ էր պահում։ Ձեռք բերելով բազում գերիների, նրանք վերադարձան ինքնակալի մոտ, ով դեռ գտնվում էր Ջարնուխ գետի մոտ, այնտեղ, որտեղ Կերամիսոնն է գտնվում։ Թվում էր, թե նա ոչ մի բանի անձնապես չի մասնակցում, բայց ամեն ինչ կատարվում էր նրա գերիմաստուն ղեկավարությամբ։

40. Կայսրն ամբողջ զորքով դուրս է գալիս այնտեղից և շարժվում Մելիտենեի վրա։ Ամառ ժամանակ հասնելով Եփրատի ափը, տեսնում է, որ գետը հորդել է ու ծովացել։ Նա իր զորքի

համար անարժան համարեց վախկոտաբար նստել, սպասել, որ գետը խաղաղվի և որոշեց կամրջել այն, շտապեց այդ գործը գլուխ բերելու անհրաժեշտ պատրաստություն տեսնել։ Ցանկանալով այդ դժվարին գործում ոգևորել զինվորներին, որպեսզի նրանք դյուրությամբ տանեն դժվարությունները, ապա և իրեն կոփելու համար, որպեսզի անակնկալ փորձության հանդիպելու դեպքում չշփոթվի և անփորձ չերևա, զինվորների հետ միասին եռանդով գործի լծվեց և իր ուսերի վրա դեպի կամուրջն էր կրում ամենից ծանր բեռները։ Այնտեղ կարելի էր տեսնել, թե ինչպես նույն ծանրության բեռը, որ կայսրը իր ուսերի վրա հեշտությամբ էր կրում, երեք զինվոր հազիվ կարողանում էին տանել։ Ահա այսպես անցնելով Եփրատը, իսկույն գրավեց Ռապսակիոն կոչվող ամրոցը։ Նա խաղտիքի և Կողոնիայի բանակաթեմների զորքերին հատուկ հրաման տվեց՝ ասպատակել Եփրատ և Արսինոս գետերի միջև ընկած շրջանները և այդ զորքերի օգնությամբ բազում ավար ու գերիների ձեռք բերեց, գրավեց Կուրտիկիոսի, Խախոն, Ամեր, Մուրինիքս և Աբդելա ամրոցները։ Ինքն անձամբ Մելիտենեի վրա հարձակվեց, որտեղ բարբարոսների և զինվորների հսկայական բազմություն կար, որոնք բարբարոսական աղաղակներով ու գոչյուններով քաղաքի առջև նրան դիմադրություն ցույց տվեցին։ Կայսրը հենց այնտեղ ցուցաբերեց իր անձնական առաքինությունները. նրա համառության ու քաջության վրա շատ հիացան ոչ միայն իր զինվորները, այլև թշնամիները։ Նա խոհեմորեն ու արիությամբ թշնամիների դեմ մարտի բռնվեց, ձեռնամարտում աչքի ընկավ իր անվեհերությամբ ու համարձակությամբ, վտանգավոր պահին հանդես բերեց պաշարյունություն և քաջարիություն, առաջինն ինքը իր դեմ գտնվողներին փախուստի մատնեց ու գլխովին կոտորեց։ Իր զինվորները նույն ձևով յուրաքանչյուրն իր դեմ գտնվողներին կոտորելով, հալածեցին մինչև քաղաքը։ Քաղաքի առջև փռված դաշտում փռվեցին բազում դիակներ, պարիսպների առջևից հոսող առուն կարմիր ներկվեց, շատերը գերի վերցվեցին, ուրիշները վախից անձնատուր եղան, իսկ մնացածներն էլ փակվեցին քաղաքում և ամենևին չէին մտածում դուրս գալ։ Այստեղ կայսրը մտածում էր բաններ, ամեն տեսակի պաշարողական մեքենաներ բերել և պաշարողական գործում քաջություն ու կորով ցուցաբերել, բայց տեսավ, որ քաղաքը ամուր պարիսպներով է շրջափակված, պարիսպ-

ների վրա պաշտպանվողների մեծ բազմություն կա և համոզվեց, որ դժվար է գրավել քաղաքը. բացի այդ, նա դասալիքներից տեղեկացավ, որ քաղաքը ապահովված է նաև առատ պարենով, որ չի վախենում երկարատև պաշարումից, դրա վրա ահա նա շարժվեց այնտեղից ու հարձակվեց մանիքեցիների երկրի վրա։ Նա կտրատեց այդ երկրի ծառերը, հրկիզեց տները և ամեն ինչ ավերեց. հրի մատնեց և գետնին հավասարեցրեց նրանց Արգաուի[16] կոչվող ամրոցը, ապա նաև Կուտակիոն, Ստեփանոս և Ռախատ կոչվողները, որից հետո իր զինվորներին առատ պարգևներ տվեց, յուրաքանչյուր աչքի ընկածին պարգևատրեց և մեծ ավարով ու հաղթական դափնիներով թագավորանիստ քաղաքը վերադարձավ։ Նա մուտք գործեց Ոսկե դարպասով, ինչպես հնում մեծափառ Հռոմի ինքնակալները հաղթարշավ կազմակերպելիս։ Ընդունելով դեմոսի[17] հաղթական կոչերն ու բարեմաղթությունները, անհապաղ, հենց ճանապարհից նա գնաց աստվածային իմաստության մեծ տաճարը[18] աղոթելու և Աստծուն գոհություն հայտնելու։ Նա այնտեղ հաղթական պսակով պսակվեց ժամանակի պատրիարքի[19] կողմից, որից հետո գնաց պալատ։

41. Դարձյալ են կլանում նրան պետական հոգսերը՝ տարբեր ժողովուրդների մոտից ժամանած դեսպանությունների ընդունման հարցերը։ Մի փոքր վայելելով իր երեխաների և կնոջ մոտ լինելու հաճույքը և շրջելով քաղաքում գտնվող սուրբ տաճարներն ու աղոթելով, նա նորից է լծվում հանապազօրյա քաղաքական և զորական գործերին՝ ցուցաբերելով իր հպատակների հանդեպ ունեցած խնամքն ու անսահման հոգատարությունը։ Նա առանց ցլանալու ամեն օր գնում էր սուրբ և աստվածային տաճարը և աղերսում Տիրոջը՝ միջնորդներ վկայակոչելով Միքայել հրեշտակապետին և Եղիա մարգարեին, որ չվախճանվի քանի դեռ չի տեսել Խրիսոխիրի կործանումը և նրա պիղծ գլխին չի դամել երեք նետ։ Ինչ որ կատարվեց հետագայում։ Վերոհիշյալ Խրիսոխիրը հաջորդ տարին ներխուժեց Հռոմայեցիների երկիրը և սկսեց ասպատակել այն։ Ընդունված կարգի համաձայն կայսրը նրա դեմ է ուղարկում սխոլերի դոմեստիկոսին։ Նա իր հետ վերցրեց Հռոմեական ողջ զորքը, բայց որովհետև վախենում էր Խրիսոխիրի հետ բացահայտ, ճակատ առ ճակատ մարտի բռնվել, Հռոմեական զորքերով առայժմ հետևում էր նրան որոշ հեռավորության վրա, մասնակի հարձա-

կումներ գործում նրա վրա և հնարավորություն չէր տալիս Խրիսոխիրին աներկյուղ տարածվել երկրով մեկ։ Բարբարոսը մեկ գործի էր անցնում, մեկ հանգիստ մնում, բայց վերջը, քանի որ այդ բանին էր ստիպում նաև ժամանակը, որոշեց իր երկիրը վերադառնալ։ Մեծ ավարով նա իր երկիրն էր շտապում, երբ սխոլեբի դոմեստիկոսը երկու զորավարների կարգադրեց, այն է՝ Խարսիանոնի և Արմենիակների բանակաթեմների, որ յուրաքանչյուրն իր զորամասով հետևեն և հետապնդեն Խրիսոխիրին մինչև Վաթիուրաքս։ Եթե նա այնտեղից հռոմեական սահմանների վրա զորք նետի, ապա այդ մասին հայտնեն դոմեստիկոսին, իսկ եթե ուղիղ շարժվի և մուտք գործի իր որջը[20], թողնեն և իսկույն իր մոտ վերադառնան։

42. Բարբարոսական զորքը երեկոյան մոտ հասավ Վաթիուրաքս և ճամբարեց լեռան ստորոտում. հռոմայեցի զորավարները դիրքեր գրավեցին այդ վայրի բարձունքներում։ Այն ժամանակ, երբ վերջիններս մտածում էին իրենց անելիքի շուրջը, երկու բանակաթեմների զինվորների, տաքսիարքոսների[21] և լոխագոսների[22] միջև վեճ է ծագում առաջնության շուրջը։ Խարսիանոնցիք իրենց էին վերագրում քաջության մենաշնորհը, իսկ արմենիակները չէին ուզում նրանց զիջել ռազմական արիության առաջնությունը։ Վեճը տաքացավ, կրքերը բորբոքվեցին, երբ Արմենիակների զորաբանակի հրամանատարներն ասացին. «Ինչո՞ւ եք իզուր տեղը խոսքով հերոս դառնում, սնապարծորեն զուր ձեզ գովում։ Մարդ գործով պիտի ապացուցի իր քաջ լինելը։ Թշնամին մոտիկ է և նրա դեմ կռվելիս կերևան քաջերը, մարտում հանդես բերած արիությունից կարելի կլինի որոշել լավագույններին»։ Ահա զորավարներն այս խոսքերը լսելուց հետո, ապա նաև տեսնելով զորքի քաջաբար կռվելու պատրաստակամությունը, բացի այդ, համոզված լինելով, որ տեղանքն էլ իրենց հույսը նպաստավոր է (հարթավայրում ճամբարած թշնամու վրա իրենք բարձրից պիտի հարձակվեին), զորքը բաժանում են երկու մասի. որոշվեց, որ նրա ընտիր մասը՝ շուրջ վեց հարյուր հոգի, զորավարների գլխավորությամբ հարձակվի բարբարոսների զորքի վրա, իսկ հռոմեական զորքի մնացած՝ փոքր մասը բարձունքում մեծաքանակ լինելու պատրանք ստեղծի։ Հարմար ժամանակ՝ ազդանշանը տրվելուց հետո, առաջինները պիտի հարձակվեն թշնամիների վրա, իսկ

մնացածները շատ բարձր աղաղակ պիտի բարձրացնեն և հնչեցնեն փողերը. փողերի ձայնին կարձագանքեն լեռները և աղմուկը շշմեցուցիչ կլինի։ Ահա այդ (վեց հարյուր հոգին) հագնում են իրենց զրահները և դիշերով գաղտագողի մոտենում թշնամու ճամբարին։ Նախքան այգաբացը, երբ արեգակը դեռ լրիվ չէր անցել երկրի սահմանին կիսագունդը, մեծ աղմուկ բարձրացնելով և բոլորը միասին «խաչը հաղթե՛ց» գոռալով, հարձակվում են թշնամու վրա։ Նրանց հետ միասին աղաղակ են բարձրացնում լեռան վրա գտնվողները և բոլոր մնացածները։ Բարբարոսներն անակնկալից շփոթվեցին, ժամանակ չունեցան մարտաշարք կազմելու, հնարավորություն չունեցան իմանալու իրենց վրա հարձակվող զորքի ճշգրիտ թիվը, ի վիճակի չեղան հանպատրաստից փրկության որևէ այլ ելք գտնելու և փախուստի դիմեցին։ Նրանց բոլորի մեջ սարսափ գցողն ու կորստյան առաջնորդողը, հիրավի, կայսեր աղոթքներն էին։ Հռոմայեցիների մի մասը հարձակման անցավ, մյուս մասը, որ մարտին չմասնակցեց, այն է՝ զորավարները, տագմաները[23] և սխոլերի դոմեստիկոսը կարգադրության համաձայն աղաղակ բարձրացրին, մի բան, որ ավելի մեծ շփոթություն ու սարսափ առաջացրեց թշնամու շարքերում. վերջինս հալածական եղավ մինչև երեսուն մղոն տարածության վրա, որն ամբողջությամբ ծածկվեց անհամար դիակներով։

43. Պատմում են, որ պարծենկոտ ու գոռոզ Խրիսոխիրին, երբ նա իր մի քանի մերձավորների հետ փախուստի էր դիմում, սկսեց հետապնդել Պուլլադես ածականով մի հռոմայեցի։ Սա Տեֆրիկեում գերի էր, բայց իր սրամտությամբ ու շնորհքով դարձել էր Խրիսոխիրի մտերիմն ու մերձավորը։ Ահա բարբարոսը, տեսնելով, թե ինչպիսի ոգևորությամբ ու եռանդով է հալածում իրեն, շուռ եկավ ու ասաց. «Ո՛վ թշվառական Պուլլադես, քեզ ի՞նչ վատություն եմ արել, որ այսպես մոլեգին հալածում ես ինձ, կամենալով սպանել»։ Նա կորուկ պատասխան տվեց, թե՝ «Պատրոն, համոզված եմ, որ Աստված կօգնի ինձ այսօր փոխհատուցը լինելու քո բարերարությանը, որա համար եմ քեզ հալածում»։ Խրիսոխիրը հուսաբեկ ու սարսափահար սլանում էր առաջ, իսկ Պուլլադեսը համարձակ, երիտասարդական ավյունով և կորովով հալածում էր նրան. հալածականն հանդիպում է մի խոր փոսի, որի վրայով ձին վախենում է ցատկել և ծառս է լինում։ Երբ Խրիսոխիրը մտահոգ-

ված էր այդ խոշընդոտը հաղթահարելու գործով, Պուլլադեսը նիզակի հարված հասցրեց նրա կողին։ Նա ցավից գալարվելով ձիուց ցած գլորվեց։ Նրա մտերիմներից Դիակոնիցես անունով մեկը, իջնելով իր ձիուց, օգնության դիմեց տապալված տիրոջը. նրա գլուխն իր ծնկներին դնելով, սկսեց ողբալ պատահարը։ Այդ միջոցին Պուլլադեսին միացան և ուրիշները, որոնք իրենց ձիերից իջնելով, մահամերձ, դեռևս հոգևարքի մեջ գտնվող Խրիսոխիրի գլուխը կտրեցին, իսկ Դիակոնիցեսին մնացածների հետ գերիների թվին դասեցին։ Ահա այդ պիղծ մարդիկ անակնկալորեն պարտության մատնվեցին և քրիստոնեությունն հաղթանակեց։ Ավետիսների հետ մեկտեղ անհապաղ կայսրին է ուղարկվում Խրիսոխիրի գլուխը։ Այն ժամանակ կայսրը այսպես կոչված Պետրիոնում[24] էր գտնվում, որտեղ էր և իր դուստրերի վանքը։ Երբ Խրիսոխիրի գլուխը բերեցին, կայսրը վերհիշեց իր աղոթքները, իր հոգու աչքերը հառեց (Աստծուն), որ ի կատար է ածում խնդիրքը բոլոր նրանց, ովքեր արտասվալից նրան են դիմում, որից հետո հրամայեց նետ ու աղեղ տան։ Ձգելով լարը, նա երեք նետ դամեց նրա թշվառական դանդին և հարվածներից ոչ մեկը չվրիպեց։ Ամբարիշտի մահը նա արժանի քավությունը համարեց այն բյուրավոր զոհերի համար, որոնց մահվան պատճառը դարձավ նա իր իշխանության բազում տարիների ընթացքում։ Աստծո օգնությամբ ահա այսպիսի վախճան ունեցան Խրիսոխիրը և Տեֆրիկեի ծաղկած հզորությունը, Աստված, որ ընդառաջ գնաց բարեպաշտ կայսր Վասիլի բազում թախանձանքներին...։

71. Արևմուտքում ահա դարձյալ հզորացան թշնամիները։ Սպասվում էր, որ նրանք այս հաջողությունից թևավորված, ավելի առաջ կանցնեն և կծավալեն իրենց արշավանքները։ Դրա համար Թրակացիներից, մակեդոնացիներից և ընտիր խարսխանոնցիներից ու կապադովկիացիներից բաղկացած զորքով նրանց դեմ է ուղարկվում Լանգոբարդիայի զորքերի հրամանատար կապադովկիացի Ստեփանոսը, որին Մաքսենտիոս էին անվանում։ Նա, հասնելով նշված վայրը, փորձեց գրավել սարակինոսների ձեռքում գտնվող Ամանտիա[25] քաղաքը։ Լինելով դանդաղաշարժ և անփույթ, բայց ավելի ճիշտ վախկոտ ու փափկասուն, նա այդպիսի զորքով չկարողացավ հաջողության հասնել և այդ պատճառով պաշտոնանկ արվեց։ Նրան փոխարինում է Նիկեփորը, Փոկաս մականվանյա-

լը[26], եռանդուն, արթուն, ֆիզիկական ուժով ու մտավոր կարողությունների օժտված մի համեստ մարդ, որն իր հետ վերցրեց Առևելքի հրամանատարներին ենթարկվող մեծ զորք և այն Դիակոնիցեսին, որ ժամանակին Տեֆրիկեում Խրիսոխիրին էր ծառայում՝ Մանիի հավատքը դավանող[27] մի մեծ զորամասով...»։

1. Նկատի ունի բուլղարների ցար Բորիսի քրիստոնյա մկրտվելը, քրիստոնեությունը բուլղարների մեջ տարածվելը և այդ առիթով Բյուզանդիայի և Բուլղարիայի միջև հաշտության կնքումը։

2. Հայազգի կայսրուհի Թեոդորան (842—856), Թեոփիլոս կայսեր կինը, Միքայել III կայսեր մայրը, կեսար Վարդասի և սպարապետ Պետրոնասի քույրը։

3. Սրանց լրիվ անունները հանդիպում են Կեդրենոսի ժամանակագրության մեջ. Լևոն Արգիրոս և Անդրոնիկոս Դուկաս։

4. Սուդալիսը, ինչպես և Անդրոնիկոս Դուկասը իրենց արտացոլումն են գտել բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսում։

5. Պրոտոմանդատոր («առաջին մանդատոր»)— բյուզանդական աստիճան, հրամանատարների կարգադրությունները շտապ կարգով դինվորներին հասցնող սուրհանդակը։

6. Ամիրա Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտան։ Կոչվում էր և Ամրոն և այդ անունով է հանդես գալիս բյուզանդական էպոսում։

7. Ալին մահմեդականացած հայ էր։ Լրիվ անունն է Ալի իբն Յահյա ալ-Արմանի։ Սա էր Աշոտ I Բագրատունուն «իշխանաց իշխանի» տիտղոսը բերողը («Ապա ոստիկան մի ոմն ի Հայս առաքեալ, որ Ալի արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր»։ Ծովհրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 133)։

8. Միքայել III-ի մանկահասակության պատճառով փաստական իշխանությունը գտնվում էր կայսեր մորեղբոր՝ Վարդասի ձեռքում։

9. Դրանից առաջ Վարդասը Միքայելի համագործակցությամբ Թեոդորային բանտարկել էր։

10. Միքայել III կայսրը։

11. Խմա՝ արաբներին։

12. Քաղաք Ասորիքում, Եփրատի աջ ափին, Էմեսայից (այժմ՝ Հոմս) հյուսիս-արևմուտք։ Այժմ կոչվում է Շամշատ։

13. Խմա՝ կիրակի։

14. Զինվորական աստիճան, զորավարից հետո ամենաբարձր աստիճանավորը բանակաթեմում։ Նրա հրամանատարության ներքո լինում էին 500 նետաձիգ, 300 վահանակիր և 100 նիզակակիր։ Որպես կանոն կրում էր պրոտոսպաթարի կոչում։

15. Վասիլ I Մակեդոնացին։

16. Պետրոս Սիկիլիացին կոչում է Արգաուս։ Ժամանակակից Արգովանն է։

17. Խոսքը Կոստանդնուպոլսի քաղաքացիների մասին է։

18. Ս. Սոֆիայի տաճարը։

19. Պատրիարք Իգնատիոսը, որ իր երկրորդ աթոռակալությունն էր վարում։

20. Նկատի ունի Տեֆրիկե քաղաքը։

21. Մեկ տաքսիսի (մոտ 130 գինվորի) հրամանատարը։

22. Իմա՝ հարյուրապետների։

23. Բյուզանդական բանակը բազկացած էր երկու մասից՝ թեմաներից և տագմաներից։ Առաջինները ներկայացնում էին նահանգների, բանակաթեմերի զորքերը, իսկ տագմաները այն զորքերն էին, որոնք կենտրոնացած էին մայրաքաղաքում և նրան մոտիկ նահանգներում՝ Թրակիայում, Մակեդոնիայում, Բոսփորի ասիական կողմում։

24. Ոսկեղջյուրում գտնվող մի թաղամաս, որտեղ կային պալատ, հասարակաց բաղանիք, բազմաթիվ տաճարներ ու վանքեր, այդ թվում և ս. Եվփեմիայի վանքը, որտեղ միանձնուհի էին դարձել Վասիլի դուստրերը։

25. Քաղաք և նավահանգիստ հարավային Իտալիայում։

26. Նշանավոր հայազգի զորավար, պապը Նիկեփոր II Փոկաս կայսեր։ Որդիները կոչվում էին Վարդաս և Լևոն։ Նիկեփոր II Փոկասը Վարդասի որդին էր։

27. Այսինքն՝ պավլիկյաններից բազկացած։

X

«ՎԱՍԻԼ ԴԻԳԵՆԻՍ ԱԿՐԻՏԱՍ»

Բյուզանդական էպոս, որ ձևավորվել է IX դարի վերջին և X դարի առաջին կեսին պավլիկյան ազատագավորների շառավիղների և բյուզանդական արևելյան բանակաթեմերի արիստոկրատիայի շրջանում: Պահպանվել է էպիկական պոեմի ձևով, որի հեղինակն անհայտ է: Պոեմում փառաբանվում են Վասիլ Դիգենիս Ակրիտասի («Երկածին սահմանապահի»), ինչպես և նրա ծնողների սքանչելիքները: Էպոսի «պավլիկյանական» շերտից պահպանվել են բազմաթիվ երգեր, որոնք ներթողում են պավլիկյան սպարապետներ Խրիսոխիրին (պոեմում՝ Խրիսոխերպոս, Դիգենիսի հոր կողմից պապը) և Կարբեասին (պոեմում՝ Կարոես, Դիգենիսի հոր հեռին): Դիգենիսի հոր պապը կոչված է Ամբրոն, որ պավլիկյանների դաշնակից Մելիտենեի ամիրա պատմական Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտան է: Պոեմում իրենց արձագանքն ու արտացոլումն են գտել բազմաթիվ հայ գործիչներ, Արևմտյան Հայաստանի շրջաններ, հայկական ժողովրդական երգեր (Անգեղյա Տորֆի մասին) և այլն:

Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից.

Βασίλειος Διγενὴς Ἀκρίτας. Τὰ ἔμμετρα κείμενα Ἀθηνῶν (πρώην Ἀνδρου, μετὰ συμπληρώσεων καὶ παραλαγῶν ἐκ τῆς διασκευῆς Τραπεζοῦντος), Κρυπτοφέρρης καὶ Ἐσκοριάλ. Νέα πλήρης ἔκδοσις μετ' εἰσαγωγῆς, ὑποσημειώσεων καὶ κριτικοῦ ὑπομνήματος ὑπὸ Π έ τ ρ ο υ Π. Κ α λ ο ν ά ρ ο υ, τόμος πρῶτος, Ἀθῆναι, 1941.

«ԹՆ ԻՆՁՊԵՍ ԱՄԻՐԱՆ ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐ ԱՆԵՐՋԱԳՆԵՐԻՆ[1],
ԹՆ ԻՆՔԸ ՈՐ ՏՈՀՄԻՑ Է ՍԵՐՈՒՄ»

Պատասխան տվեց նրանց ամիրան.
«Կտրիճ տղաներ, որդին եմ, ասաց,
ես Խրիսոխերպի[2] ու Սպաթիայի[3],
մանուկ էի դեռ, երբ հայրս մեռավ,
մայրս ինձ հանձնեց իմ քեռիներին՝
արաբ, որ անապ սիրով սնեցին։
Պապս Ամբրոնն[4] էր, քեռիս՝ Կարոես[5]։
Տեսնելով ինչպես միշտ հաղթող էի,
տերը զարձրին ողջ Ասորիքի։
Ինձ երեք հազար կտրիճ տվեցին,
Ասորիք, Կուֆեր[6] ինձ ենթարկեցի,
Հերակլի երկիր[7], Ամոր[8] ու Իֆեր[9]։
Ես չեմ վախեցել զորքից, գազանից,
միայն ձեր փնտրած քույրն է ինձ հաղթել...

Մայրն ամիրայի (տատը Ակրիտի)[10],
երբ որ իմացավ արածն իր որդու[11],
նա Ասորիքից նամակ ուղարկեց,
ողբով ու ցավով, պարսավանքով լի։
Նրա նամակում այսպես էր գրված.
«Որդյակ պաշտելի, քո մոր սփոփանք,
դու ինձ լքեցիր, կրոնքդ ուրացար,
հայրենիք, նաև ազգականներիդ։
Պանդուխտ դու դարձար, լույսս մարեցիր,
ինձ Ասորիքում խայտառակեցիր,
բոլորի համար գարշելի դարձանք՝

իբրև ուրացող և օրինազանց,
մեծ Մարգարեի[12] օրենքը դրժած։
Ի՞նչ եղավ, որդյակ, որ դու մոռացար,
մտքից հանեցիր սխրանքը քո հոր[13]։
Նա բյուր հոռոմներ կոտորեց, գերեց,
զնդաններ լցրեց քաջ տոպարխներով[14],
Հռոմանիայի թեմեր[15] ավարեց,
չեղավ ուրացող, չհղվեց քեզ պես։
Նրան երբ պատեց զորքը հոռոմոց,
զորավարները մեծ երդումներով
կայսրից խոստացան դարձնեն պատրիկ,
անգամ զորավար, թե թուրը գցի։
Նա Մարգարեի պատգամը պահեց,
փառքը քամահրեց, գանձերը բոլոր,
թեև խողխողվեց, թուրը չգցեց։
Իսկ դու ուրացար առանց պատճառի
օրենք ու հավատք, աղգական ու մայր։
Իսկ քո տարսոնցի քեռիդ Մուսուրը[16]
արշավեց մինչև Ջմյուռնիան ծովափնյա,
Անկյուրան առավ, քաղաքն Ակինա[17],
Աֆրիկ[18], Տերենտե[19], Հեպտահոմիա[20],
ավեր սփռելով Ասորիք դարձավ»։
. . . . . .
«Պարծանքը նրանց[21] անհիմն էր, անփաստ,
իսկ ամիրայի՝ սուրդ ու վկայված,
ամեն ինչ մենակ գործեց, ընդունեք։
Պապն էր Ամբրոն, Կարոես՝ քեռին,
սիրով սնեցին արաբներն իրեն,
երեք հազար քաջ կտրիճ տվեցին,
ողջ Ասորիքին, Կուֆերին տիրեց,
ընտիր զորքերով նա Մագուլների[22]
հողերը եկավ Հռոմանիայի,
թալանեց բազում և մեծ շրջաններ,
այն է Հերակլի և այլ գավառներ,
նույնպես Խարսիանեն[23], Կապադովկիան,
որտեղ նա գերեց մի հոռոմ կուսի,

տոհմին պատկանող այն Դուկասների»։
. . . . . .
«Նրանց[24] առաջին զորավարն էր
Խոսրովը[25], որ ողջ Արևելքն առած,
Բյուզանդիոն եկավ, ուզեց պաշարել։
Ապա մեծ սուլթան Ամբրոնը եկավ,
նախնին Վասիլի[26], այն տարսոնացին[27],
(հենց սա էր հայրը Վասիլի տատի)։
Սպաթիա էին կոչում, անվանում
հորը Վասիլի աշխարհ թերոզին,
մեծ ամիրային, փառավոր, արի։
Մուսուր էր նրա անունն նախապես[28],
բայց մկրտվելով կոչվեց Հովհաննես։
Ահա մեր նշած տարսոնցին արի
Հռոմանիայում ավեր էր սփռում։
. . . . . .
Մուսուրը հետո, որդին Տաքսոնցու,
ապա ամիրան Կարոեսը մեծ...»։

1. Այսինքն՝ ապագա աննշանների։
2. Խրիսոխերպ— պատմական խրիսոխիրն է, պավլիկյանների սպարապետը։
3. Սպաթե էր կոչվում պավլիկյանների մի ամրոցը, որ գտնվում էր Տեֆրիկեի մոտ։
4. Ամբրոն— Պատմական Օմար իբն Աբդալլահ ալ-Ակտան է, Մելիտենեի ամիրան։
5. Կարոես— պատմական Կարբեասն է, պավլիկյանների սպարապետը։
6. Կուֆեր— ենթադրաբար Կուֆա քաղաքը՝ Եփրատի ձախ ափին, Հարավային Միջագետքում։
7. Հավանաբար՝ Անգեղ տունը։
8. Ամոր (Ամորիոն)— Հայտնի քաղաք Փռյուգիայում, 838 թ. գրավվեց արաբ խալիֆա Մութասիմի կողմից։
9. Իֆեր— էպոսի այլ տարբերակներում՝ Իկոնիոն։ Ըստ Ջ. Մավրոգորդատոյի՝ Ակրոինոնը, Ամորիոնից հյուսիս գտնվող քաղաք։
10. Տատը Ակրիտի— ապագա տատը։
11. Եգեսիայի (Ուռհա) ամիրա Մուսուրի, որ քրիստոնյա դառնալով կոչվեց Հովհաննես։
12. Իմա՝ Մոհամմեդի։
13. Իմա՝ խրիսոխերպի, պատմական Խրիսոխիրի։
14. Տոպարխ— բառացի նշանակում է երկրամասի, երկրի իշխան, կառավարիչ։

15. Այսինքն՝ բանակաթեմներ։
16. Վերևում Մուսուրը կոչված է Կարոնս։
17. Ակինա— հայկական Ակնը, այժմ Էգին։
18. Ոչ թե Աֆրիկան, այլ պավլիկյանների մայրաքաղաք Տեֆրիկեն (Տիվրիկը)։
19. Տերենաե— այժմ՝ Դերենդե։ Քաղաք երկրորդ Հայքում։
20. Հեպտակոմիա— թարգմանաբար նշանակում է «ցոթ գյուղ»։ Ենթադրում են, որ Պոնտոսում էր գտնվում։
21. Պարծանքը եռանց— բյուզանդական էպոսում հանդես եկող ապելատների պարագլուխների։
22. Մագուլեե— մեր կարծիքով Անգեղտան զորքերը։
23. Կարսիաեե— Չորրորդ Հայքի Խորձյան գավառը։
24. Իմ՝ մուսուլմանների։
25. Խոսրովը— Պարսից արքան։
26. Նախնին Վասիլի— Վասիլ Դիգենիս Ակրիտասի, բյուզանդական էպոսի գլխավոր հերոսի։
27. Տարսոնացին— Ուռհայի ամիրա Մուսուրի պապը։
28. Մուսուր է կոչված մի այլ տեղում նաև Կարոնսը։

XI

ԱՆՆԱ ԿՈՄՆԵՆԱ

Բյուզանդական կայսր Ալեքսիոս I Կոմնենոսի (1081—1118) ավագ դուստրը։ Ծնվել է 1083 թ., մահացել 1148-ից հետո։ Գրել է «Ալեքսիական» խորագիրը կրող փաստաբերով հարուստ մի պատմություն, իր հոր կյանքի ու գործունեության ներբողյանը։ «Ալեքսիական»-ը բաղկացած է 15 գրքից, սկսվում է 1069 թ. դեկեմբերով և ավարտվում 1118 թ., Ալեքսիոս I-ի մահով։ Դեկեմբերի ու դեմբերի կատարյալ իմացությունը, փայլուն լեզուն ճնարավորություն են տվել հեղինակի աշխատությունը դասելու բյուզանդական լավագույն աղբյուրների թվին։

«Ալեքսիական»-ում խոսք է լինում Թրակիայի պավլիկյանների մասին։ Թարգմանությունը կատարված է բնագրի հետևյալ հրատարակությունից. Anne Comnène, Alexiade (règne de l'empereur Alexis I Comnène, 1081—1118), texte établi et traduit par B. Leib, t. I—III, Paris, 1967.

Գիրք Դ, գլուխ 4

«1. Կայսրը[1], իմանալով Ռոբերտի[2] մասին, անհապաղ նամակ է գրում Բակուրյանին[3] և տեղեկացնում նրան [Ռոբերտի] անսանձելի թափի մասին, ինչպես և նրա կողմից Ավլոնի[4] գրավման...։ Ինքը՝ կայսրը ինդիկտիոնի չորրորդ տարվա օգոստոս ամսին[5] փութով շարժվում է Կոստանդնուպոլսից...։ Բակուրյանը, ստանալով նամակը, իսկույն փոխզորավար է նշանակում Նիկոլայոս Բրանասին, քաջ, պատերազմական գործերում փորձառու մի մարդու։ Վերջինս համայն ծանրաղեն զորքով և աղնվականներով դուրս է գալիս Օրեստիասից[6] և շտապում միանալու կայսրին։ 2. Կայսրը տեղ հասնելով, ողջ ծանրաղեն զորքի համար պատերազմական վիճակ հայտարարեց...։ 3. ... ինչպես և երկու հազար ութ հարյուր մանիքեցիների[7], որոնց հրամանատարներն էին նույն աղանդի հետևորդներ Քսանտասն[8] ու Կուլեոնը։ Բոլորն էլ շատ ռազմունակ, առիթը ներկայանալու դեպքում թշնամիների արյունը խմելու միշտ պատրաստ, քայց և հանդուգն ու անամոթ»։

Գիրք Ե, գլուխ 3

«2. (Կայսրը) այդպիսի կարգադրություն անելով և մեծ դամեստիկոս Բակուրյանին այնտեղ թողնելով, մայրաքաղաք վերադարձավ, ամեն տեղից օտարազգի զորքեր հավաքեց և տվյալ ժամանակին ու պայմաններին անհրաժեշտ այլ միջոցներ ձեռք առավ։ Մանիքեցիներ Քսանտասն ու Կուլեոնը իրենց ենթակա երկու և կես հազարի հասնող զինվորներով, անկանոն կերպով առն վերադարձան։ Կայսրը բազմիցս կոչ արեց նրանց վերադառնալ, բայց նրանք, թեպետև խոստանում էին գնալ, ձգձգում էին։ Կայսրը գրավոր նվերներ և պատիվներ խոստացավ նրանց, բայց այդ դեպքում անգամ նրանք չգնացին նրա մոտ»։

Գիրք Զ, գլուխ 2

«1. Ես այստեղ մի փոքր կընդհատեմ պատմությունը, ասելու համար, թե ինչպես (Ալեքսիոս Կոմնենոսը) հաղթահարեց պավլիկյաններին։ Նա չէր ուզում արքունիք վերադառնալ այդ ուրացողներին պարտության չմատնած։ Կարծես մի հաղթանակից մի ուրիշին դիմելով, այնպես արեց, որ մանիքեցիների բազմության դեմ տարած (հաղթանակը) եղրափակի իր մեծագործությունների

շրջանակը։ Արևմտյան թշնամիների դեմ կանգնեցրած պայծառ հաղթական հուշարձանի վրա պավլիկյաններից այդ սերողները կարծես մի բիծ լինեին։ Նա չէր ուզում պատերազմով ու կռվով անել դա, որպեսզի ընդհարման ժամանակ երկու կողմից էլ բազում զոհեր չլինեն։ Նա վաղուց գիտեր, թե (պավլիկյանները) ինչ քաջ տղամարդիկ են, թշնամիների դեմ անչափ հանդուգն։ Ահա այդ պատճառով նա ջանք էր թափում պարագլուխներին պատժել, իսկ մնացածներին՝ դիմավորագրել։ 2. Նա դիմեց հետևյալ քայլին։ Քաջ գիտենալով այդ տղամարդկանց անվախ, պատերազմներում և մարտերում աներեր լինելը, նա վախենում էր, որ հուսահատության դուռը հասնելով, կմտածեն ավելի վատ բան անել։ Առայժմ նրանք իրենց հայրենիքում ապրում էին խաղաղ, չէին դիմում ավարառությունների և ասպատակությունների։ Ահա նա նրանց նամակ գրեց և, մեծ խոստումներ տալով, Բյուզանդիոն հրավիրեց։ (Պավլիկյանները) կելտերի[9] դեմ (Ալեքսիոսի) տարած հաղթանակին տեղյակ, երկմտանքի մեջ ընկան, արդյո՞ք նամակների բովանդակած խոստումները հավաստի են։ Այդուհանդերձ, անմիջապես շարժվեցին դեպի (կայսրը)։ 3. Վերջինս, հասնելով Մոսինուպոլիս[10], կանգ առավ, ձևացնելով, թե ինչ-ինչ պատճառներով դադար է առել, բայց իրականում նա նրանց գալստյանն էր սպասում։ Երբ նրանք հասան, (կայսրը) ձևացրեց, թե ուզում է ստուգել նրանց և յուրաքանչյուրի անունը գրել։ Նա շատ զգույշ և աչալուրջ հրամայեց մանիքեցիների պարագլուխներին տասնյակների բաժանել, խոստանալով շարքայիններին ստուգել հաջորդ տարի։ Ահա այդպես, նա զրանցվածներին ասաց դարբասից ներս մտնել։ Հետևում կանգնած էին մտնողներին կալանավորելու պատրաստ մարդիկ, որոնք նրանց ձիերն առնելով ու դինաթափ անելով, նետում էին որոշված զնդանները։ (Պավլիկյանների պարագլուխները) կատարվածին բացարձակապես անտեղյակ, մեկը մյուսի ետևից գալիս ու մուտք էին գործում, իրենց գլխին գալիքին անիրազեկ։ 4. (Ալեքսիոսն) ահա նրանց այդպես ձերբակալեց, ունեցվածքը գրավելով բաժանեց մարտերում ու փորձություններում իր հետ տառապած քաջարի զինվորներին։ Ունեցվածքը գրավելու գործը գլխավորող անձնավորությունը (աղանդավորների պարագլուխների) կանանց քշեց տներից ու արգելափակեց միջնաբերդում։ Փոքր անց կայսրը ձերբակալված մանիքեցիներին ներման արժա-

նացրեց. ովքեր հանձն առան սուրբ մկրտության արժանանալ, իրենց փափագին հասան։ (Կայսրը) բոլոր միջոցներին դիմեց իմանալու համար, թե ովքեր են այդ խելացնորության պարագլուխները, նրանց կղզիներն աքսորեց ու բանտարկեց, իսկ մնացածներին թույլ տվեց գնան ուր ցանկանան։ Նրանք իրենց հայրենիքը նախընտրեցին, անհապաղ այնտեղ փութացին, տնօրինելով իրենց կարիքները, ինչպես որ կարողացան»։

Գիրք Զ, գլուխ 4

«2. Երբ կայսրը Նիկեփոր Բոտանիատեսի կողմից բարձրացավ դամեստիկոսի ասպետությանն[11], ծառայության ընդունեց Տրավլոս անունով մի մանիքեցու, դասեց իր ընտանիքի սպասավորների թվին և սուրբ մկրտության արժանացնելով, կայսրուհու աղախիններից մեկի հետ ամուսնացրեց։ (Տրավլոսը) չորս քույր ուներ, երբ իմացավ, որ նրանք մյուս (մանիքեցի) կանանց հետ ունեցվածքից զրկվելով բանտ են նետվել, սաստիկ վշտացավ, չէր կարողանում այդ բանի հետ հաշտվել, մտածում էր ինչպես պրծնի կայսեր ծառայությունից։ Նրա կինը, իմանալով նրա ծրագիրը և համոզվելով, որ նա որոշել է փախուստի դիմել, այդ մասին հայտնում է մանիքեցիների գործերը վարողին։ 3. Դա չվրիպեց Տրավլոսից, նա անհապաղ ում որ կարողացավ հայտնեց գաղտնիքը և երեկոյան նրանց իր մոտ հրավիրեց։ Իր ազգականները հավաքվելով նրա մոտ՝ այնտեղից գնացին Բելիատովա։ Սա մի ավան է, որը գտնվում է Բելիատովայի ձորի վրա բարձրացող բլրի գագաթին։ Այն ամայի գտնելով և համարելով իրենց սեփականությունը, բնակվեցին այնտեղ և այնտեղից ամեն օր արշավանքներ կատարելով, հասնում էին մինչև իրենց քաղաքը՝ Ֆիլիպուպոլիս և մեծ ավար վերցնելով՝ վերադառնում։ 4. Տրավլոսը չբավարարվեց դրանով, նա դաշինք կնքեց Պարիստրիոնում[12] բնակվող սկյութների[13] հետ, իր կողմը քաշեց Գլաբինիցայի, Դրիստրայի և դրանց մոտակա շրջանների առաջնորդներին, ապա և ամուսնացավ անվանի մի սկյութի դստեր հետ, ջանք գործադրեց սկյութների ներխուժումով կատարելապես վշտացնել կայսրին։ Կայսրը հանապազօր տեղեկանում էր այդ մասին և ապագայի մասին հոգալով, պատկերացնելով նրանից ծագելիք չարիքը, ջանում նամակներով և խոստումներով նրան իր կողմը թեքել։ Այդ բոլորից բացի նա

նրան նաև անձի անձեռնմխելիության և բացարձակ ազատության մասին խրիստոսվուով հաստատված[14] վկայագիր ուղարկեց։ Բայց խեցգետինն ուղիղ քայլել չգիտե։ Նա շարունակում էր անել այն, ինչ նախորդ կամ դրանից առաջվա օրն էր անում՝ սկյութներին իր կողմն էր քաշում և նրանց վայրերից շատերին ուղարկելով, հանդիպածը ավարի էր տալիս...»։

Գիրք Զ, գլուխ 14

«2. Իսկ այն մանիքեցի Տրավլոսը իր կողմնակիցների հետ, ինչպես և Բելիատովայի բարձունքի վրայի ավանը գրավող ազատդակիցների, որոնց մասին տեղում ավելի մանրամասն ասվեց, տեղեկանալով սկյութների հետ տեղի ունեցած բանակցությունների մասին, վաղուց երկնածը լույս աշխարհ բերեցին՝ գրավեցին քարքարոտ ճանապարհները և կիրճերը, սկյութներին կանչեցին և հռոմայեցիների համայն երկիրն ավարառեցին։ Մանիքեցիներն ի բնե անչափ ռազմունակ են և մարդկանց արյունը շան պես խմելու մշտապես պատրաստ...»։

Գիրք ԺԴ, գլուխ 8

«1. ... Իսկ նա[15] դադար առավ Ֆիլիպուպոլսում։ 3 ... (Քաղաքը) անմխիթար վիճակում էր, իմիջիայլոց, նաև այն պատճառով, որ այնտեղ բնակվում էին բաղում ամբարիշտներ։ Հիշյալ քաղաքը հայերի, այսպես կոչված բոգոմիլների (նրանց մասին, ինչպես և նրանց աղանդի մասին հետագայում, իր տեղում պատմելու ենք), ինչպես և ամենաանաստված պավլիկյանների՝ մանիքեցիների տաշեղների ձեռքում էր։ Սրանք, ինչպես անունն է վկայում, Պողոսից և Հովհաննեսից են սերում, Մանիի ամբարշտությունն առնելով, այն անխառն ձևով փոխանցեցին իրենց հետևվորդներին։ 4. Ես ցանկանում էի կանգ առնել մանիքեցիների գաղափարների վրա և հանգամանորեն շարադրել, միաժամանակ ջանալ քննադատել այդ ամենաանաստված գաղափարները, սակայն գիտենալով, որ մանիքեցիների աղանդը բոլորին ծիծաղելի է, ապա և շտապելով շարունակել սույն պատմությունը, բաց եմ թողնում նրանց գաղափարների քննադատությունը...։

5. Մանիի և Կալլինիկեի որդիներ Պողոսի և Հովհաննեսի հետևորդներին, էլ ավելի վայրենի գաղափարներ դավանող դա-

ժան և մարտերում աներկյուղ մարդկանց, այն հրաշալի կայսր Հովհաննես Զմշկիկը[16] պատերազմում պարտության մատնելով, Ասիայից՝ խալյուբներից ու Արմենիակների վայրերից գաղթեցրեց և ստիպեց Ֆիլիպուպոլսի շուրջը բնակվեն։ Դրանով նա երկու նպատակի հասավ, նախ նրանց հեռացրեց իրենց բնատիրած անառիկագույն քաղաքներից ու բերդերից, ապա և, հանձինս նրանց, ապահովագույն պահապաններ կանգնեցրեց բարբարոս սկյութների ներխուժումների դեմ, որոնցից շատ հաճախ տուժում էին Թրակիայի շրջանները։ Քանզի նրանք, անցնելով Հեմոսի լեռնանցքներով, ասպատակում էին նրա տակ փռված դաշտերը։ 6 ... Նրանք ամբողջ զորքով վնասում էին Հռոմեական կայսրությանը, հատկապես ավելի մոտիկ գտնվող քաղաքներին, որոնցից ամենամեծը հենց հռչակված Ֆիլիպուպոլիսն էր։ 7. Հովհաննես Զմշկիկը մանիքեցի հակառակորդներին դաշնակիցների վերածելով, ի դեմս նրանց՝ հզոր ռազմական ուժ հակադրեց այդ քոչվոր սկյութներին։ Եվ այսուհետև քաղաքները բաղում հարձակումներից շունչ քաշեցին։ Մանիքեցիները, ի բնե ազատասեր լինելով և անհնազանդ, իրենց ցանկացածն էին անում, ինչ իրենց բնատուր էր։ Համայն Ֆիլիպուպոլսի բնակչությունը, փոքր բացառությամբ, մանիքեցիներ էին, որոնք բռնանում էին տեղացի քրիստոնյաների վրա, հափշտակում նրանց ունեցվածքը, քիչ կամ ամենևին ուշադրություն չէին դարձնում կայսեր կարգադրություններին։ Նրանց թիվը գնալով աճում էր և Ֆիլիպուպոլսի շուրջը բնակվողները բոլորն էլ հերետիկոսներ էին։ Սրանց մեջ հոսում էր և մի այլ գետ, հայոց դառը գետը[17], ինչպես և Հակորի ամենապղտոր ակունքներից հոսողը[18]։ Մի խոսքով, ամեն տեսակի չարիքի մի ձոր էր։ Թեև նրանք իրենց դոգմաներով հակասում են միմյանց, բայց խռովությունների դեպքում բոլորը համաձայնվում էին մանիքեցիներին։ 8. Բայց իմ հայրը, կայսրը[19], սրանց էլ հակադրեց իր ռազմական մեծ փորձը, մի մասին առանց մարտի ձերբակալեց, մյուսին՝ պարտության մատնելով դերեվարեց...։

9. Ինչպես վերևում ասացինք, հիշյալ պատճառով Ֆիլիպուպոլիս գալով (երբ դեռ կոմանները վրա չէին հասել), իմիջիայլոց, կարևոր մի գործ ձեռնարկեց՝ մանիքեցիներին դաոն կրոնից դեպի քաղցր վարդապետությունը[20] դարձի բերելու։ Առավոտից մինչև կեսօր կամ երեկո, լինում էին դեպքեր, երբ մինչև անգամ

դիշերվա երկրորդ և երրորդ պահը, նրանց հրավիրելով, ուսուցանում էր ուղղափառ հավատքը։ Նրա հետ էին Նիկիայի եպիսկոպոս Եվստրատիոսը, Սուրբ Գրոց և արտաքին գիտությանց քաջագիտակ մի մարդ։ Նա բանավեճերում ավելի ուժեղ էր, քան Սոռայում[21] կամ Ակադեմիայում[22] ժամանակ անցկացնողները։ Ներկա էր նաև ինքը՝ Ֆիլիպուպոլսի եպիսկոպոսական աթոռին նստողը։ Կայսրը բոլոր հարցերում ամենից առաջ դիմում էր իմ կեսար Նիկեփորի օժանդակությանը, որին կոփել էր Սուրբ Գրոց ուսուցմամբ։ Այն ժամանակ բազում մանիքեցիներ առանց վարանելու ամբողջ սրտով դիմեցին քահանաներին, խոստովանեցին իրենց մեղքերը և արժանացան աստվածային մկրտության։ Բայց կարելի էր տեսնել նաև շատերին, ովքեր իրենց կրոնն էին պաշտպանում մականբեացիներից[23] ավելի մեծ նախանձախնդրությամբ, Սուրբ Գրոց վկայություններն օգտագործելով՝ ուզում էին հիմնավորել իրենց խայտառակ վարդապետությունը։ Բայց կայսեր մշտական բանախոսություններով ու բազում հորդորներով, սրանցից էլ շատերն արժանացան աստվածային մկրտության։ Կայսրը զրուցում էր անդադար, արևածագից մինչև ուշ դիշեր և հաճախ անոթի էր մընում։ Դա տեղի էր ունենում ամառ ժամանակ, բաց երկնքի տակ՝ վրանի մեջ»։

Գիրք ԺԴ, գլուխ 9

«1. Երբ մանիքեցիների հետ տարվում էր բանական պայքարը, Իստրոսից[24] եկած մեկը հաղորդեց կոմսանների [գետն] անցնելու լուրը։ Կայսրն առանց հապաղելու, վերցնելով առկա զինվորներին, շտապեց դեպի Դանուբ։ Հասնելով Վիդին և չհանդիպելով բարբարոսներին (նրանք կայսեր գալուստն իմանալով, հասցրել էին վերադառնալ դիմացի ափը), ընտրելով քաջարի զինվորների, ուղարկեց հետապնդելու նրանց։ (Զինվորներն) անցնելով Իստրոսը, հետապնդեցին բարբարոսներին երեք օր ու գիշեր և, երբ տեսան, որ կոմսանները իրենց նավակներով Դանուբից այն կողմ հոսող գետն են անցել, ձեռնունայն կայսեր մոտ վերադարձան։ 2. Կայսրը, ճիշտ է, այն բանի համար, որ ղորքերը չհասան բարբարոսներին, տխրեց, բայց մի տեսակ հաղթանակ համարեց այն հանգամանքը, որ կարողացավ սոսկ իր անվան համբավով, փախուստի մատնել, այն, որ բազում մարդկանց մանիքեական աղանդից

դարձի բերեց դեպի մեր հավատքը։ Այդպիսով նա կրկնակի հաղթական հուշարձան կանգնեցրեց՝ ջենքով ընդդեմ բարբարոսների տարած հաղթանակի համար, և ընդդեմ հերետիկոսների՝ ամենաբարեպաշտ խոսքերով։ Վերադառնալով Ֆիլիպուպոլիս և մի փոքր հանգստանալով, նա վերստին դիմեց պայքարի։ Նա ամեն օր իր մոտ էր հրավիրում մանիքեցիների աղանդի պարագլուխներ Կուլեոնին, Կուսինոսին և Ֆոլոսին և նրանց դեմ բանական պատերազմ էր մղում։ Սրանք մնացած մանիքեցիներից ոչնչով չէին տարբերվում, բայց իրենց չարափառությունը պաշտպանելու, ադամանդյա խոսքերի դեմ հանդես գալու մեջ ուժեղ էին, աստվածային ասույթը ծվատելու և այն վայրիվերո մեկնաբանելու մեջ անշափ հնարամիտ։ Տեսնելու բան էր կրկնակի մաքառումը՝ կայսեր համառ պայքարը նրանց փրկության համար և նրանց ճիգը կադմյան հաղթանակ տանելու[25]։ Տեսնելու բան էր այդ երեքին կանգնած, կարծես վարազի նման սուր ատամներով, կայսեր խոսքերը բզկտելու պատրաստ։ Երբ Կուսինոսը որևէ հարցում չէր կարողանում առարկել, մեջ էր ընկնում Կուլեոնը, իսկ երբ Կուլեոնն էր անել վիճակի մեջ ընկնում, Ֆոլոսն էր օգնության հասնում։ Մեկը մյուսի ետևից, կարծես հսկայական ալիքներ մեծ ալիքների վրա, նրանք հանդես էին գալիս կայսեր դրույթների և փաստարկների դեմ, բայց կայսրը նրանց հակաճառությունները, որ կարծես սարդոստայն լինեին, ցրիվ էր տալիս, իսկույն փակում պիղծերի բերանները։ Սակայն, երբ իրեն բացարձակապես չհաջողվեց նրանց համոզել, այդ մարդկանց ապուշությունից հուսահատված, նրանց մայրաքաղաք ուղարկեց, որպես բնակարան՝ հատկացնելով Մեծ պալատի շուրջ գտնվող սյունաշարքերը։ Թեպետև խոսքով կայսրը չկարողացավ որոշել այդ պարագլուխներին, այդուհանդերձ, կատարյալ անհաջողության էլ չմատնվեց։ Նա ամեն օր դեպի Աստված դարձի էր բերում մի անգամ հարյուր, մի ուրիշ անգամ հարյուրից ավելի (աղանդավորների), այնպես որ նախկինում որսացված և այժմ (կայսեր) խոսքով որսացվածների թիվը հասավ հազարների ու բյուրերի։ 4. Բայց ի՞նչ կարիք կա խոսել մի բանի շուրջ և ժամավաճառ լինել, երբ այդ մասին ողջ աշխարհը գիտե, երբ այդ մասին վկայում են Արևելքն ու Արևմուտքը։ Նա ամեն տեսակի աղանդներով վարակված բոլոր քաղաքներն ու գյուղերը տարբեր ճանապարհներով դարձի բերեց դեպի մեր ուղղափառ

հավատքը, նրանց պարագլուխներին մեծ նվերների արժանացրեց և ընտրյալ դինվորների շարքը դասեց, իսկ բոլոր ռամիկներին, ովքեր որ եղներով (լծված) արորներով հող էին հերկում, երեխաներով ու կանանցով հավաքելով, Ֆիլիպուպոլսի մոտ, Եվրոս գետից այն կողմ նրանց համար քաղաք կառուցեց և վերաբնակեցրեց, քաղաքին տալով Ալեքսիուպոլիս կամ Նեոկաստրոն անունը։ Այս վերջին անունն էլ գերիշխեց։ (Ֆիլիպուպոլսի աղանդավորներին) և նորաբնակիներին նա մշակելի հողեր նվիրեց, խաղողի այգիներ, տներ և անշարժ գույք, նա տվածը այդպես խախուտ չթողեց, չթողեց նմանվի Ադոնիսի պարտեզներին՝ այսօր ծաղկող, իսկ վաղը՝ քանդվող, նա նվիրածը հաստատեց խրիսովուլ[26] փաստաթղթերով։ Նա իր շնորհածը միայն տվյալ սերնդին չհատկացրեց, այլև հաջորդ, հաջորդների հաջորդներին՝ ժառանգելու պայմանով, ամուսինների մահվան դեպքում նրանց կանանց փոխանցվելու իրավունքով։ Ահա այդպես էր նա իր շնորհքը սփռում։ 5. Այդ մասին ահա այսքան, ավելիի կարիքը չկա։ Թող ոչ ոք չկշտամբի (մեզ), որ պատմությունը կողմնակալորեն է շարադրված։ Դեռ կենդանի են իմ պատմածի բազմաթիվ վկաները, մենք չենք վախենում, թե մեզ կեղծիքի մեջ կբռնեն։ Կայսրը անհրաժեշտ ամեն ինչ տնելուց հետո, այնտեղից դուրս գալով, մայրաքաղաք վերադարձավ։ Կայսրը դարձյալ նույնպիսի անվերջ պայքարի ու վեճերի բռնվեց Կուլեոնի և Կուսինոսի աշակերտների հետ, Կուլեոնին, որպես, իմ կարծիքով, ավելի խոհեմի և հշմարտության խոսքին հետևելու ընդունակ մարդու, իր կողմը ձգեց և դարձրեց մեր հոտի շատ հեղ ոչխարը։ Բայց գազազած Կուսինոսն ու Ֆոլոսը, թեև կայսեր հաճախակի զրույցներով հարվածներ էին ստանում, ինչպես երկաթը, երկաթի նման էլ մնացին, նրան ընդառաջ չգնացին։ Դրա համար որպես բոլոր մանիքեցիներից ամենաաստվածանարգների, ուղիղ դեպի խելագարության ընթացողների, իրենց ամեն անհրաժեշտ բանով առատորեն ապահովելով, էլեֆանտինե կոչվող բանտում արգելափակեց ու թողեց իրենց վատթարությամբ մեռնեն»։

Գիրք ԺԵ, գլուխ 8

1. «Դրանից հետո, իր թագավորության ... տարում[27], հերետիկոսների մի հսկայական ամպ բարձրացավ, աղանդը նոր էր, եկեղեցուն մինչ այդ անծանոթ։ Անցյալում հայտնի չարագույն ու

վատթարագույն երկու վարդապետությունների մի խառնուրդը՝ մանիքեցիների այսպես ասած ամբարշտությունը, որին և պավլիկյանների անվանեցինք, և մեսսալյանների[28] խորշանքը։ Դա բոգոմիլների վարդապետությունն է՝ մեսսալյանների և մանիքեցիների միացությունը...»։

1. Ալեքսիոս I Կոմնենոսը (1081—1118)։

2. Նորմանդացի իշխան Ռոբերտ Գիսկարդը։ Սա վերջ տվեց բյուզանդական տիրապետությանը Հարավային Իտալիայում և նրազում էր նվաճել նաև Բյուզանդիան։ 1081—1082 ԹԹ. պատերազմներ մղեց Ալեքսիոս Կոմնենոսի դեմ։

3. Հայազգի նշանավոր ռազմական գործիչ Գրիգոր Բակուրյանը, Արևմուտքի դոմեստիկոսը։ Նամակն ուղարկված է 1081 թ. օգոստոսին կամ հուլիսի վերջին։

4. Ծովափնյա քաղաք Հյուսիսային Էպիրոսում, այժմ Ալբանիայի սահմաններում։

5. 1081 թվականի։

6. Նկատի ունի Ագրիանուպոլիսն ու շրջակայքը։

7. Իմա՝ պավլիկյաններին։

8. Հայերեն՝ Շաշեթ։

9. Իմա՝ նորմանդացիներին։

10. Քաղաք Արևմտյան Թրակիայում, ժամանակակից Կոմոտինիի մոտ։

11. Այսինքն՝ այն ժամանակ, երբ կայսր էր Նիկեփոր Բոտանիատեսը (1078—1081)։

12. Դանուբ գետի շրջանում գտնվող բյուզանդական բանակաթեմ։

13. Իմա՝ սլավոններին։

14. Այսինքն՝ ոսկե կնիք կրող։

15. Ալեքսիոս Կոմնենոսը։

16. Հովհաննես I Զմշկիկ հայազգի կայսրը (969—975)։ Նրա գաղթեցրած աղանդավորները մեր կարծիքով ոչ թե պավլիկյաններ էին, այլ թոնդրակեցիներ, քանզի Արևելքում պավլիկյանները ոչնչացվել էին դեռևս Վասիլ I կայսեր կողմից։

17. Նկատի ունի միաբնակ հայերին։

18. Խոսքը հակոչիկյանների մասին է։

19. Ալեքսիոս I Կոմնենոսը։

20. Այսինքն՝ դեպի ուղղափառությունը։

21. Նկատի ունի աստիկյան փիլիսոփաններին։

22. Այն է՝ Ափենքի Ակադեմոս անունով հերոսին ձոնված հասարակական վայրում՝ Ակադեմիայում, որտեղ, որպես կանոն, հաճախում էին Պլատոնի աշակերտները, պերիպատետիկյան (Հեմող, այստեղից էլ՝ Հեմարան) փիլիսոփաները։

23. Իսրայելական դինվորական ընտանիք, որ մեծ նախանձախնդրությամբ պայքարեց Սելևկյանների տիրապետության դեմ մ. թ. ա. II դարում։

24. Իմա՝ Դանուբից։

25. Առած է, որ նշանակում է վնասաբեր հաղթանակ տանել։ Սկիզբ է առել Թեբեի թագավոր Էդիպի և նրա մոր Իոկաստեի պիղծ հարաբերությունից ծնված Էտեոկլեսի՝ իր եղբոր Պոլինիկեսի դեմ տարած «հաղթանակի» առթիվ, երբ երկուսն էլ սպանվեցին մենամարտում, իսկ Իոկաստեն էլ նրանց դիակների վրա ինքնասպանություն գործեց։ Թեման Սոֆոկլեսի և Եվրիպիդեսի մի շարք ողբերգությունների նյութն է դարձել։

26. Ոսկե կնիք (խրիսովուլ) կրող փաստաթուղթ։

27. Այստեղ բնագիրը եղծված է. հայտնի չէ, Ալեքսիոս I Կոմնենոսի թագավորության ո՞ր տարվա մասին է խոսքը։

28. Հայկական աղբյուրներում մեսսալյանները կոչվում են մծղնյաներ, նրանց աղանդը՝ մծղնություն։

V—VIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անանիա Շիրակացին VII դարի մատենագիր է, նա համարվում է բնական գիտությունների առաջին ականավոր ներկայացուցիչը հայ իրականության մեջ։ Մեզ է հասել գիտնականի ինքնակենսագրականը, որտեղ նա գրում է, թե ինքը ծնվել է Շիրակ գավառի Անի ավանում։ Փորձուց սեր է ցուցաբերել մաթեմատիկական գիտությունների նկատմամբ և դրա մեջ խորանալու նպատակով սովորելու է գնացել հույն ականավոր գիտնական Տյուխիկոսի մոտ, որի դպրոցը գտնվում էր Տրապիզոնում։ Ուսումը վերջացնելուց հետո վերադարձել է հայրենիք և զբաղվել ուսուցչությամբ՝ աշխատել է այստեղ արմատավորել մաթեմատիկական գիտությունները։

Մեզ հասել են Շիրակացու գիտական մի շարք աշխատությունները՝ թվաբանության դասագիրքը, տոմարական մի շարք աշխատություններ, «Տիեզերագիտությունը», լուսնի պարբերաշրջանին նվիրված աշխատությունը, «Աշխարհացույցը», շափ ու կշիռներին նվիրված աշխատությունը և այլն։ Սրանք գիտությունների պատմության թանկարժեք գոհարներ են։

Շիրակացու աշխատությունների առաջին ժողովածուն հրատարակել է Ք. Պատկանյանը 1877 թ. Պետերբուրգում՝ «Մնացորդ բանից Անանիայի Շիրակունւոյ» խորագրով։ Շիրակացու երկերի ամբողջական ժողովածուն առանձին հատորով հրատարակել է

Ա. Գ. Աբրահամյանը՝ «Շիրակացու մատենագրությունը» ընդհանուր խորագրով (Երևան, 1944):

Շիրակացու տիեզերական երևույթներին նվիրված աշխատությունն առաջին անգամ հրատարակել է բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում՝ 1896 թվականին (էջ 292—296): Վերահրատարակվել է «Անանիա Շիրակացու մատենագրությունը» հատորում՝ 1944 թվականին (էջ 318—322):

Շիրակացուց ստորև բերված բոլոր հատվածները, որոնք աշխարհաբար է թարգմանել Ա. Գ. Աբրահամյանը, տրվում են ըստ այս հրատարակության:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, էջ 318—322

1. Անանիա Շիրակացու խոսքը երկնքի շրջապտույտի մասին՝ թե ինչպես են այն պատկերացնում իմաստուները

Աստծու գործերը մեծամեծ են, ասում է Իսրայելի թագավոր Դավիթը, ամեն ինչ նրա կողմից խելամտորեն է հորինված, և դրա ապացույցը աստվածային ստեղծագործություններն են: [Ներքանցից] կան այնպիսիները, որոնք տեսանելի են աչքով, և կան՝ որոնք ըմբռնելի են բանականությամբ:

Եվ ահա վերին այն երկնքին հույները եթեր են անվանում, քաղդեացիները՝ խառացած կրակ, նրան անվանում են [նաև] բոցեղեն կրակ, որովհետև այն կրակ է առանց նյութականության՝ կազմված պարզ և անխառն օտարարնույթ տարրերի բաղադրությունից: Նա որևէ մեկից չի ծագել, [առաջացել է] ոչնչից: Ոչ մի գոյացություն չի սկզբնավորվել նրանից և ոչ մի բան նրանից վեր չէ: Լինելով ինքն իր մեջ առանձնացած, անհատնելի էությամբ անհատների պարզ միասնություն, տանիքի ծածկոցի նման, անվրեպ շրջափակությամբ և բոլորաձև հավասարությամբ տարածվում է գնդաձև երկրի շուրջը: Իր անդադար, անվրեպ և արագ շրջապտույտով ու անտեսանելի նյութականությամբ ըմբռնելի է միայն [բանականությամբ]: Նա կազմված է երկու կիսագնդերից՝ ներքին և վերին, որոնք գտնվում են դեմ առ դեմ՝ երկրագնդի դիրքին համապատասխան:

Եվ նա (երկինքը) իր մեջ պարփակում է այս հսկա աշխարհը և հողմերի ուժը, քանի որ հարակցությունն է կրակի և հողմի: Նրա շրջապատումով ձևավորվում է իբրև կամար և, անոսր օդով, կարծես ամանի մեջ պարփակվելով, ինչպես ջուրը որևէ խեցեղեն կամ նյութեղեն ամանի մեջ լցված, պահպանվում է հեղուկ վիճակով:

Այսպես և հողմերը չորս կողմը սփռվելուց վերին շրջապտույթյան երկնքի ձև են առել: Բայց նա (երկինքը) իր մեջ ընդգրկում է ինչպես երկիրը, այնպես և ներփակ ջրերը, որոնք ծով են անվանվում: Սրանք առաջացնում են խիտ մշուշը՝ իսկ սա էլ (անձրևի) ջուրը, իսկ այս տեղի է ունենում հողմի ճնշման տակ: Որովհետև ուժգին կամ թույլ տատանման ժամանակ, նայած տարրերի շարժմանը, ինչպես կենդանի էակի մեջ, եթե ավելանում է հրային մասը, նվազեցնում է խոնավայինը, և եթե մեծանում է խոնավայինը, պակասեցնում է հրայինը, նրա հետ՝ և օդը, որը շնչելիքն է, (այն), ջերմության պակասելով, մահվամբ ոչնչացնում է կենդանությունը: Որովհետև (կենդանության համար) անհրաժեշտ է չորս տարրերի համամասնություն, որն Աստված միախառնել է մի ամբողջության մեջ:

2. Ինչ բան են անձրևները

Մարդկային միտքը հասու չէ թափանցելու աստվածային իմաստության խորքերը, բայց [այն գիտնականները], որոնք ուսմամբ հմտանում են ուսումնասիրության գործում, շնորհիվ երեք միջոցի՝ շրջելու, տեսնելու և լսելու, կամեցան բոլորովին անհասու չթողնել արարածներին: Եվ նրանք պարզել են, որ հսկա ծովը պատում է երկիրը շուրջբոլոր: [Այն] ծավալվելով շատ տեղերում և կողմերում՝ արևելքում, արևմուտքում, հյուսիսում և հարավում, ծոցերի և խորշերի մեջ լցվելով՝ ծովացել է, և որպես անջրպետներ, կղզիներ են մնացել չորս կողմերում, որտեղ գտնվում են բազում երկրներ: Նմանը նրան (այսինքն՝ գանգվածին— Ա. Ա.) անվանում են Ատլանտիկա, իսկ ուրիշները՝ Օվկիանոս:

Երկրի վրա տեղի ունեցող բոլոր փոփոխությունները լինում են հողմերի շնորհիվ, նրանք են, որ բերում են տեսակ-տեսակ ցավեր, առողջությունը ևս նրանց պատճառով է լինում: Բոլոր երկրներում տեղի է ունենում գոլորշիացում, որը և՛ օգուտ է բերում, և՛ վնաս: Երկու տեսակի (օգտակար և վնասակար) գոլորշի-

ները հաճախ և անընդմեջ երկրից օդ են բարձրանում, որոնք շատ նուրբ են և աչքով անտեսանելի։ Թվում է, թե (այդ գոլորշիացումը) մեծ է լինում արևելքում։ Գոլորշիացումներ լինում են նաև գետերի և աղբյուրների ջրերից։

Ինձ թվում է, որ այդ գոլորշիներից մեկը (ձևով) չոր է, ծխանման, և այն առաջանում է [տաք] քամիների հետևանքով։ Մյուսը՝ խոնավ է, թանձրամած և գետին է թափվում խոնավության գերհագեցվածության հետևանքով։ Նրանից են առաջանում մշուշը և սառնամանիքները, ամպերը և անձրևները, ձյունը և կարկուտը։ Իսկ շոգից [առաջանում են] տեսակ-տեսակ հողմեր, որոտ, կայծակ, շանթ, հուր, և սրանց նման բաներ։

3. Մշուշների մասին

Մշուշն առաջանում է ամպերի զորությունից (խտությունից), որովհետև (գոլորշիները) խտանում են՝ վեր են ածվում մշուշի և հորդաբուխ անձրևներից՝ ամուլ և ստերջ ամպերի, որոնք միայն փոքր-ինչ խոնավացնում են գետնի երեսը։ Հույները [մշուշը] դիմաղարձ են անվանում այն պատճառով, որ այն արգելակողն է արեգակնային ճառագայթների և անձրևների, որ Աստծու կողմից սահմանված է մեր օգտի համար։

4. Որոտման մասին՝ թե ինչ է նա և ինչից է առաջանում

Որոտը լինում է այն ժամանակ, երբ քամիները գտնվելով շարժման մեջ, վերին [կրակի կամարի] հարկադրանքի տակ, ընկնում են ամպերի շրջափակման մեջ և վիթխարի ուժով ճեղքում են այն։ Այստեղից էլ առաջանում են ճայթյունը և որոտը։ Եվ հողմի ճնշման տակ հուր է ցայտում, որ կոչվում է փայլակ։ Բոլոր տեսակի գոյացություններն իրենց մեջ կրակ ունեն, սակայն ամպինը ավելի ուժգին է։ Երբ (հողմը) ճեղքում է ամպը, եթե թեթև անձրև է տեղում, այն ժամանակ ներքևի օդը տեղափոխվում է (վերև), իսկ եթե ուժեղ է լինում, կայծակը կարող է խփել հանդիպողին և վնասել, բայց երբ թեթև անձրև է տեղում, օդն արգելակում է (կրակի շարժումը) և երկինքը վնասազերծում։ Ջմռան

ժամանակ այդ տեղի չի ունենում, որովհետև ամպերը նոսրացած են լինում հյուսիսային քամիներից. ամպերը խտանում են հարավային քամուց։

5. Ձյան մասին

Ձյունը լինում է այն ժամանակ, երբ արեգակը թեքվում է դեպի հարավ, և ուժեղանում է հյուսիսային քամին, օդի թանձր շերտերը խառնվելով իրար, ավելի են խտացնում օդը։ Այդ խոնավությունը գետին է թափվում խտացած (սառած) կտորներով՝ (ցրտության պատճառով) չկարողանալով վերածվել ջրի։ Սառը քամին թույլ չի տալիս վերածվելու հեղուկ ջրի։ Երբ [ջուրը] առատորեն ներքև է թափվում, կոչվում է տեղատարափ [անձրև], մինչ [ջրի կաթիլները] կարծրացած վիճակում գտնվելիս կոչվում են ձյուն։

6. Կարկտի մասին

Կարկուտն առաջանում է քամիներից. հյուսիսային հողմը թանձր ամպերը վեր է բարձրացնում, ցրտի պատճառով ոլորում, կլորում, գետին թափում, որից և առաջանում է շաչյուն։ Պատահում է, որ այդ ուժեղ է լինում, պատահում է՝ թույլ։ [Կարկուտը] այլ բանից չէ, բայց եթե երկրի գոլորշուց, որը [բարձրանում է] գետերից, աղբյուրներից կամ ծովերից, ինչպես սահմանել է աստվածային իմաստությունը, որի համար անկարելի ոչինչ չկա. նրա հրամանով է առաջացել ամեն ինչ, որին ոչ ոք ստուգապես հասու լինել չի կարող։

7. Քամիների անունների մասին

Երբ քամիները բարեխառն են լինում, անվանում ենք զով զեփյուռ։ Զեփյուռները սովորաբար մի քանի տեսակ են լինում. այն քամին, որը փչում է խոնավ վայրերից, կոչվում է երկրային [զեփյուռ], այն քամին, որը փչում է հովիտներից, կոչվում է հովտային [զեփյուռ], իսկ այն քամին, որը գետերից, աղբյուրներից և ծովերից է սկիզբ առնում, կոչվում է ջրային [զեփյուռ]։

Արևելյան [քամիները] ձմեռային ժամանակ հաճախ են լինում, իսկ արևմտյանը՝ ամառային ժամանակ։ Հարավայինը լինում է (գարնանային և աշնանային) գիշերահավասարների ժամանակ։ Բայց պատահում է, որ գարնանը, աշնանը և ձմռանը լինում են այլ տեսակի քամիներ ևս։ Սրանց մեջ կան այնպիսինները, որոնք փչում են ուղղահայաց և կան այնպիսիները, որոնք փչում են ոլորապտույտ։ Երբ քամիները շատ ուժեղ են, կոչում ենք մրրիկ։ Սրանք հանկարծակի վերից վար են խուժում և լեռները ծածկում մառախուղով։

8. Փոթորիկ քամու մասին, որին ցնդաբանությունների և առասպելաբանության մեջ մարդիկ վիշապ հանել են անվանում

Փոթորիկ է [կոչվում] այն քամին, որը երկրից է վեր բարձրանում [այնպիսի վայրերից], որտեղ դոյություն ունեն ինչ-որ խորխորատ վիհեր և խոռոչներ։ Քամին սրանց միջով, ինչպես խողովակների, որոնք կապված են երկրի [ներքին] երակների հետ, ինչ-որ մի ելք են գտնում, ի մի հավաքված դուրս դեպի վեր վիժում խտացած ամպի նման և առաջացնում սարսափելի դղրդյուն, մինչև իսկ մայրի ծառերն իրենց արմատներով դուրս է հանում տեղից և ժայռեր է գլորում։ Եվ ինչ որ ընկնում է նրա ճանապարհին, ահռելի ոռնոցով բարձրացնում է վեր և [հետո] վար բերում գետին։ Ահա այդ է, որ վիշապ հանել են անվանում։

9. Օդի մեջ տեղի ունեցող պես-պես նշանակների մասին

Օդի մեջ տեղի են ունենում բազմաթիվ և բազմատեսակ երևույթներ. նրանցից մեկը կոչվում է շանթ, երկրորդը՝ կայծակ, երրորդը՝ հուր, չորրորդը՝ փայլակ, հինգերորդը՝ հրո սյուն։ [Նրանցից մի քանիսը] հանդես են գալիս արևմտյան կողմերում, մյուսները՝ արևելյան, ոմանք՝ հարավային կողմերում, մյուսները՝ հյուսիսայինն։ [Դրանց մեջ է և մեկը], որ կոչվում է հարդագող։ Պատահում է, որ օդի խտացման ժամանակ այն ընդունում է սարսափելի (հուրհրացող) տեսք, սակայն երբեմն այն թույլ է երևում, իսկ հաճախ ամենևին չի երևում։

Երբ (կայծակն) օդի մեջ ուղղահայաց է իջնում ներքև՝ այդ առաջանում է քամու շփումից։ Պատահում է, որ երկարատև է լինում հրի չցրվելու պատճառով։ Լինում է նաև, որ ակնթարթորեն դուրս է գալիս և մարում։ Բայց պատահում է, որ կայծակը դուրս գալով՝ երկար ճանապարհ է ընթանում և կորչում։ Լուսնի շուրջը եղող բակը թանձր օդ է, որը կլանում է նրա ճառագայթները, դրա հետևանքով նրանից դուրս եկած ճառագայթներից լույսի թույլ բոլորակ է ստեղծվում, որը և գուշակում է ամպամածություն։

10. Աղբյուրների բնույթի մասին

Աղբյուրների բնույթը հետևյալն է. ամռան ժամանակ արեգակը բարձրանում է վեր և հյուսիսային օդը մղում դեպի երկնքի ներքին շերտը։ [Վերջինս] իր ցրտությունը երկնքից ցած է բերում, որով զովացնում է վեր բխող աղբյուրների ջուրը։ Եվ արեգակը հարավ իջնելով՝ երկրի վրա գտնված ժամանակ, տաքացնում է ներքին ջրամբարները։ Եվ այսպես՝ հարավային [օդը] աղդում է երկրի միայն ներքին շերտի վրա, որովհետև հյուսիսայինը աղդելով գերիշխում է։

Ճիշտ երկրի ձևով էլ կազմված է նաև մարդու բնույթը. ձմռան ժամանակ մարդու որովայնը տաք է լինում և կերակուրը դյուրամարս է դառնում, իսկ մարմինը դրսից սառն է երևում։ Բայց ամռանը մարմինը դրսից տաք է երևում, իսկ ներսից՝ ցուրտ։ Այս են ասում իմաստուն բժիշկները. այսպես են ասել Ասկլիպիադեսի և Հիպոկրատեսի ուսման հմուտները։

11. Երկրաշարժի մասին՝ թե ինչ պատճառով է լինում

Երկրաշարժի առաջացնողը հողմերն են. երբ հողմերը մեծ խորության մեջ գետնի տակ են մտնում ու չեն կարողանում երկիրը շարժել, այդ դեպքում միայն դղրդյուն են առաջացնում երկրի շուրջը։ Սակայն լինում են ուժեղ [հողմեր], որոնք նույնպես չեն կարողանում շարժել երկիրը [նրա շերտի հաստության պատճա-

ռով], բայց նրանք, երբ դուրս են ժայթքում, խորտակում են շատ քաղաքներ և ավերում շինություններ։

Սակայն այդ հողմերը, երբ դուրս գալուելք չեն գտնում, սոսկալի դղրդյուն են բարձրացնում և շարժում երկիրը։ Բայց հողմերը ամբողջ երկիրը շարժել չեն կարող, այլ միայն՝ տեղ-տեղ, ժամանակ առ ժամանակ, այլ և այլ կողմերում ու տարբեր ձևերով՝ երբեմն ուժեղ, երբեմն թույլ։

12. Այն մասին, թե ինչպես է Արիստոտելն ապացուցում, որ տարերքի շարժումն Աստված է

Եթե գոյություն ունի [տարերքի] շարժում, ապա պետք է, որ լինի մի այլ ուժ, որը շարժում է նրան։ Եվ եթե կա այդպիսի ուժ, որը շարժում է նրան, խնդրական է, թե այն ինքնաշա՞րժ է, թե՞ [ուրիշ մեկի միջոցով] շարժվող։ Եթե մեկն ասի, որ շարժման պատճառը հինգերորդ էությունն է, այդ դեպքում պետք է գտնվի անընդմեջ ու մշտական շրջապտույտի մեջ, ուստի մշտաշարժ է։ Ըստ որում, նա իր մշտական շարժունակությունն ստանում է մի այլ՝ հարկադրական ուժից։ Եվ եթե գոյություն ունի այդպիսի մի ուժ, որը շարժում է հսկայական մշտաշարժ այդ տարերքը, ապա անհրաժեշտ է, որ այն շարժողն ինքն անշարժ լինի, անհեղհեղուկ, անփոփոխ, և անշարժ լինելը նրա զորությունն է։ Եվ եթե կա անհողդողդ և վնասի ու ապականության չենթարկվող [այդպիսի] մի ուժ՝ որ իր մեջ ներքին այդ զորությունն է կրում, ապա նա է Աստված՝ բոլորի արարիչն ու շարժողը։

ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ

V դարի հեղինակ եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը մեզ է հասել եզակի ձեռագրով՝ Գլաձորի համալսարանում կատարած ընդօրինակությամբ։ Այն առաջին անգամ հրատարակվել է Զմյուռնիայում 1762 թ., իսկ հետո եղել են բազմաթիվ վերահրատարակություններ՝ հինգը Վենետիկում, չորսը Կ. Պոլսում, երկուսը Փարիզում և այլն։ Թարգմանվել է ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով։ Երկու անգամն թարգմանվել է աշխարհա-

բար։ Քրեստոմատիայում բերվում են հատվածներ «Հայ մատենագիրներ» մատենաշարով 1970 թ. հրատարակված բարգմանությունից, որը կատարել է Ա. Ա. Աբրահամյանը։

ԵՂՆ ԱՂԱՆԴՈՑ

Երկրորդ գիրք

Պարսից կրոնի հերքումը

Ա

Քանի դեռ բնավ ոչինչ գոյություն չուներ,— ասում են,— ո՛չ երկինքը, ո՛չ երկիրը, ո՛չ էլ մյուս արարածները, որ երկնքում կամ երկրի վրա են, կար մեկը՝ անունով Զրվան, որը թարգմանվում է բախտ կամ փառք։ Հազար տարի զոհ արեց նա, որպեսզի, թերևս, իրեն մի որդի լինի՝ Որմիզդ անունով, որը ստեղծի երկինքը, երկիրը ու այն ամենը, ինչ որ նրանց մեջ է։ Եվ հազար տարի զոհ անելուց հետո սկսեց մտածել՝ ասելով. «Որևէ օգուտ կա՞, որ այս զոհն անում եմ, կունենա՞մ Որմիզդ որդի, թե իզուր եմ ջանում»։ Եվ մինչ նա այսպես մտածում էր, Որմիզդն ու Արհմանը սաղմնավորվեցին իրենց մոր արգանդում, Որմիզդը՝ այն զոհ մատուցելուց, իսկ Արհմանը՝ երկմտելուց։ Ապա Զրվանն իմանալով ասում է՝ «Երկու որդիներ կան որովայնում. նրանցից ով որ շուտ հասնի ինձ մոտ, նրան թագավոր կդարձնեմ»։ Եվ Որմիզդը, իմանալով հոր մտադրությունը, հայտնեց Արհմանին՝ ասելով. «Մեր հայր Զրվանը մտածեց, թե մեզանից ով շուտ գնա իր մոտ, նրան թագավոր կդարձնի»։ Արհմանը, այդ լսելով, ծակեց որովայնը և ելավ կանգնեց հոր առաջ։ Նրան տեսնելով Զրվանը չիմացավ, թե ով է, ուստի հարցրեց՝ «Ո՞վ ես դու»։ Իսկ նա պատասխանեց՝ «Ես քո որդին եմ»։ Զրվանը նրան ասաց՝ «Իմ որդին անուշահոտ ու լուսավոր է, իսկ դու խավար ու գարշահոտ ես»։ Մինչ նրանք միմյանց հետ այսպես խոսում էին, իր ժամին Որմիզդը ծնվեց լուսավոր ու անուշահոտ, եկավ կանգնեց Զրվանի առաջ։ Եվ Զրվանը, տեսնելով նրան, իմացավ, թե իր որդի Որմիզդն է, որի համար զոհ էր անում։ Եվ վերցնելով բարսմունքը[1], որ բռնում էր իր ձեռքում ու նրանով

զոհ անում, տվեց Որմիզդին և ասաց՝ «Մինչ այժմ ես էի քեզ համար զոհ անում, այսուհետև դու պիտի անես ինձ համար»։ Եվ երբ Զրվանը բարսմունքը տվեց Որմիզդին ու օրհնեց նրան, Արհմնը մոտեցավ Զրվանին ու նրան ասաց՝ «Այնպես չուխտեցի՞ր, թե քո երկու որդիներից ով որ շուտ հասնի քեզ մոտ, նրան թագավոր կդարձնես»։ Իսկ Զրվանը պայմանը չդրժելու համար Արհմնին ասաց՝ «Ա՛յ խաբեբա ու չարագործ, թող քեզ տրվի ինը հազար տարվա թագավորություն, Որմիզդին էլ քեզ վրա արքա նշանակած կլինեմ, իսկ ինը հազար տարուց հետո Որմիզդը թագավորի և ինչ ցանկանա անել՝ անի»։ Այն ժամանակ Որմիզդն ու Արհմնը սկսեցին արարածներ ստեղծել։ Եվ այն ամենը, ինչ Որմիզդն էր ստեղծում, բարի էր և ուղիղ, իսկ ինչ որ Արհմնն էր ստեղծում, չար էր ու ծուռ։



Նկար 34. Զվարթնոցի տաճարը (VII դար). վերակազմություն

Այսպիսի անհավատալի և տխմարների մտքով կցմցված ցնդաբանություններին բոլորովին էլ պետք չէր պատասխան տալ, որովհետև բավական էր նրանց անմտությունը ցուցադրել հենց իրենց այն ասածներով, որոնք միմյանց հակամարտ են ու հակասական։ Բայց որովհետև այս կերպ քեշի[2] առաջնորդները մեծարված կերևային իրենց ենթարկվողներին և խիստ նեղելով՝ խորխորատ կգցեին սրանց, (ուստի) անհրաժեշտ է պատասխանել ու ցույց տալ, որ ոչինչ ավելի չեն ասում, քան Մանին[3] (ասաց), որին իրենք մորթազերծ արեցին։ Որովհետև նա (Մանին) երկու՝ բարու ու չարի նախասկիզբ է ընդունում և այն էլ ոչ թե հղիությամբ ու ծնունդով, այլ՝ ինքնակա և միմյանց հակառակ, նրանք էլ նույնն են ասում՝ Զրվանի տեսչանքով, (բայց) հղիությամբ ու ծնունդով։ Եվ եթե երկուսն էլ նույն կրոնն ունեն, մոգերը զանդիկներին ինչո՞ւ են ատում, եթե ոչ նրա համար, որ վարքով են միմյանցից տարբեր, թեպետ ձևականորեն և ոչ իսկությամբ։ Սակայն կրոնով երկուսն էլ մեկ են, նրանք երկարմատյաններ են[5], սրանք՝ նույնպես. նրանք արևապաշտներ են, սրանք՝ արեգակի ծառաներ. նրանք կարծում են թե բոլոր անշունչները շունչ ունեն, սրանք էլ նույն ձևով (նույնն) են հասկանում։

Բայց քանի որ Մանին կամեցավ նրանցից,— և ոչ միայն նրանցից, այլև բոլոր աղանդները (դավանողներից),— բարձր վարք ցույց տալ կեղծավորությամբ, իբր թե միանգամայն զերծ է ցանկասիրական կրքերից, ուստի աղջիկներին ձեռնահարելու մեջ մեղադրվեց և մորթազերծմամբ մեռավ։ Այսպիսով պարզ է, որ (մանիքեականներն ու զրվանականները) միայն վարքով են միմյանցից տարբերվում։ Թեև նրանք կեղծող են, և սրանք՝ զեղխ ու բացահայտորեն փափկասեր, սակայն կրոնով նույնն են։

Գ

Այժմ մենք, թողնելով նրանց (մանիքեականներին), հարցնենք սրանց (մոգերին)՝ Զրվանը, որին ամեն ինչից առաջ են համարում, կատարյա՞լ մեկն էր, թե՞ անկատար։ Եթե ասեն, որ կատարյալ էր, կլսեն, թե կատարյալը ումի՞ց կարիք կունենա խընդ-

րելու որդի, որը գար և երկինքն ու երկիրը ստեղծեր. քանի որ եթե կատարյալ լիներ, հենց ինքը կարող էր ստեղծել երկինքն ու երկիրը։ Իսկ եթե անկատար էր, պարզ է, որ նրանից վեր կար մեկը, որը կարող էր նրա թերակատարությունը լրացնել։ Եվ եթե իրենից վեր մեկը կար, նա պիտի ստեղծեր երկինքն ու երկիրը և այն ամենը, ինչ որ նրանց մեջ են՝ իր բարերարությունն ու զորությունը ցույց տալու համար, և ոչ թե Զրվանին որդի շնորհեր, որը երկինքն ու երկիրը նրանց մեջ եղող ամեն ինչ ստեղծեր։

«Բայց,— ասում են,— փառքի համար էր զոհ անում»։

Հարցնենք՝ փառքը մեկի կողմի՞ց էր շնորհված նրան, թե՞ (ինքը) մշտնջենական լինելու պատճառով էր փառավոր։ Եթե փառքը մեկի կողմից էր պարգևված նրան, պետք է կարծել, որ կար մեկը նրանից վեր՝ ավելի հզոր ու ավելի փառավոր, որից փառքը հասավ նրան։ Իսկ եթե նրանից վեր մեկը չկար, հազարամյա զոհ անելը իզուր էր. որովհետև փառքը գոյավոր բան չէ, այլ մեկի հաջողությունից է փառք կոչվում, ինչպես որ մեկի անհաջողությունից էլ թշվառությունն է անվանվում։ Երկուսն էլ դեպքերի արգասիքն են և ոչ թե հաստատ գոյակներ։

Մի բան ևս։ Եթե դեռ ստեղծված չէին արեգակը և լուսինը, որոնցով ժամերն ու օրերը, ամիսներն ու տարիներն են որոշվում, հազար տարին որտեղի՞ց էր երևում։ Քանի որ մեջտեղում չկային լուսատուները, որոնք օրերի, ամիսների ու տարիների քիվը պիտի ցույց տային, ուրեմն պարզ է, որ անմտությամբ լի են այն շաղակրատանքները։

Դարձյալ՝ եթե չկային երկինքը, երկիրը և ինչ որ նրանց մեջ է, ո՞րտեղ կամ ինչո՞վ էր զոհ անում (Զրվանը)։ Երբ չկար երկիրը, ոչ էլ նրանից (բուսնող) տունկերը, բարսմունքը որտեղի՞ց էր գտնում՝ իր ձեռքում բռնելու. կամ թե ի՞նչ էր զոհում, քանի որ անասուններ դեռ ստեղծված չէին։ Եվ որը ամենից անմիտ բանն է, «Հազար տարի,— ասում են,— զոհ արեց. և հազար տարուց հետո երկմտեց՝ ասելով. «Կլինի՞ ինձ Որմիզդ որդի. եթե չլինի, իզուր տեղը պիտի չարչարվեմ»։ Եվ դա ցույց է տալիս, որ Զրվանը տկար, կարիքավոր ու տգետ էր. չարիքների պատճառն էլ նույն ինքն է և ոչ թե Արհմնը։ Որովհետև եթե նա երկմտած չլիներ, ինչպես ասում են նրանք, չէր լինի Արհմնը, որին չարիքների

արարիչ են հռչակում իրենք։ Բայց ինքը երկմտեց, որը անհավատալի և լիապես անկարդ բան է։

Քանի որ մեկ աղբյուրից երբեք երկու տեսակ ջուր չի բխում՝ մեկն անուշ, մյուսը՝ դառը, ոչ էլ մեկ ծառից երկու տեսակ պտուղներ (են լինում)՝ մեկը քաղցր, մյուսը՝ դառը, ուստի եթե Զրվանին ընդունում են քաղցր, չպետք է դառը պտուղը՝ Արհմնին, նրանից (ծնված) համարեն, իսկ եթե դառն են հաշվում, պատշաճ չէ, որ քաղցր պտուղը՝ Որմիզդին, նրանից (սերված) կարծեն։ Եվ նրանց համար հարմար է գալիս աստվածային խոսքը, թե՝ «Կամ արե՛ք ծառը քաղցր ու նրա պտուղը քաղցր և կամ արե՛ք ծառը դառը ու նրա պտուղը դառը, որովհետև ծառից է իր պտուղը ճանաչվում»։

Եվ եթե արարածները մնում են յուրաքանչյուրն իրենց հորինվածքում ու երբեք դուրս չեն գալիս իրենց համար դրված սահմաններից, (ապա) առավել ևս Զրվանը, եթե որ մշտնջենավոր մեկն էր ու արարածներ ստեղծելու հնարներ էր որոնում՝ թե՛ անձամբ, թե՛ իր որդու կամ մի ուրիշի միջոցով, ինչպես ասում են, պարտավոր էր կարգ ու կանոն ցույց տալ և ոչ թե անկարգություն։

Որովհետև երբեք չտեսանք, որ կովերը էշեր ծնեին, էշերը՝ եղներ, ոչ էլ գայլերը՝ մաքիներ, մաքիները՝ աղվեսներ, առյուծները՝ ձիեր, ձիերը՝ օձեր. սակայն մի ծնունդ կա միայն, որ մարդիկ բնության օրենքներից դուրս հնարեցին՝ ձիերից ու էշերից ջորիներ ծնեցնելը։ Նրանք էլ անսերմ ու անծնունդ են, քանի որ ոչ թե աստծուց են ստեղծվել, այլ մարդկանց հնարամտությունից (են առաջ գալիս)։ Այսպիսով՝ եթե Զրվանը տավար էր, կարիճ Արհմնին ինչպե՞ս էր ծնում, և եթե գայլ էր, դառ Որմիզդին ինչպե՞ս ծնեց. չէ՞ որ մարդկանց մտքի ցնդաբանություններ են (դրանք)։

Քանի որ Զրվանը ևս մարդ է եղել, մի քաջ տղամարդ՝ տիտանների օրոք, և հույները, արիները ու բոլոր հեթանոս ժողովուրդներն էլ սովոր են քաջերին դյուցազուններ համարել, (ուստի) պարսից կրոնը կցմցողը տեսնելով, որ իր երկրի մարդիկ (նույն ձևով) նրան (Զրվանին) աստված են համարում, (ասում է՝) «Ես պիտի կարծել տամ, որ երկնքի, երկրի ու բոլոր արարածների ստեղծումը նրանից է»։

Խոսքիս ճշմարիտ լինելը նրանից է երևում, որ (կցմցողը) ըստ

մարդկային բարքերի է հարմարեցնում քեշը և հղիության ու ծննդկան հիմունքով է կցմցում իր ուսմունքը։ Որովհետև նախ ազդարարում է, թե բարի և չար երկու արարիչները մեկ հոր ծննդոններ են, և ապա մեջտեղ է բերում այն, թե մոր ու քրոջ (հետ ունեցած) սեռական գործողություններով են ստեղծվել լուսատուները։ Եվ դա՝ ոչ թե ուրիշ բանի, այլ մարմնասիրության ու ցանկասիրության պատճառով։ Որովհետև տեսնելով, որ արիական ցեղը իգասեր էր, նրա նույն մեղկ բարքին համապատասխան նրա համար կրոն կցմցեց, որպեսզի իրենց աստվածների մասին լսելով, թե անվայել խառնակեցությունների են հետամուտ եղել, իրենք էլ, նրանց նմանվելով, նույն անառակություններն անեն անխտիր, իսկ դրանից հետու է և վեր է մնում աստվածայինը։ Որովհետև աստծուն պատշաճ է որդի ունենալ ոչ թե ամուսնությամբ, այլ հավիտենականությամբ, ինչպես որ մտքին (հատուկ է առաջ բերել) խոսքը, աղբյուրին՝ գետը, կրակին՝ տաքությունը, արեգակին՝ լուսավորությունը, ուստի այնպես չէ, ինչպես նրանք են հանդգնում ասել, թե փափագում էր, որ մի որդի ծնվեր իրեն, որին անունը Որմիզդ լիներ։

Օ՜ հիմարություն. դեռ մեջտեղը որդի չկար, և նա չսաղմնավորվածին ու չծնվածին անուն էր դնում։ Բոլոր ծնունդներին անուններ են դրվում ծնվելուց հետո, իսկ նա (Զրվանը) ծնվելուց առաջ ինչպե՞ս էր նրան Որմիզդ անունը դնում։ Բայց (դուցե ասեն), թե հավատում էր, որ իսկապես իրեն որդի է ծնվելու։ Իսկ եթե հավատում էր, ինչո՞ւ երկմտեց և իր երկմտանքով պատճառ դարձավ Արհմնի ծննդյան, որով չարիքներն աշխարհ մտան։ Եվ զարմանալին այն է, որ մեկը հաղարամյա ղոհաբերությամբ հաղիվ ծնվեց, իսկ մյուսը հենց նոր երկմտելուց (ծնվեց)։

Դարձյալ՝ նա, որ իմացավ, թե որովայնում երկու որդիներ կան, ինչո՞ւ այն էլ չիմացավ, որ մեկը բարի է, իսկ մյուսը՝ չար։ Եվ եթե իմացավ, բայց չոչնչացրեց չարին, (ուրեմն) ինքն է չարի պատճառը։ Իսկ եթե այն չիմացավ, ինչպե՞ս կարելի է հավատալ, թե մյուսին ճանաչեց։ Եվ եթե այն ժամանակ չիմացավ, (իսկ հետո), երբ տեսավ նրան խավարին ու գարշահոտ, արդյոք այդ ժամանակ է՞լ չիմացավ։ Սակայն և՛ իմացավ, և՛ տեսավ, և՛ թագավոր դարձրեց խավարայինին. (ուստի) ինքն է չարիքների պատճառը, որովհետև չոչնչացրեց չարին և դեռ թագավորություն էլ

տվեց նրան ինը հազար տարով։ Եվ ո՞ւմ վրա թագավորեցրեց նրան (Արհմնին), եթե ոչ Որմիզդի կողմից ստեղծված բարի արարածների վրա, որպեսզի նրանց չարչարի՝ խառնելով նրանց հետ իր չար արարածներին։

«Սակայն,— ասում են,— Որմիզդին էլ թագավորեցրեց նրա վրա»։

Եթե Որմիզդը նրա թագավորը լիներ, ինչպե՞ս թույլ կտար, որ նա (Արհմնը) իր բարի արարածներին չարչարեր։ Եթե հայրը որդու արարածներին չխնայեց՝ չարի ձեռքը տալով (նրանց), որդին իր արածների նկատմամբ ինչո՞ւ չպիտի հոգ տանի. անկարողությա՞ն, թե՞ չարակամության պատճառով։ Եթե անկարողության պատճառով վտանգից ազատ չի պահում, ապա նա ո՛չ այժմ է թագավորում, ո՛չ էլ հետո, ինչպես ասում են, կարող է հաղթել։ Իսկ եթե չարակամության պատճառով է, դուրս է գալիս, որ չարիքների համար պատասխանատու է ոչ միայն հայրը, որ թագավորեցրեց չարին, այլև՝ որդին, որ համախոհ եղավ հորը և քաջալերող՝ չարին։

Դարձյալ՝ թե որ թագավորությունը հանձնեց որդիներին՝ մեկին ինը հազար տարով, մյուսին՝ հավիտենապես, (ապա) ինքը ո՞ր կարգում պիտի մնար։ Չէ՞ որ երբ դեռ ոչինչ չկար, չկար նաև որևէ բանի թագավոր, որովհետև որևէ բանի արարիչ էլ չկար։ Իսկ երբ որդիները ծնվեցին, դարձան արարիչներ՝ մեկը բարիների, մյուսը չարերի։ Հենց նրանք էլ թագավորներ եղան՝ մեկը ժամանակավոր, մյուսը հավիտենական։ Այսպիսով Զրվանը արարչությունից ու թագավորությունից դատարկ մնաց. և արարիչ չէ, որովհետև ինքը չի ստեղծել, թագավոր էլ չեղավ, որովհետև ո՞ւմ արարածներին պիտի թագավոր լիներ։ Ուրեմն պարզ է, որ Զրվանը երբեք գոյություն չի ունեցել և չկա։ Որովհետև այն, որ գոյություն ունի, կա՛մ արարիչ է, կա՛մ արարած։ Եվ քանի որ սա (Զրվանը) ո՛չ արարիչ է, ո՛չ էլ արարած, (հետևաբար) երբեք էլ աստված չի եղել, չկա ու չի էլ լինի։

Դ

«Սակայն,— ասում են,— երբ Զրվանը իր մեջ մտածեց, թե՝ «Իմ որդիներից ով շուտ հասնի, նրան թագավոր կդարձնեմ», Որմիզդն իմացավ ու այդ միտքը հայտնեց Արհմնին»։

Եթե Որմիզդը հոր միտքը իմացավ, (ապա) ինչո՞ւ չիմացավ չար եղբոր մտադրությունն էլ, թե ծակելու է որովայնն ու դուրս գալու, նա առաջինն է գնալու և ստանալու թագավորությունը, որը ողբերգական էր լինելու իր և իր արարածների համար, որովհետև հենց սկզբում ետ մղելով՝ նա պիտի թուլացներ իրեն, և ապա (ինքը) ինը հազար տարի ղղջար ու ցավեր, որ նա ծուռ է նայում իր բարի արարածներին, այլանդակում ու այլակերպում է նրանց։ Կամ Զրվանն էլ, որ իմացավ երկու որդիների սաղմնավորվելը որովայնում, ինչո՞ւ չճանաչեց Արհմնին, երբ սա եկավ կանգնեց իր առաջ։

Դարձյալ՝ նա, որ գիտեր թե իր Որմիզդ որդին անուշահոտ և լուսավոր էր՝ հենց որովայնում գտնվելու ժամանակից, ինչպե՞ս չիմացավ, որ մյուս որդին գարշահոտ ու խավարին է։ Մի՞թե պարզ չէ, որ նրանց (զրվանական կրոնն ընդունողների— Ա. Ա.) կողմից պատմվում են ոչ թե հավատի բաներ, այլ՝ կցմցված առասպելներ։

Եվ մյուս՝ ամենից անհավատալի բանն էլ այն է, որ մեկը հաղարամյա զոհաբերությամբ հաղիվ ծնվեց, իսկ մյուսը երկմտելուց անմիջապես հետո (ծնվեց)։ Եվ եթե Արհմն որդին այն երկմտելուց ծնվեց, (Զրվանը) նրան չպիտի կոչեր իր որդին, որովհետև եթե իր որդին լիներ, հար և նման պիտի լիներ իրեն՝ կա՛մ բարի, եթե (ինքը) բարի էր, կամ թե չար, եթե (ինքը) չար էր։ Մի՞թե Զրվան հայրը միաժամանակ և՛ բարի էր, և՛ չար, ու նրա բարի երակից բարի որդին ծնվեց, չար երակից՝ չարը։ Եվ եթե այնպես չէր, ապա նա չարին չէր կոչի իր որդին, ոչ էլ թագավորություն կտար նրան։ Իսկ եթե բարի էր ինքը, չարին կոչնչացներ ու թագավորությունը կտար բարուն, որով ինքը մեծանուն կդառնար և իր բարի որդի Որմիզդին չէր նեղացնի։ Սակայն այս բոլորից պարզ է, որ երբեք չի եղել Զրվանը աստվածների հայր, ոչ էլ թագավորություններ տվող։

1. *Բարսմունքը ճյուղերի կամ ճիպոտների կապոց էր, որ մոգերը զոհ անելիս կամ աղոթելիս բռնում էին իրենց ձեռքում։*

2. *Քեշը պարսկական հին կրոնն էր։*

3. *Մանին (216—277՞) հենց իր անունով կոչվող մանիքեական աղանդի հիմնադիրն էր։ Այդ աղանդի հիմքն էր կազմում պարսկական հին կրոնը, բայց այն իր մեջ պարունակում էր նաև Առաջավոր Ասիայի կրոնների (քրիստոնեու-*

թյուն և այլն) տարրեր։ Մանիի ուսմունքը դուալիստական բնույթ ուներ (մանրամասն տե՛ս Ն. Տեր-Միքելյան, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատ. 1-ին, Վաղարշապատ, 1908, էջ 186—190, «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից», Երևան, 1968, էջ 86, 97—98)։

4. *«Ջանդիկ»— բնդհանրապես նշանակում է «հերետիկոս», ավելի դեպքում՝ «Մանիի ուսմունքին հետևող, մանիքեական»։ Բակտրիերեն «զան»— «ճանաչել», «իմանալ» բառից է։*

5. *Սզնիկը «երկարմատհան» բառը, իբրև տերմին, գործածել է «դուալիստ» իմաստով (=երկու+արմատ+հան)։*

ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂԻ ՈՂԲԸ ԻՇԽԱՆ ՋԵՎԱՆՇԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Դավթակ Քերթողը VII դարի հայ գրականության ամենաաչքի ընկնող դեմքերից մեկն է։ Նրանից մեզ է հասել հայ պոեզիայում աշխարհիկ թեմայով պահպանված ենթագույն ստեղծագործությունը, որը կոչում է «Ողբ մեծ իշխան Ջևանշերի մահվան առթիվ» խոստագիրը։ «Ողբը» նվիրված է «Հայոց Արևելից կողմանց» (Հայոց Աղվանք) իշխան Ջևանշերին (637—670)։ «Ողբի» ստեղծման առիթը է ծառայել Ջևանշերի դավադրական սպանությունն իր մերձավորներից մեկի կողմից։ Մովսես Կաղանկատվացին գրում է, որ իշխանի սպանությունը ցնցել էր բոլորին և շատերը ողբում էին նրա մահը։ Իսկ մի ճարտասան՝ Դավթակ անունով, որը հոչակված բերթող էր և ապրում էր իշխանի պալատում, հատուկ շափածո ողբ է հորինում իշխանի մահվան առթիվ։ Մովսես Կաղանկատվացին իր երկասիրության մեջ բերել է «Ողբի» ամբողջական տեքստը (տե՛ս *Մովսես Կաղանկատվացի*, Պատմություն Աղվանից աշխարհի, գլուխ Լ)։

Դավթակ Քերթողի «Ողբից» ստորև բերված հատվածները տալիս ենք Ա. Մնացականյանի թարգմանությամբ։

ՈՂԲ ՄԵՆ ԻՇԽԱՆ ՋԵՎԱՆՇԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Աստվածային խոսքի արվեստաշունչ ոգի,
Իմաստություն տուր իմ երգին տխրական,

Որ սգալի ձայնով անդադար ողբանք
Մեր դժնատեսիլ կորուստի վրա։

Բնկումն ինչ մեծ՝ Արևելյան երկրիս[1],
Կործանման աղաղակ՝ աշխարհով մեկ.
Աղգերն ու ցեղերը լսեն թող ձայնս,
Բոլոր արարածները ինձ հետ ողբան թող։

Գլորվեց վեմը հզոր ու կենդանի,
Պարիսպն ամրության փլատակվեց,
Տապալվեց աշտարակը բանավոր,
Եվ ցանկը շինության քանդվեց հիմքից։

Դառնության փոխվեց խաղաղությունը մեր,
Ավազակները դռնբաց խուժեցին ներս,
Քանզի մեծասքանչ տերությունն ընկավ,
Եվ մարեց ճառագայթը մեր պետական։

Եկան անեծքները, ընկան մեզ վրա,
Ինչպես գուշակել էր Եսայի մարգարեն։
Եվ տոնը Սուրբ խաչի երկնային տիրոջ
Մեզ համար դարձրին սուգ ու լացի թույն։

Ջնդան կորուստի փորեցին խորունկ,
Եվ հովվին բարի նետեցին այնտեղ.
Մոլության ոգին շնչեց նրանց մեջ՝
Թաքցնելով ստոր որոգայթը մահու։

Էր առյուծ նա մի՝ նստած անտառում,
Սարսում էր նրանից ոսոխը սսկված.
Տոհմապետ ամեն և իշխան ամեն
Երկյուղով ու սիրով լսում էր նրան։

Ընտրյալի փառքը հասավ ամենուր,
Տարածվեց անհուն աշխարհով ողջ.

Իր հնարագետ հանճարի մասին
Գովերգ հնչեցրին տիեզերքով մեկ։

Թագավորն Հունաց, իշխանն Արաբիո,
Տենչալով խնդրեցին, որ տեսնեին նրան.
Եվ ընդունում էին հարգալից ողջույնով
Եվ փառքով պսակում և պատվում մեծապես։

Ժամանեցին բայց մեզ և գործերը չար,
Մոլորությունն անդիջում բարձրացավ մեր դիմաց,
Բարկացրինք Արարչին մենք մեր իսկ արարքով,
Եվ մատնեց նա մահվան տերության ավագին...[2]

1. Խոսքը «Հայոց Արևելից կողմանց» (Հայոց Աղվանք) երկրամասի մասին է։
2. Այս բանաստեղծության տների սկզբնատառերը կազմում են հայոց այբուբենը (Ա—Ք), քրեստոմատիայում մեջ են բերված միայն առաջին տասը տները (Ա—Ժ)։

ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անանիա Շիրակացու «Խնդրագիրքն» առաջին անգամ հրատարակվել է «Սիոն» ամսագրում՝ 1886 թվականին: Վերահրատարակել է բանասեր Գ. Տեր-Մկրտչյանը 1896 թ. «Արարատ» ամսագրում (էջ 143—152): Այնուհետև վերահրատարակվել է Շիրակացու «Մատենագրության» 1944 թ. հրատարակության մեջ:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, էջ 227—232

Առաջին խնդիր.— *Ես հորից այսպես լսեցի. պարսիկների դեմ հայերի մղած պատերազմի ժամանակ[1] մեծ քաջագործություններ են կատարվում Ջորակ կամարակապի կողմից[2], որպես քե մեկ ամսվա մեջ երեք անգամ հարձակվում է պարսկական զորքերի վրա: Առաջին անգամ նա կոտորում է զորքի կեսը, հետապնդելով՝ երկրորդ հարձակման ժամանակ կոտորում է քառորդ մասը, երրորդ անգամ հարձակվելիս՝ տասնմեկերորդը, իսկ մնացածները, թվով երկու հարյուր ութսուն, փախչում են Նախիջևան։*

Արդ՝ մնացածների հաշվով մենք պարտավոր ենք իմանալ, թե կոտորածից առաջ որքա՞ն էր [պարսկական զորքը]։

Երկրորդ խնդիր.— *Իմ մերձավոր մարդկանցից մեկը մեկնելով Բահլ[3], շահավոր մարգարիտներ ձեռք բերեց[4]։ Տուն վերադառնալով և հասնելով Գանձակ[5], նա մարգարիտների կեսը ծախեց հատը հիսուն դրամով[6], գալով Նախիջևան՝ վաճառեց քառորդ մասը՝ հատը 70 դրամով, ապա հասնելով Դվին՝ ծախեց տասներկուերորդ մասը՝ հատը 50 դրամով։ Երբ նա եկավ մեզ մոտ՝ Շիրակ, նրա մոտ մնացել էր ընդամենը 24 հատ մարգարիտ։*

Արդ՝ մնացածի հաշվով իմացիր, թե ընդամենը քանի՞ մարգարիտ է եղել և քանի՞ դրամ էր մարգարիտների գինը։

Երրորդ խնդիր.— *Ես իմ ուսուցչից լսեցի, թե գողերը մտնելով Մարկիանոսի[7] տրիկլինը (դանձատունը), գողացան այնտեղ եղած գանձի կեսը և չորրորդ մասը։ Գանձապահները ներս մտնելով, մնացածը գտան 421 կենդինար[8] և 3600 դահեկան[9]։*

Արդ՝ իմացիր, թե ամբողջ գանձը որքա՞ն էր։

Չորրորդ խնդիր.— *Սուրբ Սոֆիայի[10] միաբանների ռոճիկը [բաժանվում է այսպես]. հինգերորդ մասը ստանում են սարկավագները, տասներորդ մասը՝ քահանաները, 240 լիտր՝[11] եպիսկոպոսները և 2000 լիտր՝ մնացած միաբանները։*

Արդ՝ իմացիր, թե ամբողջ ռոճիկը քանի՞ լիտր էր։

Հինգերորդ խնդիր.— *Սպանների ռոճիկը բաշխվում է այսպես. քառորդ մասը տրվում է պատվավորներին, ութերորդ մասը՝ ավագներին, իսկ 150 կենդինարը՝ մյուս հեծյալներին[12]։*

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ կենդինար է։

Վեցերորդ խնդիր.— *Իմ պարտեզում կար հազար*։ Մի հոռմեացի, զբոսնելու նպատակով մտնելով այնտեղ, կերավ այդտեղ եղած հազարի հինգերորդ և տասնհինգերորդ մասը։ Գիտենալով այդ մարդու որկրամոլությունը, ես նրան դուրս արեցի և մտնելով պարտեզ, համրեցի և տեսա, որ պարտեզում կա 110 հատ հազար։*

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ հազար է եղել և հոռմեացին քանի՞ան է կերել։

---

* *Ջամբյուղավորների խմբին պատկանող բույս, որը գործ է ածվում իբրև կերակուր կամ աղցան (տե՛ս* Ստ. Մալխասյանց, *Բացատրական բառարան, հատ. III, էջ 8)։*

Յոթերորդ խնդիր.— *Ես Մարմետում էի[13], Կամսարականների ոստանում։ Գնալով Ախուրյան[14] կոչվող գետի ափը, տեսա ձկների վտառ, ուրկան գցել տվեցի, բռնեցի այդ ձկների կեսը, քառորդ և յոթերորդ մասը, իսկ որը ուրկանից ազատվեց, ընկավ թարփի մեջ, որի մեջ գտա 45 հատ։*

Արդ՝ իմացիր, թե վտառի մեջ ընդամենը քանի՞ ձուկ կար։

Ութերորդ խնդիր.— *Պարսիկների դեմ հայերի ապստամբած ժամանակ, երբ Զորակ Կամսարականը սպանեց Սուրենին,[15] հայ ազնվականներից մեկը դեսպան ուղարկեց Պարսից թագավորի մոտ՝ այդ գույժը նրան հաղորդելու։ [Դեսպանը] գնում էր օրական 50 մղոն։ 15 օր հետո, երբ Զորակ Կամսարականն այդ իմանում է, դեսպանին բռնելու համար նրա հետևից հետապնդողներ է ուղարկում, որոնք անցնում էին օրական 80 մղոն[16] (ճանապարհ)։*

Արդ՝ իմացիր, թե նրանք քանի՞ օրում կհասնեին դեսպանին։

Իններորդ խնդիր.— *Կամսարականները որսի էին դուրս եկել Գենում[17] և որսացել էին շատ երեներ, ինձ որսաբաժին բերել տվեցին մի վարազ։ Քանի որ այն վիթխարի էր, ուստի ես կշռեցի։ Պարզվեց, որ նրա փորոտիքն ամբողջ քաշի չորրորդ մասն էր, գլուխը՝ տասներորդ մասը, ոտքերը՝ քսաներորդ, ժանիքները՝ իննսուներորդ, իսկ մարմինը քաշում էր 212 լիտր։*

Արդ՝ իմացիր, թե ամբողջ վարազը քանի՞ լիտր էր։

Տասներորդ խնդիր.— *Մարմետի մոտ՝ երասխ գետում մի լոքո բռնեցին։ Ես կշռեցի այն։ Պարզվեց, որ նրա գլուխը կազմում էր ամբողջ քաշի չորրորդ մասը, պոչը՝ վեցերորդ, իսկ մեջքը՝ 140 լիտր։*

Արդ՝ իմացիր, թե ամբողջ ձուկը քանի՞ լիտր էր։

Տասնմեկերորդ խնդիր.— *Մի վաճառական անցավ երեք քաղաքներով։ Առաջին քաղաքում նրանից մաքս վերցրին ունեցածի կեսը և երրորդ մասը, երկրորդ քաղաքում՝ հաշվեցին ինչ որ ուներ, վերցրին մնացածի կեսը և երրորդ մասը, իսկ երրորդ քաղաքում՝ դարձյալ հաշվեցին և վերցրին մնացածի կեսը և երրորդը։ Եվ երբ այդ մարդը տուն հասավ, նրա մոտ մնացել էր 11 դահեկան։*

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ դահեկան ուներ։



Նկար 35. Շիրակացու տիեզերագիտական բոլորակներից. Մատենադարան, ձեռագիր № 1973, թ. 71 ա

Տասներկուերորդ խնդիր.— *Մի նավակ էի ուզում սարքել, քայց ունեի ընդամենը երեք դրամ, ուրիշ ոչինչ չունեի։ Դիմեցի իմ մերձավորներին. «Տվեք ինձ ամեն մեկդ մի բան, որ կարողանամ սարքել նավակը»։ Նրանցից մեկը տվեց նավակի երրորդ մասի [արժեքը], մեկը՝ չորրորդի, մեկը՝ վեցերորդի, մեկը՝ յոթերորդի և մեկն էլ՝ քսաներերորդի։ Ես սարքեցի նավակը։*

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ դահեկան (արժեքի) էր նավակը։

Տասներեքերորդ խնդիր.— *Իմ աշակերտներից մեկը Խարա քաղաքից ընտիր խնձորներ է գնում և ցանկանում է ինձ ընծա բերել։ Ճանապարհին նրան հանդիպում է կատակողների երեք խումբ։ Առաջին խումբը վերցնում է խնձորների կեսը և չորրորդը, երկրորդ խումբը՝ մնացածի կեսը և չորրորդը, երրորդ խումբը՝ նույնպես մնացածի կեսը և չորրորդը։ Մնացած խնձորները՝ հինդ հատ, բերում հասցնում է ինձ։*

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ խնձոր է եղել։

Տասչորսերորդ խնդիր.— *Մի կարասի մեջ գինի կար, որ վարդով էին պատրաստել։ Եվ կար նաև երեք խեցե սափոր։ Ես հրամայեցի գինին լցնել այդ սափորների մեջ։ [Սափորներից] մեկը տարավ ամբողջ գինու երրորդ մասը, մեկը՝ վեցերորդ, իսկ մյուսը՝ տասնչորսերորդ մասը։ Մնացած գինին, որ այլ ամանների մեջ լցրին, 54 փաս էր։*

Արդ՝ իմացիր, թե քանի՞ փաս էր ամբողջ գինին։

Տասնհինգերորդ խնդիր.— *Ես ունեի մի ագնվացեղ ձի։ Այդ ձին վաճառելով, ստացած դումարի քառորդով կովեր գնեցի, յոթերորդով՝ այծեր, տասներորդով՝ եղներ, իսկ մնացած 318 դահեկանով գնեցի ոչխարներ։*

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ դահեկան է անում։

Տասնվեցերորդ խնդիր.— *Ես եկեղեցի էի կառուցում։ Վարձեցի մի որմնադիր, որը օրական 140 քար էր շարում։ Աշխատանքն սկսելուց 39 օր հետո վարձեցի մեկ ուրիշ որմնադիր, որը օրական 218 քար էր շարում։ Երբ երկրորդ որմնադիրի շարած քարերի թիվը հավասարվեց առաջինին, եկեղեցու կառուցումը ավարտվեց։*

Արդ՝ իմացիր, թե քանի՞ օրում հավասարվեց։

Տասնյոթերորդ խնդիր.— Յորենով լի մի նավ էր գնում։ Մի ուրիշ նավ էր հետապնդեց նրան։ Նավորդները վախեցան և ցորենի կեսը իբրև կեր գցեցին նրան։ Երկրորդ օրը գցեցին մնացած ցորենի հինգերորդ մասը, երրորդ օրը՝ ութերորդը, չորրորդ օրը՝ յոթերորդը։ Նավահանգիստ հասան, մնացել էր ընդամենը 7200 (կայթ)[18] ցորեն։

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ (կայթ) էր ցորենը։

Տասնութերորդ խնդիր.— Ես ունեի մի ապաղար[19], որը ջարդեցի և պատրաստեցի ուրիշ ամաններ։ Երրորդ մասից պատրաստեցի մի սան, չորրորդ մասից՝ մի ուրիշ սան, հինգերորդ մասից՝ երկու բաժակ, վեցերորդից՝ երկու սկուտեղ, իսկ 210 դրամից՝ մեկ սկահակ։

Արդ՝ իմացիր, թե ի՞նչ քաշ ուներ մետաղյա ջրամանը։

Տասիններորդ խնդիր.— Մի մարդ մտավ երեք եկեղեցի։ Առաջին եկեղեցում աստծուց հետևյալը խնդրեց. «Տո՛ւր ինձ այնքան, որքան ես ունեմ, և ես կտամ քեզ քսանհինգ դահեկան»։ Այդպես խնդրեց նաև երկրորդում և տվեց քսանհինգ դահեկան, նույնը՝ նաև երրորդում. և նրա մոտ ոչինչ չմնաց։

Արդ՝ իմացիր, թե սկզբում նա քանի՞ դահեկան ուներ։

Քսաներորդ խնդիր.— Շիրակի և Արշարունիքի[20] տեր Ներսեհ կամսարականի որսատեղին գտնվում էր Արտին լեռան[21] ստորոտում։ Մի գիշեր այնտեղ են մտնում բազմաթիվ ցիռերի երամակներ։ Ծառաները որսալու փորձ չունենալով, վազում են Թալին գյուղը և պատմում այս մասին։ Կամսարականն իր եղբայրների և ազնվականների հետ շտապում է որսատեղին։ Սկսում են կոտորել երևներին։ Նրանց կեսը բռնվում է թակարդով, քառորդ մասին նետահար են անում, իսկ մատաղ երեներին, որոնք ամբողջի տասներկուերորդ մասն էին կազմում, բռնում են ողջ-ողջ, իսկ 360 երե սպանվել էր նիզակով։

Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ հատ էին։

Քսանմեկերորդ խնդիր.— Արշավիրի որդի Ներսեհ կամսարականը, որ այս Ներսեհի անվանակիցն ու նախահայրն էր, բահղուՃների[22] դեմ մղած պատերազմում հաղթելով նրանց՝ մեծ թվով գերիներ է վերցնում։ Երբ հասնում է արքունի դուռը, գերիների կեսը նվիրում է Պարսից թագավորին[23], իսկ մնացած կեսի յոթերորդը՝ նրա որդուն։ Ապա նրան հրաժեշտ տալով՝ վերադառնում է իր երկիրը։ Ճանապարհին գալով գարիկպետի տունը[24] նրա կողմից անչափ մեծարվում է ոչ որպես նախարարի, այլ թագավորի պատվասիրությամբ, և սա տալիս է նրան մնացած գերիների ութերորդը։ Հետո գալիս է սպայապետի մոտ, որին Խորավարան էին կոչում, նրա կողմից ավելի ևս մեծարանքի արժանանալով՝ տալիս է մնացած գերիների տասնչորսերորդ մասը։ Ավելի ևս առաջ գալով, հասնում է իր երկիրը։ Նրան դիմավորելու է դուրս գալիս իր կրտսեր եղբայրը՝ Հրահատը, որին տալիս է մնացած գերիների տասներեքերորդ մասը։ Ապա նրան դիմավորելու են գալիս հայ ազնվականներ, որոնց նվիրում է մնացած գերիների իններորդ մասը։ Հասնելով Վաղարշապատ՝ մնացածի տասնվեցերորդ մասը նվիրում է սուրբ եկեղեցիներին։ Վերջապես մնացած գերիների քսաներորդ մասը տալիս է իր ավագ եղբորը՝ Սահակին[25], և իրեն մնում է 570 գերի։ Ընդամենը քանի՞ գերի է եղել։

Քսաներկուերորդ խնդիր.— Եղիպատոսի փարավոնը տոնում էր իր ծննդյան տարեդարձը։ Նա սովորություն ուներ այդ օրն իր տասը նախարարներին, ըստ նրանց արժանիքի և տասնյակի աստիճանավորության՝ հարյուր կարաս խնկով համեմած գինի բաժանել։

Արդ՝ բաժանիր այդ գինին տասը նախարարների միջև՝ ըստ տասնյակի աստիճանավորության։

Քսաներեքերորդ խնդիր.— Կար մի շտեմարան, որի մեջ երկու հարյուր կայթ գարի կար։ Մկները մտան և ամբողջ գարին կերան։ Ես մկներից մեկին բռնեցի և պատժեցի։ Նա խոստովանեց և ասաց. «Ինձ ութսուն հատիկ հասավ»։

Արդ՝ իմացիր, ընդամենը քանի՞ գարու հատիկ կար շտեմարանում, և այդ հատիկներն ուտող մկների թիվը քանիսն էր։

Քսանչորսերորդ խնդիր.— Աբենք քաղաքում կար երեք միաչափ ավազաններ, յուրաքանչյուրն ուներ երեք ծորակ։ Մի ծորակը, ավելի հորդ լինելով, ավազանները լցնում էր մեկ ժամում, երկրորդը, որ նրանից ավելի թույլ էր, ավազանները լցնում էր երկու ժամում, իսկ երրորդը՝ ամենից թույլ լինելով, լցնում էր երեք ժամում։

Արդ՝ իմացիր, թե երեք ծորակը միասին մեկ ժամի քանիե՞րորդ մասում կլցնեն ավազանները։

Առաջին խնդրի լուծումը: *Կոտորածից առաջ 1760 հեծյալ կար:*

Երկրորդ խնդրի լուծումը: *Մարգարիտները 144 հատ էին եղել, իսկ մարգարիտների գինը՝ 6720 դրամ:*

Երրորդ խնդրի լուծումը: *Գանձը 1686 կենդինար է եղել:*

Չորրորդ խնդրի լուծումը: *Միաբանության ոոճիկը 3200 լիտր էր:*

Հինգերորդ խնդրի լուծումը: *Սպանների ոոճիկը 240 կենդինար էր:*

Վեցերորդ խնդրի լուծումը: *Հազարները եղել են 150 հատ:*

Յոթերորդ խնդրի լուծումը: *Ընդամենը 420 ձուկ է եղել:*

Ութերորդ խնդրի լուծումը: *Կհասնեին 25 օրում:*

Իններորդ խնդրի լուծումը: *Վարազը 360 լիտր է եղել:*

Տասներորդ խնդրի լուծումը: *Լոքոն 240 լիտր է եղել:*

Տասնմեկերորդ խնդրի լուծումը: *Վաճառականն ուներ 2376 դահեկան:*

Տասներկուերորդ խնդրի լուծումը: *Նավակը 42 դրամ արժեր:*

Տասներեքերորդ խնդրի լուծումը: *320 խնձոր է եղել:*

Տասչորսերորդ խնդրի լուծումը: *Գինին 126 փաս էր:*

Տասնհինգերորդ խնդրի լուծումը: *Ձիու գինը եղել է 616 դահեկան:*

Տասնվեցերորդ խնդրի լուծումը: *Որմնադիրը հավասարվեց 70 օրում:*

Տասնյոթերորդ խնդրի լուծումը: *Նավում 24.000 կայթ հացահատիկ կար:*

Տասնութերորդ խնդրի լուծումը: *Մեռաղյա ջրամանը եղել է 4200 դրամ:*

Տասնիններորդ խնդրի լուծումը: *Դահեկանների թիվը եղել է 21, կես, քառորդ, ութերորդ:*

Քսաներորդ խնդրի լուծումը: *Ընդամենը 2160 որսի կենդանի է եղել:*

Քսանմեկերորդ խնդրի լուծումը: *Գերիների թիվն ընդամենը եղել է 2240:*

Քսաներկուերորդ խնդրի լուծումը: *(Առաջինն ստանում է) մեկ (կարաս և մեկ կարասի) կեսը, հինգերորդը, տասներորդը (և) հիսունհինգերորդը:*

(Երկրորդը ստանում է) երեք (կարաս և մեկ կարասի) կեսը, տասներորդը, քառասուներորդը (և) ութսունութերորդը:

(Երրորդը ստանում է) հինգ (կարաս և մեկ կարասի) երրորդը, տասնհինգերորդը, քառասունչորսերորդը, վաթսուներորդը և վաթսունվեցերորդը:

(Չորրորդն ստանում է) յոթ (կարաս և մեկ կարասի) հինգերորդը, քսաներորդը և քառասունչորսերորդը:

(Հինգերորդը ստանում է) ինը (կարաս և մեկ կարասի) տասնմեկերորդը:

(Վեցերորդը ստանում է) տասը (կարաս և մեկ կարասի) կեսը, հինգերորդը, տասներորդը, քսաներկուերորդը, երեսուներորդը և երեսուներեքերորդը:

(Յոթներորդն ստանում է) տասներկու (կարաս և մեկ կարասի) կեսը, տասներորդը, քսաներկուերորդը, երեսուներորդը, երեսուներեքերորդը և հիսունհինգերորդը:

(Ութերորդն ստանում է) տասնչորս (կարաս և մեկ կարասի) երրորդը, տասներորդը, տասնհինգերորդը և քսաներկուերորդը:

(Իններորդը ստանում է) տասնվեց (կարաս և մեկ կարասի) հինգերորդը, տասներորդը, քսաներկուերորդը և հիսունհինգերորդը:

(Տասներորդը ստանում է) տասնութ (կարաս և մեկ կարասի) տասներկուերորդը, քսաներկուերորդը, երեսուներեքերորդը և քառասունչորսերորդը:

Քսաներեքերորդ խնդրի լուծումը: *Շտեմարանում եղել է ընդամենը 82.944.000 գարու հատիկ, իսկ գարի ուտող մկների թիվը եղել է 1.036.800:*

Քսանչորսերորդ խնդրի լուծումը: *Միախառնված ծորակները կլցնեն ավազանները մեկ ժամի քառորդ, վեցերորդ, տասներկուերորդ և քսաներկուերորդ մասում:*

1. Այս պատերազմի մասին Շիրակացին հիշատակություն ունի նաև իր «Քրեորդ հարցումի մեջ: Ղ. Ալիշանի կարծիքով, Շիրակացու ակնարկը VI դարի 70-ական թվականների Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի ազատագրական կռիվներին է վերաբերում (տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 5):

2. Ջորակ Կամսարականը VI դարի 70-ական թվականների հայ ժողովրդի ազատագրական պատերազմի ակտիվ գործիչներից մեկն է:

3. Բահլ քաղաքը գտնվել է Աֆղանստանի Բակտրիա շրջանում։

4. Բնագրում այդ բառը պատահում է «շահվար» ձևով, որը Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքով, կարող է գործածված լինել մարգարիտի ինչ-որ տեսակի նշանակությամբ։ Հ. Օրբելին «շահվար» բառը թարգմանել է «քագավորական մարգարիտ» ձևով։

5. Հարցման մեջ հիշատակված Գանձակ քաղաքը չպետք է շփոթել ներկայիս Կիրովաբադի հետ, այն Գանձակ Շահաստանն է, որը նույնացվում է Թախտ-ի-Սուլեյմանի հետ, գտնվում է Զինջանից արևմուտք։ (Այդ մասին տե՛ս Ք. Պատկանյան, «Армянская география VII века», էջ 63, ծան. № 195)։

6. Դրամը կշռաչափ է և տարբեր երկրներում տարբեր ծանրություն է ունեցել. եբրայական դրամը 6,8 գրամ է, արաբականը՝ 4,28 գրամ և այլն։

7. Խոսքը բյուզանդական Մարկիանոս կայսրի մասին է, որը գահակալել է 450—457 թվականներին։ Նա է կառուցել Կոստանդնուպոլսի կայսերական «Ոսկյա մեծ» կոչվող պալատը, ուր և գտնվելիս է եղել կայսերական գանձատունը։

8. Կենդինարը ծանրության չափ է. մեկ կենդինարը հավասար է հարյուր լիտրի, ներկա կշռաչափով այն հավասար է մոտ 32 կիլոգրամ 640 գրամի։

9. Դահեկանը համապատասխանում է դինարին, ներկա կշռաչափով հավասար է 408 գրամի։

10. Նկատի ունի Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարը, որն ուներ իր միաբանությունը՝ կազմված սարկավագներից, քահանաներից և եպիսկոպոսներից։

11. Լիտրը ծանրության չափ է, համապատասխանում է հռոմեական ֆունտին։ Բյուզանդիայում գործածական լիտրը հավասար է եղել 324 գրամի։ Խալիֆայության շրջանում լիտրի քաշը ավելացավ՝ հասնելով մինչև 408 գրամի։

12. Շիրակացու տվյալ հարցումի մեջ «պատվավորներ», «ավագներ» և «հեծյալներ» բառերը զինվորական աստիճանակարգության համար են գործածված։

13. Մարմետ— Արշարունիքի քաղաքներից մեկն էր, գտնվել է Արաքսի ափին՝ այն տեղում, ուր նրան է խառնվում Ախուրյան գետը։ Մարմետը հանդիսացել է կամսարականների ոստանը, այժմ ավերակ է։

14. Ախուրյան— Արաքսի վտակներից մեկն է։

15. Ըստ Ղազար Փարպեցու, պարսիկ մարզպան Սուրենին սպանել է ոչ թե Զորակ Կամսարականը, ինչպես ներկայացնում է Շիրակացին, այլ՝ Վահան Մամիկոնյանը (տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 128—130)։

16. Մղոնը երկարության չափ է մեկ մղոնը հավասար է 749 քայլի, իսկ պարսկական մեկ մղոնը հազար քայլ է։

17. Գենը կամսարական իշխանների որսատեղին էր։ Նրա ճիշտ տեղադրությունը հայտնի չէ։ Ալիշանը Գենը նույնացնում է Գինոս վայրի հետ և տեղադրում Ճակատը գավառի Միրզախան գյուղի մոտ։

18. Կայքը Հայաստանում գործածվող կշռական միավոր է, այն հավասար է 19 կիլոգրամ 584 գրամի։

19. Ապաղար— հայ մատենագրության մեջ հանդիպում է առաջին անգամ։ Գ. Տեր-Մկրտչյանը կարծում է, թե պղնձյա խոր ինչ-որ աման է։ Հ. Օրբելու կարծիքով՝ մատուցարան։

20. Արշարունիքը կամ Երասխաձորը մինչև VIII դարը Կամսարականների կալվածքն է եղել։

21. Արտին լեռը գտնվում է Թալինից արևմուտք։

22. Բաղկունեաց— Գր. Խալաթյանցի կարծիքով Հյուսիսային Կովկասի ժողովուրդներից են, իսկ իրականում, նրանք Բահլ քաղաքի բնակիչներն են։

23. Շիրակացին նկատի ունի Պարսից Պերոզ թագավորին, որը գահակալել է 459—484 թվականներին։

24. «Գարիկպետ»— տառացի պարսկերեն նշանակում է «պալատի պետ»։ Այս բառը հանդիպում է Սեբեոսի մոտ որպես հատուկ անուն։

25. Շիրակացու 21-րդ հարցման մեջ հիշված Սահակ, Ներսեհ և Հրահատ Կամսարական եղբայրները Արշավիր Կամսարականի որդիներն են, որոնք գործուն մասնակցություն են ունեցել 481—484 ԹԹ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական կռիվներին։ (Այդ մասին տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 122, 124, 162 և այլն)։

ՇԻՐԱԿԱՑՈՒ ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Շիրակացու «Խրախճանականներ»
գրի են առնված խնդիրների շարունակության մեջ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, էջ 233—235

Գրում եմ ձեզ համար խրախճանականներ (զվարճալի խնդիրներ— Ա. Ա.), որպեսզի դուք [օգտվեք նրանցից], երբ կերուխումի ժամանակ զվարճանում եք և ցանկանում եք զվարճալի և ծիծաղելի մի բան ասել։

Առաջին խրախճանական. *Ասա ընկերոջդ՝ «Ես կարող եմ իմանալ, թե դու որ ժամին ես ցանկանում ճաշել և քանի նվագ գինի ես ուզում խմել»։ Եթե նա ասի քեզ՝ «Իմացի՛ր», ասա նրան. «Մոքումդ պահիր այն ժամի քանակությունը, երբ ցանկանում ես ճաշել։ Կրկնիր այն։ Ավելացրու նրա վրա ևս հինգ։ Հինգը կրկնիր։ Նրա վրա ավելացրու նորից տասը։ Ստացած թիվը բազմապատկիր տասով։ Նրա վրա ավելացրու խմած գինին՝ քանի նվագում ուզում ես խմել»։ Երբ նա կատարի քո ասածները, այն ժամանակ հարցրու նրան՝ թե որքան է հաշված թվերի գումարը։ Եվ նա ինչ թիվ որ ասելու լինի, նրանից միշտ դուրս հանիր 350, մնացած թվի մեջ տես, թե քանի հարյուրավոր կա, այն ժամին է լինելու նրա ճաշը, իսկ հարյուրից պակաս մնացած թիվը իմացիր,*

որ այդքան նվազ է նա դինի խմելու։ Իսկ եթե ընկերդ անհմուտ մեկն է և դինի խմելու նվազը հարյուր լինի, պատասխանիր, որ անհնար է մի ժամում հարյուր նվազ դինի խմել։

Երկրորդ խրախճանական: *Ասա ընկերոջդ, թե մի անգամ խընջույքի ժամանակ պարսիկ մի զբոսաշրջիկ տեսավ մի խումբ հույն զբոսաշրջիկների, ձայն տվեց նրանց և ասաց. «Եթե մեկը ձեզ ինձ տա, տա էլի ձեր չափ, ձեր կեսի չափ, ձեր քառորդի չափ և մեկն էլ ես ձեզ հետ՝ կլինեինք հարյուր հոգի»։ Արդ՝ իմացիր, թե հույն զբոսաշրջիկները քանի հոգի են եղել։ Եթե ընկերդ դիտուն մեկն է, շատ շուտ կիմանա, որ 36 հոգի են եղել, իսկ եթե տխմար է, ապա նրա չարչարանքը այդ ոչնչի չիմանալը, քեզ ուրախություն կպատճառի։*

Չորրորդ խրախճանական: *Ասա ընկերոջդ, որ ես կարող եմ իմանալ, թե որքան դրամ կա քսակիդ մեջ։ Եթե նա ասի՝ «Իմացի՛ր», ասա դու նրան, թե՝ «Վերցրու դրամիդ քանակությունը, այդչափ էլ ավելացրու վրան, ստացած թիվը կրկնապատկիր, ավելացրու վրան առաջին վերցրած թիվը, ստացածդ գումարը կրկնապատկիր»։ Երբ տվածդ հաշվումները կատարած լինի, անկախ նրանից, զույգ թիվ է եղել վերցրածը, թե կենտ, ստացած գումարը, որ նա կասի, բաժանիր տասի վրա և գտած թիվը կլինի քսակում եղած դրամի քանակը։*

Հինգերորդ խրախճանական: *Ասա ընկերոջդ, թե մի հոն հարյուր տարի իր հավապահն է եղել և օրական 100 ձու է կերել։ Արդ՝ իմացիր, թե ընդամենը որքա՞ն է։ Եթե ընկերդ թվերից գլուխ հանող մեկն է, արագ կարող է ասել, թե 365 բյուր ձու է կերել, իսկ եթե տգետ է, ապա նրա չարչարանքը քեզ ուրախություն կպատճառի։*

Վեցերորդ խրախճանական: *Ասա ընկերոջդ. «Եթե դու վաճառելիս լինես վաթսուն փարչ դինի, ամեն հինգ փարչը երկու դրամով, որքա՞ն դրամ դու կստանաս»։ Նա կպատասխանի, թե՝ 24 դրամ։ Ասա դու նրան, որ եթե ես նույն գնով վաճառելու լինեմ 60 փարչ դինին՝ մի դրամ ավելի կշահեմ, քան դու։ Կանես այսպես. 60-ը կբաժանես երկուսի, ստացած երեսունի ամեն մի երեք փարչը կբաժանես մեկ դրամի, իսկ մյուս երեսունի ամեն երկու փարչը՝ մեկ դրամի, որով լինում է դարձյալ հինգ փարչը՝ երկու դրամի։ Եվ այդպես մեկ դրամ ավելի շահելով՝ առաջին վաճառողին կամաչեցնես և կուրախանաս նրա զարմանալով։*

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Հովհան Մանդակունին V դարի հայոց դպրության ամենափայլուն դեմքերից է։ Ծնվել է Աղշամունյաց գավառի Ծախնոտ գյուղում։ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կրասեռագույն աշակերտներից է։ 478—490 թթ. եղել է Հայոց կաթողիկոս, գործուն մասնակցություն է ունեցել 481—484 թթ. ժողովրդազատագրական պատերազմին։

Մանդակունին զբաղվել է նաև բարգմանություններով և մատենագրությամբ։ Երկասիրել է բազմաթիվ ճառեր, շարականներ, խառոզներ և այլն։ Հեղինակին մնայուն հռչակ է բերել հատկապես նրա ճառերի ժողովածուն, որն, իրավամբ, հայ ճարտասանական արվեստի փայլուն նմուշներից է։

Իր ճառերով նա հպատակ է ներապնդել արմատախիլ անել հայերի շրջանում դեռևս գոյատևող հեթանոսական հնավանդ բարերն ու սովորույթները և ընդհակառակը՝ դրանց փոխարեն պատվաստել նոր՝ քրիստոնեական բարոյականություն։ Ջատագովական վիճաբանությամբ պայքարելով քրիստոնեական ոգուց կատարված ամեն մի շեղման դեմ, պարսավելով ու մերժելով դրանք՝ հեղինակը կամա թե ակամա անդրադառնում է նաև իր ժամանակների հայոց կենցաղին ու բարերին, դրանով իսկ եզակի, անփոխարինելի տեղեկություններ հաղորդելով V դարի Հայաստանի հերիքի կյանքի վերաբերյալ։

Հովհան Մանդակունու թատերախաղերի մասին ստորև բերված ճառը տալիս ենք ըստ Ա. Հնձացյանի բարգմանության, որը կատարված է «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք» (Վենետիկ, 1836, էջ 123—129) հրատարակությունից։

ՃԱՌ ԱՆՕՐԵՆ ԴԻՎԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՞ւր գնամ հանգչեմ և լամ այս ահեղ անօրինությունը՝ որ ճմլում է հոգիս. և կամ ո՞ւր թաքնվեմ՝ մեղքիս վշտերից համրացած, և կեղևքվելով ամբողջ զազրելի ու չարալուր այս համբավից, որ տրորում է միշտ սիրտս և գալարեցնում աղիքներս ու որովայնս՝ ողբալով։ Եվ մշտապես հալում ու խեղդում են ինձ տրտմություններս. որովհետև ամեն ժամ անառակ պղծություններ եմ լր-

սում և տեսնում անօրեն ամբարշտություններ։ Եվ սրտիս բաղում թախանձանքներից ոսկորս կպավ հողին, և իմ մարմինը գետնաքարշ եղավ, որովհետև բաղում մեղքերի հանդարտության խոռվումից չորացա ինչպես խոտ և ինչպես անշունչ պատկեր. և իմ մտքի ապշությունից սխալանքներս անտես առնելով՝ մոռացա, և ձերն եմ քննում հանապազ։ Քանի որ շար լուր և զազրելի համբավ հասնելով մեր լսելիքին՝ հնչում են մշտապես, որից սաստիկ ժանտություն է բուրում և նեխման ու փտության աղտեղություն. և շարահոտ մի բույր վեր ցոլալով ապականում է սուրբ եկեղեցին, ուր բոլոր արդարների հոգիները ահազմայլ ողբում են անօրինությունը։

Եվ ես՝ լի ամեն տեսակ հանցանքով, այդ եմ սգում ու հառաչում. զի ձեր գարշելի անօրինություններից ամեն ժամ սատանայական թատրերը ցնծում են խայտալով, և Քրիստոսի եկեղեցիները միշտ ողբում են դառնապես։ Քանի որ սուրբ եկեղեցու մանուկներին իրեն հպատակեցրեց սատանան, որոնք պղծվեցին ու պղտորվեցին տեսարանների անառակ թատրերում։ (Նա), որ միշտ ու հանապազ ուզում է մարդկանց հեռացնել աստծո ողորմությունից և ամենապայծառ անանց բարություններից և տանել բաժնեկից դարձնել իր տանջանքների ահեղ աղետներին։ Դրա համար անտեսեցի իմ բաղում հանցանքները, ձեր ցավերին եմ լինում վըշտակից և ողբում ձեր անձի կործանման աներևույթ վերքը։ Որովհետև մերժելով արհամարհեցիք աստծո պատվիրանների խորհուրդները, և ոտնահարելով կոխոտեցիք առաքելական եկեղեցու հավատը, և ոչինչ համարեցիք Քրիստոսի արյան և մարմնի սրբությունը, որ մշտապես ընդունում եք ահավոր և սոսկալի սեղանից։

Եվ այժմ լիովին ընկղմված եք դիվական մոլորության մեջ և դերված, գրավված սատանայի խորհուրդներից, շտապում եք ընկնել նրա դառնահամ որոգայթները, գնալ մտնել խաղերի ապականիչ հրապարակները, լսել ականջ խարող աղտեղի ձայները, և գուսանների զայրացած ու պղծացած անօրեն ու չարալուկ կատաղություններ, որոնք միշտ հալածում են սուրբ հոգու շնորհները և սատանայի մահաբեր պիղծ խորհուրդը ձեր սրտերում ու մտքերում սերմանում։ Որից բռնվելով տոչորում է բոցը տեսակ-տեսակ ախտերով՝ հնազանդյալների մարմիններում, որոնք փշերի ու տատասկների նման վիրավորում են անձերդ, և հավաքելով կուտա-

դում են դժվարակիր բեռներ՝ կորուսյալ ոգիների վրա։ Ու իրենց անձանց համար վաստակած այրիչ հուրը և սատակիչ սուրը՝ ելնում են պղծությունների թատրոններից՝ կարեվեր լինելով. և սատկապես խոցված գաղտնի նետերից սատանայի, որ չարաչար վիրավորում է ոգիները և փորը է կարծեցնում մեծամեծ անօրինությունները, որից պետք էր սարսել և դողալ մշտապես, և փախչել, հեռանալ բաղում երկյուղով։ Որովհետև չար է սովորույթը, չար են և նրա հորդորիչները՝ գինի, գուսան և սատանա և ցոփագնացություններով ու վավաշոտության հափրանքով մոլորված մտքեր, որ կամահոժար և դյուրահավան ընդունում են չար սերմերը սատանայի, մանավանդ թեթևամիտ և վայրենի անհամեստ կանանց ցեղը, արագալուր և հեշտահավան և դյուրապատիր, որոնք ձանձրույթից անառակացած միշտ աներկյուղ շտապում են թատերավայր, անօրեն խաղեր և սատանայական տեսարաններ դիտելու հրապարակում. ելնելով վերև, դիտավայրում նստում, խորհում, դիտում են իրենց նմաններին՝ չար [գործերի մեջ], որոնք թեպետև անօրեն գործին դեռ մասնակից չեն, բայց խոցող սպանիչ նետերը կրում են սրտերում, որոնցից և հետո պիտի մահանան, ինչպես որսորդների նետերից վիրավոր գազանը, որ թեպետ հիմա թակարդից պրծավ, սակայն նետերը կրելով կմեռնի։

Այդ ինչպե՞ս դադարեցնենք այն ցոլացող բոցի ահեղ տոչորումը կամ երբևէ կարո՞ղ եք գտնել աներևույթ վերքերը բուժելու հնար և կամ ե՞րբ ավերելով կկործանեք թատերական պղծությունների վայրերը, մահաբեր որոգայթը, բազմաչար ժողովը, բոլոր ախտերի արվեստանոցը...

Եվ չեմ կարող ասել չարիքների մյուս տեսակ-տեսակ կերպերը, որ թատերախաղերն են սովորեցնում. ամբարտավանություն, հայհոյությունը, նենգությունը, չարահնարությունը, չարակնությունը, նախանձը, բամբասանքը, որի պատճառով երկրի վրա կթափվեն աստծո պատուհասները, որ սաստիկ սրտմտությամբ տանջանքի կմատնի։ Ահա այս բոլոր անօրինություններն են ձեռք բերում՝ ովքեր մտնում են խաղահրապարակները և իրենց մարմիններում բազմացնում են սատանայի սերմերի չար պտուղը։

Այդ ո՞ր բերանը կարող է ողբալ և լալ այնպիսի աղետյալներին ու պղծվածներին. և կամ ի՞նչ լեզու կարող է պատմել անթիվ աղետները, որ այնտեղ կստանան. և կամ ո՞ր միտքը ցույց կտա

ահեղ տանջանքների բազմությունը՝ որ գեհենի հրի հոսանքում պատրաստվում է նրանց և աստվածամարտ սատանային, որոնք խավարայիններին ախորժանքով ընդունեցին։ Եվ այժմ ինչի՞ համար ես մատնվում այդպիսի տանջանքների և կամ ինչ ստացար մի օգուտ, այլ՝ անթիվ ահեղ աղետների բազմություն։ Որովհետև թեպետ անառակներին ցանկալի են լինում պիղծ թատրերը, ուր միշտ ախտերից ցանկություններ են հալչում և ծորում, այլ առողջներին է երևում տաղտկալի պղծությունն ու ամոթալի վավաշոտությունը։

Կանայք անբարոյականների բարք են ձեռք բերում, և այրերը՝ մատակախաղաց ձիերի, որոնք անօրեն զազրախոսությամբ անասուններից էլ վայր են իջնում, և շների փսխածից ավելի աղտեղի՝ փսխում են տաղտկալի խոսքերի գարշությունները, որոնցից նեխության աղտեղություն և զազրելի հոտ է ելնում, որ զզվեցնում է երկյուղած անձանց և ցանկալի է դևերին. քանի որ այդպիսի խայտառակվածների մեջ սատանան խռովություն է ձգում։ Որովհետև ուր կատակներ ու գուսաններ կան, և խաղ, և լկտի ծաղրանք, այնտեղ դևերն են նրանց հետ պար բռնում և զեխացածների մտքերում բազում աղտեղություններ են սերմանում, առավել ևս մոլեգնության են մղում գուսաններին՝ պիղծերին ու սրբության շնորհը հալածողներին, ցանկության հուրը բորբոքողներին, պատվիրանները քամահրողներին, սատանայի խորհուրդների կարապետներին, անօրեններին և աստվածամարտներին, ամեն տեսակ արատավորության թշնամիներին։ Դրանց պետք էր քարկոծել և աշխարհից հալածել, նրանց զեխացրածներին՝ պրոսարանի խաղարաններում, ուր մտնում են ողջանդամ և ելնում վիրավոր. Քրիստոսից մերկացած և սատանայով զգեստավորված. շնորհների հոդին մերժած և լցված դևերի պիղծ հոգով։ Զի բոլորը, որ հավատով ու երկյուղածությամբ են մոտենում Քրիստոսին, լուսավորվում են սուրբ հոգով, և օր-օրի առաքինի գործերով վեր են բարձրանում և գնալով հեռանում սատանայի բոլոր խաբկանքներից։ Եվ ովքեր թատերախաղերի պղծությամբ մշտապես հաղորդակից են լինում դևերին և խավարանում են վարքով միգապատվելով մթնում և լրցվում սատանայի պիղծ ոգով, և օրըստօրե ծանրանալով անօրինություններով՝ տապալվում են վայր... Եվ սրա համար ավելի ա-

